ՀԱՅԵՐԵՆ ՀԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ԺԷ ԴԱՐ

ՀԱՏՈՐ

Բ

ԵՐԵՎԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐՔ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XVII ВЕКА

(1621—1640 гг.)

ТОМ II

Составили:

Вазген Акопян, Ашот Иоаннисян

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԷ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(1621—1640 ԹԹ.)

ՀԱՏՈՐ Բ

Կազմեցին՝
Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

902.9
Հ 17

Խմբագրությամբ ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

10600 / 703(02)—78 39—74

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978

ԱՌԱՋԱԲԱՆ

«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» ժողովածուի Բ հատորն ընդգրկում է 1621—1640 թթ. ժամանակամիջոցի հիշատակարանները։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ օսմանյան Թուրքիայի և սեֆյան Պարսկաստանի միջև 1603 թ. սկսված պատերազմը տակավին շարունակվում էր։ Կարճատև զինադադարներով և փոփոխակի հաջողություններով այն ընթացավ մինչև 1639 թ. և ավարտվեց նույն թվականի մայիսին Դիարբեքիրում տեղի ունեցած նախնական համաձայնությամբ, ապա Զահաբում փետրվարի սկզբներին (Կասր ի—Շիրինի մոտ) կնքված հաշտության պայմանագրով[1]։ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց պատերազմող կողմերի միջև՝ Պարսկաստանի համար առավել շահավետ պայմաններով։ Այդ իրադարձությունների մանրամասն նկարագրությունը հիշատակարաններում ցավոք, գրեթե բացակայում է։ Դա բացատրվում է նրանով, որ պատերազմական գործողությունները տեղի էին ունենում հիմնականում Հայաստանի սահմաններից դուրս։ Միայն 1634—1636 թվականների կռիվներն ընթացան Հայաստանում՝ Արարատյան դաշտում և Վանում։ Ցղնայում 1634 թ. ընդօրինակած Մաշտոցի հիշատակարանում Մարութա գրիչը գրում է. «Յայսմ ամի առաքեաց (շահ Սեֆին—Վ. Հ.) Ըռըստամ խանն ի վերայ Վրաց տանն, և էառ [զամենայն?], և զՎրաց թագաւորն զԹամուրազն փախուց ի Բաշիաչուխն, և զզօրս նորա զորս կոտորեաց և զորս փախուց, և շատ աւերութիւն արար ի Վրաց տունն։ Եւ դարձեալ եկն անտի և գնաց ի վերայ Վանայ, և Դ(4) ամիս պաշարեաց, և նստաւ ի վերայ նորա, և ոչ կարաց առնուլ գնա, և շատ աւերութիւն արար։ Եւ դարձեալ յետս գնաց ի Թարվէզ առ թագաւորն իւր՝ շահ Սէֆին»[2]։ Վանի համար մղած կռիվների և պարսիկների անհաջողությունների մասին հաղորդում է նաև Գրիգոր Զուղայեցի գրիչն իր չափածո հիշատակարանում.

«Ի յայս դառն և նեղ ժամանակիս,
Յիսար ընկաք Վան քաղաքիս,
Կարմրագդակն պատեց, նստաւ վերա քաղաքիս։
Շատ նեղութիւն հասոյց ի մեզ,
ՍԶ 56) օր պաշարեց զմեզ։
Ի թվականութիւնս Հայոց ազգիս,
ՌՁ և երեքիս (1634),
Ըստամբօլոյ հասաւ ի մեզ,

---

[1] *Hammer* J. Geschichte des Osmanischen Reiches, B. 3. Pesth, 1840, S. 186—192:

[2] Հիշատակարան, № 820, էջ 550—551։ Հաջորդ ծանոթագրություններում, կնշենք սույն ժողովածուի հիշատակարանների միայն համարները։

Ազգէն Տաճկաց ՌՃ (100000)-իս,
Ժողովեցան Քարափոսիս,
Խմբեցան մեծ պատերազմիս։
Փախուցին կարմրագդակն,
Աւարն առին հասին ի մեզ,
Աւետիս մատուցին մեզ,
Կարմրագդակն փախեաւ ի յետս[3]։

Պատերազմական գործողությունների ահ ու սարսափից, տանջանքներից և զրկանքներից զատ ժողովուրդը ստիպված էր կրել նաև ռազմա-պաշտպանական հարկադիր աշխատանքի ծանր լուծը, այն դեպքում, երբ այդ կռիվները չէին լծորդվում հայ ժողովրդի ազատագրական ձգտումների և ոգորումների հետ։ Ահա թե ինչ է գրում Վանում ընդօրինակված ձեռագրի գրիչ Գրիգոր քահանան. «Եւ էր ժամանակս դառն ի ձեռաց անօրինաց, որ եկն Ռըստամ խան ի վերայ Վանայ ԼՌ(30000) հոգով և ետուր խսար բազում ժամանակս։ Եւ խիստ չարչարէին զտառապեալ ազգն քրիստոնէից, ի պարիսպն, ի խանդակ փորելն. և զորս ի քաղաքն գտանէին բազում չարչարանք տային։ Եւ վասն չար գործոց իմոց եկեալ գտին զիս և զականջս կտրեցին և խիստ վահեցայ և տկարութիւն շատ քաշեցի»[4]։ Առավել մանրամասն տեղեկություն է հաղորդում մի անանուն հիշատակագիր. «Եկաւ նստաւ ի Վանայ վերայ. գա[յ]ն չարիքն գործեցին, որ չէր տեսեալ ակն մարդոյ. Աստուածածնի երեքշաբթին եկաւ, մինչև ի նաւասարդի աւրն բազում քրիստոնեայք սպանեցին, բազումք գերեցին, զՎանայ երկիրն՝ զգեղորայքն և զվանորայքն զամէն քակեցին և քանդեցին, զքաղաքի այգեստանն զամէն կոտորեցին։ Եւ զգերզմանատուն Հայոց Ռ(1000) ճօղ նազմ զարկին, և յոմանց լուայ թէ ԿՌ(60000) է. և բերին հասուցին զնաղմն ի տակն պարըսպին։ Եւ ազգս, որ ի մէջ քաղաքին էին, բազում տանջանաց մէջ էին՝ գիշերն զբադանն պահել տային և ցերէկն զխանդակն փորէին, այնպէս տառապանք էին որպէս ազգն Իսրայէղի»[5]։

1635 թ. Մուրադ 4-րդը մեծ բանակով շարժվում է Կարին, ապա Արարատյան դաշտ՝ Երևանը գրավելու նպատակով։ 1637 թ. Համիթում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Եւ յորժամ սկիզբն արարաք սբ. Աւետարանիս թվին ՌՁԴ (1635), զի եկ թագաւորն սուլթան Մուրատն ի Կոստանդնուպօլսէ և գնացեալ բազում հեծելազօրօք ի վերայ Պարսից ի յԱյրարատեանն, ի վերայ Երևանու. և խսարեալ պաշարեաց զնա, և յետ Թ(9) աւուր առեալ զքաղաքն, անց գնաց ի Դավրէժ. և ոչ յամեաց անդ, այլ շուտով դարձաւ յետս, և եկն ի քաղաքս Համիթ և կեցեալ աւուրս ԺԵ(15), եկ գնաց դարձեալ ի Կոստանդնուպօլիս, թողեալ զերկրորդն իւր, զի գնասցեն այլվի ի Պարսկաստան»[6]։

Երևանի պաշարումը երկար չի տևում։ Թե գրավելուց հետո ինչպիսի՞ վիճակ է տիրում Երևանում և շրջակա գյուղերում, երևում է Մարտիրոս քահանայի հաղորդումից. «Դարձեալ եկն զրոյցս փօթալիրս, եթէ գա թագաւորն

---

[3] № 825, էջ 553—554։
[4] № 846, էջ 570։
[5] № 901, էջ 613—614։
[6] № 1012, էջ 696. Տե՛ս նաև № 957 հիշատակարանը, էջ 648, 653։

Հոռոմոց ի վերայ Պարսից՝ մերս թագաւորի, Հ(70) բիւրովք, որ և եկն իսկ երկիրն Արարատեան, և պատեալ զդղեակն Երևանու՝ նստաւ։ Եւ աշխարհս բնաւ տեղաշարժ լեալ, ոմանք փախուցեալ ի լերինս և բլուրս շրջէին, ոմանք ի խորափիտս վիմաց և ոմանք ի վիհ և ի խորագոյն ձոր մտին և այլք ի գլուխ բարձրաբերձ լերանց ելեալ խորշակահարք և կիզեալք ի տօթոյ արեգականն, զի թերևս կարիցեն զինքեանս ապրեցուցանել»[7]։

Երևանի գրավումից կարճ ժամանակ անց պարսիկները թուրքերի դեմ կազմակերպում են հակահարձակում և 1636 թ. նորից գրավում Երևանը։ Այս կռիվների ժամանակ Երևանի բերդապահ թուրքական զորքի հրամանատար Մուրթուզա փաշան սպանվում է, իսկ մի քանի փաշա գերվում են[8]։

Հետագա տարիներին պատերազմական գործողությունները տեղափոխվում են Միջագետք, և կռիվները գնում են Բաղդադի համար։ Թուրքերին հաջողվում է 1638 թ. դեկտեմբերի 14-ին գրավել Բաղդադը[9], որից հետո կնքվում է վերևում նշված հաշտության պայմանագիրը։ Այս մասին հիշատակարաններում միայն մեկ անգամ է հիշվում։ Ահա թե ինչ է հաղորդում Մարտիրոս գրիչը 1639 թ. գրած իր հիշատակարանում. «Փառք իւր առատ բարերարութեան, իւր առատ գթութեամբն գթութիւն ձգեալ ի սիրտս թագաւորաց, վասն ողորմեալ Հայոց ազգիս, և արարեալ սահման և՛ խաղաղութիւն և՛ բարիշութիւն։ Եւ ետուր թագաւորն արևել[ե]ան Բաբելոնի բերդն ի ձեռն արևմտեան թագաւորին և եղև բարիշութիւն ի թվականիս Հայոց ՌՁԸ (1639). ամէն»[10]։ Թուրք-պարսկական պատերազմները ձգձգվեցին ավելի քան երեսուն և հինգ տարի։ Այդ միջոցում գահակալական կամ միջֆեոդալական կռիվներ ու ապստամբություններ էին տեղի ունենում, որից առաջին հերթին տուժում էին թուրքերի և պարսիկների տիրապետության տակ գտնվող հայ և մյուս ժողովուրդները։ Գահակալական կռիվների առնչությամբ կարելի է հիշել ԺԷ դարի 20-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած ենիչերիների խժդժությունները և սրանց դեմ ծառացած Կարինի Աբազա փաշայի կռիվները։ Այս դեպքերին մանրամասն չենք անդրադառնա, քանի որ այդ բանը կատարել է Մ. Զուլալյանը «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ» իր աշխատությամբ[11]։ Մ. Զուլալյանը Աբազա փաշայի այս կռիվները համարում է ջալալիական նախորդ շարժումների պարզ շարունակությունը[12]։ Մեր կարծիքով ավելի ճիշտ կլիներ այդ շարժումներն առանձնացնել, քանի որ դրանք տարբեր նպատակներ հետապնդող երևույթներ էին։ Աբազա փաշային որպես ապստամբի, կարող ենք ասել ջալալի, քանի որ թուրքերենում ջալալի նշանակում է ապստամբ, բայց ջալալի հատուկ հասկացությունը, որով կոչվում և բնութագրվում էին ԺԷ դարի սկզբներին Թուրքիայում տարածված կողոպտիչների և ավազակախմբերի հատուկ ջոկատները, Աբազա փաշայի վրա չի կարելի տարածել։

---

[7] № 1089, էջ 741։

[8] Հմմտ. № 1089, էջ 742։ Այս դեպքերի մասին է պատմում նաև Հակոբ Հիսուսին իր ժամանակագրության մեջ (Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հտ. I, Երևան, 1951, էջ 196։ Այսուհետև Մժ)։ Երևանի պաշարումը այստեղ նշված է 3 ամիս, (հմմտ. Ա. Դավրիժեցի, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 317), որն ավելի ճիշտ է, գրավումը տեղի է ունեցել մարտի 22-ին։

[9] *Hammer J.*, Geschichte des Osmanischen Reiches, B. 3, S. 181—182;

[10] № 1126, էջ 769։

[11] Երևան, 1966, էջ 191—216։

[12] Նույն տեղում, էջ 220։

Ջալալիների շարժման հարցը մենք քննարկել ենք սույն ժողովածուի Ա հատորի Առաջաբանում[13] և այստեղ այդ մասին չենք խոսի։ Մինչդեռ Աբազա փաշայի կռիվները ենիչերիների դեմ նպատակ ունեին վերջ տալ վերջիններիս կամայական բռնություններին, որոնք նպաստում էին կայսրության կենտրոնախույս ուժերի ակտիվացմանը և թուլացնում կենտրոնաձիգ իշխանությունը։ Օսմանյան կայսրության մեջ ջալալիների ստեղծած ծայրաստիճան խառնաշփոթությունը և երկրի տնտեսական ծանր վիճակը սուլթան Օսման 2-րդին և Աբազա փաշային ստիպում էին մտածել երկրի և պետության հետագա բախտի մասին։ Այս առումով թերևս ճիշտ են Մ. Զուլալյանի այդ հարցին վերաբերող բնութագրումները. «...սուլթան Օսմանը թուրքական ֆեոդալական վերնախավի այն ներկայացուցիչն էր, որը որոշակի դասեր էր վերցրել երկրի ներքին կյանքում տեղի ունեցած մեծ խլրտումներից՝ ջալալիների ապստամբություններից։ Սուլթանի նպատակն էր ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կանխեին նոր ապստամբությունները, և որ գլխավորն է, կարգավորեին պետական ֆինանսների ահա տասնյակ տարիներ շարունակ գոյություն ունեցող դեֆիցիտի հետ կապված հարցերը»[14]։ Իսկ Աբազա փաշայի մասին նա գրում է. «Աղբյուրների վկայություններից երևում է, որ Աբազա փաշան դեմ է եղել գյուղացիների նկատմամբ կիրառվող ծայրահեղ կամայականություններին։ Նա կողմնակից է եղել... գյուղացիներին «օրինական» շահագործման ու օսմանյան ֆեոդալական հասարակության տնտեսական ու քաղաքական հզորության հետագա ամրապնդմանը։ Նա քաջ գիտակցել է, որ բռնություններն ու կամայականությունները կարող էին միայն քայքայել երկրի ընդհանուր էկոնոմիկան ու կազմալուծել պետությունը»[15]։ Մի այլ տեղ դարձյալ գրում է. «Աբազա փաշայի նպատակը երբեք չի եղել օսմանյան դինաստիայի իշխանության տապալումը։ Ընդհակառակը, նրա ամբողջ ցանկությունն է եղել ամրապնդել օսմանյան թագավորությունը, որին նա կամենում էր տեսնել բարեկարգ վիճակում և առանց ենիչերական խժդժություններիի»[16]։ Նման բնութագիր տալուց հետո չի կարելի ենիչերիների դեմ Աբազա փաշայի ելույթը նույնացնել ջալալիների շարժման հետ և համարել վերջինիս երրորդ փուլը։ Մինչև ջալալիների շարժումը՝ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաների, մասնավորապես հայերի տնտեսական, քաղաքական և իրավական վիճակը շատ ծանր էր, իսկ ջալալիների շարժման ժամանակ այն անտանելի դարձավ։ Այս պայմաններում՝ երբ տնտեսության ոչ միայն վերարտադրությունը, այլև բազմաթիվ վայրերում նույնիսկ արտադրություն չկար, երբ արտադրության հիմնական եղանակը կողոպուտն էր, Աբազա փաշան ձգտում էր շահագործման, ամեն տեսակ բռնության ու կամայականության մեղմացման, ոչ թե գյուղացիության շահերից ելնելով, այլ որպեսզի կայսրությունը եկամտի մշտատև աղբյուր ունենար, թեև այդ քաղաքականությունը գյուղացու և ընդհանրապես աշխատավորության շահերի տեսանկյունից տնտեսական, քաղաքական և իրավական անգամ մասնակի ազատագրական ձեռնարկում չէր կարելի համարել։ Աբազա փաշան ձգտում էր վերացնել ջալալիների շարժումը հիշեցնող ենիչերիների

---

[13] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601—1620 թթ.)», Երևան, 1974, էջ է—ԺԴ։

[14] Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 193, 194 և այլուր։

[15] Նույն տեղում, էջ 196։

[16] Նույն տեղում, էջ 198, 212։

շահատակությունները, բռնությունները և կամայականությունները, ուժեղացնել օսմանյան ֆեոդալական թուլացած կենտրոնական պետությունը՝ «կարգի ներկայացուցիչներ անկարգության մեջ»[17], թեև Թուրքիայում կայսրությունը՝ կենտրոնաձիգ պետությունը, երբեք չհասավ Էնգելսի ակնարկած «կարգի ներկայացուցչի» մակարդակին։ Աբազա փաշան թույլատրելի էր համարում աշխատավորության ամեն տեսակ շահագործումը ու ճնշումը, համեմատաբար տանելի պայմաններում, որպեսզի չնվաղեին պետության եկամուտները։ Այս դեպքերն ահա թե ինչպես են գնահատել հիշատակարանների հեղինակները, թեև այստեղ էլ առկա է տարակարծությունը։ Նիկողոս Լեհացին 1624 թ. իր հիշատակարանում գրում է. «Խիստ յոյժ խնամածու էր (Աբազա փաշան—Վ. Հ.) և հոգածու աշխարհաց, նա չար զօրքն, որ զուլք ասին՝ սպանիչք թագաւորին և չարացուցին ի վերայ իւրեանց և աշխարհացն ամենայն և թագաւորն ապստամբեցուցին. և զիւրեանքն հալածակաւն և բնաջինջ արար. զոմանց չարամահ կտտանօք սպանանելով և այլքն կերպափոխեալ զիւրեանք փախստական լինելով, ի վրէժխնդրութիւն արեանն սուլթան Օսմանին լինելով ի տեսչութենէն Աստուծոյ»[18]։ Արիստակես Խարբերտցին Աբազա փաշայի շորթերին դնում է հետևյալ խոսքերը.

«Սի՛ ոք ըզոք մի՛ ղրկեսցէ,
Մինչև յետին ընիոնն է,
Թէ չէ գլուխն առ յիս գայցէ,
Ինչքն և ապրանքն արքային է»[19]։

Ժամանակագիրներից Հակոբ Կարնեցին, որ ականատես է եղել այս դեպքերին, թողել է համանման տողեր. «Այնպէս հուքմ և հրաման ունէր (Աբազա փաշան—Վ. Հ.), որ Դ (4) կողմն քուրթ և կամ գող ոչ երևէին, Ա (1) կին Ա (1) աւուր ճանապարհ կու գնայր, զի ենկիչարոց չար ժամա[նա]կըն ոչ կին, ոչ լամուկ տղա քաղաքէն ելանել ոչ կտրէին, և ի մէջ քաղաքին ևս ըմպոնեալ պղծէին, զի Աստուած յարոյց զԱպաղան, որ իբրև զոչխար զենեաց զնոսա չարաչար»[20]։

Սակայն կան հեղինակներ էլ, որոնք Աբազա փաշային բնութագրում են «անաւրէն» և «արեանարբու գազան»[21]։ Կարինում Գինոս գրիչն իր հիշատակարանում հաղորդում է. «Այս պեղծ Ապազայս նոր չարիք արաւ և քրիստոնէից զապրանք, զկերակուր թալնեց և ելից ի բերդն. և այլ առաւել չարութիւն այն էր, որ մարդն տանէն դուրս ելից, զտունն և զկալն ամենեքեան կրակեց և տոչորեց. և մտաւ ամրացս բերդն»[22]։ Ինչո՞վ բացատրել առանձին հեղինակների բացասական վերաբերմունքը Աբազա փաշայի այդ գործողությունների նկատմամբ։ Բանն այն է, որ 1623 թ. Աբազա փաշան պաշարելով Անկյուրիան, այն գրավել չի կարողանում, իսկ 1624 թ. օգոստոսին պարտվում է արքունական զորքերից և վերադառնում Կարին։ Նոր դիմադրություն ցույց տալու նպատակով նա «շատ զօրս գումարեաց քան զառաջինն եօթնա-

---

[17] *Կ. Մարքս* и *Ֆ. Էնգելս*, Сочинение, т. 21, М., 1961, стр. 411.
[18] № 177, էջ 122։
[19] № 180, էջ 125։
[20] ՄԺ, I, էջ 240—241։
[21] № 290, էջ 195։
[22] № 485, էջ 325։

պատիկ»,—գրում է Գրիգոր Դարանաղեցին[23]։ Սա նշանակում է, թե մեծ բանակը մեծ ծախսեր էր պահանջում, իսկ այդ ծախսերը նա կարող էր հոգալ տեղացիներից՝ և հայերից և թուրքերից ծանր հարկեր վերցնելով, ինչպես նաև այն ժամանակվա պատերազմական իրավիճակին հատուկ բռնություններ դիմելով[24]։ Աբազա փաշայի այդ գործողությունների նպատակը ժամանակին հասկացել է Գրիգոր Դարանաղեցին։ «Եւ այս անգամ սկսաւ (Աբազա փաշան—Վ. Հ.) հարկապահանջութեամբ տառապեցուցանել զաշխարհին մարդիկն, զշինական ռամիկսն և զքաղաքացիսն՝ զթուրք և զհայք, վասն երկու պատճառի, նախ որ մերկացան ի ժամ պատերազմին, երկրորդ առ ահի շատ զօրս գումարեաց, որ պիտոյ էր նոցա թոշակ և համբարանոց»[25]։ Այսպիսով, հիշված գրիչների բացասական վերաբերմունքը լծորդվում է ոչ թե Աբազա փաշայի վերևում նշված ընդհանուր մտորումների և նպատակների, այլ տվյալ պահի ռազմական հաջող գործողությունների կազմակերպման հետ. թեև այդ գործողությունները հաջողություն չունեցան և չի կարելի արդարացնել Աբազա փաշայի ձեռնարկած քայլերը։ Վերջին հաշվով նա այլ կերպ էլ չէր կարող վարվել, որովհետև թուրքական ֆեոդալական հասարակության շահագործող դասակարգի ակնառու ներկայացուցիչն էր։

Այդ դեպքերից զատ մեզ հետաքրքրող ժամանակամիջոցում տեղի էին ունենում մեջֆեոդալական կռիվներ և ասպատակություններ։ Գրիգոր քահանան 1631 թ. Ախալգորում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում ցավով նշում է. «Վայյ, վաշ ու ախ, վայ զիս, ի՞նչ անիրաւ բաներ տեսայ ի յաշխարհիս, մէկ ու զմէ՞ կոտորեցին Վրացտան աղատի որդիքն»[26]։1635 թ. Ավետարանը գերությունից ազատող Ավետիսի մասին մեկը պատմում է, որ Մակվի քուրդ Մահմատ-բէկը ասպատակեց, կողոպտեց, սպանեց «էրէց, եպիսկոպոս, տանուտէր, կին ու տղա գերի վարեց, խիստ անողորմ բաներ արաց, կ[?]ն քաշեց, զամենայն աշխարհն աւեր էած։ Եւ շրջեցան յերկրէ յերկիր և ջարդեցան, ի դարիպութիւն. վասն ծովացեալ մեղաց մերոց։ Թէ՞ Աւետարան, թէ՞ հանդերց՝ զամենայն գերի տարան»[27]։ Ստեփանոս երեցը Երևանի Քալբալի խանի մասին գրում է. «...որ ազգի ազգի տանջանօք նեղէ զքրիստոնայս հարկապահանջութեամբ։ Եւ քանի սա իշխան նստաւ երկրիս, լիութիւն ոչ էառ երկիրս»[28]։

Ժողովուրդը տուժում էր ոչ միայն պատերազմներից ու ասպատակություններից, այլև ծանր հարկապահանջությունից։ Ժամանակի ընդհանուր բնութագիրը շատ գրիչներ հավաստում են «ի դառն և ի նեղ ժամանակիս» կամ «ի դառն և յանբարի ժամանակիս» ընդհանուր արտահայտություններով։ Սակայն կան մի շարք գրիչներ էլ, որ դրան ավելացնում են «...յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց...սաստկանայ բռնութիւն և նեղութիւնս ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց»[29] կամ «...յորում նե-

---

[23] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ. Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 222։

[24] Տես նաև Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 206։

[25] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ..., էջ 222—223։

[26] № 606, էջ 415։

[27] № 885, էջ 601։

[28] № 1198, էջ 816։

[29] № 380, էջ 252—253։

զամք ի հարկապահանջութենէ անաւրինաց և ի սղութենէ հացի»[30]։ Իսկ Հակոբ երեցը 1639 թ. Կարինում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում անցողակի հիշում է, թե այն ինչպես է գրել «Մի՛ մեղայդրէք գրիս, զի Տաճիկք խիստ կու նեղացընին հարկապահանջութեան, և խիստ տըրտմեալ էի, և իբր զերագի գրեցի»[31]։ Այսպիսի վիճակ տիրում էր ոչ միայն բուն Հայաստանում և հարևան երկրներում, այլև հայ գաղթավայրերում։ Բնական է, որ նման պայմաններում մթերքների խիստ թանկություն և երբեմն էլ սով կլիներ։ Այդ մասին սույն հատորում կան հետաքրքիր տեղեկություններ։ 1621 թ. մի հիշատագրության մեջ ասվում է. «Սով եղաւ Ըստամպոլ, [Իե] (25) դրամ հացն մէկ ստակ, այն այլ հող և մոխիր էր»[32]։ Այսպիսի տեղեկություններ կան նաև Կարինից[33], Մուշից[34] և այլն։

Պատերազմական գործողությունների, ասպատակությունների, սովի հետ միասին ժողովրդին մեծ չափով հարվածում էին նաև տարափոխիկ հիվանդությունները և համաճարակները։ Հիշատակարաններում քանիցս հիշվում է մահտարժամների մասին։ 1623 թ. Հովհաննես քահանան Խիզանում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում հաղորդում է. «Եւ արդ՝ եղև ի յայսմ ամի <եղև> մահտարժամ սաստիկ ի Մըսր և ի Ստամբալ՝ Բ(2) ամով յառաջ. ե եկեալ հասաւ մինչև ի Յալապ, և յՈւրհայ, և յԱմիթ, և ի Բաղէշ, ի Վան, և ի միջի մերում ի Խիզան, և ի մաւտակայ գաւառս մեր։ Եւ այնպէս սաստկացաւ մահն, զի ի յօրն Ճ(100) մեռեալ ելանէր ի Ա(1) քաղաքէ. և ի բաղում տանց Բ(2) և Գ(3) մի հետ տանէին ի դիր հանգստարանին. և Ժ (10)-ն մեռելի մի կարՐ ասէին։ Եւ երեկոյի խոցացն ի լոյս ոչ ելանէր. և քահանայք ոչ ժամանէին գալ ի տունս իւրեանց մինչև երեկոյի ժամուն ի հանգստարանէն, այլ և ոչ հասանէին հաղորդութիւն տալ հիւանդաց։ Այլ և այնպէս խստացաւ մահն մինչ զի Ե(5) ու Զ(6) տարւոյ տղայքն իւրեանց կամաւն ղնային առ քահանայքն, թէ՝ «Զմեզ հաղորդայ, չի մեռանենք առանց հաղորդի»[35]։ Նույնն է հաստատում Կիրակոս քահանան «Եւ ես ուրախացեալ գրէի, հասա ի յՈղբ Երեմիայի դարձեալ կրկին եկն ի վերայ իմ ողբ նորա՝ տարաժամ մահն, որ տարածեալ էր ի վերայ ամենայն երկրի, եկն ի գեղիկն իմ (Ավընդանց—Վ. Հ.) և ոչ եթող մարդ առանց արտասուաց յաւուր Ը, Թ, Ժ (8, 9, 10) թաղէինք մինչև երեկոյն, երբ լուսանայր նոյն չափով մեռանէին։ Բ(2) շաբաթ այնպէս մնաց։ Եւ ես սիրասնունդ որդեակ մի ունէի Ստեփանոս անուն, նա այլ գնաց ի գրկաց մերոց ի ճանապարհ ամենայն մարդոյ...»[36]։

Հատորում ուշագրավ տեղեկություններ կան բնական պատահարների մասին, որոնք կհետաքրքրեն գիտության այլ ճյուղերի մասնագետներին՝ աստղաբաշխներին, օդերևութաբաններին և այլոց։ 1635 թ. հիշատակարաններից մեկում կարդում ենք, որ նոյեմբերի 23-ին (դժբախտաբար վայրի անունը նշված չէ) «Զնոր սալորն քաղեցաք ի ծառէն, որ սբ. խաչէն յետև ծաղ-

---

30 № 442, էջ 294։
31 № 1124, էջ 767։
32 № 8, էջ 6. տե՛ս նաև № 5, էջ 5 № 925, էջ 627 և այլն։
33 № 290, էջ 196։
34 № 946, էջ 640։
35 № 164, էջ 115։
36 № 214, էջ 148, № 881, էջ 597—598, № 937 էջ 635, № 1071 էջ 725 և այլ հիշտ.։

կեցան սալորիքն, և խնձորիքն, վարդն, լիլակ ծաղիկն, և յետոյ դառն ձմեռ եղաւ»[37]։ Կան լուսնի և արևի խավարումների մասին վկայություններ[38]։ 1621 թ. հիշատակարաններից մեկում խոսվում է մորեխի պատճառած վնասների[39], մի այլ հիշատակարանում խիստ ձմռան պատճառով ծովի սառեցման մասին[40]։ Իսկ 1633 թ. Մկրտիչ երեցը հաղորդում է. «Թվին ՌՁԲ(1633) ջուրք պակասեցաւ ամէն երկիր. և զմեր Բաբերդս, որ մէկ աղբիւր չմնաց՝ ցամաքեցաւ, քաղաքս ամէն ջուր Ճորոխէն կու առնէին։ Յետի գալ տարին խիստ բարի եղաւ՝ անձրևային, աղբիւր չեղած տեղացն ջուր բղխէր»[41]։

Հատորում ընդգրկած հիշատակարանների տեղեկությունները չեն վերաբերում միայն բուն Հայաստանին կամ հարևան երկրներին, այնտեղ կան տեղեկություններ նաև հայ գաղթավայրերի և այն երկրների անցուդարձի մասին, որտեղ գտնվում էին վերջիններս։ Այս առումով ուշագրավ է Սիմեոն Լեհացու 1627 թ. ընդօրինակած Աղոթամատույցի հիշատակարանը, որը ըստ կարգի, դժբախտաբար, թերի է։ Հիշատակարանում խոսվում է Ղրիմի թաթարների Ուկրաինա և Լեհաստան կատարած արշավանքի, սրանց կատարած ավերածությունների, կողոպուտի և գերեվարության, այնուհետև Յարոսլավլ քաղաքի (Ուկրաինայում) մեծ հրդեհի և մահտարաժամի մասին[42]։ Նույն հեղինակը 1636 թ. գրած մի այլ հիշատակարանում պատմում է լեհ-շվեդական պատերազմի, ժողովրդի կրած տառապանքների և այլ դեպքերի մասին[43]։ Մի այլ գրիչ՝ Գասպար երեցը, 1628 թ. հիշատակարանում համառոտակի վերհիշելով 1604—1605 թթ. շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը, նկարագրում է Պարսկաստանում 1622 թ. հայերի դավանափոխության հանգամանքները[44]։ Քանի որ գրիչներն իրենց նկարագրած դեպքերին ոչ միայն ժամանակակից են, այլև հաճախ ականատես, ուստի նրանց հիշատակարաններում հաղորդվում են ժամանակագրական ստույգ տեղեկություններ, որոնք տրված են օրերի, երբեմն ժամերի ճշտությամբ։ 1597 թ. ընդօրինակած ձեռագրի դատարկ էջում, դեպքերի թարմ ազդեցության տակ մեկը գրել է. «Թվին ՌՀԱ (1622) մայիս ամսոյ Թ (9), աւրն հինգշաբթի, սուլթան Սուսթաֆան ելաւ ի հոր զուլայէն և ուրբաթ աւուր ի թախտ նստաւ՝ մայիս Ժ (10) աւրն և երեկոյ ժամուն։ Ձեղբաւր որդին՝ զՈսման թագաւորն, խեղքեաց ձեռամբ Տաւութ փաշայ զաւրավարին իւրոյ, որ անիրաւութեամբ և բռնութեամբ տիրեալ էր զտեղ հաւրեղբաւր իւրոյ՝ թվին ՌԿԷ (1618) փետրվար ամսոյ ԺԶ (16) նստեալ մինչ ՌՀԱ (1622)...»[45]։ 1633 թ. մի հիշատակագրության մեջ Մովսես Տաթևացի կաթողիկոսի քարտուղարը գրում է, որ նրա մահը տեղի է ունեցել 1633 թ. մայիսի 21-ի լույս 22-ի գիշերը[46]։ Մինչդեռ Առաքել Դավ-

---

37 № 886, էջ 602։

38 № 184գ, էջ 130, № 249, էջ 170, № 361, էջ 237 և այլն։

39 № 1, էջ 1։

40 № 5բ, էջ 5, № 8, էջ 6։

41 № 833, էջ 559։

42 № 366, էջ 240—243։

43 № 957, էջ 648—653. նման վկայություն տես նաև 1629 թ. ջարքում, հիշատակ. № 485, էջ 325։

44 № 478, էջ 318—319։

45 № 73, էջ 50, № 75բ, էջ 51։ Այս դեպքն ավելի համառոտ հիշում են նաև այլ գրիչներ, հիշատակ. № 76, էջ 51, № 78, էջ 59։

46 № 736, էջ 504։

րիժեցին այս դեպքը նշում է 1632 թ. մայիսի 14-ին[47], իսկ Ալիշանն ընդունում է 1633 թ. մայիսի 14-ը[48]։

Տնտեսական, քաղաքական և իրավական այդպիսի ծանր պայմաններում ժողովուրդը, բնականաբար, ավելի շատ մտահոգվում էր իր ֆիզիկական գոյության համար, քան մտածում գրի ու ընթերցման մասին։ Սակայն դժոխային այդ վիճակում էլ շատերը, թեև զրկանքներով ու դժվարություններով, շարունակում էին այդ աշխատանքները, հիշատակարաններում թողնելով հետաքրքիր տեղեկություններ այդ տարիների վերաբերյալ։ 1625 թ. իր հիշատակարանում Մաղաքիա գրիչն ընթերցողներից խնդրում է ներել իրեն վատ գրելու համար. «զի նիւթն անյարմար էր և ժամանակն ձմեռն էր, և ես լուսահատեր էի ի կենացս, որ մէկ մի չեղև ընթերցող այսչափ գրեանուցս, որ հաւաքեցի և գրեցի, ոչ միայն այս, այլ բազում։ Եւ գրել տեղս անպատշաճ, զի Գ (3) տեղ փոխեցայ վասն դրելոյ...»[49]։ Գրչության պայմանների մասին հատորում կան բազմաթիվ տեղեկություններ, որոնցից կբերենք միայն մի քանիսը։ Գրիգոր երեցը ձեռագրի ընդօրինակությունը սկսել է 1623 թ. և ավարտել 1637 թ. «ի դառնութեան ժամանակ էր, որ կու նեղէին զմեզ այլասեռքն, որ խելքս մոլար է և միտս շուար և ի ծերութիւն ժամանակս էր, որ ի գրելն զաչս ցաւեցուցի, որ ի քառասուն աւրն սև գիրն գրեցի ի յաւուրս պահոցն, որ ժամատեղացն բանքն շատ էր, ճրգնութեամբ և աշխատութեամբ ի յանգ և ի յաւարտ հանեցի»[50]։ Կարապետ գրիչը 1627 թ. գրում է. «...գրեցի զսա բազում աշխատութեամբ ի յայս դառն և ի նեղ ժամանակիս, զի ի ձմերայնի սակաւ մի գրէաք և ի յամարայնի՝ ոչ, վասն ահի անօրինաց և հարկապահանջութեան բռնաւորացն ոչ կարէաք, զի յամենայն կողմանց ի վտանգի կայաք, վասն այն յերկարեաց ի վերայ մեր գրել սորա»[51]։ Գինոս երեցը 1629 թ. խնդրում է. «... Թողութիւն արէք, զի ամառնային ժամն չէաք կարել նստիլ, հողագործութեան հետ շարաշար էաք. և ձմեռն, թէ զթանաքն եփէի նայ՝ գրիչ չէի գտնուլ, և թէ գրիչն գտնէի՝ նստոյ տեղ չկայր, վասն վրդովման ժամանակիս»[52]։ 1634 թ. Թորոս Աթխցի գրիչը գրում է. «...անմեղագիր լերուք սղալանաց և խոշորութեանն, զի կար մեր այս է, բաղում տառապանօք և աշխատութեամբ որ ձաբրդեցի զայս Քարազգիրքս։ Զի հացն է ցամաք, ապուրն է թրթու, աչերս եղեր է քանց զվրդու»[53]։ 1634 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում Գրիգոր քահանան հաղորդում է. «Քանզի այս տետրս ի հսարն գրեցի. այս երկու ամիս է, որ այս տետրս կու գրեմ». «Վա՜յ ինձ, զի զալտայ զլուսանցն գրեցի, վա՜յ ինձ հազար բերան։ Աչս զտող չի տեսաւ, տեղս մութն էր»[54]։ Եվ այսպես շարունակ։

Այս ժամանակաշրջանում նախորդ տարիների նշանավոր գրիչների՝ Սարդիս Մազմանի, Ղազար Բաբերդացու, Սիմեոն Լեհացու, Մեսրոպ և Մարտիրոս Խիզանցիների հետ միասին հիշվում են Խաչքոն, Հակոբ և Միքայել Թոխաթեցիները, Ստեփանոս և Գրիգոր Ջուղայեցիները, Ճտնդեմիրը, Զատիկը

---

47 «Պատմութիւն Հայոց», էջ 439։
48 «Այրարատ», էջ 231։
49 № 245, էջ 166։
50 № 1011, էջ 693—694։
51 № 365, էջ 239։
52 № 485, էջ 324։
53 № 841, էջ 565։
54 № 846, էջ 571։

և ուրիշներ։ Զափազանց հետաքրքիր է Սահակ գրչի տեղեկությունն այն մասին, որ ինքը 1640 թ. գեղեցիկ գրով ընդօրինակել է մի ժողովածու տակավին 11 տարին չլրացած[55]։

Ահա այս պայմաններում գրիչները ձեռագրերը ոչ միայն ընդօրինակում, ծաղկում, նորոգում էին, այլև անձնազոհությամբ դրանք պահպանում կորստից։ 1283 թ. ընդօրինակած՝ Կեռան Թագուհու անունով հայտնի Ավետարանը, որի հետագա ստացողն էր ոմն Օգսենտը, 1626 թ. դրած հիշատակարանում հայտնում է. «...որ վիշ դառն ժամանակ պահեցի ի հարամէ, ի տաճկէ. Լ (30) տարի սար ու ձոր մաշեցայ, կին ու որդիս կորուցի, զայս սբ. Աւետարանս պահեցի»[56]։ Մղձավանջային այդ տարիներին հաճախ լինում էր և այդպէս։

Թեև այսպիսի ծանր վիճակում էին հայերը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ իրավական առումով, բայց ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ պանդխտության մեջ փրկության ու ազատագրվելու հույսը չէին կորցնում։ Այդ հույսն արտահայտել է Սարդիս երեցը 1635 թ. Իզմիրում ընդօրինակած Բժշկարանի իր հիշատակարանում. «Յիշեցէք զմեղուցեալ և զանարժան գրիչս զՍարգիս Էրէցս, որ զարիպ, և անտէր, և անօգնական եմ մնացեր, որպէս հաւ ի երամէ զատած, ի սիրելեաց բաժանած, միթէ Աստուած զմեզ ի մեր ծնած և սնած երկիրն տանի և կրկին ուրախացնէ»[57]։

Հիշատակարանների սույն հատորի նյութերի արժեքը մեծանում է նաև նրանով, որ գրանցում գտնում ենք քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ տեղանուններ, ինչպես օրինակ, Աղտք[58], Ղուլթիկ[59], Ռոհաթին[60], Պալախօր[61], Ապար[62], Կարմունջ[63], Քռել[64], Սաթու[65], Ղըսէ[66] և այլն, որոնք արտահայտված են տեղանունների ցանկում։

Եթե սույն ժողովածուի Ա հատորի հիշատակարաններում հասկանալի պատճառով չենք հանդիպում շինարարական աշխատանքների, ապա ներկա հատորի հիշատակարաններում հանդիպում ենք կառուցման և նորոգման աշխատանքների, որոնք տարվում էին պատերազմական թոհուբոհից ժամանակավորապես հեռու վայրերում։ Մասնավորապես Մովսես Տաթևացու վանահայրության և ապա կաթողիկոսության ժամանակներում Երևանի և Էջմիածնի եկեղեցիների և վանքերի վերաշինության մասին մանրամասն տեղեկություններ կան մի շարք հիշատակարաններում[67]։ Նման տեղեկություններ կան այլ քաղաքների, օրինակ, Երուսաղեմի, Համիթի, Ուռհայի և այլնի

---

55 № 1165, էջ 793։
56 № 309, էջ 204—205. տե՛ս նաև № 247, էջ 168։
57 № 879, էջ 596։
58 № 58, էջ 37։
59 № 65, էջ 43։
60 № 366, էջ 243։
61 № 488, էջ 328։
62 № 515, էջ 349։
63 № 552, էջ 373։
64 № 824, էջ 553։
65 № 911, էջ 619—620։
66 № 717, էջ 494։
67 № 144, էջ 97, № 258, էջ 178—179, № 318, էջ 209, № 504, էջ 341, № 624, էջ 426 և այլ հիշատակարաններում։

մասին[68], 1635 թ. Բալուի Փրկչածին[69], 1636 թ. Գողթան գավառի Թումա առաքյալի վանքի[70], 1640 թ. Սեբաստիայի Ս. Սարգիս եկեղեցու[71] վերականգման աշխատանքների մասին։ Սույն հատորը պարունակում է տեղեկություններ նաև եկեղեցիների և վանքերի զանազան նվիրատվությունների[72], գերիների ազատագրության[73], ձեռագրերի առուծախի արժեքի[74], ձեռագրերի ընդօրինակության վարձի[75] և այլ հարցերի մասին։ Մի խոսքով այս և հաջորդ հատորները լրացուցիչ անսպառ նյութ են պարունակում հայ ժողովրդի տընտեսական, քաղաքական, իրավական վիճակի, պատմության, լեզվի և այլ հարցերի ուսումնասիրության համար։

Ձեռագրերում և ձեռագրերի հրատարակված ընդարձակ ցուցակներում հանդիպում են հիշատակարաններ, որոնք բացի ընդօրինակության կամ նորոգման տարեթվից, այլ տեղեկություններ չեն բովանդակում, օրինակ. «Գրեցաւ թվին ՌՀԵ (1626) հոկտեմբեր ԺԹ (19), օրն հինգշաբթի»[76], «Գրեցաւ ՌՂԲ (1643) թվին»[77], «Կատարեցաւ թվին ՌՃԳ (1654)»[78], «Գրեցաւ Շարակնոցս ի թվին ՌՂԲ (1643)»[79], «Նորոգեցաւ ի թվականիս Հայոց ՌՂ մէկ (1642) ամին»[80] և այլն ,որոնք տեղ չեն գտել այս և հաջորդ հատորներում։

Կան հիշատակարաններ, որոնք թեև գրված են ձեռագրերում կամ տըպագրված են մամուլում, բայց դրանք հնատիպ գրքերից վերցրած հիշատակարաններ են, որոնք չեն առնչվում տվյալ ձեռագրի ընդօրինակության ժամանակի և այլ հարցերի հետ, օրինակ, մեր Մատենադարանի № 6824 ձեռագիրը, որն ընդօրինակել է Հարությունն Տէր-Սիմոնյանը, Կարբի գյուղում, 1856 թ., Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» չափածոն է, տպագրված Վենետիկում, 1643 թ.։ Ահա տպագրողի հիշատակարանի մի հատվածը. «Փառք..., որ ետ կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Յոհաննէս Անկիւրեցոյ թարգմանչի, որ մականուն ըստ Հռոմայեցոց Ճիւանի Մոլինս ասի, հասանել ի յաւարտ տպագրութեան արհեստիս, բաղում ջանիւք և շատ նեղութեամբ տքնեալ և աշխատեալ, այս Զ (6) ամ է, զոր կախեալ կամ վասն տպագրութեան արհեստիս, ապավինելով ի յոյսն ամենեցուն...»[81]։ 1641 թ. տպագրված մի գրքի հիշատակարան էլ հրատարակվել է «Բանասէր»-ում[82]։ Այդ տիպի հիշատակարանները ձեռագրերի հիշատակարանների հետ հավաքել է Ղ.

---

68 № 788, էջ 530, № 844, էջ 566, № 847 էջ 572 և այլն։

69 № 941, էջ 637։

70 № 1000, էջ 683—684։

71 № 997, էջ 679, № 1170, էջ 796։

72 № 16, էջ 10, № 136, էջ 92, № 1159, էջ 789—790 և այլ հիշատակարաններ։

73 № 640, էջ 443, № 659, էջ 460 և այլ հիշատակարաններ։

74 № 300, էջ 200, № 307, էջ 204, № 339, էջ 225 և այլ հիշատակարաններ։

75 № 562, էջ 380, № 949, էջ 642 և այլ հիշատակարաններ։

76 Մատենադարանի ձեռ. № 6914, էջ 316ա։

77 «ՀԱ», 1947 թ., ԺԱ—ԺԲ, էջ 633։

78 Տե՛ս նույն տեղում։

79 ՋՁՀՍ, № 27, էջ 381. տես նաև ՋՁՆԿԱ, № 20, էջ 61, ՏՁՁՄՎ, № 51, էջ 248, ՈՁՁՄՎ, № 1088, էջ 753, մեր Մատենադարանի № 4309, ձեռագիրը, էջ 295բ և այլն։

80 Մատենադարանի ձեռ. № 5916, էջ 75բ. տես նաև № 2492, էջ 116ա, № 899, էջ 16բ և այլն։

81 էջ 158բ։

82 1905 թ., № 2, էջ 61։

Փիրղալեմյանը[83]։ Նման հիշատակարանները, անշուշտ, պետք է հրատարակել, սակայն տպագրված գրքերի հիշատակարանների ժողովածուներում, իսկ մեր և այլ հեղինակների հրատարակած ժողովածուները ձեռագրերի հիշատակարանների հավաքածուներ են։

Մեր Մատենադարանի № 9930 ձեռագիրը ունի «Պատմութիւն Յովսէփայ Գեղեցկոյն, զոր շարադրեալ տաղաչափիւ Նուաստ Աստուածատուր տկար յոգւոյ, ոչ թէ ականջալուր լեալ գրեցի, այլ Աստուածաշունչ գրոց առեալ և լիապէս դրեալ, զայն որ ասէ ընդերցուածս ի Ծնընդոց»[84] վերնագիրը։ Նշված չափածոն վերջանում է այսպես.

«Եղև վճար բանիս այս ներբողական,
Յակոբայ, Յովսէփայ ւ եղբարցն ամենայն,
Կարգաւ ըզպատմութիւնըն վկայական,
Դիւրահաւան մանկանցն որ ուսումնական։
Ի Հայոց տումարի հազար թուական,
Ինընսուն և մին յարաբարդեալ կան (1642),
Տաղաչափ շինեցաւ բանըս պատմաբան,
Ոչ յինքենէ մտաց, այլ գրոց Ծընընդեան։
Ի կղզիս Վէնետիկ ծովանստական,
Ղարիպութիւն յերկիրս ի Ֆռանկիստան,
Այն որ Յովսէփ հասուց փառք ւ իշխանութեան,
Հասցնէ զամէն ղարիպ իւր նաւահանգստեան։
Նուաստ յոգի Աստուածատուր անարժան,
Որ ըսկիզբն եդ բանիս ւ ես կատարման,
Լալ[85]

Մատենադարանի ձեռագրաց ցուցակում այս չափածոյի վերջին մասը համարված է հիշատակարան և ձեռագրի ընդօրինակությունը նշված է 1642 թ. հետո[86]։ Մեր կարծիքով դա վերաբերում է ոչ թե ձեռագրի ընդօրինակությա-

---

83 «Նշխարք», հտ. Ա, № 775, էջ 214ա բ, № 776, էջ 214բ և այլն։

84 էջ 1ա։

85 էջ 15բ։ Շարունակությունն ընկած է։

86 Հա. Բ, էջ 1017։ Այդպես է նշված նաև № 697 ձեռագրի ընդօրինակությունը։ Վերջինիս 46ա, 85բ և 125ա էջերի հիշատակարաններում տարեթիվ չի նշված, բայց 55բ—56բ էջերում գտնում ենք մի չափածո, որի վերջին տողերը համարված են հիշատակարան (հտ. Ա, էջ 384)։ Տարօրինակ է, որ № 9930 ձեռագրի վերևում նշված չափածոն գրվել է 1642 թ. և ձեռագրի ընդօրինականությունը նշված է 1642 թ. հետո (հտ. Բ, էջ 1017), իսկ № 697 ձեռագրի չափածոյի ստեղծման տարեթիվը՝ 1631 թ. համարված է ձեռագրի ընդօրինակության տարեթիվ (հտ. Ա, էջ 384)։ Այսպիսով, միևնույն տեղեկությունը հանգեցրել է տարբեր եզրակացություններ։ Բացի այդ, նման «հիշատակարաններ» ձեռագրաց ցուցակում չեն նշված, № 7467 ձեռագրում գտնվում է «Տաղ և գովասանք սր. տաճարին էջմիածնայ» վերնագրով մի չափածո (էջ 375բ—378ա), որի վերջին երկու քառյակը հետևյալն է.

«Առաքել է մեղօք տկար,
Այսքան բաներս անկեալ ի շար,
Եւ որք երգէք սրտիւ յօժար,
Ցիշման արէք զիս անդադար։
Եւ որք յիշեն զմեզ ի բարին,
Եւ ասասցեն զՏէր ողորմին,
Ցաւուր մեծի դատաստանին,
Արժան լինին կենաց ձայնին»։

Եթե հետևելու լինենք վերևում մեջբերված օրինակին, սա էլ պետք է ընդունենք հիշատակարան, բայց ձեռագրաց ցուցակում, այդ չի նշված (հտ. Բ, էջ 539)։

նը, վերջինիս պայմաններին՝ նորոգմանը, գերությունից ազատելուն, ներքին ու արտաքին դեպքերին, այլ չափածոյի ստեղծմանը, ինչպես լինում է ձեռագրի հիշատակարաններում. այն չափածոյի շարունակությունն է, այսինքն՝ վերջաբանը։ Ուստի վերոհիշյալ հատվածը հիշատակարան չէ, այլ բանաստեղծության շարունակությունը, ինչպես սովորաբար լինում է նման և գուսանական ստեղծագործություններում։

Կան ձեռագրեր, որոնք հիշատակարան չունեն և չի նշված ձեռագրաց ցուցակի նկարագրության բաժնում, օրինակ մեր Մատենադարանի № 1560 ձեռագիրը[87], իսկ հիշատակարանների ցանկում նույն ձեռագիրը նշված է 1674 թ. հիշատակարանով[88]։

Կուզենայինք նշել նաև հիշատակարանների տարեթվերն չհամապատասխանող երկու տիպի տվյալների մասին։ Մի քանի հիշատակարաններում տարեթիվը և պարսից թագավորի գահակալությունը չեն համապատասխանում միմյանց, օրինակ, ԺԵ դարի Ավետարանի հետագա ստացողը գրում է. «...Արդ՝ ես խոճայ Ֆրանգուլս առի սբ. Աւետարանս ՌՃԹ (1660) թվին, Պարսից թագաւորութիւն շահ Սուլէմանին...»[89]։ 1610 թ. մի Աստվածաշնչի հետագա ստացողը գրում է. «...Թվին ՌՃԸ (1659) հոգտեմբերի ամսուն էկի Ըսպահան... Ի թագաւորութեան այսմ թվի Պարսից շահ Սէլէմանին, երկրորդ շահ Աբասի որդուն»[90]։ Ինչպես հայտնի է 1667 թ. Աբաս Բ-ի մահից հետո հաջորդում է որդին՝ Սուլեյմանը և իշխում է մինչև 1694 թ.[91]։ Ինչպե՞ս կարող է 1659 թ. կամ 1660 թ. վերջինս թագավորել, երբ իր հայրը կենդանի էր։ Մեր կարծիքով «ՌՃԸ» և «ՌՃԹ» հայոց տոմարի տարեթվերը սխալ են գրչագրված կամ տպագրական սխալ է և պետք է լինի «ՌՃԺԸ» (1669) և «ՌՃԺԹ» (1670)։ Այստեղ արդեն հիշատակարանների հայոց տոմարի տարեթիվը և պարսից Սուլեյման շահի թագավորության տարիները համապատասխանում են միմյանց։ Այդ պատճառով էլ ինչպես այս, այնպես էլ մի երկու հիշատակարաններ տեղավորեցինք հաջորդ հատորներում։

Լինում է և այնպես, երբ ավանդույթ դարձած Նիկիայի ժողովի մասնակից ԳՃԺԸ կամ ՅԺԸ (318) հայրապետների թիվը, որ երբեմն հիշատակվում է հիշատակարաններում, դիտված է որպես հիշատակարանի գրության տարեթիվ, օրինակ №№ 2660 (էջ 82բ), 4856 (էջ 94բ) ձեռագրերի հիշատակարանները, որոնց թվականը իբր 1669 է[92]։ Վերջապես լինում է ծածկագիր չափածո, որը համարվում է հիշատակարան, սակայն այն ծածկագիր հանելուկ է կամ խնդիր, օրինակ, № 4253 (էջ 157բ), որը ցուցակում հարցականով նշված է 1608 թվի հիշատակարան[93]։

---

87 Հտ. Ա, էջ 583։

88 Նույն տեղում, էջ 1371։

89 ՀՍՎԼ, № 233, էջ 554։

90 «Արարատ», 1911 թ., էջ 846։

91 Սուլեյման Ա-ն ըստ Լեն-Պուլի իշխել է 1667—1694 թթ. (տե՛ս Мусульманские династии, Пб., 1899, стр. 219), իսկ Կ. Բոսվորտի՝ 1666—1694 թթ. (տե՛ս Мусульманские династии, М., 1971, стр. 226):

92 Հտ. Ա, էջ 848, 1302, 1371։

93 Հտ. Ա, էջ 1179, 1347։ Իսկ պրոֆ. Ա. Աբրահամյանը երեք անգամ անդրադարձել է նշված ձեռագրի տարեթվի որոշմանը։ Միևնույն հաջիվը կրկնում է «Բանբեր Երևանի համալսարանի», 1967 թ., № 1, (էջ 209) հոդվածում և «Հայոց գիր և գրչություն», Երևանի, 1973 թ. (էջ 164) աշխատությունում։ Իսկ երրորդ հոդվածում՝ «Տոմարաթիվ չափածո ծածկագրերի

Հիշատակարանների Բ հատորն ընդգրկում է մեծ և փոքր 1272 հիշատակարաններ, որոնց հրատարակության սկզբունքների մասին խոսվել է սույն ժողովածուի Ա հատորի Առաջաբանում (էջ ԻԳ-ԻԶ)։ Սակայն նշված երեք սկզբունքները փոփոխված են ՀՍՍՀ ԳԱ ակադ. Լ. Ս. Խաչիկյանի խորհրդով, որոնք ընդունեցինք շնորհակալությամբ։ Սույն հատորում նշված են հիշատակարանների հեղինակների՝ գրիչ, ծաղկող, նորոգող, կազմող, ստացող, նվիրատու, գերությունից ազատող անուններն իրենց հիշատակարանների վերևում առանձին-առանձին և ոչ թե միասին, ինչպես արված էր սույն ժողովածուի Ա հատորում։ Ցուրաքանչյուր տարեթվում հիշատակարանները կարելի է դասավորել ըստ կարևորության կամ ժամանակագրական սկզբունքով, երբ հիշատակարաններում առկա են ամիս-ամսաթիվը։ Սակայն, լինում են հիշատակարաններ, որոնք ունեն ամիս-ամսաթիվ, բայց ոչ կարևորություն։ Ուստի չենք հետևել կարևորության և ժամանակագրական սկզբունքին միասին։ Այդ պատճառով նպատակահարմար գտանք նախ ամիս-ամսաթիվ ունեցող հիշատակարանները դասավորել ժամանակագրական կարգով, իսկ մնացածները՝ նախ անտիպ հիշատակարանները, ապա տպագրվածները[94]։ Հիշատակարանների Ա հատորում հետևել ենք հայկական տոմարի սկզբունքներին։ Բայց Լ. Ս. Խաչիկյանի խորհրդով, մի շարք դեպքերում պարզվում է, որ Եվրոպայի հայկական գաղթավայրերում՝ Ուկրաինա, Լեհաստան, Հունգարիա, Իտալիա, Ղրիմ և այլն, ձեռագրի հիշատակարաններում գրիչը, ճիշտ է, տոմարական հաշիվը նշել է հայկական տոմարով, սակայն հետևել է Եվրոպական ժողովուրդների տոմարական սկզբունքին, օրինակ, սույն ժողովածուի Ա հատորի № 285 հիշատակարանը, ինչպես և ձեռագիրը, գրվել է Կամենիցում, ուր հիշատակարանում ասված է. «...ըսկսայ նօտարել Հայոց թվին

վերածնություն» (Բանբեր Երևանի համալսարանի, 1973 թ., № 1, էջ 90—116), անդրադարձել է 157բ էջի բոլոր ծածկագրերին։ Մենք միայն կանդրադառնանք երկու սխալի, թեև այլ սխալներ էլ կան։

«Ըստ գերակատար թուոյ կրկնեալ զենգետասան,
Պարարարձմամբ յայնց կրկնակի ընդ ինդոսեան» (էջ 100)։

Նախ՝ ընդգծված բառերը ձեռագրում գրված են «զենդատասնեանն» և «իդոսեան» ձևով։ Երկրորդ՝ պրոֆ.Ա. Աբրահամյանը լուծում է այսպես՝ (532×2)+15+14+551=1644։ Այս լուծումը բացահայտ սխալ է։ Պրոֆեսորն ըստ երևույթին անտեսել է «Պարարարձմամբ» բառի իմաստը, որը համապատասխանում է «պարարառնամ» կամ «պարարառնալ» և հունարեն περιαιρεω բառերին և նշանակում է՝ հանել, մասնահանել, պոկել, վերցնել, յետ առնել, զրկել, ջնջել և այլն (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 625)։ Երրորդ՝ որպեսզի գումարը ճիշտ ստանա պրոֆ. Ա. Աբրահամյանը իդոսի արժեքն ընդունում է ոչ թե 8, թեև այդպես նշում է (էջ 100, ծանոթ. 5), այլ 7։ Մինչդեռ պետք է լուծել այսպես՝ [(532×2)+15—16(=2×8)]+551=1614։ Պրոֆ. Ա. Աբրահամյանը սխալ է կատարում ծածկագրության երրորդ չարքում։ Մեջբերելով չորս տող, ուր վերջին երկու տողը վերաբերում է տոմարական հաշվումին.

«Կրկնապատկեալ մասամբ տասին, երկյիմնական,
Երկեակ եռորդ ընդիքտիոն թիւ կրկնական» (էջ 100)։

Ապա լուծում՝ երկու հիսունը բազմապատկելով 10-ով, ստանում է 1000, այնուհետև ընդիքտիոնի արժեքը հաշվելով 15, «Երկեակ եռորդ»-ը հաշվում է այսպես՝ 2×3×15=90։ Այս բոլորը ճիշտ է։ Սակայն, որպեսզի պտանա 1644 տարեթվի գումարը, ինչպես արվել է առաջին օրինակում և 1090 գրելու փոխարեն, գրում է «ստանում ենք 1093, որին գումարելով 551 ստանում ենք 1644 (1093+551=1644)» (էջ 100)։

[94] Սույն ժողովածուի Ա հատորում տվյալ տարեթվի հիշատակարանները դասավորել ենք այլ կերպ՝ նախ անտիպները, այնուհետև տպագրվածները։

ՌՄԴ (1604), հոկտեմբեր ամսոյ ԻԸ (28), օրն երկուշաբթի»[95]։ Մենք այդպես ենք վարվել, որովհետև Հայոց ՌՄԴ տարեթիվը, համաձայն Բ. Ե. Թումանյանի և Հ. Ս. Բաղալյանի աշխատությունների[96] տված հաշվումների, սկսվում է 1604 թ. հոկտեմբերի 21-ից։ Սակայն 1604 թ. հոկտեմբերի 21-ը ոչ թե երկուշաբթի է, ինչպես նշված է հիշատակարանի բերված հատվածում, այլ կիրակի։ Հոկտեմբերի 28-ը երկուշաբթի կլինի 1605 թ.։ Այսպիսով օրվա պատկերը համապատասխանում է 1605 թ. հոկտեմբերի 28-ին։ Ձեռագրերում կան նաև զանազան նվիրատվությունների՝ հատկապես կալվածագրերի գրառումներ, որոնք տարեթվեր չունեն, սակայն տեղ են գտել սույն ժողովածուի Ա հատորում։ Այսուհետև չենք հրատարակելու[97]։

Այսպիսով, գիտական ուսումնասիրությունների համար օգտագործողները սույն և հաջորդ հատորներում գործնականորեն կիրառված կգտնեն որոշ սկզբունքներ, որոնք առաջացել են հիշատակարանների մեր Ա հատորի փորձից[98]։

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

---

[95] էջ 224։

[96] Տոմարական հաշվումներում առաջնորդվել ենք Բ. Ե. Թումանյանի «Առձեռն տոմարացույց» (Երևան, 1965 թ.) և Հ. Ս. Բաղալյանի «Օրացույցի պատմություն», (խմբագիր Ս. Տ. Երեմյան, Երևան, 1970 թ.) աշխատություններում նշված սկզբունքներով։ Սակայն այդ աշխատություններում Լ. Ս. Խաչիկյանի առաջարկած տոմարական հաշվելու սկզբունքը դժբախտաբար բացակայում է, թեև Բ. Ե. Թումանյանի նշված գիրքը հրատարակվել է Լ. Ս. Խաչիկյանի խմբագրությամբ։ Մյուս կողմից, հիշատակարանում եթե նշված չէ ամսաթվի շաբաթվա օրը և գրչության վայրը, հնարավոր չէ պարզել Լ. Ս. Խաչիկյանի խորհուրդը։

[97] Մեր Մատենադարանի ձեռագրերի ցուցակում, որի խմբագիրն է Լ. Ս. Խաչիկյանը, նման նվիրատվությունները՝ կալվածագրերը նշված են որպես հիշատակարաններ. օրինակ, ձեռագրաց ցուցակի Ա հատոր, էջ 1271 (ձեռագիր № 4721, էջ 657բ), հիշատակարան № 254բ (էջ 203, այսպիսի օրինակները վերցված են «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1601—1620 թթ.», Ա հատորից), էջ 1325 (ձեռագիր № 4969, էջ 260ա) հիշատակարան № 515 (էջ 408), Բ հատոր, էջ 113 (ձեռագիր № 5469, էջ 317ա—318ա), հիշատակարան № 208 բ (էջ 172), էջ 112 (ձեռ. № 5462, էջ 314ա բ), հիշատակարան № 368ա բ (էջ 304—305), էջ 28 (ձեռ. № 5068, էջ 252ա), հիշատակարան № 612 ե (էջ 489), էջ 178 (ձեռ. № 5759, էջ 140բ, 144ա, 138ա), հիշատակարան № 613 գ, է, ը (էջ 491—492) և այլ ձեռագրեր։

[98] Առաջաբանի անձնանունները, տեղանունները ցանկում չենք նշի, կրկնված լինելու պատճառով։ № 869 (էջ 588) հիշատակարանը կրկնված է՝ № 731 (էջ 501)։

ՑԱՆԿ

ՍՈՒՅՆ ՀԱՏՈՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԶՆՈՒԱԳՐԵՐ

1, 21, 51, 62, 75, 79, 117, 145, 146, 154, 180, 187, 198, 211, 212, 222, 234, 235, 256, 263, 290, 291, 292, 295, 354, 361, 413, 414, 466, 485, 504, 507, 518, 585, 590, 614, 685, 687, 697, 703, 706, 713 728, 739, 744, 761, 778, 780, 789, 797, 803, 809, 827, 834, 837, 942, 960, 979, 1004, 1017, 1025, 1027, 1069, 1099, 1109, 1110, 1120, 1130, 1160, 1171, 1184, 1188, 1191, 1193, 1206, 1245, 1246, 1252 ,1256, 1268, 1269, 1278, 1299, 1302, 1318, 1366, 1375, 1465, 1476, 1481, 1486, 1503, 1510, 1514, 1538, 1540, 1544, 1550, 1557, 1598, 1599, 1602. 1639, 1686, 1714, 1718, 1740, 1744, 1754, 1762, 1767, 1779, 1780, 1791, 1867, 1870, 1883, 1916, 1930, 1971, 1991, 2004, 2005, 2006, 2012, 2017, 2018, 2019, 2039, 2062, 2079, 2085, 2116, 2117, 2133, 2141, 2147, 2166, 2247, 2286, 2292, 2330, 2335, 2338, 2368, 2370, 2373, 2380, 2381, 2397, 2398, 2435, 2455, 2457, 2463, 2468, 2480, 2497, 2500, 2537, 2542, 2599, 2608, 2619, 2628, 2630, 2635, 2654, 2656, 2680, 2691, 2736, 2748, 2775, 2819, 2833, 2836, 2843, 2865, 2948, 3082, 3131, 3138, 3189, 3202, 3212, 3245, 3264, 3276, 3333, 3348, 3352, 3368, 3373, 3387, 3424, 3449, 3472, 3475, 3480, 3498, 3521, 3522, 3580, 3594, 3596, 3598, 3630, 3672, 3706, 3720, 3771, 3812, 3872, 3914, 3944, 3965, 3982, 3990, 3998, 4004, 4058, 4090, 4097, 4124, 4128, 4136, 4145, 4171, 4175, 4185, 4204, 4206, 4255, 4262, 4284, 4287, 4288, 4298, 4319, 4320, 4376, 4522, 4535, 4601, 4616, 4640, 4642, 4658, 4678, 4690, 4745, 4746, 4788, 4826, 4829, 4860, 4922, 4923, 4938, 4961, 4969, 4975, 4981, 5008, 5024, 5102, 5110, 5123, 5128, 5148, 5150, 5175, 5194, 5224, 5232, 5243, 5257, 5260, 5285, 5287, 5300, 5324, 5331, 5336, 5345, 5348, 5361, 5363, 5380, 5397, 5421, 5494, 5536, 5560, 5580 , 5586, 5588, 5589, 5637, 5641, 5645, 5658, 5662, 5664, 5676, 5736, 5772, 5781, 5801, 5816, 5826, 5832, 5847, 5849, 5853, 5872, 5887, 5896, 5909, 5953, 5982, 6032, 6059, 6074, 6118, 6124, 6140, 6152, 6223, 6272, 6290, 6301, 6318, 6319, 6321, 6322, 6334, 6335, 6336, 6339, 6342, 6349, 6358, 6367, 6369, 6390, 6404, 6437, 6485, 6491, 6496, 6512, 6542, 6569, 6570, 6626, 6649, 6650, 6664, 6747, 6757, 6764, 6769, 6785, 6786, 6795, 6799, 6806, 6807, 6846, 6866, 6914, 6953, 6964, 6991, 7045, 7060, 7072, 7077, 7087, 7100, 7104, 7120, 7135, 7195, 7217, 7222, 7224, 7247, 7290, 7334, 7367, 7368, 7370, 7372, 7375, 7381, 7382, 7430, 7441, 7458, 7464, 7477, 7494 7517, 7529, 7544, 7548, 7564, 7587, 7601, 7633, 7646, 7651, 7690, 7700, 7721, 7732, 7744. 7756, 7760, 7774, 7782, 7785, 7786, 7792, 7794, 7842, 7873, 7874, 7888, 7905, 7951, 7958, 7969, 7980, 7992, 7995, 8008, 8009, 8061, 8104, 8117, 8118, 8139, 8157, 8158, 8164, 8195, 8201, 8205, 8211, 8294, 8375, 8376, 8380, 8394, 8409, 8423, 8467, 8471, 8509, 8534, 8541, 8546, 8555, 8556, 8558, 8575, 8620, 8657, 8671, 8674, 8873, 8887, 8897, 8933, 8935, 8941, 8968, 8976, 9063, 9065, 9147, 9283, 9292, 9325, 9380, 9436, 9488, 9661, 9678, 9694, 9715, 9742, 9807, 10011, 10050, 10128, 10149, 10157, 10168, 10200, 10311, 10329, 10331, 10375, 10376, 10380, 10381, 10382, 10390, 10427, 10433, 10440, 10441, 10550, 10565, 10669, 10768, 10775,

Պատատիկներ

№№ 671, 795, 848, 964։

ՄԼԳ—Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան գրադարանի ձեռագրերի բաժին. հայերեն ձեռագրերի ֆոնդ։

Մանրաժապավենների ֆոնդ (դրսից ստացված)

Երուսաղեմ—Երուսաղեմի Ս. Հակոբեանց վանքի մատենադարան.
№ 642, Երևան, մանրաժապավեն, № 417
№ 428 » » № 589
№ 1090 » » № 598

ԼԱԱԺԻ—Լենինգրադի Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտ
№ A—16, Երևան, մանրաժապավեն, № 238
№ A—36, » » № 117
№ A—83, » » № 219
№ B—11, » » № 233
№ B—21, » » № 243
№ B—45, » » № 264

Լայդեն—Լայդենի համալսարանի գրադարան, ձեռագիր № 346, Երևան, մանրաժապավեն, № 465

Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան.
Арм. 6, Երևան, մանրաժապավեն, № 59
Арм. 7, » » № 60
Арм. н. с. 11, » » № 109
Арм. н. с. 14, » » № 112

Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի ձեռագրեր.
№ 22, Երևան, մանրաժապավեն, № 539
№ 78, » » № 562

Կ. Պոլսի Պալատ թաղի Ս. Հրեշտակապետի եկեղեցու ձեռագրեր.
№ 26, Երևան, մանրաժապավեն, № 500
№ 73, » » № 531

Զիկագո-Զիկագոյի համալսարանի գրադարան, ձեռագիր № 1017, Երևան, մանրաժապավեն, № 615

Վենետիկ-Վենետիկի Մխիթարյանների միաբանության մատենադարանի ձեռագիր № 1507, Երևան, մանրաժապավեն, № 629։

Փարիզ-Փարիզի ազգային մատենադարանի հայկական ֆոնդի ձեռագիր.
№ 5, Երևան, մանրաժապավեն, № 578 A, № 83

Հիշատակարանների ժողովածուներ (ամբիոն)

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք» հտ. Ա—«Ընշխարք պատմութեան Հայոց», ձեռ. № 6332։
Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք» հտ. Բ—«Ընշխարք պատմութեան Հայոց», ձեռ. № 4515։
№ 6333—Հովհ. Բարղամյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի։
№ 9027—Ղ. Փիրղալեմյան, Հիշատակարանների և այլ նյութերի ժողովածու։

Ձեռագրաց ցուցակներ (ամբիոն)։

Artab--Ergänzugs Verzeichnis der armenischen Handschriften Preussischen Statsbibliothek zu Berlin, von dr. A. Abeghian. (Մանրաժապավենը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատունը)։

ԼԱՀԳԱՀ—Ս. Պ. Լալաֆարյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտ[1]։

[1] Երբ ցուցակը հեղինակի մոտ է հասցեն չի նշվում։

Կ. Ցուզբաշյան—*Հայերեն ձեռագրերի լենինգրադի հավաքածու*
Մագիստրոս—Մեսրոպ Տեր Մովսիսյան, *Հայերեն ձեռագրերի ընդհանուր ցուցակ։ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրատուն, ձեռագրաց ցուցակների ֆոնդ։*
ՊՊԹ—Ե. Լալայան, *Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի։ Երևանի պետական պատմական թանգարան, ազգագրության բաժնի արխիվ։*
ՏԵՐԱՎԴ—Ս. Վ. Տեր Ավետիսյան, *Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի Ս. Ստեփանոսի, որ ի Գողթն։ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրաց ցուցակների ֆոնդ։*
Տիրայր վարդապետ—General cataloque of the Armenian manuscripts in the Bodleian library at Oxford. *Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Տիրայր վարդապետի արխիվ (անհատական ֆոնդ), թղթապանակ 119—122, վավերագիր 1ա–1իզ։*
Տիրայր վարդապետ Man.—Cataloque of the Armenian manuscripts in the Sir John Ryland's library at Manchestar by the wardapet Tirayre. *Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Տիրայր վարդապետի արխիվ (անհատական ֆոնդ), թղթ. 118, վավ. 1ա–1զ։*
Ի. Հովսեփյան, *արխիվ—Մաշտոցի անվան Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, (անհատական ֆոնդ) թղթ. 91, վավ. 6ա։*

Ձեռագրաց ցուցակներ (տպված)

Զմմառ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, հտ. Բ, Անտոնեան հաւաքածոյ, կազմեցին Ն. Ակինեան և Հ. Ոսկեան, Վիեննա, 1971։
ԹՑԱՎ—Յ. Թօփնեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962։
ԹՑՁԴ, Ա—Յ. Թօփնեան, Ցուցակ ձեռագրաց Դաւեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898։
ԹՑԺԴ, Բ—Յ. Թօփնեան, Ցուցակ ժողովածուաց Դաւեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900։
ՀՀՀԼԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի Հայոց Հիւրանոցի ի սբ. Վլաս և քահ. Լեոնեան հայ վարժարանի, կազմեց Ն. Ակինեան, Վիեննա, 1961։
Մուրմար, I,II—Սահակ Ա. Մուրատեան, Նազարեթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղէմ, 1967։
ՄՑԶԵՊ, I, II, III, IV, V, VI, VII, VIII—Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպիս. Պողարեան, հտ. I (Երուսաղէմ, 1966), հտ. II (Երուսաղէմ, 1967), հտ. III, (Երուսաղէմ, 1968), հտ. IV (Երուսաղէմ, 1969), հտ. V (Երուսաղէմ, 1970), VI (Երուսաղէմ, 1972), հտ. VII (Երուսաղէմ, 1974), հտ. VIII (Երուսաղէմ, 1977)։
ՄՑԶԵՄՍ, I—Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հավաքածուներու, հտ. Ա, կազմեց Արտաւազդ արքեպ. Աւիրմէեան, Փարիզ, 1950։
ՄՑԶՀՄՍ, II—Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց, հտ. Բ, կազմեց Արտաւազդ արքեպ. Սիրմէեան, Հալէպ, 1936։
ՄԻՆՋ—Լ. Գ. Մինասյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հտ. Բ. Վիեննա, 1972։
ՄԻՆԱ—Լ. Գ. Մինասյան, տե՛ս նախորդ ցուցակի հավելվածում (էջ 190—242)։
ՅՈՎՑՆ—Ստեփանոս արքեպ. Յովակիմեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմեդիոյ և շրջակայից, Վենետիկ, 1969։
ՈՑՁՄՎ—Ցուցակ ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, կազմեց Հ. Ոսկեան, Վիեննա, 1963։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1945։
ՊՎՑՁՍ—Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հտ. Ա, Կեսարիոյ վիճակ, տեսր Ա։ Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սարգիս վանուց ի Կեսարիա, կազմեց Տրդատ վրդ. Պալեան, Կ. Պոլիս, 1892։
ՊՑԶԿ—Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց Տրդատ եպ. Պալեան, Վիեննա, 1963։ Նախապես տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1959—1960 թթ.։
Վատիկանի գրադարան—Bibliothecae apostolicae Vaticanae—Codices armeni bibliotheca Vaticanae borgiani Vaticani barberiniani chisiani, Evgenivs Tisserant, Romae MCMXXVII.

ՏԵՐԱՎՋ—Տէր Աւետիսեան Ս., Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հա. Ա, Վիեննա, 1970։

ՏՑՁԿՄՎ—Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1891։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1891։

ՏՑՁՄՎ—Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895։

ՑՁԱԲ—Բարզէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957։

ՑՁԹԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի, կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1936։

ՑՁԹԱԻԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1910։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1905—1909։

ՑՁԻԱՁ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազետի, կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1924։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1909—1913 թթ.։

ՑՁԼԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Լվովի համալսարանի մատենադարանի, արքեպիսկոսարանի և Ստանիսլաւովի, կազմեց Ն. Ակինեան, Վիեննա, 1961։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1936, 1937, 1948—1950։

ՑՁՀՍ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, կազմեց Արտաւազդ արքեպ. Սիրմէեան, Եուսաղէմ, 1935։

ՑՁՂԲ—Բարզէն աթոռակից կաթողիկոս—Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961։

ՑՁՆԴԿ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի, կազմեց Ստեփան Կանայեանց, Թիֆլիս, 1893։

ՑՁՆԿԱ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Ն. Ակինեան, Վիեննա, 1961։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1953—1957։

ՑՁՎԼ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, պրակ Ա, Թիֆլիս, 1915։

ՑՁՎՍ I, II—Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յօրինեց հ. Բարսեղ վ. Սարգիսեան, հտ. Ա, Վենետիկ, 1914։
Նույնի հտ. Բ, Վենետիկ, 1924։

ՑՁՎՍ, III—Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Գ, յօրինեցին հ. Բարսեղ Սարգիսեան և հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ, 1966։

ՑՁՍԳ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմեց Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961։ Նաև «Հանդէս ամսօրեայ», 1922—1929։

ՔՑՁՁՎ—Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964։

Ֆինկ—Ցուցակ Տփխիսեցի Արգար Ցովհաննիսեանի հայերէն ձեռագրերի, երկասիրեց Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ, Լայպցիգ, 1903։

Ա. Երեմյան, «Բազմավէպ»—Արամ Երեմեան, ԺԷ դարի մի նոր գրչագիր Աւետարան, «Բազմավէպ», 1952 № 5—6։

Ա. Ղազիկյան, «Բազմավէպ»—Ցուցակ Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյ, հրատ. Հ. Քյուրտեան, «Բազմավէպ», 1968, № 1—2։

Արծնեան, «ՀԱՄ»—Յ. Քոսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի Կարին, «Հանդէս ամսօրեայ», 1962, № 1—4։

«Բանբեր Մատենադարանի», № 9—Ս. Քոլանջյան, Համառոտ ցուցակ հայերէն ձեռագրաց Գեռլա հայաքաղաքի (տե՛ս «Բանբեր մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 433—485)։

«Բանբեր Մատենադարանի», № 10—Հ. Քյուրտյան, Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածոյի ի Ուիչիտա, Կանզաս, ԱՄՆ (տե՛ս «Բանբեր մատենադարանի», № 10 Երևան, 1971, էջ 409—422)։

Բաս. «Բանասէր»—Կ. Հ. Բասմաջեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ազգային մատենադարանին Պարսի, (տե՛ս «Բանասէր» հտ. Բ, Փարիզ, 1900),

ՄՑՁՎԿՊԱ—Լ. Մելիքսեթ-Բեկ, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի («Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 377—423)։

Բեյրութ, «ՀԱՄ»—Հ. Ոսկեան, Հայերէն երեք նոր ձեռագիր Բէյրութի մէջ, «Հանդէս ամսօրեայ», 1959.։

Զավեն Արզումանյան, «Սիոն»—Հայերէն ձեռագիր մը Նիւ-Եորք Publie library-ին մէջ, «Սիոն», № 1, 1963։

Զմիւռնիա—Տեղաս եպս. Պալեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Զմիւռնիա (տե՛ս «Դպրնի», Ա տարի, 1921)։*

Մաղնիսիա—S. վ. Պ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիոն և Ս. Լուսաւորիչ եկեղեցիաց Մաղնիսիայի (տե՛ս «Արևելեան մամուլ», Զմյուռնիա, 1897)։*

Մանչեստր, «ՀԱՄ»—Մեսրոպ վրդ. Գրիգորեան, *Ժէ դարու մագաղաթեայ Աւետարան մը ի Մանչեստր, «Հանդէս ամսօրեայ», 1959։*

Միսքճեան, «ՀԱՄ»—*Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանու (ի Հռովմ), «Հանդէս ամսօրեայ», 1892։*

ՄԻՔԷՋ, «Էջմիածին»—Նուբար Միքայելյան, *Լիակատար ցուցակ մայր աթոռ սբ. Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի (տե՛ս «Էջմիածին», 1950—1952, 1964—1965)։*

Թեհրան, «ՀԱՄ»—Հ.Ոսկեան, *Ցուցակ Թեհրանի հայերէն ձեռագիրներու, «Հանդէս ամսօրեայ», 1953, № 1—3։*

Կարնոյ գիւղեր, «ՀԱՄ»—Հ. Քոսեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու, «Հանդէս ամսօրեայ», 1963—1964։*

Կոր. «Բանասէր»—Կորիւն վարդապետ, *Կ. Պոլսի Ս. Հրեշտակապետ Թաղի մատենադարանին ձեռագիրները (տե՛ս «Բանասէր» հտ. Զ, Փարիզ, 1904)։*

Զարմահալ, «Բազմավէպ»—Արամ Երեմեան, *Ժէ դարի մի գրչագիր Աւետարան, «Բազմավէպ», 1951։*

Հ. Քյուրեան, «Բազմավէպ»—*Հայրապետ վարդապետ Ղուլթիկեի և Ներսէս եպիսկոպոս Բաղիշեցի, «Բազմավէպ», 1955։*

Ա. Մելիք Հակոբյան, *«Բազմավէպ»*—*Ս. Ամենափրկչեան մատենադարան, գրչագիր № 36 Աւետարան, «Բազմավէպ», 1924։*

Սոֆիա, «ՀԱՄ»—Եփրեմ Պողոսեան, *Հայերէն ձեռագիրներ ի Սոֆիա, «Հանդէս ամսօրեայ», 1926։*

Վ. Ագուլիս, «Արարատ»—Մեսրոպ վրդ. Մաքսուտեան, *Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայի առաքելոյ վանուց և եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակետ գեղջ և անձանց մասնաւորաց (տե՛ս «Արարատ», 1911, 1914, 1915)։*

Վ. Թորգոմյան, *«Բազմավէպ»*—*Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին (տե՛ս, «Բազմավէպ», 1926)։*

Վիեննա, «ՀԱՄ»—Հ. Ոսկեան, *Ցուցակ Վիեննայի ազգային մատենադարանի հայերէն ձեռագիրներու, «Հանդէս ամսօրեայ», 1965։*

AHTFG—Systematisch—Alphabetischer Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tubingen. M. Handschriften, a) Orientalische, XIII, Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek von Franz Nikolaus Finek und Levon Gjandschezian, Tübingen, 1907.

KarHB—Die Handschriften Verzeichnisse der Königlichen Bibliothek zu Berlin, Zehnter Band, Verzeichniss der armenischen Handschriften von Dr. N. Karamianz, Berlin, 1888: *Նախապես տե՛ս «Բազմավէպ», 1886։*

CBCon—A Catalogue of the Armenian manuscripts in the British museum, by Frederick cornwallis Conybeare, London, 1913.

Rapp. Mac., VII—Rapport sur une mission scientifique en Galicie et en Bulgovine (juillet—aout, 1925), par Frederiek Macler (*տե՛ս* Revue des etudes armeniennes, tome VII, fascieule I. Paris, 1927).

Rapp. Mac., XXII—Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemerk et Suede (iuilliet—september, 1822), par Frederiek Mecler (*տե՛ս* Extrait des Nouvelles archives des missions scientifiques, tome XXII, fascieule 5, Paris, 1924).

ՀՑՄՆ—Avedis K. Sanjian, A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, Los Angeles, 1976.

ՄԱՄՈՒԼ

«Անահիտ», 1947 թ.։

«Արարատ», 1888, 1905, 1911, 1915 թթ.։

«Արևելեան մամուլ», 1897, 1908 թթ.։

«Արծուի Վասպուրականաց», 1859 թ.։

«Արձագանք», 1888, 1889 թթ.։

ԻԴ

«Բազմավէպ», 1886, 1924, 1926, 1933, 1935, 1938, 1951, 1952, 1955, 1968 թթ.
«Բանասէր», 1900, 1901, 1904 թթ.
«Բիւզանդիոն», 1897, 1898, 1906 թթ.
«Դափնի», Ա տարի, 1921։
«Էջմիածին», 1950—1952, 1964—1965 թթ.
«Լոյս», 1905—1906 թթ.
«Հայաստան», 1848։
«ՀԱ»—«Հանդէս ամսօրեայ», 1890—1892, 1895, 1897, 1903, 1905, 1906, 1908—1911, 1913, 1917—1918, 1921, 1922, 1924—1928, 1930, 1933, 1935, 1936, 1947, 1948, 1953, 1957—1960, 1962—1965, 1967 թթ.
«Հասկ», 1939։
«Սիոն», 1933, 1963, 1964 թթ.
„Zeitschrift fur armenische Philologie, B. II, H. IV, Marburg, 1904.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ագաթանգեղեայ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912։
Ն. Ադոնց—Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915
Ղ. Ալիշան—Սիսական, Վենետիկ, 1893։
Ա. Ալպոյաճյան—Պատմութիւն հայ կեսարիոյ, հտ. Բ, Գահիրէ, 1937։
Ա. Ալպոյաճյան—Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952։
Ա. Ալպոյաճյան—Յուշամատեան Կուտինահայերու, Պէյրութ, 1961։
Ն. Ակինյան—Բաղէշի դպրոցը, Վիեննա, 1952։
Ն. Ակինյան—Հինդ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921։
Ն. Ակինյան—Մովսէս Գ. Տաթևացի, Վիեննա, 1936։
Աղավնունի Այցելոյ—Մկրտիչ Աղավնունի, Միարանք և այցելուք հայ երուսաղէմի, երուսաղէմ, 1929։
Առշակ Զոպանյան, Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902։
Արցախ—Մ. Բարխուդարեանց, Արցախ, Բաքու, 1895։
Բժշկյանց—Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830։
ԳՍ. «Արարատ», 1905—Մշոյ Ս. Կարապետի վանից ձեռագիր գրեանք, գրեալ ի Գարեգին եպիսկոպոսէ Սրուանձտեանց։
Երնջակ—Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Նկարագիր Երնջակայ Ս. Կարապետի վանից և շրջակայից նորին, Տփխիս, 1906։
Գ. Զարգեանեանյան, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889։
Գ. Զարգեանեանյան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895։
Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966։
Թորոս աղբար, Ա,—Գարեգին Սրվանձտեանց, Թորոս աղբար ճանապարհորդ, Ա, Կ. Պոլիս, 1879։
Թորոս աղբար, Բ—Գարեգին Սրվանձտեանց, Թորոս աղբար ճանապարհորդ, Բ, Կ. Պոլիս, 1884։
Ժամանակագրութիւն Գրիգորի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ. Մ. Նշանեան, Երուսաղէմ, 1915։
Գ. Լեոնյան, Հայ գիրքը և ապարգության արվեստը, Երևան, 1958։
Կամենից—Ղ. Ալիշան, Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, Վենետիկ, 1896։
Կյուլեսերյան Բ.—Պատմութիւն կաթողիկոսութեան Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939։
Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, էջմիածին, 1914։
Ճանիկյան—Հ. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895։
ՄԺ, I—Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ. հտ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951։
ՄԺ, II—Նույնը, հտ. II, Երևան, 1956։
Պ. Նալբանյան—Արտօսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերտու, Զարսանճագի, Կ. Պոլիս, 1868։
Հ. Սանիսարեանյան, Սաղարդութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Բ, էջմիածին, 1842։

Հ. Ոսկյան, *Արցախի վանքերը, Վիեննա, 1953։*
Հ. Ոսկյան, *Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951։*
Հ. Ոսկյան, *Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957։*
Հ. Ոսկյան, *Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի և Տրապիզոնի վանքերը, Վիեննա, 1962։*
Հ. Ոսկյան, *Վասպուրական-Վանի վանքերը, Ա, Վիեննա, 1940, Բ, Վիեննա, 1912, Գ, Վիեննա, 1947։*
Հ. Ոսկյան, *Տարօն Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953։*
Ն. Սարգսյան, *Տեղեկագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864։*
Սիմէոն դպիր Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, հրատ. Ն. Ակինեան, Վիեննա, 1936։
Քոսյան, *Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հտ. Բ, Վիեննա, 1899։*

Кучук—2—Кучук-Иоаннесов Х. И., Старинные армянские надписи и старинные рукописи в пределах юго-западной Руси и в Крыму (*տե՛ս* Отд. оттиск из "Древностей восточных", изд. императ. Москов. Археол. обчест., том II, вып. 3, Москва, 1903).

Кучук—4—Кучук-Иоаннесов Х. И., Коллекция старинных рукописей К. Оганджаняна в Кишиневе (*տե՛ս* Труды Восточной комиссии Императорского Московского археологического общества, т. II, вып. III, Москва, 1903).

1
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 728

Գրիչ՝ Ոնանէս երէց
Վայր՝ Շատախ

ա

287բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ գիրս իմաստասէրեաց ըստուք և ընդիր աւրինակէ, ի երկիրս Գանջոյ, ի գուղս Շատախ կոչէ, ի դրան Աստուածածնիս։

Արդ՝ գրեցաւ ի դառն և ի նեղ ժամանակիս,
Որ զմարախն է (7) տարի աշխարհս կերաւ,
Թագաւորեաց զուլում[1] շատացաւ,
Աստուծոյ խնամքն վերացաւ,
Ժամանակս չարացաւ։
Մարդիք զիրայր մատ[ն]ող դառաւ,
Աշխարհս խիստ լցաւ չարաւ,
Շա[ր]ժումք լցաւ հիսուս հ[ա]րաւ.
Թարսից թագաւոր գնաց Վայրաստուն գիրի տարաւ.
Խնդրեմք ի Աստուծոյ, որ աշխարհս լիցի բար[ե]աւ։

288ա Ո՛վ եղբայրք, մի՛ք մեղայտիր լինիլ մեղայոր գիրչիս. // առաջի գիր այս է, միտքս հաւաքիլ չի կարէի։ Իմ տէրն գնաց Երուսաղէմ։

Ես ի դառել տարակուսեալ,
Ես չեմ դառ փաշակս ուսեալ,
Ապաւինիմ Աստուածն իմ,
Որ ես խիստ եմ իմ տէրն յուսեալ։
Ո՛վ հանդիպող եղբար,
Աշխարհս շինուեց անայպատ,
Նահանք դառան խիստ չարահատ,
Աշխարհս քիչ համարեցի։
Որ գնաց նահանք ի զատ,
Շատն դառաւ նայ հացայհատ,
Կրակ չան<ան>ին, որ է ի զատ,
Հացնին շինել պա[ն]ճար ու փայտ։
Աստուած պահի նահանք հաստատ,
Որ մեք լինեմք արժան[ի] դատ,

[1] Ձեռ-ում «զում[լ]» ձևով։

Քահանայք դառան գինու, մոսոյ[2] հատ,
Որ և չտին բնաւ ի զատ։
Աղաչեմ զձեզ, առ ոտս անկեալ, պաղատեմ ձեզ, ո՛վ եղբարք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զծնողսնս իմ, հայրն իմ՝ տէր
288բ Ակոբն և մայրն// իմ՝ Եղիսաբեան, և մեծ եղբարն իմ՝ Ովանէսն և Սահակն, և քուրն իմ՝ Ազիզն, և այլ մուս եղբայրն իմ՝ Սահակն, որ ի Քրիստոս են հանգուցեալ, և այլ մուս քուրն իմ՝ այլ Ազիզն, որ ի Քրիստոսի հանգուցեալ, և այլ մուս եղբայրն իմ՝ Մխիթարն և Մարիասն, և մուս քուրն իմ՝ Խաթունաղէն։ Աղաչեմ ձեզ, ո՛վ հանդիպողք, յորժամ հանդիպէք ի սբ. գրոցս, յիշեցէք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր, բայց խոշորութեան և սղալանաց սորայ անմեղադիր լերուք, զի կար մեր յայս չափ էր։ Կատարեցաւ երգս քարոզ, ո՛վ եղբայ[ր]ք, աղաչեմ զձեզ, յիշեցէք զվարպ[ե]տն տէր Ոնանէսն, որ բազում աշխատանաւք յուսուց զիս...։
289ա Յիշեցէք վերոյ դրեալս և լի սրտիւ ողորմ[ի] ասացէք և ինձ մեղայոր Ոնանէս ծոյլ և մեղաւք լցեալ, տրովք և սրոք երէցոյս։ Ինչ անէմ լաւ անումս, որ չկա բար[ե]աց մասն առ իս. վա՜յ ինձ մեղաոր եղկելիս։
Ո՛վ եղբարք, յիշեցէք իմ զանքաշն՝ Դալաթիանումն, որ ամակ շատ արաւ. Աստուած իւր արքայութիւն հատուցանէ...։
Ի թվականութեանս Հայոց ՌՀ (1621) էր։
Ո՛վ եղբարք, յիշեցէք Գուլաղէն լի սրտիւ ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմի. ամէն։

Բ

192բ Ո՛վ տաւնասէր հայրք և եղբայրք, որք հանդիպիք այսմ գրոյս կամ
193ա ալտիք կ[ամ] աւր[ին]ակէք, մեղայ թողութիւն հայցեցէք... //փցուն և անիմաստ ծրայգիր տիրպետիս, սուտանուն քահանայիս Ոնանէս մեղայպարտ գրչիս... և ծնողաց իմոց՝ Ակոբ քահանային և մայրն իմ՝ Եղիսաբեան և այլ ամենայն ննշեցելոց...։
Արդ՝ գրեցաւ սա ի թվին Հայոց ՌՀ (1621) Յայտնութեան պահքին՝ հինկշաբաթ աւրն, շուրն շաբաթ աւր[3] աւրհնեցաւ. բաւ է։

2

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՄՅԶԵՊ, IV, № 1035 (1604 թ.)

51 Թվին ՌՀ (1621) հայկազան տումարին ծախեցաւ Յովանէսին այս գիրք ԺԲ (12) մաճրիյ, Միսքոին և Կրէսքոին առշև, յունվար ամսոյ Գ (3)։

---

[2] Իմա՛ մսոյ։

[3] 1621 թ. «Յայտնութեան պահքին՝ հինկշաբաթ աւրն» կլինի հունվարի 4-ին՝ հինգշաբթի, իսկ «շուրն շաբաթ աւր աւրհնեցաւ» հունվարի 6-ին, շաբաթ։

3

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7375

Գրիչ՝ Զաքարիայ աբեղայ
Վայր՝ Կաֆայ

ա

631բ Փառք... Որք բարեացն են ցանկացող, միշտ յաղթող զտանին ի ներկայինս, որպէս աշխատասէր և ժիր մեղու...։ Նոյնպէս և ես՝ մեղուցեալ Անապատ բաղում փափաքանաւք զայս սբ. Յայսմաւուրքս տվի գրել ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, առ հասարակ ամենեցուն. ամէն։ Եւ Յայսմաւուրքս այս ճշմարիտ նոր
632ա աւրինակ է, շնորհաձիր և աստուածախումբ մատեան...// որք կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱնապատ և զայրն իմ՝ զՄարտիրոսն, և զհայրն իմ՝ զԿոզմիրն, և զմայրն իմ՝ զԿաւզալն, և զորդիքն իմ՝ զՊարոնլուսն և զտէր Պետրոսն, և զդուստրն իմ՝ զԱլթունն, և զմեծ մայրն իմ՝ զՈլուպիէայն, և զհաւրեղբայրն իմ՝ զԱռամշան և զամենայն արեան մերձաւորսն իմ. ամէն։

Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սայ ի քաղաքն ի Կաֆայ, ի դուռն Ս. Ա[հ]ր[ա]մն եկեղեցոյն։ Եւ արեգական Հայոց թվականին էր ՌՀ (1621) և աւարտեցաւ փետրվար ամսոյ ի Ի (20)...։ Այլ և աղաչեմ զսբ. ընթերցողքս, որ յիշման արժանի առնէք զմեղաւոր և անպիտան, հող և փոշի գրչակս՝ Զաքարիայ աբեղայս, և զծնաւղսն իմ առ հասարակ. ամէն։ Այլ և յիշեցէք զթխտիս կոկօղն՝ զՊարսամն և զխաչատուր դպիրն
632բ նաև զաւրինակիս շնորհօղն՝ զտէր Աբրահամն և զտէր Քրիստոսատուրն// և զՍ. Աւգսէնտին և զՍ. Լուսաւորչին ժողովուրդքն, որ զաւրինակն շնորհեցին։ Այլ և յիշեցէք զուսուցիչն իմ՝ զՅոհանէս քահանայն և զտէր Սաեփանոս քահանայն և զխաչատուր աբեղան Աստուած զիւրեանց հոգին լուսաւորէ...։

բ

3ա Ողորմեայ Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Անապատին և Մարտիրոսին, որդուն՝ Պարոնլուսին, դստերն՝ Ալթունին, և տէր Պետրոսին, հարն Քէլամիրին, մօրն՝ Կաւզալին, մեծ մօրն Ոլուպիէային, հօրեղբարն՝ Ամիշային, մեղաւոր և անարժան գրչիս Զաքարիայ աբեղային, կարդացողաց և լսողաց...։

գ

173ա Մանաւանդ ստացողի սբ. գրոցս Անապատին և առն իւրոյ՝ Մարտիրոսին, որդոցն տէր Պետրոսին և Պարոնլուսին, դստերն՝ Ալթունին, հարն՝ Կոզմիրին, և մօրն՝ Կաւզալին, մեծ մարն՝ Ոլուպիէային, և հաւրեղբօր՝ Առամշային և ամենայն արեան մերձաւորացն, և թխտիս կոկողի դպիր Պարսամին և մեղաւոր գրչիս Զաքարիա աբեղայի[4]։

[4] բ և գ հիշատակարանների նման տե՛ս ձեռ-ի 4բ, 6բ, 14ա, 16ա, 17բ—18ա, 21ա, 24բ և այլ էջերում։

գ

Ողորմի ստացողի գրոցս Անափիճ... *և անիմաստ գրչիս* Զաքարիա *աբեղայի և թղթիս կոկողին՝* Թողթամիշ *սարկաւագի, կարդացողաց և լսողաց։*

ե

Նվիրատու՝ Անափ

632բ *Դարձեալ ես մեղաւոր հողս և փոշի ոտից ձերոց* Անափս *տվի գրել զայս սբ. Ցայսմաւուրքս ինձ և իմ ծնաւղացն հոգուն, և եղի յիշատակ ի դուռն Ս. Նիկողայոս Ծովահայեաց սբ. տաճարին, ի վայելումն որդոյն իմոյ տէր* Պետրոսին *և իւր զաւակացն և թոռներուն։*

4

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ ԴԻՈՆԷՍԻՈՍԻ ԱՐԻՍՊԱԳԱՑԻՈՑ

Կ. Պոլսի Ազգային պատրիարքարան, № 78 (մանրաժապավեն, Երևան, № 562). տե՛ս նաև ՊՏՔԿ. № 29, էջ 48—49, «ՀԱ», 1960 թ., էջ 252

Գրիչ՝ Պողոս

ա

Փառք...։ Եղև գրչութեան սորայ ի թվականութեանս Հայոց ՌՀ (1621), մարտ ամսոյ Թ (9), աւրն ուրբաթ։ Ի վեհագոյն տիրական իշխանութեան տեառն տէր Ազարիայ *վարդապետին, որ զգիրք գրել երետ վասն անձին իւրոյ։ Խնդրեմք ի Քրիստոսէ որ ի ձեռն բարեխաւսութեամբ մաւրն իւրոյ և կուսի, որ պարգևէ մեր մեղաց թողութիւն և մեր նընջեցելոց հանգիս[տ] և ողորմութիւն...։ Այլ և հանդիպողք և կարդացողք, յիշեսցիք զվերոյ դրեալքս զտէր* Ազարիայ *վարդապետն և ըզծնաւղքն՝ գհոգ[և]որն և զմարմնաւորն և իւրեանց մեղացն թողութիւն հայցէցէք ի Քրիստոսէ. ամէն։*

բ

Ո՛վ հանդիպողք յայսմ գրրի,
Ընտիր բանիցս գովելի,
Ցորժամ լսէք զայս ատենի,
Ինձ ասացէք Տէր ողորմի,
Մեղսաթաւալ Պողոս գրչի։

5

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄՏՔԵՍ, I, № 26, տե՛ս նաև ՄՏՔՀՄՍ, II, № 43, էջ 132—133

Գրիչ՝ Նիկողոս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

54 *Փառք...։ ///Արդ՝ գրեցաւ Կանոնագիրք ձեռամբ սուտանուն* Նիկողոս *երիցուս, թվին ՌՀ (1621), ի քաղաքն* Կոստանդիպոլիս *ի* Խալադիայ, *ի դուռն Ս. Լուսաւորչին. ամէն։ Դարձեալ յիշէք զվարպետսն մեր* Սարգիսն, *որ [հ]ետ մեզ շատ աշխատեցաւ. Աստուած ողորմի նմա։*

Դարձեալ յիշեցէք զհայր իմ Մելքսէթ, զմայրն իմ՝ Շանթիկարն ու Աստուած ողորմի ասէք նմա։ Դարձեալ Աստուած ողորմի ասէք Վարդէվանին, Շահանեսցին. ամէն։ Դարձեալ յիշեցէք զեղբայրն՝ Պողոսն, Ղարիպշան, Տիլանջին, Աստուած ողորմի իւրեանց հոգուն. ամէն։ Դարձեալ ողորմիս ասացէք Մարէմին, Մանպուպին, Տուլվաթին, Մէրճէ[ին]. Թուրվանտին. ամէն։ Այս սբ. հայրապետք, որ այս գրիս մէջն գրեցաւ զիմ անարժանիս ձեռաւքն՝ նայ բարէխաւս լինի առ Աստուած իմ մեղաւորիս, աւրինակ շնորհողիս։ Ս. Աստուածածնին բարէխասութեամբ և սբ. հայրապետաց աղաւթիւքն ողորմի ինձ և ծնողացն իմոց և ամենայն քրիստոնէից. ամէն։

Բ

...և որք կարդաք զգիրս կամ աւրինակէք, թողութիւն խնդրեցէք ստացողի գրոյս և ինձ մեղապարտ գրչիս սուտանուն Նիկողոս երիցուս, որ չեմ արժանի յիշել զանուն իմ ի տառիս, և ամենայն ազգականաց իւրոց և ծնողաց և եղբարաց. Աստուած ողորմի ասէք. ամէն։ Զերոս երդայ գիրս մնայ, Տէրն ողորմի ինձ և նորայ, որ զայս գիրս կարդայ և հառաչմամբ զՏէրն աղաչեայ, որ և մեզ զարքայութեան դուռն բանայ կարդացողաց ամենեցուն. ամէն։

Արդ՝ գրեցաւ Կանունգիրքս Կոստանդիանուպալիսն, ի Ղալաթիեայ, ի դուռն Ս. Լուսաւորչին, թվին ՌՀ (1621)։

Մարտ[ի] ԻԱ (21), աւրն շորեքշաբթի հանց ցուրտ եղաւ որ ծովն պաղեցաւ, որ մարդիք Ըստ[սմ]պալու պաղին վրա[յ]ովն Ուսկոյտարն անցան։ Հացին դրամ ԺԵ (15) ծախուեցաւ։

6

ՀԱԻԱՔԱԾՈՒ

ՈՏՁՄՎ, № 976

562 Գրեցաւ թվին ՌՀ (1621) մարտի ԻԴ (24), աւրն շաբաթ. երեկոյին ժամն չգնացի մինչ աւարտեցի, ինձ թողութիւն արէք, մեղայ ձեզ[5]։

7

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 1069

Գրիչ՝ Խաչատուր աբեղայ
Վայր՝ Կաֆայ

93ա Փառք...։ Գրեցաւ ձեռնադրութեան գիրքս ի թուաբերութեան հայկազան սեռի ՌՀ (1621), ի մարտի ամսոյ ԻԶ (26), աւրն երկուշաբթի, ի մայրաքաղաքն Կաֆայ, ընդ հովանաւեաւ Ս. Թէոդորոսի զինաւորին,

[5] Ձեռ-ում կան 1614, 1623 թվականների հիշատակարաններ։ Ձեռ-ի մասին Ոսկյանը գրում է. «Այս Ոսկեփորիկը կազմուած է քանի ձեռագիրներու իրարու միացումով և կազմուելով» (էջ 563)։ Նշանակում է տարբեր հիշատակարանները տարբեր մարդկանց կողմից են գրված և տարբեր ձեռ-են։ Այդ պատճառով էլ 1623 թ. գրված հիշատակարանը դրեցինք իր շարքում, իսկ 1614 թ.՝ «Գրեցաւ թվ. ՌԿԴ (1614) յուլիս ԻԱ (21)» սեղմ բովանդակությամբ, զանց առանք։

ձեռամբ մեղսասէր և անարժան սուտանուն Խաչատուր աբեղի՝ կերպիւ
93բ քահանայ և գործիւ ոչ։ Արդ՝ աղաչեմ զա//մենեսեան, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի սբ. աղաւթս ձեր զվերոյ դրեալս...։

8

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Կամենից, էջ 195. տե՛ս նաև «ՀԱ» 1891,,էջ 341

Ի թվին Հայոց ՌՀ (1621) ամի սա<մա>ռնացաւ ծովն բովանդակ[6], մինչև դնաց հասաւ ի ոսկիանոսի մեծ ծովն, փետրվար ամսոյն մէկէն մինչև ի մարտի ամիսն։ Վասն գիտութեան լինելոյ զպաղն ծակեցին և առին զչափն, որ և իրեք կանգուն և կէս էր թանձրութիւն պաղին[7]։ Սով եղաւ Ըստամպոլ, [Ի6] (25) դրամ հացն մէկ ստակ, այն այլ հող և մոխիր էր։

9

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3982

Խմբագիր՝ Ասար Սեբաստացի

ա

324բ Եւ գիտելի է եղբարք, զի մեք ծայրաքաղ արարեալ զխրատս և ըզվարս սբ. հարցն և համառօտաբար ժողովեցաք զսակաւս ի բազմաց իբրև զծաղիկս ի բուրաստանաց, դեղ ցաւալից կենաց։ Եւ իբրև զհատ ցորենոյ սերմանել ի սիրտս աստուածասէր անձանց, յաճումն բազմապատիկ պտղոց։ Եւ կամ խթան ընդ ոստուցիչ ի քնոյ երազական կենաց, որք զարթնուն սովաւ և զգաստանան։ Եւ թէ այսու ոչ բաւականասջիք ի բունն ընթասջիք պատմութիւնս ի վարս հարանցն, քանզի կար մեր այս չափ էր, զի ըստ առն և զօրութիւն իւր։

Այլ և զաշխատողս ի սմայ զյոգնամեզ և զանիմաստ ծառայս Ասար Սեբաստացիս յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

Բ

Գրիչ՝ Յոհաննէս Լէճցի
Վայր՝ Ստամպոլ

Եւ ա՝ մեղաւոր և անարժան յետնեալ ծառայ ծառայիցն Աստուծոյ Յոհաննէս դպիրս Լէճցի, նոտրող այս սակաւ դիրս, ի վայելումն տէր Խաչատուր սրբասնունդ կրօնաւորին։ Աղաչեմ զամենեսեան հանդիպողաց ի սմայ չմոռանալ միով ողորմեայիս...։

Գրեցաւ թվին ՌՀ (1621), մարտ ամսոյ Հռոմայ Ը (8), օրն հինգշաբթի, ի քաղաքն Բիւզանդիայ, որ այժմ ասի Ստամպոլ, ի դուռն Ս.

[6] Տե՛ս նաև Ան. Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 638, Մժ, I, էջ 240, 355, Մժ, II, էջ 270, 277, ծանոթ. 48։

[7] Տե՛ս № 5 բ հիշատակարանը։

Նիկողայոսի Զմիւռնոյ հայրապետին, որում փառք յաւիտեանս. ամէն։

Գ

72բ Հանդիպողդ աղաչեմ չմեղադրել վասն սղալ նօտրիս, զի կար մեր այս չափ էր և ոչ էլ աւելի։ Զապիկար Յոհաննէս կոչեցեալ դպիրս յիշեա ի Տէր։

Դ

240բ Գրեցաւ սակաւ դիրս ի թվականիս Հայոց մեծաց ԻԱ յոբելեանի և ի Ի-րդ աւելորդին (1621)[8], ապրիլ ամսոյն ԻԴ (24), ձեռամբ ախմար գրչի Յոհաննէս դպրիս Լէնցոյ, ի քաղաքն Բիւզանդիոյ, ի դուռն Ս. Նիկողայոս Զմ[իւ]ռնոյ հայրապետին. ամէն։

Ե

252բ Զեռրս երթայ դառնա ի հող,
Գիրքս մընա յիշատակաւդ,
Ո՛վ զեղկելիս յիշէ զգրծող,
Տէրն ողորմի իւրն փրրկաւդ։
Ի գիրքս այս խնամ արկեցէք,
Փափաքանաւք զսայ կարդացէք,
Թե որք կարդայք ւ աւրինակէք,
ԶՅոհան գրրիչս յիշեցէք։
Գրեցաւ թվին ՌՀ (1621) մարտ ամսոյ Լ (30)։

Զ

Գրչի՝ Յակոբ

351ա Եւ զյոգնամեղ զՅակոբ գրիչս յիշեցէք միով Տէր ողորմայիւ. ամէն[9]։

10

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ՀՍՍԳ, № 8, տե՛ս նաև «ՀԱ», 1924 թ., էջ 122—123, Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Ա, № 700, էջ 198ա

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Կարմիր վանք

11 Փառք...։ //Իսկ ես անարժան և անպիտանս և յետևեալս ի մարդկանէ, հողս և մոխիրս և ծառայս ծառայիցդ Աստուծոյ փցուն և անարժան և անարհեստ գրիչս... պիտականուն Վարդան անուն գրչիս ձեռամբ անարժանիս ի Կարմիր վանք, որ է յանուն Ս. Կարապետին և Ս. Նշանին և Ս. Սարգսայ զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, և միաբան եղբարցս Թումայ եպիսկոպոսին և Աստուածատուր եպիսկոպոսին, և ԺԲ (12) անձն կրօնաւորիս որ կան ի յայս քառաժեռ անա-

[8] Այսինքն (21×50)+20+551։

[9] Զեռ-ագր կան նաև նման այլ հիշատակարաններ (էջ 47բ, 59բ, 83բ, 288բ)։

պատիս, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։ Ցիշատակ է սբ. գիրս և յտտենի Սաղմոսարանս և Աղօթամատոյցս և Տօնացոյց[ս] և կայ ի սա ժամամտերս և մանրագիրս ի վերնագիրն սաղմոսին ի խնդրոյ արհի և պանծալի սրբասնունդ և մահտասի առաջին[10] Պետրոս եպիսկոպոսին, և հօրն՝ Տօնապետին և մօրն... և եղբարցն, են որ կենդանի են և են որ ննջեցեալք ի Քրիստոս։ Ես՝ Վարդան քարտող ծառայ արհի եպիսկոպոսին առաջին Պետրոսին բաղում տառապանօք գրեցի զսբ. գիրքս ի յերերման ժամանակիս, զի ի Ա (1) երեսին գրելն Ժ (10) անգամ ի տեղացս հանին, անմեղադիր լերուք գրոցս և սխալանացս սորա, զի
12 ձեռս ի գիրս է, դարձեալ ի փայտն և ի քարն. ի|| գիրն է, դարձեալ ի յայգիպանն և ի փեթակն, դարձեալ ի գիրն. վասն այն խիստ գովելի չէ։ Գրեցաւ ձեռամբ քայքայեալ և աղտեղացեալ ոգւով ի թուին Հայոց ՌՀ (1621), ի Կարմիր վանք, մեղաւոր ձեռովք իմովք և վարպետին իմոյ արագագիր առաջին Յովնանէսին և քաջ քարտողին, որ զծաղիկն ուսոյց և առաջին Ստեփաննոսին, որ մականուն Քաֆքայ ասեն, որ զգիրն ուսոյց ձրի, տայ Տէրն նոցա զարքայութիւն. ամէն։ Դարձեալ յիշեսջիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի զՊետրոս արհի եպիսկոպոսն Խարտիշարու, որ գնացել է ի Սեբաստիա ի Ս. Նշան վանքն, անդ աշխատեցաւ բաղում ամօք և անտի ի Թոխատ շինեաց վանս Քամարու, որ է անարծաթ բժշկացն Կողմայի և Դամինաոսի, և ետ իր հոգւոյն զյիշատակ զսբ. գիրքս ի հալալ արդեանց իւրոց, չունի ոք իշխանութիւն՝ ո՛չ ազգական և ո՛չ եղբայր, ո՛չ բարեկամ, ո՛չ քահանայ, ո՛չ սարկաւագ և ո՛չ աշխարհական որ ծախէ կամ գրաւ դնէ, եթէ ոք յանդգնի...։ Դարձեալ այդ վանից միաբան, լուարուք եղբարք որ լաւ խնամ տանիք և սպիտակ լաթով բռնէք, զի կարի դիժար է գրոց գրելն. որ պատրաստութեամբ պահէք ի շրոյ և ի նամէ և դուք վարձս առնէք ի Քրիստոսէ. ամէն։ Օրհնեալ է Աստուած, աւարտեցաւ սբ. գիրքս մայիս ամսոյ ի ԺԲ (12), օրն շաբաթ, ի է (7) ժամն. ամէն[11]։

11

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՑՁՎՍ, I, № 196 (ԺԴ—ԺԴ դարեր)

824 Թվին ՌՀ (1621). յունիս ամսոյ ԺԹ (19), օր երեքշաբթի, որ է այսօր ամառնամուտ և դարձ արեգական, սուլթան Օսման եկաւ Փրաւատի, բաղում զօրօք, Դ (4) ֆիլ ունէր հետն և մաֆիր թաղի։ Չորեքշաբթի քաղաքս եկաւ, չորսուն քայլեց, գնաց Ղաւախ գառ մի կերաւ։

---

[10] Ձեռ-ում մի քանի տեղ գրված է «Ա»։

[11] «Դարձեալ յիշեսջիք առաջի...» հատվածից սկսած՝ մի փոքր համառոտ տե՛ս նաև Հ. Ոսկյան, Սեբաստիայի վանքերը, էջ 8։

12

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 130—131

Գրիչ՝ Ստեփանոս երէց
Վայր՝ Թոխաթ

Գրեցաւ մեկնիչս սբ. Պատարագին թվականին Հայոց ՌՀ (1621), յունիս ամսոյ ԻԵ (25), ձեռամբ ումեմն անարժան և անյիշելի, լոկ և սոսկ Ստեփանոս *չերիցու, ի քաղաքս* Թոխաթ, *որ է միշոց* Սեբաստիոյ, *ուր Ս. Քառասունքն կատարեցան, և* Կոմանոյ, *ուր* Ոսկիբերան *ապաշխարութեան վարդապետն* Յովհաննէս *յետ աքսորանացն աստ եկեալ վախճանեցաւ, և այլ բազմահաւաք սրբոցն, ի թաղս* Ս. Քառասունք: *Որք կարդայք կամ օրինակէք կամ ի վեր անդ ասէք, յիշեցէք զհողս և զփոշիս և զբարի ծնողս իմ զմղտեսի* Սարգիսն *և զմղտեսի* Ճանփաշան, *և զտէր* Յակոբ *վաղամեռիկ սիրեցեալ եղբայրս և զքորքս* ԶՅուստեանէն *ե զէմինն, և զկենակիցն իմ՝ զմղտեսի* Ուսաեանէն, *և զորդեակն իմ՝ զտէր մղտեսի* Եսային, *և զիւր ցաւակիցն՝ զԽասմելիքն, և զդուստր իմ՝ զՀռիփսիմէ, և զայնոսիկ, որք աշխատանք և զերախտիք ունին ի վերայ. մեր. Աստուած ողորմի...։*

13

ՏՕՆԱՑՈՅՑ, ՇԱՐԱԿՆՈՑ, ԺԱՄԱԳԻՐՔ

ՄՏԱԲ, № 254

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Գաղատիա

1146 *Փառք...։ Շնորհիւ Աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցաւ Տաւ-*
1147 *նացոյցս ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ի թվին Հայոց ՌՀ (1621) ||*
ի յուլիս ամսոյ ԺԳ (13), աւրն ուրբաթ, ի յերկիրն Գաղատիա, *ի դուռն Ս. Աստուածածնին, ձեռամբ մեղապարտ և անարժան* Գրիգոր *գրչի, որ անուն ևեթ ունիմ և գործս ոչ։ Արդ՝ գրեցաւ։ Տամնացոյցս ի վայելումն մահդասի* Մելիքշին *և իւր անձին, Աստուած բարով վայելել տացէ, և յիշատակ իւր ծնաւղացն. ամէն։ Արդ՝ որք հանդիպիք սմայ՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր. Քրիստոս Աստուած առ հասարակ ողորմեսցի ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս յիւր միւսանգամ գալստեան. ամէն*[12]։

14

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1780

Թարգմանիչ՝ Յոհան Անկիւրացի

302ա *Կոսմոկրատիա* Պետրոսի Ապիանի *Գերմանացոց երկրէն, որ է Աշխարհագրութիւն տեղերաց, թարգմանեալ ի լատինացոց բառէն մե-*

[12] *Այս ձեռագիրը բաղկացած է երեք մասից. առաջինը՝ Տոնացույցն, ընդօրինակել է Գրիգորը 1621 թ., իսկ մնացած մասերը՝ Շարակնոցը և ժամագիրքը՝ Հակոբ Սգատրը 1610 թ.։ Վերջինիս հիշատակարանը տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում, էջ 396—397։*

րումն՝ Անկուրիացի Յոհաննէէն, ի խընդիր բարունապետ Երզրնկացի տէր Կարապետ վարդապետին։ Ըսկիսր արարեալ ի թվին Հայոց ՌՀ (1621) յուլիս ամսուն Լ (30), օր երկուշաբաթի, ի մայրաքաղաքն Անկուրիայ Գաղատացոց, ի դուռն հրաշայգործ Ս. Խաչին[13]։

15
ԲՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ, ԶԵՌՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ (1772 թ.)

Վ. Թորգոմյան, «Բազմավէպ», 1926 թ., էջ 69

Թարգմանիչ՝ Յոհաննէս Կ. Պոլսեցի
Վայր՝ Հռոմ

Արտադրեցեալ ի Ճօան պաթիստայէ Փուրբայնոյ, և համառօտեցեալ ի Ֆռանչիսկոսէ Ստէլլուրոյ։ Թարգմանեցեալ իսկ ի Յօհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ, ի զուարճութիւն հայկազունեաց։ Ըստ խնդրոյ պարոն Գասպարի որդւոյ խօճայ Սահրատին, ի յիշատակ անձին իւրոյ, և հոգւոյ ծնողաց իւրոց, և ի վայելումն ընտանեաց նորին, ի փառս մեծագոյն Աստուծոյ։

Յամի փրկչին 1621 օգոստոսի 25, ի մեծն Հռոմ, հրամանաւ սր. ժողովոյն։

16
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4969 (1648 թ.), տե՛ս նաև ՀՁՎԼ, № 391, էջ 912

ա

260ա *Թվին հազար եօթանասուն (1621) Հայոց թվականութեան ես՝ յաթանանցի[ա]մն Յօհաննէս և իմ եղբայր տէր Խաչատուր, Սեմաւարայ արտ յարևմտեան կուսէն՝ յառի կողոտ*[14] *մինչև հասնի Մարպու*[15] *յաղբուր, գնեցինք ի (20) քոքռայ և ոխվ արի Զալր Ս. Նշանայ չօրպաի համար, որ տան աղքատաց։ Ով որ ծախէ կամ գրավէ՝ անէծք Աստուծոյ առցէ։*

բ

260բ *Թվին ՌՀ (1621) սեպտեմբերին Ը (8) օրին, կարողութեամբ Աստուծոյ Շornսկանգ և Վերի արտ ես գնեցի ազգային արդեամբ ԻԲ (22) հատ եալտուզ ոսկի, ոխվ արի Զարահան Ս. Նշանայ վանուց։ Ով ոք ծախէ կամ գրավէ՝ անէծք Յուտ[ա]ին առ[ն]է*[16]։

---

[13] Զեռ-ում եղած մյուս հիշատակարանները տե՛ս 1617 թ. շարքում։

[14] Կարելի է կարդալ նաև կողար։

[15] Կարելի է կարդալ նաև Մտրոյու։

[16] Թե ինչպես են այս հիշատակարանները մուծվել սույն ձեռագրի մեջ, տե՛ս 1611 թ. շարքի նույն ձեռ-ի ծանոթագրությունը։

17
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՅԶԵՊ, V, № 1569

Գրիչ՝ Ասավածատուր

346 Ցիշատակ է տեսրս մղտեսի Մարկոսին և իւր ծնաւղացն ի դուռն Ս. Յարութեան։ Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմղտեսի Մարկոսն, և զգծաւղս Ասավածատուր, կարդալով կամ աւրինակելով յիշեցէք։ Թվին ՌՀԱ (1621), նոյեմբերի Ժ (10)[17]։

18
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 6404

Գրիչ, կազմող՝ Ազարիայ աբեղայ
Վայր՝ Ստաթէի վանք

ա

234ա Փառք... Արդ՝ եղև զրաւ գրչութեան յայսմ աստուածային և հոգէնուագ քնարի... որ կոչի Սաղմոսարան, որ է երգարան։ Արդ՝ գրեցաւ ձեռամբ [յ]ոգնամեղ և անարհեստ և փցուն գրչի Ազարիա աբեղայի, պիտակ անուն և գործով ոչ, սակրես Աստուծոյ։ Գրեցաւ ժամագիրքս և ժամուխրատ կարգաւորութեան և հայրապետաց սահմանք, թէ որպէս իցէ կանոն։ Գրեցաւ ի դուռս սբ. առաքելոցս Ստաթ[է]ի թՌ և ՐՃ (9800) սրբոց նշխարացս, որ աստ կան, հաւաքեալ են ի մէջ սբ. տաճարիս և Գրիգոր վարդապետի սբ. գերեզմանիս, ի հայրապետութիւնն աթոռոյս Մեսրոբ եպիսկոպոսին և այլ միաբանիցս՝ Մովսէս վարդապետին և բազմաչայ եպիսկոպոսացս և կրօնաւորացս և մինակեցացս և հողագործացս, որ կան աղաւթից ի մէջ. սբ. եկեղեցոյս։

Ո՛վ պատուական քահանայք, [յ]որժամ աղաւթից կատարեն և զիս և զիմ ծնաւղն յիշեն, հայրն իմ՝ Անանիայ քահանայ և մայրն իմ՝ Թիլիփաշա, և հոգոյ հայրն Մանուէլ կրաւնօր և իմ պապոյ եղբայր և իմ վարպետ՝ մեր մեղացս թողութիւն հայցեցէք։

234բ ՌՀ (1621) թվին[18] գրեցի, տկար մարմնով և փափաքմամբ, Համբարձմանէն մինչև ի Յայտնութեան պահքն[19] [աւ]արտումն եղև գրոյս, որ կազմեցաւ։

Ձեռս փթի և հող դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ,
Վա՜[յ] և եղուկ մոլորեալ ուղիղ ճանապարհէն։

[17] Հայոց ՌՀԱ թվականը սկսվում է 1621 թ. հոկտեմբերի 17-ից (հուլյան տոմարով)։ Ուստի հայոց ՌՀԱ թվականի նոյեմբերի 10-ը կընկնի 1621 թ. մեջ։ Երկրորդ փոքրիկ հիշատակարանը տե՛ս 1630 թ. շարքում։

[18] Այս և գ հիշատակարանում նշված է այսպես. «ռ.հ.մԺ.» վերջինս դիտեցինք փակագիր։ Հենց այդպես է գրված № 7104 ձեռ-ի 194ա էջի հիշատակարանի «թվին» բառը։

[19] Այսինքն՝ մայիսի 10-ից (1621 թ. Զատիկը ապրիլի 1-ին է) մինչև դեկտեմբերի 30-ը՝ Հայտնության պահը։

Ո՛վ քահանայք և սարկաւագունք, կարդալով կամ աւրինակելով թողութիւն հայցէք խոշոր գրոյս և սխալանացս, զկար մեր այս է...։

Զծաղկաւղս սորայ Խաչատուր քահանայ, որ է երևանեցի՝ Հայոց բառու։ ԺԶ (16) շահի ծաղկի հախ դվի։

Բ

233բ Անարժան և մեղաւոր Ագարիայ աբեղէս գրեցի, ԿԳ(63) ամաց էի՝ ապիկայ գրիչով. ամագս արարի և կազմեցի, թողութիւն արարէք սրխալանացս, զի կար մեր այս էր։

Գ

172բ [Ռ]Հ (1621) թվին գրեցս կըսակս Դոթի։

19

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳՐՈՑ

Երևան, № 834

Գրիչ՝ Գասպար երէց
, Վայր՝ Ասպահան

ա

143բ Փառք... [որ]// երեսս կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տառիս այս մարգարտաշար և վարդափթիթ բուրաստանիս, որ է սա ընդիր աւրինակէ։

144ա Որ և գրեցաւ սայ ի յերկիրս Ասպահան, ձեռամբ անարժան և սուտանուն Գասպար իրիցուէ, որ և զանունս ունիմ և զգործս ոչ։ Յիշեցէք ի յերկնաբացիկ յաղաւթս ձեր զեղկելի գրողս, որ զանունս միայն ունիմ և զգործս ոչ, զի բազում աշխատութեամբ գրեցի զսա, և զծնողն իմ՝ զտէր Պաղասսարն և Շաղոսկին[20], եղբայրն իմ՝ զՄելքունն և զքուերքն իմ՝

144բ զՄար//գարիտն, զՀրոռմսմէն, զՆղիսաբեթն, զԹագուհին, զՄուղալն։ Աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, կարդացողք և լսողք, ամենեքեան մի բերան ողորմի ասացէք, զի և ձեզ լիցի ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Գրեցաւ ի թուականիս մեր ՌՀ (1621) ամին և ի թագաւորութիւնն շահ Ապասին։ Աղաչեմք զձեզ, որ հանդիպիք տեսութեան[21]

Բ

143ա Ի թուականիս Հայոց ՌՀ (1621) ամին գրուեցաւ, և զիս չանարժան սուտանուն Գասպարն զձայգրողս յիշեցէք և Աստուած զձեզ՝ ձեր մեղացն ազատէ. ամէն։

20

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, № 942 (1478 թ.)

Հետ. ստացող՝ Մելքէսէթ քահանայ

ա

490բ Դարձեալ յիշեսիք զվերջին ստացող սբ. գրոցս զՄելքէսէթ քահանայն, զոր տեսեալ զսբ. գիրքս, որ կոչի Ճառընդիր, եռափափաք սիրով

[20] Ձեռ-ում այլ թանաքով դարձրել են «Թուրվանդին»։
[21] Հաջորդ թերթը կորած է։

ցանկացեալ այսմ տառիս յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց և ամենայն մերձաւորաց. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Մելքէսէթն, և զհայրն իմ՝ զԿարապետն, և զմայրն իմ՝ զՋանիբէկին, և զկողակիցն իւր՝ զԱրզուն և զեղբայրն իմ, որ է հանգուցեալ ի Քրիստոս զտէր Մելքէսէթն, և զքոյրն իմ՝ զՂզլարն, որ է ի ձեռն այլազգեաց, ի քաղաքն Յերևան, իշխան ոմն Ամիրգունայի տուն գերեցեալ, զոր և հաւատով ճշմարիտ քրիստոնէութիւն առնէ, տէր Աստուած ազատէ զնայ ի գերութենէ։ Եւ զՇատարեն, և զորդին իւր՝ զԱւաքն և զԱստուածատուրն և զամենայն արեան մերձաւորս իւր յիշեցէք ի Քրիստոս...։

Թվին ՌՀ (1621)։

Բ

14բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ ընթերցողք այս լուսաբուխ բուրաստանիս, որ կոչի Ճառընդիր, և Աստուած ողորմի ասացէք Մելքսէդ իրիցուն և ծնաւղաց նորա, հաւրն՝ Կարապետին և մօրն՝ Ջանբէկուն և քեռն Ղզլարբէկուն և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց...։

Թվին ՌՀ (1621)։

Գ

1բ Այլ և յիշէք զբարէսէր կին զԴօլանթիաթուն, որ զկէս գին գրոցս նայ ետ։ Աստուած զի[ն]քն բարի յիշատ[ակ]պահէ...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴօլադիաթուն և զկողակիցն իւր՝ Թանդրիղուրին, և զդուստրն իւր՝ զՍանդուխտն, որ է ի ձեռն այլազգեաց, որ ունի սէր ընդ քրիստոնէիցս։ Եւ ինքն ոչ է ուրացեալ, այլ պահէ ինքն և ընկերակիցն իւր՝ Ղզլարն, զպահս և զաղօթս ի թագրստի։ Զոր և տէր Աստուած ազատեսցէ զնոսա ի ձեռաց յանօրինաց. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Անայիաթուն, որ ետ ի հ[ա]լալ որմս (sic) ինչ սբ. գրոցս գին Ռ (1000) դեկան։ Աստուած զինքն վարձահատոյց առցէ. ամէն։

21

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1246

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Սամպոլ

306բ Փառք...։ Գրեցաւ գիրքս այս և աստուածային տառս և հոգոյ և մարմնոյ փրկութիւնս, հաւատացելոց պարծանքս, ի թուականութեանս Հայոց մեծաց ԻԱ յոբելեանի և Ի-երրորդ աւելորդին (1621), ի հոյակապ և ի հռչակաւոր մայրաքաղաքիս Բիւզանդիոյ, որ այժմ որշորշի Սամպոլ, ի դուռն և ի դպրատանն Ս. Նիկողայոսի Սքանչելագործին, ի խնդրոյ աստուածընկալ և սրբասնեալ Խաչատուր կոչեցեալ կրօնաւորին Կեսարացոյ, լցեալ շնորհիւ իմաստութեամբ և առաւելեալ ամենայն գործովք առաքինութեամբ։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան՝ զհարս և զեղբարս, զվարդապետս ե զքահանայս, և զմակացուս իմաստութեանց, յորժամ ընթեռնուք կամ օրինակէք, զսրբասնունդ և պատուական կրօնաւորն զեպաշատուրն և զծնողն իւր և զեղբարս և զամենայն ազգայինս յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր. ընդ նմին և զնուազեալս յիմաստութենէ... Յոհաննէս քերող գրոյս և զծնողս իմ յիշեսջիք ի Տէր...։

22

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2018

Գրիչ՝ Ասար Սեբաստացի
Վայր՝ Իլով

ա

112ա Ո՛վ եղբարք, ի Հայոց թվին ՌՀ (1621), յերկիրն ի Լեհաց, ի քաղաքն Իլով գրեցի զսակաւ բանս, որ ցուցանէ զՋատիկն Ֆռանկաց թէ յամենայն ամի քանի շաբաթ յառաջ տի լինի և կամ յորում ամի ի միատեղ լինի՝ թվականաւն և գրով, տարոյն գիտ զամենայն և յիշեա՛ զԱսար Սեբաստացիս[22]:

Գրիչ՝ Սահակ
Վայր՝ Իստամպոլ

բ

409բ Թվին Կենար[ա]ին ՌՈԻԱ (1621) և ի Հայոց թվին ՌՀ (1621) գրեցաւ ի քաղաքն Իստամպոլ, ձեռամբ յոգնամեղ Սահակի. որք ակտիք ի սմանէ, աղաչեմ յիշել զանիմաստ գծողս և Աստուած ողորմի ասել. զի թողցէ Տէր զյանցանս մեր. ամէն։

23

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 2630 (1290 թ.)

Նորոգող՝ Գրիգոր երէց

123բ Այս սբ. Աւետարանս Բ (2) փորձանաց ազատեցաւ. մէկն ի չէրէն, Ա (1) ի անօրէն սարգաւաք մի զամէնէն քաքէլ էր, ըզպատկերքն զառաջինն կտրել էր։ Ետոյ նորոգեցաք՝ մեղաւոր և անարժան հողու հաւասար Գրիգոր երէցս։ Նորոգեցաք թվին ՌՀ (1621) էր։ Աստուած ողորմի առաջին գրողին և յիշատակ դրնողին. ամէն։

Ես անարժան հողու հաւասար տէր Գրիգոր էրէցս[23]։

---

[22] Բացի «զԱսար Սեբաստացիս» հատվածից, նույնությամբ տե՛ս նաև № 2005 ձեռ-ի 40բ էջում։ № 2005 ձեռ-ում գտնում ենք երկու փոքրիկ հետևյալ հիշատակարանները. «Զանարժան հող և մոխիր Անտիոս յիշեսջիք» (էջ 28բ) և «Զաւետիսդն կշռեա և սպասանացն անմեղադիր լերուք, եղբարք, տխմար և անիմա գծողիս աղաչեմ յիշել ի Տէր» (էջ 20ա)։
ա հիշատակարանը նույնությամբ տե՛ս նաև № 8976 (1581 թ.) ձեռ-ի 46բ—47ա էջերում գտնվող աղյուսակի վերջում։ Այստեղ տարբեր է միայն գրիչը և տեղը. «Ի յերկիրն Նոշ, ի քաղաքն՝ Սպանաե», «և յիշեա զեղկելի Սուքիասս. ամէն»։

[23] Ձեռ-ի 89ա էջում գրված է «Կաթիլքդն արաւ զայս, Աստուած ազատեց, թվին ՌՃ (1651)»։

24
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 2736

Գրիչ՝ Զաքարիայ
Վայր՝ Կաֆայ

ա

481ա Փառք...։
482ա Ի սէր սրբարլեաց անբաւ շնորհողի սբ. զաղափարիս,
Զաքարիայ կրաւնաւորն յիշեսջիք ի մասին բարիս,
Հանդերձ ծրնողօք իւրովք, փոխելովք և որք ի աստիս,
Փոխանակ սորին շընորհ, ժառանգել յադինն հայրենիս։
Զրքնաղ և զարմանալի վայելուչ պերճափառ սրբրոց,
Սբ. տաճարիս յիշատակ, յորջորջի տեղի Քառասնոց.
Յիշատակ անջրնջելի ի հանդէս սա բազմաց խընդրոց,
Որովք կարասցին տանել մի առ մի ձայնիւ քաղցր երգոց։
Ի թուականիս Հայոց տումարիս մեր յաբեթական,
Անցանելոյ ամանակիս Ը(8)-երորդ դարիւ հոլովման,
Հազար ամ թուով անցեալ, յարաբարթն յիւթանասնական (1621).
Վերջ և առ ծայրի ժամուս դիմեսցուք առ Հայրն երկնական։...[24]
...Յերես անկեալ աղաչեմ պահողք այս սբ. մատենիս,
Խընդրել թողութիւն իմոց նաև ինձ ։ ազգիս համայնից,
Զաքարեայ գրրիչս յիշել, թարմատար յոգունց յեղկելիս,
Ուսուցիչս ողորմիս տալ, ղի և դու ըզնոյն լրւիցիս։...

բ

10բ Ի թվականիս Հայոց մեծի,
Անցեալ հազար ևթանասնի (1621),
Սեպտեմբերի ամսոյ վերջի,
Աւարտեցաւ Կաֆայ քաղքի,
Առ ոտքս Ս. Սարգսի,
Եւ իւր որդւոյն Մարտիրոսի,
Ձեռամբ նրւաստ Զաքարիայի,
Այլ մականուամբ Ճանդէմիրի։
Ո՛վ պատահողք այս մատենի,
Հայրք և եղբարք իմ սիրելի,
Յերես անկեալ կամ առաջի,
Եւ պաղատիմ արտուասուալի,
Յորժամ երգէք զսայ յատենի,
Քաղցրը ձայնիւ ախորժելի,
Ուսուցչիս իմ տուք ողորմի,
Եւ տէր Յիսուս ձեզ ողորմի[25]։

[24] Ձեռ-ի 481բ—482ա էջերի պարբերությունների առաջին տողերի սկզբի տառերից, որը բաց ենք թողել, հոդվում է «Զաքարիայ գրրիչի»։

[25] 98բ էջի սաղին գրիչը լուսանցքում ավելացրել է երկու տող և ապա տվել հետևյալ ծանոթագրությունը.

Գ

164բ Տէր Յիսուս ողորմեա՛ և թողութիւն շնորհեա՛ յամենայն յանցանացն ստացողի այս սբ. Գանձարանիս... տէր Մինասին, որ բաղում փափագմամբ և սիրով ետ գրել զսա վասն պայծառութեան սբ. եկեղեցոյ, յիշատակ իւր և իւր ծնողացն, թվին Հայոց ՌՀ (1621), ի Կաֆայ քաղաքի։ Եւ զիս զմեղապարտ գծող սորա ընդ նմին յիշեսջիք ի Տէր...։

Դ

Քրիստոս Աստուած... փրկեա՛ և ազատեա՛ զընտացող սբ. Գանձարանիս զպատուելի քահանայն զտէր Մինասն..., ընդ նմին զմեղապարտ գծող սորա Զաքարիայիս և թղթիս կոկող զՅարութիւն դպիրն։

Ե

437բ Յեղկելի և անարժան, յետին և վերջին մեղապարտ Ճանդէմիր գրրչակս յիշել աղաչեմ։

25

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան № 4145

Գրիչ՝ Մկրտիչ

Ա

142ա Քրիստոս Աստուած և քո սբ. ընտրեալ հայրապետին Բարսղի բարեխաւսութեամբ և աղաչանօք ամենայն սրբոց և սի[ր]ողաց քոց, ողորմեա՛ ընտացողի գրոյս Թումայ ճգնօրի եպիսկոպոսի, հայր անապատի, որ շերմեռանդ սիրով գրել երետ զսայ երկուց եղբարց կրօնաւորաց, վասն եղբայրութեան ի շահ և յօգուտ նոցին։

Գրեցաւ զսայ ի նորաշէն յանապատիս, ընդ հովանեաւ Ամենափրկչիս, ի թվաբերութեան Հայոց ազգիս Ռ և եւթանեսնի (1621)։ Անմեղադիր լերուք խոշորութեան գրիս. զի սիրոյ է պտուղ և ոչ այլ ինչ իրաց։ Զմեղուցեալ գրիչս Ք[րիստո]ս յիշեցէք։

Բ

14ա Յիշեա՛ զՄկրտիչ անարհեստ և զփծուն գրիչս և անմեղադիր լեր, զի սիրոյ է պտուղ և ոչ այլ ինչ իրաց։

Գ

3բ Յիշեա՛ Յոհանէս[26]։

26

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 4206 (1434 թ.)

322բ Թվին ՌՀ (1621) տէր Սարգիսն Էրէց աւրհնեցին սբ. Սարգսին ելոյն կիրակին։ Աստուած վայելել տացէ, աւրհնեալ է։

«Ով եղբայր պատուելի, այս յետի տունն տաղին օրինակն Բ (2) վանկն չկար, մեղապարտ գրիչս քովէս Բ(2) վանկ գրեցի, տունն կաղ չի գայտէի։ Եթէ կամիս հետն ասա և թէ ոչ, նա գու գիտես, չասես թէ մոռացեր է ու յետոյ գրեր է»։

[26] Գրված է խորագրում, կարմրադեղով։ Գուցե ծաղկո՞ղն է։

27

ՃԱՇՈՑ

Երևան, № 4522 (1421 թ.). տե՛ս նաև ՀՔԹԱԻԱ, Հ 48, էջ 111, «ՀԱ», 1908 թ., էջ 237

Գրիչ՝ Ռըստակէս

52ա Եւ զեղկելի Ռըստակէս[27] յիշեայ վասն Աստուծոյ։ ՌՀ (1621) թիվ[28]։

28

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 5148 (1618 թ.)

Հետ. ստացող՝ Ղուկաս եպիսկոպոս

ա

235բ Գրեցաւ սակաւ բանս ի թվականութեանս Հայոց ՌԿԶ (1617)[29], ձեռամբ անարժան և անպիտան գրչի Ըստեփանոսի, ի վայելումն տէր Կարապետի բանի սպասաւորի, Աստուած բարով վայել տա<տա>ցէ։ Ո՛վ եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք զստացօղ սորա զտէր Կարապետ վարդապետն, որ բազում փափաքանօք գրել երետ զսա ի հալալ արդեանց իւրոց։ Աստուած ողորմի ասացէք իւր հօրն՝ Զաքարին և իւր մօրն՝ Ճօճարին։

Թվին ՌՀ (1621) ետուն զայս Կանոնագիրքս ինձ Ղուկաս եպիսկոպոս բանի սպասաւորիս, ի Կոստանդնուպօլսի, ի դուռն Ս. Նիկողայոսին, վկայութեամբ քահանայից տէր Ղուկաս Տուրկցի և տէր Անտոն քահանայն, որ լուսարար էր Ս. Նիկողայոսին, Սարգիսն և Մեծատուրն, Ստեփանոսն և Յոհանէսն եղբարք են Կարապետ վարդապետին։ Աստուած ողորմի Կարապետ վարդապետին և Քրիստոս Աստուած լուսաւորէ զիւր հանգուցեալ հոգին...

բ

170ա Տէր Աստուած, Յիսուս Քրիստոս ողորմեսցի Կարապետ վարդապետին և պահեսցէ տէր Աստուած խաղաղութեամբ զեղբայրքն իւր՝ զՄեծատուրն և զՍտեփանոսն։ Զդիրքս զայս յիշատակ և իւրեանց եղբօրն հոգոյն Կարապետ վարդապետին, ինձ Ղուկաս բանի սպասաւորի։

29

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5336, տե՛ս և հմմտ. ՀՔՎԼ, № 368, էջ 859—862

Գրիչ՝ Մարտիրոս, Յովանէս քահանայ

Վայր՝ Կէցնայ·եղէգիս

ա

259բ Փառք...։

Ուստի և տեսեալ զսորա[յ]ս անճառ փրկագործութեան խոր-

---

27 Այս Ռստակեսն հիշվում է նաև 1624 թ. մի հիշատակարանում. տե՛ս անդ։

28 Նման մի հիշատակարան էլ տե՛ս Ձեռ-ի 54ա էջում։

29 Ձեռ-ն ընդօրինակված է 1618 թ.։ Գրչի հիշատակարանը տե՛ս այդ տարեթվի ներքո։ 1617 թ. հավանաբար գրվել է հիշողությամբ։

261ա հուրդ//ումն ի լուսածնեալ զարմից սրբոյն Սիոնի Ս[ա]րգիս և զՅովհան-
նէս և ետուն գրել զսբ. Աւետարանս, զոր ի վաղուց հետէ ցանկային
աստուածախաւս սբ. մատենիս...

261բ Այլ և գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Մարտիրոս անիմաստ և
ախմար գրչի, անընդունակ գոլով յարուեստ գրչութեան... ըստ կարի
մերում, զոր պարգեւեաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատասիրեալ
իմ ի սմա գրեցի անարժան ձեռաւք իմովք, յընտիր և ի ստոյգ աւրինակէ,
կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ և անհանգիստ և
դժուարին արտամելի աւուրքք, ի մեծ թուականիս Հայոց ՌԿԸ (1619), ի
կաթողիկոսութեանս հայկազեան սեռի տեառն Սահականոսին Աղթա-
մարեցւոյ և որդի պարոն Սպանիին, և ի թագաւորութիւն այլազգեաց սեռից
Շէրօնից Միր-Ատալին, որ Եղէգիս ի ձեռն էր, զոր տէր Աստուածն Իսրա-
էլի պահեսցէ անսասան զաթոռ հա[յ]կազ[ե]ան, ի հայրապետութիւն
Մէլքէսէթին: Եւ արդ գրեցաւ սբ. Աւետարանս ի գուզն որ կոչի Կէցնայ
Եղէգիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի վայելումն Յովանիսին և
եղբարն՝ Սարգսիս, և հարն՝ Աղուրին, և Յովանիսի որդոյն՝ Աղուրին և
Կարապետին, որ տարաժամ փոխեցաւ առ Քրիստոս, յիշատակ հո-
262ա գոց//իւրեանց: Աստուած ողորմի ասացէք Յովանիսի և իւր ծնողացն.
ամէն: Եւ եթէ ոյք յանդգնի և վաճառի զսա...:

Արդ՝ որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս... յիշեցէք ի
Քրիստոս զստացող սբ. Աւետարանիս զՍարգիսն և զիւր եղբայրն՝ ըզ-
Յովանէսն և զորդին՝ զԱղուպն և փոխեցեալն առ Քրիստոսն զԿարապետն,
և զմայրն իւր՝ զԽանաղէն և զամենայն արեան մերձաւորսն սոցա: Աստուած
ողորմի ասացէք Սարգսին և կողակիցին և իւր որդոյն՝ Շանայդարին և
իւրեանց հին և նոր ն[ն]շեցեալ հոգոյն...:

Բ

Այլ և զիս զանարժան գրչակս զՅովանէս յիշեցէք ի Քրիստոս, որ
զԱւետարանս գրեց մինչև զԳ (3) գլուխն, մէկ գլուխն մեղօր Մար-
տիրոս, աւարտեցի անմխիթար սրտիւ, տրտում և դառն. որ Մարտիրոս
քահանայի կողակիցն երիտասարդ փոխեցօ առ Քրիստոս, ի գարնանային
ժամանակն, ի մէջ եղիկանի Լուսաւորչի պահք, մեռաւ ի Թվիս Հայոց
ՌՀ (1621)[30]:

262բ Ցերեսս անկեալ աղաչեմ զձեզ... յիշեցէք ի մաքրայփայլ յաղաւթս
ձեր զՅովանէս քահանայն և զորդիք զտէր Սարգիսն և սուտանուն Մար-
տիրոսն, որ զանունս ունիմ և զգործս ոչ, զտէր Գրիգորն, զՆերսէսն և
զմայրն իմ՝ զԲէկիշան, զհայրսներն՝ Թուրուանգէն, զորդին զՅովանէս,
Ջամարէնս, դուստրն՝ զՄարդէն յիշեցէք ի Քրիստոս: Եւ խոշորութեան և
սխալանաց գրիս անմեղադիր լերուք, զայդ էր կարն մեր:

Առ ձեզ գոչեմ աղերսալի, հայրք և եղբարք իմ, ի Քրիստոս, ես
անարժանս ի տանուտերաց Սարգիս անուն կոչեալ... յիշեցէք ի մաքրա-
փայլ յաղաւթս ձեր զՅովհաննէս և զորդին՝ զԱղուպն և զմայրն իւր

30 Ինչպես երևում է Ք հիշատակարանից ձեռագրի ընդօրինակությունը սկսել է Մարտիրոս քահանան 1619 թ., սակայն վերջինիս հասած դժբախտության պատճառով, ընդօրինակությունն ավարտել է Յովհաննես գրիչը՝ 1621 թ.:

զԹարուէզն[31], և զկողակիցն՝ զԽոռում և զեղբայրն՝ զԿարապետն և զզմայրն՝ զԽաղէն և զդստերն՝ զԳուլաղէն և զՋաղէն և զԲուրսէն և
263ա զն[ը]ջխուն, և զեղբայրն՝ Սարգիսն և զկողակի//ցն՝ զԽանգզէն, և զորդին՝ զՇանդարն և զկողակիցն՝ զՄեղուշն և զեղբարն՝ զՈվասափն և զնարու[ն]կն և զԱղաջան, և զքուրն՝ զԹուրունդէն և զմիւս կողակիցն՝ զէքարն և զորդին՝ զՅովանէս, և զդստերն՝ զՄոջան և զՀազրէվարդն, զԽանբէկին, զԳուլիվարդն և զՍարգիսն և իւր մայրն՝ Բուրսին:

Գ

Մաղկող՝ Կիրակոս

Լի բերանով զԿիրակոս[32] ծա[ղ]կողս յիշեցէք ի Քրիստոս, զՄարաիրոս զկապողս և զկապի վարպետն իմ զՅովոէփ եպիսկոպոսն յիշեցէք...

30

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5896 (1542 թ.)

Նորոգող՝ Յակոբ երէց

265ա Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ [յաղա]ւթս ձեր հեզահոգի մահ-[դասի Շահ]ռամիրն և զհայրն իւր՝ զՍահեփանոսն [և զմայրն] իւր՝ զԱթամէլիքն, և զկողակիցք Դ ///աօթանն, զՍառէն, զՋանաղէն, և զե[ղբայրն իւր՝] զԳուլամիրն՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և Գրիգորն, և զքուերքն՝ զԹաթարն, զՋանաղէն, և զորդիքն իւր՝ զԽոջայմիրն՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և միւս որդին՝ զմահդասի Շահրամիրն, որ [ծա]ղկեալ է ալեօք և զօակօք. միթէ Արարչին /// անփորձ ւ անսասան պահէ մինչ ի խաղաղութեան։ Եւ զիւր որդիքն զԽոջայմիրն՝ [ու]նի յինքն զողջախոհութիւն. զՅովասափայ և զմիաորդին զԽանամիր սարկաւագն զքաղցրաբարբառ զերաժիշտն, որ զարդարեալ է աստուածային իմաստութեամբ և խոնարհութեամբ. միթէ ամենազօրն Աստուած արժանի առնէ զինքն քահանայութեան կարգին։ Եւ զմիւս զորդին իւր՝ զՄիրամիրն և զդրստերքն իւր՝ զԱղաբէկին, զՇահիզամն, զ'Ալիմաքսուլթան, զէմինսօլթան, զՄոճիպսօլթան, և զկողակիցն՝ զՄարգարիտ խա-
265բ թուն, և զմիւս որդին զԳուլա// ///, զԹաթարխաթուն և զորդին զնա///[դ]ուստրն՝ զԹօլվաքսալթան, [միու]ս որդին՝ զՍահեփանոսն և զկողակիցն զՀը///մէն, զորդին իւր՝ զՅովանէսն, որ [յայսմ ա]մի փոխեցաւ ի Քրիստոս, և զմիւս որդին///տ և քաղցր եղանակող և շնորհա/// եաթնարփեան շնորհոք, խոհեմ և իմա[ստ]ուն, հանճարեղ և բանեբուն Խալիֆա սարկաւագին, որ կատարեալ է աստուածային ուսմամբ. միթէ [ամենակա]լն Աստուած արժան առնէ զինքն աւրհնութեան և ///նական սրբոյն Ստեփանոսի և Պրոխորոնի ընդ[րեա]լ սարկաւագացն։ Եւ զկողակիցն իւր՝ զԱլթուն, որ յա[ս]մ ամի փոխեցաւ առ Քրիստոս, Աստուած զիւր հոգին [լո]ւսաւորէ. և զմիւս որդին՝ զԱղամիրն և զդստերն՝ զՄոճիպսօլթան, զԱղասօլթան, զԲէկիսօլթան. և զհոգևոր որդին՝ զԿիրակոսն և զկողակիցն՝

[31] Հիշատակարանը գրված է երկու սյունյակով։ Սյունյակների մեջտեղի լուսանցքում միևնույն գրչությամբ գրված է «և զորդին զՄժումաշան» (=Մեժլումաշան)։ Դժբախտաբար չի նշված, թե այս անունը որտեղ պետք է տեղավորել։

[32] Ձեռ.-ում «սկիրակոս»։

զեալինարն, և զորդիքն իւր՝ զԱլէքսիանոսն, զՄարտիրոսն. ամէն։ Եւ զամենայն արեան...։

266ա Դարձեալ երես անկեալ աղաչեմ զձե[զ, ո՛վ] մանկունք սբ. եկեղեցոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհաւատա[ւրիմ] տանուտէր մահդասի Նուրա[միրն], և զծնաւղս իւր, որ ըստացաւ սբ. [դիրս], որ կոչի Մաշտոցի հալալ ըստացուածոց իւրոց ե ետ վերըստին նորոգել և եղ ի դուռն Ս. Վարդանայ զաւր[ա]վարին անշի[ն]ջ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց և որդոցն ամենայն ա///անացն որք ի <մսա> մասն ունին...։

Վերըստին նորոգեցաւ տաս ի թւաբերութեան հակազան սեռիս,
266բ արեթան տոհմիս ՌՀ (1621) ձեռամբ բա///[զմամե]ղ Յակոբ Երէցուս, որ զանու[նս ուն]իմ և զգործս ոչ. մեղա Տեառն...։

31

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Մ 6849, սե՛ռ ՋՁՎԼ, Մ 370, էջ 867—868

Վայր՝ Բոլենց

ա

295ա ...Պարտէ ոսկով զբոլորն կազմել, որ ճարտարակ կոչի...//... Զայս մեծ գանձս աստուածային տեսեալ աստուածասէր կինն Գոզալ, որ եղև ցանկացող աստուածախօս սբ. Աւետարանիս, որ ստացաւ զսա հալալ արդեանց իւրոց և արդար վաստակոց, զոր անշինջ յիշատակ մնայ...։ Գրեցաւ Աւետարանս Ռ ու Հ (1621) էր թուական, ի յերկիրն Մոկաց, ի
295բ գ[ե]ւղն որ կոչի Բոլենց, ի դուռն// Է (7) սբ. Նշանացն, ընդ հովանեաւ Ս. Գէորգեան, կաթուղիկոս Աղթամարայ տէր Ստեփանոսին, սրբազան վարուքն, սբ. ւ առաքինի...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբն տէր Յակոբին և ծաղկեցաւ։ Եւ յաւարտման ծաղկին փոխեցաւ առ Քրիստոս։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմայ տեսանելով կամ աւրինակելով, Աստուած ողորմի ասացէք Յակոբ քահանայն և հօրն Ներսէս քահանայն և ինձ յիշատակ դրօղիս և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Դարձեալ յիշեցէք... ստացողի սբ. Աւետարանիս Սօլթանշին, կողակցոյն՝ Գոզալին, որդոյն՝ Թումին, կողակցոյն՝ Նուրիխանին և միւս որդոյն՝ Անանին, հանգուցեալ ի Քրիստոս, և կողակցոյն՝ Մարգարտին, դստերն՝ Խառոմին, կողակցոյն՝ Խաֆանդարին, Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

բ

Նվիրատու՝ Գոզալ

296ա Ես՝ աստուածասէր և բարեմիտ ծառայս Աստուծոյ կինս Գոզալս ստացաւ զայս սբ. Աւետարանս յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց, հօրն՝ Ամիրին և մօրն՝ Խանումաղին, կողակցոյն՝ Սօլթանշին, որդոցն՝ Անանին, կողակցոյն՝ Մարգարտի[ն], Թումին, կողակցոյն՝ Նուրիխանին, դստերն՝ Խառոմին, եղբարցն՝ Աւէտին, Թումին, քուերն՝ Ջանաղին. Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։ Ես՝ ծառայս Աստուծոյ՝ Գոզալս ըստացա զսբ. Աւետարանս և ետու ի դուռն Ս. Ստեփանոս Նա-

հավկային և Ս. Սահակա[յ] հայրապետին։ Ով հեռացնէ ի դրանէ սորա՝ կապած ւ անիծած կենա. ամէն։

Դարձեալ յիշեցէք... Յակոբ քահանայն և եղբարցն՝ Մարտիրոսին և Մինասին և մօրն՝ Նունուֆարին և հօրն՝ Ներսէս քահանային, և հօրեղբարցն՝ Բաղդասար քահանային և Գրիգոր քահանային, և Կարապետին և Կիրակոսին և Ղուկասին, և պապոն՝ Մարտիրոս քահանային, և Սրապիոն քահանային և Սարգիս քահանային և Վարդանէս քահանային և Յովանէս քահանային և Բարաղամին. ամէն։

Գ

Գրիչ՝ Պարսամ

296բ Դարձեալ յիշեցէք ի սբ. և մաքրափայլ յաղաւթս ձեր զհաւատարիմ տանուտէրն զՍալթանշէն և զկողակիցն իւր՝ զԳաւզալ խաթուն, և զորդին իւր՝ զԱնանիէն, զփոխեցեալն ի Քրիստոս, և զկողակիցն իւր՝ ըզ-Մարգարիտն, զԹումէն, և զկողակիցն իւր՝ զՆուրիիանն, և զորդին իւր զՍինան Չալապին, զԽսֆանդարն, և զկողակիցն զԽառում խաթուն ըզ-Ղալայբէկուն և իւր կողակիցն՝ Եղե[ս]են։

Ե՛ւ իւր որդոյն տէր Սարգիսին և Խսֆանդարին, յիշեցէք...[33]։

297ա Դարձեալ աւրհնէ տէր Աստուած զժամատան քահանայքս զտէր Խաչատուր դասաւարն, զտէր Սարգիսն, զտէր Պարսամն, զտէր Կարապետն, զտէր Յովանէս լուսարարն, զմիուս տէր Յովանէս։ Աստուած զիւրեանց բարով վանելել տայ. ամէն։ Զտէր Սաիակն զփոխեցեալն ի Քրիստոս, Աստուած ողորմի ասացէք սորայ հոգոյն. ամէն։

Աստուած աւրհնէ զԳաւզալ խաթուն, որ ետ ի դուռն Ս. Սախակայ զսբ. Աւետարանս և լաւ զարբաֆ շուռջառ մի, լաւ շապիք մի, ուրար մի, յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն և իւր արեամբ ննջեցելոց հոգոյն. ամէն։

Զտէր Պարսամն և զկողակիցն՝ զԽոնձէն, որ գրեց զյիշատակարանս Գաւզալին, և եդ ի դուռն Ս. Սախակայ անչինչ յիշատակ իւր հոգոյն. Աստուած բարով զիւր վարձն ընդունի և արքայութիւն տայ. ամէն։ Տէր Պարսամուն ողորմիմ տուիք՝ Աստուած ձեզ ողորմի։

32

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Մ 6367 (1461 թ.)

Գրիչ՝ Վարդան երէց
Վայր՝ Սէեար

271ա Դարձեալ յիշեցէք զՂազար քահանայն և զկողակիցն իւր՝ Սուլթանմելիք, և զորդին իւր՝ Սարգիսն, և զդուստրն իւր՝ Խաթունաղայն, Գոգալաղայ[ն], Խանումաղայն, Հումիիան[ն], յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զկուսակրաւն, հեզահոգի... և աշխատաւոր, զապաշխարող Հիռիփսիմէն, որ շատ աշխատանք յերախտիք ունէ ի

[33] Կրկնում է վերևում հիշված անունները։

վեր[այ] տանս Ղազար քահանայիս, Աստուած զիւր աշխատանացն երկնից արքայութիւն պարգևէ...։

Յիշատակարանս այն տարին գրեցաւ, որ շահ Ապազն գնաց Ղանտահար սափար՝ թվական ՌՀ (1621) էր։ Եւ Քրիստոսի փառք յօիտեանս. ամէն։

Վարդան էրէցս գրեց խամ թանաքով՝ անմեղադիր լերուք, ո՛վ սբ. հայր և որդի. ի գուզս, որ կոչի Սէեար:

33

ԱՏԵՆԻ ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Ֆ 6795 (1353 թ.). տե՛ս նաև ՅՁՆԲԱՀ, Ա 19, էջ 20

159ա *Յիշեցէք... զվերշին ստացող սբ. Աւետարանիս աթմաքչի մզտէսի Յոհանին և կողակցուն իւրոյ՝ Սուլդանին, և կողակցու մօրն՝ Մելիքզաւին և այլ ամենայն զարմից նորին, որ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ*
159բ *վաստակոյ իւրոյ ի թվական//ութեանս Հայոց [ՌՀ (1621). և իւր][34] ննշեցելոցն հոգոյ[ն]։*

Շուրջ ածեն հիւանդաց՝ առողջութիւն տացէ, և ինքն զվարձն ի Քրիստոսէ առցէ. ամէն։

34

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, Ֆ 7104

Գրիչ՝ Ղուկաս դպիր
Վայր՝ Գետաթաղ

ա

194ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ երգարանս Ներսէսի, և Գրիգորի, յերկիրս Իրուանեան, ի գեղս Գետաթաղ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ձեռամբ Ղուկաս անարհեստ դպրի, ՌՀ (1621) թվին, ի խնդրո[յ] Ներսէս քաջ բարեունպետի, զոր տէր Աստուած վայելել տացէ. ամէն։*

բ

76բ *Տունք ԲՌ (2000) անպակաս,*
Այս բիւրաստանըս[35] հոգելի,
Ներս[է]սի ընտրեալ հայրապետի,
Գիծ արարեալ աւարտեցի,
Ղուկաս դըպիրս չարեաւք ի լի։
Ով ոք տառիս այս հանդիպի,
Գծագրելով կամ ընթերցի,
Մի ողորմիւ չարըս պատուի,
Ինքն ի Տեառնէ յիշեալ լինի։

---

[34] *Ուղղանկյուն փակագծում եղածը ձեռ-ում չի պահպանվել՝ էջի աջ անկյունը մաշված լինելու պատճառով, դրանք վերցրինք Հ. Աճառյանի կազմած Նոր Բայազետի ձեռագրերի ցուցակից։*

[35] *Խոսքը վերաբերում է Ներսէս Շնորհալու Յիսուս Որդի ստեղծագործությանը։*

Գ

Գրիչ՝ Յոհան

269ա Եւ զՅոհան գրիչս յիշեա՛ յաղօթս։

Դ

316ա Արդ՝ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր սուտանուն Յոհան գրիչս և զկողակիցն իմ՝ զՄրջանն, լի բերանով Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Ե

Գրիչ՝ Ներսէս

317ա Առ ձեզ պաղատիմ եղբարք, ես՝ Ներսէս յոյժ թշուառական,
Հայցեցէք ընդ իմ առ հարքս, յիշել զիս առ անմահ արքայն։
Փոքրիկ Փիլիպոս դրպիր փափագ ողբանիս տաղական,
Զայս խնդիր արար, թէ ասայ յիշատակ, որ ողորմի տան[36]։

35

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7651 (1320 թ.)

Նորոգող և կազմող՝ Խաչատուր Զեթունցի
Վայր՝ Քաֆա

208ա Ես՝ Խաչատուր եպիսկոպոս Զեթունցի, եկի ի Քաֆա, ի թուին ՌՀ (1621), տեսայ զաստուածային բուրաստան՝ սբ. Աւետարանս քրքրքրած, քակեցի և նոր կապեցի, քանի մի տեղ ուսլայ արի ու նորոգեցի և կազմեցի։ Յիշեսջիք ի մաքրափայլ սբ. յաղաւթս ձեր և ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմի իւր միւսանգամ գալուստն. ամէն։

36

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան, № 7888 (1465 թ.), տե՛ս նաև ՅՁՆԴԿ, № 2, էջ 16բ

Գրիչ՝ Եսայեա Տաքեացի

373բ Յեսայեայ անարժանս յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ։

Յեսաեաս Տաքեացի,
Մեղօք մեռեալ և զազրալի,
Գործով թափուր[37] և եղկելի։
Գրեցաւ այս նաւտրս թվին ՌՀ (1621)։

---

36 Զեռ-ի 226բ էջի հիշատակարանը 1631 թ. է. ահա այն. «Գրեցաւ տումարս ի թվականին Հայոց ՌՁ (1631)»։

37 Զեռ-ում «թաթուր»։

37
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7690 (1249 թ.)

Վայր՝ Կաֆա

108բ Փառք...։ Վերըստին կազմեցաւ և նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվականութեանս Հայոց ՌՀ (1621), ի հայրապետութեանն տէր Մելքիսէթ կաթուղիկոսին և առաջնորդութեանն ամենայն հիւսուսական կողման տէր Խաչատուր վարդապետի. և է յիշատակ սբ. Աւետարանս համօրէն Կաֆային կոշկար վարպետացն հոգւոյն[38] և մեծ վարպետին Պարոնֆային և ծնողացն իմոյ՝ Գրիգոր քահանային, և եղբաւրն իմոյ՝ տէր Աւգսէնդին, և որդոյն իմոյ՝ տէր Գրիգորին, և կնքահաւրն իմոյ՝ տէր Աբրահամին, և տէրյընծայ Խաչատուրին։

38
ԲԺՇԿԱՐԱՆ
Երևան, № 8104

Ստացող՝ Մարտիրոս Համբեցի

Վայր՝ Համիք

ա

214ա Փառք... Այս լուսազարդ սբ. մատենի,
Հուքմարանիս այս հրաշալի,
Ցանկացաւ քահանայն բարի,
Տէր Մարտի[r]ոս երանելի։
Զոր յիշատակ միշտ եղիցի,
Տէր Մարտիրոս քահանայի,
Եւ ծնօղաց նորին բարի,
Ի ազգականացն ամենայնի։

Ես՝ տէր Մարտիրոսս Համբեցի փափաքանօք գրել տվի զՀուքմարանըս, յիշատակ իւրն և իւր հօրն՝ Ադամին և մօրն՝ Գագուճոյն, և իւր կենակցոյն՝ Հռիփսիմին, և դեռաբոյս որդոյն իւրոյ՝ Մարօշին. լի բերանով և ուղիղ սրտիւ ասացէք՝ Աստուած պահէ։

Դարձեալ ծանիք, ո՛վ ընթերցողք հուքմարանիս, որ ի յայս դառն և ի նեղ ժամանակիս գրեցաք։ Վասն ծովացեալ մեղաց մերոց եկն այս ցասումն և պատուհասն ի վերայ անմեղ հաւատացեալ քրիստոնէից, ի թագաւորութեան սուլթան Օսմանին և ի մերոյս փաշայութեան Ալի փաշին, ի թվին Հայոց ՌՀ (1621), և երեսփոխանութեան զառափխանչի խոճայ Սիմէոնին, և առաջնորդութեան մերում տէր Բարսեղ քաջ բա-
1 4բ ռունապետին, իբրև զճր//ագ փայլէ ի մէջ աշտանակի մայրաքաղաքն Տիգրանակերտի, ընդ հովանեաւ եկեղեցոյս Ս. Կիրակոսի և մօրն նորա Ուղիտայի։

Եւ ի յայսմ ամի ժողովեցան հաւատացեալ քրիստոնեայք և ելին ի քաղաքէն Համբայ, գնացին մինչև ի Մալաթիայ դէմ Ալի փաշին առ

[38] Մի երկու անվան տեղ բաց է թողնված։

զանգատ, մերկ և բոկոտամբ։ Եւ յետ գալոյն նորա ի Համիք զքրիստոնեայքն ի հետն երեր։ Եւ ի վաղուեան օրին տիւան արար։ Գնացին քրիստոնեայքն ի տիւանն։ Ասաց քրիստոնէից, թէ «Ի՞նչ կիտէք խարաճ»։ Ասացին «Գ (3) ֆռանյա ու կէս։ Տովլաթի փաշայ կարողութիւն չունինք, խիստ զապուն ինք»։ Եւ վասն մեզաց մերոց այլվի Աստուած թոյլ ետ մեզ։ Անիծած հագարցի ազգն Տաճկաց ժողովեցան միաբան և ասացին փաշային, թէ «Կարող են, որ ի տան»։ Եւ ապայ փաշան ասաց. «Գնացէք, տվեցէք շահի մի այլ աւելի»։ Ու թէ ասէք այսոր պատճառն ի՞նչ է, պատճառն այն է, որ մեր մեղքն շատցեր ու զմեզ ի տարտարոս կու պահէ։ Աղաչեմք զողորմածն Աստուած, որ բանայ զդուռն ողորմութեան ի վերայ հաւատացեալ քրիստոնէից. ամէն[39]։

Բ

Գրիչ՝ Յակոբ

Եւ ես՝ անարժան և նուաստ Յակոբ գրիչս յիշեցէք ի Քրիստոս և ըզ-
հայրն իմ՝ զմահդեսի Մարտիրոսն և զծնօղս իմ զՀազարխաթունն
216ա յիշե//ցէք ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք միւսանգամ գալըստեանն
Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն[40]։

39

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 10375

Գրիչ՝ Միքայէլ Թոխաթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

261բ Փառք...։ Գրեցաւ թվին ՌՀ (1621), ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպալիս, ձեռամբ Թոխաթցի Միքա[յ]էլի, ի վայելումն Սեբաստացի տէր Աստուածատուրին։ Աստուած բարով վայելել տացէ իւրեանն. ամէն։ Եւ ի հանդերձեալն զերկնային ուրախութիւնն պարգևեսցէ. ամէն. Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրի[նակելով][41]

40

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

ԼԱԱԺԻ, № B—21 (մանրաժապավեն, Երևան, № 243 (1603 թ.)

Նվիրատու՝ Բարսեղ վարդապետ

381բ Ես՝ Բարսեղ վարդապետս եդի զայս Հարցման գիրքս յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց և ամենայն արեանառու մերձաւորաց, նաև ու[ս]ուցա-

[39] «Որ ի յայս ղառն և ի նեղ ժամանակիս գրեցաք» հատվածից մինչև այստեղ տե՛ս նաև Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 235։

[40] Այս ձեռագրում պահվել է նաև 1615 թ. մի հիշատակարան։ Վերջինս տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում (Երևան, 1974), էջ 554։

[41] Ձեռ-ի հաջորդ էջերն ընկած են։

նող վարդապետին իմոյ՝ Սրապիոն Ուրհայեցոյ, ի դուռն Եղիազարու վանացն Մշու Ս. Առաքելոյ, և մնասցէ անշինչ յիշատակ ի սբ. ուխտս։ Եւ մի՛ ոք յանդգնեսցի հանել կամ գողանալ կամ գրաւել. և թէ ոք յանդգնի՝ պատժեսցի յԱստուծոյ. և լաւ պահողքն, և խնամ տանողքն, և ընթերցողքն՝ վարձս առցեն յԱստուծոյ. ամէն[42]։

Թվին ՌՀ (1621)։

41

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 699

Գրիչ՝ Ստեփանոս դպիր

Վայր՝ Թոխաթ

197բ Փառք...։ Բայց գրեցաւ սա ձեռամբ Ամասիացի Ստեփանոս դպրի, ի
198ա քաղաքն Թոխատ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի,// ի թուականիս Հայոց
ՌՀ (1621)։

42

ՄԱՇՏՈՑ (ժամանակ?)

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 702, տե՛ս նաև № 6333, էջ 59բ, № 256

Գրիչ՝ Ներսէս Մոկացի

Վայր՝ Լիմ անապատ

198բ Փառք...։ Շնորհիւ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ես՝ Ներսէս վարդապետ Մոկացի[43] թուին ՌՀ (1621) եկի ի Լմայ սբ. ուխտս, և տեսի զայս երկնանման սբ. տաճարս, որ յանուն Ս. Գէորգեայ զօրավարին, զի խրթնացեալ էր ի բարեզարդութենէ փեսային, և փեսայէրին, և թափուր արդեանց և յամենայն դրոց, և փակեալ եկեղեցին։ Եւ ես ծառայ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եկի ի Տաթևու անապատէն աստ։ Տեառն գործակցութեամբ սկսայ ժողովել աստ եղբարս վաթսուն խարազանազգեստ կրօնաւորս, և սկսայ գիրք և արդիւնք ժողովել ի վայելումն սոցա։ Եւ տեսի զայս աստուածախօս տառս Մաշտոց կոչեցեալ ի գեօղն Մուրմեա, որ Լմայ Ս. Գէորգայ էր յիշատակ, և վաճառեալ էին զսա։ Եւ ես աղաչեցի բազում թախանձմամբ զգնող սորա զրուէս Ատամ առնել գերադարձ, և տալ միւսանգամ ի յեկեղեցին Լմայ կոչեցեալ անապատ։ Եւ լսող եղև մեզ, և ետ զսա յիշատակ անշինչ հոգւոյ իւրոյ, և կողակցին՝ Շահնուլթանին, և որդւոյն՝ Բանկին, և նորա կողակցուն՝ Զիչաֆին, մահտեսի Ենգիրէկին, և սորա կողակցին՝ Սառային, և եղբօր որդւոյն՝ Խիրէկին, և սորա կողակցուն՝ Մարգարտին, և այլ ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց, և ինձ Ներսէս վարդապետին. ամէն[44]։

---

[42] Տառացիորեն նման մի հիշատակարան պահվել է Մուրմար, I, № 67, էջ 60—61, Տարբերությունը միայն այն է, որ ձեռ-ը Հորի մեկնություն է։

[43] Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է. «Գեիլին է»։

[44] «Եւ ինձ»-ից սկսած մինչև վերջ պահպանվել է միայն № 6333 ժողովածուում (էջ 59բ)։

43
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Ա, № 703, տե՛ս նաև «Հայաստան», 1847 թ., № 47

Գրիչ՝ Յովսէփ քահանայ

198բ ...Մի՛ պարսաւագէտ լինիք խոշորութեան գրոյս և ինձ Մոկացի
190ա Յով//սէփ քահանայիս, զի ի դառն և ի նեղ ժամանակիս գրեցաւ, յորում և երեսուն չորս տեղիս փոխեցայ մինչև կատարեցի, ի ձեռաց հալածանաց հեթանոսաց և անհաւատ քրիստոնէից։

Թուին ՌՀ (1621)։

44
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Երևան, № 6333/158

Գրիչ՝ Ճանդէմիր

35ա Ի ծննդենէն Փրկչին մինչ որ եմք այժմ մարմնով [յ]երկրի,
Հարիւր քսան և երկու ամ անցեալ սուղ ամանակի,
Այլ և յարաբարդ արա ըստ կարգի այս շարունակի,
Լծակից սորա գոլով երեսներորդ յորելինի[50]։

Ի թուականիս Հայոց ութհարիւր և երկերիւրաց յիսուն և երկ տաս[ն] անցեալ ոչ անշատ, այլ միշտ իրերաց (1621)[46], [ի] դառն և վերջացեալ ի ժամս՝ սուր առ սուր բազում խողխողաց, //ի միթէ դթա[ս]ցի նիհրոզն, և բարձցէ յազգէն մեր Հայոց։ Արդ՝ ես նորաշան գրիչս եղեանիս ոչ իւիք բարի, արբանեակ սպասաւոր սբ. հօրն իմոյ՝ Սարդիս քաշ հռետորի, ծածկեալս խորասոյզ[47] տղմով ի տապմամբ գրիս...։ Ցերեսս անկեալ աղաչեմ վերծանող բարունիք բարի, զստացող սորա յիշել չստգտ[ան]ել զներսէս եղկելի, մեղաւոր և անարժան, եղկելի և անպիտան, զհոգս և զմոխիրս, զյետնորդս ի յուսումնասիրաց. և զվատթարս ի գրչաց, զգծողս սակաւ գրիս զՃանդէմիրս աղաչեմ յիշել ի Տէր, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ։

45
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

ԼԱՎԳԱՒ, № 92

525 Ո՛վ սբ. ընթերցողք, յիշեսջիք յարժանօր աղաւթս ձեր զանարժան գծողս՝ ծնօղաք հանդերձ, և ամենայն զարմիւք, յորժամ զմարգարտաւորէնն հեղցուսցուք զարտասուս ի խնկելի ժամն այն, և թողութիւն մեղաց հայցեցէք, և ողորմածն Աստուած ձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի. ամէն։

Թվին ՌՀ (1621)[48]։

---

46 Այսինքն՝ 122+(30×50)։

46 Այսինքն՝ 800+200+50+(2×10)+551։

47 Ձեռ-ում «խորասոյց» ձևով։

48 Կան երեք անթվական հիշատակարաններ, նույն բովանդակությամբ, չվերցրինք։

46
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Մեզեզ, II, № 428 (1620 թ.),

Գրիչ՝ Զիֆ Ստեփանոս

386 Ի թվականիս մեր հայկազեան,
Որ էր անցեալ քսան յոբելեան,
Այլ և եւթ տասն աւելի լման (1621),[49]
Գրրեցաւ շունչս աստուածական։
[Ը]ստ առաքելոց սրբոց կոչման,
Որք հաւաքեալ ի մի եդան,
Ըզհին և Նորրս Կտակարան,
Զոր աստ չարեմ յարմարական։
Յառաջ ըսկիզբն Բրիսէթայն,
Գործք վեցաւրեայ արարչութեան,
Ի կիրակէ օր տէրունեան,
Մինչ ի չարաթն աւր հանգըստեան։...
Այսքան դրոց փափադեցաւ,
Հոդիազարդ///
Եւ ետ դրել իւրն յիշատակ,
Անջնջելի մինչ յաւիտեան։
Եւ ծրնօզաց իւրոց որ կան,
Ի յանդրանկաց հոգոց կայան,
Եղբարց իւրոց և քվերաց,
Եւ ընտանեացըն հանրական։
Եւ իւր որդոցըն բաղձական,
Դեռաբուսիկ բողբոջական,
Եւ դստերացըն սիրական,
Փոխեցելոցն և որ աստ կան։
Զոր տէր Աստուած մեր յաւիտեան,
Պահէ անփորձ և անսասան,
Եւ յետ աստեացս արքայութեան,
Ամենեքեան լինին արժան։
Իսկ ես նուաստ անձն անարժան,
Զիֆ Ստեփանոս մեղաց ման,
Զարեաւք լցեալ, բարեաց ունայն,
Եւ սրիկայս քան զամենայն։
Այսքան դրբոց աստուածական,
Զոր շարեցի անբանական,
Զձեզ աղաչեմ, որք հանդիպիք,
Զմեղադրել իմ լրբութեան։
Զի ես տկար և սխալական,
Զեռնարկեցի յօժարական,

[49] Այսինքն՝ (20×50)+(7×10)+551։

Գրեցի զկըրկին սբ. Կտակարան,
Ոտամբ չափեալ [ը]ստ հոմերական[50]։

47
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մ8ԶԵԳ, III, № 939

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Մուշ

ա

488 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի վանքն Ղազարու, որ է Մշու սբ. առաքելքն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Առաքելոցն, և Ս. Դաւիթ Անյաղթ փիլիսոփային, և այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ, ձեռամբ մեղսամած և անարհեստ գրչի* Գրիգորի։ *Արդ՝ ես անիմաստս գնացի ի Ս. Յովանէս որ կա յերկիրն* Տարօնոյ, *անդ ուր շիշ իւղոյն է, զոր բերեալ Թաթէոս առաքեալն և եղ անդ, որ յետոյ շինեցաւ վանք հրաշակաւոր յանուն Ս. Յովաննու Մկրտչին։ Գնացի ես անդ և կացի անդ սակաւ մի, և գտի զայս աւրինակն յայն տեղն որ ի վաղուց հետէ բերած էր զայս աւրինակն* Յերուսաղիմայ *յայն վանքն։ Ապա ես մեղաւորս դեռ է գընացեր* Յերուսաղիմայ, *տեսայ զայս՝ խիստ ուրախացա, և առի զօրինակն ու բերի ի Ս. Առաքեալք, ըղձիւ և փափաքանօք գրեցի, վասն սիրոյ տնօրինական տեղացն Քրիստոսի՝ որ* Յերուսաղէմ։ *Այն յուսովն գրեցի երբ որ կրկին գա Քրիստոս* Յերուսաղէմ, *առնել դատաստան և հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց... քաղցր աչօք հայեսցի Քրիստոս յամենայն հաւատացեալս անուան իւրոյ...։*

Դարձեալ երես ի գետին անկեալ առաջի ոտից ձերոց և աղաչեմ զձեզ, որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք զանարժան Գրիգորս *ի մաքրափայլ աղօթս ձեր, և զծնօղս իմ* զՍտեփանոս *քահանայն և* զՇողիկն, *և զամուսինն իմ՝* զՄանուշակն, *և զամենայն արեան մերձաւորքն իմ, յիշեցէք...։*

Գրեցաւ սա ի թուին Հայոց ՌՀ (1621), յորում ամի ի սբ. քաղաքն Երուսաղէմ, *ի* Բեթղահէմ զՍ. Մնունդն *նորոգեցին զՀայոց վիճակն, ձեռամբ* Գրիգոր *արհեպիսկոպոսին, որ յայս վերշացեալ ժամանակս ոչ ոք գտաւ նման նմա...։*

բ

491 *Արդ՝ ես եղկելի և ստորասուղեալս* Գրիգոր *ախմար գրիչս և սուտանուն երէցս...*[51]։

---

[50] *Չափածոյի տարբեր ծավալի հատվածներ պահպանվել են տարբեր հրատարակություններում՝ ՅԶՎԼ-ում՝ վերջին երեք քառյակը (№ 3, էջ 24), Զմմառում (№ 3, էջ 79) և Մ8ԶԵԳ V-ում (№ 1672, էջ 527) առաջին և վերջին քառյակները, «ՀԱ»-ում երեքական քառյակ սկզբից և վերջից (1947 թ., էջ 120—121., հմմտ. «Սիոն», 1963 թ., № 1, էջ 14), իսկ «Հայկազեան հայագիտական հանդէս»-ում՝ սկզբի քառյակը (Դ, 1973 թ., էջ 173)։ Բացառությամբ Մ8ԶԵԳ, II-ի և ՅԶՎԼ-ի, մյուս հրատարակություններում պահպանվել է հիշատակարանի խորագիրը. «Հիշատակարան Աստուածաշունչ գրոց արարեալ նոյն Ստեփանոս երէց, որդի Ստեփանոսի, ի խնդրոյ պարոն Մէլիք աղային, որդոյ խաւջայ Սաֆարինն։ ՅԶՎԼ-ում «Ձիք»-ի փոխարեն «չիք»· Այստեղ և «ՀԱ»-ում «սրիկայս»-ի փոխարեն «որ ի կան»։*

[51] *Կրկնում է վերևում հիշված անունները։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք հոգևոր որդոյն մերոյ՝ տէր Կիրակոսին, *որ շատ աւգնականութիւն արար մեզ, և աշխատեցաւ ի կոկել թխթիս, տէր Աստուած իւրն վարձահատոյց լիցի...*[52]։

48

Մեկնութիւն երեմիացի

Մ8Զեկ, IV, № 1082. տե՛ս նաև ՏԵՐԱՎՔ. № 367, էջ 599

Գրիչ, ստացող՝ Մեսրոպ Կաֆայեցի
Վայր՝ Տօմարղա, Սէջով

ա

117 Մեսրոպ *գծող տարիս ՌԿԸ (1619) թվիս. եպիսկոպոս և վարդապետ լոկ։*

բ

Աղաչեմ զ[ր]նթերցողդ, որ այսչափ մեկնութիւն հազիւ գտի բազում տանջանօք, մի՛ մեղադրէք, և զՄեսրոպ *ծրողս յիշեցէք ի Քրիստոս. ՌԿԹ (1620)։*

գ

118 *Ջստացող և զծրող* Մեսրոպ Կա//ֆայեցի *վարդապետ. ՌԿԸ (1619) թվին, յիշեցէք ի Քրիստոս։*

դ

Մեսրոպ *ծրող. ՌԿԹ (1620)*[53]։

ե

Ով եղբայր, անմեղադիր լեր, պակասեալն չի գտաք ի մեկնիչն. ո՛վ եղբայրք, անմեղադիր լերուք, և զգծողս յիշեա՛։

զ

Ջծոյլս ի բարիս և զաբագս ի չարիս, լոկ անուամբ միայն Մեսրոպ Կաֆայեցի *սպասաւոր բանի, բազում շանիւ զայսչափ Մեկնութիւնս ի լոյս հանի կարի հին օրինակէ, կարծեմ թէ յօրինակն դրած է մեծին* Գօշ Մխիթար *վարժապետի, որ և Մեկնութիւնս նորա արարեալ է։ Այսպէս հին և փտեալ ու եղծեալ գտի զՄեկնութիւնս։ Որ և բազում խնդիրս արարի յաղագս Մեկնութեանս Յերեմիայի, որ և ելեալ եմ ի խնդիր* Կաֆայու *մինչև ի* Էջմիածինն՝ Վաղարշապատն, *ի* Խոր Վիրապն, *և* Սաղմոսավանքն, *ի* Սանահին *և* Հաղպատն, *ոչ գտի։ Ետո եկի* Լեհաց *տունս և ոչ գտի։ Գնացի մինչև* Հալապ *և ոչ գտի։ Դարձա* Հալպա *ի* Կեսարիա *եկայ, և անդ գտի, զոր որոնեաց անձն իմ, մի ոմն ի բանասիրէ* Սասրնցի Աղարիեա *վերակոցեցելո[յ]։ Բայց խիստ էր եղծեալ յօրինակն։ Ապաւինեցա Աստուած, մտի ի քննութիւն ՌԿԸ (1619) թվականի,*

---

[52] Կան նաև մի քանի փոքր հիշատակագրություններ, միայն գրչի անվան հիշատակությամբ։

[53] դ, ե և է հիշատակարանների նման ցուցակում էլի կան։

ի Տօմարզու վանքն Ս. Աստուածածին և աւարտեցի զսայ ՌՀ (1621) թվին, Պողատանա[յ] յերկիրն ի Սէշով Ս. Օգսէնդ վանքն։ Զորս գտա ի Մեկնիչէ և զորն ախմար մտաց իմոց շարադրեցի, և զորն ոչ գտա պարապեալ թոզի։ Աղաչեմ զգաղաբարողքդ ըզյիշատակս իմ գրեսշիք, և զաշխատութիւնս իմ մի՛ եղծուցանէք, զի և ձերն գրեսցի ի դպրութիւն կենացն ամէն։

Գրիչ՝ Ներսէս

է

Ցիշեցէք զծրողս Ներսէս ՌԿՐ (1619)։

բ

Այլ և զթերավարժ գրչակս զՆերսէս գրող յայսմ տառիս, որ եմ քվերորդի տէր Մեսրոպ քաշ բաբունապ[ետ]ի, յիշեսշիք ի Քրիստոս։...

Զոր և ես բազում աշխատանք ի վերայ սորա քաշեցի, զոր դրեցի և սրբագրեցի։ Աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք, որ խոշորութեանս և սղալանացս չի մեղադրէք, զի կար մեր այս էր, և յօրինակն խիստ հին էր. յօր կլար որ Բ (2) տող գիր ճորով կու գրէի։ Աղաչեմ զձեզ, ո՛վ ուսումնասէրք, որ զՆերսէս յիշէք, զի և դուք յիշեալ լիցի[54]։

Թէ դպիր ես կարդա, թէ չէ վզիտ տուր և հազայ։

49

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՒՑ

Մ8ՁԵՊ, VI, № 2000

Գրիչ, ծաղկող՝ Ղուկաս դպիր

Վայր՝ Տաթև

ա

518 Գրեցաւ և ծաղկեցաւ ձեռամբ Ղուկաս անարժան դպրի։ Ով կարդա կամ աւրինակէ՝ մի բերան Աստուած ողորմի ասէ...

Թիւն ՌԿՐ (1619) էր։

բ

Զ Ղուկաս դպիրս յիշեցէք ի Տէր։ Թվին ՌԿԹ (1620)[55]։

գ

Աւրհնեալ է Աստուած, որ ետ կարողութիւն գծագրել և յանգ հանել երգարանս Դաւթեան և այլոց սրբոց ժողովելոցս աստ։ Ո՛վ երգեցողք ու նրւագողք, յիշեցէք ի մաքրափայլ յաղթօղս անարժան Ղուկաս սուտանուն դպիրս։

Որ եմ անկեալ ի մէջ տղմի,
Եւ շաղախեալ ախտ աշխարհի,
Աղաչեցէք Տէրն ամենի,
Աղօթիւք ձեր նա ինձ օգնի։
Թվին ՌՀ (1621) էր։

---

[54] Ցուցակի հեղինակը հայանում է, որ շեղագիր այս տողը ձեռ-ում ծածկագրով է գրված։

[55] Ցուցակում տե՛ս նման երկու հիշատակարան ևս։

Դ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի լաւ և ընտիր օրինակէ Գառ[ն]եցոյն, ի մեծ յանապատս Տաթևու, ի խնդրոյ Դաւիթ եպիսկոպոսին, ի վայելումն անձին իւրոյ, և հօրն՝ Սարգսին, և մօրն՝ Շահսուլթանին, և եղբարցն՝ Ջալալին, Հեկազին, Գրիգորին, և եղբօր որդոցն՝ տէր Սարգսին, Կիրակոսին և այլ ամենայն արեան մերձաւորաց նորին...։

Դարձեալ յիշեցէք զնախ[ն]իքն մեր՝ զՆերսէս կաթողիկոսն, և զՍարգիս կաթողիկոսն, և զԳրիգոր կաթողիկոսն. ամէն, որ են յաթոռ էջմիածնա[յ]։

Թվին ՌՀ (1621)։

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ կողկողայդին պաղատ[ան]օք, ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԴաւիթ եպիսկոպոս, որ է սբ. էջմիածնայ և Խոր Վիրապէն, որ ետ գրել լուսայզարդ և աստուածախօս սբ. տառս, որ կոչի Ժամայգիրք, և սահմ[ան]եալ եռայմեծին Գրիգորի բարունապետի Հայոց մեծ հեռետորի, որ է Դ (4)
599 գիրք, որ ետ գրել փափաքանօք սբ. տառս, յիշատակ իւրն և ծ//նողացն և ազգականացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՎիրապեցի Դաւիթ եպիսկոպոսն, որ ետ զայս Ժամագիրքս յիշատակ Երուսաղէմայ, ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն, որդւոյն Զեբեդեայ, յիշատակ իւր և ծնողացն, հօրն՝ Սարգսին և մօրն՝ Շահսուլթանին, եղբարցն և ամենայն ազգականացն...։ Եւ մի՞ ոք իշխեսցէ հանել ի դրանէս Ս. Յակոբայ։ Եւ թե ոք յանդգնի և հանել շանայ ի սբ. եկեղեցոյս՝ զպատիժն Յուդային...։

Ե

Աղաչեմ զձեզ, եղբայրք, Ս. Յակոբայ առաջնորդք և միաբանք սբ. ուխտիս, խնդրեմք ի ձեզանէ, որ այս ատենի Սաղմոսարանս ի յատեան դնէք, զսաղմոսն և զժամն ի վերայ ասէք, և զմեղօր Դաւիթ եպիսկոպոսն ի յաղօթս ձեր յիշեցէք...։

Ի հայրապետութեան սբ. աթոռոյս Երուսաղէմայ և Ս. Յակոբայ առաքելոյն զԳրիգոր արհի և պանծալի եպիսկոպոսն, որ բազում վիշտս և ցաւս կրեաց ի յայլ ազգաց և յանօրինաց, և բազում ժամանակ աշխատեցաւ ի սբ. քաղաքս Երուսաղէմ և զՍ. Յակոբ և զՍնունդն և զայլ վանքերն նորոգեաց, և հաստատեաց ժամատեղաւք և սաղմոսերգութեամբ ի պարծանս Հայոց ազգին, և ի յամաւթ այլազգեաց, որ հակառակ են հայկազեան տոհմիս, որ կրկին լուսաւորիչ եղև սբ. Երուսաղէմայ։ Աստուած զիւր հոգին լուսաւորէ յաւուր դատաստանին. ամէն։

Ստացող՝ Դաւիթ

Զ

Եւ ես՝ անարժան Դաւիթ եպիսկոպոս Գ (3) անգամ եկայ ի սբ. Երուսաղէմ, յետոյ և յառաջ Ժ (10) տարի սպասաւոր կացի ի դուռն Ս. Յակոբայ։ Աղաչեմ զձեզ, եղբարք, յորժամ զսաղմոսն ասէք և յետոյ զժամն՝ լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք մեղաւորիս, որ անուամբս միայն եմ և գործովս ունայն և թափուր ի յամենայն բարի գործոց...։

50

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Ջմմառ, № 463

Գրիչ՝ Ռստակէս երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

60 Փառք..., որ ետ կարողութիւն... սուտ գրիչ Ռըստակէս էրէցս... տեսայ զայս անկողոպտելի գանձս... զոր թարգմանեալ է հոգիընկեալ հայրն հասարակեաց, սրբայսնեալ բահբունի վարդապետն Վարդան: Արդ՝ և ես թափիւրս ի բարեաց... Ռըստակէս էրէցս գրեցի սբ. Մեկնիչս Դաւթայ ի թվայբերութեան հայկազան սեռից ՌՀ (1621) թվականիս, ի թագաւորութեան շահ Յապագին, ի առաջնորդութիւն գեղիս պարոն Նազարին, ի քաղաքն Ըսպահան, ի գ[ե]ւաղն Ջուղայ, ի դուռն Ս. Սարգիս զա-
61 ւրավարին, ձեռամբ անարժան Ռըստակէս իրիցի... ի վայելումն// որդւոյն իմոյ՝ Գրիգոր քահանային. ամէն: Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զմահդասի տէր Ռըստակէսն, որ գրեցի գիրքս յիշատակ հոգոյ իմոյ և իմ ծնաւղացն, հայրն իմ՝ կուռիկար Թասալին և մայրն՝ Նազոյխանն, և զեղբայրքն իմ հանգուցեալ ի Քրիստոս՝ Յովանէսն, Վարդան և միւս Վարդանն, և քեռն իմ՝ Անգունենամէն. և զկենդանիսն՝ Սիմոնն, Նաշխազարն, Մխիթարն, և զքեռն իմ՝ Մէրտաաիկն:

Դարձեալ յիշեցէք զվերոյ գրեալ զտէր Ռըստակէսն և զամուսինն իմ՝ Աշխաշէն, և զորդին իմ՝ զտէր Գրիգորն, և դստերքն իմ՝ Սաարիջանանն, Աղլանգէրամն, Ուլումբիաքն, Մարիամն, Ոգոնի և հարսն իմ՝ Սալվարիխանն:

Դարձեալ յիշեցէք զտէր Գրիգորն և կողակիցն իւր՝ Սալվարիխանն, և զորդին իւր՝ Վարդանէսն, և դուստրն իւր՝ Նազոյտատիկն:

51

ՇԱՐԱԿՆՈՑ

Ջմմառ, № 558. հմմտ. նաև Հ. Ոսկյան, Սեբաստիայի վանքերը, էջ 154

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Կարմիր վանք

16 Յերկրէս յերկինքն հունդ մանանեխի... որ ետ կարողութիւն փծուն և ախմար գրչիս Վարդան խաբեբայ աբեղիս հասանել ի վերջ կըտակիս: Գրեցաւ ականց շարոցս ի թվաբերութիւնս Հայոց ՌՀ (1621) յերկիրս Զըմըշկածակու, ի սբ. մենաստանս Կարմիր վանք, ընդ հովանեաւ[56] Ս. Կարապետին և Ս. Նշանին և Ս. Սարգսեա արագահաս աւգնականի և այլ սրբութեանցս, ձեռամբ յոգնամեղ... և թշուառացեալ Վարդանի, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ կոչի Խլկրցի: Գիտացեք ով սբ. եղանակաւղք, որ յառաջն մինչև ի Յապաշխարութեան Զորրորդն գրեաց իմ վարդապետ տէր Գրիգորն, անդի գրեաց աշակերտ իմ Յոհանէս Մալազն մինչև ի Հոգոյ գալըստեան Գ (3) պատշաճն, և անտի մինչև ի վերջն մեղաւորս աւար-

[56] Տպված է «հովանեալ»:

տեաց։ Արդ՝ աղաչեմք զձեզ, ո՛վ դասք քահանայից և ջոկք սարկաւագաց, զի ի սխալանացս անմեղադիր լերուք, զի ժամանակս կարի չար է, զի խելքս չեմ կարեր ժողով պահեր ի դառնութենէ աշխարհիս։ Ի խնդրոյ տեր[57]

52

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 156 (1236 թ.)

208 Զվերջի ստացողի աստուածազարդ և հոդէբաշխ սբ. Աւետարանիս պարոն Ֆոանգուլն, որ ետ վերստին նորոգել զսայ ի թվին ՌՀ (1621), յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց, հաւրն իւրոյ՝ առատամիտ և հեզայհոգի պարոնաց պարոն խօջայ Սաֆարին, և մօրն՝ Սուլթանփաշէ, և եղբարց իւրոց սիրեցեալ և պատուեալ յաչս թագաւորաց պարոն Մէլիքաղէն պարոն Սալթանումն, պարոն Ջալալն։ Դարձեալ յիշեցէք զխօջայ Ֆոանգուլն և զկողակիցն իւր՝ զԽաթշիկն և զորդիքն իւր՝ Բաքէն, և զդստերքն իւր՝ Շամսղամարն, և զորդիքն Մէլիքաղին՝ Միքայէլն, Խաչիկն, Սինանն, Մէլիքնիազն, և զորդի Սուլթանումին՝ Սաֆարն։ Քրիստոս Աստուած ողորմեսցի սոցայ ըստ մեծի ողորմութեան իւրում. և որ յիշէ՝ յիշեալ լինիցի առաջի ահաւ[որ] բեմբին Քրիստոսի, և նմայ փառք յաւիտեանս. ամէն։

53

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՏԵՐԱՎՋ, № 373

Ստացող՝ Ստեփանոս երէց

Ա

560 Փառք... // Արդ՝ և ես մեղուցեալ Ստեփաննոս էրէցս գրել տուի սբ. տառս յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց տէր Ազարիային և մաւրն իմ՝ Ղզլարբէկէ, և քուերաց իմոց Հուրիանին, Դշխուհին. և իմ որդոցն՝ տէր Ազարիային, Մինասին, Փիրբէկին, Վասլին, և իմ դստերացն՝ Պալաթին, Յուղիտին, Տալիթայկումին. և <իմ> եղբարց իմոց Ասլանին, Մալին՝ հանգուցելոյն ի Քրիստոս. և իմ որդոցն հանգուցելոյն առ Քրիստոս՝ Բարակիասէրին, Վասլին, Միրզայբէկէ։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Ստեփաննոս էրէցս, և <ամուսին իմ> կողակից իմ Եզտումն. և Աստուած ողորմի ասացէք, և Աստուած յիշէ իւր արքայութեանն. ամէն։

Բ

Փառք...[58]։ Արդ՝ երթ ընթացից արեգական, և ի մերոյս թվին ՌՀ (1621)։ Արդ՝ և ես մեղուցեալ Ստեփաննոս էրէցս գրել տվի սբ. տառս

[57] Ցուցակի հեղինակի հաղորդմամբ հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

[58] Սույն ձեռ-ի մի մասը գրվել է 1284 թ. Կիլիկիայում, իսկ մյուս մասը 1621 թ.։ Այստեղ ներկայացված է 1621 թ. հիշատակարանը։

յիշատակ ինձ և իմ ծնաւղացս, հարն իմոյ՝ <և> տէր Ազարիային, *և մարն իմ՝* Ղզլարբէկէն, *և կողակիցն իմոյ՝* Եզտումին, *և իմ որդոցն՝ տէր* Ազարիային, Մինասին, Փիրբէկին, Վասլին, *և դստերացն իմոց՝* Պալաթին, Յոտլիային, Տալիթայկումին: *Աստուած ողորմի ասացէք և Աստուած յիշէ իւր արքայութեանն. ամէն։*

գ

568 *Յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զտէր* Ստեփաննոսն, *որ պար-*
569 *գևեաց զսր. գիրքս ի* Բաղասարին, // *Աստուած զինքին անփորձ և անսասան պահէ ի մէջ ծովածուփ կենցաղուս, և յետ այստեղացս ելանելոյ արքայութեան արժանի արասցէ զինքն և զիւր ծնաւղսն. ամէն։*

դ

Դարձեալ յիշեցէք ի բարին զրարէմիտ Բաղդասարն, *զհայրն իւր՝* Նազարն, *և զմայրն իւր՝* Դրշիւնն, *զհաւրեղբայրն իւր՝* Առաքելն, *կողակից նորայ* Սոզումէրն, *և զմիուս հաւրեղբայրն իւր՝* Մարութէն, *կողակից նորայ* Շիրինն, *և զորդին՝* Ոսկանն, *և զմիուս հաւրեղբայրն իւր՝* Եղնազարն, *կողակից նորայ* Սալվինազն, *և զեղբայրն իւր՝* Սաֆարն, *յիշեցէք...։*

ե

Դարձեալ յիշեցէք զմաքրափայլ յաղօթս ձեր զբարեմիտ Բաղդասարն, *զծնողսն, զհայրն իւր* Նազարն *և զմայրն իւր՝* Դշիւնն, *զեղբայրն իւր՝* Սաֆարն, *և զմիուս եղբարն՝ հանգուցեալ առ Քրիստոս* զՄաթէոսն, *և զքուրն իւր՝* Յամասփիւռն. *ամէն։ Դարձեալ յիշեցէք ի բարին* զԲաղդասարն. *և ազգականն իմ գրիս պարգևողին զտէր* Ստեփաննոսն *և զորդին իւր՝ զտէր* Ազարէն, *որ ետուր գիրս մեզ, կարդալով և իւրն ողորմի ասելով. ամէն։*

54

ՔԱՂՈՒԱԾՔ ՅԱՐԱՐԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ, ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

ՏԵՐԱՎՔ, № 518

Դրիչ՝ Յովանէս աբեղայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

792 *Փառք...։ Գրեցաւ սայ ի ՌՀ (1621) թվին, ձեռամբ անարժանիս* Յովանէս *աբեղա[յ]իս, ի յերկիրս* Ըսպահանա, *ի Շաւշ քաղաքս արքայանիստ, ի գ[ե]աւղաքաղաքս* Ջուղա, *ի դուռն Ս. Յակոբին, ի թագաւորութեան Պարսից շահ* Ապասին, *ի դառն և ի դժար ժամա[նակիս]*[59]։

բ

Փառք... որ ետ կարողութիւն հոգևոր հօրն մերոյ Յովաննէս *աբեղա[յ]ի հասանել աւարտ կիսոց դրոցս։ Ոչ ժամանեալք զբաւանդակն գրել*

[59] *Այստեղ ընդհատվում է։*

վասն ծերութեան և տկարութեան մարմնոյն, այլ և ի դառնութեան ժամանակիս, որում ամի շարժեալ արքայն Պարսից բուռն զաւրութեամբ ի վերայ Բաբելոնի, և պաշարեալ էառ զնա մեծաւ քաշութեամբ, որ և ազգս Հայոց իբրև զերամս կաքաւաց հարեալ ի արծուոյ ցրեալ տեսանի...։ Եւ արդ գրեցաւ երգարան ի դուռն Ամենափրկչին, ձեռամբ Յովհաննէս արեղի, զոր տէր Աստուած վարձս բարեաց պարգևեսցէ իւրն և մշակ առանց ամօթոյ պահեսցէ զինքն և յետ աստեացս ելանելոյ զերկնից արքայութիւն պարգևեսցէ. ամէն։

Եւ արդ գրեցաւ սբ. երգարանս տեառն Ներսէսի յերկիրս Պարսից, ի քաղաքս Շաւշ, որ է Ըսպահան, ձեռ[ամբ][60] Յովանէս աբեղայի, ի վայելումն եղբաւր որդոյն իւրոյ՝ տէր Յակոբին, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ յերկար ժամանակաւք. ամէն։ Արդ՝ աղաչեմ զով բարէմիտ
793 ընթեր//ձողք, ո՛վ հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զգծաւղ սորա զՅովհաննէս աբեղայն և եղբարք, զծնաւղսն իւր՝ զտէր Գրիգորն և զԹուրվանդեն, և եղբարցն՝ Զաւեռապին, Ղարաին, Կիրակոսին, Այաիշէն ևս առաւել տէր Ոհանին, և կենակցուն իւրոյ՝ Նակահին, և որդոցն՝ Կիրակոսին, և զեղբաւր որդին իմ՝ տէր Յակոբն, և կողակիցն իւր՝ Խաւարովն, և դստերսն իւր՝ Ուղիդէն, Փաթիկն, և զՏատիկն, Սառէն, և որդին իւր՝ Գրիգորն, և այլ ամենայն արեան մերձաւորսն յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

55

ՀԱՒԱՔՈՒՄՆ ԲԱՆԻՑ ՆԱԽՆԵԱՑ

ՑՁՎՍ, II, № 303 (1220 թ.)

1138 Եւ յետ անցեալ շրջանիս և ի բազմանալ թուականիս ՌՀ (1621) լինելով և մատեանս եղեալ էր ի սբ. ուխտ Եղիազարու, որ է լեառն Տիւրոսի, ո[ւ]ր երկոտասան մասն առաքելոց է հանգուցեալ և այլ սրբոց մասն կայ հաւաքեալ, ի յառաջնորդութիւն մեծ բաբունոյն Բարսեղի. գիրքս առեալ էր եղբայր նորին ճգնազգեացն և մեծն ի յանապատաւորաց Ապաուլ կոչեցեալ այրն առաքինասէր, զի բազում ամօք ի յայրս և ի ծերպս վիմաց և ի մացառս լերանց բնակեալ էր, բոկ ոտամբ և բացաւ գլխով, աւելի քան զերեսուն ամ։ Եւ թաքուցեալ ըզհրաշալի կտակս աստուածային ի ծերպս վիմայց. և ազգն Մարաց, որ շրջապատեալ են զսբ. ուխտին՝ դողացեալ եղեն զսա. և այն որ համարձակի առնուլ զգիրքս և տարեալ ի տունն, որպէս ի հնումն տապանակն գործեաց յայլազգիս և դարձուցին յԻսրայէլ. նոյնպէս և սա գործս հրաշալի առնէ, զի սապաղարի և տուն և ընտանիքն և խաշինքն սատակին. վասն որոյ ինքեան իւրովի դարձեալ վերստին բերեալ ի սբ. ուխտն՝ սքանչելիօք սբ. առաքելոցն և աղօթիւք մեծ ճգնաւորին Ապաուլին։ Արդ՝ որք ընթեռնուք զսա, փառս տուք Արարչին. ամէն։

[60] Տպված է «ի ձեռն»։

56
ՄԱՇՏՈՑ
ՈՑՁՄՎ, № 987 (1540 թ.)

Կազմող՝ Գալուստ

876 Գրեցաւ սակաւ գիրս և կազմեցաւ գիրքս թուին ՌՀ (1621), ձեռամբ Գալուստի:

57
ՔԱՂՈՒԱԾՈՑՔ ՇԱՐԱԿԱՆԱՑ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ
ՑՁԱԲ, № 147

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Գաղատիա

732 Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զՔաղուածոյս և կարգաւորութիւն հասարակաց, ի թվականութիւնս Հայոց ՌՀ (1621), ի հայրապետութիւն Հայոց տեառն Մելքիսեթ կաթողիկոսին։ Արդ՝ գրեցս ի յերկիր Գաղատիա, ի դուռն Ս. Աստուածածնին, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս տէր Յակոբ եպիսկոպոսին և այլ միարանաց՝ մեծի և փոքու. ամէն։

Արդ՝ աղաչեմ զդասս լոյսերամիջդ, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Խաչատուր քահանայն, որ յաւժար կամօք երեսս գրել իւր հալալ արդ[ե]անց, ի վայելում[ն] անձին իւրոյ, և ծնօղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանպիտան ծառայս Աստուծոյ՝ զԳրիգոր գծողս, որ միայն զձևս և զգործս յանձինս, ոչ կայ գործ մի բարի յիս, քանզի մեղաւք լցի զհոգիս այս անցաւոր սուտ կենցաղիս. ամէն։

58
ՄԱՇՏՈՑ
ՑՁՂԲ, № 143, տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ Բ, № 479, էջ 402—403

Գրիչ՝ Ատեփս
Վայր՝ Աղտ

ա

920 [Փ]առք...։

Արդ՝ գրեցաւ սբ. Մաշտոցս ի թուայբերութեանս Հայոց ՌՀ (1621), ձեռամբ յոգնամեղ և եղկելի սուտանուն Յատեփս անարժանիս, ի դաւառն Սեբաստիու, ի գիւղն որ կոչի Աղաբրն, ի դուռն Ս. Կաթողիկեաց և Հրեշտակապետին, ի յառաջնորդութեան տէր Մելքիսեթ վարդապետին. ամէն.

Արդ՝ գրեցաւ սայ ի դառն և ի նեղ ժամանակիս ի թագաւորութեան Տաճկաց ի ժամանակն սուլտան Ոսմանին, զի ժամանակս դառն էր և անաւրէնն բազմացեալ, զի միտքս էր մոլորեալ և սիրտս էր շլմորեալ, այնպէս նստէաք ի տանի որպէս բու աւերակի։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այս սբ. Մաշթոցիս, ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զանարժան գծող սորայ և զուսուցիչս իմ զտէր Նիկողայոս աշակերտն. զի բազում աշխատեցաւ ի վերայ իմ և ծնաւ-զաբար ուսուց զամենայն պիտոյս իմ, զոր տէր Աստուած երկար ամաւք պահէ։

Ո՛վ մանկունք եկեղեցոյ, անմեղադիր լերուք սղալ[ան]աց գրիս և խոշորութեան. զի շատ է մեր պակասութիւն և ձեր իմաստութիւն. զի առաշի գիրս է և կար մեր այս է։

Դարձեալ յիշեցէք ի յաղաւթս ձեր զստացող Մաշտոցիս զմեղդեսի Թորոսին, հաւրն՝ Տատուրին, մաւրն՝ Մեռտինին, կողակցին՝ Զմրուքին ու Նաղաշին. Աստուած ողորմի իւրեանց հոգոյն, որ գնեցին զՄաշտոցս և եղին յիշատակ և ետուն... ի ձեռս տէր Մարտիրոսին:

921 Ով որ ծախէ զսայ կամ գրաւ դնէ՝ զմասն Յուդայի առցէ և զպատիժն Կայենի. ամէն։

Բ

922 ...Արդ գրեցաւ Մաշթոցս ի թագաւորութեան սուլթան Աւսմանին, ի թուականիս ՌՀ (1621), ձեռամբ...[61]։

59

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՔԷՋ «էջմիածին», 1951 թ., Թ—ժ, № 65 (1486 թ.)

82 Վերշին ըստացող սբ. Աւետա[ր]նիս զխոճայ Շիրաքին և իւր կողակից Խանիմաքին, որ ըստացան հալալ ընչից, քրտնաջան աշխատանաց, զառատարուխ քառավտակ գետոց պտղաբերել և լուսաւորել զազգս որդոց մարդկան։ Արդ՝ Հոգին Աստուած աւրհնեսցէ զհոգին պարոն Շիրաքին և իւր ամուսնուն՝ Խանիմաքին:

Ո՛վ քահանայք, պաաւեալքդ յԱստուծոյ, յորժամ ընթեռնուք զսբ. Աւետարանս կամ աւրինակէք, յիշեցէք...։՝ Ի թվիս մերում Հայոց ՌՀ (1621)։

60

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԷՍԻ

Մուրմար, I № 70, տե՛ս նաև Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա, էջ 63—64

Գրիչ՝ Պօղոս
Վայր՝ Կտուց անապատ

66 Փառք...։ Որ ետ կարողութիւն տկար մատինս իմոյ հասանիլ յաւարտ այս սբ. տառիս որ... ի յիշատակ պարոն Մուրադին, որ ետ հալալ ընչից իւրոց և ետ գրել։ Ի թուականիս Հայոց ՌՀ (1621) թուին գրեցաւ ձեռամբ անարժան Պօղոս գրչիս, ի դառն և նեղ ժամանակի։ Միով

[61] Ինչպես հաղորդում է Ցուցակի հեղինակը, այս հիշատակարանը եղծված է, պահպանվել է միայն բերված մասը (էջ 921)։

ողորմայիւ արժան առնել և Աստուած ողորմի ասել մեզ մեղաւորացս. և Աստուածն ամենայնի որ առատ է ի տուրս բարեաց ձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Վանայ, ի սբ. ուխտս որ կոչի Կտուց, ընդ հովանեաւ Ս. Կարապետին, և Ս. Աստուածածնի[ն], և Ս. Հռիփսիմացն, և Ս. Գայիանեանց, ի յառաջնորդութեան մերոյս աթոռոյ փոքր Ստեփանոս կաթողիկոս...։

Մեր տէր Գէորգ, և զտէր Սահակ հերպետն, և զտէր Յակոբն, և զտէր Թումէն և յայլ միայրան եղբարցս էր ի դառն և նեղ ժամանակիս, որ այս ԺԶ (16) ամ է որ կամք տառապանք ի ձեռն այլազգեաց սովով և փախստեամբ և զվերջն ոչ կարեմք իմանալ, թէ որպէս լինելոց է։ Այս ամենայն եկն ի վերայ մեր, վասն մեղաց մերոց, զոր և տէր Աստուածն ազատէ զձեզ յայմենայն վտանգէ։ Եւ խաղաղութեան, և սղալանաց գրիս[62] անմեղադիր լերուք, զի կայրն մեր այս էր և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

61
ԱՒԵՏԱՐԱՆ
Մուրմար, II, № 18 (1448 թ.)

113 Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՊետրոսն, և զմայրն՝ զՊաղչան, և զհայրն՝ զԿանաչիկն, և զհօրեղբայրն՝ զՌեհան, այլ և զԴանէլն, և զեղբայրն՝ զՍմբանտարն, և զեղբաւր որդին՝ զՇարաֆն... զՊօղոսն, և զծնօղսն իւր՝ զՄաղսուտն. սոքա վերոյ դրեալ աստուածասէր քրիստոնեայքս միարանեցան ընդ այս քահանայիս, տալով ընչից իւրեանց նորոգեցին զսբ. եկեղեցիս թվին ՌՀ (1621), յիշեցէք...

62
ՀԱՒԱՔԱԾՈՒ (ԺԶ—ԺԷ դդ.)
ՔՋՁՎ, № 136. տե՛ս նաև Զմմառ, № 673, էջ 280

292 Ի թվին Հայոց ՌՀ (1621) ամին գրեցաւ պատուական բանքս ի վայելումն Անդրիաս Չելէպուն, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

63
ԱՒԵՏԱՐԱՆ
CBCon., № 14 (1321 թ.)

23 Զվերջին ստացողս սբ. և լուսազարդ Աւետարանիս խաւջայ Սաֆարին յիշեցէք ի բարին Քրիստոս... որ ըստացաւ ըզսբ. Աւետարանս յիշատակ յաւիտենական։ Մանաւանդ զստացող սբ. Գրգիս զպարոն Սաֆարն, և զհայրն իւր՝ տէր Պետրոսն, և զմայրն իւր՝ Սուլթանխաթունն, և կողակիցն իւր՝ Խաթային, և զորդիքն իւր՝ զՄուքայէլն, և ըզՎանդրա-

[62] Տպված է «գիրս»։

մին, զԲաբէն, ըզՊետրոսն, և դուստրն իւր՝ Գուլնարաքն, յանգուցեալ ի Քրիստոս խանիլարն: Որ յետոյ զարգարեաց սբ. Աւետարանս ոսկով և ակներով։ Աստուած իւրեանց մեղացն թողութիւն արասցէ... Թվական ՌՀ (1621) նորոգեցաւ...

64

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՅՍԳ, № 36 (1502 թ.), տե՛ս նաև «ՀԱ», 1925 թ., էջ 375—376

Հետ. ստացող, նվիրատու՝ Թորոս երէց

36 Փառք...։ // Արդ՝ ես վերջին նուաղեալ ծնունդս եկեղեցւոյ, մեղաւոր ու անպիտան տէր Թորոս երէցս, որ և ի գեղջէն Պօգայոյ, և այժմ եմ բնակեալ ի քաղաքին Սեբաստիա, որ և կարի փափաքմամբ հայցէի յԱստուծոյ ինձ յիշատակ Աւետարան գրել տալ և փափագանաց հասանել, որ և ինքն անեղն և ամենազաւրն Աստուած կատարեաց զփափաքս սրտի իմոյ, որ և այժմս շնորհեաց ինչ զայս հոգելի մատեանս աստուածային, որ և ես ի հալալ ընչից իմոց գնեցի և եղի ինձ յիշատակ հոգւոյ իմոյ, և իմ ծնողացն՝ հաւրս Եարաուսին և մօրս Մարիամին, և մեր կողակիցն՝ Ղիմաքին, և որդւոյս Խանպէկին, և թոռնոյս Մինասին, և մեր հարսինն՝ Ազիզին, եղբօրս՝ Մինասին, և եղբօրորդւոցս՝ Մարկոսին և Պօղոսին և եղբօր կնոջս՝ Մարիամին և այլ մեր ամենայն արեանառու մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն յիշատակ անշնչելի և յաւիտենական մեզ և մերոցն յամենայնի։ Իսկ եթէ ոք հանդիպի յայսմ աստուածածաւալ և աստուածարնակ հոգեբուխ աղբիւրի սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ օրինակելով, աղաչեմ, աղաչեմ կրկին, զհանդիպողդ յայսմ աստուածաբացիկ տառիս որ և մեզ զվերոյ ասացեալ քո զտէր Թորոս երէցս և զմեր ամենայն արեանառու մերձաւորքն, որ զգիրս կարդալով յիշատակէք, ընդ յառաջնոցն և ընդ միջնոց ստացողացն, զմեզ, զյետին ստացողքս, իսկ որ լի բերանով և ջերմեռանդ սրտիւ զԱստուած ողորմին ասէ մեզ, և Աւետարանիս զյետի յիշատակն գրողին՝ Խաչատուր վարդապետին, դրեալ լիցի ի գիրն կենդանի և յաւիտենական. ամէն։

Գնեցաւ և գրեցաւ յետին յիշատակս ի ՌՀ (1621) թուին։

65

ԲԱՌԳԻՐՔ

Հ. Քյուրդյան, «Բազմավէպ», 1955 թ., էջ 100—106

Գրիչ՝ Սահակ քահանայ
Վայր՝ Բազէշ

ա

Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսեալ եղև ի տառս հոգելի առն և քաջ հռետորին Յովանէս վարդապետին ի լեհ քաղաքի, եւ աղաւթիւք նորին, և ողորմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ յոգնամեղ և տառապեալ Սահակ գրչի, ի Բազեշ քաղաքի, ընդ հովանեաւ Ս. Սարգսին, ի թվաբերու-

թեանս հայկազան տոհմի ՌՀ (1621) ամի, ի վայելումն Հերապետ հեռատորին և յիշատակ հոգոյ իւրոյ։

Արդ՝ այս երիցս երանելի և ի շնորհաց Հոգւոյն լցեալ, քարն պատուական ի յորմն եկեղեցոյ, և մարգարիտն մեծայգին ի շարոցն աստուածային, հոգէկիր և լուսազարդ վարդապետս Յովանէս ոչինչ պակասէր յառաջին վարդապետացն։ Այլ էր ամենեին յարև նման մեծին Դաւթի Անյաղթ փիլիսոփային, և Մեսրովպայ գրաստեղծին, քանզի ոչ ոք եհաս յայժմուս վարդապետացն ի մեծութիւն իմաստութեան սորա, անչափ է ճառ գովութեան սորա, բայց ի ծովէն գտեալ մարդոյ և զսակաւն ասացից։ էր երանելիս այս հեզ, խոնարհ, ողորմած ի վերայ աղքատաց, գթած առ տնանգս, արի ի վերայ աստուածային աւրինացն, և շատագով ճշմարտութեան։ էր պինդ ի պահս և ժուժկալ յաղաւթս, և թշնամի մարմնոյ իւրոյ։ Որ և ի կեանս իւր միս ոչ եկեր, և գինի ոչ արբ, հանապազ պահք էր, և յաւուրն միանգամ ուտէր յինն ժամուն, ոչ յաղ, այլ միայն զոգէպահն առնոյր, որ և սիրեցեալ եղև ի Տեառնէ, և կենդանութեան Գ (3) անգամ լոյս էջ ի վերէն, որ և բազում հրաշս արար սրն. ի մարմնի և առնէ տապանն նորին, զոր ոչ կարեմ պատմել վասն տրկարութեան մտաց իմոց։ Յաւուր միում էր սրն. ի գիւղ մի. և քուրդ մի մարտնչէր ընդ նմա զուր, և ոչ ետ նա պատասխանի, բայց ասաց, թէ «Քրիստոս է իմ վրէժխնդիր»։ Եւ քուրդն իշեալ առաջի գեղջն գնայր ի տուն իւր, և առժամա[յ]ն որպէս զշուն կատաղեալ անգաւ յերկիր՝ փրփրայր, և իսկոյն սատակեցաւ։

Վարդապետս այս առաքելաբար շրջէր և սերմանէր զբանն կենաց. որ և քարոզութեամբ եհաս յերկիրն Ռուզեաց, ի Լոֆ քաղաքի, և անդ դեռաալ զայս գանձս իմաստութեան, զուդեալ ի Դաւիթ Անյաղթէ և ի Փիլիկայ Հոռոմոց վարդապետէ, և վերանորոգեալ ի Յանանիայ Շիրակեցի վարդապետէ։ Եւ տեսեալ նորա յոյժ ցանգացաւ իմաստութեան սորա, նստեալ ամ մի անդ գծեաց զսա. և երեր ընդ ինքեան։ Որ և եկեալ անտի, ձեռնարկեաց ի շինումն Հիզանա[յ] Ս. Խաչին, զոր շինեալ էր սբ. Լուսաւորչէն և ի Տրդատայ թագաւորէն։ Եւ սա վերըստին նորոգեաց գեղեցիկ և զարմանալի յաւրինուածովք։ Եւ ապա նորոգեաց զվանքս Բարիձորոյ։ Եւ մնաց գիրքս այս անկատար և եհաս վաղճան սրբոյն, և տարաժամ մահուամբ փոխեցաւ յաստի կենացս ի լոյսն անստուէր։ Եւ աղայ մի Կոնոյ առաքեաց բազում քուրդս խնդրել զինչս սրբոյն։ Եւ նոքա եկեալ կամեցան քակել զտապանն և հանել զմարմինն։ Եւ մինն ի քրդոցն առեալ զփայտն ի ձեռն էջ ի տապանն, և իսկոյն թուլացեալ անգաւ։ էջ միւսն, և նա կատաղեցաւ, իսկ այլքն զահի հարեալ բարձին զնոսա զոճկով և իջուցին ի Հիզան. և սատակեցան երկուսն և աղայն, որ զնոսա առաքեաց։ Եւ լոյսն կանգնեցաւ ի վերայ տապանի սրբոյն. և դեռ ևս իջանէ, զոր եթէ պատմէ ոք զհրաշս կենդանութեան սորա. և յետ մահուան ոչ լինի վրճար ամսով, բայց ամենայն գաղտնի և յայտնի առաքինութիւնք սորա դրեալ է-ի դիրն կենդանի նորին, որ և յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի, և աղաւթիւք նորա Տէր մեզ տառապելոցս ողորմեսցի. ամէն։

Եւ աշակերտ սորին հեզահոգի և հանդարտասիրդ հոգոյն լցեալ, և առաքինական վարիւք վարժեալ Հա[յ]ռապետ վարժապետ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոցն ի յեղբարէ նորին այնպէս անկատար, և եկեալ աշակերտեցաւ մեծ հեռատորին Ներսէսի Անձնապատեցոյ, զի չժամանեաց ի նմանէ առնուլ գաւազան։ Եւ այս Ներսէս նմանեցաւ մեծ հայրապետին Ներսէսի խստակրաւն վարիւք։ Որ և է սա ի քարոզութիւն Աւետարանին Քրիստոսի ընդ իւր ունելով արեգակն, զաստղն Արուսեակ։ Եւ գնացեալ հարսին ի յերկիրն Հոնաց ի Էրիմ քաղաքի, և անդ եհաս տարաժամ վաղճան սբ. վարդապետին։ Եւ կամեցաւ արեգակն արգելուլ զլոյս իւր աշխարհէս և քաղցրահամ աղբիւրն ցամաքիլ։ Յայնժամ կոչեաց զաշակերտն իւր, որպէս Եղիայ՝ զԵղիսէոս, և ետ նմա գաւազան, և ինքն փողեցաւ ի դասս վարդապետաց՝ ի լուսեղէն խորանսն երկնից, և լոյսն կմպէթայձև կանգնեցաւ ի վերայ տապանի սորա յայտնապէս։ Եւ բազում հրաշս արար ոսկերք սորա ի փառս Քրիստոսի Աստուծոյ։ Իսկ աշակերտն նորին՝ Հա[յ]ռապետ ակն պատուական ի վակասն Յիսուսի որ և զվարդապետին իւրոյ ընկալաւ զհոգի շնորհաց, որպէս զԵղիսէոս, և բազում տրտմութեամբ դարձաւ յաշխարհն իւր, զի զրկեցաւ յայնպիսի քաղցրուսուց վարդապետէ, և եկեալ եհաս առ մեզ, և դեռ ևս էր գիրքս այս անկատար. և ետ յիս, ի յետինս ի գըրչաց, և յանիմաստս իմաստից, և յանյիշելիս ի լեզուս բանասիրաց ծաղկել և կազմել ըզմարգարիտս ոսկով, և երփն երփն գունով, յիշատակ իւր, ծնողաց իւրոց Պարիշախին և Շաղբեկուն, և ամենառու (sic) մերձաւորացն իւրոց, և ամենայն ազգականացն հնոցն և նորոցն. ամէն։

Եւ արդ՝ յետինս ի կարգաւորաց և մեռեալս հոգով, լիրբս և անագորունս, և անհնազանդս պատուիրանաց Արարչին, երես ի գետին եղեալ ոտից ձերոց և քծնելով աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք այս աստուածային գանձիս և լուսափթիթ բուրաստանիս, միանգամ յիշեցէք զեղկելի չՍաճակս. և խնդրեցէք զներումն յանցանաց իմոց ամենայնի, և ծնողաց իմոց և ամենառու (sic) մերձաւորացն. միթէ քաղցրասցի ամենագութն Աստուած մեզ և յիշողացդ յիւր միւսանգամ գալստեան. ամէն։

Եւ առաւել յիշեցէք ի Քրիստոս,
Էին լուսոյ երշանկացածն,
Եւ զբարէհամ աղբիւր կենացն,
Զանուշահոտ վարդն փթթած։
Ի քիմս հոգոց հիւանդացած,
Զսէր Հա[յ]ռապետ պետն պարծանացն,
Հանուր ազգիս Հայաստանաց,
Ժամանակիս ձմերացած։
Հաղորդ գտաւ մարտիրոսաց,
Այլ և հիւթիւ հոգոյն շնորհաց,
Ցառատաձեռն հոգով լցած,
Գարուն հոգոց և ջուր կենաց։

Մաքուր հոգով գերազանցած,
Նման աղբեր բղխեալ կենաց,
Եւ բարէհամ շուր ծարաւաց,
Արբուցանող հոգոյս պասքած։
Զերդ զեղջերս եմ պապակած,
Բազմի ի վեր զոր Տէրն ասաց,
Թագաւորն երկնից փառաց,
Արժանասցի աւթևանաց. ամէն։

Նաև ծնաւղքն իւր՝ մաղդասի Պարիշախին և Շաղբեկուն, և ամենառու մերձաւորացն իւրոց; լի սրտիւ և բոլոր բերան Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Բ

Ստացող՝ Հայրապետ

Արդ՝ ես խաւարեալս մտօք, յիմարս յիմաստից և անմաքուրս ի մաքրագունից, անբանս ի բանաւորաց, յոռի և վատթարս ի պատուականաց...[63] խոցեալ և մեռեալ հոգիս, միայն անուամբ, սոսկ և նաստ Հա[յ]ր[ապետ կոչեցեալ վարդապետս, աշակերտ սբ. և երանեալ երջանիկ բարունեացն, լուսակիր և մաքուր հոգոյն Յովանէս Բարիձորցոյ, և աղբիւրացեալ յառատաբուխ շնորհաց աստուածային Ս. Հոգոյն Ներսէս Անձնապատեցոյ, որ և սպասաւորեցի սրբութեան սորա ամս Ժ (10), և հրամանաւ Ս. Հոգոյն ի սմանէ առի գաւազան իշխանութեան վարդապետութեան. որ և վասն ծովացեալ և ծանրացեալ մեղաց իմոց եհաս վախճան սորա, տարաժամ ամաւք և տարագրեալ կենաւք, տարաշխարհիկ յերկիրն Հոնաց, ի Ղրիմ քաղաքի, թողեալ մեզ սուգ անմխիթար, անջատեալ ի մէնջ փոխեցաւ փառաւք առ Քրիստոս Աստուած՝ յոյսն ամենայնի։

Իսկ ես թշուառս և եղկելիս, եմ երկրաւ Բաղիշեցի, ի Ղուլթիկ գեղջէ, որ աշխարհացուցան Կեթիկ ասի։ Արդ՝ ստացաւ զսբ. տառս որ կոչի բառ, զոր սահմանեալ է և շարադրեալ, առատ և յոգնակի հանճարով հոգոյն լցեալ ի սրբոց նախնեաց ի քաջաց և յառաքինաց, յամէնիմաստ հոգէկիր վարդապետաց։ Զոր ըստացա զսա շնորհօք և ողորմութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ետու զթերին լնուլ, ծաղկել, ոսկեզարդել և կազմել ձեռամբ հոգիընկալ և քրիստոսազարդ հոգևոր եղբաւրն մեր տէր Սահակ քահանային, յիշատակ բարի մեղապարտ հոգոյ իմոյ ե ծնօղաց իմոց, հօրն իմ՝ քրիստոսասէր և մեծահաւատ մղդէսի Պարիշախին, քաղցր և համեստ, բազմագութ և երկիւղած յԱստուծոյ, մօրն իմ՝ Շաղբեկուն, և հարազատ եղբարցն իմ՝ Աբրահամ նորընծա աբեղային, հեզ և աստուածասէր Սահակին, և որդոց սորին Շահնազարին և Յովանիսին, և քրւերն իմ՝ յԱստուծոյ աւրհնեալ Գուլաղին, և այլ ամէն արեանառու մերձաւորացն իմոց՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց և կուսից, և ամեն չափու հասակի հաւատացելոցս ի Քրիստոս։

[63] Այսպես մի քանի տող է։

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ գետնամած երեսաւք, լալագին դիմաւք, արտասուաթոր աչօք և բազմահառանչ ողբով։ Որք հանդիպիք այսմ լուսերանգ տառիս և քաղցր ախորժակ բաժակիս, ո՛վ երանեալ սբ. վարդապետք և քննողք աստուածային խորոցն իմաստից՝ աշակերտեալք բանին ճշմարտութեան, սիրողք և խնդրողք երկնատր իմաստութեան քահանայք, սարկաւագունք, դպիրք և ամենայն պաշտօնեայք բարի Քրիստոսի, յիշեցէք ի մաքրափայլ յերկնագնաց և հաշտարար յաղաւթս ի պաղատանս ձեր և ի սոսկալի պատարագին Քրիստոսի. զաղքատս ի բարեաց և զբիւր քանքարոյ պարտական Հա[յ]րապետ անուն վարդապետս և զբարի ծնօղս իմ, զհայրն իմ՝ զմղդեսի Պարիշախն և զմայրն իմ՝ զՇաղբեկին, զհարազատ եղբարքն իմ՝ զԱբրհամ նորընծա աբեղայն և զԻսահակն, և զորդիքն իւր՝ զՇահնազարն և զՅովանէսն, և զքուրն իմ՝ զԿուլաղէն, և զորդիքն իւր՝ զՍիմոն, զՅովսէփն, զՎարդիկն, զՄարգարէն, զԱմիրխան, զԱսլան, և զդուստրն՝ զԹիլին, և զհարազատ եղբարքն իմ՝ զմղդեսի Միրան, զմղդեսի Ամիրն, և զորդիքն՝ զՆահապետն, զորդին՝ զԱմիրաղէն, և զտէր Յովանէսն, զորդին՝ զՍամսոն, և զդուստրն՝ զՔեֆուշն, զՁաղարն, և զորդիքն՝ զՅովանէսն, զՂաղարն, զՄիրան, զՇահում դուստր, զհարազատ քուրն իմ՝ զԹագուհին և զայրն իւր՝ զԹումէն, և զորդիքն՝ զԱւաքն, զԹարաւուքն զՎարդիկն, զՅոհանն, զդուստրն՝ Ջուճարն, որդիք և Քեֆուշին՝ զՅոհանէսն, զեղիայն, զՄարգարէն, զՂազարն, զդուստրն՝ Մարգարիտն, ըզփեսայքն մեր՝ զՎարդիկն և զԴաւիթ, քուրայն և զեղբարքն իւր՝ ըզհանդարտ բարէմիտ Խանէսն և զՅովանէսն, ե զայլ ամենայն արեանառու մերձաւորս և զազգականս մեր՝ զայր և զկին, զծեր և զտղա ի Քրիստոս Աստուած հաւատացեալքս։ Եւ զհոգևոր հարքն և զուսուցիչքն իմ՝ ըզՅովանէս և զՆերսէս սբ. վարդապետքն, և զքրիստոսասէր կնքահայրքն մեր՝ զԿիրակոսն և զեղբարն՝ զԴիլաքն, և զՍահակ՝ ծաղկող լուսագիծ տառիս, յիշեցէք ի Քրիստոս Աստուած և խնդրեցէք զթողութիւն...։ Նկարեցաւ և ծաղկեցաւ բազմերանգ դեղով և ազնիւ ոսկով, և կազմեցաւ հոգիազարդ և հոգոյս մխիթար սբ. գիրքս ի վայելս մեղապարտ անձին իմոյ Հա[յ]րապետ վարդապետի և յիշատակ հոգոց մերոց, ի թվականիս մերոյ հազար և Հ (1621), և կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՈՒԳ (1623),, ձեռամբ Բաղէշցի Սահակ երիցու։

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Բարիձոր

Գ

Զանպիտան թափառնեալս ի բարեաց, զանարժան, տխմար գրիչս սուտանուն Յովանէս սպասաւոր բանի, որ մեղսամած մատամբ իմով գծի զսա յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց ըստ մարմնոյ Մարտիրոսին և Շահստանի, այլ և եղբարց և քուերց իմոց...։ Այլ և զմաւրքուեր որդին իմ՝ զտէր Ներսէս լաւ և հեզահոգի կրօնաւորն...։ [Գրեցաւ] ի նահանգիս մերում Հիզան, ի գերահռչակ և աստուածաբնակ անապատիս Բարիձորոյ, որ յանուն Ս. Աստուածածնին կառուցեալ կայ։

66

ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

ՊՅԶԿ, № 5, տե՛ս նաև «ՀԱ», 1959 թ., էջ 272—274, Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ կեսարիոյ, Բ, էջ 1866—67

Գրիչ, ծաղկող՝ Յովանէս երէց
Վայր՝ Կեսարիա

ա

12 Փառք... որ տրամադրեաց զմատունս վերջացեալ գծագրացս և տկար ոգւոյս Յովանէս գրչի։ Արդ՝ շնորհիւ բարերարին Աստուծոյ, սկսայ ի ՌԿԲ (1613) և ողորմութեամբ նորին կատարեցի ի ՌՀ (1621) ըզտառս աստուածայարմար և զանգին մարգարիտս... որ կոչի Յայսմաւուրք, որ յամենայն աւր սիրով և զուարճանալով, և աւրինակ բարի լինելով ուրախացուցանէ զայնոսիկ որ աստուածային սիրովն են զմայլեալ և հարստացեալ։ Արդ՝ զայս ամենայն բարութիւնս տեսեալ, որ աստ հաւաքեալ կան և փառաց սոցա ցանկալեալ եղէ ես մեղաւոր և անարժան սուտանուն Յովանէս երէցս գնացի ի սբ. քաղաքն Երուսաղէմ, և տեսեալ զսբ. գերեզմանն Քրիստոսի և զտնաւրինական տեղիսն, և լեցի զփափաք տենչեան իմոյ և ուրախացեալ. և բազում աշխատութեամբ բերեալ զթուղթս անտի և ցանկացայ այսմ երանաւետ բանիս, ի միտ առեալ զբանս որ ասէ. «Երանի...»[64]։ Եւ ես հողս և մոխիրս անպիտան քարտողար տէր Յովանէսս գրեցի զայս աստուածամերձ արանց պատմութիւնս զցայգ և զցերեկ, տգնութեամբ և բազում աշխատանաւք գրեցի, խիստ նեղութիւն կրեցի թղթի չգտեալոյ, բազում անգամ ի Հալապ, ի Սամսպուլ, մինչև ի Սպահանու այլ թուղթ բերել տուի, և ապա կատարեցաւ, հանց որ մէկ տապաղայն Բ (2) դրամ եղաւ, և գրեցի, և ծաղկեցի, և զհաստահիմն ոսկով և լաճվարդով զարդարեցի, և դրրի յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց տէր Յովասափին և մայրս իմ Խաթունին, և կողակցի իմոյ Մարիամին, և դեռաբողբոջ առ Աստուած փոխեցեալ որդիկս իմ Դօթին և Մարգարէին, և դստերացս իմ Խանպակէ և Ալթունին, որ բազում ժամանակաւ մայրն առ Աստուած փոխեալ էր, և այլ Ալթուն աղջիկս զիմ պէտս կարեաց լնալով, թէ թուղթս կոկելով, և թէ գիշերն զճրագս վառելով. մինչ ի լոյս ի դէմս տգնութեամբ կալով և զմարմնաւոր կերակրիկ հոգալով, Աստուած իւր բազում աշխատանացն՝ զերկնից արքայութիւնն պարգևեսցէ, և աւրհնէ զիւր մէկ հատիկ դեռաբողբոջն, որդին՝ զՊալին, որ է ի թվին ՌԿԵ (1616), և ի յառ Աստուած փոխեալն Դօթ, և քրւերցն՝ Սահապին, և Շահանային, և իմ եղբարցն՝ Մելքոնին, և Գալուստին, և Լուքերոյն, և քրւերցս իմ Գոհար, Նոնոնար և Թամամին, և հաւրեղբայրն իմ՝ Միրիճանին, և կողակցին նորա՝ Փաշային, և որդւոյն՝ Մարճանին, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և մեռելոց. ամէն։ Դարձեալ և զփեսայացեալք որդիքս իմ զտէր Յակոբն, զՍահարն, և զթոռներս իմ զՊետրոսն և Պաւղոսն և զԱյլպախիսն։

[64] Եսայ., ԼԱ, 9։

Եւ արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ի թվականիս Հայոց Ռ և Հ (1621), ի մայրաքաղաքն Կեսարիա, որ է Մաժեակ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Բարսեղի հայրապետին, և Ս. Սարգսի զաւրավարին, և Ս. Մեռկեռիոսի զինաւորին, ի հայրապետութեան մերոյ տեառն մեծ բարբունապետի Գրիգորին, որ է պայծառ շահն Հայաստանեայց ազգիս, և ի բռնակալութեան սուլթան Օսմանին, ի դառն և ի նեղ ժամանակի, որ հարկապահանջութեամբ ազգս տապալի։

Արդ՝ ես Յովանէս երէցս աղաչեմ զամենեսեան հողացեալս ի գերեզմանի, որ ոչ զոք ունիմ, թէ աւգնեսցէ ինձ յայսմ տեղւոջ, զի յիշեմ
13 //զամենաթագաւորն զՔրիստոս և զահեղ ատեան նորա և յոյժ սրտաբեկեալ կամ, բայց արտասուելի աչաւք, և հառաչմամբ սրտիւ. դէմս ի ձեզ ապաւինիմ, զի վասն իմ աղաչեցէք զողորմածն Աստուած, զի ողորմեսցի ինձ բազմամեղիս, զի ի ձեռն այլոց աղաչանաց, կարող է Աստուած ողորմել մեղաւորաց, զի և դուք առնուք ողորմութիւն յողորմած Փրկչին Տեառնէ։

Դարձեալ աղաչեմ զձեզ զամենեսեանդ, որ լի բերանով և ուղիղ սրտի մտաւք Աստուած ողորմի ասէք խոճա Ինեիպաշին, որ զթուղթս բերաւ ի Սպահանու, որ աւարտեցաւ գիրքս։ Եւ միւս այլ Ղիմաթ անուն կին մը դրամ ետուր թղթի դին. Աստուած իւր մեղացն թողութիւն շընորհեսցէ. ամէն։

Բ

12 Ողորմի ստացողի գրոցս Յովանէս գրչիս քահանայիս և ծնողացն իմ՝ Յովասափ քահանային, Խաթունին, Մարիամին, և որդւոցն՝ Դաւթին և Յաղնուլին...։

Գ

Զեռս իմ փրտի ի հող դառնայ,
Մոխիր փոշի գազախանայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ,
Թէպէտ խոշոր է գիր սորա։
Արդ՝ ով ընդ որով հմտանա,
Ով որ կարդա ակտի ի սմա,
Յիշմամբ առնէք զգծող սորա,
Զեղկելի Յովանէս գրիչս եմ ձեր ծառա։
Զինչ նայն ի յեզեր ծովին,
Նա գրիչն ի յետի գրին.
Ո՜հ ով շլացած աչկունք,
Ո՜հ ով կզացած միշկունք,
Ո՜հ ով կրռաւած ոտկունք,
Ո՜հ ով աշխատաւոր ձեռկունք,
Ահա ազատեցայ, արի և փառս տուր Աստուծոյ...։

67

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Ա, էջ 59

Նորոգող՝ Բարդուղիմէ քահանայ

Արդ՝ յիշեցէք զվերչին ստացաւղ սբ. Աւետարանիս զմահդասի Սարգիսն, *և զհայրն՝ զԱսլանն, և ծնողն՝ զԽունտին, և զկողակիցն՝ զծամիաթունն, և զամենայն արեան մերձաւորքն...։*

Է յիշատակ Սավաթիոյ *Ս. Աստուածածնին, խնամաւոքն աւրհնին Աստուծոյ։ Գրեցաւ սակաւ գիրս թվին ՌՀ (1621), ձեռամբ* Բարդուղիմէ *քահանային և կապն՝ աւսլան և կազմ. կար մեր այս էր, ո՛վ եղբարք...։*

68

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 418—419. տե՛ս նաև Մուրմար, I, № 68, էջ 61ա—62բ։

Գրիչ՝ Մելքոն դպիր

Վայր՝ Համիթ

Գրեալ ի թվին Հայոց ՌԿ և է ամի և երրորդ աւելորդի ի (1621), ի Տիգրանակերտ Համիթ, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի... և ի յրռամկաց միջի, ի թաղն որ կոչի* Զրիալ, *մերձ* Մեռրնու *դուռն քաղաքիս, ի վերնայարկ փոքր դստիկոնիս, ձեռամբ* Մելքոն *դպրի. հարկեալ ի* Յոհաննէ *ուսուցչէ նորին, ի յանհայրապետութեան ժամանակի ազգիս Հայոց, և ի վերադիտողութեան* Համբայ... Բարսեղ *արքեպիսկոպոսին աստուածաբան վարդապետին...։ Այլ և ի թագաւորութեան* Տաճկաց *աւամանցւոց սուլթան* Անմատին: *Ի սոյն աւուրս աշխարհս ի խռովման կայ և յերերման իբրև զծով յալէկոծութեան ի զաւրաշարժութեանց...։ Արդ յայս վշտաշատ ժամանակիս*[65] *աւարտեցաք զսբ. Աւետարանս... յիշատակ հասարակաց ի Ս. Սարդիս եկեղեցի։*

69

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 425

Ստացող, նվիրատու՝ Յովաննէս Զմշկածագեցի

Վայր՝ Համիթ

Յիշատակ բաղնէպան Յոհաննիսի Զրմշկածագցւոյ, *ի գեղջէն* Աղձնեաց, *բնակեալ ի* Համիթ. *ի թվին Հայոց Ռ-որդ ամի և եաւթանասներորդ աւելորդի (1621), գրեալ ի մայրաքաղաքն* Համիթ, *ի թաղն որ կոչի* Զրիալ, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի, ձեռամբ երկու գրչաց. Մատթէոս, Մարկոս և Ղուկաս՝* Ովանիսին *և Յոհաննու գլուխն՝* Մելքոն *գրչին. տէր* Միքայէլ *նորընծայ քահանայի... ի հայրապետութեան ազգիս Հայոց և ի վերադիտողութեան* Համբայ *վիճակի արքեպիսկոպոսի տէր* Բարսեղ

[65] *Հրատարակիչը նշված բառից հետո, կլոր փակագծերում ավելացրել է՝ Շահաբասի։*

վարդապետին... ե ի թագաւորութեան Աւսմանցւոց սուլթան Աւսմանին, *որ յայսմ ամի ել բազում զաւրաւք* յՍամսպոլայ *և գնաց ի վերայ* Լահաց աշխարհին՝ Ֆռանկ ազգին...։ *Ի սոյն ամի եղև մահտարաժամ յամենայն տեղիս, վասն ծովացեալ մեղաց մերոց. և յաւել խստագոյն հարկահանութիւն ի վշտացս վրայ. որ զազգս հրձիգ և կոխան արարին ամենայնի, այլ գոհութիւն տեառն որ ի վիճակի Քրիստոսի եմք...։*

Տուք զողորմի գրոյս ստացողի,
Որ ետ նուէր, Ս. Սարգսի,
Հոգւոյ իւրոյ և ծնողին,
Հէրապետին *և* Զոնալին,
Եւ կենակցոյն Նունուֆարին...:

70
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թորոս աղբար, Բ, էջ 463—464

Նվիրող՝ Մինաս Համբեցի

Երշանիկ և երիցս երանեալ բաբունապետն... տէր Մարտիրոս Շրնֆուշցին *տեսեալ զիմաստաշատ և զդիւրագիւտ կարգ տոհմից ազգակցութեանց պատմութեանց Հին և Նոր Կտակարանաց աստուածաշունչ տառից. ետ դրել զսա ոսկենկար զարդուք, ի վայելումն սրբասէր անձին իւրոյ ի ներկայն և յապագայն յիշատակ անուանն և սրբասէր հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց հոգևոր տեառն* Պետրոսի *կաթողիկոսին* Սրսայ, *որ է համշիրակ* Սրապիոն *կաթողիկոսին* Էջմիածնի, *աշակերտք* Դուկասու Կեղեցւոյ։ *Արդ՝ գրեցաւ և ծաղկեցաւ ոսկենկար մատեանս Աստուածաշունչ համառատ տոհմաթիւքս, ի հայկազեան թուականութեանս ՌՀ (1621) ամին։ Յիշեսջիք զ*Մարտիրոս *վարդապետն* Շրնֆոշեցի. *և զնորին աշակերտն՝ զ*Ովանէս *վարդապետ* Շէնֆուշցի, *որ է բաբունի երանելեացն* Աստուածատրոյ, Խաչատրոյ, Կիրակոսի, Եղիազարու *կաթողիկոսի, և* Մարկոսի *վարդապետաց առ Տէր գնացելոց. հուսկ յետոյ զ*Մինաս *վարդապետն* Համբեցի. *զնուաստս ի բեմբականաց, որ եմ աշակերտ վերոյասացեալ* Մարկոսի *բաբունապետի* Շէնֆոշեցւոյ, *որ ի գնալն իմ* յԵրգրկիս *հանդիպեցաք աւազակաց, որք զամենայն ինչս և զգրեանս իմ կողոպտեցին, և միայն մնաց այս համառատ Աստուածաշունչս, զոր շնորհեալ էր ինձ վարդապետն իմ* Մարկոս, *և իմ զայս գիրքս անձին իմում խորդ վարկանելով, շնորհեցի ի դուռն Ս. Աստուածածնի վանացն, զոր առաջ եղեալն էր յիշատակ* Մարտիրոս *աստուածաբան վարդապետն։ Որ և այսու փոքու ընծայիւքս գտայց ի Քրիստոսէ աղաւթիւք ձերովք զթողութիւն անկշռելի սղալանաց պարտուց մեղանաց իմոց։ Արդ՝ լալով աղաչեմ բազմաբիծս զվայելողդ այսմ սոփեստիս, զի յաւգտելն ձեր ի կաթանէ ստեանց սորին. խնդրել մեղաց իմոց թողութիւն. նաև ստացողի սորին* Մարտիրոս *վարդապետի* Շրնֆուշցւոյ...:

71
ՄԱՇՏՈՑ (1514 Թ.)

Կյոսկեսերյան Բ., Պատմ. կաթող. Կիլիկիոյ, էջ 214

Ի յառաջնորդութեանն սբ. ուխտիս իմ հոգևոր հաւրս տէր Մկրտիչ արքեպիսկոպոսին, և [ի] հայրապետութեանն տեառն տէր Յովհաննէս կաթողիկոսին, որ վախճանաւ ի յայսմ ամի։ Աստուած ողորմի իւր հոգւոյն. ամէն։ Ի թուաբերութեան Հայոց ՌՀ (1621)։

72
ԱՒԵՏԱՐԱՆ (1490 Թ.)

Երնջակ, էջ 258—259

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ, ո՛վ սր. հայրք և եղբայրք և մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ստացաղ սբ. Աւետարանիս, բարեմիտ և հեզահոգի զխաւջայ Պետրոսն, որ ստացօ սբ. Աւետարանս ի հալալ յրնչից և ի արդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և ծնաւղացն՝ Խաչիկին և Մանին...։ Թվին Հայոց ՌՀ (1621) որ յիշատակարանս գրեցաւ։

73

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1486 (1597 թ.). տե՛ս նաև ՄԺ, I, էջ 394—395

1ա Թվին ՌՀԱ (1622) մայիս ամսոյ Թ (9), աւրն հինգշաբթի, սուլթան Մուսթաֆան ելաւ ի հոր ղուլայէն և ուրբաթ աւուր ի թախտ նստաւ՝ մայիս Ժ (10) աւրն և երեկոյ ժամուն։ Զեղբաւր որդին՝ զՈսման թագաւորն, խեղթեաց ձեռամբ Տաւուք փաշայ զաւրավարին իւրոյ, որ անիրաւութեամբ և բռնութեամբ տիրեալ էր զտեղ հաւրեզբաւր իւրոյ՝ Թվին ՌԿԷ (1618) փետրվար ամսոյ ԺԶ (16) նստեալ մինչ ՌՀԱ (1622). Դ (4) ամ անցաւ Գ (3) ամիս, չարն բարձաւ ի միջոյ և ապագայն՝ Տեառն կամք աւրհնեալ լիցի։

74

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Երևան, № 5586

Գրիչ՝ Սրապիոն սարկաւագ

ա

116ա Ո՛վ եղբայրք, մի՛ մեղադրէք սղալանացս, զի պանդուխտ եմ այսմ երկիրս, չունիմ ճար, ոչ ելանեմ տարակուսանացս, վասն իմ ծովացեալ մեղացս, սիրտս շիւար է և լեզուս ի խօսել չի գալ։

բ

224ա Զանարժան գրիչս սուտանուն Սրապիոն սարկաւագս աղաչեմ յիշել ի Տէր, մեղաց թողութիւն հայցել, ղի և ձեզ պարգևեսցէ. ամէն[1]։

գ

291բ Կատարեցաւ գիրքս այս, որ է անուանեալ Ոսկեփորիկ, Թվին ՌՀԱ (1622), մայիս ամսոյ ի ԺԸ (18), օրն երեքշաբթի, ի փառս Քրիստոսի... գրեցաւ գիրքս ձեռամբ մեղաւոր և անարժան Սրապիոն գրչի, Զանումի որդոյ, աղաչեմ, յիշել ի Տէր զմեղապարտս...։

[1] Նման մի հիշատակարան, առանց գրչի անունը հիշելու, գտնվում է 290բ էջում։

75
ՏԱՂԱՐԱՆ

ՄՅԶԵՊ, V, № 1455. տե՛ս նաև Ալպոյաճյան Ա, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1577

Գրիչ՝ Ստեփանոս Թոխաթեցի
Վայր՝ Թոխաթ

ա

152 *Յորժամ որ զԿՁ տուն ներբողեանս ասես զԹոխաթեցի Ստեփանոս էրէցս յիշես, և ձեզ և ինձ «Հայր մեր որ յերկինս» ասէք։*

բ

Գրեցաւ ոտ[ան]օրքս ի քաղաքս շէհրի Թոխաթ, ձեռամբ Ստեփանոս մեղսաներկ իրիցու, ի վայելումն Յովսէփ աշակերտին իմոյ, ի թվականիս Հայոց ՌՀԱ (1622), մայիս ամսոյ, յորժամ Ըստամպոլու ղուլն գլուխ քաշեցին և զտիւանն և զսարայն կոխեցին և զՕսման փատիշահն ըսպանին, և զայլ գլուխ մարդիքն շարդեցին, և եդին թագաւոր զսուլթան Մուստաֆան, զոր տէր Աստուած զինքն խաղաղութեամբ պահեսցէ. ամէն։

գ

Ստացող՝ Յովսէփ սարկաւագ

Զմեղաւոր հողս և զփոշիս, և զյետնորդս ի սարկաւագաց զՅովսէփ սնացեալս մեղօք Յիշեցէք ի Տէր, ո՛վ սբ. քահանայք, և կրկնակի Հայր մեղա հրայմեցէք։

76
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1867. տե՛ս նաև «Արարատ», 1888 թ., էջ 406

Գրիչ՝ Ամիրշան, Յովանէս սարկաւագներ

327բ *Փառք...։ Գրեցաւ այս Միխայիլս ձեռամբ սարկաւագացն Ամիրշին և Յովանիսին. որ սկիզբն առնէին գրչութեան և ուսանէին առ ոտս տէր Մինաս գրչի, Աստուած իւրեանց շնորհք և իմաստութիւն տա, որ զայս հոգևոր արուեստս կատարեալ ուսանին։ Թվին ՌՀԱ (1622)[2]. յունիսի է (7), աւրն ուրբաթ, եկին խափուճիկ ի Կոստանդնուպօլսայ, բերին Ամբայ փաշին Բ (2) կապա ու ասցէն, թե «Ծառայքն խիստ աղմուկ, խռովութիւն արարին, զսուլթան Աւսման սպանին և դրին ի տեղն ըզսուլթան Մուստաֆան, և այլ շատ մեծամեծք վազերներ սպանին»։ Չչարն և զբարին Աստուած գիտէ զվերջն[3]։ Աստուած ի բարին առաջնորդէ. ի ձեռս է՞ր կու կապէք, այս խապարս երեկ։*

---

[2] *Մինչև այստեղ տե՛ս նաև* „Zeitschrift für armenische Philologie", B. II, H. IV *Գ. Տեր Մկրտչյանի «Փաստոսի ձեռագրերը» հոդվածում, էջ 272։*

[3] *«Ցունիսի է (7), աւրն ուրբաթ» հատվածից մինչև այստեղ տե՛ս նաև Մ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 236։*

77
ՈՍԿԷՓՈՐԻԿ
ՄՅԱԲ, № 274

Գրիչ՝ Սրապիոն

ա

1191 Գրեցաւ ձեռամբ մեղաւ[որ] և անարժան Սրապիոն գրչի՝ Ջանումի որդոյ. աղաչեմ յիշել ի Տէր։

բ

Կազմեցաւ գիրքս այս, որ է անուանեալ Ոսկի Փորիկ, թվին ՌՀԱ (1622), յունիս ամսոյ ի ԺԴ (14), օրն ուրբաթ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

78
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երուսաղէմ, № 3043 (մանրաժապավեն, Երևան, № 737). տե՛ս նաև ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, էջ 601—617

Գրիչ՝ Գրիգոր Գարանաղեցի
Վայր՝ Եգիպտոս, Երուսաղէմ, Սամպոլ և այլուր

ա

62բ Զոգնամեղս, զեղկելի աշխատող տառիս զԳրիգոր նուաստ ոգի, միայն անուամբ զԳրիգոր վարդապետս աղաչեմ, աղաչեմ, երես անդեալ աղաչեմ զհանգիպողդ մատենիս, յիշել աղօթիւք ի տէր Յիսուս...[4]։

բ

63բ Արդ՝ եղև զրաւ Դատաւորաց գրոցս և Հռութիս հայկազնեայ տումարի թվին ՌԾԵ (1606) շրջանի, և յունիս ամսոյ ի հենգետասանի, պատկեր օրի շաբաթի[5], ի վճարս Պէնտէկոստէի։ Գրեցաւ ի սբ. և յաստուածակոխ քաղաքս յԵրուսաղիմ, ի դրունս նորոյս Սիոնի՝ մօր համօրէն ընդհանուր եկեղեցեաց սրբոյ մեծի առաքելոյս աթոռակալի Տեառնեղբայր Յակոբիս և զխայգիր որդոյն Զեբեթայ, Յակոբայ սբ. առաքելոյն և այլ անճառ և անպատում տնօրինականացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ի յառաջնորդութեան և տեղապահութեան զահոյս, երանաշնորհ և ամենիմաստ տէր Դաւիթ հեզահոգի արհքեպիսկոպոսին և Գրիգոր մոնոզոն աբեղայի վերակացու հոգաբարձի, բազմերախտ աշխատաւորին, և համշիրաք եղբօր մերոյ կամաւոր աղքատին՝ տէր Սարգիս եպիսկոպոսին Սաղմոսայվանեցին և Տրապիզոնցի կամաւոր աղքատին՝ տէր Կիրակոսին և տէր Սարգիս աբեղային, տէր Սահակ փոքր Կանջացին և միւս տէր Սահակ մեծ Կարկառեցին, և տէր Մկրտիչ երէցին՝ ամենագովելի, սրբասէր և բազմագոյթ Զուղայեցի քահանային, և տէր Միխայէլ Բաղիշէցի գրագիր աբեղային, և տէր Յովհաննէս Վանեցի աբեղային, և տէր

[4] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 118 ա և 168 ա էջերում։

[5] Ինչպես երևում է հիշատակարաններից, ձեռ-ի ընդօրինակությունն ընդմիջումներով տևել է տասնութ տարի՝ 1604—1622 թթ., տարբեր վայրերում։

Սիմէոն աբեղային և այլ բազմահաւաք միաբանիցս, որ աստ կան հաւաքեալ։

Եւ արդ՝ աղաչեմ զաշակերտքդ բանին ճշմարտութեան, յորժամ դիպիք սմայ ընթեռնելով կամ օրինակելով, յիշեսջիք եռափափաք հոգով ի մաքրափայլ յաղօթ ձեր զունայնս ի բարեաց գործոց, զմեղօք հարեալ ոգիս՝ զսոսկ անուն Գրիգոր վարդապետս և զեղկելի թշուառամեռ ծնողքն մեր ըստ մարմնոյ, զհայրն իմ՝ զԳրիգորէսն և զմայրն իմ՝ զԿուլվարդն, և զամենայն արեանառու մերձաւորքն իմ և զամենայն հոգևոր երախտաւորքն մեր, որք ըստ հոգւոյ և մարմնոյ վարժիչք և խրատիչք եղեն մեզ, մանաւանդ զհոգևոր բազմերախտ հայրն մեր՝ Սրապիոն քաշ տելետն և աստուածաբան վարդապետն։ Նայև ընդ սմին կրկին և երեքկին զյիշելոյ արժանին՝ զՍեպուհու լեառնացի Պարոն միակեցն և զիւր հրլու աշակերտն՝ Մարգարիտն, որ զթուխտս շնորհեաց գրոցս, յիշատակ նորա յափտենից եղիցի և տերև գովութեան անուան նորա մի՛ թափեսցի ի սբ. տառէս և գրեսցի անուն նորա ի դպրութիւնն անշնջելի. ամէն։

Եւ դարձեալ աղաչեմ անմեղադրութիւն խառնափնդոր և անարհեստ դրոյս, գիտեմ զի պարսաւանաց արժանի է որչափ պար[ս]աւէք, բայց թողութիւն շնորհեցէք, զի շոյտափութութեամբ գրէի, վասն անբարի ժամանակիս, որ անհանգիստ ենք կենօք և վասն բազում պատճառի։ Եթէ յիշէք՝ և դուք յիշեալ լիցիք յայնմ աւուր ահեղ ատենին. ամէն։

Գ

98ա Թագաւորութեանց Երրորդ կատարեցաւ յուլիս ամսոյ Գ (3)։ Ո՛վ ամենաբարի տէր իմ Յիսուս... փրկեայ և ազատեա զմեզ զտրուպս ամենեցուն և զնուաստ ոգի Գրիգոր վարդապետս և զծնողս մեր զհոգևոր և զմարմնաւոր, զաշխատաւորք և զերախտաւորքն մեր՝ ի սպառնալեաց գեհենոյն...։

Դ

135բ Այ, ոհ և վայ, յորինակ մեղաց քնոյ, մարմնաւոր քունս նեղեաց զիս ի գիշերիս, և այս մէկ էջս խառնայփնդոր եղև ի ծանրութենէ քնոյս, աղաչեմ, աղաչեմ, անմեղադրութիւն։

Ե

152ա Ո՛վ բանասէրք, թվին ՌԾԵ (1606) յԵրուսաղէմ գրեցի մինչև ցայս, և արգելք եղև ի մեղաց իմոց. և արդ՝ նոր սկսայ շնորհօքն Աստուծոյ, որ թիւն ՌԿ (1611)[6]։

Գ

185ա Ի սոյն ամի որ է թվին ՌԾԶ (1606) ի նոյեմբերի ամսոյ ԻԴ (24)[7] եղև աւարտ Մնացորդացս, Եզրի, Նէեմի, Եսթերի, և Յուդթայ, և Մակա-

[6] Այս գրված է ձեռ-ի 152 ա էջի ներքևի լուսանցքում։ Ուրեմն ընդօրինակությունը հինգ տարի ընդհատվել է։

[7] Հայոց ՌԾԶ տարին սկսվում է 1606 թ. հոկտեմբերի 21-ից (հուլյան տոմարով)։ Այստեղից էլ հայոց ՌԾԶ թվականի նոյեմբերի 24-ը կընկնի 1606 թ. մեջ։

բաեցոցս ի սբ. քաղաքս աստուածակոխ, որ է մուտ և դուռն արքայարան արքային երկնից վերին Յերուսաղէմի, ի դրունս Սրբոյն Յակոբայ Տեառնեղբօր և Յակովբայ որդւոյն Զեբեթայ սբ. գլխադրին։ Ի յառաջնորդութիւնն ամենաշնորհ և ամէնիմաստ տէր Դաւիթ հեզահոգի արքեպիսկոպոսին սբ. Յերուսաղէմայ ամենայն Հայոց։ Ի դառն և յանբարի ժամանակիս, որ Հայք և հիմանց տապալեցան ըստ բանի սրբոյն Ներսէսի, որ ասէ, թէ՝ «Քակի արևելք, կշինի արևմուտք»։ Հայք ի հիմանց կործանեսցին և ապականի, որպէս յաւուրս շրհեզեզին, անմարդ և աւերակ դարձցի, զոր աչօք մերովք իսկ տեսաք։ Ես վասն այն եմք տա[բա]գիր եղեալ և ոչ ունիմք դադարումն։ Գոհութիւն և փառք երեք սրենին[8], որ այժմ եմք ի սբ. քաղաքս Յերուսաղէմ, որ թարգմանի խաղաղութիւն ճշմ[ա]րիտ, ըստ անուան իւրոյ է լաւ խաղաղութիւն ի վերայ ամենայն աշխարհաց և գաւառաց. ի սա միայն գոյ խաղաղութիւն այժմ և զապագայն անգէտ եմք, թէ զինչ լինելոց է աւարտն։ Յամենայն կողմանց պատերազմունք և համբաւ պատերազմաց կու լսեմք, որպէս ասաց Տէրն, թէ լսելոց էք և այլն[9]։

Եւ մեք աստէն ոչ ունիմք դադարում և ոչ ունիմք տեղի գնալոյ ուրէք, վասն վերջին աղքատութեան սբ. աթոռոյս Հայոց, որ է Ս. Յակոբս, որ ՀՌ (8000) խուռուշ պարտական է անօրինաց և հարկապահանջութիւն յաւելի ի վերայ կայ՝ ի Հոգոյ գալըստենէն մինչ ի Վարագայ խաչն[10] ՉՃ (600) դահեկան ոսկի պարոն հարկ էառ, թող զայն որ յամէն օր աւուրն Ե (5) կարմիր կերթայ խարճ նոյն անիրաւաց, զոր մէք ականատես եղաք, այլ սրբութիւնք չմնաց, դատարկացաւ եկեղեցին ի զարդուց, սպ[աս]ուց, զամէն գրաւ եդին՝ զգրեանքն և զաւետարանքն. և մեծ սուք անհնարին և աղէտ տարակուսանաց պատեալ է զմեզ։ Բնաւ աշխարհքն Հայոց աւերեցան, որ մեկ գեղ չէն չկայ, կալոտ կարեցաւ, պարտատէրքն կու նեզեն և հարկառն զիւր չի թողուր, յետի շունչն է հասեր վանքս Հայոց, օգնութիւնն յԱստուծոյ ժամանէ, թէ փրկէ յանհնարին նեղութեանցս այսոցիկ։

Արդ՝ ես տրուպս ամենեցուն միայն անուամբ Գրիգոր վարդապետս գրեցի ի վայելումն մանկանց Սիովնի և յիշատակ կենդանի և ընդունակ բարի, հոգոյ իմոյ և ծնողաց իմոց և ամենայն նախնեաց, խրատողաց և ուսուցչաց՝ առաջնոց, միջնոց և վերջնոց և աշխատողաց տաճի և ամենայն երախտաւորաց...[11]։

Է

189ա Յայս երեսից վերայ քացախ լցաւ յանզգուշութենէ։

---

8 Գո՞ւցէ սրբերին։

9 Մատթ., ԻԴ, 6. հմմտ, Մար., ԺԳ, 7, Ղուկ., ԻԱ, 9։

10 Այսինքն՝ 1606 թ. մայիսի 29-ից (Զատիկը կլինի ապրիլի 20-ին ըստ հուլյան տոմարի) մինչև սեպտեմբերի 28-ը։

11 Ջ հիշատակարանը Գրիգոր Դարանաղեցու ժամանակագրության հրատարակությունում բացակայում է։

Ը

196բ Ով պատահողք, անմեղադիր [լերուք], զալատեցայ, մէկ երեսն խամ մնաց, վրա եմ անցեր անգիտութենէ։

Բ

237բ Փառք... յաւարտումն [ս]որին փետրուար Բ (2)։ Աստուածեղէն իմաստիցս լուսաւորեալք, երեսս անկեալ աղաչեմ յէական լուսոյն խաւարասէր գրչիս ե ծնօղաց մերոց և ամենայն զարմից և աշխատողաց տառիս և ձեռնատուաց և սիրով յորգ[ո]րողաց՝ զտէր Սարգիս եպիսկոպոսն և զտէր Կիրակոսն և զտէր Սահակն Կանջացին՝ զչահավառ և զլուսարարս Սրբոյն Յակոբայ մեծահռչակ տաճարիս, հայցեցէք զնշոյլս ողորմութեան յամենառատ պարգևատուէն Քրիստոսէ...։

Ժ

248ա Ո՛վ եղբայրք վսեմամիտք, յորժամ յայս վայր դիպիք յինչ պէտս և իցէ՝ նայ այս Գ (3) բոյթ թխտիս կտրելն անմեղադիր լերուք, զի պատճառն շատ է և յերկարելն անօգուտ։ Աղաչեմ, աղաչեմ յերես անկեալ աղաչեմ՝ անմեղադրութիւն։

Ժա

261բ Տէր Աստուած, բարէխօսութեամբ սբ. և աստուածախօս մարգարէին Նսայեայ, ողորմեա ըստացողի գրոցս, և գրօղացս, և ձեռնտուացս՝ երկու եղբարցս հարազատաց՝ Գրիգոր Դարանաղցի բանից սպասաւորի և մահտեսի Մարկոս միայնաւորի, ընդ նմին և Պարոն միայնաւորին հանգուցելոյն առ Քրիստոս, և հոգևոր և ձեռնասնունգ որդեկի նորա Մարգար սարկաւագին, որ է լուսարար Սրբոյն Յակոբայ գլխադրին։ Արդ՝ գրեցաւ սայ ի սբ. քաղաքս Յերուսաղէմ, ի մէջ Ս. Յարութեանս, յանդիման գերեզմանին և լուսարար մեր բաժին մասին՝ սրբասէր ե մաքրամիտ տէր Դանիէլ կրօնաւոր քահանային, ի յառաջնո[ր]դութիւնն սբ. և հրաշափառ աթ[ոռ]ոյս մերոյ Սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն, առաքինասէր և աստուածահաճոյ հայրապետիս մերոյ տէր Գրիգոր արհեպիսկոպոսին և այլ միաբանից եղբարց, որ աստ կան հաւաքեալ։ Եւ գրեցաւ սայ ի թվին ՌԿԶ (1617) յունիսի ԻԸ (28), ի վայելումն և յիշատակ հոգոյ իմոյ և ամենայն արեան մերձաւորաց, և Պարոն միակեցին, որ զամենայն թուխ[տ]ս սուլթանիայ ձրի շնորհ[ե]աց։ Եւ որք հանդիպիք սմայ յինչ պէտս և իցէ, յիշեսջիք...։

Ժբ

352ա Արդ՝ եղև կատարումն գրոց Կտակաց ի թվին Հայոց ՌՀ (1621) յունիսի Լ (30), ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպոլիս, ի դրունս Սրբոյն Նիկողայոսի, որ Կում[ր]ուկի մահալայ կոչի, ձեռամբ ոգնամեղ Գրիգոր վարդապետի ուրեմն անարժանի, յիշատակ հոգոց մերոց և ծնօղաց և հարազատ եղբօրն իմոյ՝ Մարկոս միայնակեցին, որ է (7) տարի է որ սպասաւոր և լուսարար [է] սբ. գերեզմանին Քրիստոսի։ Եւ յայսմ ամի

հազիւ կարացի բերել ի տեսութիւն մարմնոր աչօք ի Թաղձկալի սրտիս, և այլ նոր երթալու է, թէ Աստուած առաջնորդէ, և այլ ամենայն արեանառու մերձաւորաց, ի վայելումն մանկանց Սիոնի։ Արդ՝ որք հանդիպիք աստուածաբուխ մատենիս յինչ պէտս և իցէ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղաւք տառապեալ Գրիգորս և զվերոյ դրեալսն ամենայն յաղօթս ձեր...։

ԺԳ

361բ Փառք...։ Արդ՝ եղև զրաւ և կատարումն սր. տառիս և լիակատար պատմութեանս Ասանեթի և Յովսեփայ գեղեցկին՝ յերկրին Թրակացւոց, որ այժմ Ռուումէլ յորշորշի բառիւ տաճկի, ի մայրաքաղաքիս Թաքիրտաղիս, փոքր Ըռատոզա կոչեցեալ, ի դրունս Ս. Հրեշտակապետիս և դամբարանի երշանիկ հօրն մերոյ՝ Յակոբ քաշ բարունւոյն հանգուցելոյն առ Քրիստոս, որ այս եկեղեցոյս եղև պատճառ շինութեան, մեծ շանիւ և բազում հնարիւք աշխատեցաւ ի հրաման առնուլն ի թագաւորաց և ի մեծամեծաց, թէ՛ ֆաթվայի, և թէ՛ յամրի, և թէ՛ ի շինութիւնն առաւել աշխատ եղև, և յետ ինն ամսոյ փոխեցաւ ի յոյսն ամենեցուն առ Քրիստոս և յաւելաւ առ հարս իւր...։

Արդ՝ գրեցաւ Աստուածաշունչ գիրս ի թվաբերութիւն հայկազան տոմարի կրկին հնգից հարիւրից ևթանասուն և մէկերորդի (1622)[12] յունիս ամսոյ ի ԺԶ (16)։ Եւ գրեցաւ ձեռամբ ոգնամեղ փծուն գրչի, տառապեալ մեղաւք Գրիգորի միայն անուամբ վարդապետի, որ յայս աւուրքս ի գրելն այս տառիս, վասն ծովացեալ մեղաց իմոց և ի թոյլ տալոյն Աստուծոյ և ի հնարիցն սատանայի, գործ մի զարմանալի գործցաւ սարսափելի՝ հրեշտակաց և մարդկան։ Եւ եղև օր մի զի մօրացիկ ոմն պատանի եկն ի պատճառս մուրողութեան և պատճառելով, թէ գերոյ տէր եմ, և ունէր նամակ կնքեալ ի մեր անընտրող առաջնորդացս։ Եօթն օր պահեցաք, ըստ կարեաց մերոց խնամ տարաք, և յօր կիւրակէի գնամակն ընթերցաք ի լուր ամենեցուն և կրկին կրկին յորդորեցաք զժողովուրդն և տուին իւրն առատ ողորմութիւն։ Ի գիշերի մեծ Համբարձմանն էր[13] և հսկումն էր, և եղեալ էաք զամենայն սրբութիւնսն ըստ սովորութեան օրինացն, և մնաց այնպէս եղեալ ի միւս գիշերն։ Եւ այս արաբացի աւազակս, որ նեստորական եղեր ազգաւ, մեզ հաւատացոյց, թէ ի Հայոց մեծաց եմ, ոնց տեսել է զսրբութիւնքն, շարժէր է ի շարէն և յիւր սովորական գործոցն, և ելեալ ի մէջ գիշերի ժողովեր զամէն սրբութիւն, մանաւանդ զիմ դեղաթափ սր. նշանս բազում մասամբք։ Եւ գնացին յետևէ, գտան, նա զամէնքն շարդէր էր, հրէից վաճառեր էր, զոմանց զկոտորք մի բերին և ոմանց բնաւ կորեան։ Վասն այն գրեցի, որ զգուշանայք և ամենայն մարդոյ իսկոյն չհաւատայք։

[12] Այսինքն՝ [(2×5)×100]+71+551։

[13] Այսինքն՝ մայիսի 29-ի լուսս 30-ի գիշերը։ 1622 թ. Զատիկը կլինի ապրիլի 21-ին (հուլյան տոմարով), իսկ Համբարձումը՝ մայիսի 30-ին։

ժդ

368բ Ցիշեցէք յաղօթս ձեր զԱրջուկեցի Վահրատն, որ գնաց յԱրմաշու ի Նորգեղն զօրինակն երեր։ Ինքն և կողակիցն իւր բազում աւուրք սպասաւորեցին մեզ զանազան կերակրօք և այլ պիտոյիւք, որոյ տէր Աստուած վարձահատոյց լիցի. ամէն[14]։

ժե

Զայս հինգ տերև թուխտս յԱրմաշու ժամատունն գրեցի[15]։

ժզ

431ա Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի զԱստուածաշունչ բուրաստանս, որ կոչի աւետաբեր, որ է Հին և Նոր Կտակարանք, ի խնդրոյ և ի տենչումն անձին իմոյ և յիշատակ հոգւոց մերոց, և ծնաւղաց, և ամենայն զարմից արեանառու մերձաւորաց, մանաւանդ որ այսօր կենդանին է՝ իմոյ ծնողաց և յարգանդէ ծնեալ եղբօրն մերոյ՝ մահդասի Մարկոսին, որ և նա եղև պատճառ և նպաստ ի կատարումն սորա։ Զիարդն և զորպէսն կամ զայլայլութիւն գրեցելոյս, եթէ կամիս զստոյգն յիմանալ, փոքր ինչ աշխատութեամբ գտցցես ի սբ. գիրսն Պաւղոսի, ի վերջ թղթին Հռոմայեցւոց[16]։ Զի վասն ահի և մուխաթարայ ժամանակիս և անհանգիստ յերերման և ի տարտարոսի գոլոյն, առաւել երկիւղ կրելոյ աղագաւ ի մահառիդ հրաւիրմանէն, գուցէ յանկարծակի հասանիցէ ի վերայ մեր իբրև զորոգայթ, ըստ Տեառն հրամանին, վասն որոյ հարկ լինէր մեզ գրել զամենայն տեղւոյ և ըզժամանակաց դրեցելոցն զյիշատակարանսն, և զտեղին, և զբնակիչք տեղեացն՝ զկնի։ Եւ զանցս և զաղէտս եղելոցն ևս գրեալ ուրեք, այսինքն ի վերջ Սննդոց և Արարածոց աստուածաշունչ սբ. գրոցս, որ և աղաչեմ զպատահող սորա յինչ պէտս և իցէ՝ զի անդ ևս գտցես և ընթերցցես և տեղեկասցիս վասն կարի յաճախ տառապանաց մերոց, և անմեղադիր և անպարսաւս զմեզ ազատս թողցես։

Արդ՝ եղև աւարտ և զրաւ Աստուածաշունչ բուրաստանի սբ. գրոցս Հին և Նոր Կտակարանաց, որ և գԿտակ ԲԺ (12)-ան նահապետացն և զԱսանեթի՝ կնոջն Յովսեփայն յաւելեալք գրեցի և զբովանդակն ամենայն, ոչ թէ ի միոյ օրինակէ, այլ՝ ի զանազան, յայլ և յա[յ]լ օրինակաց, յաղագս միանգամայն չգրելոյն, և տարտարոս գոլոյն, և հանգիստ ուրէք չգտանելոյն՝ վասն չարութեան ժամանակիս, որպէս յայտ է յայլ և յայլ գրերաց և ի փոփոխելոյ գրչաց, տեղաց և ժամանակաց։

Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Աստուածաշունչ, որ սկիզբն եղև գրեցելոցս ի թվին կրկին հնգից հարիւրից յոբելեան և քառեակ թվոց[17],

---

14 Սույն հիշատակարանը գրված է ներքևի լուսանցքում, այնուհետև կտրված է կազմելիս։ Շարունակությունը վերցրինք Գր. Դարանաղեցու ժամանակագրության Մ. Նշանյանի հրատարակությունից։

15 Կարված է կազմելիս, վերցրինք ժամանակագրության հրատարակությունից։

16 Տե՛ս ժէ հիշատակարանում։

17 Այսինքն՝ [(2×5)×100]+50+4+551։ Հայոց ՌԾԴ թվականը սկսվում է 1604 թ. հոկտեմբերի 21-ից (հուլյան տոմարով)։ Հետևապես հայոց ՌԾԴ թվականի նոյեմբեր ամիսը կընկնի 1604 թ. մեջ։

որ է ՌԾԴ (1604) ի նոյեմբերի[18], յերկիրն յԵգիպտոսի և յԵրուսաղէմ և ի Սիլայ, ի Բենկի վանքն և ի Կոսաանդնուպոլիս, և ի Նիկոմիդու լեառն[ա]գաւառն, որ Ղօնայլէի ասեն այժմ, ի դուռն Նորաշէն վանք կոչեցելոյն, հուպ Արմաշու նորաշինիցն։ Եւ անտի չուեալ դարձեալ եկաք ի մեր սեփհական օթևանս, ի մէջ մեր սեփհական վիճակի հօտիցս և համաշխարհիկ եղեալ քաղաքակցաց և դեղչակցաց, ի մէջ զարմից և տոհմականաց մերոց, ի յերկիրս Թիրակայ, որ այժմ Ռումիէլ վերաձայնի. ի փոքր յԸռատօզ քաղաքիս, ի դրունս Ս. Հրեշտակապետի Նորաշէն եկեղեցոյս, առ դամբարանի հօրն մերոյ հոգևորի, արի և քաջ բարուն նապետին՝ տէր Յակովբ վարդապետին, որ է իւր ձեռակերտն, որ մեծաւ չանիւ և մեծաւ տաժանմամբ պատճառ և աշխատ եղև ի շինութիւն սորայ, և սատարութեամբ քահանայիցս և ժողովրդոց։ Եւ ստացաւ զայս տուն աղօթիցս և զդարան հիւրոցս ի ժառանգութիւն և ի հանգիստ անձին իւրոյ և քահանայիցս և միահամուռ ժողովրդոցս և յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն ժողովրդեանս և քահանայիցս, որք ի վաղ հետէ եկելոց և որք ի նորոցս եկելոց բնակելոց և որք առ Քրիստոս հանգուցելոցն, զոր են այժմ եկեղեցականք այսօրիկ, նախ՝ մեր գեղչացի ցամաքեալ մարմնով ծերունի տէր Տիրատուրն և զՄինաս աբեղան, և զմիւս Մինաս քահանայն Սեփաստացին, և զտէր Մարտիրոս սրբասէր քահանայն՝ զփակակալ սբ. եկեղեցւոյս, և զհորեղբօր որդի սմին զտէր Յակոբ քահանայն, և զտէր Գրիգոր, և զտէր Ղազար քահանայն, և զտէր Մկրտիչն. և ի մէնջ նորընծայեալ քահանայքս՝ տէր Աստուածատուրն և զտէր Առաքելն և մարմնով թշուառացեալ և հոգով մաքրեալ և լուսաւորեալ տէր Պետրոսն, և գնացելոցն ի Քրիստոս մեր գեղչացի տէր Խաչատուր վանաց երէցն, և զտէր Յովանէսն, և զաւագ սարկաւագն, զտիրացու
421բ Պաղտասարն և զայլ // եկեղեցականքս զմեծամեծսն և զփոքրագոյնքն ամենայն, և զժողովրդոցն երևելի արանցն, և որք յայնժամ երախտաւորք էին և վերակացուք ի շինութիւն սբ. տաճարիս։ Եւ արդ՝ այժմ են ի շէն պահելն և հոգածուք և վերակացուք տանս այս և քաղաքիս. նախ՝ մեծաշուք իշխանաց իշխանն ըռայիս Ներսէսն, և ապա՝ մեծ Սարգիս մահդասին, որ ի ժամանակս մեծին Յակովբ վարդապետին նայ էր վերակացու և սպասաւոր վարդապետին, և զմեր մերձաւոր արեան Շաղօաքն և զՇահմելիքն, զմեծ Կուլպակն, զԳոլոշն, զԱմիրեկն, զՂազարն, զՀազրպետն, զԽաչուկն, նաև զվերջին երևեալքս և զյառաջացեալքս՝ զսանահար Փանոսն, զմեր գեղչացի Փանոսն, զՅուսէփն, զՂասպնին, զԳրիգորն և զՆազարն, զդերձակ Պետրոսն, զՍէթն, զՎռնօսցի Սահակն և զայլ խառնախաղինչ ժողովուրդսն՝ թէ՛ կամախեցիք, թէ՛ երգնկացիք և թէ՛ սեփաստացիք, թէ՛ ղայսարեցիք և զմեր դարանաղեցի քաղաքացիքն և զայլ և այլ երկրայցիք, զոր յանուանէ գրել զամենեսեան մեծ աշխատութիւն է։ Այլ նա ինքն, որ զբազմութիւն աստեղաց գիտէ թուել և զնոսայ զամենեսեան յանուանէ կոչել, գրեսցէ զսոսայ զամենեսեան ի դպրութիւնն կենաց զանուանս իւրեանց և կոչեսցէ յարքայութիւնն երկնից. ամէն։

[18] Ամսաթվի տեղը բաց է թողնված։

Արդ՝ դարձեալ եղև կատարումն Աստուածաունչ դրոցս ի մեծ թվականիս Հայոց ՌՀԱ (1621), նոյեմբեր ամսոյ է (7)[18a], և քաղց Թ (9), թամուզ Ը (8)։ Եւ գրեցաւ ի հայրապետութիւն Հայոց տեառն տէր Աւետիսի, որ այժմ յաջորդէ զթոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի թագաւորութիւնն սուլթան Մուսթաֆայիին, որ դաւաճանութեամբ նստուցին և ոչ օրինաւք։

Արդ՝ յայս վերոյ գրեալ թվականիս՝ ՌՀԱ (1622) և մայիսի ԺԱ (11), յաւուր ուրբաթու, զարմանալի, նոր և անօրէն չարիս գործեցին ազգքն Տաճկաց, զոր ոչ ոք գործեալ է ոք յամենայն ազգաց և լեզուաց ի սկզբանէ աշխարհի մինչև ցայժմ, որ յարեան ի վերայ և զիւրեանց թագաւորն անարգաբար սպանին որպէս զաւազակ՝ զսուլթան Օսմանն, և նստուցին յաթոռ նորա զսուլթան Մուսթաֆայն՝ զհօրեղբայրն Օսմանին, որ ի վաղ ժամանակաց հետէ ԺԹ (19) տարի յարգելական բանտի կայր։ Ի ժամանակի յորժամ մեռաւ սուլթան Ահմատն՝ եղբայր Մուսթաֆայիին և հայրն Օսմանին, նա փոքր հասակի գոլով որդւոցն՝ կտակ արար մեծամեծաց իւրոց և նախարարաց, զի զեղբայրն իւր նստուցեն յաթոռ՝ մինչ ի զարգանալ որդւոց իւրոց։ Որպէս պատուիրեաց՝ այնպէս և արարին իսկ, նստուցին զՄուստաֆայն մինչ ի Խ (40) օր, և յետոյ սկսան ասել, թէ խելագար է, և այնպիսի համբաւոյ անուամբ ընկեցին յաթոռոյն և արկին յարգելանոցի, որպէս էր յառաջագոյն։ Եւ ահա Ե (5) ամ էր, որ վարէր զթագաւորութիւն սուլթան Օսմանն արիաբար, քան զնախնի պապերքն այլ քաջութեամբ, ասախով և ահարկութեամբ։ Բայց յոյժ սաստիկ անյագ էր և արծաթասէր, և ոչ դնէր պատիւ ումէք զօրաց և զաւրականաց իւրոց, յաղագս որոյ ի խոր խոցեցան և չարացան զօրքն, և ուլամա[յ]քն, այլ ի հետ նոցա միաբանեցան։ Եւ ինքն սու[լ]տան Օսմանն կամեցաւ գնալ ի Մաքայն իւրեանց, և յաղագս Մաքայիին պատճառի ոչ կամեցան ամենեքեան թողուլ, զի երթիցէ և դիմացան ընդ նմա, սկսան ասել, թէ «Չէ օրէն թագաւորաց մերոց գնալ ի Մաքայ»։ Եւ նա դէմ եղիր և ոչ կամեցաւ բնաւ լսել [նոցա]։ Եւ զօրքն ամենայն գրոհ տուեալ դիմեցին ի պաղատն արքունի և ըմբռնեցին զթագաւորն և մերկացուցին, և հանին արտաքս ի պաղատէն և տարեալ եղին ի բանդս թշնամեաց, և ի գիշերի սպանին և խաւար ածին աշխարհի։ Գործ մի զարմանալի գործեցին հրեշտակաց և մարդկան հեռաւորաց և մերձաւորաց, և բազում ի մեծամեծաց իւրոց սպանին ընդ նմայ և զոմանս փախստական արարին։ Եւ այս Մուսթաֆայս որ նստեր է, միայն անուն է և ինքն ոչ որպէս յառաջն ասացին՝ այնպէս է։ Եւ վերացաւ յահ և երկիւղն յամենեցունց զօրաց և զօրավարացն, և կարծեմ, թէ ի թոյլ տալոյն Աստուծոյ է, զի պառակտելոց է թագաւորութիւն դոցա, որպէս ասէ ի տեսիլն աստուածաբան աւետարանիչն Յովհաննէս։

Այլ ե յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստս և զփծուն գրիչս, զյետնեալս ի բարեաց, զներգևեալ ոգիս, զվիրաւորեալս մեղօք՝ զԳրիգորս, զանուամբ միայն վարդապետս, և զծնօղս մեր, զհայրն իմ՝

[18a] Հայոց ՌՀԱ թվականը սկսվում է 1621 թ. հոկտեմբերի 17-ից (հուլյան տոմարով), այստեղից էլ հայոց ՌՀԱ թվականի նոյեմբերի 7-ը կընկնի 1621 թ. մեջ։

զԳրիգորէսն և զմայրն՝ իմ՝ զԿուլվարդն, զեղբայրն մեր՝ զմիակեաց Մարկոսն և զամենայն արեանառու մերձաւորքն մեր, զերախտաւորքն և զուսուցիչքն մեր, ե զաշակերտսն մեր զաւագ սարկաւագն՝ զՍարգիսն, զտէր Աստուածատուր նորընծայ երէցն, և զտէր Խաչատուրն, և զտէր Յակոբ աբեղան, և Զօրավարն, և զքոյրս[ր]զեկն իմ՝ զնորատունկ զԹքիկն և զայլ աշխատաւորսն մեր յիշեսջիք ի Քրիստոս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

ԺԷ

457բ Յիշատակարան Աստուածատունչ սբ. գրոցս. Ջերմեռանդ սրտիւ վերծանիցէք ի լուր բազմաց և կամ ի միտս ձեր՝ ուշ դնելով և զմեր թշուառութիւն յիմանալով, աղաչեմ։

Արդ՝ աղաչեմ զձեզ, եղբարք, զթութեամբն Աստուծոյ յիշել սրտի մտօք յաղօթս ձեր զհարազատ եղբայրն մեր ըստ մարմնոյ՝ զմահղասի միայնակեաց Մարկոսն, զսպասաւորն սբ. յԵրուսաղէմայ և զլուսարար Ս. Յարութեանն, որ յայսմ ամի. որ էր թիւն ՌՀ (1621), և եկն ի սբ. յԵրուսաղէմայ ի Կոստանդնուպօլիս՝ վասն կարեաց ինչ և պիտոյից վանացն և ի տեսութիւն մեզ։ Եւ եկեալ պատճառ եղև Աստուածատունչ մատենիս լմնցնելոյն և կատարելութեամբն, զոր ի վաղուց հետէ գրեալ կայր կիսատ, և ի ժամանակիս վրդովմանցն, որ ահա ԻԳ (23) տարի է, որ ազգս Հայոց խախտեալ ենք ի հիմանց, վասն ծովացեալ մեղաց իմոց, և տարաշխարհիկ եղեալ, ցիր և ցան ի մէջ օտա[ր]սեռ և խեղաթիւր ազգաց և ատելեաց՝ ի Թէոդուպօլսու ի վեր ի խորին Պարսկաց տունն և ի Թէոդուպօլսէ ի վայր ի Կոսսանդնուպօլիս, յԱնատոլի և յՈւռումէլիս և յաշխարհ հեռաւոր։ Եւ մեք ընդ սոցայ ի տարտարոսի գոլով, հանգի[ս]տ ոտից մերոց ոչ ուրէք գտանելով, վասն այն սակս այլ և այլ գրոյս լինելով խառնափնդոր գոլոյն, վասն շոյտափոյթ վազվազելոյն և կասկածանաց եկելոց անհանգիստ լինելոյ երկիւղին։ Այսպէս անարհեստ և անյարմար գրչութեանս գոլոյն պատճառն այս է, որպէս ասացաք, աղաչեմ, անմեղադրութիւն։

Եւ դարձեալ, թէ ո՞րպէս պատճառ եղև մահղասի Մարկոսն կամ ո՞ւր և ե՞րբ գրեցան այլ գրեանքս, ասացից ըստ ոճոյ վերոգրին փոքր ի շատէն։ Թվին ի ՌՄԴ (1605) էր, որ եկաք յԸսաամբօլս և նստելով գնացաք յԵգիպտոս և անտ սկիզբն արարաք սբ. գրոցս և [գ]րեցաք մինչ Յեսու Նաւեանն,և անտի գնացաք յԵրուսաղէմ և կեցաք անդ ամ մի և գրեցաք մինչ ի Սիրաքն, և անտի եկաք դարձեալ յԸսաամբօլս և ի բազում հինից չարին շատ ժամանակ խափան եղև, մինչև դարձեալ գնացաք ի Սիլայ, և
458ա ի Բենկի վանքն գրեցաք մինչ ի Դանիէլն։ Եւ դարձեալ // փախստեայ գոլով ի յահէ նեղչաց, եկաք յԸսաամբօլս, թէ դարձեալ երթանք յԵրուսաղէմ, և արգել զմեզ սատանայ, զի բազում անցք անցին ընդ մեզ, որ ոչ գիր կու տան[ի] և ոչ լեզու[աւ] ճառել ոք կարէ։

Դարձեալ աստուածային այցելութեամբն և խնամօք ողորմութեամբ նորին զերծաք ի յանզերծանելի վտանգիցն և գնացաք յԵրուսաղէմ, Գ (3) տարի շրջեցաք աստ և անդր և ոչ գտաք ուրէք հանգիստ,

և դարձեալ եկաք այլ աստէն, և ոչ ունիմք դադարումն ըստ այնմ, թէ «Ամբարբշտաց ոչ դոյ խաղաղութիւն[19]» ասէ Տէր։ Մինչ աստ ի վարանի գոլով գրեցաք զՀին Կտակարանսն և այլ չունէաք կամք գրելու, նայ եկօ ոտք եդիր և զթուղթն գնեց և գրեցաք կամօքն Աստուծոյ մինչև աստ, և մնացելոցն ի Տեառն եմք յանձնեալ և ակն ունիմք օգնութեամբն Աստուծոյ զմնացեալն կատարել յիշատակ հոգոց մերոց և ամենայն արժանաւոր ննջեցելոց ծնողացն և ամենայն երախտաւորացն։ Եւ արդ՝ գրեցաւ Ե (5) տետրս ի Կոմրուկի Ս. Նիկողոս եկեղեցիս, ի մեր նորաշէն վերնատունքս, և քահանայք որ կան աստ ի պաշտօն սբ. Սիոնիս՝ Թոխաթցի տէր Ստեփանոսն, և Տիւրիկցի ալեօք ծեր տէր Յովանէսն և զՅակոբ աբեղայ ժամարարն և զայլ ամենայն քահանայքն և զբոլոր ուխտ եկեղեցոյն, և զիս զանպիտան փծուն գրիչս՝ զԳրիգոր միայն անուամբ վարդապետս, և զտէր Խաչատուր խարազնազգեաց խստակրօն ամենաշնորհ աբեղան՝ զբանի սպասաւորն, որ է աշակերտ դրոց և հնազանդ մեզ, որ աշխատեցաւ ի ոսկելն և ի ծաղկելն, և զամենայն աշխատաւորսն մեր յիշեսցիք ի Քրիստոս...։

ԺԸ

Ով եղբարք, մեր թշուառութիւնս ձեզ յայտ լիցի, որ չունիմք ուրեք դադարումն վասն չարութեան ժամանակիս, որ զայս երկու թուղթս և մէկ երեսն ի վերայ ոտից շուրջ գալով եմ գրեր ի գիւղն, որ Մոխրի կոչի[20]։

ԺԲ

461բ Զայս մէկայլ երեսս ի մեր հօրեղբօրն պազչայն գրեցի [մեծաւ տաժանօք]։

Ի

Մաղկող՝ Խաչատուր Կեսարացի

336ա Զսակաւ աշխատողս ի սմա Կեսարացի Խաչատուր անուամբ միայն աբեղայս, աղաչեմ, միով Հայր մերիւ յիշել ի Տէր...։

79

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

ՄՏՁԵԳ, III, № 911

Գրիչ՝ Սիմէոն երէց
Վայր՝ Լուցք

438 Փառք...։ Գրեցաւ գիրքս ի թվին ՌՀԱ (1622)-ին, ի յունիս ամսոյ ԻԸ (28)-ին, ի յաշխարհս Ըռզաց, և ի թագաւորութեանն Երրորդ Զիկմոնդին, ի քաղաքս Լուցքա, ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի նախասարկաւագին և առաջին մարտիրոսին։

Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ յոդնամեղ, բիւր քանքարոյ պարտական

[19] Նայ., ԽԸ. 21, Մէ, 21։

[20] Սույն հիշատակարանը ևս կտրված է կազմելիս, այն վերջրինք ժամանակագրության հրատարակությունից։

ռռ. ժժ. ճճ. (գ)է յյ. մմ.[21] իրիցիս, որ միայն անուամբս եմ, և գործովս հեռացեալ։

Բայց ետ գրել զսա ըղձմամբ և սրտիւ փափագանօք Յովհաննէս սրբազան քահանայն, ի վայելումն անձին իւրոյ և իւրոցն, յիշատակ անշնչելի, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ երկար ժամանակօք. ամէն[22]։

Արդ՝ որք օգտիք ի սմանէ՝ կարդալով կամ օրինակելով, աղաչեմ անմեղադիր լերուք գրոյս խոշորութեան և սխալանաց, զի կար մեր այսչափ էր...։

Յայսմ ամի ազգն մահմետական՝ զօրքն իսմայէ[լա]ցւոց ի մայրաքաղաքն Բուզանդիա, մեծ և փոքր ամենեքեան միախոհք լեալք դիմեցին առ հասարակ ի վերա թագաւորանիստ դախտին, որ կոչի սառայ,
439 // պատեցին բոլոր զամենեսեան, և ըմբռնեցին զիւրեանց թագաւորն սուլթան Օսմանն և սպանին... և փոխան նորա նստուցին աթոռ թագաւորութեան զհօրեղբայրն նորա՝ սուլթան Մուսթաֆան։

80

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՅՋՀՄՍ, II, № 20

Գրիչ՝ Գրիգոր Սեբաստացի
Վայր՝ Անկիւրիայ

79 Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի Անկուրիայի քաղաքն ի դուռն Ս. Լուսաւորչին, ի թվին ՌՀԱ (1622), ահկի ԺԶ (16), յունիս ԻԹ (29) և մարգաց ԻԳ (23), ձեռամբ Սեբաստացոյ Գրիգորի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով Հայր մեր ասացէք և [յ]իշեցէք զանպիտան գրիչս և ըզծնաւղս իմ, զհայրն իմ՝ զՄարտիրոս և զմայրն իմ՝ զՂամայր, և զհինկ եղբայրս իմ. և որք [յ]իշէք, Աստուած զնա [յ]իշէ իւր միւսանգամ գալստեանն ի արքայութիւնն. ամէն։

81

ԱՌԱՋԱԲԱՆՔ ՇԱՐԱԿԱՆԱՑ

ՅՁՂԲ, № 249

Գրիչ՝ Ճանդէմիր
Վայր՝ Կաֆայ

ա

1195 Փառք...։ // Արդ՝ ցանկացող եղեալ այս հոգևոր բուրաստանիս... երջանիկ կուսակրօն կրօնաւորն Զամարիայ աբեղայն. և ետ գրել զսա բազում փափագանօք յիշատակ ոգւոյ իւրոյ, զոր տէր Յիսուս վայելել տացէ նմա մինչև ի կէտ կոչմանն իւրոյ խաղաղութեամբ և առողջու-

[21] Ծանոթագիրը գումարագիր է, ընթերցել է Պողարյանը։ Կարդացվում է այսպես՝ ռռ(ս) ժժ(ի) ճճ(մ) (գ)է յյ(ո) մմ(ն)=Սիմէոն։

[22] Մինչև այստեղ տե՛ս նաև «Կամենիցա»-ում, էջ 177։

թեամբ հոգւոյ և մարմնոյ։ Եւ յետ աստի զիւր հոգին և զիւր ննջեցելոցն յերկնից արքայութեանն արժանաւորեսցէ. ամէն։

Արդ գրեցաւ սակաւ գիրս ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին. առաջնորդութեանն տէր Խաչատուր արի և քաջ բարունապետին, ի թվին Հայոց ՌՀԱ (1622), հոկտեմբերի ԺԴ (14), օրն երկուշաբթի, ձեռամբ մեղսասէր և անարժան Ճանդէմիրի։

Բ

Եւ ինձ մեռեալ հոգւոյս Ճանդէմիր գրչիս։

Գ

1196 Ո՛վ պատուական եղբայրք, // խնդրեմ ի ձեզանէ որ չի մեղադրէք գծող անարժանիս վասն դրիս այլ և այլ լինելոյն. զի մագաղաթն միապէս չէր՝ որպէս որ կու տեսանէք՝ վասն այն այսպէս գրեցաւ, անմեղադիր լերուք. և զեղկելի փծուն[23]

82

ՄԱՍՈՒՆՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Երևան, № 154 (1311 թ.)

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

167ա Վերստին նորոգեցաւ սբ. գիրս Պաւղոսի, ի թվականիս Հայոց Ռ և ՀԱ (1622), ի վայելումն Ուրհայեցի տէր Յովանէս եպիսկոպոսին, որ ստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ նմայ ընդ երկայն աւուրս. ամէն։ Եւ զվերջին գծագրող այսմ մատէնիս զԱստուածատուր դպիրս աղաչեմ յիշել ի Տէր և թողութիւն մեղաց խնդրել...։

83

ԲԺՇԿԱՐԱՆ

Երևան, № 413 (1635 թ.)

Հեղինակ՝ Ասար Սեբաստացի

ա

145ա Իսկ այժմ նւաստ ոգիս ծառայս ծառայիցդ Աստուծոյ, անիմաստ Ասար Սեբաստիացիս կամեցայ զ[ը]նտիրսն հաւաքել և զհամառօտսն, և բացայայտել ըստ կարեաց փոքր ի շատէ ի բանից իմաստասիրած և բժշկական վարդապետացն և խնամ տանել ցաւագնեալ անձանց առ ի պէտս բժշկութեան։ Եւ նա որ ստեղծողն է, տայ զառողջութիւնն յամենայնի ըստ բարի և բարերար կամաց իւրոց. և նմա փառք...։

Բ

173ա Ով ընթերցողք և բանիրուն եղբարք, յիշեցէք զհաւաքող բանիցս զյոգնամեղ Սեբաստացի Ասար ծառայս և Աստուած ողորմի ասացէք։ Գրեցաւ ի թվին Հայոց ՌՀԱ (1622)[24]։

---

[23] Ցուցակի հեղինակի հաղորդմամբ, շարունակությունը կարված է։

[24] Այս երկու հիշատակարանն էլ չեն հիշվել Մատենադարանի ձեռագրերի ցուցակում (տե՛ս հտ. Ա, էջ 315)։

84

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 797, տե՛ս նաև № 803, էջ 387ա—398ա.

Հեղինակ՝ Զիֆ Ստեփանոս

ա

032ա Յիշատակարան գրոյս սբ. Հար[ց]մանցս բանի ԺԸ (10) հատորի արարեալ Զիֆ Ըստեփանոսէ Զուղա[յ]եցի քահանայէ։
[Փ]առք ամենազաւր տէրութեան
. . . . . [25]
Ազգիս Հայոց մեծ թվական,
Որ էր անցեալ կրկին շրջան,
Այլ և է (7) թիւ աւելի լրման (1622)[26],
Գրեցաւ գիրքըս այս պատրւական։

---

[25] Այս չափածս հիշատակարանի մի այլ տարբերակը պահպանվել է Հարցմանց գրքի № 803 ձեռագրում ևս։ Վերջինում չկա հիշատակարանի վերնագիրը և ավել է մի քանի քառյակ, օրինակ. տասներորդ հատորի բովանդակությունը մի քառյակով նշելուց հետո, մինչև նախավերջին քառյակը, կարդում ենք.

«Որով լինի ստացողս արժան,
Ղարիպշանն պատուական,
Անճառ դրախտին ուրախութեան,
Եւ իւր եղբայրքն ամենեքեան։
Մնօղիքն հանդերձ իւր սեպհական,
Եւ ազգատոհմքն համանգամայն,
Եւ իւր որդիքն պատուական,
Ձեղբօրորդիքն ազնուական,
Պահէ անփորձ և անսասան,
Մինչև ի կէտ վերին կոչման,
Եւ յետ ստեացս արքայութեան,
Ամենեքեան լինին արժան։
Եւ սիրելիքն իւր սեռական,
Եւ ընտանիքն հանրական,
Լսեն զձայնն ճրանական,
Խառնին ի դասն աշակողմեան. ամէն» (էջ 388ա)։ Այնուհետև նախավերջին քառյակը բերելուց հետո դրված է երկու այլ քառյակ, ապա նոր № 797-ի վերջին քառյակը։ Ահա այդ երկու քառյակը.

«Բայց գործով եմ նմանեալ ջան,
Զարեաւք լցեալ բարեաց ունայն,
Եւ գիշակեր խոզի նման,
Ի մէջ տղմի կամ թաւալման։
Գերանն ի յաչս որպէս հեծան,
Ի յետ շիւղից շրջիմ մարդկան,
Ոչ զարհուրիմ յահ մահուան,
Եւ ոչ յիշեմ զդատաստան» (էջ 388ա)։

Հիշված Ղարիպշանը 1654 թ. ընդօրինակված № 803 ձեռագրի ստացողն է (տե՛ս 1654 թ. շարքում), հետևապես ավելացումը կատարվել է այդ ժամանակ, գուցե և գրչի կողմից։ № 803 ձեռագիրն թերևս ընդօրինակվել է № 797 ձեռագրից։

[26] Այսինքն՝ (2×532)+7+551։

Այսինքն է ԺԹ (10) հատոր Հարցման,
Ըստ աւրինաց ԺԹ (10) բանեան,
Եւ ԺԹ (10) աղի քնար դաւթեան,
Որով աւրհնի աստուածըն բան։
362բ Այլ և մասանց որք գոյացան,
Արարածոց լինելութեան,
Տասն բանիւ գրոցն էական,
Որպէս ասաց մեծ հռետորն այն։
Էակ, գոյակ քանակական,
Որակ՝ առինչք ուր երրական,
Ունել, կրել առնելական,
Զի իմաստնոցն այսպէս գրեցան։
Այլ և հոգոյ Ժ (10) զաւրութեան,
Հինգ բանական և հինգն անբան,
Զի թէ քննես մտաւք արթնական,
Դիւրեաւ գտցես փափաք ըղձման։
Որով հերդեն որք հմտանան,
Նախ զարտաքինսն չարաբան,
Որք բախտ ասեն զդիպւած մարդկան,
Զչարն և զբարին Աստուծո[յ] տան։
Այլ և երկրորդ հատոր Հարցմանն,
Պիղծ աղանդին արիոսեան,
Հոգէմարտին մակեդոնեան,
Եւ նմանացն որ աստ դրեալ կան[27]։

* * * * * * *

Այլ և սակաւ բանս այս անբան,
Զի Ըստեփանէ շարագրեցան,
Որ քահանայ անուամբ միայն,
Կոչին ի մէջ ռամիկ մարդկան։
Բայց դու Տէր իմ գթածական,
Խնաեա ի գինս քո սբ. արեան,
Յորժամ գացես ի դատաստան,
Քո սբ. տեսոյտ արա արժան։

Բ

Գրիչ՝ Գրիգոր

218բ Աղաւնակերպ Ս. Հոգի Աստուած, ճշմարիտ, ողորմեայ ստացողի սբ. գրոյս տէր Նիկողայոսին և իւր ծնողացն. ամէն։

Եւ մեղսամած փծուն գրչի զԳրիգոր սուտանուն դպրի, որ զսակաւ բանս գրեցի։

---

[27] Այսպես թվում է Հարցմանց գրքի մասը հատորների բովանդակությունը։

85
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 1027 (1458 թ.)

188բ – Յիշեցէք ի բարի զմահդասի Մարտիրոսն, լի սրտիւ և փափաքանաւք էառ զսբ. գիրքս, որ կոչի Մաշթոց... յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց՝
189ա Գուլամին և հայրն // իւր՝ Նաւիկ, և եղբայր իւր Մինաս, և հանգուցեալ քեռերք[ի]ն՝ Ինախին և Նիգարին...:

Ո՛վ եղբարք, յորժամ ընթեռնուք զսբ. գիրքս կամ կարդալով կամ աւր[ին]ակելով, յիշեցէք զմաքրափայլ յաղաւթս ձեր Մարտիրոս մահդասին...։

Նորոգեցաւ և կազմեցաւ սբ. գիրքս ի թվականիս Հայոց ՌՀԱ (1622)։

86
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2079

Գրիչ՝ Յոհանէս Մոկացի
Վայր՝ Լիմ անապատ

ա

194բ Այս ողբոց բանս Երուսաղէմի վաղուցհետէ շինեալ էր[28], բայց գեղջուկ բառիւ էր. ապա Աստուած լուսաւորէ զՆերսէս վարդապետի ծնօղաց հոգին, որ մեր աղաչանացն լսեց և նոր շարադրեաց, համեղացոյց զբանս և յինքեանէ այլ ասաց ի վերայ, այլ և առաջիկայ· Աստուածածնի պատմութիւնս այլ նայ արարեր ի յԵրուսաղէմ՝ շինել ոտանաւոր. նայլև գիտելի է, զի ինքն ի Մոկաց է. և <և> գնաց յանապատն Տաթևոյ Դ (4) տարի եկաց և եկաւ անտի, աստ ի Լիմայ կղզիս հաստատեաց անապատ. որով բաղում մարդիկք Աստուծոյ հաճոյացան նորա պատճառաւն։

Ի թվին ՌՀԱ (1622). փառք Քրիստոսի Աստուծոյ.

բ

210ա Ո՛վ սբ. ընթերցող, Ռ (1000) վայ տուր անձինս, բայց Ա (1) ողորմի հոգոյս, զի յոյժ մեղաւոր եմ։ Ո՛վ հանդիպողք այսմ խունիմաստ սոփերի, յիշեսջիք յաղօթս ձեր, զիս յետինս ի կրօնաւորաց, որ և անուանս չեմ արժանի[29]։ Որ յԱստուծոյ նախախնամութիւն, զի Մոկաց Ներսէս վարդապետն ի վերին Տաթևոյ անապատն կացեր էր Դ (4) տարի. եկաւ ի Վանա[յ] երկիրս, ի Լմայ կղզիս անապատ հաստատեաց ի թվին ՌՀԱ (1622)։ Եւ մեք այլ նորա միաբանեալ բնակեցաք աստ։ Եւ զայս պատմութիւնս նա ոտանաւոր յԵրուսաղէմ շիներ է Ճ (100) տուն, ի սբ. Աս-

---

[28] Խոսքը Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավման պատմության մասին է, գրված Ներսէս Բելլուի կողմից։

[29] Բնագիրն ընդհատվում է, 4—5 տող բաց է թողնված, ապա շարունակվում է։

տուածածնի գերեզմանէն խնդրեալ։ Որ և մեք այլ ի վերայ հիման շինածին սակաւ յաւելեցաք տունս երեք հարիւր, ոչ ի մերոց մտաց գիտութեանց, այլ // նիւթ զպատմութիւնս առեալ, թէպէտ որ ժրպրրհութիւն էր մերս, այլ ոչ թէ ինքնայաւժար կամօք, զի շատ աղաչեցի զվարդապետն, թէ զպատմութեանս աւելորդ բաներս, այլ ոտանաւոր շինէ, զինչ որ չհանդիպեցաւ դէպ ատեն շինելոյ։ Վասն որոյ մեր յօժարեալ խնդրեցի ի սբ. Աստուածածնէն և առեալ շարադրեցի, զսակաւամասնեայ տաղաչափութիւնս, որ և մին այրուբենիւ ընդ նոյն համարոյն շինեցաւ և ընծայեցի զիւրն ինքեան, վասն որոյ աղաչեմ զձեզ, աղաչեցէք ընդ իմ ընդունել զտուրս բանաւորս և տուողն պարգևաց տացէ ձեզ և մեզ զկեանս յաւիտենից. ամէն։

210բ

Գ

114բ Բազմերանկ դաշտ նազելի,
Մատն եղիգամբ արշարեցի,
Քառակուսի հիմն դրի,
Ու ութն անկունի վրան հարթի։
Ութ բրգամբ սա կառուցի,
Երկեակ քառիւք բազմախաչի,
Եւ գեղեցիկ զարդարեցի,
Եւ տեառն իմոյ ընծա[յ]եցի[30]։
Տէր Մանուէլ երաժշտի,
Արարատեան մեծ այցելի,
Զի յիշատակ սայ եղիցի,
Զիս ըստ հոգւոյ ըստացողի։
Տէր Ստեփանոս փիլիսոփայի,
Մաքուր և սբ. ճգնաւորի,
Ես Յովանէս Մոկացի,
Որ ցնորեալ եմ յաշխարհի,
Մատամբ իմով զսայ գծեցի,
Խնդրոյ Յոհանէս կրօնաւորի։

Դ

353ա Ո՛վ սբ. ընթերցող յԴ, Դ (3,4) օրինակէ գրեցի զԱդամ գիրս, այն որ Սիւնեաց Առաքելի ասացեալ է. ԲՌՅ (2300) տուն էր գրած։

Ե

63ա Անկեալ երկիր պագնեմ պայծառատիպ խաչիդ ի սոսկալի դատաստանին, լուսաւորեալ զհոգի տէր Յոհանէսին և իմ գծողիս. ամէն։

Զ

60բ Ո՛վ սբ. ընթերցող, յորժամ ըզսբ. խաչիս ներբողեանս հրամայես միանգամ, Աստուած ողորմի ասէք տէր Յոհանէսին. ամէն։

Է

100բ Ջստացող սորա Յոհանէս քահանայ Շատախեցի և գծողի յիշեցէք առ Քրիստոս։

30 Գրված է նկարի ներքևում և վերջինիս նկարագրությունն է։

Ք

221բ Եւ վասն եղկելի գծողիս և Յոհանէսի աղաչեայ զորդիդ Միածին սբ. Աստուածածին։

Բ

381ա Ստացող դրիս ի ձէնշ հայցէ,
Տուք ի Տեառնէ զմի ողորմին.
Երես եդեալ ես ի գետին,
Փարեմ զոտիցդ ընթերցողին։
Առ Տէր յիշել զմեզ ի բարին,
Զտէր Յոհանէս կրօնաւորի հոգին[31]։

Ժ

Այլ գրով

195ա Յիշատակ է գիրքս տէր Յովհաննէս կրօնաւորին ի դուռն Շատիկայ յանապատին։

87

ԲԱՌԳԻՐՔ

Երևան, № 3202 (1417 թ.)

Նորոգող՝ Սանակ աբեղայ

2բ Նորոգեցաւ գիրքս ի սբ. ուխտս Վարագ, ձեռամբ Սանակ անպիտան աբեղայի, ի յառաջնորդութեան ուխտիս Կիրակոս վարդապետի, ի Ռ [և] ՀԱ (1622) թուականիս մեր, ի յիշատակ տէր Ղազարին փոխեցելոյն առ Քրիստոս, ի վայելումն սրբասնունդ կրօնաւորի տէր Մովսէսի և Գրիգոր սարկաւագի և որդոց իւրոց Ղազարին, Յովսէփին, Աւետիսին, Յովանիսին: Զոր տէր Աստուած բարով վայելել տա. ամէն։

88

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5580, տե՛ս նաև ՄՀՎԼ, № 369, էջ 861—864

Գրիչ, ծաղկող՝ Սանակ
Վայր՝ Բաղէշ

ա

343ա Փառք...

Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ,
344բ բարի և հաւա//տարիմ կրաւնատրն Ստեփանոս և ետ գրել զծաղկազարդ և լուսափթիթ, հրաշափառ սբ. Աւետարանս, ի հալալ և յարդար ընչից իւրոց, յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց Փիրիջանին [և] Գիլղարին, և եղբարցն՝ Խլղաթին և Սարգսին, և քուրոշն՝ Խանումին, հաւրեղբարցն՝ Մարտիրոսին, Սանակին, հօրեղբաւր որդոց տէր Մարտիրոսին և Սանակին. և ետ յիս ի մեղուցեալ և յեղկելի և ամենայն բարի գործոց ունայ-

[31] Նման և ավելի համառոտ հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 84ա, 141բ, 153բ, 343բ, 397ա, 408ա էջերում։ Սրանցում ևս չի հիշվում գրչի անունը։

նացեալ Սահակ զառածեալ և փծուն գրիչս, ծաղկել և զարդարել ազգի ազգի ե պայծառ դեղաւք ի թվականութեանս հայկազան տումարիս ՌՀԱ (1622) ամին, ի քաղաքիս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Սարգսին և այլ ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ ի փառս Աստուծոյ։ Արդ՝ ես ախտալից և մեղսամած Սահակս երես ի գետին եդեալ աղաչեմ...[32]։

34ա Յիշել զիս՝ Սահակս, որ անուամբս միայն եմ քահանայ և գործովս
34բ ոչ, և զծնողս իմ զՍտեփա//նոսն և զՇահումն, և զեղբայրն՝ զՅակոբն և զամենայն արեանառու մերձաւորս մեր և զստացող սորա զտէր Ստեփանոսն և զծնողս իւր...։

Բ

31բ Ես՝ Սահակ մեղսամածս ամաւթալից գիմաւք աղաչեմ զխաչեալդ Աստուած մի՛ զրկեր զիս ի լուսո[յ] խաչիդ քոյ։

Գ

39ա Ծաղկեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ եղկելի և յոգնամեղ Սահակ անիմաստ գրչի, ի թվականութեանս մերում ՌՀԱ (1622)[33] ամին, ի խնդրոյ բարէմիտ և հեզահոգի Ստեփանոս կրաւնաւորի, յիշատակ բարի ծնողաց իւրոց և ամենայն արեանառու մերձաւորաց իւրոց. ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք յանդիպիք սորայս քաղցրաճաշակ վայելչութեան, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զեղկելի գրիչս և զծնողս իմ զՍտեփանոսն և զՇահումն, և զեղբայրն իմ և զամենայն արեանառու մերձաւորս իմ...։

Դ

Ստացող՝ Ստեփանոս աբեղայ

31բ Ես՝ տառապեալ Ստեփանոս աբեղայս աղաչեմ զքեզ բարեխաւսութեամբ սբ. Աւետարանիս լուսաւորեա զիս ի ծագել սբ. խաչին[34]։

89

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 5953. տե՛ս նաև ՊՊԹ, № 584, № 6333, էջ 28ա, № 119

Գրիչ՝ Յակոբ

106ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ի թուականիս, ՌՀԱ (1622), ձեռամբ անարժանի Յակոբ ծառայի[35]։

---

[32] Դարձյալ թվարկում է վերևում հիշված անձնանունները։

[33] Կարելի է կարդալ նաև ՌՀԲ, այդ դեպքում՝ 1623 թ.

[34] Գրված է խաչի ներքևում։ Մոտավորապես նման բովանդակությամբ հիշատակարաններ գտնում ենք նաև 37բ, 38ա էջերում՝ Քրիստոսի և Աստուածածնի նկարների ներքևում։

[35] Ուրիշները 106բ էջում նորից գրել են. «Արդ՝ տիրացաւ սբ. գիրքս ի թուականիս ՌՀԱ 1622). ամէն։ Նույնը կրկնված է։

90
ՄԱՇՏՈՑ
Երևան, Մ 8139, (1214 թ.)

Նորոգող, կազմող՝ Գալուստ

168ա Վերստին նորոգեցաւ գիրքս Քահանայաթաղի թվին ՌՀԱ (1622)։ Յիշատակ է Խաչատուր վարդապետին Կաֆայեցւոյ, որ պատահիք սմայ ընթերցմամբ կամ գաղափարաւ, յիշեսցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ և կազմող սորին զԳալուստս եղկելի և դուք յիշիք ի մասին բարի. ամէն։

91
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, Մ 8164 (ԺԴ դար)

Նորոգող՝ Ճանդէմիր

274ա Փառք...։ Վերստին նորոգեցաւ և կազմեցաւ սբ. Աւետարանս այս, հեզահոգի և սրբազան... պարոն Ուլուպիին հոգոյն, որ իբրև անապատաւոր ճգնաւոր կեցեալ ի մէջ աշխարհի և այնպէս բարի վարուք հանգեաւ ի Քրիստոս...։

Նորոգեցաւ սայ ի թվին ՌՀԱ (1622), ձեռամբ անիմաստ գրչի Ճանդէմիրիս, ի վայելումն տէր Գրիգոր քահանային։ Եւ է յիշատակ սայ ի գուռն Ս. Յովհաննէս աւետարանչին։ Ոչ ոք չունի իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ. եթէ ոք յանդգնի՝ զպատիժն Կայենի և զՅուդայի և զխաչահանուացն առցէ։

92
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, Մ 8674

Գրիչ, նվիրատու՝ Պօղոս երէց

58ա Գրեցօ Պարզատոմարս ձեռամբ յոգնայմեղ և անարժան գրչի Պողոս իրիցու, ի թվականիս Հայոց ՌՀԱ (1622), ի հայրապետութեան Հայոց տէր Մինասին։ Եւ տուի յիշատակ ինձ և իմ ծնողացն հոգոյն ի ձեռն մաքրայմիտ և սրբայզան Աստուածատուր քահանային, Աստուած բարով վայելել տացէ. ամէն[36]։

93
ԳԱՆՁԱՐԱՆ
Կ. Պոլսի Պալատ թաղի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, Մ 73 (մանրաժապավեն, Երևան. Մ 531)

Գրիչ՝ Սիմէոն երէց

ա

36ա Ասա և զմեղօոր Սիմէոնս յիշեա՛. Տէր ողորմիա[37]։

Բ

316ա Յիշատակարան գրոցս

---

[36] Այս ձեռագրի մասին տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում, էջ 613—614։

[37] Նման հիշատակարան տե՛ս 40ա, 55բ, 87ա, 163բ, 169բ և այլ էջերում։

Աւրհնեալ է...։ Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Գանձ տետր, ձեռամբ բազմամեղ և անպիտան ծառայիս Աստուծոյ Սիմէոն երիցու, ի թվին ՌՀԱ (1622), ի թագաւորութեանն սուլթան Ոսմանին, որ թախթէն ձգեցին, բազում չարչարանաւք Յեռտի խուլան տարին և ղեղղեցին և
316բ զսուլթան Մուսթֆան դրին, ի յառաջնորդութիւն // Յովնանէս պատրիարգի, ի դուռն յԱարանոյ ի թաղն Կաֆայու, ի նահանգին Ս. Նիկաւղայոսի Զմիւռնացոյ սբ. հայրապետին։ Դարձեալ երես ի գետին դնելով կողկողագին պաղատանաւք աղաչեմ ըզձեզ, ո՛վ դաս լոյսերամից, յորժամ հանգիպիք սրմա կարդալով կամ օրինակել[ով] և կամ հարևանցի տեսանելով, զաւելորդն բառնայք և զթերին լնոյք և անմեղադիր լերուք սղալանաց իմոց և խոշորութեան գրիս. զի լի սրտիւ և սէրդ հաւատով միաբերան ողորմի ասացէք ինձ՝ անարժան և եղկելի Սիմէոն գրչիս Տիպրիկեցի, ի խնդրոյ բարէմիտ իմ հօրն՝ տէր Յովանէսին և իւր կողակցին՝ Կեռաս իրիցկնոջն և մեծ մամուն՝ Կեռասին և իմ իրիցկնոջն՝ Մարգարտին, [որ] առ Աստուած փոխեցաւ, և իմ եղբօրն՝ Յակոբին և իւր կողակցին՝ Մարիամին, և մեր մեծ պապու[ն՝] Յակոբին, և իւր որդոցն՝ Յոհանէսին և Սալուիարի[ն] և որ յառ Աստուած փոխեցան, ողորմի մի ասացէք ձեզ և[38]

94

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 704

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Եփեսոս

109ա Փառք...։ Արդ գրեցաւ սբ. Աւետարանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի թուականիս Հայոց ՌՀԱ (1622), ի քաղաքն Եփեսոս, ընդ հովանեաւ Ս. Եօթն Մանկանցն՝ որ ի Յողքոս լեառն կատարեցան, ձեռամբ Աւետիսին, ի դառն և ի նեղ ժամանակին...։

95

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ (1328 Թ.)

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 480

403 Ի թվին Հայոց ՌՀԱ (1622) եկն Վանայ ղուլն ի վերայ Բաղիշու, քրդերն ոչ կարացին կալ ընդդէմ, այլ կորեան ամօթով ի կորուստն յաւիտենից։

96

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՏԵՐԱՎԴ, № 54

Գրիչ՝ Ղուկաս դպիր
Վայր՝ Գեաւթաղ

ա

92ա Փառք..., որ ետ կարողութիւն սխալամիտ և մատնադէտ և մեղսամած գրչի Ղուկաս անարժանի յանդ հանել զաստուածախօս կտակարանս

38 Հիշատակարանն այստեղ ընդհատվում է ձեռ-ից թերթ ընկնելու պատճառով։

ոժընդակութեամբ Սբ. Աստուածածնին ամենաւրհնեալ և գերա///ին Մարիամու, և զնա կալեալ բարեխօս առ Միածին որդին իւր և Աստուածն իմ Յիսուս Քրիստոս աւարտեցաւ քրիստոսահիմն և քաշ նահատակաց և մարտիրոսաց հոդիաբու[զխ] սբ. տառս Ռ և ՀԱ (1622) թուին հայ-կազ[ան] տոհմին, ի յերկիրս Ռոռտան, ի գեօղս Գետաթաղ, ընդ հո-վանեաւ յաշյարոյց Ս. Աստուածածնիս, ձեռամբ Բ(2) Գրիգորի, Յակոբ ընտրեալ քահանայի և Ղուկաս անարհեստ դպրի, ի խնդրոյ Արիստակէս քաշ վարդապետի, աշակերտի Մովսէսի մեծ բարունապետի և քաշ իմաստասիրի, յիշատակ հոդ[ւոյ ի]րոյ և ծ[նո]ղաց իւրոց, հօրն՝ մահդաս-[ի Մարտիրո]սին և մօրն՝ Մեհրելին, եղբայրցն՝ Էդի[գարին] և Մկրտչին:

Գրագրիս ականշ արայ,
Ձեռքս փրտի և հողանայ,
Մոխիր, փոշի գազախ դառնայ.
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ։
Թէպէտ խոշոր է գիր սորա,
Այլ դիւր ընթերցով գիտենայ,
Երբ սովորի և հմտանայ։
Որք ընթրռնուք և օգտիք ի սմա,
Յիշէք առ Տէր զգծող սորա։

Բ

Որ ողորմի ստացողի սբ. գրոյս Ռըստակէս վարդապետին և ծնողաց նորին՝ Մարտիրոս մահդասուն և Մեհրելին[39]։

Գ

Սրբագրող՝ Թումայ վարդապետ

///անորդի Ստեփանոս վարդապետն սքանչելի այրն Աստուծոյ, Տի-րացու եպիսկոպոս, Գէորգն Կարինցի, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի և աղօթիւք նոցա Տէր մեզ ողորմեսցի։ Արդ՝ երես անկեալ աղա-չեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, որք ընթեռնուք զյիշատակ սբ. վար-դապետիս զընբաստ վարդապետս Թումայ յիշել աղաչեմ, որ վերստին սրբագրեցի զգիրս, որ բերաւ ի Մարաղու քաղաքէն, ձեռամբ Յովանէս գրագրի, աշակերտի մեծին Տրատրոյ, և Աստուած ձեզ յիշէ. ամէն։

97

ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, I, № 1187 (1463 թ.)

787 *Փառք...։ Ձստացող սորա զպարոն* Եղիազար, *որ ետ նորոգել զսբ. Աւետարանս... հօրն՝ մահտեսի պարոն* Պապաքին *և ծնաւղաց* Թաւրէզին,

---

[39] Ձեռ-ը կազմելու մասին մնացել է հետևյալ փոքրիկ հիշատակարանը. «Դարձեալ յիշեցէք վերջին կազմել տվող գրոյս Վարդայզարն հանդերձ ծնողքն. ամէն։ Թվին ՌՃԽԴ (1695)» (էջ 91աբ։)

և եղբարն՝ պարոն Մալնազարին, *և որդոցն՝* Աւետիսին, Միասարին, Ամիրսաթին, *և դեռայբոյս* Բաբաքին, *և դստերացն՝* Խանփարվարին, Փարէզխանին, Յուստիանին, *զվերոյ դրեալս ի սմա* զՆոլիազարն *և ըզկողակիցն իւր՝* Շախզադն... *զպապերքն մեր՝* Աշուտի *որդի*[40], Շանիշինի *որդի* Պապաք, *և* Պապաքի *որդի* Յովհաննէս, Յովհաննէսի *որդի* Ֆազիլ, Ֆազիլի *որդի* Փերեջան, Փերեջանի *որդի* Աստամասադ, Աստ[ա]մատի *որդի* Դիլաքն, Դիլակի *որդի* Մարզուրէ *և* Պապաքն, Պապաքի *որդի* Եղնազարն *և* Մազնազարն *ողորմի ասացէք։*

Ի թվին Հայոց ՌՀԱ (1622), որ ետ նորոգել զսբ. Աւետարանս հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց խոշայ Բաբաքին *և մօրն* Թաւրեզին...[41]

98

ԱՒԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 2344 (ժամանակ?)

Նորոգող՝ Գրիգոր

1336 *Յիշատակ է* Յովհաննէս *քահանային և զաւակացն՝* Ոսկիճաին, *և* Մարթային, *և* Ճանանին, *և* Սաեփանոսին... *ի դուռն Ս. Խաչոյ մօր...։ Նորոգեցաւ ի թուին Հայոց ՌՀԱ (1622), ի դուռն Ս. Կարապետու, ձեռամբ* Գրիգորի:

Կրկին ստացող Աստուածատուր, *կողակից* Շուշան, *եղբարքն՝* Դանիէլ, Աղէքսանդր *երէց*[42]։

99

ԱՒԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 2346

Գրիչ՝ Կարապետ *աբեղայ*

Վայր՝ Հիզան

1337 *Ստացող մահտեսի* Եղիայ, *որդի* Աբրահամի *և* Մարիաթունի, *թոռ* Ստեփանոսի *և* Խլիկան, *որ ետ յիշատակ ի դուռն Ս. Հրեշտակապետի։ [Գրեցաւ ձեռամբ]* Կարապետ *աբեղայի, որդւոյ* Վարդանի *և* Գուլիստանի, *[ի] յերկիրս* Հիզնոյ *յաստուածաբնակ անապատիս, ընդ հովանեաւ ամենայաղթ Ս. Խաչիս և Ս. Նշանիս, ի հայրապետութեան* Աղթամարայ *տեառն* Ստեփանոսի *և* Էջմիածնայ *տեառն* Մելքիսէթի, *և առաջնորդութեան Ս. Հրեշտակապետիս* Գրիգոր *բարունապետի, ի թվին Հայոց ՌՀԱ (1622)։*

100

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Մշեցի, I, № 146 (1551 թ.).

տե՛ս նաև Աղավնունի, Այցելուք, էջ 106—107

Հիշատակ. հեղինակ՝ Դաւիթ *եպիսկոպոս*

410 *Ես՝ անարժան* Դաւիթ *եպիսկոպոս Գ(3) անգամ եկայ* Երուսաղէմ, *մէկ՝ թվին ՌԽԵ (1596), մէկ՝ ՌԿԶ (1617), մէկ՝ ՌՀ (1621)-ին, ի յերկրէն*

---

40 Թվում է, թե մեկ անուն չի բերված։

41 «Ի թվին Հայոց»-ից մինչև վերջ տե՛ս նաև ՄԻՆԱ, № 31, էջ 574։

42 Վերջին պարբերությունը թվում է, թե կապ չունի հիշատակարանի հետ։

Արարատ, ի յաթոռէն սբ. Էջմիածնայ: Այս տեղս հանդիպեցայ Դաւիթ եպիսկոպոս Երուսաղէմայ, որ առ Աստուած փոխեցաւ. ես անարժանս թաղեցի թվին ՌՀԱ (1622), ի հայրապետութեան սբ. աթոռոյս Գրիգոր եպիսկոպոսին. ամէն։

101

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄՏԶԵԳ, III, № 738

Գրիչ՝ Միքայէլ Մարզուանցի

Փառք...։

163 Զգծող սորա իմաստացուցակ և հանճարով ի լի,
Զորս Յոհան Քաղուածու կոչի,
Զիս զՄիքայէլ անարժանս Մարզուանցի:
Ի խնդրոյ վարդապետին
Իմոյ քաջ բարունապետին,
Որ այսմ ժամանակիս
Պատահեցաւ ի քաղաքն Մարսուանին:
Ի դուռն Աստուածածնին,
Թվին ՌՀ ու մէկ (1622)-ին,
Եղեալ խնդիր այս Քաղուածին,
Որ պատուական է սա քան զոսկին։
Աստուած կարողութիւն տայ իւր անձին,
Որ դաս ասէ յեկեղեցին,
Աւարտ առնէ մինչ ի վերջին,
Դասայկարգէ զինք յայն տեղին,
Ոչ ոք տեսեր մարդ բնաւին։

Աղաչեմ զհամասեռ դասդ պատրիկոսաց և զգունդս աշակերտեալ մանկանցդ, ի տեսանելն և ի վայելելն յայսմ անուշահոտ ծաղկանոցէս. յիշեցէք ի Տէր սրտի մտաւք զիս՝ զսոսկանուն Միքայէլս, և զհայրն իմ՝ զԱռաքել, և զմայրն իմ, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ աւրհնելոյն. ամէն[43]։

102

ՄԱՇՏՈՑ

ՄՏԶԵԳ, IV, № 1187 (1588 թ.)

Նորոգող՝ Յակոբոս

265 Զվերջին ստացող սորա զՄկրաիչ եպիսկոպոսն, որ վերըստին ետ նորոգել զայս՝ սբ. Զեռնադրութեան դիրքս, ի թուին ՌՀԱ (1622), ի վայելումն անձին իւրոյ։ Եւ զգրիչս սորա զՅակոբոս, և յաղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, յորժամ հանդիպիք սմա, նա լի սրտիւ Աստուած

[43] Արձակ հատվածը տե՛ս նաև ՔՏԶԶՎ, № 197, էջ 477։

ողորմի ասացէք ստացող սորին Մկրտիչ *եպիսկոպոսին, ո՛ և ինձ մեղաւորիս։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձերոցն և մերոցն...։*

103
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏՁԵՊ, V, № 1594 (1553 թ.)

Հետ. ստացող՝ Մելքեսեք

382 *Ըզմեղաւոր* Մելքեսեք *յիշեցէք ի յաղօթս ձեր և զծնողս իմ, զհայր* Եւատ *և զմայրն իմ՝* Բէկիշան, *որ ի հալալ վաստակոց իւրեանց գնեցին և ինձ տուին, յիշեցէք...*[44]։

104
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՄՏՁԵՊ, VI, № 1920 (1591 թ.)

Նորոգող՝ Գրիգոր արքեպիսկոպոս

382 *Ես՝ նուաստ ծառայ Աստուծոյ* Գրիգոր *արքեպիսկոպոսս, առաջնորդ սբ.* Երուսաղէմայ, *վերստին նորոգեցի զՍ. Մնընդեանս Քրիստոսի Աստուծոյ, զվիճակ ազգիս Հայոց, ի ներքոյ զխանն և ի վերոյ Ե (5) մեծամեծ աւտայք, հանդերձ եկեղեցեաւն, յիշատակ հոգոյ իմ և ծնողաց իմոց, ի պարծանս և ի վայելումն ազգիս Հայոց։ Եւ որք հանդիպիք աստ ի Ս. Մնունդս Քրիստոսի՝ բնակելով կամ յուխտ գալով և երկրպագութիւն մատուցանելով Քրիստոսի Աստուծոյ մերոյ, նա լի սրտիւ ասացէք Աստուած ողորմի տէր* Գրիգոր *արքեպիսկոպոսին և ծնողաց նորին։ Զի ի շինումն և ի նորոգումն Ա. Մնընդեանս բազում չարչարանս կրեաց ի ձեռանէ անօրինաց։ Ի թվին Հայոց ՌՀԱ (1622) ամին նորոգեցաւ...։*

105
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏՁԵՊ, VI, № 1962

Գրիչ՝ Յովանէս քահանայ
Վայր՝ Ալբեդանց

540 *Փառք...//Արդ՝ գրեցաւ աստուածային տառս՝ սբ. Աւետարանս ձեռամբ սուտանուն* Յովանէս *քահանայիս, ի գեաւղս որ կոչի* Ալբեդանց, *ընդ հովանեաւ Ս. Գէորգեայ և գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, ի թուականիս Հայոց ՌՀԱ (1622)։ Արդ՝ աղաչեմք զհանդիպողք սբ. Աւետարանիս, զսուտանուն* Յոհանէս *գծողս և զծնողսն իմ [յիշեցէք]. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահտասի Արդուլէն *և զկողակիցն՝ զմահտասի* Մարիամն, *որ ըստացան զսա յիշատակ և ետուն սբ.* Երուսաղէմայ։

---

[44] *Հիշատակարանում թեև տարեթիվը չի բերված, բայց ցուցակի հեղինակն այն դրել է «1622—ՌՀԱ» թվականի ներքո։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱղոբշէն և զկողակիցն՝ զՇաղզաղէն, և զՄախսուղն, և զՄաղդումշայն, որ ստացան զսբ. Աւետարանս և եդին ի դուռն Երուսաղէմայ, յիշատակ իւրեանց հոգոյն. ամէն։

106
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Զմմառ, № 529

Գրիչ, ստացող՝ Գաբրիէլ աբեղայ

ա

134 ...Եւս առաւել Գաբրիէլ անուն աբեղայիս, զգրոցս աշակերտս և զերիս. գիրս գրեցի փափկանօք, որք հանդիպիք ասէ[ք] Հայր մեղայ. թվին ՌՀԱ (1622)։

բ

Որով արժանի արասցէ տէր Աստուած ընտացող գրոցս զտէր Գաբրիէլ անարժան աբեղայիս, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր, որք հանդիպիք ի սբ. գրոցս, որ բազում աշխատութեամբ վասն տապոյն և ճանչից. ամառնոյն աւրն էր։

գ

...ևս առաւել ստացող գրիցս տէր Գաբրիէլ կրաւնաւորիս գրոց աշակերտիս։ Թվին ՌՀԱ (1622) գրեցաւ սայ։

դ

Որ և արժանի արասցէ տէր Աստուած մեր զԳաբրիէլ եպիսկոպոս գծագրողս։

107
ԺԱՄԱԳԻՐՔ, ՏԱՂԱՐԱՆ
Զմմառ, № 533 (ժամանակ ?)

142 ///որ ընտացաւ Տաղարանս ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ ինձ... Թվին ՌՀԱ (1622) ամի, թագաւորութիւն շահ Այպասին, ի հայրապետութեան Հայոց ազգին տէր Մովսէս քաշ հրայրունապետին։ Աստուած բարի վայելումն տացէ։

108
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 109 (1618 թ.)

156 Դարձեալ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զՎարդանէսն, և զհայր իւր Առաքելն, և մայրն իւր՝ Ուստիանէն, և կողակից իւր հանգուցեալ Խանսալթանն, և միւս կողակիցն՝ Շահանուշ, և կրաւնաւոր որդին իւր՝ տէր Արիստակէս աբեղայն, և միւս որդիքն՝ հանգուցեալ առ Քրիստոս Գրիգորն, և միւս որդիքն՝ Հայրապետն, Յովանէսն, Վարդեվանն, և

դուստր իւր Գարիանէն, որ ստացան սբ. Աւետարանն ի հալալ վաստակոց իւրոց, յիշեցէք...։ Ի թվին ՌՀԱ (1622)։

Դարձեալ յիշեցէք Վարդանէսն, և եղբարք իւր հանգուցեալ առ Քրիստոս Յովանէս, Կիրակոս, Մարտիրոս, Սատիրէկն, Ամիր, և քիւրն՝ Մարեամն, Խոսրով յիշեցէք...

109

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 160 (ԺԱ դար)

ա

212 Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպարոն Աւետիքն, և զհայրն իւր՝ զԹեղանն, զմայրն իւր՝ զՄէրիկն, և զկենակիցն իւր՝ զԳաւզալն, զեղբայրն իւր՝ զՆիկողոսն, և զորդիսն իւր՝ զՄելքումն և զԳաբրիէլն. և Աստուած ողորմի ասացէք։

Դարձեալ յիշեցէք զԱւետիքն որ զայս սբ. Աւետարանս ի գրաւի կայր վեց հազարի, սա ջերմեռանդ սիրով ազատեաց։ Եթէ ոք հանդիպի սմայ կարդալով...։

բ

Կազմող, նորոգող՝ Յակոբ Ջուղայեցի
Վայր՝ Ասպահան

Փառք...։ Արդ՝ ես Յակովբ էրէց Ջուղայեցի կազմեցի զսբ. Աւետարանս ի շահանիստ քաղաքն Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Ամենափրկչին, արքեպիսկոպոսութիւն տէր Մեսրոբին։ Ապայ բազում աշխատեցայ ի վերայ սորայ և շանք ջանիւք նորոգեցի զսայ. և անկեալ կար ի վաղուց ժամանա[կա]ց, և էր թվին սորայ էՃ (700) ամ աւելի և ոչ պակաս. և եղծած էր թուղթն, չգտեցաք ի մէջն, որ է զօրաւոր և սքանչելոց գործ. և տեսաք և լսեցաք զսորա հրաշքն և սքանչելիքն. ասին, թէ «Ճանապարհ որ դի բէռն վաւվեր ա[45], տէր գնացէլ, թէ անցուցէ՝ անհատ եղեր, բացեր, թէ Աւետարանս քրտնած [է] ի մէջն»։ Ապայ առաք, կազմեցաք զսա, ի խնդրոյ տէր Յուսիկին, ի վայելք անձին իւրոյ, և յիշատակ իւրն և ծնողացն , ի թվին Հայոց ՌՀԱ (1622)։ Ի յա[յ]սմ ամի շահ Ապասն գնաց ի Ղանդայնարն. և վերջն Աստուած գիտէ։...

գ

Նվիրող՝ Ստեփանոս Ջուղայեցի
Վայր՝ Ասպահան

Արդ՝ ես Ստեփանոս էրէցս Ջուղայեցի տվի զայս սբ. Աւետարանս տէր Յուսիկ քահանայն, ոչ թէ վասն գնոյ կամ գրաւոյ, այլ յիշատակ հոգոյ իմոյ Ստեփանոսին, և ծնողացն՝ տէր Մարտիրոսին, Թանակին, և որ ի վերայ սբ. Աւետարանիս երախտիք ունին, զի սբ. Աւետարանս

[45] Տպված է «Բեռնվաւվերա»։

այս թողեալ ի յանապատն Զուղայու, ի պահեստի, յետ ԺԶ (16) ամի յայտնեաց մեզ, թէ զի՞արդ կայ ապառաժ վիմիս. և մեք զտեղին ծանուցաք, զտեղին նշանաւ վաճառականաց, և բերեալ եղև Ասպահան, և յանձնեցաք ի Յուսիկ քահանայն։ Զի որք կարդան և յիշատակեն զմեզ և յիշողքդ արժանի լինին երանական ձայնին որ ասէ...։

Դ

213 Դարձեալ յիշեցէք զտէր Յուսիկի որդի տէր Սարգիսն, և զորդիքն իւր՝ զԽաչիկն, և հանգուցեալ որդիքն՝ զՊեարոսն, [զ]Սիմոնն և զՊողոսն, և կողակիցն՝ Դշիուն, և դստերն՝ Նանիկն և Գոգալն, և որք յիշէք...։ Դարձեալ յիշեցէք Խաչիկն, և իւր կողակից Փարասն և յԱնային, և մեր խարս Գուլբստանն. Մանուվէլն, և որք յիշէք զնայ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ։

110

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ ԵՐԵՄԻԱՅԻ

ՏԵՐԱՎՋ, № 367

Գրիչ՝ Խաչէս
Վայր՝ Կամէնից

Ա

560 Զթերավարժ գրչակս Խաչէս, որ եմ որդի Սիսցի Խարին, Խարասլէկին, գրեցի զՄեկնիչս ՌՀԱ (1622) թվին Հայոց, ի խնդրոյ Մեսրոպ վարդապետին, ի քաղաքս Կամէնից, յիշեցէք ի Քրիստոս. ամէն։

Բ

Ստացող՝ Գրիգոր Զուղայեցի

Զվերջին ստացող սորայ զԳրիգոր Զուղայեցի էրէցս յիշեցէք ի Քրիստոս. ՌՀԱ (1622)։

Գ

Եւ զմեղօք լցեալ Գրիգոր Զուղայեցի երէցս յիշեսջիք ի Քրիստոս միով ողորմիւ, և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալըստեանն Քրիստոսի. ամէն։

111

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

ՏԵՐԱՎՋ, № 423 (ԺԴ դար)

641 Ի թվին ՌՀԱ (1622) յիշատակ է Տօնապատճառ գիրքս մահտեսի Միքայէլ եպիսկոպոս վարդապետ հասարակացս, զոր միւսանգամ գալստեամբն Քրիստոսի արժանի /// Միքայէլ եպիսկոպոս տեսոյն Քրիստոսի։ Ով որ կարդայ այս գիրքս, մի Հայր մեղայ ասէ, վասն իմ, և Աստուած զինքն յիշէ. ամէն։

112
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՏԱՐ, № 29

Գրիչ՝ Մարգար
Վայր՝ Անկիւրիայ

173 Փառք..., որ ետ կարողութիւն մեղապարտ և փցուն գրչի, յետնեալ Մարգար մեղաւք ի լի հասանիլ ի վերջ աստուածաճեմ երգարանիս Դաւթի։ ...Եւ ստացաւ զսբ. Սաղմոսարանս զայս հալալ արդեանց իւրոց, յիշատակ բարի անձին իւրոյ, և ի փրկութիւն հոգոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, հաւրն
174 իւրոյ՝ Գրիգորին, և մաւրն իւրոյ՝ Մարիամին// և զամենայն արեան մերձաւորաց իւրոց, որոց եղիցի սոցա յիշատակ յաւիտենից. ամէն։

Եւ ստացաւղ սորա ի համբաւէ չարէ մի՛ երկիցէ։ Զոր առատաբաշխ պարգևատուն հասարակաց ողորմեսցի սոցա՝ հաճի Մովսէսին և նախնեաց նորին ի գալստեան իւրում մասին և պսակացն արժանի արասցէ ընդ սուրբս իւր, որք յաւիտենից փառաւորեն զՏէրն. ամէն։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, զսբ. քահանայքդ, որք հանդիպիք սմա, յիշել ի սբ. աղաւթս ձեր ստացող սորա զմահտասի Մովսէսն, որ էր սա մըշակ և աշխատաւոր Ս. Աստուածածնայ դուռն Լ (30)-ամեայ։ Վասն որոյ ստացաւ սա և ետ յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնայ վանիցս. վասն որոյ աղաչեմ յիշել ի Տէր զհաճի Մովսէսն, և ծնողսն իւր, զհայրն՝ Գրիգոր և մայրն՝ Մարիամ, և եղիցի սոցա յիշատակ անջնջելի յաւուրն աներեկի. ամէն եղիցի, եղիցի։

Եւ արդ՝ ես անպստուղս ի բարեաց մասնէ, անգետս ի գիտնականացդ, մեղանչականս անմեղացդ, անյիշելիս ի գրչաց, յետնեալ Մարգար, որ յիշման չեմ արժանի, բայց յուսալով [ի] բարեխաւսութիւն տիրամայր Ս. Աստուածածնին և ի մաքրափայլ սբ. յաղաւթս ձեր, յիշել զիս և <և> զծնօղսն իմ ի Տէր, զհայրն իմ՝ Մկրտիչն և զհաւրաքուրն իմ՝ զՀռիփսիմէն, որ բազմադիմի աշխատութեամբ սնուց զիս ի Ե (5) աւուրքդ մինչև ի ԺԵ (15) ամն, և ապա փոխեցաւ առ Քրիստոս. Աստուած ողորմի ասացէք իւր հոգոյն. ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, եղբարք, յիշել ի սբ. աղաւթս ձեր, զհաւատարիմ և զաստուածասէր ոգին զհոգևոր հայրն իմ՝ զտէր Կիրակոս քահանայն, զոր տէր Աստուած պահեսցէ ընդ երկայն աւուրս. ամէն։ Արդ՝ գրեցաւ սա ի վանս յԱնկուրիոյ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, և առաջնորդութիւն յայսմ նահանգիս, երջանիկ և պատուական և աստուածասէր տէր Յակովբ արքեպիսկոպոսին, զոր ուղղութեամբ հովուէր զհաւտն Քրիստոսի, ակն ունելով ի յուսոյն յայն որ ասէ. «Ահաւասիկ
175 ես և ման//կունք իմ, զոր ետ ինձ Աստուած»[46]։ Աղաչեմ յիշել ի սբ. և ի մաքրափայլ աղաւթս ձեր. ամէն։

Գրեցաւ զՍաղմոսարանս զայս ի թվականութեանս Հոռոմայեցւոց ՌՀԱ (1622)։ Դարձեալ աղաչեմ յիշել ի սբ. աղաւթս ձեր զկուսակրօն աբեղայն Կարապետ, որ այժմ սպասաւորէ վանիցս։

---

[46] Եբր. Բ, 13։

Յիշատակ է զՍաղմոսարանս զայս ի դուռն Ս. Աստուածածնա[յ]
176 վանիցս // մահտասի Մովսէսի հոգոյն։ Եթէ ոք դողանայ կամ ծախէ կամ գրաւէ՝, զմասն Յուդայ մատնիչին առցէ, և նզովեալ եղիցի ի մահ և ի կեանք։

113
ԱԻԵՏԱՐԱՆ
Մուրմար. II, № 80 (ժամանակ ?)

Նորոգող՝ Սուլդաշ դպիր

155 Նորոգեցաւ Աւետարանս ի թվին ՌՀԱ (1622), ձեռամբ սուտանուն դպրիս Սուլդաշին։

114
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՋՀՀՍ, № 150

Գրիչ՝ Ղազար քահանայ
Վայր՝ Հալապ

ա

291 ... Եւ եղև աւարտումն գրոցս ի ՌՀԱ (1622) թուականիս Հայոց, ի լաւ և յընտիր օրինակէ, որ ասի Ներենց. և այլ աւելի քան զնորայն, զի շատ նոր վկայք աստ գրեցան և հարստացաւ գիրքս այսքան զնորայն։ Գրեցաւ սա ի մայրաքաղաքն Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասնիցն, ձեռամբ անարժան և անարհեստ գրչի սուտանուն Ղազար քահանայի, որ անուամբս միայն եմ, և գործովս ամենևին հեռի։ Արդ՝ որք հանդիպիք սբ. գրոցս՝ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զվերոյ յիշեցեալ ստացող գրոցս զմահդեսի Պարոնն, և զիւր կողակիցն, և զիւր ծնօղսն և զորդիքն, և զամենայն ազգայինսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն, և լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն...[47]։

292 Այլ և զիս զանարժան գծողս զՂազարս, աղաչեմ յիշել ի Տէր, և զծնօղքս իմ զմահդասի Պաղտասարն և զմահդասի Լուսինն, և զմեծ մամս իմ՝ զմահդասի Խանաթրն և զամենայն արեան մերձաւորքն մեր։ Այլ և զուսուցիչքն իմ՝ զտէր Վասիլ արքեպիսկոպոսն, և զՅակոբ սարկաւագն, աղաչեմ յիշել ի Տէր և ողորմի ասել նոցա, զի բազում աշխատութեամբ աշխատեցան ի ուսուցանելն զանարժանս թէ զգիրն, և թէ զծաղիկն։ Եւ դարձեալ յիշեցէք զաշակերտեալ մանկունքս իմ՝ զՍտեփանոսն և զԱստուածատուրն, որ բազում աշխատեցան ի գրելն զսևագիրն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ յիշեսջիք յաղօթս ձեր զաստուածասէր և զբարէմիտ զմահդեսի Պարոնն, որ ըստացաւ զսա յիշատակ ի հալալ վաստակոցն, և ետ գրել զԱսմատուրքս զայս և եղ յիշատակ ի Հալապ, ի դուռն Ս. Աստուածածնին, որ կարդան և ողորմիս ասեն իւր հոգուն, և իւր ծնօղացն, և իւր որդւոցն ի փառս Քրիստոսի. որ և յիշէ Հայր մեղայիս, յիշեալ լիցի քաղցր ձայնիս ի Քրիստոսէ զմահդեսի Մալախն և զիւր

47 Գովք աստվածության։

եղբայրն՝ զԽաչրն, որ իւրեանք շատ չանացին և [յ]որդորեցին ի տալ գրել զԱյսմաւուրքս։

Դարձեալ յիշողացդ և յիշեցելոցդ ողորմեսցի ողորմած և մարդասէր Աստուածն յիւր ճշմարիտ միւսանգամ գալստեանն, և դասաւորեսցէ ի կայեանս արդարոց և ի գոգն Արրահամու, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Երբ զԱյսմաւուրքս առնուք կարդայք,
Վայր մի ձրգէք առանց կոճակ։

Բ

...Ողորմի Քրիստոս ստացողի գրոցս մահդեսի Պարոնին, և իւր կենակցին՝ մահդեսի Տիրուհէ, և ի Քրիստոս հանգուցեալ զաւակին՝ Պատուականին, և ամենայն արեան մերձաւորացն, և մեղաւոր գրչի Ղազար քահանայի. ամէն։

Գ

...Ողորմի Քրիստոս ստացողի գրոցս մահդեսի Պարոնին և կողակցին իւրոյ մահդեսի Տիրուհէ, և զաւակաց նոցին, ևս առաւել խոճա Խաչրին, և իւր եղբօրն՝ Մալախին, որ իւրեանք պատճառ եղեն գրոցս...

Դ

...Պատուականին, և Հեդինին, և Վարդենին, և վարժողապետիս տէր Ղազար ընտիր վարպետի և ինձ մեղաւոր ///[48] գրչիս։

Ե

...Մանաւանդ զքաշ բարունապետն մեր զԳրիգոր Սերենց Խլաթեցին որ Զ (6) է (7) աւուր արարչութեանն գրեաց յայսմ վայրի, այլ և զմեղաւոր գծողս։

Զ

...Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա ի վերայ ամենայն աշխարհի, և մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեսցի խնդրողացս բանիցս այս, և Թումայ վարդապետի Բագիշեցոյ որ զպատմութիւնս գրեաց...[49]։

115

ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁՎԼ, № 260 (1503 թ.)

ա

Վաճառող՝ Սարգիս եպիսկոպոս

622 Ես՝ Սարգիս եպիսկոպոս, սպասաւոր Արքուն Յովանու Մկրտչին, ծախեցի զսբ. Աւետարան ի Կծոյ աստուածասէր տանուտէրացն՝ Սարգ-

[48] Ա. Սյուրմելյանը հաղորդում է, որ ձեռագրում մեկ անուն քերված է, հավանաբար պետք է լինի Ստեփանոս կամ Աստուածատուր (էջ 292), գրչի աշակերտները։

[49] Այսինքն Գրիգոր Խլաթեցու վկայաբանությունը։

սին, Գրիգորին, Մեսրոբին, Կարապետին, և հարն իւրեանց՝ Բարունակին և մարն՝ Մանուշակին, և քրտերցն՝ Մոնանկան, և ամենայն արեան մերձաւորացն, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ նոցա ընդ յերկայն աւուրս. ամէն[50]։

Բ

Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զԿծուեցի աստուածալսէր տանուտէրն՝ զՍարգիսն, զԳրիգորն, զՄեսրոբն, զԿարապետն և զհարն իւրեանց՝ զԲարունակն և զՄանիշակն, զքուրն իւրեանց՝ զՄոնան, և զամենայն արեան մերձաւորաց. յիշեցէք...։

Ի թվին ՌՀԱ (1622)։

116

ԳԱՆԶԱՐԱՆ

Ճանիկեան, № 9 (ժամանակ ?)

Նորոգող՝ Կարապետ երէց

82 Վերջին նորոգաւղ Գանձատետրիս զանարժան, մեղաւոր Կարապետ երէցս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր, ո՛վ եղան[ակ]աւղ սորա և Աստուած զձեզ յիշէ. ամէն։ Ի թվին ՌՀԱ (1622)։

---

[50] Հիշատակարանը տե՛սնել նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 705, էջ 199։



117
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7381

Ստացող, նվիրատու՝ իսջա Խաչատուր

ա

612բ Փառք... որք բարեացն են ցանկացող, միշտ յաղթող գտանին ի ներկայինս, որպէս աշխատասէր և ժիր մեղու, տալով ղթևս աւդոցն ժողովել ղմանրս ծաղկանցն, յաղագս վեց անգեան բժժեացն կամ որպէս ղխորէշքն... նոյնպէս և ես՝ մեղուցեալ խոճա Խաչատուրս բաղում փափագանաւք զայս սբ. Յայսմաւուրքս տվի գրել ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց առ հասարակ ամենեցուն. ամէն։

613ա ... // Արդ՝ ցանկացող եղէ ես մեղաւոր Խաչատուրս այս լուսազարդ և աստուածաշունչ սբ. գրոց Յայսմաւուրացս և տվի գրել զսա յիշատակ ինձ մեղաւոր Խաչատուրիս և եղբաւրն իմոյ՝ Մարտիրոսին և հաւրն իմո՝ Քրիստոստուրին, և մաւրն իմո՝ Ալամ խաթունին, և աներոշն իմո՝ Սարգսին, և փոքր եղբաւրն իմոյ՝ Աստուածատուրին, և քրւերն իմո՝ Նուրպիֆային, և կողակցին իմո՝ Սուլթանպիֆային, և հարսին իմո՝ Հռիփսիմէին և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ Եւ եղի յիշատակ զսա ի դուռն Ս. Յովանէս աւետարանչին անջնջելի յիշատակ...։

Աւարտեցաւ գիրքս այս ի թվականութեանս Հայոց ՌՀԲ (1623) յունվար ամսոյ ի Ա (1), ի դուռն սբ. սրբակրոն եկեղեցոյն, ձեռամբ հողոյ հաւասար Զաքարիայ աբեղին։...

բ

Գրիչ՝ Զաքարիայ աբեղայ

7բ Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս խոճայ Խաչատուրին, կնոջն՝ Սուլթան խաթունին, հօրն՝ Քրիստոստուրին, և մաւրն Ալամ խաթունին, և եղբաւրն՝ Մարտիրոսին, և աներոշն Սարգսին և ամենայն արեան մերձաւորաց իւրոց և մեղաւոր գրչիս Զաքարիայ աբեղային, կարդաց[ողաց] և լսողաց...[1]։

---

[1] Նման հիշատակարաններ գտնում ենք գրեթե յուրաքանչյուր վկայարանության վերջում՝ 4ա, 5ա, 7ա, 14ա և բազմաթիվ այլ էջերում։

118
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
Երևան. № 9436 (1617 թ.)

Ընթերցող՝ Մեսրոպ վարդապետ

577բ Հոգով ախտացեալ Մեսրոպս, իբր թէ վարդապետ կամ եպիսկոպոս, ընթերցա զգիրքս բովանդակ ծարէ ի ծագ ՌՀԲ (1623) փետրվարի Գ (3) սկսայ, փետրվարի Ը (8)-ն ավարտեցի։

119
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7874 (1374 թ.)

Կազմի վրա
Յիշատակ է սբ. խաչս Պալշիին հոգոյն և իւր ծնողացն և զաւակացն։ Թվին Հայոց ՌՀԲ (1623), մարտի ԻԴ (24), աւրն երկուշաբթի։

120
ՇԱՐԱԿՆՈՑ
Մագիստրոս, № 381 (ԺԶ դար ?)

Նորոգող՝ Մելքոն սարկաւագ
Վայր՝ Ատրանա

111 [Ի] թվին ՌՀԲ (1623) յեղանակս զարնանային ապրիլ Ա (1) աւարտեցաք կազմելոյ և նորոգելոյ զայս.. եկեալ ի Սկէոք (sic) այս Ատրանա քաղաքս, վասն Տեառն բանին ի քարոզութեան ըստ հոգևոր հաւրն իմոյ՝ տէր Մելիքսէթ վարդապետին, որ է անդրանիկ աշակերտ Յոհաննէս կաթողիկոսի Կիլիկիոյ. ես ծառայ սոցին Սեբաստացի Մելքոն սարկաւագ։

121
ՃԱՌԸՆՏԻՐ
Մագիստրոս, № 5

Գրիչ՝ Կիրակոս քահանայ

42 Ես՝ անարժան Կիրակոս քահանայս օրհնվեցա թվին ՌՀԲ (1623)-ին և ամսեան մարտի մէկն։ Եւ իմ դուս գալն էր ապրիլի է (7)-ն, և տօն էր Ավետայց և օրն էր երեքշաբթի։

122
ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՑ ԳՈՇԻ, ՄԱՇՏՈՑ
Մշքեպ, VI, № 1782

Գրիչ՝ Վարդան աբեղա
Վայր՝ Կարմիր վանք

ա

128 Ես՝ Վարդան սուտանուն քարտող վրդովեալ անձամբ և վիրաւորեալ մտաւք գրէի զսբ. գիրս և ոչ էի արժանի, զի թուխտ չկա, և խամ թխտին

վերա գիրն գէշ կու գա, և փսխածի պէս կու լինի։ Մէկ որ միտքս շմոր, ի յերկրէս և ի վանացս թէ ելանեմք, ուր դադարիմք, թէ չելանեմք՝ բազում դառնութիւնս հասուցանեն այլազգիքն. թէ ի համար բերեմ կամ ի գիր արկանեմ կամ լեզուով ճառեմ, ոչ բաւ[է] գիրքս այս։ Տէրն Քրիստոս ազատէ զմեզ։

Բ

Փառք...։ Արդ՝ եզև աւարտումն սբ. գրոցս այս, որ կոչի Շնորհաբաշխութիւն, ձեռամբ մեղսամած Վարդան *կրաւնաւորիս, որ անուամբս եմ աբեղա և գործովս չար և խաբող, ի մաքուր անապատս ի Կարմիր վանք*[2], *աւաղ զմեզ որ տի գրկինք ի յայս սբ. ուխտարանէս ի յերերման ժամանակաց՝ ի ձեռաց այլազգաց, որ անդադար և ի զուր կու կողոպտեն զազգն քրիստոնէիցն, ևս առաւել զվանականքն, որ յայս յամի զգիրգս գրէի, բռնեց ամիրայն Ճ (100) մառչիլ առաւ անշունչ տեղ. եղուկ և Ռ (1000) վայ անձանց մերոց, որ յակամայ ցրուինք ի յաւտարութիւն. ի թվին Հայոց ՌՀԲ (1623) ապրիլ ամսոյ ԺԳ (13), ի խնդրոյ տէր* Յովհաննէս *եպիսկոպոսի* Մելտենցոյ, *ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնաւղաց իւրոց և ամենայն մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ տառի, յիշեսջիք ի յերկնաբաց յաղաւթս ձեր զ*Յովանէս *եպիսկոպոսս և զծնաւղսն և զամենայն արեան մերձաւորսն...։*

Գ

Ստացող՝ Յովանէս Բենկացի

128 *Ձստացաւղ գրոցս զտէր* Յովանէս *եպիսկոպոսն* Բենկացիս, *յիշեսջիք ի Քրիստոս...*[3]։

123

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Մշբեպ, III, № 828

ա

305 *Ձանարժան մեղաւոր* Սարգիս *աղաչեմ յիշել ի Տէր, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։*

Բ

Գրիչ՝ Ստեփանոս դպիր

Փառք...։ Արդ՝ գաղափաբեցաւ և գրեցաւ ի թվաբերութեան հայկազեան տումարիս Հայոց՝ կրկին հնգից հարիւրեկին, եթնեան տասն և երկրորդին (1623)[4], *ապրիլ ամսոյ քսաներրորդին և երկոքին աւարտեցաւ գիրս ի սմին, ձեռամբ ողնամեղ անձին, սակաւ իմաստ դպրիս* Ստեփանոս *անուանողին, որ դոյզն սպասաւորեցի գրիս և ձեռնարկեցի*

---

[2] *Ցմշկածագում։*

[3] *Բերված հիշատակագրանները վերաբերում են Մաշտոցին, իսկ Դատաստանագիրքն ընդօրինակել է ուրիշը և հիշատակարանում չի պահվել տարեթիվ։ Նման երեք հիշատակարան ևս տե՛ս Ցուցակում։*

[4] *Այսինքն՝ [(2×5×100)+72]+551։*

բանիս, ոչ թէ տեղեակ է[ի] գրի, այլ յանդգնութիւն սրտիս յաւժարեցայ, այլ ապաւինեցայ ի օգնութիւն անեղ, անմահ և հզաւրին, մինչ էին առ ստորոտ վարդապետի, առաքինասէր և սրբասիրի, քաշ և արի եռամեծի Գրիգորի, ամենիմաստ վարդապետի, և աշակերտ էի նորին, որ և յուսուց ինձ զգիրս, և ետ գրել ինձ զայս գիրք, որ և Սաղմոսի Քաղուածու անուանի։ Զողորմեայ և զՏէր ապաւէն, անմեղադրութիւն այսմ գրի, որ թէ ինչ պակասութիւն կայ ի նմին, յիշէք ի սրբափայլ աղօթս ձեր, և դուք յիշեալ լիջիք ի Հոգոյն Սրբոյ կենարարէ։ Յորժամ պատահիք այսմ երկրորդ կանոնի, ողորմեայ և Տէր ապաւէնի, թէ կարդալով կամ աւրինակելով, նա յայնժամ ասասցիք Հայր մեր։

124
ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ
ՑՁՆԿԱ, № 49

Գրիչ՝ Մկրտիչ

99 Շնորհիւն Աստուծոյ սկսայ, ողորմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ
100 ձեռամբ անարդ և // անպիտան հող և փոշի... զՄկրտիչ գծողս... յիշեսջիք յաղաւթս ձեր, գիրս աստուածաշունչ որ է Քահանայաթաղ, թվին ՌՀԲ (1623), ապրիլ ԻԴ (24), աւր հինգշաբթի։

125
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մ8ՁԵԳ, III, № 998

Գրիչ՝ Սիմօն դպիր

609 Գրեցաւ Մեկնիչս սբ. խորհրդոյն թվին ՌՀԲ (1623) սեպտեմբեր Ը (8), ձեռամբ անարժան և անարհեստ գրչիս Սիմօն դպրիս։ Յորժամ որ կարդայք և կամ օրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զիս և զծնօղսն իմ, որ առ Աստուած են փոխեալ, և ասացէք թէ Աստուած ողորմի։ Եւ ես աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք իմ, որ անմեղադիր լինիք գրոյս անզարդութեան և սխալանացն, զի տղա հասակաւ և անիմա մտօք գրեցի, բայց զԱստուած ողորմին մի՛ խնայէք մեղաւորիս։ Որ զիս յիշէ նա, Քրիստոս իւրն ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն. ամէն։

126
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Մ8ՁԵԳ, VI, № 1988 (1426)

Նորոգող՝ Դանիէլ կրօնաւոր
Վայր՝ Երուսաղէմ

580 Արդ՝ վերստին նորոգեցաւ և կազմեցաւ Սաղմոսարանս այս ի սբ. քաղաքն Երուսաղէմ, թվին ՌՀԳ (1623). հոկտեմբերի ամսոյն ԻԵ (25)[5],

[5] Հայոց ՌՀԳ թվականը սկսվում է 1623 թ. հոկտեմբերի 17-ից (հուլյան տոմարով), հետևապես հայոց ՌՀԳ թվականի հոկտեմբերի 25-ը կընկնի 1623 թ. մեջ։

ձեռամբ ոգնամեղ և մեղապարտ Դանիէլ կրօնաւորի, ի ժամանակս աթոռակալութեան սբ. Երուսաղէմայ տէր Գրիգոր արհեպ[իսկոպոսի]։

127

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 7370

Գրիչ՝ Զաքարիայ դպիր

ա

521բ Փառք...//...։ Արդ՝ ստացաւ զգիրքս պիտանի մահտեսի Լաշինն, որ կոչի Յայսմաւուրք, զոր կարդեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Մերենց կոչեցեալ, բազում ջանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցւոյ, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարւոյն։ Արդ՝ աղաչեմ զդասս քրիստոնէից... յիշեսջիք զըստացող սորա... զմահտեսի խոճայ Լաշինն և զհայրն իւր՝ զխոճայ Պուտաիւն, զմայրն իւր՝ զԱլթընն՝ զփոխեցեալքն առ Քրիստոս, և զեղբայրքն իւր՝ զԱլիքսիանոսն, և զխոճայ Եփրանոսն, և զքոյրքն իւր՝ զՄարիամն և զԱգիզն, և զկենակիցն իւր՝ զՇէնրիխաթունն, որ փոխեցաւ առ Քրիստոս, և իւր զաւակացն, և ամենայն արեան մերձաւորացն...։ Արդ՝ գրեցաւ սա ի յամի թըւաբերութեան հայկազան սեռի ՌՀԳ (1623) նոյեմբեր ամսոյ Ը (8)[6], աւրն շաբաթ, ձեռամբ անիմաստ և թարմատար... անարհեստ գրչի՝ Զաքարիայ դպրիս, որ մականուամբ Ճանդէմիր կոչիմ, որ զանունս դպրի ու[նիմ][7]

բ

39ա Մանաւանդ ստացողի գրոցս մահդասի Լաշինին, և հաւրն իւրոյ՝ Պուտախին...[8] և իւր զաւակացն և ամենայն արեան մերձաւորացն, և աւրինակիս շնորհողին՝ խոճայ Գրիգորին և մահդասի Յակոբին, և եկեղեցւոյս քահանայիցն՝ տէր Յովանէսին, և տէր Խաչատուրին, և տէր Սարգսին, և տէր Յակոբին, և առաջնորդիս մերոյ տէր Խաչատուր քաջ և արհի բաբունապետին, և տէր Թորոս եպիսկոպոսին, և Թղթիս կոկողին Յարութիւնին և տէր Պապային և այլ երախտաւորացն, որ այս գրքիս գրելն մեզ երախտիք են ցուցեր, ևս առաւել՝ տէր Մինաս քահանային, որ բազում աշխատանաւք մեզ երախտիք է ցուցեր, և մեղապարտ գծողի Ճանդէմիրի, կարդացողաց և լսողաց...։

---

[6] Տոմարական մեր դիտողությունները տե՛ս № 126 հիշատակարանի 5-րդ ծանոթագրությունում։

[7] Հիշատակարանի շարունակությունն ընկած է։

[8] Թվում է վերևում հիշված անունները։ Գրեթե յուրաքանչյուր վկայաբանության վերջում գտնում ենք նման կամ համառոտ հիշատակարաններ, տե՛ս 8ա, 9բ, 10ա, 11ա, 17բ, 19ա և բազմաթիվ այլ էջերում։

128
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՔՏԳԶվ, № 12

Գրիչ՝ Գրիգոր Հռոմկլացի
Վայր՝ Հալապ

26 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի մայրաքաղաքն Բերիա, որ այժմ Հալապ կոչի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս, ձեռամբ տուսի և անարժան Հռոմկլացի Գրիգոր սարկաւագի ի թվին Հայոց ՌՀԴ (1623) դեկտեմբերի Ա (1)[9], ի վայելումն[10]։

Արդ՝ որք հանգիպիք սմա կարդալով կամ հարևանցի ինչ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս զխղճուկ Գրիգորիս և զստացող սորա[11]

129
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8294

Գրիչ՝ Գրիգոր Երէց

ա

44ա Գրեցաւ Խորհրդատետրս ձեռամբ անարուեստ Գրիգոր իրիցուս, ի թվականիս Հայոց ՌՀԴ (1623), նոյեմբեր ամսոյ ԺԸ (18)[12] աւուր չորեքշաբթի, ի դուռն Թէոթորոսին։

բ

32ա Նոյեմբեր ԺԸ (18) սկսայ, գրեցի չորեքշաբթի աւրն։

գ

30ա Մի՛ մեղադրեր, թէ մէկ տաղ է չի դրեր. թուղթն կեղծ ի, քեզ հազար բարի. աւրմ էլ գրեմ։

դ

37ա Մի՛ մեղադրէք օրինակն Բ (2) ցեղ էր։

ե

52բ—53ա Տեղն խիստ մութ է, չեմ կարեր գրեր։

զ

54բ—55ա Դեկտեմբեր ԺԸ (18) խիստ ցուրտ է չեմ կարեր գրեր[13]։

---

[12] Տոմարական մեր դիտողութիւնները տե՛ս 126 հիշատակարանի 5-րդ ծանոթագրութիւնում։

[10] Անվան տեղը բաց է թողնված։

[11] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

[12] Տոմարական մեր դիտողութիւնները տեսնել 126 հիշատակարանի 5-րդ ծանոթագրութիւնում։

[13] Ձեռ-ի 58-րդ ա էջում այլ գրով գրված է. «Դեկտեմբեր Իե (25) աւարտաւ, թվին ՌՀե (1625) գր[եց]աւ ես տէր Մարտիրոս առէ ի զսայ ի տէր Գրիգորէն։ Եւ կարդաց տէր Յակոբն ի սորայ վերայ Հայր մերս։ Տարեթիվը գրված է փակագրով և այն նմանեցրինք ՌՀե-ի։ Եթե ընդունենք, որ այս տեղեկությունը վերաբերում է ձեռ-ի ընդօրինակման, ապա ձեռ-ի գրչությունը կլինի 1625 թ.։ Քանի որ հայոց ՌՀե թվականը սկսվում է 1625 թ. հոկտեմբերի 16-ից (հուլյան տոմարով)։

130
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1299 (1620 թ.)

Նվիրող՝ Բարսեղ վարդապետ

190բ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան Բարսեղ անուամբ վարդապետս, զհողս, զմոխիրս և զուսուցանող վարդապետն իմ զտէր Կարապետ վարդապետն Բաղիշեցի, որ ի [Ռ]ՀԲ (1623) թվին վաղշանեցաւ և սուդ էած ինձ անհնարին[14] նայև զծնողն իմ՝ զՊետրոս քահանան և զմայրն իմ՝ զՎարաղն, և զեղբայրն իմ՝ զԽաչատուրն և զեղբաւրորդին իմ, զոր ստացայ ինձ հոգոյ զաւակ և զամենայն զրեանս իմ ետու նմայ իմ կամաւս, նայև զայս գիրքս· մի՛ ոք հակառակեսցի։ Ով հակառակի՝ անիծեալ եղիցի, թէ՛ յիմոց և թէ՛ յաւտարաց։ Նայև զհաւունքն[15] իմ՝ զտէր Սիոն քահանան և զորդին նորին զՅակոբն և զորդի Յակոբին, զհայրն իմ՝ զՊետրոս քահանան, և զորդիքն՝ զանարժան Բարսեղ վարդապետս և զեղբայրն իմ՝ զԽաչատուրն, և զորդիք Խաչատուր[ի]ն, զՅոհանէս սարկաւագն, և զմայրն՝ զԱգատն, և զմեծ մայրն՝ զԳոհարն, որ բազում աշխատութեամբ սնոյց զՅոհանէսն, և զմաւրայքոյր սորին զՄեթուշն, որ տարաժամ մահուամբ մեռաւ, և զայլ որդիք Խաչատուրն, զՍարգիսն, զՊետրոսն, զմայրն իմ՝ զՎարաղն, և զքուերքն իմ՝ զԱյգունն, զԳոհարն և զայլ ամենայն արեան մերձաւորս իմ՝ զկենդանիսն և զհանգուցեալս։ Նայև զայլ որդիք՝ Սիոն քահանայն, Պողոս իմաստասէր փիլիսոփան, որ հոգի մարգարէութեանն <եղեալ է> ունի, զՂազարն, զՅովանէսն, զտէր Վարդան արքեպիսկոպոսն և զքոյրն՝ զկոյս Մուղալն, և զորդիք Յակոբին, զհայրն իմ՝ զՊետրոս քահանայն, և զեղբարքն՝ զԹորոսն, զՅունուսն և զՆերսէսն, և զորդիքն սոցին և ըզկանայքն և զդստերքն սոցին առ հասարակ զմեծ և զփոքր յիշեցէք... և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւսանգամ գալըստեան իւրամէն։

Ես անարժան վարդապետս ետու գրել զՄաթէոսի քաղուածուն և
191ա զԱռտկաց քաղուածուն և ետ դնել ի մի // տուփ։ Ով զանարժանս միով ողորմիւ յիշէ, յիշեալ լիցի առաջի Քրիստոսի։ Յոհանէս որդեակ իմ սիրեցեալ, զքեզ աւրհնեսցեն եղբայր քո, ձեռք քո ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որ[դ?]իք հաւր քոյ։

131
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻՈՅ
Երևան, № 1767

Գրիչ՝ Աւէտիք
Վայր՝ Հալապ

355ա Փառք...։ Գրեցաւ Պատմագիրքս ի թվին ՌՀԲ (1623), ի մայրաքաղաքն Հալապ, ի դուռն Ս. Քառասնից և Ս. Աստուածածնին եկեղեցւոյ,

---

14 Մինչև այստեղ տե՛ս նաև Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 162։
15 Բնագրում «զհանունքն»։

ի դասատունն Համբեցի վարպետ Իսրայէլին, ձեռամբ յոգնամեղ և տարտամ գրչիս լոկ անուն Աւէտիքին. ի խնդրոյ խոճա Մախսուտին Համբեցոյ, որ ստացաւ զսայ ի հալալ արդեանցն յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա յընթեռնուլ, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր, զստացող սորին խոճա Մախսուտն, և զվարպետն իմ զԻսրաէլ, որ բազում ջանիւ և աշխատութեամբ աշխատեցաւ ի վերայ անպիտան ծառայիս և հասոյց զանարժանս ի յայս չափ շնորհս. Աստուած ողորմի իւր ծնողաց հոգուն։

Արդ՝ աղաչեմ զձեզ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

Դարձեալ անմեղադիր լերուք սխալանացն, զի զոր ինչ ի յօրինակն գտաք, զայն գրեցաք։

132

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2004

Գրչի՝ Մկրտիչ սարկաւագ

54բ Գրեցաւ Պարզատումարս ձեռամբ սոսկանուն Մկրտիչ սարկաւագի, ի խնդրո[ւ] խոճայ Պետրոսի, յիշատակ իւր և իւր ննջեցելոցն։ Եւ անմեղադիր լերուք սղալանաց մերոց, զի կար մեր այս էր։

Թվսբերութեան Հայոց ՌՀԲ (1623). ամէն։

133

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2006

Գրիչ՝ Դաւիթ քահանայ

45ա Եւ զմեղաւոր գծողս Դաւիթ քահանայս յիշեալ ի Տէր, եղրայրք։

Ի թիւ ՌՀԲ (1623) գրեցաւ գիրս։

134

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2019 (1600 թ.)

Հետ. ստացող՝ Յոհան

ա

303բ Ի ԻԱ յոբելինին,
ԻԲ աւելորդին (1623)[16],
Ստացա զմատեանս Յոհանս յետին,
Ի կարգ պւեստաց բանասիրին։
Մատեանս մի տուի է ըստ տեսակին,
Բայց Գ (3) գիրք է ըստ կարգին,
Նախ՝ է Մեկնիչքն տումարին,

[16] Այսինքն՝ (21×50)+22+551։

Երկրորդ Բառգիրք ընդ Դանիէլին։
Ո՛վ պատահողք այս սբ. տառի,
Արժանացո մի ողորմի,
Եւ բաբունոյն իմո[յ] մեծի,
Բասիլիոս եռամեծի։
Զսա վայելէ հոգոյս որդին՝
Տէր Խաչատուր վարժապետին,
Ի որք որ ի ձեռս առեալ ընթերցցին,
Անհատ ասէք գուք ողորմին։

Բ

1ա Ստացող սորա անհմուտ [illegible] 17 խուն ինչ արհեստիս տեղեակ, բայց ի սորին մակացութենէ տարակացեալ[18]:

135
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան № 2335 (1476 թ.)

Հետ. ստացող՝ Արիստակէս վարդապետ

308ա Վերջին ստացող Արիստակէս վարդապետս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր վասն Աստուծոյ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Թվին ՌՀԲ (1623)։

136
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 2836 (ԺԶ դար)

Կազմող՝ Յակոբ երէց

ա

246ա Ուստի տեսեալ զսորայ անճառ փրկագործութեան խորհուրդ հաւատարիմ քահանայն տէր Յակոբն, և ստացաւ զսբ. Աւետարանս յիշատակ՝ իւր հոգուն և իւր ծնողացն, հօրն՝ տէր Գրիգորին և մօրն՝ Ջանաղին և եղբա[ր]ցն՝ Աւետիսին, և իւր կողակցին՝ Էթարին, Նարգուլին, և որդոցն՝ Մեսրոպին, Յակոբին. դստերն՝ Մարգարիտն, կողակիցն՝ Վարդանին, որդոյն՝ Խլղաթին, միւս դստերն՝ Ջանաղին, միւս եղբօրն՝ Բարսեղին, կողակցին՝ Գուլիճասին, որդոցն՝ Մուրատին, Մուքաելին, միւս եղ[բ]օրն՝ Մէսրոպին, և քուրոջն՝ Սալչուկին, տէր Յակոբու կողակցին՝ Ինանին, և որդոյն Յովանիսին և դստերն՝ Հուշուշին, և հօրեղբօր որդոյն՝ Յոհանիսին, և իւր կողակցին՝ Մարգարտին և իւր որդոյն՝ Ոսկանին, տէր Մարգարին, և ի քեռու որդուն՝ Աղաչանին և կողակցին՝ Ջանաղին, և

17 Կարդացվում է «Յոհանան»։
18 Նման մի նշում էլ գտնում ենք 3-րդ պահպանակի վրա։

իւր որդոցն՝ Շիրաքին, և քորոջն՝ Յամանսօլքանին: Եւ առօել Յոհանին, և իւր ծնողացն և իւր ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

217բ Դարձեալ յիշեցէք... տէր Պողոսին, տէր Յովանիսին, տէր Կիրակոսին, տէր Ղազարին, ժամհայր Շաղկէն, զգեղի տանուտէրքն՝ մահդասի Հայրապետին, Մարգարին, Ատոմին, Ղազարին, Մուրատին:

Սբ. Աւետարանս կազմեցաւ ի թվին ՌՀԲ (1623), ձեռամբ անիմաստ և փծուն գրչի, պիտակ անուն Յակոբ Էրիցիս, ի դու[ռ]ն Ս. Էշմիածնայ, ի Վան քաղաքին։ Եւ ինձ մեղաւորիս թողութիւն խնդրեցէք, Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

Բ

Կազմել տվող՝ Աւետիս

Ես՝ Աւետիս զԱւետարանս կազմել տի և ետու ի դուռն Ս. Յովանիսին, անջինշ յիշատակ իմո[յ] ծնողացն։ Մի՛ ոք յիշխեսցէ հեռացու[ս]ցէ սայ. ով յանտքնի՝ պատիժն յԱստուածոյ առցէ. ամէն։

Գ

Վաճառող՝ Պողոս

Իմացում լիցի ձեզ, մեծ և փոքր, որ ես տէր Պողոսս, մահդասի Հայրապետն ծախեցինք զոխֆ տներն Աւետիսին: Առինք զդրամն ի վերայ եկեղցուն, հանինք զեկեղեցին շինեցինք։ Յետոյ մարդ դօէ չանէ, թէ անէ դաւի՝ նա անէծքն յԱստուծոյ առցէ. ամէն։

137

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 3596

Գրիչ՝ Յոհանէս դպիր
Վայր՝ Անբատ

ա

163ա Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցաւ Սաղմոսարանս հոգէլից մարգարէին Դաւթի... ձեռամբ ոգնամեղ և անարհեստ գրչի սուտանուն Յոհանէս դպրի։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ
163բ զամենեսեան, ոյք ընթեռնուք զսայ... յիշեցէք զհայրն իմ՝ զտէր // Սուրգիսն հանդերձ ծնաւղքն իմ և Աստուած ողորմի ասացէք։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ի թուականիս Հայոց ՌՀԲ (1623)։ Գրեցօ սայ ի քաղաքն ի յԱնբատ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։ Դարձեալ աղաչեմ զամե[նե]սեանսն, որք հանդիպիք սմայ սաղմոս ասելով կամ տեսանելով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ըզսուտանուն զՈհանէս դպիրն՝ հանդերձ ծնաւղաւք իմովք...։

Բ

38բ Ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ, յորժամ սաղմոս ասիցէք և աւարտէք, յիշեցէք ի մաքրայփայլ յաղաւոս ձեր զանարժան և զեղկելի և զտրուպ ամենեցուն, սուտանուն զՅոհանէս դպիրն՝ հանդերձ ծնողաւք իմովք և Աստուած ողորմի ասացէք...։

138

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3672 (1609 թ.)

166բ *Ի վայելումն* Կարապետ *իրիցոյն և* Յովանէսին, *ի հայգազան թիւականին ՌՀԲ (1623)*[19]։

139

ՃԱՇՈՑ

Երևան, № 4746 (1457 թ.). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 707, էջ 199 բ, նույնի հտ. Բ, № 481, էջ 403

Հետ. ստացող՝ Սաֆար

Ա

264բ *Ցիշեցէք և Աստուած ողորմի ասացէք մեղայպարտ* Սաֆարիս, *որ տառապեալ եմ ի մեղաց միջին, զանունս ու[նեյմ և զգործս ոչ։ Ո՛վ ընթերցող, յորժամ կամիս կարդալով կամ աւրինակելով Աստուած ողորմի ասացէք* Սաֆարիս, *և աներոյն իմ, որ փոխեցաւ յառ Աստուած խոջայ* Ղարիպջան, *և զհայրն իւր՝ խոջայ* Ուսուֆ, *և զմայր իւր զՀանաղէն, և զքուրն իւր՝* Մարգարիտ, *և զամենայն ընդանիսն իւր. ամէն։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Սաֆարիս, *որ գնեց զգիրքս վասն հոգոյն* Ղարիպջանին, *ի դառն ւ դժար ժամանակիս, որ ազգն Թուրգաց մէկ զմէկ չարդէին ի թւականութեանս Հայոց ՌՀԲ (1623), Գ[նեց]ի զգիրքս Լ (30) ղուռուշ, վասն հոգոյն խոջայ* Ղարիպջանին, *և իւր ծնաւղացն՝ խոջայ* Ուսուֆն, *որ փոխեցեալ են յառ Աստուած։ Աստուած ողորմի ասացէք իւրեանց, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

Բ

Այլ գրով

316ա *Ցիշեցէք զվերջին ըստացող տառիս խոջայ* Ղարիպջան, *որ փոխեցաւ ի յառ Աստուած. և Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ Եւ զմեզայմարտ* Սաֆարս, *որ ըստացայ սայ վասն հոգոյն* Ղարիպջանին *ու հորն՝ խոջայ* Ուսուֆն, *և իւր ամենայն յարյանց մերձաւորաց. ամէն։*

Գ

Այլ գրով

447բ *Դարձեալ կըրկին անգամ աղաչեմք զձեզ կողկողագին պաղատանաւք, յիշեցէք մաքրափայլ յաղաւթս ձեր վերջին ըստացող սբ. տառիս խաւջայ* Ղարիպջան, *որ այժմ հանգուցեալ է։ Աստուած զիւր մեղքն թողնու։ Եւ իւր հոգուն հանգիստ, և արքայութիւն իւր հոգուն, և իւր ծնաւղացն. ամէն։*

Ո՛վ լուսերամ դաս քահանայից և մանկունք սբ. եկեղեցոյ, յիշեցէք... խոջայ Ղարիպջանին, *որ ըստացան զսայ ի հալալ արդ[ե]անց յիշատակ* Ղարիպջանի *հոգուն, և իւր ծնողացն, հօրն՝ խոջայ* Ուսուֆին *և մաւրն՝* Խանաղին, *և քրւերն՝* Մարգարտին, *և իւր կենակցին՝* Սաֆարին,

[19] *Գրչի հիշատակարանն այս է. «Փառք...։ Արդ գրեցաւ կանոնական տառս ի թուիս Հայոց ՌԾԸ (1609)» (էջ 143ա)։*

որ կամայկից եղև սբ. տառիս։ Ո՛վ հանդիպիք ի սմա ընթերնմամբ կամ աւրինակելով, յիշման արժան առէք և զԱստուած ողորմին ասէք խօջայ Ղարիպջանին, և իւր հօրն, և իւր մօրն, և իւր քեռերն, և իւր հաւրեղբարցն՝ խօջայ Ախիջանին, խօջայ Միրզին, խօջայ Նուրիջանին. և իւրեանց կենակցացն՝ Սալթանաղին, Փաշայբէկուն, Էքաւրիպաշին, և իւրեանց որդոցն՝ խօջայ Սարուիսանին, խօջայ Աղամիրին, խօջայ Ամիրճանին, խօջայ Ըռաճիջանին[20], Փիրումին, Աւիսին, Մարճասին[21], և իւրեանց արեան մերձաւորաց, և ինձ եղկելի քարտողիս, որ անունս ունեմ և գործս ոչ։ Աստուած ողորմի ասէք, Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

դ

Աստուած ողորմի Բէլլեցուն,
Որ հաց եբեր Զ (6) ժամուն,
Որ էր լօշ, մանդրամիս, պանիր և ձկուն։
Հրամէյնց եղաւ չուխտակ պարընտիրուն,
Եկին խստակ ժտին իւրեանց գրուն,
Գիրքս յիշատակ եղօ Ղարիպջանի հոգուն.
Հայր մեր ասէք Աստուծոյ սիրուն։

140

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Երևան, № 5243

Գրիչ՝ Պօղոս Տիւրիկցի
Վայր՝ Երիվան

284բ Փառք...։

Յանկամ հոդով նիազ,
Ան յերբ և յարակա,
Սահանք սրտիս բաղձայ,
Ապենիազդ գայցես։
Նըքթեալ լարոսագերբ,
Ըսփափեա սօսունեա,
Սալարեալս բալիստրէն,
Որոնեալ տածեսցես։
Ղաբանոսք ներհունի,
Ի իւծելոյս տուք երագ,
Աւթոց հոգւոց ծբրած,
Պենտագծաւ ի ծարի։

Մասամբս մանրախիտ,
Որակիդ բնաւի,
Նըքողեալ ըղձիւ
Ունայնս ի խընդիր։
Զմիգացեալս հոգի,
Որ բնաւից ես գոյակ,
Նըշդեհեալս ի կենաց,
Տըրոհացեալս յերամոյ։
Մատրուակք ոգոյ,
Առիթ գոլ կենաց ձիր,
Բախարար տառիդ,
Թուաբերն տոածի (1623)[22]։

---

[20] Ղ. Փիրղալեմյանը գրում է. «Սոյն խոշայ Ռուհիճան է այն երևելի հայ իշխան վանեցի, որ էր յոյժ սիրելի փոխարքային Տաճկաց և պաշտպան ազգիս Հայոց ի Կոստանդնուպօլիս քաղաքին»։

[21] Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է. «Մարճասն ինձ թուի թէ է ինքն ականաւոր Մարճաս Զէլէպին՝ մեծ իշխան Վասպուրական աշխարհիս մերոյ, որ էր ժամանակակից Առաքել պատմագիր վարդապետի, որ զսուրբ խաչն Վարագայ արար գերադարձ ի Վան քաղաքի, որպէս յիշէ ինքն իսկ Առաքել պատմիչ վարդապետն»։

[22] Այսինքն՝ 1 (=ա)+1000 (=ռ)+1 (=ա)+50 (=ծ)+20(=ի)+551, Զափածոի առաջին սյան սկզբնատողերից՝ ներքևից վերև կարդացվում է «Պաւղոսքն ասաց», նույն տողերի

Զարմանամ ընդ այսմ իր, որ արտակերտեալ,
Զի բան նիւթիւ ծածկեալ ւ իմաստ ի գծեալ,
Բայց մարդս որ բանաւոր, լրսիմք [յ]որջորջեալ,
Պարտիմք քննել ըզգիրս, ըստ Տեառն ասացեալ[23]։

287ա Շնորհիւ ամենակալին Աստուծոյ և գործակցութեամբ Հոգոյն Սրբոյ յանկեալ աւարտեցաւ աստուածահրահանգ և հոգելից տառս ի թուաբերութեանս Հայոց ՌՀԲ (1623), ի կողմն Արևելից, ի սահմանս Հայաստանեաց, ի յաւանն Երիվան, ընդ հովանեաւ մատուռի Ս. Անանիայի առաքելոյն, ձեռամբ յոգնամեղ և խաւարամած ոգոյ Պողոս[ի], ի վայելումն տեառն Մովսէսի սրբասնունդ և ճգնազգեաց տիեզերալոյս բարունապետի։

Արդ՝ որք հանդիպիք այսրմ հոգիակազմ և լուսազարդ մատենիս կարդալով կամ օրինակելով, եղբարք աղաչեմ, վասն Աստուծոյ, մի՛ զրմբոստնուլ ի վերայ անիմաստ գրչութեանս և լրբարար համարձակութեանս մերոյ, զի կար մեր այս էր։...

141
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6336

Գրիչ՝ Ղուկաս դպիր
Վայր՝ Գետաթաղ

267ա Փառք...։ // Արդ՝ այսմ աստուածեղէն և երկնապարգև գանձիս և լուսափայլ մարգարտիս ցանկացաւ աստուածասէր և մեծյոգի, նորընծայ քաջ վարդապետն Արիստակէս, սիրելի աշակերտն մեծ հռետորին Մովսէսի, որ այս յետնեալ և նսեմացեալ ժամանակիս իբրև զչահ փայլէ ի մէջ Հայաստանեաց. և ետ գրել զսբ. Աւետարանս, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց[24]։

Աւրինակ մի եղջերուն եղեալ հոգևոր և աստուածասէր վարդապետն Ուրստակէս, որ ի յոլովութենէ հրական մասին բաղձայ աղբեր ջուրց ըստ բանին երջանկին Դաւթի...։ Արդ՝ զայս պատուական ակնոս շափիւ-
267բ զայ...//...առեալ ուղղափառ վարդապետն Արիստակէս պաշար երկայնաձիգ ճանապարհին...։

Արդ՝ յանգ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս և բերանս Քրիստոսի և քարոզս Յիսուսի տեառն Աստուծոյ մերոյ երկիրս յՈրոտան, ի գեղս Գետաթաղ, ընդ հովանեաւ և աւգնականութեամբ Զագյարոյց Ս. Աստուածածնիս։ Եւ ես թափուրս ի բարեաց գործոց Ղուկաս սուտանուն դպիրս և գործով ունայն, տկար անձամբ, յանձն առի և ամենակարող զաւրութեամբն Աստուծոյ կատարեցի զսբ. Աւետարանս մեղսամած մատամբս յաւրինեցի, միթէ քաւի մեղս ի մարմնի։

Ի թուականութեանս Հայոց ՌՀԲ (1623)։

վերջին տառերից՝ «զայս բանս ի գծիս», երկրորդ սյունյակի սկզբնատողերից վերից վար՝ «մոնողոն տմարթ», իսկ նույն տողերի վերջին տառերից՝ «Տիւրիկցո որդիս»։

23 Մինչև այստեղ կրկնված է նաև № 2370 ձեռ-ի 308 բ էջում։

24 Ձեռ-ում տողուկես բաց է թողնված, ստացողի ծնողի անունները լրացնելու նպատակով։

142
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 7732

Գրիչ՝ Զաքարիայ աբեղայ
Վայր՝ Կաֆայ

418ա Գրեցաւ Գանձատեարս ձեռամբ հողոյ հաւասար Զաքարիայ աբեղայի, ի քաղաքն Կաֆան, ի դուռն Ս. Ահարոն Ճգնաւորին, ի թվականութեանս Հայոց ՌՀԲ (1623)։ Աստուած աւրհնէ զՍ. Աւգսէնտին ժողովուրդն, որ իւրեանց սիրտն ծագեաց Աստուծոյ ողորմութիւնն և առ Աստուած հայեցան և գնեցին զյայս սբ. Գանձատեարս Ս. Աւգսէնտին համար, ոմանք ոսկի տալով և ոմանք ղուռուշ տալով. և դրին յիշատակ ի դուռն Ս. Օգսէնտին։ Աղատէ, ազատէ մինչ ի գալուստն Քրիստոսի[25]։

143
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 7958

Գրիչ՝ Խաչիկ սարկաւագ
Վայր՝ Կաֆայ

ա

170ա Փառք...։ Գրեցաւ Գանձատեարս իմ մայրաքաղաքն Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Խաչին, ի վայելումն անձինն իւրոյ տէր Յովանէս քահանային. Աստուած բարով վայել տացէ. ամէն, ձեռամբ անիմաստ գրչիս Խաչիկ սարկաւագին։ Արդ՝ ով որ հանդիպի ի սայ կարդալով կամ...։ Ա[ղդ՝] յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ [ս]բ. հանդիպողք, [յ]որժամ ընթեռնոյք, յիշեսցէք ի սբ. աղօթս զմեղաւոր Խաչիկըս, որ է սայ
170բ երկրորդում ձեռաց գիրս և մի՛ մեղադրէք սղալանաց և խոշորու//թեան գրոյս, քանզի առաջին դիրս է։ Եւ ուղիղ սրտիւ յիշեսցէք յաղօթս ձեր զծնօղս և զազգականս և զամենայն արեան մերձաւորս իմ...։

Ի թվականիս Հայոց ՌՀԲ (1623)։

բ

38բ Զախմար գրրիչս ըզԽաչիկ սարկաւագն յիշեսջիք ի Տէր և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

գ

116ա Ո՛վ սբ. հանդիպողք և վայելողք Գանձարանիս, յորժամ գանձն յերկար լինի և տաղն մեծ և կամ շատ, զկէս գանձին մէկ տաղովն առաւօտուն ասայ և զկէսն Ա (1) տաղովն երիկունն ասայ, որ դու չաճըզիս և ժողովուրդն ձանձրանայ։ Եւ թէ գանձ քիչ է և տաղ շատ, ըզգանձն առաւօտ ասայ և տաղն՝ երիկուն։

դ

136բ Գրծողի այս տաղիս Խաչիկի,
Լոկ անուամբ սարկաւագ ինք կոչի,

---

25 Առանձին գանձերի ներքևում նշված է, թե ով է այն հորինել. այդպիսիները չվերցրինք, ենթադրելով, որ գրչին չեն պատկանում։

Սղալանաց արուեստիս և գրրի,
Անմեղադիր լերուք դուք ընձի։

144
ԿՈՆԴԱԿ
Երևան, № 8061

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Սաղմոսավանք

Եւ դարձեալ ի թվին Հայոց ՌՀԲ (1623) նորոգեցաւ կոնտակս հրամանաւ քաջ բարունապետին մերոյ Մովսէս վարդապետին[26], *որ իբրեւ զԱրուսեակ փայլեաց ի մէջ հայկազան սեռիս։ Ի սոյն աւուրս ուխտ արարեալ, մեծաւ փափագմամբ շրջեցաւ ի վանորայս նահանգիս և ըստ կարգի եկն ի սբ. ուխտս Սաղմոսավանք, և տեսեալ զկոնտակ հնացեալ և աւերեալ, հրամայեաց նոր նորոգել ի վերա մագաղաթի ըստ հին աւրինակին, ոչ յաւելուլ ի բանս նորա և ոչ պակասեցուցանել, զի մի՛ վնաս լիցի անձին։ Ի թագաւորութեանն Պարսից շահ Ապազին և ի բռնակալութեան սեզոյս Ամիրկօնայ խանի, յորում յոյժ վշտագնին տառապեալ ազգս մեր ի ներքոյ ծանր լծոյ սորին։ Բայց ի խնամոցն Աստուծոյ, մարդասիրութիւն գտեալ վարդապետն մեր Մովսէս, յոյժ պատուեցաւ յաչս բռնաւորիս, զի ի կամս ապաստան արար զսա։ Որ և զայս համարձակութիւն գտեալ վարդապետս մեր ըստ բնածին բարուցն իւր, նորոգէր զեկեղեցիս և ուղղէր զխանգարեալ կարգս նորա ըստ կարի իւրոյ՝ ոչ պակաս քան զաւուրս քրիստոնէութեան։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանսն, որք հանդիպիք այսմ տառի, խնդրեցէք ի Քրիստոսէ, զի որպէս փայլեաց վարդապետս մեր ի մարմնի, փայլեցուսցէ զսա հոգով ի միւսանգամ գալստեանն իւրոյ՝ տէր մեր Յիսուս Քրիստոս։ Գրեցաւ ձեռամբ Մինաս գրչի և ծաղկեցաւ ի Սահակ դպրէ ի փառս սուրբ Լուսաւորչին...։*

145
ԺԱՄԱԳԻՐՔ
Երևան, № 8558

Գրիչ՝ Յովանէս կրօնաւոր
Վայր՝ Տաթև

ա

204ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ փրկական խորհուրդ պատարագի և հասարակաց աղաւթս մերոյս եկեղեցւոյ, ի թվականիս Հայոց ՌՀԲ (1623), ի վանքս Տաթև, ձեռամբ մեղամակարթ և մատնադեղ և սխալաբան և անարհեստ գրչի Յովանէս սուտան[ուն] կրօնաւոր[ի], զի միայն զանունս ունիմ սոսկ և գործովս ունայն և թափուր երևիմ։*

բ

87ա *Եւ զեղկելի և զմեղաւք մեռեալս զՅովանէս գծողս յիշեա ի ժամ սոսկալի սբ. պատարագին և Աստուած զյիշողն*[27], *ամէն յիշէ։*

[26] Հետագայում կաթողիկոս Հայոց՝ Մովսէս Դ Տաթևացի կամ Խոտանանցի։
[27] Ձեռ.-ում «զյիշողն»։

146

ՃԱՌԸՆՏԻՐ

Երևան, № 9063

Գրիչ՝ Սաճակ քահանայ
Վայր՝ Բաղէշ

ա

381ա Փառք..., որ ետ մեզ կարողութիւն հասանիլ ի յետին գիծ Ոսկէփոր տաւնակիս յաստուածարնակ քաղաքս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Սարգսին և Ս. Գէորգ զօրավարին, Ս. Աստուածածնին, Ս. Յովանիսին և Ս. Ստեփանոս Նախավկային, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր խոջա Մեճրաբին, որ մեծաւ փափաքանօք և տարփալի ցանկութեամբ ետ գրել զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ Յովանիսին և Ղարիպղաթունին, և կենակցին իւրոյ՝ Մամիաթունին և որդոցն՝ Յովանիսին և Մկրտչին, և դստերն՝ Դաստագուլին, և եղբաւրն՝ Հայրապետին, և կողակցին՝ Խանսուլթանին և Սառէին, և որդոյն՝ Զաքարին, և մեւ եղբաւրն՝ Վելիջանին, և կողակցին՝ Մայրիամին, և որդոցն՝ Դաւթին և Փիլիպոսին: Եւ ես ամենամեղ և սղալամիտ գծողս Սաճակ սուտանուն քահանայ տեսի զիրգ և զփափագ [սորայ] և տկար անձամբ ի գրել սկսայ։ Եւ ըստ
381բ իմում կարի յանկ հանի և յաւարտ ածի շնորհօք // ողորմութեանն Քրիստոսի։ Եւ արդ՝ գրեցաւ սայ ձեռամբ նոյն տխմար և զառածեալ... Սաճակ մոլորելոյ անպիտան գրչի, յամի ՌՀԲ (1623) թվականի մերում տումարի, և ի հայրապետութեան տեառն տէր Մելքսեդի կաթուղիկոսի սբ. Էջմիածնի: Արդ՝ որք հանդիպիք սմա... յիշեցէք... զստացող սորա զպատուական տանուտէրն զՄեճրաբն, որ ետ գրել զսա իւր զաւակ ըստ հոգոյ...[28]։

382ա Արդ՝ աղաչեմ զամենեսեան, յիշեցէք զբազմամեղ գրիչս և զծնողս իմ՝ զՍտեփանոսն և զՇաճումն, և զկենակիցն իմ՝ զԳօզալաղէն, և զեղբայրն իմ՝ զՅակոբն և զկենակիցն իւր՝ զԳուլպախէն, և զհանգուցեալ զաւակսն՝ զԱւագն և զԳօզալն, և զփոխեցեալ եղբարքն իմ՝ զՍաֆարն և զՈսկանն և զայլ ամենայն արեանառու մերձաւորսն մեր...։ Եւ զաշակերտեալ որդիքս իմ՝ զտէր Նիկողոսն և զՍտեփանոս դպիրն և զԳաւիթն, որ աշխատեցան ի հետ դրոցս և զուսուցիչն իմ՝ զտէր Ներսէսն և զվարդապետն իմ՝ զտէր Յովանէսն Հիզանցի, զորդի տէր Սարգսին: Եւ որ լի բերանով Աստուած ողորմի ասէ, Աստուած իւրն ողորմեսցի. ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ, վասն երկուազգ լինել գրիս, անմեղադիր լինել, զի յորժամ սկսայ գրել զգիրս, և գրեցի զսակաւն, վասն բազում մեղաց իմոց բռնեաց աչք իմ և սաստիկ ցաւեաց բազում աւուրս, և իմ յուսահատեալ և երկեա, զի մի՛ անցցէ ողդայն զոր եդեալ էի ուխտ ընդ խոջա Մեճրաբին և ամաւթով լինիմ ի նմանէ. ետու ըզմնացեալն այլոյ գրչի դրել. և նորա ոչ նմանեցուցեալ իմում գրի։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, անմեղադիր լինել մերում տգիտութեանս. զի կար մեր այս էր...։

[28] Դարձյալ թվում է վերոհիշյալ անձնանունները։

Բ

3ա Տէր Աստուած ողորմեա ստացողի գրոցս Յովանիսին, Հայրապետին և կողակցին՝ Սառային, Խանսուլթանին, և որդոյն Զաքարին և ինձ Սանակ գրչի[29]։

147

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 9147

Գրիչ՝ Զաքարիայ
Վայր՝ Երևան

13ա Փառք...։ Ի թվականութեանս Հայոց տաւմարի ՌՀԲ (1623) գրեցաւ աստուածախաւս մատեանս աստուածահաւրն Դաւթ[ի], որ կոչի Սաղմոսարան, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին, ի յերկիրս Արա-
13բ ռատեան, ի քաղաքս Երևան, ի տեղապահութեան Ամիրգօնայ // խանի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Անանիայի սբ. առաքելոյս, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս տիեզերալոյս և համակ բարի, մեծ[ափ]առ և հեզայհոգի, ճշմարիտ էկլեսիաստէս, երիցս երանեալ հայրս հանուրց իշխաւղ և իշխեցող, պատուական և սրբայսնունդ, հայրապետ և քաղ բայբունապետ տէր Մովսէս վարդապետի։

Արդ՝ հայրք իմ և եղբարք, սակաւ մի ունկն դրէք յիշատակարանիս։ Այս հո[գևոր] հայրս իմ՝ պարոնտէր Մովսէս վարդապետս էր <սա> ի
14ա սբ. և հռչակաւոր ուխտէն Տաթևու։ Կամոք ամենի//այսուրբ Երրորդութեամբն ղաւրացեալ մինչ զի ի յետնեալ ժամանակիս, որ խանգարեալ կայր կարգ, կանոնք և կրաւնք սբ. հարցն։ Մանաւանդ կրաւնաւորքս, որ բնակեալ կայինք ի գեղ և ի քաղաք և ի մէջ կանանց շրջէաք, ի արբենալն, ի մարդայհաճ լինելն, [կեղ]ծաւորութեամբ սնափառել ի մեքենայս հին թշնամոյս և հայրնամարտին սատանայի։ Ո՞ կարէ թուել թէ ինչ այլանման բնութեամբ վարէր ի կամս իւր։ Եւ դարձեալ տղայն որ չէր արժան շրջիլ գետնամիջի իբր ղխրծի, ղարդաբեալ կայր նա ի բեմի, ևս առաւել ես մեղաւք զառածեալ Զաքարիայս։

14բ Սբ. հայրս մեր Մովսէս վարդապետս <սայ>, կարգեաց անապատաւորս ի մերում ժամանակիս։ Սայ բաժանեաց զկրօնաւորս ի յաշխարհական ձևէ և հանդերձէ։ Սայ զկանոնս նախահարցն հաստատեաց՝ զեպիսկոպոսունս, զերիցունս և զսարկաւագունս և զայլ ևթն խորհուրդ եկեղեցոյ մի ըստ միոշէ ուսուցանէր։ Եւ արդ՝ համառօտ ասացից ըստ մեծիմաստին Սաղոմմոնի, որ ասէ «Տուր իմաստնոյն պատճառս, իմաստնագոյն ևս լիցի»[30]։ Հոգևոր հայր վարդապետս զինչ որ ուսուցանէր ոչ թէ բա[31]

---

29 Նման հիշատակարաններ գտնում ենք յուրաքանչյուր գլխի վերջում, էջ 1բ, 8ա, 9ա, 11բ, 13բ 16բ և այլն։

30 Առակք, Թ, 9։

31 Շարունակությունն ընկած է։

148

ԱԻԵՏԱՐԱՆ

ԼԱԺԻ, № B—45 (մանրաժապավեն, Երևան, № 264)

Գրիչ՝ Զիք Ստեփանոս
Վայր՝ Ասպահան

ա

274բ *Փառք...։ // Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, հեզահոգի և աստուածասէր խոջայ* Սաֆարն, *որ եռափափաք սիրով, յաւժար կամօք և սերտ հաւատով ցանկացող եղև այսմ ծաղկաւէտ և վարդափթիթ, կենսաբուխ սբ. Աւետարանիս։ Եւ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան մարգարէին, որ ասէ. «Երանի...»*[32]*։ Վասն այն յուսոյն ետ գրել զտէրունեան Աւետարանս առատ տրիւք, և*
275ա *զարդարեաց մեծածախ // ընչիւք ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյ և ի վայելումն մանկանց Սիոնի, այլ և յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնողացն՝* Ղալանդարին, Ոսկիմէրին. *ամէն։ Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս, և վայելէք յաստուածային բուրաստանէս, և հանդիպիք սբ. Աւետարանիս կարդալով կամ տեսանելով, յիշեսջիք ի սբ. և ի մաքրափայլ յաղօթս ձեր, առաջի անարիւն զենմանն ի ժամ սոսկալի սբ. պատարագին, և լի բերանով Աստուած ողորմի ասացէք և բոլոր հաւատով մեղաց թողութիւն հայցեցէք խոջայ* Սաֆարին, *և կողակցին իւրոյ՝* Եդդիխասին, *և որդոցն՝* Ղազարին, Աղավալէ, Աւետիկին։

բ

275բ *Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, և անպիտանս...*[33] Ստեփաննոս *սուտանուն քահանայ, որ անուամբ միայն եմ, և ոչ գործով։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թուականիս Հայոց ՌՀԲ (1623), ի Շօշ քաղաքս՝* Ասպահան, *ի հայրապետութեան տեառն* Մելքիսեդ *կաթողիկոսի ամենայն Հայոց, և յառաջնորդ մերոյ աթոռոյ սբ. ուխտի Ամենափրկչի վանացս* Խաչատուր *բարունապետին, և թագաւորութեան Պարսից շահ* Ասլասին, *որ բազում յաղթութիւնս արարեալ է ի վերայ երկրի, նման* Աղէկսանդրու Մակեդոնացոյն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան զմանկունսդ սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս, զաւելորդն բառնայք և ըզպակասն լնոյք, և խոջորութեանն, և սխալանացն անմեղադիր լինել, զի
276ա *կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ // զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով անարժանիս Աստուած ողորմի ասիցէք, և մեղաց թողութիւն խնդրիցէք, և ողորմածն Աստուած ձեզ յիշողացդ, և զմեզ առ հասարակ ամենեցուն ողորմեսցի. ամէն։*

---

[32] Եսայ., ԼԱ, 9։

[33] Այսպես մի քանի տող։

Գ

1ա Ազգիս Հայոց թւականին,
Կրկին քառակ ւ երկ հարիւրին,
Եւթանասուն երկու ամին (1623)[34],
Գրեցաւ զգանձս աստուածային։
....[35]

4ա Այս մեկնութիւնս Ժ (10) խորանին,
Համաձայնից սբ. քարոզին,
Չորրորդ գլխոց համակարգին,
Ըստ Եւսեբեայ մեծ պատմագրին։
Ողորմի Տէրն ամենի,
Հոգոյ սորին ստացողի,
Խոջայ Սաֆար Ջուղայեցոյն,
Որ է որդի Ղալանդարին։
Եւ առաւել Եզդիխասին,
Որ ամուսին է Սաֆարին,
Սայ յիշատակ անջնջելի,
Բարի զաւակ հոգոց նոցին։
.....[36]

4բ Այլ և ծընաւղքն Սաֆարին,
Ընդ Ղալանդարն, Ոսկիմէրին,
Ծաղկեալ որդիք և դուստր նորին,
Կենան անփորձ ւ ոչ սասանին։
Ցառաջ Ղազարն անդրանկածին,
Եւ յետ նորա Աղավալին,
Իսկ Աւետիկ կրսեր որդին,
Ամբողջ մնան հաղթից չարին։
.....[37]
Իսկ ես նուաստ անձն եղկելի,
Ձիֆ Ստեփանոս մեղաց գերի,
Անուն ունիմք քահանայի,
Բայց գործով եմ յոյժ աղտեղի[38]։
Որպէս սատարէն ոստայնի,

---

[34] Այսինքն՝ (2×4)×[100]+200+72+551։

[35] Այնուհետև ավետարանիչների, ավետարանի խորանների գովք։

[36] Չորս քառյակ մաղթանք ստացողի հոգու փրկության համար։

[37] Երկու քառյակ մաղթանք։

[38] Սույն չափածոն լրիվ գտնում ենք մեր Մատենադարանի № 4171 ձեռագրում (էջ 347ա—349բ) և ՄՁՀՄՍ, II-ում (№ 37, էջ 116—118)։ Իսկ Զմմառում (№ 485, էջ 79), «ՀԱ»-ում (1947 թ., էջ 121), «Սիոն»-ում (1963 թ., էջ 14), ՄՁԲՊ, V-ում (№ 1462, էջ 177), VI-ում (№ 1798, էջ 153) և «Հայկազեան հայագիտական հանդէս»-ում (Դ. 1973 թ., էջ 173) գտնում ենք չափածոյի սկզբի և վերջի քառյակները։ Վերևում նշված հրատարակություններում և № 4171 ձեռագրում (էջ 347ա) պահպանվել է «Յիշատակարան Աւետարանի արարեալ յոգնամեղ Ստեփանոս իրիցէ Ջուղայեցւոյ որդի Ստեփանոսի» խորագիրը։ ՄՁՀՄՍ, II-ում հիշատակարանի տարեթիվը 1623-ի փոխարեն հարցականով նշված է 1380 թ.։

Որ որս առնէ նա մժղկի,
Տարեալ ի յորշ իւր կերակրի,
Բայց պիծակաց նայ պատառի։
ծա Այսպէս և ես նոյն աւրինի,
Կամիմ որսալ ինձ յագելի,
Բայց թշնամին որ ի գաղտնի,
Զիս պատառէ անբուժելի։

Դ

Ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

276ա Եւ առաւել յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զանարժան Մեսրոպ դպիր Խիզանցի, ծաղկող սորա, որ բազում աշխատութեամբ ծաղկեցի և զարդարեցի ոսկով և լազուարդով և երանի երանի գեղերով, ի վայելումն մանկանց սբ. Սիոնի։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, որք հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զանպիտան Մեսրոպ դպիրս, և զհոգևոր վարդապետսն իմ՝ նախ տէր Սուրգիսն որ մականուն Մազման կոչի, և զմիուս վարպետաց վարպետն զտէր Մարտիրոս Խիզանցին. և զմարմնաւոր ծնողսն իմ՝ տէր Մարտիրոս և զխոնդքարն. և զեղբարքն իմ՝ տէր Թադէոսն և զՊարսամն, և զքուերքն իմ՝ Աննայն և զԴեղծուն, և զամենայն արեան մերձաւորս յիշեցէք... և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միուս անկամ գալըստեան. ամէն։

149

ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան «Ընշխարք» հտ. Ա, № 708. տե՛ս նաև № 6273, էջ 396ա

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Թէֆիրտաղ

200ա Փառք... որ զօրացոյց... զԱստուածատուր գրիչ... յաւարտ հանել զսբ. Աւետարանս...։ Արդ՝ զրաւ եղև սա ի թուականիս Հայոց ՌՀԲ (1623)ամին, ի քաղաքս Թէֆիրտաղի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին և Ս. Թադաւորին[39]։

150

ԱՒԵՏԱՐԱՆ (ժամանակ?)

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք» հտ. Ա, № 709. տե՛ս նաև № 6273 էջ 402 ա

Նորոգող՝ Աստուածատուր երէց

200ա Արդ՝ յիշեցէք... զվերջին նորոգող սբ. տառիս... Աստուածատուր Երէցս, և զԲարունակ դպիրն, որ ետ վերստին նորոգել ի վայելումն վասն

[39] Մագիստրոսի ծուցակում 2349 համարի տակ պահվել է հետևյալ հիշատակարանը. «Եղև զրաւ ի թվիս Հայոց ՌՀԲ (1623), ի գիւղաքաղաքիս Թէֆիրդաղի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին և Ս. Թագաւորին /// Գրիգորն... ետ գծագրել... յիշատակ իւրոյ և որդոյն՝ Սահակին, և իւր ծնողացն՝ Կուլասարին, մօրն՝ Կուլպնարին, և քուրոջն՝ Շանենազարին (Աւետարան, II, էջ 1337)։

իւր, ի թուին ՌՀԲ (1623), ի դառն ժամանակիս, որ զօրացեր է ազգն իսմայէլացւոց, և յոյժ նեղինք ի ձեռս սոցա, մանաւանդ ազգն Ցունաց, որ զաւակաժողով ել այս ամիս, յոյժ կու չարչարեն զնոսա, վասն ծովացեալ[40] մեղաց մերոց։

151

ԱԻԵՏԱՐԱՆ (1425 թ.)

Ղ. Փիրղալեմյան «Ընչխարք», հտ. Բ, № 482

Կազմող՝ Ստեփանոս վարդապետ

403 Զվերջին նորոգող սբ. Աւետարանիս զհեզահոգի կրօնաւորն տէր
404 Խաչատուր, որ բազում ամ ծառայութիւն արար ի դուռն կենդանակիր // սբ. պատկերին Տիրամօր, աւելի քան զյիսուն երկու ամ, և դեռ ևս կայ, և շատ արդիւնք արար ի վանքս[41]։ Եւ յետ ամենեցուն զչաղացն շինեաց և Աւետարանս ետ նորոգել յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոց, հօրն՝ Սմբատին և մօրն՝ Շամամին...: Եւ կազմեցաւ ՌՀԲ (1623) թուին ձեռամբ Ստեփաննոս վարդապետի և Սահակ աշակերտի, և աղաչեմ...

152

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Մագիստրոս № 257. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան «Ընչխարք», հտ. Ա, № 706, էջ 199բ

Ա

164 Փառք... Արդ՝ [Դաւիթ] խաչընգուս կրօնաւորն...եղև ցանկացող... յաղագս փրկութեան հոգոյ իւրոյ, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն իւր՝ Թաթոսին և մօրն իւր[42] և որդոց իւրոց Գրիգոր կրօնաւորին և Կարապետ քահանային և Յովանէս դպրին և Դանիէլ հողագործին...

Բ

Ստացող՝ Դաւիթ քահանայ

Վայր՝ Տաթև

Արդ՝ ես Դաւիթ քահանայս սիրող եղէ և ետու գրել զտառս աստուածային ի վերծանութիւն սքանչելիաց...։ Արդ՝ գրեցաւ տառս ի յաթոռս Ստաթէի սբ. առաքելոյն և ի Ս. Աստուածածնին և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ ինն հազար և ՃԾ (9800) սրբոց ի պահապան ամենայն քրիստոնէից։

Արդ՝ ես Դաւիթ քահանայս յոյժ փափագանօք ետու գրել զԱյսմաւուրքս ի հալալ և յարդար ընչից իմոց, զի կացցէ ի դրան սրբոյ աթոռոյս...։ Եւ արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՌՀ և Բ (1623) որ և հրամանակցութեամբ նորին զտէր Արիստակէս գրոց աշակերտի վերակացութեամբ սբ. գրոցս...[43]։

---

40 Ձեռ-ում «ծողացեալ» ձևով։

41 Ղ. Փիրղալեմյանը ճշտում է, թե «Հոգոց վանից հետն է»։

42 Անվան փոխարեն բազմակետեր։

43 Սույն հիշատակարանը բերված է նաև Ղ. Փիրղալեմյանի, «Ընչխարք»-ի Ա հատորում այս բովանդակությամբ. «Փառք...։ Արդ՝ գրեցաւ տառս ի յաթոռ Ստաթէի սբ. առաքելոյն և ի Ս. Աստուածածնին, և այլ սրբոց որ աստ կան հաւաքեալ ինն հազար և ութ հարիւր սրբոց ի

153
ԱՍԿԵՓԱՐԻԿ

Երուսաղեմ, № 642 (մանրաժապավեն, Երևան, № 417). տե՛ս նաև Մ3ՁԵԳ, III, № 642, էջ 59

Գրիչ, ստացող՝ Ամերշայ Հալապլի
Վայր՝ Վենետիկ

ա

14 *Զիղկիլի գրիչս* Ամերշայ Հալապլի *յիշիցէք և զծնաւղսն մեր, ո՛վ սբ. եղբարք, յիշեսցիք միով Տէր ողորմեայ...*[44]։

բ

16 *Քրիստոս Աստուած ողորմեայ։ ստացողի դրոցս* Ամերշայ *սարկաւագիս և ըղծնաւղսն մեր յիշիցէք...։*

գ

115 *Փառք...։ Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ Ոսկիփորիկս, ի Վանատեկ քաղաք, ի դուռն և ի տաճարն Ս. Մարկոսի աւետարանչի, աջողութեամբ Ս. Աստուածածնին և Ս. Ստեփանոսի Նախայվկային, և աղաւթիւք սբ. Լուսաւորչին և ամենայն սրբոցն։*

Արդ՝ աղաչեմ, ով եղբայրք գամենեսեանսդ, որք հանդիպիք սմայ տեսանելով կամ աւրինակելով, մեղայպարտ գրչիս Աստուած ողորմի հրամայեցէք, և Աստուած ողորմի ձեր հոգուք և ձեր ննջեցելոցն. ամէն։

Զի եմ յետնեալ ամենայնի,
Ի բարեաց թափուր եմ ւ եղկելի,
116 *//Ոչ ունելով զիմաստ բանի,*
Ես Ամերշայ Հալպցի:
Զի զիս ի բարի ի գործոյն եմ յոյժ հեռի,
Մեղաւք լցեալ ազգի ազգի,
Չունիմ մի մասն ի բոլորի,
Գոչեմ առ ձեզ արտասուալի։
Ո՛վ հանդիպողք ի յայս տիղի.
Խնդրեմ ի ձէնջ հառաչելի,
Հոգացեալս ի գերեզմանի,
Ով ոք որ զիս յիշել կամի,
Արժան առնէ Հայր մեղայի,
Ի Քրիստոսէ ինքն յիշեսցի. ամէն։

պահպանութիւն ամենայն քրիստոնէից... ի թուականիս Հայոց ՌՀԲ (1623), հրամանակցութեամբ նորին տէր Առիստակէսի գրոց աշակերտի, զոր Տէր տացէ զնա ի հաստատութիւն վարդապետութեան իւրոյ մինչև ի խորին ծերութիւն, ձեռամբ Յօհաննէս քահանայի անարհեստ գրչի, և առատաձեռնութեամբ Խաչիք խաչընդուտ կրօնաւոր քահանայի...»։ Այս Հովհաննես քահանան հետագա ստացողն է՝ Աստապատեցի, որ ձեռ-ը գնում և նորոգել է տալիս 1721 թ.։ Այդ պատճառով էլ այստեղի դ և դ հիշատակարանները չվերցրինք, իսկ Փիրղալեմյանը նշված հիշատակարանների համառոտ բովանդակությունը վերաշարադրել է վերևում բերված հիշատակարանների հետ։

[44] *Կան նման հիշատակարաններ որոնք ծուցակում չեն բերված։*

Եւս առաւել յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր և զստացող գրոցս Ամերշա *սարակավաքիս, և զիւր եղբայրքն՝* Սաֆար *և* Նամէ, *և զքիւրն՝* Մարիամն *և զծնաւղսն՝* Ակոբին *և* Աղուն, *և զամենայն յարեան մերձաւորաց. ամէն։ Գրեցաւ սբ. Ոսկիփորիկս ի թուականութեանս Հայոց ՌՀԲ (1623), ձեռամբ իմոյ յոգնամեղ, փծուն գրչս՝ սուտանուն* Ամերշայ *սարկայվաքիս, յիշեցէք...։*

դ

118 *Ով երգեցող պատուական եղբայրք, անմեղայդիր լերուք գրուս սղալանացն և խոշորութիւնն, զի ժամանակս ցուրտ էր և ձմեռ էր։ Գրեցաւ թուականութեան Հայոց ՌՀԲ (1623), ժամանակս սուլթան տարոիշ* Մուսաաֆայ։

ե

Զանպիտան և զփցուն գցողս Ամերշան *սարկաւաքիս և զծնաւղսն իմ, ո՛վ եղբարք, յիշեսցիք միով Տէր ողորմայիւ, և Քրիստոս ճշմարիտ Աստուածն զձեզ յիշէ յիւր ողորմութիւնն, և ինձ գործոց թափուր և ունայն ե գարտակ ամենայն <ամենայն> բարեաց, գծող գրչիս* Ամերշա Հալապլի, *և կարդացողաց, և լսողաց ամենայն։*

զ

Որ ողորմի ստացողի գրոցս քրիստոսասէր Սաֆար *և* Նամի *և* Մարիամին, *և ծնողացն իւրոց՝* Ակոբին *և* Սթլախվին *և ամենայն յարեան մերձաւորացն. ամէն. և ինձ մեղսայմակարդ գրիչս* Ամերշա *սարկաւաքի*[45]։

154

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 239

Գրիչ՝ Մեսրոպ Խիզանցի
Վայր՝ Շօշ

ա

370 *Փառք...։ Արդ՝ զայս լուեալ հաւատարիմ, և իմաստուն, և հոգևոր աստուածասէր, և աղքատասէր, և բարեկրօն քրիստոնեայն՝ մահդասի* Ամիր Սարգիսն, *ցանկացող եղեալ աստուածային տառիս այս, և ի բարեխօսութիւն սրբոցս, որք հաւաքեալ կան ի սմա, ի միտս առեալ զբանն Եսայեա, որ ասէ. «Երանի...»*[46], *ետուն գրել զպատմութիւն սրբոցս, որ հաւաքեալ կան ի սմայ, յիշատակ հոգոց իւրեանց և ծնողացն, հօրն՝* Միրզայչանին, *և մօրն՝* Ուստիանին, *և եղբարցն՝* Վէլիչանին, *և կողակցին՝* Օղլանին, *և որդոյն՝* Բարեղամին, *և դստերն* Ոսկիաատին, *և որդոցն կանանցն՝* Խոռոմսիմին, *և միուս* Ղոչեանին, *և որդոցն՝* Վարդան[ին]///։ *Եւս առաւել* Սիամոնին, *և կողակիցն՝* Ասանեթին, *և որդոցն՝* Խաչատուրին, Մալումչանին *և* Գալուստին, *և դստերն՝* Սիրդուխտին, *յի-*

[45] *Մանրաժապավենում ձեռ-ի էջահամարները չեն երևում, ձեռ-ն անհայտ է նկարահանված։ ա—դ հիշատակարանների ձեռ-ի էջահամարները նշել ենք ըստ ցուցակի, իսկ վերջին՝ ե, զ հիշատակարանները ցուցակում չեն բերված, վերցրինք մանրաժապավենից, ուստի էջահամարները չեն նշված։*

[46] Եսայ. *ԼԱ, 9։*

շեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Ամիր Սարգիսն *և զմեծ պապն իւր՝* Տաթլիփաշէն, *և զխանիկն՝* Գանջումն, *և որդիք իւրեանց ||| [քա]զաքս* Շաւ[շ] *||| ձեռամբ տգ[ետ] գրչ[ի]* Մեսրոպ *||| Ռ և ՀԲ (1623) ամի, ի հայրապ[ետութեան] տեառն տէր* Դաւիթ *կաթողիկոսի, ի թագաւորութեան Պարսից [շահ* Աբ]ասին, *որ բազում չարիս եղև ի ||| գրելն, [որ] ոչ կարեմ պատմել, և ||| գրով արկանել, աւելի քան ||| գիւղ բռնութեամբ տաճկացոյ[ց] ||| Աւետարան, և այլ գրքեր աւար |||եր, և մեծ վնաս եղև ազգիս Հա[յոց], դեռևս կայ այնպէս, և զապագայն Աստուծոյ է դիտելի, թէ զինչ լինի։*

*Եւ արդ՝ կրկին անգամ աղաչեմք զպատուական ղհայրդ իմ և զեղբայրքդ, զի յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զ*Մեսրոպ Խիզանցի[ս], *որ բազում տառապանօք ի յար և ի յաւարտ հասուցի զսբ. գիրքս օգնականութեամբ ամենազօրին Աստուծոյ։ Եւ աղաչեմ, զի առանց ձանձրանալոյ ասացէք Աստուած ողորմի մեղապարտ գրչիս, որ զանուն ունիմ և ոչ զգործս, և ծնողացն իմոց՝* Մարտիրոս *քահանային և* Խոնդքարին, *և եղբարցն իմոց՝ տէր* Թադէոսին, *և* Պարսամին, *և քուերցն իմոց՝* Աննային *և* ՏԵզծունին, *և որդոց իմոց* Մարտիրոսին, Գրիգորին *և* Թադոսին, *և դստերացն՝* Նուրխանին *և* Վառվառին *յիշեցէք ||| մականուն* Մազ[ման], *միուս վարպետաց վար[պետ] |||* Մարտիրոս Խիզան[ցին]*||| որդին իւր՝ զտէր* Գրիգորիսն, *[որ բազում] աշխատանք ունին ի վերայ [գրքիս] ||| արուեստս յայս, թէ գիր և [թէ ծա]զիկս, և յայլ արուեստս, յի[շեցէք]...։ Եւս առաւել ղբարեմիտ և զաստուածասէր, խոնարհ և հնազանդ զտէր* Մարտիրոսն *և զտէր* Էլէքսանն, *որ միշնորդ եղեն բարեաց այս տառ[իս], և զեղբայր միայրան քահանայիցն Ս. Աստուածածնին, և զՍ. || Կարապետին, և զՍ. Յակոբին զտէր* Մարտիրոս *աւագ երէցն,*

731

նին, և զՍ. || Կարապետին, և զՍ. Յակոբին զտէր Մարտիրոս *աւագ երէցն,*
Մաթոսն, *զտէր* Գրիգորն, *զտէր* Դաւիթն, *զմիուս տէր* Գրիգորն, *և զայլ միաբան սբ. եկեղեցոյն, որք խնամք տանեն և լաւ պահեն ի հրէ և ի ջրէ....*

Դարձեալ յիշեցէք Բօնեվանքուրն *և կողակիցն իւր՝* Դիշխունն...։ *Դարձեալ յիշեցէք զմահդասի* Բարսղամն, *և զկողակիցն իւր՝* Ասկիմէրն, *և զորդին՝ Հայրապետն,* Գալուստն, Աղամալն, Դաւութն, Խանզադէն, Գուլնաբաթն, *և* Յակոբջանն։

Բ

Յիշեցէք ի Քրիստոս Աւետիքն, *մամ՝* Զիփիրէն, Վարթէրն, Օվանէսն, Մկրտիչն, Օթանասի[ն], Միրզաջանին, Վէլիջանին, Օղլանին, Խոսրովսիմին, Ըռէնանին, Տաթլիփաշէն, Գանջումն, Բաբաջանն։

Գ

Սիմոն *եղբայրն,* Շուշանն, *զտէր* Գրիգորն, Մուրատն, *զքուերքն իւր՝* զՇահնազարն։ *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* զՕղլանն *և զծնողսն իւր՝* Օմէտն, զՂազարոսն, *զորդին* Մարգարէն, *և դստերքն՝* Խանում, զՇահիխաթուն, *և* Խէրադին։

155

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ[47]

ՏԵՐԱՎՋ, № 492

Գրիչ՝ Սիմոն Ջուղայեցի
Վայր՝ Ասպահան

ա

762 Փառք...։ ...առ ըստացումն աստուծային տառիս և ամենալիր ծաղկաւէտ բուրաստանիս՝ Հարցման գրոցս ցանկացող եղայ, և ես Սիմոն երէցս գրեցի, յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղաց իմոց. ամէն։ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, և անպիտանս, և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, բազմամեղս և անիմաստս ի դիրս գրչութեան, և յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ Սիմոն Ջուղայեցի սուտանուն քահանայ, որ
763 անուամբս եմ միայն և ոչ գործով։ Շնորհիւ Տեառն և ողորմու//թեամբ նորին կատարեցի զգիրքս, որ կոչի Հարցմանց մեծ հռետորին Գրիգորի, ի մեծ թվականիս Հայոց ՌՀԲ (1623) ամի, ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին, և առաջնորդութեան մերոյ գեօղիս Ջուղայոյ Խաչատուր վարդապետին, խաւջայ Նազարին, գրեցաւ և աւարտեցաւ գիրքս այս. վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զՍիմոն մեղաւորս, և Աստուած յիշողացդ ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

բ

Փառք...
Ազգիս Հայոց մեծ թվական,
. . . . . .[48]
764 Բա[յ]ց գործով եմ նմանեալ շան,
Ջարօք լցեալ բարեաց ունայն,
Եւ գիշակեր խոզի նման,
Ի մէջ տղմի կամ թաւալման։
Գերանն ի յաչս որպէս հեծան,
Ի յետ շիւղից շրջիմ մարդկան,
Ոչ զարհուրիմ յահէ մարդկան,
Եւ ոչ յիշեմ զդատաստան։
Բա[յ]ց դու Տէր իմ գթածական,
Խնայեայ ի գինս քո սբ. արեան,
Ցորժամ գա[յ]ցես ի դատաստան,
Քո սբ. տեսոյդ արայ արժան. ամէն, եղիցի։

---

[47] Այս ձեռ-ը բաղկացած է երկու մասից, առաջին մասը ընդօրինակված է 1623 թ., երկրորդը՝ 1650 թ. տարբեր անձնավորությունների կողմից։ Երկրորդ մասի հիշատակարանը տե՛ս 1650 թ. շարքում։

[48] Այս չափածոն նույնությամբ վերցված է № 84 հիշատակարանից։ Շարունակությունը Սիմոն գրչինն է։

Գ

Ո՛վ մաքրամիտ ուսումնասէրք և անձանձրոյթ վերծանողք, լուսաւոր մանկունք սբ. եկեղեցւոյ, յորժամ մտադրութեամբ և եռանդնոտ փափագանաւք ընթեռնուք զսբ. գիրքս, որ կոչի Հարցմանց, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զՍիմոն անարժան էրէցս, որ անուամբս եմ և գործովս ոչ։ Գրեցի Հարցմունքս, յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոց, հօրն իմոյ՝ Աղազարին և մաւրն իմոյ՝ Բեկումին, և հանգուցեալ ի Քրիստոս եղբայրցն իմոց՝ պարոն Զինէ, Աղտիբաբէ, Պարոնդատին, Յովանին, և որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

156

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Մ8ԶԵԹ, II, № 312

Գրիչ՝ Կարապետ քահանայ

ա

166 Փառք ...։ // Զոր լուեալ Յովանէս վարդապետն գՔրիստոսի մարմնաւոր տնաւրէնութիւն որ արար վասն մեր և ուսոյց մեզ զապաշխարութիւն ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, վասն որոյ ետ գրել զսա ի հալալ յարդեա[ն]ց իւրոց և յարդար վաստակոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց։ Եւ ես տեսեալ զյաւժար կամք նորա և զսէրն որ առ Աստուած, առեալ գրեցի ի դրունս Ս. Յովաննու Մկրտչին և Ս. Գէորգեայ զաւրավարին, ձեռամբ յոգնամեղ և ախտամած միշտ ի չար Կարապետիս, ի թուականութեան Հայոց ՌՀԲ (1623)...[49] տառս որ կոչի Քարոզգիրք, յանուն Յովանէս վարդապետին, զոր տէր Աստուածն մեր ընկալցի զսա և ընդունելի արասցէ, որպէս զընծասն թագաւորացն մոգուց, որք մատուցին տեառն Յիսուսի, ի յոգի և ի մարմին Յովանէս վարդապետին և ծնաւղաց նորին՝ տէր Յովհաննէսին և Հոիփսիմին, և եղբարցն՝ տէր Հայրապետին և Սուքիասին. ամէն։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք սբ. գրոցս, յորժամ կարդայք և կամ աւրինակէք նա, լի բարանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք Յովանէս վարդապետին և հոգևոր ծնաւղացն...[50] քաշ և արի վարդապետին, որ բազում աշխատեաց ի վերա...[51], և որ ասէ նոցա զԱստուած ողորմին, միոյն Ռ (1000) առցէ ի Քրիստոսի դատաստանին. ամէն։

Կրկին անգամ աղաչեմ և առ ոտս ձեր անկեալ համբուրելով ժտեմ, որ հաւասով և հաւաստեաւ ամենեքեան քահանայք և վարդապետք, որ յորժամ տեսանէք և կարդաք և կամ հարաւանցիկ հայիք, զԱստուած ողորմին ասացէք Յովանէս վարդապետին և ծնօղաց նորին՝ տէր Յովանէսին և Հոիփսիմին, և եղբարցն՝ տէր Հայրապետին, և Սուքիասին, և Գրիգորիսին, և քրւերն՝ Հումարին և Հանումին, և հորեղբարցն՝ Թաթոսին և կնոջն՝ Ինախին, և Մարգարին և կենակցին՝ Սալամին, և Խլղ[ա]թին և կենակցին՝ Սալամին, և տէր Հայրապետին և կնոջն՝ Մարգրտին, և Սու-

[49], [50], [51] Ցուցակում որոշ բառերի և անունների տեղերը բաց են թողնված։

Բ

Բիսսին և կնոջն՝ Ինախին, և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն[52]։

Զանարժան գրիչս և զպիտակ անուն Կարապետս և զՅովաննէս վարդապետն յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Գ

Զարագս ի չարիս,
Եւ զծոյլս ի բարիս,
Զկարապետ գծող գրիս,
Զթշուառական և եղկելիս,
Աղաչեմ՝ զձեր գերիս,
Որ դուք յիշէք զիս ի բարիս,
Բանիւ ասէք ինձ ողորմիս,
Թողուք զմեղս յանցաւորիս։

Դարձեալ յիշեցէք զՅովաննէս վարդապետն և զքաջ ըարունապետն նորա՝ զՅովսէփն, յիշեցէք...։

Դ

Զկարապետ գրիչս ի կարգէ քարոզողաց, աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. հան-
167 դիպողք, յիշել ի Տէր և Աստուած զձեզ յի//շէ։ Այլ և զՅովաննէս վարդապետն և զրարունապետ նորա զՅովսէփն. ամէն[53]։

Ե

Գրիչ՝ Յոհան

Զքարացեալ սիրտս և զխաւարեալ հոգիս, և զզսուռածեալ միտս ի չարիս և զհեշտասէր մարմինս կակզացոյ և լուսաւորեայ, և դարձոյ ի պնդակազմ առաքինութիւն, քո ամենակարող զօրութեամբդ Քրիստոս Աստուած, զՅոհան սուտանուն գրիչս. այլ և զՅովաննէս վարդապետն և զՅովսէփ վարդապետն պարագլուխ և պարակից արա սբ. վարդապետացն յաւուրն ահեղին. ամէն։

Զ

Բարեսէր և մարդասէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, զքո զառատ ողորմութիւնդ արայ առ Յովաննէս վարդապետն, ընդ նմին և զՅովսէփ քաջ ըրարունապետն, այլ և զսուտանուն Յոհան գծողս. ամէն։

157

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Մ8ՁԵԳ, III, № 971

Գրիչ՝ Ստեփանոս քահանայ

Ա

646 Զմեղաւոր Ստեփանոս սակաւ գծողս և ստացողս յիշեցէք ի Քրիստոս։

[52] Սույն ձեռ-ը լրացվել է հետագայում, այլ գրչի կողմից, վերջինիս հիշատակարանը տե՛ս 1681 թ. շարքում։

[53] Նման բովանդակությամբ երկու հիշատակարան էլ կա, չվերցրինք։

Բ

547 Ո՛վ սբ. ընթերցողք, յիշեսջիք // յարժանաւոր աղօթս ձեր զստացող սբ. Հարանց վարս, զմեղսաքաւիչ քահանայն տէր Ստեփաննոս /// կրօնաւորն՝ հանդերձ ծնօղիւք և ամենայն զարմիւք...։

Գ

Մաղկող՝ Կիրակոս

[Ան]արժան ծաղկո[ղ]ս զԿիրակոս:

Դ

Կազմող՝ Դանիել Վարագեցի

548 Դանիէլ կազմող Վարագեցին,
Մեղօք լցեալ և աղտեղին,
Ով ոք ասէ ինձ ողորմին,
Աստուած յիշէ զ[ի]նքն ի բարին։

Արդ՝ կազմեցաւ սբ. Հարանց վարքս ի թվին Հայո[ց] ՌՀԲ (1623)։

Ե

Գրեցաւ և կազմեցաւ սբ. գիրքս որ կոչի Վարք սբ. հարանցն, ի թվականիս Հայոց ՌՀԲ (1623)-ին։ Եւ է գիրքս այս յիշատակ սբ. Երուսաղիմայ, ի դուռն Ս. Յակոբայ։ Յիշեսջիք ի Քրիստոս զստացող սորայ զտէր Գրիգոր սբ. Երուսաղիմայ հայրապետն, և լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք, զի բազում երախտիս ունի ի վերայ վիճակիս Հայոց։

Զ

Ստացող՝ Գրիգոր արքեպիսկոպոս
Վայր՝ Երուսաղէմ

Ես՝ տէր Գրիգոր արքեպիսկոպոս սբ. Երուսաղէմի, ի վիճակիս հայկազեան սեռի, աթոռակալ սբ. դամբարանի և գլխադիր Յակոբայ սբ. առաքելոյն, ըստացայ զսբ. գիրքս զայս, որ կոչի Հարանց վարք, և եղի յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ աստուածաբնակ ուխտին, յիշատակ հոգոյ իմոյ և ամենայն իմոց զարմից, ի վայելումն աստուածասէր եղբարց բնակչաց սբ. ուխտիս, զի անխափան և անարգել ընթեռնուցուն և օգտին ի սմանէ և գտցեն փրկութիւն։ Ով ոք վասն ագահութեան ծախիցէ զսա առանց հրամանաց Երուսաղիմայ առաջնորդին կամ գողանայցէ՝ կցորդի անիծիցն Կայենի։

158

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՅԶԵԳ, III, № 996. տե՛ս նաև Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Գ, էջ 1060

Գրիչ՝ Կարապետ աբեղայ
Վայր՝ Խիզան

598 Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, սրբասէր, և հեզահոգի, և աստուածասէր Դաւիթ եպիսկոպոսին

եռափափաք սիրով, յաւժար կամաւք և սերտ հաւատով, ցանկացաւղ եղեալ այսմ ծաղկաւէտ և վարդապթիթ, կենսաբուխ սբ. Աւետարանիս, և ըստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան մարգարէին որ ասէ. «Երանի...»[54]։ Վասն այն յուսոյն ետ գրել զտէրունեան Աւետարանս,
599 առատ սրտիւք, և զարդարեաց մե//ծածախ ընչիւք, ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյ, և ի վայելումն մանկանց Սիոնի։ Այլ և յիշատակ բարի, հոգւոյ իւրոյ ե ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Սարգսին, և մաւր, և եղբարցն, և ազգականացն և զաւակաց նոցա՝ ուստերաց և դստերացն ամենայն, և այլ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս...Աստուած ողորմի ասացէք, և բոլոր հաւատով մեղաց թողութիւն հայցեցէք Դաւիթ Վիրապեցի եպիսկոպոսին, հաւրն՝ Սարգսին, և մաւրն, և ամենայն վերոյ դրելոցս ի սմա։ Եւ ողորմածն Աստուած ամենեցուն առ հասարակ ողորմեսցի. ամէն։ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, և անպիտանս, և անարժանս... Կարապետ սուտանուն խաբեբայ և ոչ աբեղայ, որ անուամբ միայն եմ և ոչ գործով։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թւականիս Հայոց Ո Ն ՀԲ (1623), ի յերկիրս Խիզնա, ընդ հովանեաւ ամենասուրբ Նշանիս և նշխարաց սրբոց Հռիփսիմեանցն որ աստ եդեալ կան։ Աստուած ողորմի ասացէք Դաւիթ Վիրապեցի եպիսկոպոսին և հաւրն և մաւրն։ Ի հայրապետութեան տեառն Էջմիածնին տէր Մելքիսէթ կաթողիկոսի, և Ալթամարայ տէր Ստեփանոս կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի մերոյս պարոնութեան Միր Հասանին։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս, զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեանն և սխալանացն անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի դետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով անարժանիս Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրիցէք ինձ և ծնաւղաց իմոց Վարդանին, Գուլիստանին, և եղբարցն՝ Ամիրզատին, Յովանիսին, Խազարբէկին, և եղբորորդոյն՝ Վարդանին, ամէն։ Եւ զհոգևոր հարքն իմ՝ զտէր Ղազար կրաւնաւորն և զտէր Գրիգոր, վանից հայր զՈվսէփ եպիսկոպոս, զՆերսէսն վարպետ, և զտէր Միքայէլ քահանայն, և զեղբարակիցն իմ՝ զտէր Ներսէսն և զտէր Սահակն, որ յայս ամի զտրտմութիւնս իմ նոքա մխիթարէին։ Եւ զմիաբանք սբ. ուխտիս զմահդասի տէր Մարգարէն, և զմիւս մահդասի տէր Արսէն, զտէր Ներսէս, զտէր Գրիգոր, զտէր Յովանէս, զտէր Մխիթար, զտէր Խաչատուր և զտէր Յակոբն, որ մահտարաժամ փոխեցաւ առ Աստուած։ Եւ խրատատողաց մերոց և ամենայն արեան մերձաւորաց մերոց՝ կենդանեացն և հանգուցելոցն. ամէն։ Եւս առաւել այնոցիկ որ ի վերայ մեր աշխատանք և երախտիք ունին, և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն. ամէն։

Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Խաթուն, Աստուած զիւր մեղք թողու յաւուր դատաստանին. ամէն...։

---

[54] Նույ., ԼԱ, 9։

159
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Մշբեղ, V, № 1651

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Բաղէշ

ա

479 *Փառք...։ Արդ՝ դրեցաւ լուսալի և նորափթիթ տառս աստուածընկալ, որ է երգ Դաւթի մարգարէի և բանք սրբոյն Ներսէսի Կլայեցւոյ, ի քաղաքիս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսին և կենսատու Ս. Նշանիս, որ Կարմիր Ակ վերակոչի, ձեռամբ մեղապարտ Գրիգոր երիցու, ի թվականիս Հայոց ՌՀԲ (1623) ամին, ի խնդրոյ տէր Սահակ կրաւնաւորի, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց. ամէն։*

բ

Ծաղկող՝ Սահակ

[Զ]սաացող Սաղմոսարանիս զտէր Սահակ բարի և հաւատարիմ կրաւնաւորն յիշեցէք ի Քրիստոս, որ ետ զսա գրել ի յարդար վաստակոց իւրոց, և ետ յիս ի մեղսամած Սահակս ծաղկել և ոսկէզաւծել յիշատակ իւր և ծնօղաց իւրոց Յակոբին և Մարիամին, և եղբաւրն՝ Սառուխանին և Սաաղին և քրւերն՝ Թագուհին։

Արդ՝ որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ և յերկնաթռիչ աղաւթս ձեր զտէր Սահակ Շատախցի աբեղայն, ի դեղջէն որ կոչի Ջնուկ, զիմաստուն և զխոհեմ կրաւնաւորն և զբարի ծնօղքն իւր...[55]*։ Գրեցաւ և ծաղկեցաւ Սաղմոսարանս ի ՌՀԲ (1623) թվականին, ի վայելումն Սահակ կրաւնաւորին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։*

160
ԱՒԵՏԱՐԱՆ
ՀԶՎ, I, № 145 (1477 թ.)

Նորոգող՝ Սիմէոն սարկաւագ
Վայր՝ Բալու

628 *Փառք...։ Արդ՝ նորոգեցաւ սբ. Աւետարանս ի .քաղաքն Բալու, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի յառաջնորդութեանն տէր Սիմէոն արհի*
629 *եպիսկոպոսին և ի//սորին սպասաւորին տէր Սահակն, տէր Աւետիսն և տէր Ղուկասն, ի թվին ՌՀԲ (1623), ձեռամբ անարժան Ռասլաւցի Սիմէոն սարկաւագի, որ մականուամբ Սառուխան կոչեն, որ զանունս ունեմ և գործս ոչ։ Ո՜վ դասք քահանայից, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զբարեմիտ և զաստուածասէր պարոն դարբին Ալաճանն, որ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոցն իւր, ետ ի նորոգել և եդ ի դուռն Բալուայ Ս. Աստուածածնին, իւր հոգոյն և իւր ծնաւղացն՝ Առաքելին և մօրն՝ Թասուիին, և իւր եղբաւրն՝ Պասլանանին, և իւր հանգուցեալ կողակցին՝*

[55] Դարձյալ թվում է վերևում հիշված անունները։

Մանպուպին, և կենդանի կողակցին իւր՝ Խաթունին, և միուս հանգուցեալ
630 //կողակցին իւր՝ Թալապշին և ամենայն արեան մերձաւորացն, լի բերանով Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմի. ամէն։

Եթէ ոք յանդգնի հանէ զսա ի Ս. Աստուածածնի դրանէն, կրաւէ կամ ծաղէ՝ զմասն Յուդայի առց[է] և զանէծսն Կայենի և ընդ խաչողսն լինի. ամէն։

161
ԱԻԵՏԱՐԱՆ
ՈՁՄՎ, № 787 (1460 թ.)

Նորոգող՝ Միքայէլ
Վայր՝ Համիք

340 Յամի ՌՀԲ (1623) թուին նորոգեալ կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղապարտ Միքայէլի գրչի, ի մայրաքաղաքս Համիք։ Որ ստացեալ էր զսա Ջուղայեցի խաւճայ Սաֆարն և բերեալ ետ վերստին նորոգել յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հաւրն՝ Պաղոսին և մաւրն՝ Տալվաթկուլին, և եղբարցն, ի Քրիստոս փոխեցելոցն՝ Պետրոսին, Ծաւուրին և Ազարին և հանգուցեալ կողակցին՝ Ուսաիանին և կենդանոյն Շուշանին։ Եւ քվերցն՝ Ամանփարուն և Կատարինին, և որդոյն իւրոյ՝ Աւետիքին, և դստերն՝ Ոսկէմերին, և ամենայն արեան մերձաւորաց նորին...։

162
ՀԱԻԱՔԱՄՈՒ
ՈՁՄՎ. № 976

Գրիչ՝ Մկրտիչ երէց

563 Ո՛վ ընթերցողք և ուսումնասէրք յիշեցէք գնենգաժուտ[56] գծողս[57] անուն Մկրտիչ երէցն, յիշողք՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։ Գրեցաւ թվին ՌՀԲ (1623)։

163
ՇԱՐԱԿՆՈՑ
ՁՁԱԲ, № 255

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Գաղատիա

1150 Փառք...։ //Գրեցաւ Շարակնոցս ի թվիս[58] Հայոց մեծաց ՌՀԲ (1623)-ին, ի հայրապետութեան տեառն տէր Մելքիսէք կաթողիկոսին, և ի յառաջնորդութեան սբ. Երուսաղէմայ տէր Գրիգոր եպիսկոպոսին, ի մայրաքաղաքն ի Գաղատիայ, ձեռամբ յոգնամեզ, սուտանուն և անարժան

[56] Ցուցակում՝ «զղնենգաժուտ» ձևով։

[57] Ցուցակում գծողոս[ին] ձևով, ըստ երևույթին պետք է լինի գծողը, որը սխալմամբ գրել են գծողոս, իսկ Ոսկյանն էլ ցուցակում ուղղել գծողոս[ին], այսինքն՝ գծողին։

[58] Ցուցակում «թվիս» ձևով։

Վարդան, տէր Խաչատուրին որդի, փրծուն գրչիս, որ յեկա ի յաշխարհ[հ]էն Լեհաց, որ կոչի անուն քաղաքին Իլով: Վասն որոյ երեսս անկեալ աղաչեմ զձեզ՝ խոշորութեան կամ սխալանացն անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, քանզի խելքս և միտքս ցրնորել էր, զի ասէ, թէ «Լաւ է անկանիլ ի ձեռս բարբարոսաց քան թէ ի յաւտարութիւն և ի պանդխտութեան կեալ», զի զարիպութիւնն դրժար կու լինի։ Արդ՝ խընդրեմք ի ձէնջ, հայրք իմ և եղբարք իմ, զանարժան և բազմամեղ գրչիս յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և զծնողսն իմ և ամենայն արեան մերձաւորքն իմ և զյուսուցիչսն իմ, և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

164

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՔԷՋ. «Էջմիածին», 1964 թ., Ը—Թ, № 203

Գրիչ՝ Յոհանէս քահանայ
Վայր՝ Հիզան

ա

57 Փառք... ոմն ի լուսածնեալ զարմից բարեպաշտ Մըխիթարն, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախաւս սբ. Աւետարանիս և ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողացն՝ Ովազարին և Բուրսամին, և որդոյն իւրոյ՝ Թասալոյն, և կողակցացն, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զրարեմիտ և զհեզահոգի Մխիթարն և ծնողաց նորին՝ Ովազարին, Բուրսամին, և որդոցն՝ Մարութէ, Մուշեղին, որ ըստացաւ զսբ. Աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծընաւղացն իւրոց, ի միտ առեալ զբանն Եսայայ որ ասէ. «Երանի...»[59]։ Վասն այն յուսոյն ըստացաւ զսբ. Աւետարանս։ Եւ արդ՝ եղև զրաւ և կատարումն հրաշալի և աստուածախաւս սբ. Աւետարանիս ի մայրաքաղաքս Հիզան, ընդ հովանեաւ սբ. Է(7) տաճարացս՝ Ս. Յարութեան, և Ս. Աստուածածնին, և Ս. Յովաննէս Մկրտչին, և Ս. Սարգսին զաւրավարին և որդւոյ նորա

58 Մարտիրոսի, ի// թուին Հայոց ՌՀԲ (1623)[60] ամին, ձեռամբ անարգ և անպիտան սուտանուն Յոհանիսի, որ անուամբ միայն եմ քահանայ և դատարկ յամենայն բարեաց, որ և մեղաւք ցնորեալ կամ յաշխարհի, կորացեալ մտօք իբրև զմոլորեալ ոչխար, ոչ ճանաչելով զճշմարիտ հովուապետն զտէրն մեր Յիսուս Քրիստոս։ Բայց աղաչեմ զձեզ զամենեսեանդ կողկողագին պաղատանօք, զի լի և առատ սրտիւ մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ ստացողի սբ. Աւետարանիս սրբասէր և բարեմիտ Մխիթարին, և ծնաւղացն՝ Ովազարին, Բուրսամին, և ծնողաց և ամենայն ազգականաց նոցին, և ինձ անարժան Յովանիսի, և ծնողաց իմոց տէր Յովանիսն և Անլուն, և պապուն իմոյ՝ տէր Միքայէլին, և եղբարց իմոց

---

59 Եսայ., ԼԱ, 9։

60 Ցուցակում նշված է «ՌՀԲ (1624)»։ Եթե ճիշտ է 1624 թ., նշանակում է հայկական թվականը պետք է ուղղել ՌՀԳ։

տէր Միքայելին, Ամիրէքին, և[61] բերն իմոյ՝ Հոիքսիմին, որ փոխեցեալ են առ Քրիստոս, և ամենայն ազգականաց իմոց՝ կենդանեաց և հանգուցելոցն. ամէն։

Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք... իմ վարդապետին տէր Կիրակոսին և ծընողացն և ամենայն ազգականաց նորա...։

Եւ արդ՝ եղև ի յայսմ ամի<եղև> մահտարաժամ սաստիկ ի Մըսր և ի Սաամբալ՝ Բ(2) ամով յառաջ. և եկեալ հասաւ մինչև ի Յալապ, և յՈւրհայ, և յԱմիք, և ի Բաղէշ, ի Վան, և ի միջի մերում ի Խիզան, և ի մաւտակայ գաւառս մեր։ Եւ այնպէս սաստակացաւ մահն, զի ի յօրն Ճ (100) մեռեալ ելանէր ի Ա(1) քաղաքէ. և ի բազում տանց Բ(2) և Գ(3) մի հետ տանէին ի դիր հանգստարանին. և Ժ(10)-ն մեռելի մի կարէ ասէին։ Եւ երեկոյի խոցացն ի լոյս ոչ ելանէր. և քահանայք ոչ ժամանէին գալ ի տունս իւրեանց մինչև երեկոյի ժամուն ի հանգստարանէն, այլ և ոչ հասանէին հաղորդութիւն տալ հիւանդաց։ Այլ և այնպէս խստացաւ մահն մինչ զի Ե(5) ու Զ(6) տարւոյ տղայքն իւրեանց կամաւն գնային առ քահանայքն, թէ «Զմեզ հաղորդայ, չի մեռանենք առանց հաղորդի»։ Եւ արդ՝ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, զի դառնութիւն գործոց մերոց ել յերկինս և սրտմտեցոյց զկամք Արարչին մերոյ ի վերայ երկրի, և մատնեցաւ արդարն ընդ ամբարիշտսն, քանզի ելաք ի հրամանէն Աստուծոյ, և մոռացաք զուխտն, զոր եղ առ հարսն մեր։ Բայց ունիմք բարեխօս զսբ. կոյսն Տիրամայր Աստուածածին, զի նա աղաչէ զՈրդին իւր միածին, զի փրկեսցէ և ազատեսցէ զամենայն հաւատացեալս անուն իւրոյ ի յորոգայթից թշնամւոյն. ամէն։

Մանաւանդ զստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ և զհեզահոգի Մքխիթարրն և զծնօղսն իւր՝ Ովազարն, Բուրսամն, և զեղբայրն իւր՝ Մալումն, Մուշեղն, Մարուքէն, և քեռն իւր Մէրաաիկն, և կողակիցն իւր՝ Վարթիկն, և ամենայն դստերքն իւր. ամէն։

Բ

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զԱմիրէք եղբայրն իմ և զհոգևոր եղբայրն իմ՝ զՍաեփանոսն, որ ի յայսմ նշանէս փոխեցան առ Քրիստոս Աստուածն մեր ի յոյսն ամենեցուն. ամէն։ Եւ արդ՝ անմեղադիր լերուք, ո՜վ եղբայրք, խոշորութեան և սխալանացս, զի կայր մեր այս է։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով զպակասութիւն լնուք և զաւելորդն բառնայք և այլ և այլ գրոյս անմեղադիր լեր, զի կայր մեր այս էր։ Արդ՝ աղաչեմ զձեզ Աստուած ողորմի ասացէք անպիտան գրչիս Յոհանիսի, և ծնողաց իմոց, և ամենայն ազգականաց մերոց՝ կենդանեաց և հանգուցելոց, և այնոցիկ որ ի վերայ մեր աշխատանք և երախտիք ունին. ամէն։

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Տէր զստացող սբ. Աւետարանիս զմահդասի Մխիթարն, և ծնօղսն իւր՝ Ովազարն, Բուրսամն, և եղբայրքն իւր՝ Մալումն, Մուշեղն, Մարուքէն, և քոյրն իւր՝ Մէրաաիկն, և կինն իւր՝ Վարթիկն, և որդին իւր՝ Թասալի, և դստերքն՝ Մարիամն, Սարրիկն, Դշխունն, Մէրաաիկն, և հանգուցեալ կանայքն իւր, տնայինքն և այլքն, որ է աւրհնեալ յաւիտեան։

[61] Ցուցակում տպված է «ի»։

Գ

Ստացող՝ Մխիթար

Արդ ես՝ Մխիթարս ստացայ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց ի-մոց, ընծայ տվի Բեղդանէմ եկեղեցոյն։

165
ԱԻԵՏԱՐԱՆ
Մուրմար, II, № 18 (1448 թ.)

Վայր՝ Համիք

ա

112 Զստացող սբ. Աւետարանիս զտէր Սահակ քահանայն յիշեցէք ի Քրիստոս, և զկողակիցն՝ զՋինարն, և զորդին իւր՝ զԱռաքելն, և զհաւրեղբաւր որդին իւր՝ զԿարապետն և զայլ ամենայն ազգականսն, որ թվին ՌՀԲ (1623) երեր զսբ. Աւետարանս իմ մայրաքաղաքն Համիք և ետ կազմել զկող սորա՝ արծաթ ոսկեզօծ խաչով և անկիւններով։

Բ

Այլ և հաւատարիմ կնոջն՝ Ջոնարին և ծնողացն՝ Աղաճանին և Խումարին յիշեցէք ի Քրիստոս, որ ետուն զարծաթ և զխարճ սբ. Աւետարանիս։

Գ

Այլ և յիշեցէք... բարեմիտ կնոջն՝ Թավրէզին և ծնաւղացն, հօրն՝ Մեղուին և կողակցին՝ Պաշարաթին... Մարիամին, Շաղաւաթին, և Կուլէին, և կողակցոյն՝ Թադէոսին։

Դ

Վայր՝ Քիստախ

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր Սահակն, որ եդ յիշատակ զսբ. Աւետարանս ի դուռն Ս. Քրիստափորի, ի գեաւղն՝ Քիստախ. մի՛ ոք իշխեսցէ հանել...։

166
ԱԻԵՏԱՐԱՆ
Մուրմար, II, № 26 (1457 թ.)

118 Կազմի վրա

Աստուածազարդ սբ. բուրաստան,
Լրցեալ ծաղկաւք յոյժ զանազան,
Զարդարեցսուս կողբնեցւոյ հրաշազան,
Պատճառ նորին սուրբն այն՝
Տէր Պետրոս կոչի անուանս։
Թվին ՌՀԲ (1623)։

167

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

ՊՅԲԿ, № 31, տե՛ս նաև «ՀԱ» 1960 թ., էջ 256—257

Գրիչ՝ Հայրապետ
Վայր՝ Հալապ

51 Փառք...։ Արդ՝ եղև ղրաւ սբ. գանձարանիս յամի շրջագայութեան արամազեանս տոհմի, հայկազան սեռի, աբեթական տումարի ՌՀԲ (1623) ամին, ի մայրաքաղաքս ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասնից եկեղեցեաց։ Արդ՝ գրեցաւ այս սբ. գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անարժան, անծան և անծող գրչի, աշակերտին իմոյ Հայրապետի սուտանուն Գեբէ կոչեցեալ, չարութեամբ լցեալ, և մեղօք զառանցեալ։ Աստանօր կատարեցաւ հոգիակեցոյց և ցանկալի դրախտըս, աստուածադիր ամենոնական առատութեամբ, յորմէ գնան գետք և բղխին աղբերք... որոյ այսպիսի յղղալի փարթամութեանց համահեւսեալ և փափաքաւղ եղեալ աստուածընտիր տէր Աստվածատուր կրօն[ա]ւոր, հմուտ և տեղեակ աստուածայնոց կտակարանաց, որոյ եռափափաք սիրով ետ գրել զսա յիւր արդար և քրտնաջան վաստակոց։ Զի ոչ զառաւելութիւն ընչիցն պահանջէ Տէրն, այլ զյօժար կամօքն խնդրէ, վասն որոյ զայս զմտաւ ածեալ ստացաւ զսա, ի մխիթարութիւն անձին իւրոյ և որոց խնդրեն։ Քանզի սա պարունակեալ ունի առ ինքն զքաղուածոյն համաբարբառքին և զՄաթէոսեան գլխոյն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան եղբարք, որք հանդիպիք սմա ուսմամբ, կամ տեսութեամբ, կամ օրինակելով, յիշեսջիք զստացող սորա, զտէր Աստուածատուր և ծնողքս իւր, և զիս զտառապեալ գծողկիս և ծնողքս իմ և զամենայն արեան մերձաւորս իմ և Աստուած արարիչն երկնի և երկրի, յիշողացդ ողորմեսցին իւր միւսանգամ գալստեանն. ուր բանք մարդկան սպառին, եւ գործք բարի թագաւորեն։

Գրեցի զսա անձն եղկելի,
Զի ոչ ունի գործս բարի ///
Բամեալ և ոչ արհեստ գրչի,
Այլ լոկ անուամբ կեամ կենդանի։
Զլինել հայցեմ մեղադրելի,
Թէև սղալ ինչ աստ գլտցի,
Է իմ գրեալ աշխատելի,
Ընդ որս և դէմ եղեալ յերկրի։
Երկրպագեմ հանդիպողի,
Նաև սիրով կարդացողի.
Եւ փափագմամբ հասկացողի,
Ցիշման արարէք զիս արժանի։
Ըզծրող այսրմ գրքի,
Եւ զստահակն ամենայնի,
Նաև գործովք յոյժ եղկելի,
Եւ անպիտան ամենայնի։

Ըստ անարմար իմոյ բայի,
Որ ոչ կա իս յիմաստակի,
Դուք ընկալջիք մասն բարի,
Ցահեղ գալուստն Քրիստոսի։
Իսկ մեք հանցուք փառք Յիսուսի,
Ընդ Հօր հոգովրն ճշմարտի,
Բամեալ յայժմոյս և յապառնի,
Եւ ապագայսն ամենայնի։

Դարձեալ առաւելապէս երես անկեալ աղաչեմ զսրբասէր քահանայքդ Աստուծոյ և եղբայրք սիրեցեալք, զի զմեզ առանց պարսաւանաց թողուք և անմեղադիր լերուք, վասն սղալութեան և անզարդութեան գրոյս. զի կարն մեր այս չափ էր և ոչ այլ աւելի։

168

ԱԻԵՏԱՐԱՆ

ՊՎՋՋՍ, № 2 (1480 թ.), տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ կեսարիոյ, Բ, էջ 1867

Վայր՝ Կեսարիա

10 Զվերջին ստացաւղ սբ. Աւետարանիս զխաւճա զՋաֆարն և զեղբայրն իւր՝ զՍաֆարն, և զհայրն իւրեանց՝ զՆիկողայոսն և զմայրն՝ Մուղալն, և այլ ամենայն ազգականաց իւրեանց. ստացան և եդին յիշատակ ի Կեսարիա, ի վանքն որ կոչի Ս. Սարգիս, լի բերանով Աստուած ողորմի ասացէք ստացաւղաց և աշխատողաց սորա. ամէն։ Գրեցաւ ի թուին ՌՀԲ (1623)։

169

ԱԻԵՏԱՐԱՆ

ՅՁՍԳ, № 65 (1397 թ.). տե՛ս նաև «ՀԱ» 1926 թ., էջ 45—46

Գրիչ՝ Վրդանէս երէց

51 Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զմաղտեսի տէր Պարոնն և զիւր կողակիցն՝ զմաղտեսի Փաշայն, և զիւր նորաբողբոջ որդիքն՝ զՍիլպարոնն և զՊապիկն, զՀոյսպարոնն և զիւր արեան մերձաւորսն զամենեսեան առ հասարակ. ամէն։ Որ ստացաւ զսայ ի հալալ յընչից իւրոց և իւր յիշատակ ի ձեռն տէր Վրդանէսին...։ Գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ անարժան և մեղսամած Վրդանէս երիցու, թվին Հայոց ՌՀԲ (1623)։

170

ԱԻԵՏԱՐԱՆ (1471 թ.)

Թորոս աղբար, Բ, էջ 329

Դարձեալ ետու ի ձեռն տէր Սահակին և տէր Սարգսին, որ խնայելով պահեն և Աստուած ողորմի ասեն բարի յիշատակին, անջինջ յիշատակ։ Ի թվին ՌՀԲ (1623)։

171

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 329—330

Գրիչ՝ Վարդան աբեղայ
Վայր՝ Կարմիր վանք

ա

Գրեալ ի սբ. անապատս որ կոչի Կարմիր վանք, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետիս և Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի թուականիս ՌՀԲ (1623), ի յեպիսկոպոսութեան տէր Թումայիս և տէր Աստուածատուր եպիսկոպոսին և այլ միեղէն եղբարցս՝ ԺԱ (11) անձն կրաւնաւորացս, որ կան ի յայս քարաժեռ անապատիս, ձեռամբ... աբեղայի Վարդանի, որ ի բարեաց խիստ եմ հեռի, և եմ թաղեալ ախտիւ ի լի...։ Ես՝ Վարդան քարտուղար ծառայ եմ սիրեցեալ արհի և քաջ եպիսկոպոսին տէր Յոհաննէսին, Իենկի առաջնորդին, որ ետ փափագանաք գրել զսբ. Աւետարանս և եդ յիշատակ ի սբ. ուխտն։ Ով ոք չունի հրաման, որ հանէ զսբ. Աւետարանս ի վանիցն՝ ո՛չ վարդապետ, ո՛չ եպիսկոպոս, ո՛չ քահանայ, ո՛չ սարկաւագ և ո՛չ աշխարհական. այլ կացցէ անջինջ յիշատակ...

բ

Դարձեալ յիշեսջիք... զուսուցանողն իմ զտէր Գրիգորն ղպարծանքն կրաւնաւորաց, և զտէր Յովհաննէս քաջ քարտողն, որ զծաղիկն ուսոյց, և զաշակերտն իմ զարին զԹովմայ եպիսկոպոսն, որ բաղում աշխատեցաւ ի կոկել թղթին և ի ձեռն տալ։ Աստուած իւրեանք անփորձ պահեսցէ. ամէն։

գ

Աստուած ողորմի Պաճրի տնտեսին հոգւոյն, գնեց զսբ. Աւետարանս... եղիր ի յիշատակ ի դուռն Ս. Երեք մանկանց, անջինջ յիշատակ։

172

ԺՈՂՈՎԱՏՈՒ (ԺԴ դար)

«Արձագանք», 1889 թ. տե՛ս նաև ՄՅԶԵՊ. V, № 1616, էջ 416

Կազմող՝ Ստեփանոս քահանայ
Վայր՝ Ղրոնգու վանք

206 *Գիրքս յիշատակ է Յովանէս վարդապետին Սրեցոյ, որ ետ վերստին նորոգել յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց տէր Յովանէսին, Հոիփսիմին, ի սբ. ուխտս որ Ղրոնգու վանք ասեն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, առ ոտս երջանիկ ռաբունապետին՝ տէր Յովսէփի, առաջնորդի սբ. ուխտիս, որ զվանքս լաւ շինեց, և հաստատեաց միաբանաւք և ժամատեղաւք. Աստուած զինքն անսասան և անվրդով պահէ ի պարծանս մեր։ Եւ ղհանդիպեալքդ ի սմա աղաչեմ, Աստուած ողորմի ասացէք Յովանէս վարդապետին և ծնաւղաց նորին՝ տէր Յովանէսին, Հոիփսիմին, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

Կազմեցաւ գիրքս ձեռամբ Ստեփանոս քահանային և մեղաւոր Սահակ աշակերտի, ի թուականիս մերում Ռ և ՀԲ (1623) ամի։

173
ԱԴԱՄԳԻՐՔ

Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, էջ 170

Վայր՝ Անլոց

[Գրեցաւ սբ. տառս ի թուին Հայոց ՌՀԲ (1623)][62], ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին ի վանսն որ է Անլոց, *և յառաջնորդութեան սբ. ուխտիս տէր* Պետրոս *եպիսկոպոսին և միաբանից...։*

174
ԱՒԵՏԱՐԱՆ

Արցախ, էջ 123

Գրիչ՝ Աւետիք
Վայր՝ Հալապ

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուականիս Հայոց ՌՀԲ (1623), ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Աւետիքի, *ի քաղաքն Հալապ, ի դուռն Ս. Քառասնիցն, ի դառն և ի նեղ ժամանակիս։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զստացող սբ. Աւետարանիս դիպխիսցի խոճա մահտեսի Հովադեղն և զկողակիցն՝ Խասխաթունն...*

Հովադեղն որ գնաց ի Երուսաղէմ և հանդիպեցաւ ի Հալապ, էառ զսբ. Աւետարանս յիշատակ ի դուռն կաթուղիկէ Ս. Աստուածածնին։

175
ԱՒԵՏԱՐԱՆ

Ա. Ալպոյաճյան, «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց», էջ 1577. տե՛ս նաև «ՀԱ», 1930 թ. էջ 13։

Գրիչ՝ Կարապետ Եւդոկիեցի
Վայր՝ Թոխաթ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղապարտ և փծուն գրչի Կարապետի Յեւդոկիացոյ, *ի քաղաքս* Թոխաթ, *ի թաղն* Ուզուն *մահլայ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին։... Աւարտեցաւ սբ. դիրքս ի թվականիս ՌՀԲ (1623)...։ Արդ՝ ցանկացող եղև այսմ [սբ. տառիս] կինն* Շահպուլայն, *և ըստացաւ զայս սբ. Աւետարանս..., յիշատակ... հօրն՝* Գրիգորին, *մօրն՝* Սառային, *եղբօրն՝* Եաղուպշին, *որ առ Քրիստոս են հանգուցեալ, նաև զխօճա* Ստեփանն, *և զկողակիցն՝* Խանփաշան, *որ կամակից եղեն... [յիշեցէք] նաև... զյետնորդս ամէն սարկաւագի* զԿարապետս Թոխաթ[եց]ի...: *Կրկին աղաչեմ յիշել ի տէր* զՄանկաղլուեցս *տէր* Ղազար *եպիսկոպոսն, զի մինչ Ժ(10) տետրն գրեր էր, և առ Քրիստոս փոխեցաւ, և զայլ յետմնացն ես նուաստ* Կարապետս *աւարտեցի. թէպէտ ոչ կարացի նրմանեցուցանել, այլ միայն զպակասն գրեցի։*

Յիշատակ է Աւետարանս Ս. Սարգսին և ոչ ոք ունի իշխանութիւն դնելոյ կամ վաճառելոյ։

[62] *Ուղղանկյուն փակագծում եղածը վերցրել ենք Հ. Ոսկյանի տեղեկություններից։*

176
ՄԱՇՏՈՑ
ՑՁԱԲ, № 214 (1464 թ.)

Գրիչ՝ Ղազար երէց[1]

992 Գրեցաւ Դօանանքս թվին ՌՀԴ (1624), փետրվարի ԻԴ(24) օրն, ձեռամբ մեղապարտ, սուտանուն Ղազար իրիցուս. յիշողն՝ յիշեալ եղիցի. ամէն։

177
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
ՄՑՁԵԳ, 111, № 961

Գրիչ՝ Նիկողոս Լեհացի
Վայր՝ Թագիրաաղ

529 Փառք...։ Ըստ այնմ յարացուցի ամենագովելի, երջանիկ ընտրեալ, պատուելի և աստուածահաճոյ, ամենայն գովութեանց արժանաւորեալն, սբ. և քաջ հռետորն և սրբազան ռաբունապետն՝ տէր Գրիգոր քաջ եռամեծն, և խստակրօն յոյժ ճգնողի, անձանձրանալի խրատող և ուսուցանող անզգամից, որ յանապազ կատարէր զտօն սրբոցն հարանցն անապատաւորաց, որք ճգնեցան ի յայրս և ի փապարս լերանց։ Եւ փափաք յօժարութեամբ և բազում ծախիւք գրել ետ, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, Գրիգորիսին, և մաւրն՝ Կուլվսուդին, և հարազատ եղբօրն՝ մահտեսի Մարկոս միայնաւորին, և այլ իւրեան արեան մերձաւորացն, և աշակերտին իւրոյ տէր Սարգիս բանի սպասաւորի, որ եղև պատճառ այսմ սբ. տառիս, որ Հարանց վարք կոչի, ի վայելումն տէր Գրիգոր քաջ հռետորի։

Արդ գրեցաւ սա ի թվաբերութեան հայկազան տումարի ՌՀԴ (1624), ի մարտի ամսոյ ԻԶ(26), օուր մեծի Աւագ ուրբաթի, ի գիւղաքաղաքս Թագիրտաղի, որ մականուամբ Ռոատուս ասի, ի դուռն նորաշէն եկեղեցւոյ ծովահայեաց Ս. Հրեշտակապետի, ձեռամբ [յ]օգնամեղ և անիմաստ գրչի սուտանուն Նիկողոսի, զի չէի հմուտ արուեստի, այլ կարողութեամբ և օգնութեամբն Աստուծոյ աւարտեցի։ Այլ և գրեցաւ սբ. Վարս հարանց ի հայրապետութեան սբ. աթոռոյն Էջմիածնայ, տեառն տէր Մելքիսէդ կաթուղիկոսին ամենայն Հայոց, և թագաւորութիւն սուլթան Մուրատին, որ դեռ Ը (8) ամիս է, մանուկ տիօք որմէ հետէ թագաւորեաց, ի յանբարի

[1] Այս անձնավորությունը ձեռագրի միայն «Դաւանանք քրիստոնէական աղգիս» գործի գրիչն է։

ժամանակիս, որ յոյժ շփոթեալք են, զմիմեամբ ելանելով ազգն Հագարացոց, կարծեմք ի թոյլ տալոյն Աստուծոյ է, վասն անուղղայ գնացից մերոց, արդար իրաւամբք։

Յորմէ հետէ որ շարացան ազգն և զորքն ամենայն գործ մի զարմանալի գործեցին, սարսափելի լսողացն, զոր ոչ ոք գործ գործեցին, յանդգնեցան և զիւրեանց տէրն և զթագաւորն սպանին, և տիրասպանք եղեն, զսուլթան Օսմանն, որ Բ (2) տարի է յորմէ հետէ այն գործեցան, և աշխարհք ամէնն ի հիմանց խախտեցաւ և ամենայն բարեկարգութիւնքն, որ ի ձեռս թագաւորաց են, ի սոցանէ քակտեցան, և անհնազանդք եղեն յոյժ հիմանց թագաւորաց և միմեանց, և խիստ լցաւ երկիր վայիւ և աղաղակաւ։ Յորժամ սպանին զսուլթան Օսմանն // նայ, զհօրեղբայրն իւրեանց դրին զսուլթան՝ Մուսթաֆայն, և եկաց մէկ ամ և կէս։ Նա իսկի յաստընվորէս բնաւ խապար չէր, միայն անուն էր, յետոյ տեսան որ հնար չէ, միաբանութեամբ և կամաւք ամենեցուն եդին աթոռ զայս մատաղ Մուրատս, որ խիստ է խելացի։ Բայց խիստ վշտաց և շփոթմանց մէջ է, և զօրքն չեն հնազանդ, և իշխանք պառակտեալ են և շփոթեալ. և զօրաժողով լեալ ի վերայ ամուր դղեկացն, և զաշխարհ ամենայն առ ոտն հարկանելով։

Ահա մէկ տարի է որ յԱպազա փաշա անուն մեծ իշխանաց իշխան, տէր Թէոդուպոլսոյ, որ այժմ Արզրում ասի, խիստ յոյժ խնամածու էր և հոգածու աշխարհաց, նաչար զօրքն, որ ղուլք ասին՝ սպանիչք թագաւորին և շարացուցին ի վերայ իւրեանց և աշխարհացն ամենայն և թագաւորն ապստամբեցուցին. և զիւրեանքն հալածական և բնաշինջ արար. զոմանց շարամահ կոտտանօք սպանանելով և այլքն կերպափոխեալ զիւրեանք փախստական լինելով, ի վրէժխնդրութիւն արեանն սուլթան Օսմանին լինելով ի տեսչութենէն Աստուծոյ։ Ահա Ե (5) ամիս է որ ի վերայ Գաղաաիոյ կու կուվի, ի վերայ ամուր դղեկին և այնչափ տկարք են, որ չեն կարող ի վերան գնալոյ։ Եւ ի վերայ այս աղմկիս, արքայն Պարսից եկեր զՊաղտատ է առեր, և շատ երկիր։ Եւ այսպէս շվար են մնացեր, չեն գիտեր թէ ոնց այնեն, և աշխարհ ամենայն ի սասանութիւն գոլով, և այս ամենայն սկիզբն է երկանց, ըստ տէրունական հրամանին։ Եւ այսմ երկիւղալից և վշտաշատ բերմանց ժամանակիս գրեցաւ սբ. Վարք հարանց, ձեռամբ անիմաստ, փծուն գրչի Նիկողոս դպրիս Լեհացոյ։ Եւ որք ընթեռնուք և օկտիք ի սմանէ, յիշեսջիք զմեզ ի մաքրափայլ աղօթս ձեր ամենայն զարմօք, հանդերձ ծնօղոք մերովք...։

178

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Եր. Բ, № 1188

Գրիչ՝ Թորոս դպիր

366բ Փառք..., որ ետ կարողութիւն տառապեալ... սուտանուն Թորոս դպրի գլուխ ելանել տառիս, որ կոչի Մեկնիչ Սաղմոսիս աստուածահաւրն Դաւթի։ Ընդ որս երևեալ աղգ զանազան ազգիս ի տանէ Թորգոմայ փառք

և պարծանք այր Այրարատեան գաւառիս և իբրև զարեգակն փայլեալ... քաջ հեռետորն Վարդան վարդապետն վարժելով զբազումս ի կրթասիրաց ի գիտութիւնն Աստուածաշունչ կտակարանաց, երևելին ի գիտնականս...։

367ա Որոյ խնդիր եղեալ հոգևոր հայրն մեր և ուսուցիչ վարժապետն իմ՝ տէր Ղուկաս քաջ բաբունապետն և աստուածաբան վարդապետն, յիշատակ իւր և ծնողացն իւրոց՝ Գրիգորին և մաւրն՝ Փաշային և ամենայն արեան մերձաւորացն։

Գրեցաւ և աւարտեցաւ Մեկնիչ Սաղմոսիս...թվին ՌՀԳ (1624) ապրիլ ամսոյն Ժ (10)։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զգծող սորին զԹորոս դպիրս՝ զհողս և զմոխիրս, և զծնօղքն իմ՝ զՊարխուտարն և զմայրն իմ՝ զՇնոֆորն, և զհոգևոր հայր և մայր իմ, որ սնուցին զիս զմահտեսի Ովանէսն և զմահտեսի Սուլթան, և զքոյրն իմ՝ զՈւստիանն, որ մանկութեամբ փոխեցաւ առ Քրիստոս և զայլ ամենայն արեան մերձաւորքն իմ...

179
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Մշեվ, IV, № 1288 (1273 թ.)

Նորոգող՝ Աստուածատուր քահանայ
Վայր՝ Թաքիրաաղ

496 Արդ՝ յիշեցէք ի մաքուր և ի լուսափայլ յաղաւթս ձեր, զվերստին նորոգող մատենիս, որ կոչի Հարցմանց/Վանական վարդապետի, որ ծաղկաւէտ և լուսաւոր բանիւք լի է։ Եւ նորոգեցաւ ձեռամբ յոգնամեղ Աստուածատուր քահանայի և սուտանուն Սարգիս աբեղայի, ի գաւառսն Թաքիրտաղին, ի դուռն Հրեշտակապետ եկեղեցւոյ։ Եւ էր սայ ի ձեռս հոգիրնկալ Գրիգոր վարդապետին, և անդադար ընթեռնոյր զսա ի ձեռին ունելով. և էր խիստ հնացեալ և փտեալ, և բազում ժամանակ առանց կողքի էր։ Եւ մերոյ առ ստորոտին գոլով ետ զսա նորոգիլ մեզ, ի թվաբերութեան Հայոց ի ՌՀԳ (1624) ամին, և ի մայիս ամսոյ ԺԴ (14)-ին։ Արդ՝ ո՛վ եղբայրք, ասացէք Աստուած ողորմի։

180
ՏՕՆԱՊԱՏՃԱՌ
Երևան, № 2039 (1357 թ.)

Հետ. ստացող՝ Արիստագէս Խարբերդցի

ա

321ա Փառք...
Էրևելոյս որ ես տեսայ
Զաներևոյթսն մոռացայ,
Բաբունութեան ես ցանկացայ,
Զանհասութիւն սորա չտեսայ։

Տաւնապատճառիս ես դիպայ,
Սբ. գիրքըս զայս ես ըստացայ,
Մարդկան ազգի որ հետ մեղ գայ,
Սորայ բանիցըն պերճանայ։
Ի հայր Աստուած թող մաղթէ նայ,
ԶԲանն և զՀոգին անբաժ ընդ նայ,
Արքայութեանն որ առ նա կայ,
Յաւելածիկ զիս խնդրէ նայ։
Արիստագէսըս Խարբերդցի,
Որ բանի սպասաւոր էի,
Զ Տաւնապատճառըս գրնեցի,
Զի յիշատակ ինձ եղիցի։
Ինձ և իմոցն ամենայնի,
Եւ ծնաւղացն իմոյ զարմի,
Պապուն իմոյ Խըտրշայի,
Եւ որդոյ նորին Ղազարի։
Տէր Կիրակոս քահանայի,
Սբ. գիրքս յիշատակ եղիցի,
Որդւոց նորին Ստեփաննոսի,
Խըտրշայի և Յուսիկի։
Եւ հօրեղբաւր տէր Յովանիսի,
Եղբաւր նորին մեծ Լաստիֆի,
Անչինչ յիշատակ եղիցի,
Դպրութեան գիրըն գըրեսցի։
Ով որ ասէ մէկ Հայր մեղայ,
Իւր մեղաց թողութիւն լինայ,
Դպրութեան գիրըն գըրի նայ,
Արքայութեան արժան լինայ։

Արդ՝ յերեսս անկեալ արտասուալից մաղթանօք և մեծաւ յուսով աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոցս կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զիս ըզտրուպս ամենեցուն զԱրիստագէս տոսկ վարդապետ անուանեալ, որ ըստացայ զսբ. գիրքս և ետու վերըստին նորոգել և կազմել ի թվին Հայոց մեծաց ՌՀԳ (1624), յիշատակ ինձ և ծնողացն իմոց՝ տէր Կիրակոսին և Հռեփսիմէին որ հանգետն ի Քրիստոս խաղաղութեամբ, որ ողորմեսցի նոցա Տէր և արքայութեան արժանի առնէ։ Դարձեալ յիշեսջիք յաղօթս ձեր ըզվերոյ գրեալ անուանքդ և հանգիստ և ողորմութիւն խնդրեցէք ի գթածէն Աստուծոյ ի Հօրէ և յողորմածէն Աստուծոյ ի Որդոյ և ի բարեխնամ Ս. Հոգւոյն։ Բարեխօս ունելով զսբ. Աստուածածինն և զամենայն սուրբս, որ յետ Աստուծոյ երկրորդաբար յոյս են մեզ և բարեխաւսք մեզ, յիշելեացսս և ձեզ յիշողացդ։ Զոր մաղթեմ ամենեցուն այսպիսի յուսով զյիշատակս մեր կատարել յիշմամբ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ ընդ Հաւր և Ս. Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Բ

321բ Ոտանաւոր ասացեալ Արիստագէս վարդապետի*

Եկայք եղբայրք ամենեքեան,
Պատմեմ ձեզ բան յոյժ ողբական,
Աշխարհ ամէն վրդովեցան,
Յորժամ սպաննաւ սուլթանն Օսմանն:
Ի վերջին ժամանակիս,
Եւ հայկազեան մեծ տումարիս,
Հազարերորդ եւթանասնիս,
Եւ երրորդի յաւելոբդիս (1624):
Մէկ մեծ իշխան մի յայտնեցաւ,
Ապազա անուն կոչեցաւ,
Ի Կարնոյ քաղաքէն ելաւ,
Մինչ Ախլցխէ ինքն հասաւ:
Բազում զօրօք զնա պաշարեաց,
Մեծ մեծ թօփերն յորժամ ձգեաց,
Զդուռն և զդրանդիքն ի բաց մերժեաց,
Ախլցխէու ինք տիրեաց:
Յորժամ նստաւ ի մէջ քօշկին,
Արքայանիստ մեծ սարային,
Մունէտիկքն աղաղակին,
Հրամանաւ Ապազային:
Մի՛ ոք ողոք մի՛ զրկեսցէ,
Մինչև յետին բնիոնն է,
Թէ չէ գլուխն առ յիս գայցէ,
Ինչքն և ապրանքն արքային է:
Ապա ինքն հրամայեաց,
Մեծ մեծ իշխանքըն ժող[ով]եաց,
Հանդիսարանն ելաւ գնաց,
Եւ զէնկիչէրիքն կոչեաց:
Մեծ դատաստան ինքն առնէր,
Զարքային արիւնն խրնդրէր,
Վրէժխնդիր նմա լինէր,
Զէնկիչէրիքն կոտորէր:
Որպէս խորհէր նա կատարէր,
Նորա սպանողքն սատակէր,
Ընչիցն ապրանացրն տիրէր,
Ընդ իւր եղելոցն շնորհէր:
Վասն այն մեծացաւ, զօրացաւ;
Մէջ աշխարհիս համբաւեցաւ,
Զարիւն թագաւորին առաւ,
Սրտին կամքն կատարեցաւ:

* Ցափածոն կրճատումներով տե՛ս նաև Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 236—233:

Իւր փոխարէնքն անդ նստաւ,
Ինքն Ախլիթխէու դարձաւ,
Բազում ամրոց զարհուրեցաւ,
Մինչև որ Գաղատիայ հասաւ։
Մեծ մեծ խաներն առ ինքն եկան,
Եւ պարոնայքն ամենեքեան,
Ընդ նմա եղան միաբան,
Թէ ուր է մեծ արքայն Օսման։
Միջին աշխարհն Ապազայն,
Եւ Բաբելոն Պարսից արքայն,
Հոնաց աշխարհն թաթար խանն,
Մեր մեղաց պատուհաս յարեան։
Արքայն Պարսից շահ Ապազն էր,
Բազում զօրօք ասպատակէր,
Ի Բաբելոն զայր հասանէր,
Մեքենայիւք զնա պաշարէր։
Բախճանութեամբ ինքն ճեմէր,
Քաղաքին վերայ բողոքէր,
Առիւծանման մռընչէր,
Զնոսա յորովայնս համարէր։
Ի գարնան եղանակին,
Տէրունական Յիսներորդին[2],
ԶԲաբելոն քաղաքն առին,
Զազգն Տաճկաց հալածեցին։
Սաստկութեամբ քաղաքն մտին,
Զիշխան նորին ըմբռնեցին,
Զգանձն և սարայն ձեռացն առին,
Ապա զինքըն կուրացուցին։
Տայր հրաման զօրաց Տաճկին,
Թէ ամենեքեան ժողովեսցին,
Յայսմ հետէ ինձ հընազանդին,
Որ ոռճիկ ես տամ նոցին։
Արդարութիւն կու համարէր,
ԸզԲաբելոն քաղաքն առնէր,
Զքաղքէացիսն հնազանդէր,
922ա Մինչ ի Սուսուլ իշխան դնէր։
Գնայր մէջ մօյտանին նստէր,
Յաթոռ բազմէր հանդէս ուղղէր,
Զօրքն Տաճկաց անդ ժողովէր,
Զամենեսեան ի գիր առնէր։
Էրիվարաց զնոսա ձգեր,
Ձեռաց նոցա զէնքն առնէր,
Եւ ի մետաղս առաքէր,
Զիշխան նոցա դառն գրգուէր։

[2] Իմա՛ Հոգեգալուստին՝ 1624 թ. մայիսի 16-ին (հուլյան տոմարով)։

Սուր ձգեցին մէշ քաղաքին,
Սատակեցին զիշխան նորին,
Բազում նեղութիւնք հասուցին,
Մեծ աշխար[հ]ումն բնակչին թողին։
Ի Մէրտին գուժն հասաներ,
Եւ զբնակիչսն ահարեկէր,
Զիշխանսըն նորին հալածէր,
Մինչ Համիթ տարեալ մուծանէր։
Մեծ Տիգրանակեր[տ] զարհուրէր,
Քաղաքն ամէնըն դղրդէր,
Ցրիմաստունսըն հարցանէր,
Պատուար առ պարըսպին կանգնէր։
Գուժն և բոթն Բաբելոնի,
Քազքէացւոցն ընդ Մուսուլի,
Առ արքայն արքայից հասնի,
Որ սուլտան Մուրատ [յ]որջորջի։
Մեծ արքա սուլտան Մուրատրն,
Ցորժամ լուաւ զչար բոթըն,
Բաբելացոց ազաղակըն,
Որ վերացաւ մինչ ի յօդն։
Զմեծ մուհթին առ ինք կոչեաց,
Ըզիմաստունսն ժողովեաց,
Ըզպաշ վէզիրն հրաւիրեաց,
Թէ Բաբելոն գնաց ձեռաց։
Վաղիւն տիւան կու նստէր,
Մեծ քննութիւն ինքն յարդարէր,
Զօրաց գլուխ կացուցանէր,
Տիգրոնի վերայ առաքէր։
Երբ պաշ վէզիրն ի ձի հեծնէր,
Պողոտայն արքունի ուղղէր,
Բազում զօրաժողով լինէր,
Ի Պարսից վերայ արձակէր։
Ցորժամ երթայ ի Կոնիայ,
Սեաստ նըստէր է Ապազայ,
Մինչև հաշտութիւն չըլինայ,
Ճանապարհին անցիկ չըտայ։
Էնկիշէրիքն ամենեքեան,
Ինքեանք եղան յոյժ միաբան,
Մեծ աղային հնազանդեցան,
Թէ մեզ է Ապազայն տուշման։
Նստէր վէզիրն ի Կոնիայ,
Ապազայն Սեաստ կու լինայ,
Համոզիչքն երթայ և գայ,
Միթէ խաղաղութիւն լինայ։

Ազգն Տաճկաց յոյժ խստացան,
Զազդրս մեր բառնալ կամեցան,
Հարկն և խնդիրքն յաւելան,
Բազում նեղութիւնք մեզ յարեան։
Սրտից քննողն Աստուած է,
Ամենայն իրաց տեղեակ է,
Միթէ փրկէ զմեզ նոցանէ,
Որդիս արքայութեան առնէ։
Տէր Աստուած քեզ եմք յուսացէր,
Զմեզ յանյէից ի յէ ածէր,
Ի յոչրնչէ գոյացուցէր,
Զմարդն ի հողոյ առեալ ստեղծէր։
Արիստադէսն Խարբերդցի,
Զայս սակաւ բաներս ասացի,
Զիրք ժամանակիս պատմեցի,
Նեղութիւն մեր ձեզ ծանուցի։
Լրսողացն հաճոյ եղիցի,
Տէր Աստուած իւրեանց քաղցրասցի,
Զմեզ յիշողացն ողորմեսցի,
Արքայութեան արժանասցի։
Փառք Փրկչին ամենայնի,
Ընդ Հօր իւրում համազուգի,
Եւ Ս. Հոգւոյն իւր էակցի,
Այժմ և յաւէտ միշտ եղիցի. ամէն.

Գ

Կազմող՝ Մելքէսէք դպիր

Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշել ի Տէր զկապող սորայ զմեղօոր և զանարժան Մելքէսէք դպիրն, որ մէկ Հայր մեղայիւ մի յիշէք. և որ յիշէ՝ յիշեալ լիցի առաջի Աստուծոյ։

181

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մագիստրոս, № 56

Գրիչ՝ Յովանէս վարդապետ
Վայր՝ Կ. Պոլիս

38 Փառք...։ Գրեցաւ գիրքս ի մեծահանդէս քաղաքն Կոստանդնուպոլիս, ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին, ի հայրապետութեան սբ. էջմիածնի տէր Մելքիսէք կաթողիկոսին և միակամ Դաւիթ կաթողիկոսին, որ այսքան ամ է հալածական կան Պարսից արքայէն շահ Ապազայ. և սբ. էջմիածնայ դուռն ոչ ոք կայ սպասաւոր, որ պաշտէ և կամ կանթեղ լուցէ և խունկ ծխէ, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Այսմ աւուրս որ յիշատակարանս գրէ[ա]ք, լուր եղև թէ ազգէն Ռուզաց, որ խազախ

անուանեալ, այս է թէ որքան անարգ և անպիտանք են, միաբանին և տեղամուտ գողք, և ի վերայ ծովու նաւեցելոյ և նաւոց յափշտակողք, եկն և եկեալ մտին Սև ծովու ի ներս և մտեալ այրեցին զՆորգեղն, որ բազմաբնակ և յարոտից [են ?] և այլ քանիս փոքր գեաւղք, որ էր աւուր Տաճկաց Պայրամի աւուրն։ Բովանդակ այրեցին, կողոպտեցին, զոմանս ի սուր սուսերի մաշեցին և զոմանս ծովահեղծ արարին, զգեղեցկատեսիլ կանայս, և զմանկտիս, և զծառայս, և զաղախնայս, որ զերիք էին տարաւ։ Եւ երեկոյի առաջի պահուն եկին մինչև երրորդ պահն գործեցին զայսքան իրս։ Մինչ թագաւորին իմացուցին, ուրբա անցան գնացին ընդ որ եկն, և ոչ ոք ընդդիմացաւ դէմ նոցա։ Այս աւրն որ մազապուրծք եղեն ի ձեռաց նոցա՝ ոմանք լաւ թէ սուաղ կինս տարան, ոմանք վասն որդոց և դստերացն լան։ Միթէ ամենազաւրն Աստուած փրկէ այսպիսի վտանգէ։

Եւ անկ եղեալ կատարեցաւ ինձ մեղաւոր Յովանէս վարդապետի և առաջնորդ այսմ նահա[ն]կիս և աթոռակալ Ս. Յովհաննու Աստուածաբան վարդապետի։

Գրեցի զսայ յիշատակ նաև ծնողաց իմոյ, հաւրն իմոյ՝ Մուրատշայի և մաւրն իմոյ՝ Ազնիփն... և պապս եկեղեցապահ Յակոբին և մամուն՝ Մուրատ խաթունին...։ Այլ և սպասաւոր յիշեցէք զմեծ ռաբունապետն իմ՝ զտէր Յակոբ... նաև տէր Մինաս քաջ ռաբունապետն յԱրզումցի, որ յետ վարդապետիս վախճանելոյն գաւազան իշխանութեան հասոյց...։ Գրեցաւ և ծաղկեցաւ սայ թուականիս Հայոց ՌԻ-ի Հ-ի և Գ-ի (1624) յունիսի ամսոյ ԻԶ (26)-երրորդի, յաւուր շաբաթի...։

182
ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 6321. տե՛ս նաև ՅԶՆԴԿ, № 30, էջ 58,
Zeitschrift für armenische Philologie B. II, H. IV, S. 272

12ա Ի թուին ՌՀԳ (1624) յուլիս ամսոյ ի ԻԵ (25) սկսանի Բուզանդոյ գրել։ Օգնեայ ինձ հոգիդ սբ. Աստուած։

183
ԱԻԵՏԱՐԱՆ

Չիկագո, № 1017 (մանրաժապավեն, Երևան, № 615)

Գրիչ՝ Ստեփանոս դպիր
Վայր՝ Հալապ, Կարմունն

328ա Փառք...։

328ա Գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն ի Հալապ, ընդ հովանեաւ Ա. Աստուածածին և Քառասունք սբ. եկեղեցեացն, ձեռամբ անարժան Ստեփանոս գրչիս, ի թվին Հայոց ՌՀԳ (1624), ի ժամանակս սուլթան Մուրատին, ի հայրապետութեան տեառն տէր Մելքիսէդ կաթողիկոսի, ի առաջնորդութեան տէր Յոհանէս քաջ ռաբունապետին, ի յաթոռակալութեան տէր Նահապետ արհեպիսկոպոսին, որ պատճառ եղև սբ. Աւետարանիս ծախմանն, որ և ինքն Քրիստոս զինքն ընդ առաջին հայրապետացն

դասեսցէ. ամէն։ Այլ և յիշեսչիք զստացող սբ. Աւետարանիս զմղտսի Գրիգորն և Աստուած ողորմի ասացէք իւրն և հօրն՝ Պողոսին և մօրն՝
328բ Թուրվանեին // և կենակցին մղտսի Նաոմելիքին, և քրւերցն՝ Աբլազին, Եւգինէին, և հօրեղբօրն որդոյն՝ Թորոսին, և մեծ մօրն՝ Մարգարտին և ամենայն արեան մերձաւորացն...։

Այլ և կրկին յիշեսչիք զմղտսի Գրիգորն և զամենայն ազգայինսն, որ լի և առատ սրտիւ և յօժար կամօք ըստացաւ զսբ. Աւետարանս... և եդ յիշատակ ի տիրախնամ և աստուածապահ դեզն Կարմուենն, որ է մերձ ի մայրաքաղաքն Եդեսիայ, որ այժմ կոչի Ուրհայ, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին, ի վայելումն տէր Իւրին և տէր Սիմէոնին։ Զոր և ինքն Քրիստոս Թագաւորն ընդունի զբարի յիշատակ սորա...։ Եւ մի՛ ոք յիշեսցէ հանել զսա ի դրանէ սորա ծախելով կամ գրաւ դնելով։ Եթէ ոք [յ]անգգնի՝ զպատիժն Կայենի և զանէծքն Յուդայի առցէ, այլ լաւ պահողն աւրհնի Աստուծոյ. ամէն։

Այլ և Աստուած ողորմի ասացէք խղճուկ գրչիս Սաեփանոս դպրիս և ծնողացն իմոց՝ հօրս Մարգարէին և մօրս Մարգարտին. ամէն։

329ա Գրեցաւ յիշատակարանս ի թվին ՌՀԳ (1624), ի յօգոստոս Իէ (27), աւուր ուրբաթի, ի վեցերորդ ժամուն, ի գեւղն Կարմուենն, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին։ Գծումն սորա ի Բերիա եղև և վաճառն ի Յուրհայ։

184
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Երևան, № 2292

Գրիչ՝ Մատաթեայ քահանայ

ա

68բ *Մեղսամակարդ* Մատաթեայի,
Անուամբ Լեթ *քահանայի,*
Ձեռամբ գրեցաւ յայս մատենի,
Բառք Նոր և Հին Կտակարանի։

բ

211բ *Փառք...*
Գրեցաւ գիրքս այս հաւաքարան,
Ձեռամբ եղեղն Մատաթիայն,
Աբեղայի ողորց արժան,
Սրիկայի քան զէքս համայն։

գ

273ա *Թուականն ՌՀԳ (1624) էր, որ ի մարտի ԻԴ (24) լուսին խաւարեցաւ երեկունն առաջին ժամն, որ է խաւարակն, օրն Աւագ չորեքշաբթի։ Եւ անտի յառաջ եկն ՃՀէ (177) օր, որ սեպտեմբերի ԺԷ (17) էր խաւարեցաւ արեգակն, օրն ուրբաթ և անտի յառաջ համարեա ՃՀէ (177) միւս անգամ կու խաւարի։*

185
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3965. տե՛ս նաև Թ82Դ, Ա, էջ 95

Գրիչ՝ Ներսէս դպրապետ
Վայր՝ Կամէնից

63բ Գրեցաւ Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր և անարժան Ներսէս դպրապետի, ի քաղաքն Կամէնից, որդոյ Հօլուպ վոյթի, թվին ՌՀԳ (1624) հոկտէմբեր ամսոյ Գ(3)։ Աստուած ողորմի վարպետաց հոգոյ[ն][3]։

186
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8873

Գրիչ՝ Յոհան դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

159ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ բժշկարան գիրքս, որ կոչի Հաքիմարան, ի խնդրոյ և ի վայելումն բարեսէր և բարեաց արժանի Մծբնեցի խոճայ Պողոսին, և իւր աւրհնեալ զաւակացն և ամենայն ազգականացն և արեան մերձաւորացն։ Արդ՝ աղաչեմ զհանդիպողսդ և զօգտակարսդ յայսմ Հաքիմարանէս, յիշել և յիշատակել զվերոյ ասացեալ խոճայ Պողոսն և զամենայն արեան մերձաւորսն՝ թէ՛ զկենդանիս և թէ՛ զհանգուցեալսն, որ ի Քրիստոս, որ ետ զսա գրել վասն փրկութեան հոգւոյն իւրոյ, և ծնողացն, և ամենայն ազգականացն ի յօգուտ հիւանդութեանց և հիւանդաց։ Եւ թէ ոք յայսմանէ օգտի կամ զօրինակն առնու, յիշէ զծնողսն խոճայ Պողոսին, զհայրն իւր՝ զՄարտիրոսն և զմայրն՝ զԽամոշն, և զեղբարքն՝ զԹադէոսն, զՊետրոսն, զԱռաքելն, զՅակոբն և զՅոհաննէսն, և զորդիքն իւր՝ զԹադէոսն, զՅակոբն և զմիւս Յակոբն, և զքոյրն իւր՝ զՆոնոֆարն, և զհօրեղբայրն զՄխիթարն և զԽաչատուրն, և հօրեղբօր որդիքն՝ զՀայրապետն, զԹումասն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն, որ առ Աստուած փոխեր են, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զկենդանի աղգակիցն նորա, նախ՝ զորդիքն իւր զՊետրոսն և զՄխիթարն, և զքոյրն՝ զՆասապն, և զեղբօր որդին՝ զՄարտիրոսն, և զդուստրն իւր՝ զՇահումիանն, և զկողակիցն իւր զԽանումն, և զքրոջ որդիքն՝ զՄխիթարն, զՂարիպն, զՀայրապետն և զայլսն։

159բ Դարձեալ յիշեցէք զեղբօր որդիքն իւր՝ զՆազարն և զմիւս Նազարն, և զքոյր սոցա զԵղիսէն, և զդուստրն իւր՝ զՇահումիանն և զԹարէզն, և զքոյրն իւր՝ զՆարկիզն և զՇահումն, որ առ Աստուած փոխեր են, յիշեցէք...։

Նաև զգրիչ նոտրող սորին յիշեցէք զՅոհան դպիրն ի Լէհաց տանէն, ի քաղաքէն Կամէնիսու, և զծնողսն իմ, զհայրն իմ՝ զՋաթիկն և զմայրն իմ՝ Ջմրուքն, և զեղբայրն իմ՝ զտէր Գրիգոր քահանայն, և զքոյրն իմ՝ զՄարանէն, և զմօրաքոյրն՝ զՇուշանն, և զորդին իւր՝ զԽաչատուրն, և զայլ ամենայն կենդանի և զհանգուցեալ զազգայինսն իմ, յիշեցէք...։

[3] Հմմտ. № 245 հիշատակարանի բ մասի հետ։

Գրեցաւ ի քաղաքն Կոստանդինուպոլիս, ի թվին Հայոց ՌՀԴ (1624) նոյեմբերի Ի (20)[4]։

Բ

521բ Եւ զծրող Յովանէսս յիշեայ ի Տէր։

187
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 614

Գրիչ՝ Սիմոն երէց

Ա

75ա Զմեղաւոր և անթիւ մեղօք շաղախեալս ՌՌ. ԺԺ. ՃՃ. ՅՅ. ՄՄ° լոկ անուն էրէցս, գծողս այս տառիս և զծնօղսն իմ և զորդիքս իմ յիշեսիք մի Տէր ողորմեայիս... նաև զրստացաւղ սորա զխոճա Պաղումն Ճուղեցին, որ ետ զսա գրել շերմեռանդ և փափագ սրտիւ <ետ զսսա գրել> յիշատակ իւր անձինն...։

Բայց գրեցաւ սա ի թվին հայկազան սեռիս ՌՀԴ (1624) դեկտեմբեր ամսոյ Ը (8)-երրորդին[6]. եղև զրաւ սորա ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Բ

75բ Եւ զողորմելի մեղաւոր և անարժան, լոկ անուն Սիմոն էրէցս յիշեսջիք և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալուստն. ամէն։ Ո՜հ, ո՜հ, ո՜հ թէ գիրս մնայ և մատունքս փոշի դառնայ[7]։

188
ԺՈՂՎԱԾՈՒ
Երևան, № 3498

Գրիչ՝ Յոհան Ջուղայեցի
Վայր՝ (Նոր) Ջուղայ

Ա

321բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ Յոհան սուտանուն իրիցոյս, ի դառն և ի նեղ ժամանակիս, ի թվականիս Հայոց ՌՀԴ (1624) աւարտ եղև այս գրիս։ Արդ՝ ես Յոհան անարժան էրէցս գրեցի զսայ յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց տէր Մեսրոպին, Սալինջէ, և կողակցին իմոյ՝Շարբսաանին, և որդոյն իմոյ՝ Ներսէսին, և դստերացն՝ Յուղիզէ, Խոսուսանթոսին յիշեցէք...։

---

[4] Հայոց ՌՀԴ տարեթիվը սկսվում է 1624 թ. հոկտեմբերի 16-ից (հուլյան տոմարով)։ Ուստի հայոց ՌՀԴ նոյեմբերի 20-ը կընկնի 1624 թ. մեջ։

Սույն ձեռ-ը գրվել է մի քանի գրչի կողմից և տարբեր ժամանակներում։ Ձեռ-ում գտնում ենք երկու գրչի հիշատակարան, առաջինը սա է, երկրորդը տեսնել 1626 թ. շարքում։

[5] ՌՌ(=Ս), ԺԺ(=Ի), ՃՃ(=Մ), ՅՅ(=Ո), ՄՄ(=Ն)=Սիմոն։

[6] Տոմարական մեր դիտողությունները տե՛ս № 186 հիշատակարանի 4-րդ ծանոթագրությունում։

[7] Նման մի հիշատակարան էլ, չափածո և առանց գրչի անվան հիշատակության գտնվում է 33ա էջում։

Բ

104բ Քրիստոս Աստուած սբ. միանձանց ճրգնաւորաց, որ աստ կան հաա-
105ա քեալ, բաբեխաւութեամբ սոցա ողորմեա մեղաւոր գրչիս...//... և զիմ
ծնաւղացն տէր Մեսրոպին, Սալինչէ, և զկողակցին իմոյ՝ Շարբսաանին
և իմ որդոյն՝ Ներսէսին, և իմ դստերացն[8] Յուլիդէ, Խոուսանթոսին, մի՛
անտես առներ ի քո յողորմութենէն...։

Դարձեալ յիշեսչիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Յոհան Երէցն,
որ զգործս չունիմ, այլ անուամբս եմ բարձացեալ և սնափառեալ... յոր-
ժամ կարդակ զՀարանց վարքս... ի սխալանաց և ի արճալ գրչիս անմե-
ղադիր լերուք, զի կարս մեր այս չափ է...։

Ի թվականիս ՌՀԴ (1624) գրեցաւ և Հայոց Զատկի չորե[ք]շաբթին,
շամշ ամսին ԺԱ (11) սուարտեցաւ[9]։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս.
ամէն։

Գ

201բ Տէր Յիսուս Քրիստոս... յիշեայ զհոգի գծողին Համբեցի Յակոբ իրի-
ցին յաւրինակին, որ յառաջ գրեաց, նետոյ ես Զուղայեցի սուտանուն
Յոհան Երէցս աւրինակեցի։

Դ

260ա Փառք...։ Գրեցաւ դիրս ի Շաղ քաղաքն՝ Ըսպահան, ի դեղն Զուղայ,
ի դրունս Ս. Բեթանիոյ յեկեղեցին, որ է Հարանց վարք և Աւրբէլանցն և
Ս. Տղայութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ի թվին ՌՀԴ (1624), արամ
ամսին Ե (5), արն երկուշաբթի աւարտեցի[10], ձեռամբ սուտանուն Յոհան
իրիցուս, որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Ի առաջնորդութիւն Խաչատուր
վարդապետին և ի հայրապետութիւն Մելքիսէք կաթողիկոսին։ Եւ որ զմեզ
յիշէ կարդալով կամ աւրինակելով, ողորմի ասէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ
Աստուծոյ մերոյ. ամէն։

Ե

314ա Յոհան Երէց Զուղայեցի,
Եւ եմ որդի տէր Մեսրոպի,
Դուք ասացէք սրտով ի լի,
Ինձ և իմ հօրն տէր ողորմի։
Թվական Հայոց տասն հարիւր,
Եւթանասուն Դ /// այլուր (1624)
Պարսիկ ազգն են օրինօք թիւր,
Զազգդս [խա]նձեն որպէս զհուր։

---

[8] Ձեռ-ում «դստերտերացն»։

[9] 1624 թ. Զատիկը հուլյան տոմարով կլինի մարտի 28-ին կիրակի, իսկ Զատկի չորեքշաբթին կլինի մարտի 31-ին։ Մարտի 31-ն էլ՝ համապատասխանում է Ազարիա Զուղայեցու տոմարի շամսի 11-ին։

[10] Հայոց ՌՀԴ թվականի արամ ամսի 5-ը համապատասխանում է 1624 թ. դեկտեմբերի 20-ին։ Եվ այդ օրն էլ իրոք երկուշաբթի է։ Ուստի սույն հիշատակարանը գրվել է 1624 թ. շարքում։

Զ

318ա Զեղկելի Յոհան յիշ[ե]այ և հայրն իմ՝ Մեսրոպն և զմայրն իմ՝ Սալինեէն, և զեղբայրն՝ Եփրեմն, և զքոյրն իմ՝ Մէրտաթիկն, և զորդին իմ՝ Ներսէսն, և դստերքն՝ Յուդիդէն և Խոուսանքոսն:

Է

81ա Զմեղաւոր Յոհան էրէցս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ աւուրն դատաստանին։

Բ

83բ Հարանց վարք սայ գովելի,
Եւ փափակումն Յոհան իրիցի,
Ի յիշատակ սայ ինձ լիցի,
Եւ յիշեսջիք միով Տէր ողորմիայիւ,
Յիշեալ լիշիք դուք ամենի։

Բ

108ա Զմեղօք մեռեալ ծրագրող սորայ զսուտանուն Յոհան անուն իրիցուս յիշման արժան արարէք և Աստուած զձեզ յիշէ. ամէն[11]։

189

ԱՒԵՏԱՐԱՆ

Վատիկանի գրադարան, № 68 (1357 թ.)

119 Այլ և յիշատակ է սբ. Յաւետարանս Ս. Աննայի վանք, չունի ոք իշխանութիւն որ զսբ. Աւետարանս հանէ ի վանացս, կամ ծախէ, կամ գրաւ դնէ, կամ այլ ու այլ պատճառաւ ուրիշ տեղ տանի, զայն առն[է] որ Ուղայ առաւ իւր վարդապետէն. ամէն։

Գրեցաւ գիրս թվին ՌՀԴ (1624) դէ[կտեմ]բերի ամսոյ ԻԶ (26)[12], աւրն, Պետրոսի և Պողոսի առաքելոցն տա[ւ]ն է։

190

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 180 (1295 թ.)

Հետ. ստացող՝ Արիստագէս վարդապետ

563ա Փառք...։ Ի թուականութեանս հայկազեան տոմարիս հազարերորդի եւթանասներորդի երրորդի (1624) ես՝ վերշինս ի բնաւիցս և տրուպս ամենայնի, տղխեղծ և փցնամիտ բանի սպասաւորս Արիստագէս լոկ վարդապետ [յ]որշորշեալ, ցանկացաւ եղէ Աստուծաշունչ սբ. գրոցս և ելի ի խնդիր սմին մեծաւ փափագանաւք, մինչ գի հինգ և վեց ամ ի պանդխտութիւն շրջեցայ վասն սորա, միթէ լիցի զի հասից փափագանաց իմոց։ Ապա նա որ ամենայնի կարողն է և ծածուկ սրտից և խորհրդոց

[11] Նման և համառոտ հիշատակարաններ տե՛ս նաև 38ա, 95բ, 177ա, 272ա, 294բ էջերում։

[12] Տոմարական մեր դիտողությունը տե՛ս № 186 հիշատակարանի 4-րդ ծանոթագրությունում։

քննողն, և աներկբայ խնդրողաց ըղձից լցուցանողն՝ ըստ խոստմանն խնդրեցէք և առնուցուք, հասոյց զյիս տենչանաց իմոց և ելից զփափագն իմ։ Վասն դի յորժամ գնացաք ի Տիգրանակերտ, կամաւքն Աստուծոյ պատահեաց մեզ Աստուածաշունչ սբ. գիրքս մեծագին և բազմածախ։ Ստացայ զսա ի վայելումն անձին իմոյ և առաջնորդ հոգւոյս իմոյ, զբազմանց զսիրտս իմ սրբելոյ, Հոգւոյն Սրբոյ պատրաստելոյ և յետ աստեացըս ելանելոյ՝ յիշատակ բարի մնալոյ տէր Կիրակոս հաւրն իմոյ և Հռիփսիմէ մաւրըն իմոյ։ Արդ՝ ստացայ զսայ յիշատակ բարի հոգւոյս իմոյ և եղբաւրն իմ՝ Վրթանէսին, և պահեսցէ Քրիստոս զինքն անփորձ հանդերձ որդովն իւրով՝ Կիրակոսիւն. ամէն։ Եւ ծնաւղացն իմոց՝ տէր Կիրակոսին և մաւրն իմ՝ Հռիփսիմէ, որ մականունն Կուլֆան կոչի, որ հանգուցեալ են ի Քրիստոս և այլ եղբարքն իմ, որ աստեացս փոխեալ են՝ Ստեփաննոսն և Խարշայն և Յուսիկն և ամենայն արեանառու մերձա-
563բ ւորքն իմ յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր...։ // Եւս առաւել աղաչեմ ո՛վ սբ. ընթերցաւղք, յիշել ի մաքրափայլ աղաւթս ձեր զհարազատ և զսիրասնունդ աշակերտն իմ՝ զտէր Թադէոսն, որ բազում աշխատանս կրեաց ընդ յիս մինչ որ ստացայ զսբ. Աստուածաշունչս...։

Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմահդասի Մելքոնն և զորդիսն իւր՝ զԱստուածատուրն և զԽոնանանն և [զ]Հրմըզն և զծնաւղս իւր, որ ետ կապել զսբ. Աստուածաշունչ գիրքս և արդար վաստակոց իւրոց ետ զկապելէն իւր հոգւոյն համար...։

Բ

Կազմող՝ Մելքէսէք
Վայր՝ Ղալաթիա

Ընդ յառաջին աշխատողացն և ստացողացն սբ. Աստուածաշունչ մատենիս յիշեսջիք և զիս զՄելքէսէք[13], և զուսուցիչն և զդաստիարակողն իմ զՄելքէսէք վարդապետն, որ են տեղւոյ Սեփաստիացի, որ հանդիպաք ի Կստամպոլ և զԱստուածաշունչ գիրքս ետ ինձ կապել Արիսաագէս վարդապետն Խարբերդցի, ի Ղալաթիա, ի դուռն Ս. Խաչին և Ս. Լուսաւորչին, թվին հայկազնեայ տումարիս ՌՀԳ (1624)։ Աստուած բարով վայելել տացէ...

191
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 361 (1572 թ.)

ա

220 ա Փառք...։ Արդ՝ որք հանդիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք յերկնագնաց յաղաւթս ձեր զհեզահոգի քահանայն զտէր Ղուկասն և զկողակիցն իւր՝ Շահմիրան, և զորդիքն իւրեանց՝ Թադէոսն[14], և զեղբայրն իւր՝ Բաղիրն և զկողակիցն իւր՝ Ծամէրն և զորդիքն իւրեանց, որ հանգուցեալ են առ

[13] Հաջորդ բառի տեղը բաց է թողնված։
[14] Ձեռ-ում մեկ-երկու անվան տեղ բաց է թողնված։

Քրիստոս, և զդստերքն իւրեանց՝ Հասրաթն, Խանումն, *և միւս եղբայրն՝* Թամուրն *և զկողակիցն իւր՝* Խանաղէն, *և զորդիքն իւրեանց՝* զՊատրոս *սարկաւագն,* Յաքումն, Կիրակոսն, Յուսիկն, *և զդստերքն իւրեանց՝* Թամամն, Մարիամն, *և զծնաւղքն իւրեանց՝* զԱղուպն *և զկողակիցն իւր՝* Հասրաթն, Համանգուլն, *և զդուստր* Փարիխան *յիշեցէք ի Քրիստոս... որ ըստացան զսբ. Աւետարանս// ի հալալ և յարդար վաստակոց իւրեանց, յիշատակ հոգոց իւրեանց և ի վայելումն անձանց իւրեանց։*

220բ

Ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624), որ ըստացաք զսբ. Աւետարանս յիշատակ մեզ և որդոց մերոց. ամէն։

Բ

Յիշեցէք ի Քրիստոս զԳուլիսաանն... Խաւսրովին, Ղուլին, *Աստուած ողորմի իւրեանց հոգոցն. ամէն։*

192

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 960 (1498 թ.)

2բ *Դարձեալ յիշեցէք* Ջուղայեցի Շապանն *և որդիքն իւր՝* Տէրունն, Եղնազարն, Մանասն, Աստուածատուրն, *և որդիքն իւրեանց՝* Յոհանն, Յովանէսն, Փիրիմալն, Եղնազարն, Մնացականն, *որ սբ. Մաշթոցս տվաք յիշատակ ի ձեռն հոգևոր հաւրն մերոյ* Մովսէս *վարդապետին, եւ որք հանդիպիք... Աստուած ողորմի ասացէք...։*

Թվականիս Հայոց ՌՀԳ (1624) ամին։

193

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան, № 1193

Գրիչ՝ Ստեփանոս քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

298ա *Եւ արդ՝ ես յետինս և անարժանս... քահանայից* Ըստեփանոս *անուն, որ անուամբ միայն եմ քահանայ և ոչ գործով, շ[նորհօք] Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի /// ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624) ամի /// ի թագաւորութեան Պարսից շահ* Ապաս *արքային և ի հայրապետութեան մերոյ գեղջիս* Ջուղայու [խաչա]տա[ւ *բաբ]ունապետին, որ և անդ /// ցանկացաւ և գրել ետ զերդարանս Դաւ[թեա]ն մեկնութեանն...։*

Բ

231ա *Զըստացող գրոյս* զԽաչատուր *վարդապետն և զծնօղքն իւր յիշեցէք ի Տէր։*

194
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1299 (1620 թ.)

Նորոգող՝ Ստեփանոս
Վայր՝ Ամիր

272ա Ես՝ անարժան Ստեփանոս, որ մականուամբ Կարմիր կոչի, նորոգեցի զայս մատեանս Առակացն Սողոմոնի և եդի հետ Քաղուածոյն Աւետարանին Մաթէոսի թվին ՌՀԳ (1624)։ Այս յամս Պարսից թագաւորն՝ շահ Ապասն եկեալ էառ զՊաղտաա և զՄուսլ։ Եւ մեք յԱմիր խիստ նեղութեան կայաք, որ փաշան ու ասպահին ու ենկիչարին և այլ մեծամեծքն առանց թագաւորի հրամանացն նոր պարիսպ շինեցին. ամէն։

Աւր որ լուսանայր ի քաղքէն վարպետ ու մշակ կու տանէին ի պարիսպի շինելն։ Ցաթֆայ արարին զգերեզմանի քարերն և զիւրեանց գոներն, քակեցին և բերեն ի պարիսպն։ Աստուած զվերջքն ի բարին կատարէ։ Հանդիպողք այսմ գրիս Աստուած ողորմի ինձ ասացէք և ծնաւղացն իմոց, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

195
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2370

Գրիչ, ստացող՝ Պօղոս Տիւրիկցի
Վայր՝ Բուզանդիա, Ասպահան

ա

60ա Զանմտութեամբ շանողս աղաչեմ յիշել,
Եւ յոյժ անարժանիս Հայր մեղայ ասել,
Եւ զնազելի մատենս խնամօք պահել,
Եւ ի փափագողացըն ոչ արգիլել։

բ

300ա Գրեցաւ թվին Հայոց ՌՀ (1621) մարտ ամսոյ Ի (20), գարնա[նամուտին]։

գ

308բ Փառք...[15]
Նաև ի նազելի սրբոցդ հանդիսի,
Աղաչեմ ապիկարս մի՛ անգոսնեսցի,
Զի ես եմ պարտապան բիւր քանքարի,
Աղաչեմ զանցաւորքըտ ճանապարհի։
Ընկալ ըզսայ Տէր իմ արքայդ երկնային,
Իբրև զլոմայսն այրոյն ի գանձանակին,
Ես որք ի քէն հայցեն վասն իմ զողորմին,
Լրցո կըրկին կենօք զհայցուածս նոցին։

[15] Բացառութեամբ «Փառք»-ից, որին հաջորդում է մի չափածո, առանձին բառերի շեղումով միայն, պահվել է № 140 հիշատակարանում։ Օրինակ, 1-ին տողի «զոլով», 3-րդ տողի «զոգոյս» 6-րդ տողի «պալարեաս» բառերի փոխարեն այնտեղ համապատասխանաբար պահվել է «հոգով», «սրտիս» և «սասունեաս» և այլն։ Երկու հիշատակարանն էլ գրի ինքնագիրն է։

300ա Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ և հովանաւորութեամբ Որդոյն միածնի և գործակցութեամբ Հոգոյն Արքոյ յանգեալ աւարտեցաւ ամենապարթամ գանձս և իմաստնոց փեհարանս... բարելի և հոգիազարդ տառս որ կոչի Քերական, այլ և Բառգիրք և Աշխարհացոյց և այլ սուղ ինչ դուն և խուն բանս։

Արդ՝ սկիզբն գրականութեան սորին եղև ի մայրաքաղաքն Բուզանդիայ, ի դուռն Ս. Նիկողայոսի Զմիւռնոյ հայրապետին, և ի պատահմանէ ոչ աջողութեան յամրացաւ գծագրութիւն սորին։ Եւ յետ չորից ամաց ապա աւարտեալ եղև ի ՌՀԳ (1624) թվին, ի Շօշ քաղաք, կոչի Ասպահան, առ ափն Սանտարու գետոյն, ի դուռն սբ. մենաստանին, որ կոչի Ս. Փրկիչ,

309բ առ ոտսն գերերջանիկ և երանաշնորհ, եռամեծ...||... սբ. բարձնապետին Խաչատուրի, ի վայելումն ինձ անարժանիս և խոպանացելոյս ի համայն առաքինութեանց, աշակերտ նորին, կոչեցեալ սուտանուամբ Պօղոս արեղայիս։ ...Արդ՝ յետ դուզնաքեայ բանից առ տուս անկեալ արտասուալից հառաչմամբ... աղաչեմ... որք հանդիպիք այսմ նազելի և լուսազարդ մատենիս կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր... զանարժան հող և մոխիրս, զլոկ անուամբ Տիւրիկցի Պօղոս արեղայս, և զհայրն իմ՝ մականուամբ զՄեղրիկանց Սաաղան, և զմայրն իմ՝ զԱղատեկին, և զեղբարսն իմ և զքրեարսն իմ...։

Դարձեալ աղաչեմ յիշեցէք ի Քրիստոս զտէր Ղուկաս քահանայն, որ ինձ զշարականն դաս ետուր և զտէր Նաղարէթ քահանայն, որ վարժեաց զմեզ յուսումն գրչութեան, ըստ կարեաց և յարհեստ քերականութեան, զոր տէր Աստուած հատուսցէ նմա. ամէն։

310ա Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զսրբահոգի վարդա||պետն մեր զտէր Խաչատուր քաշ բարունապետն, որ պատճառ եղև կրօնաւորութեան մերում և բազում աշխատանս կրեաց վասն իմ առ ի յուսումն աստուածաբանական իմաստից և յերգս ձայնաւորաց փոքր ի շատէ ըստ կարեաց իմոց և արժանացոյց զանարժանութիւնս իմ աստիճանի սարկաւագութեան, զոր տէր Աստուած հատուսցէ նմա ըստ վաստակոց իւրոց։

196

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, Մ 2542 (1476 թ.)

Նորոգող, կազմող՝ Մելքիսեդեկ

161ա Արդ՝ յիշեցէք զՅովհաննէս եպիսկոպոսն հանդերձ ծնաւղաւք իւ[ր]ովք, որ ետ նորոգել զհնացեալ և զփտեալ գիրքս, յիշատակ հոգոյ իւրոյ։ Եւ [ե]ս ծոյլս և պղերքս ամենայնի, սակաւ ջանս արարեալ հազիւ կարացի նորոգել զսայ, քանզի յ[ոյ]ժ հնացեալ էր։

Դարձեալ յիշեցէք զՅովանէս եպիսկոպոսն և զՍրապիոն կրաւնաւորն և զԿոնկուլ տընտեսն, որ յոյժ աշխատաւոր էր ի դուռս վանից, և Աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգոյն...։ Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք սբ. մանկունք, յորժամ ընթեռնուք զդրեալս, յիշեցէք ի

յաղօթս ձեր զՄել[f]իսեդեկ կազմողս։ Ահայ կատարեցաւ այն ի վերայ իմ, որ ասէ. «Եղէ ես որպէս բու աւերակի»[16] և այլն...։

Թվին ՌՀԳ (1624)։

197

ՊԱՏՄԱԳԻՐՔ

Երևան, № 2748

Վայր՝ Ս. Կարապետ (Տարօն)

ա

354ա Ի թվին ՌՀԳ (1624) գրեցաւ Պատմագիրքս յոյժ դառնագոյն աշխատութեամբ և փոփոխմամբ անհմուտ գրչաց և անհանգիստ տատանմամբ ի գաւառէ ի գաւառ, հալածելով ի ձեռաց մահմետականաց. բայց հանդիպողդ վասն Աստուծոյ զսխալն ուղղեցէք և մեղաց թողութիւն շնորհեցէք։

Բ

230ա Զփցուն գրչակս յերես անկեալ աղաչեմ, յիշման աղաւթից արժանի առնել. ամէն։

Գ

257ա Աստ այլ բան կա գրելոյ, օրինակ չկա։

Դ

260բ Օրինակս սխալ է, բայց ես կարծեմ այսպէս լինել.
«Ինքնօրէն ազատ ի կամս թողին ամս ԺԴ (14)»[17]։

Ե

848բ Դարձեալ և ինձ անարժան գրչիս թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ։

Զ

225բ Գրեցաւ պատմութիւնս թագաւորաց մերոց մեծաց ձեռամբ մեղաւորիս, հող և մոխիր փանաքի և թարմատար և կոխան ամենայն մարդոյ, ի վարելումն քաղցրուսուց և երաժշտական ամենագովութեանց արժանաւոր, քաջ հոլտոր Մարտիրոս վարդապետ, առաշնորդ Ս. Կարապետի. ամէն։

Է

Ստացող՝ Մարտիրոս վարդապետ

120բ Մանաւանդ զամենամեղ և զապիկար Մարտիրոսս լոկ անոսամբ սպասաւոր բանի, որ և ստացող և ուղղող ըստ կարի տկարութեանս։

Ը

136բ Յիշատակ է Պատմագիրքս Մարտիրոս վարդապետին, ի դուռն Ս. Կարապետին, որ է ի գաւառն Տարօնոյ, որ Իննակնեան վանք ասի և Գլակայ

---

[16] Սաղ. ՃԱ, 7։

[17] Այս ծանոթ-ը տրված է Սամ. Անեցու ժամանակագրության «Հոմայեցիքն զՄակեդոնացիսն ազատս արարին, ինքնուրէն աղիկամիս թողին ամս ԺԴ» հատվածին (հմմտ. հրատ. էջ 33)։ Գրիչը «աղիկամիս» (ինքնօրեն=αὐτονομος) բառի իմաստը բացատրել է «ինքնօրէն ազատ ի կամս»։

վերակոչի։ Եւ որք օգտիք ի սմանէ՝ տեսանելով կամ օրինակելով և կամ կարդալով, յիշեսջիք զստացող սորա զպիտակ անուն Մարտիրոս *վարդապետ և զծնօղս իւր* զՅոհան *և* զԿուլվարդ, *և զեղբարս իւր* զՍտեփանոս *և* զԱռաքել, *և զքոյրս իւր* զԽրմբզ *և* զՄարգարիտ, *և զեղբօր որդիսն իւր՝* զԿիրակոս *քահանայ և* զՏօնապետ *և* զՍարգիս. *և որ յիշէ ի մեղաց թողութիւն և ինքն յիշեալ լիցի*[18]։

198

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3472 (1620 թ.)

343բ *Գրեցաւ սբ. Աւետարա[նս] ի թվականիս ՌՀԳ (1624) [ձեռ]ամբ անիմաստ* Ղազար *[դրչի]*[19]։

Արդ՝ ստա[ցող եղև]սբ. Աւետարա [նիս Թոխատ]*բցի մահ [տեսի Պ]օղոսն, իւր հալալ [ընչից], յիշատակ իւր հոգոյն և իւր կողակից* Նաղաշին *հոգոյն, իւր ծնօղացն՝* Եաղուպին *և* Ճանփաշային *հոգոյն, և իւր աղբօրն՝* Մինասին, *և իւր կողակցին՝* Սէյրանին *հոգոյն, և եղբարորդոյն* Եաղուպին, *և դստերն՝* Պաճարին *հոգոյն և ամենայն արեան մերձաւորացն։ Եւ եգ յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ, ի ձեռն* Սարգիս *քահանային. ոչ ոք կարող է միւսանգամ գնել կամ ծախելու կամ արգիլելու։ Ով հակառակի՝ Յուդայի պատիժն կրէ։*

199

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3598

Գրիչ՝ Մեսրոպ *դպիր*
Վայր՝ (Նոր) Ջուղա

ա

339ա *Փառք... // ... [Ա]ւարտ եղև տէրունական սբ. Աւետարանն ի թուականիս մերոյ ՌՀԳ (1624), ձեռամբ անարհեստ փղծում տէր* Հայրապետին *և* Մեսրոպ *դպրիս և* Աքամ *աշակերտին։ [Ո]ւստի տեսեալ ըզփ[ր]կական սբ. Աւետարանն հեզահոգի, բարեմիտ և աստուածասէր* Մարգարիտն *ցանկացող եղև այսմ ծաղկաւետ և վարդափթիթ բուրաստանիս, ետուր գրել և զարդարել ի հալալ և յարդար վաստակոց իւրոց...*

339բ *եւ ետ յիշատակ բարի հոգոյ իւրոյ// և ծնօղացն, հօրն՝* Միրաքին *և մօրն՝* Ինաիփաշին, *և եղբարցն՝* Սարգսին, Մարտիրոսին, Սահակին *և* Վարդանէսին, *և քուերացն՝* Գօղալաղին *և* Ոսկուն *և ամենայն արեան մերձաւորացն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարիտն *և զկողակիցն իւր՝* Մկրտիչն, *և զորդին իւր՝* Իշխան *և զդստերքն իւրեանց՝* Խաթունշան *և*

---

[18] Է և ը հիշատակարանները ամենայն հավանականությամբ Ս. Կարապետ վանքի առաջնորդ Մարտիրոս վարդապետի ինքնագիրն է։

[19] Այնպես է դուրս գալիս, որ այս ձեռագիրը ընդօրինակվել է 1624 թ. Ղազար գրչի կողմից։ Իրականում այն ընդօրինակվել է 1620 թ. Միքայել Թոխաթեցու ձեռքով, Վերջինիս հիշատակարանը տե՛ս 1620 թ. շարքում։

զԽալինարն և զմիուս կողակիցն՝ Յովաննէս, և զորդիքն՝ Յովասափն և կողակիցն իւր՝ Խանսօլթան և զորդին՝ Սահակն և զդստերքն՝ Մարիամ, Վարդիսաթուն, Ալմայիսաթուն. և միուս որդին՝ Յուսէփն, և կողակիցն՝ Սօլթան, և որդին՝ Էլէքսանն, և միուս Աւետիսն, կողակիցն՝ Մարանէն, որդին Յովաննէսն, և դուստրն Բադրիխան։ Կրկին անդամ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարիտն և զպապն իւր՝ Սահակն և զկողակիցն իւր՝ Խա-
340ա թունչան, և զմիուս պապն՝ // Պապուչան և կողակիցն՝ Դօլուաթ, և զորդին՝ Քրման. և զհայրաքուերքն իւր՝ Սօլթան, Գօզալաղէն, և զմայրաքուերքն իւր՝ Աղաբէկին, Գուլբնարն և զամենայն արեան մերձաւորս։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱմիրխան և զկողակիցն իւր՝ Խալինարն, և զորդիքն իւրեանց՝ Զաքարէն, Մարգարէն, Ազարէն և զԱնանիէն, և դուստրն՝ Նազլուխան...։

Բ

338ա Գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրն Պարսից, ի քաղաքն Շօշ, որ կոչի Ասպահան, ի գիւղաքաղաք Ջուղայ, ի դուռն Ս. Աստուածածնին. ամէն։

Գ

Ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

340ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիս զանարժանս զՄեսրոպ դպիր Խիզանցի, որ ծաղկեցի և կազմեցի... յիշեցէք զիս զանարժանս[20] և զմարմնաւոր ծնօղս իմ՝ զտէր Մարտիրոսն և զԽոնդքարն, և զեղբայրքն իմ՝ զտէր Թադէոսն և զՊարսամն, և զքուերքն իմ՝ Աննայն և զԴեղծուն...։
340բ Նս առաւել զհոգևոր վարպետսն իմ՝ նախ զտէր Սարգիսն, // որ մականուն Մազման կոչի, և զմիուս վարպետաց վարպետն զտէր Մարտիրոս Խիզանցին և զամենայն աշխատաւորս, որ ի յարուեստս յայս աշխատանք ունին...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՂարախան և զկողակիցն իւր՝ Նուրիխանն, և զորդին իւր՝ Սարուխանն, և զդուստ[ր]քն՝ Էլիխանն և զՆազլուխանն։ Նս առաւել յիշեցէք ի Քրիստոս զՎարդանէսն, զԱմիրխանն և զեղբայրն իւր՝ Միրզէն և կողակիցն՝ Մարիամն...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՅովաննէսն, և զկողակիցն՝ Մարիամ, և զորդին՝ Յովասափն, և զկողակիցն իւր՝ Գուլդասաէն, և զեղբայրն իւր՝ Պեարոնն յիշեցէք։

200

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 4004 (1420 թ.)

1բ Թվին ՌՀԳ (1624) Մովսէս վարդապետն գնաց Ասպահան, բազում բարութիւնս հաստատեաց։ Նս ես նուաստ Ղրստակէս անապատին սեղանատունն շինեցի և զիրքս ալրինակել տուի[21]։

[20] Ձեռ-ում «ժանարժանս»։

[21] Ձեռագրի 901 և 902-րդ թերթերի մի մասն է պահպանվել, այստեղ մնացել է հետագայի ստացողներից մեկի հիշատակարանի մի փոքրիկ հատվածը (1615 թ. նշումով)։ Բերում ենք հիշատակարանի պահպանված մասը. /// «[կար]դալով կամ [ա]ռինակել[ով] /// մաքրափայլ աղաթս ձեր /// և զձերն ոչ յիշէ ասրն վերջի[ն] /// թվին ՌԿԴ (1615) էր»։

201
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4185 (ԺԳ դար)

Կազմող՝ Դաւիթ Շնողնեցի

288ա Զվերջի[ն] կազմող սբ. [Աւետարանիս] սուտանուն Շնողնեցի Դաւիթս: Կազմեցաւ ի թուիս Հայոց ՌՀԳ (1624)։ Զհայրապետութեան սբ. աթոռոյուն Հաիպատայ Կիրակոս արհեպիսկոպոսին, որ է աւրհնեալ յափտեանս. ամէն։

202
ՃԱՇՈՑ
Երևան, № 4522 (1421 թ.). տե՛ս նաև ՅՀԹԱԻԱ, Զ48, էջ 114, «ՀԱ», 1908 թ., էջ 240

Ծաղկող՝ Ովանէս աբեղայ

4ա Զայս ծաղիկս Դաթևայ անապատին եղև, թիւականին ՌՀԳ (1624) ամին։ Եթէ յիշէք զնկարող սորայ ըզՈվանէս աբեղայ. երես անկեալ աղաչեմ անմեղադիր լերուք վատութեանն։ Ապայ Աստուած ողորմի ասացէք մեղաւորիս, որ ողորմեսցի Քրիստոս Աստուած ի դալստ[ե]անն ձեզ ասողացդ և ինձ խնդրողացս ամենեցուն ամենայն։

Ի այն տարին ծաղկեցաւ, որ սեղանատեղն շինիլ ետ Ըռստակէս[22] վարդապետն, որ առաջնորդ էր անապատին. Աստուած ողորմի։

203
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4975 (1617 թ.)

323բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՍարխոշն և զեղբայրն՝ զՓիրիջանն, և զիւրեանց ծնօղն, զհայրն՝ զՀայրապետն և զմայրն՝ Շանումն և զամենայն ազգականաց նոցա՝ արանց և կանանց, Աստուած ողորմեսցի, որ ոիով և յիշատակ արարին զԴալի Ֆանի բազչի արտն ի վերայ Ա. Յովանի-
324ա սին, ի թվին ՌՀԳ (1624), վկայութեամբ// Յովանէս արհեպիսկոպոսին և Կարապետ վարդապետին և Քալագաթենց մահդասի տէր Կարապե[տին], և տէր Արիսակիսին, և տէր Մարտիրոսին, և Միրաքին /// գեղի տանու-[տէր]/// Աստուած զոիով արա[րողին] աւրհնեսցէ...։

204
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 5676. տե՛ս նաև № 6333, էջ 31բ. № 137

Գրիչ՝ Պօղոս
Վայր՝ Շրնեներ

25[illegible]ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր գիրքս, որ կոչի Յիսուս որդի, ձեռամբ մեղաւոր Պաւղոսին, ի թվականութեանս Հայոց (1624), ի դառն

---

22 Տե՛ս № 200 հիշատակարանը։ Սույն ձեռագրում նույն անձնավորությունը հիշվում է նաև 1621 թ. մի հիշատակագրության մեջ. «Եւ զեղեցի Ռըստակէս յիշեայ վասն Աստուծոյ. ՌՀ (1621) թվ[ականին]» (էջ 54ա)։

և ի նեղ ժամանակի, ի գաւառս Որոտ, ի գիւղս որ կոչի Շրնեեր, ընդ
255բ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Ստեփանոսի, ի յիշատակ Ռրստակէս վարդապետին, որոյ տէր Աստուած վայելել տացէ. ամէն։ Արդ՝ աղաչեմ յիշել ի սբ. յաղաւթս ձեր Ռրստակէս վարդապետն և զծնողացն՝ մահդասի Մարտիրոսն, Մեհրշէն, և զեղբարսն՝ Ալէքսանոսն[23], Մկրտի[չ]ն և մեղսամած գծողիս։

205

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5772

ա

186բ Այլ[24] և ստացող սբ. Մաշտոցիս զԳուար տնտես և զհարն Ղազար և զեղբար զԱւետիս։ Եւ ստացաւ զՄաշտոցս ի դուռ Ս. Գէորգեայ անեայպատին, յիշեայտակ հոգոյ իւրոյ։ Թվեյկանին ՌՀԳ (1624)[25]։

Բ

84բ Եւ զստացողող Մաշտոցիս Գուար տնտես, և զհար Ղազար, զմար Գուլբանար, և զեղբար զԱւետիս, զԱմիրջան, որ ետուր ի դուռ Ս. Գէորգեայ անեայպատին յիշատակ ոգոյ իւրոյ։ Ով որ հան[է] ի դրէ Ս. Գ[է]ո[ր]գեայ ծովեայպատ եկեղեցոյս՝ զանէծ Կա[յե]նի առցէ և զխաչխանց։

Ստացող՝ Պետրոս եպիսկոպոս

Գ

34բ Ես՝ մեղեայպարտս Պետրոս եպիսկոպոս, ծառեայ Ս. Գէորգայ, որ խԹ (49) տարի առաջնորդութիւն արի Ս. Գէորգայ, շատ նեղութիւն և չարչարանք քաշեցի. ա՜խ, ա՜խ, Ռ(1000) ա՜խ ի յայլազգաց ձեռնէ։ Ի դառ ժամ[անակ]իս ձեռնեայգիր, Մաշթոցիս տրի գրել, ձեռ թուլն էր և աչ կոր էր, որ էլ զնչէն[26]։

206

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6785 (1607 թ.)

Հետ. ստացող՝ մանասի Աւետիք

ա

333բ Զըստացող սբ. Աւետարանիս զմահդասի Աւետիսն և ծնողքն իւր՝ խոշայ Բաբաքն, Ուլուխաթունն, և կողակիցն իւր՝ Էմէնփաշէն, և որդիքն իւր՝ պարոն Բաբաքն, Ըռէֆիլիպն, և դստերքն իւր՝ Խալաֆն, Ուղուրլու

[23] Նշված անունը աշ լուսանցքում։

[24] Ձեռ-ի գրչի հիշատակարանը գտնվում է 186բ էջերում, այն «Փառք»-ի հատվածն է, գրչի հիշատակարանի ընդհատված տեղից շարունակված է սույն հիշատակարանը։ Նշանակում է ձեռ-ն ընդօրինակվել է մինչև 1624 թ.։ Վասպուրականի ձեռագրերի հիշատակարանների Բարգամի (№ 6333) ժողովածուում պահվել է նույն անձնավորության հետևյալ հիշատակարանը. «Փառք...։ Նմանակս որ կոչի Մաշտոց, որով կաթողիկէ եկեղեցի զարգարի...։ Գրեցաւ ի թուականին Հայոց մեծաց ՌՀԴ (1625) ամին, զոր գնեաց տնտես Գուար յիշատակ հոգոյ իւրոյ, հարն՝ Ղազարին, մարն՝ Մանուշակին, և եղբարն՝ Աւետիսին, ի դուռն Լիմ անապատի Ս. Գէորգէայ տաճարին, որք հանդիպիք լի բերանով տուք զողորմիս» (№ 176, էջ 39ա)։

[25] Մագիստրոսի ծուցակում թիվը նշված է ՌՀԲ (1623) (տե՛ս Մագիստրոսի ծուցակ, Մաշտոց, № 597, էջ 192)։

[26] Հիշատակարանն ընդհատվում է։

Սոփիէն, Աննէն, հանգուցեալ ի Քրիստոս որդիքն՝ Յակոբջանն, Արդուվմբ-
սէն, դուստրն՝ Մարիամն, հանգուցեալ եղբարքն՝ Յակոբն և Մարգարէն,
334ա հանգուց//եալ աղգայինքն իմ առ Քրիստոս։ Խնդրեմ ի ձէնջ, ընթերձո-
ղացդ ասել ողորմի, և ողորմածն Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

Ես՝ մահդասի Աւետիքս յաւժար կամաւք իմով Աւետարանս շնորհեցի
Մովսէս վարդապետին ի վայելումն անձին իւրոյ, զենման գառին Աստու-
ծոյ. և յոյս փրկութեան հոգւոյ իմ և իմոցն յամենայնի։

Եւ յետ իւրոյ արժանաւոր աշակերտացն վայել տացէ Քրիստոս Աս-
տուածն ամենայնի. ամէն։

Բ

Նորոգող տէր Մինաս

Վերջստին նորոգող սբ. Աւետարանիս զտէր Մինասն յիշեցէք ի
Քրիստոս. ամէն։ Ի թվին Հայոց Ռ և ՀԳ (1624)։

207
ԽՐԱՏՔ
Երևան, № 7247

Գրիչ՝ Աբրահամ կրօնաւոր

45բ Արդ՝ գրեցաւ սակաւ կանոնական և խրատական բանս թվականիս
Հայոց ՌՀԳ (1624), ձեռամբ մեղսամակարթ Աբրահամ և սուտանուն կրօ-
նաւորի։ Աղաչեմ զձեզ, յորժամ պատահիք ի սմայ, յիշեցէք... զԱբրահամ
46ա գծողս սորայ և զծնողքս// [զԱբրա]համ քահանայն և զՄարիամն և
[զեղբայրս] Յովանէս էրէցն, և այլ միւս եղբ[այրս] զՍարգիսն, և զոր-
դիքն մեր՝ Աստուածա[տու]րն և զրՌստակէսն...:

208
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 7760 (1458 թ.)

148բ Թիվին ՌՀԳ (1624) ես մեղաւորս օրհնըւեցայ սբ. Աննայի կիրակին[27]
տէր Խաչատուր վարդապետէն և տէր Թորոս եպիսկոպոսէն։

209
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7842 (1313 թ.)

98բ Ո՛վ եղբայրք, [յորժամ] հանդիպիք սորա կարդալով կամ աւրինա-
կելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, որ է հանգուցեալ առ Քրիս-
տոս, տէր Խաչատուր քահանայն և կենդանի որդին՝ տէր Մեհրոբն[28], և
իւր մայրն՝ Թուրվանդայն, և իւր կողակիցն՝ Բակիխանն, և իւր որդին՝

[27] Մինչև այստեղ կրկնված է նույն էջում։
[28] Բնագրում «Բերսորն» ձևով։

սարգաւակ Սիմաւոնն, Մալիքսէթն, և դուստրն՝ Ղազումն, Մարիամն, Մարգարիտն, Ոսկին, և զքվերցն՝ Սիրիթուխային, Նուրբստանին և իւրեան արեան մերձաւորացն. ամէն։

Ի թվին ՌՀԳ (1624)։

210

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8423 (1422 թ.)

Գրիչ, ծաղկող, կազմող՝ Յովանէս կրօնաւոր

59ա Փառք...։ Արդ՝ ես Յովանէս սուտանուն կրաւնաւորս գրեցի զսբ. Աւետարանս երկու գլուխն և ծաղկեցի ըստ կարողութեան մերում և կազմեցի ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624), ընդ հովանեաւ Հայրածնոյ Ա. Աստուածածնիս և Ս. Գրիգորի Լուսաւորչիս և այլ բազում սրբութեանցս, որ աստ կան կառուցեալ։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սբ. Աւետարանիս[29], որ ետ վերըստին նորոգել, յիշատակ հոգոց իւրեանց և իւրեանց ծնողացն և զաւակացն, առ հասարակ ամենեցուն. ամէն։

211

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 10149 (1829 թ.)

81ա Յիշեցէք զսակաւ աշխատեալս և Աստուած զձեզ յիշէ, ի ժամ սոսկալի ատենին. թվին ՌՀԳ (1624), ձեռամբ Ալէքսիանոս մեղապարտին։

212

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 10200

Գրիչ՝ Սարգիս

ա

70ա Եւ զՍարգիս գծողս գրիս յիշեսցես, զի և դու յիշեալ լիցիս։

Բ

Գրիչ՝ Ամիրաս

Վայր՝ Տրապիզոն

260ա—262ա Այնմեղադիր լերուք սխալանացս, զի կար մեր այսչափ էր։ Առջի աւրինակն ուռուան այրեց, ապա տարով մի յետև զայս ի մտաց գրեցաք ի թվականին ՌՀԳ (1624)[30], ի ժամանակն սուլթան Մուրատին, և ի կաթողիկոսութեան տէր Մելքիսեթին, ի հայրապետութեանն տէր Աւետիքին։

[29] Ձեռ-ում մոտավորապես մեկ տող ապագա ստացողի անվան տեղը, բաց է թողնված։

[30] Ձեռ-ի 293բ, 299ա էջերի հիշատակարաններում տարեթիվը միևնույն գրչից նշված է ՌՁԳ (1634)։ Իրոք այդպես է եղել, թե՞ անուշադրության վրիպում է՝ ՌՀԳ-ն պետք է լինի ՌՁԳ։

Գրոցս ձեռամբ տրուպ Ամիրասէ, ի քաղաքն ի Տրապիզոն. Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

Ժամանակ մի մենք էաք որպէս զձեզ,
Ժամանակմ այլ դուք լինաք որպէս զմեզ։

213
ՇԱՐԱԿՆՈՑ

Կ. Պոլիս, ազգային պատրիարքարան, № 22 (մանրաժապավեն, Երևան, № 539)

Գրիչ՝ Կարապետ Յեղոկիացի
Վայր՝ Յեղոկիայ

ա

ՃԻԲ Զմեղաւոր գրչիկս՝ զԿարապետս աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ սբ. քահանայք եկեղեցոյ։

բ

ՉԿԴ Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Շարակնոց ի թվարերութեանս Հայոց ՌՀԳ (1624)-ն, ի քաղաքիս Յեղոկիայ, ձեռամբ Կարապետ փծուն գրչի Յեղոկիացոյ, ի փառս Աստուծոյ և ի պայծառութիւն մանկանց եկեղեցոյ. ամէն։

214
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղէմ, № 2560 (մանրաժապավեն, Երևան, № 735)

Գրիչ, ծաղկող՝ Կիրակոս
Վայր՝ Հիզան, Աւրնդանց

ա

4բ Նկարի մոտ Կարապետ վարդապետն է ստացող սբ. տառիս։

բ

Նկարի մոտ Մեղատոր Կիրակոսն է ծաղկող սորայ։

գ

68ա Բարեխաւսութեամբ մարգարէին Մովսէսի ողորմեա տէր Աստուած ստացողի գրոցս Կարապետ վարդապետին և ծնողաց, և եղբարցն, և ամենայն ազգականաց նորին. և ինձ մեղապարտ գծողիս, և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորացն և վարպետին իմոյ Սարգիս քահանային։

դ

202ա Բարեխաւսութեամբ աստուածախաւս մարգարէիցն ողորմեա տէր Աստուած ստացողի գրոցս Կարապետ վարդապետին և իւր ծնողացն Մեսրոպին և Ալամին, և եղբարցն՝ Խաչատուրին և Հայրապետին և ամենայն ազգականաց նորին. ամէն[31]։

---

[31] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 51 բ, 89 բ, 108 ա, 155 բ և 521 բ էջերում։

Ե

233բ Յիշեցէք ի Քրիստոս... ստացողի սբ. գրոցս Կարապետ վարդապետին...[32] և հաւրեղբաւրն՝ Սրապ[ի]ոնին և որդւոցն նորին և ամենայն ազգականաց նորին։ Մանաւանդ հոգևոր հաւրն Ապարանից Սիմէոն վարդապետին. ամէն։

Զ

539բ Զմեղաւոր Կիրակոսս մի՛ մոռանայք, ծաղկող սորայ, քանզի յոյժ յանցող եմ Աստուծոյ պատուիրանացն. վայ է ինձ Ռ (1000) բերան։

Է

672բ Գրեցաւ Աստուածաշունչս ի Հիզան անուն քաղաքիս, ի դուռն է (7) տաճարացս, ձեռամբ Կիրակոս երիցուս բազում չարչարանօք, որ յամենայն ժամ լինէր շարժմունք հինից և ելք հեծելոց, որ զգիրքս երբեմն առեալ փախչէի՝ ի Հիզան քաղաք գրէի և երբեմն ի բնիկ գեօղն որ է Աւրնդանց անուն, որ է ի գաւառն Մայեկաց, որ ասի Մամոռանք, որ է հանդէպ Ապարանից Ս. Նշանին յարևմտից կուսէ, ի դուռն Գ(3) Ս. Խորանացս, Պօղոսի և Պետրոսի և Ս. Գէորգեայ զօրավարին։ Ապա փառք Աստուծոյ, որ Աստուծոյ ողորմութեամբն աւարտեցաւ։

Եւ արդ՝ ես, անպիտանս և անիմաստս ի գրչաց, օտարացեալ և հեռացեալ յամենայն բարի գործոց, հող և մոխիր Կիրակոս մեղօք լցեալ և ապականեալ, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. գիրքս, որ կոչի Աստուածաշունչ, ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624)։ Վասն որոյ երեսս ի գետին դնելով, կողկողագին պաղատանօք աղաչեմ զձեզ, զի որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք և խոշորութեան և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս զշնորհալի և զշնորհազարդ, զաստուածահաճոյ և զսրբասէր, զառաքինի և զհոգէսէր, զբարեշնորհն և զբարեբախտն զաստուածազարդ շնորհօք լցեալն զՄոկացի Կարապետ վարդապետն, որ ստացաւ զսայ ի յաշխատանաց իւրոց, բարի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղաց իւրոց Մեսրոպին...[33]։

Դարձեալ կրկին անգամ յերեսս անգեալ աղաչեմ, զի բոլոր սրտիւ և լի բերանով Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւոր գծողիս և իմ ծնօղացն՝ Մովսէսին և Թուխկէն, և իմ կենակցին՝ Մրաքին, և մեր զաւակացն՝ փոքրիկ Մուսիսին, Գօհարին և Գօզալին, և իմ եղբօրն և քրւէրն՝ Յուսկին և Մարջանին, և նոցա որդոցն և դստերացն՝ Ղազարին և Սիրունին, Ղարիպջանին ևս Ռիհանին, և իմ հնազանդեալ աշակերտին՝ տէր Աւետիսին և իւր ծնողացն, և իմ փեսայ Գրիգոր սարկաւագին, իմ բարեկամացն՝ Քաշիշ մահդասուն, որ պատուական ակ մի ետուր Աստուածաշնչին, խնամի Յոհանիսին և Գարունվարդին և այլ ամենայն ազգականաց

[32] Նորից թվում է դ հիշատակարանում եղած անունները։
[33] Դարձեալ թվում է վերևում հիշված անունները։

իմոց կենդանեաց և ննջեցելոց, և որ ի սբ. գիրքս աշխատանք և երախտիք ունին. ամէն։

Եւ արդ՝ ես ունայնս ի բարեաց գործոց Կիրակոս *սուտանուն քահանայ, որ ձայնիւ բարձրացեալ և հոգւով կորացեալ աղաչեմ զընթերցող այսմ սբ. գրոցս, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք վարպետին իմոյ տէր* Սարգիս Հիզանցոյն *և իւր ծնողացն, որ բաղում աշխատանք կրեաց ի վերայ իմ և ուսոյց զիս գիր և ծաղիկ, և իւր որդւոյն տէր* Յովանէս *վարդապետին և* Հիզան *քաղաքի քահանայիցն՝ տէր* Իգնատիոսին *և տէր* Գրիգորին, *տէր* Յոհաննիսին, *և տէր* Մկրտչին, *տէր* Խաչատուրին *և տէր* Վարգանին, *տէր* Սարգսին *և տէր* Աւետիսին, *և տէր* Գրիգորին. *միթէ Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԿարապետ *վարդապետն ստացող սորա և զիւր աշակերտեալ մանկունքն՝* զՄելքիսէք *եպիսկոպոսն և զտէր* Սիմէոն *վարդապետն*[34] *և զտէր* Ստեփանոսն *և* զԲաբիկ *սարկաւագն, որ կան յօժարութեամբ յընթերցումն աստուածային դրոց և ձեզ յիշողացդ լիցի ողորմութիւն. ամէն։*

673ա *Եւ արդ՝ գրեցից զնեղութիւնն որ հանդիպեցաւ գծողիս։ Երբ սկսա ի դրել զաստուածային գիրքս Գ (3) անգամ կողոպտեցին և թալան արարին ղինչսն իմ և մերկացուցին զիս անօրէնքն՝ և գրեցի բազում նեղութեամբ։ Մինչ հասա ի գիրքն Երեմիայ մարգարէին, այլ պատուհասի հանդիպեցա, զի աջ ակն իմ խփեցաւ և եղն իբրև զփայտ չոր։ Մինչ ամենեքեան ասէին թէ կորացաւ։ Դ (4) ամիս այնպէս մնաց և յետոյ բացաւ, զի գնացեալ էր լուստուն ի դէպ աջ ականջս. ամենայն ինչ երևէր ինձ Բ, Բ (2, 2), երկինք Բ (2) տակ տեսանէի, արեգակն և լուսին Բ,Բ (2,2) երևէին ինձ, հեռի ի միմեանց, նոյնպէս մարդ և անասուն և ամենայն ինչ որ կայ ի ներքոյ արեգական. և մնաց այնպէս ամիսս է (7)։ Եւ ես հանապազ լայի և ափսոսայի զապականեալ աչս իմ. մինչ զի ի ձեռն Սրբոյ Նշանին* Ապարանից *և Քրիստափորի և այլ սրբոց ողորմեցաւ ինձ Քրիստոս Աստուածն իմ և վերստին նորոգեաց և լուսաւորեաց զակն իմ։ Եւ ես ուրախացեալ գրէի, հասա ի յՈղբ Երեմիայի դարձեալ կրկին եկն ի վերայ իմ ողբ նորա՝ տարաժամ մահն, որ տարածեալ էր ի վերայ ամենայն երկրի, եկն ի գեղիկն իմ և ոչ եթող մարդ առանց արտասուաց. յաւուր Ը, Թ, Ժ (8, 9, 10) թաղէինք մինչև երեկոյն, երբ լուսանայր նոյն չափով մեռանէին։ Բ (2) շաբաթ այնպէս մնաց։ Եւ ես սիրասնունդ որդեակ մի ունէի* Ստեփանոս *անուն, նա այլ գնաց ի գրկաց մերոց ի ճանապարհ ամենայն մարդոյ և փոխեցաւ առ Քրիստոս։ Որոց տացէ Տէր զերկնից արքայութիւն։ Այս ամենայն եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց։ Եւ ես անմխիթար սգով դրեցի հասա ի գիրքն Պօղոսի առաքելոյն, դարձեալ ողորմեցաւ և մխիթարեաց զիս Քրիստոս Աստուածն իմ և ետ* զՄուսէս *տղայն ինձ ի մխիթարութիւն. և ես խնդութեամբ և ուրախութեամբ սրտիւ գրեցի* զԱստուա-

[34] *Սա այն անձնավորությունն է, որ Երուսաղեմի Ս. Հակոբի վանքի Մատենադարանին ընդօրինակել է տվել մի Աստուածաշունչ (№ 2557) և նվիրել Երուսաղեմի հիշյալ վանքին։ Դժբախտաբար հիշատակարաններում տարեթիվ չի նշված, ուստի դրանք գրեցինք ԺԷ դարի շարքում։*

ծաշունչս բովանդակ կամաւն Աստուծոյ և ծաղկեցի գոյն զգոյն և երանգ երանգ գունով և զարդարեցի ոսկւով և լազուարդով և կազմեցի զօրութեամբ Ս. Հոգւոյն և աշողութեամբ նորին, ի վայելումն Կարապետ *քաշ բարունապետին և յիշատակ հոգւոյ իւրոյ. ամէն։*

Ը

673բ *Յիշեցէք ի Քրիստոս...* Ալամին, *որ Բ (2) շալի ետ գծողիս, ճաշ՝ Աստուածաշնչին համար։*

Բ

Ստացող՝ Կարապետ Մոկացի

671ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ և յանկ ելեալ սարտեցաւ մատեանք Աստուածաշունչ գրենաց՝ Հին և Նոր Կտակարանքս բովանդակ, ի թվաբերութեան հայկազեան տումարի քսան և մի յոբելինիս, այլ ևս յաւելեալ քսան և երեք թիւ յարաբարդ սմին (1624)*[35]*, ի դառնացեալ ժամանակիս, ի թագաւորութեանն այլասեռից մահմետականաց, որք են աղանդովն Արիոսի և Կերինթոսի, որք կալեալ ունին զմեծ մասն տիեզերաց. զի զկողմն արևմտեան զկլիմն և զգերմասն* Ասիական *տիրեալ է հանդերձ* Լիբիայիւ, *զնահանգն* Եգիպտական, *բովանդակ ի յԵթովպիոյ ի հարաւոյ կուսէ մինչև յաշխարհսն* Ըռուսաց *ի կողմն հիւսիսոյ՝ յորումն միշի է համարէն բուլղարքն, նաև ի կողմանէ արևմտեան է սահմանքն մինչև յերկիրն* Լատինացւոց, *յորոց միշի է կրճիմ և անշատիչ և խտրոց ծայր ծովուն ովկիանու։ Եւ ի կողմանէ արևելեան ունին բազում քաղաքք զբովանդակ* Պարսկաստան *մինչև ի սահմանս Հնդկաց և Ճենաց ի ծովէն* Կագրից, *որ ունի մերձ ինքեան զմեծ լեռան* Կովկաս *մինչև ի ծովն* Պարսից *հարաւոյ, յորս մտանեն վտակքն ադենա* Տիգրիս *և* Եփրատ. *և հաստատեալ են ազգին իւրեանց կրկին աթոռ թագաւորութեան. զմիսն յարևմուտս և զմիւսն յարևելս, զի արևմտեան աթոռն է* Կոստանդնուպալիս, *զորոյ թագաւորն խոնդքար կոչեն. և արևելեան գահուն ասի* Շաւշ *և այժմ կոչի* Ասպահան, *որոյ տիրողն առասի շահ, քանզի թէպէտ են երկոքեանն կրանիւք և աւրինաւքն Մահմետի, այլ գոյ բարուր և պատճառ ի մէջ նոցա խռովութեան, զի ոմանք զՈմար և զԱւսման ընդունեն և ոմանք հայհոյեն. սակս սորին ունին յոյժ թշնամութիւն, թէպետ զբազում ազգս և զլեզուս նուաճեալ և հնազանդեցուցեալ են ի ներքոյ վաղակաւոր սրին իւրեանց. զյոյնս, զասորիս, զհայկազնիս, զզպտիս, զիսրաէլացիս և այլ բազմաք և՛ գլուխ և՛ տէր են։ Եւ ունին զգաւազան իշխանութեանն ազգն և զլեզուն թուրքաց ի մէջ ամենայն մահմետականաց։ Եւ են ազգ դառն և ժպիրհ և պղծագործ, զոր տիրեալ են ի վերայ մեր վասն մեղաց մերոց, որպէս եղև երբեմն հինն Իսրաեղի, սակս յանցանաց նոցա, զոր բացայայտէ Աստուած առ Ամբակում, թէ «Զարթուցանեմ ի վերայ ձեզ զբաղդէացիս, զազգն դառն և ժպիրհ»*[36]*։ Այլ և մեղքն մեր ոչ միայն զաւրացոյց զնոսա ի վերայ մեր, այլ և եբարձ յամենայն կողմանց զբարիս և*

[35] *Այսինքն՝ (21×50)+23+551։*

[36] *Ամբ., Ա, 6։*

յայտնեաց զբազում պատուհասս, որ ի հազար և յիսուն (1601) թվիս մեր, շարժեցաւ վերոյ յիշեցեալ գահոյակալն շահ արևելեան բռնաւորն անուամբ Հաբաս կոչեցեալն, որ առաւել է չարեօք քան զամենայն իշխանս։ Բազգատեալ յեղջևրն փոքրիկ, որ էր ի գլուխ չորրորդ գազանին, զոր ետես մարգարէն Դանիէլ, զի է դիւթատիպ և կիսահմայ, որպէս ասէ մարգարէն
671բ Զաքարիա, և զաւրէն մոգաց ընթանայ յամենայն ժամ// և խաբէ զմարդիկ, զի ընդ ելանելն նորա ամենայն թագաւորք տկարացան և եղեն նմա կոխան. յաղթեաց Վրաց և էառ աւար զամենայն աշխարհն նոցա, նուաճեաց զտէրն Լահոռա[յ] և տիրեաց Ղանդայարա[յ]. տկարացան առաջի նորա զօրքն խոնդքարին, զի չորս անգամ զօրք առաքեաց ի վերայ նորա և նա կոտորեաց և հալածական արար զնոսա, և բազում ազգ գերի արար, ևս առաւել զազգս Հայոց, քանզի ըստերիւրեցաք հնգիւք զգայութեամբ, վասն այսորիկ պատեալ ունի զմեզ հինգ մեծագոյն փորձանք։ Նախ սուրն, զի անուանեալ շահ Հաբասն, զոր և անբաւ բազմաւք ասպատակեալ զաշխարհս Հայոց, զՎրաց և զԲաբելացւոց և զամենայն արևելէայս, որ յանկարծ և յեղակարծ ժամու հասանէր զաւրէնն հեղեղաց ուղխից խռովութեանց զաւրաց սաստկագին գոչմամբ և ահագնատեսիլ, սուսերամերկ և կորովալիճ նետողացն ճայթմամբ, զոմանս ի գերութիւն վարէ՝ արք և կանայք, և զկէսս առաթուր դիաթաւալք սրախողխող գալարեալք առ հասարակ արք և կանայք, քահանայք և աշխարհականք, գէշ անկեալ դիակամբք անթաղ ընկեցեալք, և զայլս ի բազում տանջանս մաշեալ և ոմանք հրով կիսայրեաց տոչորեալ և կէսք խստաբերք չարչարեալք և այլք երկիւղիւ պակուցեալք։

Երկրորդն է սով սաստիկ, որպէս Երեմիաս ասէ, թէ «Զեռք կանանց ողորմածաց եփեցին զմանկունս և կերան»[37], որ և զամենայն պիղծ կենդանիս ուտեն՝ զկատու, զկրիայ և զսատակեալ ձիս և զորիս, զգեշ և զայլ գարշելիս, այլ և բազումք զգերեզմանս քակեն և գնեխեալ մեռեալս հանեն և ուտեն, և ոչ միայն զմեռեալս, այլ և ի բազում տեղիս սովեալ մարդիկք դարան են մտեալ, զկենդանիս որսան՝ եփեն և ուտեն։

Երրորդ պատուհասն է գազանաց յարձակմունքն, որ մարդակեր գայլք սովորեալք ի կեր մարմնոց մարդկան աներկիւղ և համարձակ գան ի մէջ մարդկան, թողուն զանասունսն և զմարդիկքն պատառեն և ուտեն։

Չորրորդ փորձանքն էր տարաժամ մահն, որ եղև նախքան զմահ տարաժամն նշան յերկինս, զի երևեցան երկու իր գոյացեալ գոլորշեաց երկրէ ի յօդս՝ մինն ունէր զձև թրի, ելանէր յարևել[ս] և գայր ի վերայ կողմանն հարաւոյ, իսկ միւսն էր աստղ մեծ և ունէր գէսս և բաշս, որ երևեցաւ ի մէջ երկնից զգլուխն յարևելս ունելով և զագին ի մուտս արևու, զոր տեսեալ մնացին զչափ երից ամսոց և այլ աւելի։ Եւ զկնի երևման սոցա եղև սաստիկ մահտարժամ, սկսեալ ի յաշխարհն Լատինացւոց մինչև յերկիրն Պարսից. բազում գեղ և աւանս անմարդ արար, և ի քաղաքս բազում դրունք փակեցան, զի շատ հայր անորդիս արար, բազում

[37] Ողբ, Դ, 10։

մայր անզաւակ, զի ոչ մնաց [ոք] առանց արտասուաց ի յայս փորձանացս և սիրտ թարց տխրութեանց։

Հինկերորդ փորձանքն է քան զամենայն առաւել, որ ոչ երևի համբաւ խաղաղութեան և կամ դուլ և դադար խռովութեանց երկրի, որ այս քսան և երեք ամ է որ կու ծփան երկիրս խռովութեամբ իբրև զծով և ոչ հանդարտի վասն մեղաց մերոց, ըստ մարգարէին, թէ «Անաւրէնքն իբրև զծով ծփեսցին և հանգիստ մի գտցեն»[38]։ Զի թվականս մեր էր հազար և յիսուն (1601), որ երևեցաւ վերոյ ասացեալ շահ Հաբասն և յայս տարիս կուլինի հազար և ութանասուն և երեք (1624), և նա ոչ դադարեցաւ երբէք ի հարկանելոյ զերկիրս, դեռ ևս պնդեալ կա բազում զաւրօք ի վերայ Բաբելացւոց և էառ զԲաբելոն և այլ բազում աւանս. և դեռ ևս կայ ի վերայ այնմ կողմանցն և ապականէր։ Զի սա քակեաց և եհան զքարն որ կայր ի մէջ էջմիածնին, որ եդեալ կայր ի տեղին, յորում եհար Տէրն լուսամբ ոսկեղէն, յորմէ զարհուրեալ դողացան դասք սանդարամետիցն. և կալաւ զՄելքիսէք յորջորջեալ կաթողիկոսն հարուածոցն, և հատանէր զմիս բազկացն և տայր ուտել նմա։ Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, զի սիրտ բռնաւորաց ի ձեռին Աստուծոյ են։

72 ա Այլ և միւս բռնաւորն, որ ունէր զաթոռն Կոստանդնու//պօլսի, խոնդքարն անուանեալ, որ զիսկական անուն նորա Աւսման յորջորջէն, հարեալ եղև ի զաւրաց իւրոց և սատակեցաւ. և կան կողմն նորա բեկեալ և տկարացեալ իբրև զեղեգն ջաղջախեալ և յամենայն սահմանս նորա ոչ գոյ խաղաղութիւն, զի «Տան քաղաք ընդ քաղաք պատերազմ և այր ընդ ընկերի»[39] որպէս ասէր Եսայիաս մարգարէ, քան ոչ գոյ յաղթող արքայ նոցա։ Փառք Աստուծոյ որ զայս ամենայն փորձանքս և պատուհասանն տեսաք աչօք մերովք, դեռևս կամք յամառեալ անզեղջ ի մեզս ամենեքեան։ Ապա Աստուած միթէ մեզ զղջումն տացէ և ի փորձանացն վաղվաղակի զելս արասցէ. ամէն։

Ի յայսմ բազմավրդով ժամանակիս ես՝ մեզաւք լցեալ Մոկացի Կարապետ պիտակ ևթ անուամբ վարդապետս եղէ ցանկացող Աստուածաշունչ գրոցս և ետու գրել զսա յիշատակ հոգւոյ իմոյ և առիթ փրկութեան ամենայն ողորմութեան տրւօղացն ի ձեռս մեր։ Զոր դեգերադէմ կերպիւս կողկողագին պաղատանաւք հայցեմ ի յընթերցողացդ և ի տեսողացդ և ի գաղափարողացդ, բոլորով սրտիւ և լի բերանով հանդերձ արտասուօք ողորմի ասացէք ինձ բազմամեղ և եղեռնագործ Կարապետիս և ծնաւղաց մեր ըստ մարմնոյ Մեսրոպին և Ալամին, և եղբարցն իմոց՝ Խաչատուր[ի]ն և Հայրապետին, և քւերցն իմոց՝ Յինաթին, և Վարդին, և Մարիամին, և հօրեղբաւրն իմոյ՝ Սրապիոնին, և որգւոց նորա Աւագին և Մխիթարին և այլ ամենայն արեանառու մերձաւորաց մերոց՝ արանց և կանանց առ հասարակ. ամէն։

Դարձեալ կրկին անգամ յերես անգեալ աղաչեմք զհամօրեն ծնունդս սբ. աւազանին զընթերցող այսմ սր. գրոցս և զունկ[ն]գրող աստուածային բանիս, սրտահառաչ յիշմամբ տուայտելով պաղատանօք յիշեսջիք

38 Եսայ., Ին, 20։
39 Եսայ., ԺԹ, 2։

ի յերկնաթռիչ յաղաւթս ի ժամ սոսկալի սբ. պատարագին զհոգևոր ծնաւղն իմ՝ զերիցս երանեալ քաշ բարունապետն զՍիմէոն կոչեցեալ պըլիտիկոսն, որ ծնաւ զմեզ ըստ բանի բազմաշան երկօք կրթեալ ի մամուլս վարժարանիս ի յոյսն կենդանի, մանաւանդ զուսումնակից նորին զԲարսեղ բարունապետն, որ ի միում վարժարանի կացեալք և ելեալ քարոզեալք իբրև զՊետրոս և զՊօղոս, ամոլք հոգևոր անդաստանացս և սերմանողք զբան կենաց ի հոգիս բանականաց, ի վիճակեալ նահանգս սըրբոյն Գրիգորի: Եւ ի միում ամի վճարեալ հասին ի կէտ կոչմանն, գնացին զճանապարհս ամենայն մարդոյ, փոխեցան առ Քրիստոս, որոց տացէ Տէր զերկնից արքայութիւն զդասն հարիւրաւորացն. ամէն:

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ արտասուալիր գիմաւք, հողս և փոշիս սբ. գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց, զի կաթ մի արտասուաց ի կաթիլ մի դուլէ ձերդ մաղթանաց, ցաւղեսցէ ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց և լուսաւորեսցէ զբազմաշարաւ զազբացեալ ոսկերս մեղօք մեռելոյս, զի թերևս վասն ձեր սխրալիր մաղթանացդ գտայց ողորմութիւն յամէնողորմ Փրկչէն մերմէ: Նաև դարձեալ ժտեմ զհոյլս տեսողացդ, յիշեսջիք ի գութ բարերարին Աստուծոյ զհոգևոր և զհլու հպատակեալ որդեական մեր, որ կան յօժարութեամբ ի յընթերցումն աստուածային տառից զՍելիսէթ եպիսկոպոս և սպասաւոր բանից աստուածականաց և զտեր Սիմէոն Ապարանցին, զեղբօր որդի հոգևոր հօրն իմոյ և զտէր Ստեփանոս նորընծա կրօնաւորն և զՄեսրոպիկ եղբօր որդեակն իմ, ևս առաւել զտէր Գրիգոր հերպետն Սուրեցի, որ է մեզ ընդունող և ասպնջական յամենայն ժամանակս մեր, այլ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առ հասարակ ողորմեսցի բարերարն և բազում ողորմն և մարդասէրն Աստուած. ամէն:

Դարձեալ ի յաղերս մաղթանաց կցորդակից առնելով մեզ զսբ. կոյսն Մարիամն հանդերձ մարգարէիւքս և առաքելովքս, որք յիշատակին ի յԱստուածաշունչ մատենիս և հայցեմք ի յամենազաւր Արարչէն արարածոց, զի տացէ զպարգևսն Եզրաս դպրին և զպսակս Մարկոսի աւետարանչին և զպատիւս և զարքայութիւն Պրոխորոնին տէր Կիրակոս աստուածասէր քահանային, զի որպէս նոքա սիրով յանձն առին հրամանաւ մար-
672բ դարէիցն և առաքելոցն գրել զգիրս աստուածա//շունչք, սոյնպէս և այս Կիրակոս աստուածասէր քահանայս յանձն առաւ յօժարութեամբ գրել զԱստուածաշունչս զայս ծաղկել և կապել: Վասն որոյ տացէ տէր Աստուած նմա և ծնօղաց նորա և կողակցին նորա և ամենայն ննշելոց նորա զգանձն անկողոպտելի զերկնից արքայութիւն և զպսակն Մարկոսի և Պրոխորոնի և Եզրասա մեծի դպրին: Այլ և պահեսցէ զնա տէր Աստուած հանդերձ ամենայն ուստերաւք և դստերովք և ամենայն կենդանի ազգականաւքն, յիշատակ աւրհնութեամբ և ժառանգ բարութեան անսասան և անփորձ ի կրից բանսարկու չարին ի յայսմ աշխարհիս և ի հանդերձեալսն. ամէն:

ժ

673ա Դարձեալ կրկին անկամ աղաչեմ զձեզ, ո՜վ եղբարք, որ բնակեալ էք ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ, լի սրտիւ ե

բոլոր հաւատով յիշեսջիք ի Քրիստոս միով ողորմեալիս ինձ տառապեալ Կարապետ վարդապետիս, որ բազում ծախիւք և արդեամբք ետու դրել և ծաղկով զարդարել զԱստուածաշունչս՝ ոսկով և լաճվարդով և երանգ երանգ գունով և ետու յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ի յառաջնորդութեան տեառն տէր Գրիգոր հայրապետին, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ վիճակիս Հայոց, ևս առաւել ի վերայ մեզ և ի վերայ աշակերտաց մերոց. զոր խնդրեմք ի Քրիստոսէ որ զինքն ընդ սրբազան հայրապետացն դասեսցէ...։ Եւ ոք հանդիպի սբ. Աստուածաշունչ գրոցս կարդալով և կամ օրինակելով կամ յարևանցի տեսանելով, Աստուած ողորմի ասացէք ինձ Կարապետ վարդապետիս և ծնողացն իմոց՝ Մեսրոպին և Ալամին, և եղբարցն իմ՝ Խաչատուրին և Հերապետին, և քրեերցն՝ Յինաիին և Վարգին և Մարիամին, և հօրեղբարն իմոյ՝ Սրապիոնին, և որդոց նորա Աւագին և Մխիթարին և այլ ամենայն արենառու մերձաւորաց մերոց...։

215

ԱՒԵՏԱՐԱՆ

Ցիշատակարանք, Բ (1313 թ.), (լուսանկար, Երևան № 170)

Հետ. ստացող տէր Մարգարէ

55 *Կամաւն Աստուծոյ ես՝ տէր* Մարգարէս *գնեցի զսբ. Աւետարանս ի հալալ արդեանց, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ՝* Էվագին, *մաւրն իմ՝* Սիմէն, *կողակիցն իմոյ՝* Նազուղին, *որդին իմոյ՝* Էվագին, *եղբայրն իմ՝* Վարդանին, *որդին՝* Պալասանին, *պապն իմ՝* Թարխան Յովհաննէսին, *տէր* Եղիշին, *տէր* Մելիքսեթին, *տէր* Սարգսին, *հարսն իմ՝* Բանին, *դստերք նորին՝* Ղէսին, Մարգարիտին, Խանին, Եղիսաբեթին, *միսա* Մարիանին, *մեծի և փոքրին առ հասարակ...։*

Թուին ՌՀԳ (1624) էր։

216

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» հտ. Բ, № 485 (ժամանակ ?)

Ստացող, նվիրատու՝ Կարապետ Մշեցի

Վայր՝ Տարօն, Գլակավանք

405 *Ես՝ նուաստ* Կարապետս, *բանի սպասաւորս, յերկրէն* Մշու, *ի դեղջէն* Բագուայ, *ստացայ զԱստուածաշունչ դիրքս ի հալալ արդեանց իմոց, և ետու յիշատակ ի դուռն Ս. Կարապետին, և Աթանագինեայ սբ. հայրապետին, և Յարութեան սբ. տաճարին, և Տիրամօր Ս. Աստուածածնին, և Ս. Գրիգոր Լուսաւորչին, և Սրբոց Հռիփսիմեանցն, և Ս. Սարգիս զօրավարին, և Յեսթն խոտաճարակացն՝ Անտոնի և Կրոնիդեայ և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ ի յերկիրս* Տարօն, *ի վանս* Գլակայ/// *յորջորջի* /// *հոգևոր հօրն*///

Երեք գմրէթ բոլորովին,
Իւրեանց սագերն ի միասին,

Եւ ժամատոն Յարութիւնին,
Խուցն և սրահն ընդ աղբերին։
Այլ և աղբիւրն Լուսաւորչին,
Զոր աղօթիւք բղխեալ ասին,
Այլ և տաճարն Աստուածածնին,
Ամենօրհնեալ Մարիամին։
Յորում կայ գիր վարդապետին,
Մանկիկ անուն Ստեփաննոսին,
Եւ ժամատուն դրան նորին,
Եւ նորոգումն պարսպին։
Յորժամ գայցէ փեսային վերին,
Հատուցանէ վարձս կրկին,
Ի թուականիս մեր հայկազին,
Հազար եօթանասուն ընդ երեքին (1624)։
Որք ընթեռնոյք զբանս ի կարգին,
Զծոյլս յիշեցէք միշտ ի բարին։

406 Այլ և գնախնիքն իմ՝ զչոջ պապս՝ զՀերապետ քահանայն, և հօրեղբարքն իմ՝ զԿարապետ բարձունապետն, և Ստեփաննոս վարդապետն, և զՅովհաննէս քահանայն, և զԳրիգոր սարկաւագն, և զհայրն իմ՝ զԱռաքել, և զմայրն իմ՝ Եղիսաբեթն, և զայլ արեան մերձաւորքն իմ՝ զմեծն և զփոքրը[ն], որ ի մէնջ պակասեալ են, և յաւելեալ առ Քրիստոս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

217
ՏՕՆԱՑՈՅՑ
ՄԻՆԱ, № 16

Գրիչ՝ Գասպար սարկաւագ

ա

239 ԶԳասպար սարգաւագս Թարեւացի, որ է դեղչէն Յեղվերձու, յիշեայ միով Աստուած ողորմայիս...
Թվին ՌՀԳ (1624)։

բ

Գրեցաւ Տումարս ձեռամբս սուտանուն Գասպար սարգաւագի, ի թվիս Հայոց ՌՀԳ (1624), տանուտէր տարուն Զուկն էր, գիր տարուն Ըէ-թն էր, որ է նահանջ։

218
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
ՄԻՆՋ, № 57

Գրիչ՝ տէր Ըոստակէս

ա

71 Զանպիտան գրիչս յիշեա առաջի Աստուծոյ, սուտանուն տէր Ըոստակէս։

Բ

Ո՛վ սբ. քահանայ, յորժամ հաշտարար պատարագն մատուցանես, յիշեա մեղուցեալ Ռըստակէսն, թվին ՌՀԳ (1624)։

219
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Մագիստրոս, № 5

Վայր՝ Հալապ

38 *Արդ՝ գրեցաւ Կանոնգիրս ի մայրաքաղաքն Հալապ, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցուն, ի թվիս Հայոց ՌՀԳ (1624)։*

Դարձեալ յիշեցէք զմահդասի Խաչատուրն, որ ըստացաւ զսայ ի հալալ արթեա[ն]ցն [իւրոց][40]*։*

220
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Մագիստրոս, № 8

Նվիրատու՝ Անդրի Կեսարացի

Վայր՝ Տփխիս

6 *Գրեցաւ ի թուին ՌՀԳ (1624), ետու գիրս զայս ես՝* Անդրի Կեսարացի *քահանայ եկեղեցոյն Ս. Նիկողայոսի, ի քաղաքն* Տփխիս. *մի՛ ոք հանցէ զայն։*

221
ՅԱՍՄԱԻՈՒՐՔ
Մագիստրոս, № 185 (1593 թ.)

130 *Վերջին ստացող* Մարտիրոս, *կողակիցն՝* Սուլթան, *ի թվին ՌՀԳ (1624), ի հայրապետութեան տէր* Խաչատուրին։

222
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ № 111

Գրիչ՝ Մեսրոբ Խիզանցի

Վայր՝ Ասպահան

159 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սայ ի յերկիրս այս որ կոչի* Ասպահան, *ձեռամբ* Մեսրոբ *դպիր* Խիզանցոյ *և աշակերտացն իմ՝ տէր* Գասպարին *և* Աթամին, *ի թուականութեանս մերում ՌՀԳ (1624), ի հայրապետութեան տեառն տէր* Դաւիթ *կաթողիկոսի, ի թագաւորութեան շահ* Ապասին, *աւարտ եղև այս սբ.* Աւետարանս. *ամէն։ Ուստի տեսեալ զայս փրկական սբ. տէրունական* Աւետարանս *հեզահոգի, բարեմիտ, երկուղած և աստուածասէր* Գինոսն *և որդին իւր՝* Աստուածատուրն, *յիշելով զբանն մարգարէին որ ասէր. եթէ «Երանի...»*[41]*։ Վասն այն յուսոյն ետուն գրել և զարդարել ի հալալ և ի յարդար վաստակոց իւրեանց, բարի յիշատակ հոգւոց իւրեանց,*

[40] Նույնը տե՛ս 123-րդ էջում։

[41] Եսայ., ԼԱ, 9։

և իւր ծնողացն, հօրն՝ Եղգարին *և մօրն՝* Շահարին, *և իւր կողակցին՝* Գուլվարին, *և միւս կողակցին՝* Արզուքանին, *և որդւոցն՝* Աստուածատուրին, Գոլվաթդուլուն, *և* Զահարին, *և քեռորն՝* Մինէն, Թուխիկ *և* զՄարիամն *յիշեցէք։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳինոսն, *և զեղբարքն իւր՝* Մարգարէն *և կողակիցն՝* Ագբանարն, *և զմիւս եղբարն՝* Զահարէն *և կողակիցն՝* Խոսրովն, *և զորդին՝* Մարգարէն, *և զդուստրն՝* Եղիս[42]

223
ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ
ՏԵՐԱՎՋ, № 366

Ստացող՝ Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի
Վայր՝ Սամսպոլ

558 *Եւ ամենայն աշխատողացն ի սմայ երջանիկ և լուսաւոր վարդապետին* Վարդանայ *և խնդրողացն և համաւրէն աշխատողացն ի սմայ՝ ուսուցչաց և ուսողացն, և ստացողի գրոցս* զՅոհաննէս *վարդապետն* Կոստանդնուպոլսեցի, *որ ստացայ զգիրքս յիշատակ ինձ և նախնեացն իմոց։*

Արդ՝ եղև զրաւ սորայ ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624), ի մայրաքաղաքն Ըստամպոլ։

Արդ՝ եթէ հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, զիս զանարժան Յոհաննէս, *և Աստուած զձեզ յիշէ իւր սբ. արքայութեան. ամէն։*

224
ԹՈՒՂԹՔ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ, ԲԱՆՔ ԿԱՆՈՆԱԿԱՆՔ
ՏԵՐԱՎՋ, № 473

Գրիչ՝ Սիմէոն

Ա

739 *Արդ՝ աղաչեմ զսրբասէր կարդացողսդ և զլսողսդ, որք լուսաւորիք ի հոգէխառն խրատոյ սբ. հաւրս* Գրիգորիս *միայնաւորի, [ի] վայելումն մահդասի բարէմիտ և հեզահոգի, գթած և ողորմած, հիւրընկալ և աղաւթարար* Ասատիսին. *սուտանուն պղերգ և զանարժան* Սիմէոն *գծողս յիշեցէք ի յերկնաթռիչս յաղաւթս ձեր և դուք արժանի լինիք իւր միւսանգամ գալստեանն. ամէն։ Թուական ՌՀԳ (1624) ամին*[43]։

Բ

Արդ՝ աղաչեմ զսրբասէր կարդացողսդ և զլսողսդ, որք լուսաւորիք ի հոգէխառն խարատոյ սբ. հաւրս Գրիգորի *միայնաւորի զանարժան սուտանուն* Սիմէոն *գծողս յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ. ամէն։*

---

42 Ինչպես հաղորդում է ծուցակի հեղինակը՝ շարունակությունը պակասում է։

43 Ձեռ-ի մյուս մասը՝ «Թուղթք ընդհանրականը», ընդօրինակել է ավելի ուշ Կիրակոսը, տէր Հովհաննեսի պատվերով։ Սրանց հիշատակարանը տե՛ս 1656 թ. շարքում։

Գ

Սիմէոն գծողս յիշեա։

Դ

740 Աստուած խօշայ Աւեսիսն աւրհնի, որ բազում բանի և արդարութեան ճանապարհի ցանկացող և հետևող կու լինի[44]։

225

ՊԱՏՄԱԳԻՐՔ

Մեշեկ, II, № 307

Ա

156 Զկարապետ վարդապետն յիշեցէք ի Քրիստոս զստացող տառիս։

Բ

Զկարապետ վարդապետն յիշեցէք..., որ ետ դրել զպատմագիրքս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց։

Գ

Քրիստոս Աստուած լուսաւորեա զհոգի ստացողի գրոցս զկարապետ վարդապետին, և ծնողաց նորին և ամենայն մերձաւորացն, և որ ի սմա մասն ունիցին. ամէն։ Եւ ինձ մեղապարտ գրչի մի բերան Աստուած ողորմի ասացէք և Աստուած զձեզ յիշէ իւր յարքայութիւնն։ Ի թուին Հայոց ՌՀԳ (1624) աւարտեցաւ Միխայէլ պատմագիրքս. աւրհնեալ է Աստուած։

226

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Մեշեկ, II № 312 (1623 թ.)

168 Ի թուին ՌՀԳ (1624) գաւազան առաւ մեղապարտ Յովանէսն, ի սբ. ուխտն, որ կոչի Ղորնկեվանք։

227

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մեշեկ, IV, № 1077

Գրիչ, ստացող՝ Կիրակոս քահանայ

Վայր՝ Քիլիս

113 Փառք...։ Որոյ ծառայս անպիտան Կիրակոս էի և եմ և եղեց վիճակ և ժառանգութիւն, միայն թէ ընկալցի անարգամեծարն Տէրն, որոյ շնորհիւն յանկ ելեալ կատարեցաւ Սաղմոսարանս հոգելից մարգարէին Դաւթի։ Քանզի աւրինակեցաւ դա ի Սեբոստոս Սարկաւագ վարդապետին յաւրինակէն։

[44] Մեկ տողանոց երեք հիշատակարաններ էլ կան Մկրտիչ գրչի կողմից, որոնցից մեկում պահվել է թվականը՝ 1616 թ. բերում ենք վերջինս. «Թվին Հայոց ՌԿԵ (1616) Մկրտիչն տետրակս գրե[ա]ց» (էջ 740)։ Հավանաբար ձեռ-ի մի մասը գրվել է 1616—1624 թթ. միջոցում Մկրտչի և Սիմոնի կողմից, երկրորդ մասը՝ 1656 թ. Կիրակոսի։

Արդ՝ ո՛վ աստուածասէր սիրելի և տուփացող ցանկալի, և քան զականս պատուականս Ա. Հոգոյն նուագի բաղձալի բանից մարգարէին Դաւթի...։ Եւ ո՞ր բերան յայտնի կարէ կացուցանել զգովասանութիւն դորին, այլ որ արբի ի սիրոյ սորուն, նա միայն դիտէ զճաշակ քաղցրութեան նորին։ Բայց սաստիկ աղաւաղեալ թիւրեցաւ բանք սաղմոսիդ ի ձեռն գրչաց, և անփութութեան ուսումնաւորաց, և խեղաթիւր բառից և լեզուաց, և այլասացիկ սաղմոսաց, և յիրահամարձակաց, որ յանձն ապաստան ի բերան ևս գրեն առանց աւրինակի։

Իսկ ես անարժանս և անպիտանս, վատթարս և անպտուղս ի բարեաց, ծառայս//ծառայիցդ Աստուծոյ, Կիրակոս, ի բազում տենչմամբ տոչորեալ էի ուղղաբան Սաղմոսարանի։ Եւ ահա հանդիպեցա ընտիր և լաւ աւրինակի։

114

Արդ՝ ո՛վ մանկունք նոր Սիոնի,
Որք հանդիպիք յայսմ տառի,
Յիշման <արժանի> առնէք զիս արժանի,
Զ Կիրակոս ստացաւղ տառիս որ գրեցի,
Թողութեան զիս արժանի,
Հայցեմ լինել յաւրն վերջի...։

Դարձեալ յիշեցէք զծնողս իմ զԿիպարն և զմայրն իմ՝ զՎարդենին, և զհաւրեղբարն իմ՝ զՅոհանէս եպիսկոպոս, և զ<յ>ուսուցիչն իմ՝ զՊողոս եպիսկոպոսն, և զամենան արեան մերձաւորքն. ամէն։

Գրեցաւ ի թվիս Հայոց ՌՀԳ (1624), ի Քիլիս, ի գուռն Ս. Յովանիսին, ի հայրապետութեանն տեառն տէր Մինասին, ձեռամբս Կիրակոս քահանայիս, որ է անձին իմոյ յի[շատակ][45]

228
ՔԱՐՈԶԳԻՐՔ

Մ8ՀԵԳ, V, № 1434 (ժէ դար)

111 Աստուածային ամենազօր շնորհիւն և ողորմութեամբն այս է ուղափառ դօանութիւն հաւատոյ քրիստոնէից կարճառօտ հասաքմամբ. և գրեցաւ այս ի թվին ծնընդեան Տեառն մերոյ ՌՈԻԵ (1625) և Հայոց ՌՀԳ (1624)։

Արդ՝ յիշեցէք զաշխատողն ի սմա և զգծող սորին։

Արդ՝ եթէ ուրեք ի յայս գիրքս մոլորեցայ՝ թողութիւն ինձ լիցի, զի տգիտութեամբ արարի, իսկ թէ ուղիղ ասացի՝ ի գովեստ շնորհացն Յիսուսի Քրիստոսի եղիցի առ ի պատիւ նմա... որոյ շնորհօք զայս փոքրիկ գիրքս գրեցի, որում փառք և գոհութիւն այժմ և անդրօ յաւիտենին. ամէն։

[45] Ցուցակի հեղինակը հաղորդում է, որ շարունակությունը կորած է։

229
ԲԱՌԳԻՐՔ
ՄՏՁԵԳ, V, № 1666

Գրիչ՝ Ղուկաս դպիր

517 ...։ ՌՀԳ (1624) թվին գրեցաւ ձեռամբ ամէնամեղ գրչի, չարահամբաւ զՂուկաս չդպրի։

230
ԺԱՄԱԳԻՐՔ
ՄՏՁԵԳ, VI, № 1833. տե՛ս նաև Աղավնունի, Այցելուք, էջ 32

Գրիչ՝ Աստուածատուր Մերտինցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

207 Զմեղապարտս և զտրուպս... զհողս և զմոխիր Աստուածատուրս, յիշեցէք ի սբ. և արժանաւոր աղօթս ձեր...։

բ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ ժամագիրքս ձեռամբ բազմամեղ և անարհեստ և անիմաստ գրչի Աստուածատուրի Մերտենեցոյ, ի սբ. մայրաքաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ա. Յարութեանն, և Ս. Յակոբայ գլխադիր սբ. աթոռոյն, և այլ ամենայն սբ. տնօրէնութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ի յառաջնորդութեան և ի հայրապետութեան սբ. Երուսաղէմա[յ] տէր Գրիգոր արհեպիսկոպոսին, որ ըստացաւ զայս սբ. գիրքս, զոր տէր Աստուած մեր բարով վայելել տացէ նմայ ընդ երկայն աւուրս...։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեան, անմեղադիր լերուք սրխալանաց և խոշորութեան գրիս, զի կար մեր այս էր։ Եւ որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զտէր Գրիգոր արհեպիսկոպոսն սբ. Երուսաղէմայ և զմերձաւորքն իւր զամենայն...։

Արդ՝ գրեցաւ սա ի լաւ և յընտիր օրինակէ, և թէ պակասութիւն կա ի մեղանէ է և ոչ յօրինակէն։ Այլ աղաչեմ զամենեսեան ըզմանկունսդ սբ. եկեղեցւոյ, յորժամ մեղմաբար և քաղցր ձայնիւ զսայ երգէք և սաղմոսէք, մի բերան Աստուած ողորմի ասացէք Աստուածատուր եղկելի գրչիս, և իմ ծնօղացն, և եղբարցն, և քուերացն, և որ առատն է տուրս բարեաց...։

Արդ՝ գրեցաւ ի թվականութեանս Հայոց ՌՀԳ (1624) ամին։

231
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
ՄՏՎԱ, I, № 198

Գրիչ՝ Հերապետ
Վայր՝ Հալէպ

ա

834 Գրեցաւ Գործք առաքելոցն և Եսայիս, ի մայրաքաղաքն Հալէպ, ի դուռն Ս. Քառասնիցն և Ս. Աստուածածնին, ի վայելումն յԱմթեցի խո-

ճա Մախսուտին, թվիս Հայոց ՌՀԳ (1624), ձեռամբ դեռաբոյս Հերապետին:

բ

Գրեցաւ դիրքս այս մեծաչան քննութեամբ ի հնոց թարգմանչաց օրինակէ և է ըստ հնոց ճշմարիտ քննական թարգմանութեան։ Մի՛ ոք համարձակեսցի մտահաճութեամբ գիր յաւելուլ կամ պակասեցուցանել, այլ զդրեալս՝ դրեա, որ է ստոյգ և ընտիր, ըստ նոցա աստուածաձիր պարգևացն զդրեալս նոցա ստուգիւ գծագրեցաք։

232

ՆԱՐԵԿ

ՈՏՉՄՎ, № 665

ա

157 Զեռքս փտի ու հող դառնայ,
Գիրքս յիշատակ առ ձեզ մնայ,
Մեղուցեալ փծուն գրիչս յիշեայ,
Աստուած ձեզ և մեզ ողորմեայ,
Հանապազ ասէք դուք Հայր մեղայ։

բ

Թվականին ՌՀԳ (1624) գրեցաւ։

233

ՆԱՐԵԿ

ՏՉԱԲ, № 135

Գրիչ՝ Թորոս երէց

ա

660 Ընդ այսմ ահագնալուր և սարսափելի նըփրական պաղատանաց գոչման՝ յիշեսցի ստացող սորին տէր Գաբրիէլ աբեղայն և յոգնամեղս Թորոս։

բ

Այսմ հաւատո[յ] դաւանութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ
661 ի քեզ Քրիստոս Աստուածդ իմ ամենագութ, ընկալ զստացող տառիս// զԳաբրիէլ աբեղայս և զծնօղսն իւր։ Ընդ նմին և զԹորոս երէցս զամէնամեղ և գծողիս հաղորդ փշրանաց[46]։

գ

662 Արդ՝ և ես Թորոսս, կրկին անգամ ազէրսեմ ի ձէնշ՝ ճաշակողացդ այսմ խրախճանական սեղանոյս, թերևս ողորմածն Աստուած ողորմեսցի թշուառութեանս իմոյ,...։

Ստացող՝ Գաբրիէլ աբեղայ

663 Արդ՝ ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624), ես՝ նրաստ և անարգս ի մանկանցս եկեղեցոյ Գաբրիէլս կրօնաւոր, ստացա յարդար ընչից իմոց

[46] Ցուցակում ա և բ հիշատակարանների նման մի շարք հիշատակարաններ էլ կան։

զտառս աստուածային մատենից, զբանս աղօթական սբ. հօրն Գրիգորի Նարեկացոյ և Հայոց փիլիսոփայի, որ հոգի և կեանս տա բարէյօժար և մտաւոր ընթերցողացն... զի սայ է ճանապարհ մոլորելոց, և ճրագ լուսատու խաւարեալ ոգոց։ Սայ է դեղ կակղացեալ վիրաւոր հոգոց...[47] ի վայելումն անձին իմոյ տկարի, և յետ աստիացս յիշատակ ինձ և ծնօղաց իմոց՝ Մէհէրին և Այլմելիքին։ Աղաչեմ զբարեմիտ ընթերցողսդ, յիշեսջիք յաղօթս ձեր առ Քրիստոս զբազմապարտ ոգի ն[ո]ւաստ Գաբրիէլս և զծնօղսն իմ, որոց և ձեզ ողորմեսցի տէր մեր Յիսուս Քրիստոս, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

234
ԲԱՌԳԻՐՔ
ՑՁՂԲ, № 241

Գրիչ՝ Թումաս

ա

1169 Ո՛վ սբ. ընթերցող, յիշեայ զգրոյս, որ Բառգիրքն կոչի, գրեցաւ
1170 ||թվիս Հայոց ՌՀԳ (1624), ձեռամբս անարժան Թումասի, որ ամենաւին մեղօք լցեալ եմ, վա՜յ ինձ. յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր։

բ

Յիշատակ է Բառգիրգս ոսկէհաւրն Վարդանին, գնեցին իւրեանց հալեալ ընչիցն. ամէն։

235
ԱՒԵՏԱՐԱՆ
CBCon., № 22. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Բ, № 486, էջ 406

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Հալապ

ա

40 Փառք...։ Հաւատարիմ և երկիւղած իշխանն պարոն խոճայ Սանոս Զալապին, որ արի և յաղթող է ի վերայ հակառակորդ թշնամեաց խաչին Քրիստոսի... ետես զսբ. Աւետարանս գրեալ և ծաղկեալ ցանկացաւ և էառ զսա, և ետ յիշատակ անշրեալի ի Ս. Քառասունք յեկեղեցիս ի քաղաքս Հալապ, զի իւր ձեռնտուութեամբն և իւր անդրանիկ հարազատ եղբօրն՝ պարոն, պանծալի խոճայ Պետրոսին օգնականութեամբն շինեալ և նորոգեալ եղև Ս. Քառասունքն, ի թվին Հայոց ՌԿԸ (1616)։ Իսկ այժմ ի ՌՀԳ (1624) թվին, նոյն խոճայ Սանոսն առեալ զսբ. Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց և եդ ի սբ. և յերկնանման քաւարանս ի Քառասունք յեկեղեցիս, յիշատակ... անձին իւրոյ և բարեպաշտ ծնօղացն, հօրն՝ մահդասի Կիրակոսին և մօրն՝ մահդասի Վար[դ]խաթունին, և երկիւղած և աղքատասէր կողակցոյն իւրոյ, և հանճարեղ և գեղապաճոյճ լուսանկար ծաղկափրթիթ իմաստուն պատանեկին իւրոյ՝ պանծալի որդւոյն Ըսկանատար չալապուն...

[47] Այսպես մի քանի տող։

Բ

Արդ՝ գրեցաւ սա ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Քառասնիցն, ձեռամբ անիմաստ գրչի Վեհեցի Վարդանին, *և ծաղկեցաւ ձեռամբ* Ամթեցի Իսրայէլին, *օգնականութեամբն դեռաբոյս* Աւետիքին...

236

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏՁՎԼ, № 83 (1307 թ.)

Նորոգող՝ Մինաս

155 *Վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ* Մինաս *անարժան գրչին, ի թվիս Հայոց ՌՀԳ (1624)։ Յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ ո՛վ եղբայրք։*

237

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏՁՁՄՎ, № 292. տե՛ս նաև Կամենից, էջ 177—178

Գրիչ՝ Ղազար վարդապետ

Ա

718 *Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ՝ պարոն պայազատ խոճա* Մարքոն, *որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, և եդ յիշատակ ի դուռն Հաճատկատար Ս. Աստուածածնին, վասն իւր և իւր ծնողացն հոգւոյն՝* Նուրպէկին *և մօրն՝* Եղիսաբեթին, *և կենակցին իւրոյ* Քասքոյին, *և դստերացն իւր՝* Հօսքային *և* Հանուշքային, *նաև մեծ պապին՝* Մաթիաշին *և մամուն՝* Վառվառին։ *Արդ՝ վայելօղք սբ. Աւետարանիս կարդալով, լսելով և կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս, զխոճա* Մարքոն *և զիւր ծնողսն, որ եռափափամ սրտիւ ցանկացեալ այսմ հրաշագործ բանից փրկչին Յիսուսի Քրիստոսի ստացան զսբ. Աւետարանս...։ Բայց յորժամ գրեցաւ սբ. Աւետարանս էր թիւ հայկազան տումարի ՌՀԳ (1624)։ Գրեցաւ և աւարտեցաւ ի հռչակաւոր և յաստուածարնակ մենաստանիս Ս. Օգսէնդա[յ], ի հայրապետութիւն տեառն տէր* Մելքիսէք *կաթուղիկոսին, ի թագաւորութիւն Օլախաց յերկրիս* Ռատուլին, *ձեռամբ նուաստ և անարժան, հողմ և փոշի* Ղազար *վարխապետիս, որ անուամբ միայն և ոչ գործով, մանաւանդ առեալ զքանքարն և ոչ շահեցուցի... որ եմ առաջնորդ սբ. ուխտիս և Օլախաց յերկրիս՝ ողորմութեամբն Քրիստոսի։ Վասն որոյ արտասուալից պաղատանաւք հայցեմ ի ձէնջ, զհանդիպողդ այսմ աստուածաշունչ մատենիս, մի՛ մեղադրէք, երկիրս հարկապահանջութիւն շատ էր, ամէն դատ և դատաստան առ մեզ կու գային, չունէաք խաղաղութիւն՝ կէս մի ի յայս քաղաքս գրելով և կէս մի այլ քաղաք գրելով, և այսպէս շրջագայելով աւարտեցաք, թէպէտ գոյր կարողութիւն Քրիստոսի կարող զաւրութեամբն, այլ գեղեցիկ դրել և ծաղկել։ Այստեղիքս գիժար էր և մագաղաթ չէր գտվիր, վասն այն տեղիս տեղիս պատուով գրեցի, վասն որոյ աղաչեմ զամենեսեանդ ներել սխալանաց, ապէնիաղ Արարչէն զթողութիւն մեղաց մերոց, ևս առաւել*

խնդրել Աստուծոյ վասն ծնաւղաց իմոց, հաւրն իմոյն՝ Պօղոսին և մօրն
719 *իմ՝ Շնօֆորին, և քրւերս Խու//տրաքին և եղբարց իմոց, որ հանգուցեալ են առ Քրիստոս, նաև զբազմաշխատ Սրապիոնն, որ գրեց յետի չորս տետրն և կապեց զսբ. Աւետարանս, յիշեցէք ի Քրիստոս, նայև զհոգևոր և զմարմնաւոր վարդապետքն և ուսուցողքն մեր նաև խնամողքն և կերակրողքն մեր...։*

Բ

Գերապայծառ և ամենապատիւ, տէր Նիկողայոս Թորոսովիչն արքեպիսկոպոսն Լէօպոլսի և առաջնորդն մեր, զայս սբ. Աւետարանս պարգևեաց եկեղեցւոյս Սաանիսլաւովու ի յիշատակ իւր յաւիտենական, զոր յետոյ բարեպաշտ իլովցիք և ստանիսլաւցիք ոսկւով և արծաթով զարդարեցին ի փառս Քրիստոսի։

238
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
«ՀԱ» 1897 թ. № 25 (ժամանակ ?)

266 *Ի վայելումն տէր Կարապետին Աստուած բարի վայելումն տացէ. ամէն։ Ի թուոյս մերոյ ՌՀԳ (1624)-ին, էտ փարն ԲՃ (200) ղռուշ, հասաւ էսին աղէն, Իպլու տղէն, Ճ (100) ղռուշ, հասաւ Խավազ Ճ (100) ղռուշ 3 էլ մէկ հասաւ Լիլօի դասաս էդ՝ ԴՃՄ (450) ղռշու գին է, ի վայելումն տէր Կարապետին բարի վայելումն տացէ. ամէն։*

Ի թուոյս մերոյ ՌՀԳ (1624)-ին յայտ լիցի՝ յետ հաֆացին տէր... ամար ուր ախբէր Ուսուֆիցա գլխու լճէն մինչև հաճի Սինանի էգին ԴՃՄ (450) ղռուշ, ԲՃՄ (250) ղռուշ էլ՝ ակռի, գառիմէն է փարայ մէ... Ճ (100) ղռուշ, ի մօլէն տարաւ մէքցլէ տրմոն տէր տարաւ մեր Յովան Ճ(100) ղռուշ, Թալիմ ձեռօք Խավազին Հ (70) ղռուշ, Հաս[ա]ն աղի ձեռօք փանքս իմ հասնին։

239
ԱԻԵՏԱՐԱՆ (1473 թ.)
Թորոս աղբար, Բ, էջ 420

Զվերջին ստացող զքրիստոսասէր Կարապետն յիշեսջիք, որ եդ ի Ս. Սարգսի եկեղեցին, ի յԱմիթ քաղաքի, ի ՌՀԳ (1624) թուին. յիշատակ իւր։

240
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Թորոս աղբար, Բ, էջ 427—428

Վայր՝ Համիթ

Գրեալ ի Համիթ, ի Ս. Սարգիս, ի թվին Հայոց ՌՀԳ (1624), ի վերադիտողութեան նահանգիս Բարսեղ արհի եպիսկոպոսի... ի թագաւորութե-

ան Տաճկաց Աւսմանցւոց սուլթան Մուստաֆին, յաւուրս սորա տէրութեան ամիրապետք և իշխանք ի միմեանց վրայ յարուցեալ միահաղոյն աւերեցին զաշխարհս, և զազգս քրիստոնէից ոչինչ դարձուցին։ Տէր Աստուած գթասցի ի ժողովրդեան իւր և վերստին հաստատեսցէ զեկեղեցի իւր ի խաղաղութեան...։ Ցիշատակ ոսկերիչ Եղիային։

241

ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Բանբեր Մատենադարանի» № 11, էջ 417

Գրիչ, ստացող՝ Սիմոն երէց

ա

Տէր հանէ զմեզ ի դուրին,
Ցարքայութիւն Հօրն վերին,
Առաշնորդէ ի մաւտ դրախտին,
Զ Սիմոն սուտանուն երէց մեղօք ի լին։
Դու ասա ամէն։ Ասացի՝ եղև և եղիցի։

բ

Քրիստոս Աստուած, քո սբ. և ընդրեալ հայրապետին Ներսէսի բարեխաւսութեամբն ողորմեա ինձ՝ մեղաւոր տէր Սիմոնիս, որ գրեցի յիշատակ հոգոյ իմոյ։

Դարձեալ յիշեցէք զհայրն իմ՝ հանգուցեալ առ Քրիստոս Աղազարն և զմայր իմ Բէկումն, հանգուցեալ առ Քրիստոս, եղբարքն իմ՝ Զինի[ն], վարդն, և զորդիքն իւր՝ Աղազարն, Մանսուրն, և զդուստրն իւր՝ Խանբէկի, Եփիսմէրն։

Դարձեալ յիշեցէք զպապն իմ՝ Աղայբաբէն և կողակիցն իւր՝ Գուլվարդն. և զորդիքն իւր՝ Աղազարն Մանսուրն, և զդուստրն իւր՝ Խանբէկի, Եփիսմէրն։

Դարձեալ յիշեցէք եղկելի գրող սորա զտէր Սիմոնն և զկողակիցն իւր՝ Գուլզուլի, և զորդիքն իւր՝ Խաչ[ա]յբաբէն, Գրիգորն, հանգուցեալ առ Քրիստոս Խանփարվարն։ Ով օր յիշի՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ։

Թվական ՌՀԳ (1624) գրեցաւ։

242
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ
Երևան, № 1160 (1601 թ.)

Հետ. ստացող՝ Գրիգոր Տամաժիրուքի

ա

200բ Ես՝ Գրիգոր աբեղա, Իլովցի Աւգսէնտիոսի որդի[1], ստացա այս գիրգս հալալ ընչից իմոց ի տէր Ղազար վարդապետէն, ի շահ անձին իմոյ և ի փառս Աստուծոյն իմոյ Յիսուսի Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Յիշէք Ա (1) ողորմեաւով և դուք յիշեալ լիշիք ի յԱստուծոյ. ամէն։

Թվին ՌՀԴ (1625) ունվար ԺԲ (12)։

բ

Աստուած քաւեայ զիս զմեղաւորս ի մեղաց և կեցոյ։ Աստուած գթայ յիս ի մեղուցեալ ծառայս և ողորմեա ինձ բազմամեղիս Գրիգորի Տամաժիրուքին։

243
ՃԱՇՈՅ
Երևան, № 6272 (1459 թ.)

ա

Ա պահպանակ

Ի թվին ՌՀԴ (1625) ձեռնադրեցին քահանայ ի յունվարի ԺԶ (16), օր[ն] երկուշաբաթին, տէր Փիլիպոս, միուս տէր Ներսէս, Աստուած զիւր[ո]ց կարգ վայելել տացէ. ամէն։ Բարի կենօք երկար ամէ աղաչեմք ամենեսեան։

244
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՅՆ ՊՕՂՈՍԻ
Երևան, № 2691

Գրիչ՝ Կարապետ

252բ Աւարտեցաւ սբ. գիրքս Պաւղոսի, զոր մեկնեալ են աստուածաբան վարդապետքն՝ սրն. Եփրեմ և սրն. Յովհան Ոսկիաբան, ի թվականութեանն Հայոց Ռ և ՀԴ (1625), ի Հայոց ի ԺԳ (13) ի քաղոց և Հռովմայե-

[1] Ձեռագրում «Աւգսէնտիոսի որդի» բառերի վերևում, միևնույն ձեռագրով, գրված է «Ի Ովրէսոդէսի» կարելի է կարդալ նաև «Ի Տվրէսոգէսի»։

ցոց փետրվարի ԻԵ (25), ի բուն բարեկենդանի ուրբաթին, ձեռամբ նուաստ Կարապետի: Զի ի ՌԿԷ (1618) թվին սկիզբն եղև և ի ՀԴ (1625)-ին կատարումն, հրամանաւ վարդապետիս իմոյ տէր Բարսեղի, որ հրամայեաց նա, և ես գրեցի՝ յիշատակ իւրն և ծնողաց իւրոց, նաև եղբօրն իւրոյ՝ մահդասի Ապտուլին, որ այս Լ (30) ամ է հրաժարեալ յաշխարհէս և մրցեալ յերկս աշխատութեանց մշտամոնչ աղօթիւք և խարազնազգեստ ճգնութեամբ· լիցի ի սմա մասն յիշատակի. ամէն։

Բ

49բ Եւ զեղկելի գրիչս զստանուն Կարապետս և զծնողսն իմ, որք ըստ հոգւոյ և որք ըստ մարմնոյ, յիշեցէք ի Քրիստոս։

Գ

79բ Եւ զստացող սբ. կտակիս զտէր Բարսեղ բաբունապետն և զաստուածաբան վարդապետն, որ ետ գրել նուաստ գրչի սուտանուն Կարապետի, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և եղբօրն՝ մահդասի Ապտուլին: Եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի յահեղ ատենին[2]։

245

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1718. տե՛ս նաև Աղավնունի, Այցելուք, էջ 242—243։

Գրիչ՝ Մաղաքիա
Վայր՝ Երուսաղէմ

ա

195ա Փառք...։ Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին գրեցի և կատարեցի զծաղկայհաւաք մատեանս սրբոյն Կիւրղի, որ էր գրած ի սբ. արանց ի հին ժամանակին և անարգ ընկեցեալ կայր ի մէջ աղբիւաց եկեղեցոյ։ Եւ իմ առեալ թափ տուի ի յաղբէն և տեսի փտեալ և ցեց կերեալ և գիրն անյոպայ երկաթագրին անյարմարն մնամ, թէ վասն գրին անյընդելութեանն ընկեցիկն եղեալ է։ Եւ ես զայս անփոփեցի ԻԲ (22) տարի, և ոչ ոք հաւաս չկալաւ զսայ ընթերցման։ Եւ ես զծերութիւնս և զտկարութիւն մարմնոյն ի բաց եդի և վերստին գաղափարեցի յետոյ եկեալ բանասիրացդ։ Բայց կու խնդրեմ ի սրբութեանց ձերոց ընթերցողացդ և փոխարկողացդ, որ անմեղադիր լինիք անյարմար գրիս. դի նիւթն անյարմար էր և ժամանակն ձմեռն էր, և ես յուսահատեր էի ի կենացս, որ մէկ մի չեզև ընթերցող այսչափ գրեանուցս, որ հաւաքեցի և գրեցի, ոչ միայն այս, այլ բազում։ Եւ գրել տեղս անպատշաճ, զի Գ (3) տեղ փոխեցայ վասն դրելոյ և վերջն ի Քրիստոսի լուսաբուխ սբ. գերեզմանն՝ ի Ս. Յարութիւնն եղև։ Բայց այս գրոցս երկրորդ նորոգումն թվին ՆՂԸ (1049) եղեր և երրորդ նորոգումն ՊԸ (1359) եղեր է։ Եւ ես վերջի ծրագրողս, նուաստ և յետնեալս ի բանասիրաց Մաղաքիա ծառայ Յիսուսի Քրիստոսի, ի յունվար ամսոյ սկսայ, որ թիվն էր ՌՀԴ (1625) և ապրիլի Ը (8) աւարտեցի ողորմութեամբ բարերարին. ի հայրապետութեանն Կիլիկեցւոց տէր

[2] Ձեռ-ի ծաղկման և կազմման վերաբերյալ հիշատակարանը տե՛ս 1627 թ. շարքում։

Միհասին և ի յառաջնորդութեանն Ս. Յակոբայ առաքելոյս տէր Գրիգոր արքի եպիսկոպոսին։ Աստուած զինքն ընդ երկայն աւուրս արասցէ ի պայծառութիւն սբ. եկեղեցեացս ի պարծանս մեր Հայոց ազգիս։

Դարձեալ աղաչեմ զձեզ, հարք իմ և եղբարք և որդիմ ի Տէր, որք
195բ հանդի//պիք ի սմայ տեսութեամբ կամ ընթերցմամբ կամ գաղափարելով, յիշեսջիք ի սրբամատոյց յաղօթս ձեր զվերջին աշխատողս ի սմայ զՄաղաքիա սպասաւորս բանի և զառածեալս ի մեղս թողութիւնս խնդրեցէք...[2] »։

Գրիչ՝ Ներսէս սարկաւագ
Վայր՝ Կամէնից

Բ

62ա Գրեցաւ յայս Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր և անարժան Ներսէս սարկաւագի, որդւոյ Հօլուպ վոյթին Կամէնցոյ, ի յաշխարհս Իլախաց, ի նոյն քաղաքի, ի վայելումն հոգևոր հօրն մերոյ սրբասան[ե]ալ և քաշ ռաբ[ունի][3]։

246

ԱԻԵՏԱՐԱՆ

ՑՈՎՀԱՆ, № 8, տե՛ս նաև «ՀԱ», 1967 թ., էջ 186—188, Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Ա, № 713, էջ 200 բ

Գրիչ՝ Ղազար Երկանընկուզցի
Վայր՝ Կալլաղ

ա

22 Փառք...։ Արդ՝ անկեալ կատարեցաւ սբ. տառս որ կոչի Աւետարան...։ Աւարտումն եղև Կալլաղն. ի թուաբերութեան Հայոց ՌՀԴ (1625) ապրիլ Թ (9), աւրն շաբաթ։

Գրեցաւ Աւետարանս Կալլաղն, ձեռամբ Ղազար գրչիս, որ է Երկանկուզցի, և զգիրչութեան Յովհաննէս եպիսկոպոսն, և զծաղկանկարչութիւնն Ամիդքցի Յովհաննէս երէցն. Աստուած ողորմի երկուս հոգւոցն ի միւսանգամ գալուստն անտես առնէ։ Արդ՝ անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ եղբարք, կարդալով կամ աւրինակ դնելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալուստն. ամէն։ Ո՛վ եղբարք անմեղադիր լեր[ուք] դրիս սղալանացս և խոշորութեան, զի կարիքս այս չափ էր։ Ապա եկաք ի խարիպութիւն որ այլ չտեսեր երկիրս Հոռմանց, միտս մոլոր, խելքս կորեր երկրիս Տաճ[կ]աց[4]։

Բ

23 ...[5] որք տեսանէք զսբ. Աւետարանս կարդալով կամ աւրինակելով յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զհաւատարիմ և զաստուածասէր քրիստոնեայն

[2] Սույն հիշատակարանը տե՛ս նաև Ս. Անեցու ժամանակագրության հրատարակչի Առաջաբանում՝ ձեռագրերի նկարագրության մասում, էջ ԺԶ—ԺԸ։

[3] բ հիշատակարանն այստեղ ընդհատվում է, շարունակությունն ընկած է։ Այս հիշատակարանը տե՛ս նաև Կամենից, էջ 178. հմմտ. նաև № 185 հիշատակարանի հետ։

[4] Տե՛ս նաև նույն ցուցակի 79-րդ էջում։

[5] Ցուցակ կազմողի հաղորդմամբ առաջին երկու տողերը անընթեռնելի են։

զՏատուրն, որ է յերկրէ Կապրովքիու ի մերձ Կեսարու, որ է Մամնոու, ի զեղջէն Ագրակու: Սա սիրով և փափաքանաւք ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց և արդար յընչից, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրոց, հաւրն՝ Անդրէ և մաւրն՝ Սալշուկին, և կնոջ իւրոյ Խանգաային, և եղբաւրն իւրոյ՝ Սիրանոսին, և ամենայն արեան մերձաւորացն· ամէն։

Եւ դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք եկեղեցւոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Գրիգորն, որ եղև համակից սբ. յիշատակիս և [յ]որդորեաց զՏատուրն, որ ետուր գրել զԱւետարանս և եգ ի ձեռն տէր Գրիգորին, ի յեկեղեցին Կալինորին, և ինքն գրեսցի ի դպրութեան կենաց. ամէն։

247
ՔԱՐՈԶԳԻՐՔ
Երևան, № 6542

Գրիչ, ստացող՝ Մարգար քահանայ

ա

89բ Գրեցաւ Քարոզգիրքս ձեռամբ յոքնայմեզ և փծու[ն] գրչիս Մարգարիս, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն՝ Նազարին և մաւրն՝ Համանգուլին, հաւրեղբայրն՝ Սարգսին, և Ե (5) եղբայրց իմոյ՝ Մարտիրոսին, Սարուխանին, Յուլուխանին, Ղուկասին, Գրիգոր սարկաւագին և ինձ մեղաւոր Մարգարիս, և կողայկիցն իմ՝ Մարգարտին: Սբ. Խաչին[6] սկսեցաւ և սբ. Զատիկ երեքշաբթի օր[7] աւարտեցաւ։

Եիստ գառն և դժար ժամանակի էինք, որ մէկ աւրն Գ(3) և Դ (4) անգամ փախուստ առնէինք։ Թողութիւն արարէք զրիս խոշորութեանց և կիսայգարձութեանն գրչիս. և կար մեր այս չափ է։

Գրեցաւ ի թվիս ՌՀԴ (1625)։

բ

6բ Որ ողորմի ընտացողի գրոցս՝ Մարգարայ գրոց աշայկերտին և իւր ծնաւղացն, հաւրն՝ Նազարին և մաւրն՝ Համանգուլին, և ինձ Մարգարիս. ամէն։

գ

51բ Որ և կատարեսցէ Տէր զամենայն խնդրուածս ընտացողի գրոցս Մարգարայ քահանայիս, հաւրն՝ Նազարին և մաւրն՝ Համանգուլին, և կողայկիցն իւր՝ Մարգարին. ամէն[8]։

---

[6] Այսինքն՝ 1624 թ. սեպտեմբերի 12-ին։

[7] Այսինքն՝ 1625 թ. ապրիլի 19-ին։

[8] բ և գ հիշատակարանների նման և ավելի համառոտ տե՛ս նաև ձեռ-ի 12բ, 19ա, 24բ, 35ա, 43ա, 51ա, 60բ, 66ա, 92ա էջերում։

248
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վատիկանի գրադարան, № 1 (մանրաժապավեն, Երևան, № 656). տե՛ս նաև «ՀԱ», 1892 թ., էջ 214, Վատիկանի գրադարան, № 1, էջ 200

Հետ. ստացող, նորոգող, ծաղկող՝ Յովանէս վարդապետ

ա

202բ *Զնկարող սորին* Յովանէս *վարդապետն յիշէք ի Տէր։*

բ

590ա *Փառք...։ Այլ ամենայնի խնամ արկեալ առատապէս լընուլ զամենայն պէտս՝ ոմանց ողորմութիւն շնորհելով առ աղքատս.... իսկ ոմանց զեկեղեցի Աստուծոյ զարդարելով զգեստիւք և աստուածային կտակարանաւք. վասն այսմ իրի և ես նուաստ* Յովանէս *վարդապետս* Կոստանդինուպօլսեցիս, *վաղ հետէ փափաքէի այս կտակարանացս դեռև մտայաւանս կայի որպիսութիւնս ելս իրաց. նա յանկարծաւրէն բարէմիտ* Յակոբ *կրաւնաւորի մահն ասդեցին, թէ աշխարհէս հրաժարեցաւ։ Եւ մենք յետ պատշաճաւոր թաղման և սգոյն, բերին այս Աստուածաշունչ կտակարանս, թէ այս է, զոր արարն։ Եւ իմ տեսեալ, թէ դեռևս պակաս տեղ շատ ունէր՝ է ի ծաղկանց և է ի բանիցս. և ետու ըստ իմում մարմնաւոր գանձուցս ԺԳՌ (13000) դրամ, որ այժմ առևտուրք են և առի, բազում աշխատանս արարի մինչ ի յայս կերպս բերի և կատարեցի, զի եղիցի սա մեզ աստուածագոյթ մերում որբութեանս։ Լուսաբորբոք աստեղք խաւարեալ սրտից մերոց, բժ[ի]շկ զօրեղ պէսպէս հիւանդութեանց մերոց...։ Վասն որոյ աղաչեմ հանդիպողք սորին՝ աւրինակելով և կամ ընթեռնելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերս ասացեալ զՅակոբ կրօնաւորին, որ աշխատեց և գրել երետ, հանդերձ ազգականաւք թողութիւն շնորհեսցէ և գրողի սորա* Մի[f]աէլի Թոխաթցոյ, *որ քան զայս Գ (3) Աստուածաշունչ գրած էր և ինձ անարժան յետի ստացողի և նորոգողի և կատարողի գրոյս* Յովանէս *վարդապետի, հօրն իմոյ՝* Մուրատ*ի և մօրն իմոյ՝* Ազնուի *և միւս հոգևոր մօրն իմոյ՝* Մենենտ *խաթունի և այլ ամենայն ազգային իմոյ, որ հանգուցեալ են առ Քրիստոս...։ Բայց գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՀԴ (1625), ի ապրիլ ամսոյ եղև աւարտումն սմա, ի թագաւորութեան Տաճկաց սուլթան* Մուրատիս, *ի հայրապետութեան սբ.*
590բ *Էջմիածնա[յ]* Մելքիսեթ *կաթողիկոսին և ինձ//մեղաւոր անարժանիս և եմ պատրիարգ այսմ նահանգիս*[9], *որ վերստին զարդարեցի զգիրքս և զյիշատակարանս գրեցի և զոտանաւորքս ասի։*

Յոյժ անցաւորս և եմ տարտամ,
Զկտակս առեալ առաջի գամ,
...[10]
Բանս ասացաւ ըստ իմ անձին,

[9] *Հավանաբար Հովհաննես Խալ Կ. Պոլսեցին է։*
[10] *Աստվածաշնչի հնգեմատյանի բովանդակություն և գովք։*

Զշարագրեալսն տան առաջին.
Ըստամպոլցին վերակոչին,
Զաթոռակալս այս նահանգին,
Աւարտեցաւ սա տումարին,
Թիւրն կրկին հինկ հարիւրին,
Զեաւթանասուն ամ ընդ նմին,
Եւ Դ թիւ այլ ի կից նորին (1625)[11]։
Նա զայս ամիսս որ եմք միջին,
591ա Զհռոմա//եցւոց ապրիլ ամսին,
Եւ զերկու տասն ի միակին,
Վեց[12] այլ աւել կայ ընդ նմին։
Սուրբդ մանկունք տեսողք սորին.
...։

249
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ
Երևան, № 1481 (ԺԴ դար)

1ա Թվին ՌՀԴ (1625) խաւարեցաւ արեգակն ոգոստոսի Բ(2), օրն չորեքշաբթի[13]։

250
ՏՕՆԱՑՈՅՑ
Կամենից, էջ 178

Գրիչ՝ Գաբրիէլ երէց
Վայր՝ Կամենից

Աստուծոյ օգնականութեամբն սկսայ և կատարեցայ Տօնացոյցս այս, Հայոց թվին ՌՀԴ (1625)-ին և ամսեանն օգոստոսի հինգերորդին, ի քաղաքն որ կոչի Կամենից, ձեռամբ մեղաւոր և անարժան Գաբրիէլ երէցին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ ...Գրեցաւ Տօնացոյցս ի լաւ և յընտիր օրինակէ։

251
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
Երևան, № 2455

Գրիչ՝ Մարտիրոս

7 8բ Գիրքս գրէցի տիրացու Սերգիսի որքի Մարտիրոսըս, որ թվին ՌՀԴ (1625) ամսանըն ոգոստոսի ԻԱ (21)։ Աստուած <ե>իւրան երկան որէր պարքէվէսցէ. ամէն։

---

[11] Այսինքն՝ (2×500)+70+4+551։

[12] Այսինքն՝ (2×10)+1+6=27։

[13] Նախ՝ 1625 թ. օգոստոսի 2-ը ոչ թե չորեքշաբթի է, այլ երեքշաբթի երկրորդ ըստ Թ. Ոպպոլցերի նշված տարեթվին արևը խավարել է մարտի 8-ին և սեպտեմբերի 1-ին (տե՛ս Th. Oppolzer, Canon der Finsternisse, Wien, 1887, S. 270).

252
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
Երևան, № 827 (ԺԶ դար)

3ա *Ի թվին ՌՀԴ (1625) ես՝ տէր Արիստակէս ձեռնադրեցայ աւգոստոսի ԻԶ (26), աւրն կիրակի*[14]։

253
ԳԻՐ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ
ԼԱԱԺԻ, № Ա—83 (մանրաժապավեն, Երևան, № 219)

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Պաղչասարայ

80բ *Գրեացւ գիրս պահպանութեան ի* Պաղչասարայն, *առ յոտս Ս. Աստուածածնին, ի վայելումն* Մանկասարին, *ի թվականի[ս] Հայոց ազգին ՌՀԴ (1625)-ին, հոկտեմբերի ամսոյ Ա(1)-ին, ձեռամբըն սուտ* Յովանիսին:

254
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
ՄՏՁԵՊ, I, № 23. տե՛ս նաև, ՄՏՁԵՍ, I, № 23, էջ 120ա—124բ, «ՀԱ», 1933 թ., էջ 329—332

Գրիչ՝ Սկրտիչ
, Վայր՝ Հալապ

ա

119 *Փառք...։ // Յորոյ տարփմամբ յաստուածային սիրովն բարեմիտ եւ իմաստուն եւ հեզահոգի պարոն եւ պայազատ, իշխանաց իշխան և իշխանազուն* Սանոս Զալապուն[15] *որդին՝* Սկանտար Զալապին *եղեւ փափագ աստուածասքանչ պատմութեան վարուց սբ. հարցն, եւ յիշեաց զբանն տէրունական, որ ասէ, թէ «Երանի...»*[16]. *և այլ, թէ «Գանձեցէք ձեզ գանձ յերկինս, որ ոչ գող մերձենայ»*[17] *եւ այլն։*

Վասն որոյ մեծափափաք տենչմամբ ետ գրել զսբ. գիրքս եւ ծաղկել. եւ եդ յիշատակ ի սբ. Յերուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ դամբարանին, ի վայելումն ուսումնասէր և բանասէր աստուածաբան վարդապետաց և սրբասէր կրօնաւորաց եւ առաքելաշնորհ եպիսկոպոսաց, մեղսաքաւիչ քահանայից եւ ամենայն կարգաւորաց ես զՔրիստոս Աստուած դաւանողաց...։

*Մանաւանդ ստացողի սբ. գրոցս զ*Սկանտար Զալապուն, *որ ետ գրել*
120 *զսա իւր հալալ արդեամբն, յիշատակ իւր և հօրն//իւրոյ՝ պարոն* Սանոս

[14] Միևնույն էջում կա այսպիսի մի վկայություն, որի սկզբի մասը եղծված է, մնացել է միայն տարեթիվը և ամսաթիվը «/// փոխեց[աւ առ Քրիստոս] ի թվին ՌԶ(1631) Վարդայվառին պահոցն, յուլիսի Դ(4), օրն երկուշաբթի»։ Հավանաբար վերաբերում է Արիստակեսին։

[15] Այս անձնավորության մասին, երբ նա 1629 թ. Կաբինում մաքսատան պաշտոնյա էր, դրվատանքի խոսքեր է թողել Հակոբ Կարնեցին (տե՛ս Մծ, հտ. Բ, էջ 564, 566)։

[16] Եսայ. ԼԱ, 9։

[17] Մատթ, Զ, 20։

Զալապուն, և մօրն՝ Շահմէլիք խաթունին, և մեծ հօրն՝ մահդասի Կիրակոսին, և մեծ մօրն՝ մահդասի Վարդխաթունին, և հօրեղբարցն՝ խոճա Պետրոսին, և մահդասի Շաղուաթին, և Սահակ Զալապուն, և քրտերցն ամենեցուն, և ամենայն արեան մերձաւորացն։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողաց և մեզ յիշեցելոցն, ողորմեսցի աստ և ի հանդերձեալն, խր միւսանգամ գալստեանն. ամէն։

Արդ՝ և ես նուաստս եւ անարժանս, վատթար և տրուպս ի մէջ ամենայն գրչաց, որդի Գրիգորի Լեհցի Մկրտիչս, որ թափուր եմ և անպտուղ, և ունայն ամենայն բարեգործութեան, սկսայ զայս սբ. գիրքս բանալի արքայութեան, որ կոչի սրբոց Հարանց վարք, ի լաւ և ընտիր օրինակէ, ի թվականութեան հայ տումարի ՌՀԴ (1625) ամի, ի մարտ ամսոյ Բ (2)։ Եւ եղեւ աւարտումն սորա ի սոյն ամի հոկտեմբերի ԻԶ (26), յաշխարհիս Արարատեանց, ի մայրաքաղաքն Բերիա, որ այժմ կոչի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Քառասնից եկեղեցեաց։ Եւ կատարեցաւ սա ի զուարճութիւն տեսողաց և ի փառս Աստուծոյ, ի բռնակալութեան Տաճկաց, աշխարհին Հոռոմոց սուլթան Մուրատին, որդոյ սուլթան Ահմատին, և ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասին, ի կաթողիկոսութեանն Կիլիկիոյ տանն քաջ բարձրապատիւ Սինասայ, որ լոկ անուամբ կոչի Քացախ, և սբ. Երուսաղէմայ արհի եպիսկոպոսութեանն տէր Գրիգորին Ղաբանցո[յ], զոր տէր Աստուածն մեր, շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս։ Նաեւ զյիշմանն արժանին կրկին անգամ հայցեմք եւ խնդրեմք ի ձէնջ վայելողք սբ. գրոցս, լի բերանով եւ առատ սրտիւ ողորմի ասացէք եւ մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սբ. գրոցս, աստուածասէր և բարեմիտ, հեզահոգի, հիւրընկալ և աղքատասէր, առատաձեռն և ողորմած, և գրասէր Սկանդար Զալապուն, և հօրն՝ Սանոս Զալապուն և ամենայն արեան մերձաւորացն։ Նաև զիս զանարժանս, որ փտեալս եմ ի գերեզմանի զԼեհցի Մկրտիչս, և զհայրն իմ՝ Գրիգոր, և զմայրն իմ՝ Եղիսաբէթ, եւ զամենայն ազգատոհմն իմ յիշել ի Տէր եւ մեղաց մերոց թողութիւն խնդրել։ Եւ սղալանաց եւ խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, քանզի կամաւ չարի՝ այլ յակամայ, քանզի տնանկութիւն, յօտարութիւն եւ պանդխտութիւն մարդոյ զխելքն եւ զաչից[18] լոյսն կու տանի։ Վասն այդ պատճառին համար հայցեմ ի ձէնջ, ո՛վ սբ. ընթերցողք, զոր տեսանէք զթերին՝ լնուք և զաւելին՝ շնչէք, և անարժանիս ողորմի ասացէք։ Եւ առաւել Սկանդար Զալապուն, որ բազում երախտիք, խնամք եւ գութ ունէր ի վերայ մեզաւոր գրչիս. զոր յոյս ունեմ եւ խնդրեմ ի Քրիստոսէ, որ իւր երախտեացն փոխարէն աստ միոյն հազարապատիկ եւ բիւրապատիկ հատուցանէ, եւ անդ զերկնից արքայութիւնն վայելել տացէ իւրն՝ հանդերձ ծնողօք իւրովք եւ ամենայն ազգատոհմովք։

Յիսուս Քրիստոս Հաւր զաւրութիւն,
Որք զաւրացան պատերազմին,
Բամբասանաց ի զատ կացին,
Ի զուր զեղբայրսն ոչ դատեցին։
Սոցին մաղթանքն առ քեզ լիցին,

[18] Տպված է «զաչիչ»։

Զի և գթած է կամք քոյին,
Թողցես զպարտսըն ստուրցողին,
Արժան առնես մասից նոցին։
Վարք սբ. հարանցըս հրաշալին,
Ստացաւ ըղձմամբ սրտիւն ի լին,
Վերոյ ձայնեալ Սկանտար Զալապին,
Զի փափագեաց այս մատենին։
Եգ յիշատակ անշընջելին,
Իւր հոգւոյն եւ ազգատոհմին,
Հօրն՝ իշխան Սանոս Զալապուն,
Եւ կենակցոյն իւրոյ նըմին.
Հանգուցեալ ծնօղացըն մահդասին,
Որ Ղարակօզ նմա ձայնին,
Այլ և մեծ մօրըն մա[հ]դասին,
Զի Վարդխաթուն նորա կոչին։
Մինչ ի ներկայս վայելեսցին,
Իսկ յետ աստեացս ի կենցաղին,
Ետ յիշատակ յաւիտենին,
Ի մայրն մեր յԵրուսաղէմ քաղաքին։
Միահամուռ սրբոց նըմին,
Ի տաճարն Ս. Յարութենին,
Ի դամբարան Ս. Յակոբին,
Եղբօր Տեառն մերոյ Յիսուսին։
Այլ և գթած Տէրդ ամենին,
Լսել տացէ զձայն հրաշալին,
Զերանաւէտ բարբառն ի նմին,
121 Ժառանգեցէք զանսպառն վախճանին,
ամէն եւ է եւ եղիցի։

Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, ո՜վ դասք լուսերամ քահանայից եւ գումարք խաչակրօնից եւ կաճառք աստեղափայլ սարկաւագաց մանկանցդ սբ. եկեղեցւոյ, որք օգտիք ի սմանէ կամ յօրինակէք, եւ որք ժառանգէք եւ ընթեռնուք եւ վայելէք հոգեւոր շահիւք, անմոռաց աղօթիւք յիշեսջիք ի Քրիստոս զմեղօք զառածեալ Մկրտիչ գրիչս եւ զծնօղս իմ։ Բայց անմեղադիր լերուք սղալանաց եւ խոշորութեան գրիս, քանզի զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, որ կիսէն ի վեր խոշորցուցի զգիրն, այլ ոչ իմ կամաւ. քանզի տնանկութիւն, օտարութիւն եւ պանդխտութիւն նեղացոյց զիս։ Վասն այդ պատճառին համար շտապեցի զգիրն ես խոշորցուցի, զի միտք իմ ցնորեալ էր ի նեղութենէ եւ ի խղճմտութենէ եւ գթոյ՝ ծնօղացս, ընտանեաց եւ հայրենեաց։ Քանզի դուք լաւ գիտէք, սիրելի հայրք իմ եւ եղբայրք, որ պանդխտութիւնն ծանր եւ դիժար ցաւ է, որպէս ասէ, թէ «Լաւ է անկանիլ ի ձեռս բարբարոսաց, քան թէ ի յօտարութեան եւ ի պանդխտութեան կեալ», եւ իմաստուն Խիկար ասէ. «Բարձի բեռ մի աղ ի յուսս եւ ոչ էր ծանր, քան զաղքատութիւն եւ զտնանկու-

թիւն»[19]։ Եւ դարձեալ միւս եւս. «Բարձի արճիճ բեռ մի ի յուսս եւ ոչ տեսայ ծանր եւ դժար, քան զղարիպութիւն եւ զպանդխտութիւն»[20]։ Որոյ փրկեսցէ փրկիչն ամենայնի Քրիստոս զամենայն հաւատացեալս անուան իւրոյ եւ ազատեսցէ ի դառն պանդխտութենէ ի նաւահանգիստն բարի։ Մանաւանդ յիշման անարժանս յիշեցուցեալս եւ զձեզ յիշողքդ հաւասար ամենայնիւ փրկէ ի սատանայական յորոդայթէ աստ, եւ ի հանդերձելումն լսել տացէ զերանաւէտ բարբառն եւ անզրաւ ուրախութիւն պարգեւեսցէ. ամէն։

Եւ դարձեալ կրկին անդամ յոգոք անկեալ աղաչեմ զձեզ, յիշել ի Քրիստոս, զստացող սբ. գրոցս զՍկանտար Զալապին եւ զծնողսն իւր եւ զամենայն ազգատոհմսն եւ արեան մերձաւորսն։ Ընդ նմին եւ զմեղապարտ գրիչս եւ զծնողսն իմ յիշեսջիք...։ Եւ լաւ պահողացն եւ խնամ տանողաց սբ. գրոցս՝ ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր, ի յօրն աներեկին եւ անաչառ դատաստանին։ Եւ որ յիշէ եւ Աստուած ողորմի ասէ ստացողին եւ աշխատողին, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ ընդ Հօր եւ Ս. Հոգւոյն, յայժմ եւ անսպառ յաւիտենին. ամէն։

Բ

11 6 Քրիստոս աստուած, լոյս հօր փառաց,
Խնդրուածովք այս սբ. հարանց,
117 Զպարոն Սֆանտար Զալապին այց,
Հան յետ աստեաց փառս ի փառաց։
Եւ զիս արժան արայ մասանց,
Զփրտեալ գրիչս ի մէջ մեղաց,
Կանգնեա՛ կրկին քան զնոր ծնած,
Զի ողորմած ես եւ գթած[21]։

Գրիչ՝ Վարդան

Գ

119 Աղաւթիւք և բարեխօսութեամբ սրբոյն Պօղոսի նախաբնակին յանապատի, ողորմեա՛ Քրիստոս Աստուած ստացողի սբ. վարուց պատմութեանցս, պարոն Սանոսին եւ իւր որդուն՝ Սֆանտար Զալապուն: Եւ ամենայն զարմից նորին, և ինձ թրխացեալ և մրթացեալ պանդուխտ Վարդան գրչի և ծնողացն իմոց և ամենայն ազգատոհմիս· ամէն։

255

ՄԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան, № 62 (1371 թ.)

Նորոգող՝ Առաքել դպիր

77բ Աւրհնութիւն և փառք...։ Արդ՝ վերստին նորոգող սբ. Աստուածաշունչ տառիս Ջուղաեցի խաւճա Մարութի եղբաւրորդիքս Մաթէոսս, Մկրտիչս,

[19] և [20] Հմմտ. «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ», գիրք Ա, աշխատասիրութեամբ Ա. Ա. Մարտիրոսյանի, Երևան, 1969, էջ 96, №№ 85ա, 85բ։

[21] Նման, երբեմն փոքր, երբեմն ընդարձակ մի շարք հիշատակարաններ էլ կան, չվերցրինք։

Սաֆարս գնեցինք անգին գանձս և տուաք յիշատակ ի ձեռն[22] տէր Զաքարիային ձեռն։ Քրիստոս Աստուածն մեր վայելել տացէ մինչև ի խորին ծերութեան. ամէն։

Զվերստին նորոգող սբ. տաճիս Առաքել դպիրս յիշեցէք ի Քրիստոս։ Թվին ՌՀԴ (1625)։

256

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 507

Գրիչ՝ Զաքարիայ էջմիածնեցի
Վայր՝ Երևան

ա

322ա Փառք...։ Եւ արդ՝ որ ոք կամեսցի սբ. գիրս ստանալ պարտ է տասն իրս ունել յանձին.

ա. Նախ՝ կատարեալ հաւատս ունել։

բ. Երկրորդ՝ սբ. սիրտս ստանալ։

գ. Երրորդ՝ մեծ յոյս։

դ. Չորրորդ՝ բազում յաւժարութիւն։

ե. Հինգերորդ՝ առօել խոնարհութիւն։

զ. Վեցերորդ՝ յոլովակի համբերութիւն։

է. Եւթներորդ՝ աստուածային ստուգութիւն և ճշմարտութիւն։

ը. Ութերորդ՝ աստուածատեսակ առաքինութիւն։

թ. Իններորդ՝ բարձրագոյն և աստուածանման սէր[23]։

ժ. Տասներորդ՝ գերագոյն խաղաղութիւն առ Աստուած և առ եղբայր։...

323ա Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբն նորին յանկ հանեալ ասարտեցի ի թվարերութեան հայկազեան տոմարի ՌՀԴ (1625), ի յերկիրս Արարատեան որ է Արարատան, ի մայրաքաղաքս Էրէվան, ի դրունս սբ. առաքելոյն Անանիայի, ի առաջնորդութեան սբ. ուխտիս հեզահոգի և տիեզերալոյս մեծ վարդապետին տէր Մով[ս]էս քաշ բայբունապետին։ Զի էր սա յերկրէն Սիւնեաց, ի գաւառէն Աշանանու, ի բնիկ և ի հայրենի գեղէն Խոտանանու. սնեալ և վարժեալ առ ոտս տեառն արթուն և զարթուն տէր Գրիգոր կաթողիկոսին էջմիածնայ Եղեսացւոյ, քանզի ամս քսան դեմերեալ ի դրունս նորա մինչև հասեալ ի կէտ ուսման։ Ապա առեալ իշխանութիւն վարդայպետական, եկեալ լուսաւորեաց զաշխարհս մեր, որ տարամերժեալ կային քաջազէն Պարսից. ցիր և ցան եղեալ ի յերկիրն Արաղա, ոմն ի Ըսպահան, ոմն ի Քաշան և այլ յերկիրս Պարսից։ Եւ սա ի ժամանակս ծերութեան իւրոյ ի բաց ընկէց զտկարութիւն մարմնոյ. գնաց ի Պարսկաստան, և քարոզեալ զազգս քրիստոնէից։ Եւ ուղղեաց զամենայն կարգ և սահմանք եկեղեցւոյ։ Եւ նստոյց անգ մի ի պատուական աշակերտաց իւրոց տէր Խաչատուր Կեսարացին հովիւ և վարդապետ։ Եւ ինքն դարձեալ եկն երկիրս մեր Էրէվան, ի սբ. ուխտս առաքելոյն Անանիայի։

[22] Հաջորդ մեկ-երկու բառերը ջնջված են։

[23] Ձեռ-ում «բարձրագոյն և ած և ածանման սէր»։

Ո՛վ եղբայրք, քանզի բազում մանկունս ի փառս էած այս հոգէլից ճշմարիտ էկլէսիաստ տէր Մովսէս բարձունապետս։ Եւ աշակերտեալ աւրիորդք սորա՝ զտէր Ռրստակէս վարդապետն, զտէր Իսրայէլ՝ փոխեցեալն առ Քրիստոս, զտէր Խաչատուր վարդապետն, տէր զՓիլիպոս վարդապետն, զծերունիքն քեռին իմ՝ Կարապետ եպիսկոպոս, զտէր Մինաս արարաւղ աւրինակի գրոցս, զտէր Յովսէփն, զտէր Փիլիպոսն, տէր Պողոսն եւ մանկագոյն աշակերտքս, որ պատուաստեալ եմք առ ոտս // սորա՝ զտէր Յովանէսն և ես՝ նուաստ Զաքարիայս էջմիածնեցի, զտէր Խաչատուրն, զտէր Յակոբն, Առաքելն, որ կարի տկար է մարմնով, տէր Աստուած ի թիկունս հասնէ, սարկաւագ Եսային, լուսարար Զաքարիայն, և շահընկալ մանկունքն՝ Ղուկասն և Ղազարն. և խահարար Կարապետն և այլ միաբանք սբ. ոսխտիս, որ կամք առ ոտս սբ. վարդապետիս տէր Մովսէսի։ Խնդրեմ ապէնիազ Արարչէն, որ պահեալ է և պահեսցէ ի հաճոյս իւր աստուածային կամացն. ամէն։

Արդ՝ որք հանդիպիք սբ. գրոցս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմարմնաւոր ծնաւղքն իմ՝ զծերունի տէր Յովանէսն և զմայրն իմ՝ Բէկիսալթան, և եղբաւր որդին իմ՝ Գրիգոր, և որդի նորա[24], և հաւրեղբաւր որդին իմ՝ զտէր Սարգիս և որդի նորա[25], և այլ ամենայն արեան մերձաւորսն իմ յիշեցէք ի Քրիստոս...։ Ո՛վ դասք լուսերամից... յիշեցէք ի յերկնաթռիչ և աստուածախաւս սբ. աղաւթս ձեր զիս՝ եղկելի և պատժապարտ էջմիածնեցի Զաքարիայ արեղայս, որ լի եմ ամէնունակ չարով։...

Եւ արդ՝ բանք իմ առ ձեզ են, ո՛վ փակակալք, լուսարարք և ջահընկալք, աղաչեմ սէռն սիրով և անկարծիք հաւատով խնդրեմ ի ձէնջ, յորժամ զկանթեղի լոյսն նորոգէք, ծուլութիւն ի բաց ձգէք, խփէք, ապա զկանթեղն նորոգէք, զի ամէն մին զրի զաչքս եմ սպիտակեցուցեր մինչև աւարտեր եմ, սպիտակ լաթով պահէք և հան[ապ]ազ լուանայք...։

324ա Եւ դարձեալ թէ զԺամանագիրքս ի գերութենէ կամ ի գրաւէ կամ յայլ ինչ պատահարից որ լինի՝ ազատէք, զձեր անունդ այլ ի մէջն գրեցէք, և զի իմ սակաւ յիշատակարանս չկտրէք, Աստուածածնի սիրոյն համար, ողորմութիւնն Աստուծոյ անչափ է և անհամար. կարող ես զձեռքդ ընդդէմ արեգական ունել, թէ ճառագայթն միայն քեզ ծագի, քեզ այլ, մեզ այլ, այլոց այլ ողորմութիւն անէք, ինձ լսէք, տէրն տերանց Քրիստոս ձեզ լսէ և զիւր առատ ողորմութիւնն հեղցէ ի գագաթան ձերոյ. ամէն։

Ձեռքս փտի ւ ի հող դառնայ,
Մոխիր փոշի գազախ դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ,
Այլ դուռ ընթերցիք ւ օգտիք ի սմայ,
Ողորմի ասէք գծողի սորայ։
Ցեայ ման բտայ.
Ջամալի քավի,
Քուլի մայ բտայ,

24 և 25 Երկու գեպքում էլ անունների տեղերը բաց են թողնված։

Բատայ հազար ջունի մուղատաս,
Թաւրա ֆտայ. ամին[26]։
Պարսիկ է բառս և գոհութիւնս մեծ Աստուծոյ մատուցանէ։
Ցիշեցէք զթղթիս կոկոզն զՀայրապետ միայնատրն և զՄկրտիչ տողի խազողն. տէր Աստուած վարձահատոյց լիցի նոցա. ամէն։

Բ

310բ Զաւշոտ Զաքարիայ գրիչս յիշեա, աղաչեմ։

Գ

321բ Փառք քեզ Աստուած ամենայնի,

. . . . . .

Քեզ փառս տամ նուաստ ոգի,
Զաքարիայս մեղաւք ի լի,
Որ հասուցեր վերին գրծի,
Քո սբ. շնորհիւդ աւգտողի,
Փառք ի փառաց քեզ միշտ լիցի,
Աստուածութեանդ հրաշալի. ամէն[27]։

Շապաշ շապաշ. որ Տէրն իմ հասոյց զիս փափագանաց ըղձի իմոյ։ Ո՛վ եղբարք, էի, որպէս էաքդ, լինիք, որպէս եմք։

Գիրքս այս Յոհաննոս վանից Ս. Կարապետին է, որ ի յոտին Արագածու։

257
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1278

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Խատանան

Ա

277բ Փառք...։ Գրեցաւ գիրքս այս և աստուածային տառս... ի թուականութեանս Հայոց մեծաց ՌՀԴ (1625), ի վիճակս Սաաքէի, ի յերկիրս Անանանու, ի գեաւղս Խատանան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի խնդրոյ Մովսէս քաշ ռաբունապետին, լցեալ շնորհիւ իմաստութեամբ և առաւելեալ ամենայն գործովք առաքինութեամբ։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան զհարս և զեղբարս, զվարդապետս և զքահանայս, և զմակացուս իմաստութեանց, յորժամ ընթեռնուք կամ ապրինակէք, զսրբասնունդ և պատուական Մովսէս ռաբունապետն և զծնօղս իւր, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր։

Ընդ նմին և զնռուազեալս յիմաստութեան և զպակասեալս ի գործոց բարեաց զտարակուսեալս Ղազար քերող գրոյս և զծնօղս իմ յիշեսջիք ի Տէր...։

---

[26] Կամ ինձ տուր /Վառ գեղեցկութիւնդ/ Ողջը մեզ տուր /Կլինի հազար սուրբ հոգի/ Քեզ մատաղ.ամեն։

Բառացի թարգմանութիւնն է, որ կատարել է Օ. Եզանյանը, որի համար մեր շնորհակալութիւնն ենք հայտնում։

[27] Պատմական որևէ արժեքից զուրկ չափածո կա նաև ձեռ-ի 317բ էջում։ Չափածոյի սկզբի մասի կենտ տողերի առաջին տառերից հոդվում է «Զաքարիայ»։

բ

155բ [զԱրիստակէս վարդապետ և զգովեալ աշակերտ նորին զՆփրեմ, յիշեսջիք ի Քրիստոս։ Զի նա աշխատեալ ժողովեաց զրանս մեկնչացն ի մի, յետ տեառն Ներսէսի]:

Յօրինակ էր այս չափ, էր յիշատակարան Արիստակիսի, զայն որ կատարեալն էր չգտաք, անմեղադիր լերուք[28]։

258

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, №1538. տե՛ս նաև «Արարատ», 1888, էջ 407—408

Գրիչ՝ Եսայի սարկաւագ
Վայր՝ Երևան

ա

316բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար և մեղսամակարթ և փծուն գրչի Յեսայեայ սարկաւագի[29] և լոկ անուամբ կրաւնաւորի, հասանել ի յաւարտ և ի զրաւ սբ. մատենիս, որ կոչի Յիսուս որդի։ Արդ՝ կայ ի հաւաքեալ ի սմայ զՅիսուս որդին բովանդակ իւր դաւանութեամբն և ոտանաւորաւքն և ազգացեղութիւնն Յարեթեանս տոհմի, թէ որպի՞սի և կամ ո՞յք էին թագաւորք և իշխանք Հայկազեան զարմի ի կռապաշտութեանն և կամ ի հաւատալն յԱստուածն ամենայնի, բարեպաշտ և սրբա[ս]էր թագաւորք և իշխանք և հայրապետք ի ցեղէն Լուսաւորչին, զոր արարեալ է տեառն
317ա Ներսէսի Հայ//ոց կաթողիկոսի ոտանաւոր չափեալ, զի մի ծուլացին ընթերցաւղք։ Այլ և գովասանութիւն սբ. խաչին, որ ի Կոստանդինուպալիս Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն ասացեալ է ի դէմ կենաց փայտին, զոր ոտն հանեալ ի նոյն Ներսիսէ Կլայեցոյ։ Այլ և գովասանութիւն ասացեալ Ներսէսի Լամբրաւնացոյ արհեպիսկոպոսի, վասն վարուց և քաղաքավարութեան և մահուանն սրբոյն Ներսէսի Կլայեցոյ, զի և եղբօր դստեր որդի էր Կլայեցոյն։ Այլ և ողբանք Էջմիածնայ սբ. կաթուղիկէին ի Վաղարշապատ քաղաքի, ասացեալ տէր Ստեփանոս Սիւնեաց դիտողի և մեծարապատիւ ամենայն Հայոց։ Եւ այլ բազում ոտանաւորք ասացեալ այլ վարդապետաց։ Զոր բազում փափաքանաւք և աշխատութեամբ ժողո-
317բ վեալ հաւաքեցի ի մի տեղ//յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց։

Արդ գրեցաւ սբ. տառս ի դառն և ի նեղ ժամանակի, յորում փայլէ վարդապետս մեր տէր Մովսէս քաջ բարունին, ի աշխարհէն Սիսակայ, յերկրէն որ կոչի Անճանճ, ի գեղջէն Խոտանճանու և յաթոռոյն Սաթէի, որ այժմ կոչի Տաթև, որ լուսաւորէ զազգս հայկազեան։ Եւ ժողովեալ կրօնաւորական դասս և նորոգեաց զվանորայս և յանապատս կրկին հաստատեալ պայծառացոյց։ Եւ ապա բազում աշակերտաւք գնացեալ Այրարատեանն գաւառ, որ և անդ տիրեալ էր իշխան ոմն ազգաւ պարսիկ, Ամիրգօճայ անուն կոչեցեալ, քաջ և արի, հմուտ ի պատերազմ, մինչ զի
318ա յահէ նորայ սարսէին ազգն իսմաելական, որ չկայր նման նմայ։ Թէպէտ

[28] բ հիշատակարանը նույն գրչությունն է. անկյունավոր փակագծերում եղածը նախագաղափար հիշատակարանն է։

[29] Սա միևնույն Եսայի սարկաւագն է, որին Զաքարիա Էջմիածնեցին նշում է նույն թվականին գրած իր հիշատակարանում (տե՛ս № 256՝ ա հիշատակարանը)։

կրօնիւք այլազգի էր, սակայն բարեպաշտ և յերկիւղած էր և քրիստոնէասէր։ Մինչ զի հանդիպել սբրոյս անդ յոյժ փափաքանաւք ընկալեալ և բազում սիրելութիւնս ցուցեալ և տուեալ տեղի մի, որ կոչի Անանիայ առաքեալ, գեղեցիկ եւ վայելուչ ի մէջ այգաստանեաց։ Եւ գնացեալ անդ վարդապետս նորոգեաց և ժողովեալ բազում աշակերտս և կրօնաւորս և միայնակեացս և կարգեաց դպրոցս, այլ և բազում կարգս և կրաւնքս հաստատեաց։ Յորում ժամանակի էր թագաւորն Պարսից Ապասն կոչեցեալ, որ տիրեալ էր յԱրևելից կողմանէ Հրմիզն կոչեալ կղզի, անդի մինչև ի Բաբելոն և Հայաստան և Վրացտունն մինչև ի ծովն Կազբից։

Եւ էր Թվականն Հայոց ՌՀԴ (1625)։ Բազում նեղութիւն եղև աշխարհին Վրաց // կոտորմամբ սրոյ և գերութեամբ։ Ո՞ կարէ պատմել զաղէտս նոցա։ 318բ

Ժամենեսցուք յաւարտ բանիս. գրեցաւ գիրքս ձեռամբ յԵսայեայ սարկաւագի. յերկիրն Արարատեան, ի գաւառն Կոտ[ա]յ. ի մայրաքաղաքն Երևան, ի դուռն սբ. ուխտին Անանիայ կոչեցեալ, առ ոտս քաջ բարեբունոյն Մովսէսի, որ և ծառայ և տրուպ աշակերտաց իսկ եմ, աշխարհէն Սիսական, յերկրէն Գուրեամու, գեղջէն, որ կոչի Կարճաւան։

Արդ աղաչեմ զամենսեանսդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր յԵսայիաս հանդերձ ծնողքս իմ ևս առաւել զրաբունին իմ զտէր Մովսէս և դուք յիշեալք լիշիք...։ Թողութիւն արարէք եղբարք, սխալութեան գրոյս, խիստ շատ սուրինակ բերի մէկտեղ ։ ապայ գրեցի։ Կայ որ կարգին է, կայ որ լուսանցքն է։

Գրիչ՝ Եսայեայ վարդապետ

Բ

1ա Սա յիշատակ անջինջ լիցի տէր Եսայայ վարդապետի։

Գ

108ա Գրեցաւ թվին ՌՀԴ (1625) ամին։

Դ

150ա Գրեցաւ ձեռամբ Եսայեայ վարդապետի, ի թվին ՌՀԴ (1625) ամին։

Ե

240ա Գրեցաւ թվին ՌՀԴ (1625) ամին, ձեռամբ Եսայեայ վարդապետի։

Զ

Գրեցաւ ձեռամբ Եսայեայ վարդապետի աշակերտի տեառն Սովսէսի կաթուղիկոսի հանուրց Հայաստանեայց, երկրորդ Լուսաւորչի, ի թվահաշուութեան Արամեանս ազգի ՌՀ քառ աւելի (1625)։

259

ՆԱՐԵԿ

Երևան, № 2085

Գրիչ՝ Վարդան դպիր

223բ Փառք... Յետ յոլով անցից դիպելոց ժամանակաց ի թուականիս ՌՀԴ (1625)-ից ես մեղաւորս բազմայթշուառ և մաշեալ ժամանակիս ի

ծնունդս անօրէնութեամբ յղացելոյս, որ տարայրերեցայ այսր անդր և
224ա եկեալ, և Աստուծոյ շնորհօքն հասի ի յավարտ // գրոցս ի թուականիս մերոյ ՌՀԴ (1625)...։ Երես անկեալ աղաչեմ յիշելով զվերոյ դրեալք ի մեղաց թողութիւն, այլ և զիս զբազմամեղ և զամենայմեզ գրիչս զՎարդան դպիրս յիշեցէք աղօթս ձեր, ծնողօքն իմովք և ամենայն զարմիւք, այլ և զուսուցիչսն իմ՝ զտէր Սարգիս քահանայն և զամենայն յերախտաւորս իմ...։

Միշտ եղէ ես անվաստակ,
Զեզ խելագար յիմար մշակ,
Ցանեմ ցորեան այլոց յստակ,
Եւ ինձ որոմն հրոյ ճարակ։
Զտեառն հրամանն սոսկալիք,
Պարտ է ունել զամէն ի միտք,
Թէ մի՛ դատիք, որ ոչ դատիցիք,
Պոմանս ահեղ քստմնելիք։
Տէրունական է սպառնալիք,
Իմ գիտելով զայս արհօիրք,
Կամս նիւթեմ ես ինձ չարիք։

260
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3475

Գրիչ՝ Խաչատուր

280ա Զմեղապարտ գրիչս զԽաչատուր յիշեցէք ի Տէր և դուք յիշեալ լիշիք։ Թվին ՌՀԴ (1625)։

261
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 3990 (1471 թ.)

Գրիչ՝ Ազարիայ

636 Մարդիրոս և զԳալուստ քահանայս յիշեցէք, Աստուած զձեզ յիշէ ի մուսանգամ գալըստեան. ամէն։

Ալէքսանոս քահանայս և իւր գողակիցն՝ Հուզուրն, և իւր որդին՝ Զանայզանն յիշեցէք։

Թվականիս ՌՀԴ (1625)։ Ազարիայ դիրիչս յիշեցէք եղբարք, ծառայ Քրիստոսի։

262
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 5232 (1403 թ.)

Նորոգող՝ Գրիգոր երէց

249բ Զվերջին նորոգել տուող սբ. գրոցս պարոնտէր Գրիգորն և պարոնտէր Աբանապն, որ ետուն նորոգել զսայ, յիշատակ իւրեանց և ծնողացն և

ամենայն յարեան մերձաւորացն կենդանեաց և ննջեց[ել]ոցն։ Աղաչեմ զձեզ, ո՜վ սբ. քահանայք, յորժամ պատահիք սմա, յիշեցէք ի սբ. և գերամաքուր յաղօթս զվերոյ դրեալքս ի սմայ և Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Նորոգեցաւ ձեռամբ Գրիգոր *իրիցու թվականին Հայոց ՌՀԴ (1625)։*

263

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 5891

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Մարգուան

158բ *Փառք...։ Որ և ինքն տէր մեր Յիսուս ետ ուժ և կարողութիւն տկար և տառապեալ անձին իմոյ* Միքայէլ *մեղսամած գրչիս դրել և կատարել զՅիսուս որդիս յաւգնութեամբն Աստուծոյ, ի լաւ և [յ]ընտիր աւրինակէ, ի քաղաքն* Մարգուան, *ի դուռն Ս. Աստուածածնին, թվականութեանս Հայոց ՌՀԴ (1625), ի դառն և ի դժընդակ և ի վերշացեալ ժամանակիս, զոր վասըն մեղաց մերոց բազմացեալ են ի վերայ մեր այլազգիքըն մահմետական, և բաղում նեղութիւնս և վիշտս և հարկապահանջութիւնս և այլ բազում և ազգիազգի նեղութիւնս կու հասուցանեն ի վերայ ազգիս քրիստոնէից, զոր ինքն տէր մեր Յիսուս Քրիստոս զբարին առաջնորդեսցէ, քան-*

159ա *զի կատարեցաւ բանն, որ ասէ թէ. «Երթան և մեռելոցն//երանի տան» և այլն*[30]*։ Նայ այժմոյս եղեալ է և կու տեսանենք աչաւք մերովք, միթէ ստեղծողն ամենայնի քաղցր աչաւք հայի և քաւեսցէ զբազմայպատիկ անաւրէնութիւնս մեր և արասցէ խաղաղութիւն, և տայ զաւրութիւն խաչին և արիութիւն ազգիս քրիստոնէից և նկուն արասցէ զթշնամի սբ. խաչին իւր...։ Արդ՝ աղաչեմ ըզձեզ եղբայրք, որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք մաքրայփայլ աղաւթսըն ձեր, զիս ըզ*Միքայէլ *անարժանս, զհայրն իմ՝ զԱւաքելն և ըզմայրն իմ։ Եւ գուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ, որ է աւրհնեալ անդրաւ յաւիտենիս. ամէն։*

159բ *Այլ և ըստացող սորա զՔրիստոսատուր ժամկոչն, որ հալալ վաստակոց իւրոց ըստացաւ սայ ջերմեռանդ սիրով յիշատակ իւր և իւր ծնողացն...*[31].

264

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 6074

Գրիչ, ստացող՝ Յովանէս երէց
Վայր՝ Երուսաղէմ

ա

24բ–25ա *Եղկելի գրիչս մեղաւք ի լի* Յովանէս *յէրէցս յիշեա։*

---

30 *Յայտ.*, *ԺԴ*, 13։

31 *Մի հիշատակարան էլ կա 199բ էջում, սրա մեծ մասը պատռված և ընկած է։ Մնացած մասում պատմական արժեք ներկայացնող բան չկա։*

Բ

37բ— Ի դատաստանին Քրիստոսի անսեղջ մեռանիս. վա՜յ քեզ Յովանէս
38ա յէրէց, որ չես ապաշխարեր։

Գ

38բ— Յորժամ զայս քարոզս կարդայս նայ, կտակ յետ մահուն յառ//աջ
39ա զայն կարդայ։

Դ

64բ— Սբ. Յակոբայ պահոց Երուսաղէմ երկինք գոռաց. թվին ՌՀԴ (1624),
65ա չորեքշաբթի[32]։

Ե

77բ Յուլ ու ծու[լ] Յովանէս յէրէց, որ ժամու ես, ոչ այլ բանի, մեղաց դերի ես, սբ. փրկիչ յոյս իմ, Աստուած դարձ տայ։

Զ

82բ Քրիստոս Աստուած ողորմեա ինձ մեղապարտ սուտանուն Յովանէս գրծողիս և իմ ծնաւղացն. ամէն։

Է

83ա— Անարժան Յովանէս յիրիցուն ո՞վ կու մոտենայ աշխարհի մէջ
86բ նեխեալ է մեղաւք։

Բ

94ա Յ[ե]ղկելի Յովաննէս յէրէց չարիքն գործես, ասես թէ վաղն ապաշխարեմ, հասանիս։

Թ

99ա Յովանէս յէրէց մինակ գտաւ, որ գործել տվեց է (7) ցեղ պոռնկութիւն։

Ժ

110ա Քրիստոս Աստուած արա թողութիւն ստացող սորայ Յովանէս յիրիցուս, ծնաւղացն և ամենայն արեան մերձաւորացն, կարդացողացն և լսաւղացն, առ հասարակ ամենեցուն. ամէն և եղիցի։

ԺԱ

141բ [Գ]րեցօ Մեկնութիւն սաղմոսացս Ներսէս Լամբրոնացոյն ի թվին Հայոց ՌՀԴ (1625), ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յարութեան և լուսաբուխ ս. գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ և սբ. աթոռ Հայոց ազգին Ս. Յակոբ՝ Զեբեդայ որդին։

Կարդացէք և Աստուած ողորմի ասացէք անարժան Գիրիֆոր աբեղային. և Աստուած ձեզ ողորմես[ց]ի. ամէն։

ԺԲ

Կազմող՝ Պարսամ Վարագեցի

190բ Զվերջին կապող գրոցս զՊարսամ սուտանուն աբեղայ Վարագեցի, եկի ի սբ. Երուսաղէմ, կազմեցի գիրքս ի խնդրոյ հեղայհոգի տէր Գրիգորին, ի թվին ՌՀԴ (1625)։

[32] Այսինքն՝ դեկտեմբերի 10-ին։

265
ՏՕՆԱՑՈՅՑ
Երևան, № 6118

Գրիչ՝ Յովասափ Քուչկանց
Վայր՝ Բաղէշ

ա

122բ Գրեցաւ Տաւնացոյցս և Պարզատոմարս և Մարմնախաղացս ձեռամբ սուտանուն էրիցուս, ի քաղաքս Բաղէշ, որ մականուն Յովասափ Քուչկանց կոչի, ընդ հովանեաւ Կարմրակ Ս. Նշանին, թուին ՌՀԴ (1625)։

128ա // /// ի զեղչէն Սուրբ Սահակայ, որք հանդիպիք լի բերանով մեզ եզկե[լ]ոյս և նորին Աստուած ողորմի ասացէք... Անմեղադիր կալարուք գրոցս, զի խիստ դառն և նեղած եմ յամենայն կողմանց։ Մէկ դարդ ի մահուց և մէկ ի պարտուց և մէկ ի մեղաց, բայց ի յերկնաւոր թագաւորին եմ ապաւինեալ, որ նա ազատէ զձեզ և զմեզ։

բ

72ա Զսուտանուն Յովասափ երէցս յիշեա՛ ի Քրիստոս։

266
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ
Երևան, № 6649 (ԺԵ—ԺԶ դարեր)

Հետ. ստացող՝ Ռըստակէս

ա

281ա Զվերջի ստացող սբ. տարիս զնուաստ և զապիկար Ռըստակէս անուամբ միայն բանի սպասաւոր և գործով յետնեալ քան զամենեսեան, աղաչեմ՝ յիշման արժան առնել հանդերձ ծնողաւք և ազգայնօք, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Թվին ՌՀԴ (1625) կազմեցաւ։ Ի ստանալն ՌԿԶ (1617) էր։

267
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7587

Գրիչ՝ Եսայի քահանայ
Վայր՝ Ստաթէի վանք

218ա Փառք...

219ա Գրեցաւ սբ. Աւետարան<ան>ս ձեռամբ Եսայի սուտանուն քահանայի, ի յաթոռս Ստաթէի, ի յառաջնորդութիւն Մէսրոբ արքեպիսկոպոսի, ի թվականութիւնս Հայոց ՌՀԴ (1625)։

Դարձեալ յիշեցէք սուտանուն Եսայի հանդերձ ծնաւղաւք, և որդիքն իմ՝ Սանփանոս և Սիճաքարիմ և Վասվառն, և հանգուցեալ նորաբողբոշ, դեռաբոյս Սրապիոնն և Թեկղին և Սառիկ և մայրն իւրեանց՝ Սուլթանաղեն. ամէն։

Բ

Նվիրատու՝ Աւաք

219բ Արդ՝ և ես՝ Լծենեցի Աւուքս առայ սբ. Աւետարանս ի հալալ յնչից իմոց. յիշատակ է ինձ և հարսն իմոյ՝ Ավանէսին և եղբայրն իմոյ՝ Պային, Ուտումպէկին և Յոսեփին: Որ և ետու վաճիմն ի դուռն Լծենու Ս. Ստեփանոսին՝ Նախավկային։

Յիշեցէք զիս և ողորմի ասացէք, Աստուած զձեզ ողորմեսցի օրն դատաստանի։

Թվին ՌՀԴ (1625) առայ սբ. Աւետարանս։

268

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7700 (1237 թ.)

Գրիչ՝ Մելքիսէթ երէց

Վայր՝ Երևան

295բ Զվերջին ստացող սբ. լուսայբուխ և աստուածախաւս սբ. Աւետարանիս զբարեսէր և զհաստատարիմ կինս Ղըզլարն, որ ստացաւ զսայ ի հալալ վաստակոց իւրոց և ետ զգին սորա ԺԹ (10) կարմիր, յիշատակ հոգւոյ իւրոյ, և զանձ անկողոպտելի. լսելով զայն որ ասէ, թէ «Երանի...»[33]։ Զոր տեսեալ սա՝ զսբ. Աւետարանս, ջերմեռանդ սիրով ըստացաւ զանառիկ և զհոգէնուագախաւս մարգարիտս. քանզի էր սա յերկրէն Բզնունեաց, որ այժմ Ղլաթ ասի. զոր եկեալ ազգն Պարսից և գերացուցեալ զերկիրն, ընդ նմին և զսայ գերացուցին զմայր իւր և զեղբայր իւր և զմիւս եղբայրն,

296ա որ էր քահանայ և այրի, սպանին զնա և զինքն և զմայր և զեղբա//յրն իւր, որ էր ամաց ԻԲ (12)-ից, տարեալ գերի ի Կոստոր. որ այժմ Երևան ասի։ Զոր տեսեալ իշխանին, որոյ էր անուն Նորա Ամիրգաւնա, արար զինքն իշխանական և զեղբայրն ազատեաց՝ ետ ի մայրն, զի մայրն գնեալ էր ի քրիստոնէից, և մնացին քանի տուն իշխանին գերի։ Մտեալ եղբայրն ի դպրոց, ուսաւ, ամուսնացաւ և եղև քահանայ. զոր և ինքն ի ծածուկ քրիստոնէութիւն առնէ, զի առնէր սկիհ և շուրջառ, խաչ և այլ գիրք բազում՝ Ճառընդիր մի և ընտիր գանձ Ա(1), Մաշտոց մի և գիրք և զգեստ պատարագին, զորս տայր յեղբայրն և զայլն յեկեղեցիս։ Զոր և ազատարարն Քրիստոս ազ[ատ]եսցէ զսա ի գերութենէ և ի դառն մահուանէ. ամէն։

Ի թագաւորութիւն Պարսից շահ Ապազին, իշխանութիւն Ամիրգաւնայ խանին, ի հայրապետու[թիւն] Էջմիածնայ տեառն Մելքիսէթ կաթողիկոսին, ի վարդապետութիւն քաշ բարունապետի մերոյ տէր Մովսէսին, որ եղև կրկին լուսաւորիչ խանկարեալ և խոպանացեալ ազգիս Հայոց, որպէս ասաց Քրիստոս, թէ «Որ արասցէ և ուսուցանէ նա մեծ» և այլն[34]. որ և եղև իսկ։ Զի ինքն պատարագէր և զայլսն ուսուցանէր, շինեաց եկեղեցիս և կարգէր քահանայս և սարկաւագունս, այլ դպիրս և սաղմո-

[33] Նաայ., ԼԱ, 9։
[34] Մատ., Ե, 19։

սերգոյս, շինեաց բազում վանորայս և անապատս և կրան[աւ]որս, որք ի յարանց և որք ի կանանց հաստատեաց ի նոսայ բիւրոց, Ռ (1000)-ից, Ճ (100)-ից, Ծ (50)-ից, այլ և զարդարեաց զեկեղեցիս Հայոց ի յոսկոյ և յարծաթոյ, որ ամենայն անաւթ խամ ոչ գոյր, զոր տէր Աստուած զինքն
297ա շահ անշիշանելի//պահեսցէ աստ և ի հանգերձելումն. ամէն։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ լոյս երամդ՝ ասք քահանայից, յորժամ կարդայք կամ աւրինակէք զսբ. Աւետարանս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զսուտանուն Մելքիսեթ էրէցն, և զհայր իմ զԿարապետն և զմայրն իմ՝ զՋանբէկին, զեղբայր իմ զտէր Մելքիսեթն, որ հանգուցեալ է ի Քրիստոս, և զքոյրն իմ՝ զՂզլարն և զկողակիցն իմ՝ զԱրզուն, և զայլ ամենայն արեան մերձաւորն զկենդանիս և զհանգուցեալս. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՂզլարն և զեղբարն իւր՝ զտէր Մելքիսեթն և զեղբայրն, <ի> կողակիցն՝ զԱրզուն և զմայր իւր Ջանբէկին, զՇատարևն և զԱստուածատուրն. ամէն։ Թվին ՌՀԴ (1625) Մելքիսեթ գրիչս յիշել աղաչեմ։

269

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 8201 (1599 թ.)

Գեր. ազատող՝ Գուլիջան

203բ Փառք...։ Թուին ՌՀԴ (1625) ես Գուլիջանս և կողակ[ի]ցս իմ Շնանատրն միաբանեցաք ընդանեաւք մերովք, գնեցաք սբ. Աւետարանս ի հալալ ընչից մերոց, ազատեցաք ի յանաւրինաց, հոգոց մերոց և ծնաւղաց մերոց և ազգականաց և որդոց մերոց հանգուցեալն ի Քրիստոս զՍարգիսն, զՔաֆուլն, զՀերապետն, զՄարկոսն և այլ ամենայն կենդանեաց և ննջեցելոց...։

270

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 8671

Գրիչ՝ Յոհան

93բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ի թվին ՌՀԴ (1625), ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի տէր Մովսէս կրաւնաւորին, զոր մեծաւ փափագանաւք ետ գրել ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց տէր Յովսեփին և ամենայն արեանառու մերձաւորաց իւրոց...։
94ա Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ լոյսերամբ դասք միակեցայց, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանպիտան գրիչս սուտանուն Յոհան, որ զանունս ունիմ և զգործս ոչ, և ծնաւղացն՝ Կարապետ քահանային և [Ալ ?]թունաղին, և եղբօրն՝ Գրիգորիսին և Ստեփաննոս քահանային. և Յոհանէս քահանային, և տէր Գրիգորին, և տէր Աւետիսին, և Վարդին, և Շամամին, և Փաշաչանին, և Ստեփաննոսին, և Մրջանին, և Յովանէսին, և Յովասափին, և Զաքարին, և տէր Յակովբին և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՅոհան գրիչս և զկողակիցն՝ զՄրջան, և զԿարապետ քահանայն և Ստեփաննոս քահանայն և զՅոհաննէս քահանայն և զայլ ամենայն արեան մերձաւորքն...։

271

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 10669 (1453 թ.)

Նորոգող՝ Յոհաննէս Շատախեցի

Վայր՝ Պանանց

6ա Զվերջին նորոգիլ տվող սբ. զաստուծաշունչ ծեր Աւետարանիս Պանանցայ ճամահաթն մեծ և փոքր։ Ո՛վ հանդիպողք, խիստ ճեռմեռանդ սրտիւ փափականաւք նորոգիլ տվին Պանանցա ժողովուրդն և քահանայքն, մեծ և փոքր, յիշատակ իւրեանցն և ննջեցելոցն, բարէխաւս լինի ի հող տապանին և ի հանդերձեալ դատաստանին, երանաւետ ձայնին արժանի անի ևս առաւել սբ. Աւետարանս աւգնական և պահապան լինին Պանանցա կենդանացն քահանայիցն և ժողովրդեանն, ծերոցն, երիտասարդացն [35] և տղայոցն և մանկացն շինահաւան փափականօք նորոգիլ տվին զԱւետարանս իւրեանցն պահապան ճամայհաթ Աւետարանս իւր կամս թողին որդեզ որ կուհաճի՝ թէ՛ եկեղեցի, թէ՛ գեղիս տէնէրէն էնդեղ հանգչի ոնց իւր կամն ի լի, հէնց ի լի, թէ հէնց լրբող ի լի, որ Աւետարանս իւր կամէն հանի գեղէս, հանի տանի ուրիշ գեղ ու վալիվաթ գցի՝ նզոված ի լի։ Առ ոտս ձեր անկեալ աղաչեմք, որ թվին ՌՀԴ (1625) էր նորոգեցաւ, ձեռամբ անարժան Յոհաննէս իրիցու Շատախեցի, մէկ բերան Աստուած ողորմի ասացէք...։

Ո՛վ հանդիպողք, խիստ գառն, նեղ ժամանակ է այսմ տարոյս. շահ Այպազն բազում խան ու իշխանք ուղարկէց Վրաց տուն ի քաղաքն Տպղիս, ընդ ձեռամբ Վրաց իշխանին՝ անուն Մովրով, սպանէց հնարաւք Ղարշրլա
6բ խանն, // որ իշխանութեամբ ստրատելատ էր. և այլ սիրելի խանն Յուսուբ սպանուաւ ընդ նմա մեծ դառնութիւն ելաւ ի մէջ պարսիկ ազգին. վերջն Աստուած գիտի թէ ինչ կուլի[36]։

272

ԱԻԵՏԱՐԱՆ (ժամանակ ?)

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հա Ա, № 710

Կազմող՝ Սարգիս աբեղայ

200ա Ի թուականիս Հայոց ՌՀԴ (1625), ի կաթուղիկոսութիւն տէր Մելքիսէթին, [ի] հայրապետութիւն տէր Մովսէսին, [ի] թագաւորութիւն շահ Աբասին, կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ սուտանուն Սարգիս աբեղային։ Դասուակու քահանայքն՝ տէր Կարապետ, տէր Աւագն յիշեցէք ի բարին։

[35] Տողամեջ «կղյսից». թերևս պետք է կարդալ «կոյսից»։

[36] Հիշատակարանը խիստ համառոտ տե՛ս «Արցախ»-ում էջ 279։

273
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա. № 712

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Սամսպոլ

200բ Փառք... աւարտեցաւ սրբոց պատմութիւնս, որ կոչի Այսմաւուրք, թվականիս ՌՀԴ (1625), ի քաղաքն Ըսամսպոլ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսու, ի դպրատան վարպետիս, զոր մեզ զգիրս ուսոյց, ձեռամբ Յակոբ գրչիս...

274
ՃԱՌԸՆՏԻՐ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 715

Գրիչ՝ տէր Գրիգոր
Վայր՝ Կ. Պոլիս

200բ Փառք...։ Արդ՝ կարողութեամբ հզօրին... գրիչս տէր Գրիգոր... գրեցի
201ա ղՃառընտիրս, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս ի //կղզին Ղալաթիայ, ի դրունս Ս. Լուսաւորչին, ի հայրապետութիւն Յովհաննէս քաշ բարունապետին, յիշատակ Աւետիքին...։ Գրեցաւ ի թուին Հայոց ՌՀԴ (1625)։
Աստուած ողորմի ասացէք խոշայ Աւետիքին... և ետ զսբ, գիրքս... յիշատակ ի դուռն յԻգմիրայ Ս. Ստեփաննոս Նախավկային։

275
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մագիստրոս, № 65

43 Աւրհնութիւն քեզ ամենասուրբ Երրորդութիւն...։ Արդ՝ աւարտեցաւ հոգելից դուռս ի թվիս Հայոց Ռ և ՀԴ (1625), ի խնդրոյ Ըռստակէս բարունապետի, որ փափագանօք ետ գրել զսա վասն փրկութեան հոգւոյ իւրոյ։

276
ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ՏԵՐԱՎԴ, № 73

Ստացող՝ Ռստակէս վարդապետ

ա

124ա Փառք...։ Վասն որոյ ես՝ տէր Ըռստակէս վարդապետ[ս]ետու զսա գծագրել, զի յոյժ փափագէի այս ժողովեալ գանձացս, զոր արարեալ է երկրորդ լուսաւորիչն, քաջ բարունին և աստուածաբան վարդապետն Գրիգոր, որոյ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի, զի ի սմա կան պատասխանիք ընդդէմ հերձուածողաց և հեթանոսաց և կանկնումն ուղ-

զափառաց, և առաջնորդ ճշտութեանն. զի որք ուղղապէս ընթեռնուն զսա մտագիտութեամբ կարողասցին վանել զհակառակողսն ճշտութեան։ Վասն որոյ ես տէր Ներսեակէս վարդապետ ստացող եղէ յայսմ գրոց, որ կոչի Հարցմունք։ Արդ՝ ստացայ զսա ի վայելումն անձին իմոյ և յիշատակ ծնաւղաց իմոց, հաւրն իմ՝ մահդասի Մարտիրոսին և մօրն իմոյ՝ Մեհրեանին, և եղբարցն իմոց՝ մահդասի Ալէքսանին և մահդասի Մկրտչին, և այլ ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ կենդանեացն և հանգուցելոցն։ Եւ ես տէր Ներսեակէս յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, զի որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, զիս՝ զմեղուցեալս և զծնօղսն իմ, և զեղբարս, և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Եւ յորք յիշէք՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Եւ ժտիմ ի [ձ]էնշ յիշել յաղաւթս ձեր զհոգևոր հայրն իմ՝ զՄովսէս վարդապետն, զանյաղթ փիլիսոփայն և զքաջ հռետորն յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Գրիչ՝ Բարսեղ երէց
Վայր՝ Գորէս

Բ

Դարձեալ յիշեցէք զանարժան գրիչս Բարսեղ երէց, զոր զանունս միայն է և գործս ոչ, աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեան գրոյս, զի առաջին գիր մեր այս է, զի թէ գիրն շինէի, զբանն մոռանայի, թողութիւն արարէք, զի շատ շանացի և ոչ կարացի քանց այս աւելի շինել, զի կար մեր այս էր և ոչ աւելի։ Եւ հայցեմ ի ձէնշ միով բերանով յիշել զծնօղսն իմ, և զեղբարսն, և զամենայն արեան մերձաւորսն իմ և ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս առ հասարակ ողորմեսցի Քրիստոս իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զհոգևոր վարպետն մեր զհեզահոգի զԱստուածատուր քահանան, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ զսակաւ գիրս. վարձահատոյցն Աստուած, հատուսցէ վարձս ըստ վաստակոց իւրոց, աղաչեմ զձեզ յիշել ի Տէր։

Գրեցաւ սայ ի յերկիրս Զագանորու, ի գեաւղս որ կոչի Գորէս, ընդ հովանեաւ Ս. Գրիգորիս և Ս. Աստուածածնիս և Ս. Յակոբիս և Ս. Մարտիրոսիս, զի սոքա են մեզ բարեխօս, ի թվիս ՌՀԴ (1625)։

Ծաղկող՝ Յովանէս աբեղա
Վայր՝ Դաթեայ անապատ

Գ

Արդ՝ ծաղկեցաւ զայս Քարոզգիրքս ի Դաթեայ անապատին ՌՀԳ (1624) թվին, որ էին ժողովեալ Ճ (100) և աւելի։ Որ ժամանակին անապատին առաջնորդ Ներսեակէս վարդապետն և որ և զսեղանատեղն շինեաց խիստ ուրախութեամբ[37]։ Եթէ յիշէք զծաղկողս սորա Յովանէս աբեղա, անմեղադիր լերուք, ո՛վ հայրք և եղբայրք, որք հանդիպիք սորա վատութեանն, լի ամաւթով երես անկեալ աղաչեմ Աստուած ողորմի

[37] Տե՛ս նաև № 200 հիշատակարանում։

ասացէք մեղօորիս, ձեզ ասողացդ և ինձ խնդրողիս ամենեցուն ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւսանգամ գալստեանն. ամէն.

277
ՄԱՇՏՈՑ
ՏԵՐԱՎԴ, № 96

Գրիչ՝ Թումայ աբեղայ
Վայր՝ Մաղարդայ վանք

163ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ արարեալ է սբ. հօրն Մաշթոց վարդապետի, զոր հաւաքեալ ունի յինքեան զբոլոր բովանդակ սահմանադրութիւն եւթն խորհրդոյ եկեղեցոյ, ի թուականիս Հայոց ՌՀԴ (1625) ամին։ Եւ գրեցաւ սա ձեռամբ սուտանուն Թումայ աբեղայի, ի վանքս Մաղարդայ, ընդ հովանեաւ Ս. Նախավկային և ի Տիրամայր Ս. Աստուածածնի[ն], և մերոյ առաջնորդի սբ. ուխտիս տէր Պետրոս արքեպիսկոպոսի, ի թագաւորութեան կարմիր գտակի, որ անուն շահ Ապաս կոչի, ի պարոնութեանն Մաղսուտ սուլթանին։*

Արդ՝ յերես անգեալ աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զմեղապարտ գծողս զԹումայ սուտանուն, որ զանունս ունիմ և զգործս ոչ և զուսուցիչն իմ՝ Ներսէս *քահանայն, և զհայրն իմ՝* Մալիկն, *և զմայրն իմ՝* Մրվաքն, *և զեղբայրն իմ՝ հանգուցեալք ի Քրիստոս* Ազարէն, Բաղշիլն, Աւաղջանն, *և զորդին իւր՝* Սարգիսն, *և նորարուս որդին՝* Սաեփանոսն: *Եւ Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալուստն. ամէն։*

278
ԱՂԹԱՐՔ
ՄԻՔԷՋ, «էջմիածին», Զ—է, 1971, № 264

Գրիչ՝ Հայրապետ երէց

ա

87 *Արդ՝ այս ամենայն արձակեալ և հեռացեալ եղիցի ի ծառայիցս Աստուծոյ* խէ<խէ>ին *և կողակցին՝* Սալթայխաթունին, *և որդւոյն՝* Աստուածատուրին. *ամէն։*

բ

88 *||| վարդապետի, ձեռամբ անարժան և սուտանուն* Հայրապետ *իրիցու, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ի թվականիս Հայոց ՌՀ և Դ (1625)*[88] *ամին գրեցաւ։ Տէր Աստուած ողորմեա զստացող սբ. տառիս զպարոն* խէրի *և կողակիցն՝* Սալթախաթունն, *և որդին՝* Աստուածատուրն, *որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց, և Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

[88] *Ցուցակում «ՌՀ և Դ (1626)»։ Եթե ճիշտ է 1626-ը, ապա հայոց թվականը պետք է լինի «ՌՀ և Ե»։*

279
ԱԻԵՏԱՐԱՆ
Մ3ՁԵԳ, III, № 996 (1623 թ.)

ա

599 Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զԴաւիթ Վիրապեցի եպիսկոպոսն, և զհայրն իւր՝ զՍարգիսն, և զմայրն, և զեղբարքն, և զազգականքն իւր, որ ըստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ ընչից և վաստակոց իւր, ի թվին ՌՀԴ (1625), յիշատակ իւր և ծնաւղաց իւր, հաւրն՝ Սարգսին և մաւրն, և եղբարցն, և ազգականացն՝ կենդանեաց և ննջեցելոց։ Եւ որ առատն է ի տուր բարեաց՝ ձեզ և մեզ պարգևեսցէ զիւր երկնից արքայութիւնն, որ է ապրհնեալ յաւիտեանս. ամէն։

բ

600 Աստուած ողորմի Վիրապեցի Դաւիթ եպիսկոպոսին հոգւոյն, որ զսբ. Աւետարանս ի սբ. Երուսաղէմ եդ յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ վայելչափառ տաճարի։ Մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա, և խնամով պահողքն վարձս առցեն յԱստուծոյ. ամէն։

280
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մ3ՁԵԳ, V, № 1483. տե՛ս նաև «ՀԱ», 1947 թ., էջ 118, Աղավնունի, Այցելուք, էջ 481

Գրիչ, ստացող՝ Ստեփանոս Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

ա

205 Փառք...։ Ես անկարգս ի կարգաւորաց և անուսումն ի յուսումնական[աց] սուտանուն Ստեփան քահանայ, որ զանունս ունիմ և զգործս ոչ ունիմ, այլ մեղօք լցեալ և աղտեղացեալ ի յամենայն բարեգործութենէ թափուր և ունա[յ]ն կամ ի մէջ աշխարհիս...։ Տեսի զայս գիրքս ի սբ. քաղաքն Երուսաղէմ և ցանկացայ և սկսա, նաւտրեցի զսայ ի վայելումն անձին իմոյ։ Որք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով նայ լի սրտիւ և բոլոր հաւատով բերա[ն] մի[39] ողորմի ասէք ինձ անարժանիս Ստեփանոսի և իմ ծնաւղացն, հաւրն՝ Փանոսին և մաւրն՝ Շնանաւորին, և իմ կողակցին՝ Մբրաթին, և այլ ամենայն արեան մերձաւորացն. և Աստուած ձեզ ողորմեսցէ. ամէն։ Գրեցաւ գիրքս ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն, ի յաթոռն Հայոց ազգիս, ի հայրապետութիւն սբ. աթոռոյս տէր Դրիգոր սրբազան արհի և պանծալի արքեպիսկոպոսին, աթարիչն Աստուած զինքն այնփորձ և այնասան պահեսցէ...։ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զինքն յերկար ամօք պահեսցէ ի վերայ Հայոց աթոռոյն, որ բազում ջանիւ զվանքս նորոգեր է, և զարդարեր, ամենայն սրբութեամբ լցեր և փարթամացուցեր զեկեղեցիքս ամենայն պիտոյիւք և ամենայն լուսաւորաւք. ամէն։

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս... եօթնապատիկ լուսով պայծառ

[39] Ցուցակում տպված «բերամ [մ]ի» ձևով։

206 քան զարեգն//այն լուսովն լուսաւորէ զհոգի մահդասի վարպետ Շաղուբաքին, թէպէք թէ ի յանձնէ և ի յաչիցն տկար է, բայց ուսմամբ և իմաստութեամբ կատրեալ լի է ամենայն խմտութեամբ ամենայն գրոց. Աստուած զիւր մեղքն թողնու, որ կամեցաւ և զաւրինակն շնորհեց, որ զարձակման գիրգս գրեցի, Աստուած զիւր հոգին լուսաւորէ. ամէն։

Գրեցաւ գիրքս ի թվականիս Հայոց ի ՌՀԴ (1625), ի դառն և ի նեղ ժամանակիս, որ այլազգիքն զաւրացեր են ի վերայ քրիստոնէից ազգիս, վայ մեղաւորիս Ռ (1000) բերայն։

Քրիստոս Աստուած քո առատ ողորմութեամբն ողորմեա Մարգարայ սարկաւագին, որ բազում չարչարանաւք զամենայն եկեղեցեայց լուսերն կու վառէ. Աստուած զիւր հոգին լուսաւորէ, որ զկրաւնաւորի աւրինակն ետուր. Աստուած զինքն աւրհնէ. ամէն։

Բ

203 Բարեխաւսութեամբ և աղօթիւք սբ. հաւրն մերոյ Մակարայ կրօնաւորին... ողորմեայ Քրիստոս Աստուած ամենայն հաւատացեալ քրիստոնէից, և եղկելի գրչիս սուտանուն Ստեփաննոս Մոկացի իրիցու, զոր զանունս ունիմ քահանայի և զգործս սատանայի...։

281

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

ՄՅԶԵՊ, V, № 1602

Գրիչ՝ Եսայի աբեղայ

Վայր՝ Ըստաքեի վանք

ա

396 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Հարանց վարքս ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Եսայի սուտանուն աբեղայի, մեղաւոր յոյլ և ծոյլի, ի խնդրոյ քրիստոսասէր մահտասի Սարգիսին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Բ

Ստացող՝ Սարգիս

Ես՝ Սարգիս մահտասիս գրել տուի Հարանց վարքս յիշատակ հոգ-

397 ւոյ իմոյ։ Յիշեցէք զիս հանդերձ ծնաւղովք իմովք, լի բե//րան Աստուած ողորմի ասացէք...։

Արդ՝ գրեցաւ գիրքս ի յաթոռս Ըստաքև ի թվականութիւն Հայոց ՌՀԴ (1625)։ Որք հանդիպիք սմա կարդալով, Աստուած ողորմ[ի ասացէք][40]։

282

ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՄՅՎՍ, II, № 255 (ԺԵ—ԺՋ դարեր)

Վայր՝ Երուսաղէմ

760 Այս թուխտս այրած էր կէսն, նորէն փակուցի գրեցայ, առաջին թվական Ռ և ՀԴ (1625) ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ, ի Ս. Յակոբ։

[40] Ինչպես հաղորդվում է հաջորդ էջն ընկած է։

283
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՔՅԶԶՎ, № 13

ա

27 Փառք...։ Ի թվաբերութեանս Հայոց տումարի ՌՀ չորրորդի (1625) ի հայրապետութեանս Կիլիկիոյ տեառն տէր Մինաս կա[թողիկոսի]...[41] գրիչս և զծնօղսն իմ ե զամենայն ազգատոհմն իմ. և ինքն որ առատն է ի տուրս բարեաց, Քրիստոս Աստուած, ձեզ յիշողացդ՝ և մեզ յիշելոցս առ հասարակ տղորմեսցի, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

բ

Զմեղաւոր գրիչս զԼեճցին ե զծնօղսն իմ աղաչեմ զքեզ պատուական եղբայր յիշել ի Տէր։

284
ՍՐԲՈՅ ԲԱՐՍԵՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՔՅԶԶՎ, № 139 (1829 թ.) տե՛ս նաև Զմմառ, № 474, էջ 70, Գ Զարպհանալյան, Հայկ. թարգմ. նախնաց, էջ 338—339, Հ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Գ, էջ 1021

96 Փառք...։ ՌՀԴ (1625) գրեցաւ Կանոնական սահմանադրութիւն ուղղութեանս յուսումն խրատու[42] կարգաւորութեան վանականաց յարմարեալ և շարակարգեալ ի հոգիապայծառ և ի տիեզերալոյս վարդապէտէ և ի մեծէ եպիսկոպոսապետէն Կեսարու Կապադովկացւոց սրբոյն Բարսղի, որ կոչի Հարցողաց, զոր ետ զսա գրել Ստեփանոս վարդապետն յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, նաև Ներսէս վարդապետին և միաբանիցն։ Եւ է սա յիշատակ Լմայ անապատին ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին։ Յիշեցէք... ստացողի դրոցս Ստեփանոս վարդապետին և ողորմութիւն տուողացն և միաբանիցն, որ կան այժմ Կ (60) եղբայր միակեցական հաստատ կարգօք ի փառս Աստուծոյ։

285
ԱԻԵՏԱՐԱՆ
ՅՁԱԲ, № 183

ա

892 Աւետարանս է խնկալի,
Տփով անուշիւ ինքն ի լի,
Բուրէ զհոտն ի քիմս երկրի,
Հանգեալ հոգիքն ըզմայլի։

---

[41] Ցուցակը կազմող Քեշիշյանը այս մասին հաղորդում է. «երկու թերթ մագաղաթներ, ափսոս, որ մկրատուեր հանուեր են» (էջ 27)։

[42] Տպված է «Իրատու»։

Այն բարելից հոգին Մուսեն,
Զայս բուրաստանս արար իւր հերկ,
Որպէս ցորեան քաղէ աներկ,
Ի գալըստեանն լսէ ձայնն եկ։
893 Հանգի՛ր, ասէ, դու ընդ աշմէ,
Եկայք աւրհնեալքն որ ի Հօրէ,
Հետ արդարոց կարգին դասէ,
Զարքայութիւնն ժառանգէ. ամէն։

Բ

Յիշեցէք... մղտեսի Մուսեին, և իւր ծնօղացն հոգւոյն. ամէն։

Գ

Զստացող սբ. Աւետարանիս զմահդասի Մուսեին, և զծնօղսն իւր, զհայրն՝ Ալեքսանոսն և զմայրն՝ Մանպուպն, և զկողակիցն՝ զՍուլթանն, և զմեծ պապն՝ զՇահրիարն, և զմեծ մայրն՝ զ///թն, և զք/// զԱխինանն,
894 և /// Դա//ճանն, և զկողակիցք սոցին զ/// Գարանան, և զԿուրնին, և զմեծ պապն՝ Մահմուտն, և զհօրքոյրն՝ զԳոհարն և զԿուլշատն և զՍուլթանն, և զհօրեղբայրքն՝ զՊանատուրն և զնմին կողակիցն՝ զՇա[մ]ամն, և զամենայն արեան մերձաւորքն՝ կենդանեաց և հանգուցելոց հոգւոյն ողորմի ասացէք. ամէն։

[Ի] թուականիս Հայոց ՌՀԴ (1625) ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ... մուղտէսի Մուսեին և ծնօղաց իւրոց։ Արդ՝ որք հանդիպիք սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ օրինակելով, սպրկիկ պահելով՝ զվարձքն [յ]Աստուծոյ առնէ։ Դարձեալ մի՛ ոք իշխեսցէ զսա գրաւ դնել կամ գողանալ կամ վաճառել, զի մի՛ պատժեսցի։ Եթէ ոք [յ]անդգնի և զայս առնէ՝ զմասն Յուդայի առցէ և զանէծքն խաչահանուացն. ամէն

286

ՅԱՅՍՄԱԻՈԻՐՔ (1593 թ.)

ՄԻՔԷՋ «էջմիածին», 1952 թ., Ա, № 87

Գրիչ՝ Ստեփանոս

53 Յիշեցէք զստացողն. սբ. տառիս զմահտասի Տիրատուրն, և զդուստրն՝ Բէկումն, Մէրատաիկն, Ոսկիատաիկն։ Յիշեցէք ի բարին Մարտիրոսն, և տրդին՝ Գրիգորն, Ըսէֆանոսն՝ խոժոր գրիս։ Թվական հազար եաւթանասուն չորս (1625)։

287

ԽԱՉԳԻՐՔ

ՏՋՀՍ, № 110 (ժամանակ ?)

Նվիրատու՝ Իսկանդար Զելէպի

188 Շնորհօք և ողորմութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ի թվին Հայոց ՌՀԴ (1625) ես՝ Իսկանդար Զելէպի, որդի Սանոս Զելէպու, տրուի զխազտետրս յիշատակ ի դուռն Ս. Քառասունք եկեղեցւոյն։

288
ՃԱՇՈՑ
ՏՅՁՄՎ, № 5 (ԺԳ դար)

21 Նորոգեցաւ Ճաշոցս ի վայելումն Յունանին, որդոյն՝ Յովանէսին, եղբարն՝ Կիրակոսին: Աստուած վայելել տացէ բարի կենաւք և երկար ժամանակօք. Աստուած իւրեանք աւրհնէ. որ նորոգել տուին զայս գիրքս. ամէն։ Թվին ՌՀԴ (1625)։

289
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՅՁՄՎ, № 142. տե՛ս նաև Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 185—186

Գրիչ, ծաղկող՝ Վահան
Վայր՝ Զէյթուն

ա

442 Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ սկսեալ և ողորմութեամբ Տեառն աւարտեցաւ սա՝ յայսմ մեծահանդէս և հոգելից տառից, ի լաւ և յընտիր աւրինակէ Սրսայ առաջի վարժապետին և անուն Խուլ որջորջելոյ, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ և փրծուն գրչի Վահան տրկարի։ Ի շրջագայութեան հայկազան տումարիս ՌՀԴ (1625), ի դառն և յանբարի և վրշտաշատ ժամանակի, որ երերուն և տատանեալ կայ ամենայն երկիրս՝ գիւղ և քաղաք. ևս առաւել ազգս քրիստոնէից՝ ի ձեռն յայլազգաց և յանիրաւ պահանջողաց։ Ի գաւառս Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքս ի Զեթուն, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին և այլ ամենայն սբ. տաճարացս և սրբբութեանցն, որ աստ կան մեղ ի յոգնութիւն՝ հաւատացելոցս ի Քրիստոս։ Ի յաթոռակալութեան տեառնն Մինասայ կաթուղիկոսի և քաջ բարբունապետի Կիլիկեցւոյ, ի յառաջնորդութիւն յայս մեր գաւառիս տէր Մկրտիչ արքեպիսկոպոսի, և տէր Վարդան եպիսկոպոսի, և տէր Խաչատուր վարդապետի, և այլ ամենայն եղբարցն որ սպասաւոր կան սբ. ոսխտիս մերոց։ Ի խնդրոյ և ըստացողի տառիս տէր[43], հոգևոր որդւոյ մերոյ, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնօղացն և աղգայիցն ամենեցուն՝ եղբարց և քւերց, որդւոց և դստերաց՝ մեծի և փոքու։ Արդ՝ անկեալ աղաչեմ զամենեսեանգ... յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զգծողս և զստացաւդ զվերոյ ասացողսն, և զհայրն իմ՝ զԱտեփիքն, և զմայր իմ զՄրութն, և զեղբայրն իմ՝ տէր Ներսէս եպիսկոպոսն, և զմիւս եղբայր իմ զտէր Ստեփաննոս և զԿոստանդին, որոց աղաչեմ զձեզ մի ողորմէիւ յիշեսջիք։

բ

Զգծող և զծաղկաւղ այսմ տառիս յիշեցէք յաղաւթս ձեր զիս զեղկելիս և դուք յիշիք։

[43] Ինչպես նշում է Հ. Տաշյանը, ստացողի անունը չի գրված, ուրիշները հետագայում ավելացրել են «Մանուկ»։

290
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՅԶՄՎ, № 334

Գրիչ, ծաղկող՝ Գրիգոր Կողոնեացի
Վայր՝ Արզրում

779 Փառք...։

Զգծող, զծաղկող Շարակնոցիս,
ԶԳրիգոր Էրէց Կողոնեացիս,
Որ գործեցի բազում չարիս...
Ցիշման արժան առնէք ըզիս,
Անփորձ կենաք դուք աշխարհիս։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ
780 աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զուսուցիչն իմ՝ զԽի-
զանեցի Մարտիրոսն, որ բազում աշխատութեամբ ուսուց ինձ անարժանիս
զգիրս և զծաղիկս, որով լուսաւորեսցէ տէր Աստուած զհոգի նորա ի յա-
հեղ և սոսկալի աւուրն դատաստանի, յուսամք և հայցեմք ի Կենարարէն,
որ զինքն առաջի սրբոցն դասակից և պսակակից արասցէ։ Մանաւանդ
և ես անարժանս, հողս և մոխիրս և ոտից կոխան ձերոյ, գրեցի և ծաղ-
կեցի զՇարակնոցս ի դառն և յանբարի ժամանակիս, որ յայսմ ամի[44]
ելաւ ի Ստանբուլա[յ] Խոսրով փաշա անուն, գնաց ի յԱրզրում, որ է
արևելք, որ աստուածուրաց Ապազ անուն փաշա կոչի. որ վաղուց
հետ ապստամբեալ կայր թագաւորին և տիրեալ էր զԱրզիւրում,
որ բազում անգամ զաւրքն Տաճկացն ի վերայ գնացին և յաղթեցին, ապա
յաղթահարեցան ի յԱպազայէն։ Ապա այս Խոսրով փաշայս խաղաղու-
թիւն սերմանելով գնաց ի յԱպազայի վերայ և ոչ կարաց մենամարտիլ,
մտաւ ի յամրանոց բերդն և զԱստուած ոչ յուսացաւ, այլ ի յամրանոցն
յուսացաւ, հիսար եղաւ, որ այսչափ քրիստոնեայք մնացին ի յանաւրին
հետ ի բերդն։ Եւ Խոսրով փաշային զաւրքն շատ էր, թուով ՃՁՌ (180000)
մարդ. Խ (40) աւրն պատերազմեցաւ ի յամբոցին ի վերայ և Աստուծոյ
աջողութեամբ խաղթեցին զբերդն և նկուն արարին զԱպազան. յետոյ
նամակ և մոնոզոնեաց վսպիրն առ Ապազան, թէ «Զելանես ի
յամրանոցէդ, ՃՁՌ (180000) զաւրաւք մտանեմ ի նե[ր]ս, ո՛չ
տաճիկ, ո՛չ քրիստոնեա Ա(1) հոգի ոչ ապրի ի ձեռաց իմոց, հրամ[ան]
տամ զաւրաց իմոց որ ի տուր սուսերի մաշեմ զիւրեանքդ։ Յայնժամ
աղաղակ բարձեալ այլասեռքն և տառապեալ ազգի մերոյ քրիստոնեայք
գոչեցին կողկողագին պաղատանաւք։ Ո՛վ կարէ գրով արկանել զաղաղակ
դոցա. և անկան ի յոտն Ապազին, թէ. «Քեզ ազատելու ճար չկայ, մեր
արեանն է՞ր պարտական լինիս, ո՛վ արեանարբու գազանդ։ Յայնժամ

[44] Ձեռ-ի գրչության տարեթիվը որոշակի նշված չէ։ Ինչպես երևում է հիշատակարանից ձեռ-ը գրվել է այն ժամանակ, երբ Խոսրով փաշան պաշարել էր Արզրումը և այնուհետև Ապազան անձնատուր եղել։ Այլ տվյալներից գիտենք, որ Խոսրով փաշան Արզրումը պաշարել է 1625 թ. սեպտեմբերի 5-ին կամ 6-ին և պաշարման 12-րդ օրը՝ սեպտեմբերի 18-ին Ապազան անձնատուր է լինում (տե՛ս Մ. Զոպալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ, էջ 209—210)։ Ուրեմն 1625 թ. այս օրերից հետո էլ ավարտվում է ձեռ-ի ընդ-օրինակությունը։

ողորմեցաւ Աստուած իբրև զնինուէացոց երկիրն և զքարացեալ սիրտն բռնաւորին քաղցրացուց և ելաւ ի յամրանոցէն։ Եւ ազատեցան քրիստոնեայքն և ապա ըմբռնեալ տարան ի յՍտամպուլ, վերջն Աստուծոյ է գիտելի[45]։ Եւ ես անարժանս զայս գրէի, խելքս մոլոր ու միտս ցնոր, անմեղադիր կացիք, որ խիստ սաստիկ սով եղև, Լ (30) դրամ հաց Ա (1) ստակ և ոչ գտանի։ Ապա ձերում սբ. աղաւթիւք աւարտեցաւ Շարակնոցս ձեռամբ անարժան Գրիգոր իրիցու և աշակերտաց իմոց տէր Մանուէլին և տէր Գրիգորին և ընկերակից քահանայից իմոց, և ծնաւղաց իմոց ըզմահդասի Պապն և զմայր իմ զԽուպիկն, և զեղբայրն՝ զհայր Անդոնն, զԽուպիճանն, և զՊապանանն, և մարմնաւոր որդիքն իմ՝ զՍրապիոնն, զԹադէոսն, զՊարսամն և զՄարիաս սարկաւագն, կենդանեաց և ննջեցելոց առ հասարակ ամենեսեան· ամէն։

291

ԱԻԵՏԱՐԱՆ

ՑՈՎՍԷՆ, № 13. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 714, էջ 200 բ

Գրիչ՝ Յովսէփ Երէց
Վայր՝ Սխիրլի

13 Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՀԴ (1625), ի գիւղ[ս] որ կոչի Սխիրլի, ձեռամբ Մոգացի Յովսէփ իրիցուն, որ անուն ունիմ և գործս ոչ։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յօրինակելով մէկ Հայր մեղայիւ մի յիշեցէք զանարժան Յովսէփ Երէց գրիչս, և զծընողսն իմ, և զկենդանիսն իմ, և Աստուած զյիշողդ յիշէ իւր միւսանգամ գալստեանն. ամէն։ Ապա անմեղադիր լերուք ի խոշորութեան[46] և սխալանաց դրիս. վասն ԼԴ (34) տեղ փոխեցայ, վասն ձեռաց անաւրինաց և անհօատութիւն քրիստոնէից[47]։

292

ՀԱԻԱՔԱԾՈՒ

ՈՑՁՄՎ, № 678. տե՛ս նաև ՏՑՁՄՎ, № 294, էջ 722, «ՀԱ», 1892, էջ 335, 1922 թ., էջ 333

Գրիչ՝ Պօղոս
Վայր՝ Սպահան

171 Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ աւարտեցաւ գիրքս ի քաղաքն Ըսպահան, ձեռամբ անարժան Պօղոսիս, ի վայելումն մանկանց Սիոնի, որք տենչան աստուածային իմաստից։ Փոքր ինչ ծաղկաքաղ արարեալ՝ զօգտակարսն և զպիտանիսն ժողովեալ։ Արդ՝ աւարտեցաւ ի թվականիս ՌՀԴ (1625), ի հայրապետութեան, որոյ անունն ոչ յիշեցի։

Արդ՝ աղաչեմ զսիրելի եղբարսդ իմ, որք հանդիպիք այսմ խառնաճաղանճ մատենիս, անմեղադիր լերուք, զի ի տիս տղայութեան մերոյ եղև

---

45 «Գրեցի և ծաղկեցի զՇարակնոցս ի դառն և յանբարի ժամանակիս» հատվածից մինչև այստեղ տե՛ս նաև Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 238—239։

46 Տպված է «ի խոշորութիւն»։

47 Նույն անձնավորությունը № 43 հիշատակարանում ևս նշում է միևնույն բանը։

գծագրութիւն սորին. բայց եթէ գտանի ըստ հաճոյից ձերոց, Տեառն շնորհ, եթէ ոչ ներեցէք սղալանացս և յիշման արժանի արարէք զանարժան հող և մոխիրս, սուտանուամբ Պօղոս կրօնաւորս և զծնօղսն իմ, և որք յիշէք՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ, որ է ակրնեալ յաւիտեանս. ամէն[48]։

293

ԹՈՂՈՎԱԾՈՒ

Artab, № 11

Գրիչ՝ Յակոբ կրօնաւոր
Վայր՝ Հալապ

ա

72 Փառք·..։ Արդ՝ գրեցաւ երգարանս այս, որ ասի Յիսուս Որդի, ի թվականիս Հայոց ՌՀԴ (1624), ի դուռն Ս. Նիկողայոսի Զմիւռնիոյ հայրա-
73 պետին//, ի դպրատանն վարդապետիս, ձեռամբ թերէվարժ Յակոբ կրօնաւորին, ի վայելումն խոճայ Զօնրապին, որ սրտացաւ զսա ի հալալ վաստակէն իւրոյ վասն իւր և վասն ծնողացն, հօրն՝ խոճա Զատէ և մօրն՝ Ուղուրսուլթանին, եղբարցն՝ տէր Պետրոսին, Հուրմուզին, Ներսէսին, և միւս Ներսէսին, քուերցն՝ Ազուխանին և Մասումփաշին, կանանցն՝ Ուլուխաթունին, և միւսուն՝ Հռէփսիմին, և որդւոցն՝ Եսաիփն և Նիկողայոսին, և փոխեալ որդոյն՝ Մուրատխանին։ Եղ զսա յիշատակ վասն հոգոց նոցա և վասն իւր։

Դարձեալ յիշեցէք զխոճայ Սիմաւոնն, որ էր վերակացու ի վերայ գրին սորա, և յիշման արժանի արարէք առ հասարակ զամենեսեանն միով Հայր մեղայիւ. ամէն։

բ

72 Ո՛վ պատուելի հեզահոգի եղբայր Զօնրապ, յիշեա՛ զաշխատողս զՅակոբ, և զծնողս իմ աղաչեմ յիշել ի Տէր։

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Հալապ

գ

75 Մեղապարտ գծող Աստուածատուրիս ողորմի ասացէք, և Աստուած զձեզ ողորմեսցի, և ստացողի սորին Երևանցի խոճա Զօնրապին։ Գրեցաւ թվին ՌՀԴ (1625)։

դ

76 Զմեղապարտ գծող Աստուածատուր դպիրս և զստացողն զԵրևանցի խոճա Զօնրապն յիշեցէք ի Քրիստոս։ Գրեցաւ ի Հալապ թվին ՌՀԴ (1625)։

---

[48] Տաշյանի մոտ եղածը խիստ համառոտ, ԺԹ դարի ընդօրինակություն է։

294
ՄԱՇՏՈՑ

ՄՀՍԴ, № 95. տե՛ս նաև «ՀԱ», 1926 թ., էջ 457

Վայր՝ Եկեղեցի

66 Փառք...։ // Արդ՝ գրեցաւ Մաշթոցս կարողութեամբն Աստուծոյ ի ձեռն ումեմն դպրի, և խրատով ուսուցչին իմոյ՝ տէր Գրիգորին, ի խնդրոյ սրբասնունդ և աստուածահաճոյ վարուց Անդրէաս արհեպիսկոպոսի, սպասաւորի Սեբաստիա սբ. և հրաշափառ Նշանին։ Զոր տէր Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս. ամէն։ Ի թվին Հայոց ՌՀԴ (1625) կատարեցաւ գիրքս ձեռամբ սուտանուն...[49], ի քաղաքն Եկեղեցի, ընդ հովանեաւ Ս. Սարգսին և Ս. Աստուածածնին, աղաչեմ յիշել ի Տէր Հայր մեղայիւ։

295
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

ՄՀԹԱԻԱ, Ջ 65 (ժամանակ ?). տե՛ս նաև «ՀԱ» 1909 թ., էջ 73

Նորոգող՝ Խաչատուր

131 Նորոգեցաւ Յիսուս որդիս թվականութեանս մերում ՌՀԴ (1625) թիւին, Ըստթաթէի յանապատին ձեռամբ սուտանուն [Խաչատուրի][50], յիշատակ ի գուն սուրբ ///

296
ՇԱՐԱԿՆՈՑ

Թորոս աղբար, Բ, էջ 371—372

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Կարմիր վանք

Փառք... Արդ՝ գրեցաւ Շարակնոցս, որ կոչի Խլկցի, ի լաւ և [յ]ընտիր աւրինակէ, ձեռամբ... Վարդանիս... կրանատր... ի յանապատս ի Կարմիր վանք[51], ընդ հովանեաւ Ս. Կարապետին և Ս. Նշանին և Ս. Սարգսին, ի յառաջնորդութեան սբ. ուխտիս միաբանից ԺԱ (11) անձն կրաւնատրիս, որ կան յայս քարաժեռ անապատիս, ի թվականիս Հայոց ՌՀԴ (1625)[52]... յիշեցէք... ղուսուցիչն իմ՝ զտէր Գրիգորն զպարծանք մոնոզաց, և զտէր Սաեփանոսն և զմեծն [գ]րագիրն[53] զտէր Յովանէսն, որ զծաղիկն ուսոյց և խրատեաց... Յիշեցէք... զարժանաւոր տէր Եղիայն, որ ետ փափաքանաւք գրել և ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոյ, յիշատակ անձին իւրոյ և հարն՝ Ալփիարին և մարն՝ Շնորհուրին...։

---

49 Գրչի անվան մասին Թ. Գուշակյանը տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Հոս կը կցուի անծանօթ յունարէն տառերու նման գրերով անուն մը». ուստի անունը բաց է թողնված։

50 Հ. Աճառյանի հաղորդմամբ անունը շնչված է, բայց կարողացել է կարդալ։

51 Ինչպես նշում է Տ. Պալյանն, այն գտնվում է Զմշկածագի Ագրակ գյուղի մոտերքում։

52 Մինչև այստեղ տե՛ս Տ. Պալյան, «Բիւզանդիոն», 1906, օգոստոս 3/16, № 3014։

53 Տպված է «արագիրն»։

297
ԱԻԵՏԱՐԱՆ
Ճանիկեան № 40

Գրիչ՝ տէր Նիկողոս
Վայր՝ Հալապ

95 Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ տէր Նիկողոսին, ի թուին ՌՀԴ (1625), ի հայրապետութեան տեառն տէր Մինաս կաթողիկոսին... ի քաղաքն Հալապ..., ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Քառասնիցն...։

298
ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ
Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 98—99

Գրիչ՝ Յովհաննէս[54]
Վայր՝ Սուրս

ա

Զոր լուեալ քաջ բարունապետն Ներսէս[55] զՔրիստոսի մարմնառիկ տնօրէնութիւնն... ետ գրել զսա ի հալալ յարգեանց իւրոց և յարդար վաստակոց... ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց... դրեցի ի դրան Ս. Յովաննու Մկրտչին և Սրբոյն Գէորգեայ զօրավարին ի գիւղն որ կոչի Սուրս... ի թուականութեանս Հայոց ՌՀԴ (1625) ամի գրեցաւ տառս որ կոչի Առաքինութիւն, յանուն Լմայ անապատին Սրբոյն Գէորգայ, քաշ բարունապետին մերոյ Ներսէսին, ի վայելումն անձին իւրոյ...։

բ

...զոր ետ գրել զսա[56] Ստեփանոս վարդապետն յիշատակ հոգւոյ իւրոյ, նաև Ներսէս վարդապետին և միաբանիցն։ Եւ է սա յիշատակ Լմայ անապատին, ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին։ Յիշեցէք... ստացողի զրոցս Ստեփանոս վարդապետին և ողորմութիւն տուողացն և միաբանիցն, որ կան այժմ Կ (60) եղբայր միակեց, հաստատ կարգօք ի փառս Աստուծոյ...

---

[54] Գրչի անունը վերցրել ենք Ն. Ակինյանի հաղորդումից։
[55] Իմա՝ Ներսէս Մոկացի։
[56] Խոսքը վերաբերում է Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց» աշխատությանը։

299

ՏՕՆԱՑՈՑՑ

Երևան, № 8541

Գրիչ՝ Մկրտիչ

Ա

40ա Գրեցաւ թվին ՌՀԴ (1625)։

Բ

82բ Գրեցաւ ձեռամբ մեղապարտ և անարժան Մկրտչիս, թվին ՌՀԴ (1624) դեկտեմբերի Իհ (25)[1]։

Գ

164ա Եւ զմեղապարտ զրչակս զՄկրտիչ, յիշեսչիք ի Տէր, թվին ՌՀԸ (1626) փետրվար Բ (2)։

300

ՑԱՑՍՄԱԻՈՒՐՔ

Արծնեան, «ՀԱ» 1962 թ., էջ 56—57. տե՛ս նաև № 6273, էջ 571բ, Ղ. Փիրղալեմյան «Ընչխարք» հտ. Ա, № 720, էջ 202բ.

Հետ. ստացող՝ Աղաջան

Ցամի մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՈՒՁ (1626) փետրուվար ամիսն Գ (3) աւուր։ Ես՝ Աղայջանս Այսմաւուրս գնէլ էի[2] ի ձեռաց անօրինաց, ի Ը (8) թուման գին արին, Ա(1) թուման երետ տէր Կարապետն էառ իւր Այսմաւուրքն, և այլ մնացորդն տուրք տուի ինձ, եղբարն իմոյ՝ Ղուլիճանին, և որդոյն իւրոյ՝ Նաաարղուլին, Աղայճանին կողակցին՝ Յետարին և ամենայն արեան մերձաւորաց, տուրք յաւիտենական և յիշատակ ամենայն աշխատաւորաց՝ Աղայջանին, Ղուլիճանին, Նաաարղուլին: Ջանկեցի տէր Պետրոսին վկայ, տէր Ամբրոզիոսն վկայ։

---

[1] Տոմարական մեր դիտողությունը տե՛ս № 186 հիշատակարանի 4-րդ ծանոթագրությունում։

[2] Այս մասին նույն անձնավորության հիշատակարանը տե՛ս 1606 թ. շարքում։

301

ՇԱՐԱԿՆՈՑ (1623 թ.)

«Հայկազեան հայագիտական հանդէս», 1973 թ., Դ, էջ 173—174, տե՛ս նաև «ՀԱ», 1947 թ., էջ 122, Զմմառ, № 485, էջ 79

Նորին Ստեփանոս երիցու արարեալ յիշատակարան Շարակնոցի

Որք ըզծորանս հոգոյն արբին,
Զշարականսն ոգեալ գրեցին.
Նախ մեծ Մեսրոպըն սքանչելին,
Ըզկարգ բոլոր Աղուհացին,
Զզարշարանացն աւագ շարթին։
Արդ՝ ես նուաստ անձն եղկելի[3],
Զիք Ստեփանոս մեղաց գերի,
Որդի գոլով Ստեփանոսի,
Եւ գաւառաւ Ջուղայեցի։
Անուն ունիմ քահանայի,
Բայց գործ[ով]եմ յոյժ աղտեղի,
Զձեզ աղաչեմ տեսողք բարի,
Զմեղադրել ինձ անմտի։
Երիս երրեակ և եզակի,
Այսքան հարիւր թվինն հայի,
Նոյնքան եօթնից ե աւելի (1626)[4]
Սակաւ բանիկս այս յարմարի։
Ի մուտն ամսին ապրիէլի,
Որ Ղազարու շաբաթ կոչի,
Եւ շամշ ամսին կրկին վեցի (12),
Եղև զբրաւ դոյն այս բանի։
Ով գու եղբայր իմ ցանկալի,
Պօղոս պրվէտ քաշ և արի,
Ընկալ սիրով անգ ժրելի,
Ի գանձ ըզձոյտ ըստ լոմայի...։

[3] Սույն բնագրում հինգերորդ և վեցերորդ տողերի միջև գրված է նույն հեղինակի 1621 թ. չափածո հիշատակարանի 12 տողերը.

1. «Իսկ ես նուաստ անձն անարժան,

. . . . . .

12. Ոտամբ չափեալ [ը]ստ հոմերական» (տե՛ս սույն ժողովածուի № 46 հիշատակարանում՝ 29-րդ տողից մինչև վերջ)։ Քանի որ նշված տողերը 1621 թ. չափածո հիշատակարանի կրկնությունն է սույն բնագրից հանեցինք։ «ՀԱ»-ում (1947 թ., էջ 120—121) և Զմմառում (№ 485, էջ 79—80) հանված հատվածը բնականաբար չի պահվել։ «Սիոն»-ում՝ (1963 թ., № 1, էջ 14) պահվել է ներկա չափածոյի 1—2 և 6—9 տողերը։

[4] Այսինքն՝ [(3×3)+1]×100+(7×10)+5+551։ Սակայն Զմմառ-ում տարեթիվը նշված է 1628 (Երիս երրեակ և եզակի, Այսքան հարիւր թվին հայի, Նոյնքան եօթնից է ավելի» ձևով։ Այստեղ չփոթվել է է և ե տառերը, որը սովորական երևույթ է ձեռագրերում)։ Սրանցից ո՞րն է ճիշտ։ Ճիշտը 1626 թվականն է։ Այդ լուծման մանրամասնությունները տե՛ս Է.մ. Պիվազյանի և մեր գրախոսությունում, պրոֆ. Ա. Աբրահամյանի «Հայոց գիր և գրչություն» գրքի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4, էջ 210—211)։

302
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8873

Գրիչ, կազմող՝ Գալուստ

274ա Գրեցաւ սակաւ գիրս և կազմեցաւ գիրքս ձեռամբ Գալուստ մեղապարտի[5], թվին Հայոց ՌՀԵ (1626) և գալուստեանն կենարարին ՌՈՒԸ (1628), արաց ամսոյ ի ԻԹ (29), օր չորեքշաբթի, և ապրիել ամսոյ ԺԲ (12)։

303
ՃԱՇՈՑ
Երևան, № 6301 (1318 թ.)

251բ Ես՝ անարժան մեղայթավալ Մարտիրոս ծառայ Նախավկային. ապրէլի ԺԳ (13), թվին ՌՀԵ (1626). ամէն։

304
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
ՏԵՐԱՎՋ, 497. տե՛ս նաև «Բազմավէպ», 1938 թ., էջ 314

Գրիչ՝ Սիմոն երէց
Վայր՝ Լէվ

771 Փառք...։ Արդ՝ եղև գրոցս զրաւ ցանկալի կտակիս և ծաղկալի բուրաստանիս, որ կոչի ինքն Հարցմանց գիրք՝ Հին և Նոր կտակարանաց շարադրեալ ազգի ազգի շահաւէտ բանից, հարցմունք գեղեցիկ և պիտանիք իբրև զշարս մարգարտաց ի յօգուտ և ի շահ ընթերցողացն և լսողացն, ի թվին հայկական յաբեթական մեծ տումարիս ՌՀԵ (1626)-ին մայիս ամսոյ Ժ (10), և ի կաթողիկոսութեան Հայոց մեծաց սբ. էջմիածնայ տէր Մելքիսեդեկին, զոր ի յայսմ վայրկեան ժամանակիս եկեալ Ըռզաց երկիրն, ի քաղաքն որ կոչի Լէվ, Ցինանցն երկրորդում շաբաթին Աշխարհամատար[ան]ին, շաբաթ օրն[6]։ Էին ընդ նմա միարանք, որ էր նախ և առաջին՝ շնորհալի և ցանկալի սրբազան հայրն տէր Աստուածատուր՝ յաթոռակալ սբ. էջմիածնայ արհի եպիսկոպոսն, նայև այլ Դ (4) եպիսկոպոսք և Բ (2) կրօնաւորք, զոր տէր Աստուած շնորհաւոր անէ ամենայն քրիստոնէից։ Եւ ի թագաւորութեան Լեհաց երկրին Երկրորդ Զիկմոնդին։ Բայց ստացաւ զսա մեծաւ սիրով և շերմեռանդ յօժար սրտիւ և փափագանօք, հեզահոգին և բարեմիտ, սրբակրօն քահանայն տէր Անդրիասն Արզրումցին. ետ զսա գրել իւր անձին և իւրոցն ամենեցուն։ Զոր յետոյ տեսեալ զսայ բարեմիտ այրն Աստուծոյ խօճայ Պաղտասարն

[5] Զեռ-ի գրիչներից առաջինը Հոհան դպիրն է. վերջինիս № 186 հիշատակարանը տե՛ս 1624 թ. շարքում։

[6] Այսինքն 1626 թ. ապրիլի 22-ին, շաբաթ օրը, որովհետև այս թվականին Զատիկը կլինի ապրիլի 9-ին (հուլյան տոմարով), իսկ Ցինանց երկրորդ շաբաթը կլինի ապրիլի 17—23-ը, այստեղից էլ Աշխարհամատրանի կամ Կանաչ կիրակիի շաբաթ օրը կլինի ապրիլի 22-ին։

Ճուղեցին, մեծաւ հայցմամբ և փափագանօք գնեաց զսա ի տէր Անդրիասէն, ի հալալ վաստակոցն և արդար արդեանցն, վասն իւր հոգւոյն, հօրն և իւր ծնողացն՝ Յեսայիին, և մօրն՝ Հռէփսիմէին, զի կարդալով զսա զուարճասցի յոգով և մարմնով յորչափ կենդանի լիցի, և յետ մահուանըն յիշատակ յաւիտենական եղիցի իբրև զարձան, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս. ամէն։ Բայց երես անկեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս բարի մտօք և ուղիղ զվերոյ ասացեալ ստացող սորայ զիսճայ Պաղտասարն, և զիւր ծնողսն և զամենայն արեան մերձաւորս՝ զկենդանիս և զփոխեցեալսն առ Քրիստոս։ Եւ բերան մի ողորմի ասացէք նաև ինձ անարժան գրչիս Սիմոն լոկ անուն իրիցուիս, որ միայն անուամբ եմ կոչեցեալ, բայց գործովս հեռացեալ. եւ Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց...

305
ՄԱՇՏՈՑ
ՄՏԶԵՊ, IV, № 1286 (1471 թ.)

182 Մեղաւոր Եսաֆին, որդւոյն բան Եուրֆոյին, զոր Տէր Աստուած բարով վայել տացէ. ամէն։ Թվին ՌՀԵ (1626) մայիսի ԺԴ (14) օր, 1626։

306
ՃԱՇՈՑ
ՏՏԶԿՄՎ, № 16 (1613 թ.). տե՛ս նաև Կամենից, էջ 178, «ՀԱ», 1891 թ., էջ 75

24 Թվին ՌՀԵ (1626) մայիս ԺԹ (19), օրն շաբաթ, եկաք ի Զամօսցա՝ պարոնտէր Մարտիրոս սր. էջմիածնացի, և պարոնտէր Եղիա Երզնկացի, և տէր Խաչատուր աբեղա Լովցի, վասն նուիրակութեան և հիմնարկութեան սր. եկեղեցւոյ. և ի հայրապետութեան տեառն տէր Սելիխեթ կաթուղիկոսին, որ էր ինքն ի Լով և առաքեաց զմեզ ի Զամօսցա քաղաք, և ի քահանայութեան տէր Յակոբ քահանային. եկաք հանգեաք ի տուն նորին, Աստուած փառաւորէ զինքն ի հոգի և ի մարմին. ամէն։

307
ՃԱՇՈՑ
ՄՏԶԵՊ, VI, № 1996 (ԺԵ դար)

ա

89 Տէր Աստուած ողորմի խոջա Զիրաֆին, որ զՏարեանգիրքն ու զԱստուածսաղունչն ոխֆ արար ի վերա սր. Երուսաղէմայ։

բ

Տէր Աստուած... ողորմեա Վանեցի խոջա Զիրաֆին, որ մականուն Պոկօշ ասեն, յիշատակ հոգոյ իւրոյ...։

Գ

Դարձեալ Աստուած ողորմի վերջին ստացողի սր. գրոցս աստուա-
599 ծասէր և բարեմիտ խոշա Զիրաքին և իւր ծնողացն, հօրն՝ Խաճանաարին// և մօրն՝ Գուլաղին, կողակցին, եղբարցն...[7]։

Դ

Նվիրատու՝ խոշայ Զիրաք

Ես՝ աստուածասէր և բարեմիտ ծառայս Աստուծոյ խոշա Զիրաքս, որ մականուն Պոկոշ ասեն, ըստացա զայս աստուածախօս սր. գիրքս և պատուական Աստուածաշունչ մի, ՌԾ (1050) ղոշ գնեցի և ետու սր. Երուսազէմայ, ի գուռն Քրիստոսի լուսաբուխ սր. գերեզմանին, անշինչ յիշատակ հոգոյ իմոյ...։

Թուին Հայոց ՌՀԸ (1626) Վարդավառի պահոցն[8]։

308

ՄԱՇՏՈՑ

ՄՍԱՐ, № 216

998 Փառք...։ Աստուած ողորմի Նալատէ հոգոյն, որ//ըստացաւ ի հալալ ճընչից և էառ յիշատակ իւր հոգոյն, և իւր կինոջն հոգոյն, և իւր որդոյն՝ Ներկիզին, Թորոսին, Սարգիսին, Յովհաննէսին, և իւր հարսին՝ Մայրամին, Մելիքին, Մայրամին, Նազլուին, Ղիզլարին, Ղոչիկին, Եզնիկին, և իւր հաւա[տ]ատը ննջեցելոցն հոգոյն։ Էառ յիշատակ և երեսս յիշատակ, ի ձեռն տէր Կիրակոսին։ Որ հանապազ կարդան՝ Աստուած ողորմի ասասցեն. ամէն։

Գրեցաւ Մաշտոցս ի թվին ՌՀԸ (1626), սեպտեմբերի Ա(1), աւրն երկուշաբթի։

309

ԱԻԵՏԱՐԱՆ

ԵՐԵՒԱՆ, № 6764 (1283 թ.)

Փրկող՝ Աւետէնդ

126ա Փառք...։ Դարձեալ յիշեցէք զանարժան սոսկանուն Աւետէնդիս սուտանուն։ Վերջին յիշատակ է սր. Աւետարանս, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ՝ տէր Միքայէլին և մայրն իմ՝ Ղոմանկոյն, և եղբաւրն իմոյ՝ տէր Ղազարին և իւր կողակցին՝ Լալզուճաշին, որ փոխեցաւ առ Աստուած, և կողակցին իմոյ՝ Ազգանդարին, և որդոցն իմոյ՝ սարկաւագ Յոհաննին, Եսայուն։ Եւ ով որ կարդայ կամ տեսանէք, լիայկատար և միայմիտ սրտիւ ողորմի ասացէք սոցա հոգուն, և ձեզ տայ Տէրն իւր բարի ողորմութիւն, որ վիշ[9] դառն ժամանակ պահեցի ի հարամէ, ի

[7] Ցուցակում տե՛ս նման մի քանի հիշատակարաններ ևս։

[8] Այսինքն՝ հուլիսի 10—15-ի միջոցին, 1626 թ. Վարդավառն կլինի հուլիսի 16-ին, կիրակի։

[9] Բնագրում այդպես է։

տաճկէ. Լ(30) տարի սար ու ձոր մաշեցայ, կին ու որդիս կորուցի. զայս սր. Աւետարանս[10] պահեցի։

Գրեցաւ յիշատակարանս դեկտեմբեր Գ(3)-ին, թվին ՌՀԶ (1626)[11]։

310

ԲԺՇԿԱՐԱՆ

Երևան, № 414

Ստացող՝ Պունիաթ Սեբաստացի
Վայր՝ Մարզուան

227ա Այլ և զվերջին դաշխատողն սորայ զՊունիաթ Սեբաստացին, որ բազում աշխատանք կրեցաք ի յայս արուեստս և բազում բժշկութիւն կատարեցաւ շնորհիւն Աստուծոյ։ Եւ այս պատուական գրոցս խիստ հաւանեցաք և գրել տվաք ձեռամբ Կարապետ մանկանն. ի թվականութեանս Հայոց ՌՀԵ (1626) ամին և քաղաքն ի Մարզուան: Յառաջն բնակեալ էաք ի Սամիսոն, և շատ գրեանք էաք ժողվել ի Հայոց և ի յայլազգաց։ Եւ յետոյ ազգն Ուռուաց զօրացն և զՍև ծովուն եզերն աւիրեցին. և եկեալ ի Սամիսոն գիշերով ասպատակեցին և զմեզ փախստական արարին, և զքաղաքն այրեցին, և զինչ գրեանք ունեաք հրակէզ արարին, և մեք եկեալ
221բ փախստական ի Մարզուան, և զայս գիրքս գրել տվաք/ողորմութեամբն Աստուծոյ։ Աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, որ հանդիպիք սմայ կարդալով կամ տեսանելով յոյժ խնամ տանիք սմայ, զի յոյժ պատուական և գովելի է սայ, և որ սիրով աշխատի այս արհեստս բազում օկտութիւն գտանէ ի սմանէ, և բազում հարկիս կու ընդունի ի մարդկանէ՝ և՛ ի մեծամեծաց և՛ ըռամկաց. և փառք յաւիտեանս. ամէն։

311

ՊԱՏԱՐԻԿ

Երևան, № 848. տե՛ս նաև «Բանբեր էջմիածնի ինստիտուտի», 1921—1922 թթ., էջ 112, Թ8ժԴ, Բ, էջ 32։

Նորոգող՝ Վարդան երէց
Վայր՝ Դատիվանք

1ա Զվերջին նորոգող ծաղկազարդ սր. Գանձարանիս սրբայսէր և հեզահոգի պարոնտէր Գիրիգոր[12] արքեպիսկոպոսն, որ ետ նորոգել զսր. եղանակաւոր տառս՝ յիշայտակ իւր և իւր ծնօղացն, պապն իւր՝ պարոն մելիք Յուլոյպէկն և իւր կողակցին՝ Գուլազին, և իւրեանց զաւակացն՝ պարոն Աղայպէկին, Մելիքպէկին, Սարուխան պեկին, Սաեփանոս կրաւնաւորին, և միւս Սաեփանոս եպիսկոպոսին, և դստերաց իւրոց Լիիֆարին, Ուլլան-

[10] Խոսքը Կեռան Թագուհու անունով հայտնի Ավետարանի մասին է, գրված Սկևռայի վանքում. ունի հետաքրքիր և ինքնատիպ մանրանկարներ։

[11] Քանի որ հայոց ՌՀԶ թվականը սկսվում է 1626 թ. հոկտեմբերի 16-ից (հուլյան տոմարով), ուստի Հայոց ՌՀԶ թվականի դեկտեմբերի 3-ը կընկնի 1626 թ. մեջ։

[12] Պատարիկի 2բ էջում մեկ ուրիշն ավելացրել է, որ պարոնտեր Գրիգորը մահացավ 1658 թ.։ Այդ տեղեկությունը տե՛ս 1658 թ. շարքում։

փաշին, Խանումաղին, Խանաղին, և որ ի Քրիստոս էն հանգուցեալ, յիշեցէք ի Քրիստոս և լի բերանով Աստուած ողորմի ասացէք նոցայ. և Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ [գալ]ըստեան։ Եւ որ ի վերայ սբ. գրոյս աշխատանք ունին՝ յառաջնոց, միջնոց և վերջնոց լիայբերան Աստուած ողորմի ասացէք նոցա. ամէն։

1բ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոնտէր Գիրիգոր եպիսկոպոսն, որ ետ նորոգել սբ. Գանձարանս, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց պարոն Մելիքպեկին, պարոն Խաթունին, և եղբարքն իւր՝ Յովհաննէս էրէցն, Գիշիպեկին, և եղբաւր որդոցն՝ պարոն մելիք Պալասան պէկին, տէր Ովհաննէսին, տէր Սաէփանոս կրովնաւորին. Աստուած զինքն անփորձ պահէ ի չարէ ի չարից աշխարհիս. ամէն։ Եւ որդիք պարոն Պալասանին Մելիքպեկն, Շահիպեկն, Յուլուպեկն, Ատիպեկն և այլն որ ի Քրիստոս են հանգուցեալ, և մայր պարոն Պալասանին, Դալաք խանումն, որ բազում յաշխատանք ունի ի վերայ մեր, Աստուած իւրան յարքայութիւնս տացէ իւր գալըստեանն. ամէն. և հարսներն իւր՝ Խաթունաղէն, Խանումաղէն։ Աղաչեմ զձեզ, ո՛վ ոք հանդիպ[իք] սբ. գրոյս զվերոյ գրեալս՝ յիշեցէք...։

2ա Կազմեցաւ սբ. գիրքս ի թվաբերութեանս Հայոց ՌՀԲ (1626)-ին, ի դառն և ի նեղ ժամանակիս որ աշխարհս իբրև ծով ալեկոծման էր, բարերարն Աստուած խաղաղութիւն տացէ աշխարհիս. ամէն։

Նորոգեցս գիրս այն տարին, որ ազգն Վրաց՝ Մովրաւ ասին անուն նորայ, վասն մեր մեղաց եկեալ բազում հեծելաւք հասս ի Գանձակ քաղաք, որ այժ[մ] Գանջայ ասի։ Եւ ոչ ոք եգ անդ ազգէն զզրլպաշի, քանզի [յ]որժամ լուան գալն Վրաց՝ փախրստական եղէն ի նմանէ։ Եւ յանիրաւ ազգն Վրաց արձակեցս ի վերա Հայոյց ազգիս՝ Գեաաշենու հետ մինչ ի պարսումեցիք Ա (1) աւուր գերացուցին դաշտ ու սար, հայք և թուրք ի

2բ միասին. // և զձեռն անկեալն զոմն սպանին, զոմն վիրաւորեցին և բազումս գերի տարան որ անթիւ, շատ աւերս ած ի վերայ աշխարհիս։ Եւ ես նուաստ և անպիտան Վարդան սուտանուն քահանայ, վա՜յ ինձ որ անուանս չեմ արժանի, խիստ թալանվէցայ ինչ մաւրէ մերկ. գոհութիւն Աստուծոյ իմ մեղացն բարկացս Աստուած և զամենայն ինչս իմ՝ բազում գիրանք ու շատ անաւթս եկեղեցոյ իմ, գերի տարան, և հայրն սպանին և միայն ես մնացի արտասուալից աչօք լալիս։ Աշխարհս զամենայն տարտարոսի մնաց, վերջն Աստուած գիտէ։ Ապա ես մեղաւոր Վարդան էրէցս Ոսկի անայպատու եկի ի սբ. յուխտս Գատիվանայ։

Զայս գիրքս կազմեցի,
Սակս մի բան դրեցի,
Եւ ոտս ձեր անկեալ լացի,
Եւ բան մի ձեզնից խնդրեցի,
[Յ]որժամ կարդայք բանս սակօր,
Ինձ ասէք Աստուած ողորմի,
Եւ Աստուած ձեզ ողորմեսցի։

312
ՃԱՇՈՑ

Երևան, № 979 (1286 թ.). տե՛ս նաև «Արարատ», 1888 թ. էջ 347, Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 302—303

Գրիչ՝ Յակոբ Սսեցի

475բ *Ի հայրապետ[ութեան] տեառն տէր Սինաս կաթողիկոսին, թվականութեանս Հայոց [Ռ]ՀԵ (1626)*[13]*, նուաստս յամենայնի Յակոբ [Ս]ըսցի, որ յայժմ եմ փակակալ ի դուռն Ս. Լուսո[ո]րչի ի Կըլիկիեայ, այ[ժ]մ որ Իմարասատ ասի, Բ (2) և Գ (3) եղբօր հետ ելայ գնացի սանտըխտով. թըվական նորայ, որ ի դռան վերայ կայր, կարդացի, որ էր օրինակն այս. «Կատարեցաւ յարմարումն շինու[ածո]յ հիւանդանոցիս հրամանաւ մեծաւ փառաւք քրիստոսասէր թագուհ[ւ]ո[յ] Զապիլի <ի թվ> ի թվականութեանս Հայոց ի Ո և Ղ (1241)»։*

313
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

Երևան, № 1206

Գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ

350ա *Փառք..., որ ետ կարողութիւն ինձ անիմաստ և անարհեստ և փծուն գրչի, տրուպ Աստուածատուր սարկաւագի հասանել յաւարտ սբ. մատենիս, որ աջողութեամբ նորին սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածաշունչ սբ. տառս ի թվականութեանս Հայոց ՌՀԵ (1626) ամի, ի թագաւորութեանն իսմայելեցւոց սուլթան Մուրատին, և ի հայրապետութեանն սբ. Երուսաղէմայ տէր Գրիգոր արհեպիսկոպոսին, ի խնդրոյ տէր Ղուկաս քաշ բաբունապետ և աստուածաբան վարդապետին, զոր տէր Աստուած մեր բարով վայէլել տացէ նմա, ե յետ աստեացս ելանելոյ յիշատակ անջնջելի մնասցէ։ Արդ՝ որք հանդիպիք սբ. մատենիս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զիս զանարժան Աստուածատուր սարկաւագիս, և զհայրն իմ՝ զԽաչատուրն, զհանգուցեալն առ Քրիստոս, և զմայրն իմ՝ զմահդասի Խաթունն, և զհոգևոր հայրն իմ՝ զմահդասի Ղարիպ խոջան,*

350բ *և զայլ ամենայն արեանառու մերձաւորսն մեր ի մաքրափայլ // յազօթս ձեր, և որք յիշէք...։*

314
ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 1599

Գրիչ՝ Միքայէլ Թոխաթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

318բ *Փառք...։ Գրեցաւ Շարակնոցս լաւ և ընտիր աւրինակէ, թվին ՌՀԵ (1626), ի մայրաքաղաքս Կոստանդինուպալիս, ձեռամբ Թոխատցի Մի-*

[13] *Տարեթիվը՝ «ՀԵ»-ի գրված է ձեռ-ի ձախ լուսանցքում և հատուկ նշանով ցույց է տրված տեղը։ «Արարատ»-ում թվականը չի բերված, երևի չեն նկատել, իսկ Բ. Կյուլեսերյանի մոտ նշված է «ՌՀԷ (1928)»։*

քայելի: Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ յաւրինակելով մէկ Հայր մեղայիւ մի յիշեցէք զանարժան գրիչս, և զծընաւղսն իմ, և զկենակիցն իմ...։

Բ

155ա Ցիշատակ է այս Շարակնոցս ի Կամխայ ի յԱրմենիցն՝ ի գեղջէն Ամրիկանն. և իւր եղբաւրն՝ Ճերմկին, և միւս եղբօրն՝ Անդրէաս աբեղին, հօրն և մօրն՝ Թուկան և Եմինին, և մեծ հարսինն՝ Նիկարին, և որդւոյն՝ Պետրոսին, և ամենայն արեան մերձաւորացն՝ մեծի և փոքու. գրել տուին զայս Շարակնոցս ի հալալ ընչից իւրոց և տուին ի ձեռն Ղազարին. Աստուած բարով վայելել տացէ. ամէն։ Եթէ ոք գնէ կամ ծախէ՝ զմասն Ցուդայի առցէ և զպատիժն Կայենի կրէ։

315

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 2833, (ԺԵ դար)

71բ Աստուած փառօորէ Ս[ի]մօնն միայնակէցն, որ առօ ժամու գիրքս յիշատակ հոգւոյն։ Ի թվին ՌՀԸ (1626)։

316

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 2843 (1354 թ.)

245ա Ողորմի ստացողի սբ. Աւետարանիս, որ ստացաւ սա ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւր և ննջեց[ե]լոցն։ Արդ՝ յիշեցէք զբարէմիտ և հեզահ[ո]գի Ամիրզուլին, որ փոխեալ է առ Քրիստոս, և կողակիցն իւր՝ Սալթան, և սիրելի որդին իւրեանց Սարուխանն[14], որ նորահասակ փոխեցաւ առ Քրիստոս և բազում սուգ եթող ծնօղացն. և քոյրն իւր՝ Շնաճաւորն, և դուստր սորա Աղասօլթանն, Եդարն, Ամիրխան։ Այլ և յիշեցէք Յախիճան և կողակիցն իւր՝ Թուրվանդէն, և որդին իւր՝ Միքայէլ, և հանգուցեալ որդին իւր՝ Գրիգորն, Շահզամանն, Մրվարին. զՋանաթէն և կողակիցն իւր՝ Սալվարն։ Այլ և դարձեալ յիշեցէք Աղաղարն և կողակիցն իւր՝ Սաւզեարն։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զվերոյ դրեալս ի սմայ և ստացողի սորա Սալթանն, որ ստացաւ զսա և ետ ի վայելումն Միքայէլին, յիշատակ և իւր ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և ննջեցելոցն. ամէն։...

Թվին ՌՀԸ (1626) գն[ե]ցաւ։

317

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան № 3245

Գրիչ՝ Ալիքսան դպիր
Վայր՝ Եկեղու

335ա Փառք...։ Գրեցաւ եղանակատր տառս ի թվին Հայոց ՌՀԸ (1626), ձեռամբ մեղսասէր և անարժան լոկ անուամբ Ալիքսան դպրի, [յ]երկիրս

[14] Ձեռ-ի աջ լուսանցքում մեկ ուրիշն ավելացրել է. «Եւ կողակիցն իւր՝ Մարիամն»։

Եկեղու։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զամենեսեանդ, յիշեցէք յաղաւթս ձեր Ալիքսան, և զծնաւղս իմ զԱստուածախուրն, ըզեաթունն։ Դարձեալ յիշատակ է Մինասին, իւր կնոջն և իւր որդւոցն՝ Մարտիրոսին, Այլային, Սարգսին, որ ստացան ըզսա ի հալալ հընչից, և եդին մաւրն հոգւոյն յիշատակ ի ձեռն իւրեանց աղբաւրն՝ Պարոնին. Աստուած բարի վայլում տաց[է]. ամէն։

335բ Աղաչեմք ըզձեզ, հայրք և եղբարք, մի՛ մեղադրէք սղալանաց և խոշորութեան դրոյս, զեռ առաջի դ[ի]րս է. յիշ[եցէք] զեղկելի և զանարժան գծողս [յ]աղաւթս ձեր։

318

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 4058

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Երևան

ա

210բ Փառք...։ Ի թուականութեանս Հայոց տումարի ՌՀԵ (1626) գրեցաւ աստուածախաւս մատեանս աստուածահաւրն Դաւթի, որ կոչի Սաղմոս, ի թագաւորութեան Պարսից շահ Ապազին, /ի/երկիրս Արա[ra]տեան, ի քաղաքս Երևան, ի տեղապահութեան Թահմազզուլի խանին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Անանիայ սբ. առաքելոյս և սբ. Էջմիածնայ լուսակառուց եկեղեցեացն, որ յայսմ ամի նորոգեցաւ և բազում ծախիւք սպիտակեալ զարդարեցաւ ի ձեռն մեծ բարունապետի Մովսէս վարդապետի. որ և առաջնորդ եղև սբ. ուխտեացս շնորհաւքն Քրիստոսի։ Այլ և պատճառ եղև ամենայն բարեաց և մանաւանդ աւրինակ կրաւնից, որ յայսմ խանգարեալ և վերջացեալ ժամանակիս նորոգեաց և լուսաւորեաց զեկեղեցիս Հայաստանեաց, նաև կարգս և սահմանս և յանապատաւորս արանց և կանանց հաստատեաց ամենայն տեղիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհ[ն]ելոյն յաւիտեանս. ամէն։ Որ և մեք ամենեքեան

220ա կրաւնաւորքս և աշակերտ//եալ մանկունքս աղաչեսցուք բարերան և ողորմածն Քրիստոս, զի ընդ երկայն աւուրս պահեսցէ, որպէս և ինքն կամեսցի և փրկեսցէ ամենայն հնարից սատանայի. և նմա փառք ընդ Հաւր իւրում և ամենասուրբ Հոգւոյն· ամէն։ Եւ ես մեռեալս, մեղաւք և պակասեալս յամենայն զաւրութենէ զգայարանացս իբր վաթսունամեա ժամանակեա գոլով, հարկեալ եղէ վասն այլ հոգևոր բանի, զի սովաւ լըցցի նորայն թերին. և սկսա փտեալ ձեռաւք, որ բնաւին չունէի կարծիք, անձամբ իմով գրել գիր մի երեսուն ոս վեցիցն։ Այլ շնորհքն և ողորմութիւնն Քրիստոսի զաւրացոյց զիս և հասոյց աւարտ։ Աղաչեմ երեսս անկեալ ի գետնի առ ոտս ձեր, սիրելի եղբարք, ոյք հանդիպիք ի սմա սաղմոսելով և կամ աւրինակելով, անմեղադիր լերուք պակասութեան գրոյս, զի ծերոց արուեստ է և լի է պակասութեան տեսութեան աչաց և զաւրութիւն բազկաց. յաղագս սոցա մի՛ արհամարհէք, աղաչեմ եղբարք և սիրելիք, և արգելուք զողորմի ասելն Մինաս անարժան գրչի։ Աղաչեմ եղբարք, աղաչե՛մ և դարձեալ աղաչե՛մ, ողորմացդ աղաչե՛մ, զի ձեր ողորմելովն թերևս հան-

դիպեցայց ողորմութեանն Աստուծոյ, և դուք որ յիշեքդ զանյիշելիս՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։

Ստացող՝ Դաւիթ եպիսկոպոս

Բ

266ա Ես՝ Դաւիթ եպիսկոպոսս գրել ետու զՍաղմոսարանս փափագանաւք սրտիւ, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ՝ Սարգսին և մաւր իմոյ Շահսալթանին, և եղբարցն իմոց՝ Ջալալին, Հայկազին, Գրիգորին, քրւերն իմոյ՝ Ղզլարին, եղբաւր որդոյն իմոյ՝ տէր Սարգիսին, և այլ ամենայն մերձաւորաց իմոց մինչև յարեան եղրն։ Աղաչեմ զձեզ, եղբարք, կարդալով կամ աւրինակելով, յիշեսշիք ի մաքրափայլ սբ. աղաւթս ձեր զիս և զվերոյ գրեալսն հանդերձ մերձաւորօք. ամէն։

319

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4128 (1573 թ.)

Կազմող՝ Աւագ

275բ Զվերջին ստացաւղ սբ. Աւետարանիս զխաչաղէն և զայրն զԱմիրջան, և զորդիքն և զդստերն՝ զԳուլիբախչէն և զխաչամիրն, զՇահրամիր սարկաւագն և զՄիքայէլն, զԱմիրխան և զկողակիցն իւր՝ զՄարեմն, յիշեցէք...։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Խաչաղին, որ ստացաւ զսա ի յարդար ընչից իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց։...

Կազմեցս ի թուին ՌՀԵ (1626), ձեռամբ մեղո[ո]ր և անարժան Աւագի, որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Աստուած ողորմի ասացէք...։

320

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5257

Գրիչ՝ Ատեփս երէց

Վայր՝ Դաշտ

ա

22 բա Փառք...։ //Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս որ կոչի Մաշթոց, զոր արարեալ է սրբոյն Մաշթոց վարդապետի և այլոց սրբոց։ Որ է սա կատարող է (7) խորհուրդ եկեղեցւոյ...։ Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով մեծահաւատ և բարեմիտ քրիստոնեան Ընկիրէկն զմտաւ ածեալ ասէ, թէ այս կեանքս սուտ է և ունայն... և ստացան զսա յիշատակ հոգոց իւրոց և ծնողացն նորին, հօրն՝ Խլղաթին և մօրն՝ Մուաթին, կողակցուն՝ Ասլեկին, քրւերն՝ Յամանին, մօրն՝ Խանզագին, և եղբարցն՝
224բ Մարտիրոսին, կողակցուն՝ Խանումին, Պա//պաջանին, քրւեր Խաթուջանին, և մեծ պապուն՝ Մկրտչին, կողակցուն՝ Խաթուջանին, և Մուրատին, կողակցուն՝ Փաշաշանին, Իսրբէկին և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն։

Արդ՝ գրեցաւ սբ. Մաշթոցս ի յերկիրն Մոկաց, ձեռամբ անարժան և փծուն գրչի Ատեփս երիցու, ի յընտիր և ի լաւ յօրինակէ, ի գեղս որ Դաշտ կոչի, ի թվականիս Հայոց ՌՀԵ (1626), ի գառն և ի նեղ ժամանակիս,

որ վասն բազում մեղաց մերոց և անուղղայ գնացիցս զօրացեալ են ի վերայ մեր այլազգիքն հարկապահանջութեամբ և դառն կենօք վասն ծովացեալ մեղաց մերոց[15]։

Դարձեալ կրկին մաղթանաւք յերես անկեալ աղաչեմ զձեզ...[16]։

225բ *Դարձեալ... աղաչեմք զդասս քահանայից և ժողովրդոց// միոյ յիշման արժանի արարէք զմեզօք մեռեալ հոգիս զԱւետիս սուտանուն քահանայ, և ծնողաց իմոց* Սրապիոնին *և* Թաւրէզին, *և կողակցին իմոյ՝* Խաթունային, *որ աշխատեցաւ ի նշելն և ի թանաք եփելն, և զտէր Թումայ աշակերտ բանիս, որ սակաւ մի գրեաց և ամենայն արեան մերձաւորացն և այնոցիկ, որ ի վերայ մեր երախտիք և աշխատանք ունի, թէ՛ հոգևոր, թէ՛ մարմնաւոր։ Լի բերանով և աներկբայ յուսով Աստուած ողորմի ասացէք սոցա...։*

Բ

12բ *Քրիստոս Աստուած... մեղաց թողութիւն շնորհեա ստացողի սբ. գրոցս* Ընգիրէկին, *կողակցուն՝* Ասլեկին, *քրեերն՝* Յամանին, *մօրն՝* Խանզադին, *և ծնողաց նորին, հօրն՝* Խլղաթին *և մօրն՝* Մուաթին, *և եղբարցն՝* Մարտիրոսին, *կողակցուն՝* Խանումին, Պապաջանին, Խաթուջանին, *և մեծ պապուն՝* Մկրտչին, *կողակցուն՝* Խաթուջանին, *և* Մուրատին, *կողակցուն՝* Փաշաջանին, Իսրբէկին. *ամէն*[17]։

Գ

227ա *Դարձեալ յիշեցէք...* Յովսէփ *վարդապետին, քաջ և արի հռետորին, որ միջնորդ և առաջնորդ եղև այս սբ. գրոցս. Աստուած զինք առողջ և անտրոգայթ պահեսցէ յայսմ աշխարհիս...։*

321

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5331 (1458 թ.)

307բ *Յերես անկ[ե]ալ աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանա[յ]ից և սարկաւագաց, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմահդասի* Գուլիսաան, *որ ետուր վերըստին նորոգել զսբ. Աւետարանս, յիշատակ հոգոյ իւրոյ, յիշեցէք... մահդասի* Գուլիստանին. *ամէն։ Դարձեալ յիշեցէք... մահդասի* Խազադին, *որ վարձք ունի ի սբ. Աւետարանս, յիշեցէք... ամէն։*

Թվին ՌՀԸ (1626)։

322

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5345 (1611 թ.)

209բ */// [Դարձե]ալ [յիշ]եցէք տէր* Յովանէն, *կողակից* Սալմինազն։ *Դարձեալ յիշեցէք* Սարգիս *երէցն, կողակիցն՝* Զուլալ, *որդին՝* Ղուրմազն. Անայք[?] *խաւթուն։ Ի թվականին ՌՀԸ (1626) [ար]աւ [յ]իշատակ ///*

---

[15] *Սույն հիշատակարանը համառոտված տե՛ս նաև* Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», *հտ. Ա, № 718, էջ 202ա։*

[16] *Նորից թվում է վերևում նշված անունները։*

[17] *բ հիշատակարանը գրեթե կրկնված է ձեռ-ի 72ա, 106ա, 154ա, 197ա էջերում։*

323
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, Մ 5588

Գրիչ՝ Աւետիս քահանայ, տէր Թումայ
Վայր՝ Գաշտ

ա

320բ Փառք...։ //Ուստի և տեսեալ զսորայ անճառ փրկագործութիւն խորհուրդ, ոմն պատուական տանուտրոշն հովիւ էնիաթին, որ ցանկացաւ այսմ աստուածախաւս սբ. Աւետարանիս և ետ գրել զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Խուսդեղին և մօրն՝ Շահումին, եղբօրն՝ Աղաջանին, և ամենայն արեան մերձաւորացն...։

321ա [Դ]արձեալ աղաչեմ զդաս քահանայիցդ, և սարկաւագացդ, և ժողովրդոց[դ], որ կայք ի ժամատեղդ լի բերանով և բոլոր սրտիւ ասացէք զԱստուած ողորմին հովիւ էնիաթին և ծնողաց նորին, հօրն՝ Խուսդեղին և մօրն՝ Շահումին, եղբօրն՝ Աղաջանին, կոզակցուն՝ Խանաղին, որդոյն՝ Շաղաւաթին, դստերն՝ Ազրզին և Շահումին, Ամիրբէկին, Գուլբէկին, Մարգարին, և որդոց Ումրիշանին, Վարդանիսին, Գայիանին, և փէստոյ Կարապետին, և մեծ պապուն՝ Ամիրբէկին, կողակցոյն՝ Խալինարին, դստերն՝ Գուլփաշին և Ազրզին. [Աստուած] լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի էնիաթն, և զհայրն իւր՝ զԽուսդեղն, և զմայրն զՇահումն, և զսանամէրն իւր՝ զԴարիպիաթուն. և զՍարգիս որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և որ զԱստուած ողորմի ասէ...։

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ սուտ[ա]նուն Աւետիս քահանայի և տէր Թումայ քարտուղարի և ախմար գրչի։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան, բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, թէ յոտից մինչև ցգլուխ չիք առողջութիւն, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր Հոգին բազում աշխատանաւք գրեցի անարժան ձեռօք

322ա // մերովք յընտիր և ստոյգ յօրինակէ։ Կենաց տառապանաց գրեցաւ յերկիրըս Մոկաց, ի գեղս որ Գաշտ կոչի, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ հայրապետին, ի թուականիս Հայոց ՌՀԸ (1626), ի նեղ և ի դառ[ն] ժամանակս, յիշատակ հովիւ էնիաթին, հօրն՝ Խուսդեղին և մօրն՝ Շահումին և եղբօրն՝ Աղաջանին[18]։

բ

100բ Քրիստոս Աստուած քո սբ. Աւետարանչիս բարեխաւսութեամբ ողորմեա ստացողի սբ. Աւետարանիս մահդասի էնիաթին և ծնողաց նորին, և հօրն՝ Խուսդեղին և մաւրն՝ Շայումին, և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն։

---

[18] Մի հիշատակարան էլ գտնվում է 322բ—323բ էջերում, ուր թվում է միևնույն անունները։

Ծաղկող՝ Մելքեսէք երէց

Գ

2ա Քրիստոս Աստուած քո անճառ ծնընդեամբդ ողորմեա ծաղկողի սբ. Աւետարանիս նուաստ անուն Մելքեսէք երիցուս և իւր որդոյն տէր Յովհաննէսին և իմ ծնողացն. ամէն[19]։

Դ

8բ Զծաղկող սբ. Աւետարանիս զլոկ անուն Մելքեսէք Մոկացի, յիշեցէք...։

Ե

Ստացող՝ Ճովիւ Էնիաք

322ա Ես՝ Էնիաքս ետու գրել զսբ. Աւետարանս և ետու ընծայ ի դուռն Վարդէրա Ս. Աստուածածնին անչինչ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց Խուսդեղին և Շահում[ին], եղբօր Շաղաւաթին, Նարգզին, Ասիրբէկին, Վարդանիսին։ Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

Աստուած աւրհնէ զտէր Յովանէս Դարեենցին, և զՂարիպխաթուն,
322բ և զՍարգիսն, որ յայսմ//ամի փոխեցաւ ի Քրիստոս, որ միշնորդ եղեն սբ. Աւետարանիս։ Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին...[20]։

324

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԱՂՈՒԱԾՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 5781

Գրիչ՝ Ներսէս քահանայ

Ա

234ա Փառք քեզ անսկիզբն Հայր,
Սկսեալոյն ի քէն անսկզբնաբար,
. . . . . .
235ա Արգ՝ ես ստացող սորա,
Պաշտօնեայ վեհիդ նաղելի,
Ստորոգման կարեաց հիքոյս,
Հանգանակ մեծ ախոյանի։
Բաշխեար պատուական ընծայս,
Ըստ տէրունական հրամանի,
Արարողք ուսուցանողքն,
Սուրբ ատեանքն մեծ կոչեսցի։
Յետինս բանիբուն մանկանց,
Վարժելոցս նորոյ Սիովնի,
Վարդապետ անուամբ միայն,
Եւ գործով ի սոյն անարի,

---

19 Նման մի հիշատակարան էլ տե՛ս ձեռ-ի 2բ էջում։

20 ա և բ հիշատակարանները համառոտ տե՛ս նաև Ղ. Փարղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 717, էջ 202։ Միևնույն հիշատակարանները տե՛ս նաև Բարղամի մոտ, ձեռ. № 6333, հիշտ. № 237, էջ 55։ Այստեղ այդ հիշատակարանները գրված են 1628 թ. շարքում։

Բարունիք սուրբ սերտասէր,
Պատահողք այս սուրբ մատենի,
զՍարգիս յոգիս յիշել զնոյն,
Եւ դուք օրն անեռեկի։
Շարժմամբ սխրալի սիրով,
Փափագման այս գանձարանի,
Սէր իմ վաղրնչուց մթերեալ,
Չհանդուրժեալ այժմ բորբոքի։
Բնութեամբ մարմնովս տկար,
Բայց միայն հոգիս յօժարի,
Ի զրաւ սորին տացուք,
Սուրբ Հոգւոյն փառս անլռելի։
Ի յիշատակ իմ հոգւոյ,
Եւ ծնօղացս փոխելոցն աստի,
Ոչ շաղաշար մեծ ոմանց,
Այլ դասիլ իմոցս հաւաստի։
Ոչ լսել յինէն երթայք,
Ըստ թաղողին քանքարի,
Խորի այլ քաղցրաբարբառ խօսուն,
Եկ առ իս ծառայ իմ բարի։
Ի ծննդենէ Փրկչին մինչ որ
Եմք այժմ մարմնով երկրի,
Հարիւր քսան և երկու ամ,
Անցեալ սուղ ամանակի,
Այլ և յարաբարդ սորա,
Ըստ կարգի այս շարունակի,
Լծակից սորա գոլով,
Յերեսներոդ [յ]ոբելինի (1622)[21]։
Ի թուականիս Հայոց ութ հարիւր,
Եւ երկերիւրոց յիսուն,
Եւ երկտաս անցեալ (1621),
Ոչ անշատ այլ միշտ իրերուց։
Դառն և վերջացեալ է ժամս,
Սուր առ տուր բազում խողխողոց,
Միթէ գթասցի ներողն,
Եւ բարձցէ յազգէս մեր Հայոց։
Արդ՝ ես Խորաշան գրիչս,
Եղեռնիս ոչ իւիք բարի,
Արբանեակ սպասաւոր սուրբ հօրդ,
Իմոյ Սարգիս քաշ հռետորի։
Ծածկեալս խորասոց տղմով,
Ի տապմամբ գրիս անելի,

[21] Այսինքն՝ 122+(30×50)։

Գոնեա ծագեսցէ առ իս,
Պղաճանք շնորհացդ կաթուածի։
Ով միշտ է-ին տամք փառք,
Սուրբ Հոգոյն, Որդւոյն միածնի,
Անցելոյն այժմոյս ւ ապա,
Յաւիտեանս ի յաւիտենի։
Յերեսս անկեալ աղաչեմ,
Վերծանող բարձունիք բարի,
Ստացող սորա յիշել
Զբստգտել զՆերսէս եղկելի։

Բ

15բ Զմեղօք սևացեալ զանարժանս գծողս աղաչեմ յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր[22]։

Գ

234ա Ստացող սբ. Քաղուածոյս Մաթէոսի զՍարգիս վարդապետն յիշեսջիք, ո՛վ դասք սբ. վերծանողաց, և դուք յիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Թվին ՌՀԸ (1626)։

Ընդ նմին և ոչ ևս ի բարեաց զՆէրսէս քահանայ նորաշան գրիչս յիշել ի բարի մասին աղաչեմ։

Գրիչ՝ Ճանդէմիր

Դ

277ա Մեղաւոր և անարժան, եղկելի և անպիտան, զհողս և զմոխիրս, զյետնորդս ի յուսումնասիրաց և զվատթարս ի գրչաց զգծող սակաւ գրիս զՃանդէմիրս աղաչեմ յիշել ի Տէր, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ։

Ստացող՝ Սարգիս Սպերցի

Ե

235բ Յանգ ելեալ կատարեցաւ զսբ. Քաղուածոյս Մատթէոսի բաղում աշխատանօք. ստացա զսա ի վաճառումն անձին իմո[յ] պիտակ անուամբ Սարգիս վարդապետ Ըսպերցի, աղաչեմ յիշել ի Տէր սրտի մտօք։ Այլ և զծնողքն իմ՝ զՄովսէս քահանայ և զմայր իմ Պզտիխաթուն, և զեղբայր իմ Անդրէաս, այլ և հոգու որդեակս իմ՝ Միքայէլ սարկաւագ, այլ և զքեռերք իմ Զօնրայն և Սուլթանն, Մուրատն և Փաշայն և այլ ամենայն արեան մերձաւորքն իմ յիշել ի Տէր, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերո[յ]. ամէն։

Թվին ՌՀԸ (1626)[23]։

Զ

139բ Ստացող սորայ զՍարգիս վարդապետն Ըսպերցի, աղաչեմ յիշա-

[22] Նման հիշատակարաններ տե՛ս նաև 43ա, 260բ էջերում։

[23] Այս հիշատակարանը Սարգիս Սպերցու ինքնագիրն է։ Ինչպես երևում է ա և ե հիշատակարաններից ձեռ-ը սկսել են ընդօրինակել 1621 թ. և ավարտել են 1626 թ.։

տակել ի Տէր սրտի մտօք և հանդերձ ծնօղիւք իմովք, և Աստուած զձեզ յիշէ։ Ընդ նմին և զգծողս յիշեսջիք։

325
ՆԱՐԵԿ
Երևան, № 5832

Գրիչ՝ Զաքար
Վայր՝ Վան

ա

427բ *Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ սուտանուն* Զաքարի, *որ զանունս ունիմ բարի և՛ գործովս և՛ անձամբս լի ամենայն ժահահոտութեամբ, և չարութեամբ, և գարշելի, և անպիտան։ Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զմատեանս այս աղօթական, զոր ի Հոգւոյն Սրբոյ շարժեալ գրեաց սրն.* Գրիգոր Նարեկացին: *Արդ՝ ցանկացող եղեալ աստուածախաւս բանիցս բարեմիտ և աստուածասէրն* Կիրա-
428ա *կոս և ե՛ա գծագրել զաստուածախօս աղօթական տառս, յիշատակ իւր// և ծնօղաց իւրոց, հօրն՝* Յակոբին *և մօրն՝* Սառային. Մարտիրոսին, *կողակցոյն՝* Խանիփաշին *և* Գօգալին, *և դստերն՝* Մարգարտին *և* Խաթունջանին, *և որդոցն՝* Խլղաթին *և* Դիլանջին, *և* Գորգամիրին, *և դեռարուս* Սարգսին. *ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարտիրոսն *և զկողակիցսն իւր՝* զԽանիփաշէն, զԳօգալն, *և ծնօղքն՝* զԿիրակոսն *և* զԽաթունջանն, *և* զՔրմանն. *և զեղբարսն՝* զՅակոբն *և* զԳուլիջան. *և զորգիսն՝* զԿիրակոսն *և կողակիցսն՝* զՇայաղէն *և* զԹուրուանդէն. *և դստերն՝* զՄարգարիտն *և կողակից զփեսայ* Միրզէն. Գրիգորին, Պարսամին, Սարգսին, Գրիգորին, Աւետիսին *և դստեր[տ]ցն՝* Սուսամբարին, Ալմաստին, Դիմաթին, Սառային:

428բ *Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զաստուածասէր* Կիրակոսն, *որ ըստացաւ զաստուածախաւս գիրքս ի հալալ արդեանց իւրոց և ետ ընծայ և նուէր ի դուռն Միրանաւոր Ս. Աստուածածնին, որ է* Վան *քաղաքի, անչինչ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղաց իւրոց* Մարտիրոսին, Յակոբին *և* Գուլիջանին, *մեծ պապուն՝* Կիրակոսին *և* Քրմանին, *և հարսնեբացն...*[24]*։ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս լուսաւորեա զհոգի տէր* Բար-
429ա սեղին *և* զԱմիրխ//անին, *որ կամակից եղան այս հոգիաբուխ և աստուածախօս մատեանս աղօթիս, որ գծագրեցինք կարողութեամբն Աստուծոյ և ամենազօր Ս. Հոգւոյն, բարով վայելել տայ մաքրամիտ* Կիրակոսին *և սրբասնեալ քահանայիցն՝ տէր* Բարսեղին, *տէր* Աւետիսին, *տէր* Գրիգորին *և ուսումնասէր փթթեալ մանկանցն, ով որ ընթեռնու զսբ. գիրքս. ամէն։ Արդ՝ գրեցաւ սբ. տառս, որ կոչի* Նարեկացի, *ձեռամբ մեղսամած* Զաքարայ *գրչի, ի* Վան *քաղաքի, ի դուռն Միրանաւոր Ս. Աստուածածնին, ի թուականիս Հայոց ՌՀԲ (1626), ի հայրապետութեան տեառն* Էջմիածնայ Մելքիսեդի, *և հայրապետութեան տեառն* Աղթամարայ Ստեփանոսի:

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զԿիրակոսն *և դիւր զոքանչ* զԳօգալն. *ամէն։*

---

[24] *Դարձյալ թվում է վերևում հիշված անունները։*

429բ Արդ՝ աղաչեմ զձեզ, մանկունք սբ. եկեղեցւոյ, որ կարդաք և ընթեռնուք, ով ոք հանդիպիք կարդալով կամ աւրինակ դնելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սբ. տառիս զԿիրակոս և զՄարտիրոսն և զամենայն արեան մերձաւորսն. ամէն։ Եւս առաւել զանարժան Զաքարայ գծողս և կողակիցն իմ՝ զՇայումն, որ փոխեցաւ ի Քրիստոս, և ծնողքն իմ՝ զՆահապետ և զԻէկաղէն, և զեղբարսն իմ որ փոխեցեալ են առ Քրիստոս։ Եւ սխալանացս և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Եւս առաւել ողորմի Քրիստոս Աստուած վարպետին իմոյ՝ Հիզանցի տէր Սարգսին, որ շատ աշխատեցաւ հետ մեղաւորիս. Աստուած լուսաւորէ զիւր հոգին. ամէն։

Բ

212բ— Քրիստոս Աստուած ողորմեա՛ ստացողի գրոցս աստուածասէր Մար-
213ա տիրոսին, և Կիրակոսին, և Մարգարտին։

Գ

225ա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա՛ Մարտիրոսին, Կիրակոսին։

Դ

372ա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա՛ ստացողի գրոցս բարեմիտ և աստուածասէր Կիրակոսին և կողակցոյն՝ Շայաղին, և որդոյն՝ Սարգսին, Մարտիրոսին, և կողակցոյն՝ Գօգալին և Խանիփաշին, և դստերն՝ Մարգարտին. ամէն։

Ե

376ա Տիրամայր և տիրուհի անարատ Աստուածածին բարեխօսեա՛ վասն յոգնամեղ և անարժան Զաքարայ գրչի. ամէն։

Զ

427ա ...ողորմութիւն և թողութիւն շնորհեա՛ բարեմիտ և աստուածասէր Կիրակոսին, որ ետ գծագրել ղսբ. աստուածախօս տառս, յիշատակ իւր և ծնողաց իւրոց Մարտիրոսին, Յակոբին և կողակցոյն՝ Շայաղին, և որդոյն՝ Սարգսին, և քուերն՝ Մարգարտին։

326

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5909

Գրիչ՝ Յոհաննէս

ա

36բ Եւ զՅոհաննէս գրիչս յիշեա՛ յաղաւթս քո, ո՛վ սբ. ընթերցաւղ։

Բ

37ա /// ... Թվին ՌՀԵ (1626)։ Արդ՝ աղաչեմ զպատահողք որ կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեզ նաև զիս զանարժան գրչիս Յոհաննիսի, և զհայր իմ Եուրքոին. և զմայր իմ Պեհեքա, և զամենայն արեան մերձաւորս իմ, և որք յիշէք՝ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

327
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6074 (1625 թ.)

Գրիչ՝ Գրիգոր աբեղայ

ա

197ա Աստուածածնին Ողբ և Արտասունք և Աղաչանքն գրեալ կայ ի վերոյ ի Դ (4) տեռտր, գիտ և կարդայ, և մեղաւոր անարժան Գրիգոր աբեղես յիշման արժան առնեք ի մաքրափայլ յաղօթս ձեր, և Աստուած ձեզ յիշէ իւր արքայութիւնն։ Աւրինակ չկար որ կարգով գրեր, յետոյ աւրինակն տեսայ և գրեցի։ Զայս քարողս յառաջ կարդայ և յետոյ Աստուածածնին Ողբն կարդայ և մեղօոր խաբեբայս յիշեայ ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

Թվին ՌՀԵ (1626)[25]։

բ

///այն եկաւ Մոկս և զամէն զարուսհեցոյց, բայց վնաս ոչ արար[26]։

328
ՏՕՆԱՅՈՅՑ
Երևան, № 6140

Գրիչ՝ Գրիգոր երէց

ա

162ա Փառք..., որ ետ կարողութիւն տրկար ոգոյ սուտանուն Գրիգոր երէցս հասանել յաւարտ Տօնաց[ոյ]ցիս, որ գրեցաւ ի թվականիս ՌՀԵ (1626), ի խնդրոյ բազմերջանիկ, և մաքրամիտ, և հեզահոգի կնոջն՝ Դաստագուլին
162բ և ծնօղացն, հօր[ն՝]...[27] և մօրն՝ Նու//բարին, և եղբարցն՝ Բաղդասարին, Յովանէս[ա]ին, և քրւերցն՝ Թուրվանդին, Մբուաքին, ամէն։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Դաստագուլին, որ ստացաւ սբ. դիրքս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնօղացն իւրոց...[28] և Նուքարին, և եղբարցն՝ Բաղդասարին, Յովանէսին, և քուերցն՝ Թուրվան[դ]ին, Մբուաքին։

բ

58բ Զստացող սորա զԴաստագուլն և զկողակիցն՝ զԹումէն և // զծնօղս իւրեանց, և Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն[29]։

---

[25] Սույն ձեռ-ը ընդօրինակել են երկու գրիչ՝ Հովհաննես երեցը 1—128 թերթերը 1625 թ.։ Այդ հիշատակարանները տեսնել 1625 թ. շարքում։ Իսկ մնացած՝ 130—214 թերթերն ընդօրինակվել են 1626 թ.։

[26] Գրված է կազմի ներսի կողի վրա։

[27] և [28] Անվան տեղը բաց է թողնված։

[29] Սույն հիշատակարանը կրկնվում է ձեռ-ի 100 բ էջում։

Գ

131բ Եւ զԳրիգոր մեղսամած գրիչս յիշեա՛ և ողորմի ասայ, և դու յԱստուծոյ գտանես. ամէն։

Թվին ՌՀԸ (1626)։

329

ՃԱՇՈՑ

Երևան, № 6223

ա

Գրիչ՝ Յակոբ Քահանայ

472ա Փառք...։ Գրեցաւ սբ. մատեանս որ է Տարագիրք, որ է ինքն ժողովեալ զամենայն աւուրց և շաբաթուց, ամսոց և բոլոր տարոյ ընթերցւածս, իբրև զծաղիկս դաշտաց գոյնզգոյն և երանգ երանգ, համով և հոտով, գոյ-

472բ նով և վայելմամբ, // ձեռամբ ամենամեղ և փծուն գրչի Յակոբ քահանայի վիճակ/// և յերկիրս///լոր, ընդ հովանեաւ և [օ]գնականութեամբ մերոյս ուխտի անուամբ սբ. Գէորգեա[յ] հաստեալ և կառուցեալ, որ է վերակացու և պահապան մերոյս յօթարանի։ Ի խընդրոյ [Թումայ] սրբասնունդ և ճգնազգեաց, անապատավարժ և ժրաջան եպիսկոպոսի, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց...։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ լոյսերամ և ազատաջոլիր մանկունք... լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք Թումայ ե[պիսկոպոսի]ն և իւրոցն ամենայնի. ամէն։

Դարձեալ աղաչեմ յիշեցէք զմեղուցեալ Յակոբ գրիչս և սիրելի որդին իմ՝ զԱզարիայ սարկաւագն, որ բազում շանիւ կոկեաց զթոշթս, և մօտ ի աւարտ գրոյս չոգաւ առ Քրիստոս։

Թիւ հոլովման ժամանակիս ըստ հակազնեան տումարիս ՌՀԴ (1625) էր գիծ սորա և աւարտն ՌՀԸ (1626), և կրկին փառք Տեառն մերոյ։

բ

72ա Զ Յակոբ գրիչս յիշեա՛ և տէր Յիսուս ի քեզ գթա։

330

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6318 (ԺԶ դար ?)

Կազմող՝ Մարտիրոս

173բ Փառք...։ Կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ և անարհեստ Մարտիրոսի ծուլի և պղերգի, որ զանունս ունիմ և զգործս չար և զազիր։

Ի թվիս ՌՀԸ (1626)։ Վա՛յ է ինձ։

Որ ետ նորոգել զտէր Սարգիսն սբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց, ուխ հանդիպիք՝ Աստուած ողորմի ասացէք, և ձեզ յիշողացդ ողորմի։

331
ՎԱՐՔ ՍՐԲՈՅ
Երևան, № 6322

Գրիչ՝ Առաքել
Վայր՝ Երևան

ա

10բ Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սբ. ծնաւղի քո և Աստուածածնի ողորմեա՛ խաւարեալ յոդոյ Առաքել գրչի և ստացողի սորայ Աբանաս ապաշխարողին։

բ

17ա Քրիստոս Աստուած ողորմեա՛ ստացողի սբ. գրոցս Աբանաս ապաշխարողին և քրւերն իւրոյ՝ Սանդուխ[տ]ին, և այլ ամենայն արեան մերձաւորացն։

գ

27բ Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սրբուհոյն Թէոդորայ ողորմեա՛յ ամենայն հաւատացելոց նաև ստացողի սբ. գրոցս Աբանաս ապաշխարողին և քրւերն իւրոյ՝ Սանդուխտին, և յոգնիմաստ արփիափայլ բարձունոյն մեծին Սովսէսի, որ զայս հրաշալի սբ. գիրքս ժողովեաց և յաւրինակել հրամայեց հիքոյս Առաքել գրչիս. վասն կուսանաց և ապաշխարողաց ի փառս։

դ

37բ Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սրբոց Հռիփսիմանց կուսանաց ողորմեա՛ ստացողի սբ. գրոցս Աբանաս ապաշխարողին և քրւերն՝ Սանդուխտին, նաև յոգնիմաստ արփիափայլ բարձունոյն մեծի և հանճարամիտ վարդապետին Մովսէսի և հիքոյս Առաքել գրչի· ամէն[30]։

Գրիչ՝ Խաչատուր

ե

152ա Ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Աբանաս ապաշխարողին և Սանդուխտին, և ինձ մեղաւոր Խաչատուր գրչի և իմ ծնաւղացն. ամէն։

զ

2բ Փառք..., որ ետ կարողութիւն ինձ տխմար և տատամսեալ, տարտամ ոգի, սուտանուն, սևերես ամաւթով [Խ]աչ[ատ]ուր գրչի ի հա[սանել աւարտ սբ. տառիս] /// ի քաղաքս Եր[և]ան, [ընդ] հովանեաւ սբ· և [մաքուր] տաճարիս Եր[կ]ու ու [Երեսի] և ի Ս. Անանիա, Ս. [Կաթ]ողիկէ սբ. եկեղեցոյ. [ամէն]. ի թուական[ութեանս Հայոց] ՌՀԸ (1626) ամին. ամէն։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից, յորժամ

[30] ա և բ հիշատակարանների նման գտնում ենք ձեռ-ի բազմաթիվ էջերում, գրեթե յուրաքանչյուր վարքաբանությունից հետո։

ընթեռնուք զգիրքս զայս, յիշեցէ[ք] ի մաքրափայլ աղաւթս ձեր զտէր Առաքելն, *որ ԺԹ (10) տեսրն նա գրեց և առ Աստուած փոխեցաւ, յիշեցէք և լի բերան[ով] Աստուած ողորմի ասացէք յիւրն. ամէն*[31]։

332
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6806 (1452 թ.)

134ա *Վերջին ըստացողս խուշայ* Սուրաթմիշն, *խուշայ* Նուսիրն, *խուշայ* Ամիրին, *զիւր որդիքն՝* Միկրտիշն, Ովանիսն, Աւետիսն, *և մայրն իւր՝* Բեզին, Գրիգորն։ *Եւ Աւետարան գողացան և տարան* Բուրզիշատ։ *Հօրամանք Աստուծոյ ել եկաւ իւր դուռն։ Խուշայ* Ամիրն *առեց զբր[եց] եգեղեցին Ս. Շմաւոնի, Ս. Ովանեսին, յիշատակ լինի հանգուց[ե]ալ ննջելոց ամենայն, ևս առաւել խուշայ* Ամիրին *և իւր կողակիցն՝* Ղեսաբիթին[32], *և դստերքն նոյայ՝* Գուլիխասին, Նազին, Ասլին, Հեռեփսիմայ։ *Ով որ ես տեղիս հանի կամ գողանայ՝ նզոված լինի. եղիցի, եղիցի։*

Թէվին ՌՀԵ (1626)։

333
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7334 (ԺԶ դար ?)

Գրիչ՝ Յովաննէս երէց

242ա *Զվերջին ստացաւղ սբ. Աւետարանիս յիշեցէք զ*Տուրին *ի խորոց սրտէ և <և> բազում փափկանօք մտաւ էած զսէրն Աստուծոյ, և նորոգել ետուր զսբ. Աւետարանս՝ ի հալալ արդեանց և յիշատակ ծնաւղացն իւրոց, հաւրն իւրոյ՝* Յովսէփին *և մօրն՝* Գուլալեանարին, *և եղբարցն իւրոյ, որ է հանգուցեալ* Սահակին *և կողակցին՝* Խանումաղային, *և որդիք նոցին՝* Սաեփանոսին, Աբիեանին, *և դստերաց նոցին՝* Հուզուրբանին, Գուլիխանին, *և միւս եղբայրն իւր՝* Կիրակոսն *և կողակցին՝* Գուլին, *և որդոց նոցին՝* Վարդանանին, Միրզին. *ամէն։*

Դարձեալ յիշեցէք զնախնիքն իւր՝ Խաչատուրն *և հաւրեղբայր նորին՝* Մուրատն, Գինոսն, Իրնումն *և իւր ամենայն մերձաւորք, որ առ Քրիստոս են հանգուցեալ. ամէն։*

242բ *Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զ*Դաւրին *և կողակիցն իւր՝* Նարկիզն, *և որդին իւր՝* Ղաւրխմազն, *և կողակից նորին* Փարին, *և նորաբողբոջ որդոյ նոցին* Ղայիդմազին։

---

[31] Ձեռ-ի 244-րդ թերթը, որի վրա գտնվել է սույն հիշատակարանը, ընկել է։ Այն պահվում է 1904 թ. Ա. Վ. Տեր Ավետիսյանի կազմած «Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի Ս. Սաեփաննոսի որ ի Գողթն» ցուցակում (էջ 115) և մեր Մատենադարանի № 671 պատառիկում (էջ 2բ)։ Հիշատակարանը վերցրինք պատառիկի օրինակից՝ համեմատելով Ս. Տեր-Ավետիսյանի վերոհիշյալ ցուցակում եղածի հետ։

[32] Հավանաբար պետք է կարդալ «Եղսաբիթին»։

Դարձեալ յիշեցէք զՊետրոսն, որ բազում աշխատանք ունի ի այս քրիստոսաշէն տանս և կողակից Փարին, և որդոցն՝ Ղազարին, Կիրակոսին և ամենայն յարեան մերձաւորացն, ամէն։

Դարձեալ միւսանգամ յիշեցէք զԴուրին և միւս որդոյն դեռաբուսիկ Սահակին, և քեռերն՝ Հոբփսիմին, և կենակցին՝ Մկրտչին, և դստերաց նոցա՝ Յուլիտին. ամէն։

Դարձեալ յիշեցէք զդեղի քահանայն զտէր Յովհաննէսն, որ խնամակար պահէ սբ. Աւետարանս։

Ի թվին ՌԿԸ (1619) կազմեցաւ ձեռամբ Յակովբ իրիցի։ Եւ ես անարժան ոտից ձեր հող Յովհաննէս յերէցս գրեցի սակաւ մի յիշատակարանս թվին ՌՀԸ (1626)-ին։

334

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 7367

Գրիչ՝ Նիկողայոս դպիր
Վայր՝ Կաֆայ

ա

485բ Փառք...։

486ա Արդ՝ ստացաւ զգիրքս պիտանի մահտեսի Շահզաման, որ կոչի Այսմաւուրք, զոր կարգեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Սեբեոնց կոչեցեալ. բազում ջանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցոյ, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարոյն։ Արդ՝ աղաչեմք զդասս քրիստոնէից մանաւանդ զՀշմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սուրբերիս, յիշեսջիք զստացող սորա առաջի զենլոյն Քրիստոսի զմահտեսի Քրիստոս<տոս>տուրին, կնոջն՝ մահտեսի Շահզատային, զաւակացն՝ Մովսէսին և Աստուածատուրին, քեռերցն՝ Շահտանային և Շահսուլթանին, ծնաւղացն՝ նահատակ Միհուպին, կնոջն՝ Շամամին, զաւակացն՝ Իսկանտարին և Յովասափին, որդոյն՝ Աստուածատուրին, մաւրքրոջ Շամամին, եղբաւր Աւագին, դստերն՝ Իսպահանին, առն մահտեսի Աւետիքին, որդոյն՝ Անաստասին, Մելքոնին և Հազարշին. զի մեծաւ յուսով և կատարեալ հաւատով ետ գրել մահտեսի Շահզաման, յիշատակ հոգոյ և ի քաւութիւն սրղալանաց և ի բարեխաւութիւն անձանց. և որպէս յիշէք առ Տէր, յիշիք և դուք ի նոյն տեսանէ Յիսուսէ Քրիստոսէ. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի յամի թուաբերութեան հայկազան սեռի ՌՀԸ (1626)-ի, ձեռամբ անարժան և թարմատար գրչի Նիկողայոս դպրի. աղաչեմ զՀշմարիտ ծառայքդ Աստուծոյ, յիշեսջիք և զմեզ առ Տէր սեռն սիրով ի միտս բարիս, և զծնաւղսն իմ, զհայրն իմ՝ զՄկրտիչ քահանայն և զմայրն իմ՝ Խաթունասին, և զեղբայրն իմ՝ զՅոհաննէս սարկաւակն, և զերախտաւոր ծնաւղ և զուսուցիչն իմ՝ Զաքարեայ կրաւնաւորն, և զամենայն տրեան մերձաւորսն մեր՝ զկենդանիս և զհանգուց//եալս. ամէն։

486բ Եղև ծրագրութիւն մատենագիր հիշատակարանիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս ի Կաֆաս, ընդ հովանեաւ Ս. Յարութեան եկեղե-

ցոյն, և առաջնորդութեան Խաչատուր *վարդապետին և* Թորոս *եպիսկոպոսին։*

Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք. և յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ստացող սբ. գրոցս մահտեսի Շահզատան, *որ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց և եդ ի դրոնս Ս. Յարութեան է (7) խորհուրդ եկեղեցոյն, յիշատակ անջնջելի, ազատ, ազատ. ոչ ոք ունի իշխանութիւն գրաւելոյ կամ ծախելոյ...։*

Բ

21բ *Որոյ ազաւթիւքն ողորմի Քրիստոս ըստացողի գրոցս նահատակ* Միհուպին, *կնոջն՝* Շահզատային, *զաւակացն՝* Յովասափին *և* Իսկանսարին, *խոճա* Աւագին *և կնոջն՝* Շահզատային, *դստերն՝* Իսպահանին, *ծնաւղացն և ազգականացն, և մեղաւոր գրչի* Նիկողայոսի[33]։

335
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7782 (1471 թ.)

Նորոգող՝ Մելքէսէթ *աբեղայ*
Վայր՝ Գեղալեառ

ա

89ա *Ի թուին ՌՀԸ (1626) նորոգեցաւ սբ. Աւետարանս, ձեռամբ սուտանուն* Մելքէսէթ *աբեղի, յիշեցէք ի Քրիստոս։*

Բ

194ա *Զվերջին ստացող սբ. Աւետարանիս՝ յիշեցէք ի Քրիստոս զրարեմիտ և զաստուածասէր տոլվաթաւորն* զՎարդեվանն *և զկողակիցն իւր՝* զՍկէնատան, *և զփեսայն իւրեանց՝* զԱռաքելն, *և զորդի* Վարդեվանին զԻսխտիարն, *և զդուստրն իւր՝* զՆաղաշն, *որ հանգուցեալ են ի Քրիստոս, և զծնողքն իւր և զայլ ամենայն արեան մերձաւորքն յիշեցէք.... ամէն։ Ի թուին ՌՀԸ (1626) ամին նորոգեցաւ սբ. Աւետարանս, ձեռամբ անարժանի սուտանուն աբեղի, ի* Գեղալեառն, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և յառաջնորդութիւն սբ. ուխտիս ի* Մարտիրոս *քաշ բարունապետին։ Եւ որք յիշէ զաշխատողքս սորայ և զստացողսն, լի բերանով Աստուած ողորմի ասէ...։*

Գնեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Մարտիրոս *վարդապետին։ Ով ոք յանգգնի և փոշմանի ի վաճառելն՝ նզովեալ լիցի յեր[կ]ոյտասան սբ. վարդապետացն և ի մէնջ. ամէն։*

---

[33] *Նման հիշատակարաններ գտնվում են նաև ձեռ-ի 3բ, 4բ, 5բ, 6բ, 12աբ, 14ա, 18ա և այլ բազմաթիվ էջերում։*

336
ԽԱՉՏԵՏՐ

Երևան, № 8657 (ԺԴ դար)

143բ Զվերջին ստացող Խաչտետրիս զտէր Կարապետն որ ետ կազմել, յիշատակ հոգոյ իւրոյ և որդոյն իւրոյ՝ Դաւթին. ամէն։
Թվին ՌՀԵ (1626)[34]։

337
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 10440 (1364 թ.)

Նորոգող՝ Մելքիսեթ աբեղայ
Վայր՝ Բազու

253բ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զՄարտիրոս քաշ երաժիշտ և աստուածաբան վարդապետն Տարօնեցին, և զծնողքն իւր, զհայրն՝ Յոհանն և զմայրն՝ Կուլվարդն, և զայլ ամենայն արեան մերձաւորքն, յիշեցէք ի Քրիստոս, որում փառք յաւիտեանս. ամէն։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի Թվին ՌՀԵ (1626) ամին, ձեռամբ սուտանուն Մելքիսէթ աբեղաի, յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին, ի դեղն Բազու, որ մերձ է առ շնորհատու գերեզմանի Ս. Յովհաննու Կարապետին։ Եւ որ յիշէ զաշխատողքս սորա, լի բերանով Աստուած ողորմի ասէ ամենայն վերագրելոցս ի սմա, նա՝ ողորմածն Աստուած, ձեզ յի-
254ա շողացդ // և մեզ յիշելոցս...։

338
ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հա. Ա, № 719 (1499 թ.)

ա

202ա Զվերջի ստացող սբ. Աւետարանիս Ամիրջան, և զի[ւ]ր եղբարքն՝
202բ Ամիրզուլ և Ղարիպջան, և իւրեանց որդիքն՝ Սաֆարն, Փիրի//ջան, Մարեաս, Ամիրխան, Սարում, Ախիջան... և ետին զսբ. Աւետարանս յիշատակ ի դուռն Ս. Էջմիածնայ...[35]։

բ

Յիշատակ է խաչս Ամիրզուլին, Փաշայբէկուն, Ղարիպին, Ամիրջանին, Սաֆարին, թուին ՌՀԵ (1626)։

---

[34] Տեր Կարապետի և որդու մասին հիշատակարաններ տե՛ս 1627 և 1646 թվականների շարքում։

[35] Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է «Այժմ Ս. Նշան ի Վան քաղաքի» (էջ 202 բ)։

339

ՃԱՇՈՑ

Մագիստրոս № 163 (1457 թ.)

ա

85 *Դարձեալ... յիշեցէք մաքրափայլ յաղաւթս ձեր վերջին ըստացող սր· տառիս խաւջայ* Ղարիպշան, *որ այժմ հանգուցեալ է. ...հօրն՝ խոշայ* Ուսուֆին *և մայրն՝* Խանաղին, *և քրւերն՝* Մարգարին *և իւր կենակից՝* Սաֆարին, *որ կամակից եղև սր. տառիս...։*

բ

Դարձեալ Աստուած ողորմի· ասացէք Սաֆարիս, *որ գնեց զգիրքս վասն հոգոյն* Ղարիպշանին *ի դառն և դժար ժամանակիս, որ ազգն թուրգաց մէկ զմէկ ջարդէին ի թուին ՌՀԵ (1626), գնեցի զգիրքս Լ (30) ղուռուշ, վասն հոգոյն խոշայ* Ղարիպշանին *և իւր ծնողացն խոշայ* Ուսուֆին, *որ փոխեցեալ են առ Աստուած*[36]։

340

ԱՒԵՏԱՐԱՆ

Կարնոյ գիտեր, «ՀԱ» 1964 թ., էջ 158—160. տե՛ս նաև Ն. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի, էջ 106, ծանոթ. 1

Գրիչ, ծաղկող՝ Յակոբ վարդապետ
Վայր՝ Առինջք

Փառք...։ Ընդ նմին զիս զանարժան Յակոբ *սոսկանուն վարդապետս թափուր ամենայն բարեաց և փարթամս ի չարեաց· սկսայ և գրեցի զկենսատու սր. Աւետարան[ս] իմով անարժանութեամբ, աւարտեցի և ծաղկեցի անարուեստութեամբ ծերացեալ ամօք որ Հէ (77) գրեցի, նկարեցի փափաքանաւք յիշատակ ինձ և իմ ծնողացն, հայրն իմ՝ զպարոն* Բաբէն, *մայրն իմ՝* Եղիսաբէթն, *և հարեղբայրն իմ՝* Սաեփանոս *կաթողիկոսն, հարազատ եղբայրն իմ՝ զ*Մանուէլ *եպիսկոպոսն,* Էսամբուղէն, Ամիրասլան, Մելիքխանէն, *եղբայր որդիքն իմ՝ զպարոնտէր* Յոհաննէսն, *զ*Դաւիթն, *որդիք նոցա* Յովհաննէս *սարկաւագն,* Մանուէլն: *Եւ դրի յիշատակ իմ հոգոյս* Առընջուց *վանքս Ս. Մարիամ Աստուածածնիս, Ս. Ստեփանոս Նախավկային։ Անխափան կարդան, զմեզ յիշատակին, վայելող սորա* Յոհաննէս *արքեպիսկոպոսն, որ վերակացու է վանիցս և առաջնորդ։ Եւ ոչ ոք չունին հրաման և իշխանութիւն հեռացուցանել Ս. Աստուածածնէս կամ գրաւ դնելով կամ ծախելով կամ իմ ու քո ասելով։ Այս պատճառիս որ ոչ ում երախտիք չկա[յ], վասն իմոյ յիշատակի սորա։ Դուք միաջանք քահանայք, սարկաւագունք, որ խնամք տանիք սգաստութեամբ, ահի և երկիւղ, աստուածութեամբ պահէք ի հրէ, ի ջրէ։ Եւ որ անարժանութեամբ վստահացեալ կարդայ և շուշափէ, ձեռք թուլ, լեզուն կարկամ. բայց որդիք իմ սիրելիք խոնարհութեամբ, հնազանդութեամբ մերձենայ ի այս հրաշագործ սր. Աւետարանս, որ լաւ և ընտիր աւրինակէ է, համա-*

[36] *Սույն հիշատակարանը տե՛ս նույն էջի ներքևի մասում, ՌՀԲ (1623) թվականի տակ։*

նաթ, ամանաթ։ Բայց գրեցաւ սայ ի թվաբերութեանս հայկազան տումարիս ՌՀԵ (1626), ի յերկիրս Արարատայ, ի գիւղս, որ կոչի Ասինջք, ի վանս Ս. Մարիամ Աստուածածնին և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ՝ սբ. Ստեփանոս, սբ. Սիմոն, սբ. Մկրտան և որ սբ. Յակոբ և այլ ամենայն սրբոցն։ Ի թագաւորութեան շահ Ապազին, իշխանութիւն Ամիրգունա խանին։

Այսմ ամի փոխեցաւ յաշխարհէս և որդին նորա՝ Թահմազզուլի խան դրին յԵրևանա[յ]։ Դարձեալ յիշեցէք զտիեզերալոյս վարդապետն մեր՝ զՄովսէս, որ այս սբ. Աւետարանիս թուղթն նա շնորհեաց, Աստուած զիւր հոգին երկոտասան սբ. վարդապետաց դասուն դասակից և պսակակից արասցէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն։

Դարձեալ Աւետիս սարկաւագն յիշեցէք, որ ձեռնասու է բանիս և արուեստաւոր և մեզ ծառայութիւն անող։

Դարձեալ յիշեցէք զՎարդիկն, և ամուսին իւր՝ զՄանիշակն, որ կու աշխատին վանիցս վերայ՝ հացին եփելն և այլ ամենայն բանէ արագաճառ է. Աստուած զիւրեան մեղք թողու և ոչ յիշէ. ամէն։

341
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՁՁՎՍ, I, № 28

192 Ես՝ մեղաւոր Սարգիս ծառայ Աստուծոյ թվին ՌՀԵ (1626)։ Մեղաւոր Մարտիրոս ծառայ Աստուծոյ թվին ՌՀԵ (1626)։

342
ՄԱՇՏՈՑ
ՁՁՎՍ, III, № 400

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Կ. Պալիս

ա

466 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Մաշտոցս ի Կոստանդինուպալիս, ձեռամբ մեղաւոր և անարժան սուտանուն Խաչատուրիս, և վարդապետն իմ՝ զՅաեոբ սարկաւագն յիշեցէք Հայր մերիւ մի, և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն իւր. ամէն։ Դարձեալ յիշեցէք զրստացող գրոցս զԿեսարացի տէր Յովանէսն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից, ի թվականութեանս Հայոց ՌՀԵ (1626), վասն իւրում անձինն. հանդիպողդ աղաչեմ, յիշեցէք ի Տէր Հայր մերիւ մի. ամէն։

Բ

Ես տրմարդի մարդ մեղաւոր,
Եւ ի շարէն յոյժ վիրաւոր,
Որ չրկենար միտքըս բոլոր,
Վասն այնորիկ չէ գիրս աղվոր։

Գ

Զեռքըս երթայ դառնա ի հող,
Գիրըս մընա յիշատակող.
Տըրուպ խաչեր սորա գրծող,
Ոտից ձերոց կոխան և հող։

343
ՃԱՇՈՑ
ՄՏԶԵԳ, I, № 122 (1369 թ.)

Նորոգող՝ Պարսամ աբեղայ

358 *Թվին ՌՀԲ (1626), բարեխաւսութեամբ Ս. առաքելոյն Յակոբայ, որ միշտ կայ առա/// և բարեխաւսութեամբ Ս. Աստուածածնին, որ միշտ բարեխաւս ունի[մ առ մի]ածին Որդին, և զիս զբազմայմեղս զՊարսամ աբեղայս վա/// որ սբ. գիրքս վերըստին նորոգեցի, և զհոգևոր աշակերտ իմ զԿարապետ///։*

344
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՏԶԵԳ, V, № 1692 (1279 թ.)

Նորոգող՝ Դանիէլ

561 *Նորոգեցաւ տետրակս, որ կոչի Մանրուտումն, ի թուականիս Հայոց ՌՀԲ (1626)։ Արդ՝ նորոգեցաւ տետրակս ձեռամբ սուտանուն Դանիէլին, մեղաւք լցեալ և աղտեղին. ով ոք ասէ ինձ ողորմին՝ Աստուած յիշէ զինքն ի բարին։*

345
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՏԶԵԳ, VI, № 1988 (1426 թ.)

Նորոգող՝ Պարսամ Վարագեցի

580 *Արդ՝ աղաչեմ զձեզ, ով սաղմոսերգող, Աստուած ողորմի ասացէք մահդասի տնտես Տուեոյին, որ եստուր նորոգել ձեռամբ Պարսամ աբեղայի Վարագեցի, որ մականունն Ասաայգել ասեն։ Վա՜յ և եղուկ ինձ մեղաւորիս, Աստուած ողորմի ասացէք, և ձեզ ողորմեսցէ. ամէն· Թվին ՌՀԲ (1626)։ Եւ Աստուած ողորմի ասացէք Տուեուին և իւր ծնողացն. ամէն։*

346
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՄՏԶԵԳ, VI, № 1925 (1269 թ.)

Նվիրատու՝ Զիրաք Վանեցի

ա

415 Զիրաք Վանեցի Իսկանդարի *որդի, որ առի սբ. Աստուածայշունչ*

Ռ (1000) ղռիշ. վախն արի ի դուռն սբ. Երուսաղէմայ, թվականիս Հայոց ՌՀԵ (1626)-ին[37]։

Բ

Ես՝ Վանեցի Իսմանդարի որդի խոճայ Զիրաֆս, որ առի սբ. Աստուածաշունչս Ռ (1000) ղուռուշ, և ետու յիշատակ ի դուռնն սբ. Երուսաղէմի, ինձ և ծնողաց իմոց ամենայն, հարն իմոյ՝ Իսմանդարի, մօրն իմոյ՝ Կիլաղին, եղբօրս Ագնայուրին, կողակցիս Մայրամին, և հոգևոր զաւակաց իմոց Աստուածատրին, Ավետիսին, և սարկաւագ Սարգսին և ամենայն ծառայից իմոց[38]։

347

ԱՒԵՏԱՐԱՆ

KarHB, № 15, էջ 10—11

Ծաղկող՝ Մինաս
Վայր՝ Համիք

Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ սրբազան և աստուածահաճոյ հայրապետն և աստուածաբան վարդապետն տէր Մինաս Թէոդուպալսեցին, ցանկացող եղեալ զմեծ և զանտանելի, գերահռչակ և տիեզերալուր, քառաշահեան մշտաբոյս տառս քրիստոսեան, փոքր մատենիւ ետ գրել, զի միշտ և հանապազ մնասցէ ի գրպանի իւրոյ. և ջերմեռանդ սէրն, որ առ Քրիստոս, հանապազ ընթերցցի և քարոզեսցէ միշտ, զոր և հետևեալ իսկ է հետոց նորա և յիշատակ առ յապա մնացելոց կենդանեաց և հանգուցելոց, և ծնողացն նորին՝ Խարշին և Անենային և...։

Արդ՝ գրեցաւ՝ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն Համիք, ի դուռն Ս. Կիրակոսի, ի դառն և ի նեղ հեծելշարժութեան ժամանակի, ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին տղայ հասակաւ. զոր յուղարկեալ զկնիքն իւր քաղաքիս փաշային, որ կոչի անուն Հաւրզ Ահմատ փաշայ, և եղև երկրորդ թագաւորին. և ժողովեաց բազում՝ ՃՌ (100000) և այլ աւելի գումարեցան ի քաղաքս Համիք, զոր բազում նեղութիւն և հարկապահանջութիւն հասուցին քաղաքիս և ելեալ գնացին ի Պարս պատերազմ ի վերայ Բաբելոնի. վէրջքն Աստուծոյ է գիտելի։ Եղև զրաւ գրութեան սորա թվին [Ռ]ՀԵ (1626)[39], ձեռամբ Եղիա գրչի, և ծաղկեալ ոսկենկար անկուածով, ձեռամբ նուաստ և զառածեալ, սուտ և փուտ Մինաս գրչի, յառաջնորդութեան մայրաքաղաքիս Համքայ տէր Բարսեղ աստուածաբան վարդապետին և շնորհազարդ հայրապետին, զոր տէր Աստուած պահեսցէ խոր խաղաղութեամբ ի վերայ երկրի ի պայծառութիւն սբ.

---

[37] Նման հիշատակարաններ ծուցակում մի քանիսն են։

[38] Ձեռ-ը գնելու հորդորողի հիշատակարանը տե՛ս 1627 թ. շարքում։ Բ հիշատակարանը տե՛ս նաև Աղավնունի, Այցելուք, էջ 145—146։

[39] Բնագրում նշված է «ՀԵՆ» ձևով։ Քարամյանցը հարցականով նշում է ՌՀԵ, իսկ նկարագրության բաժնում 1623/24 թթ. կամ 1626 թ. էջ 10։ Մինչև այստեղ համառոտված տե՛ս «Բազմավէպ»-ում, 1886 թ., էջ 189։

եկեղեցւոյ, և յետ աստեացս ընդ սբ. հայրապետացն և աստուածաբան վարդապետացն ղասեսցի. ամէն։ Այլ և աղաչեմ զդասդ ընթերցողացդ, որ դաղափարիք սբ. Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր... զստացող այսմ կտակիս զգրասէր նման Պտղոմին զՄինաս քաջ բարունին, զԹէոդուպոլսեցին և զծնողքն... ընդ նմին մեղուցեալ Մինաս գրչին և հոգևոր իմ որդեկին՝ Եղիա շնորհագիծ ծրողին և ծնողացն իմ.... յաւիտեանս. ամէն։

348

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ ՊԱՐԱՊՄԱՆՑ

ՑՁԱՐ, № 62

Գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ

Վայր՝ Հալապ

ա

347 Գրեցաւ գիրքս ձեռամբ մեղապարտ Աստուածատուր սարկաւագի, թվին ՌՀԸ (1626), ի վայելումն սրբասնեալ հայրապետին տէր Ղուկաս արհի եպիսկոպոսին և իւր հոգւոյ զաւակ՝ տէր Թորոս կրօնաւորին, զոր տէր Աստուած մեր բարով վայելել տացէ նոցա. ամէն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանսդ, որք հանդիպիք այսմ մատենիս, յիշեցէք զիս զտրուպ Աստուածատուր սարկաւագս՝ գծող տրայ, ի Քրիստոս, և դուք յիշեալ լիջիք. ամէն։

բ

348 Զմեղապարտ գծող Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս Աստուած, և դուք յիշեալ լիջիք. ամէն։

գ

Զմեղապարտ նուաստ գծողս յիշեցէք ի Քրիստոս, և վասն սիրոյն Քրիստոսի մի ողորմի ասացէք, և ձեզ ողորմեսցի Քրիստոս։ Գրեցաւ թվին ՌՀԸ (1626), ի վայելումն տէր Ղուկաս քաջ բարունապետ և աստուածաբան վարդապետին, և աշակերտեալ մանկանն իւրոյ տէր Թորոս կրօնաւորին։

դ

Զեռքս երթայ գիրքս մընայ,
Բայց եղկելիս ինչ տի լինայ.
Միթէ իմ Տէրն ինձի խրղճայ,
Մեղաւորիս ճարակ լինայ։

ե

Փառք...։ Որոյ շնորհիւ Տեառն սկիզբն արարի աստուածային սբ. մատենիս, և ողորմութեամբ և օգնականութեամբ նորին յանկ հանի ի թվականութեանս մերում Հայոց ազգի ՌԼԸ (1626) ամի, ի յերկիրս Բերիա, որ է Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացս, որ են աստ մեզ ի յօգնութիւն և ամենայն քրիստոնէից, ի վայելումն տէր Ղուկաս արհի եպիսկոպոսին սբ. Երուսաղիմայ, և հոգևոր
349 որդւոյն իւրոյ՝ տէր Թորոս կրօնաւորին, զոր տէր Աստուած մեր բարով/

վայելել տացէ նոցա զամենայն աւուրս կենաց իւրոց, և յետ անցմանն յիշատակ անջնջելի մնասցէ նոցա. ամէն։

Արդ՝ որք հանդիպիք այս սր. մատենիս՝ Կիւրղի Պարապմանցս և Լուծմանցս, որ են ի մի տուի եղեալ, կարդալով կամ օրինակելով կամ հարևանցի տեսանելով, բան ինչ ի սմանէ օգտելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս, զանարժան զգծող և զծաղկող սորա՝ զնուաստ Աստուածատուր սարկաւագս, և զհայրն իմ՝ զԽաչատուրն, և զմայրն իմ՝ զմահտասի Խաթունն, և զհոգևոր հայրն իմ՝ զմահտասի Ղարիպ խոճան, և զհոգևոր քոյրն իմ՝ մահտասի Սուլթանն, և զհոգևոր եղբայրն մեր՝ զմահտասի Գրիգորն, և զայլ ամենայն հոգևոր հարք և եղբարքն մեր, և զայլ ամենայն արեան մերձաւորսն մեր, և զայնոսիկ որ ի վերայ մեր անարժանութեանս երախտիք և աշխատանք ունին։ Եւ որք յիշէք ձեզ
305 յիշողացդ ե մեզ յիշեցելոցս առ հասարակ// ողորմեսցի Քրիստոս ի միւսանգամ գալստեանն իւրում և նմա փառք յաւիտեանս. ամէն։

զ

Ուրախութիւն լինի գրչին,
Յորժամ հասանէ ի վերջի գիծ տառին։

349

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Վատիկանի գրադարան, № 78 (1537 թ.)

Նորոգող՝ Ստեփանոս

148 Նորոգեցաւ ձեռամբ փծուն և անիմաստ Ստեփանոսի, որ մականուամբ Կարմիր ասի, ի դուռն Ս. Կիրակոսի, ի յառաջնորդութեան Ամբայոլի տէր Բարսեղ վարդապետի, որ ինքն ետուր նորոգել թվին ՌՀԵ (1626), որ այսմ ամի խիստ նեղութեան մեջ են[ք], որ վազիրն բազում զօրօք գնաց ի Պաղտատ ի վերայ Պարսից, հասար արաց, զախերան յԱմբոյ կու տանէին, խիստ նեղութեան մէջ ենք։

350

ԱՒԵՏԱՐԱՆ

Մաղնիսա, № 6 (1621 թ.)

Ծաղկող՝ Յովհաննէս

351 Զվերջին ծաղկող սր. մատենիս զՅովհաննէս ներքևեալ ոգի, մաղթեմ յիշել ի Տէր, և անպարսաւ լինիլ անլաւութեան արհեստիս, քանզի անվարժ և անկիրթ էի գործոյս, բայց զի հարկեցայ ի թախանձանս առն իմաստասէրի և քրիստոսսունակ հոգւոյ տէր Թորոս կրաւնաւորի։ Վասն որոյ հնազանդութեամբ ձեռն արկեալ մասին աշխատութեանց և զսկսեալսն յայլոց յանկեալ աւարտեցի ըստ չափս կարի իմում։ Ի ժամանակի
352 թվայ յոլովմանց ամաց յԱյրարատեան//սեռից տասնեակ հարիւրից ութանասներորդից հնգից (1626)[40]։ Ընդ որս եղիցի սա ի պատիւ և փառս յաւիտենից Արարչին ամենից. ամէն։

[40] Այսինքն՝ (10×100)+75+551։

351
ԱԻԵՏԱՐԱՆ
ՑՈՎՍՅՆ, № 10

Գրիչ՝ Յովսէփ երէց
Վայր՝ Ղրապ'ուղայ

26 *Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն որ կոչի* Ղրապաւղայ, *ի թվին ՌՀԸ (1626), ձեռամբ* Մոյգացի *սուտանուն* Յովսէփ *երիցուն, և զանուն ունիմ, և գործս ոչ։*

Արդ՝ աղաչեմ զձեզ անմեղադիր կացէք խոշորութեան և սխալացն, սուրինակն երկաթայգիր էր ու խնաց էր, ե հարիւր ԿԸ (568) տարու գրած էր[41]։

352
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՅՋՀՄՍ, II, № 26 (ԺԶ դար)

Վաճառող՝ Մարտիրոս Օվեցի

ա

33 *Ես՝ տէր* Մարտիրոս Օվեցիս *ծախեցի զՇարակնոցս տէր* Դանիէլին. *Թուվին ՌՀԸ (1626)։*

Գնող՝ Դանիէլ աբեղայ

բ

Ես՝ սուտանունս Դանիէլ *աբեղայս ասի զայս Շարակնոցս յիշատակ ինձ և ծնողաց իմոց։ Վկա՝* Բաղէշեցի *վարպետ տէր* Սանակ, *յԱւրդանցի տէր* Մարտիրոսն, Կառնոյ *տէր* Սանակն, Կորեկսնց *տէր* Աւետիսն, Մուրատ *սարկաւագ։*

Այսաւր խաւջայ Աւետիսի *տղայն//։*

353
ԱԻԵՏԱՐԱՆ
ՑՀՎԼ, № 372

Վայր՝ Մոկաց քաղաք

871 *Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայ անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն հաւատարիմ տանուտէր պարոն* Ասում, *որ ստացաւ փրկագործ*
872 *սբ. Աւետարանս, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն՝* Սաւ//զսին *և մօրն՝* Էթարին, *կողակցուն՝* Թուրանդին, *և որդոցն՝* Սարգսին, Սունիասին, Յովսէփին, Յովանիսին. *և դստերացն՝* Վարդիաթունին, Ջանմէլիին. *եղբօրն՝* Վարդանիսին. *հօրեղբօրն՝* Յովսէփին, *կողակցոյն՝* Մուդամին, *որդոյն՝* Միքայէլին, Աբրահամին, *կողակցին՝* Նուբարին, *փեսայ* Ամիրջանին, *կողակցոյն՝* Մէրրանին, *և որդոցն՝* Աբրահամին *և* Կիրակոսին,

[41] *Այսինքն՝ նախագաղափար օրինակը գրվել է 1058 թ. (1626—568)։ Այս հիշատակարանը համառոտ տե՛ս նաև Մագիստրոսի Ցուցակում (Ավետարան թղթապանակ, II, № 2368, էջ 1341), ուր վայրը նշված է Ղրապաշ։*

և միւս կողակցոյն՝ Խանումին, դստերն՝ Գայիանին, Խլղաթին, կողակցոյն՝ Շուշանին, որդոյն՝ Սահակին. Փախշանին և իւր կողակցին, որդոցն՝ Հայրապետին և Գրիգորին, Սուքիասին և ամենայն ազգականացն նոցին. և գիւղի քահանայից տէր Հայրապետին և գեղի տանուտէրացն՝ Ջանազրզին և ժամհար Ղազարին, Ջիրաքին, Փիրիջանին, որ խնամք տանեն[42] ի վերայ սբ. Աւետարանիս։ Աստուած զանմատոյց լոյսն պարդևէ ձեզ և ձեր ննջեցելոցն. ամէն։

Գրեցաւ սբ. Աւետարանս ի թուին Հայոց. ՌՀԵ (1626), ի քաղաքս Մոկաց։

354

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՈՏԶՄՎ, № 888

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

Վայր՝ Հալապ

ա

472 Փառք...։ Որ ետ ինձ կարողութիւն մեղապարտ և յոգնամեղ գրչի տրուպ Աստուածատուր դպրիս հանել յաւարտ զսրբոց հայրապետաց սահմանեալ զԴատաստանագիրքս և զԿանոնագիրքս լիակատար ի միտութիւն (sic), ի մայրաքաղաքս Բերիա, որ թարգմանեալ կոչի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացս, որ են աստ մեզ յօգնութիւն և ամենայն հաւատացելոց։ Արդ՝ յանգ ելեալ կատարեցաւ սբ. մատեանս ի թվականիս Հայոց ՌՀԵ (1626) ամին, ի վայելումն ծերունի Յովաննէս եպիսկոպոսին և յետ անցմանն իւրոյ, յիշատակ անշընջելի հոգւոյ։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով կամ օգտիք բան ինչ ի սմանէ, աղաչեմ զձեզ, յիշեցէք ի Քրիստոս զվերոյգրեալ ծրող սորա գյետնեալ Աստուածատուր դպիրս, և զհայրն իմ՝ զԽաչատուր, և զմայրն իմ՝ զմահտասի Խաթունն և զայլ ամենայն զհոգևոր և զմարմնաւոր հարք և եղբարքն մեր, և զուսուցիչքն մեր և զայնոքիկ, որք ի վերայ մեր անարժանութեանս երախտիք և աշխատանք ունին և լի և առատ սրտիւ ողորմի ասացէք և տէր Աստուած ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոյս առ հասարակ ողորմեսցի յիւր միւսանգամ գալստեանն, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն,

Դարձեալ աղաչեմ զձեզ գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր և սխալանաց ինձ մեղադիր մի՛ լինիք, զի խիստ սխալ օրինակի հանդիպեցայ և յետոյ լաւ օրինակի վերայ սրբագրեցի, և որք հանդիպիք սմա զաւելորդ սխալն բառնայք և զպակասն լցուցանէք և զմեզ առանց մեղադրանաց թողէք և տէր Աստուած թողցէ զյանցանս ձեր. ամէն։

բ

Գրեցաւ Դատաստանագիրքս ի Հալապ քաղաք թվին Հայոց ՌՀԵ (1626), ձեռամբ մեղապարտ Աստուածատուր սարկաւագիս, ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի Ուռհայեցի Յովհաննէս ծերունի եպիսկոպոսի,

[42] Տպված է «տանէքդ», ձևով։

առաջնորդի Սրբոյ Քառասնից եկեղեցւոյն, ի վայելումն անձին իւրոյ և յետ անցման յիշատակ հոգւոյ իւրոյ։ Արդ աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք գրիս, զի կար մեր այս էր, բայց սղալանացն թողութիւն արարէք ինձ, զի յինէն ոչ է, այլ խիստ վատթար և սղալ օրինակի հանդիպեցայ։ և յետոյ լաւ օրինակ գտայ և սրբագրեցի, աղաչեմ զձեզ, յիշեցէք զիս ի Յիսուս Քրիստոս, և դուք յիշեալ լիշիք. ամէն։

Գ

Զգծող սորա զնուաստ և զեռաթշուառ մեղապարտ Աստուածատուր դպիրս յիշեցէք ի Քրիստոս Աստուած և մի ողորմիայի արժանի արարէք և ձեզ ողորմեսցի Տէրն երկնային. ամէն։ Գրեցաւ թվին ՌՀԵ (1626), ի վայելումն ծերունի տէր Յովանէս արքեպիսկոպոսին, մաքրամիտ և հեղահոգոյն և յետ անցման իւրոյ յիշատակ անջնջելի։

355

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՃԱՇՈՑ (1312 Թ.)

«Բանբեր Մատենադարանի», № 9

Կազմողներ՝ Սէրապիոն, Սարգիս

438 Վերստին կազմեցաւ Գործք առաքելոցն թվին ՌՀԵ (1626), ձեռամբ սուտանուն Սէրապիոնին և Սարգսին։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք, յիշել ի Տէր միով ողորմեայիւ զտէր Ղուկաս քահանայն, և որ եղև պատճառ և ետ կապել զսբ. գիրքս։ Մեզ մեղաւորացս յիշեցէք ի Տէր Հայր մեզաիւ, յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։

356

ԱԻԵՏԱՐԱՆ

ՋՁՍԳ, № 15 (1262 Թ.). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան «Նշխարք», հտ. Բ, № 487, էջ 407. Թորոս աղբար, Ա էջ 188, «ՀԱ», 1924 Թ., էջ 333։

Կազմող՝ Մելքիսէք դպիր

Վայր՝ Սեբաստիայ

20 Կազմեցաւ սբ. Աւետարանս ի թվին ՌՀԵ (1626), ի քաղաքն Սեբաստիայ, ի դուռն Ս. Աստուածածնին, ձեռամբ սուտանուն մեղօք լցեալ Մելքիսէք դպիրս և զուտուցիչն իմ՝ զՄելքիսէք վարդապետն, որ հանգուցեալ է ի Քրիստոս, որ բազում աշխատեցաւ ընդ իս և ուսոյց զարհեստս զայս։ Ո՛վ ընթերցող քահանայք, աղաչեմք զձեզ, որ մեկ Հայր մեղայիւ մի յիշէք զմեզ, աղաչեմ, աղաչեմ։

357

ՄԱՇՏՈՑ

Թորոս աղբար, Բ, էջ 254—256

Գրիչ՝ Սարգիս

Վայր՝ Խիզան

ա

... Գրեալ... ի մեծ թվականիս Հայոց ի ՌՀԵ (1626) ամի, ի քաղաքս որ կոչի Խիզան, ընդ հովանեաւ սբ. տաճարացս Ս. Յարութեան և Ս. Աս-

տուածածնիս, Ս. Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին և Սըրրոյն Գէորգեայ, որ է սակաւ մի հեռի. և աւարտեցաւ ընդ հովանեաւ սրտաճարիս որ յանուն Ս. Գամաղիէլ առաքելոյն կառուցեալ կայ. ի կաթողիկոսութեան տէր Գրիգորիսի, ի թագաւորութեան աշխարհակալ արքային սուլթան Սուլիման խոնդքարին և ի մերոյ քուրդ պարոնին Սօլթան Անմատ բէկի: Ի յայսմ ամի գրեցաւ սբ. գիրքս, ի գառն և ի շար ժամանակիս, զի յամէն դիմաց դառնութիւն և վիշտն պատեր է Հայոց տառապեալ ազգս, զի յամէն դիմաց դառնութիւն, պատուհաս կուգա ի վերայ Հայոց ազգիս, սով, սուր, գերութիւն, մահ, շարժ և տապալումն, ժանկ, մարախ, թրթուր, շորեակ, դալուկ, հեղեղ անթիւ և անհաշիւ, որ ոչ կարեմ ընդ գրով արկանել։ Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց գոհանամք զԱստուծոյ, թէ զայս կեանքս չունինք, զՔրիստոս ունիմք յոյս և ապաւէն։ Բարեխօսութեամբ սբ. Աստուածածնին և ամենայն ընտրելոց բարձցէ տէր Աստուած զամենայն պատիժ պատուհասի յարարածոցս, մանաւանդ ի Հայոց տառապեալ ազգէս և հաշտեսցի ամենագութն Աստուած. ամէն։

Աստուած լուսաւորէ զՅովհաննէս վարդապետի հոգին, որ զմեզ կերակրէ ի գրել սորա... յիշման արժանի առնէք... զքահանայն Պետրոս Մխիթար զստացող սորա և զծնողսն իւր՝ զԵատշէն և զԹիլիփաշէն... և զիս ... գծողս Սարգիս սուտանուն և զծնողսն իմ՝ զԿարապետ քահանայն և զՔնարն, և զուսուցիչն իմ՝ զշնորհազարդ և զբանիբուն Յովսէփ վարդապետ Ալթամարցին, և զհոգևոր հայրն իմ՝ զՎարդան քահանայն, և զիս, և զկողակիցն իմ, որ աշխատեցաւ ի կոկել թղթին, և զմերձաւորսն իմ և զերախտաւորսն. ...։ Եւ արդ՝ կացցէ սա ի դուռն՝ խնդրակատար Ս. Աստուածածնին. և ատենի սաղմոսարանս և զատիճա շուրջառն վակասովն է կլապիտոն խաչովն, և զխաչակալն կազմել ետ, և զեկեղեցւոյ սալերն նորոգեաց տէր Մխիթարն։ Եւ արդ՝ գրեցաւ սա յառաջնորդութեան սբ. ուխտիս խնդրակատար Ս. Աստուածածնիս Ներսէս մեծ բարձրապետին, և պշակերտաց իւրոց Ներսէս վարդապետին, Հերապետ վարդապետին և Դաւիթ վարդապետին և Յովհաննէս վարդապետին, և Գրիգոր աշակերտին, Մարտիրոս կրօնաւորին, և Ստեփանոսին, Ղազարին և Աբրահամին...

Բ

Աստուած լուսաւորէ զտէր Վարդանի հոգին, զի մեզ խաղող և խնձոր կու բերէ։

Գ

Եղուկ ու վայ է ահագին,
Մեղօք մեռեալ խև Սարգսին,
Որ աղտոտեց ըղձիր հոգին,
Զոր չէ պատեհ կարգաւորին։

Դ

Աստուած լուսաւորէ զՅովհաննէս վարդապետի հոգին, զի զմեզ մեղրով ու Ռ (1000) բարով կու պատուէ։

Ե

Աստուած լուսաւորէ զՎարդան կրօնաւոր քահանայի հոգին, զի մեզ մեղր ու խնձոր կու բերէ։

358

ՃԱՌԸՆՏԻՐ

Թորոս աղբար, Բ, էջ 384

Նորոգող՝ Ստեփանոս

Նորոգեալ ի թվին ՌՀԵ (1626) ձեռամբ Ստեփանոսի, *որ մականումբ* Կարմիր *ասի, ի գուռն Ս. Կիրակոսի և մաւրն նորա Յուղիտայի, ի դառն և նեղ ժամանակի որ եմք նեղած ամէն դիմաց...։ Յայնմ ամի մեծ և երևելի վազիր ել ի* Ստամբուլայ *բաղում զաւրաւք կու գնայր ի վերայ Պարսից թագաւորին՝* Բաղդատ, *և հասեալ ի* Թաւրիզ *մեռաւ։ Զմահրն բերին յԱմքայ փաշին է (7) ամիս զաւրք ժողովեցաւ* Ամիք, *այնչափ զաւրք ժողովեցան, որ թիւ ու համար չի գայր. կերակուրն և շուրն այլ հատաւ։ Առեալ զզաւրքն գնացեալ ի* Բաղդադ. *և զբանի վերջքն Աստուծոյ է գիտելի...։*

359

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թորոս աղբար, Բ, էջ 477—479

Ծաղկող՝ Մինաս
Վայր՝ Տիգրանակերտ

...Պատուական ծերունին տէր Մարտիրոս *արքեպիսկոպոսն... և բարի շառաւիղ յարմատոյ նորա ժրաջան մեղուն և քաջ փիլիսոփայն տէր* Յոհաննէս *վարդապետն ցանկացող և փափաքող եղեն աստուածային մեծ բուրաստանիս... ստացան զսա յիշատակ բարի և անջրելի ի վայելս ներկայումս սրբասէր անձանց իւրեանց և պահապան աստուածախնամ գիւղաքաղաքիս Զեֆուշայ... յանգ եղեալ աւարտեցաւ սբ. Աստուածաշունչս ձեռնտուութեամբ զառածեալ...* Մինաս *գրչի, որ ետու գրել զսա աշակերտաց և հոգևոր որդւոց իմոց* Յովհաննիսի *և* Առաքելի*... յիշատակ սոցա՝ լիցի ի սբ. գիրքս, և իւրեանց ծնողաց։ Կազմեալ ծաղկեցաւ սա ոսկենկար յանգուածով... և այլ ցրուածաղիկքն խամ թփերով, տոկերով և խորանով, ես նուաստ* Մինաս *գրիչս ծաղկեցի և աւարտեցի... յաշխարհս* Միջագետաց, *ի մայրաքաղաքն* Տիգրանակերտ*... ի դուռն Սրբոյն Կիրակոսի և մաւրն Յուղիտայի, և Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին... ի Հայոց թուականիս ՌՀԵ (1626), ի հայրապետութեան սրբոյ* Էջմիածնայ Մելքիսեդեկ *կաթողիկոսին, որ փախուցեալ է յաշխարհն Ռուսաց և աթոռն ամայի է մնացեալ, յորում ժամանակի միահամուռ բարձաւ քահանայութեան [շնորհ]. զի ոչ ուրեք երևի ճշմարտութիւն, այլ տգիտութիւն թագաւորէ...։ Եւ ի թագաւորութեան... որ ասին Տա-*

ճիկք... զաւրացան և ունին զՄիջերկրեայս ծովով և ցամաքով, որոյ աթոռն է Մեծին Կոստանդիանոսի:

ՌԿԷ (1618) թուականին մեռաւ սուլթան Ահմատն և թագաւորեաց եղբայր նորա սուլթան Մուսաֆայն ամիսս Գ (3). և յետ այնորիկ թագաւորեցուցին զեղբաւր որդի նորա զսուլթան Ահմատի որդին՝ զսուլթան Աւամանն տղայ հասակաւ, բայց յաղթող և զաւրեղ թագաւոր։ Սա մինչ հնգետասանամեայ էր, յարեաւ գնաց ի վերայ Լեհաց աշխարհին ՌՀ (1621)[43] թուականին, և աղգն նեռողաց[44] ընդ իւր շատ պատերազմեցան, և բազում և անթիւ գերի առեալ դարձաւ ի թախտն իւր ի Կ. Պաւլիս...։

360

ԱԻԵՏԱՐԱՆ

Ա. Ղազիկյան, «Բազմավէպ», 1968, էջ 42

Վայր՝ Էնկէլին

... Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի լաւ և յընտիր աւրինակէ, ի յերկիրն Էնկէլին, ի վանս Ուշ-Քիլիսին, ընդ հովանեաւ Երեք մանկանցն, որ ասի Անանիա, Ազարեա և Միսաէլ[45]։

---

[43] Սխալմամբ տպված է «ՌՇ». նկատի ունի Խոթինի պատերազմը։

[44] Նկատի ունի Ղրիմի թաթարներին։

[45] Տարեթիվը թեև այստեղ չի բերված, բայց հիշատակարանը գրված է 1626 թ. ներքո։

361
ՃԱՌԸՆՏԻՐ
Երևան, № 7441 (1322 թ.)

242ա Թվին ՌՀԶ (1627) [յ]ու[ն]վարի ԺԲ (12) խաւարեցաւ լուսինէ։

362
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Երևան № 7794 (1645 թ.)

Գրիչ՝ Գրիգոր երէց

33ա Թվին ՌՀԶ (1627) Մոկացի Կարապետն վարդապետն առ Աստուած փոխեցաւ ի սբ. Յերուսայղէմ, աւաք հինգշաբթի[1], և Աստուած լուսաւորէ զիւր հոգին։ Ես՝ մեղաւոր Գրիգոր Էրիցէս, շատ շնորհայկալ եմ իւրմէն. ես այլ նորայ գնալոց եմ եղբարք[2]։

363
ՈՍԿԵՓՈՐԻԿ
ՅՁՎՍ, II, № 263

Գրիչ՝ Մկրտիչ

ա

836 Քրիստոս Աստուած, ողորմեա՛ ստացողի գրոցս տիրացու Աւագին և իւր հարազատ եղբարն՝ պարոն Վասլին, և այլ ամենայն արեան մերձաւորացն, որ հանգուցեալ են առ Քրիստոս։ Եւ զկենդանիք սոցին՝ զտիրացու Աւագն և զիւր դեռաբոյս ծաղիկն՝ զորդին՝ Մկրտիչն, և զեղբայրն՝ խաւճա Վասիլն. խնդրեմք ի յԱստուծոյ որ զիւրեանք երկար ամօք պահեսցէ, մինչև ի խորին ծերութիւն հասուցանէ։ Եւ ինձ մեղսամած գծողիս՝ անարժան Մկրտիչիս և ծնօղաց իմոց Թագուհին, որ հանգուցեալ է առ Քրիստոս։

բ

Եւ ինձ անարժան և անիմաստ գրչիս Մկրտիչի, յոր յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս մայրն իմ և մընացի զարիպ։

---

[1] 1627 թ. Զատիկը կլինի մարտի 25-ին, իսկ ավագ հինգշաբթին՝ մարտի 22-ին։

[2] Միևնույն անձնավորության ձեռքով գրված հիշատակություններ կան նաև 1620, 1656 և 1661 թվականների շարքում։

Գ

Յիշեսջիք և զիս զանարժանս, զմեղաւորս՝ զգծողս և զհայրն իմ, որ այսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, ի թվին Հայոց ՌՀԶ (1627) ամին, ապրիլ ամսոյն ի ԺԸ (18), աւրն հինգշաբթի, և տէրն Քրիստոս ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։

364

ՈՏԱՆԱՒՈՐՔ ՅՈՎԱՍԱՓ ՍԵԲԱՍՏԱՑԻՈՑ

Երևան, № 6333/465

Գրիչ՝ Յոհան Լեհցի

113 Գրեցաւ թվին ՌՀԶ (1627) յուլիս ամսոյ Ի (20), ձեռամբ անարժան Յոհան Լեհացի նօտար դպրիս. աղաչեմ յիշել ի Տէր։

365

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Երևան, № 2691 (1625 թ.)

Ստացող՝ Բարսեղ վարդապետ

ա

53 ա Փառք...։ Արդ՝ ի ժամանակս յետինս և անբարի, դառն և դժուար, ես՝ Բարսեղ վարդապետս, յետինս յորդիս նոր Սիովնի, ցանկացօղ եղէ սբ. տառիս. վասն որոյ և փափագեալ իմ աստուածախօս վարդապետութեան սբ. առաքելոյն Պօղոսի, բացայայտեալ սրբոց հարցն Յովհաննու Ոսկեբերանի և Եփրեմի. զոր և յետոյ այլք ի սրբոց վարդապետաց համաոստեալ յԱնանիայ վարդապետէ Սանահնին, որ էր ի ժամանակս կաթուղիկոսութեան տեառն Պետրոսի, յաւուրս Դիոսկորոսի, առ ի պէտս սպասաւորաց բանի։

Եւ ես՝ Բարսեղ վարդապետս ետու գրել զայս բուրաստանս ամենալի, գանձ անկողոպտելի, յիշատակ հոգւոյ իմոյ և մխիթարիչ մարմնոյ, սփոփիչ տրտմութեան և փարատիչ ձանձրութեան, և եդի ի դուռն վանացն Եղիազարու, զի մնասցէ անջինջ յիշատակ ինձ և ծնօղաց իմոց՝ հաւրն [...][3] ե մօրն և եղբարցն իմոց՝ մահդասի ծերունի Ապռալին, որ ի բազում ժամանակէ ճգնի ի դուռն նոյն վանացն, որ Երկոտասան առաքեալք վերաձայնի, և այլ եղբարցն փոխեցելոցն առ Քրիստոս։ Արդ՝ ընկալ[ա] զսա ողորմութեամբ քով, որպէս զերկուս լումայս այրուն յանկարօտ գանձանակ փառաց քոց, և տուր մանկանց եկեղեցւոյ ուրախութեամբ հանդիպիլ սմա և ընդունել զսա ըստ հաճոյից կամաց քոց։ Եւ տուր նոցա լինել երկիր բարի և պարարտ։ Եւ արա զսա նոցա սերմն սրբութեան և արդարութեան տալ քեզ զպտուղն Ճ (100)-աւոր Կ (60)-աւոր ևս Լ (30)-աւոր։ Եւ որք ընթեռնուն սիրով և լսեն և ընգունին։ Աղաչեմ զքեզ տուր նոցա լուսաւորութիւն մտաց, սրբութիւն սրտի...

253բ Եւ արդ՝ աղաչեմ զամենեսեան առ հասարակ, որք ակտիք ի սմանէ և կամ ուրինակէք, և որք յետ մեր ժառանգէք զսա, յիշման արժան[ի] առնէք զիս հանդերձ ծնօղօք իմովք։

[3] Անվան տեղը բաց է թողնված։

Արդ՝ գրեցաւ աստուածախօս մեկնութիւնս Պօղոսի առաքելոյն ի թվին Հայոց Ռ և ՀԵ (1626) ամին, յերկիրն Տարօնոյ, ի վանքն Եղիազարու, ի դուռն Ս. Աստուածածնին և Երկոտասան սբ. առաքելոցն և Ս. Ստեփանոս Նախավկային և Սրբոյն Գրիգորի մեր լուսաւորչին և այլ սրբոցն, որ են աստ հաւաքեալ։ Վասն որոյ և աստ եդի յիշատակ ինձ և ծնօղացն իմոց՝ հարն [ ] և մօրն [ ][4] և եղբարցն իմ՝ մահդասի Ապուպին և Մեհերին փոխեցելոյն առ Քրիստոս, և Մախսուային փոխեցելոյն [առ Քրիստոս], զոր տէր Աստուածն ողորմեսցի նոցա։ Եւ որ յիշէ յիշեալ լիցի առաջի աստենին Քրիստոսի։ Եւ լաւ պահօղքն և խնամ տանօղքն զսակեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ։ Եւ արդ՝ սկիզբն եղև սբ. գրոցս ՌԿ և է (1618) թվին, ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ Յամիք ասի, ձեռամբ հոգևոր որդւոյն իմոյ՝ Կարապետ բանի սպասաւորի։ Եւ տարեալ ի նոյն վանքն Ղազարու գրեաց և աւարտեաց ի թուին ՌՀԴ (1625) ամին։

Գրիչ՝ Կարապետ

Բ

Եւ [Ռ]ՀԶ (1627) Բաղիշեցի տէր Սահակ գրագիրն եկն վասն ուխտի ի Ս. Կարապետն և ի Ս. Առաքելոցն։ Եւ ես՝ նուաստ Կարապետս արգելեցի և ետու ծաղկել և կազմել[5] յիշատակ[6] հոգևոր հօրն իմոյ՝ Բարսեղ վարդապետին և ծնօղաց նորին, նաև ուսուցչին իւրոյ՝ Սրապիոն վարդապետին, փոխեցելոյն առ Քրիստոս... նաև ինձ եղկելի Կարապետիս ողորմեսցի Քրիստոս։ Որ հրամանաւ հոգևոր հօրս մերոյ և առաջնորդի սբ. ուխտիս գրեցի զսա բազում աշխատութեամբ ի յայս դառն և ի նեղ ժամանակիս, զի ի ձմերայնի սակաւ մի գրէաք և ի յամարայնի՝ ոչ, վասն ահի անօրինաց և հարկապահանջութեան բռնաւորացն ոչ կարէաք, զի յամենայն կողմանց ի վտանգի կայաք, վասն այն յերկարեաց ի վերայ մեր գրել սորա։ Եւ դուք, ո՜վ ընթերցողք, վասն Աստուծոյ անմեղադիր լինիք խոշորութեան և սխա[լա]նաց գրոյս. զի կարն մեր այս էր։ Այլ վասն հարկի հոգևոր հօրս մերոյ աթոռակալի սբ. աթոռոյս և դիտապետի մայրաքաղաքին Համբայ տէր Բարսեղ քաշ բարունապետի և աստուածաբան վարդապետի գրեցի զԳործոց մեկնիչն և զԱռակացն, և զաստուածաբան սբ. առաքելոյն Պօղոսի, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց։ Ի դուռն Ս. Առաքելոցն և այլ բազում գրեանք՝ զՄաթէոսի մեկնիչն, զիւր Քազուածոյն, զ Լուկասու մեկնիչն և զՅովհաննուն և զիւր Քաղվածուն, զԴանիէլի մեկնիչն, զՏումարի մեկնիչն, զՄիխայէլ պատմագիրքն, զԴանձուցն և զՊարապմանցն ի մի տուփ, զՏօնապատճառն[7]։

254ա Ռ և ԾԸ (1609) ամին նորոգեաց զվանքն և բարձրացոյց զպարիսպն և ձեռք մի լաւ սգեստ եմիփորոնաւ և թագիւ եղ յիշատակ ի դուռն Ս. Առաքելոցն, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, որք կարդան և աւգտին և Աստուած ողորմի անեն. ամէն և եղիցի։ Եւ եթէ ոք ի մերոց

[4] Դարձյալ անունների տեղը բաց է թողնված։
[5] Ձեռ-ի գրչության հիշատակարանը տե՛ս 1625 թ. շարքում։
[6] Այս բառը սխալմամբ կրկնված է։
[7] Բնագիրն այստեղ ընդհատվում է, ապա 254 ա էջում նորից շարունակվում։

կամ յօտարաց, ի վարդապետաց կամ յեպիսկոպոսաց կամ ի կրօնաւորաց կամ յաշխարհականաց յանդգնի և հանէ զայս յիշատակներս ի դրանէ Ս. Առաքելոցն, ծախելով կամ դրաւ դնելով կամ վասն մարմնաւոր պատճառի, նա ի Քրիստոսի արդար դատաստանին անմասն ելցէ և ընդ Յուդայի և ընդ խաչահանունսն դասի...։

Դարձեալ յերես անկեալ կողկողագին պաղատանօք հայցել ի ձէնշ, ո՛վ ընթերցողք սբ. գրիանացս, զոր յիշատակեցաք աստ, յորժամ ընթեռնոյք կամ աւրինակէք, Աստուած ողորմի ասացէք ստացօղի սոցա Բարսեղ վարդապետին, և ծնօղաց նորին, և եղբարցն, և քուերն, և հօրեղբարցն և ամենայն ազգականացն. նաև իւր անհնազանդ, անառակ որդւոյն գրօղի սորա փցուն սուտանուն Կարապետ գրչի, որ եմ ի նոյն վանացն Եղիազարու. և դեռևս սպասաւոր սբ. աթոռոյս եմ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զիս և զծնօղսն իմ հանդերձ ամենայն ազգականօք, նաև ծաղկողի սորա Սահակ քահանային և իւր աւրհնեալ աշակերտացն Դանիէլ կրօնաւորին և մանուկ Մուրատին, որ աշխատեցան ընդ իւր՝ ի ծաղկելն և ի կազմելն. Աստուած ողորմի ասացէք նոցա, զի աշխատութեամբ հասոյց յաւարտ և ի կատար ի թվականութեանն Հայոց ՌՀ և Զ (1627) յուլիս ամսոյ ի ԻԱ (21), որ էր շաբաթ, զծաղկելն և ըզկազմելն։ Եւ հետ սորա ծաղկեց Յիսուս որդի մի և Բ (2) Շարականոց կապեաց ի դուռն Ս. Առաքելոցն. նաև ինքն Քրիստոս ողորմեսցի ստացօղի սբ. գրոցս Բարսեղ վարդապետին, իւր ծնօղացն և եղբարցն և ամենայն ազգականացն իւր։ Նոյն ողորմութեամբն և ինձ գրողի սորա ողորմեսցի Քրիստոս Աստուած յորժամ երկոտասան առաքելօքն նստի ի դատողական աթոռոյն...։

Զոր և խնդրեմք ի մարդասիրէն Աստուծոյ, զի զմիաբանք սբ. ուխտիս անփորձ պահեսցէ զտէր Յովհան[ն]էս վարդապետն, զլուսարար տէր Նահապետն, զտէր Կիրակոսն, զտէր Աւետիսն, զիւր քուրորդին՝ զՅովանէս մալազն և զտէր Գրիգորն և զփոքր Մարգարայ մալազն, որ այժմ հաստատ կան ի սբ. ուխտս ի ժամ ի սաղմոսերգութիւն ի յաղօթս և յամենայն աստուածպաշտութիւնս և ի գործս բարիս[8]։

366

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ[9]

Երևան, № 4678

Գրիչ՝ [Սիմէօն Լեհացի]
Վայր՝ Ռոհաթին

Ոա ///զաշխարհս և զվայելչութիւնս աշխարհիս արհամարհել և գիտել որ չէ մնացական, այլ սուտ և անցաւոր՝ աստ ցրվել և անդ ժողովել, ըստ

[8] Մեկ ուրիշը հիշատակարանի վերջում ավելացրել է. «ի թուս ՌՄՌ (1801)-ին ես Յօ[վ]հաննէս վարդապետս, առաջնորդ սրբոյ տեղւոյս հաշուեցի զամս, որ թվականն ՌՀԶ (1627) ամ լեալ է աւարտ գրելոյ և կազմելոյ գրոցս, որ մինչև ցայժմ լինին ամք հարիւր և ՀԴ (174)։ Բարսեղ վարդապետն լեալ է տեղւոյս և Յամբայ քաղաքին առաջնորդ։ Յամիք սրբոյ վանիցս թէմ եղեալ է յայնժամ. այսպէս իմացէք ընթերցողք» (էջ 254 ա)։

[9] Ձեռագիրը բաղկացած է փոքրադիր 8 թերթից։ 1-ին և 8-րդ թերթերը հիշատակարանի հետ կապ չունեն։ Դրանք նախկին՝ Աղօթամատոյց ձեռագրի բեկորներն են։ Հիշատակարանը

տէրունական առակին, թէ «Մի՛ գանձէք ձեզ գանձս երկրի, ուր դողք գողանան և յական հատանեն, այլ գանձեցէք յերկինս, ուր ոչ գողանան և ոչ ցեցք ապականեն»[10]։ Եւ դարձեալ ասէ Տէրն, թէ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ այս սպառեսցի
2բ ընկալցին զձեզ յարկս իւրեանց»[11]։ // Եւ դարձեալ, թէ «Պարտ է յամենայն ժամ <պարտ է> զբարին սերմանել և մի՛ յապաղել»[12] ըստ իմաստնոյն Սողոմոնին որ ասէ, եթէ «Ընդ առաւօտն սերմանեա՛ զսերմն քո և ընդ յերեկո մի՛ լքցի ձեռն քո»[13]։ Եւ դարձեալ, եթէ «Մի՛ ասեր կարօտելոյն եթէ երթ և վաղիւն եկեսցես առ իս, զի ոչ գիտես թէ վաղիւն զինչ ծնանիցի»[14]։ Վասն որոյ ոմն բարի. ազնուական զարմէ, յարմատոց և ի
3ա շառաւիղէ բարի, հետոցն Քրիստոսի հետևեալ և արմատացուցեալ // ի սրտի իւրում զնոյն ինքն զՔրիստոս, որոյ անուն կոչի Ամիրաղա ցանկացաւ այս սխրալի գրքիս, որ կոչի Աղօթամատոյց, զի կայ ի սմա ժողովեալ բազում և ազգի ազգի աղօթք սբ. վարդապետաց, հայրապետաց և անուանի սբ. հարց՝ Եփրեմի, Յոհաննու Ոսկիբերանի և Յոհաննու Գառնեցոյն և այլ սրբոց, ազնիւ և գեղեցիկ հաւաքեալ իբրև զշարս մարգարտաց և ընդելուզս ականց։ Զոր մեծաւ փափագմամբ և ջերմ սիրով. այլ և յզմամբ սրտի ետուր զսա գրել ի հալալ յարդեանցն և ի արդար
3բ վաս//տակոցն, վասն սբաղման մարմնոյն, այլ և վասն աղօթից, զզման

սկսվում է 2-րդ ա էջից։ Այսպիսով, այն սկզբից թերի է և հանդիսանում է Սիմէոն Լեհացու ինքնագիրը, նոտրագիր գրությամբ։ Առաջին անգամ այս հիշատակարանը հատվածաբար հրատարակվել է Խաչիկ վարդապետ Դադյանի ձեռագրերի ցուցակի 2-րդ մասում (տե՛ս Յակոբ Թոփճեան, Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն բ, Վաղարշապատ, 1900, էջ 29)։ Այստեղից Ն. Ակինյանը այն վերցնելով վերահրատարակեց «Սիմէոն դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք» (Վիեննա, 1936) աշխատության 395—396 էջերում։

Հրատարակում ենք մեզ հասածն ամբողջությամբ։

Ներկայացվող բնագիրը սկզբից թերի լինելու պատճառով չի պահվել հիշատակարանի տարեթիվը։ Ն. Ակինյանի հրատարակած Սիմեոն Լեհացու «Ուղեգրութիւն...» աշխատության 380—382 էջերում պահվել է Ցարոսլավլի հրդեհի պատմության մի այլ շարադրանքը, ուր հենց սկզբից նշված է եղելության և տարեթիվը և ամիս ամսաթիվը. «Արդ՝ ի թվին ՌՀԶ (1627) օգոստոս ԺԵ, աւուր փոխման Ս. Աստուածածնին եղև ցասում Լէհաց երկրի...» (էջ 380)։ Այս հիման վրա էլ սույն հիշատակարանը տեղադրում ենք 1627 թ. շարքում ժամանակագրական կարգով՝ հուլիսից հետո։ Սակայն Ս. Աստվածածնի վերափոխման տոնը 1927 թ. կլինի ոչ թե օգոստոսի 15-ին, որովհետև այդ օրը շաբաթշաբթի է, այլ օգոստոսի 12-ին, կիրակի։ Ցարոսլավլի հրդեհի պատմությունը «Ուղեգրութիւն ...» աշխատությունում ունի առանձին շեղումներ և վերջում էլ հետևյալ ընդարձակ հատվածը. «Եւ ասին թէ ԺԵ (15) Մսրայ խազնայի չափ զարար եղև, զէրպապիք, խամղալաթցիք, աթլազ-քամխացիք, պահարիք, չուխաչիք, քանի հարիւր խանութ սօֆչիք, խալի, քիլիմ, ապրշում և քանի հարիւր թոբ սամուր սարտաւայ, սինճաբ, ախազ, աղվես և այլ ազգ և ազգ թուլալաթ. ամէն պահարչի ՃՌ (100000) զուռուշի պահար ունէր։ Նոյնպէս խոյումչիք, չուխաճիք, մէկ աւուր մէջն այրեցաւ, թող նազտ դրամն, զուռուշն, ոսկին, մանտր ստակ և այլն։ Խօնթքէրի մի խազնա զարար եղաւ, ոչ թէ միայն Լէհցոց, Մօսքովցոց, թուրքի մարգկանց, Ֆռանկաց, Մաճրաց, Օլախցոց, Խզըլպաշցոց և այլոց բացմաց, զորս ոչ կարեմ թուել և ընդ գրով արկանել. բաւ է» (էջ 381—382)։

10 Մատթ. Զ, 19—20։

11 Ղուկ. ԺԶ, 9։

12 Հմմտ. Մատթ. ԺԳ, 24։

13 Ժող. ԺԱ, 6։

14 Առ. Ժ, 28։

և ապաշաւանաց անձին ի փրկութիւն հոգոյ և յիշատակ յետամնայ իւրոց, զոր տէր Աստուած վայելել տացէ նմա և ընդ յերկայն աւուրս. ամէն։

Բայց գրեցաւ սա ի դառն և յանրարի ժամանակիս, զոր վասն ծովացեալ մեղաց մերոց արժանահաս բարկութեամբ ցասումն Աստուծոյ պատեաց զմեզ և զերկիրս մեր և ոչ թէ մի, այլ բազում, այս է՝ սով,
4ա սու[ր] և մահ տարաժամ։ Զի այսմ ամի պիղծ և զազիր ազգն // Նետողաց, որ են Թաթարք[15], մտին յերկիրս Իլախաց և զայն ոչ թէ միանգամ, այլ երկիցս և երից և այլ յոլովս ի տարոջն, և աւեր ածին աշխարհիս մերում՝ գերելով, սպանանելով, զոմանս կողոպտելով, զայլս ազգի ազգի նախատանօք և կսկիծելի ձաղանօք կտտամահ առնելով, սովով և ծարաւով և մերկութեամբ մարմնոյ, ի տօթոյ ամառան յարևակէզ լինելով, և ի սաստկասառոյց ձմեռան դժնդակ ցրտոյն սառուցանելով, զայլոց զինչս
4բ և զստացուածս յափշտակելով, զձիս և զանա//սունս տանելով, զտունս և զշինուածս այրելով և այլ բազում օճիրս գործելով ընդ կանայս և ընդ կոյս աղջկունս և նոր հարսս, զորոց այպն և զնախատինս և զկսկիծ, այլ և զաղաղակ արանց, զողբս հարց և զաղիողորմ աղէտ տարակուսանաց մեծի մարցն և եղբարց, ո՞վ կարէ ընդ գրով արկանել։

Եւ մինչ յայսմ նեղութեան և վշտի և տառապանաց էաք և կայաք, եկն եհաս բօթ գուժի և չար լուր, եթէ մեծ հուր անկաւ ի քաղաքն Եառա-
5ա ալով, ուր էին ժողովեալ բազում // վաճառականք յայլ և այլ գաւառաց և քաղաքաց, ազգ և յազինք յեկաց և բնակաց, ի հեռաւորաց և ի մերձակայից, անթիւ և անհամար գանձիւ և կումաշիւք, քրիստոնէից և անհաւատից, զոր հրակիզեալ այրեցաւ քաղաքն բոլոր պարսպաւ, հանդերձ տամբք և տեղօք, ընչիւք և ապրանօք և ամենայն գոյականօք և տեղօք։ Այլ և կամարակապ գմպէթայարկ, վիմաշէն փառաւոր եկեղեցիքն մինչև ի սպառ այրեցեալ փշրեցան, զի բնաւ ոչ մնաց շինութիւն, քանզի
5բ ջորեք կող//մանց էր պատեալ պաշարեալ շուրջանակաւ հուրն աստուածասաստ։ Եւ կորեաւ բազմութիւն գանձուց և կումաշից և դահեկանաց, զոր ոչ ոք կարէ թուել կամ իմանալ զհամար վնասուցն։ Զի և մարդիք այրեցան, այլք կիսայրեացք և կէսքն մօրվօք և հերօք խանձեալք մազապուրծ լեալք փախստականք ի քաղաքէն ի դուրս հազիւ անկանէին. իսկ ոմանք խելաթափեալք և մոլեգնեալք վասն մեծի աղէտիցն և կորստեան ընչիցն, ոմանք զգեստ այրեցեալք, մերկ և բոկ,
6ա գլխիբացք, սևադէմ// և այլակերպք, ահարկուք երևեալ տեսողացն ի բոցոյն և ի ծխոյն. քանզի ի գիշերի եղև հուրս այս, և Բ (2) ժամն այրեցաւ քաղաքն և ամենայն բնակիչք։ Եւ անդ էր տեսանել զկսկիծն և լսել ղճիչ, զվայ՛, զհառաջ, զլալ և զողբ աղիողորմ։ Իսկ բազում վաճառականք և խօճայք Ռ (1000)-աց և բիւրից տեառք քրցասգեստք լեալք և մուրացիկք ցիր և ցան լինելով թափուրական շրջէին տնանկութեամբ և պանդխտութեամբ, զիւրեանց տունս և զընտանիս ուրանալով մինչ զի
6բ ոմանց և հաց ոչ գոյր ապրեցուցանել զհոգին իւր, // ոչ թէ գնալ ի տուն։

15 Իմա՛ Ղրիմի թաթարները։

եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն բազում անօրէնութեանց մերոց, ըստ մարգարէին Դաւթի, թէ «Այս ամենայն եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց»[16]։

Եւ մինչդեռ յայս տրտմութեան և շփոթի կայաք, հասին ի վերայ մեր այլ ցաւք և հեծութիւն, այս է՝, սաստիկ մահ տարաժամք, թէպէտ վաղուց հետէ տարածեալ էր աշխարհս մեր ի տեղիս տեղիս, իսկ յայժմս զօրացաւ և սաստկացաւ յոյժ, զի ոչ մնաց քաղաք կամ գիւղ կամ գաւառ առողջ ի ցասմանէս. և փոխեաւ ամենայն ոք ի պատուհասէս օտար
7ա ||տեղիս, հեռանալով տանց և ի բնակութեանց, մինչ զի ոչ մնաց շինութիւն, այլ յամայի դարձան գիւղք և քաղաքք։ Եւ այս Գ (3) ցասումն վաղուց հետէ մտեալ էր յերկիրս. այս է՝ սուրն, սովն և մահն, որպէս ի հնումն՝ ի ժամանակս Դաւթի։ էր Աստուծոյ եկեալ և յայժմ ի մեզ այն հաստատեալ. զի ահ մեծ և երկիւղ անկաւ ի սիրտս բնակչաց, որպէս և տիրախնամ, աստուածապահ մայրաքաղաքն բարէլի Էվ, յորմէ փախեան ամէնէքեան. ընդ որս և ես եղկելի և մեղաւոր անձնս անարժան
7բ փախեա ընդ փա||խուցեալն ի փախուստ յերեսաց ահի բարկութեանն Աստուծոյ առ ժամանակ մի մինչև անցցէ բարկութիւն Տեառն, ըստ Սաղմոսին[17], ի գիւղաքաղաք մի որ կոչի Ռօհաքին, Թ (9) միլ ի Էվա[յ]: Եւ կացի անդ Գ (3) ամիս և շաբաթ մի, այս է՝ ի Վերացման Սբ. Խաչէն մինչև ի Սբ. Յակոբ[18]։ Եւ անդ[19] մեծաւ տրտմութեամբ և տառապանօք, վշտի և նեղութեան գրեցի զայս գեղեցիկ, վարդափթիթ բազմերանգ գիրքս տղօթից, բազում աշխատութեամբ, Բ (2) և Գ (3) գաղափարէ օրինակելով, մինչև անցաւ բարկութիւնն Աստուծոյ և ծագեաց առաւօտ[20]։

367

ՄԱՇՏՈՑ

Երևան, №4961 (ԺԵ դար). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» հտ. Ա, № 722, էջ 203 ա, Ձեռ. № 6333, էջ 13 բ, հիշտ. № 60

Հետ. ստացող, նվիրատու՝ Եւագր երէց
Վայր՝ Վէշտոնք

135բ Փառք..., որ ետ յօժարութիւն տկար անձինս Եւագր երիցու գնել զսր. գիրքս յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց տէր Վարդանին՝ հօր

---

16 Հմմտ. Սաղ. Լէ, 19։

17 Սաղ. ՃԵ, 23։

18 Այսինքն՝ 1627 թ. սեպտեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 24-ը։

19 Մահ տարածամի հատվածում «Ուղեգրութիւն...» աշխատության մեջ կան փոքրիկ շեղումներ ես. իսկ վերջին մասն այսպէս է. «Եւ անդ՝ մեծաւ տրտմութեամբ և սգով կացեալ, մինչև ծագեաց առաւօտ խաղաղութեան ամենողորմ Տեառնէ մերմէ և անցաւ բարկութիւնն. զոր գոհացողական փառս մատուցաք Աստուծոյ, որ փրկեաց զմեզ արժանահաս մահտարաժամէն. ապա եկաք ի տուն և ի բնակութիւնս մեր. փառք Աստուծոյ» [էջ 382]։

20 Ն. Ակինյանը կարծում է թե «ծուցակագիրը (իմա՛ Հ. Թոփչյան—կազմ.)... դիտմամբ կամ ոչ դուրս ձգած է նաև գրչին անունը» (տե՛ս, նույն տեղում, էջ 396)։ Ինչպես տեսնում ենք, մեզ հասած բնագրի մեջ չի պահպանվել գրչի անունը։

իմոյ, և մօր իմո[յ] Գօզալին, *և իմ որդոցն՝* Պետրոսին *և* Յոբին, Յովանիսին *և* Մխիթարին, *և թոռանց* Պետրոսին *և* Յովասափին, *և մօր* Գօզալին. *որ զողորմին ասէ՝ Աստուած իւրն ողո[որ]մեսցի. ամէն։*

Եւ դարձեալ աղ[աչ]եմ զհանդիպողս այսմ լուսազարդ կտակիս, յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զԵւազրիոս *երէցս և զվերոյ գրեալսն զամենեսեանսն, որ ստացաք զսբ. գիրս ի հալալ վաստակոց մերոց և տուաք յիշատակ ի դուռն Ս. Յակոբին և Ս. Սարգսին և Ս. Գրիգորին, ի գեաւղս* Վէշտոնք[21], *ի թուականիս Հայոց ՌՀԶ (1627)։ Եւ արդ՝ կացցէ սա անշինչ յիշատակ ի դուռն սրբոցս. և մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի մերոց կամ յօտարաց...։*

368

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան, № 146.

Ստացող՝ Գրիգոր վարդապետ

ա

399ա *Արդ՝ ես* Գրիգոր *բանի սպասաւորս, նրաստս և յիտինս ի վարդապետաց, յերկրէն* Տարաւնոյ, *ի քաղաքէն* Մշոյ, *ամուսնացեալ ըստ կարգի աշխարհի և կոչեալ ի կարգ քահանայութեան։ Ի ՌՀԶ (1627)*[22] *թվին փոխեցաւ կին իմ Բ (2) որդովք առ Քրիստոս. և իմ ապաւինեալ առ Ս. Հոգին հետևեցա ընթերցման գրոց և եկեալ աշակերտեցայ սբ. և երջանիկ բարունապետին* Հայրապետ *վարդապետին* Ղուլքեցոյ, *կացեալ առ ոտս նորա և ի նմանէ ընկալայ գաւազան և աստիճան վարդապետութեան։ Եւ մինչ դեռ յաշակերտութեան էի, ցանկացող եղէ այսմ գրոց և ետու գրել զսա ի հալալ արդեանց իմոց, ի վայելումն անձին իմոյ և*

399բ *յիշատակ բարի ինձ և ծ//նաւղաց իմոց և ամենայն ազգականացն։*

Արդ՝ որք հանդիպիք այսմ անմահական սեղանոյս և աւգտիք ինչ ի սմանէ, յիշեցէք ի սբ. և յերկնագնաց աղաւթս ձեր, զիս զԳրիգոր *բանի ըսպասաւորս և զծնաւղս իմ* զԹաքուլն *և* զխանումն, *և զկողակիցն իմ՝* զԼոռեհանն, *և զորդիքն՝* զԹաքուլն *և* զՊարսամն, *զեղբայրն իմ՝* զՄիրզէն, *և զկողակիցն իւր՝* զՂիմաքն, *և զորդիքն՝* զՅովանէսն *և* զՅակոբն, *զդստերքն՝* զՍուլթանն *և* զՓաշաբեկինն, *և զքուրն իմ՝* զՄանլուրն, *և զփեսայն* զԴանիէլն, *և զորդիքն իւր՝* զՍամուէլն, զՎարդանն, զՄելքեսէքն *և* զՄարգարէն, *զմեծ պապն իմ՝* զՁիթախն *և զկողակիցն իւր՝* զՇանգադէն, *և զորդին՝* զԵդիէն, *զկողակիցն՝* զՀռիփսիմէն, *զորդիքն՝* զՄուրատն *և* զՁիթախն, *զքուրն՝* զՇուշան, *զհարեղբարքն իմ՝* զՓանոսն. զՍիմէոնն *և* զՄինասն, *զաներն իմ՝* զԲաղդասարն, *և զկողակիցն իւր՝* զՊզտիկխաթունն, *զորդիքն՝* զՊարսամն *և* զՄեսրոպն, *և զդստերքն՝* զՄամխաթուն։

---

[21] Ղ. Փիրղալեմյանը գյուղի մասին տեղեկացնում է. «Ի Բզնունիս ի սահմանս Արծկոյ ներկայիս (այսինքն՝ 1865 թ.—կազմ.) վերոյիշեալ գիւղ և վանքն անբնակ կան» (էջ 203 ա)։

[22] Այս թվականն, անշուշտ, չի վերաբերում ձեռ-ի գրչությանը, այն եղել է ավելի ուշ, բայց հիշատակարանում այդ մասին ստույգ տվյալ չկա։ Ուստի սույն ձեռ-ի գրչությունը պայմանականորեն դրինք 1627 թ. շարքում։

400ա Դարձեալ [յիշեցէք] զհոգևոր հայրն իմ և զուսուցիչն՝ զտէր Հայրապետ բարունապետն, և զհայրն իւր՝ զմահդասի Պարիշախն, և զմայրն իւր՝ զՇաղբեկին, և զեղբարքն իւր՝ զտէր Աբրահամ կրաունաւորն և զՍահակն, և զկողակիցն իւր՝ հանգուցեալ զԳաւզալն և զԽանաղէն, և զորդիքն՝ զՆագարն, զՅովանէսն, զՍարգիսն և զՄարտիրոսն, և զսանն իմ՝ զԳրիգորն, և զամենայն ազգատոհմս իւրեանց։ Նաև զհոգևոր եղբարն իմ՝ զԴիլաքն, և զորդիքն իւր, որ գրոցս դրելոյն եղև աւժանդակ, յիշեցէք զսոսա զամենեսեան ի յոյսն ամենայնի տէր մեր Յիսուս Քրիստոս...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՀոիփսիմէն որ ողորմութիւն ետ դրոցս գրելէն։ Նաև զՂուլիջան և զիւր կողակիցն՝ զՄարգարիտն, և զիւր որդին՝ զԱմիրիանն, զՄարիամ յիշեցէք... ամէն։

Բ

Գրիչ՝ Մեսրոպ դպիր

322բ Ջստացող լուսազարդ և գերապայծառ սբ. տառիս զտէր Գրիգորն, և զծնօղսն իւր, յիշեցէք ի Քրիստոս Աստուածն մեր։ Նաև զմեղօք մեռեալ գծող զՄեսրոբ դպիրս և զծնօղս իմ, աղաչեմ յիշել ի տէր Յիսուս... ամէն։

369

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 295

Գրիչ, ծաղկող՝ Աղազար երէց

ա

273բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս[23] // որ ետ կարողութիւն հասանել զաւարտ գրոյս ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչիս Աղազար Էրէցս։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղա[ւ]թս ձեր, մեր մեղացն թողութիւն խնդրեցէք ի Աստուծոյ...։

Ի թվականիս Հայոց ՌՀԶ (1627)։

Բ

118բ Անմեղադիր լերուք ծաղկիս խոշորութենէն, դեռ ևս վարպետ չէի տեսեալ. զի իմ գլուխ լրբութեամբ ձեռնատրեցի, ոչ թէ այլ ևս իցեմ ծաղկի կամ գրի ձեռնտուել. առաջինն է, զայս է։

370

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 706

238բ Գրիգոր վարդապետն որ ի Լէհն գնացն է ի թվին ՌՀԶ (1627)։

---

[23] Հաջորդ տողը «ի թվականութեանս Հայոց ՌՀԶ» ջնջված է. իրականում ճիշտ կլիներ եթե ջնջվեր նաև «Արդ գրեցաւ»-ից, քանի որ հաջորդ նախադասությունը չի կապվում նախորդի հետ։

371
ԽԱՉՏԵՏՐ
Երևան, № 761 (ԺԴ դար)

Կազմող՝ Պօղոս
Վայր՝ Մաղարդավանք

95ա Զվերջին ըստացաւղ փոքրիկ խաղտետրիս, յիշատակ տէր Ըստեփանոսին, և եղբաւրն՝ Մուրատին, և եղբաւր որդոյն՝ Աստուածատուրին, ե իւր որդոցն՝ սարկաւագ Աւետիկին, Գրիգորին: Կազմեցաւ խաղտետրս ձեռամբ Պօղոս անարժանի, ի դուռն Ս. Ըստեփաննոս Նախավկային, որ կոչի Մաղարդավանք:

Թվին ՌՀԶ (1627)։

95բ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք տէր Ըստեփաննոսին և իւր ծնաւղացն. ամէն։

372
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ
Երևան, № 1302. տե՛ս նաև Հ. Ոսկյան, Սերաստիայի վանքերը, էջ 98

Գրիչ՝ Մաթէոս եպիսկոպոս
Վայր՝ Խուլայ վանք

297բ Գրեցաւ և աւարտեցաւ Քաղուածոյս Մաթէոս աւետարանչին ի թվին ՌՀԶ (1627), ձեռամբ տղեղծ և լոկանուն Մաթէոսի, որ չեմ արժանի զանունս եպիսկոպոս ասելոյ, ի խնդրոյ արի և քաջ բաբունոյ վարդապետին Մկրտչի, ի վայելումն անձին իւրոյ, զոր տէրն Քրիստոս վայելել տացէ երկար ժամանակաւ և առողջ անձամբն։ Գրեցաւ սբ. գիրս ի յերկիրն Խարբերդու, ի վանքն Խուլայ, առաջնորդութիւն սբ. ուխտիս Խաչատուր եպիսկոպոսին։

373
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1598

Գրիչ՝ Ներսէս երէց

ա

291ա Եւ զմեղաւոր գրիչս յիշեցէք, Հայր մեր...։
Ես անարժանս ամենայնի,
Ներսէս քահանայ անունս կոչի,
Այլ ի գործոց խիստ եմ հեռի,
Անմիտ, յիմար և փանաքի։

Երանեալ է այր, որ երկնչի ի Տեառնէ, զպատուիրանս նորա. նա կամի յոյժ։

Գրեցաւ գիրս թվին ՌՀԶ (1627), ձեռամբ Ներսէս իրիցուն, որ գրեցի զսա լաւ և ընտիր օրինակէ. ամէն։

Բ

293բ Փառք քեզ Աստուած որ զամէն ծածուկ բանն յայտներ ես ի ձեռն գիտնոց և իմաստնոց, բայց փափագողք պիտի, որ իմանան և ուսանին։

374

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2147

Գրիչ՝ Մինաս

ա

93բ Թվի ՌՀԶ (1627)։ Բանալի՝ առաջի գիրն Դան էր և տանուտէրն Ի, վերևն Եկաւորն էր...։

Բ

94ա Պարզատումարս գովելի,
է գեղեցիկ և պիտանի,
Զբոլոր տարին յինքեան ունի,
Եւ ցուցանէ զամէնն յայտնի։
Յեթներեակն ըսկսանի,
Հռովմայեցոց ամսով վարի,
Մինչ Յայտնութեան բարիկենդանի,
ԽԶ (46) թիւ համարի։
Հինգհարիւր ամ անցանէ,
ԼԲ (32) յարաբարդի,
Այսքան ամաւք վերջքն լինի,
Դարձեալ յառաջքն ըսկսանի։
է սահմանած անփոխելի,
Մինչ ի գալուստն Քրիստոսի,
Որք [ը]նթեռնուք սիրով սրտի,
Ցիշման արէք զիս արժանի,
ՁՄինաս անուն մեղաւք ի լի[24]։

375

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3189

Գրիչ՝ Ղուկաս աբեղայ
Վայր՝ Եղբրդուդոյ վանք

ա

143ա Գրեցաւ Խորհուրդս պատարագի յանախ բանիւք լաւ և յընտիր աւրինակէ, ձեռամբ յանարհեստ գրչի Ղուկաս աբեղայի, ի թուին ՌՀԶ (1627), ի դուռն Ս. Յովաննու Մկրտչին, որ Եղբրդուդոյ վանք կոչի[25], ընդ հո-

[24] Մինասը ձեռ-ի մի մասի գրիչն է։

[25] Գտնվում է Տարոնում, Մշո դաշտի հարավ-արևմտյան մասում, Սիմ լեռան անտառախիտ լանջին։

վանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Ստեփանոսի Նախավկային և Ս. Գրիգորի մերոյ լուսաւորչին և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց՝ հոգևորացն և մարմնաւորացն։ Եւ որք հանդիպիք...։

Բ

14բ Ղուկաս գրեցի, ո՛վ եղբայր, թէ /// երէնէ, ապա բան լաւ երևեցաւ։

Գրիչ՝ Մարտիրոս

Գ

73ա Յ[ո]րժամ կարդաս զբանս և ասես,
Որ ընթեռնուստ և լըսես,
Զեղկելի Մարտիրոս գրիչս յիշես,
Եւ ողորմի դու ինձ ասես[26]։

377

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4204 (ԺԶ դար). տե՛ս նաև «ՀԱ», 1905 թ., էջ 203, № 2, ՑՔԱԻԱ, № 2, էջ 3

Հետ. ստացող՝ Խոջայ Սաֆար

265ա Զվերջին ըստացողի սբ. Աւետարանիս, որ մեծաւ փափագանօք ե հաստատուն յուսով ի հալալ ընչից իմոց ստաց[ա] զսբ. Աւետարանս, ժառանգ և յիշատակ ինձ Խոջայ Սաֆարին և հաւրն իմոյ՝ Շամշադինն, և ծնօղաց իմոյ Փաշախաթունին, և կողակցին իմոյ՝ Եղիսաբեթին, և գրստերացն իմոյ՝ Վառվառին, Դշխոյնին, և որդոցն իմոյ՝ Զաքարին, Գալոցին և ամենայն արեան մերձաւորաց իմոց. ամէն։

Թվին ՌՀԶ (1627) ստաց[ա] զսայ. ամէն։

376

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 5175 (1418 թ.)

Գրիչ՝ Սիմէոն

42ա [Ն]որոգեցաւ զսբ. գիրքս որ կոչի քարոզ, [յ]իշատակ, գլուխ և պսակ, իբր զթագաւորական կնիք, զամենարշանիկ և զգերապատիկ սբ. բաբունապետ, որ է մեր ետ ստացողին ըստացօղ, նախախնամողին խնամօղ. որ ետ նորոգել զսա Յակոբ վարդապետն [յ]իշատակ հոգոյ իւրո[յ] և իւր ծնօղացն, հօրն՝ տէր Շմաւոն նահատակին, և մօրն՝ Ազիզփաշին, և եղբօրն՝ Ղուլինանին, և նորին կողակցին՝ Սոլթանին, և նորաբոզբոշ որդոցն՝ Երիճան սարկաւագին, Զալապին. և քւերն՝ Խտ-

[26] Ձեռ-ի 89ա—90ա էջերում, սկզբից թերի մի չափածո կա, որի վերջին քառյակում ասում է, թե այն գրվել է 1632 թ. փետրվարի 29-ին, Վենետիկում (էջ 90ա)։

նումաղին, յիշեցէք ի Քրիստոս։ [Դ]արձեալ յիշեցէք զհօրեղբայր որդին իմ՝ զպարոնտէր Մանուէլ արհեպիսկոպոսն, և հայրն իւր՝ պարոն Միրմանն, և մայրն իւր՝ Խանփարուարն, յիշեցէք...։

[Դ]արձեալ յիշեցէք և զիս անարժան Սիմէոնս, աղաչեմ զձեզ. ի թվականիս ՌՀԶ (1627)։ Աստուած ողորմի Խանպէկին, որ սունկ և անյիշատակ է <չունի>։

42բ Դարձեալ յիշեցէք աստուածասէր Գրիգորէսն մարդասէր, որ է ողորմած, և հիւրընկալ և բարեպաշտ և կողակիցն՝ Գուզալն, որ հիւրն հէնց կու պաշտեն իբրև զհրեշտակ, եղբայրն իւր՝ Առեաքելն և կինն նորա՝ Արզոքանն, որ մեզ վերայ աշխատանք ունեն. Աստուած զիւրեանց մեղքն չնչէ[27]։

378

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Երևան, № 5324, տե՛ս նաև «Արծուի Վասպուրական», 1859, էջ 126—128. Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա, էջ 317—318, № 6333, էջ 78բ—79ա, № 324, ՊՊԹ, № 660

Գրիչ՝ Սահակ աբեղայ
Վայր՝ Վարազ

ա

445բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղսասէր անձին Սահակ անարժանի հասանել ի յաւարտ լուսազարդ սբ. տառիս, որ Հարանց վարք կոչի, ի խնդրոյ հոգիընկալ և քաջ վարժապետի և բաբունապետի Մարտիրոսի, որ մեծաւ հաւատով և եռափափաք սիրով ետ գրել ըզտենչալիս ոգւոյ և զգերահրաշ իմաստութիւն և զոգէշահ լուսաւորութիւն վարդապետութեան իւրոյ, յիշատակ հոգոյ իւրոյ բարեսիրի և ծնօղաց իւրոց Կարապետին և Ջանաղին, և եղբարցն՝ Աւետիսին, Մուրադին, Ղազարին՝ փոխեցելոցն առ Քրիստոս, և քրւերն՝ Գուլզաղին, և որդոյ նորա Յովասափ քահանային, որդոյն՝ Դիլանջուն, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոցն. և Ջուղեցի հոգևոր եղբօրն՝ խոջայ Էզդանբաիշին, և իւր որդոցն և ընդանեացն ամենայնի, որ կամակից և ձեռնտու եղև սբ. գրոցս։ Եւ դուք պատուական և հոգևոր հարք և եղբարք մեր ի Տէր, յորժամ հանդիպիք տեսութեամբ սորայ՝ կարդալով
446ա կամ օրինակելով, նա[ե՞] // սբ. սրտիւ և բոլոր հաւատով, Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրեցէք յիշեցելոցն ի սմա, և դուք յիշողդ թողութիւն և արքայութիւն գտջիք. ամէն։ Դարձեալ աղաչեմ զձեզ... յիշեցէք... յաղօթս ձեր զվերոյ գրեալսն ի սմա զՄարտիրոս վարդապետն և զիւրքն ամենայն, հանդերձ ծնօղաք և ազգականաք. զխոջայ Էզդանբախշն, զհոգևոր եղբայրն իմ, և զորդիքն իւր, և դուք յիշեալ լիշիք առաջի Աստուծոյ. ամէն։ Եւ արդ՝ ես յետնեալս և անպիտանս ի մանկունս եկեղեցոյ, ունայնս և թափուրս... Սահակ սուտանուն աբեղայ, օգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարի սբ. գրիս պատմութեանց և վարուց սբ. հարանցն, և ողորմութեամբ նորին աւար-

[27] Խիստ համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 723, էջ 203 ա։

տեցի զսա ի յերկիրս Վասպուրականի, ի մայրաքաղաքս վանորէից Վարաք, ընդ հովան[ե]ալ Աւաք Ս. Նշանիս, և յայլ է (7) սբ. տաճարացս, որ կառուցեալ կան յանուն սրբոց և ի պահպանութիւն երկրիս, ի թուականութեանս մերում հայկազան տօմարի Ռ և ՀԶ (1627) ամին, առ ոտս երշանիկ ռաբունապետին և առաջնորդի վանիցս Մարտիրոս հռետորի, և յայլ միեղէն վարդապետացս տէր Նէրսէսի, և տէր Զաքարիայի, և Մուրգարայ եպիսկոպոսի, և միւս տէր Ներսէսի, և տէր Յոհանիսի, և մահդասի տէր Պարսամի, և յայլ միաբան եղբարցս տէր Յակոբ վերակացուի, և տէր Մովսէս լուսարարի, որ աշխատեցաւ ի նշայել սորա, և տէր Յովանիսի, և տէր Մկրտչի, և տէր Ստեփանոսի, և տէր Սարդիս հացթուխի, որ կան ի սպասաւորութիւն սբ. ուխտիս[28], զոր հայրախնամ դթով և եղբայրական սիրով զանարժանս իբրև արժանաւոր ընդունէին, հոգևոր և մարմնաւոր պիտոյիւք ըստ կարեաց իւրեանց, որ չեմ արժանի, զոր և զփոխարէնն ի յԱստուծոյ ընկալցին և արժանի լինին ձայնին, որ ասէ. «Ընկայք ծառայք բարի և հաւատարիմ մուտք յուրախութիւն Տեառն. ամէն»[29]։

Դարձեալ զերեսս ի գետին դնելով աղաչեմ զամենեսեանդ... միոյ ողորմեաի արժան արէք զանարժան և զմեղաւոր գրչիկս և զուսուցիչն իմ զՍտեփանոս քահանայ, հանդերձ ծնողօք մերովք, և զմահդասի խլղաքն, որ կայր ի սպասաւորութիւն անարժանիս, և որ բոլոր սրտիւ զԱստուած ողորմին մեզ ասէ, Աստուած իւրն ողորմեսցի...։ Այլ՝ն մանրութեան և խոշորութեան դրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, և յօրինակն Զ (6) ցեղ գիր էր. և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։

446բ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՄարտիրոս վարդապետն, և զհոգևոր եղբայրքն իւր՝ զխօջա Մելիքն և զուր որդիքն՝ զխօջա Աւէտն, և զկողակիցն՝ զՇախսօլթան, որդոցն Աւտիսիսն՝ Սաֆարին, խօջա Շիրամին, կողակցուն՝ Սթիլանին, որդոցն՝ խօջա Մարութին, Բէկզադին, Մէլիքզադին, Նազարին, Սինամարիմին՝ փոխեցելոյն, Ղազարին, խօջա Ամիրաղին, և որդոցն՝ Ամիրզադին, որ փոխեցեալ են առ Քրիստոս, Շենիջանին, Ամիրխանին, Նուրիջանին, խօջա Աւէդին, մօրն՝ Աղանանին, և կողակցուն՝ Նուրիխանին, որդոցն՝ Խօջամիրին, Զիրամին, Միրումին, խօջա Էզդանին, կողակցուն՝ Գուլիստանին, որդոցն՝ խօջա Ամիրջանին, Աղամիրին, Նազարին, խօջա Բաղդասարին, կողակցոյն՝ Ադասուն, յիշեցէք... ամէն։

Բ

4ա Ըստ առաջին կարգին և ըստ առաջին յիշման, զոր գրեալ կա ի սմա, յիշեցէք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սբ. գրոցս զաստուածասէր և զհաւատարիմ դօլաթաւորն Զուղեցի զխօջայ Էզդանբախշն, և զծնողսն իւր՝ զԱլադատն և զՈւսթիանէն, և զկողակիցն իւր՝ զԷաբիխան, և զորդիքն իւր՝ զՊետրոսն, զԴիշխուն, զԴունիջաֆարն,

[28] Մինչև այստեղ տե՛ս նաև Ղ. Փիրզալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 721, էջ 202 բ։
[29] Մատ. ԻԵ, 21, 23։

զՍահրատն, և զեղբարքն իւր՝ զԹեղան և զՊետրոսն, և զքուերքն իւր՝ զեղիսաբեթն և զՇուշան և զԳարիանէն, և զմեծ պապն իւր՝ զեզդանբախշն, և զհանիկն իւր՝ զՀալխաթուն և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն, որ ստացան զսա կամակցութեամբ և աւգնականութեամբ մեծ բաբունապետին Մարտիրոսի, յիշատակ բարի հոգոց իւրեանց, և ծնողաց և ազգականաց իւրեանց, ի հալալ և յարդար ընչից իւրեանց, և ետուն ընծայ և նուէր ի դուռն Աւաք Ս. Նշանին Վարագայ: Եւ ով որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով...։

Գ

40բ Ա՛հ, ի քամու դարդէն բանս ձեռ չի տար։

Դ

171ա Ո՛հ, ո՛հ զառաշի պատկերի տեղն մոռացայ ի բացատ թողուլ, անմեղադիր լեր պատուական ծաղկող. ի վերին լուսանց նկարի նշանով։

Ե

304ա Ո՛վ սբ. ընթերցողք աղաչեմ յիշել և զանպիտան գրիչս զսուտանուն Սահակ մեղաւոր աբեղայ, և դուք յիշեսջիք ի յոյսն ամենեցուն՝ Աստուած։ Գրեցաւ ՌՀԶ (1627) թվին։

Զ

414բ Բարեխօսութեամբ... վերոյ դրելոցն ի տառս յայս ողորմեա՛ Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս Մարտիրոս բաբունապետին, և ծնողաց նորին, և որ ի սբ. գիրքս աշխատանք ունին, և օրինակի շնորհողին, և ինձ անյիշելի և անարժան սուտանուն Սահակ մեղաւոր գրչի, և ուսուցչին իմ՝ Սաեփանոս քահանայի, և ծնողաց մերոց, և որոց ի վերայ մեր հոգևոր և մարմնաւոր երախտիք ունին։

Եւ քեզ Տէր փառք...։

Ռ և ՀԶ (1627) թուին գրեցաւ[30]։

379

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 5560 (1285 թ.)

Կազմող՝ Կարապետ աբեղայ

257ա Դարձեալ յիշեց[էք] /// [Հայրա?]պետն, որ ետ վերըս[տին] /// [կազմել ? յայս սբ.] գիրքս, յիշատակ իւր [հոգւոյն և իւր ծնաւղացն, հաւրն՝] Յովասափին և մաւրն՝ /// [և ամենայն] արեան մերձաւորաց՝ կենդ[անեա]ց [և ննջե]ցելոց, և որ զողորմին ասէ, Աստուած իւրն ող[որմեսցի] յաւուր դատաստանին. ամէն։

Կազմեցաւ սա ի թվին Ռ և ՀԶ (1627), ձեռամբ սուտանուն Կարապետ խաբեբայ և ոչ աբեղայ, որ միայն զանունս ունիմ և զգործս ոչ։ Եւ որ զմեզ յիշէ...

[30] Այսպես, երբեմն ավելի համառոտ կամ չափածո հիշատակարաններ գտնում ենք նաև 278 բ—279 ա, 339 ա, 371 ա, 406 ա և այլ էջերում։

380

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 5664

Գրիչ, ծաղկող՝ Կիրակոս Աւրնդանցի

Վայր՝ Աւրնդանց

ա

Փառք...։

440ա Այս մատենիս աստուածաբան,
Զանազանեալ ականցս որ կան,
Տէր Սիմէոն այրն պատուական,
Բաբունապետ ւ յոյժ գիտնական։
Վարիւք փայլեալ հրեշտակական,
Վարժեալ ի վարս ճրգնողական,
Խոնարհ հոգւով և հեզաբան,
Եւ խրատիչ որդոց մարդկան։
Փափագեցաւ իբր զեղջերայն,
Ցաղբերս ջուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացըս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Կիրակոս հողս և անարժան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւոյս յօժար և ժրական,
Գծագրեցի զսա ի լման,
Եւ ծաղկեցի զսա զանազան։
Ի թվականիս Ռ ամեան,
ԿԴ թիվ ընդ նմայն (1615)[31],
Աւարտեցաւ սայ ի լրման,
Դառն և ի նեղ ժամանակեան։
Որք հանդիպիք սրմայ տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Միշտ ասացէք զՏէր ողորմայն,
Եւ յետ նորա զՀայր մեղայն։

440բ Եւ արդ՝ գրեցաւ և ծաղկեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս, և խընկալի տուփս..., որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր օրինակէ, որ Խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի, մեղաւոր Կիրակոսի Աւրնդանցւոյ, ի թվականիս Հայոց ՌՀԶ (1627), ի գառն և նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց. քանզի ևս քան զևս սաս[տ]կանայ բռնութիւն և նեղութիւնս ի վերայ

[31] Քանի որ ձեռ-ի ավարտումը ներքևում նշված է 1627 թ. թերևս այստեղ նշված ՌԿԴ (1615) սխալ է և պետք է լինի ՌՀԴ (1625)։

աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Եւ արդ՝ ես անպիտանս և անիմաստս ի գրչաց, աւտարացեալ և հեռացեալ յամենայն բարի գործոց, հող և մոխիր Կիրակոսս, մեղօք լցեալ և ապականեալ, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ.
441ա գիրքս, որ կոչի Շարակնոցս, // բազում աշխատութեամբ և չարչարանօք ի գեղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Ս. Պետրոսի և Պողոսի և Ս. Գէորգեա[յ] զօրավարին։ Վասն որոյ երեսս ի գետին դնելով կողկողագին պաղատանօք աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, զի լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք մեղաւոր գծողիս և իմ ծնօղաց Մուսէսին և Թուխիկին, և կենակցին իմոյ՝ Մուաքին, և իմ զաւակացն՝ Մուսիսին և Գօճար սուտ մահդասուն, Գոգալին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց. ամէն։

Դարձեալ յիշեցէք.... Սիմէոն վարդապետին Ապարանից, և իւր ծնօղացն և ամենայն արեան մերձաւորացն, որ ստացաւ զՇարակնոցս, յիշատակ հոգւոյ իւրոյ, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս
441բ տառիս մինչ որ ստացաւ և հասաւ փա//փա[կա]նաց իւրոց, յիշեցէք...

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս զաւելորդն բառնայք և զպակասութիւն լնուք, և խոշորութեան և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, լալով և պաղատանօք... ողորմի ասացէք ստացողի սորա զշնորհալի և զշնորհազարդ... Սիմէոն վարդապետին, և իւր ծնօղացն և ինձ մեղապարտ Կիրակոսիս, և իմ ծնօղացն, ևս առաւել վարպետին իմոյ՝ տէր Սարգիս Հիզանցոյն, միթէ լսել տայ ձեզ Քրիստոս Աստուածն մեր զե[32]

381

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5816. տե՛ս նաև № 6333, էջ 96 բ, № 400

Վայր՝ Վան

ա

Փառք...։ Աւարտեցաւ հոգիաբուխ սբ. տառս որ կոչի Մաշթոյց, որ
188ա սով//աւ կատարի եւթն խորհուրդ սբ. եկեղեցոյ և ամենայն աւրէնք, և պատուիրանք, և թէ մահոյ, և թէ կենաց սովաւ աւրհնին և պահպանին։

Զի սա է աղ և համեմիչ ամենայն օրինաց և պատուիրանաց քրիստոնէից. զի զախտի ծնունդն մկրտէ, և կնքէ, և հաղորդէ, և Որդի Աստուծոյ առնէ։ Եւ դարձեալ զաւտարն և զկինն որ չեն ազգական, և կնքած է երկուսն ի մի յաւազան՝ միաւորէ և պսակէ խաչիւն և շնորհօքն Աստուծոյ։ Եւ ապա տա հրաման՝ ամուսնութեան և որդէծնութեան։ Եւ դարձեալ մեռանիմք մահուամբ հաղորդէ զյետին թուշակն, և աւրհնեալ հողոյ և կնքեալ գերեզմանի արժան առնէ, և այլ բազում խորհուրդ
188բ սովաւ // կատարին։

[32] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

Արդ՝ գրեցաւ ձեռամբ անարժան գրչի, ի թվականիս մերում ՌՀԶ (1627) ամին, ի քաղաքս որ կոչի Վան, *ի դուռն Տիրամօրայ Ս. Աստուածածնին և Ս. Հրեշտակապետին*[33]*։ Եւ արդ՝ ցանկացող եղեալ այսմ սբ. գրոցս բարեմիտ և աստուածասէր* Փիրիջանին[34]. *հօր* Հէրապետին *և մօր* Շայումին, *կողակցոյն՝* Ղալաբէկոյն, *որդոցն՝* Գրիգորին, Խլղաթին, Ղարիպջանին, *դստերն՝* Նուբարին, *եղբարն՝* Սարխոշին, *կողակցուն՝* Էթարին, *որդոցն՝* Ումրիջանին, Փախշանին, Թումաջանին, *դստերացն՝* Սոլթանին, Աղաբէկոյն, *միւս եղբօրն՝* Վանիսին. *Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։*

Բ

44ա *Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա՛ ղստացողի սբ. գրոցս տանուտէր* Փիրիջանին, *հօր* Հէրպետին, *և մօր* Շայումին, *կողակցոյն՝* Բէկոյն, *որդոցն՝* Գրիգորին, Խլղաթին, *դստերն՝* Նուբարին, Շամամին, Աղալալին, *և հետ եկօղին. ամէն։*

Գ

68ա *Քրիստոս Աստուած լուսաւորայ զհոգի ստացողի սբ. գրոցս* Փիրիջանին, *եղբօրն՝* Սարխոշին, Վանիսին. *ամէն*[35]*։*

382

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5872

Գրիչ՝ Զաքար

ա

245բ *Փառք...։ Զոր լուեալ* Վարդանէս... *ետ գրել զսա ի հալալ յարդեանց իւրոց և յարդար վաստակոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց։ Եւ ես տեսեալ զյաւժար կամք նորա և զսէրն, որ առ Աստուած առեալ, գրեցի ի դուռնս Ս. Նշանին, ձեռամբ սուտանուն* Զաքարիս, *ի թուականութեան*
246ա *Հայոց Ռ և ՀԶ (1627) // ամի։ Գրեցաւ տառս որ կոչի Մաշթոց, ի յանուն* Վարդանէսին, *զոր տէր Աստուածն մեր ընկալցի զսա և ընդունելի արասցէ...։ կողակցոյն՝* Դեղծունին, *որդոյն՝* Շար[ա]միրին, Գուլայ-միրին, Ստեփանոսին, *քւեր* Շաղսալթանին, *եղբարն՝* Յովանէսին, *կողակցոյն՝* Խանաղին, *որդոյն՝* Աբրահամին, Խլղաթին, *ծընաւղաց տէր* Ստեփանոսին, *կողակցոյն՝* Թուրվանդին, *դստեր* Ալամին, Սալթանին, Գաւդալին, Սառին, Կարայտեանին, *կողակցոյն՝* Շաղսալթանին, Սրապիոնին. *ամէն...*[36]*։*

246բ *Դարձեալ Աստուած ողորմի ասացէք ըռէս* Վարդանէսին, *[յ]որժամ տ[ա]ն տեղն գնեց ու շինեց, արար ոխֆ ի վերայ*[37]

---

33 *Մինչև այստեղ համառոտ տե՛ս* Ղ. Փիրզալեմյան, *Նշխարք, հտ. Բ, № 488, էջ 407։*

34 *Այստեղից այլ ձեռագրով։ Թվում է հետագայի ավելացում է։*

35 *Այս հիշատակարանը կրկնվում է մեկ-երկու էջում ևս։*

36 *Նշված անունները նորից կրկնվում են։*

37 *Հիշատակարանն այստեղ ընդհատվում է, թուղթ է ընկել։*

Բ

159ա ...Նորոգումն շնորհեա՛ Քրիստոս Վարդանէսին, կողակցոն՝ Դեղ-ծունին, որդոյն՝ Շարայմիրին, Ստեփանոսին, Գուլամիրին, քւեր Շաղ-սուլթանին, եղբաւրն՝ Յովանէսին, կողակցոն՝ Խանաղին, որդոյն՝ Խըլ-զաթին, Աբրահամին, իւր ծնաւղացն՝ տէր Ստեփանոսին, կողակցոն՝ Թուրսնղին, իւր դստեր Ալամին, Վարթխաթունին, Կարապետին, կողա-կցոն՝ Շաղսալթանին, Սրապիոնին. ամէն[38]։

383

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6319 (1476 թ.)

Նորոգող՝ Յոհանէս Շատախեցի

Վայր՝ Խորանաշատ

230ա Զվերջին նորոգիլ տվող սբ. Աւետարանիս հեզ, հանդարտ, նայև բազմաց գովելի, արդունակաց և քաշարի Յոհան արհեպիսկոպոսն, որ է ըսպասաւոր սբ. ուխտին Խորանաշատայ, վերըստին նորոգիլ ետուր սբ. Աւետարանս, յիշատակ իւրն և ծնաւղացն, հայրն՝ Դաւիթ քահանային, որ Քրիստոս է հանկուցեալ. Աստուած իւրեանն արքայութիւն շնորհէ, և մայրն իւր՝ Շիրազն. Աստուած իւրեանն արքայութիւն պարգևէ։ Դարձեալ կրկին անկամ յիշեցէք Յոհան պարոնտէրն, և պատուական եղբայրն իւր՝ պարոնտէր Ակոբն, և կողակիցն՝ պարոն Պէկումաղէն, այլ և դեռայ-բիւս և քաղցրիկ որդին իւր՝ տէր Աւանէսն, այլ և ծաղկեալ դստերքն իւր՝ Նազլուխանն, Սալանն։ Այլ և համշիրակ եղբայրն իւր՝ պարոն Դանիէլն, և կողակիցն իւր՝ պարոն Խանումաղէն. Աստուած իւրեանքն երկան աւուրս պահէ և խորին ձերութիւն հասուցանէ. ամէն։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի դառն և ի նեղ ժամանակին, ի դրան սբ. նորակնունք Աստուածածնիս, թվիս ՌՀԶ (1627)- իս, ձեռամբ սուտ-անուն Յոհանէս իրիցոյ Շատախեցի, զթափուրս ի բարեաց, զփարթամս ի չարեաց։

Վա՛յ և եղկելի Յոհանիսիս,
Որ չկա բարեաց մասն առ իս,
Ողորմի մի՛ խնայէք առ իս,
Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

384

ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 6335

Գրիչ՝ Ազարիայ աբեղայ

Վայր՝ Ստաթէի վանք

ա

204բ Փառք..., որ ետ կարողութիւն ի տկարութեանս իմ հասանել ի աւարտումն սբ. երգարանիս շնորհաւք և ողորմութեամբ փրկչին Յիսուսի

[38] Նման հիշատակարաններ կան նաև 14 ա, 125 բ, 135 ա, 178 ա և այլ էջերում։

Ազարիայ նուաստ գրչի ի Թիւայհերութեանս Հա[յ]ոց ՌՀԶ (1627) ամին։ Գրեցաւ ատենի Սաղմոսարանս ի դուռս Ս[տ]ապէի սբ. առաքելոց [ԹՌ] և ՐՃ (9800) սրբոցն [նշխ]արհացս, որ աստ կ[ան] հաւաքեալ <կա>
201ա ի մէջ տաճարիս, ի հայրապե//ատութիւնն Մեսրովբ եպիսկոպոսին, ի հրաբուն վարդապետն Մովսէս հեղ և խոնարհ, և զայլ ամենայն միաբանսն որ ի նմայ կայ, խաղաղութեամբ պահեսցէ տէր Աստուած ամէն։ Դարձեալ յիշեցէք անարժան Ազարիայ աբեղէս. անունս մի է և գործով ոչ։ ԿԹ (69) ամաց էի, տկար մարմն[ով] և աւժարութեամբ գրեցի։ Հայր իմ Անանիայ քահանայ և մայր իմ Թիլիփաշայ, և հոգւոյ հայր իմ Մանուէլ կրաւնաւոր։ Ո՛վ սիրելիք և պատուական քահանայք և սարկաւագունք, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք [գ]րողս մեղօք լցեալ, և մարմնով տորորեալ, և աչ[օ]ք պակասեալ, ձեռաւք [թուլ]ացեալ, զի կար մեր [այս էր,] թողութիւն արէք սխալանաց և խոշոր գրոյս։ Ով լաւ պահէ գիրս ի հրոյ և ի շրոյ՝ ինքն տուրհնեալ եղիցի և իւր անդանիքն. ամէն...։

Բ

97բ Ի վճարման Սաղմոսի, ո՛վ եղբարք, յիշեցէք զբազմամեղս անարժան Ազարիա սուտանուն աբեղայ գրողս և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Գ

189ա Անարժան ապիկա[ր] գրիչ, մեղապարտ Ազարիա սուտանուն աբեղայ[ս], յիշեցէք ի Քրիստոս [Ռ] Հե (1626) թվին գրեցս։

385

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 6650

Գրիչ՝ Մաւուկ

209բ Փառք...։ Զ Մաուուկ գրչիս աղաչեմ աղաւթիւք յիշե[ք] ի Տէր, ո՛վ դասք ուսումնասիրաց. ամէն։

Ի թվականիս Հայոց ՌՀԶ (1627)։

386

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7494 (ժամանակ ?)

3բ Ի թվականիս Հայոց ՌՀԶ (1627)-ին խալիլ փաշէն յԱրզրումու վերայ եկաւ, յԱպազայ փաշին յառնուլ չկարաց. Բասեն և Յազրում յաւերեց։ Մէկ քաղաքէն մէկալ քաղաքն մարդ չէր երդալ։ ամէն իրեն պարոն եղան, այնպէս դառն ժամանակ [է]։

387

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան, № 7564 (ԺԵ դար). տե՛ս նաև ՅՁՆԴԿ, № 18, էջ 40

Նորոգողներ՝ Յովհաննէս քահանայ, Սիմէոն

ա

351ա Զվերջին ըստացողի,
Սբ. գրոյս Քաղուածի,
Քաջ և արի բարձունապետի,
Տիեզերալիւր և աշխարհալուսի,
Շնորհաբաշխի և մարդասիրի,
Ճգնաղգեստ և առաքինի,
Որ է որդի հարազատի և նահատակի,
Ի մեծ ազգէն Պարթևացի,
Լուսաւորչին Գրիգորի,
Յակոբ ընտիր վարդապետի։
Արդ՝ աշխատեաց երեզ վանեաց,
Մ. Վիրապին՝ խոր կոչեցած,
Հայոց աթոռ թագ պարծանաց,
Եւ վանստանեաց,
Եւ ի Ուրծատափի վանեաց,
Աստուածածնի և Ս. Յակոբ ընդ նմին գոված։
Եւ աշխատեաց այգեստանեաց,
Տունկ և արմատ բիւրաստանեաց,
Ի շինութիւն տանեաց վախմաց, ժամանակաց,
Ի հոգևոր և մարմնաւոր առաքինեաց,
Կոչեաց զմէջ Գեղարգունեաց։
Յետ նորոգել զգիրքս ծերացած,
Որդիք Սիոն նոր զարդարեաց։

Արդ՝ աղաչեմ լալագին ես, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զրաբունապետ Յակոբ վարդապետն, որ յետ նորոգել զսայ ի հալալ
351բ ինչից յիշատակ իւր // հոգոյն և իւր ծնօղացն, հօրն՝ տէր՝ Շմաւոնին, որ նահատակութեամբ փոխեցաւ ի Քրիստոս, և մօրն՝ Ազիզփաշին, և հօրեղբայրն իւր՝ պարոնտէր Յակոբն, և միւս եղբայրն՝ Մելիքալէն, և պապն՝ պարոն Վէլիհանն, և եղբայրն՝ Գրիգոր կաթուղիկոսն, և միւս եղբայրն՝ Աղաճանն, և մեծ պապն՝ պարոն Միրզէն, և եղբայրքն իմ՝ Վելիհանն, Յակոբճանն, որ են հանգուցեալ ի Քրիստոս, և միւս եղբայրն իմ՝ հարազատ Ղուլիճանն, և որդին սորայ՝ նորաբողբոջ Նարիճան սարկաւագն, և իւր[39] որդին՝ Զալապին, և դուստրն իւր՝ Ազիզփաշէն, Խանումաղէն, Դասսաւզուլն։ Դարձեալ [յ]իշեցէք զպարոնտէր Մանուէլ արհեպիսկոպոսն, որ է առաջնորդ ի սբ. Վիրապին, և հայրն իւր՝ պարոն Միւրիմանն, և մայրն իւր՝ Խանիարուարն, և եղբայրն իւր՝ պարոն

[39] Ձեռ-ում «միւրդ» ձևով, պետք է կարդալ կամ «իւրդ» կամ «միաս»։

էլպէկն, որ է հանգուցեալ ի Քրիստոս։ Դարձեալ յիշեցէք պարոն Թանէրն, և իւր հարսն՝ Սոլթանգատէ. Գոգալն, որ է հիւրընկալ։ Եւ մեք ետնեալ քան զամենայն հող և մոխիր և անպիտանք[40]

Բ

352ա Աղաչեմք զձեզ, ո՛վ սբ. հանդիպողք, յիշեցէք և զմեզ ան[յ]իշելի և զառածեալ սուտանունքս՝ զՅովնաննէս քահանայս, որ չեմ [յ]իշելոյ և զանարժան Սիմէոնս, որ յանունս ունիմ և ոչ գործս, եթէ միով ողորմեայիւ արժան առնէք, Աստուած ձեզ ողորմեսցէ իւր միւսանգամ գալըստեան. ամէն։

Դարձեալ յիշեցէք զՄարգարէն, և կողակիցն՝ Խիկարն, և որդիքն իւր՝ Դավիթն, Բաղտասարն, Մխիթարն, և Մարգարի հայրն՝ Զաւեռուպն, մայրն՝ Թրուանգեն, Խիկարի հայրն՝ Շուղավադն, և մայրն՝ Մրուաթն, յիշեցէք ի Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք Գրիգոր մահտա<տա>սին, որ բազում երախտիք'' ունի ի վերայ Վիրապին, և հայրն իւր՝ Մարգարէն, և մայրն իւր՝ Ծամիկն[42], և միւս մահտասին Ամիրագիզն, և եղբայրն իւր՝ Թումայ կրօնաւորն, յիշեսցիք ի Քրիստոս։

Ի թվականութեանըս Հայոց ՌՀԶ (1627) էր, բարով վայելէ։

Գ

350բ Դարձեալ յիշեցէք ի յերկն[ա]գնաց աղօթս ձեր, հեզահոգի և բարէմիտ, աստուածասէր մահտասի Գրիգոր, և ծնողքն իւր, հայրն իւր՝ Մարգարէն, մայրն իւր՝ Ծամիկն, յիշեցէք...։

388

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7651 (1320 թ.)

Նվիրատու՝ Կարապետ վարդապետ

Վայր՝ Կաֆայ

274ա Ի թվականիս հայկազեան մեծ տումարին քսան և մին յոբէլինին և բարդեալ յաւելորդն առ նմա երկտասնեակ և մակ եռակ համարին (1627)[43] ես նուաստ Կարապետ պիտակ ևեթ անուամբ վարդապետս, սպասաւոր սբ. Երուսաղէմայ, եկի նուիրակ վասն պիտոյիցն սբ. Երուսաղէմայ, ի կողմս հիւսուսոյ՝ ի նահանգս Հոնաց, ի նուաճեալս յազգէն Նետողաց և Թուրքաց, ի ծովահայեաց քաղաքս Կաֆայ կոչեցեալ։ Եւ տեսի զսբ. Աւետարանս անկեալ ի յուզմունս խաւսից, այլայլմանց ի յանդուն բերան մարդկանց, որ ի բերան առեալ յիշատակս այլոց կա-

---

40 Ձեռ-ում բնագիրը կիսատ է մնում։

41 Ձեռ-ում «երախքիք,» ձևով։

42 Ձեռ-ում «ծամիկ»-ից առաջ գրված է մեծատառ «Օ», թվում է, թե «ծամիկ»-ը սկզբում փորձել են գրել մեծատառ «Ծ»-ով, սակայն թողել են, գրել փոքրատառ, այլապես այդ անունը պետք է կարդալ «Օծամիկ»։

43 Այսինքն՝ (21×50)+20+(2×3)+551։

մին կլանել, և վայ ի վերայ անձանցն բերել և յաւիտենից տանջանացն զինքեանս մատնել, զոր խափանեցաք զնոցին չար կամքն։ Ապա եթէ ոք այսուհետև՝ թէ՛ կարգաւոր, թէ՛ աշխարհական զայս սբ. Աւետարանս ի բերան բերէ, գաւի առնէ և տէր կանգնի և հակառակի՝ նայ ընդ վաճառողին Յիսուսի՝ Յուդայի պատիժ կրեսցէ...։ Այլ կացցէ սայ անջինջ յիշատակ ի քաղաքս Կաֆայ մինչև յաւիտեան։ Եւ լաւ պահողն և խնամ տարողն աւրհնեալ եղիցի յԱստուծոյ և ի սբ. Երուսաղէմայ, և ի սբ. Աւետարանէս և ամենայն ընդրելոցն նաև ի մէնջ. ամէն։

389

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 8558 (1623 թ.)

211ա Փառք..., // Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր բարեմիտ և ողորմած այրն խօջայ Աղաբէկին և զկողակիցն իւր՝ բարեպաշտ և աստուածասէր կինն՝ Նանաճանն, և հանգուցեալ ի Քրիստոս որդիքն իւրեանց՝ Աւաֆն, Ախինանն, Յակոբճանն, Մուրատճանն, Մարգարէն, Ղարիպճանն, և դստերքն՝ Վարդխաթունն, Մարգարիթն, որ հանգուցեալ են առ Քրիստոս մանուկ տիօք...։

211բ Այլ և ստացող լուսազարդ և ոսկէտուփ Աղօթմատոցիս ոմն ցանկացող է բարեմիտ ուղղեայդաւան ծառայ Քրիստոսի բարեպաշտուհի կին Նանաճանն և հոգեորդին խօջայ Մարգարէն, և զդուսարն իւր՝ Ջանսոլթանն, որք գնեցին ի հալալ ընչից և ի արդար վաստակոց, յիշատակ հոգոյ իւրեանց և ծնողացն, և ետուն ընծայ և նըւէր ի դուռն Գ (3) Խորանին յիշատակ հոգոյ իւրեանց. ամէն։

212ա Այլ և ստացաւ սբ. մատենիս, որ կոչի Աղօթմատոց զխօջայ Մարգարէն, որ ստացաւ զսայ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն խօջայ Աղաբէկուն, Նանաճանին և կողակցին իւրոյ Ջանսոլթանին, և որդոյն՝ Փաւրոյն. Աստուած բարով վայել տացէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմիաբանքն Գ (3) Խորանին, հիւրասէր և հիւրընկալ զտէր Անդրէասն, տէր Սարգիսն, տէր Խաչատուրն. ամէն։ ՌՀԶ (1627) թվին։

390

ԽԱՉՏԵՏՐ

Երևան, № 8657 (ԺԴ դար)

Գրիչ՝ Ասատուր

145բ Յիշատակ է այս Խազտետրս տէր Կարապետին և յիւր որդոցն՝
146ա Դաւութին և Անտոնին. արժան առնէ// և յիւր տղէրքոցն. ամէն։ Գիրս գրեց Ասատաուրն. անմեղադիր լերուք, խիստ պակասութիւն ունենա։ Թվին ՌՀԶ (1627). ամէն[44]։

[44] Ձեռագրում գտնվում է նաև նույն անձնավորության մի այլ հիշատակարանը. «Ջվերջին ստացող Խազտետրիս զտէր Կարապետն, որ ետ կազմել յիշատակ հոգոյ իւրոյ և որդոյն իւրոյ՝ Դաւթին. ամէն։ Թվին ՌՀԵ (1626)» (էջ 143 բ)։

391
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10157 (1511 թ.)

Գեր. աղատող՝ Աստուածատուր քահանայ

ա

81բ Ես՝ չեմ արժան և մեղապարտ Աստուածատուր քահանայս տեսի զսբ. Աւետարանս ի ձեռն գերութեան Տաճկաց, հառաչման և փափակ սիրտիս առի զսբ. Աւետարանս յիշատակ հոգւոյ իմոյ, և ծնաւղացն, և մերձաւորացն իմոց, և ամուսնին իմ՝ Բիբին, և որդիքն իմ՝ տէր Յոհանիսին, և կողակիցն իւր՝ Խանումին, Փիրիպէկին, Աւտալին: Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. քահանայք, որ հանդիպէք զսբ. Աւետարանիս, յիշեցէք և զԹոռն իմ՝ տէր Աստուածատուրին, և կողակից իւր պարոն Խանումին, և դուստր Խանզատին: Յիշեցէք զտէր Աստուածատուր քահանայն և զիւր ծնաւղսն. և Քրիստոս որ առատ է ի տուրս. բարեաց...։

Ծաղկող՝ Յովանէս
Վայր՝ Հաղարծին

բ

297բ Փառք...։ Արդ՝ որք հանդիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք զստացաւղ սբ. Աւետարանիս զտէր Աստուածատուրն և զկողակիցն իւր՝ պարոն Խանումն, և զծնաւղսն իւր՝ Մէլիքզար, և զորդիքն իւրեանց, որ ետուր վերըստին նորոգել և ծաղկել զսբ. Աւետարանս ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշեցէք...։

Այլ և աւրհնեսցէ տէր Աստուածն մեր զԱստուածատուր քահանայն և զկողակիցն իւր, և զորդիքն իւրեանց հոգով և մարմնով, տամբ և տեղաւք, զարմաւք և զաւակաւք, ընչիւք և ապրանաւք, սիրելաւք և բարեկամաւք և ամենայն գոյականաւք։ Աստուած տայ ձեզ անչափ բարի, որպէս և ձեր սիրտդ կամի, և յետ աստեացս ամենայնի, արքայութեան
298ա լինիք որդիք. ամէն։ Այլ և տացէ // տէր Աստուած տանց ձերոց շինութիւն, անդորրութիւն, խաղաղութիւն, բարեաց լիութիւն և առատութիւն։ Եւ աւրհնեսցէ Քրիստոս Աստուած զցանածն և զցանելոյն, զտնկածն և զտնկելոյն, զյղիքն և զծնանելոյն, և պահեսցէ անփորձ և անսասան մինչև ի խորին ծերութիւն և տացէ տէր Աստուած դարձ և ապաշխարութիւն. ամէն։

Արդ՝ կազմեցաւ և ծաղկեցաւ ձեռամբ Յովանէս վարպետի ի թվիս Հայոց ՌՀԶ (1627), ի դուռն Հաղարծնու Ս. Աստուածածնիս և Ս. Գրիգորիս և այլ սրբութեանց, որ աստ կան հաւաքեալ։ Աղաչեմ զձեզ, մի բերան ողորմոյ արժանի արարէք զիս և զծնաւղսն իմ և զԳարիանայ ապաշխարողն, որ աշխատեցաւ ի կագ[մ]ել զսբ. Աւետարանս, Աստուած ողորմի ասացէք հոգոյ նորա. ամէն...[45]։

[45] բ հիշատակարանը տե՛ս նաև ՄՏՁՎԿԹԱ, էջ 388։

392
ՄԱՇՏՈՑ

Կ. Պոլսի Պալատ թաղի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 26 (մանրաժապավեն, Երևան, № 500)

Գրիչ՝ Պողոս դպիր

282 Փառք...։ Արք՝ գրվեցաւ Մաշտոցս հոգոյն Փարվարին և իւր ծնողացն՝ [Ասատու]ին և Շահինանին, Յովանէսին, թվին ՌՀԶ (1627). մեղսաթաւալ Պաւղոս դպիրս յիշեցէք ի Քրիստոս, դուք այլ լիցիք[46]

393
ԱՒԵՏԱՐԱՆ

ՄԻՆԱ, № 10 (ժամանակ ?)

217 Յիշեցէք ի Քրիստոս զվերջին ըստացաւղ սբ. Աւետարանիս զեպիշիպակն, և զկողակիցն իւր՝ զԽանումն և զԿաւզալն, և զհայրն իւր՝ զԱմիրն, և զմայրն իւր՝ զՍուլթանն, և զեղբայրսն իւր՝ զՄիրիճանն, զԻսիպակն, զԱթապակն, զԷնկիպակն, զԱխինանն, զՇաfարն, և զքոյրն իւր՝ զԽանսուլթանն և զԿուլզատան, և զմաւրաքոյրն իւր՝ զՇանզատէն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն, յիշեցէք... որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, և եդ յեկեղեցին Ս. Գէորգայ, ի վայելումն մանկանց Սիովնի, ի ձեռն տէր Սարգիս քահանային, ի թվին Հայոց ՌՀԶ (1627)։

394
ԱՒԵՏԱՐԱՆ

ԼԱԼՎԴԱԻ, № 111

Գրիչ, ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի
Վայր՝ Նորաշէն

ա

574 Փառք... որ ետ կարողութիւն մեղաւք մեռեալ հոգոյս և տկար մարմնոյս հասանել յաւարտ և ի վերջ տառիս։ Ես՝ անարժան և անարուեստս ի գիրս գրչութեան Մեսրոպ դպիրս և աշակերտն իմ՝ տէր Գասպար, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. «Յոր կոչումն կոչեցար, ի նմին կացջիր»[47]։ Եւ արդ՝ իմով բերելով զայսպիսի վստահութիւն այլ ունայն յամենայն բարէվայելչութենէ, որ առաքինեացն է համարձակութիւն, այլ ի բարէխաւսութիւն մաղթելով զամենայն սուրբս և ի մարդասիրութիւնն Աստուծոյ, յուսադրելով ըզկործանեալ և զլքեալ անձն իմ եղկելի և տառապեալ։ Շնորհիւն Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախօս և զաստուածաբնակ տառս՝ զլուսազարդ սբ. Աւետարանս, ի լաւ և յընդիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց Ռ և ի ՀԶ (1627) ամին, ի քաղաքիս Շօշ, որ կոչի Ասպահան, յեզր պարըսպին՝ ի Նորաշէն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեանս մերոյ տէր Խաչատուր վարդա-

[46] Այնուհետև ընդհատվում է։
[47] Ա Կոր., է, 20, 24։

պետին, ի թագաւորութեանն այլազգեռից շահ Ապասին, որ բազում պատերազմ արարեալ և կայ ի մէջ պատերազմի, և զապագայն Աստուծոյ է գիտելի, թէ որպէս լինելոց է։ Ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութեան անաւրինաց, և ի սղութենէ հացի, զոր տէր Աստուածն մեր պահեսցէ զամենայն ազգս քրիստոնէից ընդ ամրածածուկ աշովն իւրով. ամէն։ Արդ՝ որք ճաշակէք և վայելէք յամէն-
575 առատ սեղանոյս և // հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանց դրիս, զի կայր մեր այս էր։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն հեզահոգի, բարէմիտ և աստուածասէր խոշայ Մարտիրոսն և կողակիցն իւր՝ բարեմիտ Սողոմէ, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս այսմ մարգարտաշար, լուսափթիթ սբ. Աւետարանիս, և ետ գրել յիշատակ բարի հոգոց իւրեանց, ի միտ առեալ զբանն Եսայայ, որ ասէ. «Երանի...»[48]։ Վասն այն յուսոյն ետ դրել զսբ. Աւետարանս։ Եւ ետ զարդարել ոսկով և երանի երանի ծաղկով, յիշատակ բարի՛ իւրն և ծնողացն իւրոց, հօրն՝ Յովսէփին, և մօրն՝ Աղլանին, և եղբարցն՝ Պետրոսին, Նուշիկին, և հանգուցեալն առ Քրիստոս տէր Ղուկաս սրբասնեալ կրօնաւորին, Յովանէսին և Գրիգորին, և զհանգուցեալ քոյրն՝ Դաստագուլ[ի]ն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոշա Մարտիրոսն, և զկողակիցն իւր՝ հաւատարիմ, բարեպաշտ և աստուածասէր Սողոմէ, և զորդին իւրեանց՝ Աւետն, և դուստրն՝ փոխեցեալն ի Քրիստոս Դշիուն, և զԱւետի կողակիցն՝ Բարզատէն և զամենայն արեան մերձաւորս յիշեցէք...։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զխոշա Մարտիրոսն, և զե[ղ]բաւր որդիքն իւր՝ Գասպարն, Մելքոնն, Յովսէփն, Բաղդասարն և զԱւետիքն, և դստերքն՝ Խանումն, Խանփարին, Սոլթանն, Աղլանն, և զայլ ամենայն ազգականսն յիշեցէք...։ Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս
576 ձեր // առաջի անարիւն զենմանն ի ժամ սոսկալի սբ. պատարագին, և՛ լի սրտիւ և՛ բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ինձ՝ անարժան Սեբեոս դպիր Խիզանցոյս և վարդապետացն իմոյ, նախ՝ տէր Մարտիրոս քաջ և արի Խիզանցին և այլոցն, որք ունին աշխատանք յարուեստս յայս ի վերայ մեղաւորիս, յիշեցէք...։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զանարժանս Սեբեոս դպիրս և զմարմնաւոր ծնողսն իմ՝ զտէր Մարտիրոսն և զոխոնդխարն, և զեղբարքն իմ՝ զտէր Թադէոսն և զՊարսամն, և քուերքն իմ՝ Աննայն և զԴեղծունն, և զամենայն արեան մերձաւորս՝ յիշեցէք...։

Բ

Զքեզ աղաչեմ ո՛վ փակակալ,
Որ ամենայնց ես վեհընկալ,
ԶԱւետարանս հրաշափառ,
Մի՛ հանապազ ի ձեռքդն տալ,

[48] Եսայ. ԼԱ, 9։

Որ չաղտոտեն զանգին ջուհար,
Աստուածածնին սիրոյն համար։
577 Աստուած զայն քահանայն աւրհնէ,
Որ զմատն զթանայ և զթուղթն շրշէ։
Դարձեալ զՄեսրոպ դպիրս՝ ծաղկողս և զգրողս սորա յիշեցէք ի Քրիստոս. ամէն։

395
ԱԻԵՏԱՐԱՆ
Տիրայր վարդապետ, № 61 (1469)

964 Յիշատակ է սբ. Աւէտարանս Շընթբլցի խոճայ Յովասափին և իւր կողակցին՝ Մարիամին և ալ կենդանեացն և ընչեցելոցն, ի դուռն ի Ս. Նշանայ Եղեգի, ի վայելումըն տէր Վարդանին, և տէր Ներսէսին, և տէր Սիմէոնին: Զունի ոք իշխանութիւն հանելոյ սբ. Աւետարանըս ի դուռն ի Սրբոյ Նշանայ, կամ կրաւէ կամ ծախէ, անիծած է և նզոված է ամենայնէ, թէ իմ ազգէն մարդ ելնու տալապ ենէ [որպէս] առնէ, յեզ մի կամ
965 կով մի խուրպան մի տայ, ապայ // առնու սբ. Աւէտարան ի Ս. Նշանայ դրռանէն. իմ խաւսքըն մոռզն՝ աւրհնի Աստուծոյ, ոչ ի մոռզն՝ անիծած է, ի քովրս սևերես գայ։ Ի թվին ՌՀԶ (1627)։

396
ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ
ՏԵՐԱՎՋ, № 8

Գրիչ՝ Յակոբ երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

Ա

14 Փառք..., որ ետ կարողութիւն մեղսամած տկար անձամբ և սուտ գրիչ՝ Յակոբ երէցս ներողութեամբն Աստուծոյ և աշողութեամբ Ս. Հոգւոյն ձրագրեցի զայս անկողոպտելի գանձս աստուածային, շահաւէտ հոգոց և դաստիարակ մանկանց Սիոն[ի], զոր թարգմանեալ է հոգի-ընկեալ հայրն հասարակաց, սրբասնեալ բաբունի վարդապետն Վարդան։ Արդ՝ ևս թափուրս ի բարեաց և փշաբեր յանդաստանս, պղերգ հոգի, տառապեալ անձամբ Յակոբ երէցս գրեցի սբ. Մեկնիչս Դաւթայ, ի թվին Հայոց ՌՀԶ (1627), ի քաղաքն Ասպայեան, ի գ[ե]օղն Ջուղայ, ի դուռն Ս. Սարգսի զօրավարին, ի թագաւորութեան շահ Ապասին, ի առաջնորդութեան պարոն Նազարին։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով և մի բերան ողորմի ասացէք ինձ, և իմ ծնողացն և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Բ

15 Նուաստ և անպիտան և սևերես, մեղօք ի լի և թարմատար. հոգնայ-մեղ և տխմար և պղերգ գրչի Յակոբ երիցւի[49]։

[49] Այնուհետև ոտանավոր, միայն աղերս է։

Գ

Եւ զիս անարժան Յակոբ գրիչս յիշեսՙ ի Տէր։

Դ

Ո՛հ, ո՛հ օրինակի դարտէն, սիրտս եղև քան զքարար։

Ե

Աւա՛խ, աւա՛խ, աւա՛խ, օրինակի դարտէն էս մին էջումս Գ (3) տեղ սխալ էր, գրեցի պռծայ, հետո (SIC) իմացայ։

Զ

Վա՛հ, օրինակի դարտէն ծերացայ։

Է

Զեղ մեղայ անմեղսյդիր կացէք, նինջս եկաւ, խելքս չէր ի գլուխս ո՛հ, ո՛հ, ո՛հ էլ չեմ հասնիլ։

Ստացող՝ Բաղդասար Ջոտլայեցի

Ը

18 *Փառք...։ // Ես՝ բարէմիտ* Բաղդասարս Ջոտլայեցի *և խնամօք անեղին, առաջնորդութեամբ ապանիազին... ի վաղ ժամանակէ և այսր մեծաւ փափակմամբ ըղձայի զաստ հաւաքեալ գրեանքս՝ զԱռակքս Սողոմոնի հանդերձ Սիրաքայ խրատովքս, և զիմաստ հարիւրոցն ճեմայբանութիւն. նաև զճգնաւոր նահատակին Յոբայ զպատճառ և զլուսաւոր պատմութիւնս, և ոչ լինէր լրումն կատարման իրիս, մինչև կամեցաւ որ զանշարժսն ի բարին գիտէ շրջափոխել և զերկիւղածացն գկամ առնել, ինքն յաջողեաց և լրացոյց որոյ և [օր]հնայրանութեամբ գոհութիւն միշտ յաւիտեանս. ամէն։*

Ի թվականիս Հայոց ՌՀԴ (1625) ետու գրել զսայ ի սփոփանս ինձ յաստիս և յետ ելիցն յիշատակ բարի։ Արդ՝ աղաչեմ զժառանգաւոր սմին, յիշեցէք ի սրտի մտաք զմեզ զարմիւք և ծնողաք, զիս Բաղդասարս, *և հայրն իմ՝ խաջայ* Նազարն, *և մայրն իմ՝* Դշխունն, *և եղբայրն իմ՝ պարոն* Սաֆարն, *և հօրեղբայրն իմ՝ խաջայ* Եղնազարն, *և պապն իմ՝* Բաղդասարն, *և հանիկն իմ՝* Մէրջանն:

Դարձեալ յիշեցէք զբարէմիտ Բաղդասարն, *և կողակիցն իւր՝* Մարիամն, *և որդին իւր՝* Մաթիոսն, *և դուստրն իւր՝* Անանայի, *և քոյրն իւր՝* Մասփիտն: *Աղաչեմ զի և խնամ տարջիկ սմայ ի ջրոյ, ի հ[ր]ոյ, և յամենայն ապականիչ պատճառէ զգուշասցիք։ Եւ աննախանձ կամաք զվերոյ դրեալքս յիշեցէք առաջի զենման անմահ գառինն Աստուծոյ՝ բարձողին զմեղս աշխարհի...։*

397
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 43 (1330 թ.)

68 Զվերջին ստացող սբ. Աւետարանիս Ամիրբէկն որ ստացաւ հալեալ արդեամբ իւրո[յ]։ Յիշեցէք զմաքրափայլ աղաւթս ձեր զպանծեալ և զգովելի, աստուածասէր և բարելի, հեզայհոգի, հաւատարիմ զԱմիրբէկն, որ ստացաւ զԱւետարանս, յիշատակ հոգո[յ] իւր ընթանացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք Ամիրբէկն, և կողակիցն իւր՝ Փարազն, և զորդին իւր՝ Միրզաբէկն, Անանէն, և դուստրն իւր՝ Մարիամն, Խուրովիքուխտն։ Դարձեալ յիշեցէք զԱմիրբէկն, և զհայրն իւր՝ Ազարէն, և զմայրն իւր՝ Բալոյ, և զեղբարքն իւր՝ Անանէն, Ջանգարն, Ատիրբէկն, և զքուրն իւր՝ Մէրջանն, Մարիամն, և զպապն իւր՝ Նորաբարէն, և հանիկն Ինայիաշէն, և հօրեղբարն իւր՝ Գրիգորն և զիւր որդիքն՝ Մարգարէն, Զաքարէն, Բաբամն, Սարատն, և դուստր Խանջանն. ամէն։ Թվին ՌՀԶ (1627)։ Դարձեալ յիշեցէք զՄիրզաբէկն և կողակիցն իւր՝ Խուրովիքուխտն. ամէն։

398
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ № 119

Գրիչ, ծաղկող՝ Մեսրովբ Խիզանցի
Վայր՝ Նորաշէն

ա

168 Փառք...։ Ուստի և տեսեալ զսորա այս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից խաթուն Ազատն, որ ի վաղուց հետէ ցանկայր աստուածախաւս այսմ մարգա[րտա]շար, լուսափթիթ սբ. Աւետարանիս և ետ գրել, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, ի միտ առեալ զբանն Եսայեայ որ ասէ. «Երանի....»[50]։ Վասն այն յուսոյն ետ գրել զսբ. Աւետարանս և զարդարել ոսկով և երանգ երանգ ծաղկով, յիշատակ իւրն և իւր ծնօղացն, հօրն՝ խօճայ Խաչիկին և մօրն՝ Մարիամին, և եղբարցն՝ պարոն խօճայ Սաֆարին և պարոն խոջայ Նազարին, և քուերն՝ խաթուն Եգգինասին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայ[ել]էք աստուածային բուրաստանէս, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր առաջի անարիւն զենման ի ժամ սոսկալի սբ. պատարագին, լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ստացողի լուսապայծառ սբ. Աւետարանիս զխօջայ Սլէմանն և զիւր ամուսինն և զխաթուն Ազատն և զիւր զաւակքն՝ զԽանգատէն, զԲարգատէն, զԱմիր Սարգիսն, զՊարասկեին, զԹագուհին և զորդի Խանգատէն, զՄիքայէլն. ամէն։ Այլ և դարձեալ յիշեցէք զխօճայ Սուլէմանն և ծնօղսն՝ խօճայ Վալին և զՍուլթան, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք...։

Եւ արդ՝ ես անարժան և անիմաստ դպիր Մեսրովբ Խիզանցի մեղօք փտեալ և աղտեղեալ ի մէջ մեղաց, շնորհիւ Տեառն սկսաք և նորին

[50] Եսայ. ԼԱ. 9։

ողորմութեամբ կատարեցաք զաստուածախօս և զաստուածաբնակ տառս ի լաւ և յընտիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և ի ՀԶ (1627) ամին, ի քաղաքն Ասպահան, որ կոչի Շօշ, ի գեօղն Նորաշէնի, յեզեր քաղաքին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան հայկազեան սեռի էջմիածինն տեառն[51], և ի յառաջնորդութեանս մերում տէր Խաչատուր վարդապետին, ի թագաւորութեան շահ Ապասին եղև զրաւ. ամէն։ Արդ՝ որք ճաշակէք և վայելէք յամենառատ սեղանոյս և հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով. անմեղադիր լերուք խոշորութեան սխալանաց, զի կար մեր այս էր. վասն որոյ երեսս ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ ասացէք Աստուած ողորմի անարժան Մեսրովբ դպրիս, և ծնողացն իմոց՝ տէր Մարտիրոսին և Խոնդքարին, և իմ եղբարցն՝ տէր Թադէոսին և Պարսամին, և քուերցն, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

169 Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զհոդև//որ վարպետն իմ նախ տէր Սարգիսն, որ մականուն Մազման կոչի, և զմիւս վարպետաց վարպետն զտէր Մարտիրոսն և զորդին իւր՝ զտէր Գրիգորիսն, և զամենայն աշխատաւորս, որ ի յարեւստս յայս աշխատանք ունին, յիշեցէք.. ։

Բ

169 Զմեղաւք մեռեալ Մեսրոպ դպիրս յիշեցէք ի Քրիստոս։

399

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 240

Գրիչ՝ Բարսեղ երէց
Վայր՝ Ասպահան

371 Փառք..., որ ետ կարողութիւն սղալամիտ, ե մատնադէտ, և մեղսամած գրչի տէր Բարսեղին հասանել յաւարտն յաստուածախաւս կտակարանիս, աւժանդակութեամբ սբ. Աստուածածնին ամէնաւրհնեալ և գերադովեալ կուսին Մարիամու։ Զնա կալեալ բարեխօս առ Միածին որդին իւր և Աստուած իմ՝ Յիսուս Քրիստոս, աւարտեցաւ քրիստոսահիմն և քաշ նահատակացն և մարտիրոսաց[ն] հոգիաբուզ սբ. տառս ի յամի ՌՀԶ (1627) թւականիս Հայոց, ի յերկիրն Պարսից, ի քաղաքն Շաւշ, որ կոչի Ասպահան, ի թագաւորութեան այլասեռից շահ Ապասին, և ի մերոյ հայրապետութեան տեառն Մովսէսին, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի տէր Բարսեղին, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր և պատուական խօճայ Գրիգորին, յիշատակ հոգոյ իւրոյ, և իւր ծնաւղացն՝ պարոն Մարգարին, Ուղուրիսուլթանին, և կողակցին՝ պարոն Մախաթունին, և որդոցն՝ Նաւասարդին, Յովանէսին, Շահնազարին, և դստերացն՝ Մարիտատին, և կողակցին՝ Մուրատխանին, և որդոյն՝ Սաֆարիանին, և միւս դստերն՝ Ատէտին, և կողակցին՝ պարոն Սաֆռազին, և դստերն՝ Խաթունջանին, և միւս դստերն՝ Զամանին, և կողակցին՝
372 և Յովհաննէսին, և որդոյն՝ Շահ//նազարին, և հանգուցեալ Խիջատուրին, և հանգուցեալ դստերացն՝ Խալինարին, Գուարսուլթանին։

[51] Անվան տեղը բաց է թողնված։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱստուած Գրիգորն, և զեղբայրն իւր՝ Յովանէսն, Ասասլովն, և միւս Ասաւգովն, և Յովանէսն, և քուէրքն իւր՝ Դաֆարսոլթան, և կողակիցն՝ Ամիրսէթն, և զորդին իւր՝ Մուսէսն, և զդստերսն՝ Մարիամն, Մարգարիտն, Սալամն, և միւս քոյրն իւր՝ Եղիսայբեթն, և կողակիցն իւր՝ Պողոսն, և որդին իւր՝ Խէշումն, Միրզա-խան[ն], Միրիշանն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, և զմեծ պապն իւր՝ Ասասլովն, և կողակիցն՝ Թագագուլն, և որդին իւր՝ Զաֆարէն, և դստերքն՝ Խալինարն, Խալիւգուհարն, և զմիւս պապն՝ Աղէն, և որդին՝ Ակոբն, և կողակիցն՝ Խանսոլթանն, և Ակոբի որդին՝ Անդրեասն, և իւր Կարապետն. և իւր զաւակացն։ Եւ միւս եղբայրն Անտիբեկն, և իւր կողակիցն, և զաւակացն, և զդուստրն իւր՝ Անդրահաքուն. և իւր զաւակացն, և զկենդանի քոյրն իւր՝ Վաղասոլթանն, և իւր զաւակացն յիշեցէք...։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան կողկողագին պաղատանաւք, որք հանդիպիք այս բուրաստան սբ. մարտիրոսական տառիս կարդալով կամ աւրինակելով, սղալանաց և խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի կայր մեր այս չափ էր։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս տէր Բարսեղ էրէցս, և ծնաւղս իմ, [և զամենայն] արեան մերձաւորսն, և զուսուցող վարպետն իմ ըզ-Մեսրաւլն, որ ծաղկեց զայս գիրքս և զծնաւղսն իւր, և զկողակիցն, և զորդիքն, և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջայ Գրիգորն, և զհանիկն իւր՝ Թագագուլն, և եղբայրն իւր՝ Սաթումն, և որդին՝ Միրզէն, Էվանեսն, և Միրզի որդի Թարուղուլին և Սաթումն, և իւրեանց զաւակացն, և զմիւս հանիկն՝ Խանսոլթան, և ըղ-հայրն՝ Սոլթանղուլին, և զեղբայրն՝ նալպանդ Էվանէսն, Ակոբն, Մարգարէն, և իւրեանց զաւակաց։

400

ԱՒԵՏԱՐԱՆ

Մուրմար II, № 85 (ժամանակ ?)

158 *Աստուածազարդ Աւետարանս զարդար//եաց... նրպաստ սորին Գաւիթ քահանայ, ի ՌՀԶ (1627) թվականս։*

Յորժամ բազմի սա խորան,
Եւ քարոզէ զանմահ արքայն,
Հնչէ ի յունկ ժողովրդեան,
Քնքուշին ասէք զՏէր ողորմեան։

401

ԱՒԵՏԱՐԱՆ

Մուրմար, II, № 33 (1467 թ.)

124 *Զմազդեսի Քնքուշն յիշեցէք ի Քրիստոս թվին ՌՀԶ (1627)։*

402
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ջմմառ, № 539

Գրիչ՝ Սահակ
Վայր՝ Վանք

147 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Երգս Դաւթի ի ըստոյգ և յընտիր աւրինակէ սբ. հաւրն* Յովհաննէս Գաւոնեցոյն, *որ և յանձն էր առեալ բազում աշխատութեամբ և դրեալ էր այսպէս, թէ «Վասն ստուգաբան Սաղմոսից գնացի ի սբ. ուխտն ի Հաղբատ, և երկրպագեցի կենսաբեր սբ. Խաչին Քրիստոսի և համբուրեցի զգերեզման մեծ և տեսանող սբ. վարդապետին* Սարկաւագին, *այն որ զտոմարն ճշգրտեաց և աղաւթս ողբերգանս յաւրհնեալ գրով դրոշմեաց. և զսաղմոսս ի թարգմանչագիր Սաղմոսարանէ դաղափարեաց, զոր իմ առեալ զայն Սաղմոսարանն համբուրեցի և եդի ի վերայ աչաց։ Եւ ինձ գրեցի իւրմէն և լցուցի զփափագս իմ»։*

Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ փցուն գրչի Սահակ *անցաւորի, ի թվին ՌՀԶ (1627), ի սբ. ուխտս ատենահաս Ս. Սարգիս, ի գիւղն [որ]* Վանք *կոչի։ Որք հանդիպիք սմա յիշե[ս]ջիք... զծնաւղս իմ և զմերձաւորքս իմ...։*

403
ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՔԷՔ «Էջմիածին», 1950 թ., Թ-ժ, № 24, Տե՛ս նաև ՀՔԹԱ, № 4, էջ 5—6, «ՀԱ», 1935 թ., էջ 393—394, «Անահիտ, 1947 թ., № 2, էջ 36—38

Գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ
Վայր՝ Հալապ

ա

86 *Զմեղապարտ գծող սարկաւագ* Աստուածատուրս *յիշեցէք ի Քրիստոս*
87 *և մեղաց թողութիւն հայցեցէք, և դուք յիշիք //ի Քրիստոսէ. ամէն։ Գրեցաւ թվին ՌՀԶ (1627)։ Յիշեցէք զմահդեսի հայրն իմ՝* Կարապետն *ի Քրիստոս։*

բ

Փառք... որ յանգ հանել հիւծելոյս յանցանօք, անպիտան և մեղաւոր գրչիս՝ Աստուածատուր *դպիրս, որոց աստուածամուխ բանից գրել արժանի արար զիմս անարժանութիւն, քանզի սկսեալ կատարեցի Աւետ անուն երանութիւնս, ի թվականիս ՌՀԶ (1627), ի քաղաքն* Երեւան, *որ թարգմանեալ կոչի* Հալապ, *ի սբ.* Երուսաղէմայ *Հոգոց տունն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս, որոյ շնորհօքն Աստուծոյ աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ սբ. Աւետարանս... մահդասի* Աղամիրին, *հայրն իւր՝* Առաքել, *մայրն իւր՝* Սոլթանփաշէն, *լուսով լցուի իւրեանց հոգին ևս առաւել* Ոսկէ, *որ ամուսին է* Աղամիրին, *այլ և որդիք և դուստր տղին՝* Պետրոսն *ընդ* Խոսրովիթուխթին, Սղլանգեռաք *ընդ* Թագուհուն Եղիսաբէ *ընդ* Զաղային։

...[52] մանաւանդ պարտ է մեզ տրուպ գրչիս յիշել և գրել, զի որք հանդիպին սբ. Աւետարանիս, յիշեն զհաւատարիմ բարէկամքն մեր. նախ՝ հայրն իմ՝ Մովսէսն և երկրորդ՝ հոգևոր եղբայրքն իմ՝ Սուլթանումն և Ապաուլան, Պաղէրն և Շանվալին, զի զանարժանս հանապազ խնամաւք պահեցին ի մէջ պանդխտութեան մինչև ցայժմ, զոր և խնդրեմ ի խնամակալ թագաւորէն՝ խնամօք պահէ զնոսա մինչև ի ծերութիւն. ամէն։

Գ

Ծաղկող՝ Մկրտիչ դպիր

...[53]
Եւ ես ծաղկողս անարժան,
Որ և Մկրտիչ կոչեմ անուան,
Ձեղկելիս արէք յիշման արժան,
Եւ ինձ աւրհնէ անմահ արքան։

Դ

Ո՛վ դասք քահանայից, որք հանդիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք զՍ. Ստեփանոս եկեղեցու քահանայքն, զի ի ծաղկել Աւետարանիս հոգևորապէս հանգուցին և սիրով խնամեցին զտրուպ Մկրտիչ դպիրս։ Բանն Աստուած, Որդին միածին հատուցանէ ի ժամ արդար հատուցմանն և ընդ սբ. քահանայիցն դասէ. ամէն։

404

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՔԷՋ, «էջմիածին» 1951 թ. Թ—ժ, № 65 (1486 թ.)

82 Վերջին ստացող սբ. Աւետարանիս հոգիասէր կինս այս Շահրիստանս, որ քրտնաշան վաստակով էառ զառատաբուխ քառավտակ գետոց, յաւժար կամաւք և փափաքանաց ազատեաց ի յանաւրինաց ձեռանէն, որ կոչի Ապազայ փաշայ, որ զտէր Անանիան թալանեցին յԱրզրումայ դաշտն, ի թվիս Հայոց ՌՀԶ (1627)-ին, որ էառ ողորմելի կին այն Շահրիստան, յիշատակ իւր և կողակցին՝ Ամիրասին, և իւր որդոյն՝ Մարտիրոսին, և Էնիաթին, և Ղազարին, և Պունիաթին, և դստերացըն՝ Արզուին և Թուրվանտին։ Ստացաւ և ետ այլւի ի տէր Անանիին, տէրն Քրիստոս զինքն իւր մեղացն ազատեսցէ, և արքայութեան արժանի արասցէ. ամէն։

---

52 Տասնհինգ տող չափածո. չունենալով պատմական որևէ նշանակություն, չվերցրինք։
53 Գովք ցովհ. ավետարանիչի։

405

ՍԱՂՄՈՍ ՏԱՂԱՋԱՓԵՍԼ ՅԱԿՈԲ ԹՈԽԱԹԵՑԻՈՅ

Մշբեկ. III, № 892 (1675 թ.). տե՛ս նաև Կամենից, էջ 179

Հեղինակ՝ Յակոբ Թոխաթեցի
Վայր՝ Զամոսցա

ա

399 Յակոբ քահանայի Եւդոկիացոյ շարադրեալ զՍաղմոսն Դաւթի զամենայն՝ զհարիւր և զյիսուն փոխն ի լման, պէսպէս վանգիւ, և քաղցրաձայն եղանակաւ, զի ախորժ լիցի երգողաց, ի նուազել, և ունկնդրողաց ի լսել։ Այլ և փոքր ի շատէ գտանի ի սմա լուծումն բանից, մեկնօրէն և թարգմանարար, առ ի հասկանալոյ նորավարժից։ Բայց ի փոխարկելն սորա պարտ է զգուշանալ գրոյ և բայի, զի թէ մի տառ յաւելու կամ նուազի, կաղանա ոտք վանգիցն, և բանն աղաւաղի ի վերծանութիւնն։ Ապա եթէ անթերի և կատարեալ լինի ամենայնն, բայն և գիրն, կէտն և գլօրն, յայնժամ դիւրանայ, զեղու և սիրտ երգողաց, և քաղցրանա միտք նոցա ի սմա։ Եւ յիշեսցեն զմեղաւորն Յակոբ միով Տէր ողորմեայիւ, և ինքեանք յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...։

բ

401 Յետ Ադամայ ելանելոյն ի փափկութեան,
Որդիք նորին ընդ անասունս աստ բնակեցան,
Մնան զաւակս ի վերայ երկրի և բազմացան,
Եւ յԱրարչէն իւրեանց նոքա մոլորեցան։
.....[54]

402 Ոմանք հոդով ըզհոգևոր բանս խօսեցան,
Յորմէ բազումք ի չար գործոցըն զըղջացան,
Այլք ըզսիրոյ մարմնաւորիս բարբառեցան,
Որ ի խրախճանըս ըմպելեաց ուրախանան։

403 Ի հուսկ յետնոց յետնեալըս ես քան զամենայն,
Բորբոքեցայ վառեալ ի սէր նուագերգութեան,
Վարանէի թախծեալ ոգով ի բազում ամ,
Թէ զինչ թողից յետ վաղճանի իմոյ յիշման։
Ապա տեսի ի յայլասեռս Սաղմոսարան,
Էր շարադրեալ ոտանաւոր յարմարական,
Յոգնահանճար իմաստիւք լի և խորական,
Լուծեալ ի նմա զդրժուարիմաց բանս խրթնական։
Եւ ես չէի վարժ և հրմուտ իմաստութեան,
Ոչ ունէի միտք կորովի յիս բընական,
Զի շինէի բանս ի մրտաց առանց հիման,
Կամ հաւաքեալ ժողովէի խորհրդական։

---

54 Տասնութ քառյակ ոչ պատմական նյութ, չվերցրինք։

Վասն այսորիկ ի ձեռս առի ես գաւազան,
Ինձ առաջնորդ և ուսուցիչ զբանս Դաւթեան.
Շարադրեցի ոտանաւոր ես զամենայն,
Զհարիւր ւ յիսուն փոխ սաղմոսին զերգն ի լրման։
Ընծայեցի բանասիրաց վասն աւգտութեան,
Եթէ լիցի ընդունելի որ ի սմա բան,
Յայնժամ երգով եղանակեն մրտառական,
Եւ զանարժանս արժան առնեն նոքա յիշման։
Արդ՝ մի՛ լիցի բանքս այս ձեզ պարսաւական,
Մի՛ եղիցի ձեր առաջի իբր ըզխոտան,
Քանզի գտանէք փոքր ի շատէ բան ինչ լուծման,
Որք խաւարեալ մրտաց մարդկան սոքայ լոյս տան։
Ոչ թէ յիմոց մրտաց սոքա ի յոտք ելան,
Այլ ի շնորհաց պարգևողէն շարադրեցան,
Ի վերայ սուրբ մարգարէին եղեալ հիման,
Որ էր լեզու Հոգոյն Սրբոյ և բնակարան։
Ես որ տրրուպս եմ յաշխարհի քան զամենայն,
Խոնարհ հոգով զձեզ աղաչեմ զամենեսեան,
Զի ընկալջիք զբանս դուզնաքեա որպէս լումայն,
Որ ի սրմա տողիւ չափոյ ի կարգ անկան։
Եւ յիշելոյ արժան արէք զիս զանարժան,
զՅակոբ երէցքս Թոխաթցի տաժանական,
Որ եմ պանդուխտ յայսմ աշխարհի տարաբնական,
Լեհաց երկիրն ի նոր քաղաքս Զամօսցան։
Այլ և զընտանն իմ յիշեցէք ի ժամ հայցման,
Զմեծահաւատ հայրն իմ՝ Ալթուն, զմայրն իմ՝ Անեան.
Ոչ ժամանեալ նոցա ի հասակ ծերութեան,
Այլ ի միջակ տիս հասակի վաղճանեցան։
404 Եւ զվարժապետն իմ բազմերախտ արիական,
ԸզԱյվաբեցց Յակոբ անուն սուրբ քահանայն,
Իմաստիւք լի գերակատար ի գիտութեան,
Հոգով մաքուր, մարմնով ճրգնող ի ծերութեան։
Եւ զամենայն ըզմերձաւորս իմոյ արեան,
Եւ զժողովուրդ այս քաղաքիս զամենեսեան,
Զծեր և զտղայ, զերիտասարդ և ըզկուսան,
Եւ որք եղեալ են հաւատով ի գերեզման։
Ի թվականի մեծ տումարիս աբեթական,
Որ էր հազար ութանասուն այլ և վեց (1627) ամ,
Ես մեղաւոր շարադրեցի սակաւ զայս բան,
Ընծայեցի բանասիրաց ի վայելման[55]։

[55] Մինչև այստեղ բ հիշատակարանը կրճատումներով տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նըշխարք, հտ. Բ, Մ 489, էջ 407։ Նույնությամբ՝ Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 168—172։

Զի եղիցի սա յիշատակ ինձ անվախճան,
Եւ աղօթող առ տէր Աստուած միշտ անխափան,
Այլ և լիցի փառաբանող Երրորդութեանն,
Հօր և Որդւոյ և Ս. Հոգւոյն միշտ յաւիտեան։
Անուն դիցուկ գրրոյս այսմիկ պատշաճական,
Երգեցողի այս մատենի ըստ իւր անուան,
Արդ՝ կոչեսցի սա Յակոբի Սաղմոսարան,
Զի կարասցեն կոչել առ ինք ամենեքեան։
Յաւարտ բանիս աւրհնեմք զԱստուած դՀայրն էական,
Եւ զէակից Որդի նորին անճառական,
Եւ Սուրբ Հոգոյն նորոգողի զամենեսեան,
Փառք և պատիւ, և գոհութիւն մինչ յաւիտեան։

406
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՄՏՁԵՊ, VI, 1925 (1269 թ.). տե՛ս նաև Աղավնունի, Այցելուք, էջ 107

416 Ես՝ Վիրապեցի Դաւիթ եպիսկոպոս[ս] սբ. Երուսաղէմայ ծառայ, հրամանաւ Գրիգոր արհեպիսկոպոսին գնացի ի Արզրում նուիրակ, տեսա զայս Աստուածաշունչս գերի ի ձեռն Ապազա փաշային։ Աստուած աւրհնէ խոճայ Զիրաքն, աւրդորեցի և աւրհնեցի. յետոյ Ռ (1000) ղուռիշ ետուր և առաւ զսա, և ետուր սբ. Երուսաղէմայ յիշատակ, ի դուռն Ս. Յակոբայ, յիշատակ անշրեալի իւրն և ծնօղացն՝ Իսքանաարին, մօրն՝ Կիլաղային, և կողակցոյն՝ Մարիամին, և դստերն՝ Եղիսէին, եղբօրն՝ Ազնաուրին։

Պատճառն ես՝ մեղաւորս եղա առնալուն և տալուն Երուսաղէմայ, և բազում ջանիւ և աշխատութեամբ, ահիւ և դողութեամբ ի ճանապարհին, սաղ սալիմ բերի յԵրուսաղէմ։ Որք հանդիպիք սմա Աստուած ողորմի ասացէք մեղաւորիս...։

Թվականիս Հայոց ՌՀԶ (1627)-ին, զայս բանս կատարեցի Աստուծով[56]։

407
ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ ՊԱՐԱՊՄԱՆՑ

ՄՁԱԲ, № 62 (1626 թ.)

Կազմող՝ Հայրապետ

350 Արդ՝ կազմեցս այս Պարապմու[ն]քս ի Ցակլ, ի դուռն Ս. Աստուածածին, աստուածընկալ Ս. Նշանին. ձեռամբն անարժան. Հա[յ]ր-ապետին, ի Թվականիս Հայոց ՌՀԶ (1627)։

---

56 Զեռ-ի ազատման համար դրամ տրամադրող խոջա Զիրաքի հիշատակարանը տե՛ս 1626 թ. շարքում։

408
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՀՎԼ, № 373

Վայր՝ Ըստամբոլ

873 *Փառք... Արդ՝ գրեցաւ սայ ի թուաբերութեան Հայոց ՌՀՋ (1627), ի քաղաքն Ըստամբոլ, ի դուռն Ս. Նիկողայոսի, ձեռամբ մեղսապարտ... գրչի։ Աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք ի սմա, յիշեցէք զստացող սորայ՝ զբարեմիտ, հեզահոգի և աստուածասէր, ողորմած և աղքատասէր, պարկեշտ և հնազանդ վարուք՝ պարոն խոշայ* Պետրոս, *զոր ի վաղուց հետէ ցանկացեալ էր այսմ վարդապետիթ, հոտանուշ բուրաստանիս, որ կոչի Աւետարանս, որ է ձայն աւետեաց, զոր քարոզեցին սբ. առաքեալքն։ Վասն այն յուսոյն ստացաւ զսայ, ի յարդար և ի հալալ մ[ր]նչից իւրոց, յիշելով զբանն մարգարէին որ ասէ, եթէ «Երանի...»*[57] *և ետ յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց, հաւրն՝* Վէլիջանին *և մօրն՝* Շուշանին, *և ամենայն մերձաւորացն. յիշեցէք և Աստուած ողորմի [ասացէք]*[58]։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճա Պետրոսն, *և զկողակիցն իւր՝* Աննայն, *և զորդիքն իւրեանց՝ պարոն* Պօղոսն, Մինասն՝ Յովհաննէսն, *և դստերքն իւրեանց՝* Հռիպսիմէն, Մարիամն, Շուշան, Ծաղիկն։ *Աստուած ընդ երկա[յ]ն աւուրս արասցէ. ամէն։ Եւ առաւել կրկին անգամ*
874 *դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս՝ զխաւշայ* Պետրոսն *և // զկողակիցն՝* Աննան, *և փոխեցեալ որդիքն՝* Սահակն, Հայրապետն, Յովհան[ն]էսն, *և հանգուցեալ դստերքն իւրեանց՝* Ոսկի, Հռիպսիմէն, *և միւս* Ոսկին, Շուշան, Ծաղիկն *և ամենայն արեան մերձաւորս, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխոշայ* Պետրոսն *և զվերջին կողակիցն իւր՝ զԹանկմերն, և զորդին՝ զՂուկաս, և զդուստրն։*

Դարձեալ յիշեցէք զխոշայ Պետրոսն, *և զպապն իմ՝* Աղիջանն *և զհանիկն իմ՝ զԳաիանէն, և զմիւս պապն իմ՝* Ջավալէն, *և զմիւս հանիկն՝* Ծամոսկին։ *Դարձեալ յիշեցէք զխոշա* Պետրոսն *և զեղբարքն իւր՝ զԿիրակոսն, և զհանգուցեալ եղբարքն իւր՝* Սուքիասն, *և զ*Մանասն, *և զ*Վանէն, *և զհօրեղբայրն՝* Նուրիջանն, *յիշեցէք...։*

409
ՄԱՇՏՈՑ
ՋՀՍԳ, № 104, տե՛ս, նաև «ՀԱ» 1926 թ., էջ 544

Գրիչ՝ Առաքել երէց

Վայր՝ Յենկէլ գաւառ

68 *Փառք... Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղաւոր գրիչս* զԱռաքել *սուտանուն երէցն և զուսուցիչն իմ զԹումաս սարկաւագն և զիրիցկին իմ, որ փոխեալ է առ Աստուած, և զծնաւղքն իմ և զեղբարքս իմ՝* զԼուսիկն *և* զԽաչատուրն, զԳրիգորն. *և զքուերքս իմ՝* զՇամամն *և* Նաղարվարդն։ *Արդ՝ յիշել անկեալ աղաչեմ զձեզ, եղբարք, անմեղադիր*

---

[57] *Նսայ. ԼԱ, 9։*

[58] *Մինչև այստեղ տե՛ս նաև № 6333, էջ 22 բ, հիշակ. № 96։*

եղերուք սխալանաց մերոց, զի առաշի գիրս է։ Արդ՝ գրեցաւ Մաշթոցս ի
00 գաւառն // Յենկէլ, ի գիւղն Սուրբ Երեք մանկանց, ձեռամբ անարժան
Առաքել երիցու, ի թուականիս մերոյ ՌՀԶ (1627)։

410

ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՈՏՁՄՎ, № 705 (1403 թ.)

237 Ոսկեփորիկս յիշատակ է տէր Կարապետին ի դուռն Ս. Յակոբեա,
ի թվիս ի ՌՀԶ (1627)։

411

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

ՄՅՁԵԳ, II, № 301

Գրիչ՝ Յակոբ

ա

142 Ո՛վ սբ. ընթերցողք, յիշեսջիք յարժանաւոր աղօթս ձեր զանարժան
143 գծողս և զծնողսն իմ և թողու//թիւն մեղաց հայցեցէք և ողորմածն Աս-
տուած ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։
Ի թվին ՌՀԶ (1627)։

բ

Ո՛վ սբ. ընթերցողք, յիշեցէք ի Քրիստոս զՅակոբ գրողս և ըզ-
Կարապետ բանի սպասաւորս, զստացող գրոցս Աստուած ողորմի
ասացէք։

412

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

ՄՅՁԵԳ, II, № 525

Գրիչ՝ Սաեփանոս երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

530 Փառք...։ Որ ետ կարողութիւն տկար և անիմաստ, հող և մոխիր,
անարժան Ըստեփանոս էրիցու, որ միայն անուամբս եմ և ոչ գործով,
հասանել ի յաւարտ սբ. Մեկնչի Աւետարանիս Յոհաննու, ի թուականու-
թեանս Հայոց ՌՀԶ (1627) ամին, ի Շօշ քաղաքն, Ասպահան, ի գեաւղն,
որ կոչի Ջուղայ, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին, և աթոռա-
կալութեան մերոյ գեօղիս Ջուղայոյ՝ խաչատուր վարդապետին. ի խնդրոյ
բարեմիտ, հեզահոգի և երկիւղած մահտասի Մարգարէ, յիշատակ բարի
հոգոյ իւրոյ, և ծնողացն՝ Բաշխէ, Գրիգորին, Խանէ, Խանփարէ, և եղ-
բարցն՝ հանգուցեալ ի Քրիստոս, մահդասի Զաքարէ, Ըստեփանոսին,
քրեերն՝ Խանփարէ. ամէն։ Արդ՝ ես մահդասի Մարգարէս, որ եռափափագ
և յօժար սրտիւ գրել տվի Յոհաննու Աւետարանի Մեկնիչս, ի զարդ և ի
պայծառութիւն մանկանց սբ. եկեղեցոյ, յիշելով զբան մարգարէին որ

ասէ. «Երանի...»[59]։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմահդասի Մարգարէն, և կողակիցն իւր՝ Փաշփաշն, և զորդիքն՝ պարոն Եղիէն, զոր տէր Աստուած յերկար ամօք անփորձ և անսասան պահեսցէ մինչև ի խորին ծերութիւն. ամէն։ Եւ հանգուցեալ ի Քրիստոս Աւետիսն, Յովանէսն, և թոռունքն՝ Բաշխի, Խանասաիկն, Խանփարի, յիշեցէք...։

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպողդ, եթէ որք կարգայք կամ օրինակէք, զաւելն բառնայք և զպակասն լնուք, սխալանացն և խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, աղաչեմ զընթերցողդ. ամէն։

Բ

Զքստացօղ գրոյս մահդասի Մարգարէն, և զորդին իւր՝ պարոն Եղումն. ամէն։

413

ԺԱՄԱԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ՔՅԶԶՎ, № 34. տե՛ս նաև Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, էջ 213

Գրիչ՝ Մելքիսեթ աբեղայ
Վայր՝ Խորձիւն

ա

58 Արդ՝ գրեցաւ գիրս այս աղաւթից և փրկականն խորհուրդ սբ. պատարագին ի թուականիս Հայոց ՌՀԶ (1627) ամին, ի գաւառն Խորձիւնի, ի Կեղալեառն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Մարտիրոս քաջ երաժիշտ և աստուածաբան վարդապետին Տարօնցոյ, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, ի դուռն Մշու Սբ. Կարապետին, ի սեպտեմբեր ամսոյ ի ԺԶ (16), աւուրն կիրակէի, հրաշափառ կենսատուու սբ. խաչի տօնին։ Աստուած ողորմի իւր հոգւոյն. ամէն։ Եւ արդ՝ ես յետինս ի կրօնաւորական դասուց ձեռամբ ողորմելի և ամենայն մեղաց լիապէս գործող գրիչս Քօթանեացի սուտանուն Մելքիսեթ աբեղայ, որ անուամբս եմ միայն և գործովս ոչ, ցանկացայ յայսմ կտակի ի ժառանգութիւն անձին իմոյ և յետ ելանելոյ ի կենցաղոյս, եղիցի սա յիշատակ ինձ և ծնօղացն իմո[ց], հօրն՝ Խուպիարին և մօրն իմո[յ] Սառային, և եղբարցն իմ՝ Քրիստոսատուրին և
59 Անառնին, և քուերցն իմ և համ//օրէն ամենայն արեան մերձաւորաց իմոց կենդանեաց և հանգուցելոց։ Գրեցի լաւ և ի ստոյգ օրինակէ, որ էր ուղղեալ ի սբ. հարանցն։ Արդ՝ աղաչեմ զամենեսին սիրով Աստուծոյ, յիշել սրտի մտօք զանարժան գծողս և զաղգայինս իմ, ի ձեռն ձեր սբ. խնդրոցն ողորմել ինձ և իմոցն սղալանացն ներեցէք, և սիրով խոնարհեալ ուղղեցէք, և թէ գրտանի սղալ՝ մեք ոչ իմաց[աք], բայց գիտնոցն մաղթեմ կրկին ուղղել։ Եւ աշխատաւորացն ի սա վարձս բարի տացէ Աստուած, որք յիշէքդ զմեզ Որդին Աստուծոյ և զձեզ յիշեսցէ և ողորմութեանցն իւր արժանի արասցէ հանդերձ ամենայն հաւատացելովք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր։...

[59] Եսայ. ԼԱ, 9։

Գիտէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանունն կու չնչեն և զիւրեանցն կու գրեն. և չար է սովորութիւնս այս. աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ. ապա թէ արժան է դրելոյ՝ գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ և զառաջնոյն մի՛ չնչեսցէ անուն կամ գիր. և որ ոք յայս յանդգնի և չնչէ՝ ինքն չնչի ի կենաց գրոյն, ո ոք և իցէ, եթէ մեծ ոք և կամ փոքր։

Բ

Թուղթս հին, թանաքս խամ,
Ու գծողիս բարքս է անհամ,
Բայց յիշողացդ յոյժ աղերսամ,
Թէ թողութեան արժանանամ։

Գ

Դարձեալ յիշեցէք զԱզօթամատոյցի թղթիս գնողն զՀոիփսիմէն, և զհայրն իւր՝ զՏօնապետն, և զմայրն իւր՝ զՄարիամն, և զառն իւր՝ զՄխիթարն, և զորդիքն իւր՝ զՅակոբն և զԳրիգորն և զվերջին այրն իւր՝ զԳասպարն, և զդուստրն իւր՝ զԳոհարն, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

414

ԱԻԵՏԱՐԱՆ

Մանչեստր, «ՀԱ», 1959 թ., էջ 250—252

Գրիչ՝ Ղուկաս քահանայ

Ա

Փառք...։ Ուստի և ջառաւիղն աստուածութեան և սեռն բարենշան, սրբասէր, և հեզահոգի, բարեմիտ տէր Մինաս քահանայն ցանկացող եղև այսմ երանաւէտ և կենսապարգև սբ. Աւետարանիս, և ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, զանձ անկողոպտելի առ Քրիստոս բարեխօս և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծընաւղաց իւրոց, հօրն՝ Մատթէոսին և մաւրն///

Բ

Անարժան և յոգնամեղ գրչի,
Ղուկաս սուտանուն քահանայի,
Սկրսման զտառս ի զձի,
Ով ոք որ զսա տեսանի,
Լի սրտով նա ինձ վա(sic.) անի,
Նա ինքն ահեղ ատենին Քրիստոսէ հոգով վարձադրի։

Գ

Ով պատուական հարք և եղբարք, յորժամ հանդիպիք սբ. Աւետարանիս կարդալ[ով] կամ աւրինակելով, լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած աղորմի ասացէք մեղաւոր Ղուկաս գծողիս...[60]։

[60] Տե՛ս նման մի հիշատակարան ևս։

Դ

Զանարժան Դուկաս գրիչս յիշման արժանի արա, ո՛վ ընթերցող, աղաչեմ։ Թվին ՌՀԶ (1627) էր։

415

ՏՕՆԱՑՈՅՑ

Բելրութ, «ՀԱ», 1959 թ., էջ 420

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Հալապ

Ա

Փառք...։ Գրեցաւ Տօնացոյցս ձեռամբ տրուպ Աստուածատուր դպրի, Թվին ՌՀԶ (1627), ի Հալապ քաղաքի, ի վայելումն տէր Ստեփանոս կրօնաւորին, վասն անձին իւրոյ. Աստուած վայելել տացէ. ամէն։ Եւ յետ անցմանն յիշատակ անշնչելի մնասցէ։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զիս՝ զանարժան Աստուածատուր դպիրս[61], *զգծողս այս Տօնացոյցիս և զծնօղսն իմ։ Եւ լի, և առատ սրտիւ ողորմի ասացէք և ձեզ ողորմեսցի տէր Աստուած ի միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն։*

Բ

Վասն սիրոյն Քրիստոսի զնուաստ գծող Աստուածատուր դպիրս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ։ Գրեցաւ Թվին ՌՀԶ (1627)։

416

ԱԻԵՏԱՐԱՆ (1236 թ.)

Ս. Մելիք Հակոբյան, «Բազմավէպ», 1924 թ. էջ 326

Կազմող՝ Խաչատուր վարդապետ

Ի Թվականին Հայոց ՌՀԶ[62] *(1627) կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Խաչատուր վարդապետի*[63]...

417

ԺԱՄԱԳԻՐՔ

Կամենից, էջ 179

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

Զմեղապարտ զԱստուածատուր դպիրս յիշեցէք յաղօթս ձեր, ո՛վ պատուական հարք և նազելի եղբարք։... Թվին ՌՀԶ (1627) գրեցաւ Ժամագիրքս։

---

[61] Մինչև այստեղ համառոտ տե՛ս նաև Մատենադարանի № 9027 ձեռ-ի 21 ա էջում։
[62] Նկարագրողը հաղորդում է, որ «Թվականը պարզ չէ, ես կնմանեցնեմ յիշյալ տառերին»։
[63] «Մնացյալ տողերը պարզ չի կարդացվում» հաղորդում է նկարագրողը։

418
ԱԻԵՏԱՐԱՆ

ԳՍ. «Արարատ», 1905 թ., էջ 732—733. տե՛ս նաև Աղավնունի, Այցելութ, էջ 355

Գրիչ՝ Յովհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

...Մարգարտաշատ, պատուականաձև սբ. Աւետարանն աւարտ եղև ի դառն և [ի] վշտաշատ ժամանակիս, ձեռամբ յոգնամեղ Յովհան սուտ և խաբեբայ Հիզանցւոյ... ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ Տեառնեղբաւր աթոռոյս և Ս. Յակոբայ գլխատանս որդւոյն Զեբեթեայ. ի հայրապետութեան սբ. աթոռոյս տէր Գրիգոր արհուն, ի թուականիս Հայոց ՌՀԶ (1627)։ Անմեղադիր լերուք այլուայլ գրիս, զի շփոթով գրեցի...։ Յիշեցէք զՅովհան Հիզանցիս և զծնողսն իմ՝ զտէր Յովհաննէսն և զԱնլին..., և զտէր Մարտիրոս թղթիս կոկողն...

419
ՇԱՐԱԿՆՈՑ

Ա. Ալպոյաճյան, «Պատմութիւն Եդեսիոյ Հայոց», էջ 1578

Գրիչ՝ Թումաս

ա

Փառք..., որ ետ յուժ և կարողութիւն տկար և տարտամ անձին իմոյ՝ ս[ու]տանուն Թումաս հողագործիս, որ մեղօք լի եմ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ մեղաւորիս։ Դարձեալ գրեցի, երգարանիս խօշորութեան և սղալանացս՝ անմեղադիր լերուք, զի ժամանակս դառն էր, զի թվին Ռ և ՀԶ (1627), [յ]որժամ որ գրէի Յաշին եկաւ որտնով[64]*, յանուամբն թարգման. քանզի Դ (4) ամիս նստաւ։ Աւ[ր]ն Բ (2) անգամ Գ (3) անգամ կանչէին, թէ տարին ոգակաւ մալ, ապրանքն կու տանէին։ Միտքն ցնոր էր։ Դարձեալ յիշեցէք, ո՛վ սրբամիտք քահանայք, ի մաքրափայլ աղօթս ձեր Թումաս, զհայրն իմ՝ տէր Սարգիսն, և մայրն իմ, և զեղբարքն իմ՝ զԻբրիահոսն և զտէր Անարէաս, և զամենայն ազգատոհմն իմ, զի ողորմած տէրն հաշտի և արքայութեան արժանի առնէ. ամէն։*

բ

Այլ գրով

Յիշատակ է Շարակնոցս Թագուհէ մօրն և Մելիքին, հօրն՝ Առաքելին, առն իւրում, պապերին, հօրն՝ Յարմզատին։ Դարձեալ ողորմի Խազարին, որ պատճառ եղև թղթին։

---

[64] *Տպված է «որ տնով (և՞)» անհասկանալի է։ Կարդացինք «որտնով». իմա՛ «օրտուով», այսինքն «զորքով»։*

420

ԱՒԵՏԱՐԱՆ (1406 Թ.)

Հ. Քոսյան, Հայք ի Զմիւռնիա..., Բ, էջ 22—23

Կազմող՝ Յովանէս

Փառք...։ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս յիշեցէք զտէր Վարդանն, *որ մտաւ էած զսէրն Աստուծոյ, և նորոգել ետուր զսբ. Աւետարանս, յիշատակ իւր և ծնաւղացն, հարն իւրոյ՝ տէր* Գալուստին *և մարն իւրոյ՝* Խանաշին, *և եղբայրն իւրոյ* Մխիթարին, *և ամէն յարեան մերձաւորացն. ամէն։*

Դարձեալ յիշեցէք զտէր Վարդանն, *և զկողակիցն իւր՝* Նարկիզն, *և որդիքն իւր՝* Մովսէսն:

[Ի] Թ[վին] ՌՀԶ (1627) կազմեցաւ ձեռամբ Յովանիսի, *որ զանունս միայն ունիմ և ոչ գործս բարութեան։*

421
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1465

Գրիչ՝ Նազար

ա

27-ը Կամօքն Աստուծոյ...։ Ես նուաստ և տգէտ ի մանկունս եկեղեցոյ, զառածեալ մեղօք, սակաւ մի սակս աւելի թվին զեկուցից գեղջուկ բառիւք։ Որ է յայսմ ամի թվական Հայոց ՌՀԸ (1629), և ոչ է ՌՀԸ (1629), այլ ՌՀԷ (1628), որ է Հռոմայեցոց մեծ թիվն ՌՃԶԱ (1381)[1] և փոքր թիվն որ է քննիկոն ՃԺԷ (317)[2]։ Որ յայսմ ամի ջուրն ի սահմի ի ԻԴ (24) աւրհնեցաւ[3]։ Որ յարաց ամսոյ Ա(1) թիւ բռնես մինչ ի սահմի ԻԴ (24)՝ Թ(9) ամիս լինի. և Թ(9) ամիսն Մ և Հ (270) օր լինի. և յորժամ չորեքպատկես՝ Ռ և Զ (1080) թիւ լինի։ Եւ է այս տարիս առաջի ամ, Գ(3) ի բաց երթաս կու մնա ՌՀԷ (1077) որ է թիվն Հայոց։ Եւ կալ զՀռոմի մեծ թիվն և երթ Դ, Դ(4,4), տե՛ս որ Ա(1) կու մնա, որ է առաջի ամ։

բ

300բ Ո՛վ հայրք և եղբայրք, որք հանդիպիք գրոյս կարդալով կամ օրինակելով լի բերանով ողորմի ասացէք գծողի սորայ, անարժան Նազարին, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն

422
ԳԻՐՔ ՀԱՐՃՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Երևան № 2599

3ա Աւգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արաք գրոցս թվին ՌՀԷ (1628) մարտ ամսոյ Ը(8), աւրն շաբաթ։ Աւգնեա Հոգի Սուրբ։

---

[1] Նկատի ունի Հռոմի հիմնադրման երկրորդ հազարամյակը. այսպես 753 թ. (մ. թ. ա.) մինչև 274 թ. (մ. թ.) վերջինից մինչև 1628 թ. կլինի 1381 տարի։

[2] Հանվանարար նկատի ունի վրացական քրոնիկոնի փոքր թվականը՝ 1313։ Բայց հաշվարկումը պետք է լինի ոչ թե 317 (ՃԺԷ), այլ 815 (ՃԺԵ)։

[3] Հայոց ՌՀԷ թվականը հուլյան տոմարով սկսվում է 1627 թ. հոկտեմբերի 16-ից։ ՌՀԷ թվականի սահմի 24-ը կհամապատասխանի 1628 թ. հունվարի 7-ին, սակայն ջրօրհնեքը լինում է հունվարի 6-ին։ Ուստի սահմի ԻԴ-ն (24-ը) պետք է ուղղել սահմի ԻԳ (23)։

423
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՎԱՑԻՈՑ
Երևան, № 6866

Գրիչ՝ Անդրէաս դպիր

Վերջին պահպանակ

Անդրէաս դպիր գրեցաւ ի թվին ՌՀԷ (1628) մարտի ԺԲ (12). օրինակեցի զայս Հարցման գիրքս. փառք յաւիտեանս. ամէն։

424
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան № 8534

Գրիչ՝ Միքայէլ Թոխաթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

321բ Փառք...։ Գրեցաւ Շարակնոցս թվին ՌՀԷ (1628) մարտի ԺԲ (12), ի մայրաքաղաքն ի Կոսանդինուպալիս, ձեռամբ անարժան և անպիտան գրչի Միքաէլի Թոխաթցոյ։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրինակելով մէկ Հայր մեղաւ մի յիշեցէք զՄիքաէլ գրիչս և ղծնաւղսն իմ, և զկենակիցն իմ զհանգուցեալն առ Քրիստոս...։

Արդ՝ ըստացաւ զսա ի հաղալ արդեանցն [Տիրումի][4] և ետ գրել անձին [իւրու]մ, Աստուած բարով վայելել տացէ իւրեանն. ամէն։ Եւ ի հանդերձեալն...։

բ

11ա Ցիշատակ է Տիրումին հոգուն[5]։

425
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏՁԵԹ, VI, № 1909

Գրիչ՝ Յոհան Լէհցի

ա

341 Ըստացաւզ ձայնաւոր տառիս զՊադասսուր դպիրն, նաև ծրագրիչս զՅոհան Լէհցիս, աղաչեմ յիշել ի Տէր։

բ

Ըստացող երաժշտական երգարանիս, որ Ական շար կու [յ]որշորշի, զՊաղասսուր շնորհալից դպիրն, ընդ նմին և զանպիտան նոտարս ի Տէր յիշել աղաչեմ։

գ

Գրեցաւ թվին ՌՀԷ (1628), մարտ ամսոյն ԺԵ (15)։

---

[4] Ստացողի անունը Սահակ վարդապետ Տեր Հարութիւնյանը եղծել է և գրել իրենը, վերականգնեցինք ստացողի անունը ըստ բ և այլ հիշատակարանների։

[5] Այսպիսի հիշատակարաններ տե՛ս նաև 2 ա, 23 բ, և այլ էջերում։

Ղ

Զթարմատար և թերավարժ, անարժան, ապիկար Յոհան Լէհցի նոտարս, նաև զուսուցիչս իմ՝ զտէր Նազարէթ Կոստանդինուպալսեցոյ զպատուական քահանայն, որ առ Աստուած փոխեալ է, ի Տէր յիշել աղաչեմ։

426

ԲԱՌԳԻՐՔ

ՏՀԼԱ, № 22, տե՛ս նաև Rapp, Mac., VII, № 24, էջ 147, «ՀԱ», 1937 թ., էջ 149, № 22

Գրիչ՝ Մկրտիչ

29 Աւարտեցաւ ի թվին ՌՀԷ (1628) մարտ ամսոյն ԺԷ (17), ձեռամբ մեղապարտ Մկրտչի, Ղազարի որդոյ։ Ո՛վ եղբարք, աղաչեմ զձեզ, որ կարդայք ի վերայ սորա կամ օրինակէք ի սմանէ, յիշել կու հայցեմ ի ձեզանէ մէկ Հայր մերիւն։ Եւ յիշողք՝ յիշեալ լիցին ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի...։

427

ՍԱՂՄՈՍ ՏԱՂԱՋԱՓԵԱԼ ՅԱԿՈԲ ԹՈԽԱԹԵՑԻՈՅ

ՄՏՁԵՊ, III, № 892 (1675 թ.)

Գրիչ՝ Յակոբ Թոխաթեցի

Վայր՝ Զամօսցայ

404 Փառք..., եւ կարողութիւն տկարացեալ անձինս, հասանել յաւարտ եղանակաւոր մատենիս, որ կոչի Յակոբի Սաղմոսարան։ Վասն զի զբովանդակ Սաղմոսն Դաւթի գտանես ի սմա շարադրեալ ոտանաւորս գեղեցիկս պէսպէս եղանակաւ։ Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ Յակոբի, սորին շարադրողի, բազմամեղի և յոգնասրղալ անցաւորի, ի յիշատակ հոգւոյս տկարի, ի թվականութեանս հայկազան տումարի ՌՀԷ (1628) ամի, ի ԻԸ (28) ապրիլի ամսոյ, յանգ ելաւ շնորհօք Ս. Հոգւոյն, ի քաղաքս Զամօսցայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և ի ժամանակս յայս կաթողիկոս ի սբ. Էջմիածին՝ ոչ գիտեմք թէ ով ոք է։ Վասն զի յանցեալ ամի, որ էր թվականն Հայոց ՌՀԶ (1627), վաղճան ընկալաւ տէր Մելքիսեդեկ կաթողիկոսն ի Կամենից։ Բայց առաջնորդ Լովայ էր տէր Նիկողայոս արքեպիսկոպոսն[6] նորընծայ, յաթոռն իւր, զոր Աստուած ընդ երկայն ատուս արասցէ. ամէն։

428

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 466

Վայր՝ Լէվ

182ա Փառք..., որ եւ կարողութիւն և զօրութիւն ինձ հիքիս և մեղապարտ անարժանիս, տրուպիս, տարտամ հեղգ անձինս յանգ ելանել աստուածա-

[6] Սկսած, «ՌՀԷ (1628) ամի»-ից մինչև այստեղ համառոտ տե՛ս նաև Բժշկյանց, էջ 126։

յին բուրաստանիս, աստուածաշունչ մատենիս, որ կոչի Բնութեան և կազմութեան գիրք, լուծմունքով, որ է արարեալ սրբոյն Գրիգորի Նիւսացոյ, նուրբ և խրթին, աստուածաբան և տիեզերալոյս եպիսկոպոսին, եղբօրն՝ Բասեղի Կեսարացոյն, ի աշխարհս Հոռոմ, ի տիրախնամ և աստուածապահ մայրաքաղաքս Լէվ, ընդ հովանեաւ ննջմանն Ս. Աստուածածնին և այլ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի թագաւորութեանն Լէխաց Զիկմունդի Երրորդի, և ի կաթողիկոսութեանն սբ. Էջմիածնա[յ] սրբասնունդ, արի և քաջ, խստակրօն վարդապետի տեառն տէր Մովսէս ընտրեալ կաթողիկոսի, ի թվին Հայոց ՌՀԷ (1628) յունիսի ԺԶ (16), ձեռնտ[ու]ութեամբ և օգնութեամբ երից աշակերտացս՝ մանկագունից և տհասից, որ ի արհեստս բազում աշխատեալ [են] և այս գիրս նոր և առաջին հանեալ Պողտանի Խաչիկ, Նուսֆոյի Միսֆո և Մէրիկի Հանգոյ[7]։ Զոր երես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ ընթերցմամբ կամ գաղափարելով խոշորութեան գրիս չի մեղադրէք և սղալանացն ներեցէք, զի կար մեր այսչափ էր։ Եւ որք զմեզ յիշեն ի ուղիղ սրտէ՝ յիշեսցին ի Քրիստոսէ օրն վերջին...։

429
ԲԺՇԿԱՐԱՆ
AHTFG, № 86

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Լով

110 Փառք...։ Գրեցաւ ի Լով քաղաքս, ի վայելումն բժշկապէտ ճողեցի[8] խոճայ Յովանէսին, ձեռամբ անարհե[ս]տ գրիչիս Մկրտչիս, ի թվին ՌՀԷ[9] (1628), աւգոստոս ամսոյն Ի(2), թարգմանութեամբ ասորի տէր Յովանէսին Տիարպէկցի։

430
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 3352

Գրիչ՝ Մակար երէց
Վայր՝ Սֆիու

ա

148ա Այլ ստացողի գրոցս տէր Աբրահամին և ինձ մեղաւորի անուամբ տէր Մակարի, յետս անկեալ գրչի, թըխտիս կոկողի և աշխատողի և կերակրողի ողորմեաց։

բ

201ա Փառք...։ [Ա]րդ՝ գրեցաւ սբ. գիրգս որ կոչի Մաշտոց, ձեռամբն ոսմեմն անարժան և անիմաստ գրչի Սեփասպիացի Մակար երիցուվէս, որ գիւղն կոչի Զաուայ։

---

[7] Սրանց ուսուցչի, թերևս բուն գրչի անունը այստեղ չի նշված։
[8] Ձեռ.-ում՝ «ճողչի»։
[9] Սխալմամբ տպված է ՌՀԷ։

Ի թվին Ռ տ. Հէ (1628) ամի,
Գծագրեցաւ սայ քարտիսի,
Սե[պ]տեմբերի ի չորս աւրի,
Պատկեր աւուրն հինգշաբաթի։
Գծագրեցաւ ի սոյն ամին,
Ի Սֆիու[10] մեծ քաղաքի,
Ի գուռն Ս. Աստուածածնին։
Ի ժամանակ թագաւորի,
Սուլթան Մուրատ անուն կոչի,
Ի ժողովել մեծ ասքարի,
Ընդ մարտընչել հետ զղըլպաշի։
Պատերազմունք շատ արարին,
Բաղում ասքար կոտորեցին,
Տվին Պաղտատ անգին ճոհար,
Իւր նմանակ քաղաք ոչ կայր։
201բ Մուտառ//խսլար ու մոլալար,
Աղլաշուրլար ու կազարլար,
Ահտի վաթան Պաղտատ,
Ղզիլպաշայ զալատէի։
Դարձեալ և ես մեղաւք ի լի։
Ոտից կոխան հող և փոշի,
Մակար անուն Սեփասացի,
Անուղղագործս ի յարհեստի։
Զոր յիշատակ սա եղիցի,
Ինձ և ծնաւղաց նաև զարմի,
Այլ ամենայն ազգատոհմի,
Քրւերց ւ եղբարց մեծի փոքրի։
Ննշեցելոց և կենդանի,
Եւ որ գալոց են յետ մեզի,
Խնամով պահօղն ըզսա աւրհնի,
Եւ ընդ սրբոցն գասեսցի։
Ի հ[ր]ոյ ս. ի չրոյ զսա պահաւզի,
Ի ի գողնալոյ անհաատի,
Ցիշողքն ի Տէր յիշեալ լիցի...։

431

ԱԻԵՏԱՐԱՆ

Rapp. Mac., VII, № 13 (ժամանակ ?)

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Իլով

ա

126 Ես մեղաւոր և անարժան, բիւր քանքարոյ պարտական, ծառայ չար և յապիրատ, ի հրամանս տեառն Աստուծոյ իմոյ, այլ և հուսկ, և յետին,

[10] Իմա՛ Սոֆիա։ Ձեռ-ի սկզբի և վերջի թերթերին կպցված են նկարներ։

և տրուպս յամենայն աստիճան տ[երան?]ց կոչեցեալ դպիր, որ է Դ (4) աստիճան, բայց գործովս հեռի և մեկուսի Սիմէոն[11] *անուն, որդի* Մարտիրոսի: *Մնօղքն իմ բնական յաշխարհէն Հոնաց, ի տիրախնամ և աստուածապահ ծովահայեաց քաղաքէն* Քաֆայու, *[պան]տուխտ գոլով եկեալ բնակեցան քրիստոնէից երկիրն՝ ի զաւառն Ղոզաց, որ տիրեն Լեհք, ի նորաշէն գիւղաքաղաքն* Զամոսցա, *թողեալ զմեզ նշդեհ, և ինքե[ա]նք փոխեցան յանանց կեանսն, առ յոյսն ամենեցուն Քրիստոս։ Բայց զիս*
127 *տվեալ յուսումն գրոց, որում հա//սու եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հասակի հասեալ զէգերեալ և մարզեալ ի վարժարանս* Լանասդանի *առ յոտս վարդապետաց և բանասիրաց։ Եւ երբեմն ընթերցեալ իմ զվարս հարանց և զպատմութիւնս վիպասանաց...*

Բ

...[ի]սկ ի թվին ՌՀԷ (1628) սեպտեմբեր ամսոյ եկն ի Լէհ Էջմիածնա[յ] Մելքիսէթ *կաթողիկոսն*[12] *ծեր և ալևոր, խելաց թափեալ, և յուժէ անկեալ, յոյժ գինէմոլ և արծաթասէր, ունելով ընդ ինքեան յոլով եպիսկոպոսս, հոմանիս իւր և գինարբուս, իսկ յումանէ բնաւին հեռու, և կացին Իլով կէս տարի։*

432

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6390 (1467 թ.)

Գրիչ՝ Զաքարիայ Էջմիածնեցի
Վայր՝ Դավրէժ

131ա *Ո՛վ պատահողք այսմ սբ. Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհեզահոգի* Թավ[ր]իզեցի *խօջա* Ուլուբէկն, *և կողակիցն իւր* Բիֆային, *և այլ ամենայն արեանառու մերձաւորքն՝ զ*Բէկումաղէն, *խօջա* Իսային, *խօջա* Մաղսուտն, *խօջա* Բէկն, Մախթում *աղէն,* Խսրունին,
131բ Շանբուտաղին, Ասլինին, // Խանիջանին, Նասրուն, Բիֆին, *իւրեանց որդոցն՝* Միրզաջանին, Շարաֆին, Աւաֆին, Թանիրին, *պարոն* Գրիգոր[ի]ն *և իւր որդոյն՝* Արուլին, Հայրապետին, *իւր որդոյն՝* Ղարիպջանին, Ուլուբէկին, Մաղսուտին, *և քեռն իւրեանց՝* Մարիամին, *և իւր որդոյն՝* Սաֆրազին, Զաքարիային, Թամուրազին, Պապուկին, Թուրիկին, Մանպուղին, Միրիջանին, Բիֆային, Շահմաւջուտին, Աղամունաւարին, Թանիրին *և այլ սաղմնասէր բարեկամաց մերոց՝ կենդանեացն կեանք և առողջութիւն, ննջեցելոցն հանգիստ և արքայութիւն. ամէն։ Դարձեալ կրկին անգամ աղաչեմք կողկողագին պաղատանօք, յորժամ հանդիպիք...։*

---

11 *Մատենագիր Սիմեոն Լեհացին է։*

12 *Այս վկայությունը կասկածելի է, տարեթիվը պետք է լինի ՌՀԸ (1626), որովհետև այլ տեղեկությամբ Մելքիսեթ կաթողիկոսը մահացել է 1626/27 թ. ընթացքում, տե՛ս հիշատակ. № 427։*

Գրեցաւ այս յիշատակ[արանս] ի թվականիս Հայոց ՌՀԸ (1628) նոյեմբերի ԺԸ (18)[13], ի Դավրէժ քաղաքի, ձեռամբ Զաքարիայի էջմիածնեցոյ:

433
ՏՕՆԱՑՈՅՑ

Կամենից, էջ. 81 տե՛ս նաև CBCon. № 69, էջ 183, Ղ. Փիրզալեմյան, «Նշախարք», հտ. Բ, № 493, էջ 410

Գրիչ՝ Վարդերես սարկաւագ

Գրեցաւ Տօնացոյցս այս ի հայրապետութեան այսմ նահանգի տէր Մովսէս կաթողիկոսին, և ի թագաւորութեան Ֆռանգաց ազգի Գ (3) Զիկմոնդին, ի թվաբերութեան Հայոց ՌՀԷ (1628) և ի յամասեանն դեկտեմբերի ԺԳ (13), ի վայելումն պարոն Վարդերես դպրի, որդւոյ պարոն Գրիգորին. Աստուած բարով վայելել տացէ նմա ընդ երկայն ժամանակաւ։ Եւ գրեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան Վարդերես սարկաւագի։ Աղաչեմ, ո՛վ եղբարք, յիշեցէք զիս զմեղաւորս՝ ի սր. յաղօթս ձեր և Աստուած զձեզ յիշէ։

434
ԲԺՇԿԱՐԱՆ

Երևան, № 5847

7բ Թարգմանեցաւ պատուական բժշկարանս ի թվականիս Հայոց ՌՀԸ (1628)[14] ամին, սահմի ամսոյ ի ԺԸ (18), օրն չորեքշաբթի, որ է դեկտեմբերի ԼԱ (31), այս մերն էր, և գիրքն կազմած ատենն թվին Հայոց ՉԺԸ (1468) ամին գեմտեմբերի ԻԶ (26), որ ծնունդ էր այլազգեաց հաշուովն. ի կաթուղիկոսութեանն տէր Ղռատդիսին և եպիսկոպոսութեան տէր Յովակիմին: Որ կարդայք և օրինակէք թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ թարգմանողի գրոցս Ամիրաուվաքին և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալուստն. ամէն, և զմեղաւոր գրիչս յիշեա[15]։

435
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 198

Գրիչ, ծաղկող՝ Սահակ քահանայ
Վայր՝ Բաղէշ

ա

357բ Փառք...։ // Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, մաքրամիտ և հեզահոգի, իմաստուն վաճառականն խոշա Գրի-

[13] Տոմարական մեր դիտողությունը տե՛ս № 434 հիշատակարանի 14-րդ ծանոթագրությունում։

[14] Հայոց ՌՀԸ թվականը սկսվում է 1628 թ. հոկտեմբերի 15-ից (հուլյան տոմարով)։ Հայոց ՌՀԸ թվականի սահմի ամիսը կսկսվի 1628 թ. դեկտեմբերի 14-ից և կավարտվի 1629 թ. հունվարի 12-ին։ Այստեղից էլ սահմի ամսի 18-ը համապատասխանում է 1628 թ. դեկտեմբերի 31-ին և այդ երկու օրն էլ իրոք չորեքշաբթի է։

[15] Այս հիշատակարանում տեղեկություններ կան նաև Ամիրդովլաթի հիշատակարանից։

զորն Երևանցի և եռափաքաղ սիրով, և սերտ հաւատով, և յաւժար կամաւք ցանկացող եղև այսմ ծաղկաւէտ և վարդափթիթ, կենսաբուխ սբ. Աւետարանիս և ըստացաւ զսա, յիշելով զբան մարգարէին, որ ասէ. «Երանի...»[16], վասն այն յուսոյն ըստացաւ զսբ. Աւետարանս՝ ի պայծառութիւն սբ. եկեղեցոյ և ի վայելումն մանկանց Սիովնի։ Այլ և յիշատակ բարի
358ա հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց Առաքելին և Թարղումաշին, // և կենակցին իւրոյ՝ Բեկիխաթունին, և որդւոցն՝ Սիմէոնին, Յարութենին, Ավէրիսին, հոգևոր որդոյն՝ Յակոբին, դստերցն՝ Փիանդին, Սեվերին, և քրւերն՝ Ողուրսուլթանին։

Արդ՝ որք հանդիպիք լուսազարդ և կենսաբուխ սբ. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զխոշա Գրիգորն և զծնողսն իւր՝ զԱռաքելն և զԹարղումաշն...[17]։

358բ Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց և անպիտանս և անարժանս ...Սահակ սուտ և լոկ անուամբ քահանայ, որ միայն զանունս ունիմ և զգործս ոչ, տկարութեամբ իմով գրեցի և ծաղկեցի ըստ կարի իմում և ըստ տկարութեան անիմաստ մտաց իմոց, բայց աւժանդակութեամբ և ձեռնտուութեամբ Հոգոյն Սրբոյ աւարտեցի զսա ի թվականութեանս հայկազեան տոմարի ՌՀԷ (1628) ամի, ի քաղաքիս Բաղիշու, ընդ հովանեաւ Ս. Սա[ր]գսի զաւրավարին և այլ սրբոց, որ աստ կան հանգուցեալ։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ինձ՝ Սահակ մեղսամած գրչիս և իմ ծնողացն՝ Սաեփանոսին և Շահումաղին, և կենակցին իմոյ, և դստերն իմոյ՝ Հռիփսիմին,
359ա և եղբարց իմոց // Յակոբին և Ոսկիանին և ամենայն արեանառու մերձաւորացն մերոց...։

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զհոգևոր ծնողն մեր, և զբարի երախտաւորքն մեր, և զուսուցիչքն՝ զտէր Յովանէս քաշ քարտուղարն Հիզանցի և զտէր Կիրակոսն և զԴիլաքն, որ աշխատեցան հետ անարժանիս յուսումն արեստիս, նաև զտէր Ներսէս ուսուցիչն իմ. ևս առաւել զհոգևոր որդիքն իմ և զաշակերտքն՝ զտէր Ասեփսն և զՄուրադ սարկաւագն, որ բազում աշխատեցաւ ի ծաղկել սբ. Աւետարանիս, ձեռն տալով տկարութեանս մերոյ, և զմիւս Մուրադ պատանին ևս, և զայնոսիկ որ երախտիք և աշխատանք ունին ի վերայ մեր թէ՛ հոգևոր, թէ՛ մարմնաւոր, զոր տէր
359բ Աստուած հատուցանէ զփոխարէն յարքայու//թեան երկնից. ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան զհանդիպող սբ. Աւետարանիս, որք կարդայք կամ աւրինակէք կամ զսբ. տնօրինական պատկե[ր]սն տեսանէք և մխիթարիք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սմին զխոշա Գրիգորն...[18]

Բ

25ա Աղաչեմ զբանդ Աստուած զծնեալդ յաղախնոյս ողորմեա՛ Սահակ գրչի և ծնողաց նորին, և Մուրադ դպրին և Գրիգորին և ազանց նոցին. ամէն։

---

16 Եսայ. ԼԱ, 9։

17 Նորից թվում է վերևում հիշված անունները։

18 Նորից թվում է արդեն նշված անունները։

Գ

191բ Համբարձման կարդա զսա և զՍաճակ գծաւզս յիշեա՛։

436
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, Մ 291

Գրիչ՝ Միքայէլ Թոխաթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

247ա Փառք...։ Գրեցաւ սայ ի թվին ՌՀԷ (1628), ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպալիս, ձեռամբ Թոխաթցի Միքաէլի։ Արդ՝ աղաչեմ զամենսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրինակելով, մէկ Հայր մեղաւոր մի յիշեցէք զանարժան գրիչս և զծնաւղսն իմ, և զկենդանիս, և զննջեցեալսն իմ...։

Եւ արդ՝ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զԵրևանցի Մելիքն, և զծնօղսն՝ Ամիրպեկն և զՈղորմն, և զկողակիցն՝ Մարգարիտն, և զեղբայրքն՝ զՅակոբ և Աթիսլեկն, Խանալն և զՄարիամն, և զամենայն արեան
347բ մերձաւորսն սորայ, // յիշեսջիք ի Քրիստոս։ Որ ստացաւ զսբ. Աւետարանս արդար վաստակոց իւրոց և եդ յիշատակ իւր հոգւոյն և ծնաւղացն ի[19]

437
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ
Երևան, Մ 1017. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, Մ 494, էջ 410, CBCon, Մ 35, էջ 75

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Կ. Պոլիս

ա

468ա Փառք...։ Ի թվականութեանս հայկազեան տոմարիս ՌՀԷ (1628), ի հայրապետութեան տեառն Դաւթի, և ի թագաւորութեանն Կոստանդինուպոլսի սուլտան Մուրատին, ումն յերկրէն Հարբերդու, անուանեալ Առիստագէս[20] վարդապետ, ուսեալ և հմուտ եղեալ Հին և Նոր Կտակարանաց, իշեալ ի Կոստանդինուպոլիս, վասն բանի սբ. Աւետարանին, զի քարոզեսցէ յունկն հաւատացելոց։ Զոր մեծաս փափագանօք ետ գրել ինձ Յակոբ գրչիս զսբ. սաղմոսի Մեկնիչն[21], յիշատակ իւր և ծնօղաց իւրոց տէր Կիրակոսին և Հռեփսիմէ, որ մականուն Կուլֆան կոչի։ Արդ՝ աղաչեմ... յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյ ասացեալ զտէր Առիստագէս վարդապետն, և զեղբայրն իւր՝ զՎրթանէսն, որ ետուն գրել զսաղմոսի Մեկնիչս յիշատակ իւրեանց և ծնօղաց իւրեանց տէր Կիրակոսին և Հռեփ-

19 Բնագիրն այստեղ ընդհատվում է։

20 Ղ. Փիրղալեմյանը սրա մասին գրում է. «էր սա խրատատուն անարժանին Նիկոլայ, զոր յիշէ Առաքել պատմիչին» (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 370—371)։

21 Ղ. Փիրղալեմյանի մոտ ձեռ-ը երկու անգամ նշված է «հայր Մաշտոցս», «զհայր Մաշտոցս»

սիմէ, և եղբարցն իւրեանց՝ Ստեփաննոսին, Խարշային և Յուսիկին, և այլ ամենայն արեանառու մերձաւորացն. ամէն։

Բ

Նվիրատու՝ Արիստագէս վարդապետ

Արդ՝ ես Արիստագէս վարդապետ ետու գրել զսաղմոսի Մեկնիչս և եգի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի Հարքերդ մեծահռչակ ուխտն ի Ս. Աստուածածինն, ի վանքն Դատեմա[յ][22]։ Ով որ յիշէ զմի միով Հայր մեր երկինսիւ և Տէր ողորմեսիւ, և ինքն յիշեալ լիցի...։

438

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1171

Դրիչ՝ Մկրտիչ Ջուղայեցի

ա

234ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ հոգևորական գանձս աստուածային, որ է Լուծմունս Յոր գրոց, քաղցրահամ բանիւք և սակաւ քարողք պիտանիք և օգտակար հոգոց մարդկան, որք կան ի սայ համբարեալ, զստեղծանելն Ադամայ և Եւայի, զխոստովանութեանն, զդատաստանին, զերանութիւնս սր[բոց]ն հանդերձելոյն, զնն[շ]եցելոցն, զՆրիքովին և զՆրուսաղէմ երթալոյն, զբանն Աւետարանին, որ ասէ. «Ը՞նդէր կայք զաւուրս դատարկ, երթ յայգին»[23], զոտանաւորս Արարածոց մեկենալ և այլ բազում բանս գրոց ժողովեալ, սուգտակար և լուսատու հոգոց մարդկան, ըստ այնմ պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց զեր[?], և աղբիւրս բարեհամս...։

Արդ՝ գրեցաւ սա, որ է մոնոտիկ սբ. եկեղեցայց, որ միշտ և հանապազ հընչէ ի յականջս լսողաց, ձեռամբս անաուրեստ և անիմաստ, ախմար և անարժան գրչի, պիտկ և սիւղանուն Մկրտիչ աբեղայի Ջուղայեցոյ, այլ և զանունս միայն ունիմ երկրի, որպէս շնչաւոր կենդանի, գործ բարութեան, միտք ուղղադաւան, խորհուրդք խօսք, ճանապարհք բարի շաւղաց երբէք յիս ոչ գտուի։

Դարձեալ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց մեծի,
234բ Երկ հինգ հարիւրոց և եաւթանց տա//սնի,
Եւ է թիւ յաւել սոցին կարգի (1628)[24],
Աւարտ եղև յայսմ տառի։

Բ

Ի սոյնս յայսմ ամի,
Կամաւ Հօրն ամենակալի,
Շնորհօքն Յիսուսի,
Աւդնականութեամբ Հոգոյն Ճշմարտի։
Ոմն մեծ ազգի,

[22] Բ հիշատակարանը մինչև այստեղ տե՛ս նաև Հ. Ոսկյան, Սեբաստիայի վանքերը, էջ 88։
[23] Հմմտ. Մատթ. Ի, 6—7։
[24] Այսինքն՝ (2×5×100)+77+551։

Տեղաւ· գովելի,
Եւ անւանելի
Սբ. ուխտին Ստաթէի,
Եւ մենարանի
Սրբոյն Գրիգորի,
Ի վերջս ժամանակի սորին վիճակի։
Տունկ բուսեալ լինի,
Ցարմատոց տեղի,
Սրբոյն Ստաթէի,
Մատ զարմանալի։
Ոստս բազում ունի,
Միշտ պտղաբերի,
Ի չափ հասակի,
Ամաց յիսնեկի։
Ցոբելեան կարգի,
Շնորհալից կարգի,
Բաբոյն բանի,
Եւ ռաբի կոչի,
Անուամբն նազելի,
Տեսանող նմանի,
Վեց տառից կոչի,
Ըստ մարգարէին նախկի,
Սինէականի Մովսէս վերաձայնի։
Նման նմանի,
Խորհրդովն ի լի, անպակասելի,
Նա հընումն նախկի,
Իսրաէլեան ազգի,
Պատգամըս բերի։
Ի նորս գովելի,
Հայկազան ազգի,
Քարոզող բանի,
Սերմանող բանի,
Խրատիչ բարի,
Եւ հերքող չարի։
Զտէրունայն բանի,
Ինքըն կատարի,
Եւ ուսուցանի,
Զվանորայս կարգի։
Զդասս կրօնաւորի,
Բազմացուցանի,
Նրման Ներսէսի,
Զարմէն Գրիգորի։
Սբ. հայրապետի,
Ըզխորհուրդ բարի,

Ի մտի դնի,
Ի Աստուած յուսանի,
Ի թիւս հայկազնի,
Հազար եօթանասունի,
Եւ է հետ կարգի (1628)։
Ի ձեռն արկանի,
Զշինումն տաճարի,
Ար. էջմիածնի։
Ոչ սկիզբն նախկի,
Կամ հիմն արկանի,
Կամ նոր սկսանի։
Այլ վերջ նորոգի,
Փառօք զարգարի,
Եւ զարմանալի,
Որպէս հրնդումըն նախնի,
Զօրաբաբելի, զտաճարն Սողոմոնի։
Այր զարմանալի,
Մշտնջենաւորի,
Նմանեալ լինի։
Հանդերձ մազեղինի,
Խոշորազգեստի,
Ըզգեցեալ լինի։
Առաջնորդ բարի,
Այլոց քանոնի,
Միշտ ուսուցանի։
Եկեղեցայց զարդ կարգի,
Քարոզիչ բանի,
Սերմանող լինի։
Շնորհօքն Յիսուսի,
Աւարտեալ լինի,
Զշինումն տաճարի։
Աղօթիւք Գրիգորի,
Աթոռն զարգարի,
Տառապեալս ազգի։
Երգ սաղմոսաց լսի,
Վառմամբ կանթեղի,
Ընթերցմամբ սր. տառի։

Գ

95բ Եւ զիս տառապեալ գծիս գրող Մկրտիչ աբեղայս Զուղայեցի, աղաչեմ զձեզ՝ և զիս ընդ սոցա յիշեսջիք յաղօթիւք։

Դ

143բ Եւ ես տառապեալ Մկրտիչս գլուխ մեղաւորաց, զայս բանէրս գրում ամ, ահէն տիտքս բոլոր չի, թէ ինչ կու լնի փմ ճարս, մէկ բարի ողորմի։

Ե

164ա Սղալագիծ Մկրտիչ յիշեա՛յ ի Տէր։

Գ

194ա Ե[ս] Մկրտիչ գծիս գրրող սխալական,
Շատ շանք ոնիմ բանից ուսման խրրատական,
Մեղաց գոլոշն է թանձրացեալ յիս բընական,
Մրտաց աչացս փարդա կալեալ խաւարական։
Զայս անթառամ պայծառ ծաղկունքս անմահական,
Գոյն ըզգունով փայլեն սոքայ անսպառական,
Յորժամ բանաս հոտրն բուրէ անտշութեան,
Ում որ պիտի զճաշակն առնու յոյժ քաղցրական։
Ի թվականիս Հայոց ՌՀ եօթն (1628) թվեան,
Զժողովուրիկ բանս որ աստ կան,
Աւարտ եղև սայ ի լրման։
Թողութիւն արարէք ինձ փրստայութեանս, ո՛վ եղբայրք։

Է

226բ Այս Պաւղոս անունս թղթիս նշան է[25], որ ժամանակ մի կազմող չմոլորի։

439

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2166 (1628 թ. առաջ)

Հետ. ստացող՝ մահտեսի Կարապետ

Ա

196բ Ծաղիկն գէշ եղաւ կտրեցի զթուխտն։

Բ

317բ Յիշատակ է այս գիրքս մահդասի Կարապետին և իւր կողակցոյն՝ Թօվին, որ թվին ՌՀԷ (1628) <ամին> փոխեցաւ առ Քրիստոս. Աստուած իւրն հանգիստ և արքայութիւնն պարգևեսցէ ի միւսանգամ գալրստեանն. ամէն։

Գ

Եւ ի սոյն ամի ստացայ զսբ. գիրքս, որ էր թվին ՌՀԷ (1628). ամէն։

Դ

336բ Ես՝ Նուաստս ի բնաւից, մեղսապարտ ծառայս Աստուծոյ, մահդասի Կարապետ, որդի Առաքելին, որդոյ Մարտիրոսին, լալագին աչաւք և սգաւոր անձամբ վասն կողակցին իմոյ՝ Թաւվին, որ քառասուն և Թ (49)-ինն ամեայ հասակաւ հասաւ առ ցանկալին, ելանել ի մարմնոյ աստի և մտանել ի հանգիստն առ իմաստուն կուսանսն։ Որքան հայէի աւր ըստ աւրէ աւելոյր սուգ իմ անմխիթար. և իմ ճար իմացեալ մխիթարելոյ գնեցի զսբ. տառս որ է Քառակ գիրք։ Եւ կարդայի և սովաւ մխիթարէր

[25] Երկու պրակի երկու թերթերի վրա, լուսանցքում գրված է «Պաւ ղոս», գրչի խոսքն այդ մասին է։

սիրտ իմ ի տրտմութեանց իմոց և ուրախ լինէի։ Դարձեալ յիշեցէք ի մաքուր յաղաւթս ձեր զհայրն իմ՝ Առաքելն և զմայրն իմ՝ Զատէն, և զկողակիցն իմ՝ Թաւէն, որ յայսմ ամի հանգաւ առ Քրիստոս, և զդուստրն իմ՝ զՏուտումն, և զթոռնեանքն իմ՝ զփոքր Առաքելն և զՄարիամն։ Եւ դարձեալ կրկինանգամ յիշեցէք զեղբարքն իմ՝ զՍարաան, և զհանգուցեալ
337ա եղբայրն իմ՝ զԽէրի, և զքվեր//քն իմ՝ զՄաղիքն և զՊսկիտաաիկն և զամենայն արեան մերձաւորսն իմ. ամէն[26]։

440
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 4658 (1629 թ.)

Կազմի խաչի վրա։

Յիշատակ է սբ. խաչս Փիլիպոսին և կենակցին՝ Մանշակին, և իւր որդուն՝ Պետրոսին, և հօրն՝ տէր Պաղոսին և մօրն իրիցկինին, և ամենայն արեան մերձաւորացն։ Թվին ՌՀԷ (1628)։

441
ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ
Երևան, № 6335 (1627 թ.)

Ստացող՝ Վարդան քահանայ

201ա Ես՝ Վարդան քահանայս գնեցի Ատենի Սաղմոսարանս ի հալալ հընչից իմոց, յիշատակ ինձ և <իմ> ծնաւղաց իմոց, հօրն իմոյ՝ Մարտիրոսին և մաւրն իմոյ՝ Ատլանիաշին, և կողակցին իմոյ՝ Նազլուխանին, և հանգուցեալ եղբայրն իմ՝ Մուրատին, Աղազարին, և որդւոց իմոց Աղազարին, և դստերաց իմոց Փաշին, Բանաւշին, և եղբայր որդին իմոյ՝ Վարդանանին, Մարտիրոսին։

Թիւն Հայոց ՌՀԷ (1628) ամին։

442
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 6437

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Սպահան

ա

291բ Փառք..., որ ետ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տարիս այս մարգարտաշար և վարդափթիթ բուրաստանիս, որ է սա ընտիր օրինակէ, որ և գրեցաւ սայ ի յերկիրս Ըսպահան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ձեռամբ անարժան և սուտանուն Գասպար իրիցուէ, որ և զանունս միայն ունիմ և զգործս ոչ։

[26] Ձեռ-ի 337-րդ ա էջում գրված է մահդասի Կարապետի երկրորդ կնոջ մահվան մասին և նրանից ծնված երեխաների անունները։ Այդ դեպքերն արձանագրված են երկու ձեռագրով և ընդգրկում են 1631—1642 թթ.։ Այդ հիշատակարանը տե՛ս 1642 թ. շարքում։

Բ

227ա Քրիստոս Աստուած ողորմեա՛ ինձ սուտանուն և մեղսամած և անպիտան Գասպար իրիցիս, ողորմեա, զի գինք արեան քո եմք։

Ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

Գ

292ա Եւ արդ՝ ես անարժան և անարհեստս ի գիրս գրչութեան Մեսրոպ դպիրս և աշակերտն իմ՝ տէր Գասպար, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ «Յոր կոչումն կոչեցար, ի նմին կացջիր»[27]։ Ես արդ՝ իմով բերելով զայսպիսի վստահութիւն... շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաք զաստուածախաւա և զաստուածաբնակ տառս, զլուսազարդ և վարդափրթիթ սբ. Աւետարանս ի լաւ և ի յընտիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և ի Հէ (1628) ամի, ի հայրապետութեան տեառն Խաչատուր վարդապետին, ի թագաւորութեանն այլասեռից շահ Ապասին, // ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց և ի սղութենէ հացի։ Զոր տէր Աստուածն մեր պահեսցէ զամենայն ազգս քրիստոնէից ընդ ամբրածածուկ աջովն իւրով. ամէն։

Արդ՝ որք ճաշակիք և վաելէք յամէնառատ սեղանոյս և հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրիս, զի կար մեր այս էր, եղբարք։

Ուստի տեսեալ զայս լուսազարթ և վարթափթիթ սբ. Աւետարանս ոմն հեզահոգի և բարեմի[տ], աստուածասէր Գուլվարդն, որ վաղուց հետէ փափաք ունէր սբ. Աւետարանիս, ետ գրել և զարդարել ոսկով և լազուարդով և երանի երանի դեղերով յիշատակ բարի իւր և իւր ծնաւղացն, հաւրն՝ Նուրիջանին և մաւրն՝ Խոռոմսիմին, և եղբարցն՝ Շահնու-
293ա մին// և Թասալուն, և քուերացն՝ Սալուինազին, և պապուն՝ Փիրամզին, և կողակցուն՝ Շուշանին, և ամենայն արեան մերձաւորացն յիշեց[էք]։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զԳուլվարդն, և զկողակիցն իւր՝ Աստուածատուրն, և զորդիքն իւրեանց՝ խաւշայ Զինային[28] և զհանգուցեալն ի Քրիստոս Գայուդն, և զթոռունքն՝ Մարզարէն, Մէլիքն և Աղայմալն յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիս զանարժան Մեսրոպ դպիր Խիզանցիս, և զծնողսն իմ՝ զտէր Մարտիրոսն և զխա[ն]դքարն և զամենայն արեան մերձաւորս, ևս առաւել զհոգևոր վարպետսն իմ՝ նախ տէր Սարգիսն և միուս վարպետաց վարպետն զտէր Մարտիրոս Խիզանցին, և զամենայն աշխատաւորս, որ ունի աշխատանք ի վերայ մեղաւորիս ի յարուեստս յայս, յիշեցէք... ամէն։

Գրիչ՝ Ստեփանոս

Դ

13ա Զմեղուցեալ Ստեփանոս զծողս յիշեցէք ի Քրիստոս։

---

27 Ա Կոր., է, 20, 24։

28 Գրված է եղել «Վինային», հետագայում ջնջելով՝ «վ»-ն դարձրել են «զ»։

443
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 7060

Գրիչ՝ Զաքարիայ
Վայր՝ Մոկաց քաղաք

ա

201ա Փառք...։ Ես՝ Զաքարիայ գրիչս շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. տառս, որ կոչի Կանոնագիրք, յիշատակ սրբասէր և մաքրամիտ մահդասի տէր Յոհանիսին, և կողակցոյն՝ Խանադին, և ծնօղացն՝ Յովանիսին և Խանումին, և այլ ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ի թուականիս Հայոց ՌՀԷ (1628), ի քաղաքս Մոկաց, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և Ս. Յովանի[սին, և] Ս. Ստեփաննոսին, [յիշա]տակ բարեմիտ և աստուածասէր տէր Յոհանիսին, որ ետ գծագրել զսբ. գիրքս հալալ յարդեանց իւրոց, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց...[29]

բ

57բ—58ա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա՛ ստացողի սբ. գրոցս մահդասի տէր Յոհանիսին[30]։

444
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 8546, տե՛ս նաև Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա, էջ 318—319

Գրիչ՝ Սահակ
Վայր՝ Վարագ

269ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ և ախմար գրչի Սահակ մեղաւորի հասանել ի յաւարտ Սաղմոսարանիս ի խնդրոյ[31]։

269բ Եւ արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքս վանորէից ի Վարագ, ընդ// հովանեաւ Ս. Նշանիս և յայլ եւթ սբ. տաճարացս, որ կառուցեալ կան ի պատիւ սրբոց և ի պահպանութիւն երկրիս մերոյ, ի Ռ և Հէ (1628) թվականին, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Մարաիրոս բաբունապետի և յայլ միեղէն եղբարցս տէր Զաքարայ վարդապետի և տէր Ներսէս վարպետի և այլոցն, որ կան ի սպասաւորութիւն սբ. ուխտիս, և զանարժանս որպէս արժանաւոր ընդունին, զոր տէր Աստուած վարձս բարեացն հատուցանէ սոցայ. ամէն։

---

29 Թվում է վերևում հիշված անունները։

30 Նման հիշատակարաններ տե՛ս նաև ՀԵՌ-ի 77 բ, 115 բ, 141 բ, 159 բ, 189 բ, 196 բ, 199 բ, էջերում։ Իսկ 192 բ էջինը նույնն է՝ ավելացրած ստացողի ծնողների անունները։

31 Միտքը կիսատ է թողնված. հետագայում մեկը շարունակել է «Գրիգորիս հայրն իմ՝ Նազար, մայրն իմ՝ Յոատիանէ և եղբայրսըն իմ՝ Մարաիրոս, Մինաս, Բարսեղ, Նազար և քուերացն Բէկսուլթանին և իմ քրոջն՝ Յակոբին, Յովսէփին»։

Այլ գրով շարունակվում է. «Մաւրն իմ Խաթունջան, քուրն իմ Գուզալ, ով որ կարդայ ողորմի ասայ»։

270ա Արդ՝ որք հանդիպիք սմա տեսութեամբ և կամ սուգտութեամբ ինչ// իւիք, յիշեցէք ի միտս բարիս զՍահակ անպիտան գրիչս և զուսուցիչն իմ զՍաեփանոս քահանայն, և Քրիստոս Աստուած յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի. ամէն։

Բ

132բ Եւ զմեղաւոր Սահակ սուտանուն գրչիկս աղաչեմ յիշել ի Տէր, և ողորմի ասել ինձ մեղաւորիս։

445

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 8555

ա

89բ Ա՛հ թողդ ի քո դարդէն։

Բ

92ա Եւ զանարժանս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր։ Գրեցաւ Պարզատօմարս ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628), ըստ կարգին, ձեռամբ անիմաստ, և էհմար, և փրծուն գրչի, որ անունս ունիմ և զգործս ոչ։

Գ

109բ Տէր Յակոբ զԱստուած կու սիրես զայս[32]

Դ

154բ Եթէ ասէք զայս ով խնդրեաց, Ներսէս վարդապետն խնդրեաց, չհասաւ իւր փափաքանացն մինչև Խաչատուր վարդապետն ուղեց։ Աստուծոյ կարողութեամբ, եղբարց աղօթիւքն գտաւ զմեզ ուրախացուց. Աստուած զիւր հոգին լուսաւորէ. ամէն։

446

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8887

Գրիչ՝ Թումայ աբեղայ
Վայր՝ Նորոյ վանք

811ա Փառք...։ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անպիտանս և անարժանս... Թումայ սուտանուն հաբեղայ, որ անուամբս միայն եմ և ոչ գործով։ Շնորհիս Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թբւականիս Հայոց Ռ և Հ ու է (1628), ի սբ. ուխտս, որ Նորոյ վանք կոչի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն տէր Սաեփանոս կաթողիկոսի ամենայն Հայոց։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեանն և սխալանացն անմեղադիր լինել. զի կար մեր այս էր։

[32] Այստեղ ընդհատվում է։

Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի բերանով և բոլոր
311բ հաւատով//Աստուած ողորմի ասացէք Վարդանիսին և իւր ծնողացն՝ Դար-
մանին և Քաֆուրին, և իւրեանց վանից միաբանիցն՝ Աբրոհն, Միրաքին,
Մուրադին, Աղաջանին։ Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին և զիւ-
րեանց ծնողացն և կողակցացն հանդերձ որդովք և դստերօքն իւրեանց,
որ մեզ ամեն բանի ձեռնտու և աւգնական կու լինին. Աստուած իւրեանցն
աւգնական լինի, և յետ աստեացս զերկնից արքայութիւնն պարգևեսցէ.
ամէն։

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպողք սբ. Աւետարանիս,
յիշեցէք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր զստացող սորա, զհեզահոգի և զաս-
տուածասէր քահանայն զտէր Սահականոսն, որ [ս]տացաւ զսբ. Աւե-
տարանս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնողացն,
հօրն՝ տէր Յոհանիսին և մօրն՝ Եքարին, եղբարցն՝ Յովանիսին, Սարգսին,
312ա որդոյն՝ Մխիթարին, հարսին՝ Խամոշին, և եղբօր որդոց//Խլղաթին և տէր
Յոհանիսին, Աւետսին, Զիրաքին և այլոցն ամենեցուն. ամէն։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք... տէր Սահականոսին, և կողակցին
իւրոյ՝ Համանին, և ծնողացն, և որդոցն և ամենայն արեան մերձաւորացն,
յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք...։

447
ԺՈՂՈՎԱՏՈՒ
Երևան, № 9065

Գրիչ՝ Գրիգոր երէց

18բ Եւ յորժամ ընթեռնուք զթուխտս յաւուր սբ. կիրակէի, հաւատով և բո-
լոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք մեղապարտ գծողիս, անարժան սու-
19ա տանուն Գրիգոր իրիցիս և Աստուած // թողութիւն շնորհեսցէ ձեզ և ձեր
ննջեցեալոցն. ամէն։ Թվին ՌՀԷ (1628)։

448
ՏԱՂԱՐԱՆ[33]
Երևան, № 9380

Գրիչ՝ Ղուկաս քահանայ
Վայր՝ Գետաթաղ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ Փրկական խորհուրդ պատարագի և հասարա-
1բ կաց//աղաւթս մերոյս եկեղեցւոյ, ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628), ի
յերկիրս Որոտեան, ի գեղս Գետաթաղ, ընդ հովանեաւ Ս. Աստուածած-
նիս, ձեռամբ մեղսամած և մատնաղեղև, սխալաբան և խոշորագիր Ղուկաս
սուտանուն քահանայի, զի միայն զանունս ունիմ սոսկ և գործով թափուր
երևիմ։ Արդ՝ անկեալ աղաչեմ զձեզ, մանկունք մեծի Սիոնի, յորժամ ի

[33] Սույն ձեռագիրը ներկա վիճակով վեց մագաղաթյա փոքրագիր թերթ է, ուր գրված են Ներսես Շնորհալու երկու տաղերը, որոնց սկզբի տողերն են. «Աշխարհ ամենայն առ իս նայեցեալ» (էջ 2 ա—4 բ), «Առաւաւտ լուսոյ արեգակն արդար» (էջ 4 բ—6 բ)։

ձեռն առեալ զսա կարդալով կամ աւրինակելով, Աստուած ողորմի ասացէք ինձ Ղուկաս անարժանիս և իմոցն ամենայնի. ամէն։

449
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 10329

Գրիչ՝ Ստեփանոս Երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

185բ *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Քարողդիրս ի յերկիրն Պարսից, ի գեօղաքաղաքն Ջուղայ, ի դուռն սբ. Յակոբա[յ] Մծ[բ]նա[յ] հայրապետի Ս. Նշանի, ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628), ձեռամբ անարժան, տգէտ, սուտանուն* Ստեփանոս *իրիցուի, յիշատակ խօշա* Յոհանին *և իւր նորաբողրոշ պայծառ մանկանն՝* Շահնազարին, *որ փոխեցաւ առ Քրիստոս, և իւր ընդանացն ամենեցուն։*

Արդ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զխոշա Յոհանն *և իւր ընդանիքն և ինձ մեղապարտ գրչիս, յիշեցէք...։*

Բ

Տէր Աստուած տուր համբերութիւն, դարձ և զղջումն խօշա Յոհանին
108ա *և //ինձ մեղապարտ սուտանուն* Սաեփանոս *իրիցիս, կարդացողաց և լսողաց...*[34]*։*

Գ

180ա *Դարձեալ յիշեցէք զխոշա* Յոհանն, *որ ետ գրել սա, յիշատակ իւր և իւր ընդանացն և Աստուած ողորմի ասողացն. ամէն*[35]*։*

Դ

Գրիչ՝ Յուսիկ

46ա *Եւ ինձ սուտանուն* Յուսիկիս *և բազմայմեղ գրչիս և իմոց ամենայնի. ամէն։*

450
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 10380

Գրիչ՝ Միքայէլ Թոխաթեցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

233ա *Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՀԷ (1628), ի մայրաքաղաքն ի* Կոստանդինուպալիս, *ձեռամբ* Թոխաթցի Միքայէլի, *ի վայելումն* Սիմէոն *քահանայի և տէր* Յովանէսի, *Աստուած բարով վայելել տացէ։*

[34] *Առավել համառոտ հիշատակարաններ, ուր միայն ստացողի անունն է հիշված, տե՛ս նաև 95ա, 98բ, 127բ, 143բ և այլ էջերում*

[35] *ա և գ հիշատակարանները տե՛ս նաև ՄԻՆԱ, Գ, № 17, էջ 239։*

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրինակելով մէկ Հայր մեղաւ մի յիշեցէք զանարժան գրչիս և զծնաւղսն իմ զհանգուցեալն առ Քրիստոս, և զտղայքն իմ, և զկենդանիս և զննջեցեալսն իմ, և Աստուած զյիշողդ յիշէ...[36]։

Բ

Այլ և յիշեցէք զստացող սորին ԶՅովակիմն, *հաւրն՝* Վարդանին, *մաւրն՝* Եազկուլէ, *եղբաւրն՝* Խաչատուրին *և* Մկրտչին, *և քրոջն՝* Կեռսին, *և կնոջն՝* Գոճարին, *դստերն՝* Ներկիզին *և փեսին՝* Եայլային, *որ եւոն ի ձեռն տէր* Սիմէոնին։

451

ԱԻԵՏԱՐԱՆ

Հ. Հաղարյան, № 18 (մանրաժապավեն, Երևան, № 785)

Գրիչ՝ Զիք Ստեփանոս
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

168ա *Մեղաւք զառածեալ* Ըստեփանոս *գծողս յիշեա ի Տէր։*

Բ

218ա *Փառք...։*

219ա *Եւ տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ հեզահոգի և աստուածասէր և ողորմած խաւջայ* Սարուիանն, *որ եռափափաք սիրով, յաւժար կամօք և սերտ հաւատով գրել ետ այս ծաղկաւէտ և վարդափթիթ, կենսաբուխ սբ. Աւետարանս. և ընտացաւ զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան մարգարէ[ի]ն, որ ասէ. «Ծրանի...»*[37]։ *Վասն այն յուսոյն ետ գրել զտէրոսնեան Աւետարանս առատ տրիւք և զարդարեաց մեծածախ ընչիւք ի պայծառութիւն սբ. եկեղեցւոյ և ի վայելումն մանկանց Սիոնի, այլ և յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնօղացն՝* Սխիթարին, Էմէնփաշին, *և եղբօրն իւր՝* Մարգարին. *ամէն։*

Գ

219բ *Ազգիս Հայոց թվականին,*
Կրկին քառ[ե]ակ ւ երկհարիւրին,
Եւթանասուն երկու ամին (1623),
Գրեցաւ զգանձս Աստուածային[38]։

* * * * * * * * *

[36] Եթե հանենք, «ի վայելումն Սիմէոն... վայելել սացէ» հատվածը ապա ա հիշատակարանը նույնությամբ գտնում ենք № 10427 ձեռագրում (էջ 278 բ)։ № 10427 ձեռ-ում ՌՀԷ տարեթիվը Մագիստրոսը կարդացել է «ՌՀԵ-1626» և գրել ձեռ-ի պահպանակի վրա։ Նույնն էլ նշված է նրա ցուցակում (Ավետարանների թղթապանակ, II, № 2368, էջ 1343)։ Նույն հիշատակարանը տե՛ս Լ. Մինասյանի ցուցակում 1628 թ. ներքո ՄԻՆԱ, Բ, № 4, էջ 211)։

[37] Եսայ., ԼԱ, 9։

[38] Տե՛ս № 148 գ հիշատակարանը։

222ա Որ ողորմի Տէրն ամենի,
Հոգոյ սորա ըստացողին,
222բ Մահդասի խոջայ Սարուխանին,
Փոխեցելոյ երկրէ յերկին։
Այլ և ծնօղաց Սարուխանին,
Մխիթարին, Էմէնփաշին,
Եւ ամուսնոյն կայումս նորին,
Ի մահդասի Բէկիշանին։
Այլ և ծնաւղաց Բէկիշանին,
Խաչատուրին և Նզոումին,
Եւ միա մօր Բէկիշանին,
Տեառն յանձին Սալվարումին։
Այլ և փոխեալ որդոց սոցին,
Անանիայն և Գուրիկին,
Եւ ննջեցեալ դստերք սոցին,
Զօրափաշէ ւ Ասանէքին։
Եւ ըզԴշխուն ընդ այլ ննջեալքն,
Արքայութեան արժանասցին,
Լսեն զձայնն երանաւէտ,
Եթէ եկայք աւրհնեալք հօր իմ։
Եւ կենցաղումս դստերք սոցին,
Ընդ Գուլփարի,Եղսաբերթին,
Կենան անփորձ հաղթից չարին,
Յերկար ամօք ոչ սասանին։

223ա . . . . . .

Իսկ ես նուաստ անձն եղկելի,
Զիգ Սաեփանոս մեղաց գերի,
Անուն ունիմ քահանայի,
Բայց գործով եմ յոյժ աղտեղի։
Որպէս սատարըն ոստայնի,
Որ որս առնէ նա մժղրկի,
Տարեալ ի յորջ իւր կերակրի,
Բայց պիծակաց նա պատառի։
Այսպէս և ես նոյն աւրինի,
Կամիմ որսալ ինձ յագելի,
Բայց թշնամին որ ի գաղտնի,
Զիս պատառէ անբուժելի։
. . . . . .[39]

Դ

223բ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անպիտանս ... ի գիրս գրչութեան և յանցատրս ամենայն պատուիրանացն Աստուծոյ հիւանդ և անբուժելի սուտանուն քահանայ Սաեփանոսս, որ անուամբ միայն եմ և ոչ

[39] Դարձյալ թվում է ստացողի վերևում հիշված արյունակիցների անունները։

գործով յիրաւի և ըստոյգ։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թուականիս Հայոց ՌՀԷ (1628), ի մայրաքաղաքս Ասզաճան, ի գեղս Ջուղայ, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին և Ս. Աստուածածնի եկեղեցեացս, ի թագաւորութեան Պարսից շահ Ապաս արքայի Կարմիր գլխոյ, որ բազում անգամ ահացուց զտունն Հոռոմոց և էառ քաղաքս և բերդերս ի նոցանէ, ի հայրապետութեան տեառն Մովսէսին և յառաջնորդութիւն մերոյ աթառոյս Ջուղայոյ Խաչատուր սրբասնեալ վարդապետին, համախոհ թագաւորին և իշխան մերոյ ազգիս խաւջայ Նազարին եղև աւարտ այսմ տէրունական բանին։

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք սբ. Աւետարանիս տեսութեան, զաւելն բառնայք և զպակասն
224ա լնուք, խոշորութեան և սղալանացն անմեղա//դիր լերուք։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով անարժանիս Աստուած ողորմի ասիցէք...[40]։

452

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 725

Գրիչ՝ Նիկողայոս երէց
Վայր՝ Մարզիվան

203ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի ժամանակս վերջինս... ՌՀԷ (1628) ամի, ի գիւղաքաղաքն Մարզիվան, գրեցաւ ի դուռն Ս. Աստուածածնին, ձեռամբ փծուն գրչի սուտանուն Նիկողայոսի իրիցոյս, որ է Խնսցի, ի գիւղէն Արաւասու[41]։

453

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 726

Գրիչ՝ Սաեփանոս քահանայ
Վայր՝ Վան

203բ Օրհնութիւն գոհութիւն...։ Եւ ամենակարող զօրութեամբն Աստուծոյ ի յանկ և յաւարտ հասուցի զսա ի քաղաքս Վան, ի դուռն Տիրամայր Ս. Աստուածածնին և Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին, յաշխարհակալութեան Տաճկաց սուլթան Մուրատին, ի մերս աթոռոյն էջմիածնայ տեառն Մովսէսի, և ի յառաջնորդութիւն սբ. ուխտին Վարազայ քաջ և արի բարունապետին Մարտիրոսի, ի թուականութեան հայկազեան տումարիս ՌՀԷ (1628), ի խնդրոյ աստուածասէր մահտեսի տէր Յոհաննէսին որ փոխեցաւ առ Տէր..., ձեռամբ սուտանուն Սաեփաննոս քահանայի փծուն գրչի...։ Տէր Աստուած անսասանելի պահեսցէ զժամատանս քահա-

[40] Ձեռագրի 1 ա, 61 ա և 104 բ էջերի ներքևի լուսանցքներում հիշատակագրություն կա ծաղկողի կողմից, սակայն առանց վերջինիս անվան հիշատակության։

[41] Հավանաբար սրա համառոտ տարբերակն է «Ընշխարք»-ի Ա հատորի № 724 հիշատակարանը (էջ 203 ա)։

նայքս՝ նախ և առաջին զսրբասնունդ մահտեսի տէր Մարգարէն և զտէր Կարապետն, զտէր Զաքարիայն և զտէր Ասեփսն, զտէր Սանակն և զերկու տէր Մարգարէն, և զքաջ և արի վարպետն զԽալիֆայն և զԽանամիրն...:

454
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 728. տե՛ս նաև № 6273, էջ 568 բ

Գրիչ՝ Ստեփանոս երէց
Վայր՝ Վան

204ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս ձեռամբ յոգնամեզ և փծուն գրչիս Ստեփաննոս սուտանուն երիցուս, ի քաղաքս Վան, ի թուականիս Հայոց ՌՀԷ (1628)։

455
ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Բ, № 492 (ժամանակ ?)

Նորոգել տվող տէր Թադէոս
Վայր՝ Քանդակ

409 Փառք...։ Ես՝ տէր Թադէոս նորոգել տուի սբ. Աւետարանս յիշատակ ինձ... ի թուին ՌՀԷ (1628), ի գիւղս Քանդակ:

456
ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Բ, № 495, տե՛ս նաև նույնի, հտ. Ա, № 727, էջ 203 բ

Գրիչ՝ Զաքարիայ քահանայ
Վայր՝ Մակս

ա

411 Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ... մահտեսի տէր Ասեփսն... ետ գրել զսբ. Աւետարանս, ծաղկել և զարդարել, յիշատակ իւրն և իւր ծնողացն, հօրն՝ մահդասի Շաղուքաթին և մօրն՝ Նրդզունին, և կողակցոյն՝ Հալինարին, և որդոյն՝ Մարուքայ սարկաւագին, և միւս եղբօրն՝ միակեց Վարդանիսին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս յանապատն ի Լիմ, և Պետրոս սարկաւագին, և մեծ պապոյն՝ Մելքոնին, և ջոջ մամուն՝ Ախլիֆաշին... և քաւոր միակեց Ղազարին...։

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց... անարոտեստս ի գիրս գրչութեան... Զաքարայ սուտանուն քահանայս... կատարեցի զսբ. Աւետարանս ի լաւ և յընտիր օրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի ՌՀԷ (1628) ամին, ի քաղաքիս որ կոչի Մակս, ի թաղն որ Դաշտ կոչի, ընդ հովանեաւ աստուածարնակ սբ. տաճարին Ս. Յակոբ Մծպնայ հայրապետին և Ս. Աստուածածնին, որ սակաւ մի հեռի է, ի հայրապետութեան հայկազեան

սեռի էջմիածնին տեառն տէր Մելքիսէթին, և ի մերոյս կաթուղիկոսութեան
412 Աղթամարայ տեառն տէր Ստեփաննոսին: // Աստուած ողորմի ասացէք անարժան և անպիտան սուտանուն Զաքարիս և ծնողաց իմոց Նահապետին և Բէկաղին...: Եւս առաւել վարպետին իմոյ՝ Հիգանցի տէր Սարգսին և որդւոյն՝ տէր Յովհաննէս վարդապետին, որ շատ աշխատեցաւ հետ մեղաւորիս...:

Ծաղկող՝ Կիրակոս Աւրնդանցի

Բ

Ես՝ Կիրակոս Աւրնդանցի,
Անմիտ յիմար և փանաքի,
ԶԱւետարանս ծաղկեցի:

Գ

Յիշեցէք ի Քրիստոս զԽլղուր Մոկացին, որ զկողն տաշեաց սբ. Աւետարանիս...:

457

ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարքդ», հտ. Բ, № 496

Գրիչ՝ Կարապետ, Գրիգոր
Վայր՝ Արտամետ

412 Փառք...: Եւ արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անիմաստ և փծուն գրչի Կարապետի և Գրիգորի, ի գեղս որ կոչի Արտամետ, ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի Նախավկային և Ս. Ամենափրկչին, ի թվին ՌՀԷ (1628), ի դառն և ի նեղ ժամանակին, որ կամք գերի ի ձեռս այլազգեաց, զոր
413 տէր Աստուած ազատեսցէ զքրիստոնեայսն ի ձեռաց//յանօրինացն. ամէն: Ի խնդրոյ Յովանէս բարունապետին, յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր ծնողացն, հօրն՝ Գրիգորին և մօրն՝ Խումարին:

458

ՇԱՐԱԿՆՈՑ

Կ. Յուզբաշյան, ИНА, А-24

Գրիչ՝ Մարտիրոս սարկաւագ
Վայր՝ Բալու

ա

419բ Փառք..., որ [ետ] զաւրութիւն իմոյ տկարութեանս և հասոյց ի յաւար[տ] այսմ լուսափայլ Շարակնոցիս զպակասն և զաւսան(?), զոր եղեալ և հաստատեալ սբ. հայրապետացն և վարդապետացն սրբոց ի պայծառութիւն սբ. եկեղեցոյ և մանկանց Սիոնի, որոց յիշատակն աւրհ[ն]ութեամբ եղիցի:

Արդ՝ գրեցաւ Անձինք սբ. Աստուածածնին և սբ. Լուսաւորչին ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628), ձեռամբ անուամբ միայն Մարտիրոս սարկաւագի, ի դառն և ի նեղ ժամանակիս, ի քաղաքն Բալու, ի դուռն Ս. Գրիգորին:

բ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս [զէր Մեսրոպ սրբասէր քահանայն][42], որ ետ զսայ ի կապետել և նորոգել, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց. ամէն։ Դարձեալ խնդրեմք ի սբ. հարցդ, երբ ի ծեռս առնուք տեսանելով [կամ] կարդալով կամ ուրինակելով// Աստուած ողորմի ասացէ[ք] գրչին, գրողին, կազմողին և ծնաւղաց նոցին, և Աստուած ձեզ ողորմեսցի և ծնաւղաց ձերոց. ամէն։

420ա

գ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս տէր Մարտիրոս սրբայսէր քահանայն, որ ետ զսա վրերստին նորոգել յիշատակ իւր և ծընաւղաց իւրոց և իւր թոռանն տէր Թաթէոսին և եղբաւրն որդոյն՝ Գասպարին, ամէն։

Յիշատակ է ի դուռն Ս. Սարգսին. ամէն[43]։

459

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՑ ԳՕՇԻ

Տիրայր վարդապետ, № 82

Ստացող՝ Ստեփանոս վարդապետ
Վայր՝ Լիմ անապատ

ա

1466 Գիրքս յիշատակ է Ստեփանոս նուաստ վարդապետին, ի դուռն Լմայ Ս. Գէորգ զօրավարին, յանապատին, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք, զի և ձեզ ողորմեսցի. ամէն։ Թվին ՌՀԷ (1628)։

բ

Յիշեցէք ի Քրիստոս զմեղաւորս Ստեփանոս անուամբ միայն վարդապետ, որ գիրքս կանոնականս ի յաստից և անտից հաւաքեցի[44], և ետու կապել և դրի ի Լմայ անապատս, ի դուռն Ս. Գէորգ զօրավարիս անշինչ յիշատակ. ով որ հանդիպիք, Աստուած ողորմի ասացէք մեզ՝ և ձեզ այլ ողորմի Աստուած. ամէն։ Այլ և կացցէ այս ի դուռն սորայ, մի՝ ոք իշխեսցէ հեռացուցանել ի դրանէ Լմա[յ], Ս. Գէորգ, յանապատէս։ Գրեցաւ թուին ՌՀԷ (1628). Աստուած զլաւ պահողն աւրհնէ։

գ

1467 Աստուած ողորմի ասացէք մեղաւորս Ստեփանոս նուաստ վարդապետի, որ զանուն միայն ունիմ և գործով հեռի. այլ խնդրեմ ի հանդիպողացդ լի սրտիւ ասել մեզ Աստուած ողորմի, որ զայս գիրս գրել տուի և եդի ի դուռն Ս. Գէորգ զօրավարիս, յանապատիս Լմայ. անշինչ յի-

[42] Ինչպես հաղորդում է ցուցակի կազմողը՝ անկյունավոր փակագծերում գրվածը չնչված է։

[43] բ և գ հիշատակարանները ցուցակում գրված են որպես մեկ ամբողջություն ա հիշատակարանի հետ։

[44] Նշանակում է Գօշի Դատաստանագիրքն ընդօրինակվելուց հետո Ստեփանոս վարդապետը հավաքել է ոչ թե կանոնական բնագրեր և միասին կազմել տվել, այլ Պատարագի ցովհան Արճիշեցու Մեկնությունը, անհեղինակ «Մխիթարութիւն և յուսատրութիւն ննջեցելոց» բնագրերը։

շատակ, ի թվին ՌՀԷ (1628)։ Եւ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել ի յանապատէս՝ ոչ ի մերոց և ոչ յօտարաց, և լաւ պահողն Աստուած աւրհնեսցէ։ Այլ և զմիարան անապատիս յիշեցէք ի Քրիստոս, որ քան զեաւթանասուն անձն աւելի արեղայ և միակեցք կան ի սպասաւորութիւն Քրիստոսի՝ միշտ անդադար յաղօթս, զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ զանապատս մինչ ի կատարած աշխարհիս. ամէն։

Դ

Գիրքս յիշատակ է սբ. անապատիս Լմայ Ս. Գէորդ զօրավարիս, ձեռամբ նուաստ Սահեփանոս *վարդապետի, որ անուամբ առաջնորդ և վարդապետ կոչիմ և զործով զիրկ և թափուր, բայց խնդրեմ ի հանդիպողացդ լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք մեզ և ձեզ, այլ ողորմածն Աստուած ողորմի. ամէն։ Թվին Ռ և Հ (1621) անապատս հաստատեցաւ և Աստուած հաստատուն պահէ մինչ ի կատարածին. և ամէն։ Զեաւթանասուն եղբարքս զարեղայ և զմիակեց միարան...*

Ե

Գրիչ՝ Յովանէս

1468 *Ո՛վ վարդապետ և բարունի,*
Ես եմ մեղաւք լցեալ գերի,
Միտքս ցնոր վերայ երկրի,
Այս երկու էջս մէկ գրեցի[45]*։*
Երբ որ տարտիս ի Սաղմոսի,
Դու ինձ ասայ Տէրն ողորմի,
Այս[46] *սուտանուն* Յովանէսի։

460
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏԵՐԱՎԴ, № 118 (ԺԴ դար ?)։

Կազմող՝ Աւագ

200 *Զվերջին ըստացաւղ Շարակնոցիս զտէր* Յակոբն, *և զեղբարն՝ զ*Գրիգորն, *և իւր կողակիցն՝* Բանաւշէն, *և հաւրն՝* Ղազարին, *և մաւրն՝* Գուլխաթունին, *և քրւերն՝* Մարիամին, *տէր* Յակոբին, *և իւր կողակցին՝* Փաշային, Գրիգորին, *և դստերն՝* Խանբակին, *և պապուն՝* Մաթէոսին, *և կողակցին՝* Մանմոտին, *և հաւրեղբաւրն՝* Յովանիսին *յիշեցէք..., որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ և յիշեցելոցդ առ հասարակ ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։ Կազմեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան* Աւագի, *որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Աստուած ողորմի ասացէք՝ և Աստուած ձեզ ողորմեսցի։ Ի թուականիս մերոյ ՌՀԷ (1628), ի դուռն՝ Ս. Յակոբ հայրապետին. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

---

[45] *Տիրայր վարդապետը տեղեկացնում է. «Այս երեսը փոխանակ սովորական երկէջեան բաժանման մի էջ է»։*

[46] *Կարելի է կարդալ նաև «այոն»։*

461
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
ԼԱՎԳԱՒ, № 199 (1640 թ.)

Ա

1173 Քէն հանապազ նահանջ է, զմնացեալն ի Փիւրն հարցիր և զիս յիշեա՛։
[Ա]բեթական ազին թվական երրեակ եւթն է յոբելեանի Զ(6) քառեակ[47]։

Բ

1174 Աբեթական ազին թվական,
Երրեակ եւթն է յոբելեան,
Վեց քառեակ և մու եռեակ (1628)[48],
Այս համարով թիւ ի լման։
Իսկ թիւն ոզոմպիազ է այն,
Հինկ քառասուն ւ երեք քսան,
Երրեակ եռեակ թիւ աւելի[49],
Յոյժ հանճարով խորհրդական։
Որք մարդկան են պահապան,
Միշտ փառաբանողք Երրորդութեան,
Աղճատեալ թշւառական,
Նիւթ մեղաց զոլ գործական։
Յարաքսող տարապատկան,
Իսկապէս մեղանչական,
Գրնապարծ բարեաց ունայն,
Ո՛վ ընթերցողք ճշմարտաբան։
Զձեզ աղաչեմ ողբով կական,
Խընդիրք մ՝ ունիմ ի ձէնչ հայցման,
Յիշման առնէք դուք զիս անարժան,
Աստուած ողորմի Ա(1) բերան։
Սրտով ասացէք լիական.
Իսկ որք յասելն յօժարական,
Արքայութեան տիրանան. ամէն։

462
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 98 (1590 թ.)

139 Զվերջին ստացող սբ. Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս զպարոն Մարգարէն, որ ստացաւ ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ բարի իւր և ծնօղաց իւրոց, հօրն՝ Քարմադնին և մօրն՝ Արևխաթունին, և հօրեղբարցն՝ տէր Աւետիսին, Մհերին, և մեծ պապուն՝ Ամիրջանին և ամենայն արեան մերձաւորաց յիշեցէք...։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիս-

[47] Այսինքն՝ [(3 × 7) × 50 + (6 × 4)] + 551 = 1625։
[48] Այսինքն՝ [(3×7)×50+(6×4)+(1×3)]+551։
[49] Այսինքն՝ 4×[(5×40)+(3×20)+(3×3)]+551=1627

տոս զպարոն Մարգարէն, և կողակիցն իւր՝ Սուլթան, և զորդիքն իւրեանց՝ զպարոն Միրզախան, և զդստերքն իւրեանց՝ Յուրիփաշէն, Մարիամն, և հանգուցեալ Արևխաթուն և զՇահբէկն յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Մարգարէն, և զեղբայրն իւր՝ Մուրատիան, և կողակիցն Բարիսօլթան, և զորդիքն իւրեանց՝ Սաֆարն, Նազարն, և դուստր Խոսրովսիմէն, և միւս հանգուցեալ եղբայրն՝ Կիրակոսն...։

Դարձեալ յիշեցէք զպարոն Մարգարէն, և զքուերքն իւր՝ Սալչուկն,
140 և կողակիցն՝ //Յոհանէսն և զորդիքն իւրեանց՝ Շահնազարն, Մկրտիչն, Աստուածատուրն, և զՍրապիոն, և դուստր Խանգուան, և միոա քոյրն՝ Թօզալն, և կողակիցն՝ Ղարախան, և որդիքն Աբրահամ, Գրիգորն, դուստր Մահբուպն, և հանգուցեալ քուերքն՝ Սուլթանշաղբէկն և զԽանզադէն յիշեցէք...։ Ի թուին ՌՀԷ (1628) ստացաւ զայ[ս] սբ. Աւետարանս. ամէն։

463
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ № 112 (ԺԵ դար)

Նորոգող՝ Յովհաննէս քահանայ

180 Յիշեցէք զՅովհաննէս քահանայ[ս], որ աւուրք բազում աշխատեցի ի վերայ սբ. Աւետարանիս՝ եղծած գրերն նորոգեցի, վասն թողութիւն մեղաց իմոց, և իմ ծնօղացն ամենայնի և ազգատոհմի...։ Թվին ՌՀԷ (1628)։

464
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 119 (1627 թ.)

160 Ես՝ լուսայհոգի Յիսախանի որդի ապաշխարող Խոսրովսիմիս գրեցի, լուսարարի գրեցի, օվ կարդայ մի բերան յիշի, յինքն զյիշեալ լինի ի Քրիստոս, փառք բարերարին։

Դարձեալ յիշեցէք ի բարին զխօջայ Սլէմանն և զմիոյս կողակիցն իւր՝ [Ս]ինափաշէն. ամէն։

Թվին ՌՀԷ (1628)։

465
ՔԱՐՈԶԳԻՐՔ
ՏԵՐԱՎՋ, № 444

Գրիչ՝ Գասպար երէց.
Վայր՝ Նոր Շինիկ

687 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Քարոզգիրքս ձեռամբ մեղսամած Գասպար
իրիցուս և սեերես Կիրակոսիս, ի դառն և ի վշտալից ժամանակիս, ի յեր-
688 կիրն Ըսպահան, ի դրան քաղաքին, ի//գիւղն Նոր Շինիկ, որ աւալ
Շիշապանայ կոչէին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետու-
թեան տէր Խաչատուր բարձունապետին, ի թուականութեան հայ-

կաղեան տաւմարին ՌՀԷ (1628) թվին աւարտեցաւ սբ. գիրքս, ի խնդրոյ հեզահոգի և բարեմիտ Նարինպէկին, *որ ստացաւ զսբ. Քարոզգիրքս ի հալալ վաստակոց իւրոց, [յ]իշատակ իւրն և իւր ծնողացն՝* Սարգսին *և* Թանգազիզին *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Նարինպէկն *և զիւր հաւրեղբարն՝* Ամիրպէկն, *և իւր կողակիցն՝* Տալվաթ, *և դստերքն՝* Ծամիկն, Նիկարն, Եթարն, *զ*Շահզաւան *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Նարինն *և զիւր հաւրեղբայրն՝* Մելինանն, *և զիւր որդին՝* Յուսէփն, *և* Յուսէփի *կողակիցն՝* Շարպաթն, *զդուստրն՝ զ*Մարիամն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Նարինպէկն *և զիւր քւերքն՝* Կօզալիանն, Նազմելիքն *և զ*Անթառամն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Նարինպէկն, *և զիւր մեծ պապն՝* Վարդիկն *և զիւր կողակիցն՝* Նիկարն *և զիւր դուստրն՝* Յաջապնուշն, Յաջապիանն, *զ*Մարդայիաթունն, *յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Նարինպէկն, *և զիւր մայրն և մաւր հէրն՝* Կաւրկին...։ *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ*Ազաւն, *և զիւր կողակիցն, և զհին և զնոր ննջեցեալքն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս* Շիրինի *որդի* Սարգիսն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմեղաւոր և սուտանուն, մեղսամած* Գասպար *էրէցս, որ բազում փափաքանաւք գրեցի զսբ. Քարոզգիրքս, յիշեցէք զիս զանարժանս և զիմ ծնողքն՝ զտէր* Պաղտասար *և զ*Թուրվանդն, *յիշեցէք...*

Աստուած աւրհնէ զտէր Դաւիթ, *որ լաւ պահէ զայս Քարոզգիրքս ի հրէ և ի շրէ. Աստուած տղորմի ամենայն հաւատացեալ ննջեցելոցն. ամէն։*

466

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՁՁԱՐ, № 157 (ԺԴ-ԺԵ դդ.)

Նորոգող՝ Մկրտիչ

ա

783 *Սրբոցս բարեխաւսութեամբն ողորմեա՛ վերջի նորոգել տվողի գրոցս՝* Յակոբ *քահանային և ծնաւղացն և ինձ անիմաստ գծողիս և նորոգողիս՝ սոսկանուն* Մկրտչիս *և կարդացողացս։*

բ

Սոցին բարեխաւսութեամբն ողորմեա՛ վերջի նորոգել տվող Յայսմաւուրացս՝ Յակոբ *քահանային և ամենայն արեան մերձաւորաց։*

գ

Զվերջին նորոգել տվող Յայսմաւուրցս զմաքրամիտ Յակոբ *քահանայն* Ղալնուխցի, *որ հարկեաց զիս զանարժանս, եթէ ի գրագրաց, տարտամեալ անձս՝ սոսկանուն* Սկրտիչս, *աւգնականութեամբն Աստուծոյ յանձն առի և կարողութեամբ Ս. Հոգոյն նորոգեցի զսա փոքր ի շատէ, ըստ մերում տկարութեան, զի կար մեր այս էր, ի թվին ՌՀԷ (1628)*[50]*։ Յիշեցէք ի Տէր զնորոգել տվող սորա և զծնողսն իւր, և դուք յիշեալ լիցիք ի գիրն կենաց. ամէն։*

[50] *Յուցակում ՌՀԸ։ Եթե ճիշտ է ՌՀԸ-ն, ապա հիշատակարանը 1629 թ. է, իսկ եթե ճիշտ է 1628-ը, ապա ՌՀԸ-ն պետք է ուղղել ՌՀԷ։ Պայմանականորեն դրեցինք 1628 թ. շարքում։*

467
ՄԱՇՏՈՑ
ՏՀԱՐ, № 319

Գրիչ՝ Սաեփանոս եպիսկոպոս

ա

1343 Զ Սաեփանոս եպիսկոպոսն, գրող սորայ, յիշեցէք ի Քրիստոս, և զհայրն Միխիթար և զմայրն մեր Մինայ, և զեղբարքն մեր, և զաշխատողքս, որ հանապազ կու աշխատին. ամէն[51]։

բ

1344 Զմեղաւոր գծողս Սաեփանոս եպիսկոպոս, և զհոգևոր մայրն մեր՝ զՏիկնուկն, որ բազում աշխատեցաւ հետ մեզ, և զծնողքս մեր յիշեցէք ի Քրիստոս Աստուած՝ և Աստուած զձեզ յիշէ։

Գրիչ՝ Սիմաւոն դպիր
Վայր՝ Ըսաանոզ

գ

Փառք...։ Գրեցաւ աւրհնութիւնս այս՝ Մաշտոցս ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628), ձեռամբ ամենամեղ և անարժան և մեղապարտ գրչի սուտանուն Սիմաւոն գիպրի, ի գաւառս Գաղսաւիայ, ի գեւղս՝ որ կոչի Ըստանոզ, ընդ հովանեաւ Ս. Քառասնից։ Արդ՝ երես անգեալ աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչսն իմ՝ զՎարդն գրչիս՝ տէր Խաչատուրի որդի, Լէեցի և զհանգուցեալ, յիշեցէք ի Քրիստոս, և զդպիր Սիմաւոն, և զհայրն իմ և զմայրն իմ և զեղբայրն իմ՝ զՄինաս, և զգոյրն իմ յիշեցէք ի Քրիստոս։ Արդ՝ սղալանաց և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, զի այսչափ էր կար մեր։ Արդ՝ յիշեցէք զմեզ աղաւթիւք կամ խնդրուածովք ի Քրիստոս, և դուք յիշեալ լիշիք [յ]իւր սբ. արքայութիւնն. ամէն։

468
ԺԱՄԱԳԻՐՔ
ՏՀԱՄՎ, № 195

Գրիչ՝ Մելքիսեթ կրօնաւոր
Վայր՝ Խորձիւն

ա

517 Փառք...։ Արդ՝ գրեցաւ և կազմեցաւ Աղաւթմատոյցս լաւ և ի ստոյգ աւրինակէ, որ էր ուղղեալ ի սբ. հարանցն՝ յընտիր յընտիր աւրինակաց աստուածաբան վարդապետացն և հոգիրնկալ մերոյ ազգիս թարգմանչացն, ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628) ամին ի գաւառն Խորձիւնի, ի Կեղալեառն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ձեռամբ ողորմելի և ամենայն մեղաց լիապէս գործող գրչի Մելքիսեթի սուտանուն կրաւնաւորի, որ անուամբս եմ միայն և գործովս ոչ։

Ստացող՝ մանտեսի Վարդան

բ

Եւ արդ՝ ցանկացող եղեալ ես՝ անարժանս յամենայն բարեաց մահդասի Վարդանս և ետու գրել զսա ի յարդար գոյից իմոց, ի վայելումն

[51] Ցուցակում տե՛ս նման երկու հիշատակարան ևս։

անձին իմոյ և յետ ելանելոյ ի կենցաղոյս՝ եղիցի ինձ յիշատակ և ծնողացն իմ, հարն իմոյ՝ Ամիրազիզին և մօրն իմոյ՝ Պէկին, և եղբարցն իմոց՝ Մուրատին և Նորատունկին և յայլ ամենայն մերձաւորացն իմոց՝ կենդանեաց և հանգուցելոց։ Եւ ստացաւ զկտակս զայս ի ժառանգութիւն անձին իւրոյ Վարդան դպիրն, զոր Տէր վայելել տացէ զսա նմա ընդ երկայն աւուրս ամէն...։ Գիտէք եղբարք, զի սովորութիւն է ոմանց որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանունն կու շնչեն և զիւրեանցն կու գրեն, և չար է այս սովորութիւնս. աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ։

469

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏՋՁՄՎ, № 283, տե՛ս նաև կամենից, էջ 180—181

Գրիչ, ծաղկող, ստացող՝ Ղազար Բաբերդացի

Վայր՝ Սեչով

708 ...[ընդ] սրմին և այս աստուածաւանդ Աւետարանիս եռանդնոտ սիրով տենչացա ես անարժանս, հողս ու փոշիս, տրուպ և նիազս, ոտից կոխան և յետնեալս ամենայնի Բաբերթացի Ղազար վարդապետս գրել մատամբ իմով զայս սբ. Աւետարանս, որում ի մանկութենէս ի վեր խանթակատ սիրով կու ցանկայի, և տենչայի գրել, որ և շնորհիւ Փրկչին մերոյ գծագրեցի, զոր սիրեաց անձն իմ, յիշատակ ինձ և իմ ծնողացն՝ Նիկողոսին և իմ մօրն՝ Շնոֆորին, և իմ եղբարցն՝ Մարտիրոսին, և քրտերն իմ՝ Ղուտրատին, և ամենայն արեան մերձաւորաց իմ։ Վասն որոյ ցնծացա և ուրախացա, իբրև զունողս աւարաց բազմաց ականց պատուականաց։ Այլ և զանազան գունով ծաղկեցի և գեղեցկանկար չորից աւետարանչացն պատկերագրութեամբ յօրինածօք շքեղացուցի զսա...։ Արդ՝ այս քրիստոսապարգև Աւետարանս գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՀԷ (1628), ի հայրապետութեան տեառն տէր Մելքիսեթ կաթուղիկոսին և ի թագաւորութեան Ուլախաց երկրիս Միրոնին, և եպիսկոպոսութեան ինձ նուաստիս, որ զգիրս գրեցի, և աւաքիրիցութեան տէր Անդրիասին, և երեսփոխանութեան պարոն Մերիկին, ի մայրաքաղաքս Սեչով, ի անուանի հրեշտակաբնակ վանք Ս. Աքսէնդի։ Այլ և յիշեցէք զՍրապիոն և զՍարգիս տիրացուն, որ զսբ. Աւետարան[ս] կապեցին։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զտէր Անառնն, զտէր Աւետիքն։

470

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՈՁՁՄՎ, № 888 (1615 և 1626 թթ.)

Հետ. ստացող՝ Միքայէլ եպիսկոպոս

472 Զվերջին ստացող սբ. մատենիս զՄիքայէլ եպիսկոպոսն և զծնողն իւր, զհայրն իւր՝ զՍիմէոնն և զմայրն իւր՝ զՃանաղէն, և զեղբայրն իմ՝ զմահդասի Ամիրազիզն. և զփոքր եղբայրն իմ՝ զՍիմէոնն, և զմեծ պապն իմ՝ զԱւազն, որ փոխեցեալ են առ Քրիստոս, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ինձ՝ Մի-

ֆայէլ եպիսկոպոսիս, որ գնեցի զսբ. գիրքս յիշատակ ինձ և ծնօղաց իմոց ի թվին ՌՀԷ (1628) ամին, ի յՈտնայեցի Յովհաննէս եպիսկոպոսէն, որք յիշէք՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ...։

471

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՈՏՁՄՎ, № 1037, տե՛ս նաև «ՀԱ» 1913, էջ 333

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Շօշ

ա

652 *Փառք... որ ետ կարողութիւն տկար և մեղսամած անձինս Ըստեփանոս իրիցու հասանել յաւարտ Յայսմաւուրացս ի թվին Հայոց ՌՀԷ (1628) ամին, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին և ի հայրապետութեան տեառն Մովսէսին, ի Շօշ քաղաքն Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին, ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի, քրիստոսասէր և երկիւղած առն Դաւթին, զոր յաւժար կամաւք և եռափափաք տենչմամբ ըստ սրտին իւրոյ ետ գրել զվկայութիւնս սրբոցն Աստուծոյ հնոց և նորոց ըստ տէրունական բանին, որ ասէ «ներանի...»[52]։ Զայս լուեալ աստուածասէր և բարեմիտն Դաւիթ ետ գրել զԱյսմաւուրք, որ է պայծառութիւն սբ. եկեղեցւոյն, ի վայելումն մանկանց Սիոնի։ Յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնօղացն՝ Մարգարէ, Խանբէկէ, և հօրեղբարցն՝ Յովանիսի[ն], Առաքելին, Բաղչին, Մուքէլին. հաւրքուերացն՝ Խանաղէ, Գուլբսանին, Գուլբանարին, հաւրեղբօր որդոցն՝ Մալնազարին, Զաքարիէ. և պապուն՝ Դաւութին, Նուրվալէ, կողակցացն՝ Թէկղէ, Փաշաբէկէ, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԴաւիթն և զհայրն իւր՝ Մարգարէն և զմայրն՝ Խանբէկի, դստերքն իւրեանց՝ Սղմեռն, Աջայիփիանն, յիշեցէք...։*

բ

653 *Դարձեալ յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր զՍտեփանոս երէցս, որ զԱյսմաւուրս գրեաց և զաշակերտն իմ՝ զՍիմէոն քահանայն, որ ժ (10) տետր գրոցս նա գրեաց. և զհայրն իմ՝ Մարտիրոս քահանայն և մայրն իմ՝ Թանակն, բերան մի Աստուած ողորմի ասացէք...։*

գ

Վերստին յիշեցէք///անն, որ բազում անգամ յորդորեաց ի գրումն Այսմաւուրիս երթևեկ առնելով ընդ մեզ, վասն փութով կատարելոյ գրոցս և վարձն ի Քրիստոսէ առցէ։

դ

Արդ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ով պատուական հարք և եղբարք, յորժամ հանդիպիք տեսութեան գրոյս կարդալով կամ աւրինակելով, զաւելն բառնայք և զպակասն լնուք, սղալանաց և խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

[52] *Եսայ., ԼԱ, 9։*

Ն

Որ ողորմի ստացողի գրոցս Դաւթին *և ծնողացն* Մարգարէ, Խանբէկէ *և քրեերանցն* Սղմէրին, Աշայիփիանին *և մեղապարտ* Ըսաեփանոս *գծողիս կարդացողաց և լսողացն առ հասարակ ամենեցուն*[53]։

472
ՇԱՐԱԿՆՈՑ
Մ8ՁԵՊ, V, № 1567 (ժամանակ ?)

Նորոգող՝ Մելքիսէք Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

343 *Փառք..., որ ետ կարողութիւն տկար և ահմար, տարտամ և անարհեստ գրչի լոկ անուն* Սելքիսէք Սոկացոյ, *որ զանունս ունիմ և ոչ զգործս. այլ յուսալով ի մարդասիրութիւն Աստուծոյ և.ի շնորհաբաշխ Ս. Հոգին ճշմարիտ, և իմ վստահացեալ յանձն առի և գրեցի զպակասութիւն Շարակնոցիս զայսքան շարակներս, ի խնդրոյ հարազատ եղբարն իմոյ՝ տէր* Յովանէս *կրաւնաւորին, որ ետ վերըստին նորոգել զսբ. Շարակնոցս, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն, հօրն՝* Բաշարաթին *և մարն՝* Ինաիփաշին, *և եղբարցն՝* Շէրբէկին *և նուաստ* Մելքիսէք *գծողիս, և իմ որդւոյն՝ տէր* Յոճանէսին, *և մեր հոգևոր եղբարն՝ տէր* Սաեփանոս *հեզահոգի սրբասէր կրաւնաւորին, որ կազմեաց և նորոգեաց զսբ. Շարակնոցս, զի խիստ խանգարեալ էր։ Եւ որ մեզ ողորմի ասէ...։ Գրեցաւ սակաւ նամակ Շարակնոցիս և կազմեցաւ ի սբ. քաղաքս* Երուսաղէմ, *ընդ հովանեաւ Ս. առաքելոյն Յակոբայ, ի թվականիս Հայոց Ռ և Հէ (1628), ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս տէր* Գրիգոր *արքեպիսկոպոսին, որ հայրաբար խնամէ զմեզ, զոր տէր Աստուած զինքն խաղաղական կենաց պահեսցէ ի պարծանս մեր...։*

473
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
Մ8ՁԵՊ, VI, № 1829

Գրիչ՝ Յոճան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

Ա

201 *Զեղկելի* Յոճան Հիզանցիս *յիշեսցիք ի սբ. և յերկնաթռիչ յաղաւթս ձեր և յիշողք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ...։*

Բ

Գրեցաւ ի սբ. յԵրուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, թվին Ռհէ (1628)։

---

[53] *Ինչպես հաղորդում է Ոսկյանը՝ յուրաքանչյուր վկայաբանության վերջում նման հիշատակագրություններ կան, որոնց մի փոքր մասն է նա մեջբերել։ Մենք կբավարարվենք այս մեկով։*

474
ՇԱՐԱԿՆՈՑ

Մշեղ, VI, № 1987 (ԺԴ դար)

Այցելու՝ Ալեքսանոս

579 *Ես՝* Ալեքսանոս *արեղայս եկի* Երուսաղէմ *ի թվին Հայոց ՌՀԷ (1628) ամին. ղիմ քաղցր մայրըս ի հետ բերի։*

475
ՇԱՐԱԿՆՈՑ

«Բանբեր Մատենադարանի», № 9

Գրիչ՝ Սարգիս Մելտենցի
Վայր՝ Սէշով

ա

444 *Ո՛հ ղմեղաց գերիս,*
Զյունայնացեալս առ ի բարիս,
Եւ զարամ ի չարիս,
Ընդուաստս ամենայնի,
Զ*Սարգիս դրպիրրս* Մելտենցի.
Ցիշեցէք միով ողորմեաիւ,
Ցիշողքդ ցիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն[54]*։*
Ի թվականութեան Հայոց ՌՀԷ (1628)։

Ծաղկող՝ Սրապիոն Բաբերքացի

Բ

445 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Զայնքաղ, ի լաւ և ընդիր աւրինակէ, ձեռամբ յոգնամեղ և մեղսամած փցուն* Սարգիս *գրչի* Մելտենցւոյ, *ի յերկիրն Օլախաց, ի քաղաքն որ կոչի* Սէշով, *ընդ հովանեաւ Ս. Օգսէնդի վանիցն և առ ոտն Ս. Լուսաւորչին, ի կաթողիկոսութեան*[55], *և յառաջնորդութեան տէր* Ղազար *վարդապետին և երեսփոխանութեան խոճայ* Մերիկին, *և թագաւորութեան* Միրոն *վոյվոտային*[56], *և աւագ էրէցութեան տէր* Անդրիասին։

Որք աստուածային սիրոյն հրովն վառեալ են, միշտ փութան բարի և Աստուծոյ հաճելի յիշատակ յաշխարհի թողուլ։ Որպէս և սիրելիս Աստուծոյ եկեղեցական խոճայ Նիկոլն, *որ և ստացաւ զայս Զայնաքաղս իւր հալալ ընչիցն և ապրանացն, իւրն յիշատակ և ծնողացն, հօրն՝* Նուրատինին *և մօրն՝* Ոսկիճատին, *և իւր որդոյն՝* Նիգոշին ///*բկին և ամենայն արեան մերձաւորացն, ո[րք] /// են հանգուցեալ. ամէն։ Որ և ետ զսա յիշատակ ի Ս. Խաչ եկեղեցին։ Ով ոք չունի իշխանութիւն հանել զսա ի դրանէ սբ. եկեղեցոյս։ Դարձեալ յիշեցէք ի սբ. աղօթս ձեր, ո՛վ դասք քահանայից և ուսումնասէր սարկաւագացդ, ով ոք հանդիպիք սմա կամ*

---

54 Նման մի հիշատակարան էլ կա, ուր հիշվում է միայն գրչի անունը։

55 Ինչպես հաղորդում է ծուցակի հեղինակը ձեռ-ում անվան տեղը բաց է թողնված։

56 Ծուցակի հեղինակը ծանոթագրում է. «Միրոն Բարնովսկի-Մովիլը, իշխան Մոլդովայի (1626 թ. հունվ.—1629 թ. օգոստ-ի 30)» (նույն էջում)։

*օրինակելով կամ ընթեռնլով, յիշեցէք զծաղկող և զխաղող սորա զնը-
աստս ի բարեաց և զետնեալս ի գրչագրաց զՍրասլիոնս Բարերքացի
միով ողորմեայիւ ետ զտառապեալս և զետնեալս ամենայն բարեաց,
զծոյլս ի բարին և զարագս ի չարին, զհողս և զփոշիս զՍարգիս գրիչս յի-
շեցէք ի Տէր։*

*Արդ՝ երես անկեալ աղաչեմք զձեզ, անմեղադիր լերուք խոշորութեան
և սրղալանաց գրոյս, զի կար մեր այս էր։*

*Մանաւանդ յիշեցէք ի սրբափայլ աղօթս ձեր երեսփոխան խոճայ
Մերիկն, որ զօրինակն շնորհեց, և որ առատն է ի տուրս բարեաց՝ ձեզ
յիշ[ո]ղացդ և մեզ /// առատ ողորմութեամբ։*

476
ԱՒԵՏԱՐԱՆ

Զմիւռնիա, № 3 (1456 թ.). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 729, էջ 204 ա

Գրիչ՝ Եղիա սարկաւագ

137 *Զվերջին ըստացաւղ սբ. Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս Զենապ
չէլէպին, որ էառ զսբ. Աւետարանս ի հալալ հնչից իւրոց. վկայութեամբ
խոճայ Թումային, և խոճայ Սուրղբսին, և խոճայ Մուրատին, և Թարգի
Մուրատին, և խոճայ Ապրին. և ետ յիշատակ Իզմիր քաղաք, ի դուռն
Ս. Բարդուղիմէոսի եկեղեցւոյն*[57]*, յիշատակ իւր հաւրն՝ խոճայ Յովանէ-
սին, և իւր կողակցւոյն՝ Միրային, և իւր որդւոյն՝ Ինապ չէլէպուն, և իւր
հաւրեղբաւրն՝ Ուղուրլուին, և իւր քաւրն՝ Մարքապային և իւրեանց հա-
ւասար կենդանեացն և ննշեցելոց։ Մի՛ ոք իշխեսցէ հանել զսբ. Աւետա-
րանս ի դրանէ սբ. եկեղեցւոյս գրաւելով կամ ծախելով կամ այլ և այլ
ասելով...։*

*Արդ՝ գրեցաւ՝ վերջին յիշատակարանս ձեռամբ մեղապարտ գրչիս,
Եղիա սարկաւագին, ի թուականիս Հայոց ՌՀԷ (1628). անմեղադիր լե-
րուք. զի կար մեր այս չափ էր...*

477
ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Բանասէր» 1901 թ. № 2—3, էջ 148—153

ա

Ի ժամանակս Մովսէս կաթողիկոսին[58] *և ի պատրիարքութեան Կոս-
տանդ[նու]պօլսի Խուլ Յովանէսին, և ի թագաւորութեանն Մուրատի Զոր-
որդի, և ի վէզիրութեան Ռէճէպ փաշային* [illegible][59]

[57] Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է «Այժմ (1873 թ.-կազմ.) Բարտուղիմէոս եկեղեցի ոչ գոյ ի Զմիւռնիայ»։

[58] Հիշատակարանի հրատարակիչ Թոտյան Մովսես Տաթևացու կաթողիկոսությունը դնում է 1632 թ. մայիսի 24-ից մինչև 1655 թ. մարտի 25-ը։ Սխալ է. իրականում Մովսէս Տաթևացու կաթողիկոսությունը սկսվում է 1629 թ. հունվարից մինչև մահը՝ 1633 թ. մայիսի 21-ը (Ն. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի..., Վիեննա, 1936, էջ 128, 134)։

[59] Այսինքն հիջրեի 1037 թ. որը հավասար է 1628 թ. այսպես՝ 1037+622—31։

Բ

Թուին[60] ՌՀԷ (1628) յորժամ մեծաւ տաժանմամբ դարձեալ յԵրուսաղէմայ եկաք հասաք ի Ըստամպոլ, յայնժամ սատանայ մեծամեծ ռազմ էր լարեալ պատերազմի և ցանց անզերծանելի, և ոզրոց և կոծոց արժանի, որ վասն ծովացեալ մեղաց իմոց և անուղղայ գնացից քահանայից և ժողովրդոց։ Մահալլային տաճիկքն չարացեալ էին, որ շատուց հետէ կու մախային՝ զԿոմրուկի Ս. Նիկողոս եկեղեցին դարձուցեր էին, որ կէսն ֆրռանկաց էր և կէսն մեր Հայոց ազգին ի հնուց հետէ, որ մեր հանգստարանն էր, որ ուր որ գրնայաք և գայաք անդ կու դադարէաք։ Եւ շատ ընդարձակեցաք և մեծացուցաք, որ յառաջ մէկ մարդոյ նստելու տեղ ոչ կայր մեր Հայոցս, բայց սակաւ ծառատունկ և գերեզմանատուն, և բուրաստան, և ֆռանկաց տունք և տեղիք և բուրաստանք, որ մեր ազգն վարձատրք էին նոցա, նա հանց յաջողութիւն եղև յԱստուծոյ, որ մերն քան զնոցայն շատ եղև, որ շուրվաճու մի տներն, որ հուպ էր եկեղեցւոյն, նա բնաջինջ եղև ամենայն տամբն. նա գնեցաք, և մեք այլ շատ շինեցաք գեղեցիկ ջէնք, և անուշահամ ջուր հանեց մեր աշակերտ Յակոբ արեղայն, և այլ բազում եկեղեցւոյ սպասօք զարդարեալ։ Յորժամ առնելու են եղեր Դ (4) ամիս դուռն մոհրեր են, թէ «Բերեն կաշառք տան որ բանամք»։ Երկու հարիւր ղրուշ կու տան, ու այլ կը խոստանան և կու գնան մօտ առ Կեսարացի Գրիգոր վարդապետն, որ յայնմ ժամանակի եկեալ էր ի Կեսարիոյ ի Ըստամպոլ։ Նա փոխանակ խրատ տալոյն և օգնելոյն, կու սաստէ նոցա, թէ «Դուք ո՞վ էք. Ֆռանկքն և սեփհական տեղացիքն կու հոգան», և այլ ցուրտ բանքեր շատ կասէ, և կու յուսահատէ զնոցա, որ կու գան և կերդան զՄ (200) ղրուշն յետ կառնուն ի սատկած միւֆտուն, որ նա էր փակօղն և առնօղն։ Ինչ կու տեսնէ միւֆտին, որ յետ կառնուն զդրամն, կու հաւաքէ զամենայն ուլամայսն իւր և շատ ամբոխիւք կու գնան, մուղրիք կու ձայնեն, և նամազ կարդան, և մէչիտս կառնեն։ Յայնքան թշուառական ատենին ինքն կամ Խուլն բնաւ փոյթ չեն առնոյր եկեղեցւոյն և եկեղեցականացն և քրիստոնէից անհնարին ոգոյն և անմխիթար վըշտացն։ Այլ ևս աղմուկ և խռովութիւն կու անկանի ի մէջ Հայոց վասն պատրիարգութեան առնելոյ աղագաւ, և մարտ եղեալ էր հետ Յովանէսին, մինչ զնա փախուցեալ էր ի Պուտսայ, և ինքն[61] տիրեալ էր բռնութեամբ առանց հրամանի արքունեացն և թագաւորին, և ի տեղի իւր եղեալ էր զԵրզնկացի Յովանէս Պակքամուր Զագն, և ինքն գնացեալ էր ի Լեհաց աշխարհն։ Եւ այս եղկելի քահանայքն և ժողովուրդքն անտէրունչք և անփարախք մնալով բոլոր ամ մի թափառական կու շրջին որպէս զոչխար կորստական և ոչ ոք էր որ այց առնէր և ժողովէր զցրուեալսն ի մի։ Եւ իւրեանք իւրեանց մէջն միաբանութեամբ մէկ խափան եկեղեցի մի կու գտնան Հռոմի՝ Հրեշտակապետ անուն, ի Պալատու դրան ներքոյ կէս մղոնաւ հեռի, խաւարչուտ տեղի մի, ի մէջ Հրէից, և կու ջանան առնուլ ի Հռոմոց, նա մեծածախ գանձիւք հազիւ լինելուց է, և զոչ

[60] Մինչև Գրիգոր Պարոնտերի հիշատակարանը ձեռ-ի գրիչը դրել է հետևյալ վերնագիրը. «Գրիգոր վարդապետ ոմն, որ զամենայն անցքս իւր և զտեսեալսն գիրք մի է շարադրեալ, վասն Պալատու եկեղեցւոյն այսպէս դրէ»։

[61] Իմա՛ Գրիգոր Կեսարացին։

որք ունին գլուխ և առաջնորդ, որ զժողովուրդն ի միաբանութեան պահէ և անսացնէ ըզնոսա։ Եւ Իրստակէս Խարբերդացին յայնմ ժամանակին կու գայ ի Ըստամպոլ։ Կու զնան եղկելի քահանայքն և ժողովուրդքն ի նա ի խրատ հարցանել։ Իսկ նա մխիթարական բանիւք կու յորդորէ զնոսա և յանձն կառնու գլուխ լինել նոցա գործոյ իրացն. և կառնուն զնա և կու տանին ի մէջ իւրեանց ի Խասգեղն, և կու յորդորէ զամենեսեանսն, և յորդորելով զմիմեանս շատ դրամ կու ժողովէ և արծաթ։ Եւ զվաղիրն և զմեծամեծքն արքունեաց կու կաշառեն և Հոռոմքն ամենեքեան կու շարժին ի պատերազմիլ և մարտնչիլ ընդ Հայոց վասն ոչ տալոյ զեկեղեցին Հայոց։ Սակայն Աստուծոյ կարողութեամբն և սբ. Լուսաւորչի աղօթիւքն Հայք կու յաղթահարեն զնոսա, և զամենայն թիկունս լինօղք նոցա. և Ըսանապ փաշայն Հայոց հրամանագիր կու տայ, և երեք չավուշ զկնի, ե կու գան, կու բանան զեկեղեցին և կու տան ի ձեռս Հայոց, և յոյժ ուրախութիւն կու լինի ի մէջ ազգիս մերոյ։ Եւ սկսանին տխրիլ, տրտմիլ և հոգալ վասն փոքրութեանն և խաւարչուտ գոլոյն. կու հնարեն, թէ զիա՞րդ կամ որպէ՞ս կարասցեն առնուլ հրաման վասն նորոգութեանն, որ խախտեալ էր ի հիմանէ. նա մեծաւ շանիւ և բազում ծախիւք կրկին հրամանաց գիր կառնուն վասն նորոգութեանն։ Պոլպոլնի Աստուածատուրն Տիվրիկցի, որ մեզ հաւատարիմ բարեկամ է և յոյժ աստուածասէր, մեծահանճար և համարձակ, ճարտարախօս և քաղցրաբան. նա շատ է եղեր աշխատ ի ամրեբաց և այլ ամենայն հիւճէթներաց հանելն, ի դրունս մեծամեծաց դեգերելով ի բազում աւուրս, զորոյ վարձս փոխարինի նորա հատուցէ Տէր, թէպէտ մարդիկ երախտամոռացք են որպէս զմերս։

Յետ այսպէս լինելոյն փոխանակ օգնելոյ տառապելոցն, կրկին ի նախանձ կու շարժին Կեսարացւոյ կողման շարահնար մարդիկն՝ Էրզրումցի Մինաս վարդապետն և Էրգնկացի Պէկթամուր Ջագն Յովանէս եպիսկոպոսն, որ ի տեղի իւր եղեալ էր Կեսարացին, և ինքն ի Լէհաց աշխարհն էր գնացեալ. և սոքա, որք տեղապահք էին նստեր, հակառակ լինելով Ըղբսաագիսին և ամենայն քահանայից և ժողովրդոցն Պալատցոց, արդիլել կամելով և զշինութիւն եկեղեցւոյն խափանելով, և զԸնստագէս վարդապետն հալածական առնելով, որ ղօղեալ կայր ի նոցանէ ի Ղալաթիայ ի նոցին չար խորհրդոցն։ Եւ յաւուրսն յայնոսիկ մեք այլ եկաք հասաք յԵրուսաղէմայ ի վերայ. և յորժամ զմեր գալուստն իմացեր էին Պալատցիքն՝ մեծ և փոքր, քահանայք և ժողովուրդք, ի Իսկիւտարն դէմ եկին և զաղաղակ բարձին ի ձեռանէ եպիսկոպոսին և Սուլու Մանաստրցի Խաչատուր ուռեցին, ոնց ուռեցու խափանեցաւ։ Եւ յորժամ անցաք ի Խասգիւղն, նա ի տես երեկ մեզ եպիսկոպոսն այն, որ յառաջն մեղի աշակերտութիւն էր եղեալ ի մանկութեան ժամանակին նա. մեք այլ բնաւ յերես չթողաք և շատ նախատանաց բաներ ասացի իւրն. և ամօթ երեսաց իւրոց ծածկեաց զինքն և գնաց տխրեալ։ Եւ սկսաք յորդորել և քաջալերել զքահանայքն և զժողովուրդքն ամենայն ի շինութիւն եկեղեցւոյն, որ յանուն Միքայէլ Հրեշտակապետին է, որ ի Սոսկալի տեսլեան պատկերէն մեծամեծ հրաշս և սքանչելիս կու կատարի ի փառս Քրիստոսի։

եւ ես և Ռրստակէս վարդապետն վերակացու լինելով նոցա և օժանդակութիւն առնելով ըստ կարողութեան մերոյ յամենայն պիտոյից մինչև կատերացաք աջողելով Տեառն և օրհնեցաք, նաւակատիս առնելով մեծահանդէս տօնիւք։ Եւ եթող Ըռստազէսն և գնաց ի կողմն Բիւթանիոյ, և յետ քանից աւուրց հրայրեցութիւն եղև, որ տոչորեաց զամենայն թաղն և զամենայն Հրէից տներն, որ կից եկեղեցւոյն և հուպ յոյժ, որ հանապազ կու թքէին ի վերայ եկեղեցւոյն, և Ֆարշ հոտն կու բուրէր հանապազ։ Եւ մէկ անուանի ե յոյժ մեծատուն Հոռոմ, գեղեցկաշէն տունք և ապարանք կայր իւրն բարձր ի վերայ եկեղեցւոյն, որպէս զՀրէիցն հուպ, որ զկերակրոյն անպիտանըն, թէ՛ ոսկր, թէ՛ կեղևանք սեխենաց և մրգաց ի վերա եկեղեցւոյն արկանէր, առաւել չարեօք քան զՀրէայքն հակառակ էր եկեղեցւոյն։ Յորժամ որ հուրն անկաւ նախ գնոցա շինուածքն մինչև ի հիմն յատակեաց որ մէկ շիւղ չեթող, որ յաւիտենից աւերակ դարձան տեղիքն, և եկեղեցւոյն շրջապատ շինուածքն այլ այրեցան, և վերայի քիրամիտքն մանր խորտակեցան ի մարդկան ոտից ե զսեղանն կործանեցին Տաճիկքն, հալա լոկ առաստաղն զերծաւ խախտեալ։ Յայնժամ մեք ի Ղալիքիայ էաք, ընդ լուսանալն մարդ էին ղրկել ի կոչել զմեզ անդ՝ ի հրայրեացն և գնացաք, կրկին քաշալերս տուաք ամենեցուն, վասն վերստին նորոգելոյ զամենայն խախտեալքն և տոչորեալքն ի հրոյն։ Ի յայնմ ատենին էր՝ և ժամանակին և մօտ աւուրքն որ Ցիսկելէ արապա պազրէն ի վեր մինչ ի Ջրի կամարն այրեցան ամենայն շինուածք, որ թէ մէկ քիրամտին ոսկի մի տային, չէր հնար գտանելոյ ուրուք։ Նա աստուածային բազմապատիկ օրհնութեանց միշտ և հանապազ մեր ակնցիքն, որ ի Խասգեղն կու լինին և քիրամտագործք են, մանաւանդ մեր հոգևոր զաւակաց հարքն՝ տէր Կարապետին, և Ղազար դպրին, և խոճայ Ղարիպ մեր եղբայրացեալն, և խոճայ Վարհատն, և Ճիհանշահն, և Կուլպէկն, հինգ հարիւրական քիրամիտ ետուն և այլքն ըստ կարի իւրեանց, և երեք օրն տասն և երկու հազար քիրամիտ հաւաքեցաք և ծածկեցաք զվերևն եկեղեցւոյն, որ Թուրքերն ի նախանձ շարժեցան, թէ «Դեռ մեր աւերակքն չեմք շինել, դուք զայդքան քիրամիտն և քարաստան ուստի՞ց գտայք»։ Տարաւ դատաւորն զեկեղեցպանն գան եհար, մինչ ի փաշայէն կրկին հրաման երեկ և ապա լռեցին։ Եւ շինեցաք զշրջապատն և զփողոցն ե զխուցն, զմիջին խախտածքն, և զսեղանն կրկին, վերստին հաստատեցաք։ Եւ պարտակելոյ տեղիս և կարիս վճարանաց ոչ գոյր տեղի, որ յոյժ անձկութիւն էր, և աստուածային յաջողութեամբն բրել տվի զօրով, որ չէին կամիր ոմանք, չորս սպիտակ աւել առ ի բրողին գաղտ յիւր ընկերացն և հակառակորդացն, և ասացի, թէ «Որքան կարես բրէ խորագոյն»։ Եւ ի բրելն գտբէթ մի բացաւ և հազիւ ծածկեցին զգլուխն. նա գտաւ շինուածք մի, մեծ հողով և քարով լցեալ, որ չորս վարձակն ինն օր հազիւ կարացին զմի անկիւնն պարապել և յատակել, որ եղև տեղի հանգստարանի կարեաց մինչև ցայժմ։ Եւ յորժամ կատարեցաւ ամենայն շինուածքն, քահանայքն յոյժ շտապեցնէին զսեղանն օրհնելոյ, և այլն չէր փոյթ նոցա զամենայն եկեղեցին, զպատկեր և զխաչ վերստին օծանել և օրհնել ընդ խախտեալ սեղանոյն, զոր օրինակ դրեալ կայ ի ցուցակին յատուկ դրեալ շատ քան զառաջինն, խորհրդաբար, թէ ոք խախտեսցի ի հաւատոց կամ

յօրինաց վերստին հաստատեսցի ապաշխարութեամբ ե ջերմ արտասուօք, արք անզգամք զայս ոչ ծանեան և այլն։

Ես գիտէի թէ Աստուծոյ համար կու փութացուցանէին, այլ վասն իւրեանց ագահութեան ախտի ջահիցն էր ջան նոցա։ Եւ յորժամ զամենայն եկեղեցին օրհնեցաք և օծեցաք խրատով ցուցակին, զսեղանն և զամենայն կահ սրբութեանն, մեծահանդէս տօնիւք և ցնծութեամբ և պատարագօք, և յետ արձակման պատարագին յորդորեցի զժողովուրդն, թէ «Եկեղեցւոյն ջատ պարտք եղև այս անգամ քան զառաջինն, ջատ քարաստան վերասիայ է և մշակաց վարձքն և զկերած հացքն վերասիայ կերեր են, լաւ աջահամբոյր տայք, որ վճարեմք ի պարտուց խնդրոզացն»։

Կու կարծէի, թէ հաճութեամբ է նոցա, նա լսեցի, որ տրտունջ և խռովութիւն կայ ի միջերն վասն իմ, և չար է թուեալ յաչս նոցա ասացուածքն մեր վասն եկեղեցւոյն առագաւ։ Երբ յորժամ լսեցի զտրտունջ քահանայիցն ի վայր դրի զթապախն, և ժողովուրդն դատարկ ելեալ գնացին։ Եւ դարձան ամենայն քահանայքն, կատաղեալ բարուք դիմեցին ի վերայ. մեր, լրբենի երեսօք հայհոյեցին զմեզ, և փոխանակ շնորհակալութեան վիրավորեցին սրտիւք, և ելեալ խռովութեամբ գնացաք ի Ղալաթիայ, այսպիսի չարութեամբ վճարեցին փոխանակ երախտեաց մերոց։

478

ԱԻԵՏԱՐԱՆ

«Բազմավէպ», 1926 թ., էջ 11—12

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Ասպահան

ա

Փառք..., որ ետ կարողութիւն տկար և նուաստ և անպիտան մարմնոյս հասանել աւարտ յայսմ Աւետարանիս ձեռամբ նուաստ և սուտանուն և մեղսամած Գասպար իրիցիս և վարպետի իմո[յ] Մեսրոպ դպրի, ի վայելումն տէր Աւագին, ի յերկիրն Շաւշ, որ կոչի Ասպահան, ընդ հովանեաւ Աստուածածնի, և հայրապետութեան մերոյ Խաչատուր վարդապետի, ի թագաւորութեան շահ Աբասի, որ բազում չարիս հասոյց ի վերայ հայկազանց ազգիս, մանաւանդ ի վերայ Փարիոյ[62]։ Բարոյ նախանձն սատանայ որ և թափեալ զթիւնքն իւր ի սիրտ շահ Ասպասին և գազանացեալ ի վերայ հայկազանց ազգիս, որ և՛ նեղութեամբ և՛ բռնութեամբ և՛ սաստիկ ահիւ և՛ տանջանաւք որ եհատ վճիռ ի վերայ Փարիոյ քրիստոնէից. և առաջ ինքն բռնութեամբ զմի գեաւղն տաջկացոյց և ապա հանեալ զղօրս իւր և սփռեաց ի վերայ գեղաւրէայցն. և նոքա ելեալ բռնութեամբ և նեղութեամբ, որ նոր ի յաջս նոցա երևեալ, թէ՛ ծեր, թէ՛ տղայ, թէ՛ կին, թէ՛ աղջիկ, և կալեալ տաճկացուցին զամենեսեան։ Եւ ոմանք փախստական եղեալ ի լերին և ի ծերպս լերանց, աղիողորմ լային և ասէին. «Տէր Աստուած, ջնջեայ զկենդանութիւնս մեր, որ ազատիմք ի յայս դառն ժամանակացս և տանջանացս»։ Այսպէս լային, և ողբային, և հառաջէին, և շուռ գային ի լերինս և ի բլուրս։ Եթէ կամիս գիտել, թէ որքան գեաւղ էր՝ Խ (40) աւելի ի թուին ՌՀԱ (1622)-ին եղեալ. և Բ (2)

62 Սպահանի հայաշատ գավառներից մեկը։

ամն այնպէս կացեալ։ Եւ յետ Բ (2) ամացն բարերարն և ողորմածն և մարդասէրն Աստուած ողորմեցաւ իւր ըստեղծած ծառայիցն և իշոյց զբարկութիւն թագաւորին։ Եւ էր մին խան, որ էր անունն Խասրով, *որ և գնացեալ առ թագաւորն, վասն քրիստոնէիցն աղաչեաց, և թագաւորն հրամայեաց և ասաց, եթէ «ԲՌ (2000) թուման տայցեն, երթայցեն պահեսցեն զիւրեանց քրիստոնէութիւնն յայտնապէս»։ Եւ եկեալ ետուր Հայոց յաւետիս, և Հայք ուրախացեալ ետուն նմայ ԲՃ (200) թուման. վասն յաւետեացն որ ետուր նոցա. և այս ամենայն բողս որ է ԻԲՃ (2200) թուման ետուն և ազատեցան։ Նոյնպէս և ազատեաց տէր Աստուած ի դժոխոց դառն տանջանաց յերևելի և յաներևոյթ թշնամոյն ստացող սբ. Աւետարանիս զտէր* Աւագն, *որ երեսն գրել զայս զարդարած ոսկով և լազվարդով բուրաստանս, յիշատակ իւրն և իւր ծնօղացն, հայրն՝* Խաչումն *և մայրն՝* Եթարն, *և զիւր պապն՝* Ջաւրհապն, *և զմեծ պապն՝* Շահղուլին *և զամենայն արեան մերձաւորս։*

Ծաղկող, կազմող՝ Մեսրոպ գպիր

Բ

Դարձեալ յիշեցէք... զծաղկաւղ և զկազմաւղ զանարժան Մեսրոպ *դպիրս, և զուսուցանաւղ վարպետն իմ՝ զտէր* Սարգիսն, *և միւս* Խիզանեցի Մարտիրոս *վարպետն, ևս առաւել զմարմնաւոր ծնաւղն՝ զտէր* Մարտիրոսն *և զԽանզիարն յիշեցէք։*

Եւ գրեցաւ և աւարտեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՀԷ (1628)-ին[63]*։*

479
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 413

Գրիչ՝ Յոհան սարկաւագ
Վայր՝ Ամիթկերտ

Գրեալ ի թուականի
Ռ և է տասի
Եւ եաթն այլ աւելի (1628),
Ձեռամբ Յոհ[ան] *սարկաւագի...*
Ի մայրաքաղաքն Ամիթկերտի,
Եւ [յառաջնորդութեան] տէր Բարսեղ *վարդապետի,*
Ի գուռն Ս. Կիրակոսի,
Եւ մաւրն նորա Յուղիտայի,
Եւ Ս. Սարգսի զաւրավարին
Եւ որգւոյ նորա Մարտիրոսին...։

Յիշեցէք զուսուցիչն արհեստիս զտէր Մինաս *բանիբուն քահանայն և զաստուածաբան գրչապետն... ո՛վ եղբարք, անմեղադիր լերուք խոշորութեան գրչիս և սխալանացս, գիտեմ որ բութ կտրելոց է, բայց դուք գիտէք, զի կատարեալ չէի յարհեստ գրչութեան...։*

[63] *Հոդվածագիր Ս. Մելիք-Հակոբյանը սույն հիշատակարանին նախորդող առաջաբանում և հոդվածի ենթավերնագրում երկիցս գրում է «1638»։ Թեև ճիշտ է սա, նշանակում է հիշատակարանի վերջի «ՌՀԷ» տվյալը, պետք է դարձնել «ՌՁԷ», սակայն ՌՁԷ-ն սխալ է, որովհետև Արաս Ա-ը մահացել է 1629 թ. և չէր կարող 1638 թ. նման կարգադրություն անել։*



480
ՇԱՐԱԿՆՈՑ

Սոֆիա, «ՀԱ» 1926 թ., էջ 342—343

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Կ. Պոլիս

342 *Փառք...։ Գրեցաւ Շարակնոցս ի լաւ և յընտիր աւրինակէ. զի աւրինակն գրեալ էր այսպէս. «Թվականն ՉԽԴ (1295), թագաւորութեանս Հայոց Հեթմոյ, որդւոյ արքայի Լեւոնի, ի մայրաքաղաքիս Սիսայ, ի դուռն Ս. Նշանիս»։ Եւ մերս գրեցաւ թվին ՌՀԸ (1629) յունվարի ԻԱ (21), ի*
343 *մայրաքաղաքն ի Կոստանդինուպալիս, ի դուռն Ս. //Սարգսի, ձեռամբ անարժան գրչի Միքայէլի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրինակելով մէկ Հայր մեղաւ մի յիշեցէք զանարժան գրիչս և զծնաւղսն իմ, և զկենդանիս և զննշեցեալսն իմ. և Աստուած զյիշողդ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։*

Արդ՝ գրեցաւ զսա ի հալալ արդեանցն/// սարկաւագն, և ետ դրել անձին իւրում /// Աստուած բարով վայելել տացէ իւրեանն. ամէն։ Եւ ի հանդերձեալ զերկնային ուրախութիւն պարգևեսցէ. ամէն։

481
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 809

Ստացող՝ Սարգիս վարդապետ
Վայր՝ Թոխաթ

ա

303ա *Փառք...։ Շնորհիւ և ողորմութեամբ ամենակալին Աստուծոյ և առաջնորդութեամբ ամենազաւր Հոգոյն Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ հոգիաբուխ տառս, որ կոչի Հարցմանց, զոր արարեալ է և շարադրեալ մեծ բարունապետին Հայոց Գրիգորի Տաթեւացոյ։ Վասն զի այս երշանիկ և անճառելի, շնորհաւք Հոգոյն Աստուծոյ լցեալ վարդապետս Գր[ի]գորիոս, էր բարէպաշտ ծնաւղաց զաւակ, հաւր անունն Ամիր Սարգիս, ի գաւառէն Քաջբերունեաց, ի քաղաքէն Արճիշոյ, և մայր նորայ ի գեղջէն Փարպոյ։ Եւ վասն հալածման անաւրինաց երթեալ բնակեցան ի գաւառն Սիւնեաց՝ Վայոյ ձոր։ Եւ մայր սորայ ծնաւ որդի և դագարեաց ի ծննդոց,*

ե նորա ապաւինեալ Աստուած, սկսաւ աղաւթիւք և պաղատանաւք խնդրել ի Տեառնէ տալ նմայ բարի ղաւակ, միջնորդ ունելով և բարէխաւս զսրն. Գրիգոր Լուսաւորիչն *մէր։ Եւ ի տեսեալ գիշերոյ անուրջս երազոյ երևեալ սրն.* Գրիգոր, *ունելով ի ձեռինն իւրում կանթեղս նուաղեալ ի լուսոյ և ասէ ցմայր նորայ. «Զուաւ Աստուած աղաւթից քոց և տացէ քեզ զբարի զաւակ միջնորդութեամբս իմով, բայց առ զկանթեղս զայս և առ քեզ պահեայ, զի մանուկն որ ծնանի ի քէն, նա լուսաւորէ զխաւարեալ կանթեղս զայս ուղղափառ դաւանութեամբն։ Եւ ծնաւ որդի և կոչեաց զանուն նորայ* Գրիգորիոս: *Եւ ետուն զնայ յուսումն աստուածաշունչ դրոց գիտութեան։ Եւ երթեալ ի* Տպիւիս *Հայոց քաղաք և հանդիպեալ մեծ վարդապետին Հայոց* Յոհանու Որոտնեցոյ, *աշակերտին մեծին* Յեսայեայ: *Եւ նայ տեսեալ զմանուկն, զի շերմեռանդ սիրով կայր յուսումն աստուածային գրոց գիտութեան, և առ զմանուկն առ ինքն և հանապազաւր՝ վարդապետական ուսմամբ կրթէր։ Եւ վարժեալ ամս ԻԸ (28), և առեալ տարաւ զնայ աստուածակոխ քաղաքն* Երուսաղէմ. *և անդ ընկալաւ զաստիճան քահանայութեան, լցեալ շնորհաւք Հոգոյն Աստուծոյ։ Եւ եկեալ ի գաւառն* Եկեղեսոյ Յեգեկայն *ետ նմայ գաւազան վարդապետական իշխանութեան, և անտի դարձեալ եկն ի գաւառ իւր։ Եւ ժողովեցան առ նայ բազում վարդապետք և ուսումնականք, և վարդապետն* Գրիգորիոս *ամենեցուն գլուխ գոլով։ Եղեն ի նմանէ բազում վարդապետք ի լուսաւորութիւն հայկաղան սեռիս և բազում որդիս ի փառս էած։ Կարկեաց զբերանս երկաբնակացն, և հաւանութեամբ ամենայն վարդապետաց նստուցին զմեծն* Գրիգոր *յաթոռն վարդապետութեան ամենայն Հայոց։ Եւ ժողովեաց նայ բազում աշակերտս և լուսաւորեաց զամենեսեան ճշմարիտ և ուղղափառ դաւանութեամբ, որպէս առաքեալքն ի վերնատունն առին զՀոգին Աստուած և բաշխեցին ամենեցուն։ Այսպէս և սայ է առ զՀոգոյն Սրբոյ պարգևս և ետ մանկանց եկեղեցոյ։ Արար գիրս բազումս և լուծումն ամենայն դժուարիմաց բանից, և լուսաւորեաց զմիտս վարդապետաց և գրոց աշակերտաց ի վերայ Հնոց և Նորոց Կտակարանացն, նրբից և արտաքնոց, յորոց և մինն է պատուական գրեանց սայ, որ կոչի Հարցմանց, և է ԺԸ (10) հատոր.*

Նախ և առաջին՝ առ արտաքինս առարկութիւն և լուծումն ընդդիմախաւսութեանց նոցայ, որք զհարկ և զճակատագիր զչարս և զբարիս յԱստուծոյ համբաւէն, և ընդդէմ Մանիքեցոցն, այլ և Տաճկաց և Հրէից։

303բ *Երկրորդ հատորն է՝ ճշմ//արիտ աստուածաբանութիւն սրբոյն* Դիոնէսիոսի *ցուցումն սակաւուք։*

Երկրորդ հատորն՝ ընդդէմ Արիոսի *և հոգեմմարտից և* Նեսաորի *և երկայբնակաց։*

Չորրորդ հատորն՝ վասն վեցաւրէից և արարչութեան բոլոր աշխարհի։

Հինգերորդ հատորն՝ ի կազմութեան լինելութիւն մարդոյն։

Վեցերորդ հատորն՝ ի նոյն ինքն յարարածս ի սկզբանէ ըստ կարգի պատմութեանց հինգ գրոցն Մովսէսի։

Եւթներորդ հատորն՝ Յեսու *և* Դատաւորք *և Չորս թագաւորութեանցն համառաւտեալ։*

Ութերորդ հատորն՝ ի Նոր Կտակարանաց մարդեղութեան բանին Աստուծոյ։

Իններորդ հատորն՝ ի նորս եկեղեցոյ հարցմունք զանազան։

Տասներորդ՝ վասն փոփոխման և կասարածի աշխարհի, յարութեան և դատաստանի հատուցման։

Արդ՝ յայսմ աստուածախաւս և հոգելից տառիս, անմահական ըմպելոյ և անգիւտ մարգարտիս, և անպակասելի գանձիս, և ամենագով ալտինակիս եռափափաք սիրով և յղձակարաւտ տենչմամբ ցանկացաւղ եղեալ պիտակ անուամբ Սարգիս վարդապետ /// որ բաղում աշխատութեամբ ըստացայ զայս սբ. գիրքս, որ կոչի Հարցմանց, գրել տալով յԵւդոկիա քաղաքիս, որ ասի Թոխաթ, ի վայելումն անձին իմոյ և իմ հոգու որդեակն իմ՝ Միքայէլի։ Այլ և յիշեցէք զհայրն իմ՝ Մովսէս քահանայ և զմայրն իմ՝ Պզտիխաթունն, և զեղբայրն իմ՝ Անդրէաս, և ըզքուերքն իմ՝ Զաւերայն և Սուլթան և Տաւնտին, որ առ Քրիստոս են հանգուցեալ, և կենդանի քուերքն իմ՝ Փաշայն, և Մուրատն, և Շարուրն, և այլ ամենայն արեանառու մերձաւորքն իմ՝ զկենդանիքն և զհանգուցեալքն, յիշեսցիք ի Տէր...։

Գրիչ՝ Պողոս

Բ

Գրեցաւ գիրքս Թոխաթ քաղաքիս, թվին ՌՀԸ (1629) Հայոց ամսոյ տրէ ԺԹ (19), յունվար ամիս ԼԱ (31), աւրն շաբաթ, ի դուռն Ս. Ստեփանոսի Նախավկային և Ս. Յակոբայ առաքելոյն։ Այլ և կրկին անգամ աղաչեմ, յիշեցէք զիս՝ զմեղաւք լցեալ սոսկանուն Պողոսի, և զհայրն իմ՝ Մրսրն, և զմայրն իմ՝ Խաթունասին, և զեղբայրն իմ՝ Իսկանդարն, և զքոյրն իմ՝ Շահնուլան և զարեան մերձատրքն իմ, որ հանգուցեալ են առ Քրիստոս, և դուք յիշողքդ յիշեալ լիջիք...։ Այլ և զստացող սբ. գրոցս Սարգիս[1] վարդապետն յիշեսցիք ի Տէր սրտի մտաւք, աղաչեմ յիշել յաւիտեանս. ամէն։

Գ

Երկրորդ. գիտելի է, զի մահտարաժամն Գ (3) ազգ է՝ մին է քաղահան, և միւսն՝ պտղահան, և երրորդն որպէս հունձ[2]։

482

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մոսկվայի Արևելյան արվեստների թանգարան, № 2452

126ա Ի ժամանակին յորում էր թվականն Հայոց ՌՀԸ (1629) և յունվար ամսին է (7) և արամ ԻԳ (23) և սահմի ԻԵ (25), պատկեր աւուրն չորեքշաբաթ վաղճանեցաւ մեծ և անպարտելի յաղթող և ահարկու աշխարհակալ զանն և արքայից արքայն շահ Աբաս, ի յերկիրն Ճենաց, զոր այժմ

[1] Անշնորհքի մեկը՝ Եղիա վարդապետը, սույն անվան վրա սև թանաքով գրել է «Եղիա»։

[2] Ձեռ-ի 306 բ—307 ա էջերում տարբեր անձանց կողմից գրանցված են 1631, 1662, 1694 և 1696 թվականների ծնունդի և մահվան դեպքեր։

Գիլան և Մազանդարան ասեն, ի քաղաքին, որ կոչի Աշրաֆ. թագ[աւոր]-
եալ ամս ԽԲ (42), և յորժամ թագաւորեաց էր ԺԸ (18) ամաց, և էր Կ (60)
ամաց յորժամ պակասեաց աստէն։ Եւ որքան թագաւորեաց սայ ի վերայ
երկրի էր խա[ղաղու]թիւն և անդորրութիւն, շինութիւն և [հան]դարտու-
120ր թիւն ընդ ամենայն աշխարհ սո[րա։ Սա] // էր մեծախորհուրդ և առատա-
միտ, իմաստուն և հանճարեղ, շատադէտ և հնարաւոր, արդիւնարար և
ճարտարաբան։ Եւ յետ սորայ ի նոյն թվին և ամսին յունվար ԺԹ (19),
ովգան Ե (5) տրէ է (7), պատկեր աւուրն երկուշաբթի նստի յաթոռ շահ
Աբասին թոռն նորին շահ Սէֆի, որդի Սէֆի միրզային, որ սպանաւ ի հաւ-
րէ՝ ի շահ Աբասէն։ Այս շահ Սէֆի, յորժամ թագաւորեաց, էր ԺԷ (17)
ամաց մանուկ տիաւք, տեսլեամբն գեղեցիկ և հասակօն վայելուչ, իմաս-
տուն մտաւք և [առ]ատաձեռն, ուշիմ և արի. ի [սորա]յ աւուրս առաւել
խաղաղու[թիւն, ք]ան զյաւուրս պապուն իւրոյ։

/// մարտ Բ (2) գրեցս սակս բանս։

483

ՀԱՄԱՅԻԼ

Երևան, № 51

Գրիչ՝ Սիմէոն սարկաւագ

Աւարտեցս Կպրիեանոսս ձեռամբ մեղաւոր և անարժան գրչիս մա-
կանուն Մաթեսի, սարկաւագ Սիմէոնիս, որ զանունս ունիմ, զգործս ոչ։
Նորոգեցս ի Յամիթ քաղաքիս, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մօր նորա
Յուղիտայի. առաջնորդութեան տէր Բարսեղ վարդապետին, ի վայելումն
Մարտիրոսին. յիշեցէք...։ Թվականիս Հայոց ՌՀԸ (1629), աղուհացից
միջոց՝ հինգշաբաթին[3]. ամէն։

484

ԿՆԻՔ ՀԱՎԱՏՈՅ

Երևան, № 4640 (ԺԵ դար). տե՛ս նաև ՏԵՐԱՎԴ, № 49, էջ 84

Նորոգող՝ Պետրոս երէց

53 ա Փառք... [Ա]ղաչեմք զձեզ, ո՛վ սբ. հանդիպողք, յիշեցէք ի Քրիստոս
զստացող սբ. գրոյ[ս] զԲաղտասարն, և զպապն՝ Մաթէոսն, և զհանիկն
իւր՝ Մէրջանն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԲաղտասարն և զհաւրեղ-
բարքն իւր՝ Առաֆելն, Մարութէն, Եղնազարն. ամէն։ Դարձեալ յիշեց[էք]
ի Քրիստոս զստացող և վերըստ[ին] սբ. գրոյս զբարեմիտ և ընթերցա-
ս[էր], զհեզահոգի Բաղտասարն և հայրն իւր՝ մահդասի Նազարն, և
զմայրն իւր՝ Դշխունն, և զեղբայրն իւր՝ Սաֆարն, և զքոյրն իւր՝ Մաս-
փուրն. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԲաղտասարն, և կողակիցն
իւր՝ Մարիամն, որ զորդին իւր՝ Մաթէոսն, և դուստրն իւր՝ Անայի. ամէն։

[3] Հայոց ՌՀԸ (1629) թվականի աղուհացի պահքը՝ ըստ բարիկենդանը սկսվում է փետրվարի 16-ից և տևում 41 օր՝ մինչև մարտի 28-ը՝ շաբաթ։ Դժբախտաբար ամսաթիվը նշված չէ, որպեսզի որոշեինք բնագրում հիշված հինգշաբթին, որ ամսում և ամսաթվին կհամապատասխանի։

Նորոգեցաւ գիրքս ի գուռն Ս. Աստուածածնին, ձեռամբ անարժան Պետրոս իրիցու, թվին ՌՀԸ (1629), մեհեկի ամսոյ Ի (20)[4], ի թ[աղաւորութեան] առաջին ամի շահ Սէֆի, որգոյն Սէֆի միրգին, որ թագաւորեաց զկնի պապոյն իւրոյ, ի կաթողիկոսութեան տեառն [Մովսէսի][5], Զոր յոյժ աշխատութեամբ հազիւ աւարտեցաւ, վասն զի յոյժ տրորեալ էր։ Առ ոտս ձեր անկանիմ արտասուաթոր թախանձանաւք, ո՛վ սր. ընթերցողք, մի բերան ողորմի ասել ի[նձ] անարժանիս և ծնաւղացն իմոց և յիշողքդ արժանի լինիք տեսոյն Քրիստոսի. ամէն։

485

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 7786

Գրիչ՝ Գինոս երէց
Վայր՝ Խաչկայ վանք

ա

248բ Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ նորին անկեալ աւարտեցաւ մատեանս աստուածային, որ կոչի Հարցմունք, ի յերկիրս Կարնոյ, որ է Թէոդուպոլիս, որ այժմ կոչի Առզրում, ի Խաչկայ վանք, ի դո[ւ]ռն Ս. Յարութեանս և Ս. Թադաւորիս, և այլ ամենայն սրբոց, որ աստ կան հանգուցեալ, ձեռամբ անիմայ, և աղխմար, և տկար, և փծուն, և փարթամացեալ ի չար գործոց, ե թափուր և ունայն մնացեալ ի բարի գործոցն զԳինոսս, որ անուամբ էրէց եմ կոչեցեալ և գործովս ոչ։ Այլ ի կամաց Արարչին սկսա գրել զգիրքս և ողորմութեամբն Աստուծոյ կատրեցի ոչ հարևանցի և կամ վերիվերոյ, այլ յոյժ փափաքմամբ, որպէս առակն Աւետարանին, որ ասէ. «Այր մի սկսաւ աշտարակ շինել և ոչ կարաց կատարել»[6]։ Եւ մեք մեծաւ չանիւ գրեցաք ի լաւ և ընտիր օրինակէ, ի հայկազան տոմարի ՌՀԸ (1629) թվին, արեգի Գ (3) և մայիսի ԺԵ (15), Համբարձման ուրբաթ օրն։ Արդ՝ երես անկեալ արտասուալիր գիմօք առ ոտս ձեր համբուրելով աղաչեմ, ո՛վ պետք և բաբունիք, քաջ ուսեալք վարդապետք տիեզերաց և քահանայքդ ի մէջ ժողովարանի, յորժամ առնուք գիրս ի ձեռք ձեր, անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեան, զկարս մեր այս էր, զի մեք գրագրի աշակերտութիւն չէաք արել, այլ և ի գրոց նայելով և Աստուծոյ առատ ողորմութիւնն ապաւինելով գրեցաք։

249ա Թողութիւն արէք, // զի ամառնային ժամն չէաք կարել նստիլ, հողագործութեան հետ չարաչար էաք. և ձմեռն, թէ զթանաքն եփէի նայ՝ գրիչ չէի գտնուլ, և թէ գրիչն գտնէի՝ նստոյ տեղ չկայր, վասն վրդովման ժամանակիս։ Յորժամ որ սկսայ գրոցս ՌՀԲ (1623) թվին, աստուածասաստ

[4] Քանի որ հայոց ՌՀԸ թվականի սկիզբը՝ նավասարդի 1-ն ըստ շարժական տոմարի կընկնի 1628 թ. հոկտեմբերի 15-ին, ըստ այնմ մեհեկան ամիսը կընկնի 1629 թ. ապրիլի 12-ից մինչև մայիսի 11-ը, այստեղից էլ մեհեկան ամսի 20-ը կհամապատասխանի 1629 թ. մայիսի 1-ին։ Իսկ անշարժ տոմարի դեպքում 1629 թ. մեհեկանը կընկնի փետրվարի 7-ից մինչև մարտի 8-ը, մեհեկանի 20-ը կլինի փետրվար 26-ը։

[5] Անվան տեղը բաց է թողնված։

[6] Հմմտ. Ղուկ., ԺԴ, 30։

բարկութիւն իշաւ առաջ ի վերայ Ոսմանցոյ ազգին՝ ենկիչարիք զսուլտան Ոսման թագաւորն սպանեցին Ըստամ[պ]աւլ քաղաք, և վասն իմ ծովացեալ մեղացս Աստուած ետուր մեզ չար բռնօր Առզրում քաղաքիս զԱպազա փաշան, որ եդ ձեռք ենկիչարուն վերայ։ Գնաց զԱիլծէ առաւ և ղենկիչարիքն շարթեց և Բագիրբեենան այս տեղիս կոտորեց։ ՌՀԳ (1624) թվին ելան միահամո[ւ]ռ բազում ղօրօք Ղաւրանեսաւր առին, զՄու[ր]թազա փաշան հնազանդեցուցին, և կոտորելով գնացեալ հասին յԱնկորիայ քաղաք և պաշարեցին ԺԱ (10) ամիս, այլ ոչ կարացին առնուլ։ Սուլտան Մուսաաւան թախտ դրին, և նայ այլ փոխեցին և դրին թագաւոր սուլտան Մուրատն։ Միաբանեցան սպահիք և ենկիչարիք, վազիր հանին և ելան անթիւ ղօրօք պատերազմեցան Ապազին հետ Ղայսարի. և փախուցին զնայ, մինչ որ եկաւ հասաւ Առզրում։ Եւ վազիրն եկաւ նստաւ Դերջան. ապա վայ պատեց ղանմեղ քրիստոնայք. և աստուածային ողորմութիւն հասաւ, խաղաղութիւն արին, դարձան գնացին, ենկիչարիք ղրկեցին հոս՝ տեղս կեցան՝ Ա (1) տար[ի] մի խաղաղ, յետ տարոյն եղև խռովութիւն, և այլի եդ ի նոսա սուր և կոտորեց անխնաբար ԺԱ (10) փաշայ՝ որ սպանեց, որ ձերբակալ արաւ, և ցրուեց զամենայն որպէս փոշի առաջի հողմոյ։ Եւ ով ոք որ մաղապուրծ գնացին ընկան ի մեծ բանակն, որ էր վազիր պեղծ և ժանտն, անիծեալն նման ուրացողին Յուլիանոսի և Լանգ Թամուր կոչեցելոյն, խալիլ վազիրն։ Եւ նայ ել որպէս ղուխ հեղեղաց ի վերայ երկրիս մեր։ Եւ այս պեղծ Ապազայս նոր չարիք արաւ և քրիստոնէից զապրանք, զկերակուր թալնեց և ելից ի բերդն. և այլ առաւել չարութիւն այն էր, որ մարդն տանէն դուրս ելից, զտունն և զկալն ամենեքեան կրակեց և տոչորեց. և մտաւ ամրացս բերդն։ Եւ այն չար վազիրն երեկ և պաշարեց զքաղաքն, և զինչ որ մնացել էր նայ աւար առաւ, ոչ ողորմեցաւ քրիստոնէից, և ամօթով դարձաւ յետս, որպէս առիւծ եկն վասն իւր չարութեան, որպէս մուկ եղև։ Եւ միւս ամն ելեալ խռսրով անուն վազիր մի բարէբարոյ, նման Մուրիկ թագաւորին, և եղև այնպէս, որ Աստուած ազատեաց զԵրուսազէմ ի ձեռաց Քաղթեացոց, նոյն ողորմութեամբն գթաց<աց>աւ Աստուած, ե քաղցրացոյց զսիրտս նոցա, և նոքա սիրով և միաբանութեամբ առեալ տարան զնա առ թագաւորն իւրեանց՝ սուլտան Մուրատին։ Եւ խաղ[աղ]ացաւ երկիրս, և մեք տկարքս նստեալ կատարեցաք ըս[տ] մերում տկարութեանս։ Արդ՝ ես նուաստ և տրուպս, ամենեցուն հայցեմ ընդ ձեր վեհ իմաստութենէդ և ի սրբութիւնդ ձեր մաղթեմ, յիշեցէք զանարժան գծողս Գինոս, և զհոգևոր հայրն իմ՝ զՊաւղոս եպիսկոպոսն և զՊետրոս եպիսկոպոսն, և զմարմնաւոր ծնօղս իմ, հայրն իմ՝ Խուպիարն և մայրն իմ՝ Ոսկին, զկենակիցս զՀատիայն, և զաւակս մեր Նուշիկն, Հոռոմսիման, զՆանան։ Դարձեալ յիշեցէք զհօրեղբայրս իմ զԱստուածատուրն, և զամուսնին իւր՝ զԹուրվանդէն, և որդիքն իւր՝ Յովանէսն և զԿիրակոսն, և դուստր զՍալուն. այլ և զամենայն արեան մերձաւորս մեր՝ կենդանիս և հանգուցեալս ի Քրիստոս, և որք յիշէք...։

Բ

168ա Հայցեմ և խնդրեմ ի մարդասէր բնութենեդ ողորմեա՛ զգծողիս՝ զԴինէոսիս և իմ ծնողս.ց Խուպիարին և Ոսկէ. յիշեայ յործամ նստիս դատողական յաթոռ։

Գ

100բ Քրիստոս Աստուած ողորմի աստուածասէր կնոջդ Ատիխաթունին և բարեմիտ, որ ցանկացաւ փափաքանօք ետուր ի ձեռս մեր սատայ թղխտիս գինն, վասն ինքն յիշելոյ, ո՛վ սբ. ընթերցողք, յիշեցէք ի մաք[ր]ափայլ աղաւթս ձեր և դուք յիշեալ լիշիք Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

486

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մշեցի, VI, № 1726

Գրիչ՝ Բարզաղ

ա

37 Փառք...։ Դարձեալ յիշեցէք զԲարզաղ սուտ վարպետն, որ ղանունս ունիմ և զգործս ոչ. վա՛[յ] եղկելի անձին իմոյ։

Դարձեալ յիշեցէք ի յաղաւթս ձեր զտէր Մարգարա քահանան և զկողակիցն իւր՝ Հազէվարգին, որ եդին զերգարանս Դաւթի յիշատակ իւրեանց հոգոյն...։

Դարձեալ յիշեցէք տէր Մարգարին որդիքն, որ հանգուցեալ են առ Քրիստոս, Գասպարն, Վարգան[ն], Յոհանն, Առաքելն, Յարութիւնն, Եղիին, դստերքն՝ Եղիսաբեթն, Մարեան[ն], որ փոխեցան առ Քրիստոս։ Դարձեալ յիշեցէք զկենդան[ի] դստերքն՝ Եղիսաբե[թ]ն, Այլախան, տէր Մարգարին հայրն՝ տէր Թուման, մայրն՝ Փաշանան, պապն՝ Յեւատն, որ հանկուցեալ են...։ Դարձեալ յիշեցէք զեղբայրն՝ տէր Յակոբն և զեղբարորդին՝ Ստեփանոսն. ընդ երկայն աւուրս եղիցին. ամէն։

Բ

Ստացող՝ Մարգար երէց

Վայր՝ Հասանխալա

Դարձեալ ես՝ անարժան Մարգար երէցս ետու գրել սբ. Սաղմոսարանս ի գուռն Ս. Յակոբա[յ], Ս. Սարգսի, Ս. Մինասա[յ], ի յերկիրն Բասենոյ, գիւղաքաղաքս Հասա[ն]իալա, ի դառն և տխուր ժամանակիս, [ի]ոլով վիշտ և նեղութիւն կայր այլազգաց, որ ի տարին Գ (3) խարաճ
38 առին՝ Ե (5), Ե (5) //յռիալ։ Թվ[ի]ն Հայոց ՌՀԸ (1629), տանուտէր Առիւծն, կատարեցաւ յուլիս ԺԱ (11), աւրն շաբաթ։ Մի՛ մեղադրէք եղբայրք, այս է իմ կարիքս ամենայն[7]։

Գ

Դարձեալ պատմութիւն մեծ ուրացողին Աստուծոյ Ապազայ փաշան. վասն ծովացեալ մեղաց մերոց, որ ետ տէր Աստուած կրկին պատուհաս

[7] Սույն հիշատակարանը համառոտ տե՛ս նաև Մագիստրոսի Սաղմոսարան ձեռագրերի ցուցակում (№ 190, էջ 42), իսկ ա և գ հիշատակարանները չեն բերված, թեև նշված է հետևյալ ծանոթագրությունը. «պատմած է շատ պարզ և ոչ կապակցյալ ձևով Էրզրումի Ապազա փաշայի ապստամբությունը, երկրի ավերը, տեղի ունեցած կռիվները և հայերի կրած մեծամեծ վնասները»։

աշխարհիս Հայոց ի Կարնոյ քաղաքն, որ այժմոյս կոչի Արզրում: Ո՛չ վարդապետ կայ խրատիչ, ո՛չ առաջնորդ որ հովէ զհաւատն Քրիստոսի, ո՛չ քահանայ ի ժամատեղի, ո՛չ կրաւնաւոր ի վանատեղի, ո՛չ ժողովուրդ ի պատուիրանի, ո՛չ կանայք ի սբ. պսակի, ո՛չ սարկաւագուն[ք] ի գպրատեղի։ Ամենեքեան սառեալ և հովացեալ են ի յաւրինացն Աստուծոյ։ Այն որ երեկ ի վերայ մեր պէսպէս նեղութիւն և հալածմունք։

Արդ՝ ով կարէ պատմել զնեղութիւն Հայոց, դրով ով կար[է] դրել։ Որ նստաւ Ապազա փաշան յԱրզրում և զնաց սուլթան Ամման Լէավրա, չկարաց առնուլ, դարձաւ եկաւ յԻստամպօլ. կամեցաւ որ խուլն շարդէր։ Ցիմացան, ապա զթագաւորն սպանին։ Այն որ Ապազին թուխ ուղեցին, թէ «Զդուլն ջարթէ»։ Արար նա բաղում հեծել և զընկիչարին շարքեց մինչև յԱնկուտիայ և շատ վնաս արար։ Եւ եկեալ Զարֆազ փաշան վազիր ի վերայ նորա և փաղբստական եկաւ Ապազան յԱրզրում, յետոյ պարիշեցան և գնաց վազիրն Թոխատ մեռաւ։ Եւ եկեալ Խալիլ փաշան վազիր ի վերայ Ապազին, չկարաց առնուլ, ապա զաշխարհս աւերեաց ի թալան, ի սուր սուսերի, ի գերութ[իւն] վարեց՝ զԵզրնկան, Առզրում, Բասեն, Թորթում և այլ գաւառք, և գնաց ի Թաւիաք։ Յետ այնորիկ եկաւ Խուրով փաշան վազիր ի վերայ Ապազային, լաւ խաղաղութիւն արար ամենայն տեղիս։ Ի (20) աւր բերթն ծեծեց ԺԴ (14) պալեմաղ թոփով. տե՛ս զհառաչանս քրիստոնէից, և զաղմուկս։ Աստուած ողորմեցաւ քրիստոնէից, պարիշեցան. ելաւ Ապազան ի բերթէն, մէկ ղմէկն խելաթեցին։ Եւ զբերթին աւերն շինեց վազիրն, մէկ հայ սուրխա չարաւ։ Առաւ զԱպազան իւր զաւրաւքն և տարաւ յԻստամպուլ։ Եւ իւր քոհան Պաֆիրն խազնատար բազում[մ] հեծելով գնացին, թէ խզբլպաշ բերենք, չեկաւ խզբլպաշն։ Ե (5) ամիս հոն կեցան, շահն մեռաւ, թոռն շահ եղաւ, եկին գնացին յԱպազան, այլ վնաս չեղաւ. Աստուած ազատէ զքրիստոնայքն։ Թ[ի]ն ՌՀԸ (1629). ամէն։

487

ԱԻԵՏԱՐԱՆ

ՅՁՎՍ, I, № 90 (1254 թ.)

Հիշատ. հեղինակ՝ Նիկողայոս Թորոսովից

410 Ես՝ մեղաւոր և անարժան ծառայ ծառայից Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի Նիկողայոս, պարոն Եազուպի որդի, մականուամբ Թորոսովից, ողորմութեամբ Աստուծոյ արքեպիսկոպոս Հայոց և յաթոռակալ և վարդապետ Լովա. թվին ՌՀԸ (1629), յուլիս ԺԸ (18)։

488

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3348

Գրիչ՝ Սարգիս Պալսիսորցի

Վայր՝ Պալսիսոր

ա

215բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. մատեանս, որ կոչի Հայր Մաշթոց, ի գիւղս որ կոչի Պալսիսաւր, ընդ հովանեաւ Ս. Յոհանու և Ս. Սարգսի

և Ս. Նշանիս և յանապատին Ս. Գէորգայ, ի թվաբերութեանս Հայոց ՌՀԸ (1629) ի յուլիս ամսոյ ի.ԻԴ (24) եղև աւարտ սորա, ի յառաջնորդութեանս մերոյ տէր Մելքիսեդ արհեպիսկոպոսին սրբազանի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա գաղափար առնելով կամ կարդալով, յիշեցէք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զիս զանարժան ըզխրխայթեալ և ըզհոգոյ հաւասարեալ, մեղաւք և չարեաւք լցեալ Սարգիս միայն անուամբ երիցու Պալախաւրցիս, յիշեցէք ի սբ. յաղաւթս
216ա ձեր, որ մեծաւ//տաժանմամբ և չարչարանաւք, ի դառն ժամանակս գրեցի և աշխատեցայ։ Եթէ յիշէք և դուք ի բարի մասինն, յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...։

Այլ և յիշեցէք զծնաւղս իմ, զհայրն իմ՝ զԴաւիթն, և զմայր զկենդանին Շահփաշուն, և զկողակիցն զհեզամիտ Լուսիաթունն, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս։ Ո՛վ հեզահոգի հայրք և եղբայրք, աղաչեմ անմեղադիր լինել սղալանաց գրիս, զի կար մեր այս էր։...

Բ

Դարձեալ յիշեցէք զրստացող սբ. տառիս Ուուշտեցի Բարսեղն, որ ըստացաւ ըղսա հալալ ընչից իւրոց և եդ յիշատակ իւր հոգոյն, և կողակցին իւրոյ՝ Մինային, և եղբաւրն՝ Աւաքին և Խոջավարդին, և իւր բարի
216բ զաւակացն՝ Բաղտասարին, Մինա//սին, Դասբարին, Էփանին, և թոռնեբուն՝ Եղիկին, Աւաքին և այլ ամենայն մերձաւորացն իւրոց։ Դարձեալ կրկինանգամ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԲարսեղն և իւր հալալ ամուսինն՝ զՄինան, և ասէք զողորմին...։

Գ

227բ Եւ ինձ մեղաւորիս,
Անուամբ միայն տէր Սարգիսս,
Գործով ունայն մեղսասիրիս,
Դարձեալ Սարգիս գծող տառիս,
Յիշեցէք...։

489

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Մուրմար, ԻՄ, 91 (ժամանակ ?)

163 Գիտութիւն լիցի սրբութեան քում[8], ով սբ. հայր մեր ճգնազգեաց և բարձաւղ խաչին Քրիստոսի մահդասի Ապտուլ, վասն աղէտիս /// Սահակ անուանեալ կաթուղիկոսն գտեալ համախոհ իւրոյ շարութեան զպատրիարգն Կոստանդնուպալսի և նա ի հեռաստանէ սրեալ զնետն գայթակղութեան, որ կամէր խաւարեցուցանել զազգս Հայոց, սակայն բարերարն

[8] Նկարագրված դեպքերը որոշ մանրամասնություններով գտնում ենք նաև Առաքել Դավրիժեցու Պատմութիւն ի գլխում (Վաղարշապատ, 1896, էջ 238—248)։ Այստեղ ևս չի պահվել այս եղելությունների տարեթիվը։ Բայց քանի որ այս դեպքերը տեղի են ունեցել Մովսես Տաթևացու կաթողիկոս ընտրվելուց (1629 թ. հունվարի 13), անմիջապես հետո այդ պատճառով պայմանական կերպով ներկայացնում ենք 1629 թ. շարքում։

Աստուած աղաւթիւք սբ. հաւրն մերոյ՝ Գրիգոր Լուսաւորչին նետք իւրեանց՝ իւրեանք դարձան...։

Արդ՝ այսպէս եղև կորուստ նոցա. Սահակ անունն ի Վան հասեալ էր այս քանի ամ և թղթաբերք երթևեկութիւն կառնէին և մեք յառաջմէ լսէաք զդոցա յորոգայթն։ Զամարիայ պատրիարգն, որ Գիշու տղայ ասեն, հուքմ հրաման ի թագաւորէն առեալ, թէ խոնդքարի երկիրն որչափ Հայաստան կայ, ամենեցուն վրայ սա լինի կաթուղիկոս, և տվեալ զայս ամրն ի ձեռն աշակերտին իւրոյ, ումեմն Պողոս անուն աբեղայի, և ոչ աբեղայ, այլ խաբեբայ, և չարութեամբ աւելի քան զՈւռհայու Պողոսն, սա բերեալ զամրն, ի Բաղէշ հասեալ վրդովմամբ լի արար զԲաղէշ և զՎան։ Մինչև որ նոքա Բ (2) քաղաքի ժողովուրդն մեծ և փոքր աղաչանք և աղաղակ գրեցին մեր վարդապետին և մեր տովլաթաւորացն, ի դայրաթ շարժելով զմեզ։ Մեք այլ զտովլաթաւորքն յորդորելով և գրոհ տվելով, աստ և անդ վարդապետաց թուղթ գրելով ձայնեցինք որ գան ի տեսանել զտարակուսանք ազգիս մերոյ, մինչդեռ ի յայս խորհրդեան էաք, լսեցանք որ Սահակն և Պողոսն խրոխտալով և ահացուցանելով ուր և հանդիպած
184 էին, թէ «Ով է կարող զդէմ մեր կալ ի // Հայոց ազգէն՝ Բարսեղ վարդապե՞տն կամ Համքայ խոճանե՞րն։ Գնամք ի վազիրն, զամբ նորեմք, մարգ առնեմք և դառնամք ի Համիք»։ Զպակասութիւն Սրապիոնի կրկնապատիկ իւր յաշակերտն ի Բարսեղն հանեմք սիասաթով և դրամ առնելով։ Նոյնպէս և խոճաներացն այլ այսպէս կաֆ տալով և ամր այլ առեալ էր Թ (9) մարդու, որն ի Համիք և որն ի յայլ տեղիք, թէ դոքա են ղղկպաշի մուդեհ, որ զՄովսէս կաթուղիկոս կու ընդունին։ Այսպէս խրոխտալով, երեք համբայ գեղորէիքն դրամ ժողովելով, գնաց հասաւ ի Մեռտին, ի բանակն վազիրին։ Պողիկ խաբեբայն գտեալ իւրոյ մեքենայ զՆաղուպ փաշայն և մտին ի նորա մօտն։ Նա սիրտ տուեալ էր, թէ գլուխս ի ձեր օղուրն է, զձեր բանն ես տեսնամ։

Եւ անդ եղեալ քրիստոնեայքն մեր գիր յուղարկեցին, թէ հասէք բանն նոցա չի զօրանայ։ Մեք որ զայս լուեալ տովլաթաւորք յուղարկեցաք զվարդապետն բերեցաք, թէպէտ տովլաթաւորքն էին բանին շինող, ապա անգլուխ էին, զմէկ մէկի ձայն ոչ լսէին և ոչ հասկանային։ Վարդապետն այլ փութանակի երեկ և քաջութեամբ արիացաւ և յորդորեաց զտովլաթաւորքն, յուշ արար զնոցա չարութեան և զմեծ բեռն ծանրութեան, որ լինելոց էր ի վերայ Հայոց։ Ըստ նորա կամացն տովլաթաւորքն այլ հնազանդեցան վարդապետին և դաշինք կռեցին սիրով։ Եւ քահանայիք և տովլաթաւորք ելեալ գնացաք ի Մեռտին, ի բանակն, ուր գումարեալ էին, և յառաջ քան զգնալն մեր Նաղուպ փաշան, առեալ հրամանք ի վազիրէն, և տուեալ էր գրել հուքմ և նաւմօս այն սուտ կաթուղիկոսին. և մէկ վանեցի տովլաթաւոր մի անդ կայր՝ մատ ի վազիրն և ի այլ մեծամեծ մարդկանց մատն մուտ և ելանէր առաջակայէր նոցա խուճային Հիճան անուն, և մեք նորա պատուիրեալ և յորդորեալ էաք զնա։ Նա վազիրին թղթով ծանուցեալ էր, թէ այս նոր պատրիարգ կամին առնել և զքեզ մեղաց դարան առնել, վազիրն այլ վաղվաղակի նօմոսի գրողին հրամայէ, թէ զդրեալ նօմոսն պատառէ։ Նա պատառեալ էր և մեք որ գացաք, սբ.

Երուսաղէմայ Գրիգորն պարոն անդ էր, ասն սբ. Երուսաղէմայ բանին եկեալ էր. իշավանեցաք անդ այն օրն։ Եւ ի միւսում աւուրն որ կիրակի էր, ժողովեցան տովլաթաւորքն հանդերձ բանակի եղեալ քրիստոնէիքն, գնացին Եաղուպ փաշայի մատն, շատ աղաչեցին և պաղատեցին, թէ ի զարմէ քրիստոնէից ես, ճշմարտութեան ազգական լեր և մի՛ այդ խաբեբայիցդ մասնակցեր. ոչ լուաւ աղաչանացն, այլ ըստ իւր հոմանեացն կամապաշտեցաւ։ Ելին տովլաթաւորքն ի յայնկից և եկին առին զվարդապետն, գնացին ի մատ վազիրին ընծայիւք. և յորժամ ետես զվարդապետն գոռոզն այն արեանարբուն ե հաւատոյ չարկամն, ընդ ակամբ մի բարովեց և մեծ թվեցաւ դէմք վարդապետին, իբր թէ յէ՞ր քրիստոնեայ լինէր սա, մոմռալով ասաց. «Քաշիշ, քանի՞ ամեայ ես»։ Վարդապետն ասաց «Կ (60) ամեայ կամ»։ Նա ասաց. «Ի յայդչափ ժամանակդ ի՞նչ հրաշք տեսեալ ես, կամ փեղամպարն քեզ ի՞նչ ցոյցք յայտներ, ասա մի՛ վախիր»։ Վարդապետն ասաց. «Ո՞վ է տեսեր ցոյցք կամ հրաշք, որ ես տեսնելոց եմ»։ Հապա թէ ասաց. «Ցիս ի տես ես եկեալ, թէ գանգատ ունիս»։ Վարդապետն ետուր զթուղթն, որ գանգատ գրեալ էր, ընթերցաւ, իմացաւ զգանգատն, ասաց. «Թող լինի, Աստուծմէ է տվեալ որ մեք իրաւին և անիրաւին դատաստան առնեմք»...։ Ելաք յերեսաց նորա և եկաք ի վրանն մեր։ Ապա զայն հրամանն տվին ի ձեռն չաուշին, որ բանակի չաուշն է։ Այն կանոնին որ երկուշաբթի լուսացաւ, Եաղուպ փաշան զօթևանքն փոխեաց, գնաց ի մատակայ տեղ մի յաւերակս քաղաք որ Ղաւշհասար ասեն, անդ իշավանեցաւ։ Կաթուղիկոսի ձենն յանկարծակի անկեր է և սատկեր։ Ես խաբեբայ Պօղոս անունն հետ Եաղուպ փաշային գնացեր էր և չաուշն որ թուղթն ի ձեռն է, որոնելով նոքա, գնաց գտաւ զՊօղոսն, բայց կաթուղիկոսն եկեալ առ մեզ, ի մատ Գրիգոր պարոնտէրին սբ. Երուսաղէմայ, իբր մեղայ ասելով, բերին ի մատ վարդապետին, ղաշն վարդապետին համբուրեց, մեղայ ասաց, զստոյգն մեղային չգիտեմք, առեալ տովլաթաւորքն զվարդապետն և զկաթուղիկոսն գնացին ի բանակի։ Կաթուղիկոսն իւր բերանովն հրաժարեաց ի կաթողիկոսութենէն վկայիւք բազմաց և գրեաց դատաւորն իւրեանց յիշատակաց
165 գիրն։ Եւ ելաք յերեսաց // դատաւորին և գնացաք յօթևանս մեր. զայն տեսաք որ չաուշն երեկ բերեց ի Ղօշհասարէն զՊօղոս անուն և առաւ զկաթուղիկոսն այլ ի հետ, զերկուսն տարաւ իւր վրանն։ Չորեքշաբթի Ժ (10)-երորդ ժամուն դիւան եղև։ Գնացաք։ Բերեց չաուշն գնոքա ի յատեան։ Հարց և քննութիւն արար վազիրն. «Յո՞ր երկրէն էք»։ Կաթուղիկոսն ասաց. «Ես ի Պարսից երկրէն, Ուշ-Քիլիսի խալիֆի զարմէն եմ և խալիֆայ եմ. անտից փոխեալ եմ. այս Բ (2) տարի ի Վան նստուկ եմ, զայն տեսայ որ ինձ ամբ մի բերին ի Կոստանդնուպալսէ, թէ դու Հայաստանեայց կաթուղիկոս Հռոմանց երկրին լիշիր, որ ընդ իշխանութեամբ խոնդքարին է, յոր տեղ կամիս յաթոռ հաստատեայ։ Եկի առ քեզ, որ քո հրամանքն լինի։ Տեսայ զայս ժողովուրդն չեն կամենար զիմ կաթողիկոսութիւն, ես այլ մի կամաւն հրաժարեցայ. պէտք չէ ինձ կաթողի-

կոսութիւն։ Նա ասաց. «Գիտեմ զայդ ամէն, կամ ուր է ամրն»[8=]։ Նա ասաց, թէ. «Ամրն[8r] առ մեզ է, և այս Պողոս բերեր է»։ Ժողովուրդն կանչեցին, թէ. «Սպանելու և չարեաց յորդորիչ այդ է, կաթուղիկոսին մեղք չկայ, այդ սպանելու է, յոր տեղ որ հանդիպեր է ահ տալով, դրամ ժողվեր, զեկեղեցիք է փակեր, թէ գնամ նայիմ զմեր հուքմն, տեսէք ինչ անեմ ինձ չհնագանդողին»։ Վազիրն ասաց վասն Պողոսին, թէ «զայգ/// ամուր պահեցէք դամրն և զամբի բերողն, և զդա կրկնակի բերեցէք առ իս»։ Ջաուշն առաւ զՊողոսն, տարաւ կրկին շղթայիւք ի պահս իւր։

Յաշուտի անուն երկիր մի կայր, ի յանկից Գձ (300) գլուխ բերին և Իե (25) մարդ ողջ, զամէնքն գլխատեց։ Ը (8) օր չիշխեցան գնալ ի դիւան, թէ չլինի զՊողոսն սպանանէ, չկարեմք ազատել։ Յետ Ը (8) աւուր գնացին ի դիւան ու բերին զամբն և տուին ի վազիրն։ Տեսաւ ի մէջ ամրին մէկ տող մի աւելի են գրած վասն մեռոնին, թէ ուր կամի անդ աւրհնէ մեռոն, ցոյց տվեց մեծ կարդացողներուն, թէ այս տողս յետոյ են գրեալ /// գրողի գիրն չէ։ Տեսան ասացին նոր է գրած. վասն այսմ բարկացաւ, ասաց թէ «Ջստոյգն ասացէք, ո՞վ է գրեր զայս աւելի գիրս»։ Ասացին «Չգիտեմք»։ Պողոսն ասաց, թէ «Ես յԱնկուրիա էի, իմ մեծն Ստամպոլ նստուկ է, պատրիարգ Զաքարիայ անունով, հանեալ է զայս ամրս և առ իս յուղարկեաց, ես առեալ բերի սմա»։ Հրամանի արար, թէ «Վայր զարկէք զինքն և բրածեծ արարէք»։ Իե (25) ջուխտակ փայտ զարկին Պողոսին, ասացին, թէ «Ասա զայս թղթիս գրողն, թէ չէ կու սպանեմք զքեզ»։ Ասաց. «Ես այդպէս եմ առեալ զայգ ամրն»։ Կրկնակի Ժ (10) փայտ այլ զարկին, թուրքացաւ, ուրացաւ զՔրիստոս պիղծն Պողոս։ Յետոյ զամբն կրկին կարդացին, թէ «Սահակն կաթուղիկոս լինի Հոռոմանց երկրին»։ Նորա այլ բարկացաւ, ետ /// ծեծել, Ի (20) փայտն չի հասաւ, իսկոյն /// թուրքացաւ։ Յետոյ ասաց մեր Բարսեղ վարդապետին, թէ «Ղօճայ քաշիշ, արէկ դուն այլ թուրքացիր և եկ յօրէնս Մահմետին»։ Վարդապետն արիացաւ Հոգոյն Սրբոյ, վստահ և համարձակ պատասխաններ ետ. «Ես չեմ թուրքանար»։ Խիստ բերան բացաւ, վազիրն երդուաւ ի գլուխն թագաւորին, թէ «Զքեզ կու սպանեմ, եկ յօրէնս մեր»։ Ասաց, թէ «Ես ծեր եմ, Կ (60) ամեայ /// հարցուր, թէ իսկի ի՞նչ է յայտնէր քեզ փեղամպարն»։ «Թէ ես ձեր օրինացն արժանի լինէի, նա ինձ ցոյց բան մի կու յայտնէր»։ Ասաց. «Այժմ կու յայտնէ»։ Եւ այլ շատ ազգի ազգի հարց ու փորձ արար։ Եւ վարդապետն արիաբար և անվեհեր ետ զպատասխանին, մինչև որ հիացան դիւանի ամբոխն, զի հանց ահարկու էր յաչս ամենեցուն երկրորդ Նաբուգոդոնոսորն, որ այլ բնաւ մարդու հետ այսպէս չէր խօսեցեալ, այլ նայելուն պէս կամ անգութ ակամբ հայէր, դահիճն պատրաստ զինուքն ընդդէմ կանգնեալ կայր ի դիւանին, ակնարկէր /// նոյն ժամայն հատանէր զգլուխն, ապա /// հետ զրուցատրութեան վերին նախախնամութիւն, որ այսչափ տևեաց։ Ապա թէ ոմն ի դիւանէն որ ըէիզ աֆանտի ասեն, նա խնդրեցաւ և բարկութիւն զայրացեալ եհան Բարսեղ վարդապետն յերեսաց իւրոց, բայց ոխս պահեալ էր, թէ «Այլվի

8= և 8r Այս երկու դեպքում էլ տպված է «ամէն»։ Բացահայտ սխալ. ուղղեցինք։

զնա գտնամ, նորա չեմ թողուր, որ զիս ամաչեցուց ի դիւանին, զիմ խօսքն չի բռնեց, չի ուրացաւ». այսպէս մրմռալով ի ծածուկ, պատեհ
166 ժամու թափէր զպիղծ թոյնքն։ Ապա Բարսեղ վարդապետն և տօլութ//-ւորքն դարձաք ի քաղաքն քրիստոնէաբնակ և կորստեան որդիքն ուրացեալ, կորան զկորուստն յաւիտենից /// ի փառս Աստուծոյ այս գործեցաւ թվին /// աւ[գո]ստոս ամսոյ ԼԱ (31) ///[9]։

490

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏՅՁՄՎ, № 272 (1378 թ.)

Հիշ. հեղինակ՝ Նիկոլ Թորոսովից
Վայր՝ Կամենեց

692 Ես՝ Նիկոլ, պարոն Եագուպի որդի, մականուամբ Թորոսովից, Աստուծոյ ողորմութեամբ արքեպիսկոպոս և յաթոռակալ Հայոց Լովա և ամենայն Լեհաց աշխարհի և Պոդտանաց երկրի, գրեցաւ զայս դիրս ի մեր վիճակ Կամենեց քաղաք, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, որ մեզ և ամենայն հաւատացելոց բարեխաւս լինայ. թվին Հայոց ՌՀՐ (1629), օգոստոսի ԼԱ (31), օրն երկուշաբթի[10]։

491

ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՏԵՐԱՎՋ, № 431, տե՛ս նաև «Բազմավէպ», 1938 թ., էջ 315

Գրիչ՝ Սիմէոն դպիր
Վայր՝ Լէվ

ա

665 Փառք...։ Արդ՝ գրեցաւ գիրս ի թուականիս Հայոց ՌՀՐ (1629) սեպտեմբերի ԺԵ (15), օրն շաբաթ[11], ի աշխարհս Ըռզաց, ի տիրախնամ և աստուածաշէն քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ ննջման Ս. Աստուածածնին, մօրն հանուրց փրկչի և ազատչի, ի կաթողիկոսութեան երիցս երանեալ ճգնազգեաց և սրբասնեալ, արի և քաջ հովապետին, սբ. և ընտրեալ տեառն տէր Մովսէսի, այլ և շնորհալի և տիեզերալոյս բարբունապետի և երկրորդ լուսավորչի, որ յայսմ ամի նստաւ յաշորդ յա-

---

[9] Ցուցակի հեղինակը հայտնում է, որ «Մէկուկէս թուղթ ևս կար, սակայն չէր կարդացուեր՝ մուկերէ կերուած ըլլալուն համար» (էջ 166)։

[10] Ցուցակի № 242 Աւետարանի հիշատակարանում, անթվական, նման մի վկայություն ևս կա (էջ 630)։ Իսկ ՏԵՐԱՎՋ-ում նույնը պահվել է 1629 թ. սեպտեմբերի 22-ի ամսաթվով (№ 39, էջ 62)։ 1630 թ. նոյեմբերի 29-ի ամսաթվով նման գրություն տե՛ս նաև ՄՅՁԵՊ, I, № 2, էջ 47, հմմտ. ՅՁՎՍ, I, № 90 նախորդ՝ № 488 հիշատակարանը։

[11] Բ. Թումանյանի «Առձեռն տոմարացույց» և Հ. Բաղալյանի «Օրացույցի պատմություն» աշխատությունների տոմարական հաշվումներով 1629 թ. սեպտեմբերի 15-ը կլինի ոչ թե շաբաթ, այլ երեքշաբթի, իսկ շաբաթը կլինի սեպտեմբերի 19-ին։

թոռն սրբոյն Դրիգորի, կամօքն Աստուծոյ և հաճութեամբ և ընդրութեամբ ամենայն Հայոց եկեղեցականաց և աշխարհականաց. և ի թագաւորութեան Լէհաց Զիկիմունգին: Զոր և այսմ ամի մեռաւ շահ [Ա]պազան Պարսից, և ի կենդանութեան նստոյց զթոռն իւր շահ Սոֆի, ժառանգ թագաւորութեան իւրոյ, զորդիսն ի բաց մերժելով։

Բայց գրեցաւ գիրքս այս գեղեցիկ և պիտանի, որ կոչի Ոսկեփորիկ, ծաղկաքաղ բազում և ազգի ազգի շահաւէտ բանիւք լցեալ, որ թէ ոք յօժար կամօք և սրտի մտօք ընթերցի, յոլով շահեսցի ի սմանէ և մխիթարեսցի հոգով և մարմնով և քաղցրասցեն քիմքն առաւել, քան թէ մեղրով, ըստ մարգարէին Դաւթա[յ] որ ասէ. «Որպէս զի քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ իմոյ[12]»։

Ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի, գրասէր և ընթերցող, միշտ իմաստուն և հանճարեղ առն Աստուծոյ խոջայ Յովանէսին Ջուղայեցո[յ] և ճարտար, հմուտ հագիմ, ընտիր բժշկին, որ բազում յղձիւ և փափագանօք ետ գրել զսա ի հալալ ընչիցն և ի արդար վաստակոցն, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ նմա և ընդ երկայն աւուրս. ամէն։

Ո՛վ սբ. ընթերցողք, երես անկեալ կաղաչեմ զհանդիպողսդ այս սբ. կտակիս և աստուածային բուրաստանիս, յորժամ կարդայք կամ օրինակէք սխալանաց և խոշորութեան գրիս չի մեղադրէք, զի խիստ թախծեալ անձամբ, տրտում հոգով և տխուր սրտիւ գրեցի, ի նեղ և ի դառն վշտաշատ ժամանակիս, զի ամենայն կողմանց և ամենայն ուստեք պատեալ պաշարեալ էին, զմիւք թշնամիք և շար տառապանք, այլ և սովք, սրածութիւնք, սասանութիւնք և ազգի ազգի արհաւիրք և մահտարաժամք։ Զի յարևմտից կուսէ անհաւատ ուրացողն, որ կոչի Շվէտ, մեր երկիրս մտեալ, զմեծամեծ քաղաքս և անառիկ բերդս էառ, գիւղս, և ագարակս, և աւանս, և յոյժ փարթամեցաւ աւերելով, ապականելով զերկիրս, զի Դ(4) ամ հրկիզէր, յափշտակէր և ամայի դարձուցանէր, մինչ զի ոչ եթող բնաւ շինութիւն, զի մեծատունք և պարոնայք մուրացիք դարձան և առաւել հարկապահանջութենէն ի սպառ կորեան և ի սովոյ սատակեցան և ջնջեցան։

Այլ և հիւսիսային կողմանէ ազգն Նետողաց զազիր և գարշելի, պիղծ թաթարքն, մտեալ աշխարհս մեր, բազում և անթիւ զօրօք, յոլով վնաս գործեցին և շատ գերելով և սպանանելով, քանդելով, աւիրելով, և այրելով զգիւղս և զքաղաքս, և բազում կանայս և զկոյս աղջկունս պղծելով, զքահանայս և զկրօնատրս, այլ և զհաւատավորս գերի վարելով։ Վա՜յ ինձ, և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց իմոց, զոր ես ցաւագին դիմօք, աղիողորմ կսկծմամբ ականատես և ականջալուր եղեալ իրացս. վշտանայի, հոգոց հանէի, լայի և հառաչէի, և զՍաղմոսն ասէի. թէ «Աստուած ընդէ՞ր մոռացար զժողովուրդն և զերկրպագուսն քո[13]» և թէ «Աստուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար

[12] Սաղ., ՃԺԸ, 103։
[13] Հմմտ. Սաղ., ԻԴ, 11։

սբ. քո»[14]։ Մի՛ երբեք ասիցեն հեթանոսք, թէ «Ո՞ւր է Աստուած նոցա» և այլն։ Վասն այն անյարմարութեանն գրիս մի՛ մեղադրէք, այլ յիշեցէք ի
666 Տէր լի և ուղիղ սրտիւ մէկ Հայր մերիւ մի, կամ Աստուած// ողորմի ասացէք վերոյ [յ]իշեալ ստացող սորա զպարոն Յովանէսն և զիւր ծնօղսն, և զիս անարժան գրիչս զՍիմէոն դպիրս, և զծնօղսն իմ։ Եւ որք յիշեն զմեզ բոլորով սրտիւ...։

Բ

Ա՛խ, ընչպես քունս կու նեղացնէ զիս։

492

ԱԻԵՏԱՐԱՆ, ՄԱՇՏՈՑ

Երևան, № 211

Գրիչ՝ Խաչատուր կրօնաւոր

Վայր՝ Լուցֆ

191ա Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ Հայր Մաշտոցս այս ի յաշխարհս Իլախաց, ի քաղաքս Լուցֆա, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոսի Նախավկային և առաջի մարտիրոսին, թվին ՌՀԸ (1629) հոկտեմբեր ԺԹ (19), օրն երկուշաբթի։ Բայց գրեցաւ ձեռամբ թերավարժ գրչի Խաչատուր կրօն[աւ]որիս, որ է որդի պարոն Սդէցֆոին՝ Խոնիկիյենց, Լուցի։ Երես անկեա[լ] խնդրեմ զգաղափարողսդ որ մեղադիր չլինիք գրիս որ կար մեր այս չափ էր, աղաչեմ, որ անպարսաւ թողուք և զմեզ յիշէք յերկնաբացիկ յաղօթս ձեր և Աստուած որ առատն է...[15]։

493

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 222 (ԺԳ դար). տե՛ս նաև Կնիք Հաւատոյ,, էջ IV

Ծաղկող, կազմող՝ Մեսրոպ Խիզանցի

167ա Փառք...։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացող սբ. լուսազարդ և վարդափթիթ Աւետարանիս, բարեմիտ և աստուածասէր, հեզահոգի և ողորմած զմահդասի խօջայ Նազար Ջուղայեցին, որ ստացաւ զսա ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց և ետ վերըստին զարդարել ոսկով և երանի երանի դեղերով, ի վայելումն մանկանց Սիոնի, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց, հօրն՝ մահդասի Մաքէոսի[ն] և մօրն՝ Մէրջանին, և պապին՝ Ամիրասաթին, և խանիկին՝ Էլիփաշին և ամենայն արեան մերձաւորացն յիշեցէք։

---

[14] Սաղ., ՀԸ, 1։

[15] Ձեռագրի առաջին մասը՝ էջ 12ա—95բ, Ավետարան է, իսկ երկրորդ մասը՝ էջ 98ա—191ա, Մաշտոց։ Բերված հիշատակարանը վերաբերում է Մաշտոցին։ Իսկ Ավետարանի վերջում կա հետևյալ հիշատակարանը. «Կատարեցաւ թվին ՌՁԴ (1635) մարտ Բ (2), օրն երկուշաբթի» (էջ 95 բ)։ Այստեղից երևում է, որ նախ ընդօրինակվել է Մաշտոցը՝ 1629 թ., ապա Ավետարանը՝ 1635 թ., թերևս միևնույն անձնավորության կողմից։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խօշայ Նադարն *և զկողակիցն իւր՝ մահդասի* Էշխուն, *և զորդիքն իւրեանց՝ նախ. զխօջա* Սաֆար *և կողակիցն՝* Խանզադէ, *և որդին՝* Փանոսն, *և դուստրն՝* Կատարինէ: *Եւ միւս խօջա* Ալաղզասարն *և կողակիցն՝* Մարան, *և որդիքն՝* Մաթոսն, Էլիազն, *և դուստրն՝* Աննայն *և խոճա* Նազարի *դուստրն՝* Համասփուռն. *յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։*

167բ *Կրկին անկամ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի //խօշա* Նազարն *և եղբարքն իւր՝ նախ. զմահդասի խօշա* Եզնազարն *և կողակիցն՝* Սալուինան, *և զորդին՝* Նազա[ր]եթն, Գասպարն, *և դստերքն՝* Աննայն, Մարիամ, Շահզադէն, Ասանեթն, Մէրջանն, *և միւս եղբայր* Առազելն, *կողակիցն՝* Սղմէրն, *որդին՝* Յոհան. *և միւս եղբայրն՝ մահդասի* Մարութէն *և կողակիցն՝* Շիրին, *և որդին՝* Ոսկան *և* Յարութեն. *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խօշայ Նազարն *և զքուերքն իւր՝ մահդասի* Զադէն, Մերումն *և* զՇուշան, *և զհայրաքոյրն՝* Փաշաշէն, *և հօրեղբայ[ր]քն՝* Մարտիրոսն, Մարգարէն, Յոհանէսն, Մուրատն *և զամենայն արեան մերձաւորս. յիշեցէք...։*

Եւս առաւել յիշեցէք զիս զանարժան Մեսրոպ *դպիր* Խիզանցիս, *որ բազում աշխատեցա ի ծաղկել ոսկով և լազուարդով և երանք երանք դեղերով, ի վայելումն մանկանց Սիոնի։ Ո՛վ եղբայրք, որք հանդիպիք, յիշեցէք զիս զանարժանս և զհոգևոր վարդապետս իմ, նախ՝ զտէր* Սարգիս, *որ մականուն* Մազման *կոչի և միւս՝ վարպետաց վարպետ զտէր* Մարտիրոս Խիզանցին. *Եւ առաւել զմարմնաւոր ծնողսն իմ՝ զտէր* Մարտիրոսն *և* զԽո[ն]դֆարն, *յիշեցէք...։*

Ծաղկեցաւ և կազմեցաւ ի թուականիս Հայոց ՌՀԸ (1629), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

494
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1557

Գրիչ՝ Յովհաննէս

ա

190ա *Փառք...։ Գրեցաւ տառս ի թվականիս մերո[յ] ՌՀԸ (1629)։*

բ

244բ *[Փ]առք...։ Արդ՝ գրեցաւ տառս որ կոչի Յիսուս որդի, ձեռամբ անարժան* Յ[ովհան]ն[ի], *ի թուականիս մերոյ ՌՀԸ (1629), ի փառս Քրիստոսի։*

Ի թուականիս մերոյ ՌՀԸ (1629) վաղճանեցաւ շահ Ապաս *արքայն, որ էր յոյժ գիտուն, ճարտար և իմաստուն, հնարագէտ և ամենայն պէտս մարմնոյ շինարար, և արդիւնարար, և խաղաղարար իւրոյ աշխարհին։*

245ա *Յետ այսորիկ թագաւորեաց զթոռն իւր՝ զշահ* Սէֆի. *որ էր թՀԸ (18) ամաց, տեսլեամբքն գեղեցիկ և առաւելեալ քան զպապն իւր։ [Ա]րդ՝ ի սոյն ամի նստաւ յաթոռ Լուսաւորչի[ն] տէր* Մովսէս Տաթևացին, *որ նոր լուսաւորեաց զազգս Հայոց և վերստին նորոգեաց զսբ.* Էջմիածինն։

[Ա]րդ՝ ի կաթողիկոսութեան մեր, որ էր Խաչատուր վարդապետն, որ էր շնորհալի յոյժ և ժողովեաց զրաղում աշակերտ, շինէց անապատս և կարդեաց դպրատունս, որ էր յոյժ առաքինի ե վարդապետ ամենայնի,
245բ // որ Ա. Հոգին էր յինքն, ունէր ոսկարանութեան, մարմնովն հրեշտակ և հոգովն լոյս, դասասաց և ամենայն կարգ առաքինութեան ստացեալ էր, քաղցրախաւս, ճշմարիտ մարդ Աստուծոյ։ Ո՛վ կարէ պատմել բերանովն զգործ առաքինութեան նորայ կամ ձայնաւոր շարականաց կամ ձեռաց շնորհքն կամ ձայնն, որ հրեշտակաց ձայն ունէր։ Տէր Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։

[Ա]րդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաւզօթս ձեր զստացող սբ[16]

495

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1779

Գրիչ՝ տէր Գրիգոր

ա

136ա Զմեղաւոր չԳրիգորս յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր, ո՛վ եզրայրք իմ. թվին ՌՀՐ (1629)։

բ

167ա Եւ որ կարդայքդ և լսէքդ, յիշէք զմեղապարտ գրիչս սուտանուն տէր Գրիգորս. և Աստուած զձեզ յիշէ իւր առատ ողորմութեամբն. ամէն։

գ

172բ ...և բաժին լիցի ձեզ, կարդացողացդ և լսողացդ և ինձ//նուաստ հոգի Գրիգոր գրչիս. ամէն։

496

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1791 (ժե դար)

Գեր. ազատող՝ Թումայ Մանուչէցի

242բ Կամաւն Աստուծոյ ես՝ Թումայ Էրէցս Մանուչէցի առի զսբ. գիրքս ի
243ա ձեռաց այլազգեաց և ետու յիշատ//ակ ինձ և կողակցին իմոյ՝ Մարգարտին, ի ձեռն Յոհանէս վարդապետի եղբաւր որդաց Աթանէս եպիսկոպոսին և Գրիգոր եպիսկոպոսին՝ կարդան ու ողորմի ասեն։ Թվին ՌՀՐ (1629)։

497

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 2133

Գրիչ՝ Յոհան

Վայր՝ Զէթուն

ա

396ա Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ աւարտեցաւ գիրքս այս պարզեալ և մեկնեալ եռամեծին Գրիգորի Տաթևացւոյն, որ և երկրորդ լուսաւորիչ եղև

[16] Բնագիրն այստեղ ընդհատվում է, ձեռ-ից կտրված է երեք թերթ։

ազգիս Հայոց, զի խցեալ և տարեկոյս որ անհասկանալի էր, սա լուծեաց առատորէն բանիւ ի կրթումն բանասիրաց և աստուածասէր ուսումնասիրաց։ Արդ՝ եղև զրաւ սորա ի թվին Հայոց մեծաց ՌՀԸ (1629), ի յերկիրս Գերմանիկոյ, ի գեղաքաղաքս ի Զեթուն, ընդ հովանեաւ Ս. Գրիգոր Լուսաւորչին և մօրն լուսոյ Ս. Աստուածածնին, և այլ սրբոցս և սրբութեանցն, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն առ հասարակ Հայոց տոհմիս։ Գրեցաւ սա ձեռամբ տրուպ անձին և տարտամ ոգւոյն Յոհան մեղսամած նուաստի, ի խնդրոյ յոգնահանճար և բազմաբեղուն ծնունդ, խոհեմն ի մակացութիւն և կատարեալ իմաստութեամբ Գրիգոր վարդապետ, աստուածաբան և երջանիկ բարունապետ, որ և բազում փափագանօք ցանկացաւ այսմ գրոցս, և ի լաւ և ընտիր օրինակէ // ետուր գրել զսա, ի վայելումն անձին իւրոյ, զոր տէր Աստուած երկար ամօք և անսայթաք կենօք վայելել տացէ, իսկ յետ աստեացս ելանելոյ ընդ երկոտասան վարդապետացն դասատորեսցէ և ընդ սր. հայրապետացն անթառամ պսակին արժանի առնէ։ Այլ և յիշեցէք զհայր ստացողի գրոցս զտէր Վահան քաջ քարտուղար և մեղսաքաւիչ քահանայն, որ և զյետնեալս ի յուսումնասիրաց բազում աշխատութեամբ այսմ արուեստի արժանի արար, և յետ ստացողին կրկին ստացող եղև մեր նուաստութեանս և ուսուցիչ կոչեցաւ մեծ աշխատութեամբ տարտամ ոգոյս։ Այլ և զծնողսն իւր՝ զԳշխոյն, և զեղբարքն իւր՝ զտէր Ասպահիք քահանայն և զՊրոխորոն սարկաւագն, որ այսմ ամի հանգեաւ ի Քրիստոս, և զեղբօր որդիքն՝ զՅովհաննէս դպիրն, և զԿարապետն, և զՆեսէսն, և զԿոստանդինն[17] և զայլ ամենայն արեան մերձաւորքն յիշեցէք...։ Ընդ նմին և զանարժան գրիչս հանդերձ ծնողիւք և եղբարբք և ամենայն արիւնամերձ ազգատոհմիւք յիշեսջիք յաղօթս ձեր...։

Բ

151ա Ո՛վ ընթերցողք, հայրք և եղբարք, որք հանդիպիք սմա, յիշեցէք զգծող սորա զՅոհան մեղսամածն և զծնողսն իմ և զեղբարս և զամենայն ազգատոհմն։ Այլ և զստացող սորա զտէր Գրիգոր բանի սպասաւոր վարդապետն, որ բազում փափագանօք ետուր գրել զմատեանս զայս յիշատակ իւր։

Գ

4ա ...Հոգի Աստուծոյ զսկսեալս իմ ղու կատարեա, և մի հայիր յանարժանութիւնս իմ, այլ կարողացոյ զիս և տուր կաթիկ մի ջուր ի համատարած ծովէդ, ո՛վ Տէր իմ։

498

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՅ ԳՕՇԻ

Նբեան, № 2775 (ԺԵ դար)

ա

211ա /// կարդացողաց և լսող[աց] ողորմին. ամէն. Հայր մեր որ յերկինք տե///ս, ամէն։ Թվին ՌՀԸ (1629). ամէն։

[17] «Յոգնահանճար և բազմաբեղուն ծնունդ» հատվածից մինչև այստեղ կրճատումներով տես նաև Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 536։

Բ

223ա Նազարն յիշ[ե]այ. ամէն. և ինքն աւրհնեալ եղէցի. ամէն[18]։

499
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 4616

Գրիչ՝ տէր Յոհանէս
Վայր՝ Եկեղիոյ

196բ Փառք...։ Գրեցաւ թվին ՌՀԸ (1629), ձեռամբ անարժան, մեղաւոր, տուտանուն տէր Յոհանէս, ի գիւղն Եկեղիոյն։ Արդ՝ աղաչեմք զձեզ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա Աստուած ողորմի ասացէք...[19]։

500
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4658

Գրիչ՝ Զաքարեայ
Վայր՝ Կաֆայ

ա

272բ Փառք..., որ զտկարութիւնս իմ զաւրացոյց յաւէտ իւրոյ իմաստութեանն. վասն որոյ և ես մեղապարտ ոգի Զաքարիայ անարժան ծառայ
273ա ծա//ռայիցդ Աստուծոյ յանձն առեալ ոգւով չափ կատարեցի զտառս հոգեշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր ամենասուրբ Հոգին հանգչելով...։

274ա Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Զաքարեայի ունայնագործ մելանաւորի, ի թվաբերութեանս ասքանազեան և աբեթական տաւմարի ՌՀԸ (1629), և ըստ նորումս շրջանի ՇԽԶ (546)[20] և ի գալստենէ Կենարարին ՌՈՂԱ (1631), ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ևս առաւել համաբայիցն. զի գաղափար սորին ի հռչակաւոր անապատին էր գրած, զոր Դրազարկ անւանի. ի յաշխարհիս Հոնաց, և ի յերկիրս Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին[21] և այլ բազմահաւաք սրբոց, ի հայրապետութեանն Հայոց տեառն Մովսէսի, և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր[22] աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ։ Ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի և գերահռչակելի...։

---

[18] Հիշատակարանի այս երկու բեկորը գրված է միևնույն անձնավորության կողմից։ Իրրև թուղթ օգտագործել են № 2775 ձեռ-ի մաշված էջերի ծայրերը նորոգելիս։ Հիշատակարանը կապ չունի սույն ձեռ-ի հետ։

[19] Ձեռ-ի 212 բ էջում արձանագրված են մի քանի ծնունդի և մահվան դեպքեր՝ 1630, 1694, 1698 թվականներին։

[20] Նկատի ունի Սարկավագի անշարժ տոմարի տարիները, բայց այդ թիվը ճիշտ կլինի, եթե փրկչական նշված թվականից՝ 1631-ից հանենք 546, կստանանք Սարկավագի տոմարի առաջին տարին 1085 թ.։

[21] «Գրեցաւ»-ից մինչև այստեղ, խիստ համառոտ, տե՛ս նաև Բժշկյանց, էջ 350։

[22] Ձեռ-ում անվան տեղը բաց է թողնված։

270ա Արդ՝ ստացաւ զսբ. Աւետարանս պարոն Փիլիպոսն, իւր սիրեցեալ որդւոյն՝ Պետրոսին հոգւոյն և իւր կենակցին՝ Մանուշակին, և իւր հարն՝ տէր Պողոսին, և մարն՝ իրիցկինին, և թոռներուն՝ Գրիգորին և Աստուածատուրին, Խաչկինին, Շահնուլքանին և նոցին մօրն։ Որ մեծաւ փափագանաւք... ետ գրել զսբ. Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց և ի լուսատրութիւն հոգւոյ իւրոյ...։

275բ Արդ՝ ետ գրել զսբ. Աւետարանս պարոն Փիլիպոսն իւր որդւոյն՝ Պետրոսին հոգւոյն, ի Կաֆայ քաղաքի, և եղ յիշատակ ի դրունս Ջարխափան Ս. Աստուածածնին։ Եւ է սա աղատ. ոչ ոք չունի իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ կամ այս եկեղեցւոյն այլ տեղ փոխելոյ. և թէ ոք յանդգնի՝ զպատիժն Կայենի...[23]։

Բ

Այլ գրով

Նաև յիշեսջիք զընտրեալ սբ. և մաքուր քահանայն ըզտէր Հա[յ]-ռապետ քահանայն, որ [յ]որդոբեաց ըզպարոն Փիլիպոսն ի սէր սբ. Աւետարանիս, որ դրնել ետ ի Ս. Աստուածածին յեկեղեցիս։ Արդ՝ աղաչեմ...։

501

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 6032

Գրիչ՝ Սաֆար սարկաւագ
Վայր՝ [Համիթ]

ա

233բ Փառք..., որ ետ կարողութիւն հասանել ի վերջ երգարանս Դաւ//թի։ Արդ՝ գրեցաւ աստուածային երգարանս Դաւթի ի թվաբերութեանս Հայոց ՌՀԸ (1629), ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մարն նորա Յուղիտայի, ի յառաջնորդութեանս Համբայ Բարսեղ քաջ ըարբունապետիս, ձեռամբ բազմամեղ և անարժան, տարտամ և անպիտան, փծուն գրչի Սաֆար սարկաւագի։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա, յիշեցէք ի Քրիստոս[24] ի վայելումն մանկանց Սիովնի։ Եւ է սա ստոյգ և ճշմարիտ Գառնեցոյ յաւրինակէ։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա զաւելին բառնայք և
234բ զպակասն լնուք ուսանելով, տեսանելով կամ յաւրինակելով, // յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր զՍաֆար գրիչս և զստացող սորա զմեղսաներկ անձն[25] և Աստուած զձեզ յիշէ...։

Դարձեալ աղաչեմք զձեզ, ո՛վ դասք քահանայից և սարկաւագաց, որք հանդիպիք սմա տեսանելով կամ օրինակելով, յիշեսջիք ի մեղսաքաւիչ յաղօթսն ձեր զսուտանուն գծող սորա Սաֆար սարկաւագն, և զծնօղն

[23] Ջեռ-ի կազմին ամրացված մեծ խաչի վրա արձանագրված է Փիլիպոսի և նրա հարազատներից մի քանիսի անունը 1628 թվականով։ Մյուս մանր խաչերի վրա տարբեր տարեթվերին՝ 1648, 1651, 1682 արձանագրված են խաչը նվիրողների անունները։

[24] և [25] Ստացողի անվան տեղը բաց է թողնված, առաջին դեպքում երկու և կես տող դատարկ է։

իւր՝ զՀոիփսիմէն և զհայրն իւր՝ զԽաչատուրն, և զեղբայրն իւր՝ զԱմիրխանն, և զմիւս եղբայրն՝ զԽոնանանն, և զքոյրն իմ՝ զՇմոնն և զամենայն արեան մերձաւորքն իւր. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի սբ. և արժանաւոր յաղօթսն ձեր զուսուցիչն իմ զտէր Յակոբն, և զծնողքն իւր, որ բազում աշխ[ատանք][26]

Բ

144բ *Զմեղապարտ և զանարժան Սուֆար զծող յիշեցէք ի Քրիստոս...։*

502
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 6124

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց

379բ *Ի թվականիս Ռ ամեան [Հ]Ը թիւ ընդ նըմայ (1629) [կատարը]եցաւ*
380ա *[համանգամ]մայն. // որք հանդիպիք սրմայ տեսլեան կամ վայելէք յայս բուրաստանս, միշտ ասացէք զՏէր ողորմայն և յետ նորա զՀայր մեղայն։*

Եւ արդ[27] *գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս..., որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի, մեղաւոր Աւետիսի։*

Շնորհիւ Տեառն սկսա և ողոր[մու]թեամբ նորին կատարեցի ի թուականիս Հայոց Ռ և ՀԸ (1629), ի գեաւղս, որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Ս. Պետրոսի և Պօղոսի և Ս. Գէորգայ զաւրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց /// քան զևս սաստկանա բրո[նութիւն] ///

380բ *[Ար]դ՝ որք հանդիպի[ք սբ. տառիս կարդալո]վ կամ [ա]ւրինակելով, [յիշեցէք մաքրափ]այլ [յաղաւթ]ս ձեր անարժան ///*[28]։

503
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6650 (1627 թ.)

126բ *Թվին Հայոց [հազար] եաւթան[ասն]ուն և ու<ու>թ (1629) աւրհնեցայ ես անարժան տէր Յովէս, մարտի ամիսս մեծ պահոց սբ. Լուսաւորչի շաբթուն։*

---

[26] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է, շարունակությունն ընկած է։

[27] Սույն հիշատակարանը համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Բ, № 497, էջ 413։

[28] Ցափածո հիշատակարանը սկսվում է 377 ա էջից՝ «Փառք» մինչև 379 բ էջը, միայն վերջին տողերում հիշվում է գրչի անունը.

504
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7548 (1575 թ.)

Գրիչ՝ Մելքիսեդ երէց
Վայր՝ Երևան

ա

140բ Թվականիս Հա[յ]ոց ՌՀԸ (1629), ի թագաւորութիւն Պարսից շահ Ապազին, իշխանութիւն Թահմազդուլին, ի վարդապետութիւն և յաթոռակալութիւն սբ. աթոռոյս էջմիածնայ Մով[էս] քաշ հոգեորին, և սրբասքնունդ. կրկին լուսաւորչին, զոր սկիզբն էառ ի յայսմ ամի, նորոգեաց զսբ. էջմիածինն, մեծացոյց զպարիսպն, և զսեղանատուն, և խրճիթս բազումս, զամենեսեան գեղեցկայարմար և կմբէթաձև յարքինեալ բազում ծախք. և լուսաւորեաց զազգս Հայոց, զոր տէր Աստուած շահ անշիշանելի պահեսցէ. ամէն։

բ

150ա Զվերջին ստացող սբ. լուսաբուխ Աւետարանիս զպարոն խոճա Մարուգն, որ ըստացաւ զսայ ի հալալ ընչից իւրոց և ետ զգին սորա Ի (20) ղուռուշ, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հարն՝ Հայրապետին և մայրն իւր՝ Բէկիսօլթան, և Հէրապետի կրկին կնոջն՝ Գաւզալաղին, և այլ ամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զպարոն Մարուգն և զկողակիցն իւր՝ զՆսէֆսօլթան, և զորդիքն իւր՝ զԱնգրիասն և զՄարգարէն, զԱրութիւն և զՀէրապետն /// և զդստերքն իւր՝ զԲէկին և զՂազալն, և զեղբայրն իւր՝ զԴիլանջին, որ է հանգուցեալ առ Քրիստոս, յիշեցէք...[29]։

150բ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զՆսէֆսալթանն, և զհայրն իւր՝ Սարգիսն և զմայրն իւր՝ զԹուխտարփաշէն, և զեղբայրն՝ Յակովբն և զայլ ամենայն մերձաւորսն, յիշեցէք...։

գ

Դարձեալ յիշեցէք զպարոն Մարուգն, որ էառ զսբ. Աւետարանս եռափափաճ սիրով և եդ ի դուռն Ս. Երկու երեսին անջինջ յիշատակ Երևանոյ
151ա ժամատեղացն։ // Ով որ զսա հանել շանա...։

Եւ զիս զմեղապարտ Մելքիսէգ էրէցս յիշել աղաչեմ։ Այլ և զմիերէն և զքահանայքս և զմանկունքս սբ. եկեղեցեացս զտէր Ազուրիէն, և զտէր խաշատուր ճարտար գրիչն, և զտէր Մելքսէթն գծող յիշատակարանիս, և զտէր Յովհաննէսն, զՄաթէոս սարկաւագն, և զփոքր սաղմոս երգոյքս զԱստուածատուրն և զԴաւիթն և զայլ ամենայն միեղէն մանկունս սբ. եկեղեցոյ, յիշեցէք...։

«Զոր ես չարեացքս ասիարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Ասիս հոգս և անարժան,
Կատարեցի շնորհին հրաման.
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգովս յաւժար և ժրրական»։

[29] Թվում է վերևում հիշված անունների մի մասը։

505
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7633

Վայր՝ Սրկղունս

ա

287բ Փառք...։ Շընորհիւն Տեառն ամենակալի, նորին աւգնականութեամբ
288ա աւարաեցաւ եռահրաշ և հոգիազարդ սբ. Աւետարանս, // զոր[30] էր շաղ-
կապեալ երանեալ աւետարանչացն...։

Գրեցաւ սբ. Աւետարանս ի թվին Հայոց Ռ Հ-անաս[ո]ւնէ Ը (1629), ի յերկիրս Վայուծոր, ի գեաւղս որ կոչի Սրկղունս, ի դուռն Ս. Գէորգայ և այլ սրբոց որ աստ կան հաւաքեալ, ի կաթողիկոսութիւն սբ. էջմիածնա[յ] տէր Մելքսէթի, և առաջնորդ տեղուս Յովանէս եպիսկոպոսի. ամէն[31]։

Եւ դարձեալ յիշեցէք բարեմիտ և զհեզահոգի Ծաուուրն[32], որ ըստացաւ սբ. Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն՝ Ղամբարին, Անախաթունին, և եղբաւրն՝ Սաթքլմշին, և որդոցն՝ Բապախանին[33], Պուրեգին, Տէրունին. ամէն։ Եւ դարձեալ յիշեցէք զԾաուուրն և զամուսինն իւր՝ զԹուր-
288բ վանդէն, // որ ըստացան զսբ. Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իւրեանց, յիշատակ հոգոց և որդոց և ծնաւղաց իւրեանց և ամենայն յարեան մերձաւորաց։ Եւ դարձեալ յիշեցէք զբարեմիտ Ծաուուրն, որ ետ իւր կամաւ զսբ. Աւետարանս ի դուռն Ս. Գէորգայ և ասաց՝ եթէ ոք ազգականաց իմոց և կամ ընտանեաց <և> անտրքնեսցի և մերձենայցէ ի սբ. Աւետարանս և հանէ ի սբ. յեկեղեցւոյս կամ բռնութեամբ կամ գողանալով և կամ ի ծախս առնելով ՅԺԸ (318) հայրապետաց նզոված ի լի...։

Ծաղկող՝ Առաքել

Բ

152բ Առաքել նկարողս աղաչել ի Տէր։

506
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8157 (1482 թ.)

317բ Յիշատակ է սբ. Աւետարանս տէր Խաչայտուրին և իւր կողակցուն՝ Շամխաթունին, և ամենայն արեան մերձաւորացն, որ տուին յիշատակ ի դուռն Ս. Յարութենին։ Խնամք տանողն աւրհնի յԱստուծոյ և ամենայն սրբոց։ Տուին ի ձեռն Պետրոս եպիսկոպոսին, թվին ՌՀԸ (1629)։ Ով որ հանդիպիք, զողորմին ասացէք. ամէն։

---

30 Այստեղից գիրը փոխվում է և էլն էլ փակցված։ Այս մասը թերևս չի պատկանում բուն հիշատակարանին, այլ արվել է 1642 թ. (էջ 152 ա) և սկզբնական ստացողը եղել է Հէնդարզուլին (նույն տեղում)։ Բուն հիշատակարանից պահվել է միայն գրչության թվականը՝ 1629։

31 «Գրեցաւ»-ից մինչև այստեղ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Բ, № 498, էջ 413։

32 Սրա մի այլ հիշատակարանը տե՛ս 1642 թ. շարքում, ուր սկզբնական ստացող հիշվում է Հէնգարզուլին, իսկ Ծաուուրը՝ հետագայի գնող։

33 Ձեռ-ում «բրապախանին»։

507
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, Մ 8467

Գրիչ՝ Եսայի Սեբաստացի
Վայր՝ Իլով

ա

14ա Զ Յեսայիայ գծողս յիշել աղաչեմ Թվին ՌՀԵ (1626)[34]։

Բ

261բ Զաւելորդն կշռեցէք և սղալանացն անմեղադիր լերուք։

Գ

261ա Եւ յիշեցէք զաշխատողս ի սմայ և Աստուած ողորմի ասացէք, ևս առաւել զանարժան գծողս աղաչեմ յիշել ի Տէր, միով Տէր ողորմիաիւ. ամէն։ Թվին ՌՀԸ (1629)։

Դ

265ա Ո՛վ եղբայրք, ի Հայոց Թվին Ռ[Հ] (1629)[35], երկիրն ի Հլեհաց, ի քաղաքն Իլով գրեցի սակաւ ոտնս, որ ցուցանէ զՋատիկն Ֆոանգաց, թէ ամենայն ամի քանի շաբաթ յառաջ տի լինի, և կամ յորում ամի ի միատեղ լինի, թվականիւ և գրով տարոյն։ Գիտ զամենայն և յիշեայ զՍեբաստացի[36] զաշխատողս, և զանարժանս գծողս ի Տէր. ամէն։

Ե

279բ Զհաւաքող բանիցս զյոգնամեղ Սեբաստացիս աղաչեմ յիշել ի վերջ գրոցս և լի սրտիւ ասել զԱստուած ողորմին, զի թողցէ Տէր զբաղում յանցանս մեր, նոյն և զյիշողացդ. ամէն։ Ընդ նմին և զիս ըզմեղաւք մեռեալ գծողս, որ անուամբս եմ աբեղայ, բայց գործովս խաբ եղայ և ոչ աբեղայ. աղաչեմ յիշել ի Տէր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

34 Նույնը կրկնված է ձեռ-ի 190 բ էջում։

35 Ձեռ-ում միավոր թիվը եղծված է, հետևելով գ հիշատակարանին դրեցինք Ը, քանի որ երկու հիշատակարանն էլ գրված է միևնույն դրով։

36 ա և դ հիշատակարանները տե՛ս նաև ՑԱՆԴԿ, № 12, էջ 33։ Ս. Կանայանցը և մեր Մատենադարանի Ձեռագրաց ցուցակի հեղինակները (հտ. Բ, էջ 751) գծող Եսայուն նույնացնում են Սեբաստացի գծողի հետ։ Ձեռ-ի 271 բ էջում մի այլ գրչի անթվական հիշատակարան կա.

«Ի գիրս այս խնամ արկեցէք,
Փափագանաւք զսայ կարդացէք,
Թէ որք կարդայք և աւրինակէք,
ԶՂուկաս անպէտս յիշեցէք»։

508
ՏԱՂԱՐԱՆ

Երևան, № 10050 (1605 թ.)

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

434բ *Գրեցաւ այս տաղս թվին ՌՀԸ (1629), ձեռամբ* Աստուածատուր *դպրի, որդոյ տէր* Յակոբի[37], *յորժամ որ երգէք նաև դիս ի ձեր տօլուն յիշեցէք։*

509
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» հտ. Ա, № 730 (ժամանակ ?)

204ա *Թուին ՌՀԸ (1629) զառաջնորդ սբ. ուխտին* Վարագայ զՄարտիրոս *վարդապետն [յիշեցէք]։*

510
ՇԱՐԱԿՆՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» հտ. Ա, № 731

Գրիչ՝ Վարդան արեղայ
Վայր՝ Կարմիր վանք

204ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Շարակնոցս, որ կոչի Խլկցի, ի լաւ [և] ի յընտիր օրինակէ, ձեռամբ անարժան* Վարդան *աբեղիս, սխալանացս անմեղատիր լերուք, զի կար մեր այս չափ է, ձեռքս ի յամէն բան կու ձրգտայ՝ ի յայգի շինելն և ի փորելն, ի քարն, ի պատն, ի փուշն և ի պաւստան՝ ի քախնելն և ի ցանելն, ի խոտն և ի փեթկին պետրելն, դարձեալ ի գիրն, վասն այն է խիստ գովելի, ո՛վ եղբայրք։ Գրեցաւ ականց շարս ի թուականութիւնս Հայոց ՌՀԸ (1629), յերկիրս Զրմշկածագի, ի Կարմիր վանք, ընդ հովանեաւ Ս. Կարապետին և Ս. Նշանին, ձեռամբ* Վարդան *ախմար գրչիս, սբ. ուխտիս տասն շորս անձին կրօնաւորիս, որ կայ ի յայս քարաժեռ անապատիս. ամէն*[38]*։ Լրացաւ սա անձին իւրոյ* Բենկանցի *տէր* Սահակին *և կենակցին իւր՝* Թաքարին, *և որդոյ տէր* Սարգսին, *և թոռան* Յովհաննէս *սարկաւագին, որ կայ ի յոտս խաչին, և հօր տէր* Սահակին։

---

[37] *Իմա՛ Հակոբ Թոխաթեցի, № 10050 ձեռագրի գրիչը։ Սրա հիշատակարանը տե՛ս սույն ժողովածուի Ա, հատորում, էջ 177։*

[38] «Գրեցաւ ականց շարս»-ից մինչև այստեղ տե՛ս նաև Հ. Ոսկյան, *Սեբաստիայի վանքերը, էջ 156։*

511
ԺԱՄԱԳԻՐՔ
ՏԵՐԱՎԴ, № 86 (ԺԴ դար)

Կազմող, նորոգող՝ Ստեփանոս դպիր

147ա Նորոգեցաւ եղանակաւոր տառս թվին ՌՀԸ (1629) ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի և սևացեալս մեղօք ի մէջ աշխարհի անուամբ միայն Ստեփանոսի ե անարժան դպրի, տեսողք ասէք ըզողորմի։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Մկրտիչ կրաւնաւորին, որ և տեսեալ զսք. գիրքս խիստ հնացեալ և քանդեալ էր, ետ վերըստին նորոգել և կազմել։ Ով որ կարդայ և ասէ Աստուած ողորմի՝ Աստուած իւրն ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն. ամէն։

512
ԱՒԵՏԱՐԱՆ
Մագիստրոս. II, № 2389

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Ըստաքէ

1336 Գրեցաւ ձեռամբ Մինասի, ընդ հովանեաւ Ըստաքէի, յաւրինակէն Գրիգորի Տաքեացոյ, ՌՀԸ (1629), ի խնդրոյ մահտեսի խոշայ Եղնազարի և որդոյն խոշա Նազրի, ծաղկող Մեսրոպ դպիր Խիզանցի, աշակերտ Սարգսի Մազման կոչեցելոյ և տէր Մարտիրոսի[39]։

513
ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ
ՏԵՐԱՎՋ, № 8 (1627 թ.)

15 Յիշեցէք զՔրիստոս զբարեմիտ Բաղդասարն, որ ետուր գրել զՄեկնիչ Սաղմոսիս, յիշատակ իւր, և իւր ծնաւղացն, և իւր ազգականացն։ Դարձեալ յիշեցէք զԲաղդասարն, և զհայրն իւր՝ զխօջա մահդասի Նազարն, և զմայրն իւր՝ զԴիշիուն, և զեղբարն իւր՝ Սաֆարն, և հանգուցեալ եղբայրն իւր՝ Աղամալն, և զքուրն իւր՝ Համասփիուն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զհայրեղբայր Բաղդասարին, զմահդասի Եղիազարն, և կողակիցն իւր՝ Սալվինազն, և որդին իւր՝ Նազարէթն, և դուստրն իւր՝ Մէրիջանն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զմահդասի Մարուքէն, և որդին իւր՝ հանգուցեալ ի Քրիստոս զՈսկանն, և որդի Ոսկանին, Յարուքիւն։ Դարձեալ յիշեցէք զմահդասի Առաքելն և որդին իւր՝ Ոհանն։ Դարձեալ յիշեցէք զՍաֆարն, և կենակիցն իւր՝ Խանզատէն, և որդին՝ Ըստեփաննոսն, և Կատարին. ամէն։

Դարձեալ յիշեցէք Բաղդասարն, և կենակիցն իւր՝ զՄարեամն, և որդին իւր՝ Մաքոսն, և դուստրն՝ Անայի։ Ա՜խ, վա՜խ, Բաղդասար, ասացի թէ ինչ գիրք կայր որ ողջ բոլորի չկարողացաւ հասանել. թվին ՌՀԸ (1629)։

[39] Թվում է, թե ցուցակի հեղինակ Մագիստրոսի համառոտ վերաշարադրությունն է։

514
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 35 (1300 թ.)

ա

54 Ազգիս Հայոց թըւականին,
Կրկին քառ[ե]ակ ւ երկ հարիւրին,
Եաւթանասուն և ութն ամին (1629),
Էառ զգանձս աստուածային։

. . . . . .

55 Հոգւոյ սորին ըստացողին,
Պարոնաց պարոն՝ Ջալալբէկին,
Եւ ընդանեացն իւրոց բնաւին։
Եւ հաւք իւրոյ պայազատին,
Խաւջայ Սաֆար բարեբաստին,
Մօրն իւրոյ՝ Սուլթափաշային,
Լուսով լցուի իւրեանց հոգին։
Այլ և եղբարքն իւր նազելի,
Նախ սրբասէր Մէլիքաղին,
Որ ի հասակս երեք տասին,
Փոխի առ Տէրն իւր ցանկալին։
Ապա երկրորդ եղբայր սորին,
Խոջայ Ֆռանգուլն գովելին,
Նայև երրորդ եղբայր սորին,
Խաւջայ Սուլթանն բաղձալին։
Եւ Ջալալբէկն ստացող սորին,
Կրտսերագոյն քան զնոսին,
Բայց հանճարով լի և անթերին,
Առատամիտ յոյժ գովելին։
Այլ և պապուն իւրեանց մեծին,
Իշխանաշուք աղա Խաշկին,
Իւրեանց հանիկն հեզահոգին,
Խոնարհամիտ Մարիամին։
Եւ հաւրեղբայր Ջալալբէկին,
Պարոն Նազար մեծ խաւջային,
Այլ և պարոն Սինանբէկին,
Որ վախճանի տղայ հասակին։
58 Այլ և որդիք Մելիքազին՝
Պարոն Մուքէլն ընդ Խաշիկին,
Սինան, Բազումն, Սուլթաիաշին,
Մնան անփորձ հաղբից չարին։
Նոյն և որդիք Ֆռանգուլին՝
Բաբայն ընդ Մէլիքնիազին,
Մուսէս, Մուզամն ընդ Մարիամին,
Յերկար ամօք ոչ սասանին։

Այլ և որդիք Սուլթանումին,
Սաֆարվալաթն ընդ Էլումին,
Լիով աւուրքք աստէն աճին,
Մինչ որ զորդիս որդոց տեսցին։
Զոր և տացէ Տէր Զալալին,
Բարի որդիք Ը (8) դստերին,
Որդիս ազնիւ և դուստր նորին,
Որ Ոգունի վերայձայնին։
Իսկ տէր Աստուածն ամենայնի,
Պահէ զսոսա թիւնից չարին,
Եւ յետ աստեացս ամենայնին,
Արքայութեան որդիք լինին։

Բ

Հետ. ստացող՝ Զալալբէկ

Յիշեցէք ի Քրիստոս զստացող սբ. Աւետարանիս և սաղարթափթիթ բուրաստանիս, հեզահոգի և բարեմիտ խոջայ Զալալբէկին, որ ստացայ իմ հալալ վաստակոց յընչիցս իմոց, յիշատակ ետու ինձ և իմ ծնողացն և իմ զարմիցն և զաւակացն։ Եւ ով որ իշխեսցէ ծախիլ կամ յիշատակարան կտրել, մասն Յուդայի ասցէ և խաչահանուացն ընկերակից լինիցի. ամէն։ Դարձեալ յիշեցէք զԶալալբէկն և կողակից իւր Թէլիկն:... և զմիւս կողակիցն՝ Լաբիխանն, և զորդին՝ Շահմուրատն, և դստերացն՝ Ոգունի, Սուփիանէն..... և զփեսայն՝ Յակոբջանն, և կողակիցն՝ Ոգունի, և որդոյն սորա՝ Զանիբէկն, Սաֆարաղէն և Շահմուրատն, և դստերացն՝ Թաջլուխանին, Խաթունբաջէ և Սարալու խանումին, Շահփարէ և Սոլթափաշէ. ամէն։ Յիշեցէք խոջայ Զալալն և ծառային իւրոյ Խադում Յակոբն. ամէն։ Դարձեալ յիշեցէք Յակոբջանն, և զմիակողակիցն Թամարն, և նորաբողբոջ որդին իւր Աւետն. ամէն։

515

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՅՁՎՍ, I, № 43

Գրիչ՝ Յակոբ Լէնցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

243 Գիտէք եղբարք զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանունն կու շնչեն և զիւրեանցն կու գրեն. և չար է սովորութիւնս այս, աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ. ապա թէ [է] արժանի դրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ, և զառաջնոյն մի՛ շնչեսցէ անուն կամ գիր։ Եւ որ ոք յայս յանդգնի և շնչէ, ինքն շնչի ի կենաց գրոյն՝ ո ոք և իցէ, եթէ մեծ ոք և կամ փոքր։ Ասասցեն հիշատակք և մարդիկ. ամէն, եղիցի եղիցի։ Եւ մխիթարիչ հոգին Աստուած հարբ և միածին բանին տայ մեզ վարձ ի մեղաց յայսմ աշխարհի, և մասն բարեաց ի հանդերձեալն, և որք ընթեռնուն զսա, բանա զմիտս և մխիթարէ

յուսով անսպառ բարեացն, և ատել տա զոր երևիսս. և միայն սիրել և վասն ապառնի պսակացն վաստակել, և նմին ակն ունել ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է ապրհնեալ յաւիտեանս. ամէն։

Արդ՝ գրեցաւ զսբ. Սաղմոսարանս ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս, ի դուռն Ս. Նիկողայոսի Զրմբոնացւոյ հայրապետին, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Յակոբայ Լեհացոյ։ Աղաչեմ զհանդիպողք ե զգաղափարողքդ, յիշել զմեզ հանդերձ ծնողիւք մերովք՝ միով Աստուած ողորմեալիւ ի Քրիստոս, և յիշողքս՝ յիշեալ լիշիք առաջի անմահ գառին Աստուծոյ. ամէն։

Արդ՝ եղև զրաւ գրչութեան սորա ի թվականիս Հայոց ՌՀ և Ը (1629)-ին, ի թագաւորութեան Տաճկաց տղահասակ սուլտան Մուրատին, որ և զաւարտն ի բարին կատարեսցէ սորին. ամէն և եղիցի[10]։

Ստացող՝ Մինաս Կարնեցի

Բ

240 Փառք...։// Ես՝ ողորմելի գերիս և ամենայն մեղաց լիապէս գործաւղս Մինաս. որ յառաջին չարեաց մինչ ի վերջինսն՝ հանդերձ միջոցաւքն, ոչինչ թողի զոր ոչ գործեցի. և անյուսալի դեգերանաւք կամ յայս ծովուս միջի անմակոյկ և առանց նաւուղղի, ընդ յոլով անդէպ հոգս անցեալ, և զիշխանն՝ ծառայ, և զաղախինն՝ տիկին բանականիս եդի։ Եւ ոչ այլ ինչ նկատեմ զիս, քան թէ տարադրեալ ի ստոյգն կենաց. և զոր ասեմս՝ չէ սուտ, զի դեռ ևս զպակասն ասեմ։ Այլ սակայն Աստուծոյ ողորմութեանցն ակնկալեալ, անձին երկաւք կուրացեալս ի լուսոյ մարմնաւոր աչաց, սկսայ զայս զսբ. զՍաղմոսարանս Հոգւոյն Սրբոյ երգեալ մարգարէին և թագաւորին Դաւթի, զի թերևս սփոփիմ սովաս...։ Քանզի մեծ բաղձմամբ լցեալ էր սիրտ իմ, զի յայսմ աւրինակէս զսա ստանայի, և յայս խնդիր ոչ դուզնաքեայ ժամանակ իբր հրով վառեալ։ Սորին սիրով որպէս ի տապակէ այրեցեալ միշտ մաշէի, և զի ոչ կատարէր՝ խռովէի, և զեդերեալ տատանէի, զի չէր իսկ վարկպարզի, զոր կատարմանն յուսով մնայի, քանզի էր ուղղեալ զսա և հարստացուցեալ Յանգօք և նախագրութեամբք երշանկին և հզաւր զաւրեղին ի խումբս բարունեաց մեծին Գեորգեայ. և ամենայն իրողութեամբ լի և պատարուն զարդարեալ, և վճիտ և սեռն բայիւք, և բառիւք, և բաժանմամբք, որպէս և տեսանիս իսկ։ Եւ իմաստնոց միայն է յայտ, թէ որպէ՞ս կամ զի՞նչ կայ ամբարեալ մթերք բարեաց բանի և գծի, և առոգմամբ քերականական արուեստի։ Զոր թէ ոք մանրամասնաբար ի սմա նայեսցի՝ գտցէ զսա հանգոյն և քատակ սրբոց թարգմանչացն սարասի, և յօգտելն յոլով քան թէ սակաւ մխիթարի։ Եւ այս իղձ որ ի վաղնջուց, որպէս ասացի, խորովէր զիս սքանչելի տոչորմամբ մոռանալ, և անտես ետ առնել ինձ զչար վարս ըստ հոգւոյ, և զկուրութիւնս ըստ մարմնոյ. և թէպէտ խարէր դառն կեղեքմամբ մտացս անաչառն զիս դատ, սակայն համարձակեցայ ի գրել տալ՝ վերագոյն յուսոյն աղագաւ, և բարերարն Աստուած աւժընդակ կամաւք

[10] «Արդ գրեցաւ»-ից մինչև այստեղ տե՛ս նաև «Բազմավէպ» 1935, էջ 443։

ձեռն ետ ի կատարումն։ Զի նորա կամելովն եղև սկիզբն, և պահեցաք միջոցաւ ի խնամոցն, և հասաք գթովն ի զրաւ, որք են տիրականիս ի մեզ զգաստացուցիչ, և ի պայազատն Աստուծոյ՝ որդեգրութիւնն հաւատով, յուսով և սիրով ամրացուցիչ և պնդակազմ առաջնորդ և երկնային կենացն քարոզ, և աստի անդ հրաւիրակ և մխիթարիչ...։ Վասն որոյ երկրպագելով լինիմ շնորհակալ, և գոհանամ զանեզրական բարւոյն Աստուծոյ խնամոցն, որ արժանի արար զանոպա և զբիւր չարեօք լցեալս Մինաս՝ հասանել այս բարձրագոյն խնդրոյ։ Գոհացարուք և դուք սրտայորդոր մտաւք Աստուծոյ, զի որպէս հաւատամ// դարձուցէ զիս ի մեղաց ձերով աղօթիւք, և զերծուցէ ի սպառնալեաց որդանցն և խաւարին և հրոյն։ Եւ ես մեղաւորս յերեսս անկեալ աղաչեմ զժառանգաւորդ և զհանդիպաւորդ սրբոյ այս կտակացս՝ մեղաւորիս Մինասայ, անուամբ միայն ևեդ վարդապետի և գործաւքս իբր ոչընչի, քաղաքաւ Կարինացի, որ այժմ Թէոդուպոլիս ասի, ըստ այլոց Էրզէրում վերաձայնի. և հանդիպաւորդ յայսմ տարի, որ և նուագ հոգւոյն կոչի, և գաղափարողքդ ամենայնի միշտ ասացէք Տէրն ողորմի։

Նախ և առաջին յիշեսջիք զհոգևոր հայրն մեր և կրկին լուսաւորիչն զտէր Ղուկաս, արի և քաջ բարձունապետ և աստուածաբան վարդապետն, վարժիչ և ուսուցիչ մեր՝ որ է բուն Խորցուենեաց ի գեղջէն Ապարայ, որ էր ժամանակ ինչ մայրաքաղաքին Համբայ վերադիտող և առաջնորդ. որ։ իբրև արեգակն փայլէր ի մեջ Հայաստանեայց, որ և հանգաւ ի Քրիստոս առ յոյսն ամենեցուն։ Եւ զեղբայր նորին զտէր Մարկոս, քաջ երաժշտապետն Հայոց, և զՅոհանէս աւագ սարկաւագն՝ կատարեալ իմաստասէրն, այլ և զինքեանս զամենեսեան[41] առ հասարակ ընդ սբս. դասեսցէ ընդ երկոտասան առաքելոցն, և երկոտասան աստուածաբան վարդապետացն դասակից և պսակակից արասցէ. ամէն։

Նայև ծնաւղաց իմոյ բարի, որք այժմ ժողովն են ի յերկնի և ծննդովքն ամենայնի ներումն հայցել սխալանաց նոցին. նայև մաւրն իմոյ՝ Անանային, և հաւրն իմոյ՝ Խորշային, եղբարցն իմոց՝ Էրտողտէին և Ստեփանոսին, և կենդանի եղբօրն իմոյ՝ Աղաճանին, որդւոյ նորա Յոհանիսին՝ ԺԸ (18) ամեայ պատանեակին, որ յանկարծամահ եղև ի նմին ամին. եթող սուգ մեծ իւր ծնող[ին] և ամուսնոյն իւր՝ Մելիքին, և այլ ամենայն արեան մերձաւորաց նոցին՝ կենդանեաց և ննջեցելոց։ Եւ զայս ասեմ կողկողագին և արտասուօք յոյժ լալագին, մին ողորմիս խնդրել նոցին, և ձեր մեղանք ոչ յիշեսցին աստ և յաւուրն ապագային. ամէն ամէն, և եղիցին։

Եւ դարձեալ գիտելի է սրբասնեալ հարցդ և եղբարցդ, և հոգևոր որդիացելոցդ մերոց հանդիպողացդ այսմ սբ. Սաղմոսարանիս, քանզի ոչ թէ այսմ մարմնական շահից զսա գտել ետու, այլ վասն յուսոյն որ առ Աստուած, զի յաղօթից սրբոցդ մխիթարեցայց. զայս ունիմ ինձ գանձ անկողոպուտ։ Աղաչեմ մի՛ անտես առնէք զեղկելիս, զի կարաւղ է Աստուած ի ձեռն սբ. ձեր խնդրոցն ողորմել մեղաւորիս, և սխալանացս

41 Բ. Սարգիսյանը հայտնում է, որ լուսանցքի վրա, տարբեր գրչութեամբ նշված է «ծնողիւքն հանդերձ» (էջ 241)։

ներեցէք, և սիրով խոնարհեալ ուղղեցէք. զի որչափ էր ի մեզ կար՝ շա-
242 նացաք, և թէ գտանի սխալ՝ մեք ոչ իմացաք, բայց գիտնոցն //կրկին մաղ-
թեմ ուղղել։ Եւ աշխատաւորացն և երախտաւորացն ի սա վարձս բարիս
տացէ Աստուած. և որք յիշէքդ զմեզ, որդին Աստուծոյ և զձեզ յիշեսցէ,
և ողորմութեանցն իւր արժանի արասցէ, հանդերձ ամենայն հաւատա-
ցելովք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր[42]։

516
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁԱՐ, № 248

Վայր՝ Լէվ

ա

Փառք...
1130 Որ. և զիմ տկարութիւնս արարեր արժանի,
Ոչ սկիզբն միայն առնել աստուածաբուխ տառի,
Այլ և ի աւարտ հասանել սորի,
Եւ արդ գրչութեանս տորա եղև գրաւի,
Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի Լէվ քաղաքի։
Ի հայրապետութեան տէր Նիկոլ արքեպիսկոպոսի,
Պարոն Եսգուպի Թորոսենց որդի,
Եւ ի թագաւորութեան Լեհաց Երրորդ Զիկմ[ո]ւնդի,
Ի թվականութեան եղաւ Հայոց Ռհ(ութի (1629)։
Եւ արդ որք հանդիպիք սմա աղաչեմ զձեզի,
Կարդալով կամ օրինակելով միով Տէր ողորմի,
Զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ մեզի,
Յիշեցէք և Աստուած յիշէ զձեզ իւր գալուստն կրկնակի. ամէն։

Բ

1129 Յիշատակի սբ. Աւետարանս մահդասի Ֆարիզշատին և իւր ծնողացն՝
հաճի Շիրինին և մօրն՝ Եղիսաբէթին, և եղբարցն՝ Յովսէփին և Յոճանիսին
և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

---

[42] Մինաս Կարնեցու այս հիշատակարանի առթիվ Բ. Սարդիսյանը գրում է. «Շատ կէտերով խորհրդաւոր է այս յիշատակարանս. նախ անոր համար, որ Մինաս վարդապետ Կարնեցի մերթ իբրև գրել ուսող և սուացող կը ներկայացնէ ինքզինքը, և մերթ ալ իբրև գրիչ ներումն կը խնդրէ իւր սխալներուն համար և ուղղել զանոնք։ Բ. Այս յիշատակարանիս դիրն որ յար և նման է բնագրին, աւելի ընտիր է և ձևով հնագիր քան յաշորդին գիրը։ Հիշատակարանս ներկայ օրինակէն աւելի հնագոյն բնագրին կը յարմարի» (էջ 242. ընդգծումը Բ. Սարդիսյանինն է-կազմ.)։ Այստեղ հիշված Մինասը Կարինի առաջնորդ Մինասն է, «որ էր աշակերտ Կեղեցի մեծ Ղուկասին» (Մանր ժամանակագրություններ, հտ. 1, 1951, էջ 241), որը մահացել է 1633 թ.։ Մինաս Կարնեցին երբ խնդրում է «սխալանացս ներեցէք, և սիրով խոնարհեալ ուղղեցէք» վերաբերում է ոչ թե (կամ ոչ միայն) իր հիշատակարանում թույլ տված սխալներին, այլ ձեռագրին, որը թեև ինքը չի գրել, բայց գրել է տվել։

517
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՏՂԱՐ, № 283

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Խոտածան

ա

1214 ՌՀԸ (1629) թվին գրեցաւ կտակս Դաւթի։

բ

Յիշեցէք զմեղապարտ գրիչս Սարգիս։

գ

1215 Փառք...։ Եւ արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս, որ է երգարան, հրամանաւ տէր Ռըստակէսին, ի խնդրոյ տէր Յակոբին, ի երկիրս Էնանան[43], ի դեղս որ կոչի Խոտածան[44], ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ձեռամբ անարհեստ գրչի սուտանուն Սարգիս աշխարհականի, յընտիր և ի լաւ աւրինակէ Ներենց կոչեցեալ, ի թվականիս Հայոց ՌՀԸ (1629)։ Աղաչեմ զձեզ, ո՜վ եղբարք, որք հանդիպիք սմա՝ ընթերցմամբ և կամ աւրինակեալով, յիշեցէք զտէր Ռըստակէսն, որ էր հայր անապատին Տանձփարախոյ և զտէր Յակոբ ժամարար նորին։ Աստուած անփորձ և անսասան պահէ զսոսա և յետ աստեացս ելանելոյ՝ զերկնից արքայութեանն արժանի արասցէ. նոցին աղօթիւքն և զիս մեղապարտ գրիչս փրկեսցէ Քրիստոս Աստուածն մեր ի դառն դժոխոցն. ամէն։

518
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏՂԱՎ, № 53

Գրիչ՝ Ղազար քահանայ
Վայր՝ Հալապ

ա

110 Փառք...։ //... այս աստուածաւանդ Աւետարանիս եռանդնոտ սիրով տենչացեալ Մարգարէ քահանայն, արդեամբ ժողովրդեանն, ի ձեռն իմոյ նուաստութեան Ղազար գրչի, ստացաւ զսա ի լրումն աստուածասէր փափաքման իւրոյ, և ազատամիտ կամաւք առատացեալ ի ծախս պատշաճաւորս գեղապաճոյճ երանգաւք ծաղկազարդեալ, շքեղացոյց զսա ի վայելչութիւն տեսողացն, և ի բարի աւրինակէն բարեմտութեամբ, շահեալք յաւժարամիտք լիցին ի կցորդութիւն գործոցն և բանիցն Քրիստոսի։

[Ա]րդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքն ի Հալապ որ է Բերիս, ի դուռն Ս. Աստուածածնին, և Ս. Քառասնիցն, ի թուականիս Հայոց ՌՀԸ (1629), ի կաթուղիկոսութեան Կիլիկեցւոց տէր Մինաս քաշ ըաբունապետի, և ի թագաւորութեան սուլթան Մուրատին, և ի առաջնորդութեան այսմ նահանգիս տէր Սիմէոն արքեպիսկոպոսին[45]։ Եւ գրեցաւ յագնիւ և յամէնըն-

[43] Տպված է «էհանան»։

[44] Գուցե Խոտանան։

[45] «Արդ»-ից սկսած մինչև այստեղ տե՛ս նաև Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 304։

տիր աւրինակէ։ Վասն որոյ աղաչեմ զհանդիպեալսդ և զվայելաւղսդ աստուածութեան տառիս, սրտի մտաւք յիշել ի Քրիստոս զԽուրքերոցի մահդեսի Տիլանշն և զքուրքչի Յովանէսրն, որ սոքա եղեն պատճառ սբ. Աւետարանիս ի յաւարտ հասուցանելոյ, ևս առաւել, և զիս զմեղուցեալ գրիչս՝ զՂազար քահանայն, և զծնաւղքս իմ՝ զմահդեսի Պաղտասարն, և զմահդեսի Լուսինն, և զմահդեսի Խանտեռն, և զամուսին իմ, և զուսուցիչքն իմ, և Քրիստոս, որ մեծն է ի պարգևս բարեաց, զյիշաւղսդ և զյիշեցեալսս արժանի արասցէ ողորմութեանն իւրոյ ի փառս Քրիստոսի...։

Յիշատակ է սբ. Աւետարանս ամենայն ժողովրդեանն ի դուռն Ս. Աստուածածնին, թէպէտ Տիլանշն և Յովանէսն աւարտ հասուցին, ապա զգինն Աստուածածնին դրամէն տվին։ Վասն այսորիկ չունի ոք իշխանութիւն զսբ. Աւետարանս հանել ի դրանէ Ս. Աստուածածնին, թէ՛ կարգաւոր և թէ՛ աշխարհական, կամ գրաւ դնէ կամ ծախէ. եթէ ոք [յ]անդրքնի...։

Բ

Յիշեցէք ի Քրիստոս զսարկաւագ Աղաճանն որ ետուր մսխալ մի լազվարդ, որ ծաղկեցաք զՅոհան գլուխն[46]։

519

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՑ ԳՕՇԻ

Մեղշմս, II, № 36

Գրիչ՝ Մկրտիչ դպիր

ա

1 14 Զգծող սորայ զնուաստ և զեռաթշուառ մեղապարտ Մկրտիչ անարժան դպիրս յիշեցէք ի Քրիստոս Աստուած և մի ողորմ[ի]այի արժան արարէք, և ձեզ ողորմեսցի Տէրն. ամէն։ Գրեցաւ ի թվին ՌՀԸ (1629), ի վայելումն տէր Յովճաննէս քահանային։

Բ

Անմեղադիր լերուք, ո՛վ ընթերցողք, այսմ գրի խոշորութեան և սխալանացն <անմեղադիր լերուք>, զի խիստ ատորելով գրեցի զայս մէկ տետրս, որ զօրինակ կու տանէին, թէզով աղէկ ու վատ աւարտ հասաք յօրինակիս, թողութիւն արարէք, զի օրս կիրակի էր որ գրեցի և սիրտս ի վրայ չէր, անոր համար այս մէկ տետր գիրն այսպէս եղև, վասն Աստուծոյ սիրուն համար մէկ Հայր մեղայ մի հրամայեցէք գրի գրողիս՝ Մկրտչի. ամէն։

520

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՅովՁՁն, № 47

Գրիչ՝ տէր Արիստակէս
Վայր՝ Կ. Պոլիս

57 ... որ ետուր ինձ տառապեալ ոգոյս աւարտում սբ. գրոց համառօտ Այսմաւուրացս, որ գրեալ կայ ի սա հնոց և նորոց աստուածային գրոց, և

46 Կա նաև չափածո մեկ հիշատակարան, որը պատմական ոչ մի արժեք չունի, ուստի չվերցրինք։

պատմէ [վարս] առաքելոցն, հայրապետաց և վարդապետաց, մարտիրոսաց, կուսանաց և ամուսնացելոց, միանձանց և վանաւորաց, և թագաւորաց, զինուորաց և զինաւորաց, և զամենեսեան. իւրաքանչիւր պատուովն պատմէ, լիակատար և անթերի, ի լաւ և ընտիր օրինակէ, ի քաղաքն Կոստանդնուպոլիս, *ի թաղ[ն]* Պալատու, *ընդ հովանեաւ [Ս.] Հրեշտակապետին, ձեռամբ մեղսամած և անյարմար դրչատէր* Արիստակիսին, *ի թուականիս Հայոց ՌՀԸ (1629) /// և մանկունք սբ. Սիոնի, որք հանդիպիք սմա, կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, զստացող գրոցս զմահտեսի* Սողոմոնն, *և զծնողսն՝ զ*Սիմէոնն *և զմայրն՝ զ*Կուլիսաանն, *և զմայրագիրն՝* Տօլվաթն, *և զեղբայր մահտեսուն՝* Զաքարն, *և զկողակից* Կուլիսաանն, Նիկողայոսն /// Մանանդն ///։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղսասէր գրիչս զտէր Արիստակէս, *և զհայրն իմ զմարմնաւոր՝ զմահտեսի* Մկրտիչն, *և զմայրն իմ՝* Շահիւաթունն, *և զհոգևոր ծնողսն իմ՝ զտէր* Ստեփանոսն, *և զվերակացու գրոցս զաշխարհական զ*Փանոսն, *զծաղկող սորին, ըզկապողն զտէր///....*

521
ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁՎԼ, № 374, տե՛ս նաև ՄԼԳ, Арм. *№—4, էջ 285 բ—288 ա*

Գրիչ՝ Յոհանէս
Վայր՝ Սուրս

ա

876 *Փառք... //զոր և տեսեալ զայս պատուական գանձս աստուածունակ, և ցանկացաւ աստուածարան սբ. Աւետարանիս, սրբասէր միակե[ա]ցն* Ասառա[ծա]տուր *և ստացաւ զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն [և] ծնաւղաց իւրոց, և ազգականացն, և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։*

Եւ արդ՝ ես ունայնս և թափուրս յամենայն հոգևոր բարեմասնութեանց, և հաշեալս և մաշեալս վերջին աղքատութեամբ, մեղաւոր և անարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ՝ սուտանուն Յոհանէս, *յանձս առի զայս սբ. Աւետարանս և ամենակարող զօրութեամբ Հոգւոյն աւարտեցի զսա, մեղսամած մատամբս, յիշատակ բարի, իմաստուն և հեզահոգի, սրբասէր մաղդասի* Ասառա[ծա]տուրին *և ծնօղաց նորին։*

Այլ և զիս զյետինս ի կարգս... և զառաջինս ի դասս մեղաւորաց, զմեղօք մեռեալ գծողս Յոհան *և զկողակիցն իմ, և ծնաւղաց իմոց* Կարապետ *քահանային և զաւակացն՝* Յոհանէս *քահանային, և* Գրիգոր *քահանային, և* Յովանէսին, *և* Յովասափին, *և եղբօրն՝* Գրիգորին *և զաւակացն՝* Ստեփանոսին *և* Յովանէսին և Վարդկին, *և քևերցն՝* Փաշուշանին, *և*
877 Ղըզլարբէկոյն, *և* Վարդ//հատունին, *և* Շամամին, *և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։ Եւ որ ասէ զԱստուած ողորմին, միոյն հարիւրապատիկ առցէ ի Քրիստոսէ. ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զսուտանուն Յոհան *գծողս։*

Արդ գրեցաւ սբ. Աւետարանս ի գեաւղս որ կոչի Սուրս, *ի դուռն Ս. Յովհաննու Մկրտչին և Ս. Գէորգայ զօրավարին, ի թուականիս Հայոց ՌՀԸ (1629), ի դառն և ի նեղ ժամանակիս։*

Բ

148ա *Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթ ձեր զսուտանուն* Յոհան *գրիչս, և զկողակիցն, և զծնաւղքն՝ զ*Կարապետ *քահանայն, և զամենայն արեան մերձաւորքն. ամէն*[47]։

522
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մեզեզ, II, № 242 (1616 թ.)

Նվիրատու՝ Ղուկաս *եպիսկոպոս*
Վայր՝ Երուսաղէմ

2 *Ես՝* Ղուկաս *եպիսկոպոս եղի զ*Սաղմոսարանս *յիշատակ ի սբ. քաղաքն* Երուսաղէմ, *ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն, ի հայրապետութիւն և յառաջնորդութիւն սբ.* Երուսաղէմայ *աթոռոյս տէր* Գրիգոր *արհի եպիսկոպոսին, ի թվին ՌՀԸ (1629)։ Աստուած զիւր հոգին լուսաւորէ և զինքն հայրապետաց դասուն դասակից և պսակակից արասցէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տէր* Գրիգոր *արհի եպիս-*
3 *կոպոսին և իւր ծնողացն, և իւր ամենայն արեան// մերձաւորացն։ Արարչագործն Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ ի յայսմ ժամանակիս, որ բազում չարչարանաւք զվանքս ի շէն և պայծառ է պահէր. Աստուած զիւր հոգին պայծառացուցէ ի յերկնից արքայութեան. ամէն։*

523
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

Մեզեզ, II, № 295 (1381 թ.)

Ընթերցող՝ Կարապետ *վարդապետ*
Վայր՝ Երուսաղէմ

125 *Ի թվին Հայոց ՌՀԸ (1629). ես՝ նուաստ* Մոկացի Կարապետ *պիտակ անուամբ վարդապետս եկի ի սբ.* Երուսաղէմ, *և ընթերցա զ*Մեկնիչս Ղու-
126 *կասու աւետարան//չիս։ Աստուած զ*Թոխաթցի Մաղաքիա *վարդապետի*[48] *հոգին լուսաւորէ. այս նորա* Մեկնիչն *է։*

---

[47] Բ հիշատակարանը վերցրել ենք ՄԼԳ, Արմ. №—4 ձեռագրից։ Նման հիշատակարան կա նաև ձեռ-ի 148 ա և 227 բ էջերում։

[48] Այս ձեռ-ի տիրոջ՝ Մաղաքիա վարդապետի հիշատակարանը տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում, էջ 187։

524
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ (1620 թ.)

Երուսաղեմ, № 428 (մանրաժապավեն, Երևան, № 589). տե՛ս նաև Մ8ԶԵԳ, II, № 428, էջ 387, «ՀԱ», 1947 թ, էջ 121

543բ Ի թվականիս Հայոց ՌՀԸ (1629) ամի մեռաւ շահ Ապաս՝ արքայն Պարսից. և յաշորդեաց զկնի շահ Ապասին թոռն նորին՝ շահ Սէֆի անուն։ Արդ՝ ի սոյն ամի նստաւ յաթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին տէր Մովսէս Տաթևացին, այր սրբասքնունդ և խարազնազգեաց, կոյսկրօն և ճգնասէր, որ և վերստին նորոգեաց զսբ. էջմիածինն, և այլ բազում եկեղեցիս՝ կարգօք և կրօնիւք հաստատեաց, և բազում որդիս ի փառս էած, զոր և տէր Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ, մինչև ի խորին ծերութիւն, և յետ աստեացս ելանելոյ ընդ սբ. հայրապետացն և ընդ մաքուր վարդապետացն դասակից և պսակակից արասցէ. ամէն։

525
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ, ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Մ8ԶԵԳ, III, № 741

Գրիչ, ստացող՝ Սիմէոն աբեղայ
Վայր՝ Մեռաին, Կուտին

ա

186 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքն ի Մեռաին, ընդ հովանեաւ Ս. Գէորգայ զօրաւարին, լաւ և յընտիր աւրինակէ, ի թվականիս Հայոց Ռ և Կ ու Զ-ն (1617)։

Եղև սկիզբն սորա բուն Բարեկենդանին, և յաւարտն ի Մազկազարդին[49]։

բ

Գրեցաւ Զորրորդ թագաւորութեանցս և Ողբն Երեմիայի ի քաղաքն ի Մեռաին, ընդ հովանեաւ Ս. Գէորգին, ձեռամբ Սիմէոն աբեղայիս, թուականութեանս Հայոց ՌԿԵ (1616)-երորդին։

Ապա յետոյ զՄեկնութիւն Սաղմոսին գրեալ ի մին տուի եդեալ կապեցի, յետ ԺԴ (14) ամի[50]։

գ

Ի թուականիս Հայոց ՌՀԸ (1629) գրեցաւ սայ ի գիւղն ի Կուտին, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսին, ի յոգնամեզ անձնէ Սիմէոնէ լոկ անուն բանի սպասաւորէ, զմտաւ ածելով զբան առակողին որ ասէ. «Ընկալարուք զխրատ և մի՛ զարծաթ»[51]։ Վասն որոյ գրեցի զՄեկնութիւն Սաղմոսիս առ ի խրատ և ի կրթութիւն իմում անհրահանգ բարուցս և ի յիշատակ յաւիտենից ինձ և ծնաւղաց իմոց և ամենայն արեան մերձաւորաց և երախտաւորաց։...

---

49 Այսինքն՝ մարտի 2-ից մինչև ապրիլի 12-ը։ 1617 թ. Զատիկը կլինի ապրիլի 26-ին, իսկ Մազկազարդը՝ ապրիլի 13-ին։

50 ա և բ հիշատակարանների մանրաժապավենը տե՛ս մեր Մատենադարանում, № 595, էջ 715 ա և 727 ա։

51 Առ. Ը, 10։

526

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Ջմմառ, № 423 (ԺԵ դար)

Գրիչ՝ Սիմէոն վարդապետ

3 *Ի թվին ՌՀԸ (1629) ես՝ Սիմէոն մականուն վարդապետս եկի ի յԱլի(?)փիառ. խիստ լաւ պատի[ւ?] /// մեզ. ապայ զօ/// զյարգի յար///*

527

ԺԱՄԱԳԻՐՔ

Ջմմառ, № 572

Գրիչ՝ Յոհան
Վայր՝ Ջեթուն

ա

180 *Փառք...։ Շնորհիւ Տեառն յանդ ելեալ կատարեցաւ տառս այս, որ է Աղօթամատոյց և Տօնացոյց և Պարզատումար և այլն ի միասին, ի թվին Հայոց ՌՀԸ (1629), ի յերկիրս Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքս ի Ջեթուն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Գրիգորի Լուսաւորչին և այլ սրբոցըն որ աստ կան ի յօգնութիւն ամենայն հաւատացելոց։ Ի հայրապետութեանն Կիլիկիոյ տէր Մինասի և ի յառաջնորդութեան այսմ գահի տէր Մկրտչի։ Գրեցաւ սա ձեռամբ անիմաստ գրչի Յոհան անարժանի, ի խնդրոյ հեզահոգի տէր Ռըսսակէս քահանայի, որ բազում փափագանօք ետուր գրել զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց։*

Արդ՝ որք հանդիպիք սմա, յիշեցէք զուսուցիչն իմ՝ զտէր Վահան քաշ քարտուղարն և զանարժան գրիչս և զրստացող սորա և զարեան մերձաւորսն իւր...։

Բ

181 *Պարզատումարս գովելի,*

. . . . . .

Որք ընթեռնուք սիրով սրտի,
Յիշման առէք զիս արժանի։
ԸզՅոհան մեղօք ի լի,
Գրծագրող յայս մատենի,
Եւ զրստացող այս սր. տառի,
Տէր Ռըսսակէս քահանայի։
Հայցօղ եղև այսմ գանձի,
Մեք գրեցաք ըստ մեր կարի,
Ով որ յիշէ՝ վարձս ընդունի,
Ի գալստեանն Քրիստոսի։

528
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

«Բանբեր Մատենադարանի» № 9. տե՛ս նաև Կամէնից, էջ 181—183, «ՀԱ» 1890 թ., էջ 20—21, 1895 թ., էջ 300—301, 1913 թ., էջ 693—697

Գրիչ՝ Սարգիս Մելիքենցի

ա

446 Յայսմ աւուր ըմպռնաղ է. և զինչ այսօր լինի, ձմեռն այնպէս անցանէ, թէ ջեր[մ] և թէ ցուրտ, թէ պաղ և թէ ամպ։ Յիշեցէք ի Քրիստոս զուսուցիչ վարպետն իմ՝ զԿամենիցցի Յոհան, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ արհեստ։

Բ

...Ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս տէր Նիկողայոսի[ն] և ծնողացն՝ պարոն Վարդին... և անպիտան գրչի Սարգիս դպրին... և վարժապետին Յոհան դպրին...։ Կարողութեամբն Աստուծոյ և միջնորդութեամբ սրբոցս սկսաք սբ. գիրքս և վերջացաւ ի յայսմ վայրի իմում բաժին։ Եւ ի յայսմ տեղւոջէս յաւարտ եհան հոգևոր ծնողքն մեր և խրատատուն Սրապիոն դպիրն, զոր և շուտով յաւարտեցաք ի թվականութեանս Հայոց ՌՀԸ (1629) ամին։

Գ

448 ...Արդ՝ ես նրուաստս ամենայնի և զառածեալս մեղօք ի լի, զծոյլս ի բարին և զյարագս ի չարին, սուտանուն Սարգիս դպիրս՝ գծողս աղերսեմ ի ձեզանէ յիշել ի Տէր, զյուսուցիչն իմ՝ զՅովանէս դպիրն, որ բազում ջանիւ և աշխատանօք զվրիպեալն և զանիմաստս, թանձրամիտս և յետնեալս ուսոյց արհեստ գրչութեան. միայն փոխարէն հատուսցէ տէր Աստուած երախտիցն իւրոյ...։

Դարձեալ յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր զհայրն իմ՝ զմահտեսի տէր Յոհաննէս քահանայն, և զմայրն իմ՝ Ղարդարն, և զքոյրս Գուլվարդն, և զեղբայրքն իմ՝ Գասպարն, Կիրակոսն, Մելքոնն, Թորոսն և ամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալսն առ Քրիստոս. ամէն։

Աւարտեցաւ սբ. գիրքս ի դառն և ի դիժար ժամանակիս և ի ձմերացեալ յաւուրս վերջին, եկն ի վերայ մեր բարկութիւնն Աստուծոյ, վասն ծովացեալ մեղաց մերոց յարեանն յազգն անհաւատից, զոր և անօրէն,
449 անագորոն և գազանաբարոյ, քարապահանջ // բռնաւոր, կոչին Նետողք. որ է թաթարն, եկեալ մտին երկիրն Իլախաց յաւար առնել։ Որ և բազում քաղաքս և գեղս տապալեցին և զբազումս գերեցուցին։ Յետոյ եկեալ ազգն Իլախաց բազում զօրօք ի վերայ նոցա, զգերիքն թափեցին և զբազումս սրախողխող արարին. և կէսքն իբրև զխոզ վարեալ տարան ի թախթն գռալին, և մնացեալքն եկին փախստական երկիրս Օլախաց և վրդովեցուցին երկիրս զայս, և զբազումս գերի առեալ տարան։ Եւ յետ երիցս և չորից աւուրց անցանելոյ նոցա եկն եհաս և այլ չարագոյն բօթ, թէ ահա Միրօն պարոնն ժողովեալ է բազում զազախ և կու գայ ի վերայ միւս պա-

բոնին։ Եւ ահա կատարեցաւ բանն տէրունական, որ ասէ, թէ «Տուն Բ (2) բաժանեալ աւերեսցի[52]»։ Վասն որոյ մեծամեծքն Միրոն պարոնին զալ-պեցին զնա, որ եկեալ փախստեամբ գնաց նստաւ ի բերդն Խոթինու և երկիրս անտիրացաւ ի Թագաւորաց Դ (4) ամիս։ Յետոյ եկն որդին Յրուատոլ պարոնին[53], տղա գոլով[54], նստաւ ի Նաշ քաղաքին աթոռ Թագաւորութեանն[55] ըստ յայնմ, որ ասէ, թէ «Աստուած որ բարկանայ ի վերայ երկրի, մանուկ թագաւոր առաքէ նոցա և տղայ առաջնորդ»[56]։ Ահա կատարեցաւ բանքս այս ի վերայ Օլախաց երկրիս, զի նախարարքն սորա ինչպէս որ կամեցան, այնպէս կու կողոպտեն երկիրս այս։ Վասն այսորիկ հրամայէ կայծակնամաքուր մարգարէն Յեսայի. «Ամենայն անձինք ի ցաւ և ամենայն սիրտ ի տրտմութիւն և շիք առողջութիւն ոտից մինչև ցգլուխ»[57]։ ... Բարեխօսութեամբ սրբոցս, որ կան ի տփին յայսմիկ, Աստուած խաղաղութիւն տացէ երկրի և թագաւորաց հաշտելիութիւն։ Արդ՝ աղաչեմք զձեզ, հայրք և եղբայրք, յիշել ի Տէր...։

Դ

Դարձեալ հայցեմք սուրբքդ բարի,
Ոչ մոռանայք ծառայքս գերի,
Սրապիոն Բաբերթացի,
Եւ զՍարգիսն Մելտենցի։
Ո՛վ քահանայքդ նազելի,
Եւ սպասաւորք սր. տաճարի,
450 *Յիշման առէք զմեզ արժանի,*
Որ եմք անձամբքս մեղօք ի լի։
* * * * * * * * * *
Եւ տրուպ Սրապս Բաբերթացի,
Զձեզ աղաչեմ արտասուելի,
Ո՛վ սուրբ հայրքդ նազելի,
Յիշել զծնողքս իմ ի բարի։
Եւ հօրն իմոյ՝ Ջանում *ասի,*
Եւ մօրն իմոյ՝ Շահփաշայի,
Եղբօրս իմոյ՝ Յակոբ *կոչի,*
Եւ միւսոյն՝ Գրիգոր *ասի։*
Եւ կողակցոյս իմ Մարթայի,
Որդւոյս իմոյ Յակոբ *ասի,*
Եւ միւսոյն՝ Ամսենդ *կոչի,*
Եւ իմ արեան մերձաւորի։

---

52 Հմմտ. Ղուկ., ԺԱ, 17։

53 Յուցակում սրա մասին ծանոթագրված է, Մոլդավիայի իշխան (1601—1626 թթ.) Ռադու Միհնյան է։

54 Խոսքը վերաբերում է Մոլդավիայի իշխան (1626—1630 թթ.) Ալեքսանդրու Կոկոնուլին (տե՛ս Յուցակ, էջ 449, ծանոթ. 2)։

55 «Արդ դրեցաւ»-ից մինչև այստեղ, որոշ կրճատումներով, տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյանի մոտ, № 9027, էջ 84 ա, բ։

56 Հմմտ. Ժող., Ժ, 16։

57 Նույ., Ա, 5։

Զմեղօք լցեալ ամենայնի,
Եւ դեգերեալս մէջ աշխարհի,
Զտրուպ հողս և փոշի,
Սարգիս դպիրս Մալաթեացի:
Զձեզ աղերսեմ, սուրբքդ արի,
Որք հանդիպիք յայսմ տառի,
Եւ ընթեռնուք սիրով սրտի,
Դուք ասացէք Տէրն ողորմի։
Եւ իմ նախնեաց ամենայնի,
Եւ ծնողացն իմ հոգելի,
Որ զիս ծնան մեղօք գերի,
Եւ սնուցին մէջ աշխարհի։
Եւ հօրն իմոյ՝ քահանայի,
Տէր Յովանէս անուն կոչի,
Նահատակեալ ի մէջ երկրի,
Յաւազակաց ձեռք խողխողի։
Եւ մօրն իմոյ՝ Զարդար ասի,
Որ եղեալ կայ գերեզմանի,
Քրեր իմոյ Կուլվարդ կոչի,
Ինքըն մարմնով կայ կենդանի։
Եւ իմ եղբարցս չորրորդի,
Որք են առողջ մարմնով յերկրի,
Պաղատեցէք տեառն Յիսուսի,
451 Զի թողութիւն նոցա լիցի։
Նախ և յառաջն Գասպարի,
Եւ երկրորդին Կիրակոսի,
Եւ միւսոյն Մելքոն կոչի,
Եւ չորրորդին Թորոս յորջի։
Եւ իմ արեան մերձաւորի,
Որ կան եղեալ հող տապանի,
Զի թողութիւն նոցա լիցի,
Ի յարութեան յաւուր վերջի։
Եւ կենդանեաց յայսմ աշխարհի,
Կացցեն ամբողջ ւ անդրդուելի,
Խաղաղութիւն պարգևեսցի,
Մինչ ի խորին ժամանակի։
Զնրաստրս ամենայնի,
Եւ դեգերեալս ի մէջ երկրի,
Սարգիս դրպիրս Մելտենցի,
Զոտանաւորս ջարադրեցի։
Որք հանդիպիք յայսմ կտակի,
Եւ ընթեռնուք սիրով սրտի,
Դուք ասացէք Տէրն ողորմի,
Զեզ և մեզ ամենայնի։

. . . . . .

Ե

Գրիչ՝ Սրապիոն Բաբերբացի
Վայր՝ Սէչով

446 ....Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս տէր Նիկողայոսին, և ծնողացն՝ պարոն Վարդին, Խաթունշային, և կողակցուն՝ Կուլպանարին, դստերացն՝ Ճաշխաթունին, Օղիտային, և եղբարցն՝ Ալեքսիանոսին, Մովսէսին, Գասպարին, Սիրունին, Միրիճանին, և կողակցուն՝ Սիրմային, դստերն՝ Հռիփսիմէին, և եղբօր որդոյն՝ Վարդազարին, որ
447 եղև պատճառ ցայսմաւուրքիս, և ամե//նայն մերձաւորացն, և անպիտան գրչի Սրապիոնի, և ուսուցչին իմոյ Հիզանցի մահտեսի տէր Խաչատուր քահանային, արի և քաջ քարտուղարանի, նաև ծնողաց իմոց, և հոգևոր եղբօր մերոյ Սարգիս դպրի Մելեռեցոյ, որ բազմաշան քրտ[մ]ամբ կոկեց զթուղթն ցայսմատուրքիս, կարդացողացս և լսողացդ և որ զողորմիսն. ամէն՝[8]։

Զ

...Վասն որոյ ցանկացող եղեալ սր. գրոցս տէր Նիկողայոս քահանայն և եկեալ ի միտս իւր և լուեալ զբան տէրունական ձայնին, զոր և հրամայէ, թէ «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս....»[59]։ Նոյնպէս և այս տէր Նիկողայոս քահանայ զայն հրաման առեալ և եդ յոյս յանձին և հետևեցաւ սր. գրոցս, որ կոչի ցայսմաւուրք և զամենայն մարմնական ինչ առ ոչինչ համարեալ, վաճառեաց զինչս ամենայն ի հալալ յարդունեաց իւրոց և ստացաւ զայս անառիկ և անգին մարգարիտ յիշատակ հոգւոյ իւր և նախնեացն իւրոց, պապոյն՝ էխաիարին և իւր պապին՝ Շահրիարին և մամոյն՝ Փաշային, հօրն՝ պարոն Վարդին և մօրն՝ Խաթունշային, կողակցուն՝ Կուլպանարին, և քրւերն՝ Փաշային, Օղիտային, փեսին՝ Խաչկոյին, և քրւերն՝ Փաշային, և եղբարցն՝ մահտեսի Գասպարին, և կողակցուն՝ Խանզաային, և իւր որդոյն՝ Վարդազասին, և կողակցուն՝ Վարդիկին, որդոյն՝ Մարտիրոսին և Գասպարին, միւս որդոյն՝ Յոհաննէսին, որ յայսմ ամի փոխեցաւ առ Աստուած և կողակցուն՝ Շահմելիքին, երկրորդ եղբօրն՝ Ալէքսիանոսին, կողակցուն՝ Ջինանին, Նազիկին, Թուրվանտային, և որդոյն՝ Խաչատուրին, երրորդ եղբօրն՝ Միրիճանին, և կողակցուն՝ Սիրմային, որդոցն՝ Մելքոնին, Կիրակոսին, Պօղոսին, Խաչերեսին, Արիստագէսին, միւս Արիստագէսին, Մեսրոպին, Պապաճանին, և դստերն՝ Հռիփսիմէին. չորրորդ եղբօրն՝ Սիրունին, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն....։

Արդ՝ գրեցաւ սր. գիրքս հարանց, որ կոչի ցայսմաւուրք, ի թուականութեանս հայկական սեռի ՌՀԸ (1629)-ին, կաթողիկոսութեան Էջմիածնայ տեառն տէր[60], առաջնորդութեան Օլախաց երկրի տէր Ղազար վարդապետին, աւագերէցութեան տէր Անդրէասին, և երէցփոխանութեան պարոն Մերիկին, և այլ քահանայիցն՝ տէր Յովանէսին, տէր Ղուկասին, տէր
448 Ղազարին, տէր Վար//դանին, տէր Աւետիքին <տէր> տէր Սիմէոնին,

[58] Միևնույն բովանդակությամբ մի հիշատակարան տե՛ս նաև 446 էջում գ համարի ներքո։
[59] Մատթ., ԺԳ, 45։

նորընծային՝ տէր Աստուածատուրին, և միւս տէր յԱստուածատուրին, տէր Մովսէսին: Եւ թագաւորութեան[61] պարոնին։ Գրեցս երկիրս Օլախաց, ի քաղաքս Սէչով, ընդ հովանեաւ վանորէիցս Ս. Հաճկատարի և Ս. Ըստրատիոսեանցն և Ս. Լուսաւորչին, քանզի սկիզբն ի Հաճկատարն արաք և յաւարտն ի Ս. Օգսէնտ, ձեռամբ անարժանիցս մեղապարտ Սրապիոնի և յոռթամ Սարգիս դպրի, ի խնդրոյ տէր Նիկողայոս քահանային, որ է աստ երկրէն Բաբերթու, ի դեղջէն Հընտէու: Արդ աղաչեմք զձեզ, մանկունք նազելի մօրն մեր Սիովնի, սբ. քահանայքդ պատուելի, որ էք տեսուչ ժողովրդի, որ պատահիք սբ. գրոցս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՍրապիոն, և զյուս<աց>ուցիչն իմ՝ զմէյտէսի տէր Խաչատուր արի և քաջ քարոզարանն Հիզանեցի, որ բազում աշխատութեամբ և գորովագոյթ սիրով հասոյց բիրտ և հաստատամիտս ի յարուեստ գրչութեան, զփոխարէն ի Քրիստոսէ տացէ սմին։

Դարձեալ յերեսս անկեալ և գլուխ ի գետին դնելով, ո՛վ դասքն քահանայից և ուսումնասէր սարկաւագունք, յորժամ ընթեռնուցուք զպատմութիւնն սբ. հայրապետաց և նահատակութիւնս սբ. մարտիրոսաց, յիշեսջիք ի յաղօթս ձեր անպիտան հողս և փոշի զՍրապիոն գծողս Բաբերթացի, և զհայրն իմ՝ Ջանումն, և զմայրն իմ՝ Շանփայշայն, զքոյրն իմ՝ Լուսխաթունն, փոքր եղբայրն իմ՝ Գրիգորն, որք են հանգուցեալ առ Քրիստոս, և կենդանի եղբայրն իմ՝ պարոն Յակոբն, զկողակիցս իմ զՄարթայն, և որդիքս Յակոբն և Ամսէնտն, հանդերձ ամենայն զարմիւք իմովք. ամէն։

529

ԱԻԵՏԱՐԱՆ

Կամենից, էջ 180

Խոճա Ազիզն ստացաւ զսբ. Աւետարանս, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն՝ Խոշխաղարին և մօրն՝ Խանպէկին, կողակցին՝ Մարիամին և եղբարցն՝ Սարուխանին, Նիկողայոսին, և քրւերցն՝ Շահաղային, և ազգականացն, որդւոյն և դստերացն...[62]։

530

ՇԱՐԱԿՆՈՑ

Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ կեսարիոյ, հտ. Բ

Գրիչ՝ Պարսամ, Պլզուլ

Վայր՝ Տումարզայ

1867 [Փառք]... որ ետ տարտամ գրչիս Պարսամի և Պլզուլի հասանիլ ի վերջ մեծ Շարականիս ի գաւառն Կեսարիայ Կապադովկիացոյ, ի գեաւղն Տումարզայ, ընդ հովանեաւ Ս. Պօղոսի և Պետրոսի. ի թվին ՌՀԸ (1629), ի հայրապետութեան սբ. էջմիածնի տեառն Մովսէսի կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի հայրապետութեան այսմ նահանգի Կեսարու Գրիգոր վարդապետի, և յառաջնորդութեան այսմ գաւառի Գրիգոր Մերուն եպիսկոպոսի...։

[60] և [61] երկու գեղքում էլ անունները չեն գրված ինչպես ծանոթագրում է Ցուցակի հեղինակը։

[62] Թեև տարեթիվը չի պահպանվել, բայց Ղ. Ալիշանը սույն հիշատակարանը գրել է 1629 թ. շարքում։

531
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՏՁԵՊ, V, № 1569

Վայր՝ Կ. Պոլիս

346 Փառք...։ Գրեցաւ ի թվին ՌՀԹ (1630), յունվարի Ի (20), ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպալիս, ձեռամբ[1]

532
ԳԱՆՁԱՐԱՆ
ՄՁԱԲ, № 166

Գրիչ՝ Սարգիս դպիր

833 Փառք...։ Արդ՝ կատարեցաւ Գանձատեարս շնորհիւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ձեռամբ բազմամեղ սուտանուն Սարգիս դպրի և անարուեստ գրչի, քանզի կար մեր այս էր։ Աւարտումն եղև գրոցս յունվար ամսոյ Լ (30) և թվականութեանս հայկազեան տումարիս ՌՀԹ (1630)-երորդի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ տառիս, յիշեցէք զանարժանս Սարգիս գրչակս և զվարպետն իմ՝ զԽաչատուր և զծնողս իմ՝ Ճանազիզ, մաւրս՝ Շանգատայ, մեծ մամուս անունն Խանգատայ, և զեղբայրն իմ՝ զՂազար, և ամենայն արեանառու մերձաւորացն իմոց. ամէն։ ...

533
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 7077

Գրիչ՝ Գասբար

ա

24բ Մանաւանդ զեղկելի զծող սորայ զԳասբարս յիշեա՛յ. ամէն[2]։

բ

137ա Մանաւանդ զծրաւղս սորայ Գասբարն և իւր ծնաւղն հանդերձ, կարդացողս և լսողսդ. ամէն։

Գրեցաւ թվիս ՌՀԹ (1630) ամիսն, յունվար։

---

[1] Ինչպես հաղորդվում է՝ շարունակությունը եղծված է։ Ձեռ-ի առաջին հիշատակարանը տե՛ս 1621 թ. շարքում։

[2] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 40 բ, 189 բ էջերում։

Գ

144բ Զգծող սորայ սևերես Գասբարս աղաչեմ փոքր մի յիշել, որ է աւրհնեալ. ամէն։

Թվին ՌՀԹ (1630)։ Յ.Ճ.Ի.Մ.Ճ.Ծ.[3]։

534

ԺՈՂՈՎԱԾՈԻ

Երևան, № 117

Գրիչ՝ Սարսամեանց Նիկողոս
Վայր՝ Ուռնայ

Ա

179բ Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանկ ելեալ աւարտեցաւ յոգիարուխ մատենաս այս աստուածային, որ վարդապետք եկեղեցոյ արարին ի վերայ Հին և Նոր Կտակարանաց աստուածաշունչ տառիցն, որ կոչի Ալպերտ, որ և թարգմանեցաւ ի լատին բարբառոյն ի հայս, բազում աշխատութեամբ և ջանիւ[4], որ և պարփակեալ ունի առ ինքն Զ (6) օրեա արարչութիւնն և է (7) մահացու չափ մեղաց բանքս, որ և գուշացուցանէ զհաւատացեալ քրիստոնայս։ Արդ՝ եղև զբաւ գրչութեան բանիցս ի թվաբերութեան հայկազեան տոհմի ՌՀԹ (1630) ամի, ի մայրաքաղաքս Ուռհայ, ընդ հովանեաւ տիրամայր Ս. Աստուածածնայ եկեղեցոյս, և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն քրիստոնէից, ի յառաջնորդութեան յայսմ նահանգի քաշ և արի հովուապետի տեառն տէր Յոհաննէս բարունապետի և աստուածաբան վարդապետի, որ փայլեաց իբրև զարեգակն ի մէջ աշխարհի, և լուսաւորեաց զազգս հայկազեան տոհմի և երկրորդ լուսաւորիչ եղեալ մերոցս ազգի։ Արդ՝ ետ գրել զսա եռափափաք սիրով և տենչալի ըղձմամբ ի վայելումն պատուական և նազելի անձին իւրոյ, և
180ա յիշատակ իւր և ծնաւղացն իւրոց, հաւրն՝ տէր// Յովանէս ծերունի քահանային և մաւրն՝ մահդասի Զմրութին, և այլ ամենայն ազգատոհմից սորին՝ կենդանեացն և ննջեցելոցն. ամէն։ Արդ՝ ես յետինս ի գրչաց և առաջինս ի մեղաւորաց, թարմատար և փծուն գրիչս, անարժան Նիկողոսս, որ մականուամբ Սարսամենց կոչիմ, որ գրեցի ի խնդրոյ քաշ և արի բարունապետին իմոյ՝ տէր Յոհաննէս վարդապետին, ի վայելումն յիշատակ աստուածահաճոյ անձին իւրոյ և ծնօղացն իւրոց և ամենայն ազգատոհմից իւրոց. ամէն։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացօղ սորին զգերերջանիկ և սրբասնունդն զտէր Յոհաննէս վարդապետին և լի բերանով Աստուած ողորմի ասացէք իւրն և իւր ծնօղացն. ամէն։ Ընդ նմին և զիս անարժան գրչակս յիշեցէք ի Քրիստոս և թողութիւն մեղացս հայցեցէք ի Քրիստոսէ, և ծնօղացն իմոց՝ հաւրս Սարգսին և մօրս Սանդուխտին, և եղբարցս, և քրւերցս, և ամենայն ազգատոհմիցն իմոց՝ կենդանեացն և ննջեցելոցն։

---

[3] Նշված է գրչի անունը, այսպես՝ Ց=Գ., Ճ=ա, Ի=ս, Մ=բ, Ճ=ա, Ծ=ր՝ Գասբար։

[4] Ջեռ-ում պահպանվել է թարգմանչի՝ Սարգիս Վաչենցի 1337 թ. հիշատակարանը (էջ 179 բ)։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զյիշման արժանին զտէր Սարգիս կրաւնաւորն, որ կազմեց զսբ. զիրքս զայս։ Բայց հայցեմ թէ ով ոք որ հանդիպի սմա, լի բերանով Աստուած ողորմի ասիցէ ստացողի սորին և գրողի և կազմողի, Քրիստոս Աստուած ողորմեսցի ձեզ...

Բ

139ա Արդ՝ եղև զրաւ սբ. գրոցս ի մայրաքաղաքն յԵդեսիա, որ այժմ ասի Յուրեա, ի յառաջնորդութեանն քաղաքիս տէր Յոհաննէս բարունապետին և աստուածաբան, սրբազան հայրապետին, ի վայելումն սրբասէր անձին իւրոյ, ի թվականիս մերում ՌՀԹ (1630) թվին փետրվար ԺԶ (16)։ Արդ՝ ո՛վ սբ. պատուական հայրք և մաքրամիտ եղբարք, անմեղադիր լերուք գրիս սղալութեանն, զի չեմ հմուտ արուեստի, խնդրեմ ի ձէնջ վասն Աստուծոյ սիրոյն, որ Տէր ողորմեալիւ յիշէք զծնօղս իմ և զիս անարժան եղկելի Նիկողոսս գրող սորին։

535
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Միաբանեան «Հան», 1892 թ., № 8. տե՛ս նաև Վատիկանի գրագարան, № 8, էջ 237

Գրիչ՝ Սիմէոն երէց

341 Գրեցաւ ձեռամբ սուտանուն և անարհեստ գրչի Սիմէոն երիցու, փետրուարի ԺԸ (18), ի թվականիս Հայոց ՌՀԹ (1630). ամէն։

536
ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

KarHB, № 45. տե՛ս նաև «Բազմավէպ» 1886 թ., էջ 183 № 3

Գրիչ՝ Խաչոյ

35ա Գրեցաւ պատմութիւնս ձեռամբ պարոն Աւետիքի որդոյ Խաչոյի, թվին՝ ՌՀԹ (1630), մարտ Թ (9)։

537
ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3352 (1628 թ.)

213ա Դարձեալ յիշեսցիք ի մաքրափայլ աղաւթս ձեր՝ ըզԿիրայկոսն ետուր ՃՃ (100) ըստակ, Գրիգորն ետուր ՃՃ (100) ըստակ, Պապաճանն ետուր Կ (60) ըստակ, Յովանէսն՝ Ծ (50) ըստակ, Ուզունն՝ Ծ (50) ըստակ, Հազարն՝ ԻԵ (25) ըստակ, Սարգիսն՝ ԻԵ (25) ըստակ, Մսրն՝ ԺԵ (15) ըստակ, Շազվաթն՝ ԺԵ (15) ըստակ, Կոչին՝ ԺԵ (15) ըստակ, Թամուրն՝ ԻԵ (25) ըստակ, Աստուածայաուրն՝ Ի (20) ըստակ, Տատուրն՝ Ժ (10) ըստակ, Պապն՝ ԼԵ (35) ըստակ, Վարդուկն՝ ԺԵ (15) ըստակ, իւր հայրն՝ ԿԵ (65) ըստակ։ Դարձեալ և տվին ի ձեռն յիշատակ Կեսարիացի տէր

Աբրահամին[5], ի թուին ՌՀԹ (1630), մարտ ամսոյ ի ԺԳ (13), աւրն շաբաթ։

Ընդերցող քահանայիս,
Միշտ հանապազ եկեղեցիս,
Ի գողանալոյ և ծախողիս,
Պատիեն առնու ԳՃԿԶ (366) հայրապետիս,
Փափաք անաւղ ւ յիշատակ դնաւղիս...։

538
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

KarHB, № 2, տե՛ս նաև Կամենից, էջ 184—185

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Սեչով

1բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ երգս սբ. մարգարէին Դաւթի ի լաւ և յնտիր օրինակէ որ կոչի Գառնեցի, ի խնդրոյ բարեպաշտ և աստուածասէր, երկիւղած Աստուծոյ և յամօթխած ի մարդկանէ մահդասի[5], յիշատակ իւր և իւր ծնողացն։ Արդ՝ աղաչեմ զամենեսանդր, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպարտապանս բիւր քանքարոյ և զեղկելիս և զյետնեալս ամենեցուն զՂազար գրիչս, որ լոկ անուամբ կոչեցա վարդապետ և ոչ գործով, թէպէտ ի մարդկանէ դովիմ, այլ ի տեսողէն յամենայնի պարսաւեալ եմ, և թէ ի մարդկան աչս պարկեշտ երևիմ, այլ որդւոցն լուսոյ աւաղիմ։ Վասն այսորիկ արտասուագին պաղատանօք խնդրեմ պատահողացդ այս սբ. զրոցս, ասէք բոլորով սրտիւ Հայր մեր, կամ Քրիստոս որդի
2ա Աստուծոյ, կամ Աստուած ողորմի ասելով ինձ եղկելոյս // և իմ ծնողացն՝ հօրս Նիկողայոսին, և մօրս Շնոֆորին, և եղբարս Մարտիրոսին և Սարգսին, և քրւերս իմո[յ] Ղուտրատին, և որք յիշէք՝ յիշեալ լիցիք աւուրն ահեղին ի գալստեանն Քրիստոսի. ամէն։

Արդ՝ գրեցաւ ի վանքս Ս. Օգսէնդի, ի քաղաքս Սեչով, ի հայրապետութեան տեառն տէր Մովսէս կաթուղիկոսին, ի թագաւորութեան Ուլախաց երկրիս Ալէքսանտրին, ի թվականիս Հայոց մեծաց ՌՀԹ (1630)-ին[7], ի ապրիլ ամսոյն ինն աւարտեցի Քրիստոսի շնորհօքն. Աստուած տա որ բարով վայելէլ մահդասի[8] բազմերամ ժամանակօք և ընդ երկայն աւուրս. ամեն։

---

[5] Նույն անձնավորությունը, որը 1628 թ. ստացավ սույն Մաշտոցը։ Գրչի հիշատակարանը տե՛ս 1628 թ. շարքում։

[6] Ինչպես հաղորդում է Ն. Քարամյանցը, ստացողի անունը բաց է թողնված։

[7] Տե՛ս նաև «Բազմավեպ», 1886 թ., էջ 191, ձեռ. № 80, բայց այստեղ տարեթիվը սխալմամբ նշված է ՌԿԹ՝ 1620 թ.։

[8] Անունը դարձյալ չի գրված։

539
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 79

ա

133ա Ռ և ՀԹ (1630) թուին յետ Աշխարհամատրեան կիրակէին, երկուշաբթի աւրն, որ է Զատիկէն մինչև ցայսաւր վեշտասանօրեայ[9], երիկունս մերկացուցին զիս և երեքշաբթի Զ (6) աստիճան ու վեղա[ր] փիլոն տուին։ Ես էի ամաց իբրև Ի և Ա (21)-ից. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Գրիչ՝ Սարգիս սարկաւագ

բ

371ա Կատարեցս Արարածք ձեռամբ սուտանուամբ Սարգիս սարգաւաքին. Դճ (400) տուն է[10]։

Ստացող՝ Սարգիս

91ա Ձեղկելի Սարգիս ստացող գրոյս յիշել աղաչեմ։

540
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4288, տե՛ս նաև «ՀԱ» 1906 թ., էջ 176—177, ՁԹԱԻԱ, էջ 54, № 11

գ

92ա Քրիստոս Աստուած քո սբ. խաչին տուր զօրութիւն և յաջողումն ստացողի գրոցս Ջուղեցի Պօղոսին, և փրկեա զնա երևելի և աներևոյթ թշնամոյն, և իւր ծնօղացն և ամենայն յարեան մերձաւորացն, որ մեծաւ փափագանօք ետ գրել զայս սակաւ բանքս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյն։

Թվին ՌՀԹ (1630), մայիսի ԺԹ (10), օր[ն] հինգշաբթի[11]։

541
ԱՒԵՏԱՐԱՆ, ՃԱՇՈՑ
ՁՁՀՍ, № 54 (1358 թ.)

118 Յիշատակ է սբ. Աւետարանս Կուճուկենց մահտեսի Սարգիսին, և իւր կոզակցուն՝ Շախրային, և իւր դստերին՝ Սթըլպնաթին, ի Հալապ քաղաք, ի դուռն Ս. Աստուածածնին, յիշատակ անշինշ իւրեանց հոգւոյն, չունի ոք իշխանութիւն ծախել կամ գրաւել կամ ի Ս. Աստուածածնին եկեղե-

[9] 1630 թ. Զատիկը կըլինի մարտի 28-ին(հին տոմարով), Աշխարհամատրանը (Կանաչ կիրակի)՝ Զատկից երկու շաբաթ հետո՝ ապրիլի 11-ին, երկուշաբթի կլինի ապրիլի 12-ին։

[10] Ձեռ-ն ունի երկու գրչություն, առաջին մասը՝ էջ 2 ա—175 ա բոլորգիր է, երկրորդ մասը՝ էջ 176 ա— 371 ա նոտրգիր։

[11] Մեզ հայտնի տոմարական հաշվումներով 1630 թ. մայիսի 10-ը երկուշաբթի է, հինգշաբթին կլինի մայիսի 13-ին։

ցոյն առնել. եթէ ոք յանդգնի կամ վաճառէ կամ գրաւէ՝ ընդ Կաէնի և ընդ Ուդաի Սկարիովտացոյն դասի, այլ խնամ տանողքն և լաւ պահողքն օ[ր]հնին ի Աստուծոյ և ամենայն սրբոց. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ղմահտեսի Սարգիսի դուստրն ըզ-Սքբլպնաքն, որ ետ կազմել զսբ. Աւետարանս, և Աստուած ողորմի ասացէք իւր և իւր ննջեցելոցն և իւր կողակցուն՝ Պաղասարին, Յիսէֆի որդոյն և Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ գալուստն. ամէն։ Կազմեցաւ թվին ՌՀԹ (1630) յունիսի Ա (1), օրն հինգշաբթի[12]։

542

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Կամենից, էջ 180

Գրիչ՝ Ղազարոս
Վայր՝ Լով

Արդ՝ գրեցաւ երգըս Դաւթի,
Որ կոչի Սաղմոս Յակոբի,
Որ շարադրեալ յանդ ելան,
Հարիւր յիսուն փոխն ի տըմի։
Ձեռամբ տրուպ Ղազարոսի,
Որդւոյ պարոն Իվաշէոյի,
Առ դուռն Ննշման Աստուածածնի,
Լեհաց յերկրիս Լով քաղաքի։
Եւ ի յաթոռս հայրապետի,
Տէր Նիկողայոս [Թորոսովիցի],
Արհեպիսկոպոս Լովայ երկրի,
Եւ առաջնորդ նորին վիճակի։
Ի թագաւորութեանըն մեծի,
Երրորդ Զիկմունգ թագաւորի,
Ի վայելումն բարեհոգի,
Թուական անուն ճգնաւորի։
Որ այժմ եկեալ առ մեզ շրջի,
Պանդըխտութեամբ յայսմ երկրի,
Տացէ նըմա Աստուած բարի,
Զայս վայելել յերկար յերկրի։
Եւ յետ աստեացս նորին լիցի,
Յիշատակ սուրբ եկեղեցի։
Ի թուականիս մեր տումարի,
Հազար եօթանասուն ինն աւելի (1630),
Եւ յունիսի քսան և վեցի,
Շնորհօք Տեառն յաւարտ հասի։
Արդ՝ աղաչեմ արտասուալի,
Անմեղադիր լերուք գըրի.
Մանուկ տիօք զայս գըրեցի,

[12] 1630 թ. հունիսի 1-ը երեքշաբթի է, հինգշաբթին կլինի հունիսի 3-ին։

Երկոտասան ամաց էի։
Ո՛վ ընթերցողք այսըմ տառի,
Կամ օրին[ակ]ողքն այսըմ գըրի,
Միով հայցեմ Տէր ողորմիւ՝
Մի՛ մոռանայք զիս եղկելիս։

543
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3521 (1609 թ.)

Գրիչ՝ Մէրիկ դպիր

11ա Գրեցաւ սակաւ գիրս[13] թվին ՌՀԹ (1630), օգոստոս ամսոյ Ժ (10). օրն երեքշաբթի, ձեռամբ մեղաւոր Մէրիկ դպրի, որդի Նիկոլի, աղաչեմ յիշել ի Տէր։

544
ՄԱՇՏՈՑ
Մաշտոց, IV, № 1097

Գրիչ՝ Սահեփանոս
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

146 Փառք...։ Եւ արդ՝ ես անարգ և անպիտանս, անարժանս, ապիրատս... Սահեփանոս մեղսասէր քահանայ, անուամբս միայն եմ և ոչ գործովս, [շ]նորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զտառս աստուածայարմար, որ է կոչեցեալ Մաշթոց, ի գ[ե]օղաքաղաքիս Ջու-
147 ղա, ի յոտն Ս. Յակոբա[յ] Մծբնա[յ] հայրապետին, ի թվակա//նութեանս հայկազան տոմարիս ՌՀԹ (1630), ի հրոտից ամսամտին[14] աւարտեցի։

Անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս, երկու և երեք աշակերտի բան է, վասն այն ցեղէ ցեղ է, մէկ գրիչ չէ։ Ապա լա[ւ] լիակատար է սաղմոս և շարական, և ամենայն ինչ որ ցուցակն է, նա յամէն ի յետն գրած է։

Դարձեալ աղաչեմ զձեզ՝ եղբարք, որք հանդիպիք ի սմա, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զիս՝ անարժան զՍտեփանոսս, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ...։

բ

146 Ո՛վ եղբայր, այս վառ չորրորդ շարականս թէ գերեզմանն յերկար եղնի բանդ Աստուածին հետ ասա։ Տեղն ծուլացան, չի գրեցին, այս տեղս

[13] «Գրեցաւ սակաւ գիրս» արտահայտությունը վերաբերում է ձեռ-ի 1 ա—11 ա էջերում տեղավորված երկու ընդօրինակությանը։ Ձեռ-ի մնացած մասը ընդօրինակել է Սահակ սարկավագը ավելի վաղ. սրա հիշատակարանը տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում, էջ 330։

[14] Հայոց ՌՀԹ թվականը սկսվում է 1629 թ. հոկտեմբերի 15-ից (հուլյան տոմարով), այստեղից էլ հայոց 12-րդ՝ հրոտից ամիսը կսկսվի 1630 թ. սեպտեմբերի 10-ին և կտևի մինչև հոկտեմբերի 9-ը։ Գրչի, «ի հրոտից ամսամտին աւարտեցի» տեղեկությունը կհամապատասխանի 1630 թ. սեպտեմբերի 10-ին, ուրբաթ։

գրել տվի։ Աշակերտէրս դեռ տղէք են, կու ձանձրանան, թէ շարականն ինչու կու գրես։

Գ

Ո՛վ եղբարք, մէկ օրինակ կէր ցուցակն Նայեցարուք նշանց չէր տալ։ Յետոյ ուրիշ օրինակ բերի Երկինք պատմենին զբոլոր կանոն յիշէց. Նայեցարուկն այս տեղս գրեցի, յետն ասա։

Դ

147 [Ա]ղդ՝ աղաչեմ զձեզ... յորժամ օգտիք ի սմանէ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սբ. տառիս զՆաւասարդն, որ ստացաւ զսա ի հալեալ ճնչից իւրոց, յիշատակ իւր և հօրն՝ Սարգսին և մօրն՝ Զուլպին, և եբօրն՝ Աստուածատուրին, և միւս մօրն՝ Մարգարային, և քուրոջն՝ Հոռոմսիմին, և կենակցին՝ Մարիամին, և որդւոցն՝ Միքայէլին, Էմինին, Մինասին։ Եւ որ հանդիպի ի սմա և յիշէ զվերոյ դրեալ անուանքս՝ յիշեալ լիջի ի Քրիստոսէ...։

545

ՃԱՇՈՑ (1613 Թ.)

ՏՅԶԿՄՎ, № 24. տե՛ս նաև Կամենից, էջ 183, «ՀԱ» 1891 թ. էջ 75

24 Թվին ՌՀԹ (1630) սեպտեմբերի Ի (20), օրն երկուշաբթի, ի հայրապետութեան տեառն տէր Մովսէսի, եկաւ ի Լոռ նուիրակ տէր Խաչատուր վարդապետ սրբալոյս մեռոնաւն և զիս մեղաւորս Խաչատուր աբեղայս առաքեաց նուիրակ, սրբալոյս մեռոնաւն, ի յայս աստուածապահ քաղաքն Զամոսցա, և ի ժամանակս քահանայից տէր Յակոբին և տէր Անարէասին. որ և եկաք և հանգեաք ի տուն տէր Անարէաս քահանային. Աստուած զինքն փառաւորէ ի յայս կեանք և ի յաւիտենականս. ամէն[15]։

546

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3521 (1609 թ.)

Գրիչ՝ Տիրացու
Վայր՝ Հալաբ

Պահպանակ

Թվին ՌՁ (1630) նոյեմբեր է (7)[16] գրեցաւ աղօթքս ի մայրաքաղաքն Հալաբ և ես[17] Տիրացու տէր Բարսեղի որդի /// Աստուած աւհնէ զինքն։

[15] Ռոշքան այս մասին գրում է. «Յայսմ (1630) ամի գայ ի Լեռոյոլիս նուիրակ Մովսէսի կաթողիկոսի Խաչատուր վարդապետն Կեսարացի. որ մինչ արքեպիսկոպոսն (իմա՝ Նիկողայոս.) ընդդէմ կամաց նուիրակին հրամայեաց քահանայի իւրում ընթեռնուլ զԱւետարան. դարձեալ ի ժողովուրդն՝ անէծ զնա. որ զկնի արքեպիսկոպոսին ծնրադրեսցէս» (ժամանակագրութիւն, Վիեննա, 1964, էջ 174)։

[16] Հայոց ՌՁ տարեթիվը սկսվում է 1630 թ. հոկտեմբերի 15-ից (հուլյան տոմարով)։ Այստեղից էլ Հայոց ՌՁ նոյեմբերի 7-ը կընկնի 1630 թ. մեջ։

[17] Ձեռ-ում «ետ» ձևով։

547
ՃԱՌԸՆՏԻՐ
ՄՏՁԵՊ, IV, № 1110

Գրիչ՝ Սահակ
Վայր՝ Ջերմուկ

165 *Փառք...։ Արդ գրեցաւ[18] փրկական ս. Խորհուրդս պատարագի յաստուծայբնակ սբ. ուխտս Ս. Պարսամ սբ. եկեղեցս և Ս. Ապտրլմսեհ եկեղեցոյ և Ս. Նշանացս, որ աստ կան հաւաքեալ, ի* Ջերմուկ *քաղաքի, ի առաջնորդութեան* Մելքիսեթ *վարդապետի, ի թուականիս Հայոց ՌՁ (1630) ամի, և նոյեմբեր ամսոյ ի Ժ (10)[19]։ Զոր և ես մեղսաթաւալ ոգի,* Սահակ *աշակերտի և բանիս ծառայի սպասաւոր, ըստ իմում կարի գծագրեցի զսա, ի վայելումն նորընծայ տէր* Նիկողայոս *երիցուն* Ըստամպալցուն, *և յիշատակ ծնաւղաց իմոց հոգևորաց և մարմնաւորաց հաւրն մերոյ և ծնօղաց իմոց։...*

Դարձեալ ծանիք հոգևոր եղբայրք, որ այս խորհրդատետրս խիստ լօ աւրինակ է, ի Պետրոս *կաթողիկոսին օրինակն է, արարողութիւն և տնատութիւն է, այլ և այլ չէ առնէք։*

548
ԺԱՄԱԳԻՐՔ
Կամենից, էջ 183

Գրիչ՝ Մերիկ դպիր

*Ո՛վ եղբարք իմ սիրելի, յիշեցէք զթերավարժ գրչակս զ*Մերիկ *դպիրն, որդոյ* Նիկոլին. *և անզարդութեան գրոյս անմեղադիր լերուք...։ Գրեցաւ թվին ՌՀԹ (1630) դեկտեմբերի Ժե (15), օրն վեցշաբթի[20]։*

549
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 837

Գրիչ՝ Գոհար
Վայր՝ Աւրնդանց

ա

158բ *Գրեցաւ Կանոնագիրքս ձեռամբ[21] ի թվականիս ՌՀՁ (1627) դառն և ի նեղ ժամանակիս. յիշեցէք ի Քրիստոս զծնողս և Աստուած ողորմի ասացէք. ամէն։*

---

[18] *Ձեռ-ը 1355 թ. գրչութիւն է. սույն հիշատակարանը վերաբերում է նույն ձեռ-ում միայն խորհրդատետրի 1630 թ. ընդօրինակությանը։*

[19] *Տոմարական մեր հաշվումները տես՝ 16-րդ ծանոթագրությունում։*

[20] *1630 թ. դեկտեմբերի 15-ը ոչ թե ուրբաթ է (վեցշաբթի), այլ չորեքշաբթի, ուրբաթը կլինի դեկտեմբերի 17-ին (ԺԷ)։ Գուցե տպագրական սխալի պատճառով ԺԷ-ն (17) տպվել է Ժե (15)։*

[21] *Մեկ տող բաց է թողնված։ Գրված է գրչի կողմից։*

Բ

292ա Փառք..., որ ետ կարողութիւն անարժան և անիմաստ գրչի Գօհարին[22], հասանել ի յաւարտ տառիս, որ կոչի Կանոնգիրք, քանզի ունի գիրքս այս գրեալ ի յինքն բովանդակ զսահմանք և զկանոնք սբ. հարցն մերոց. սրբոյն Թադէոսի առաքելոյն ասացեալ հարցմունք և պատասխանիք, և Փիլիպպոսի առաքելոյն, դարձեալ սբ. ժողովոյն որ ի Նիկիայ, սրբոյն Աթանասի հայրապետին հարցումն և պատասխանի, տեառն Յոհաննու ի խնդրոյ սրբոյն Բասղի վասն պէսպէս ախտից, հարցումն Արձանայ և պատասխանի Եզնակայ Կողբացւոյ Հայոց վար-
292բ դապետի, Կղեմայ հայրապետին, և սրբոյն// Գրիգորի Պարթևի Հայոց լուսաւորչի սահմանք և կանոնք վասն մեղաց, և դարձեալ Ներսակայ հայրապետի, սրբոյն վարդապետին Դաւթայ, որդւոյ Ալուկայ, որ վասն մկան անկանելոյ և այլ բազում կանոնք վասն պէսպէս մեղաց մարդկան։ Դարձեալ յաղագս ազգականութեան արարեալ հոգելից առն Յակոբ վարդապետի Ղրիմցւոյ, ի խնդրոյ Թումայ վարդապետին, աստուածաբնակ սբ. ուխտին Մեծոփայ վանից, և այլ սրբոց հայրապետաց և վարդապետաց կանոնք որ աստ կան հաւաքեալ։ Զի սովաւ ապաշխարեն մարդիկք և դառնան ի մեղաց իւրեանց և լուսաւորեալ արդարանան շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

293ա Եւ արդ՝ ես ունայնս ի բարեաց գործոց մեղապարտ // գծող Գօհարիկ, որ ձայնիւ բարձրացեալ և հոգւով կորացեալ ըստ իմ տկարութեանս դրեցի զսբ. գիրքս ի յընտիր և ի ստոյգ օրինակէ, կենօք տառապանօք և դառնութեամբ լի յամենայն կողմանց ցնորիւք պաշարեալ, ի թվականիս Հայոց Ռ և ի ՀԹ (1630) ամին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւն լնուք և խոշորութեանց և սխալանացս անմեղա-
293բ դիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երեսս ի գետին դնելով // աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք անարժան գծողիս՝ Գօհարին և ծնողաց իմոց՝ Կիրակոս վարպետին և Մրաքին, որ բազում աշխատութեամբ արարին զիս գրագիր, և եղբօրն իմոյ՝ դեռաբոյս Մուսէսին, և քրւերն իմոյ՝ Գօզալին, և Մրջանին, և ամենայն ազգականաց իմոց՝ կենդանեաց և մեռելոց. ամէն։ Շնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. կանոնք գիրքս ի յերկիրս Մայեկաց, ի գեօղս որ կոչի Աւրնդանց, ոնդ հովանեաւ Ս. Երեք խորանացս՝ Սրբոյն Պետրոսին և Պօղոսին և Սրբոյն Գէորգեա[յ] զօրավարին, որ է արևելեան կուսէ հանդէպ Ապարանից Ս. Նշանին։ Վասն որոյ կրկին անգամ աղաչեմ զձեզ լալով և կողկողագին
294ա պաղատանօք, յի//շեսջիք զիս զանարժան գծողս և զծնօղս իմ և զամենայն արեան մերձաւորքն իմ, ևս առաւել զտէր Սարգիս Հիզանցին, զվարպետաց

[22] Հիշատակարանում երեք անգամ ենք հանդիպում գրչի անվանը, երեք դեպքում էլ անունը գրված է աշ և ձախ լուսանցքներում միևնույն ձեռագրով։

վարպետն, որ շատ աշխատանք քաշեր է հետ իմ հօրն՝ ի կարդացնելն, ի գիր և ի ծաղիկ ուսուցանելն, զոր ինքն Քրիստոս Աստուած վարձահատոյց լինի նմա յիւր միւսանգամ գալստեանն։ Եւ լսել տայ զերանաւէտ ձայնն որ ասէ. «Եկայք աւրհնեալք հաւր իմոյ ժառանգեսցէք»[23]։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս[24]։

550
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ

Երևան, № 1191

Գրիչ՝ Սարգիս Պալախօրցի

ա

227ա Փառք...։ Որո[յ] աւգնութեամբ նորին սկսեալ և ի գլուխ իս յաւարտ հասեալ ըստ գրչութեան այսմ աստուածային մատենիս, զոր Հոգին Սր. իբր կըտընդոցիւ առ քնար. հնչեցուցանէր լեզուաւն Դաւթի կատարելապէս զամենայն խորհուրդս տնաւբէնութեանն, բոլոր լիապէս իսկ բերէ յինքեան զմատեանս այս։ Զի երշան[իկ և յօգ]նաշան վաստակաւորքն
227բ տեառն և տիեզերալոյս սբ. [վարդապետ]քն Եպիփան և Յոհան // Ոսկիաբան, Բարսեղ, Եփրեմ և Դանիէլ խորհրդաբար բացուստ յայտնեալ մեկնողական բանիւք առ ի հաստատութիւն եկեղեցո[յ] սրբո[յ]։

բ

228ա Արդ՝ դրեցաւ սբ. մատեանս Դաւթի ի թվականութեանս Հայոց ՌՀԹ (1630), ձեռամբ անարժան և անիմաստ, սուտանուն, թափուրս ի բարեաց... զՍարգիսս Պալախաւրցի։

Ո՜վ վարդապետք սբ. և բարի,
Եւ պուետիկոսք մեծ բարունի,
Յորժամ կարդայք զսբ. մատեանս,
Որ երգարան է մեծի Դաւթի։
Ցիշման առնէք զիս արժանի,
ԶՍարգիսս Պալախաւրցի,
Զսևացեալ մեղաւք հոգի,
Եւ գունակցեալ այծից նմանի։
Ի յահել աւուր մեծի,
Յորժամ գործիք մարդկան յայտնի,
Ուր ամենայն բանք սպառի,
Լեզուս ճարտար անդ պապանձի։
Ի հարցնել դատաւորի,
Ոչ ունենամ պատասխանի,
Յայն ժամ հայիմ ողորմելի,
Զաչերս ածեմ արտասուալի։
Լամ ւ հառաչեմ կողկողալի,
Յողորմածացն ոք չողորմի...։

[23] Մատ. ԻԵ, 34։

[24] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է, թեև էջի կեսը դատարկ է։

Գ

Ստացող՝ Խաչատուր երէց

227բ Ես՝ Խաչայտուր երէցս գրել տվի Մեկ[ն]չիս ի հալալ ընչից իմոց։ Եւ հարն իմ՝ մահդասի Խաչերես և մայրն իմ՝ Խաթունիկն, և մուս մայրն իմ՝ Թուրվանտայն, և եղբայրն իմ՝ զտէր Գրիգորն, և զՍարգիսն, և Նարիման, և իւր կողակիցն՝ Մարդայն, և Զայաթն և ամենայն արեան մերձաւորս յիշման արժանի առնէք...։

Դարձեալ յիշեցէք քուրն իմ՝ Շահմանատն. ամէն։

551
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 1602

Գրիչ՝ Նիկողոս
Վայր՝ Ստամբոլ

ա

356ա Փառք...։ Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զփծուն և զանարհեստ գրիչս զՆիկողոս սուտանունս և զյուսուցիչն իմ զՅակոբ տիրացուն, աղաչեմ զձեզ յիշել առ Քրիստոս։

Արդ՝ գրեցաւ Շարակնոցս թվին ՌՀԹ (1630), ի քաղաքն Ըստամ-
356բ բոլ, որ այժմ // կոչի Բուզանդիայ, ընդ հավանեաւ Ս. Սարգսի զաւրավարին և որդւոյն նորա Մարտիրոսին։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զիս ըզյանարժան գրրիչս, զծնաւղքս իմ և զազգականս՝ զկենդանիքս և զհանգուցեալս և ինքն Աստուած...։

Բ

128ա Եւ ապիկար գրչի Նիկողոսի ողորմի ասացէք։

Գ

283բ Եւ եղկելի գրչի Նիկողոսի[25]։

552
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, №1991 (ԺԵ դար)

Նորոգող, կազմող՝ Սարգիս
Վայր՝ Կարմունջ

344ա Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին վերստին նորոգեցաւ և կազմեցաւ յոգիաբուխ աստուածային մատեանս այս՝ արտաքին գրոց լուծմունքս, ի թվականիս Հայոց ՌՀԹ (1630) ամի, ի գեւղս Կարմունջ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին. ի յառաջնորդութեանն այսմ նահանգի տէր Յոհաննէս քաշ բաբունապետի և աստուածաբան վարդապետի։ Որ և ըստացաւ զսա իւրն յիշատակ բարի և ետ վերստին նորոգել և կազմել, յիշատակ իւրն և ծնաւղացն, հօրն՝ տէր Յովանէս ծերունի պատուական քահանային և մօրն՝ մահ[տ]ասի Զմրուքին, և այլ ամենայն ազգատոհմիցն և աշակերտեալ բանի սպասաւորացն. ամէն։ Արդ՝ որք

[25] Նման հիշատակարան տե՛ս նաև ձեռ-ի 224 բ էջում։

հանդիպիք յայսմ տառի կարդալով կամ գաղափար առնելով, աղաչեմ յիշել ի Քրիստոս զ[յ]իշման արժանին զՅոհաննէս քաշ բարունին իմ, հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնողիւքն և դուք յիշողք աւրհնեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Ընդ նմին և զիս զանարժանս զՍարգ[իս] կրաւնաւորս հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնաւղիւքս, յիշել ի Քրիստոս և մեզաց թողութիւն հայցել. որոյ հարկել ի հրամանէ նորին յանձն առեալ նորոգեցի և կազմեցի յիշատակ Յոհաննէս աստուածարան վարդապետին, հօրն՝ տէր Յովանէս քահանային և մօրն՝ մահդասի Զմրութին, և դուք յիշողք և մեք յիշողքս յիշեալ լինիմք ի Քրիստոսէ...։

553

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 2062

Գրիչ՝ Սարգիս գպիր
Վայր՝ Կաֆայ

ա

254ա Փառք...։ Արդ՝ եղև աւարտ գրչութեանս՝ ի թվականիս Հայոց ՌՀԹ (1630) ամի, ի ձեռս Սարգիս դպրի, ի մայրաքաղաքն Կաֆայ, ի դուռն Ս. Սարգսի, յիշատակ մահդասի Լաչինի, ի ձեռն Խաչատուր վարդապետի։ Տէր մեր Յիսուս Քրիստոս մեզ և ձեզ ողորմի.։ ամէն...։

բ

Ի յաւրինակն թուղթ և դէմ մի պարապ կայր։

գ

50ա Աւգնեա՛ Յիսուս Սարգիս գծողիս[26]։

դ

180ա Մի՛ մեղադրէք, ո՛վ եղբարք, աւրինակ այդչափ տեղ բաց ունէր։

ե

250բ Եւ զբազմամեղ գծողս զՍարգիս համբակ բանիս յիշեա՛։

զ

269ա Ընդ նմին և զիս զանարժան Սարգիս գծողս և զուսուցիչն իմ յիշեա։[27]

է

Գրիչ՝ Մարտիրոս

254ա Սակաւ ծրողս Մարտիրոս յիշեա՛։

554

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 2468

Գրիչ՝ Օհան
Վայր՝ Աւրնգանց

253ա Փառք..., որ ետ կարողութիւն անարժան և անիմաստ գրչի հասանել ի յաւարտ աստուածախաւս և լուսազարդ տառիս կոչեցեալ Սաղմո-

[26] Այս տողը գրված է կարմիր մելանով։
[27] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 256 ա, 328 ա, 367 ա, 391 բ էջերում։

սարան, ի թուականիս Հայոց ՌՀԹ (1630) ամին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսա-
253բ նելով զաւելորդն բառ // նայք և զպակասութիւն լնուք և խոշորութեանց և սխալանացս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երեսս ի գետին դնելով աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք անարժան գծողիս Օհանին[28] և ծնողաց իմոց Կիրակոս վարպետին և Մուաթին, որ բազում աշխատութեամբ արարին զիս գրագիր, և եղբօրն իմոյ՝ Մուսէս սարկաւագին և քրւերն իմո[յ]՝ Գօզալին և Մրջանին, և ամենայն ազգականաց իմոց՝ կենդանեաց և մեռելոց. ամէն։

Շնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ.
254ա // գիրքս, որ կոչի Սաղմոսարան ի [յեր]կիրս Մայեկաց, ի գեօղս որ կ[ոչի] Աւրնղանց, ընդ հովանեաւ [Ս.] Երեք խորանացս՝ Ս. Պետրոսի և Պօղոսի և Ս.[Գէ]որգեայ զօրավարին, որ է արև[ե]լեան կուսէ հանդէպ Ապարանից Ս. Նշանին։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հարք և եղբարք իմ, յիշեցէք ի Քրիստոս[29] և Աստուած ողորմի ասացէք նմա, որ ստացաւ զՍաղմոսարանս ի հալալ վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց[30] և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

555

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2619

Գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ

Վայր՝ Հալապ

ա

222բ Փառք...։ Ի թվականութեանս հայկազեան տումարիս ՌՀԹ (1630), ի հայրապետութեանն տեառն Մովսէսի և ի թագաւորութիւնն Կոստանդիանոյպօլսի սուլտան Մուրատին, ումն յերկրէն Խարբերթու, անուանեալ Առիստակէս վարդապետ, ուսեալ և հմուտ եղեալ Հին և Նոր Կտակարանաց, եկեալ ի մայրաքաղաքս Հալապ վասն Երուսաղէմ գնալոյ և ժամանակ ինչ աստ կեցեալ քարոզէր զբանն սբ. Աւետարանի ի լսելիս հաւատացելոց։ Եւ տեսեալ զպատմագիրս զայս, զոր արարեալ է սբն. Եպիփան Կիպրացին և ցանկացեալ սմա. վասն որոյ մեծաւ փափագանօք ետ գրել ինձ՝ Աստուածատուր սարկաւագիս զսբ. պատմագիրքս և զլուծմունս, զոր արարեալ է Վարդան վարդապետի և այլ սբ. վարդապետաց, որ լի և անթերի ունի զպատմութիւն ժամանակաց և զտնօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յիշատակ իւր և ծնողաց իւրոց տէր Կիրակո-

[28] Գրչի անունը ձախ լուսանցքում. հմմտ. № 550 բ հիշատակարանի հետ։

[29] և [30] Ստացողի և ծնողների անունները չի գրված, մեկական տող բաց է թողնված։

սին և Հռեփսիմէ, որ մականուն Կուլքան կոչի։ Արդ՝ աղաչեմ զեղբայրդ մեր զամենեսեան և զուսումնասէր զքահանայդ և զքահանայապետդ, որք հանդիպիք այս սբ. դրոցս ընթեռնելով կամ օրինակելով, յիշեսցիք
223ա ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյ ասացեալ զտէր Առիստակէս // վարդապետն, և զեղբայրն իւր՝ զՎրդանէսն, և զնորա կենակիցն՝ զՄուղալն, որ հանգեաւ ի Քրիստոս, որ ետուն գրել զսբ. դիրքս յիշատակ յիւրեանց և ծնողաց իւրեանց տէր Կիրակոսին և Հռեփսիմէին, և եղբարցն իւրեանց՝ Ըստեփանոսին, Խըտրշահին և Յուսիկին, և այլ ամենայն արեանառու մերձաւորացն և Աստուած ողորմի ասողացն. ամէն։

Եւ դարձեալ յիշեցէք զդծողս սորա Աստուածատուր սարկաւագս և զծնօղսն իւր՝ զկօշկար Միրաքն և զՄարիամն, և այս սբ. գրքիս թուխթ կօկողն՝ զՄուրատն, որ խիստ աշխատեցաւ, և լի բերանով ողորմի մի ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Բ

14բ Զմեղապարտ Աստուածատուր դպիր սարկաւագս յիշեցէք ի Քրիստոս։ Թվին ՌՀԹ (1630) ամին։

Գ

Յիշեցէք զտէր բարունապետ Արիստակես վարդապետն ստացողի
3ա սորա. //փրկութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Եւ դարձեալ յիշեցէք զանարժան գրծողս սորա Աստուածատուր դպիր սարկաւագս և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Դ

210բ Ընդ նմին և զլոյսն վարդապետն Վարդան զյայտնիչ խորոց բանից և զանպիտան գրիչս Աստուածատուրս սարկաւագ, և զծնօղս իմ զՄարիամ և զհայր կաւշկար Միրաքն յիշեցէք ի Քրիստոս։

Ե

209ա Ընդ նմին և զտէր Արիստաքէս վարդապետն յիշեայ ի Քրիստոս և զմեղուցեալ գրիչս՝ զԱստուածատուրս սարկաւագ յիշեա[31]։

556

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 2630 (1290 թ.)

Նորոգող, կազմող՝ Զաքարիայ երէց

ա

285ա Զիմաստուն և զհեզահոգի.... խօճա Յովհաննէսն և ծնողսն իւր, որոյ երաց Տէր զաչս նորա, լսել տէրունական հրամանին, որ ասէ. «Գանձեցէք զձեզ գանձ յերկինս...»[32]։ Նոյնպէս և սա յիշելով զբանս տէրունական, ինքնայաւժար կամաւք ետ կազմել զսբ. Աւետարանս զայս ի յարդարա-

31 Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 177 բ, 181 ա և այլ էջերում։

32 Մատթ. Զ, 20։

ժողով վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր ծնողացն, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց...։

Նաև զխոճա Պարոնն յիշեցէք ի Տէր հանդերձ ծնողիւքն, զի և սա մասնակից եղև տրրաւք ի նորոգումն սբ. Աւետարանիս, հայցեմ ի ձէնշ յիշել ի սբ. աղաւթս ձեր և խնդրել մեղաց թողութիւն...։

Կազմեցաւ սբ. Աւետարանս միջնորդութեամբ տէր Աւգսէնդ քահանային և տէր Գրիգոր քահանային, զոր տէր Աստուած տացէ զվարձս բարեաց աշխատողացն արժանապէս և նմա փառք յաւիտեանս. ամէն։

Բ

Թվին ՌՀԹ (1630) վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս և կազմեցաւ ձեռամբ ամենամեղ գրչի Զաքարիայ իրիցու։

557

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Երևան, № 2865 (ԺԴ դար)

Գրիչ՝ Կարապետ Բաղիշեցի

ա

312բ Այս են կարգ վարդապետաց մերոց, որք զառաջինք ոչ ճա[ռ]եցից, բայց սկիզբն մերոյ վարդապետութեան ասացից. Տաթևացին նախ, նորին աշակերտն Դանիէլ, Յովանէս Համշենցին, Գրիգոր յԱրնշոյ, որ մականուն Զորքան ասի, նորին աշակերտն Ներսէս, որ Մատաղն ասի, նորին աշակերտն Ներսէս Բաղիշեցին, նորին աշակերտն Ներսէս Ամկեցին, նորին աշակերտքն Յովան Ոստանցին, ի գեղջէն Վառնուշտա և Ազարիա ի Հայոց Մեծաց, ի գեղջէն Շանկերտոյ մերձ ի քաղաքն Նախչուանայ, իսկ աշակերտքն Յովանսին՝ Սիմոն Ապարանցին և Բարսեղ Գաւառցին, քանզի ի սմանէ սերեցան վարդապետութիւն Արևելեանքս։

Դարձեալ նոր սկսայց ի Յովանէս Համշենցին, նորա Բ (2) անուանի աշակերտքն՝ մին Գրիգոր Զորքան, որ Արևելեանքս ի նմանէ են և Արևմտեանք[33] Թորոս վարդապետն, նոյն Հա[մ]շեցու աշակերտն, Թորոս վարդապետի աշակերտն Գրիգոր Տարոնացին, նորին աշակերտն Յովանէս Շիրաքն, նորին աշակերտ Ղուկաս էր ի Խորձիանեաց գաւառէն։ Նորին աշակերտքն Պետրոս Կառկաոցին և Սրապիոն Ուրհայեցին, որ եղև կաթողիկոս սբ. աթոռոյն էջմիածնա՝ ամ մի և Զ(6) ամիս և փոխեցաւ առ Քրիստոս։ Այլ և նորին աշակերտն Բարսեղ, որ է ի Սասնոյ Ինշ գաւառէն, ի գեղջէն որ ասի Մարմանդ։ Ես նուաստ Կարապետ բանի սպասաւոր Բաղիշեցի ի գեղջէն Փարխանդոյ, զոր լուաս ի պատմագրացն և զորն աչօք մեր տեսաք, քանզի ոչ էին նուազ յառաջին վարդապետացն, այլ գերագոյն քան զառաջինք, զոր ոչ գրեցի զվարք և զառաքինութիւն սոցա ի շփոթմանէ մտացս։ Թվին ՌՀԹ (1630)։

Բ

Այլ և Բ(2) անուանի վարդապետ այլ գրեցից՝ Յովանէս Անթաքցին, որ է կաթողիկոս Կիլիկեցոց և Գրիգոր Ղայսարցին յԱռաջին Հայոց,

[33] Խոսքը վերաբերում է Արևելյան և Արևմտյան Հայաստանին։

բանիբուն և սիրող իմաստասիրական հանճարոյ և է յոյժ բարկող։ Յովանէս ի մերոյ Ներսէ[ս?]եանցն է և Գրիգոր՝ ի Թորոսի աշակերտացն է։

558
ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երևան, № 3082 (1267 թ.). տե՛ս նաև № 9027, էջ 4 բ, Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» հտ. Ա, № 734, էջ 205 ար

Նորոգող՝ Քանանայ
Վայր՝ Առաքելոց վանք

478ա Նորոգեցաւ սբ. գիրքս, որ կոչի Տաւնապատճառ արարեալ սրբոց վարդապետաց և հայրապետաց Հայոց, առ ի բացայայտել զպատճառ տօնից տէրունականց և ամենայն սրբոց յիւրաքանչիւր տաւնից նոցա, ձեռամբ փծուն գրչի, նուաստ Քանանայի, յիշատակ տէր Բարսեղ վարդապետին վերադիտողի Համիթ մայրաքաղաքի, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և հոգևոր ծնաւղին իւրոյ և ուսուցչին տէր Սրապիոն վարդապետին, որ եղև կաթողիկոս և անուանեցաւ Գրիգոր, և մարմնաւոր ծնաւղացն, եղբարցն, քվերցն և ամենայն արեանառու մերձաւորացն։ Եւ եդ յիշատակ ի գուռն Ս. Առաքելոցն։ Որք հանդիպիք սմա տեսութեամբ ընթերցմամբ և կամ աւրինակ դնելով Աստուած ողորմի ասացէք։ Յիշեա՛ Տէր, Յիսուս գթա՛յ, Քրիստոս քաւեա՛ զձեռագիր յանցանաց վերո դրելոցս ի սմա, Բարսեղ վարդապետին և ծնաւղաց նորին, և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած յիւր միւսանգամ գալըստեանն...։ Եւ մի՛ ոք յանդգնի հանել զսա ի դրանէ Ս. Առաքելոցն ծախելով, գողանալով կամ գրաւ դնելով՝ ոչ ի մերոց և ոչ յաւտարաց։ Եւ թէ ոք յանդգնի՝ զմասն Կայենի և Յուդայի և խաչհանուցն առցէ...։ Կազմեցաւ տառս ՌՀԹ (1630) թուին, ի հայրապետութեան տէր Մովսէս կաթողիկոսին։

559
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 6152

160բ Գրեցաւ ի թուին ՌՀԹ (1630), յիշատակ տէր Սահակին և իւր ծընողին. ամէն։

560
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6664

Գրիչ՝ Գասպար Երէց
Վայր՝ Ասպահան

ա

305ա Փառք..., // որ ետ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տառիս այս, մարգարտաշար և վարդափըթիթ բուրաստանիս, որ է սա ընտիր օրինակէ, որ և գրեցաւ սայ ի յերկիրս Ասպահան, ձեռամբ ոգնա-

305բ մեղ և անարժան, սուտանուն Գասպար իրիցիս և իմոյ աշակերտին Աստուածատուր Մ[ա]նուկ կոչի, որ և զանունս միանայն ունիմ և գործս ոչ, յիշեցէք ի յերկնարացիկ յաղօթս ձեր զեղկելի գրողս, զի և բազում աշխատութեամբ գրեցի զսա, յիշեցէք ի սբ. աղօթս ձեր...։

Գրեցաւ ի թվականիս մերոյ ՌՀԹ (1630), և ի թագաւորութեանն շահ Սաւոյն։ Ո՛վ մանկունք սբ. յեկեղեցոյ, քահանայք և սարկաւագունք, յորժամ ընթեռնոյք զսբ. Աւետարանս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սբ. տառիս զհեզահոգի և զբարեմիտ Գրիգորն, որ ետ գրել[34] զսբ. Աւետարանս շերմեռանգ սիրով և սերտ հաւատով սը[35]

Բ

245բ Փառք...։ // Արդ՝ յիշեցէք բարեմիտ Ովանէս դպիրն, որ ստացաւ զսբ. Աւետարանս յիշատակ իւր և իւր ծնողաց. ամէն[36]։

561

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6757

Գրիչ՝ Զաքարայ
Վայր՝ Վան

339բ Փառք...։

341ա Ուստի և տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ աստուածասէր և հաւատարիմ մահդասի Կիրակոսն և ցանկացող եղեալ այս աստուածախաւս սբ. Աւետարանիս և ետ գծագրել զսա ի հալալ և ի քրտնաշան վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Յակոբին և մաւրն՝ Թուրանդին, կողակցին՝ Ղարիպխաթունին, որդոցն՝ Յակոբին, Թումին, միւս կողակցին՝ Նուբարին[37], եղբօրն՝ տէր Յովանիսին, կողակցին՝ Խանումին, որդոցն Կարապետին և միւս Կարապետին, Աւետիսին և միւս Աւետիսին, Զաքարին, քուերցն՝ Մարգարտին,
341բ Գայիանին, Գոհար խաթունին, Աբրհամին, կողակիցն՝ Խա//նումին, որդոցն՝ Յոհանիսին և Սահակին, Առաքելին կողակցին՝ Խանգագին, որդոցն՝ Յակոբին և Մուրատին, քուեր Մարգարտին և Յամասլթանին, Աստուածատուրին, Խլդաթին, մեծ պապուն՝ Կարապետին, կողակցին՝

---

[34] Գրիչը ձեռ-ի «Գրիգորն որ ետ գրել» բառերը շնչել է և Ավետարանը վաճառել Ովանես դպիրին։

[35] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է ձեռ-ից թերթ ընկնելու պատճառով։

[36] Նման մի հիշատակարան էլ գտնվում է ձեռ-ի 246 ա էջում։ 306 բ էջում պահպանվել է նաև հետևյալ հիշատակարանը.
«Մենք Եկիտասգա[ն]ցու ժողովուրդ՝ մեծ և փոքր առինք զսբ. Յաւետարանս յիշատակ մեր և ննջեցելոց մերոց, և տուինք վախմ Ս. Հռեփսիմին։ Ով կարդա Աստուած ողորմի ասէ իւրեանցն. ամէն։

Դարձյալ յիշեցէք Եկդասանցու ժողովուրդն, որ այլ մարդոյ դաւի կամ խաւաք ասի սբ. Աւետարանիս կամ ծախէ կամ կրաւէ, նզովեալ եղիցի սբ. Աւետարանիս և ԺԲ (12) առաքելոցն. ամէն»։

[37] Գրված է «որդոյն Նագարին», բայց հետո շնչված է։

Խաղբրվարդին, *որդոյն՝* Սահակին, *կողակցին՝ զինչ անուն և իցէ, որդոցն՝* Թումին, Պետրոսին, Կիրակոսին, *հօրեղբօր* Մուրատին, *որդոյն՝* Ղարիպ-ջանին, Կիրակոսին, *որ ինքն է տուեր դրել զաստուածախաւս սբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և այլ ամենայն արեան մերձաւորաց նորին...*[37] *։*

343ա *Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց և անարժանս ի կարգաւորաց, սոսկանուն քահանայ* Զաքարայ, *տեսի զսէր և զփափագ սորա, զոր ունէր առ հոգևորն և իմոյ իսկ տկարութեամբս յանձն առի և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսա մեղսամած մատամբ իմով ի մայրաքաղաքս* Վան, *ի դուռն Միրանաւոր Ս. Աստուածածնին, ի յոտն* Վարագայ *աստուածընկալ Ս. Նշանին, ի հայրապետութեան տեառն* Մովսէսի *էջմիածնայ կաթողիկոսին, և ի մերումս* Աղթամարայ *Ս. խաչի* Ստեփանոս *կաթողիկոսի, զոր տէր Աստուած սոքա անդրդուելի և հաստատուն պահեսցէ ի վերայ իւրեանց պատուական սբ. աթոռացն, ի թուա//կանիս մերում*

343բ *ՌՀԹ (1630) ամին։ Զոր և իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բաղում մեղացն ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի իմում, զոր շնորհեաց ինձ մարդասէր Հոգին բազում աշխատանօք գծագրեցի զսա ի ստոյգ և յընտիր աւրինակէ. կենաւք տառապանօք և բազում տրտմութեամբ ի դառն և ի վաշտալից ժամանակիս, որ աշխարհս ամէն ի տրտմութիւն և յերերմանի կայ ի ձեռն այլազգեաց ի յիմ մեղաց, որ չեմ արժանի զերկինք տեսանել կամ զաստուածային գիրք գրել կամ ընթեռնուլ, միթէ արարիչն Աստուած մեզ դարձ շնորհէ և անտես չառնէ, աշխարհիս խաղաղութիւն պարգևէ և բարեաց լիու[թիւն]...*[38]*։*

562

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 6964 (1497 թ.)

339ա *Գիրգս որ Մաշտոցս, որ է քահանայթաղի. յիշատակ տէր* Պետրոսին, *որ ըստացօ յիշատակ ի հալալ վաստակոց իւրոց և ծնօղաց, հաւրն՝* Յոհանին *և մօրն* Եղիսին, *և եղբարցն՝* Մարտիրոսին, *և* Պողոսին, *և* Հեռայպետին, *և* Շաղոաթին, *և քրւերցն՝* Անանային *և* Սառային, *և հարսին՝* Շուշանին, *և որդոյն՝* Շաղոաթին, *և որդոյն՝* Յոհանին, *և եղբօրն՝* Պողոսին, *և հօրեղբօր որդոցն՝* Սահակին, Սարգսին, *և եղբօր* Խարիպին, *և քրւերցն՝* Մարեամին, Զոհալին, Սալամին, Մեհրուպանին, Անանային, Եթարին. *ամէն։*

339բ *Դարձեալ յիշեցէք զ*Պետրոս *և կողակիցն՝* Պէկուն, *և որդոյն՝* //Զրաղին, Յովանէսին, Բարսեղին, Կար[ա]պետին, *և* Սալամին *և* Շուշանին. *ամէն։...*

Ի թվին ՌՀԹ (1630) ամին Մաշտոց Սիս *առ Զ(6) ֆռակսայ։ Տոմարում այլ պիտի գրէ ու տայ։*

Դարձեալ յիշեցէք զտէր Պետրոսի *քեռին զ*Օեսիս, *զտէր* Յոհանէսն *և* Սարգիսն, Մխիթարին, *տէր* Յովասափին, *տէր* Յովանէսին, Մկրտիչին,

---

37 = Թվում է վերևում նշված անունները։

38 Երկրորդ անգամ թվում է վերևում հիշված անունների մի մասը։

Սիմոնին: Դարձեալ յիշեցէք Շանգատէն և Շուշան. ամեն։ Եւ Աստուած ողորմի ամենու հոգոցն. ամէն։

563
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7969

Գրիչ՝ Մարգարայ երէց
Վայր՝ Կոդպ

ա

278ա Փառք...։ // Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի գլուխ որ կոչի Կոդպ, յառաջնորդութիւնն Կիրակոս եպիսկոպոսին, կաթողիկոսութիւն տեառն Սովսէ[ս] վարդապետին, խանութիւնն Յեկանբէկին, դառն և նեղ ժամանակի, որ տրտում է աշխարհս տարտարոսի, յոյս Աստուած ունիմք, որ փրկէ զմեզ։ Գրեցաւ ձեռամբ զՄարգարայ իրիցոյ, ի թուականս ՌՀԹ (1630), որ միայն զանուն և ոչ գործ։ Վա՜յ մարդոյն որ յանուն մեծ է քան զգործք։

բ

Ստացող՝ Գրիգոր քահանայ

Արդ՝ ես զտէր Գրիգոր քահանայս վերըստին գրել ետու, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւ[ր]ն իմոյ՝ Թորոսին և մաւրն իմոյ՝ Թուրվանդին, և կողայկիցն իմ՝ Հուռոմսիմին, և դստերացն իմոյ՝ Մարգարային, Սէտիխանին, Յեթարին, և Բ(2) եղբարցն իմոյ՝ Հերայպետին, Վարդանին,
278բ հօ[ր]այքուրն իմոյ՝ Մարգարային, և զաւքանչն իմոյ՝ Յղիսափեթին, // հաւրեղբայրն իմոյ՝ Կիրակոսին և կողայկից նորա Շնանաւորին, իմ պապ Սարգսին և կողայկից նորա Սոլթանին. ամէն։ Ո՛վ տեսանէք կամ աւրինակէք կամ կարդաք, յիշեցէք զմաքրափայլ աղօթս ձեր և Աստուած զձեզ յիշէ...։

564
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 8009

Գրիչ՝ Զաքարիայ աբեղայ
Վայր՝ Կաֆայ

267բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Շարակնոցս ի քաղաքն ի Կաֆայ, առ յոտն Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, ի թուականս Հայոց ՌՀԹ (1630)-նին, ձեռամբ մեղաւոր և անիմաստ Զաքարիայ աբեղային[39]։

[39] Թվում է, թէ մեկ ուրիշը «աբեղային» բառի սկզբում ավելացրել է «հ» և «հաբեղային» բառի տակ գրել «ի դուռն Ս. Յարութեանն»։

565
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ
Երևան, № 9715

Գրիչ՝ Գրիգոր քահանայ
Վայր՝ Կեսարիա

ա

570ա Փառք..., որ եա կարողութիւն տկար և տրտամ անձին և անպիտան գրչիս հասանել յաւարտ գրոցս պիտանի, որ աւրստաւրէ սոսկացնէ զոսկերս լսողաց սորա պատմութիւն, կարծրագոյն տանջանաց և սքանչելի չնաշխարհիկ վարուց սրրոցն, որ աստ հաւաքեալ կան։

Եւ արդ՝ գրեցաւ սբ. գիրքս որ կոչի Յայսմաւուրք ի մայրաքաղաքս Կէսարիա, ընդ հովանեաւ Ս. Սարգսին և Ս. Աստուածածնին և այլ սրբոցս, որ աստ կան ի պարծանս քրիստոնէից, ի թվականիս Հայոց ՌՀԹ (1630), ի հայրապետութեան տեառն Մովսէս կաթողիկոսի և ի յառաջնորդութեան այսմ քաղաքիս Կեսարու եռամեծի և քաջ բարեբնապետի Գրիգոր վարդապետի[40], ձեռամբ նուաստ և ներգնեալ ոգւոյ Գրիգոր քահանային, ի խնդրոյ աստուածասէր և բարեմիտ արանցն՝ մահտեսի Սարգսին և մահտեսի Ուղուրլուին, որ ստացան զսա ի յարդար վաստակոց իւրեանց, և եդին ի դուռն Ս. Սարգսի եկեղեցւոյն, յիշատակ հոգւոց իւրեանց և ծնողաց իւրեանց և ամենայն արեան մերձաւորացն։ Քանզի լուան զերանական բանն, որ ասէ, թէ՝ «Երանի...»[41]։ Վասն որոյ բորբոքեցաւ ի սէրն Քրիստոսի և ետուր գրել զսբ. գիրքս սիրատարափ տենչ-
570բ մամբ և եռափափագ ըղձմամբ սրտի մահտեսի Սարգիսն, յիշատակ // հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Սկանտարին և Մատլէ, և եղբարցն՝ Թորոսին և Սաֆարին, որ հանգուցեալ են առ Քրիստոս, և կենակցին իւրոյ՝ Ղաստամին, և որդոյն՝ մահտեսի Սկանտարին, և կենակցի նորին՝ Կօգալանային, և դստերացն՝ Լուսխաթունին և Զարիֆին, և թոռանցն՝ Մուրատին և Յէսային, և ամենայն արեան մերձաւորացն։

Եւս առաւել զհաւատարիմ այրն մահտեսի Ուղուրլուն, որ մեծափափագ սիրով ետ գրել, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ մահտեսի Յէսապալէ և Ճանպուլէ, և պապուն՝ Յովսէփին, և մամուն՝ Ոսկուն, և կենակցին իւրոյ՝ Լուսխաթունին, և որդոցն՝ Դանիէլին և Յէսապալէ. և դստերն՝ Ղատամին և եղբարն՝ Աբրահամին և կենակցի նորին՝ Մարիամին և որդոցն՝ Յովսէփին, Յարութենին և Յունանին, և դստերացն։

Աստուած[42] ողո[որ]մի մահտեսի Ուղուրլուին և կենակցին՝ Այխաթունին և Եղիսայբեթին, և դստերացն՝ Ղաաէմին և Թուրվանտային։

---

[40] «Եւ արդ»-ից մինչև այստեղ տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ կեսարիոյ, հտ. Բ, Կահիրե, 1937, էջ 1867։

[41] Նույն., ՀԱ, 9։

[42] Այստեղից մինչև ա հիշատակարանի վերջը կարծես թե և մելանը, և՛ գիրը փոխված է։

Բ

7բ *Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս մահտեսի* Սարգսին, *և ծնողացն՝* Սկանտարին *և* Մատլէ, *և կենակցին՝* Ղատամին, *և որդոյն՝* Սկանտարին, *և թոռանցն՝* Մուրատին *և* Յէսային, *և ամենայն արեան [մերձաւորաց]։*

Գ

9ա *Որոյ աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս մահտեսի* Ոտլուրլուին, *և եղբարցն՝* Աբրահամին *և* Սիմաւոնին *և ծնողաց նոցին՝ մահտեսի* Յեսապալէ *և* Ճանպուլէ, *և ամենայն արեան մերձաւորաց, և կարդացողիս, և լսողացդ, և ողորմի ասողացն. ամէն։*

Դ

444ա *Որոյ աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս մահտեսի* Ոտլուրլուին, *և եղբարցն՝* Աբրահամին *և* Սիմաւոնին, *և ծնողաց նոցին՝ մահտեսի* Յեսապալէ *և* Ճանպուլէ *և ամենայն արեան մերձաւորացն և* Գրիգոր *գրչի, կարգ[ացողաց]*[43]։

566

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 10331. տե՛ս նաև ՄԻՆԱ, № 9, էջ 231

Գրիչ՝ Ռըստակէս Երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

232բ *Փառք...։ Արդ՝ և ես թափ[ո]ւրս բարեաց, և ամենայն մեղաւք, նուաստ հոգի, սուտանուն* Ռըստակէս Էրեցս *և իմոյ անկար մարմնովս գրեցի սբ. գիրքս, որ կոչի Մաշտոց, զի յինքն ունի հաւաքեալ ամենայն կարգ յեկեղեցոյ պարծանք Հայոց և ցնծութեան մանկանց Սիովնի. ամէն։*

Արդ՝ գրվեցաւ սբ. գիրքս ձեռամբ Ռըստակէս *իրիցուի, ի թվաբերութիւն Հայոց ՌՀԹ (1630) ամին, ի թագաւորութիւն Պարսից շահ* Սէֆոյն։ *ի կաթողիկոսութիւն Հայոց տեառն* Մովսէսին, *հայրապետութիւն գեղիս տէր* Խաչատուր *վարդապետն։ Արդ՝ գրվեցաւ սբ. գիրքս ի քաղաքն* Ըսպահան *ի գ[ե]աւղն* Ջուղայ, *ի դուռն Ս. Յակոբայ։ Արդ՝ և ես սուտանուն մահդասի տէր* Ռըստակէսս *գրեցի գիրքս յիշատակ հոգոյ իմոյ*[44]։

Բ

107բ *Ա՜խ, ա՜խ ոտից մինչ ի գլուխս չիք առողջութիւն։*

---

[43] Բ, Գ, Դ *հիշատակարանների նման տե՛ս նաև ձեռ-ի 10ա, 11ա, 14ա, 16բ, 18ա 21 բ, 23 ա, 25 ա, 26 ա և այլ բազմաթիվ էջերում։*

[44] *Թվում է, թե հիշատակարանը կիսատ է։*

567
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10565

Գրիչ՝ Գրիգոր քահանայ
Վայր՝ Կ. Պոլիս

132բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն Կոստանդինուպալիս ձեռամբ անարժան Գրիգոր քահանայի, ի թվին ՌՀԹ (1630). որ և ցանկացող եղև սբ. Աւետարանիս խոճայ Թեղանն և եղ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հաւրն՝ Քամալին, մօրն՝ Խաթունմերին, կողակցին՝ Խուրոմթուխտին, որդոցն՝ Քամալին, Ավոէ. դստերացն՝ Յուսնիիանին, Տատիկին, Գուլոմսիմին և ամենայն արեան մերձաւորաց սորին. ամէն։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զհանդիպողք սբ. Աւետարանիս, կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք զվերոյ գրեալսն և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց...[45]։

568
ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ
Լենինգրադ, Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան, Арм. № 6 (մանրաժապավեն, Երևան, № 59)

Գրիչ՝ Աւետիք երէց
Վայր՝ Սեբաստիա

159բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Աղաւթամատոյցս և՛ ստոյդ և՛ յընտիր աւրինակէ, ձեռամբ բազմամեղ և անպիտան և փցուն գրչի Աւետիք սուտանուն իրիցուն, ի խնդրոյ սրբասէր և հեզահոգի քահանայիցդ։
160ա Արդ՝ աղաչեմ զձեզ, որ կարդայք կամ աւինակէք մի // բերան ողորմիս ասացէք գծողիս՝ անպիտան քահանայիս և զձեզ յիշէ յիւր յարքայութիւն. ամէն։

Արդ՝ գրեցաւ Աղաւթամատոյցս ի Սեբաստիեայ, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Քառասնիցն, ընդ հովանեաւ սրբոցն, որք աստ կան հաւաքեալ։ Գրեցաւ ի թվիս ՌՀԹ (1630)։
160բ Կրկին յերեսս անկեալ աղաչեմ // զամենեսեանդ և այլ արեան մերձաւոր մերոց կենդանեաց և հանգուցելոց մերոց և հաւաքեալ. ամէն։

569
ԱԻԵՏԱՐԱՆ
Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 19 (մանրաժապավեն, Երևան, № 498). տե՛ս նաև № 9027, էջ 57բ

Գրիչ՝ Խաչատուր դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

ա
452 Եւ յիշատակ գրչիս Խաչատուրին. ամէն։

[45] Սույն հիշատակարանը կրկնվում է նաև ձեռ-ի 256 բ էջում։

Բ

580 Փառք...։ Շնորհիւ և ողորմութեամբ ամենակալի Աստուծոյ... աւարտեցաւ... ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլսի, ի դուռն Ս. Սարգսի.
581 ձեռամբ բազ//մամեղ սուտանուն Խաշատուր դպրի, ի հայկազան թուականիս Հայոց ՌՀ և Թ (1630), ի հայրապետութեան տեառն Մովսէսի։ Արդ՝ աղաչեմ զձեզ, զրնթերցողդ և զլսողդ, յիշել յաղօթս զստացող սր. Աւետարանիս զմահտեսի Վարդան սարկաւագն և զծնողսն՝ Ամիրազիզն և զՊակին, և զեղբայրքն իւր՝ զՄուրատն և զՆորտունկն և զԱլէքսիանոսն և զամենայն մերձաւորսն ///

Դարձեալ յիշեցէք զԿիրակոսն և զծնողսն իւր՝ զՄարտիրոսն և զրՄեհիրն, և զկողակիցն իւր՝ զՄելիքն, և զդուստրն իւր՝ Մեհիրն և զփեսան՝ զԽանումն։ Դարձեալ յիշեցէք զՆուրիճանն և զկողակիցսն՝ Զմրութն, և որդին՝ զՎարդերեսն, և/// զամենայն արեան մերձաւորսն...[48]։

582 ...[47] Դարձեալ յերես անկեալ աղաչեմ յիշեցէք զԽաչիկն, Խարիփջանն, Խոճեկն, Գրիգորն, Տօլվաթեարն, Շաղամ[?]։ Դարձեալ Թամուր և զիւր կողակիցն և այլ ամենայն մերձաւորս...։

570

ԲԺՇԿԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 732

Թարգմ. Պունիաթ Սեբաստացի

Վայր՝ Սամսօն

204բ Ի թուականութեանս Հայոց ՌՀԹ (1630) ամին, ի քաղաքն Սամսօն թարգմանեցաւ սակաւիկ բժշկարանս ի Տաճկաց ի Հայս, աշխատութեամբ Պունիաթ բժշկի Սեբասացւոյ։ Յանկացող եղաք արհեստիս բժշկութեան և գրեանք շատ էինք ժողովեր յայլազգեաց՝ և յերբայեցւոյ, և՛ ի Հայոց, և շատ աշխատանք էաք քաշեր։ Եւ եկեալ ազգն Ռուսաց այրեցին և աւերեցին զՍամսօն, և հրակէզ արարին զգրեանս ամենայն. և մնացաք անմխիթար։ Յետոյ որոնեալ գտաք ի Հայոց և ի Տաճկաց որչափ որ մեր կարս հասաւ աշխատեցաք. և զայս սակաւ գիրքս ի Տաճկաց ի Հայս թարգմանեցաք, որ կարդայք և օգտիք ի սմանէ միով Հայր մերիս արժանի առնէք զիս՝ զՊունիաթ բժիշկս[48] Սեբաստացիս, և Աստուած յիշէ զձեզ։

571

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 733

204բ [ՌՀԹ (1630)][49] յայսմ ամի ազգս Հայոց ի մեծ վտանգի է. զի այլազգիքն զօրացեալ են ի վերայ քրիստոնէից... զի ել ոգիրն Ըսարմբո-

---

[46] 581 էջն ամբողջությամբ կարդացինք մեծ դժվարությամբ, մելանը թափված լինելու պատճառով։

[47] Նորից թվում է վերևում հիշված անունների մի մասը։

[48] «Նշխարք»-ում «բժշիկս» ձևով։

[49] Ղ. Փիրղալեմյանը ՌՀԹ-ի դիմաց, լուսանցքում ավելացրել է «(1631 ԻԶ)»։

լայ բազում զօրօք և գնաց ի Բաբիլոն, որ այժմ ասի Բաղդատ. և հասեալ ի զեան Տիգրիս, որ պատէ զԱսորեստան, և այլ հանապարհաւ գնայ ի յարևելս մինչև ի դուռն Պարսից, և բազում ոճիրս գործեաց զԱմատան
205ա և զՔուրդու և // զՇարազուլ. զամէն քանդեաց և աւերեաց զայն, [այնպէս] արարին, որ մարդ ոչ կարէ մեկնել կամ [ընդ] գրով արկանել զարհաւիրքն և զպատերազմն, որ անդ եղև։ Եւ յետոյ դարձեալ եկաւ նստաւ ի վերայ Բաղդատայ, շատ օր ի պատերազմ ելան, և բազում չարտումն եղև, և ոչ կարաց առնուլ զքաղաքն, վասն խստասրտութեան իւրոյ, եկաւ նստաւ [ի] Մուսուլ, այլ մարդ զնորա խորհուրդ ոչ դիտէ բաց ի յԱստուծոյ։ Եւ Ալի փաշայն Վանայ ելեալ բազում հեծելօք և գնաց ի վերայ Նախչուանայ և շատ աւեր ետուր և բազում արիւնհեղութիւն արար, և բազում առ և աւար և դերիս բերեալ ի Վան։ Մինչ թէ զինչ տեսաք աչօք մերովք՝ զդառն կսկիծ և զաղիողորմ արտասուքն քրիստոնեայ գերելոցն, զլալումն, զողբումն և զհառաչումն նոցա ոչ կարեմք հայիլ։ Մարդասէրն Աստուած գութ ձգեաց ի սիրտս քրիստոնէիցն, որ դարձեալ ազատեցին զգերիսն մեծատունք և աղքատք, վանականք և ռամիկք, ի խնամոցն Աստուծոյ ուժ առին ի միմեանց և զամենայն գերիսն, որ էին թուով երեք հազար՝ թող զայլազգիսն, զամենայն ազատեցին և ի տէրն դարձուցին։ Եւ յետոյ ազգն Պարսիցն զօրացան և եկին ի վերայ Արճիշու և յերկիրն Արճիշու բազում աւերս արարին զառ և զաւար, և զգերին քան զՆախչուանայն երկու աւելի տարան, և այլ ոչ երևեցան։

572
ԲԺՇԿԱՐԱՆ
Մագիստրոս, № 22

Գրիչ՝ Բարդուղիմէոս քահանայ
Վայր՝ Կ. Պոլիս

14 Գրեցաւ սակաւ բանս ձեռամբ Բարդուղիմէոս տրուպ քահանայի, թվին Հայոց մեծաց ՌՀԹ (1630), ի մայրաքաղաքն Կ. Պոլիս։

573
ԱԻԵՏԱՐԱՆ
Մագիստրոս, II, № 2395

Գրիչ՝ Մկրտիչ սարկաւագ
Վայր՝ Ստամբուլ

1360 Արդ՝ գրեցաւ Աւետարանս ի Ստամբուլ ի ձեռն...Մկրտիչ սարկաւագի, ի թվին Հայոց ՌՀԹ (1630)... յիշեցէք զմղդսի Նորեանն, հայրն իմ՝ Ստեփանոսն և զմայրն իմ՝ Սանդուխն, և քոյրն իմ՝ Ազմիկն, և զկողակիցն իմ՝ Անուշն. աղբարս Մանուկի[ն], աղբոր որդոյս Գրիգորին և կողակիցն սորա՝ Եզնիկն, քեռին՝ Պապուկին, դստերս Կուլխասին, և զորդին իմ՝ Վարդեվանին...։

574
ԺՈՂՈՎԱՏՈՒ
ԼԱԼՎԳԱՒ, № 189

Վայր՝ Ըսաամբոլ

1123 ...Արդ՝ գրեցաւ Պարզատումարս լաւ և ընտիր աւրինակէ, թվին ՌՀԹ (1630), [ձեռամբ] մեղսաթաւաւ /// ի ք[ա]ղաքն Ըսաամբոլ, ի գուռն Ս. Սարգսին։ Որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, անմեղադիր լերուք սղալանեացս, զի կար մեր այս չափ է[60]։

575
ՈՍԿԵՓՈՐԻԿ
ՊՊԹ, № 613. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Բ, № 499, էջ 413—415

Գրիչ՝ Յոսէփ Թացուեցի
Վայր՝ Թացու, Վարագ

ա

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս որ ասի Ոսկիփոր, ձեռամբ անարհեստ և փրծուն գրող Յովսէփ Թացուեցոն, ներքևեալ և քան զամենայն մարդ անարժան և հողոյ հաւասարեալ, ի յստոյգ և յընտիր յօրինակէ, ի թվականիս Հայոց Ռ և եաւթանասուն և Թ (1630), ի յերկիրս Կեցնայ, ի գիւղն որ կոչի Թացու, ընդ հովանեաւ Ս. Գէորգայ և Ս. Ատոմայ զօրավարաց, ի հայրապետութեան տէր Մովսէս կաթուղիկոսին սբ. աթոռոյն Էջմիածնայ, և Աղթամարայ կաթուղիկոսին՝ տէր Ստեփանոսին, և Վարագայ առաջնորդին՝ տէր Յովասափ արհի եպիսկոպոսին։ Եւ արդ՝ ողորմութեամբ Աստուծոյ սկսաք և շնորհօք Ս. Հոգոյն աւարտեցի Ոսկիփորն և Դ(4) տետրն և յիշատակարանս ի Վարագ, ընդ հովանեաւ Ս. Նշանիս և Է(7) աստեղեան Ս. Խորանացս. աւարտեցի ըստ իմում տկարութեանս, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք միոյ ողորմոյ արժանի առնիք զիս։

Բ

Դարձեալ կրկին անգամ յիշման արժանի արարէք և Աստուած ողորմի ասացէք ստացող սբ. գրոցս Ներսէս վարդապետին, մեծ պապուն՝ Գրիգորին, կողակցոյն՝ Միհնաւարին, որ[դ]ոյն՝ Մուրատին, կողակցոյն՝ Գուլաղին, որ[դ]ոյն՝ Աւետիսին, կողակցոյն՝ Խանաղին, որդոյն՝ Յովանէս սարկաւագին, Միրաքին, կողակցոյն՝ Գուլգուլին, որդոյն՝ Աւէտին, կողակցոյն՝ Թարուէզին, որդոյն՝ Գրիգորին, դստերացն՝ Գուլումին, Գօզալին, Եղիեն, կողակցոյն՝ Խանումին, որդոյն՝ Աղիբէկին, դստերն՝ Խաթունին, Մուրատի միւս եղբօրն՝ Աբրահամին, կողակցոյն՝ Խաթունջանին, որդոյն՝ Զիրաքին, քուերն՝ Թ///տին, կողակցոյն՝ Գուլիմորին, որդոյն՝ Դիշաքին, կողակցոյն Դուրեսանտին, դստերն՝ Խանումին, Խանաղին, որդոյն՝ Փոխանին, Ղազարին, Զիրաքի եղբօր Հերապետին, կողակ-

[60] Սույն ձեռագիրն ընդօրինակվել է երկու գրչի կողմից, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում։ Մյուս գրչի հիշատակարանը տե՛ս 1650 թ. շարքում։

ցոյն՝ Խանաղին, *որդոյն՝* Յովանէսին, Աւետիսին, *դստերն՝* Խաթունջանին, Զիրաքի *եղբարցն՝* Դիլաքին, Սահակ *սարկաւագին,* Զիրաքի *դստեր* Գուլճասին, *կողակցոյն՝* Մուրատին, *որդոյն՝* Փիրիջանին, Յովհաննէսին, *դստերն՝* Գուլաղին, Մուրատի *եղբօրն՝* Արիստակէսին, *կողակցուն՝* Խալինարին, *որդոյն՝* Շաղաւաթին, Միրաքի *դստեր* Դաստագուլին, *կողակցոյն՝* Ամիրաղին, *որդոցն՝* Խլաթին, Պօղոսին, Պետրոսին, *դստեր* Վառվառին. *ամէն։*

Գ

Յանկարծ շարժեցաւ օսմանլուն, ի Վանայ *գնաց ի* Նաղշուանայ *երկիր. քանդեցին, աւիրեցին, զառ ու գերին բերին ի* Վան, *ի* Մահմուտանք. *ի* Բերկրի, *ի* Յարճէշ, *ի* Պաղէշ *ԴՌ (4000), ԵՌ (5000) հարիւր գերի բերին, թող ոչխար ու տաւար։ Սուղ փարթաւ աւաղ աւաղ զՀայոց ազգիս ի գերել Տաճկաց։ Ով կարէ պատմել կամ ընդ գրով արկանել զաղիողորմ Հայոց ազգիս։*

Այլ [և] Աստուած ողորմի ասացէք ինձ մեղապարտ գծողիս Յուսէփ Թացուեցուն *և իմ ծնողացն՝ տէր* Գրիգորին, Բէկիջանին, *և իմ ուսուցողին՝ տէր* Աւետիս *վարդապետին, և իմ եղբօրն՝* Մարգարին, *կարդացողաց և լսողացդ...։ Անմեղադիր լերուք, ո՛վ մանկունք եկեղեցւոյ, սղալանաց և խոշորութեան գրիս, զի կար մեր այս է։ Ո՞հ, ո՞հ ի թղթի։*

Դ

Ստացող՝ Ներսէս վարդապետ

Ես՝ տէր Ներսէս *վարդապետս ետու գրել զգիրս ի հալալ վաստակոց իմոց յիշատակ ինձ և ազգականաց իմոց, և եդի ի գիւղն* Արարք, *ի դուռն Ս. Աստուածածին և Ս. Միրանաւորին։ Մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել ի դրանէ Ս. Աստուածածնին, ոչ ի մերոց և ոչ ի յօտարաց ո՛չ ծախելով, ո՛չ գողանալով և ո՛չ ալ գրաւելով։ Եթէ ոք յանդգնի զպատուերս մեր անփոյթ առնէ՝ նա զպատուհասն ի յԱստուծոյ առնու և զպատիժն խաչհանողացն ընդունէ։ Աստուած աւրհնէ զգիւղի քահանայս զտէր* Ազարիայն *և տէր* Պետրոսն, *տէր* Յուսէփն *և զտէր* Ներսէս, *անփորձ և հաստատ կարքօք պահեսցէ Քրիստոս Աստուած մեր։ Ի յայսմ կենցաղոյս և ի դատաստանին ընդ սբ. քահանայիցն դասեսցէ, որ ի վերայ գրոցս լաւ հնամ տանին, և ամէն Զատկի զյիշատակարան կարդան և զողորմին ասեն. ամէն։*

Աստուած աւրհնէ զգիւղի տանուտէրքն՝ զոէս Աւէտ, *զ*Աշիպէկն, *զ*Սիամոն, *զ*Յովանէս *զխիւս* Աւէտիսն, *զ*Էնիաթն, *զ*Զաջուռն, *զ*Տիլանջին, *զ///սարկաւագ, զ*Մկրտիչ *սարկաւագն, ժամահարն զ///*

Աստուած աւրհնէ զձեր տանուտէրն, զձեր քահանայքն,
Որ լաւ սնտուկմ շինեցէք,
Զդիրք սերսուք[51] *շուշփով ծրարեցէք,*
Ի մէջ սնտուկին պահպանեցէք։

[51] *Կարելի է կարդալ նաև «սերսաբ»։*

Յերբ որ հանէք զգիրքն կարգէք,
Ի Ճրագէն զատ պահիցէք,
Զձեր բերան պինդ պահիցէք,
Թուք ի վերայ մի՛ թռուցէք։
Թքոտ մատով ի շուռ մի՛ տաք.
Մոմի վերայ մի՛ կաթեցուցէք,
Ի գիճախոր տեղ մի՛ դնէք,
Զնեռսէս վարդապետն յիշեցէք։
Փոխ մի անբիծ հրամայեցէք...։

576

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ

ՏԵՐԱՎԴ, № 74

Գրիչ՝ Աստուածատուր դպիր
Վայր՝ էրէրիա

126 Փառք...
Մաքուր յընտիր գիրքս պատուական,
Եւ ի հօրէն համբերութեան,
Պարգևեցան որդոց մարդկան,
Աստուածայշունչ ճառս Յորան։
Այլ երգ երգոցն Սողովմոնի,
Այս երգոց երգավանի,
Այս երկուքս կան մէկ տփի,
Մէկն համբերող, մէկն յիմաստնի։
Բաբունուն Հայոց ազգի,
Քաջ յիմաստուն հռետորի,
Հոգոյն Սրբոյ գիրքս լուծի,
Մեծն Գրիգոր Տաթևացի։
Դրել տուի փափկանաւք ես ///
Այլ և եղբարցն իմոյ կարգի.
Սայ յիշատակ մի[շ]տ եղիցի,
Հանգուցելոցն առ Քրիստոսի,
Պետրոս անուն Միրզաբէկի։
Բաբունուն ժամանակի,
Գահ վեհագոյն տեառն մեծի,
Հայրապետին Հայոց ազգի,
Սուրբ Մովսէս Նորոգաւղին։
Էր թվական մերոյ ազգի,
Ռայ և Հոյ Թ (1630) թվի,
Ընդ հովանեաւ Աստուածածնի,
Սուրբ Քառասունք յեկեղեցի։
Էրէրիա մայրաքաղաքի։
Դառն և դժար ժամանակի,
Եւ փանաքի փծուն գրչի,

Աստուածատուր դպիր կոչի։
Այլ ես յիմար եղբարք բանի,
Դեռ նորավարժ տղա հասակի,
Եւ թողութիւն արէք ինձի,
Սխալ բանից սղալ գրչի։
Սայ յիշատակ միշտ եղիցի,
Մարգարէին և իւր ծնաւղի,
Միրզազալէ պապին իւրոյ,
Եւ բովանդակ ազգատոհմի։
Այլ և յիշէք զիս ընդ նմին,
Յիշեալ լիջիք աւրն ահեղի[52]։

577

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԴ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Մ3ՁԵՊ, II, № 260 (1596 թ.)

56. Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, յոյսն ամենեցուն, զԱրիստակէս վարդապետն, զսրբազան հայրապետն և զքաջ երաժիշտն, զառաջնորդ Մշու Ս. Յովանիսայ, որ ի ժամ մահուան իւրոյ կտակ արար զայս սբ. աստուածաշունչ դիրքս զՊօղոս առաքելոյ Մեկնիչս, յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, Ս. Յարութեան, և Ս. Ծննդեանն, հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և ամենայն արեանառու մերձաւորացն, զի յարաժամ ընթերցողքն և տեսողքն տացեն և ասասցեն զԱստուած ողորմին, յիշելով առաջի զենման գառին անմահ պատարագին։ Եւ մի՛ ոք յանդգնի հանել զսբ. գիրքս ի դրանէ Ս. Յակոբայ, որ է աթոռ Հայոց ազգիս յԵրուսաղէմ։ Եթէ հանէ ծախելով, գրաւելով և կամ գողանալով՝ զմասն գողին Յուդայի առցէ։ Այլ լաւ պահողքն վարձս բարեաց ընկալցին ի Քրիստոսէ յաւուրն դատաստանին։ Գրեցաւ ՌՀԹ (1630) թվին։

578

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Մ3ՁԵՊ, II, № 541 (1620 թ.)

Գրիչ, Նվիրատու՝ Գրիգոր երէց

56. Փառք...։ Արդ՝ ես նուաստս և անարժանս, եղկելիս և թշուառացեալս, սոսկ անուն՝ Գրիգոր երէցս, որ զանունս ունիմ և գործովս քան զամենայն մարդ վատթար եմ, վասն զի երէցն մեծ ասի, և Գրիգորն արթուն թարգմանի, և ես եղկելիս ի մէջ մեղաց եմ թմբրեալ, և զանունս եմ ստրկացուցեալ, ի ծերութեան աւուրքս եմ հասեալ, և մտօքս հանապազ գթեալ, զաւուրք իմ չարեօք անցեալ, և անյագ մեղաց ծառայեալ։ Ի թվին ՌՀԹ (1630) ամին կրկին եկի սբ. քաղաքն Երուսաղէմ, և զայս սակաւ Քարոզգիրքս՝ որ ընդ հովանեաւ սբ. տաճարիս և գլխադիր Ս. առաքելոյն Յակոբայ, ես տատամսեալ և տարակացեալ անձամբս զծա-

52 Քառյակների առաջին տողի առաջին տառերից հոդվում է «Մարգ[ա]րէէ ասա[ցեալ]։

դրեալ էի, այժմ բերեալ եդի ի Ս. Յարութիւնն, յիշատակ մեղօք աղտեղացեալ հոգւոյ իմոյ, և ծնօղաց իմոց, հօրս տէր Ստեփաննոսին, և մօրս Շողոյին, և հորքրոջս որդոցն՝ Աստուածատուրին, և քրոջն՝ Վարդոցին, և այլ ազգականաց մերոց՝ տէր Պօղոսին և տէր Յովանէսին, Ներսէսին և Աստուածատուրին, և կողակցին՝ Ջիհանին, և ամուսնոյն իմոյ՝ Մանուշակին, և իւր մօրն՝ Կոպիստանին, և ամենայն արեան մերձաւորաց մերոց։

Արդ գրեցաւ սա ի յառաջնորդութեան երիցս երանեալ, մարմնով մաքրեալ, և հոգով լուսաւորեալ, տէր Գրիգոր արհեպիսկոպոսիս, և սրբասնեալ հայրապետիս, աթոռակալ և տեղապահ Հայոց վիճակիս, որ ի սբ. քաղաքիս Երուսաղէմ։ Գոհութիւն մատուցանեմք տեառն Յիսուսի և Աստուած Սբ. Հոգւոյն, որ ի յերեկոյացեալ ժամանակիս այսպիսի
563 ժրաջան, և գործով, և վարուք// ընտրողական առաջնորդ և վերատեսուչ պարգևեաց տառապեալ ազգիս Հայոց ի սբ. քաղաքն Երուսաղէմ։ Վասն զի սա, նման անուանակցին իւրոյ, արդիւնաւորեաց զսբ. ուխտքս և զսբ. եկեղեցիքս Հայոց, որ կայր յԵրուսաղէմ, զոր մեք անարժանքս ականատես եղաք նորա քաջութեանն։ Սա Բ (2) անգամ զՍ. Փրկչի վանքն նոր նորոգեաց, և ի Ս. Յակոբն շատ խախտեալ և թուլացեալ տեղիք կայր՝ զամէնն նոր շինեաց, և հանապազ փափաքէր վասրն շինելոյ Ս. Ծննդեանն մեր վիճակիս, մինչ որ ինքն Քրիստոս ողորմեցաւ, և կատարեաց զփափագ սրտի նորա, որպէս ասէ Տէր, թէ՝ «Որ խնդրէ առնու, և որ հայցէ՝ գտանէ»[53]։ Կարողութեամբն Աստուծոյ շինեաց ի Ծնունդն զՄեծ խանն, և զպարիսպն, և զմեծ դարպասներն, որ ի վերայ խանին է, և զայլ խցերն, զինչ որ կայ՝ զամէնն նոր շինեաց։ Եւ եկեղեցի հաստատեաց ժամատեղօք, և միաբանք այլ ևս կացոյց անդ, զոր յառաջ ոչ էր եղեալ։ Այլ վասն ծովացեալ մեղաց մերոց, շարժեցան անօրէնքն ի բարկութիւն, ըմբռնեցին զեպիսկոպոսն քանի անգամ, ԴՌ (4000) ու ԵՌ (5000) ղուռուշ առին, մինչ որ յետի անգամն տարան զեպիսկոպոսն, թէ ի քուլխանն ի կրակն ձգեն, ապա ՁՌ (6000) ղուռուշ ետուր, ելաւ ի բանտէն, գիշերով ի պարսպէն իջաւ ու գնաց ի Ստամպոլ, ի թագաւորէն հրովարտակ առաւ, անչափ ոսկի և արծաթ խարճեաց ու երեր զթագաւորին ամրն յԵրուսաղէմ։ Ապա սակաւ մի կարկեցաւ բերան այլազգեացն։ Ապա անիրաւ հարկապահանջութիւնն օր քան զօր յաւելոյր ի վերայ վանորէիցն։ Այլ մեր առաջնորդն ղրանն Պօղոսի առաքելոյն ածէր զմտաւ որ ասէ, թէ՝ «Զ[յ]ափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընդունիջիք[54]»։

Այլ և յայսչափ նեղութեան և ի ճշդել հարկահանաց անօրինացն տէր Գրիգոր արհեպիսկոպոսն բազում անօթս արար եկեղեցեացն մեր՝ խաչ, սկիհ, զգեստ, և Աւետարան, և այլ բազում անօթս, զոր ոչ գրեցի։

Այլ և բազում ողորմութիւնս առնէր աղքատաց և կարօտելոց, բայց մեք կարծեմք թէ զինչ որ սայ կամեցաւ Աստուծով կատարեցաւ, զի առ աղքատսն խիստ առատաձեռն էր, ի ծածուկ և յայտնի որպէս որ ա-

[53] Մատթ., է, 8։
[54] Եբր., ժ, 34։

սէ, թէ՝ «Որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ»[55]։ Այլ և կարգեաց սա յամէն գիշեր զուիթ կանոն սաղմոսն ասել և յամէն օր պատարագ մատուցանել յԵրուսաղէմ, զոր խնդրեմք ի Քրիստոսէ զինքն ընդ սրբոց հայրապետացն դասակից և պսակակից արասցէ. ամէն։

Այլ և այն, որ հրամայեաց, թէ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ, և զլումայն այրոյն ընկալաւ, նա է հատուցանող զվարձ վաստակոց նորա, բայց ընդ այն խնդամք և ուրախ եմք, զի ի վիճակն Քրիստոսի եմք։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից, որք հանդիպիք այսմ գրոցս կարդալով կամ տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զդծող սորա՝ զնուաստ մեղօք զառածեալ Գրիգորս, և Աստուած ողորմի ասացէք գծողի տորա, և Աստուած որ առատն է ի տուրս ողորմութեան, ողորմեսցի ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս. ամէն։

Դարձեալ ես՝ նուաստ Գրիգորս, որ եմ յերկրէն Սասնոյ, ի գեղջէն Սրշայ, եդի զայս սակաւ Քարոզգիրքս յիշատակ ի Ս. Յարութիւնն, չունի ոք իշխանութիւն հանել զայս գիրքս ի Ս. Յարութենէն՝ նենգութեամբ, գողանալով կամ այլ իրօք. և թէ ոք յանգդնեսցի՝ պատժեսցի ի սբ. լուսաբուղխ գերեզմանէն Քրիստոսի. և լաւ պահողն աւրհնեալ լիցի ի Քրիստոսէ, և յամենայն սրբոց նորա՝ յերկնաւորաց և յերկրաւորաց. ամէն։

579

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Մշեղ, II, № 547

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ,
Վայր՝ Երուսաղեմ

ա

571 Ո՛վ սբ. ընթերցողք, թողութիւն մեղաց հայցեցէք անարժան գծողիս, և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց իմոց, և զայնոսիկ որ ի վերայ մեր երախտիք ունին՝ եթէ մարմնաւոր և թէ հոգևոր, յիշեցէք և ղյիշմանն արժանին զերջանիկ բարունին, և զքաջ իմաստասէրն, և զհեզահոգի զԿարապետ վարդապետն։ Եւ որք յիշեն, յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

բ

Զստացող սբ. գրոցս զտէր Կարապետ բանի սպասաւորն, և զիւր քեռորդի տէր Թադէոս դեռաբոյս վարպետն, յիշեցէք ի Քրիստոս Աստուած, որ ստացան զսբ. գիրքս և եղին յիշատակ ի Ս. Կարապետ, որ Ինանակն կոչի, և որք յիշէք և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի։ Գրեցաւ ձեռամբ տրուպ և անիմաստ գրչի Աստուածատուրի, թվին ՌՀՀ (1629) ամին։ Անմեղադիր լերուք, ո՛վ ընթերցող եղբարք, զի ի ձեմն դրեցի զգիրքս, ըստ կարեաց իմոց, զոր ունէի, ի սբ. Երուսաղէմ քաղաքի։

[55] Հմմտ. Առ., ԺԹ, 17։

Գ

Վասն սիրոյ Քրիստոսի զտառապեալ գծող Աստուծատուր բացասացութեամբ քահանայ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք։

Դ

Ո՛վ սբ. ընթերցողք այս սբ. մատենիս, եթէ օրինակէք և կամ ինչ օգտիք ի սմանէ, յիշեցէք զնուաստ գծող սորա զԱստուածատուր յետնեալըս ի կարգաւորաց, նաև զծնօղսն իմ, և զուսուցիչսն իմ։ Այլ և զյիշմանն արժանի զստացող այս սբ. մատենիս զԿարապետ բանի սպասաւորն, և զդեռաբոյս քեռորդին իւր՝ զտէր Թադէոս վարպետն, որ յոյժ սիրով և փափագանօք ետուն գրել զսբ. Հարանց վարքս, յիշատակ իւրեանց ի Ս. Կարապետ։ Եւ որք յիշեցէք զմեզ և Հայր մեղայիւ արժանի առնէք, և դուք յիշիք ի բարին Քրիստոս. ամէն։ Գրեցաւ ի սբ. Երուսաղէմ թվին ՌՀՀ (1629), ի Ս. Յակոբայ վանքն։

Ե

Զյամենայնի յետնեալս զնուաստս գծողս զտրուպ Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք։ Նաև ստացողի սորին տէր Կարապետ բանի սպասաւորին ողորմի ասացէք, որ ետ գրել զսա ի վայելումն անձին իւրոյ. և յետ <յ>անցմանն յիշատակ հոգւոյ իւրոյ ի դուռն Ս. Կարապետայ։ Որք ընթեռնուք և օգտիք ինչ ի սմանէ, յիշեցէք զմեզ ի Քրիստոս, և դուք յիշեալ լիջիք ի Տառնէ։ Գրեցաւ թվին ՌՀԹ (1630) ամին։

Զ

Ծաղկող՝ Մինաս
Վայր՝ Համիթ

Փառք...։ Որոց ի բազմաց այս Կարապետ կուսակրօն բանի սպասաւոր քարոզող և ճշմարիտ վարդապետ սնեալ և ի յարբունս հասեալ ի դուռն Տաւրոնոյ գաւառն, ի սբ. ուխտն, որ յանուն Ս. Կարապետին հրոչակեալ կայ, փափագեցաւ սբ. Երուսաղէմայ, ոտնակոխ տեղեացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և գնացեալ հանդերձ եղբարբք տէր Թադէոս վարպետիւ և համշիրաք եղբարք տէր Մելքիսէթ վարդապետիւ ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ, և մնացեալ անդ ամ մի ողջոյն։ Եւ Կարապետ բանի սպասաւորն տեսեալ զՀարանց վարքն, ցանկացող եղեալ[56] վարուց նոցին, ետ գրել զՀարանց վարքս, ի ներկայումս անձին իւրոյ, և յետ աստեացս մնասցէ անջրելի յիշատակ ի դուռն Տաւրոնոյ Ս. Կարապետին, տէր Կարապետ վարդապետին, և ծնօղացն իւրոց, հօրն՝ Առաքելին և մօրն՝ Եղիսին, և պապուն՝ Կարապետ քահանային, և հորեղբարցն իմ՝ Կարապետ վարդապետին, և Սաեփանոս վարդապետին և Յոհաննէս քահանային, և այլ ամենայն արեան մերձաւորացն, որ հանգուցեալ են ի Քրիստոս։ Յերեսս անկեալ աղաչեմ լի բերանով Աստուած ողորմի ասացէք։

[56] Սխալմամբ տպված է «եղեալ»։

Արդ՝ գրեցաւ գիրքս ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ձեռամբ երկու գրչաց, և սակաւ գիր մնացեալ առեալ բերին ի քաղաքս Համիթ// առ հէքս և անարգս ի գրչաց Մինաս սուտ և փուտ գրիչ։ Եւ իմ տեսեալ զփափագ և ղիղձս սորա զսակաւ գիրն ետու գրել աշակերտաց իմոց, և ծաղկեալ կազմեցի զգիրքս թվին ՌՀԹ (1630), ի դուռն Ս. Կիրակոսի, յառաջնո[որդ]ութեան մայրաքաղաքիս Համթայ տէր Բարսեղ աստուածաբան վարդապետին։

572

Այլ և մնացէ սբ. գիրքս յիշատակ տէր Կարապետ վարդապետին, և ուսուցանող վարդապետին իւրոյ՝ տէր Մարտիրոս քաղցրաբարբառ երաժշտին և աստուածաբան վարդապետին, և համշիրաբ եղբօրն իւրոյ՝ տէր Թադէոս վարպետին և այլ ամենայն հոգևոր ուսուցանողացն մեծի ե փոքու առ հասարակ ամենեցուն. ամէն։

Է

Ստացող՝ Կարապետ
Վայր՝ Գլակա վանք

Ես՝ Կարապետ պիտակ անուն աբեղայ, որ եմ ի գավառէն Տարօնոյ, ի գեղջէն Բազայ, մերձ վանացն Գլակայ, որ Իննակնեայն կոչի, որ յանուն Ս. Կարապետին է դինեալ։ Եւ եմ խոսա և մստաղ Ս. Կարապետու. որ և ի յասելս իմ սարսափիմ, զի ուխտ եդեալ իմ և ոչ կատարեալ։ Եւ ողորմութեամբն Աստուծոյ գնացի և յերկնահանգէտ և յաստուածակոփ մայրաքաղաքս Երուսաղէմ, և ամենայն սբ. տնօրինականացս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ իմ տեսեալ զՀարանց վարքս գեղեցիկ ոսկով զարդարեալ էր, որչափ սբ. հարք որ գրեալ կայր զամէնու պատկերն ի կարգն էր հանած և ոսկով զարդարած, որ միանգամ տեսողի մտացն չի ելանէր։ Եւ ես ամօթալի և սևերես եղայ, զի ոչ կարացի օրինակին պէս զարդարե<ա>լ, Աստուած գիտակ է որ կարս չի եկեր։ Եւ ետու գրել ձեռամբ երկու գրչաց՝ Աստուածատուր քահանայի և Յոհաննէսի, սակաւ դիր ինչ մնացեալ բերի ի Համիթ քաղաք, տվի աւարտել, և ծաղկել, և կազմել. և եդի յիշատակ ի դուռն Ս. Կարապետին, ինձ և իմոցն մարմնաւորաց և ամենայն մերձաւորաց։ Մի՛ ոք իշխեսցէ հանել զյիշատակս մեր ի դրանէ Ս. Կարապետու՝ ծախելով կամ գրաւելով։ Եթէ ոք յանդգնի՝ զնզովս Յուդայի առցէ, և որ խնամք տանէ, և լաւ պահէ, և ջերմեռանդ սրտիւ ընթեռնու ի ժամ արտասուախառն սբ. և մաքուր աղօթիւքն, յիշեն զմեզ և զաշխատողքս սորա՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

580

ՇԱՐԱԿՆՈՑ

Մշեցի, V, № 1658 (ժամանակ ?)

Նորոգող՝ Մարտիրոս սարկաւագ

498

Արդ՝ նորոգեցաւ Շարակնոցս վերըստին ձեռամբ սուտանուն Մարտիրոս սարկաւագին, ի թվին ՌՀԹ (1630), ի դուռն Ս. Գրիգորի։ Յիշա-

տակ է հաւրն իմ՝ մղցի (sic) Ֆարմանին, և եղբաւրն իմ՝ Ամիրպէկին, և որդոցն իմոց՝ Սամուէլին և Դանիէլի[ն]։ Զմայրն իմ՝ Շահսուլթան. և զկողակիցն իմ, և զամենայն արեան մերձաւորս, յիշեցէք ի Քրիստոս...։

581
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ, ՏՕՆԱՑՈՅՑ

Մշեցի, VI, № 1802

Գրիչ՝ Սահակ աբեղայ
Վայր՝ Վարագ

ա

167 Գիրքս յիշատակ է տէր Մովսէս կրօնաւորին և ծնողաց իւրոց Անտոնին և Քնֆուշին։ Եւ ով որ սովաւ սաղմոս ասէ՝ Աստուած ողորմի աւէ սոցին...[57]։

բ

168 Եւ զմեղաւոր դրչիկս յիշես և Աստուած ողորմի ասես...։ Ռ և ՀԹ (1630) թուին գրեցաւ դիրքս այս[58]։

գ

Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղսամած մատինս իմոյ՝ հասանել ի յաւարտ այս սբ. տառիս, որ կոչի Սաղմոսարան, Աղօթամատոյց և Տաւնացոյց, ի լաւ և յընտիր ըղորդած յօրինակէ, ի խընդրոյ սրբասէր և մաքրամիտ կրօնաւորին տէր Մովսէսի, զոր եռափափագ սիրով ետ գրել զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց Անտոնին և Քընֆուշին, և եղբօրն՝ տէր Մխիթարին, կողակցոյն՝ Նէրգգին, և որդոյն՝ տէր Աւետիսին, կողակցոյն՝ Փաշաբէկուն, և որդոցն՝ Մխիթարին, Միքայէլին և ամենայն արեան մերձաւորացն...[59]։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Վասպուրականի, ի մայր։սքաղաքս վանորէից ի Վարագ, ընդ հովանեաւ աւադ Ս. Նշանին և յայլ է (7) սբ. տաճարացս, որ կառուցեալ կան ի յանուն և ի պատիւ սրբոցն և ի պահպանութիւն երկրիս մերոյ, ձեռամբ մեղապարտ Սահակ աբեղայի, որ զանունս միայն ունիմ և զգործս ոչ, ի թվականիս Հայոց Ռ և ՀԹ (1630) ամին, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Մարտիրոս վարդապետի և Յովասափ եպիսկոպոսի, և այլ միաբան եղբարց մեր՝ տէր Ներսէս վարպետի, և Մարգարայ եպիսկոպոսի, և միւս Ներսէս վարպետի, և տէր Յոհաննէս վարդապետի, և հոգևոր եղբօր իմ տէր Յակոբ վերակացուի վանացս, և այլ միեղէն եղբարց մեր ի Տէր՝ ժամարարաց և սպասաւորաց սբ. ուխտիս, զոր տէր Աստուած արքայութեան արժան առնէ զսոսա, որ հայրական գթով և եղբայրական սիրով, զանարժանս իբրև արժանաւոր ընդունէին և ի գրչութեան սորա անտրտունջ կային։ Եւ արդ՝ ես անարգս և անպիտանս ի մարդկանէ, ունայնս և թափուրս... Սահակ սուտանուն աբեղայ, շնորհիւ Տեառն սկսայ զսբ. գիրքս և ո-

57 Նման երկու հիշատակարան էլ տե՛ս Յուցակի 167—168 էջերում։
58 Նման մի հիշատակարան էլ տե՛ս Յուցակի 167-րդ էջում։
59 Դարձյալ թվում է վերևում հիշված անունները։

զողմութեամբ նորին աւարտեցի մեղսամած ձեռաւք իմովք, և աղաչեմ զամենեսեանդ, զմանկունս սբ. եկեղեցոյ, որք հանդիպիք տեսութեամբ սորա, սաղմոսելով և կամ աւրինակելով, միոյ ողորմեայի արժան արէք զմեղաւոր դրիչս և զուսուցիչն իմ՝ զՍտեփանոս քահանայն, հանդերձ ծնողօք մերովք և Աստուածն ամենայնի ողորմութեամբ և գթութեամբ քաւէ զյանցանս ձեր...։

169 Եւ արդ՝ պատմեցից զաղէտ և զկրսկիծ տառապանաց և զտարակուսանաց ազգիս Հայոց, թէ որպէս ի վիշտ և ի նեղութիւն եմք ի ձեռս անաւրինաց. զի ամով մի յառաջ քան զդրչութեան սորա, ելին ազգն Պարսից և դիմեցին ի վերա Վանայ և յաւար առին զերկիրն Խոշաբայ, զմարդիկք սպանանելով և զկին և զտղայ գերի վարելով, զհայ և զբքուրտ. և զթիւ արանց սպանելոց և զգերելոցն չկարացաք իմանալ և կամ ընդ գրով արկանել, զի անմարդի և անբնակ արարին ի մարդոյ և յանասնոյ, և գերեալքն ամենեքեան կորեան և ոչ դարձան ի յետ. զի զգերիս ոչ ծախէին ազգն Պարսից, այլ յազգն իւրեանց խառնելով զամենեսեան կորուսեցին։

Իսկ ի յամի գրչութեան սորա նոր . աղմուկ և նոր դառնութիւն եղև մեզ՝ ազգիս Հայոց, զի Վանայ փաշէն զՔուրդստան ի մի վայր առ ինքն ժողովեաց և դիմեաց ի տունս Պարսից, և անցեալ զմեծ գետն Երասդ, մտին յերկիրն Սիւնեաց, սրպանանելով զհայս և գերի վարելով զկին և զտղայս նոցա, աւերելով և թալանելով դարձան ի Վան։ Եւ ով կարէ պատմել զկսկիծ տառապանաց Հայոց ազգիս, զի ժամանակս խիստ դառն է և տրտմութիւնք յոլով. զի պաշարեալ կամք ի մէջ երկուց պատուհասից՝ ի մի կողմանէ մահն, և ի միւս կողմանէ սուրն և գերութիւն։ Զի այս ամենայն պատուհասս վասն ծովացեալ մեղաց իմոց եղև և զելս իրացն ոչ ոք կարէ իմանալ. զի Աստուծոյ միայն է գիտելի...։

Դ

Ստացող՝ Մովսէս աբեղայ

Եւ արդ՝ ես Մովսէս աբեղայ ստացայ զՍաղմոսարանս ի յարդար ընչից իմոց և ետու ընծայ և նուէր Քրիստոսի սբ. գերեզմանին, յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղաց իմոց Անտոնին և Քրնֆուշին։ Եւ մարդ ոք մի՛ իշխեսցէ հեռացուցանել զսա ի Քրիստոսի սբ. գերեզմանէն,. ո՛չ գողանալով և ո՛չ այլ ինչ իւիք պատճառաւ։ Եւ թէ ոք յանդգնի և անփոյթ առնէ զպատուէրս իմ՝ նա զպատիժն ի Քրիստոսէ առնու. ամէն։

582

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՅՁՎՍ, 1, № 52

Գրիչ՝ Կարապետ Ջուղայեցի

Վայր՝ Համշէն

ա

265 Փառք...։ Իսկ ես՝ անարժան և անպիտանս Կարապետ Ջուղաեցի, այսինքն աշակերտ Ազարիա վարդապետի և զհոգևոր հայրն իմ՝ Մկր-

տիչ վարդապետն Խարբերդոյ, զգաւաղանն, զոր առեալ էր ի նմանէ, և անկեալ ի ձեռն քաջ ոիտոր Մովսէս կաթողիկոսի և մերկացուց զիս, և եղ ի մէջ ճգնաւորաց բաղում պատուիրաւք, եթէ նիստ ի մէջ էջմիածնոյ, վերջն բաղում հոգևոր ընչից տիրանաս։ Եւ ես ոչ հնազանդեցա նմա, և ելայ ի նմանէ, անգիտակ բազում տառապանաւք և եկայ ի Համշէն։

266 Ահա հանգիպեցայ// ընտիր աւրինակ Սաղմոսարանի Յովաննէս Գաւոնեցւոյն, յորոյ յիշատակարանն գրած էր այսպէս. «Ես՝ Յովաննէս Գաւոնեցի գնացի ի սբ. ուխտն Հաղբատ, և երկրպագեցի Սբ. Խաչին և սբ. գերեզմանին մեծ և տեսանող Հայոց սբ. վարդապետին Յովաննիսի մականուն Սարկաւագ, այն որ զսաղմոսն բազում ճգմամբ ի թարգմանչագիր Սաղմոսարանէ գաղափարեաց։ Եւ ես նոյն Սաղմոսարանի հանդիպեցայ, ի ձեռն յիմար մարդոյ, առեալ համբուրեցի և գրեցի զսա յիւրմէն ամենայն ստուգութեամբ, զբանն, զգիրն, զհարցուկն, զհանգիստն, զտունն, զկէտն, զստորն»։

Արդ՝ ես ի սրտէ խոցեալս զԿարապետ վարդապետ գրեցի զսա ըստ իմում կարի. թէպէտ և անվարժ էի, այլ իմով տկարութեամբս ուղղեցի, որ նոյն աւրինակն եղև, վասն որոյ համարձակ լիցին ուսանելով թէ աւրինակելով։ Բայց մի ոք իշխեսցէ ի Հոգւոյն Սրբոյ՝ տգիտաբար բան թիւրել, և կամ զգրեալսն չստուգել յաւրինակէս, որպէս և ես, որ թէպէտ և գիրս յոյժ անարուեստ է, այլ զբանն ուղղեցի կրկին և երեքկին։ Եւ արդ՝ գրեցաւ [զ]սա ի թուականութեանս Հայոց ՌՀԹ (1630), ի յերկիրն Համշէն, ի վիճակս Խաչեֆարոյ, և ի յատենանստեալն էջմիածնայ՝ Մովսէս կաթողիկոս և սրբասնեալ աշակերտաւքն հանդերձ։ Այլ և աղաչեմ անմեղադիր լինել սխալանաց և խոշորութեան գրիս, զի յոյժ անհմուտ էի գործոյս։

Բ

Ծաղկող՝ Գրիգոր

Զնկարող Սաղմոսարանիս,
Զ Գրիգոր մեղաց գերիս,
Որ գործեցի բազում չարիս,
Խիստ զազրալի և անյիշելիս։
Սևացուցի ժանգով հոգիս,
Յերեկոյացեալ ժամանակիս,
Հպարտացայ ես ի մտիս,
Ոչ յիշեցի զաւր վախճանիս։
Կատարեցի զմարմնոյ զկարիս,
Բարկացուցի զԱստուած ընդ իս,
Եղուկ Ռ (1000) և վա՜յ զզիս,
Որ ոչ ունիմ գործ մի բարիս։
Յետ աւանդման իմոյ գոգիս,
Բազմամեղիս տուք ողորմիս,
Եւ Գրիգորի անիմաստիս,
Այլ ձեզ ունիմ սիւն իմ սրտիս։
Որք հանդիպիք յայսմ տառիս,
Աստուածախաւս Սաղմոսարանիս.

Յիշման առնէք դու[ք] դզիս,
Անփորձ կենաք դուք յաշխարհիս։
Արքայութեան արժանացիք,
Եւ ի վերայ անարժանիս,
Բազում ջանիւք աշխատողիս։
ԶՊոնտացի տէր Աւետիսիս,
Առաքելանման եպիսկոպոսիս,
Անփորձ կենայ ի յաշխարհիս,
Զվայելող Սաղմոսարանիս,
Աւր ըստ աւրէ յիշէ զիս,
Զեղկելի Գրիգորիս,
Տուք ողորմիս յայսմ աշխարհիս. ամէն։

583

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁՎՍ, I, № 95 (1276 թ.)

Նորոգող՝ Սարգիս քահանայ

428 Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս ՌՀԹ (1630), ձեռամբ մեղսասէր քահանայի Սարգսիս։ Արդ՝ որք հանդիպիք զսա, յիշեցէք զերեսփոխան մահդասի Այնրլմլի, որ փափագանօք մեծաւ ետ զսա նորոգել ի պայծառութիւն մանկանց սբ. եկեղեցոյ. զի ի վերջին աղօթս ձեր յիշեցէք միով Տէր ողորմի զինքն և զիւր ծնօղսն։ Այլ և զկաշի տուօղն զԽաչատուր և զիւր ծնօղսն, միթէ ողորմածն Աստուած ողորմեսցի զընոսա յաւուրն դատաստանին. ամէն։

584

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁՎՍ, I, № 186, տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հատ. Բ, էջ 1868

Գրիչ՝ Աւագ քահանայ
Վայր՝ Տումարզայ

776 Փառք...։ Սբ. Աւետարանիս ցանկացա ես՝ նուաստ և անպիտան ծառայս Աստուծոյ, բազմամեղ, փցուն և անարհեստ, սուտանուն քահանայ Աւագ, ծեր և տկար և ի լուսոյ և յուժոյ պակասեալ, իսկ յաւժարութիւն սրտիս և կարողութիւն և մարդասիրութիւն Աստուծոյ, որ յամենայնի կարող է՝ և անյուսից յոյս է, և անաւդնականից՝ աւգնական, որ ոչ անտես առնէ զյուսացեալս յինքն, ի շնորհ նորա ապաւինեալ՝ սկիզբն յետու առնել, և նա ետ կարողութիւն հասանել յաւարտ սորա։

Արդ՝ եղև զրաւ գրութեան սորա ի թուականս Հայոց ՌՀԹ (1630), ի գաւառս Կէսարու, ի գեղս Տումարզայ, ընդ հովանեաւ Ս. առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի և այլ սրբոցս որ աստ կան ի պարծանս հաւատացելոց. ի հայրապետութեան տեառն Սիմէոն աստուածապատիւ կաթողիկոսի, և ի յառաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարու՝ Գրիգոր վարդապետի, որ իբրև զայնշիշանելի շահ վառեալ է ի պայծառութիւն Հայաս-

տանեացս եկեղեցոյ, և ի յառաջնորդութեան սբ. ուխտիս մերոյ Աստուածածնայ՝ Գրիգոր Պարոնտիրի, ձեռամբ նուաստ ե ներքեալ ոգւոյ Աւագ քահանայի[60] մեղապարտի։ Եւ արդ՝ աղաչեմ զամենեսեան, ոյք ուղիք ի սբ. մատենէս, յիշատակի արժանի առնել զանարժան գրիչս Աւագ քահանայս և զհայրն իմ՝ զԱւագ քահանայ և զմայրն իմ՝ Մարիամ, զպատուական եղբայրն իմ՝ զՇառուկ, և զկին իւր՝ Խասխաթուն, և զորդիքն՝ զԱռաքել և զՊաւղոս, և զդուստրն՝ Մայրամ, և զմիւս եղ//բայրն իմ՝ զՇերուկ, և զկենակիցն իմ՝ զՎարդենին, և զդեռաբոյս զորդին իմ՝ զՊետրոս, և զգաստերքս իմ՝ զՆղիսաբեթ և զՊահրի և զքոյրն իմ՝ զԱննա։

777

585

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 55 (1452 թ.)

Կազմող՝ Պարսամ աբեղայ

86 Այս գերահրաշ սբ. Աւետարանիս, որ յայժմ վերաձայնեալ կոչի զՇածկանց, զմականուն սբ. Աւետարանիս, որ կոչի Սքանչելիս, արարեալ է, զոր մարդկան ակամբ տեսեալ յառաջնոյս և յետնոյս՝ ի հանգեալն ի ջուրն և ելանելն անարատ ի ջրոյն[61], զհիւանդս բժշկէր, զդեւս հանէր, զցաւս փարատէ, և խլից լսել տայ, և համերց՝ խաւսել։ Վայ է այն մարդոյն այնմիկ, որ սուտ կամ իրաւ երդնոյ ի սբ. Աւետարանս, զի պատիժն առնելոց է, մի՛ վստահանեալ մերձենալ ի սբ. Աւետարանիս, այլ մաքրութեամբ և խոստովանութեամբ, սաղմոսիւք և աւրհնութեամբ։ Ո՛վ մարդիկ ահիւ և ողորմութեամբ, տրովք և մատաղովք եկայք ի տեսութեան սբ. Աւետարանիս, զի կատարեսցին խնդրուածք ձեր, զի բազում սքանչելիս արարեալ է վահան հաւատին. ամէն։

Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զՄուրատխանին, Վէլիխանին, ծնաւղքն՝ Մարգարէն, զխանումն, պապն՝ Պետրոսն, խանիկն՝ զՄէրիկն, հաւրեղբայրն՝ Փանոսն, Զաքարէն, Խէրիքն, Ազատն, խաւրաքուրն՝ Եղիսաբեթն, Զօղափաշէն, Փափաշն, եղբայրն՝ Վէլիխանն, Յովանէսն, քոյրն՝ Մէրաաիկն, և կողակիցն՝ Թուքիկն, որդի Մխիթարն, դուստրն՝ Մարիամն, եղբօրորդին՝ Պետրոսն, Նազարէքն, Պաւղոսն, Միրզախանն, և եղբօր կանանցն՝ Ամափարի, Ատլանգէրակն, քեռին՝ Դիտարն, և թոռն՝ Գրիգորն, և դեռաբուս մանուկն՝ մուղդասի Ծաւուրն, լի//բերանով Աստուած ողորմի ասացէք նմա, որ յետուն յիշատակ ի դուռն Ս. Ստեփաննոս Նախավկային։ Եւ ոք իշխեսցէ յեռացուցանէ սա ի դրանէ սբ.

87

[60] Ինչպես տեղեկացնում է Բ. Սարգիսյանը, հիշատակարանի տարբեր տեղերում քերված է «Աւագ քահանայ» անունը և տեղը գրված «Բարսեղ երէց»։

[61] Նախորդ հիշատակարաններից մեկում սույն Ավետարանի շուրջը հյուսվել է այսպիսի մի ավանդություն. «...ել Զալալ զատին ի Սմդանդայ, և եկն ի յաշխարհս Հայոց և առ յաւար բազում դերիս. գերեցաւ և սբ. Աւետարանս։ Եւ գնացեալ զաւրացն Պարսից հասին ի սահմանս Վանայ, ի գիւղն որ կոչի Խարգամ և հրամանաւն Աստուծոյ որպէս զարծի թռուցեալ անկաւ ի գետն։ Մինչև գնացեալ զաւրացն Պարսից երևեցաւ ի տեսլեան քահանայ միոյ, որ էր ի դեղչէն Գինդրանայ, որ եկեալ հասին յափն գետոյն, հրամանաւն Աստուծոյ, ինքն իւրովի ել ի ջու[ր]ցըն, և անկաւ ի գիրկն քահանային, և տարեան հանգուցին եկեղեցին...»։ Վերևում խոսքն այդ մասին է։

եկեղեցիս, որ մականուն Պրոբիինց վերաձայնէ եկեղեցիս. մի՛ որ [յ]անդդնի հեռացուցանէ ի դրանէ սր. եկեղեցիս...։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք սր. Աւետարանիս, ընթերցողք կամ օրէնադրող, լի բերանով Աստուած ողորմի ասացէք կազմող սր. Աւետարանիս Պարսամ արեղայս. վերադրելոց լի բերանով Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Եւ զժամատան քահանայք սրբասնունդ քահանայսն՝ զտէր Մարտիրոս, զտէր Յաւետիս, զտէր Սահակն, զտէր Ալէքսանն, զտէր Խաչատուրն, զտէր Մուքայէլն, զտէր Մատթէոսն, զտէր Գրիգորն, զտէր Հայրապետն, լի բերանով ողորմի ասացէք. ամէն։

Գրեցաւ թվին ՌՀԹ (1630)։

586

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 241

Գրիչ, ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի
Վայր՝ Յարևան

379 Փառք..., որ ետ կարողութիւն սղալամիտ՝, և մատնդէտ, և մեղսամած գրչի Բարսեղ իրիցի և Մեսրոպ դպրի, հասանել յաւարտ յաստուածախաւս կտակարանիս, աւժընդակութեամբ սր. Աստուածածնին ամէնաւրհնեալ և գերագով կուսին Մարիամու[62]։ Զնա կալեալ բարեխաւս առ միածին Որդին իւր և Աստուած իմ՝ Յիսուս Քրիստոս։ Աւարտեցաւ[63] քրիստոսահիմն և քաջ նահատակացն մարտիրոսաց հոգիարուխ սր. տառս ի յամի ՌՀԹ (1630) թրւականիս Հայոց, ի յերկիրն Պարսից, ի քաղաքն Շաւշ, որ կոչի Ասպահան, ի գիւղն Յարևան, ընդ հովանեաւ Ս. Ամենափրկչին, ի թագաւորութեան շահ Սեֆոյն, և ի մերոյ հայրապետութեան տեառն Մովսէսի, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Բարսեղ իրիցի և Մեսրոպ դպրիս, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր, պատուական մահդասի խոճայ Եղնազարին, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն։ Քանզի որք մեծութիւն ընչից ըղձանան...։ Ըստ նմին օրինակին ջերմեռանդ սրտիւ և եռափափագ հաւատով ցանկացեալ եղև այսմ հոգեկիր և աստուածազարդ մարտիրոսական տառիս մահդասի Եղնազարն, յիշատակ իւր և ծնողացն՝ մահդասի Մաթոսին և Մեսրոպին, և պապուն իւրոյ՝ Ամիրասաթին և կողակցուն՝ էլիփաշէն, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խոշա Եղնազարն, և կողակիցն իւր՝ Սալիխազն, և զորդիքն իւրեանց զխաւջա Նազարէթն, Ղազարոս, և զփոխեցեալն առ Քրիստոս զԳասպարն, և դստերքն իւրեանց՝ Աննայն, Մարիամն, Շահզադէն, Ասանէթն, Մեսրոպն, և միուս կողակիցն Խանզադէն, և զամենայն արեան մերձաւորս յիշեցէք...։ Կրկին անգամ

[62] Հիշատակարանի ընդհանուր հենքը վերցված է մի այլ գրչի 1627 թ. հիշատակարանից տե՛ս № 399 հիշատակարանը։

[63] Ծուցակում սխալմամբ «ազատեցաւ», տե՛ս 62-րդ ծանոթ. մեջ նշված 1627 թ. հիշատակարանում։

յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խաւչա Նպնուզարն, և զեղբարքն, նախ՝ զԱռաքելն, և զկողակիցն իւր՝ Սղմէրն, և զորդին իւրեանց՝ Յոհաննն, զուստր Փարաւսն, և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ միուս եղբայրն՝ մահդասի Մարութէն, և զկողակիցն իւր՝ Շիրին, և զորդիքն իւրեանց՝ Ոսկանն, և զՈսկանի որդին՝ Յարութիւնն, և զուստր Մէրտատիկն, և զամենայն արեան մերձաւորս յիշեցէք...։ Դարձեալ և զմիուս եղբայրն իւր մահդասի խաւչա Նաղարն, և զկողակիցն իւր՝ Դշխունն, և զորդիքն իւրեանց զխաւչա Սաֆարն, զխաւչա Բաղդասարն, և Յաղամալն, յիշեցէք զուստր Համասփուտ, և Աստուած ողորմի ասացէք։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զմահդասի խաւչա Եղնազարն, և զքուերքն իւր՝. մահդասի Զադէն, Մէրումն, Շուշան[ն], որդիք Արդլէն, Բաղումն, և հաւրաքոյրն՝ Փաշաշէն, և որդին՝ Թասալն, և զամենայն արեան [մերձաւորսն]։ Եւ առաւել զհօրեղբարքն իւր՝ Մարտիրոսն, որդին՝ Ամիրասադն, Մարգարէն, Յոհաննէս, և միուս Մուրատն, որդին տէր Ազարէն, և տէր Ստեփանոսն, և զամենայն արեան
380 մերձաւորս յիշեցէք։ // Եւ առաւել դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խաւչա Եղնազարն, և զթոռունքն իւր՝ Աւետիքն, Մարտիրոսն, Ա[սլա]մազն և զամենայն արեան մերձաւորս յիշեցէք...

Եւ արդ՝ որք հանդիպիք այսմ բուրաստանիս և վայելէք յառատապէս սեղանոյն, յիշեցէք զիս՝ զանարժան Մեսրոպ դպիր Խիզանցիս, որ բազում աշխատութեամբ հասայ ի յաւարտս սորա՝ թէ՛ ի ծաղկել, և թէ՛ ի գրչութեանս, անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Ո՛վ եղբայրք, խոշորութեան և սխալանաց թողութիւն արարէք. ամէն։

587

ՔԱՐՈԶԳԻՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 445

Գրիչ՝ Մխիթար երէց, Բունիաթ

Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

689 Արդ՝ գրեցաւ գիրքս, որ կոչի Քարոզ, ի խնդ[րոյ] հեզահոգի և երկիւղած մահդասի Թանթակն, յիշատակ հոգոյ իւրոյ, այլ և զստերն իւրոյ՝ Խաթունին, և որդոյն՝ Ափկարին, որ հանգուցեալ են առ Քրիստոս։ Կրկին անգամ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմահդասի Թանթակն, որ ետուր գրել զսբ. գիրքս, որ կոչի Քարոզ, յիշատակ հոգոյ իւրոյ. ըստ այնմ որ ասէ, թէ «Երանի...»[64]...։

Բ

Աստուածունակ բան ցանկալի,
Վարժող մտաց և բաղձալի,
Կրթող զմարմին նաև զհոգի։
Իսկ դասք դպրաց սբ. Սիոնի,
Պայծառամիտք և հրաշալի,

[64] Եսայ. ԼԱ, 9։

Որք յընթեռնուք զբան խրատի,
Ներգործեցէք զուք ի մարմնի։
Ուստի ե դասք լուսերտմի,
Ցիշման առնել զիս արժանի,
Զմիւիթար էրէց փծուն գրչի,
Ցիշողացդ Աստուած ողորմեսցի,
Վասն այն հայցեմ թէ ինձ թողցի,
Զի արհեստիս անվարժ էի։
Սուրբ բերանով ձեր պանծալի,
Թէ Աստուած ձեզ ողորմի,
Նաև ուղղել զրանն թերի,
Եւ կշռել զոր սխալեցի։
Արդ՝ գրեցաւ գիրքս պիտանի,
Զի և սա Քարող կոչի,
Ի գեաւղաքաղաք մեծ Զուղայի,
Զեռամբ իմով Բունիաթի,
Որ եմ պարտական բիւր քանքարի։
Ի թուականիս Հայոց մեծի,
Ռ եօթանասուն և ինն (1630) ամի,
Հայրապետութեան տէր Մովսէսի,
Որ է յաթոռ Սրբոյն Գրիգորի։
Եւ որք յիշէք զմեզ արժանի,
Ցիշեալ լիջիք Տեառն առաջի,
Եւ նմա փառք յամենայնի,
Ցանցեալն, ներկա և յապառնի։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարէն և զՄատուրն, որ հանգուցեալ են առ Քրիստոս, միաբան ողորմի ասացէք։

Գ

Մանաւանդ ստացողի գրոցս Գրիգորին, և կողակիցն՝ Մարգարտին, և որդոցն՝ Կարապետին և Մկրտչին և ամենայն արեան [մերձաւորացըն]...

588

ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

ԹՅԱՎ, № 184

Գրիչ՝ Աւետիք
Վայր՝ Կարին

331 Փառք...։ Տրամադրեալ այս բժշկարանի,
Որ ի քաղաքն Կարնի կոչի,
Թվին Ռ եւթանասնի եւս ի,
Թ ամեայ այլ յաւելի (1630)։
Ի խնդրոյ պարոն իշխանի,

Որ Նուռանոս[65] վերաձայնի,
Մաղկեալ որդոյն Իսֆանտարի,
Որ Հող, փարթամ ինքն երեի...
Եւ ինձ տրուպ Ա[ռետ?]ի՛ի,
Որ հաքիմարանս գծագրեցի,
Ապենեաղն ամենայնի,
Զեզ յիշողացդ ինքն ողորմի...։

589
ՄԱՇՏՈՑ

ՋՁՍԳ, № 113. տե՛ս նաև «ՀԱ», 1926 թ. էջ 550

Գրիչ՝ Սարգիս քահանայ
Վայր՝ Դահուրայ

72 Գրեցաւ կատարիչս է (7) խորհրդեան եկեղեցւոյ, որ ասի Մաշ-թոց, ձեռամբ նուաստ և ներքևեալ ոգւոյ Սարգիս սուտանուն քահանա-յիս, ի գիւղն որ կոչի Դահուրայ, ի թվին ՌՀԹ (1630)։

590
ԱԻԵՏԱՐԱՆ (ժամանակ ?)

«Լոյս» 1906 թ. № 27

646 Փառք...։ Զստացաւղ սբ. Աւետարանիս զխոճայ Հախնազարն, և զմահտեսի Եարդուլին, և զծնաւղն իւրեանց, և իւրեանց արեան մերձա-ւորացն, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի առացէք, որ ստացան զսա ի հալալ վաստակոց իւրեանց, և եդին իւրեանց անջինջ յիշատակ ընտ հովանեաւ Ս. Լուսաւորչին աջոյն, ի մայրաքաղաքն Սիս, ի հայրա-պետութեան տեառն տէր Մինաս կաթողիկոսին, ի թուականութեանս ՌՀԹ (1630), Հախնազար Ագուլեցի և Եարդուլին, որոց յիշատակն աւր-հնութեամբ եղիցի։

591
ՏՕՆԱՑՈՅՑ (1627 թ.)

Բեյրութ, «ՀԱ», 1959, էջ 420

Վաճառող՝ Նիկողոս

Ես՝ նուաստ Նիկողոս ծախեցի զայս Տօնացոյցս տէր Սաեփանոս կրօնաւորին. ՌՀԹ (1630) թվին, զոր տէր Աստուած բարեաւ վայելեսցէ· ամէն։

---

[65] Ինչպես Թոփչյանն է հաղորդում, ձեռ-ում գրչի և ստացողի անունները չնշված են։

592
ՃԱՌԸՆՏԻՐ

Թորոս աղբար, Բ, էջ 450-452

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Համիք

Աւրհնութիւն... Աստուծոյ Հաւր... որոյ շնորհաւք աւարտեցաւ ոսկեսաւոր Տաւնականս ի մայրաքաղաքս Համիք՝ Տիգրանակերտ, ընդ հովանեաւ տաճարիս Կիրակոսի և մաւր նորա Յուղիտայի։ Ի յառաջնորդութեան տէր Բարսեղ քաջ բարունապետի, ձեռամբ... Գրիգոր գրչի, ի խընդրոյ պատուական... տէր Սարգիս քահանայի... յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց Խաչատուրին և Մէլիքզարին, և եղբաւրն՝ Գրիգորին, և հարսին՝ Մարիամին, և քուերցն՝ Ազատին և Գուլփաշին, և մաւր հաւրն՝ տէր Գրիգոր նահատակին, որ հրով այրեցին յԱմիք քաղաքի, վասն անուանն Քրիստոսի. և հաւոյն՝ Առաքելին, և հանւոյն՝ Թավրէզին. և... Դտունին... և մղտեսի Մամխաթունին...:

Արդ՝ գրեցաւ սա յամի ՌՀԹ (1630) թվին մերումս տումարի, ի հայրապետութեան տեառն Մովսէսի ընդհանուր Հայոց և սրբասնեալ ճգնող կաթողիկոսի... յիշեցէք ի միտս բարիս և ի հասակս պատկանաւորս ղրտէր Սարգիսն և... զմահտեսի Միքայէլն, [որ] ստացան զանառիկ մեծութիւնս և զանկողոպտելի փարթամութիւնն, զայգիս վայելուչ և զդրախտս աստուածատունկ, զորթս ծաղկեալ և զծառս պտղալի...։ [Յիշեցէք] և զհոգևոր ծնողն իմ զուսուցիչ արհեստիս զտէր Մինաս բանիբուն քահանայն, և զծնողն իւր՝ զտէր Ստեփաննոս քահանայն, զոր տէր Աստուած առողջ կենաւք պահեսցէ և յետ աստեացս ելանելոյ անթառամ պսակին արժանիս· արասցէ... ամէն։

593
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Բժշկյանց, էջ 277

Վայր՝ Աղջասարայ

Արդ՝ գրեցաւ ի թուականիս ՌՀԹ (1630) ամին, ի ծննդեան ՌՈԼԲ (1632), յաշխարհն Հոնաց, ի թագաւորանիստ գիւղաքաղաքիս, որ այժմ Աղջասարայ ասի, ի վիմապատ ձորամիջիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, որ է եկեղեցի առանց հիման։

594
ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1578—1579

Ազգիս Հայոց թըւականին,
Կրկին քառ[ե]ակ և երկհարիւրին,
Եւթանասուն և Թ (1630) ամին[66],

[66] Այսինքն՝ (2×4)×[100]+200+79+551։

Ստացաւ զգործս աստուածային։
Հարցմունք խորհրդով լին,
Զոր կարգեց սբ. վարդապետ Տաթևացին,
Ժ (10) գլխով լի ւ անթերին։
Որ ողորմի Տէրն ամենի,
Մելքոնին և կողակցուն՝ Բերամիրին,
Եւ որդոցն՝ Աւետիքին,
Եւ Ղատամիութլու, Կօզալխանին։
Եւս անուանել ծնողքն Մելքոնին,
Պարոն Առաքելն ընդ Մերիասին,
Եւ եղբարքն իւր ամենեքին՝
Շէրըմեր ընդ Աւետիքին։
Տէր խաչատուր ընդ Պաղտ[ա]ս[ա]րին և Պարոնին,
Այլ և դստեր տէր խաչատուրին,
Տալիք անուն վերաձայնին,
Փոխեցելոյ յերկրէ երկի[ն]։
Յորժամ որ գայ Տէրն յերկնային.
. . . . . .

ՌԶ 1631

595

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՎԱՑԻՈՅ

Երևան, № 2654

Գրիչ՝ Գրիգոր

301ա Փառք...։ Որո[յ] ցանկացեալ եղէ սմա տենչալի և բաղձալի դիմաւր, մեծափափաքանաւք և սերտ հաւատով և ետ գրել զմատեանս և զբծորէս աստուածային, ի վայելումն անձին իւրոյ։ Գրեցաւ սա ի թուին Հայոց Ռ և Զ (1631), որ ունի տարիս զԿարիճն և ամիս յունվարնի ի (20), աւր հինգշաբթի ի յաւարտ գրոցս, ի գուռն Ս. Աստուածածնին և Ս. Ըստեփաննոսի Նախավկային և Ս. Սարգսի զինաւորէն և այլ ամենայն սրբոցս որ այս[տ] կան հաւաքեալ, և հոչակ[աւ]որի ուխտիս սբ. առաքեալք և Ս. Նշան և Գէորգա[յ] զինաւորին և [ղ]ամենայն սրբոցս, որ է պահապան աղդիս Հայոց։ Ի թագաւորութեան Տաճկաց բրոնակալ սուլթան Մուրատին, ի կաթողիկոսութեանն սրբազան և քաջ հեռոտորի Մովսէսի, և աշակերտաց նորա Փիլիպոս վարդապետի և Խաչատուրի, և ի յառաջնորդութեան տեղոյս համշիրակ եղբաւր մերոյ Ալէքսանոս վարդապետի և տէր Կարապետ ահրի և պանծալի եպիսկոպոսի, և տէր Թաքէոսի, կատարողք ամենայն առաքինութեամբ, որ հեզաբար բառնան զխոնարհութեան լուծն Քրիստոսի, ըստ առաքելական բանիւ որ ասէ. «Որ սիրէ զիս, ի հալածականս եղիցի». յորում և եղբայրք մեր և ընտիր քահանայք մեր՝ զտէր Աստուածատուրն, և որդիացելո[ց?] մերոց զտէր Գրիգոր քարտուղ[ար] և հիւս և գրակապ քաջ և
301բ արի ք /// և // կան ի բուն /// անմշակ առանց ամաւթոյ, որոյ առե[ալ] լուծ խ[ոն]արհութեանն, յորոյ յուսամք ի յապիղինեաց Աստուած, որ զինք ամբիծ և անարատ պահեսցէ գնոքա մինչև ի կէտ կոչմանն Քրիստոսի, և նորաբողբոջ քահանայն զտէր Կարապետն, և ալեաւք ծերացեալ քահանայքն մեր իբրև զԱբրահամ կամ իբրև զՀեղի և զծերն Սիմէոն, զտէր Յովսէփն և զտէր Վարդանն, և զնորահաս քահանայքն մեր՝ զմահդասի տէր Մելքիսեդեկն և տէր Յովաննէսն, և զյետնեալքն մեր զՍաէփանոս և զՇերունն, միթէ ողորմեսցի բարերարն Աստուած և նոցա դարձ շնորհեսցէ ըստ աւետարա[նա]կան բանին, որ ասէ, թէ «Որ գայ առ իս, ոչ հանեմ արտաքս[1]»։ Եւ զիշխանք մեր զպարոն Լուսպարոնն, զբխոնճա Ճոմարտն, զխաչերեսն, զխաչերն, զմահդասի Յակոբն, զԱմր-

[1] Յովհ., Զ, 37։

տաւն, զՄելքոնն, զպարոն Սատրինանն, զմիւս Սատրինանն և զծերքն մեր, զքաղաքիս երիտասարդք, թէ աղքատք և կարաւտեալք, որ մեզ վերա երախտաւորք են։ Զոր և բազկատարած մաղթանաւք հայցեմք և յուսամք յամէնազաւր տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ անփորձ և անարատ պահեսցէ ներքին և արտաքին պատահար կրիցն, դաւաճանողէ, մերմէ տեսուչ Հայոց ազգիս զտէր Մինաս կաթողիկոս Կիլիկիացոց աթոռոյ, և առ հասարակ աշակերտաց և միաբանից նորա, յուսամք ի Տէրս մեր, որ պարագայց ամաւք և երկար ժաման[ակ]աւք ի պարծանք Հայոց տառապեալ ազգիս մերոյ անարատ պահեսցէ...։ /// [հո]ղրս և մոխիրս երեսս ի գետնի դնելով կողկողագին պաղատանաւք, բազմապատիկ աղաչե[մ], ո՛վ դասք ուսումնասիրաց, [յո]րժամ վարժիկ ի սմանէ, յիշեցէք սբ. և արժանաւոր աղօթս ձեր զեղկելի և դանարժան Գրիգոր գծողս և զմարմնաւոր ծնողս իմ զմահդասի Պապն և զմայրն իմ՝ զմահդասի Խուպին, և զքուրն իմ՝ զմահդասի Խանփաշն և զեղբայրքն իմ, որ փոխեալ են առ Քրիստոս, զհայր Անդոնն, որ զինքն սրախողխող մահուանն սպանին ի Խաղբեաց երկիրն, որ կոչի Շողայէն, ի ձեռն մարդասպան աւազակաց, և զապրանք թալանելով, ԴՌ (4000) ղուռուշի ապրանքն առնելով և զհաւատացեալքն ամենեքեան սրայխոխոխ արարին, որ այսպէս վկայեցին, թէ ՃՌ (100000) ղուռուշ կայ ի նոցա հետն, անաստուած Մարաց ազգն, որ է քուրդ։ Ի յահեղ ատենին զպատիժն ի յաստուածպետականէն առնէն զվրժխնդիր, և զԽուպինանն, և զկենդանին զեղբայրն իմ՝ զՊապաճանն, և զմարմնաւոր որդիքն մեր՝ զՍրապն, զԹադէոսն, զՊարսամն և զՄարխաս սարկաւագն, և զաշակերտն իմ՝ զԹորոսն, որ զթուխթն կոկեաց, և զբազմերախտ նախնիքն մեր, որ հանգուցեալ են ի Քրիստոս։ Դարձեալ երես անկեալ աղաչեմ և աղերսեմ և մաղթեմ ի ձեզանէ, ո՛վ պատմողք սորա, զի անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս, զի ի բազումէհետէ վարանեալ և տատանեալ կամ[2]

596

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 9742. տե՛ս նաև Կամենից, էջ 185, ՅԶԼԱ, № 3 (26), էջ 34—35, «ՀԱ», 1948, էջ 424

Գրիչ՝ Սիմոն երէց
Վայր՝ Լով

324ա Փառք...։ Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս, որ կոչի Աւետարան, ամի շրջագայութեան արամաղեան տոհմի հայկազեան սեռի, աբեթական տօմարի ՌԶ (1631) թվականին յունվար ամսոյ ԻԲ (22)-ին։ Բայց
324բ գրեցաւ սա ի մայրաքաղաքն Լով, ընդ // հովանեաւ ննջման Ս. Աստուածածնին, ի հայրապետութեանն տեառն տէր Մովսէս երջանիկ քաջ բարբունապետ կաթուղիկոսին Ուրհայեցւոյ[3], և ի թագաւորութեանն Լէհաց

[2] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է, ձեռ-ի վերջից թերթեր ընկնելու պատճառով։ Հիշատակարանը խիստ համառոտ տե՛ս նաև Հ. Ոսկյան, Սերաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի և Տրապիզոնի նահանգներու վանքերը, էջ 105—106։

[3] Ն. Ակինյանն իրավացիորեն ծանոթագրում է. «Մովսէս կաթողիկոս Տաթևացի, հատկապես Խոտանանցի էր» (ՅԶԼԱ, էջ 35)։

երկրին Երկրորդ Զիկմունդին, որ է աղգաւ ընկռուդ, ձեռամբ մեղաւոր և անարժան, լոկ անուն Սիմոն իրիցուիս, որ միայն անուամբս եմ կոչեցեալ, բայց գործովս հեռացեալ, դծագրեցի զայս սբ. տառս ի խնդրոյ աստուածասէր և երկիւղած տիկնոջն բանի Նասդուխնային, որ է կենակից Ավէտիքեանց բան Միսքոին, և դուստր բան Պոնտանին Տօնավագեանց, զի յոյժ փափագ և ջերմեռանդ սրտիւ ետ զսա դրել ի հալալ ընչից իւրոց, և եդ յիշատակ անջինջ յաւիտենական իւր և իւրայնոցն՝ կենդանեաց և անջնջելոց և ամենայն արեան մերձաւորացն, ի դուռն Հաճատկատար մենաստանին՝ ի քաղաքն Սէջով: Արդ՝ աղաչեմ զձեզ զամենեսեան, ո՛վ սբ. հայրք և եղբայրք նազելի՝ պաշտօնեայքդ Քրիստոսի[4]

597
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1099 (ԺԵ դար)

121ա Փառք...։ Արդ՝ ի թվին Հայոց ՌԶ (1631) և ի յունվարի ԻԸ (28), ի հայրապետութեան Հայոց մեծաց սբ. Էջմիածնայ տեառն տէր Մովսէս ընտրեալ և սրբասնեալ կաթողիկոսի և երկրորդ լուսաւորչի, այլ և քաջ պվետիկոս, տիեզերալոյս բարունապետի, որ լուսափայլ բանիւ պայծառացոյց զազգս Հայոց և զարգարեաց զեկեղեցիս նորոգելով բաղում և յոլով վանորայս և մենաստանս, նաև զայրս և զփապարս լերանց, զդաշտս և զանտառս ծաղկեցոյց կուսակրօն ճգնաւորօք և սբ. միանձնացելովք, մաքուր կուսանօք և աստուածահաճոյ անապատաւորօք, որովք հաստատեցան կարգք և սահմանք ժամատեղաց, դ[պ]րատունք և ժամակարգութիւնք ի փառս տեառն Աստուծոյ։ Եւ ի թագաւորութեանն Լեհաց աշխարհին Երրորդ Զիկմունդին, ի տիրախնամ և աստուածա-
121բ պահ մայրաքաղաքն Լէվ: Զոր յայսմ ամի եկն ի Լէհ Նուիրակ // տէր Խաչատուր արի և քաջ բարունապետն ի տեառն տէր Մովսէս կաթողիկոսէ, ընդ նմին և հարազատ քեռորդին հոգևոր տիրոջն, նմանեալ նմին առաքինի վարուցն, ճգնազգեաց և խստակրօն տէր Գրիգորի կրօնաւոր բանասէրն, զոր տեսեալ զայս անգին գանձս և ցանկալի պատվական գիրքս, որ կոչի Քաղվածք Սողոմոնի և Առքինութեանց և Սահմանացն քաղվածք, այլ և կայ խրատ առոգանութեան։ Վասն որոյ փափագեալ մեծաւ տենչմամբ և բաղձանօք, յորդորեաց զիլովցի աստուածասէր և բարի հոգի այրն Աստուծոյ պարոն Լազար, զորդին պարոն Խաչատուրին, որ և նա ունելով գութ և սէր ընդ նմա կատարեաց զխնդիրն և ելից ըզփափագ սրտին և զմեծ իղձն, յիշ[ել]ով զբանն յԵսայեա. «Երանի...»[5]։ Վասն որոյ գնեաց զցանկալի գիրքս զայս ի հալալ յարդեանցն և յարդար վաստակացն, վասն իւր հոգւոյն և ի[ւ]ր ծնողացն, և յետ պարգև և յօժիտ վերոյ ասացեալ Գրիգոր կրօնաւորին, յիշատակ անջինջ և յետ մնաց յաւիտենական, զի որչափ ընթերցցին զսա, յիշեսցին զվերոյ ասացեալ խոճայ Լազարն և զկենակիցն իւր՝ զՀէդիսիմէն, և զուստերս, և զդստերս նոցս։ այլ և ի Քրիստոս փոխեցեալ ծնողսն, զհայրն՝ ըղ-

[4] Զեռ-ից թերթ ընկնելու պատճառով հիշատակարանը մնում է թերի։
[5] Նսայ., ԼԱ, 9։

պարոն Խաչատուրն և զմայրն՝ Եղիսաբեթ, և զամենայն յարեան մերձաւորսն. զոր տէր Աստուած բարով վայելել տացէ զսայ տէր Գրիգոր կրօնաւորին և ընդ երկայն աւուրս ի մեծահռչակ վանքն Տաթևու։

Ընդ նմին և ես աղաչեմ եղկելիս և մեղաց գերիս՝ վաճառող գրքիս և յարմարող յիշատակարանիս, յիշել ի Տէր բարի մտօք և ասել ողորմիս, բայց վայ ինձ հիքիս, որ տվի զոսկին և առի զփոշին։ Եւ որք ընթեռնուլն կամ օրինակիլն յիշեն զմեզ, յիշեալ լիցին օրն աներեկին և երանական ձայնին, որ ասէ. «Եկայք աւրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զանսպառ ուրախութիւնն»[6]. յաւիտեանս. ամէն։

598

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԵՐԱՎՋ, № 428. տե՛ս նաև «Բազմավէպ» 1938 թ., էջ 313—314

Գրիչ տիրացու Սիմէոն
Վայր՝ Իլէվ

ա

652 Փառք...։ Արդ՝ ի թվին Հայոց մեծաց ՌՁ (1631) և յունվարի ԻԸ (28), ի հայրապետութեան Հայոց մեծաց սբ. Էջմիածնա[յ] տեառն տէր Մովսէս ընտրեալ և սրբասնեալ կաթուղիկոսի և երկրորդ լուսաւորչի, այլ և քաջ սվետիկոսի, տիեզերալոյս բաբունապետի, որ լուսափայլ բանին իւրով և յորդառատ քարոզին ոչ միայն զքաղաքս և զշէնս, այլ ե զանապատս, և զդաշտս հանդերձ անտառօք ծաղկեցոյց և վայելչացոյց, իբրև զանապատն Եգիպտոսի, զարդարելով զազգս Հայոց և պայծառացուցանելով ի փառս Աստուծոյ, ածեալ զամենեսին հրաւիրելով ի սէրն Քրիստոսի շինելով վանորայս, և նորոգելով եկեղեցիս բազում, և յոլով ի յայրս և ի փապարս լերանց հաստատեալ անխափան ժամ և ժամակարգութիւն, կարգ և սահմանք արար կուսակրօն ճգնաւորօք, և սբ. միանձնացելովք մաքուր կուսիւք, և աստուածահաճոյ կրօնաւորօք, այլ և արար դպրատունս և գրատունս առ ի վարժումն մանկանց որդոց Սիոնի։ Եւ այլ բազում կարգաւորութիւնս արար սա ի սբ. Էջմիածին, ե բոլոր Հայաստանն՝ աշխարհս Հայոց։

Բայց գրեցաւ գիրքս ի աշխարհս Լէհաց, ի տիրախնամ և աստուածապահ քաղաքն Իլէվ, ի թագաւորութեան Լէհաց նահանկին Երրորդ Զիկմունտին, ընդ հովանեաւ Ննշման Ս. Աստուածածնին և այլ բազմահաւաք սբ. տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ձեռամբ անարժան և անարհեստ գրչիս Սիմէոն տիրացուիս, ի դառն և անբարի ժամանակիս, զոր այսմ ամիս ազգս Հայոց էր ի մէջ վշտի և մեծ նեղութեան տառապանաց, վասն ծովացեալ մեղաց։ Ի խնդրոյ մեծազգի և պատուական զարմի, հեզահոգի և աստուածասէր, երկիւղած առն Աստուծոյ, մեծատուն և անուանի, հոգիսէր և գրասէր տանուտէրն Ջուղեցի պարոն Ֆարուխն, որ բազում սիրով և ըղձմամբ սրտի և մեծաւ փափագանօք ետ գրել զայս ցանկալի գիրքս, որ կոչի Ծաղկագիրք, զի բազում ինչ կա հաւաքեալ և ժողովեալ ի սմա՝ ի պատմագրաց և ի հարցմա[նց] գրոց,

[6] Մատթ. ԻԵ, 34։

ոյժ գեղեցիկ և պիտանի և բազմաց գովելի, շահ և օգուտ Հայոց ազգի. գնեց զգիրքս ի հալալ յարգեանց և յարգար վաստակոցն, վասն իւր հոգոյն և իւր ծնողացն[7], հօրն...[8] և մօրն...[9] և ամենայն զարմի և յարեան
653 մերձաւորացն՝ կեն//դանեաց և հանգուցելոց։ Զի գնեց զսա ի սբաղումբն և վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ և յետ մնացիցն, և զաւակացն իւրոց սիրասնունդ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ նմա և ընդ երկայն աւուրս. ամէն, եղիցի։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք կամ օրինակէք, յիշեցէք ի Քրիստոս բարի մտօքս զվերոյ ասացեալ ստացող սորա պարոն Ֆարուխն և զամենայն արեան մերձաւորս. և զիս անարժան գծողս և զիմ ծնողս։ Բայց աղաչեմ զհանդիպողդ չի մեղադրել գրոյս խոշորութեան[ն] և սխալանացն, զի բաղում վշտօք և հոգսով և խիստ տրտմութեամբ գրեցի և նօտրեցի զսա, շտապով և փութով միայն ի կատարն և վերջն հասանել շանայի։

Եւ որ ողորմածն է գթած....։

Բ

652 Փրկէ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս, մանաւանդ ստացողն սորա Ջուղեցի պարոն Ֆարուխն, և զմեղապարտ գծողս, և Քրիստոսի փառք այժմ և անդրաւ յաւիտեանս յաւիտենից։

Փառք Փրկչին,
Պատիւ գրչին,
Աստուածային աւրհնութիւն,
Ի վերայ գրգիս ընթերցողին,
Եւ խնամով պահողին[10]։

599

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԵՐԱՎՋ, № 430

Գրիչ՝ Աւետիք

Ա

660 Այս գիրքս, որ աւարտ եղև օգնականութեամբն Աստուծոյ, Դ (4) թուխտ նախ տէր Առաքելն է գրել, ԺԵ (15) թուխտ գրայգիր տէր Ստեփանոսն, ԺԸ (18) թուխտ Քալամբկինց տէր Մարգարէն, Բ (2) թուխտ տէր
661 Աստուածատուրն Զօմփէնց, տէր Ստեփանոսն, տէր Ազարենց // ԿԱ (61) թուխտ։ Տէր Աստուած մեզ օգտողացս, որ աստ դրեալ կան, մեղացն թողութիւն, կենդանեացն՝ կեանք և առողջութիւն, ննջեցելոցն՝ հանգիստ և արքայութիւն պարգևէսցէ, իւրեանց ըզյանուանս գրեսցէ տէրն մեր Յիսուս Քրիստոս ի դպրութիւն կենաց. ամէն։ Եւ զիս մեղաւոր Աւետիս և զիմ ծնողքն զամենանօքն հանդերձ, զաստուածային տեսոյդ. երանաւէտ ձայնիդ յաջակ[ողմեան] դասիդ, յանպատում յօթևանին, յանմատոյց խորանին, փեսաիդ առագաստին արժան առնես. ամէն։

Բ

Ես պեղծ, սատակեալ շուն և ջախջախ[ե]ալ Աւետիս գրեցի մինչ ի ԵՃԷ (507) թուխտն <գրեցի>, որ մերն երեսուն և հինգ թուխտ է։ Այս

[7] Ձեռ-ում «և իւր ծնողացն» հատվածը կրկնված է։

[8] և [9] Անունների տեղերը բաց են թողնված։

[10] Տե՛ս մի երկու հիշատակարան ևս, առանց պատմական տեղեկությունների, չվերցրինք։

վայր Տէր ամենակալ է, աւարտն Մեղայ է գրած, մէկ Մեղայ այլ Մարաշեցոյ Գրիգորի *բուն աւարտն գրեցաք։*

Աւետ, *վա՛յ և բիւրքս վա՛յ քեզ, Ռ (1000) բիւրք եղուկ, զի ոչ մաք-ռեցիր զքեզ...։*

Գ

Փառք..., որ տուեր կարողութիւն մեղսամած, ուլ և ծուլ, թուլ և արկար բնութեանս, որ և զայս մաղթանաց բանս ժողովեցաք ի յայլոց օրինակաց՝ միով, երրորդով, չորրորդով, հնգով մի տեղեցաք, աւարտ ելաք օգնութեամբ տեառն Աստուծոյ և կատարեցաք դառն,դժար ժամանակիս, որ հրամա[յ]է գիրք աստուածային, թէ՝ «ի բազմանալոյն անօրէնութեանց, ցամաքեսցի սէր բազմաց[11]*». այսպէս ցամաքեալս ի ջրոյն կենաց յորդացեալս գիջութեան մեղաց...։*

Աղաչեմ ընթերցողդ ամենայն արժան առնելով մեղաւորս ի յիշման, սուտանունս մահդասի անարժան Աւետիս *կոչեցեալ, սատակեալ և զզան։ Հայր իմ զիւօջայ* Բաբաքն *և զմայրս* Ոլուիսաթունն, *և որդիքս զպարոն* Բաբայն, Ըռէփիլիպն, *դստերքս* զեալաֆն, Ուղուրլուն, Սոֆիէն *և* Անանէն, *հանգուցեալ ի Քրիստոս* Յակոբջանն, Ավդրլմսեհն, Մարեամն, *եղբարքս՝* Մարգարէն, Յակոբն, *քուերքս* Ոսկիտատիկն, Ուստիանէն, Փայրիիանն, Հուրիսիմէն։ *Ով որ յիշէ...*[12]։

Դ

....[13]

662 *ԽԹ. Յաւէտ պաղատանքս ընկեալ այս մեղօք լցեալ* Աւետիս,
Բարեխաւսութեամբ կուս մօրդ ծնօղի տեառնդ Յիսուսիս,
Ս. Քրիստոս քաւեա մեղս մեր յամենայն քրիստոնէիս,
Ընթերցօղացդ գրուս այնոցիկ յիշեն զեղկելիս։
ՃԱ. Թվիս Հայոց գրեցի հազար և ութսուն (1631) տօմարիս,
Յառաջաւորաց պասին[14]*, զոր ասեն սրբոյն Սարգսիս,*
ՃԲ. Բարեխաւսութեամբ նորայ և որդոյն իւր Մարտիրոսիս,
Ամենեսեանց մեղս քաւեայ, փառս երգեմք քեզ անլռելիս։

600

ՄԱՇՏՈՑ

Հ. Ոսկյան, Սեբաստիայի վանքերը, էջ 42

Գրիչ՝ Միքայէլ դպիր
Վայր՝ Մարզուան

Գրեցաւ սա ի գիւղաքաղաքն Մարզուան, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի թուաբերութեանս հայկազեան տումարի հաղարերոր-*

---

[11] *Մատթ. ԻԴ, 12։*

[12] *Ցուցակում տե՛ս նման մի հիշատակարան ևս, չվերցրինք։ Այս գրիչն այն անձնավորությունն է, որ Նոր Ջուղայում 1613 թ. կառուցել է Ս. Աստուածածին եկեղեցին և գմբեթի կամարին էլ թողել արձանագրություն (տե՛ս* Տեր Հովհաննեսյանց *Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1881, հտ. Բ, էջ 191)։*

[13] *Ցուցակում սույն չափածոն բերված է 30-րդ տողից։ Բերված մասում, նշված են վերևում հիշված անունները, չվերցրինք, միայն բերում ենք վերջին հատվածը, ուր նշված է տարեթիվը։*

[14] *Այսինքն՝ 1631 թ. հունվարի 31-ից մինչև փետրվարի 5-ը։*

դի ութծունեերորդի (1631) փետրվարի Ժ (10), աւրն երեքշաբթի. ձեռամբ յոգնամեղ և անարհեստ սոսկանուն Միքայէլ դպրի[15]։

601
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՋԼՍ, № 33 (1338 թ.)

Վայր՝ Հալապ

74 ...։ Որոյ փափաքօղ եղեալ սմայ բարեպաշտ և երկիւղածն Աստուծոյ այսինքն՝ հաւատարիմ և իմաստուն, աստուածասէր այրն Աստուծոյ մահդեսի Լուսիկն։ Որ և յիշեաց զբանն աստուածային, թէ «Գանձեցէք ձեզ գանձս ի յերկինս որ ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ[16]»։ Ստացաւ զԱւետարանս ի հալալ արդեանց, յիշատակ իւրն և իւր նախնեացն և իւր կողակցուն՝ մահդեսի Ճիճանին և յիւր յամենայն արեան մերձաւորացն։ Յիշատակ է սբ. Աւետարանս Խարբերթցի խաղցի Ղազարին. որդոյն Սկանդարին, թոռանն մղցի Լուսիկանն, և իր եղբօրն՝ Դաւթին, և մեծ պապուն՝ Խաչատուրին, մօրն՝ Վարդէնին, և իւր կողակցուն՝ մահտեսի Ճիճանին, հօրն՝ Սարգսին. մաւրն՝ Վարդենին։ Աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգոյն. ամէն։ Ի թվականիս Հայոց ՌՁ (1631) փետրուար ամսոյ ի ԻԱ (21) ըստացաւ զսբ. Աւետարանս մահտեսի Լուսիկն և եդ յիշատակ ի Հալապ քաղաք, ի Ս. Աստուածածին եկեղեցին, յիշատակ յաւիտենական։ Որք տեսանէք զսայ և կամ ընթեռնոյք լի բերանով Աստուած ողորմի ասացէք անխնայաբար մահտեսի Լուսեկանն և իւր կողակցուն՝ մահտեսի Ճիճանին, և իւրեանց ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

602
ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ
Տիրայր վարդապետ, № 110

1907 Փառք...։ Շնորհիւ բարերարին Աստուծոյ կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւն սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի, որ կոչի Յաճախապատում, ի թվականութեանս Հայոց ՌՁ (1631), մարտ Ա (1), օրն երեքշաբթի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

603
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6846 (1451 թ.)

Կազմող՝ Պետրոս երէց

258ա Փառք...։ Արդ՝ վերրստին նորոգեցաւ [սբ.] Աւետարանս ձեռամբ մե[ղսամա]ծ և մեղսաթաւալ, սուտանուն [և] անպիտան Պետրոս էրեցս,

[15] Հ. Ոսկյանը սույն հիշատակարանը վերցրել է Քեշիշյանի «Ցուցակ հայ. ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի» անտիպ աշխատությունից, ուր Ж-ն էլ հարցականով նշված է 20, իսկ տարեթիվը՝ 1631 թ. փոխարեն 1625 թ.։ Ցուցակի տպագրված օրինակում № 20-ի տակ Ավետարան է։

[16] Ղուկ., ԺԲ, 33. Մատթ, Զ, 19, 20։

ի յե /// նխահեայ, ի զեղչէն Ղարաջուլու, ի ղուրս Ս. Վարդանայ, ի փատ-
չայութիւն շահ Սէֆուն, և ի պատրիարքս Հայոց Էջմիածնա[յ] Մովսէ-
սին, և առաջնորդս մեր Բարսեղ եպիսկոպոսն։ Ո՛վ եղ[բ]արք, խիստ
նեղ և դասն ժամանակ էինք, Գ (3) տարի բերթի տակն կացինք, և ապա
ձմռան Գ (3) ամիսն ի տուն կացինք։ Վասն ծովացեալ մեղաց մերոց
պատուհաս երեկ ի վերայ աշխարհիս՝ ձուն եկաւ մեծ Զատկի Կանաչ
258բ կիրակին[17], և ամենայն պտղաբերքն // չորացան, և ապայ Աստուած
ողորմած էր՝ կէս մի կանաչեցաւ, և կէս մի անցաւ մինչև ի տակն չորա-
ցաւ։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս, ձեր զվերջին ըստացաւղ
սբ. Աւետարանիս, յիշատակ հոգոյ իւրեանց զՄիրզաջանն, և կողա-
կից Նուբար, և զորդին՝ Միսիրն, և եղբարն՝ Մաղսուտն, և կողակից
Անախսաթն, և զորդին՝ Սուվարն, Աւդիշն, Էնաթն, Եթարն, և զորդին՝ Մի-
ռաքջանն, և կողակիցն՝ Խումարն, որդին՝ Էնաթն, Աջին. ամէն։ Եւ ետ
կաղմել սբ. Աւետարանն իւրեանց հոգոյ յիշատակ է, կենդանեաց և
ննջեցելոց. ամէն։

Ի թվին ՌՁ (1631)։

604

ԴԱՒԱՆԱԿԱՆ

Տիրայր վարդապետ, № 19

Գրիչ՝ Ակոբ դպիր
Վայր՝ Հալապ

ա

321 Վասն Կարկառեցի Տիրատուր աւագ սարկաւագի, և զխնդիրս նորա
կատարեցի, ի թվին Հայոց մեծի լի.... Ռ և ութսուն յարաբարդի (1631)։

բ

Յիսուսի Քրիստոսի ծառա Ակոբ դպիր մի՛ մեղադրէք բանի, եղբ[ա]-
յրքդ մեր, զի խիստ գլխացաւ էի, ընթերցողդ ով ոք իցէ, ի Հալապս
կատարեալ եղև գրելումս ի մայիս ամսուն ի ԺԳ (13), օրն ուրբաթի։

605

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4284

Գրիչ՝ Դանիէլ եպիսկոպոս

146բ Ես՝ Դանիէլ եպիսկոպոս Ըստանպոլցի զայս տաւմար տէտր գրեցի,
թվական ՌՁ (1631) <ամիսս> մայիս ամսոյ, ձեռամբ իմով, գրեցի ///
աբեղային /// անարժանս [յ]իշէ, ողորմի ասէ և ողորմի Աստուած իւրե-
ան[18]։

---

[17] Այսինքն ապրիլի 24-ին, որովհետև 1631 թ. Զատիկը կլինի ապրիլի 10-ին (հուլյան տոմարով)։

[18] Ձեռ-ի ընդօրինակության հիշատակարանը տեսնել 1634 թ. շարքում։

606
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 4642

Գրիչ՝ Գրիգոր քահանայ
Վայր՝ Ախալգոր

ա

214ա Փառք..., որ գրեցաւ զսր. քարոզս և կանոնս, որ կոչեցաւ Քարո-
215ա զայգիրք և Կանոնայգիրք...։ Գրեցաւ զայս տառս ի գիւղաքաղաքս Ա-
խալգաւր, ի դուռն սբ. նորայկնունք Միրանաւոր Ս. Աստուածածնայ և
ամենայն սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի հայրապետութիւն և
առաջնորդութիւն հրայհանք և լուսայկառուց սբ. յաթոռոյն էջմիածնայ
տեառն տէր Մովսէս կաթողիկոսին և միաբանից նորա, եպիսկոպոսին
մերոյ տէր Կիրակոսին, որ է սպասաւոր ահր և ուղղափառ Հայրապետայ
Ս. Նշանին և գաւառիս և Գաւրայ քաղաքիս եպիսկոպոսին մերոյ տէր
Անդրէասին. Աստուած սայ անսասան պահէ մինչև ի խորին ծերութեան։
Զեռամբ սուտանուն, մեղսայմակարդ, թոյլ և ծոյլ, շնացող և ցանկա-
ցող և անպիտան Գրիգոր քահանայիս, անուամբս եմ քահանայ և գոր-
ծովս ոչ։ Ցիշեցէք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր զհայրն իմ՝ Առաքել
վարպետն, և զմայրն իմ՝ Խանաղեն։ Ո՛վ սբ. կարդացողք, թողութիւն
շնորհեցէք գրիս սղալանաց կամ խոշորութեան, զի կայր մեր այս էր,
զի ոչ մեղայդրէք, թէ քարոզն բոլոր է գրած և կանաւն նաւտր, վասն
այս պատճառիս, որ յաշունքն սկիզբն արի մինչև ի յունիսի ամսոյ Դ
(4)-ին աւարտեցաւ, թուխթն պակասում էր, այլ ճար չկայր, այնոր հա-
մար կանոնս գրեցի նոտր։ Դուք լինիք որդի արքայութեան որ յիշէք զիս
ի յաղաւթս ձեր։

215բ Դարձեալ յիշեցէք ըստացող սիրով փափակ[ող?] /// ետ գրել զայս
հոգևոր նամակս, և տառս, և քարոզս, և Կանոնայգիրքս զայս հոգևոր
աստուածայսէր, ողորմած յաղքատին... Ազիզ ապաշխարողս յիշատակ
էառ իւր հալալ ընչիցն և վաստակոցն իւր հոգոյն և իւր մարդոյ հոգոյն՝
Բայիսաղուլին և իւրան Մուրատ յորդացն այս անուն[19]։ Եւ եդիր վախմ
կենդանեաց և ննշեցելոց հոգոյն յիշատակ ի դուռն կաթուղիկէ Ս. Աս-
տուածածնին, ի Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի ձեռն
արժանաւոր քահանայիցն, որք կարդան կամ քարոզեն...։

Աստուած զայս տառս ձեզ թամամէ և վայելումն տացէ մինչև ի
խորին ծերութեան. ամէն։ Թվին ՌԶ (1631)։ Աւարտմանն աւրհնեալ է
Աստուած։

Աստուած ողորմի իմ հոգևոր մայր Սինդուխտին և քոյր Մուրիա-
մին, Եղարզին, որ ծառայ էին գրայգրիս[20]։

բ

6բ Տէր Աստուած թողութիւն շնորհեա՛յ ըստացողի գրոցս պարոն Բայ-

---

[19] Այլ թանաքով և թերևս գրով, բաց թողած տեղում շարունակված է՝ «Յուսէփին, Պապիեին, Խէչատուրին, Մխիթարին, Սօլթանղուլին Աստուած ողորմի»։

[20] ա հիշատակարանը տե՛ս նաև ՏԵՐԱՎԴ, № 67, էջ 115 աբ։

իսողուլին և իւր կողակից Ազիզ ապաշխարողի և իւրան Մուրատ յորդացրն և մեղաւոր գրչիս. ամէն[21]։

Գ

15ա Վայ դիս այլ մոլորեալ գրագրիս որ մեղաւք լցեալ անցաւորիս[22]։

Դ

29բ—21ա Վայշ, վաշ ու ախ, վայ դիս, ի՞նչ անիրաւ բաներ տեսայ ի յաշխարհիս, մէկ ու զմէջ կոտորեցին Վրացտան աղստի որդիքն։

Ե

33բ Ես առաւել սոսկանուն մեղաւոր Գրիգոր գրիչս, անուամբս կամ և գործովս ոչ, այլ պատիւ զՔրիստոս ունիմ։

Զ

39ա Լի բերանով ողորմի ասէք իմ հոգևոր քոյր Մարիամին, որ եկաւ կապէն կարեց գրագրին։

Է

40բ—41ա Տարէմտի առաւօտուն ոչ էի քուն, ոչ ի արթուն, այլ դազկահին յառաջ նստած ի բուն դիրս գրէի մինչ ի առաւաւտուն. Աստուած ողորմի Քէթինի հոգւոյն։

Ը

41բ—42ա Աստուած պահէ պարոն Պապին, իմ հոգևոր փեսայ, Աստուծոյ որդին տէր Աստուած անսասան պահէ զինքն և իւր կին, որ գրագրին էրէր մեկ մաշայն ու ծուղա։

Թ

52բ—53ա Յունվարի ամսոյն խիստ ձուն եկօ ի սարերոյն, հենց հալ քաշեցի ձրնի դարտոյն. որ կաղանպարս խիստ սառեցոյց, գրիչն ձեռս մնաց իրրև զքուն։

Ժ

65ա Աստուած ողորմի պարոն Ամիրումին, որ գրագրիս թանկա յօղրրկեց։

Ժա

81բ—82ա Աստուած աւրհնէ մեր փեսայ քաղաքացի Պապին, որ գրայգրիս մէկ մոմայպատ էր ղրկել. աւրհնէ զԱստուած զինքն։

Ժբ

83բ—84ա Աստուած ողորմի վարպետ Առաքելին և իւր կողակից Խանաղին[23], և իւր հարս, զիս թանթ արին, որ փոխեցան կենաց ի կեանս. ամէն։

---

[21] Նման հիշատակարաններ, ուր հիշվում է միայն Ազիզ ապաշխարողը, կան ձեռ-ի բազմաթիվ էջերում։

[22] Նման հիշատակություններ կան նաև ձեռ-ի տարբեր էջերում։

[23] Գրչի ծնողները։

ժգ

174ա Աստուած ողորմի Ավետիս եպիսկոպոսի հոգուն և ի[ւ]ր հոգևոր մայրն՝ Ազիզ ապաշխարողն, և իրայց հոգևոր որդի Ռուստուսին մեղայց Աստուած թողութիւն անէ։

ժդ

206բ Աստուած աւրհնէ պարոն Հերիֆնազն, որ հանապաղ առաւ[օ]տ լուսուն վարդ անուշահոտ ղրկէր զմեզ[24]։

607

ՄԷԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 1245 (1613 թ.)

Վայր՝ Ուսկուդար

1ա Հազար ու ութսուն Հայոց թուին (1631),
Յունիս ամսոյ ի տասն և ինն,
Զմեզ ազատէ Աստուած հոգին,
Ի չարաչար յախտէն տղմին։
Այսաւր է մուտ ամառնային,
Եւ եղանակ յոյժ չերմային,
Կամք յՈւսկուդար անուն տեղին,
Յարքայանիստ մեծ աւանին։

608

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 827 (ԺԶ դար)

3ա Տ[էր Ղա]զարն փոխեց[աւ] առ Աստուած ի թվին ՌԶ (1631) Վարդայվառին պահոցն, յուլիսի Դ (4), օրն երկուշաբթի։

609

ՀԱՐՅՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

ՏԵՐԱՎՋ, № 409 (ԺԴ դար ?)

Գնող՝ Սաեփանոս երէց

612 Աստուած քո գրողին հոգին լուսաւորէ, որ է տէր Սաեփանոս Զիֆ երէցն։ Ես՝ մեղաւոր Սաեփանոս էրէցս, որ զգիրս գընեցի, էր թիւն Հայոց ՌԶ (1631) ղամար ամիսն Ա (1)[25], և ղորդին իմ՝ Յակոբ դրպիրն գեղեցկագիր, և զայլ որդիսն իմ՝ Յոհանն, Ասատիրն, Փիլիպոսն, Առաֆելն, Պողոսն, և դստերքն իմ՝ Պարսսկ// և Իմասփիտն, Ազատն և մայր
613 սոցայ սաղմոսասաց Անանային։ Քրիստոս Աստուած ողորմեսցի սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում. ամէն։

---

[24] գ—ժդ հիշատակագրությունները գրված են համապատասխան էջերի լուսանցքներում։
[25] Այսինքն՝ հուլիսի 18-ին։

610
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 212 (1337 թ.)

311բ *Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջին ստացող սբ. Աւետարանիս զԹէոդուլօլսեցի Խաչգենց Յովանէսն, որ եղ զսայ անջինչ յիշատակ ի դուռն սբ. Էջմիածնայ, վասն հոգոյ իւրոյ և հօրն՝ Այվաթշին և մօրն՝ Արգունին, և կողակցին՝ Մուլֆինանին, հօրն՝ Նուռումին, և մօրն՝ Թուրինին, և որդոյն՝ Այվաթշին, որ հանգեաւ առ Քրիստոս և անմխիթար սուգ եթող մեզ, և այլ ամենայն արեան մերձաւորաց իմոց, թվին ՌԶ (1631) աւգոստոսի ԻԲ (22), օրն երկուշաբթի։ Արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով կամ տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զխաչին Յովանէսն, և զամենայն աղգայինսն իւր, և Աստուած ողորմի ասացէք, և տէր Աստուած ձեզ ողորմեսցի...։*

611
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
ՏԵՐԱՎՋ, № 517 (1611 թ.)

791 *Փառք...։ Թվականիս Հայոց ՌԶ (1631) ամի, ի վայելումն սրբասէր և հեզահոգի Ջուղայեցի Ջամբուղին։*

792 *Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ստացող սորայ Ջամբուղան, և զհայրն իւր՝ զԱռուֆեան և զմայրն՝ Ղամամղուքլուն, զեղբայրն իւր՝ զՄարգարէն, որ հանգեաւ ի Քրիստոս, և զքեռերքն իւր՝ զՄարգարիտն և զՍիրիդուխտն, որ հանգեաւ ի Քրիստոս, և զՊրստիկատիկն իւր, և զկողակիցն՝ զՍալթանխաթունն, և զորդին՝ զխաչատուրն, որ հանգեաւ ի Քրիստոս. և որք յիշէք՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուածոյ մերոյ. ամէն։ Դարձեալ յիշեցէք զՋամբուղայն և դեռաբոյս որդին զԳրիգորն, որ յայսմ ամի ծընաւ ի մաւրէ, աւելեաց ե (5)[26], զոր տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն։*

612
ՄԱՇՏՈՑ
ՏՄԶԿՄՎ, № 5. տե՛ս նաև Կամենից, էջ 184, «ՀԱ» 1891 թ., էջ 17, ձեռ. № 9027, էջ 79 բ

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Կամենից

ա

12 *Փառք..., որ եւ կարողութիւն//տկար յանձին իմոյ, մեղօք լցեալ անարժան գրչիս յանդ է յաւարտ հասանել այս սբ. գրոցս, որ կոչի հայր Մաշթոց։ Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս ի թվաբերութեան Հայոց ՌԶ (1631) և հոկտեմբեր ԺԵ (15), ձեռամբ մեղսանելի և անհմուտ գրչի Գրիգոր քահանայի որդոյ Անտրէասին... Բայց գրեցաւ ի յաշխարհս Լէհաց[27], ի քաղաքն Կամենից, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նի-*

[26] Այսինքն՝ 1631 թ. հոկտեմբերի 14-ին (հուլյան տոմարով)։
[27] Տպված «Լիլէհաց»։

կոլայոսի Սքանչելագործի, ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Մովսէսին. *և ի թագաւորութեան Երրորդ* Զիկմոնդին: *Աղաչեմ զձեզ... յիշեսջիք... զծնօղսն իմ՝ զ*Անդրէաս *հանդերձ մայրն իմով յ*Անենայիւ...

Բ

Զեռքս մեռնի և հող դառնա,
Մոխիր փոշի գազախանա,
Գիրս յիշատակ առ ձեզ մնա,
Թէպէտ խոշոր է գիր սորա։
Այլ դիւր ընթերց ով գիտենա,
Երբ սովորի և հմտանա,
Որք ընթերնուք օգտիք ի սմա,
Յիշեցէք առ Տէր զգծող սորա,
*Զ*Գրիգոր *անուն մեղօք լցեալ ծառայ*[28]։

613
ՆԱՐԵԿ
ՄՍԱՐ, № 135 (1624 թ.)

664 *Ի թվին ՌԶ (1631) Հայոց, ի ժամանակս* Ալի Օսման *թագաւորին, սուլթան* Մուրատն *էր,* Օսմանին *եղբայր։ Զայն* Օսմանն *իւր ծառայքն սպանին և ապա թագաւորեաց* Մուրատն:

Հոկտեմբեր Լ (30), օրն շաբաթ, մէջ գիշերի, լուսինն այսպէս խաւարեցաւ ժամս Ե (5) կամ Զ (6)։

614
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Վատիկանի գրադարան, № 30. տե՛ս նաև Կամենից, էջ 186

Գրիչ՝ Յովանէս վարդապետ
Վայր՝ Լով

47 *Եւ ես՝* Յովանէս *վարդապետս* Կոստանդինուպոլսոյ *պատրիարդ անուամբ ի Հռոմ գնալս պատահեցայ ի* Լով *քաղաքն, տեսի* զՎարդան *վարդապետի պատմագիրն, զի խիստ հնացեալ էր, վասն [որոյ] եգի աւրինակ և գրեցի զգիրս, անմեղադիր լերուք ծերութեան ժամանակիս գիրս է. և այս եղև թվին ՌԶ (1631) դեկտեմբերի առաջի աւրն, որ է հինգշաբթի։*

615
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Երևան, № 2117 (1419 թ.)

504բ *Այս Քարոզգիրք անկեալ էր ի ձեռս այլազգեաց և առեալ պարոն* Աւետիս, *իւր հալալ ըն[չի]ցն և ետուր յիշատակ ի սբ.* Էջմիածնայ: *Յիշատակ է Քարոզգիրքս* Աւետիսին, *իւր կողակիցին՝* Սու[լ]թանին,

[28] Տաշյանը բերել է ոտանավորի միայն վերջին մասը։

որդոյն՝ Գասպարին, Թաթոսին, եղբորն՝ Գրիգորին, իւր կողայկցին՝ Լուսխաթունին և Հերիմին, որդոցն՝ Վարդանին, Սամոյին, Համպարին, և եղբորին՝ Օհանին և իւր կնոջ Մարիամին: Եւ որք կարդայ, մեկ Հայր մեղայ ասէ, Աստուած ողորմի ասէ. ամէն։

ՌԶԱ(1631) թվին դեկնընբերի ԺԵ (15)[29]։

616
ՇԱՐԱԿՆՈՑ
Մշբեկ, VI, № 1701

2 Փառք...։ // Գրեցաւ Շարակնոցս ի լաւ և ընտիր աւրինակէ, որ կոչի Խլկցի, թվին ՌԶ (1631), դեկտեմբերի ԻԲ (22), աւրն հինգ[շաբթի] ///[30] ի մայրաքաղաքն ///

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով Հայր մեղայիւ մի յիշեցէք /// զգրիչս և զծնաւղսն իմ ///...

617
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 75

Վայր՝ Վաղարշապատ

58ա Կատարեցաւ գիրքս Յովբայ երկիրն Արարատեան, ի քաղաքն Վաղարշապատ, որ այժմ ասի Երևան, ի ղուռն գերահռչակ սբ. աթոռոյն Էջմիածնայ, ի թվականիս հայկազան տօմարի ՌԶ (1631), ի ժամանակս Մովսէս կաթողիկոսին, որ երկրորդ լուսաւորիչ անուանեցաւ Հայոց ազգիս, զոր կրկին պայծառացոյց զազգս մեր, ըստ նման սրբոյն Ներսէսի
58բ արար բազում անտես, և // կարգեաց դպրոցս, և նստաւ աթոռն հայրապետութեան ամս[31]։

618
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 263

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Ասպահան

ա

280բ Փառք...։ // Արդ՝ եղև զրաւ գրչութեան յայսմ աստուածաշունչ սբ.
281ա Աւետարանիս ի թու // ականութեան հայկազեանս համարի ի ՌԶ (1631), յարքայանիստ քաղաքն Շոշ կոչեցեալ, որ այժմ ասի Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի հայրապետութեան տեառն Մովսէս բարունապետին, և վերատեսչութեան այս մեծահռչակ մայրաքաղաքիս տէր Խաչատուր արքեպիսկոպոսին, և ի թագաւորութեանն Պարսից շահ

[29] Հայոց ՌԶԱ տարեթիվը սկսվում է 1631 թ. հոկտեմբերի 15-ից (հույլյան տոմարով), այստեղից էլ հայոց ՌԶԱ թվականի դեկտեմբերի 15-ը կընկնի 1631 թ. մեջ։

[30] Ցուցակի հեղինակի հաղորդմամբ հիշատակարանը մասամբ եղծված է։

[31] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

Սէֆոյն, ձեռամբ ամենամեղ փծուն և անարհեստ գրչի Գասպար իրիցոյս և իմոյս աշակերտի Աստուածատրոյ, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր Յովհաննէս դպրի, որ ստացաւ զսա յիշատակ բարի իւրն և ծնողաց իւրոց և ամենայն արեանառու մերձաւորաց՝ կենդանեաց և ննշեցելոց, որ և աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր. և որք յիշիցէք՝ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ յիւրում գալստեանն. ամէն։

281բ Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ, յիշել զիս զտառ//ապեալ զբրիչս և զիմ ծնողսն, և զուսուցիչն իմ և վարպետ զՄեսրոբ դպիրն Հիզանցի, յիշողացն և Աստուած ողորմի ասողացն Քրիստոս Աստուածն մեր ողորմեսցի նմա. ամէն[32]։

Բ

79ա Ո՛վ հայրք և եղբայրք, յերեսս ի գետին դնելով աղաչեմ զձեզ, յորժամ հանդիպիք սբ. Աւետարանիս կարդալով կամ օրինակելով, անմեղադիր լերուք ինձ մեղաւոր Գասպար երէց գրչիս վասն սղալանացս. և դարձեալ աղաչեմ և խնդրեմ ի ձէնշ, յորժամ ընթեռնուք, զթերին լնուք և զաւելին բառնայք։ Եղբայրք, թէ կամիք դիտել գրիս պակասութիւնն՝ մաքազատիցն է, տր էր խիստ խոժոռ, և բազում նեղութեամբ կու գրէի, անմեղադիր լերուք վասն սիրոյն Քրիստոսի։

619
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 590

Գրիչ՝ Աւիկ.

ա

88ա Զեղեռնագործ Աւիկ յիշէ և լի բերանով Աստուած ողորմի ասացէք. և Աստուած ասողացդ ողորմի. ամէն։ Գրեցաւ Տօնացոյցս ի թվին ղլոպիա ՄՀ (1631)[33], ի վայելումն տէր Յոհաննէս կրօնաւորի։

Բ

43բ Եւ զթարմատար Աւիկ յիշեա[34]։

Գրիչ՝ Յոհան Սրեցի
Վայր՝ Սուրս

Գ

206ա Զամենայն մեղօք զառածեալ ոգիս զգերի գրիչս զսուտանուն Յոհան յիշեցէք ի Քրիստոս...։

Դ

209ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ հոգիաբուղխ և աստուածային սբ. տառս, որ կոչի Աղօթամատոյց, ի յերկիրս Մոկաց, ի գեղս որ կոչի Սուրս, ի դուռն Ս. Յովհաննու Մկրտչին և Ս. Գէորգայ զօրավարին, ձեռամբ յողնամեղ և բազմավէր ոգոյ և անարհեստ Յոհան գրչի Սրեցոյ, ի խնդրոյ սրբասէր և հեզահոգի, մաքրամիտ և հոգեսէր եղբօր մերոյ տէր Յոհաննէս

[32] Մաղկոզի հիշատակարանը տե՛ս 1638 թ. շարքում։
[33] Այսինքն՝ 270×4=1080+551։
[34] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 87ա, 285ա և այլ էջերում։

կրօնաւոր միակեցի, աստուածասէր և բարեմիտ ճգնաւորի, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնօղացն և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

620

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 739

Գրիչ՝ Սիմոն կրօնաւոր

ա

20ա *Զմեղաւք մեռեալ գրիչս սուտանուն Սիմոնս աղաչեմ յիշել ի Տէր, որ անուամբ միայն եմ կրաւնաւորի և ձևովս և գործովս [յ]ոյժ հեռացեալ եմ. և որք յիշեն, յիշեալ լիցին ի Քրիստոսէ։*

բ

20բ *Աւգնեա Հոգիդ Սբ. Աստուած ճշմարիտ, հան ի՛ յաւարտ ոտանաւորիս. թուիս ՌԶ (1631)։*

գ

21բ *Եւ յիշեցէք զաշխատողս ի սմայ և Աստուած ողորմի ասացէք ևս առաւել զանարժան գծողս, աղաչեմ յիշել ի Տէր...։*

Թվին ՌԶ (1631)։

621

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԴ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Երևան, № 1375

Գրիչ, *ստացող՝* Մարտիրոս վարդապետ

ա

330ա *Փառք...։ Արդ՝ ես Մարտիրոս ի մանկունս կաթուղիկէ սբ. եկեղեցւոյ և ի վերջին ծնունդս ի կարգս վարդապետացն առաջնոյ, աստուածային բանին խնդրող և ճշմարիտ իմաստից Հոգւոյն Սրբոյ փափագաւղ, ի խնդիր ելեալ գերազանց աստուածաշունչ կտակի մեկնութեան աստուածաբան առաքելոյն Պաւղոսի։ Եւ ի պարզևեաց Հոգւոյն Սրբոյ գտի մեկնեալ և թարգմանեալ, համառօտեալ և ի միասին հաւաքեալ ճշմարտասէր և ուղղադաւան վարժապետացն մերոց՝ ի կրկին ազգաց Յունաց և Ասորոց։ Քրիստոսածաւալ աղբերն և անմոտ արեգականն Յոհաննու Ոսկիբերանին և երջանիկ սբ. հաւրն մեծի ճգնաւորի վարդապետի Եփրեմի Խորին Ասորոյ, բայցայայտ և պարզ տեսութեամբ մտաց վարդապետաց և ի լուսաւորութիւն գրոց աշակերտաց անձանց։ Որ էր թաքուցեալ յանկեան ուրէք, ի խաւարի տգիտութեան անփոյթ եղեալ յուսումնասիրեաց անձանց, վասն դառնութեան ժամանակաց պատահմանց և վասն աւերման մերոց աշխարհաց։ Եւ յաւելեալ եգի ի սմա մեկնողաւրէն՝ զՀանկ մեծին Եփթաղի և զամենայն որոշմունս բաժանմանց նորա, զընթերցւածոց, զգլուխ, զվկայութիւն, զտունն, զնախադրութիւն, զվասներն։ Եւ ետու ի ձեռս մանկանց եկեղեցեացդ Հայաս-*

տանեաց ճշմարտախոհ վարդապետաց և քաջամիտ աշակերտաց. զոր և ձեզ պարտ է մի՛ կալ և մնալ ի ծուլութեան, այլ ամենայն կենցաղական հոգւոց բարեաւ մնալ ասել և աստուածային երանութեան արժանի լինել...։

330բ Վասն որոյ յերեսս անկեալ պաղատիմ... յիշեսջիք և զիս զՄարտիրոս վարդապետս և զդծողս՝ առաջի անմահ դառինն Յիսուսի Քրիստոսի...։

Բ

312բ Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ... Աստուած ողորմի ասացէք [Մարտիրոս][35] վարդապետին և ծնօղաց նորին և ամենայն արեան մերձաւորացին...։

Գրեցաւ Մեկնիչս Պաւղոսի ի թվին ՌԶ (1631) ամին։

Գ

Գրիչ՝ Գրիգոր Վանեցի

20բ Զսուտ դծադրիկս զԳրիգոր Վանեցի, յիշման արժանի արարէք, և Աստուած զձեզ արժան առնէ իւր արքայութեան. ամէն։

Թվական ՌՀԷ (1628)։

Դ

312բ Վա՜յ կատւի չարէն, որ զկաղամար թափեց վերայ շորերաց՝ աղբեց։

Ե

320ա Յերեսս անկեալ աղաչեմք զմանկունս եկեղեցւոյ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղօք մեռեալ և զանպիտան սուտանուն Գրիգոր դծողս և զմարմնաւոր ծնօղս իմ՝ զՅովսէփ, զՓաշարեկին, և զեղբարսն՝ զՄկրտիչն և զԿարապետն, և զքուերսն՝ իմ՝ զՀանրեկին և զԳուլիբաղչէն, և զհօրեղբարսն իմ՝ զտէր Աւետիսն, զԱւէտն և զՅովանէս սարկաւագն, և զհոգևոր ծնօղսն իմ՝ զտէր Զաքարէն, որ զգիրս ուսոյց և միւս վարպետն իմ՝ զտէր Բարսեղն, զտէր Կարապետն. Աստուած ողորմի ասացէք...։

Ի թվին ՌԶ (1631)։

Զ

325ա ՁՄարտիրոս վարդապետս, զԳրիգոր դծողս և զազգականս մեր յիշեցէք յաղօթս ձեր, և Աստուած զձեզ յիշէ յաւուրն յահագին. ամէն։

622

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2012

Գրիչ՝ Սանակ

118ա Զմեղապա[ռտ] Սանակ գրիչս յիշեայ[36]։

---

[35] Անունը եղծված է։

[36] Գրչության թվականն իմանում ենք Հարց ու Պատասխանի վերջում եղած հատվածից. «Այս տարի մեր թվականն Ռ և Զ (1631) է...» (էջ 86ա)։

623

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2338

Գրիչ՝ Մարտիրոս երէց
Վայր՝ Նոր Ջուղայ

ա

298ա *Ո՛վ սբ. եղբայր, յորժամ սրտի մտաւք աղաւթես, զմեղաւոր գրծաւ-*
298բ *ղրս սուտանո//ւն Մարտիրոսս յիշեսջիք, որ միայն զանունս ունիմ և գործս ոչ, ի յաղաւթս քո յիշես, և թէ գրես բանիցն, զգոյշ լեր որ չըփոփոխես և Աստուած ողորմի մեր ծնաւղացն հրամայես և ի Տեառնէ ողորմութիւն գտանես, յորժամ զաղօթս կատարես։*

Բ

311ա *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տանացոյցս և Աւետարանացոյցս, այլ և կայ*
311բ *ի միջի Աղաւթամատոյցս, ի յերկիրս Պարսստան, // ի թուականութեանս Հայոց ՌՁ (1631), ի Շուշ քաղաքն Սպահան, ի Նոր Ջուղայ, ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի, նուաստ և անարժան Մարտիրոս իրիցի, որ միայն զանունս ունիմ և ոչ զգործս։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ տանուսէր եղբարք, քահանայք և կրաւնաւորք, մանկունք, սբ. եկեղեցոյ, յորժամ կատարէք զտանս տէրունական.... յիշեսջիք զվարպետն իմ, զպատուական ծնաւղն զտէր Գրիգոր եպիսկոպոսն, և զմարմնոյ ծրնաւղսն իմ՝ զՅակոբն, զմայրն իմ՝ Սայիպսալթանն, և զեղբարսն իմ*
312ա *հանգուցեալ [ի] Քրիստոս զՊար//սամն և զԱղաբաբէն, և զուգակիցն իմ՝ հանգուցեալ ի Քրիստոս զՂուկանն[37], և զորդիսն իմ՝ Աւետիկն, Սահակն, Ղազարն, դուստրն՝ զՍափորն, և զհանգուցեալ ի Քրիստոս որդիսն և զդստերս իմ՝ Իփրիահոսն, Յակոբն, Գրիգորն, Սայիպն, բզտիկ Տատիկն, զկենդանիսն տէր Աստուած զիւրեանք յերկար ամաւք պահէ ի կրաւնս...։*

624

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2381, տե՛ս նաև Ն. Ադոնց, էջ X—XIV, Ն. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի, էջ 206—208

Գրիչ՝ Ղուկաս
Վայր՝ Յոհանավանք

ա

247ա *Փառք...։*
247բ *Արդ՝ ես տկար անձն անարժան,*
Գծաւղ տառիս իմաստութեան,
Հասեալ ի կէտն աւարտման,
Հնչեմ ձայնիւ բան գոհութեան։
Եթէ կամիս ըղթվականն,
Կալ և հաշուեա՛ զքսան յոբելեան,
Երկ եռակի տասն բեր յայն,
Իգոսն թիւ ընդ երկոտասան (1631)[38]։

---

[37] Կարելի է կարդալ նաև «զՆվանն»։

[38] Այսինքն՝ [(20×50)+(2×3×10)]+8+12+551։ Ն. Ադոնցը թեև այսպես է հաշվել, բայց սկզբում ընդօրինակության տարեթիվը սխալմամբ տպվել է 1621 թ. (էջ VIII)։

Յուսով անմահին Աստուծոյ ի թվիս շրջագայութեան հայկազեան մեծ տաւմարի հազար և ութսուն (1631) գծագրեցաւ և յանկ ելեալ կատարեցաւ տառս իմաստասիրական՝ զամէնիմաստ հանճարով ճոխացեալ գիրքս այս, որ ունի կաճառեալ բովանդակ ի յինքեան զմեկնութիւն քերականին բացայայտեալ ի տրամաբան և իմաստախոհ մեծին Վարդանա[յ]. այլ և խրատ և սահման գրչութեան արհեստի վերլուծեալ
248ա բազմազան ճոխութեամբ վեհագոյն մակացութիւնն // Առիստագիսի գրչի. և զթերին նորա լցեալ յաւելածով մեծ վարդապետին Գէորգեայ. այլ և զբառգիրքն շարագրեալ զհետ միմեանց, ընդ նմին և զՊաւրֆիւռն և զՎերլուծութիւնք նորին արտադրեալ ներհուն հռետորին Դաւթի Ներգինացոյ Անյաղթ փիլիսոփայէ, և զԱշխարհաց գիրքն մեծ իմաստասիրին Արիստոտէլի և այլ սուղ ինչ զոր տեսանէք։ Ընդ որս և զմեկնութիւն քերականին աշխոյժ ախոյանին Մովսէսի Քերթողահաւրն։ Եւ արդ՝ եղև սկիզբն և կատարումն այսմ գծագրութեանս ի յերկիրս Արարատեան, ի յոտն Արագածու, ի սահմանս գիւղաքաղաքին Կարփու, ի հրեշտակաբնակ մենաստանս Ս. Կարապետի, ընդ հովանեաւ բարձրաբերձ երկնահանգէտ Ս. Աստուածածնի տաճարիս, որ մակադրեալ յորջորջի Յոհաննավանք, որ է այժմ դպրոց և ժողովեալ կան յոլով համբակատիպ մանկունք ի յուսումն և ի վերծանութիւն աստուածաշունչ գրոց, հրամանաւ ե ծախիւք տեառն Մովսէսի սրբազան կաթուղիկոսի ընդհանուր հայկազեան սեռի, կրկին լուսաւորչի։

248բ Եւ արդ՝ աստանաւր կամիմ // հակիրճ և համառաւտ բանիւ վիպել ի տառիս զկենցաղավարութիւն սորա, զի զկնի եկելոցդ առանց բարբառոյ յուշ առնիցէ։

Եռամեծ և մեծափառ տէրս մեր էր ի նահանգէն Սիսական. ի մանկութեան իւրում սնեալ և վարժեալ ի յուսումն աստուածաշունչ գրոց ի հրահանգս բարերջանիկ ենակեդ մեծ վարդապետին Սրապիոնի, և առեալ ի նմանէ հրաման վարդապետական։ Եւ յետ փոխելոյ նորա յաշխարհէս ետ սմա գաւազան իշխանութեան համշիրաքն իւր՝ Գրիգոր վարդապետն Կեսարեան. զոր ի սոյն ժամանակս սայ է հռչակեալ և անուանի գիտնական, և արասդոն արտաքին իմաստասիրական հանճարոյ, այլ և աստուածաշունչ գրոց։ Սայ բոտեալ և հաւանեալ յաւժար կամաւք մանաւանդ գոգցես թէ ի խնամոցն Աստուծոյ, ետ սմայ գաւազան վարդապետական ի տիեզերական քաղաքն ի Կոստանդնուպոլիս, և իբրև էառ սբ. հայրս մեր զեկկլէսիատական իշխանութիւն, սկսաւ քարոզել զբանն Աստուծոյ ընդ ամենայն տեղիս և հասեալ շրջագայութեամբ յարևելս՝ ի բնիկ գաւառն իւր՝ Սիսական։ Եւ անտի յերկիրս Արարատեան, և տեսանէր խանգարեալ և եղծեալ զկարգս և զսահմանս եկեղեցոյ ի հերատուկ
249ա և ի մեղմեխ առաջնորդաց ժամանակիս, և թաղծեալ տրտ//մէր և հոգայր, թէ զի՞արդ լիցի հնար նորոգման և պայծառութեան սբ. հաւատոյ կարգաց և կրօնից։ Եւ սկսաւ մեծաւ աշխատութեամբ և բազում շանիւ խրատել և ուսուցանել զեկեղեցականս և զաշխարհականս. և արարեալ իւր բնակութիւն ի յիշխանանիստ քաղաքն յԵրևան, ի շիրիմ սբ. առաքելոյն Անանիայ։ Եւ ժողովեցան առ ոտս սորայ բազում կրաւնաւորք և գրոց

աշակերտեալ մանկունք։ Եւ սայ յոլով քան թէ սակաւ տքնութեամբ զբանս օրինաց ուսուցանէր, մանաւանդ թէ և գործով կատարելով զանձրն տայր օրինակ, ամենեցուն սրբութեան և առաքինութեան մարզէր և վարժէր զնոսա խորհել յօրէնս Տեառն ի տուէ և ի գիշերի, ունելով ի մտի զքանքարաշահ առակն տէրունի։ Եւ այսպէս կատարէր զհրամանս Տեառն, թէ՝ «Որ արասցէ և ուսուցէ՝ նա մեծ կոչեսցի»[39]։ Եւ համբաւ իմաստութեան և անբիծ քաղաքավարութեան սորայ ելեալ տարածեցաւ և սէրալուր եղև ընդ բոլոր սեռս հայկազեան տոհմի ըստ այնմ, թէ՝ «Ոչ կարէ քաղաք թագչել, որ ի վերայ լերին կայցէ»[40]։ Քանզի ամենայն ոք բաղձայր տեսութեան նորա և լսել զքաղցրաբան վարդապետութեան նորա։ Յետ այսորիկ ըստ խնամոցն Աստուծոյ խորհուրդ առեալ ի միա-
249բ սին ճշմարիտ վարդապետքն, // որք նախանձ ունէին աւրինացն Աստուծոյ և՛ աշխարհականք մեծամեծք և՛ ռամիկք՝ հեռաւորք և մերձաւորք, գրով և բանիւ միաբանեալ ընդ միմեանս բնաւին ազգս ազգանազեան, կամէին դնել զշահն լուսապայծառ և ուղիղաճեմ ի յաշտանակ բարձրաստիճան կաթողիկոսութեան, զի զլոյս աւրինացն տացէ ընդհանուր աշխարհի, զոր իմացեալ և ծանուցեալ զխորհուրդն վատշուէր և չարաբարոյ առաջնորդքն և անուանեալ կաթողիկոսքն խանդացեալ և նախանձ չարութեան բորբոքեալ ոչ տային թոյլ։ Սակայն և ինքն ոչ առնոյր յանձրն զթաղխանձանքն բազմաց, որք գրով և բանիւ աղաչէին զնա, թէ՝ «Լեր մեզ առաջնորդ»։ Այլ սա ոչ կամէր վասն ծանր հարկին արքունիւ, որ կայր ի վերայ կաթողիկոսարանին։ Իսկ նոքա յոքնակի և բազմադիմի նեղութիւնս հասուցանէին սմա. զոր աստուածարեալ հայրս մեր համբերէր մեծաւ յուսով։ Իսկ յամառեալ նոցա չարութեամբ զկաշառս այլազգեաց յաճախելով իւրեանց համախոհ եպիսկոպոսաւքն մեծաւ ջանիւ կամէին զհանուրց նպաստ գործն խափանել։ Այլ խնամաւք բարերարին Աստուծոյ նոքա որչափ ջանային ընկճել, ինքեանք լինէին այպն կատականաց, ըստ այնմ, թէ՝, «Այր անմիտ բարձրացուցանէ զանարգանս»[41]։ Եւ թէ՝ «Երթայր տունն Սաւուղա[յ] և տկարանայր և Դաւիթ զօրա-
250ա նայր»[42]։ // Եւ ոչ յիշէին թշուառացեալ հէկքն և եղկելիքն զբանս Փրկչին, թէ՝ «Որ հարցի ընդ վիմիս այս՝ փշրեսցի»[43]։ Զոր ոչ յերկարեցից աստ, զի յառաջարկեալ գործն յանդ ելեալ կատարեցաւ այսպիսի առթիւ և պատճառաւ։ Քանզի էր սովորութիւն սրբազան հօրս մեր, զի զտաւնս տէրունականս և զմեծամեծ սրբոց բազմահանդէս ժողովրդաւք և շքեղազարդ պայծառութեամբ կատարէր, լի և պատարուն ցնծութեամբ, որպէս ընթերցեալ լինի ի վարս սբ. հայրապետին Յոհաննու Օձնեցոյն։ Եւ զվառեալ մոմեղէնսն ոչ ըստ բնական որակին, այլ փոխակերպեալ սպիտակ և լուսաճեմ գունով լուցանէր, զոր տեսեալ և ուսեալ էր ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ։ Եւ սրբազան պետս մեր ձաւնեալ ընծայէր սպիտակագոյն մոմեղինացն տեղապահ իշխանին՝ Ամիրգաւնա խան անուն,

39 Մատթ., Ե, 19։
40 Մատթ., Ե, 14։
41 Հմմտ. Առակք, Գ, 34։
42 Բ Թագ., Գ, 1։
43 Մատթ., ԻԱ, 34։

որ և նա բազում սիրով մեծարէր և պատուէր զհայրս մեր, և նայ էր պատճառ կելոյ և բնակութեան սորա ի քաղաքն Երևան: Եւ զի կարճեցից զբանս. և նաևս այլ մեծամեծաց, զոր տարեալ մատուցին յաշխարհակալ թագաւորին Պարսից շահ Ապաւզ կոչեցեալ: Եւ նա զարմացեալ առնու ի ձեռն զմոմեղէնսն և հարցեալ, թէ՝ «Ուստի է այս»: Եւ նոքա զեկուցին նմա վասն սբ. հաւրս: Փառք հրաշագործողին Աստուծոյ. և զի՞նչ իցէ հիացումն թագաւորի ընդ սպիտակացեալ մոմ, եթէ ոչ տեսչութիւնն Աստուծոյ, այլ իմն իր կամի ներգործել: Եւ նոյն ժամայն վաղվաղակի առաքէ հրովարտակ առ իշխանն Ամիրգօնայ. զի ճեպով առաքեսցէ առ նայ զայրն Աստուծոյ, և այսպիսի պատճառաւ գնացեալ եհաս
250բ սրբա//զան հեղինակս ի դուռն արքայի ի շրջագայութեան թվականիս Հայոց ՌՀ և Ե (1626) ամի: Եւ բազում պատուով մեծյարգոյ եղև առաջի նորա հիզան Դանիէլ ի Նաբուգոդոնոսորայ և ի Կիւրոսէ և սբն. Իսահակ հայրապետն մեր առաջի Վռամշապհոյ Պարսից արքայի. զի տարեալ զսա նստոյց մերձ յինքեան և յետ բազում խաւսից և պատասխանատուութեանց զարմացաւ ընդ կորովութիւն բանից նորա: Եւ ապա յետ այսորիկ ետ յառաջակայ մանկանց իւրոց ի յուսումն արուեստից մոմին: Եւ յորժամ ուսոյց նոցա զարուեստն, յետ ութ ամսոյ դարձեալ եկաց առաջի արքայի տիեզերահռչակ պարէտս մեր, մանաւանդ թէև այժըմ ևս առաւել մեծարեցաւ: Եւ մինչդեռ անդէն կայր առ դրանն արքունի ի ծովահայեաց քաղաքն, որ ասի ըստ այժմու Ֆաճրապատ, որ ըստ նախնեաց բուն Մազանդրան ասի, քանզի անդ կայր արքայն ի ձմերոցի: Եկն եհաս տաւն Ծննդեան և Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ի շրաւրհնէն, ինքն իսկ արքա մեծամեծաւք իւրովք եկաց ի վերայ շրրոյն, և շնորհաւք սրբալոյս մեռոնին հարեալ արքայն յարտասուս առաջի սբ. հաւրս: Եւ յետ կատարման աւրհնութեանցն բազում սիրով և հեզաբար ասէ ցսայ. «Աղաւթք քո հանապազ մարտակից լիցի մեզ, այլ զու խնդրեայ յինէն զի՞նչ և կամիս, զի ընձեռեցից քեզ»: Եւ սայ հայեցեալ զշինութիւն և զնորոգութիւն մեծի կաթուղիկէին Վաղարշապատու
251ա սբ. Էջմիածնին: // Եւ առժամայն կնքեալ մատանեաւ ետ նմա հրաման նորոգութեան: Եւ այսպիսի վեհ հրամանաւ արքային եկեալ ի Վաղարշապատ, և մեծահանդէս տաւն կատարեալ ուրախութեամբ: Եւ ձեռն ի գործ արկեալ սկսաւ մեծապայծառ շքեղութեամբ նորոգել զեկեղեցին, այլ և շրջապատ պարսպօք և ամենայն զարդիւք ճոխացուցանել: [Ս]ակայն և այսու ոչ չատացաւ սրբազան հայրապետս: Տեսանելով զբարձրագահ աթոռն ի ներքոյ ծանրալուծ հարկապահանջութեանն ըստ նախասացելոյն մեր: [Ք]անզի յառաջ քան զհնգետասան ամ տգէտ և անիմաստ առաջնորդքն ընդ միմեանս խանդացեալ ի պատիւ կաթուղիկոսութեան և մատնէ կամաւք իւրեանց զկաթուղիկոսարանն ի ներքոյ մեծ հարկի և զապալու, զի որ ոք տացէ ամ յամէ զհարկն ի դուռն արքունի, որ էր հարիւր թուման, նա լիցի կաթուղիկոս, որպէս շարագրեալ է ի Մակարայեցիսն, վասն հին տաճարին քահանայապետութեան: Քանզի անկղիտացեալ ոչ ունէին ի մտի զառած մարգարէին. «Խոտեսցին այնոքիկ, որ ընտրեալ են արծաթով»[44] և կամ թէ զբան առաքելոյն որ ասէ.

[44] Սաղ., կէ, 31:

«Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝ նայ է ընտրեալ, այլ զոր Տէր ընծայեցուցանէ»[45]։

251բ [Ա]յլ ևս առաւել վասն այս պատճառիս քակեալ և կործանեալ լինէր կարմ և սահմանք սբ. օրինաց և կանոնք սբ. հայրապետաց, զի առեալ զկաշառս թոյլ տային ազգականաց ընդ իրեարս խառնիլ անաւրէն ամուսնութեամբ, ևս յանարժանս ձեռնադրելով ի պատիւ եպիսկոպոսութեան և աստիճան քահանայութեան։ [Ե]ւ այսպէս բազմավաստակ հայրս մեր տեսանելով զայսպիսի անուղղախազմ և զվրդովումն եկեղեցոյ, վարանէր թաղծանաւք և անբաւ սում և տրտմութիւն կրէր յանձն իւր։ Եւ զի այսպիսի անկարգութեանս առիթ և պատճառ առաւել քան զամենայն իր ծանր հարկապահանջութիւնն էր, զոր թափառական առաջնորդքն արարին իւրեանց անընմրոն գնացիւքն։ Ընդ որս մեծապէս և խտագոյն տարակուսանաւք տխրէր է [7]-ապատիւ հովիւս վասն անտանելի աղետիս։ Սակայն մեծահոգի լեալ և քաջացեալ երրորդ անգամ գնաց առ թագաւորն ի հազար և Հ և է (1628) թվին, ի մայրաքաղաքն Ղազվին։ Եւ մտեալ առաջի արքային և ուռճալիր պատուով ընկալեալ եղև ի նմանէ։ Եւ զի կամեցաւ ի սոյն ամանակի խնդրել յարքայէն, զի բարձցէ զծանրալուծ հարկն և ազատեսցէ զեկեղեցին։ Զոր նախա-
252ա բարքն ոչ ետուն թոյլ ասելով, թէ՝ // «Այժմ անճահ և անպատեհ է, սակս խուճապի յառաջակայ մարտիս, քանզի խստագոյն պատերազմ կայր ի կողմանս Բաբելոնի։ Այլ մեք,—ասեն—ի դիպող ժամու զեկուցուք արքային»։ Եւ անտի դաձեալ եկն ի Վազարշապատ՝ առ ի ջինութիւն եկեղեցոյն ըստ առաջին նուագին։ Եւ ապա ի յինքն ամփոփեալ զըմիտս և եռափափաՀ տենչմամբ և ըղձալի խնդրուածովք հայցէր ապէնիազ Տեառնէն զելս իրացն։ Եւ ի նոյն ամի մահուամբ ել յաշխարհէս արքայն Ապաս կոչեցեալ, թագաւորեալ ամս Ծ (50), ընդ շատ և ընդ սակաւ. և էր յայր յաջողակ ի պատերազմի։ Եւ նստաւ յաթոռ թագաւորութեան նորա, թոռն նորին՝ շահ Սաֆի անուն, տղայական հասակաւ, ամաց իբրև ութն և տասանց։ Եւ յառաջնում ամի արքայութեանն գնացեալ ի տեսութիւն նորին երանեալ հաւակս և ի նմանէ ևս մեծարեցաւ ըստ յուշ առնելոյն մեծամեծացն, թէ՝ «Ծանաւթ և մեծաշուք էր սայ առաջի հաւոյն քոյ»։ Եւ ապա յուսալով ի մեծազաւրն յԱստուած, դեգերեալ ի դրանն արքունի աշխատութեամբ գուն գործեալ տգով չափ և մեծաջան լեալ, զի զերծեալ լիցի եկեղեցին ի ծանրալուծ հարկէն և ի դըժուարակիր անրոյն։ Զայս ածեալ զմտաւ, թէ զնախկին և զբարձրագահ
252բ //աթոռն ի մեծ հարկապահանջութենէն ազատեալ և զերծեալ լիցի։ Զըկնի այնորիկ, զոր Տէր ընտրեսցէ՝ նա լիցի մեզ հովիւ և առաջնորդ։ Իսկ մեծ աւագանին և նախարարքն արքայի և մանաւանդ իշխանաց իշխան, քրիստոսասէր խաւճա Նազարն իրազգած արարեալ զարքայն խորհրդոյն. և ապա եմուտ առաջի արքային սրբազան հայրս, և մեծարեալ նստաւ ընդ արքային։ Իսկ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ բարեբարն Աստուած, արկեալ խանդաղատական և գորովագութ սէր ի սիրտն նորա ի խաւսելն ընդ նմա ըստ գրեցելոյն, թէ՝ «Սիրտք թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, ընդ որ կոյս կամի հայեցուցանել դարձուցանէ

45 Բ Կորն., ժ, 18։

զնա»[46]։ Եւ թէ՝ «Մարգարէութիւն է ի շրթունս թագաւորի»[47]։ Եւ յետ բազում խաւսից հլու և հպատակ գիմաւք ասէ ցսայ. «Այրդ մեծաշուք և փառաւոր, ըստ խնդրոյ հայցման քո, շնորհեցի քեզ աղատեալ լիցի զեկեղեցին ձեր ի յարքունի հարկաց մերոց, այլ դու աղաւթիւք նպաստ լեր մեզ ի պատերազմի թշնամեաց»։ Եւ այսպէս բազմայերկ աշխատութեամբ սր. հաւրս և խնամօք և ողորմութեամբն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, բարձեալ եղև հարկն և աղատեալ եղև ի ծանր լծոյն սբ. էջմիածինն՝ աթոռ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին։

253ա Յայսմ վայրի արձանագրեսցի զի և ընթերցողք տառիս ողեալ ասիցէք գոհութիւն և փառք բարերարիդ Աստուծոյ, որ բարձեր զհարկն և աղատեցեր զեկեղեցիս մեր։ Եւ եղև բազմազեղ ուրախութիւն ընդհանուր Հայաստանեաց. և լսողք և տեսողք տային փառս Աստուծոյ։

Եւ զի յայսմ մասին համեմատ և հանգիտապատիւ լեալ սրբազանս պետ տեառն Բարսղի սբ. հայրապետին, որ ԵՃ և ԼԹ (1090) թվին գնաց առ մեծ սուլտանն Խորասանա[յ] ի Մէլեքշահն անուն, որպէս ճառէ սբն. Ներսէս[48]։ Եւ պատուեալ մեծարեցաւ ըստ արժանոյն, և հայցեալ ի նմանէ ազատեաց զամենայն եկեղեցիսն և զքահանայսն ի հարկապահանջութենէ։ Ըստ այսմ սարասի ծանիք և այս իրագործութիւնս կատարեալ ձեռամբ սր. հաւրս։ Եւ յետ այս խնծղալի յառաջարկեալ գործառնութեանս, ի յանկ ելանելոյ մատեաւ առաջի արքային իշխանաց իշխան, նախկի ասացեալ խոշա Նազարն, որ ունէր բազում համարձակութիւն առաջի թագաւորացն Պարսից, որ և յոլով անգամ երթայր թագաւորն պատուասիրաբար մեծամեծաւք ի՝ տունս նոցա, որ էին բնակութեամբ ի յաշխարհն Պարսից, ի Շաւշ քաղաք։ Քանզի շահ Ա-

253բ պազ // վերաձայն[ե]ալ ի Ռ և ի ՄԴ (1604) թվին եկեալ յաշխարհս Հայոց, ի յԱրարատեան տանէս և ի Գողթնեաց գաւառէ, մանաւանդ թէ զՋուղայ իսկ, բովանդակ տարեալ բնակեցոյց ի Շօշ քաղաք և ի շրջակա գաւառսն իւր տունք իբրև Ժ (10) հազար։ Եւ էին պայծառացեալ քրիստոսական հաւատովն, և սր. կրօնիւք, և ճոխացեալ քահանայիւք, և շքեղազարդեալ պայծառ եկեղեցաւք, որոց գլխաւոր և վերակացու էր սա։ Առ որ մատուցեալ առաջի արքայի և հրաման առեալ ի նմանէ, թէ այրս այս մեծաշուք և փառաւոր լիցի մեզ կաթողիկոս և խալիֆայ։ Եւ զայս հայցէր ոչ թէ միայն իւրն կամաւք և խորհրդով, այլ, քանզի ըստ նախ ի սկզբան վիպելոյն մեր, ճշմարիտ վարդապետք արդեան ժամանակիս։ Եւ մեծամեծք և իշխանաշուք արք և փառաւորք, որք կային ընդհանուր ազգս Հայոց՝ ի Կոստանդնուպօլսէ, և ի Լովայ, և ի մայրաքաղաքէն Յամբոյ, և ի Կեսարիոյ, և ի Վասպուրական յերկրէն և այլք ամենեքեան, գրով և բանիւ և վկայական թղթով միաբանէալ էին ընդ սմայ սակս խնդրոյս այսորիկ, քանզի գրեթե որպէս երբեմն ի խնամոցն Աստուծոյ յաղագս մեծին Ներսէսի էին թախանձանք, նոյն և այժմ։ Իսկ

254ա ի սոյն ժա//մու և սայ զկամս բնաւին ազգիս Հայոց ազդ արարեալ վեհ արքային և առժամայն ոսկի մատանեաւ կնքեալ ետ հրաման, թէ՝

[46] Հմմտ. Առակ., ԺԶ, 9։

[47] Առակ., ԺԶ, 10։

[48] Խոսքը վերաբերում է Բարսեղ Անեցուն, կաթողիկոս հայոց 1081—1113 թթ.։

«Սայ լիցի առաջնորդ ազգին Հայոց և որպէս կամեսցի, այնպէս վարիսցէ զհայրապետական իշխանութիւնն իւր»։ Եւ այսպիսի մեծաշուք հրամանաւ արձակեցաւ ի բռնակալ արքայէն, հիկէն երբեմն Զօրարարէլ ի Դարեհէ, սակս շինութեան և նորոգութեան նորս Սիոնի և Գրիգորաշէն լուսակառոյց սբ. տաճարի։ Եւ եկեալ հասեալ ի Վաղարշապատ քաղաք։ Եւ յոքնօրինակ և պէսպէս երանգօք զարդարեաց զՄիածնին իջման տեղին՝ զմայրն եկեղեցեաց Հայաստանեաց։ Եւ զկնի այսորիկ յուշ ածելով զպատուէր առաքելոյն, որ ասէ. «Մի՛ ոք զանձին ևթ խընդրեսցէ օգուտ այլ և զընկերին»[49]։ Եւ որպէս կանխաւ թուեցաք առեալ յանձն զթախանձանքն բազմաց ընկալաւ զպատիւ և զաստիճան հայրապետական և օծմամբ Հոգոյն աւծեալ եղև կաթուղիկոս և հովուապետ ի շրջագայութեան թվին Ռ և ՀԸ (1629) ի յունվար ամսոյ ԺԳ (13), յաւուր տնօրէնութեան Տեառն, և նստեալ պանծալի պայազատ յաթոռ նախ-
254բ նոյն մերոյ սրբոյն Գրիգորի։ Եւ քանզի ոչ եթէ շուք ինչ դ//նելով և կամ թէ փառս վարկանելով անձին իւրոյ, այլ խոկայր և նկրտէր ի փառս անուանն Քրիստոսի և ի յօգուտ ընդհանուր սեռից Հայոց։ Եւ սայ որ զառաքելականն ընկալաւ զաստիճան և զսրբազան կարգն հայրապետական ըստ արժանեաց իւրոց, ոչ թէ ծրարեալ ի վարշամակի ծուլութեան զաւանդեալն յինքեան զտաղանդն, այլ արկանէր քարոզութեամբ զարծաթն Տեառն ի սեղանաւոր հօգիս հաւատացելոց, ոչինչ ընդհատ քան զառաջին վճիտ պարէտսն։ Եւ այսպէս աստուածաշնորհ վարդապետութեամբն իւրով ուսուցանէր ամենեցուն զբանն կենաց։ Եւ էր անաչառ ի քարոզութիւն աստուածային բանին իւրոյ նելկատուն հաւատին, այլ և խրատէր և յանդիմանէր զյանցաւորսն և զոչ եկեալսն յուղղութիւն։ Եւ ընդ այսր ամենայնի բազմացոյց զմիայնակեացս և զկրօնաւորս ի սբ. մենաստանս և ի վանորայս, այլ և զգրոց աշակերտեալ մանկունս, որ ցանկան և փափաքեն անխարդախ կաթինն։ Եւ զի այսպէս ի հոծ և ի յոլով տեղիս կաճառեաց և խրատացոյց զնոսա և ունի ընդ ձեռամբ յինքեան միաբանեալ եղբարս աւելի քան ըզութ հարիւր, և զպէտս ամենե-
255ա ցուն լիով հոգայ և այսպէս խնամեալ պահէ զսոսա կամ//օք բարերարին Աստուծոյ։ Այլ և տրպէս առ ասացաք զնախագահ աթոռն զսբ. էջմիածինն առաւել ևս նորոգեաց և պայծառացոյց. զի էր յառաջ իբրև զտաղաւար մրգապահաց, խաւարեալ և եղծեալ, և յամենայն զարդուց կողոպտեալ, այլ և թռչնոց երկնից եղեալ բոյն և դադարք։ Եւ այսպէս սրբազան հայրապետս ամենապայծառ շքեղութեամբ և բազմազան երանգաւք զարդարեալ լուսաւորեաց, քանզի շրջապատ լայնանիստ պարսպօք և յոքնակի հրաշակերտ շինուածովք, մեծամեծ և կոփուածոյ վիմօք, այլ և այրեալ ուղիւսով և կրով, և ծեփեալ բոմբ որմով հաստահեղոյս և պերճագոյն ճոխացուցեալ։ Այլ և զեկեղեցին փարթամացոյց զանազան և պատուական անօթով և քահանայական և հայրապետական զգեստիւ՝ սորեկ և ընտիր, յոսկոյ և արծաթոյ։ Քանզի էր սայ այր մեծախորհուրդ և շինարար, պահող, ճգնող և արտասուող, ողորմած և գրթած ի վերայ ազքատաց՝ մանաւանդ թէև գերելոց։ Արդարև գրեթէ յորմէ հետէ մտեալ է սայ ի յիշխանանիստ քաղաքն յԵրևան աւելի քան հա-

[49] Ա Կորն., Ժ, 24։

զար գերի քրիստոնէից աղատեալ է ի ձեռաց այլազգաց։ Այլ և էր ա-
255բ հարկու // տեսլեամբ, զուարթ երես և վայելուչ հասակաւ, որպէս ճառի
յաղագս սբ. հայրապետին՝ մականուն Տղայ տէր Գրիգորին, եղբօրորդոյն սրբոյն Ներսէսի, որ և զկնի նորին յաշորդեաց յաթոռ հայրապետական ի ՉԾ և ի ԻԳ (1174) թվին։ Եւ մեծապանծ գեղով և ուռճալիր շինուածովք պայծառացոյց զսբ. աթոռն։ Զոր և սայ հանգոյն նմին սպետափառ և գերապանծ փառաւք զարդարեաց զնախկի աթոռն հայրապետական զսբ. էջմիածինն, որպէս և նայ զՀրոմկլայն։ Եւ ահա տեսանեմք նոր նորոգեալ զսբ. աթոռն առաւել քան զառաջինն, և առ սայ բարբառի. «Փեսայն երկնաւոր հաշտեալ եմ ընդ քեզ տառապեալդ ե խախտեալդ»[50]. և թէ՝ «Զարթիր Յերուսաղէմ և զգեցիր զզօրութիւն քո Սիոն»[51]։ Եւ ահա սրբազան հայրապետս դեռ ևս աւրրստաւրէ նորոգէ և պայծառացուցանէ զսբ. աթոռն, այլ և զխանգարեալ և եղծեալ կարգս և զսահմանս եկեղեցական կրօնից և կանոնաց հաստատէ և նորոգէ ի մեծ թվականիս հազար և Ջ (1631), յորում ամի գրեցաւ տառս իմաստասիրական։ Եւ ահա այժմ ի դէպ և պատշաճ է մեզ աշակերտեալ
256ա մանկանցս նորին, այլ և բնաւին տոհմիս հայկազեան յարազուարճ սր-// տիւ ձայնեալ զմարգարէականն բարբառ. «Եթէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր մեզ այս զաւակ իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորոյ նմանէաք»[52]։ Զոր և սիրալիր մաղթանօք հայցեմք ապենիազ և յամենակալ Տեառնէն, զի գթացեալ ի մեզ արաստոյ և յաղթող պահեսցէ զեռամեծ և զերիցս երանեալ հայրապետս մեր ընդ երկայն աւուրս անբիծ քաղաքավարութեամբ և խաղաղական կենօք ի պարծանս և ի գովութիւն մեզ ձեռնասուն որդեկացս նորին և ի փառս անուան համագոյ Ս. Եր[ր]որդութեանն, Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. այժմ և ամենայն յաւիտեանս. ամէն. եղիցի...։

Արդ՝ ո՞վ տարփողք իմաստութեան և վայելողք այսմ քերթողական արհեստիւ ճոխացեալ տառիս, յիշեցէք յաւժար կամաւք ի մաքուր յաղօթս ձեր զամէներջանիկ և զպատուական հայրապետս մեր, յորոյ սակս յայսմ վայրի բանս ճառեաց, որոյ վեհ հրամանաւն գծագրեցաւ գիրքս այս իմաստասիրական, զտենչալի խաղալիկս աշակերտեալ ուսման սիրող մանկանց։ Նաև ընդ բազմավաստակ սբ. հօրս յիշեցէք զբազկակից եղ-
256բ բարքն և զաշա//կերտեալ մանկունքն իւր՝ զյոգնահանճար և զբազմարուեստ զԽաչատուր վարդապետն Կեսարացի և զմաքրասնունդ և զշահողն ամենայնի զՓիլիպոս վարդապետն, որ յոլով և բազմադիմի երկ և աշխատանք ունին ընդ անարժանութիւնս մեր՝ ուսմամբ և ոգէշահ խրատով, զոր տէրն Քրիստոս հատուսցէ վարձս բարեաց ընդ տրիտուրն աշխատանաց աստ և կրկնակի գալստեանն. ամէն։ Այլ և յիշեցէք ի սբ. սրտի ձերում զաշակերտակից սոցա և զհամշիրաք վարդապետքն՝ զբարագնազգեացն զԹումայ վարդապետն, և զԱրիստակէս վարդապետն, և զքաշ տելետինն զՄելքիսէք վարդապետն, և Զաքարիա վարդապետն, և զմիւս Խաչատուր վարդապետն, և զՅակոբ վարդապետն, և զկայծակ-

50 Եսայ. ԾԴ, 11։
51 Հմմտ. Եսայ., ԾԱ, 9։
52 Եսայ., Ա, 9։

նամաքուրն զտէր Յեսայիին, որ յոլով աշխատի ի վերա միաբանից եղբարցս, և զաղօթասէր և զբաղձալին բնաւից զհամշիրամն իմ՝ զտէր Ղազարն, և զտէր Յակոբն, և զտէր Գրիգորն, և զտէր Սիմոնն, և զայլ համաշունչ և զմիախորհուրդ եղբայրքս և զաշակերետալ մանկունքս, որ կան կաճառեալ և ժողովեալ ի համալսարանի կաթողիկոսարանիս,
257ա զոր ամենա//գութն Աստուած տէր մեր Յիսուս Քրիստոս անվրդով և անսայթաք պահեսցէ զսոսա ի յարկածից և ի հաղբիցն սատանայի այժմ արդեան ժամանակիս և ի հանդերձեալ յապառնիսն արժանի արասցէ ձեր մաքուր և վճիտ աղօթիւքն մասին վիճակի ժառանգութեան սրբոցըն ի լոյս. ամէն։

Այլ ես անարժանս և տարորոշեալս բացորոշաբար, ի յոքունց բազմավէր գոլով, յոգի և ի մարմին խոցեալ և վիրաւորեալ ի թունալից ժանեաց բանսարկուին... զոր և թախանձեմ զհանդի[պ]ողքդ[53] տառիս, յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր դիս զտառապեալ մեղօք մեղեալ Ղուկասս, որ կամ ի կաճառ վերոյ դրեալ հարցս և եղբարցս, իբրև սկիլայն ի ջուիրս խաշանց, և որպէս զթխատեսակ զագռաւս ի պարս աղաւնեաց. քանզի և ես տրուպս եղէ խուն ինչ պատճառ գրութեան քերթողական տառիս այս, հրամանաւ սրբազան հայրապետիս մերոյ։ Վասն որոյ հայցեմ ի սբ. հարցդ և եղբարցդ, յորժամ վայելէք և զմայլիք յայսմ ի-
257բ մաստութեան զինոյ, յիշ//ման արժան առնէք առաջի զենման անմահ գառինն Յիսուսի։

Որ հանապազ զենանի,
Ի քաւութիւն մեզ բաշխի,
Եւ միշտ մնայ կենդանի։
Ի յարտասուացն ժամի,
Երբէք մտաւք ի սրտի,
Թէ Տէր Փրկիչ աշխարհի,
Ջնջեայ զյանցանս Ղուկասի։

Զի թէրևս իշցէ աղաւթք մաղթանաց ձեր և ողորմութիւն Փրկչին ի շարաւալի յոսկերս մեղաւք մեռելոյս և լուսացէ զաղտ հնութենէ իմոյ և գթասցի ի պատժապարտս հոգի...։

Եւ դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, ո՜վ սբ. ընթերցողք, զի յիշման արժանի առնէք առաջի Քրիստոսի սբ. և մաքուր աղաւթիւք ձեր զմիաբանք սբ. ուխտից Յոհաննավանից, որ է այժմ դպրանոց, որպէս կանխաւ ճառեցաւք, քանզի աստ առ դրան Ս. Կարապետիս գրեցաւ, և սրբագրեցաւ, և ծաղկեցաւ, և կազմեցաւ իմաստապատում տառս այս, ի մէջ բազմահոյլ եղբարցս։ Եւ արդ՝ յիշեցէք զծերունի տէր Բարսեղն, որ
258ա է հայր և խնամա//ծու մանկանցս, և զտէր Պետրոսն համախոհ նմին, և զՍիմէոն զաւագ սարկաւագն զծաղկող գրոցս, և զՍտեփանոս քահանայն, որ մեծաւ աշխատութեամբ գրեաց զսայ ի վայելումն ուսումնասէր մանկանց, և զՄարտիրոս շահրնկալն, որ աշխատեցաւ ի սրբագրելն և ի վերջ գրոցս Ե (5) տետր գրեաց, այլ և զմիւս Մարտիրոսն ըն-

[53] Ձեռ-ում «զհանդիսողք» ձևով։

թերցող, որ կոկեաց զթուղթն, և զայլ համախոհ եղբարքս արժանի առնէք յիշման և թողութիւն խնդրէք բաղում յանցանաց մերոց, և ինքն առատ[ա]պարգև Տէրն....։

Բ

263բ Ով պատուական իմաստունք զտկար Ղուկասս յիշեցէք յաղօթս ձեր։

Գրիչ՝ Ստեփան

Գ

67բ Զմեղուցեալս յիշեցէք՝ Ստեփան անուն, որ յոյժ նեղացայ, բայց ստացողէն վախեցայ, տէր Աստուած զինք ամրածածուկ պահէ մինչ ի խորին ծերութիւն. ամէն։

Դ

Հետ. ստացող՝ Յոհան Կարնեանցի

258ա Զվերստին ըստացող Քերականութեան և գրչութեան արհեստիս Յոհան վարդապետ մականուն և տեղեաւ Կարնեանցի կոչեցեալ, յիշեսջիք աղաչեմ ո՛վ ընթերցողք։

Ե

Գրիչ՝ Վարդերես Լեռցի

Զմեղաւոր գրչիս սուտանուն Վարդերյես Լեռցիս յիշեցէք ի Քրիստոս աղաչեմ զձեզ։

Զ

Զմեղապարտ գրչիս զՎարդերեսըս Լեռցիս յիշեցէք ի Տէր Ա (1) գրիչով Լ (30) տետր իմ գրեր, օրն Ա (1) տետր։

Է

Աղաչեմ զձեզ, սիրելիք, վասն Աստուծոյ համար, որ եթէ կարդալով եթէ օրինակելով թէ Ա (1) Ա (1) սխալ գտանէք և գրիս նուաստութեան համար չի լինի թէ նեղանայք, որ իմ կարողութիւնս այս չափ էր։ Մեղապարտ գծողս սուտանուն Գ. Ժ. Ե. Խ. Ծ. Շ. ԲԳ-սըս յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր...[54]։

625

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երևան, № 2819 (ԺԶ դար)

Նվիրակ՝ Խաչատուր

41բ Թվին Հայոց ՌԶ (1631) ամին ես՝ նուաստ հոգի Խաչատուր բանի սպասաւորս եկի նուիրակ սր. Էջմիածնայ, հրամանաւ տեառն իմոյ Մովսէս կաթողիկոսին, [ո]ր էր կրկին լուսաւորիչ մեր Հայոց ազգիս. և զամենայն կարգ և կրօնք[55] խանկարեալ էր <յու>ծուլ առաջնորդաց. վեր-

[54] Ե, Զ, Է հիշատակարանները վերցրինք Ն. Ադոնցի նշված գրքից (էջ XIII—XIV)։ Ծածկագիրը կարդացել է Ն. Ադոնցը՝ Վարդերեսս. այսպես՝ Գ-վ, Ժ-ա, Ե-ր, Խ-դ, Ծ-ե, Շ-ր, ԲԳ-ե+սրս։

[55] Հավանաբար հեղինակի կողմից, ուղղվել է «կրունք»։

ըստին հաստատեաց և կալաւ զարժանաժառանկ յաթոռ հայրապետութեան թվին ՌՀ և է (1628)[56]։

626

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3138

Ստացող՝ Յովհաննէս վարդապետ
Վայր՝ Շուռք

ա

275ա *Արդ՝ ես նուաստ և յետին ի բանասէրս* Յովհաննէս *անուամբ ևթ կոչեցեալ վարդապետ, որդի տէր* Վարդան *քահանայի, որ զՍ. Աստուածածնի անապատս շինեաց ի դեղաքաղաքս* Շուռք, *և ժողովեաց բազում կուսան կրօնաւորս և հաստատեաց և լցոյց ամենայն շինութեամբ և բարութեամբ, անպակս հոգևորք և մարմնաւորք, և ինքն փոխեցաւ առ յոյսն բնաւից ի տենչալին իւր։ Ես՝* Յովհաննէս *վարդապետս ետու դրել զիմաստասիրական գիրքս նրբից և արտաքնոց լուծմունքս ամենայն արտաքին դրոց՝ Սահմանացն Դաւթի և քերականութեանց, լուծեալ ի սբ. վարդապետացն առաջնոց և ի* Յոհաննու Որոտնեցւոյն *և ի* Գրիգորէ Տաթևացւոյն։ *Եւ եգի զսա ի դուռն Ս. Աստուածածնի անապատիս մերոյ* Շոռոթու, *յիշատակ հոգւոյ իմոյ, ի վայելումն մանկանց Սիոնի։ Արդ՝ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ Ս. Աստուածածնի անապատէս յիմոց կամ յօտարաց, ի կարգաւորաց կամ յաշխարհականաց. եթէ ոք հանել կամեսցի՝ զանէծսն Կայենի, Յուդայի և Քրիստոսի հաշահանուացն կրեսցէ աստ և ի հանդերձեալն. ամէն։ Արդ՝ աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, ո՛վ լուսերամք դասք քահանայից և մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր միով Հայր մեղայիւ, և Աստուած ողորմի ասելով զհայրն իմ՝ զտէր* Վարդանն, *որ մեծաւ շանիւ և բազում աշխատութեամբ շինեաց զսբ. անապատս ի հալալ արդեանց*
275բ *իւրոց՝ եթէ պարիսպ //, եթէ եկեղեցին, եթէ տնտեստուն, խուցք և հիւրատուն և այլ շինութիւնք. և ժողովեաց բազում կուսանս ի սմա, և հաստատեաց անապատ ի ժամանակս* Մովսէս *կաթուղիկոսին, թվին ՌՁ (1631) ամին*[57]։ *Եւ զմայրն իմ՝* Շնհատրն, *զպապն իմ՝* զՍօլթանպէկն, *և զմամ իմ՝* զՄէհրիպանն, *զհօրաքորսն իմ՝* զկուսակրոն Մարիամ *մայրապետ անապատիս և* զՍոսիսաբեթն, *և զքորսն իմ՝* զկուսակրոն *մայրապետ* Յուղիայն *և* զԳուլբստանն, *զեղբայրն իմ՝* զՀայկազն, *և զհարսն իմ՝* զԱննայն, *և զորդիս նոցա* զՎարդանն, զՍօլթանպէկն, զՆազարէթն, զՂևոնդէսն *և* զԲարվելին, *և զզստերս նոցին* զՀուռիկն, *զկուսակրոն* Եսթերն *և* զՄարիամն *և զայլ ամենայն առուարեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալսն, յիշեցէք...։*

---

[56] *Սույն հիշատակարանը հեղինակի՝ Խաչատուր Կեսարացու ինքնագիրն է։*

[57] *1631 թ. վերաբերում է անապատի հաստատմանը, ձեռ-ը այդ թվականին է ընդօրինակվել, թե՞ մի երկու տարի հետո, վկայված չէ։ Այդպես է նշված նաև Մատենադարանի ձեռագրաց ցուցակում (հտ. Ա, էջ 949)։ Պայմանականորեն դրեցինք 1631 թ. շարքում։*

Բ

373բ Արդ՝ ես Շոռոթեցի Յովհաննէս վարդապետս, որդի տէր Վարդան քահանայի, ետու դրել զայս արտաքնոց գիրքս և եդի ընծայ ի դուռն սբ. անապատիս մերոյ, յիշատակ հոգւոյ իմոյ նաև ամենայն ազգականաց մերոց կենդանեաց և ննշեցելոց. ամէն։ Զսորա կատարեալ յիշատակարանն ի մէջ գրքիս ԻԳ (23) տետրի վերջն գրած եմ[58], խնդրեմ ի հարցդ ե յեղբարցդ, որք գտանէք կարդայք և մեզ Աստուած ողորմի ասէք...։

627

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Երևան, № 3373

94բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Քարոզգիրքս ի դառն և վիշտ ժամանակիս, ի խնդրոյ բարեմիտ և հեզահոգի Էլիէն, և զծնաւղսն իւր՝ զհոռոմ Կիրակոսն և զմայրն իւր՝ զԲաղչայգուլն, որ առ Քրիստոս են փոխեցեալ. ամէն։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զԷլիէն, և զկողակիցն իւր՝ Զուլալն, և զորդիքն իւրեանց՝ զԳաբրիէլն, զԱստուածատուրն, զՏիրատուրն, և զԳաբրիէլի կողակիցն՝ զՆիկուրն, և որդիքն իւրեանց՝ զՆորվարդն, զԿիրակոսն, զՄկրտիչն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զԱստուածատուրն, և զկողակիցն իւր՝ Թուրվանդն, զՏիրատուրն և զիւր կողակիցն՝ զԽանտուան, և զորդին իւրեանց՝ զՅովանէսն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԷլիէն և զկողակիցն՝ Զուլալն, որ ստացա[ն] զայս Քարոզգիրքս ի հալալ արդ[ե]անց իւրոց և ///, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զԷլիէն, և զկողակիցն՝ Զուլալն, և զդուստր իւրեանց զՆղիսաբեթն, յիշեցէք...

Ստացաւ գիրքս ի հայրապետութեան տէր Մովսէս կաթուղիկոսին, ի թագաւորութեան շահ Սէֆուն, ի թվականիս Հայոց Ռ և Զ (1631) թվին. ամէն։

Դարձեալ յիշեցէ[ք] զԷլիի եղբայրն՝ Սէնտիկն, և զկողակիցն՝ Ջանխաթուն, և զորդին՝ Նորվարդն, որ առ Քրիստոս են փոխեալ, յիշեցէք...։

628

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3580

Գրիչ՝ Բաղտասար դպիր
Վայր՝ Թեոդոսեն

172բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Մաշտոց, որ յաղագս գործառնութեան քահանայից, որով կատարի սովաւ ևթն խորհուրդ եկ-[ե]ղ[ե]ցոյ։ Սահմանեալ սբ. հօրն մերոյ վարդապետին Մաշտոցայ, որոյ զանուն իւր ի վերայ գրոյս յորջորջեաց։ Գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ Բաղտասար դպրի, ի յերկիրս Աղուվանից, ի գաւառս Դիզակ, ի գիւղս

[58] Այսինքն՝ ձեռ-ի 275 ա, բ էջերում։

Թեղասեռ, *ի թվին Հայոց ՌՁ (1631), ի թագաւորութիւն Պարսից շահ* Սաֆուն *երրորդ ամի։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի յերկնա[թոիչք] յաղօթս ձեր զտէր* Մէլքսեթ *վարժապետն իմ և զդրիչ* Բաղասարս, *հանդերձ հարր և մարբ և եղբարն իմ, մանաւանդ ստացո[ղ] սբ. դրոյս* Շահնավար[59], *կողակիցն՝* Հիւրի, *եղբայրն իմ՝* Մուլքն, *կողակիցն իմ՝* Բէկի, *որդին իմ՝* Տալաթիար, Բրթուլ, Պարխուտար, *իւր եղբայրորդին՝* Պետրոս *քահանայն, մանաւանդ* Շահնավարին *հայր* Ը[ռ]ստամ, *մայր իմ՝* Հալոյ, *և փոխեց[եալ] առ Քրիստոս։ Ետու եկեալ մայրն իմ՝* Թափառուկ. *ամէն։*

629

ՔԱՂՈՒԱԾՔ ՅԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Երևան, № 3630 (1568 թ.)

ա

114ա *Փառք...։ Զվերջին ըստացաւղ սբ. Աւետարանիս զտէր* Աբրահամ
114բ *եպիսկոպոսն յիշեցէք, որ ըստ//ացաւ զսա յիւրն յիշատակ և ետ իւր հալալ ընչիցն և էառա զսբ. Աւետարանս անշինչ յիշատակ իւր ամենայն է(7)-արեան մերձաւորացն և ծնաւղաց հոգւոյն, հաւրն՝* Ղարաղաւշի *և մաւրն՝* Փաշաբէկուն, *և եղբաւրն՝* Գրիգորին *և* Վարդանիսին. *և քուէրն՝* Հռիփսիմին, Սառին, Ապասալքանին, Յովանիսին, Մարգարտին *և յամենայն յարեան մերձաւորացն, որ ի Քրիստոսէ հանգուցեալ, յիշեցէք...։*

բ

115ա *Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զսուղտ* Ամիրխանն *և զկողակիցն* Ամիրխանին՝ *զ*Մամախաթուն, *և հանգուցեալ որդին* Մխիթարն *և զր*Պուրսամն, Նսէֆ, *որ ի ձեռն այլազգաց գերի անկաւ,* Շանբէկին, Գուլբէկին, *յիշեցէք...։*

*Դարձեալ յիշեցէք զ*Ամիրխանի *հայրն՝* Գուլնաարն *և զմայրն՝* Շանբէկին, *և զեղբարն՝ զ*Արմաղանն, *զ*Գրիգորն, *և զքուրն՝* Խաթունաղէն, *զ*Խանբէկին, *զ*Խէր Ակոբն. *ամէն։*

*Աղաչեմք զձեզ, ո՛վ լուսէրամ դասք քահանայից, յիշեցէք զըստացաւղ սբ. Աւետարանիս զ*Աբրահամ *եպիսկոպոսն և զհաւրեղբարն՝ զ*Ակոբ *եպիսկոպոսն, յիշեցէք...։*

գ

Հետ. ստացող, նվիրատու՝ Աբրահամ եպիսկոպոս
Վայր՝ Գանձակ

115բ *Արդ՝ ես* Յաբրահամ *եպիսկոպոս և եղբայրն իմ՝* Ամիրխան. *մեք մեր կամաւ և յաւժարութեամբ մեր հոգւոյս վախմ և յիշատակ դրաք զըփոքրիկ Աւետարանս ի երկիրն* Քաշբէրուն[ե]աց, *ի գիւղն* Գանձակ, *ի դուռն կենսաբէր Ս. Աստուածածնին։ Եթէ ոք մերոց կամ աւտարաց հանել կամ ծախել ջանայ՝ պատժի և նզովք առնու հայրապետացն...։*

Ի թվականիս Հայոց ՌՁ (1631) էր, կաթողիկոսու[թեան][60]

---

[59] *Այստեղից մելանը փոխվում է։*

[60] *Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։*

630
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 4922 (1447 թ.)

Կազմող՝ Յոհանէս

364ա *Փառք...։ Արդ՝ վերըստին կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբս անարժան և նուաստ անուն* Յոհանիսի, *ՌՁ (1631) թուականիս մերոյ, յիշատակ հոգւոյն տէր* Ղազարին *և կոզակցուն՝* Գուլումին, *և որդւոյն՝* Յովանիսին, *և դստերն՝* Մուաթին, *և զԵրախտաւորսն, զՀանէս, զրկողակիցն՝* Ինախն *և* Նղաշին[61], *և զՆաւասարդն, և* Աստուրին, *և կնոջն՝* Գալային, *դստերն՝* Մեղաւշին. *Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Գրիգորին, Գալոցին, Ներսեսին, *զՆերֆին* Դարենից[62] *ննջեցեալք՝ զմեծն և զփոքրն յիշեցէք...։ Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք տէր* Ղազարին...[63]։ *Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք ինձ նուաստ անուն* Յոհանիսի, *և ծնաւղացն իմ՝ տէր* Մելֆեսեթին *և* Գուլաղին, *և կոզակցուն իմոց՝* Փաշին, *և դստերն՝* Գուլաղին *և* Խաթունաղին, *և մեր ամենայն մերձաւորացն ողորմեսցի Յիսուս Միածինն ամէն։*

Դարձեալ յիշեցէք... տէր Ղազարին...[64]։

631
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 5260

Գրիչ՝ Սահակ աբեղայ
Վայր՝ Վարագ

ա

201ա *Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ և մեղապարտ գրչի* Սահակ *մեղաւոր և անարժան աբեղայի հասանել ի յաւարտ ձեռք Մաշթո-*
201բ *ցիս, որ գրեցաւ ի խնդրոյ աստուծասէր և բարե//միտ վարպետին՝ տէր* Ներսէսի, *որ ետ դրել զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց՝* Մուրադին *և* Գուլաղին, *և եղբարցն՝* Աւետիսին, *կոզակցոյն՝* Խանաղին, *որդոյն՝* Յովանիսին, Միրաքին, *կոզակցոյն՝* Գուլգուլին, *որդոցն՝* Աւէդին, *կոզակցոյն՝* Թաւէզին, *որդոյն՝* Գրիգորին, *դստերն՝* Գուլաղին. Եղիային, Սարգսին, Ղազարին, Պետրոսին, *և ամենայն զարմից և զաւակաց սոցա՝ կենդանեաց և հանգուցեալոցն։ Եւ ով որ յիշէ...*[65]։

202բ *Եւ զմեղաւք լցեալ* Սահակ *սուտանուն գրիչս և զուսուցիչն իմ՝ զՍրտեփանոս քահանայ, և զծնաւղսն մեր աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած ողորմի ասել մեզ մեղաւոր<աւոր>ացս, և դուք ևս ողորմութեան ար-*

---

61 Ձեռ-ում «նշղաղնս» ձևով, շարունակության մեջ նորից է հիշում այդ անունը, այս անգամ «նղաշ» ձևով։

62 Գյուղ Շատախում։

63 և 64 Նորից թվում է վերևում հիշված անունները։ Համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 500, էջ 415—416։

65 Թվում է վերևում հիշված անունները։

ժանի լինիշիք։ Եւ խոշորութեան և սղալանաց սորա աղաչեմ անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Վասպուրականի, ի մայրաքաղաքս
203ա վանորէից ի Վարագ, ընդ հովան//եաւ աւագ Ս. Նշանիս և յայլ է (7) սբ. տաճարացս, որ կառուցեալ կան ի պատիւ սրբոց և ի պահպանութիւն երկրիս մերոյ, ի Ռ և Զ (1631) ամի թրւականիս մերոյ, ի դառն և ի նեղ ժամտնակիս, զոր կեամք ի յահ և յերկիւղ յազգէն Պարսից։ Եւ մեր յուսալով ի քաղցր մարդասիրութիւն Աստուծոյ, զի ի խնամս իւր պահէ զրհաւատացեալս անուան իւրոյ։ Եւ ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Մարտիրոս վարդապետի, և յայլ միեղէն եղբարցս՝ տէր Ներսէս վարպետի՝ ստացողի սորա, և Մարգարայ եպիսկոպոսի, և միւս Ներսէս վարպետի, և տէր Յոհանէս վարպետի, և տէր Պարսամի, և տէր Կարապետ վարպե-
203բ տի[66], և տէր Յակոբի՝ վերակացուի վանացս, և տէր Մով//սէս լուսարարի, և տէր Յովանիսի, և տէր Ստեփանոսի, և տէր Գրիգորի, որք կան ի սպասաւորութիւն վանացս, և հայրական գթով և եղբայրական սիրով զանարժանս իբրև արժանաւոր ընդունէին, զոր և հայցեմք ի յամենազտուր կամացն Աստուծոյ, զի ի մարմնի ի խնամս իւր պահէ սոցա, և ի հանդերձեալն...։

Բ

50ա Ո՛վ եղբայր, խոհեմ կառավար աւրինաց, այսպէս արա և զմեղաւոր Սաճակ գրչիկս յիշեա՛....։

Գ

111բ Քրիստոս Աստուած ողորմութիւն և մեղաց թողութիւն շնորհեա՛ այս ննշեցելոյս, ևս առաւել ստացողի գրոցս Ներսէս վարպետին, և իւր ծրնաւղացն՝ Մուրադին և Գուլաղին, և եղբարցն՝ Աւետին, Միրաքին, Սարգսին, Ղազարին, և ինձ մեղաւք մոլորեալ և խաւարեալ գրչի[67]։

Դ

124ա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս թողութիւն և արքայութիւն շնորհեա ստացողի սբ. գրոցս Ներսէս վարպետին, և իւր ծնաւղացն՝ Մուրադին և Գուլաղին, և ինձ մեղաւք մեռեալ գրչի։ Ռ և Զ (1631) թուին գրեցաւ սա։

Ե

150բ Ռ և Զ (1631) թուին գրեցաւ գիրքս ի Վարագ։

632

ՄԱՇՏՈՑ, ՔԱՐՈԶԳԻՐՔ

Երևան, № 5287

Գրիչ՝ Գասբար երէց
Վայր՝ Յղվերձ

ա

96բ Փառք ամենասուրբ Երրորդութեան, որ ետ կարողութիւն հասանել աւարդ Մաշտոցիս։ Գրեցաւ ձեռամբ սուտանուն Գասբար իրիցու, որ

---

66 Քանի որ այլուր տեր Ներսեսի համար լրիվ գրում է «վարպետ» իսկ այստեղ՝ հապավված «վրպի». ուստի այս և մյուսների համար այդպես գրվածները կարդացինք «վարպետ» և ոչ թե «վարդապետ»։

67 Նման հիշատակություն տե՛ս նաև 120ա և այլ էջերում։

անուամբս միայն կամ և գործովս ոչ, ի յերկիրս Յորոտեան, ի գիւղաքաղաքս Յղվերձ, ի թագաւորութեանս շահ Սաֆուն, ի հայրապետութեանն սբ. Էջմիածնայ տէր Մովսէս կաթողիկոսին, որ կրկին լուսաւորիչ եղև ամենայն Հայոց աշխարհիս զԾ թուի[68]

Բ

96ա Յամենայն բարեաց դատարկս և ամենայն մեղաւք փարթամս Գասբար գրիչս աղաչեմ յիշել։

Գ

111ա Զծրող սորայ Գասբարս աղաչեմ յիշել։ Անմեղադիր լերուք, զի կարս իմ այս է։

633

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 5421

Գրիչ՝ Նիկիտայոս երէց

ա

19բ Գրեցաւ սբ. Խորհուրդս ձեռամբ մեղապարտ Նիկիտայոս իրիցու, ի վայելումն քաշ և արի սրբասնունդ Կիրակոս քահանային. Աստուած բարով վայելել տացէ. ամէն։
Թվին ՌԶ (1631)։

Բ

16ա Ո՛վ սբ. քահանայ յայս տեղոջ յիշեա՛ զՆիկոտայոս դրիչս վասն Աստուծոյ։

634

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, 5736 (1290 թ.)

Նորոգող՝ Ստեփանոս
Վայր՝ Ամիթ

ա

315բ Նորոգեցաւ սբ. Աւետարանս թվին ՌԶ (1631), ձեռամբ փծուն Ստեփանոսի, որ մականուամբ Կարմիր ասի, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մօր նորա Յուղիտայի, ի Տիգրանակերտ քաղաքի, որ այժմ սմա Ամիթ ասի։ Տեսողք և կարդացուղք Աստուած ողորմի ինձ ասացէք՝ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն[68ա]։

---

[68] Հիշատակարանի շարունակությունն ընկած է։ Այդ պատճառով ձեռ-ի գրության ստույգ թվականը հայտնի չէ, այն գրվել է շահ Սեֆիի թագավորության և Մովսես Տաթևացու կաթողիկոսության ժամանակ։ Շահ Սեֆին իշխել է 1629—1642 թթ. (տե՛ս С. Лэн-Пуль, Мусульманские династии, СПб, 1899, էջ 219. ծանոթ. 1), իսկ Մովսես Տաթևացին հովվել է 1629—մինչև 1633 թթ. մայիսը։ Ուրեմն ձեռ-ը գրվել է 1629թ.—1633 թ. մայիսի շրջանում. հիշատակարանը պայմանականորեն գրեցինք 1631 թ. շարքում։

[68ա] Մատենադարանի ձեռագրաց ցուցակում սույն հիշատակարանը նշված է ԺԶ դար (հա. Բ, էջ 174)։

Բ

Կազմի բ երես

Յիշատակ է սբ. խաչս Տովլաթիարին, *որդոյն* Սաֆարին, *ի գուռն Ս. Կիրակոսին. թվին ՌՁ (1631)-ին։*

635

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 6059. տե՛ս նաև № 6333, էջ 96 ա, № 395

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Աւրնդանց

380ա *Փառք եռակի աստուածութեանն,*

. . . . . .

380բ *Այս ես տրուպս անյիշական,*
Եւ անիմաստս յիմաստութեան,
Մոյլս և պըղերգս ի հոգէական,
Եւ ժըրացեալս յաշխարհական։

. . . . . .

381բ *Այս մատենիս աստուածաբան,*
Զանազանեալ ականցս որ կան,
Տէր Աւետիս *այրն պատուական,*
Եւ գրծագրել զսա զանազան։
Վարիւք փայլեալ հրեշտակական,
Վարժեալ ի վարս ճրգնողական,
382ա *Խոնարհ հոգւով // և հեզաբան,*
Եւ խրատիչ որդոց մարդկան։
Փափաղեցաւ իբր զեղջերայն,
Յաղբերըս շուրց անմահական,
Եւ գրծագրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացըս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Աւետիս *հողս և անարժան,*
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգովս յաւժար և ժըրական,
Բազում չանիւ աշխատական,
Կատարեցի զսայ ի լրման։
Ի թվականիս Ռ ամեան,
Զ թիւ ընդ նըմայն (1631),
Աւարտեցաւ սայ ի լրման։
Որք հանդիպիք որմայ տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Յիշման առնէք ըզմեզ արժան,
*Զ*Աւետիս *հողս և անպիտան։*

Եւ դուք յիշիք տա՛ Տէրըն բան,
Յորժամ գայցէ ի դատաստան,
Լրսէք զձայնն երանական,
Զեկայք աւրհնեալք հաւրն իմ արժան։
Աղաչեսցուք զհայրն գրթական,
Զերրորդութիւնն միական,
Նրմայ տացուք փառս անխափան,
Որ է աւրհնեալ միշտ յաւիտեան։

382բ [Ն]ւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, և աստուածաբան կտակս, և խնկալի տուփս, և զանազան ծաղկաւէտ բուրաստանս, և պրտղալի դրախտս, և քաղցրաճաշակ հոգեղէն կերակուրս, որ կոչի Շարակնոց ի լաւ ե յընտիր աւրինակէ, որ է Խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի մեղաւոր Աւետիսի։

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ի թուականիս Հայոց Ռ և Զ (1631), ի դեպաւղս որ կոչի Աւրնդանց, ընդ հովանեաւ Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի և Ս. Գէորգայ զաւրավարին։ Ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց, քանզի ես քան զես սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս ես առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան գծողս և ղծնողն իմ՝ զՎարդան քահանայն և
383ա զՄսխմուր, և զմեծ պապն իմ՝ // զԹումայ քահանայն և զվարպետն իմ՝ զտէր Կիրակոս Աւրնդանցին, որ բազում աշխատութեամբ ուսոյց զիս. միթէ Աստուածն <իւր> ողորմեսցի յիւր միսանգամ գալուստն. ամէն։

Դարձեալ կրկին անկամ աղաչեմ զձեզ կողկողագին պաղատանաւք. զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք Աւետիսիս և իմ ծնողացն ես առաւել ստացողի սորա տէր Աւետիսին, Վարդիաթունին, Շեխիշանին, Ազիզին, Խլդաթին, Վարդանէսին, և իւր քրւերցն՝ Խաթունին, Վարդիւաղունին, Թուրանդին. ամէն։ Զոր յուսամք և հայցեմք ի յամէն առատ...[69]։

636
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 6358 (1488 թ.)

ա

218բ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ և զերկիւղած առն Աստուծոյ Յոհանն, որ ստացաւ զքառաբուղխ սբ. Աւետարանս, վասն յիշատակի իւրոյ, հօրն իւրոյ՝ Ուլուխանին և մօրն իւր՝ Փարին և միւս մօրն՝ Գուլին, և եղբարցն՝ Դանիէլին, Յովանէսին, և հանգուցեալ եղբարցն՝ Գալուստին, Մարտիրոսին, Յովանէսին, Մկրտչին, Եղիկին, և քւերացն՝ Վառիկին, Հռիփսիմին, Ղուզին, Մարթին, Մարիանին, Մա-

[69] Արձակ հիշատակարանը համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ. № 501, էջ 416։

նուշակին, և կողակցին՝ Անախաթունին, և որդոցն՝ Գալուստին, Հէրապէտին, Ոդանանին, և դստերացն՝ Մարգարտին:

Բ

Դարձեալ յիշեցէք Յովհանն և կողակիցն՝ Անախաթունն, հայրն իւր՝ Ուլուխանն, և մայրն իւր՝ Գուլին, որ ետուն շինել զսբ. խաչս ի վերայ Աւետարանիս, յիշատակ հոգոց իւրեանց...։

Գ

219ա Դարձեալ յիշեցէք Յոհանն և կողակիցն՝ Անախաթունն, և աւագ որդին՝ Գալուստն, և ամուսինն՝ Նազլուխանն, և որդիքն՝ Յոհանն, Մկրտիչն, և դուստրն՝ Գուլթէզէն, և եղբարքն Գալուստին՝ Վարդանանն, Պօղոսն, և քուերցն՝ Լէլափարն, Մանփարն, Հեղինէն, Գուլաւզարն: Դարձեալ[70] յիշեցէք Պողոսի որդիքն՝ Մխիթարն, Սնակն, քվերն՝ Մարխոնն(?):

Այլ և յիշեցէք Յոհանն, և եղբարքն՝ Դանիէլն, Յովաննէսն, Դանիէլի կինն՝ Սիրամարգն, և որդին՝ Սարգիսն, և դստերքն՝ Գուլջնանն, Եղիսաբեթն, Յովանիսի կինն՝ Եղիսաբեթն, և դուստրն՝ Հուռումսիմէն: Տէր իմ Յիսուս Քրիստոս, քո սբ. Աւետարանացն բարեխօսութեամբն սոցա ղկենդանեացն տ[ուր] կեանք և առողջութիւն, և ննջեցելոցն հանգիստ և արքայութիւն. ամէն։

Գրեցաւ յիշատակարանս թվին Հայոց ՌԶ (1631)-իս։

637

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 7120

Գրիչ՝ Ղազար դպիր
Վայր՝ էջմիածին

301ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ աստուածախօս մատեանս շնորհալից սբ. հայրապետին Ներսէսի, որ կոչի Յիսուս որդի, զոր ասացեալ է բարառ-
301բ նաբար զդիմաց անձին իւրոյ և զամենայն զղջացելոցն ան//ձանց՝ մաղթանք հաճոյականք և աղօթք անուշահոտ, ի բուրումն տեառն Աստուծոյ։ Եւ եղև զրաւ գրչութեան տառիս ի թուականիս Հայոց հազարերորդի և ութներորդի (1631), ի դրան մեծապայծառ և լուսակառոյց սբ. աթոռոյս էջմիածնայ, ձեռամբ Ղազար սուտանուն դպրի, առ ոտս երիցս երանեալ և տիեզերալոյս հայրապետիս մերոյ տեառն Մովսէսի, իմոյ հարազատի ըստ մարմնոյ և տեառն հոգւոյ իմոյ։ Սա գոլով ի վիճակէն Սիւնեաց, տիեզերաքարոզ և աստուածաբան բարունապետ, որ և կոչեցաւ ի գերագոյն իշխանութիւն հայրապետութեան, և եղև կրկին լու-
302ա սաւորիչ և նորոգող ազգիս Հայոց և զսբ. էջմիածնի ա//թոռս վերստին, հաստատեաց շինութեամբ պէսպէս նորակերտ տանց և կարգաւորութեամբ հոգևոր միաբանութեանց, ազատելով զսա ի հարկապահանջութենէ անօրինաց։ Նաև վասն առաւել շնորհացն Աստուծոյ, որ էր ի սմա, սիրեցեալ էր յաչս ամենեցուն՝ ոչ միայն քրիստոնէից, այլ և Պարսից թա-

[70] Այստեղից մինչև հարցականը գրված է ուրիշի կողմից։

գաւորացն և մեծամեծ իշխանացն, որպէս զԴանիէլ։ Եւ անուն մեծա-
համբաւ գովութեան սորա հռչակեալ էր ընդ ամենայն երկիր։ Որ և հր-
ամայեաց իմում նուաստութեանս և անարհեստ գրչիս գրել զսբ. տառս
ի խնդրոյ հոգևոր որդւոյ իւրոյ Ղազար կրօնաւորի, և ի վայելումն աշա-
302բ կերտեալ մանկանց իւրոցւ Արդ՝ որք հանդիպիք // սմա կարդալով կամ
օրինակելով կամ ի բերան առնելով, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զբա-
րեյիշատակ տէրս մեր զՄովսէս կաթողիկոսն, և զսրբասանեալ հոգևոր
զորդիսն իւր՝ զԽաչատուր վարդապետն և զՓիլիպպոս վարդապետն,
զտէր Եսային, որ է սպասաւոր սբ. աթոռոյս, որ և զանազան հարկիս
արաւ մեզ, զՁաքարիայ վարդապետն, զտէր Յովսէփն, զտէր վարպետ Ղու-
կասն, և զմիւս տէր Ղուկասն, և զՂազար կրօնաւորն խնդրող տառիս, և
զայլ միաբան եղբայրսս, որք կան ի սպասաւորութիւն սբ. էջմիածնի
աւելի քան զհարիւր թիւս, զորս և հաստատուն պահեսցէ Քրիստոս Աս-
տուածն մեր. և զյիշողսդ հանդերձ[71]

638 -
ԺԱՄԱԳԻՐՔ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Երևան, № 7195

Գրիչ՝ Զաքարիա վարդապետ

ա

16բ Զանարժան հողս զՁաքարիա սուտանուն վարդապետս, յիշել աղա-
չեմ միով Տէր ողորմայիւ և Աստուած զձեզ յիշէ. ամէն։
Թվին ՌԶ (1631)։

բ

Գրիչ՝ Սիմոն

66բ Զեղկելի գրիչս Սիմոն յիշեա՛, ո՛վ սբ. պատարագաւղ։

գ

198բ Ո՛վ սբ. եղբայր, յորժամ սրտի մտօք աղօթես՝ զմեղաւոր գծողս Սի-
մոն ի յաղօթս քո յիշեա՛, և թէ գրես բանիցն, զգոյշ լեր, որ չփոխես,
և Աստուած ողորմի մեր ծնողացն հրամայես և ի տեառնէ Աստուծոյ դու
գտանես։

639
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7464 (1579 թ.)

Սպասաւոր՝ Գրիգոր երէց

52բ Ես՝ մեղաւոր և անարժան Գրիգոր էրէցս ծառայեցի այս սբ. Այս-
մաւուրքիս թվին ՌԶ (1631), ի տաճարն Ս. Ըստեփանոսի։ Դուք, եղ-
բարք, [յ]որժամ ընթեռնուք, մեղացս թողութիւն հայցեցէք. ամէն։

---

[71] Զեռ-ից թերթ ընկնելու պատճառով հիշատակարանը մնում է կիսատ։

640
ՔԱՐՈԶԳԻՐՔ
Երևան, № 7951 (1614 թ.)

ա

207ա Փառք...։ Արդ՝ երես անգեալ աղաչեմք զձեզ, օ՛վ ընդերձաւղք, տեսանք որ մեծ Զաքարեա պարոնտէրն առեալ էր Քարոզգիրքս [ի]իստ փափականօք, Ծարայ վանքին և Ս. Աստուածածնին դռան յիշատակ և վախիմ իաթ(?) Աւետիսինն այ։ ՁՌ (6000)-ի էր առել, անօրինաց ձեռն գերի էր ընկել. մեր մեծ Զաքարեա պարոնտէրն առել են ժամանակին, որ շահ Սաֆին բաղում զօր[օք] Էրէվանու[յ] բերդին կո[վ]ոսմ էր հետ աւսմանլվին. բարի շատ քրիստոնայք կորեցան թվին ՌԶ (1631)։

Բ

11բ Զաքարիայ եպիսկոպոսին և իւր ծնաւղացն՝ Մասումպեկին, Խանաւղին, աղգականացն և կարդացողացն ողորմի։

641
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 8117 (1608 թ.)

Գրիչ՝ տէր Մարգար

61ա Դարձեալ ի վերջին դարուս յարեաւ ոմն սրբասէր և առաքինի քահանայն տէր Մարգարայ, որ ըստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւրն և իւր ծնողացն, հաւրն՝ Մարտիրոսին և մաւրն՝ Ակոնին. Մարգարտին, Ոսկուն, և եղբաւրն՝ Ենիաքին, և կողակցուն՝ Մարքին. Գրիգորին և իւր կողակցուն՝ Նուպարին, Մէնէրին և իւր կողակցուն՝ Արգունին, Գազպարին և իւր կողակցուն՝ Խումարին և ինձ մեղապարտ տէր Մարգարին և իմ կողակցուն՝ Խանբէկուն, և Ղազարին, Թումաջանին և արեան մերձաւորաց մերոց։ Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր և լի բերանով Աստուած ողորմի ասացէք ինձ՝ Մարգարին և իմ որդոյն՝ Ստեփանոս դեռաբոյս մանկանն, որ տէր Յիսուս վայելել տացէ։ Ի թվիս Ռ ու Զ (1631). ամէն։

642
ՏԱՂԱՐԱՆ
Երևան, № 8968 (1556 թ.)

2բ Թվին ՌԶ (1631) Խարասուն մեծ հեղեղ էկաւ մինչև որ Ռ (1000) հոգի չուրըն տարաւ՝ այր, կին, ձեր և տղայ. վասն մեր ծովացեալ մեղացն։ Աղաչեցէք եղբարք, որ ըզմեզ փրկէ ի փորձանաց. եւ ի ժամանակն հասաք՝ եղբարք, դէռ շատ նշաներ կու լինայ։ [Ե]ւ Աստուած պահէ այս քաղաքս։

643
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 9325

Գրիչ՝ Յոհան աբեղայ
Վայր՝ Պանտըրման

ա

313բ Փառք...։ Գրեցաւ եղանա[կա]ւոր տառս ի թվականիս Հայոց ՌԶ (1631), ի գիւղաքաղաքն ի Պանտըրման։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք և մանկունք եկեղեցւոյ, որք պատահիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս՝ զանարժան և զանպիտան գծողս իմ զՅոհան աբեղաս ոչ, և զծնաւղսն իմ և զեղբայրսն իմ. յիշել ի Տէր զմեղապարտ Յոհան դերեկս, որ բաղում աշխատութեամբ զՇարակնոցս ի յանկ հանի, ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին, և ի հայրապետութեան Հայոց///

Բ

41բ Զմեղաւոր ծրողս զՅոհան աբեղաս, որ զանունս միայն ունիմ և գործովս մեղօք ի լի. զձեզ աղաչեմ, ո՛վ հանդիպիք, յիշեցէք ի յաղօթս ձեր և Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալուստն. ամէն։

Գ

108բ Զմեղապարտ և զանարժան Յոհան դերեկս աղաչեմք յիշել ի Տէր։

644
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 9661

Գրիչ՝ Կիրակոս երէց
Վայր՝ Երուսաղէմ

ա

243ա Փառք...։ Արդ՝ եղև աւարտ գրչութեան այսմ մեծայհանդէս և հոգեւոր տառիս ի շրջագայութեան հա[յ]կազեան տումարի ՌԶ(1631),
243բ գրեալ// ձեռամբ անիմաստ, անմիտ և մեղապարտ... փծուն գրչի Կիրակոս երեցի, որ զանունս քահանայի ունիմ և զգործս ոչ ունիմ, վայ ինձ։ Գրեցաւ Յիսուս որդիս ի սբ. քաղաքն Յերուսաղէմ, ի մէջ Ս. Յարութեան՝ ի վերնատունն, ի դէմ սբ. աստուածընկալ գերեզմանին և սբ. Գողգոթային և այլ տօնականացս, որ այստ կան հաւաքեալ, ի հայրապետութիւն տէր Գրիգոր քաշ և արհի եպիսկոպոսին։ Դարձեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք այսմ տառիս յիշեսցիք ի սբ. աղօթս ձեր զանարժանս և ըզվարպետն իմ և ըզտէր Յոհանէսն, և ըզմիւս վարպետն իմ տէր Մինասն շատ աշխատանք հետ մեզ ունի։ Հայր մեղայ ասացէք։

Բ

312բ ...և ինձ գծողիս և իմ կարդայցէնողիս հեզայհոգի տէր Մինասին, որ բազում աշխատանք քաշեց ու կարդացոյց, Տէր Աստուած, մի՛ յիշեր նորա մեղքն. և իմ հօրն՝ Միքայէլին, և մօրս Ալթունին, և իմ եղբարացս. կրտ[ւ]նաւոր տէր Խաչատուրին և Մարկոսին, Բարսեղին և երից-

կնոչս Մարգրիտին, որ թվին ՌՀԴ (1625) ի առ Աստուած փոխեցաւ։ Մարս ու երիցկին՝ եր[կ]ուքն մէկ օր մեռան։ Եւ ես եղկելիս ապուշ մնացի. փառք Աստուծոյ. Աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգոյն և իմ արեան մերձաւորացն...։

313ա Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր ղվարպետս տէր Յոհանէսն, որ ըղդիրն ուսուց և զտումարն կարդայցուց՝ հայոյն և զհոռոմին. ի սբ. Յերուսաղէմ կոչայցեմք ի սբ. լուսա[բ]ուխ գերեզմանէն վարցայհատօց լինի իւր և իր ծնողացն. ամէն։ Բայց մի՛ մեղայդէք թէ բարով չէ ուսուցեր, չի թողին բերին ի Ս. Յարութիւն դրին կիսկայտար մնացի։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք տէր Վարդանին, որ զՅիսուս որդոյն յօրի[ն]ակն ետուր և միւս հեզահոգի տէր Ստեփանոսին, որ զԱղօթնուն յօրի[ն]ակն ետուր, որ ի Ս. Յարութիւնն այն տարովն հետուց էայք։ Ես մեղօորս [ժ]ամարար և նա լո[ւս]արար. ամէն։

313բ Արդ՝ ես նուաստս և անարժանս, եղկելիս և թշուառացեալս, սոսկ անուն Կիրակոս երեցս, որ զանունս ունիմ և գործս ոչ ունիմ, զի երէցն մեծ ասի, Կիրակոսն՝ բարի. ես եղկելիս ի մէջ մեղաց եմ, թմբրեալ քան զամենայն մարդ, լի եմ մեղօք և անյագ մեղաց ծառայեալ. վայ է ինձ։ Ի թվին ՌՀԹ (1630) ամին եկի ի սբ. Երուսաղէմ, այն տարովն ի հոս մնացի և զայս Յիսուս որդիս և Աղօթայտետրս ի հոս գրեցի ի Ս. Յարութիւն, ի յառաջնորդութեան տէր Գրիգոր արհի եպիսկոպոսիս և իւր միաբանքն են այսոքիք՝ Մաղայֆայ վարդապետն, տէր Գրիգոր վարդապետն, տէր Աստուածատուր լուսայարն, տէր Մելքիսէթն, տէր Աստուածայտուրն յրերէցն, տէր Վարդանն, տէր Անտոնն, տէր Զա///

Գ

195բ Ես՝ Կիրակոս երեց անվի,
Որ իմ յերկրէն Զմրնշկայծակցի,
Թվին ՌՀԹ (1630)-ի,
Ի սբ. Յերուսաղէմ եկի։
Տար[ի] մի ի հոս այլ մնացի,
Գիրս ուսայ տէր Յոհանէսի,
Եդին զիս այլ Ս. Յարութիւնն,
ԶՅիսուս որդիս հոն գրեցի։
Եւ իմ անունս այտի ասի,
Կարդացանողիս տէր Մինասի,
Շատ աշխատանք հետ ինձ ունի,
Միթէ իւր մեղքն չ[յ]իշվի։
Եւ ծնօղացս Միքայելի,
Եւ մարս անուն Ալբուն ասի,
Եւ կողակցիս իմ Մարգարտի,
Եւ իմ եղբարցս իմ երեքի՝
Տէր Խաչատուր աբեղայի,
Մարկոս անուն աշխակի,
Փոքրիկ եղբարս իմ Բարսեղ ասի,
Եւ իմ նախնեաց ամենայնի՝ Հայր մեր։

645
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 10433

Գրիչ՝ Յոհանէս
Վայր՝ Սուրս

ա

287ա *Զսուրանուն Յոհան գրիչս և զկողակիցն իմ՝ զՄրջանն յիշեցէք ի Քրիստոս, և լի բերանով Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն*[72]։

բ

287ա *Փառք..., որ տրամադրեաց զմատունս վերջացեալ տկար ողոյս Յոհանիսի հասանել ի վերջին գիծ աստուածախօս Աւետարանիս...*

288ա *Արդ՝ աստուածեղէն և երկնապարգև գանձիս և լուսափայլ և մաքուր մարգարտիս ցանկացաւղ եղեալ սրբասէր և ընտրեալ տանուտէրն Յովանէս*[73] *ստացաւ զսա ի մխիթարութիւն անձին իւրոյ և ի յոյս փրկութեան։*

289բ *....// Այլ և զիս զյետինս ի կարգս կարգաւորաց և զառաջինս ի դասս մեղաւորաց, մեղօք մեռեալ գծողս Յոհանէս, և զկողակիցն իմ՝ զՄրջանն, և զծնօղսն իմ՝ զԿարապետ քահանայն և զՀաթունապէն, և զորդիսն իմ՝ զՍտեփաննոս, և զՅովանէսն, և զՎարդիկն, և զքրեարքն իմ՝ զՓաշաչանն, և զՎարդհաթունն, և զՇամամն, և զՂզլարբէկին, և զրպապն իմ՝ զՅովհաննէս քահանայն և զմեծ պապն իմ՝ Սաեփաննոս քահանայն, և զԳրիգոր քահանայն, և զԱւետիս քահանայն, և զՅովասափն. և զՅովանէս և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն...։*

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրս Սոկաց, ի գեաւղս որ կոչի Սուրս, ընդ հովանեաւ Ս. Յովաննու Մկրտչին և Ս. Գէորգայ զօրավարին, ի թուականիս ՌՁ (1631), ի հայրապետութեան// տեառն Մովսէսսին և տէր Սաեփաննոսին, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ երկիրս ամենայն երերեալ կայ և տատանեալ ի ձեռաց անօրինաց այլազգաց։

290ա *Այլ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի Քրիստոս պատուական Յովանէսն*[74], *որ յոյժ փափաղմամբ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ յարդեանց և ի վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց. ամէն*[75]։

Ստացող՝ Յովանէս

գ

295բ *Ես՝ Յովանէսս ցանկացայ և գնեցի սբ. Աւետարանս, յիշատակ հոգոյ իմոյ և ամենայն արեան մերձաւորացս իմոց։*

---

72 Նման հիշատակարաններ տե՛ս նաև 147 ա, ե 225 բ էջերում։

73 Սկզբում գրված է «քահանայն տէր» ապա հանման նշան են գրել և ավելացրել «տանուտէրն Յովանէս»։ Այդ գուցե հետո է արված։

74 Տե՛ս ծանոթ. 73։

75 բ հիշատակարանը խիստ համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 735, էջ 205 բ, ձեռ. № 6333, էջ 49 բ, № 219, 82Վ, № 376, էջ 878—879։

646

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ (1624 թ.)

Երուսաղեմ, № 2560 (մանրաժապավեն, Երևան, № 735)

Նվիրատու՝ Կարապետ Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

ա

4ա Ի թվին Հայոց Ռ և Զ (1631), ի ժամանակս յորում էր հայրապետ սբ. Երուսաղէմի Գանձեցի տէր Գրիգորն սրբասնեալ, որ զամենայն տընօրինական տեղիս Քրիստոսի վերստին նորոգեաց, որպէս Զօրարաբէլ ի հումն յիսրաեղի։ Եւ նուաստ Մոկացի Կարապետ պիտակ անուամբ վարդապետ, Ե (5) պատուական գիրք տուի յիշատակ սբ. Երուսաղէմայ, ի գուռն Ս. Յակոբայ, նախ. Աստուածաշունչն Հին և Նոր Կտակարանքն ի մի տուփ։ Երկրորդ գիրքն՝ Ե (5) պատմագիրք ի մեծ Հարանց վարքն ի մի տուփ։ Երրորդ գիրքն՝ է (7) արտաքին և Սահմանքն Դաւթի բովանդակ բնաբանքն և մեկնիչքն և լուծմունքն ի մի տուփ։ Չորրորդ գիրքըն՝ Գրիգոր Ստաթևացոյ շինած, նոյն արտաքին է (7) գրոց լուծմունքն ի մի տուփ։ Հինգերորդ գիրքն՝ Կանոնգիրքն և Դատաստանագիրքն և Տասն ասացուացքն ի մի տուփ։ Եթէ Տէր կամեսցի Սաղմոսի մեկնիչն և Քաղուածոյն ի մի տուփ տամ գրել և զայն ևս տամ։ Ապա որքան ես կենդանի եմ և աշակերտքն իմ կարդամք և յամէն տարի նոցա[76] փոխան և վարձ Ա (1) ոսկի սբ. Երուսաղէմայ լուսգին տամք և վերջն առ Տէրն իւր ի սբ. քաղաքն հասուցանեմք, զի անդ անխափան և անարգել ընթեռնուցուն և աւգտին ամենայն խնդրողքն և ողորմիս տացեն ամենեցուն, որք մասն ողորմութեան և աշխատանք ունին ի նոսա և ինքեանք ողորմութիւն գտցեն ի Քրիստոսէ։ Եւ թէ ոք այսուհետև հակառակի այսմ բանիս և զայս գրեանքս չտայ սբ. Երուսաղէմայ, թէ յիմոց և թէ յօտարացըն և կամ գողանայ՝ նա զպատիժ գողոյն Աքարայ կրէ, որ զԱստուծոյ բաժին գողացաւ։ Եւ կամ թէ ոք վասն ագահութեան ծախէ առանց Երուսաղէմայ առաջնորդի կամացն և կամ հեռացուցանէ անդառնալի՝ նա մասնակից լինի Յուդայի, որ զորդին Աստուծոյ վաճառեաց վասն ագահութեան և բոլորտի իբրև զԳեեզի և կցորդի անիծիցն Կայենի։ Եւ եթէ ոք զսոսա խնամով պահէ և յօժար սիրով ընթեռնու և անխնայ տայ սիրով և յօժար ընթերցողացն, և զնոցա հոգևոր քաղցն և զծարաւ կարաւտութեանն լնու՝ նա փոխանակ այս վեց գրոցս ի յաւուր դատաստանին ի սբ. Երուսաղէմ զողորմածաց վեց աւրհնութեան բարբառն լսել տացէ Քրիստոս Աստուած, որ ասէ. «Եկայք աւրհնեալք Հօր իմոյ, զի քաղցեայ»* և այլ ամենայն. ամէն։ Եւ դարձեալ եթնալիր աւրենութեան ձայնին արժանաւորեսցի հանդերձ ամենայն ննջեցելովք. ամէն։

բ

67.Ի՛ա Դարձեալ կրկին անկամ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, որ բնակեալ էք ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբայ, լի սբր-

[76] Ձեռ-ում «նոցա» կրկնված է։
* Մատթ., Իե, 34—35։

տիւ և բոլոր հաւատով յիշեսջիք ի Քրիստոս միով ողորմայիւ ինձ տառապեալ Կարապետ վարդապետս, որ բաղում ծտխիւք և արդեամբք ետու դրել և ծաղկով զարդարել զԱստուածաշունչս ոսկով և լաճվարդով և երանդ երանդ դունով. և ետու յիշատակ ի սբ. Երուսաղէմ ի դուռն Ս. Յակոբայ, ի յառաջնորդութեան տեառն տէր Գրիգոր հայրապետին, որ բաղում երախտիք և աշխատանք ունի ի վերայ վիճակիս Հայոց ևս առաւել ի վերայ մեզ և ի վերայ աշտկերտաց մերոց։ Զոր խնդրեմք ի Քրիստոսէ, որ զինքն ընդ սրբազան հայրապետացն դասեսցէ և ընդ անուանակոցին իւր սբ. Լուսաւորչին մերոյ պսակեսցէ։ Եւ ոք հանդիպի սբ. Աստուածաշունչ գրոցս կարդալով և կամ օրինակելով կամ յարևանցի տեսանելով, Աստուած ողորմի ասացէք ինձ Կարապետ վարդապետիս և ծընօղացն իմոյ՝ Մեսրոպին և Ալամին...[77]։

647

ԺՈՂՈՎԱԾՈՒ (1554 թ.)

Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան, Арм. II. С. *№ 14 (մանրաժապավեն, Երևան, № 112)*

Գրիչ՝ Լուսիկ
Վայր՝ Եկրան

72 Տէր արարիչ և ճյանսայման,
Որ ըս[տ]եղ[ծ]իչ ազիգի մարդկան,
Ա[ր]ժան առ[ն]ես Լուսիկն ի դատաստան,
Ուր ո[ր]դին՝ Թասալի արժան առնես աշխկողման։

Եւ իւր թուն՝ Մայրութէյն, և ոիւր կողակից Սղմէրն, և իւր որդին՝ Սիմոն, Ապովն, և քուրն՝ Անայփային, Ջանազան. և Աստուած զձեզ յիշէ...

Թվին ՌՁ (1631) գրվեցաւ, ի քաղաքն Հընդոստան, որ կոչի Եկրան[78]։

648

ՔԱՐՈԶԳԻՐՔ (ժամանակ ?)

ԼԱԺԻ, № B—11 (մանրաժապավեն, Երևան, № 233)

258ա Համբարձմանն քահանայիցն անունքն են այս. Յովհաննէս քահանայն, Մատթէոս քահանայն, Սաեփանոս քահանայն, Դաւիթ քահանայն, Յուսէփ քահանայն, Խաչատուր քահանայն, Թաթէոս քահանայն, միւս Թաթէոս քահանայն, Յակոբ քահանայն, Թաթէոս քահանայն, միւս Թաթէոս քահանայն, Թորոս քահանայն, տէր, Ներսէսն, Յովհաննէս[79] քահա-

---

[77] Նորից թվում է այն անունները, որոնք տրված են սույն ձեռագրի 1624 թ. հիշատակարանում։ ա հիշատակարանը նույնությամբ տե՛ մՏՁԵՊ, II , № 309, էջ 160—161, Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, էջ ԻԴ, Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 155—156։ Համառոտ տե՛ս մՏՁԵՊ, IV, №1291, էջ 500։

[78] Շատ վատ է գրված, այս երկու անունը կարդացվել է ենթադրաբար։

[79] Այստեղից մինչև «Աստուածատուր քահանայն» ձեռ-ում գրված է աջ լուսանցքում, սակայն չի նշված, թե այն որտեղ է դրվելու։ Պարբերության վերջում դրեցինք ենթադրաբար։

նայն, Ովակիմ քահանայն, Սարգիս Լէճցի, Աստուածատուր քահանայն։

Աստուած լուսաւորէ զՍիմաւոնն. որ վերըստին նորոգել ետ զսբ. Քարոզգիրքս իւր ծնաւղացն հոգուն, զի խիստ հնացեալ էր. Բ (2) ոսկի երեսի հալալ վաստակոցն և ետուր նորոգել թվին ՌԶ (1631) և եգիր յիշատակ ի դուռն Ս. Համբարձմանն անշնջելի յիշատակ, Աստուած զիւրեանց հոգին լուսաւորէ։

649

ՃԱՇՈՑ

Տիրայր վարդապետ, № 1

Գրիչ՝ Ստեփանոս սարկաւագ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

11 Փառք...։ Արդ՝ ես անպիտան և անիմաստ գրիչս զՍտեփաննոսս ողորմութեամբ Տեառն սկսա և նախախնամութեամբ նորին կատարեցի զսբ. գիրքս, որ կոչի Տարեգիրք։ Քանզի ունի սա զբոլոր մասունս տաւնից տէր.ունականաց, զոր սբ. հարքն հաստատեցին զընթերցուածն, զոր Յակովբոս եղբայր Տեառն և Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետն հաստատեցին։ Եւ ըզտաւնս նամակաց սրբոց առաքելոցն և մարգարէից, և մարտիրոսաց, հայրապետաց, կուսանաց[79], ճգնաւորաց։ Որ ունի ընդ ինքեանս միաւորեալ ըզմեծ մարգարէութիւնն Եսայեա և զԱւետարանն։ Ի խնդրոյ պարոն և մեծահաւատ խաւճա Բարաղամին և Պարաֆիաղին, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն։ Հոգոյն Սրբոյ թելադրութեամբն կատարեցաւ սա ի թուականութեանս Հայոց Ռ և Զ (1631) ամին, ի հայրապետութեան Հայոց տեառն Մովսէսի, և արհի եպիսկոպոսութեան մերոյ մայրաքաղաքիս տէր Խաչատուրի ամբիծ աղաւնոյ, ի թագաւորութեան Պարսից շահ Սէֆու, և իշխանութեամբ մերո[յ] գեղիս
12 պարոն խաւշա Նաղարի, ի քաղաքս Շաւշ//ի գիւղս Ճուղայ, որ է հիմն Հայաստանեայց։ Արդ՝ աղաչեմ զընթերցողսդ և կամ ղհարևանցի տեսանողսդ, յիշեցէք ի ժամ անարիւն զենմանն գառինն, զխաւճա Բարաղամն և Պարաֆիաղն, և զծնաւղն իւրեանց՝ ըզԹորոսն և զԹանքակն, և քեռն իւրեանց՝ ըզՄէրաատիկն և ըզԳուլղարիխանն, և հանգուցեալ եղբարքն՝ Մխիթարն, Սաֆարն, և զհանգուցեալ որդիքն՝ Աւետիկն, Մարիամն, և կողակիցքն իւրեանց՝ Ոսկիտատիկն, Ղոուպիկն։ Դարձեալ աղաչեմ, յիշել ի Տէր զպարոն Բարաղամն, և զմեծ պապն իւր՝ Եղտանպաշխն, և ըզմեծ մամն՝ Գիլանն, և իւր պապն՝ Մխիթարն, և իւր հանիկն՝ Գայիանէն, և հաւրեղբարքն՝ Ազբրատեղն, Փիրբաշխն, Սատբաշխն, Գրիգորն, և հաւրեղբաւր որդիքն՝ Ըստեփանոսն, Եղտանբաշխն, Մալազատն, Զամարէն, Յակոբջանն։

Դարձեալ յիշեցէք ըզպարոն խաւճա Բարաղամն, որ ստա[ցա]ւ սա ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և իւր ծնաւղացըն՝ Թորոսին, Թանքակին. ամէն։ Ե[ւ] արդ՝ անյիշելի Ստեփանոսս յիշման արժանի արարէք եղբարք, և սխալանաց և խոշորութեան գրիս մի՛ մեղադրէք, զի իմ կարն այս է։ Դարձեալ յիշեցէք զվարդապետն իմ՝

[79] Անտիպ ցուցակում «կոսա». գուցե «կոսա» համառոտումը արտագրվել է «կոսա» ձևով։

զԽաչատուր վարդապետին, ե զծաղկաւղ զորա զՄկրտիչ վարդապետն,
13 և իւր ընտրեալ տէլէտն՝ զտէր Պետրոս // աշակերտն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի։

Դարձեալ յիշեցէք զխաւճա Բարաղամն և զհաւրեղբօր որդին՝ զտէր Ղուկասն և զայլ ամենայն մերձաւորսն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

Դարձեալ աղաչեմ, յիշել ի Տէր զխաւճա Բարաղամն և կողակիցն իւր՝ Ոսկիաստիկն և զորդիսն[80]

Բ

Ով տուրբ խաչ.... դու ողորմեա այնոցիկ, որ երկրպադանեն քեզ.... մանաւանդ ստացողի դրոյս խաւճա Բարաղամին և Բարամիազին, և ծնաւղացն իւրեանց՝ Թորոսին և Թանքակին, և քւերն իւրեանց՝ Գուլպարիխանին և կողակցացն իւրեանց։ Եւս առաւել մղտեսի Ստեփաննոսին և տէր Ղուկասին և անպիտան նաւտարիս՝ Ստեփաննոս անուամբս իմով սարկաւագիս և ոչ գործովս. ե վարդապետին իմոյ Խաչատուր եւթնալոյս վարդապետին և ծնողաց իմոց Մարտիրոսին և Սուլթանին, և եղբօրն ի-
14 մոյ Գրիգորին և կողակցին իմոյ[81], կարդա//ցողացն և լսողացդ և ողորմի ասողացդ. ամէն։

Թվին Հայոց ՌՀԹ (1630), թագաւորութեանն Պարսից շահ Սէֆուն։

Գ

...Ողորմեա ստացողի այսմ աստուածաշունչ բուրաստանիս խաւճա Բարաղամին և հօրն՝ Թորոսին և մաւրն՝ Թանքակին, և եղբաւրն՝ Պարտիին և իւրեանց մերձաւորացն. ամէն։ Նաև տառապեալ ոգոյ և անարհետս և փծուն գրչի Ստեփաննոսիս և ծնաւղաց իմոց երախտաւորացն ե վարդապետացն և ողորմի ասողացն. ամէն[82]։

Նաև դարձեալ յիշեսչիք զմղտէսի Ստեփաննոսն, որ յորդորիչ եղև այսմ բարութեանցս։

Դ

15 Յիշեա՛ Տէր և զհոգի ստացողի սորա զխաւճա Բարաղամին և ծնաւղացն՝ Թորոսին և Թանքակին[83], և եղբարցն և քւերացն և յորդորիչ բարութեանս զմահդասի Ստեփաննոսին և ըզնաւարամորուս տէր Ղուկասին, ևս առաւել սոցա յիշողին և կարդացողին և լսաւղին ամենեցուն ողորմին։ Մանաւանդ միաբանիցն՝ տէր Ղազարին, զտէր Սարգսին, տէր Աստուածատուրին, տէր Մխիթարին, տէր Առաքելին, տէր Մկրտչին, տէր Մարտիրոսին, տէր Քոսակին, տէր Ստեփաննոսին։ Բայց խնդրեմ ի ձեզանէ, երշանիկ հայրք, մի՛ մեղադրէք թիւր նաւտարիս, զի կարն իմ այս չափ էր, խիստ անտէս արար զստացող սորա զմեզ։

Ե

Վա՛յ քեզ Ստեփաննոս, որ յայսմ աւոր խիստ զարհուրեցար։ Եղբարք լսեցի, թէ քո աներն թուանկաւ սպաննաւ։ Վերջն սուտ էր. ապա

[80] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։
[81] Անունը բաց է թողնված։
[82] Տե՛ս նման մի շարք հիշատակարաններ ևս։
[83] Գրված է «Թանկակին», այլ տեղեր «Թանքակին»։

Երիջանենց Բահարի տղա՝ Առաքելն էր։ Թվին Հայոց ՌՁ (1631)։ Բայց
16 մարդոյ մեղ չկայր։ Երեսն սեաւ սատանային։ Բայց Աստուած // ողոր-
մի ասացէք այն մանուկ տղային։

Զ

17 ԶԱւետա//բանն կարդա և զմեղաւոր Ստեփանոս գրչակս յիշեա[84]։

Է

10 Եղբարք զի որպէս ուրախութիւն մեծ է նաւելոցն ի նաւահանգիստն
ժամանել սոյնպէս և գրչին ի վերջին կէտն։ Վասն որոյ գոհացողական
ձայնիւ քեզ փառք, պատիւ վերառաքեմ ամենասուրբ Երրորդութիւն՝
Հայր և Որդի և Ս. Հոգի։ Այժմու ժամանակի և անզրաւ յաւիտենիս որ և
զանարժան գրիչս զՍտեփանոս արժանի արարեր հասանել ի վերջին
գիծս տառիս։

650

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Տիրայր վարդապետ, № 48

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Թորքսկան

Ա

846 Փառք...։ Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ
847 լուսով, զոր տեսեալ ծառայն Աստուծոյ Գաս//պարն, և մեծ փափագ-
մամբ և ջերմեռանդ սրտիւ ցանկացող եղև սբ. տառիս...[85]։
Եւ գծագրեալ զսա ի հալալ և արդար վաստակոց իւրոց, յիշատակ
հոգոյ իւրոյ, և ծնօղաց իւրոց, և եղբարցն, և քուերցն, և ամենայն ազ-
գականացն։ Եւ արդ՝ ես Գասպար քահանայ անարժան ծառայ ծառայի-
ցդ Աստուծոյ, գծագրեցի զսա ի վերծանութիւն սքանչելեաց ամենայն
արեամբ ներկեալ սբ. մարտիրոսացս։ ///

Բ

Արդ՝ ես Գասպար մեղօք ի լի,
Զիէ (27) [ա]մն լրցի,
Զամէնի հետ մեղաց կացի,
Ու զմահու աւրն չյի[շե]ցի։
Զօրն ուտէի և ըմպէի,
[Ե]ս ծոյլ և թոյլ ամենայնի,
Աշխարհս ծովս էր ու իս ծը///
Միթէ իմ Տէրն ինձ ողորմի։
848 /// [Հ]րաման Տեառն ես անցի,
Վայ [ինձ ե]ղուկ յամենայնի։
Ես կար[գ ա]ռի քահանայի,
Եւ զայն գործով [կա]տարեցի,

84 Նման մանր բազմաթիվ հիշատակարաններից վերցրինք միայն այս մեկը.
85 Գովք Հայսմավուրքի։

Ցանմեզ մարդկան[ց ես] զովէի,
Բայց վա՜յ հազար բեր[ի]ն ընձի։
Աստուածածին կոյս սրբուհի,
Իմ յոյսն դու յաւուր մեծի,
Բարեխօսեա քո Միածնի,
Վասն անարժան քո ծառայի։
Ով որ զսակաւ բանքս լսէ,
Նա մեզ ասէ Տէրն ողորմի,
Զի Տէրն քաղցր է ու բարի,
Ինձ ւ ամենիցդ ողորմեսցի. ամէն։

Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս արդարոց և անկատար ի կատարելոց...[86] տեսի զսէր և զփափագ նորա, զոր ունէր առ հոգևորսըն, ե իմով իսկ տկարութեամբս յանձն առի, և յամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսբ. գիրքս զայս, մեղսամած մատամբ իմով և իմոյս աշակերտի Աստուածատուրի, բազում և մեծ աշխատութեամբ հասուցաք ըզսա յաւարտումն ի յանուանի գեօղս Թորըսկաւ, ի
849 եզր Շուշ քաղա//քին, որ է Ասպահան, մօտ ի Նարնղալայն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս։ Ի հայրապետութեան տեառն Մովսէսի, և առաջնորդութեամբ Խաչատուր վարդապետի, և ի թագաւորութեանն Պարսից շահ Սաւուն, և ի թուականիս Հայոց ՌԶ (1631), ի դառն և ի վշտալից ժամանակիս, յորում կամք ընդ հարկի և ընդ ծառայութեան ազգին Պարսից։ Վասն որոյ բարեխօսութեամբ սբ. և փառաւորեալ Աստուածածնին Մարիամու և ամենայն ընտրելոց սրբոց, Քրիստոս Աստուած որ տէրն է փառաց և տուող ողորմութեանց, տացէ զիւր առատ ողորմութիւնն և զանբաւ բարերարութիւն ստացողի տառիս Ղուկասին և իւր ծնողացն, եղբարցն, և քուերցն, և ամենայն ազգականաց։ Ինչ մարդ որ յաշխատանք ունի ի վերայ սբ. գրոցս՝ խորհրդակից և դասակից արասցէ վկայիցն սրբոց և զուրախարար ձայնն արձակեսցէ առ նոսա, եթէ «եկայք բարի և հաւատարիմ ծառայք մտէք յուրախութեամբ տեառըն ձե[րոյ]. անկապուտ ճոխութիւնն ընդ սբս. և սիրելիս անուան իմոյ»[87]. ամէն։

Դարձեալ ես մեղապարտ և բազմավէր հոգի Գասպար սոսկ անուն քահանայ, գծագրող սորա, զաղէտս տարակուսանաց իմոց առաջի մատուցեալ աղաչեմ, զսրբութիւնդ ձեր, ո՛վ սիրելի և հաւատարիմ ծա[ռա]յք Քրիստոսի, հայրք իմ և եղբարք, [սիր]ով հոգոյն աներկմիտ հա[ւատով], լիակատար սրտիւ բոլ[որով] լեզուաւ առաջի Քրիստոսի և
850 ժ[ամ աղո]թից ձերոց, յիշեսջիք և [զիմ//ան]արժանութիւնս և լերուք [կարե]կից կարէվեր խոցելո[ւս ի բա]նսարկուէն... նաև զծնողսն իմ՝ զՊաղտասար քահանայ և [Թու?]ովանդայ, և զվարպե[տն իմ՝ զՄե]սրոպ դպիր /// և այլ ամենայն ազգահտոհմքն մեր՝ զկենդանիսն և զնընջեցեալս, և զայնո[սի]կ, որք երեղդաւորք եղեն մեզ ի պետս հոգոյ և մարմնոյ և արժանի արասցէ լսել զկենեղուտ բարբառն յամենասուրբ

[86] Այսպես շարունակվում է մի քանի տող։
[87] Հմմտ. Մատ., ԻԵ, 21, 23։

բերանոյն որ ասէ. «Եկայք աւրհնեալք Հօր իմոյ ժառ[ան]գիցէք գրպատրաստեալ ձ[եզ ղ]արքայութիւնն երկնից ի սկզբ[ան]է աշխարհի»[88] ընդ սրս. և ընդ [ս]իրելիս անուան իմոյ. ամէն։

Դարձե[ալ] ես՝ մեղաւոր Գասպար /// գրիչս երեսս ի գետին [ա]ն-
851 [կեա]լ աղաչեմ զձեզ, հայրք // [և եղ]բայր, ո՛վ մանկունք սբ. [Սիով]նի, յորժամ հանդիպիք սբ. գրքիս, կարդալով կամ օրինակե-ալ[ով], թողութիւն արարէք սղալանաց մերոց կամ գրիս խոշորանացն և գրչափոխութեանն, զի ոչ են միահամուռ, զի այս առաջին դիրն էր, եղբարք, թողութիւն արարէք մեզ մեղաւորացս. և ով որ կարդայ կամ օրինակէ, վասն Աստուծոյ զաւելին բառնայ և զպահակսն լընու, և մեզ մեղաւորացս լի սրտիւ թողութիւն հայցէ ի Աստուծոյ և ինքն թողութիւն գրտընու ի կե[նա]բարէն Քրիստոսէ։ Ով որ խնամ [տա]նէ զայս գրքիս ի կարդաւ[որաց կա]մ ի սարկաւագաց, ի հրէ, ի ջրէ՝ [վարձս բարեաց առ]նու. ամէն։

Գ

Այս է վաստակ մատանց եղկելի,
Տարտամ և մեղսամած եղեգնագծի,
Գասպար իրիցի,
Եւ իմոյս աշակերտի Աստուածատուրի։
Եւ ձեզ ի վայելումն յաւէտ լիցի,
Եւ կաթն աղօթից ձերոց ցօղեսցէ,
Ինձ ի տապանն գերեզմանի,
Եւ բուսուցցէ օրն վերջի,
Եւ նորոգումն կենաց յարքայութիւնն երկնից. ամէն։

Դ

852 ...Մանաւանդ ստացողի գրոցս Գասպարին և ծնօղաց նորին և տկար գրչի Գասպար քահանային։

Ե

Ողորմի Քրիստոս միածին որդին Պաղտասար քահանային և իւր ծնօղացն և անարժան գրչիս Գասպար իրիցիս։

Զ

Ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Պետրոսին և իւր ծնօղացն և փծուն գրչի Գասպար իրիցի։

Է

...և զստացող տառիս Ակոբին և իւր ծնօղացն և փծուն գրչի և ամենայն մերձաւորացն։

Ը

... Ողորմի Քրիստոսի Աստուած ստացողի գրոցս Ղուկասին և իւր ծնօղացն, և իւր եղբարցն, և իւր քւերցն, և փծուն գրչիս։

[88] Մատ., Իե, 34։

651
ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 1988 (1584 թ.)

1132 Աստուածունակ բան ցանկալի,
. . . . . .
Զվերջին ստացող զայսմ դրի...
Զմարութէն հեզահոգի,
Եղև պատճառ յայսմ գրի...
Նաև զծնողն հոգելի,
Զաքարիա անուն բարի,
Եւ զհօրեղբայրն բարիոք ի լի,
Եփրեմ անուն ողջախոհի,
Եւ Ազարիա տիպ ցանկալի,
Զաւակ եղբայրն սիրալի,
Եւ հանգուցեալ եղբայրն յերկրի,
Մարգար անուն Ծրագլխի,
Որ է գնացեալ աշխարհն հեռու,
Նաև զմայրն հոգելի,
Մերոատիկ անուն բարի,
Եւ որդոյն Անանիայի,
Դեռաբուսիկն Խալաֆ կոչի...
Թվին Հայոց ՌՀ և Ժ (1631) ամի։

652
ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 2402 (ժամանակ ?). տե՛ս նաև Արցախ, էջ 146

Նորոգող՝ Յակոբ

ա

1631 Արդ՝ եղև նորոգութիւն կազմի սորա ձեռամբ սուտանուն Յակոբի, ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Մովսէսի, ի գեղս Շոռոթ, ընդ հովանեաւ Ս. Յակոբ հայրապետին.... Թվին ՌՁ (1631)։

բ

Դարձեալ յիշեցէք զպարոն Սարֆիսն, և զեղբայրն իմ՝ զՄանուկն, և զծնողսն իւր՝ Մարքէն, որ սբ. Աւետարանս նորոգել տուին։

653
ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 2427

1374 Ս. Սարգսի երեսփոխանքն Խաչատուր և Ստեփանոսն, զի յորդորմամբ վերատեսուչ դիտապետին տէր Բարսեղ վարդապետին, ստացան զգիրքս համօրէն ժողովրդոց, ի թվին Հայոց ՌՈԼԴ (1633) և Հայոց ՌՁ (1631), ի Տիգրանակերտ, ի հայրապետութեան Մովսէսի և յառաջնորդութեան տէր Բարսեղ եպիսկոպոսի։

654

ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II[89]. տե՛ս նաև Արցախ, էջ 147

Գրիչ՝ Մելքիսեդ երէց
Վայր՝ Թեղասեռ

ա

1327 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրս Աղուանից, ի գաւառիս* Տիզակայ, *ի գիւղս որ կոչի* Թեղասեռ, *ի դուռն Ս. Սարգսիս, ի շահ* Սեֆոյն *երրորդ ամին*[90], *ձեռամբ փծուն և անարգ գրչի, սուտանուն* Մելքիսեդ *իրիցու, և միաշունչ եղբօրս իմոյ՝ սրբամիտ և հեզահոգի տէր* Կիրակոս *քահանայի, որ ի միասին սկսաք և աւարտեցաք*[91], *ի խնդրոյ բարեսէր և բազմահաւատ և քրիստոսադաւան* Թալիշ *անուն քրիստոնէի, յիշատակ իւրն և ծնաւղացն, հաւրն՝* Պետրոսին *և մաւրն՝* Զիլֆին, *և եղբարցն՝* Զանիրին *և* Ասլիսանին, Պայինդուրին՝ *հանգուցեալոյն ի Քրիստոս, և ի միւս եղբաւրն* Աքին, *և քվերացն՝* Զանազին, Մինային... *ստացաւ և ետ ի ձեռն* Ջիլաւի *որդի տէր* Ալէքսիանոս *քահանայի։ Ոչ ոք մի՛ իշխեսցէ դաւիշի լինել սբ. Աւետարանիս, ո՛չ ըստ իմում ժամանակի և ո՛չ յետ իմոյ...։*

Ստացող՝ Թալիշ

բ

Ես՝ Թալիշս *քրիստոնեայս ստացաւ [սբ. Աւետարանս] և յետ ի ձեռն* Սարուի *որդի տէր* Զաքարիայ *քահանայի...։ Առաջ յետ տէր* Ալէքսիանոս *քահանայի ձեռն, նա վախջանեցաւ, յետու տէր* Զաքարայ *քահանային։*
Այլ ոչ ուր դաւի չի լինի։

655

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՆՋ, № 90 (1294 թ.)

Գրիչ՝ Սահակ

99 *Փառք...։ Արդ՝ ցանկացող է եղեալ յայսմ տառիս հէզայհոգի և ամէնիմաստ, հաւատարիմ մահդասի տէր* Մինաս *սրբասնեալ քահանան, որ ըստացաւ զաստուածայխաւս սբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց և արդար վաստակոց իւրոց, յիշելով զասացեալն ի մարգարէէն, թէ՝ «Երանի...»*[92]։ *Եւ ետ վերըստին նորոգել զսբ. Աւետարանս, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց, խօրն՝* Հուդավէրտուն, *որ հանգուցեալ է առ Քրիստոս, և մաւրն՝* Թուրվանդին, *և եխբաւրն՝* Մալնազարին,

---

[89] *№-ը չի նշված։*

[90] *Սեֆի I-ը իշխել է 1628—1642 թթ. (տե՛ս* С. Лен-Пуль, Мусульманские династии, стр. 219). *Թեև նույն էջի առաջին ծանոթագրության մեջ Վ. Բարտոլդը 1628 թ. ուղղում է 1629։ Ըստ այսմ Սեֆիի թագավորության երրորդ տարին կլինի 1631 թ.։*

[91] *Մինչև այստեղ տե՛ս նաև ԹՅԺԴ, Բ, № 4, էջ 46։*

[92] *Նայ. ԼԱ, 9։*

միւս եղբարն՝ Աղամջանին և Մալիջանին, և քեռերքն՝ Մէրտատիկին, Եղինաւրին, որ հանգուցեալ կան առ Քրիստոս։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զտէր Մինասն և կողակիցն՝ Գուլֆարի, և զորդին իւր՝ դեռարուս և նորաբողբոջ Աւետիկն, և դստերքն՝ Ոսկիտատիկն, և Եղիսաբեթն, և Արայիսն. ամէն. և հանգուցեալն ի Քրիստոս Ալէքսանոսն, զուստրն՝ Դաշիսն. Աստուած ողորմի ասացէք....

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր հեզայհոգի և բարէմիտ, հուրընկալ և տղորմած աստուածայսէր Մարիամին, յիշեցէք...։

Եւ դարձեալ յիշեցէք զՍա[հա]կս. ամէն։

Թվին ՌԶ (1631) գրեցաւ յիշատակարան[ս]։

656

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՆԱ, № 12 (1443 թ.)

Կազմող՝ Մեսրոպ դպիր

220 Զվերջին ստացող սբ. Աւետարանիս Դիլաֆն յիշեցէք ի Քրիստոս, որ վերրստին ետ նորոգել և կազմել, յիշատակ իւր և ծնողացն իւրոց, հաւրն՝ Սարգսին և մօրն՝ Սու[լ]թանին, և կողակիցն իւրոյ՝ Զիշաքին, և որդոց իւրոց Սարգսին, Սահակին, և դստերն՝ Նուրարին, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴիլաֆ, և զեղբայրն իւր՝ Ֆաւրհուզատ, քուերքն իւր՝ Հուրին, կողակիցն՝ Ամիրջան, որդին՝ Միրզէ, և միւս քոյրն՝ Նարիմէլիֆն, կողակիցն՝ Միրիջան, որդին՝ Վարդան, Գրիգորն, դուստրն՝ Սոլթան, և միւս Խանզադէն, մայրաքոյր Շամշիղամաւր։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զԴիլաֆն, և զ[Հ]օրեղբայրն՝ Յակոբ, և որդին՝ Մուրատն, քոյր Խանում, և առաւել յիշեցէք ի Քրիստոս Ամիր[ի] կողակիցն՝ Ղարիպխաթուն, և զորդիքն՝ Նորումն, Միրիջան, Ամիրջան, Միրզէն, Ագիզն։

Կազմեցաւ ի թուիս ՌԶ (1631) ամի ձեռամբ անարժան Մեսրոպ դպրից, յիշեցէք...

657

ՃԱՇՈՑ

ՄՏԶԵՊ, I, № 30 (1377 թ.)

Գրիչ՝ տիրացու Պետան

Վայր՝ Երուսաղէմ

ա

142 Արդ՝ ի թվականիս Հայոց ՌԶ (1631), ի թագաւորութեանն այլասեռից, որ մահմետական կոչին, որք[93] են կրօնիւքն Արիոսի և Կիրինթոսին, ի հայրապետութեան սբ. Երուսաղէմայ Գանձակեցի, այսինքն՝ Գանջայեցի տէր Գրիգոր բազմերախտ, սրբասէր քաշ եւ արի հեղինակին, որ զՀայոց եկեղեցիքս, որ յԵրուսաղէմ, յամենայն պակասութեանց ելից, որպէս ի ժամանակս Լուսաւորչին։ Ի սորին յաւուրսն վերստին նո-

[93] Սխալմամբ տպված է «որք»։

րոգեցաւ աստուածաշունչ տառս, որ կոչի Ճաշոց և Տարեգիրք, ձեռամբ աստուածասէր եւ հաւատարիմ Ստեփանոս *անուն քահանայի, որ է գաւառաւ* Մոկացի, *ի գեղջէ որ* Կաստ *կոչի։ Այլ և ընդ սմին բաղում հընացեալ գրեանք, որ յ*Երուսաղէմ, *զամենայն նոր նորոգեաց, ձեռնտրուութեամբ վերոյ ասացեալ* Գրիգոր *հայրապետին։ Վասն որոյ տէրն Քրիստոս նորոգեսցէ զնոսա հանդերձ ծնօղաւք ի հնութենէ մեղաց, եւ այնմ երանութեանցն մասնակից արասցէ, որ ասէ մարգարէն, թէ «Երանի...»*[94], *այլ և վերնոյն Սիոնի և բարձրագոյն փառացն իմանալոյն* Երուսաղէմայ *արժանաւորեսցէ. ամէն։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք դռնպան մղտսի Մակարին, *որ զայս գրոց կաշին շնորհեց։ Նորոգեցաւ գիրքս եւ եդաւ յիշատակ ի դուռն սբ. Սիոնի։ Աստուած յիշատակ գրողացն եւ լաւ պահողացն առ հասարակ ողորմեսցէ. ամէն։*

Բ

Ես՝ տիրացու Պետանս *գրեցի այս գիրս։ Կարդացէք. ասացէք Աստուած ողորմի*[95]։

658

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Մ8Ձեզ, II, № 410

Վայր՝ Երուսաղէմ

ա

349 *Փառք...։ Զայս ամենայն այլովք հանդերձ ի խորհրդակիր սենեակն իւր կրեալ, վերոյ յիշեցեալ հաւատարիմ ծառայն Քրիստոսի մահդասի* Ամիրազիզն, *որ է սա ի* յԱղձնեաց *երկրէն, ի նահանգէն* Խողձնեաց, *ի վիճակէն* Բզնունեաց, *որ այժմ ասի* Բաղէշ, *ի գեղջէն որ* Նէլ *կոչի, որ կառուցեալ և շինեալ է ի սահմանս հովտաձև ձորոյն, զոր* Գօզալդարա *առասի, խոտաւէտ և ջրաբուխ, երկիր լեռնային և դաշտային, անտառախիտ՝ մրգաբերօք և մայրիւք զարդարեալ, բաղդատեալ երկրին Աւետեաց։*

Արդ՝ այս մահդասի Ամիրազիզ, *որդի* Սիմէոնի, *եղբայր* Միքայէլ *եպիսկոպոսի, ի մանկական տիոցն անարգեալ զփառս աշխարհի, և բարձեալ զխաչն Յիսուսի, հետևելով բանին կենաց, շրջելով ի սբ. ուխտ և ի վանորայս, աղօթելով և սրբութեանց սպասաւորելով, սակս յուսոյ արքայութեան և մեղաց թողութեան, որ և ժամանեալ եհաս մինչև յաշխարհն Լատինացւոց, ի յառաքելական գահն՝ ի մեծն Հռոմ, և դարձեալ կոխելով ի վերայ կոհակացն ովկիանու, գա յաստուածակոխ քաղաքն* Երուսաղէմ, *վասն ուխտի աստուածահոտ տնօրինականացն Քրիստոսի զորոյ տեսեալ ըզնորին բարուցն և զբնութեանց բարութիւն առաջնորդ սբ. քաղաքին* Երուսաղէմայ *առ ինքն կալեալ՝ ոչ տալով թոյլ առ ի հեռանալ բնաւ յինքենէ, զոր սա յօժարութեամբ կատարէր զամենայն հրամայեալսն առ ի նմանէ, որ և յօժանդակութիւն ոչ սակաւ առնէր ի*

[94] Եսայ. ԼԱ, 9։

[95] Բ հիշատակարանը բացակայում է Պողարյանի ցուցակում, վերջինիս Ա. Սյուրմելյանի ցուցակից, էջ 140։

շինումն տնօրինականացն Քրիստոսի՝ Ենընդեանն, և Ս. Փրկչին, և [Ս.] Հրեշտակապետաց, և Ս. Յակորայ տաճարացն։ Երբեմն անձամբն աշխատելով ե երբեմն հրամանաւ Գրիգոր հայրապետին, ի հեռաւոր և ի մերձաւոր տեղիս նուիրակ գնալով, զորոյ զքաղցր և զհամեստ բարս նորա տեսանելով սիրէին զնա իբրև զառաքեալ ի Քրիստոսէ. և յօժար սրտիւ զկամաւոր զտուրս և զբաժինս հոգոյ իւրեանց տային ի ձեռս նորա, և նա անսղալ զամենայն հասուցանէր ի սբ. քաղաքն Երուսաղէմ առ ի լնուլ զպակասութիւն եկեղեցեացն Երուսաղէմայ, զի զամս Խէ (47) զգործս զայս անտրտունջ կատարեաց։

Եւ յետ նորա ստացաւ զսբ. վարդապետութիւն գիրս, որ Հարանց վարք կոչի. և ի հայրապետութեան ամենայն Հայոց սբ. աթոռոյն Էջմիածնայ տէր Մովսէս կաթուղիկոսին, և յառաջնորդութեան սբ. քաղաքիս Երուսաղէմի տէր Գրիգոր պատրիարգին։ Ի յայս դառնացեալ ժամանակիս որ կամք վրդովեալ ի մէջ երկուց անօրէն արքայիցն՝ Պարսից Շահպազ իշխանին[96] և օսմանցոցն սուլդան Մուրատին, որ են օրինօք և կրօնիւքըն..., որ ունին զաղանդն Արիոսի և Կերինթոսի, այլ և բարուր իմն բաժանման և սգոյ ի նոսա, որ նզովեն զմիմեանս, և են ի պատերազմի զամս Իե (25), և ոչ գոյ ի նոսա հաշտութիւն, յորոց միջին տառապիմք վասն մեղաց մերոց, որպէս ասէ մարգարէն, թէ՝ «Անօրէնքն իբրև զծով ծփեսցին, և մի՛ գտցեն հանգիստ անձանց իւրեանց»[97]։ Ի սոյն յեղեռնա-
350 լի և յետնեալ ժամանակս աստուածասէր այրս այս մահդասի// Ամիրազիզ, որդի Սիմէոնի, եղբայր Միքայէլ եպիսկոպոսի, զմտաւ ածեալ զվերոյ յիշեցեալ բանս, և ստացաւ զՀարանց վարքս անջինջ յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողացն, հօրն՝ Սիմէոնին և մօրն՝ Ջանաղին, և մեծ պապուն՝ Աւագին, և Միքայէլ եպիսկոպոսին[98] և այլ ամենայն արեանաւրու մերձաւորացն՝ արանց և կանանց, մեծի և փոքու, կենդանեաց և հանգուցելոց։ Վասն որոյ աղաչեմ զդասս և զկաճառս այսմ գրոցն տեսողացդ, ընթերցողացդ և գաղափարողացդ, ուղիղ սրտիւ և լի բերանով Աստուած ողորմի ասացէք վերոյ յիշեցելոցդ և ձեզ յիշողացդ լիցի ողորմութիւն ի յԱրարչէն արարածոցս, ևս առաւել աշխատաւորացն. ամէն եղիցի և եղիցի։ Եւ ըստացեալ է Զ (6) գիրք՝ զայս սբ. Հարանց վարքս, և մագաղաթ ոսկով զարդարած ներգո և արտաքոյ, Բ (2) Աւետարան և Բ (2) փոքր Սաղմոսարան, ոսկով, և Սաղմոսարան մի այլ Ատենի, մագաղաթ ոսկով զարդարած, և Աղօթմատոց, և Տօնացոյց, և Պարզատոմար ի հետ ամենեքեան ի մի տուփ։ Եւ է սոքա յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ։ Յիշեցէք... մահդասի Ամիրխանին, և Աստուած ձեզ ողորմեսցի։

Ստացող՝ մահտեսի Ամիրազիզ
Վայր՝ Երուսաղէմ

Բ

Ի թվին Հայոց ՌԶ (1631), ի յառաջնորդութեան սբ. Երուսաղէմայ տէր Գրիգոր հայրապետին, ես՝ նուաստ մահտեսի Ամիրազիզ, որ այժմ

[96] Եթե խոսքը վերաբերում է Արաս I-ին, ապա նա վախճանվել է 1629 թ., սույն ձեռագիրն ընդօրինակելուց երկու տարի առաջ։

[97] Եսայ., Ե, 20։

[98] Մի երկու բառի տեղ բաց է թողնված։

ասի Ամիրխան, *որդի* Սիմէոնի, *եղբայր* Միքայէլ *եպիսկոպոսի, յաշխարհէն* Աղձնեաց, *որ* Խողձ *կոչի, որոյ մայրաքաղաքն այժմ* Բաղէշ *անուանի, ի նորին արևելից կուսէ, ի գաւառէն* Կօզալղաւրայ *առասեն, բազում տառապանօք շրջեցայ ի բազում յաշխարհի և Լ (30)ամ կամ ի սպասաւորութիւն սբ.* Երուսաղէմայ, *և զոր ինչ Աստուած պատրաստեաց մեզ ի հալալ վաստակոց, զամենայն յօժար սիրով կամաւ իմով տուի գիրք դրել և դնել ի դուռն սբ.* Երուսաղէմայ, *ինձ և իմոցն յիշատակ, խրթեալ ի յԵսայեայ բանէն, թէ՝ «Երանի...»*[99]*։ Նախ Բ (2) մագաղաթ Աւետարան ոսկով զարդարեալ ներքոյ և արտաքոյ, և պատուական Հարանց վարք մի մագաղաթ բոլորգիր, ոսկով բովանդակ ծաղիկքն, և պատկերքն և երկաթագիրս, և մագաղաթ բոլորգիր և ոսկով, ի մի տուի Սաղմոսարան և Աղաւթամատոյց և Տօնացոյց և Պարզատումար, և այլ ուրիշ մագաղաթ առանձին, ոսկով, բոլորգիր պատուական Սաղմոսարան։ Զայսքան գրքերս Աստուծոյ ողորմութեամբն, կամօքն և օգնականութեամբ և օժանդակութեամբ աղօթից ձերոց արարաք յիշատակ ի դուռն Ս. Յակոբայ։ Եւ պասմայ վարագուր մի մեշինի Ս. Յակոբայ խորանին ՃԻԴ (124) մորթի։ Եւ թէ ոք այսուհետև հակառակի այսմ բանիս և զայս գրեանքս չտայ սբ.* Երուսաղէմայ, *թէ՛ յիմոցս և եթէ՛ յաւտարացն, և կամ գողանայ՝ նա զպատիժն գողոյն Աքարայ կրէ, որ զԱստուծոյ բաժինն գողացաւ։ Եւ կամ թէ ոք վասն ագահութեան ծախէ առանց* Երուսաղէմայ *առաջնորդի կամացն, և կամ հեռացուցանէ անդառնալի, նա մասնակից լինի Յուդայի, որ զՈրդին Աստուծոյ վաճառեաց վասն ագահութեան...։*

Գ

Բարեխօսութեամբ սբ. Ճգնաւորաց ողորմեա՛յ զստացողի գրոց մահդասի Ամիրխանին, *և իւր ծնօղացն, հօրն՝* Սիմէոնին *և մօրն՝* Ջանաղին։
351 *Քրիստոս Աստուած ողորմեա՛ ստացողի գրոցս մահդասի* Ամիրխանին, *և իւր ծնօղացն՝* Սիմէոնին *և* Ջանաղին, *և եղբաւրն՝* Միքայէլ *եպիսկոպոսին, և մեծ պապուն՝* Աւագին, *և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց. ամէն։*

Դ

Այլ գրով

Բարեխաւսութեամբ և աղօթիւք սբ. Ճգնաւորացս ողորմեա՛ ստացողի գրոցս մահդասի Ամիրխանին, *հաւրն՝* Սիմէոնին, *մաւրն՝* Ջանաղին, *և իւր եղբարց* Միքայէլ *եպիսկոպոսին և* Սիմէոնին, *փոխեցելոյն առ Քրիստոս և մեծ պապուս* Աւագին, *և մեծ մամուս, և ամենայն արեան մերձաւորացս Աստուած ողորմի ասացէք, և Աստուաց ձեզ ողորմեսցի։ ամէն։*

---

[99] *Եսայ., ԼԱ, 9։*

659
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մեզեվ, V, № 1652

Գրիչ՝ տէր Մովսէս
Վայր՝ Վարագ, Լիմ

ա

482 *Փառք..., որ եւ կարողութիւն տկար և անարհեստ գրչի տէր* Մովսէս *մեղապարտի, որ զանուն ունիմ և զգործս ոչ։ Ի կարօտութենէ բանից ես տառապեալս յօժարեցայ գրել զսբ. պատարագի Մեկնիչս և զայլ կանոնականք ի թուականութեանս հայկազեան տումարի ՌԶ (1631), ի գառ[ն] ժամանակիս, որ* Վանայ *ղուվ ու փաշէն գնացին ի* Ղափանստուն, *գերի բերին բազում կին և տղայ, բերին ի* Վան, *զամենայն* Վանա[յ] *մարդն գնեաց և յետս գառնուց. Աստուած իւրեանց վարձահատոյց լինի. ամէն։*

*Զ*Մեկնիչն *ի* Վարագ *գրեցի և զայլ կանոնականքն ի* Լիմ *անապատ։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Սանակ *աբեղայն կազմող սորին և Աստուած ողորմի ասացէք նմա. ամէն։*

բ

481 *Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր* Մովսէս, *և զիւր կողակիցն՝* Ցամասիէն, *և զծնողս իւր՝ տէր* Ցովսէփ *և զկողակիցն իւր՝* Զնարգիզ, *և զամենայն արեան մերձաւորս նորա՝ զտէր* Ցովանէս, *զտէր* Ցովասափ, *և լի բերանով Աստուած ողորմի ասացէք, որ եւ զսբ. գիրքս*
482 *ընծայ ի դուռն Ս. Սարգսին, // և Ս. Թէոդորոսին, յիշեցէք...։*

660
ԱՒԵՏԱՐԱՆ
Մեզեվ, VI, № 1790

Գրիչ՝ Հայրապետ երէց

ա

152 *Զմեղապարտ գծող* Հայրապետ *երէցս յիշեցէք ի Քրիստոս և մեղաց թողութիւն հայցեցէք...։*

Գրեցաւ թվին ՌԶ (1631)։

բ

153 *Աւրինութիւն որ կարդայ, գովութիւն որ լսէ, փառք տուողին և յիշատակ* Հայրապետ *գրչիս. ամէն։ Հայրն իմ՝* Երվալի *և մայրն իմ՝* Խասխաթունն։

գ

[Փ]առք..., որ յանգ հանել հիւծելոյս յանցանօք անպիտանի մեղաւոր գրչիս Հայրապետ *երեցիս*[100].

---

[100] *Հիշատակարանն ընդհատվում է։*

661

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՅԶԵԹ, VI, № 1945

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

495 *Փառք...։ Որոյ ցանկացող եղեալ աստուածախաւս և աւետարեր սր. Աւետարանիս, ոմն ի ճշմարիտ ծառայիցն Աստուծոյ... մահտասի Տօնապետ կոչեցեալ, զատեալ և մեկնեալ ի մանկութենէ իւրմէ յամենայն կրից ե ի հոգոց աշխարհիս, եկեալ յաստուածակոխ սբ. քաղաքս Երուսաղէմ, վասն ուխտի սբ. և աստուածահոտ տնաւրինականացն Քրիստոսի, զորոյ տեսեալ զնա առաջնորդ սր. քաղաքիս առ ինքն կալեալ ոչ թոյլ տալով հեռանալ բնաւ յինքենէ, զոր սա յօժարութեամբ կատարէր զամենայն հրամայեալսն առ ի նմանէ, որ և աւժանդակութիւն ոչ սակաւ առնէր ի շինումն տնօրինականացն Քրիստոսի՝ Մնդեանն և Ս. Փրկչին, և Ս. Հրեշտակապետաց, և Ս. Յակոբա[յ] տաճարացն, երբեմն անձամբն աշխատելով և երբեմն հրամանաւ Գրիգոր հայրապետին, ի հեռաւոր և ի մերձաւոր տեղիս գնալով, և զկամաւոր տուրս և զբաժինս հոգւոցն տային ի ձեռս նորա. և նա անսխալ զամենայն հասուցանէր ի սբ. քաղաքն Երուսաղէմ, առ ի լնուլ զպակասութիւն եկեղեցեացն Երուսաղէմայ։ Եւ է ամս քսան և այլ աւելի, որ զգործս զայս կատարէ։ Եւ ստացաւ զսբ. Աւետարանս անչինչ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Մալուն և մօրն՝ Մարիամին, և եղբաւրն՝ Սարուիանին, և այլ ամենայն արեանառու մերձաւորաց...։*

Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց և յանցողս ամենայն պատուիրանացն Աստուծոյ Յոհան եղկելի Հիզանցիս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբա[յ] Տեառնեղբաւր աթոռոյս և Ս. Յակոբա[յ] գլխատանս, որդոյն Զեբեդեա, ի հայրապետութեան Հայոց սբ. էջմիածնա[յ] տեառն տէր Մովսէսին, և ի յաթոռակալութեան սբ. քաղաքիս Երուսաղէմայ տէր Գրիգոր հայրապետին, զոր տէր Աստուած պահեսցէ խաղաղութեամբ ընդ երկայն աւուրս...։

Զի ի վերա բազում երախտեացն և աշխատանացն, զոր ունէր ի սբ. տնօրինականքն Քրիստոսի վասն նորոգութեան և պայծառութեան Ս. Մնընդեանն և Ս. Փրկչին, Ս. Հրեշտակապետին և Ս. Յակոբա[յ] տաճարացն, յաւել և յայսմ ամի կրկին նորոգեաց զՍ. Յոհաննէս Աւետարանչի եկեղեցին, ի գուռն Ս. Յարութեան. տէր Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։

Արդ՝ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌԶ (1631). անմեղադիր լերուք խոշորութեան գրիս և ծաղկիս, զի կար մեր այս էր։ Եւ որք հանդիպիք սմա...

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Տէր զմահտասի Տօնապետն և զծնաւղսն իւր, և զմեղաւոր գծողս զՅոհան եղկելի, սուտանուն խաբեբաս և ոչ քահանայս, և զծնօղսն իմ՝ զտէր Յովանէսն և զԱնլին, և զպապն իմ՝ զՄիքայէլ քահանայն, և զեղբարքն իմ՝ զտէր Միքայէլն և

496 զԱմիրսէք սարկաւագն. և զքոյրն իմ՝ զՀուիփսիմէն և //զայլ երախտաւորսն մեր...։

Կրկին անգամ յիշեցէք զմահտասի Տօնապետն, որ զսր. Աւետարանս ստացաւ և եդ ի դուռն Ս. Ծնունդեան, անչինչ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Մալուն և մօրն՝ Մարիամին, և եղբօրն՝ Սարուխանին, յիշեցէք...։

662

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԵՐԱՎՋ, № 392

Գրիչ՝ Ղազար դպիր

ա

593 Ո՛վ հանդիպողք, որք օգտիք յայսմ սբ. գրքիս, կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք զտառապեալ անձնս սուտանուն դպիրս՝ Ղազարս, որ սակաւ ինչ գծագրեցի զսա և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

բ

Կատարեցաւ Քաղուածս Սահմանաց ի թվիս ՌԶ (1631), որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

663

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ

KarHB. № 35

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Երևան

28 Փառք...։ Ի թվականութեան Հայոց տումարի ՌԶ (1631) ամի գրեցաւ աստուածախօս մատեանս աստուածահօրն Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, ձեռամբ... Մկրտիչ գրչի, ի թագաւորութեան Պարսից շահ Ասֆուն[101], ի յերկրիս Արարատեան, ի քաղաքս Երևան, ի տեղապահութեան Թահմազղուլի խանին, ընդ հովանեաւ Ս. Կաթուղիկէիս և Ս. Աստուածածնիս և Ս. Երկու երեսու, ի կաթուղիկոսութեան Մովսէսի, որ նորոգեաց զսբ. Էջմիածին...

664

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Մուրմար, I, № 71

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

66 Փառք..., որ ետ կարողութիւն տկարիս և անարժանիս, բազմավերիս և ուխտազանցիս...[102] հասանել ի վերջք գծիս յայսմ աստուածաշունչ, և

[101] Գուցէ «Ասֆուն», ինչպես 1635 թ. մի այլ հիշատակարանում է, որ է Սեֆի։
[102] Այսպես շարունակում է մի քանի տող։

պայծառափայլ, և հոգէնորոգ տառիս՝ Հարցից։ Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց, հողս և մոխիրս, Յոհան հեղկելի Հիզանցիս, որ անուամբս եմ և գործովս ոչ։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Փրկչի կափարիչ վիմին, ի հայրապետութեան Ս. Յակոբա[յ] Տեառնեղբաւր աթոռոյս և Ս. Յակոբա[յ] գլխատանս որդոցն Զեբեդեա՝ տէր Գրիգորին[103]. զոր տէր Աստուած պահեսցէ զինքն խաղաղութեամբ ընդ երկայն աւուրս, և յետ աստեացս ընդ սբ. հայրապետացն դասակից և պսակակից արասցէ ծնողքն իւրովք և ամենայն ազգականաւք. ամէն։ Որ բազում աշխատանաւք եկաց ի սբ. յաթոռս, և զիւր ամենայն ժամանակն որքան եկաց հետ շինութեան և նորոգութեան և պայծառութեան էր միշտ և հանապազ, որ նորոգեաց սայ զՍ. Յակոբ զաթոռս մեր ազգիս Հայոց, որ
67 խիստ հնացեալ էր եկեղեցին աւտաներով։ Սայ ողոր//մութեամբն Աստուծոյ և աւգնականութեամբ սբ. Լուսաւորչի հաւտին կրկին նորոգեաց զհնացեալ տեղիսն, մարմարթելով զՍ. Ծնունդն, զՍ. Փրկիչն, զՍ. Հրեշտակապետն, զՋառներ, զՍ. Յովհաննէս աւետարանիչն, որ յայսմ ամի փլաւ։ Որ զամենայն պատրաստութիւն ի վաղուց հետէ արարեալ էր ե կամէր նորոգել. և յայսմ ամի նորոգի շնորհօքն Քրիստոսի, ձեռամբ տէր Գրիգոր հայրապետին։ Եւ արդ՝ աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, մի բերան Աստուած ողորմի ասացէք տէր Գրիգոր հայրապետին, որ բազում աշխատանք ունի ի վերայ մեզ և Հայոց ազգիս, որ թէպետ յստակքն էր ի յայլոց, ջանքն էր յիւրմէն, և խնամքն Աստուծոյ առաջնորդէր սմա՝ զինչ և ձեռնարկէր, տացէ տէրն Քրիստոս վարձս ըստ վաստակոց իւրոց. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌԶ (1631) ամին։ Անմեղադիր լերուք այլ ու այլ, զի կար մեր այս էր գրիս, վասն զի խիստ փափաք ունէի այսմ տառի։ Երբ որ աւրինակն անցաւ ի ձեռս, փութայի ի գրելն. վասն զի ծածուկ գրեցի, և գիշերով և ցորեկն ահով գրէի, վասն զի նման կատաղեալ շան զով ոք տեսանէի առասպելաւ ի նոսա խօսէի, և զցնորեալ և զարբեալ միտս իմ ի խաղաղ դառնէի, զուարթ պահէի, և զբելիար դասուքն իւրով ուրախացուցանէի։ Եւ զհոգիս իմ չարաչար վիրօք խոցէի, և զստեղծօղն իմ հանապազ դառնացուցանէի, և բընաւ ոչինչ առ իս գտանէի, որ լինէր հաճոյ կամացն Աստուծոյ։

Արդ՝ յայսմ ամի պարոն քաղաքիս ի Բաղդատ սաֆար էր և սպանաւ ի սաֆարն։ Եւ յոգիրէն մարդ եկաւ զփաշի մուսէլիմ ըմբռնեց և զինչս փաշին խնդրէր։ Եւ կար ի մէջ աղմուկի քաղաքն, զի դրունքն փակէին, և ոչ ոք կարէր ոչ ի դրուցն ի ներս գնալ, և ոչ ի ներսէն ի դուրս գալ. մի անգամ բանային, և մարդն որ ի դրունսն կուտեալ լինէր ի ներս առնէին, և փութով փակէին։ Եւ մեզ ողբելի գրչիս և Ս. Փրկչի սպասաւորի մղդէսոցն ի պարսպէն ի վայր իջուցանէին զկերակուր. այս ամէն վասն մեղաց իմոց։ Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան սրտառուչ մաղթանօք զհանդիպողդ այսմ աստուածային և հոգեկեցոյց գանձիս կարդալով կամ օրինակելով կամ տեսութեամբ, յիշեսջիք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր ջերմեռանդ սիրով, զիս անպիտան զփծցուն

[103] Գրիգոր Գանձակեցի, կոչված Պարոնտեր, Երուսաղեմի պատրիարք։

գծողս, և զծնօղսն իմ, զհայրն իմ՝ զՅուվհաննէս քահանայն, և զմայրն իմ՝ զԱնլիմաման, և զպապն իմ՝ զՄիքայէլ քահանան, և զեղբարքն՝ իմ՝ զտէր Միքայէլ և զԱմերսէք սարկաւագն, և քոյրն իմ՝ զՀոռիփսիմէն, նայ զՍ. Փրկչի զափուշի մահտեսի Մակարն, որ կու բերէ եղկելուս հանապազ ճաշ, և Գրիգոր ընկերակիցն իմ, որ է Թուքատոյ, և զայլ ամենայն աշխատաւք և զազգայինքն իմ, նաև տէր Վարդան աբեղայն, զհոգևոր եղբայրն իմ, որ զգրոց աւրինակն նայ ծածուկ շնորհեաց ինձ յիւր մեծաւորէն. և զամենայն ոք, որ ի վերայ մեզ հոգևոր և մարմնաւոր աշխատանք և երախտիքն ունին, միով Տէր ողորմայիւք ի քաղցր սէր Յիսուսի Քրիստոսի յուսոյն մերոյ։ Եւ ինքն որ առատն է ի տուրք պարգևացն առ հասարակ, ողորմեսցի գրողաց և ստացողաց, յիշողացդ և յիշելոցս այժմ և յիւրում գալստեանն. ամէն[104]։

665

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մուրմար, II; № 86

Վայր՝ Առընդաց

158 Եւ արդ՝ ես ունայնս ի բարեաց գործոց մեղապարտ գծող, որ ձայնիւ բարձրացեալ և հոգւոյ կորացեալ, ըստ իմ տկարութեանս գրեցի զսր. գիրքս ի յընտիր և ի ստոյգ օրինակէ, կենօք տառապանաւք և դառնութեամբ լի, յամենայն կողմանց ցնորիւք պաշարեալ։ Ի թվականիս Հայոց ՌՁ (1631) ամին. ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւն լնուք, և խոշորութեան, և սղալանացս անմեղադիր լի-
159 նել, զի կար մեր այս էր։ //Վասն որոյ... աղաչեմ... բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք անարժան գծողիս, և ծնողաց իմոց Կիրակոս վարպետին և Մուաթին, որ բազում աշխատութեամբ արարին զիս գրագիր. և եղբօրն իմոյ՝ դեռաբոյս Մուսէսին, և քեռն իմոյ՝ Գօզալին և Մրջանին, և ամենայն ազգականաց իմոց...։ Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զսր. Կանոնգիրքս, ի յերկիրս Մարեկա, ի գեօղս որ կոչի Առընդաց, ընդ հովանեաւ Ս. Երեք Խորանացս, Սրբոյն Պետրոսի և Պօղոսի և Սրբոյն Գէորգեա[յ] զօրավարին, որ է արեւելեան կուսէ հանդեպ Ապարանից Ս. Նշանին։ Վասն որոյ կրկին անգամ աղաչեմ զձեզ լալով և կողկողագին պաղատանօք, յիշեսջիք զիս զանարժան գծողս... ևս առաւել զտէր Սարգիս Հիզանցին, զվարպետաց վարպետն, որ շատ աշխատանք քարշեր է հետ իմ հօրն ի կարդացնելն, ի գիր և ի ծաղիկ ուսուցանելն, զոր ինքն Աստուած վարձահատոյց լիցի նմա յիւր միւսանգամ գալստեան...։

[104] Քանի որ ստացողի հիշատակարանը 1634 թվականի է, ուստի այն տե՛ս այդ թվականի շարքում։

666

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՔԷՂ, «էջմիածին», 1950 թ., Թ—Ժ, № 23

Գրիչ՝ Հայրապետ քահանայ

Վայր՝ Ասպահան

85 *Եւ արդ՝ ես յետինս ի բանականաց և առաջինս ի չարասիրաց, և անիմաստս ի գրչաց Հայրապետ սուտանուն քահանայ, քանզի իմ հրաման առեալ ի պատուիրանայդիր առաքելոցն բանէ, որ ասէ. «Ցոր կոչումն կոչեցար, ի նմին կացջիր»*[105]*։ Եւ արդ՝ իմ ոչ բերելով յանձին, այլ ունայնացեալ յամենայն բարեաց գործոց և թափուր մնացեալ, այլ յուսամ ի մարդասիրութիւն Աստուծոյ, զի առատ է և սպասեմ վարձու յետին մշակին։*

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուականիս Հայոց ՌԶ (1631), ձեռամբ Հայրապետի սուտանուն քահանայի, անիմաստ և ախմար գրչի։ Զի իմ անընդունակ զոլով յարուեստս գրչութեանն, այլ և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ և շրջապատեալ, այլ. ըստ կարի մերում, զոր
86 *պարգևեաց մեզ շնորհաբաշխ Հոգին, բազում աշխատու//թեամբ գրեցաք, անարժան յամենայնի և ամենայն չարեօք շաղախեալ ձեռաւք ի քաղաքս Շուշ, որ կոչի* Ասպահան, *առ ոտն Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, ի հայրապետութեան Հայոց տեառն* Մովսէսի, *ի յառաջնորդութեան մերոյ ազգիս քաջ բարձունապետ* Խաչատուր *եպիսկոպոսին, տէր Աստուած հաստատուն պահէ. ամէն։*

Եւ արդ՝ ես Հայրապետ զանարժան[106] *քահանայս, որ անուամբ միայն եմ և ոչ գործով, ցանկացաւ եղէ սբ. Աւետարանիս, և մեծ ջանիւ և սիրով գրեցի, յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց՝* Նուրիջանին, Եղիսաբէթին, *և ամենայն արեան մեռաւորսն իմ. ամէն։ Այլ ու աղաչեմ յիշել ի Քրիստոս զջոզ մամն իւ՝* զՍլիմն, *և զորդին իւր հանգուցեալ ի Քրիստոս* Հայրապետն: *Ընդ նոսին յիշել ի Քրիստոս աղաչեմ զընտանեղբայրն իմ՝* Գուլվալի, *և կողակիցն իւր՝* Գաւզիկն, *և որդիքն իւրեանց. ամէն։ Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, և որք պատահիք սմա տեսութեամբ և կամ ընթերցմամբ, յիշեցէք յաղօթս ձեր զանպիտան գրծողս Հայրապետ քահանայս, և զամուսինն իմ՝* Մարիամն, *և նորաբողբոջ որդին իմ՝* Բաղդասարն: *Եւ որ յիշէ, ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։ Դարձեալ աղաչեմ յիշել ի Քրիստոս զպապն իմ՝* Հայրապետն, *և կողակիցն իւր՝* Միհնաիւասն, *և զորդիքն, և ամենայն արեան մերձաւորքն իւրեանց. ամէն։ Ընդ նոսին յիշել ի Քրիստոս* Սաթփանոս *քահանայն, որ երկին երկին և երանգ երանգ գունով զարդարեաց զԱւետարանս, զոր տէր Աստուած զարդարեսցէ զհոգի նորա, և ծնողացն իւրոց, մանաւանդ, որ երախտիք ունի ի վերայ սբ. Աւետարանիս, զոր տէր Աստուած զվարձս բարին հատուցանէ ի միւսանգամ գալստեանն.*

---

[105] *Ա Կոր., է, 20, 24։*

[106] *Յուցակում տպված է «չանարժանն»։*

ամէն։ Եւ արդ՝ ես յոյլ և ծոյլ, պղերգ և թափուրս ամենայն առաքինութենէ Հայրապետ և սեւերես քահանայն այս ետու ընծայ՝ սբ. Աւետարանըս ի դուռն Ս. Յակոբին անչինչ յիշատակ ինձ և ծնողաց իմոց...։

667

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ

ՅՁՎՍ, I, № 59

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Թաւուղ

ա

288 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանս և գիրքս ժամատեղաց ձեռամբ* Եսայի *գրչի, ի յերկիրս* Տայուշ, *ի գիւղս որ կոչի* Թաւուղ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի կաթողիկոսութիւն տեառն տէր* Յոհաննիսի, *ի յաթոռս* Խորանաշատի *և* Վանական *վարդապետի, ի հայրապետութիւն տէր* Յոհան *արհի եպիսկոպոսի, ի թվականութիւն ՌՀԹ (1630)*[107]։ *Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, լի բերան ողորմի ասացէք* Եսայի *գրչի և իմ ծնողացն և իմ արեան մերձաւորացն. ամէն։*

բ

Ստացող՝ Խաչատուր Երէց

Ես՝ Խաչատուր *երէցս գիրիլ տուի զՍաղմոսարանս և ժամգիրքս [ի] հալալ վաստակոց իմոց փափաքանաւք, [ի] յիշատակ հոգւոյ իմոյ, ինձ և իմ ծնողացն՝* Յոհաննէս *քահանային և* Խաթունին, *և կողակիցն իմ՝* Սալաւին, *և որդիքն իմ՝ հողագործ* Մաւուրին *և* Աղա *սարկաւագին, և [հ]ամարեան մերձաւորեացս։ Աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. մանկունք եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, լի բերան*
289 *ողորմի ասացէք ինձ և իմ ծնո//ղացն, Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեան. ամէն։ Գրեցաւ ի թվին ՌԶ (1631)-ին։*

գ

Հետ. ստացող՝ Պողոս Երէց

Ես՝ Պողոս *Էրեցս ըստացայ զժամայգիրքս ի հալալ վաստակոց իմոց և յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորացս. ամէն։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ընթերցողք, ողորմի ասացէք ինձ, և ծնողաց*
290 *իմոց// Մովսէսին և/// Բելիսէին, և/// կողակցին՝* Նոբ[ա]ռին, *և իմ զաւակացս* Գիրգորին *և դստերաց* Եղիսին, *որ փոխե[ց]ան առ Աստուած։ Ես՝ անարժան* Պողոս *Էրէցս, որ մնացի մէնակ՝ էրէրելով զկեանս ձանձրալի/// ծուլացել եմ ի յաղաւթս և յաստուածպաշտութիւնն, ա՜հ, վա՜յ/// կու անձն իմ թէ/// որպէս լինի անո///աշխիս վեր[այ]։ [Լի] բերանով ողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմի ասողաց/// ամէն։ Ի թվին [Ռ]Զ/// որ առ զժամ[ագիրքս] ՉՌ (6000)///։*

---

107 Տպված է «Ռ. Հ. Ի.»։ Բացահայտ սխալ։ Նկատի ունենալով ը հիշատակարանում նշված «ՌՁ» թվականը, ուղղեցինք «ՌՀԹ»։

668
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վատիկանի գրադարան, № 31

Գրիչ՝ Յովանէս վարդապետ
Վայր՝ Եազլովցա

ա

68 ...Բոլոր հաւատով թողութիւն մեղաց հայցեցէք, մեղաւք շարաւացեալ և աղտեղեալ գծողիս՝ Յովանէս նուաստ վարդապետիս Կոստանդինուպոլսոյ, և ինքն որ առատն է ի տուր բարեաց, թողուլ զյանցանս ձեր. ամէն։ Բայց գրեցաւ սայ ի քաղաքս Եազլովցայ, ի դուռն Նորաշէն սբ. տաճարիս, որ Հաճատկատար ասի. այս Յովակիմայ և Յաննայի ծնօղաց սբ. Աստուածամաւրն և այլ սրբոց, որք աստ կան հաւաքեալ բարէխօսեն առ հաւատացեալսն. ևս առաւել ինձ մեղաւք մեռեալ գերիս, որ Թ (9)-ն ամսաւ ղարիպ էի, ևս առաւել ըղտէր Յակոբ քահանայն, որ զօրինակն շնորհեաց. ամէն[108]։

բ

Զայս գիրքս որ դրեցաք մինչ ի աստ, կարի ծեր էր օրինակն և եղծաց, հազիւ կարացի գրել զօրինակն... թողի։

669
ՇԱՐԱԿՆՈՑ

ՅՁՍԳ, № 124, տե՛ս նաև «ՀԱ», 1927 թ., էջ 42—43

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Ամասիայ

77 ...Որ ինքն տէր մեր Յիսուս Քրիստոս ետ ուժ և կարողութիւն տկար անձին իմոյ Միքայէլ մեղսամած գրչիս գրել և կատարել զշարակներս զՇնդեան և զԱպաշխարութեանն, զխաչելութեան և զյարութեանն, զՍուրբ Հոգւոյն գալուստն և գխաչվերացն, զՀանգստեանն, զՀանգըստեանն և զԱւագ աւրհնութիւններս, այլ և զառաքելոցն և զմարգարէից, զհայրապետացն և զմարտիրոսացն, զճգնաւորացն և զկուսանացն, շարադրել և աւարտել աւգնականութեամբն Քրիստոսի ի լաւ և [յ]ընտիր աւրինակէ, ի քաղաքն Ամասիայ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի և Ս. Յակոբայ/// զսա ի հալալ վաստակաւն իւր, ի միտ ածեալ զբանն մարգարէին «Երանի...»[109]։ Արդ՝ աւարտումն եղև շարակնիս թվին ՌԶ (1631), ի դառն և ի դաժան և ի վերշացեալ ժամանակիս, զոր վասն մեղաց մերոց բազմացեալ են ի վերայ մեր այլազգիքն մահմետական, և բազում նեղութիւնս և վիշտս և հարկապահանջութիւնս և այլ բազում և ազգի ազգի նեղութիւնս կու հասուցանեն ի վերայ ազգիս քրիստոնէից. զոր ինքն տէր մեր Յիսուս Քրիստոս զբարին առաջնորդէ...։

---

108 Հիշատակարանում թեև տարեթիվը չի նշված, բայց նկատի ունենալով նույն Ցուցակի № 30 ձեռ-ի հիշատակարանի տարեթիվը՝ 1630 թ. վերջը, այս հիշատակարանը պայմանականորեն դրեցինք 1631 թ. շարքում։

109 Նույն., ԼԱ, 9։

670

ԺԱՄԱԳԻՐՔ

Կամենից, էջ 184

Վայր՝ Կամենից

Ո՛վ աստուածապահ քաղաքդ մեծ Կամենից,
Ի քառից կողմանց պատեալ յորդահոս վըտակից,
Անառիկ ամրոց շինեալ ի վերայ վիմի,
Օրհնութիւն աստուածային ի քեզ ծաւալի։
Ազգ հայկազեան զարմի՝ որ ի ձեզ բնակի,
Հաստատեալ յուսով սիրով սուրբ Լուսաւորչի,
Պահեսցէ Տէր հաստատուն և անշարժելի,
Պայծառ լուսաւոր դիմօք և անդրդուելի,
Արդոյապատիւ պերճմամբ բարգաւաճելի,
Շքեղազարդութեամբ փայլեալ որ կան ի մարմնի։
Տիրամայր ամենասուրբ Աստուածածին,
Բարեխօսեա Միածնի վասն այս քաղաքի,
Մանաւանդ փոքրիկ հօտի հայկական զարմի,
Որ կան հաստատեալ սիրով փրկչին Յիսուսի[110]։

671

?

Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք..., էջ 64

...Բագրատունիք, այն է Բոգնիք, ի սմանէ ասի յոմանց թէ էին ի ցեղէն Բագրատունեաց, և եկեալ աստ, արարին հիմնարկութիւն, և էին տունք իբր հօթն, և յետոյ ի գռեհկաց դարձուցեալ զԲագրատունիքն Բոգնիք, և է իբր ժամաւ և կիսով հեռի ի քաղաքէ Սեբաստիոյ, և այժմ են ի սմա տունք իբրև հնգետասան, ի թուին Հայոց ՌՁ (1631)։

110 Թեև տարեթիվը չի նշված, բայց Ղ. Ալիշանը հիշատակարանը դրել է 1631 թ. ներքո։

673
ՃԱՇՈՑ
Երևան, № 7430 (1363 թ.)

Նորոգող, կազմող՝ Գալուստ սարկաւագ

466ա Փառք...։ Արդ՝ ցանկացօղ եղեալ յայսմ հոգևոր՝ բուրաստանիս խոճայ Մրսրբն, և ետ զսա նորոգել վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն։ Որ էր յիշատակ առ դուռն Ս. Յովհաննէս Մկրտչին ի նախնեաց բարեպաշտիցն եղեալ։ Եւ էր հնացեալ և քակտեալ կազմ սորա, զոր ետ վերստին նորոգել զսբ. գիրքս, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ խոճայ տէր Պապային և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և ննջեցելոց. որոց թողցէ Քրիստոս զյանցանս նոցա և լըսել տացէ զերանաւետ բարբառն երանական ձայնին. ամէն։

Այլ և յիշեսչիք զփակակալ և զսպասաւոր սբ. եկեղեցւոյ զԳրիգոր քահանայն, որ յորդորիչ եղև սբ. գրոցս նորոգման, զոր և ամենակարողն Աստուած կարողացուցանէ և զօրացուցանէ զինքն անդրդուելի կեալ մնալ ի սպասաւորութիւն սբ. եկեղեցւոյս մինչև ի խորին ծերութիւնն. ամէն։

Գրեցաւ յիշատակարանս և կազմեցաւ գիրքս ձեռամբ նուաստ Գալուստ սարկաւագի, ի թվականիս Հայոց ՌՁԱ (1632) ամի, յունվարի Ի երեքն (23), օրն երեքշաբթի։

674
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 7995

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Ստամպոլ

ա

184բ Արդ՝ գրեցաւ Բառգիրքս և բուն քերականի Մեկնիչս ի թվին ՌՁԱ (1632) փետրվարի ԻԸ (28)։

Գրեցաւ ձեռամբ Արիստագէս իրիցին,
ՅԸստամբոլ թագաւորական մայրաքաղաքին,
Ի մահալայ Պալաթին,
Ի դուռն Հրեշտակապետին։
Ի թագաւորութիւնն սուլթան Մուրատին,
Ի հայրապետութեան տեառն տէր

Մօսէս խստակրօն ճգնաւորին,
ի յառաջնորդութեանն Կոստանդնուպօլսոյ
Տէր Զաքարիայ վարդապետի պատրիարգ անուանին։

Բ

47բ Զմեղապարտ գրիչս զեղկելի զտէր Արիստակէսն և զծնօղսն[1] իմ ազաչեմ յիշել ի Տէր։

Գ

137ա Ո՛վ եղբայր, ի Գէորգայ վարդապետին խրատուցն վասն արուեստի գրագրութեան յայսմ տեղւոջ եդեալ էր յօրինակս, ես աւելորդ համարեցայ գրել, զի յառաջդ դրած է, այլ հարուստ քան զնոյնս, զոր գտցես//
137բ զկնի վճարման Առիստակէսին։ Եւ զգրողս զտէր Արիստակէս յիշեա՛ի Տէր։

Դ

168բ Ընդ նմին և զմեղս զհողացեալ և զտառապեալ զգրողս սորին զԱրիստակէս երէցն, և զծնօղն իմ, և զամենայն զարեան մերձաւորսն իմ, յիշատակ ի ձեռն քաշ բարունապետին՝ Գրիգոր վարդապետին, յիշատակ նընջեցելոց մերոց։

Ե

Վարդապե՛տ զպակասն գիտ, որ թափեր էր՝ չկա, և գրեայ, որ լմանայ[2]։

Զ

Ստացող՝ Գրիգոր Կամախեցի

184բ Եւ գրեցաւ զսայ Արիստագէս երէցն, որ մեր աշակերտ է և ի մէնջէ ձեռնադրեալ։ Վասն որոյ մեր բազում երախտեացն հատուցման, զայս գիրս գրեաց և ետուր մեզ Գրիգորի Կամախեցոյս, յիշատակ իւրն, և ծնողացն, և ամենայն զարմից իւրոց.- և ի վայելումն մեզ որքան կենդանի ենք. և յետ մեր, որք ժառանգելուց էք և որք ընդհեռնուք կամ օրինակէք և կամ հարևանցի տեսանիցէք, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զաշխատող սորին զԱրիստագէս քահանայն, այլ և զտէր Ստեփանոս քահանայն զաշակերտն մեր, որ զՔերականիս յետին Բ (2) տետր նայ գրեաց ի Յովհաննէս Ծործորեցի օրինակէն։ Եւ զիս զընտացող սորին յիշեսջիք ի Քրիստոս, և որք յիշէք՝ յիշեալ լիջիք...։

675

ՆԱՐԵԿ

Մուրմար, I, № 72 (ժամանակ ?)

Նորոգող, կազմող՝ Կարապետ
Վայր՝ Մշոյ Առաքելոց վանք

68 Արդ՝ և ես անկեալ առ ոտս ձեր, հարք և եղբարք, յորժամ ընթեռնոյք զսբ. գիրս քաղցրաբարբառս արտասուաթոր աչօք, յիշեսջիք ի մաք-

[1] Ձեռ-ում «զծնօղնս» ձևով։

[2] Ձեռ-ի 156ա էջի ներքևի լուսանցքում կա գրչի մի փոքր հիշատակութիւն ևս, որը թեև 1633 թվականի է, սակայն նախընտրեցինք դնել այստեղ։ Ահա այդ. «Զմեղապարտ գրիչս զտէր Արիստակէսն յիշեայ և զծնաւղն իմ։ Թվին ՌՁԲ (1633)։ Զպակասն գիտ և գրեայ»։

բափայլ յաղօթս ձեր՝ ղստացող և ղգրող սորա, զոր եղեալ են յիշատակ ի դուռն Ս. Առաքելոցն վանացն Եղիազարու, անջինչ յիշատակ իւրեանց, և իւրոց ծնօղացն։ Զի որք ընթեռնուն, թողութիւն հայցեն աշխատաւորացս ի սմա, յաւուրն ահեղ և սոսկալի արդար դատաստանին։ Զի նեռումն դտցեն նոքա, յայնմ ատենին, ուր բանքն սպառին և գործքն թագաւորեն։ Եւ ես թափուրս յամենայնի, նուաստ Կարապետ *տեսի զաստուածախօս գիրս՝ փտեալ և ապականեալ, զոր ոչ յիշատակ կայր և ոչ թուական, և ոչ գրողի կամ ստացողի անուն։ ՅԱստուած ապաւինեալ վերստին նորոգեցի, ղփտեալն ի բաց ձգելով և զեղծեալն գրելով և կապելով, ի թվականութեան Ռ և ՁԱ (1632) ամին, ի փետրվարի ամսոյ, ի դուռն Ս. Առաքելոցն. զի մնասցէ անջինչ յիշատակ գրողին և ստացողին։ Եւ մի՛ ոք իշխեսցէ ի մերոց կամ յօտարաց, հանել զսա ի դրանէ սբ. ուխտիս՝ ծախելով կամ գրաւ դնելով կամ վասն ագահութեան ընչից կամ մարմնաւոր պիտոյց, նա ինքն զիւր պատասխանին տացէ ի մեծ հրապարակին։ Արդ՝ որք ղստացող սորին յիշման արժան առնէք, սակաւ աշխատողացս ի սմա Տէր ողորմեա վեր առաքէք ինձ և իմոցս ամենայնի. ամէն։*

676
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3424

Գրիչ՝ Մարիամ
Վայր՝ Երևան

147բ *Գրեցաւ տաղս այս ի* Երևան, *ձեռամբ տրուպ* Մարիամին, *թվին ՌՁԱ (1632) ամի մարտի Գ (3), աւրն շաբաթի, որք եղանակէք յիշեցէք զմեզ, և դուք յիշեալ լիջիք ի նըմանէ. ամէն*[3]։

677
ԺԱՄԱԳԻՐՔ
Ջմմառ, № 578

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

ա

186 *Փառք..., որ ետ կարողութիւն մեղսամած... և անպիտան ձեռամբ սուտանուն* Աստուածատուր *դպրիս հասանել յաւարտ սբ. գիրքս, ի թվականիս Հայոց ՌՁԱ (1632)*[4] *մարտի ԺԴ (14), ի վայելումն մեր եղբաւր* Փանոսին *և իւր մօրն՝* Դիլիին, *և հօրն՝ մղտեսի* Տատին, *և իւր եղբօրն՝* Հանային, *և քրոջն՝* Ղուստսիին *և* Հռեպսիմին, *կարդացողաց և լսողաց. ամէն։*

բ

Ո՛վ ընթերցող, յորժամ եղանակես նա մեղապարտ դպիր սարկաւագ Աստուածատուր *յիշեա՛ և դուք յիշեալ լիջիք...։*

---

[3] *Սույն հիշատակարանը վերաբերում է ձեռ-ի մի մասին, մյուս մասը գրվել է ավելի վաղ, մեկ ուրիշի կողմից, այդ մասին եղած հիշատակարանը տե՛ս սույն ժողովածուի Ա հատորում, էջ 198։*

[4] *Հիշատակարանում թեև ՌՁԱ է նշված, բայց հայոց թվականը ցուցակում ամենուր նշված է 1692 թ. (էջ 185, 298), դա թերևս տպագրական սխալ է։*

678
ԱՂՕԹԱԳԻՐՔ

Կամենից, էջ 185. տե՛ս նաև «ՀԱ», 1911 թ., էջ 18

Գրիչ՝ Յովանէս վարդապետ
Վայր՝ Իլով

Գրեցաւ գիրս ձեռամբ Յովանէս վարդապետի Կ. Պոլսոյ եպիսկոպոսի, ի յԻլով քաղաքի, թվին ՌՁԱ (1632) <թուականիս> հայկազեան տումարի։ Այսմ ամի կբալ թագաւորն Զիկմունա առ Աստուած փոխեցաւ. Աստուած լուսաւորէ հոգին և ընդ առաջին սբ. թագաւորացն դասեսցէ. Աշխարհամատեանին չորէքշաբթին էր վախճանն[5]։

679
ԱՂՕԹԱԳԻՐՔ

Կամենից, էջ 185

Գրիչ՝ Թորոս Կամենացի

Եպիսկոպոսն Մեսրոպ վարդապետն Հայոց Կաֆացի, ի ՌՁԱ (1632) թվին[6] եկեալ Կամենիցս, ձեռնադրեաց զՄիքայէլ երէցն, ի խնդրոյ յիշատակի Թորոս կրօնաւորի. և սբ. Լուսաւորչի խորանն հիմնարկեաց, և եդ բաղում մասն սրբոց ի հիմն եկեղեցոյն, ի փառս և ի գովեստ սբ. եկեղեցոյս. ամէն։ Եւ զհիմնարկութեանս պակասն գրեաց ի թվականիս Հայոց ՌՀԶ (1627), մայիս ամսոյ ԺԴ (14), օրն Պէնտակոստէի երկուշաբաթի։ Ես՝ ամենամեղս անձն Թորոս եպիսկոպոս Կամենիցւոյ, ի խընդրոյ Եազլովցա ժողովրդոցն՝ գնացի ի քաղաքն Եազլովցա և եկեղեցոյ հիմնարկութիւն արարի, յանուն Ս. Աստուածածնին և եգի ի հիմն մասն սրբոց, ի փառս Աստուծոյ և ի պատիւ....

680
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Երևան, № 8380

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Կողոնիայ

Ա

264բ Փառք...։ // Շնորհիւ ամենախնամող ողորմութեամբն Աստուծոյ և բարէխօսութեամբ ամենայն սրբոցն աւարտեցաւ սբ. գիրս, որ կոչի կանոն, բաղում աշխատութեամբ և շանիւ օգնութեամբ, և տառապանաւք գրեցի զսա ի քաղաքն Կողոնիայ, որ այժմ ասի Ղարայճիսար, ի դուռն Ս. Աստուածածնին և Սբյն. Ստեփանոսի Նախայվկային և այլ ամենայն սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի դառն և ի նուրբ ժամանակիս, որ է տառապեալ ազգն քրիստոնէից, ի չար հարկապահանջողաց. ի հայրա-

[5] Այսինքն՝ 1832 թ. ապրիլի 11-ին, որովհետև Զատիկը կընկնի ապրիլի 1-ին (հուլյան տումարով), իսկ Աշխարհամատեանն (Կանաչ կիրակին)՝ ապրիլի 15-ին։

[6] Այս հիշատակարանը գրված է 1632 թ. շարքում, բայց Թորոս Կաֆայեցու Կամենից գընալու թիվը նշված է ՌՀԱ (1622)։ Ենթադրեցինք, որ ՌՀԱ-ն տպագրական սխալ է և այն ուղղեցինք ՌՁԱ։

պետութեան սբ. ուխտիս տէր Ալէքսանոս վարդապետն, ի թվականիս Հայոց ՌՁԱ (1632) ամին, մայիսի ԻԲ (22) աւարտեցաւ, ձեռամբ անարժան և անպիտան, յետնեալ տոհմի, բազմայմեղ և անիմաստ և անարհեստ գրչի՝ Գրիգոր անուամբ միայն երիցու և ոչ գործով։ Արդ՝ յերեսս
265ա // անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ պատուական հարք և եղբայրք և ուսումնասէր բարէմիտ ընթերցողք, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով և կամ տեսանելով, անմեղադիր լերուք, սխալանաց և խոշ[ո]ղութեան գրոյս, զի այս չափ կարացաք ի դառնութեան ժամանակիս և ըստ մերում տկարութեանս, զի միտքս մոլոր էր ի ծովածուփ կենցաղոյս վերայ։ Միթէ ամենազաւրն Աստուած տա ձեզ միտք և իմաստութիւն, և ապա անպիտանիս։ Աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, որ զաւելորդն բառնայք և զթերին լնուք։

Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ... յիշեցէք ի մաքրայփայլ աղօթս ձեր զծնաւղքն իմ՝ զՄարուգէ քահանայն և մայրն իմ՝ զՄանանան, որ բաղում աշխատանք կրեցին ի վերայ մեր, և կենակիցն իմ որ փոխեալ է առ Քրիստոս և զայլ ամենայն մերձաւորսն մեր...[7]։

Բ

Ո՛հ, աչքունք, որ գլանաս,
Ո՛հ, մըչկունք, որ չորանաս,
Ո՛հ, մատունք, որ ի հող դառնաս։

681

ԱԻԵՏԱՐԱՆ

ՋՁՍԳ, № 49. տե՛ս նաև «ՀԱ», 1925 թ. էջ 524

Գրիչ՝ Ղազար սարկաւագ

43 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թիւականիս Հայոց ՌՁԱ (1632), յունիս ամսոյն ի ԺԱ (11), ի առաջնորդութեան տէր Մինաս կաթողիկոսին, որ Աւետարանիս գրելն առ Աստուած փոխեցաւ։ Արդ՝ ո՛վ սբ. հայրք և ճգնազգեաց կրաւնաւորք և առաքելագումար դասք քահանայից, յիշեսջիք զգրչակս իմ զՂազար սարկաւագս, որ Աւետարանիս գրելն առ Աստուած փոխեցաւ[8], լի բերանով Աստուած ողորմի ասացէք իմ վարդապետիս տէր Սարգսին, որ բազում աշխատեցաւ զիս յուսման

[7] Խիստ համառոտ տե՛ս նաև Հ. Ոսկյան, Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի և Տրապիզոնու նահանգներու վանքերը, էջ 106։

[8] Խոսքը վերաբերում է վերևում հիշված Մինաս կաթողիկոսին։ Բայց ձևակերպումն այնպես է, որ կարծեք վերաբերում է գրչին։ Մինչև այստեղ համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան. Նշխարք, հտ. Ա, № 736, էջ 205 բ, Կյուլեսերյան Բ., Պատմութիւն կաթողիկոսացն Կիլիկիոյ, էջ 301—302։

Կյուլեսերյանը հենվելով այս հիշատակարանի վրա, Մինաս Քաջախ Սսեցի կաթողիկոսի մահվան օրը համարում է 1632 թ. հունիսի 11-ը, (էջ 301, ծանոթ. 1), սակայն հունիսի 11-ը հավանաբար վերաբերում է ձեռ-ի ընդօրինակության ավարտին, իսկ Մինաս Քաջախը պետք է մահացած լինի մինչև այդ, այդ է ասում հիշատակարանի «Որ Աւետարանիս գրելն առ Աստուած փոխեցաւ» արտահայտությունը։ Հակոբ Կարնեցին Մինասի մահը դնում է 1633 թ. (Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հտ. 1, Երևան, 1951, էջ 241)։

առնել գրոյս, ոչ վայելեցաք զաշխարհս, բայց ի վերին արքայութեանս
44 արժանի առնէք դուք և մեք, ընդ նմին և զծնաւղս իմ՝ Սիմաւոնն // ե
զԹամամն. Աստուած իւրեանց հոգին այլ լուսաւորէ. ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ քահանայք, լի բերանով Աստուած ո-
ղորմի ասացէք վարպետ կինն, իմ երէցկինն՝ զԿուլիշարեին, որ մայրա-
կան գթութեամբ զիս շահեցաւ քանց իւր որդին. Աստուած իւր հոգին
լուսաւորէ. ամէն։

682
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
ՄՂՂԲ, № 246 (1563 թ.)

1184 Ելայ ես յԱնթափայ թվին ՌՁԱ (1632) ամին, յունիս ամսուն ԺԲ
(12), օրն երեքշաբթի։

683
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԵՐԱՎՋ, № 429

Գրիչ՝ Առաքել
Վայր՝ Շանգար

654 Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ...։ Գրեցաւ Քարոզգիրքս
655 ձեռամբն սուտանուն և անարժան Առաքելին, ի// Դաքան, որ կոչի ա-
նուն Շանգար, փոքրիկ գեաւղ մի, թվին ՌՁԱ (1632), ի Հայոց ամսին
մարերի Բ (2), պատկեր աւրն հինգշաբթի, ի փոքր Հայոց ամսին նա-
խա ԻԴ (24), պատկեր աւրն հինգշաբթի[9], որ է աւրհնեալ, փառք յաւ-
իտեանս. ամէն։

684
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ
Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք» հտ. Ա, № 739 (1625 թ.)

206ա Ի թուին Հայոց ՌՁԱ (1632) և օգոստոս ամսոյ տասն և ինն, Իզմիր
քաղաքի, յաւուր երեքշաբթի երիկուն լոյս ի չորեքշաբթի, մեծ իրս պա-
տահեցաւ ի քաղաքիս, վասն ծովացեալ մեղաց մերոց. զի առաշի յե-
րիկւանէ անկեալ էր հուր և ոչ գիտացեալ ոք և այրեաց չափ կէս քա-
ղաքիս, եթէ խան և եթէ չարշու-պազար մինչև ի լոյս այրեաց և տոչո-
րեաց զայսքան անթիւ մալ և ապրանք։ Վա՜յ մեզ հազար բերան, զի
այսքան պատահարաց վերայ ոչ կասեմք թէ մեղայ Տեառն, այլ պատ-
ճառեմք զպատճառս մեղաց, զի ըստուեր տգիտութեան ծածկեալ է զր-
մեզ փառք Աստուծոյ։

---

[9] Այսինքն՝ հուլիսի 12-ին։

685
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 235 (1365 թ.)

Նորոգող՝ Ստեփանոս քահանայ
Վայր՝ Կարբի

ա

122բ Վերըստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՁԱ (1632) ամի[10], ի գեաւղաքաղաքս Կարբի, ձեռամբ անիմաստ Ստեփանոս սուտանուն քահանայի։ Եւ ետ յիշատակ բարէմիտ և հաւատարիմ առս այսորիկ Խանբաբիս։ Որ և սա ստացօ սբ. Աւետարանս հալալ արդ[ե]-անց իւրոց, յիշատակ իւրն և ծնողացն՝ Նուրումին և Թամքայ խաթունին, և եղբաւրս իմ Գալուստին, և ամուսինն իմ՝ Մայրանին, և որդոյ իմոյ Կիրակոսին, Մարտիրոսին, դստերաց իմոց, և առաջին կողակիցն իմ՝ Սալվարին, և դստերն իմ՝ Մայրանին, Մարգարտին, Հեղինին, Սա-
123ա ռին, // Մուրվաթին, և եղբաւր կողակցին՝ Թարղումաշին, որդոյն՝ Ծատուրին, դստերն՝ Հռիպսիմին, Մայրամին։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք յիշատակարանիս, բոլոր սրտիւ և լի բերանով Աստուած ողորմի ասացէք զվերագրեալ անուանցս, հեզահոգի Խանբաբս, և պապ սորա Բաբէն, և հայր սորա Նուրումն, և մայր սորա Թամքայ խաթունն, և եղբայր սորա Գալուստն, և կողակից սորա Սալվար, և միւսն՝ Մարիամ, դուստր սորա Եղիսաբեդն։ Աստուած ողորմի ասացէք ննշեցելոց սորա և հոգոյն սորա թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ, զի և Տէրն ամենայնի ձեզ ողորմեսցի...։

բ

225բ Զնորոգաւղ անարժան Ստեփանոս յիշեցէք։

686
ԺԱՄԱԳԻՐՔ
Երևան, № 585

Գրիչ՝ Անտոն
Վայր՝ Քօթահեա

180ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ գիրս այս ազաւթից և փրկականն խորհուրդ
180բ սբ. պատարագին ի թվականիս Հայոց ՌՁԱ (1632) ամին, // ի քաղաքն Քաւթահեա, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին, ձեռամբ անարհեստ գրչի Անտոնի։ Դարձեալ յիշեցէք զմահտեսի Մէլիքն, որ ստացաւ զայս Աղաւթմատոյցս, յիշատակ իւր հոգոյն և ամենայն արեան մերձաւորացն, որ ետ գրել զսա որդոյն իւր՝ Ստեփանոս աւագ սարկաւագին։ Դարձեալ հարք և եղբայրք, գրիչ խոշորութեանն և սղալանացն անմեղադիր լերուք և որ յիշէք՝ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի. ամէն։

---

10 Մեր Մատենադարանի ձեռագրերի ցուցակի Ա հատորում սույն հիշատակարանը դրված է 1633 թ. ներքո (հտ. Ա, էջ 279)։

687
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
Երևան, № 685

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Երուսաղէմ

ա

58ա Ո՛վ սբ. ընթերցաւղք, թողութիւն մեղաց հայցեցէք անարժան գրծողիս և ծնօղաց իմոց։ Յիշեցէք և ղյիշմանն արժանին զերջանիկ բարունին և զքաջ իմաստասէրն զՍարգիս վարդապետն՝ զհեղինակ սբ. ուխտիս մեծի ճգնաւորի սրբոյն Անտոնի անապատականի։

Բ

79ա Ո՛վ սբ. ընթերցողք, յիշեսջիք յարժանաւոր աղօթս ձեր զանարժան գծողս, ծնողաց հանդերձ և ամենայն զարմիւք, յորժամ զմարգարտաւրէնն հեղցուք զարտասուս ի խնկելի ժամն այն, և թողութիւն մեղաց հայցեցէք, և ողորմածն Աստուած ձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի։
ՅԵրուսաղէմ գրեցաւ թվին՝ ՌԶԱ (1632)։

Գ

282բ Ո՛վ սբ. ընթերցողք, աղաչեմ յիշել և զանպիտան գրիչս՝ զՅակոբ սարկաւագս։

688
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 697

Գրիչ՝ Ակոբշայ Սօչովցի
Վայր՝ Սեչով

ա

46ա Ո՛վ եղբայր, աղաչեմ զձեզ, թէ որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցաք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղապարտ գծողս, զմեղաւոր սուտանուն Ակոբշայ սարկաւագ Սօչովցի, Սրճակի որդի, և յիշողքն յիշեալք լինին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։
Ո՛հ, ո՛հ, վա՜յ ինձ, զի գիրս մնայ և ձեռքս հող դառնայ։

Բ

Գրիչ՝ Վարդան աբեղայ

135ա Արդ՝ գրեցաւ սբ. տնաւրինականքս ձեռամբ հոգնամեղ, եղկելի և տարապեալ աբեղայի՝ Վարդանն անպիտանի[11]։

---

[11] Թեև հիշատակարաններում չի նշված գրչության տարեթիվը, բայց ձեռ-ի 55 բ—56 բ էջերում տեղավորված գրչի մի բանաստեղծության վերջավորությունը այսպես է.

«[Յ]ամի ծնընդեան մերոյ Փրկչին,
Ռայի և ՁԱ (1632) թուականին,
Փետրուարի օրն վերջին՝
Էր քսան և ինն ըստ նահանջին,
Որում աւուր բանքս յարգին,
Ի Սէչովայ ի քաղաքին, (էջ 56 բ)։

Այստեղից էլ սույն ձեռ-ի գրչությունը դրեցինք 1632 թ. Ներքո՝ Մատենադարանի ձեռ-երի ցուցակ կազմողները բանաստեղծության այս հատվածը նշել են որպես հիշատակարան, իսկ տարեթիվը՝ 1631։ (տե՛ս ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հտ. Ա, Երևան, 1965, էջ 384)։

689
ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ ԿԻՐՔԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՅ
Երևան, № 780 (ԺԳ դար)

Նորոգող, հետ. ստացող տէր Մինաս

351բ *Զվերջին ստացող և նորոգող սբ. գրոցս տէր Մինաս քաջ բարունապետին և ծնաւղաց նորին, հօրն՝ Վարդ[ե?]վանին և մօրն՝ Միքոյրին, եղբարցն՝ Բէկիշանին, Դաւթին. և ամենայն արեան մերձաւորաց նոցին։ Ով կարդայ կամ աւրինակէ՝ նա զԱստուած ողորմին ասէ, Աստուած իւրն ողորմեսցի...։*

Թվին ՌԶԱ (1632)[12]։

690
ՊԱՏԱՌԻԿ
Երևան, № 964

Վայր՝ Թաղասեռ

Արդ՝ յիշեցէք զվերջին ստացող սբ. Աւետարանիս զմէլիք Մուշկամբարն, *որ ստացաւ զսա և ետ ի նորոգել, յիշատակ իւրն և ծնօղացն, հօրըն՝* Աղամիրին *և մօրն՝* Սարվարին, *և որդոցն՝ տէր* Յովանիսին, Աղամիրին, Հախնազարին, Մարտիրոսին, Մինասին, Ալէքսանոսին. *և* Մուշկամբարի *կողակցին՝* Ղիմաթին, Մամազիին, *և հարսներուն՝* Եղիսաբեթին, Գօզալին. *դստերն՝* Խանումին, Գուլսամբարին: *Այլ և յիշեցէք զտէր* Ազարիէն, Սարգիսն, Աղամն, *մեծ հարսն՝* Գօզալն, Ջանաղան, Գուլաղան *և ամենայն արեան մերձաւորք սորա՝ ղհանդուցեալսն ընդ արդարսն դասցէ և զկենդանիսն խաղաղութեամբ պահեսցէ։*

Դարձեալ կրկին յիշէք ի յաղօթս ձեր զԽուտաբաշին և որդի սորա Ջանիմանն *և որդի նորա* Աղամիրն, *և որդի սորա* Մուշկամբարն, *և իւր որդիքն...*[13]։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի գաւառ[ն] Դիզակ, ի գի[ւ]ղս Թաղասեռ, թվին ՌԶԱ (1632) ամի, թագաւորութիւնն Պարսից, հինգերորդ ամին[14]։

691
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1180 (ԺԵ դար)

Նվիրատու՝ Մաղամիա
Վայր՝ Թոխաթ

բ—428ա *Ես՝ նուաստ* Մաղամիա *բանի սպասաւորս եղի* Թոխաթու *Ը (8) եկեղեցուն յիշատակ յաւիտենիս։ Եւ ոչ ոք չունի իշխանութիւն հանելոյ ի*

---

[12] Ձեռ-ի 352 բ էջում մեկ ուրիշը դրել է. «Տէր Յոհաննես ծառայ Յիսուսի Քրիստոսի թվականին ՌՃՊ (1858) գիրս օրինակեցի»։

[13] Թվում է վերևում հիշված անունները։

[14] Թագավորի անունը չի նշված, նկատի ունի Սեֆի I-ին։

քաղաքէ։ Այս Ե (5) գրոց քաղուածուս թէ փտի, թող ի քաղ[ա]քս փտի, մինչ որ Աստուած դոցայ վայելող յարուցանէ։ Թվին ՌՁԱ (1632)[15]։

692
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 1550

Գրիչ, ստացող՝ Յովհաննէս
Վայր՝ Քանաքեռ

ա

254բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր գիրքս, որ կոչի Յիսուս որդի, ձեռամբ մեղապարտ Յոհանիսին, ի թուականութեանս Հայոց Ռ և ՁԱ
255ա (1632), ի հայրապետու//թեանն տեառն Մովսէսին՝ յաթոռ սբ. Էջմիածնի, ի դառն և ի նեղ ժամանակի, ի թագաւորութեանն շահ Ապազին, և ի ղանութեանն Թայմազ բէկին, ի գաւառս յԱրարադեան, ի գիւղաքաղաքս որ կոչի Քանաքեռ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Ստեփանոսի, առ ի յիշատակ հողոյ իմոյ և վայելումն։ Արդ՝ աղաչեմ, յիշել ի սբ. աղաւթս ձեր զՅոհանէս գծողս և զստացաւղ սորայ, և զծնաւղսն իմ՝ զՋանազիզն և զՓարիխան[ն], և եղբայրն իմ՝ Յակոբն, և զամուսինն իմ՝ զՔարամ խաթուն, և այլ ամենայն արեան մերձաւորացն մերոց, և ձեզ յիշողացդ և մեզ ողորմեսցի Քրիստոս. ամէն։

Բ

122ա Յայս ծաղկ[ա]զարդ բուրաստանիս,
Հոգի նորոգ երգարանիս,
Յիշեա զգծող սրբոյ տառիս,
ԶՅովանէս զմեղօք ի լիս։

693
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան № 1971

Գրիչ՝ Աւիկ
Վայր՝ Լիմ անապատ

ա

118բ Ապիկար և եղեռնագործ Աւիկս սակս ծառաստկին, որ զայս քանի բանս գրեցի։ Ո՞վ հանդիպողք, ուշիմ միտ այլ Յունաց ազգին ծառաստիկ չի հանդիպիր։

Բ

122բ Եւ զի դրեալ է թէ ի սկզբանէ մինչ ի կատարած Դ (4) Զատիկ է՝ Զատիկ արարչութեանն, Զատիկ աւրինադրութեանն, Զատիկ փրկութեանն, Զատիկ նորոգմանն։

Գրեցաւ Տոմարագիրքս ի ծովապատ անապատս Լիմ յորջորջեալ, թվականիս Հայոց ՌՁԱ (1632) ամին։

---

[15] Գրված է լուսանցքում։

Գ

122ա Թվական Հայոց զի ոչ է աստ ՌԱՀԱԳԱ ԱԴԱ ՈՆԻ ԼԱՎԱ, բայց Հռոմայոց մեծն ԾԱՌ ՄԵԾ ԽԼԱԹ և փոքրն ՄԱ ՃԱ ԹԱԺ[16]։

Գրեցաւ Տոմարս ի Լիմ անապատս, վերակացութեամբ Ստեփանոս վարդապետին, և միաբանութեամբ Հ (70) եղբարցս, որ աստ կան հաւաքեալ ի հաճոյս Աստուծոյ։

Այլ ես ոչ նման սոցա,
Բարի վարուց յոյժ բացեակա,
Ի իւծեալ հոգւով տարագրեցայ,
Պատուիրանին յանցող գտայ։
Ես իմ կամաւ աղտեղացայ,
Անպիտան զազիր դարձայ,
Տարասկաւղս մեղօք լցայ,
Ի յարդարութեանց յոյժ հեռացայ։
Իսկապէս թշուառացայ,
Ի մաքուր գործոց ունայնացայ,
Սընապարծ հպարտացայ,
Հեզութենէ վարատեցայ։

694

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 2457 (ժամանակ ?)

106բ Աւրհնեալ տէր մեր...։ Սաղմոսարանս մղտսի Ամիրխանին էր, ապա բաշխեաց Մոկացի Կարապետ վարդապետին։ Աստուած միթէ սորին փոխարէն զերկնից արքայութիւն տացէ մահդասի Ամիրխան և իւր ծնողացըն. ամէն։

Թվին ՌՁԱ (1632)։

695

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ

Երևան, № 4320 (1300 թ.). տե՛ս նաև «ՀԱ», 1905 թ., էջ 313

ա

201ա Զվերջին ստացող քաղցրաձայն և հոգևոր երգարանիս զխօջայ Պողոսն, և զհայրն իւր՝ Մանսուրն և զմայրն՝ Աննային, և զեղբայրն՝ Գրի-

[16] Ձեռ-ն ավարտվում է 122-րդ թերթով, ուր դրված է նաև գրչության տարեթիվը՝ 1632։ Այստեղ ես զուգահեռաբար տրված է տարեթիվ՝ 1633, այսպես՝ Ռ(1000)+Ա(1)+Հ(70) + Ա(1) + Գ(3) + Ա(1) + Ա(1) + Դ(4) + Ա(1) = 1082 և Ո(600) + Ն(400) + Ի(20) + Լ(30) + Ա(1) + Լ(30) + Ա(1) = 1082, սրանց՝ 1082 + 551 = 1633. Ծ(50) + Ա(1) + Ռ(1000) + Մ(200) + Ե(5) + Ծ(50) + Խ(40) + Լ(30) + Ա(1) + Թ(9) = 1386, սրան՝ 1386+247=1633 (Հռոմի հիմնադրման՝ 753 թվին ն. մ. ըստ Վարոնյան հաշվմանն)։ Եվ վերջինը՝ Մ(200) + Ա(1) + Ճ(100) + Ա(1) + Թ(9) + Ա(1) + Ժ(10) = 322, սրան՝ 322+1064 (երկու շրջան) + 247=1633։ Այս խնդիրն ավելի վաղ լուծել է պրոֆ. Ա. Աբրահամյանը (տե՛ս «Հայ գրի և գրչության պատմութիւն», Երևան, 1959, էջ 256—257)։ Այս հատվածը թեև գրչի կողմից է գրված, բայց ձեռ-ի գրչության տարեթիվը չէ, ինչպես կարծում է պրոֆ. Ա. Աբրահամյանը։

զոր քահանայն, Ալեքսեան և Աւետիքն, և իւր աղջիկն՝ զՇանղատէն յիշելով. ամէն։

Հետ. ստացող՝ Պողոս Թավաքալեցի

Բ

201բ Եւ արդ՝ ես խոջայ Պողոսն Թավաքալեցի, Մանսուրի տղայ, գնեցի զայս տեսրս, իմ եղբայր Գրիգոր քահանային համար, ի Թվականութեանս Հայոց ՌՉԱ (1632), ի հայրապետութիւն սբ. էջմիածնայ տեառն տէր Մովսէս կաթողիկոսին, և թագաւորութիւն Պարսկաց շահ Ապասին թոռան՝ շահ Սէֆուն։ Եւ է յաթոռ շահ Սէֆուն Ըսպանեան, որ կոչի Շօջ։ Եւ անդ կան քրիստոնեայք բազում և ունին վանք և անապատք մարդկանց և կուսանաց, և եկեղեցիք Հայոցս ԺԵ (15) և Ֆռանկաց Բ (2)[17]։ Եւ որք երգէք կամ օրինակէք զվերջին ստացողիս լի բերանով ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

696
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 4826 (1420 թ.)

Կազմող՝ Յոհանէս

297բ Փառք... Արդ՝ կազմեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Յոհանէս բազմամեղիս, յիշատակ պատուական տանուտրոշն՝ Թումին և ծնաւղացն իւրոց և որդւոցն՝ Շաղրաթին, Բարդուղիմէոսի[ն], Ղարիպին։ ...Կազմեցաւ սբ. Աւետարանս ի ՌՉԱ (1632) թուականիս մերոյ։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Թումին...[18] ևս առաւել... ինձ Յոհանէսին և ծընաւղացն՝ տէր Մէլքեսեթին և Գուլաղին, և կողակցուն իմոյ՝ Փաշին. ամէն։

697
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 5008

Գրիչ՝ տէր Սաեփանոս

ա

18բ Գրեցաւ գաւազան տալոյ գիրս ի Թվին ՌՉԱ (1632), ձեռամբ [յ]ոգնայմեղ տէր Սաեփանոսի, ի վայելումն տէր Մինաս կրօնաւորի գրոց աշակերտի։

Բ

Կազմող՝ Մինաս Բաբերթցի
Վայր՝ Տաքիրտաղ

130բ Ես անարժան մեղաւք գերի,
Յոյժ յամպիտան և խոտելի,
Մինաս անուամբս Խախթեցի,
Որ մականուամբ Բաբերթ կոչի։

---

17 Մինչև այստեղ տե՛ս նաև Ն. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի, էջ 335, ծանոթ. 2։
18 Դարձեալ կրկնում է վերևում հիշված անունները։

Առ ոտն էի վարժապետի,
Ըստ եռամեծին Գրիգորի,
Բարունապետ քաշ տէլէտի,
Դարանաղեաց Կամախ ասի։
Զի Սբ. Գրիգորի գաւառ կոչի,
Լուսաւորիչ մերոյ ազի,
Հայոց մեծացն Պարքևի,
Թագ և պարծանք մերոց ազգի։
Լուսաւորող յամենայնի,
Հոգոց մերոց մեր ըստ կարգի,
131ա Եւ առաւել// Հայոց ազգի,
Զի լուս անուամբ նա որ կոչի։
Զի իւր գաւառն է Դարանաղի,
Որ մականուամբ Կամախ կոչի,
Սեպոհ լեառն աղաւթատեղի,
Եւ զի աւրհնեալ է աշովն Յիսուսի։
Մինչ գեռ ի յոտս էի վարժապետի,
Առ հօրն իմո[յ] հոգևորի՝
Գրիգորի վարդապետի,
Դարանաղեաց նա որ ասի։
Զի է յաթոռ Յոտաոզի,
Որ մականուամբ Թագիրտաղ կոչի,
Եղբայր մերոց հոգևորի,
Յոյժ աւրհնեաց են արժանի։
Սարգիս վարդապետ Յերուսաղեմցի,
Դանիէլ եպիսկոպոս Ըստանպալցի,
Տէր Գրիգոր Կամախեցի,
Որ են եղբայր մեր ըստ կարգի։

Կրկին հինգիցն հարիւրից երկեակ քառեայկն քառասնից և քառեակ թուոցն (1603)[19] ետուր գաւազան հոգևոր հայրն մեր ըստ եռամեծին Գրիգոր վարդապետին[20]։

Յիսուս Քրիստոս աւծեալ փրկչին,
Լուսատրէ իւր զհոգին,
Որ լուսաւորեաց մեզ ըստ կարգին,
Արժանացուց շնորհաւք փրկչին։
Տէրունական ըստ հրամանին,
Եւ փրկագործ իւրում բանին,
Թէ իսկ որ հայցէ բոլորով սրտին,
Յոյժ ողորմած յամենայնի։
131բ Տայուք զփառս Հաւր անծնի,
Այլ և Որդոյ իւր միածին,

[19] Այսինքն՝ (2×5×100)+(2×4)+40+4+551։

[20] Գրիգոր Դարանաղեցին իր ժամանակագրության մեջ այդ դեպքը ևս նշում է, «թվին ՌՃԲ (1603) մայիսի ԻԸ (28), ի յաւուր Պէնտէկոստէի գալստեան Ս. Հոգւոյն» (ժամանակագրութիւն, հրատ. Մեսրոպ վ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 40)։

Բրիումն Հաւր անճառ Հոգի,
Անձամբ երեգ բնութեամբ է մի։
Եւ յանարժան բանի տնտեսի,
Մտաւք մոլոր մեղաւք ի լի,
Գաւազանագիրքս որ կապեցի,
Գիւղաւան Տաքիրտաղի,
Զի Թրակիա սայ որ կոչի։
Որք հանդիպիք յայսմ տառի,
Յիշման առէք զմեզ արժանի,
Եւ որք յիշեն՝ յիշեալ լիցի,
Ցահեղ աւուրն յաներեկի։
Անմեղադիր լերուք, եղբայրք, զի կար մեր այս չափ է. ամէն։

698
ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 5102 (1571 թ.). տե՛ս նաև № 6333, էջ 95 բ, № 394

Նորոգող, կազմող՝ Վարդան աբեղայ
Վայր՝ Կարմիր վանք

452բ Փառք...։ Կազմեցաւ և նորոգեցաւ Շարակնոցս ի Կարմիր վանք, ձեռամբ Վարդան աբեղիս, ի թվին Հայոց ՌՁԱ (1632), ի խնդրոյ տէր Ալէքսիանոսին, և իւրոցն՝ Ամիրնիանին և զՄարգարէին, և զթոռներն սորա՝ զՆղիայ սարկաւագն և զՀայրապետն, և զընտանիս նոցին. ամէն[21]։

699
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Երևան, № 5348

Գրիչ՝ Սաեփանոս քահանայ

ա

271ա Փառք.... որոյ ետ կարողութիւն ծառայիս Աստուծոյ մահդասի տէր
271բ Սաեփանոսին, և էի և եմ և եղէց վիճակ ժառ//անգութիւն, միայն թէ ընկալցի անարգամեծար Տէրն, որոյ շնորհիւն ցանկացայ աստուածային սբ. Սաղմոսարանիս և ողորմութեամբ նորին և աւգնականութեամբն գտի։ Արդ՝ ով աստուածասէր սիրելի և տրփացող ցանկալի... ամենայն կեանք մեր սովաւ բարեաւ աւարտի՝ եթէ խաչ աւրհնութիւն, եթէ եկեղեցի և այլ ամենայն քահանայագործութիւն Աստուծոյ եկեղեցոյ Սաղմոսիս կատարի...։ Այլ որ արբին ի սիրոյ սորին, նախ իմանա զճաշակ քաղցրութեան սորին։ Բայց սաստիկ աղաւաղեալ թիւրեցաւ բանք Սաղմոսիս ի ձեռն նորուսումն գրչացն, և անփութութեան ուսումնասիրաց, և հեղաթիւր բառից, և լեզուաց, և այլ ազգի սաղմոսաց. և յիրահամարձակ ոմանց և յանձնապաստան ի բերան ևս գրեն առանց
272ա աւրինակի։ // Իսկ ես մեղաւոր տէր Սաեփանոսս ծառայս ծառայիցդ

[21] Համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նչխարք, հտ. Բ, № 503, էջ 421։

Աստուծոյ ի բաղում ամս տենչմամբ տոչորեալ էի ի սէր ուղղաբան Սաղմոսարանիս ատենի։ Ահա հանդիպեցայ ընդիր և լաւ աւրինակի, որ էր գրած յիշատակարանին, թէ «Գրեցաւ սա յաւրինակէ սբ. վարդապետէն Գառնեցոյ, ձեռամբ նորին գրեալ և ստուգաբանեալ ճշմարտիւ կըրկին կրկին»։ Որ նա նոյն բաղձմամբ ի խնդիր [եղե]ալ էր ուղղաբան Սաղմոսարանիս, որոյ յիշատակարանն գրեալ էր. և ապա ասէ. «Գնացի ի սբ. ուխտն Խաղբատ, և երկիրպագեցի սբ. խաչին և սբ. գերեզմանի մեծի և տեսանող իմաստասիրին Հայոց՝ սբ. վարդապետի Յովանիսի մականուն Սարկաւագի, այն որ բաղում ճգամբք զսաղմոսն թարգմանչագիր Սաղմոսաբանէ գաղափարեաց։ Զոր և իմ հանդիպեալ նորուն սբ. վարդապետի Սարկաւագի ձեռագիր Սաղմոսարան, և իմ առեալ զայն Սաղմոսարան համբուրեցի, և ինձ ետու գրել զսա յիւրմէն ամենայն ստուգութեամբ. զբանն, զգիր, զհարցուկն, զտուն, զկէտն, զստորն, զշեշտն, զբոյթն, զպարոյկն, զսաւղն, զենթամնայն, զսոսկ։ Բայց մի՛
272բ ոք իշխեսցէ տգիտաբար բան// թիւրել և կամ զդրեալսն չընտուգել յօրինակէս, որպէս և ես Յովանէս Գառնեցի»։ Ունի հոգէնուագ մատեանս Գողբայս ԿԳ (63), Փոխս ՃՇ (150), տունք ԲՌ ու ՁՃ և է (2607) տուն, Տէր ամենակալ Ը (8), Մեծացուսցէն ԺԲ (12), Աւրհնեալ տէր Աստուած Իսրաէղի Կ (60) տուն, Հարցի սաղմոս Գ (3) պատկերէ, և ՃՇ (150) փոխ՝ Ծ (50) փոխն աւրհնութիւն է մեզ և ամենայն հաւատացելոց որպէս ասէ. «Աչք Տեառն ի վերայ արդարոց»[22], և Ծ (50) փոխ աղօթք է որպէս ասէ. «Խոնարհեցոյ Տէր զունկն[23]», և Ծ (50) փոխ անէծք և սատանայի և սատանայացեալ մարդկաց որպէս ասէ. «Խաւարեսցին աչք նոցա[24]»։

Եւ դուք, ո՛վ սրբասէր ե հեզահոգի և աստուածակրօն ընթերցողք, որք հանդիպիք սմա սաղմոս երգելով և կամ աւրինակելով յիշեցէք... մեղաւոր գծողիս և իմ ծնօղացն և ամենայն արեան մերձաւորացն. և որ լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած տղորմի ասէ....։

Արդ՝ գրեցաւ սբ. տառս այժմ, որ կոչի Սաղմոսարան, Տաւնա-
273ա ցո[յ]ց և Աղօթամատո[յ]ց, ձեռամբ յոգնամեղ անարհեստ// [փծու]ն գրչի Ստեփա[նոս սու]տանուն քահանայի ///վան, ի դուռն/// Ս. Աստուածածնի [և Գար]բիէլ Ս. Հրեշ[տակապետի], ի թուականու[թեանս] ՌՁԱ (1632), ի [դառն և ի ն]եղ ժամանա[կիս, յորո]ւմ աշխարհս ի /// առէր վասն [ծովաց]եալ մեղաց իմոց։ Ո՛վ ա[ստուածա]ս[էր] քրիստոնեայք, գիտէք որ ամենայն ծնօղաց/// յիւրեանց զաւակն է որ /// անէ հասանէ. և պա[տիւ] բերէ ի վերայ ծնօղաց ի[ւրեան]ց։ Զի և ես չար և վատ զաւակ ելա ի վերայ ծնօղաց մերոց, և անպտուղ որպէս զփուշ։ Աղաչեմ զձեզ, որ զԱստուած ողորմին ասէք մեղաւոր գծողիս և իմ ծնօղացն՝ հօր Մելքոնին և մօրն իմ՝ Թուրանդին, և որդոյն իմոյ՝ Գրիգոր սարկաւագին, և աշակերտեալ մանկանց մերոց տէր Նիկողաոսին, և տէր Կարապետին, և տէր Մէսրոպին. Աստուած զիւրեանքն մշակ առանց ամօթոյ պահէ. ամէն։

---

22 Սաղ., ԼԳ, 16։
23 Հմմտ., Սաղ. ՀԷ, 1։
24 Սաղ., ԿԸ, 24։

Ո՜հ, ո՜հ ղղարիպի հալն թէ ինչ դառն և լեղի է <հալն ղարիպին>. բռնեմք զՔրիստոսի հրամանքն, որ ասէ, թէ ի յեգիպտոս յոտար երկիր պանդխտեցայ։ Աղաչեմ զՔրիստոս որ ղղարիպն չմոռանայ և յիւր յարքայութենէն չղրկի, Աստուած ղղարիպի դատողն աւրհնէ, յորժամ դա-
273բ տաստան լինի բարին և չարն անտի յայտնեսցի, // գայ ի Գողգոթայ կանգնի քառաթև սբ. խաչն յայտնի զխոցումն, որ ի կողս ունի, վասն ձեր ես ի յանձն առի, հրեշտակ և հրեշտակապետք, առաքեալ և մարգարէ ժողովին ի կալն Ուռնայի արդար դատաւոր նստի, զմեղաւոր զարդարն որոշի.... ||| ... և մեծ ատենի շ[ատ] զարմանք բաներ կու լինի, ի՞նչ աշակերտ որ իւր վարպետին նենգի՝ զշնորհն առնու Սկարիովտացոյն Յուդայի։
274ա |||[25]

Բ

74բ Տէր Աստուած Դաւթի մարգարէի բարեխաւսութեամբդ ողորմեա՛ ստացողի սբ. գրոցս մահդասի տէր Ստեփանոսին, խնամ տանողին, լաւ պահողին և սաղմոս ասողին. ամէն։

Գ

162ա Տէր Աստուած... ողորմեա՛ մեղաւոր տէր Սաեփանոս գծողին, և սաղմոս ասողին, և լաւ պահողին, և խնամ տանողին. ամէն։

700

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5361 (1486 թ.)

ա

284ա Դարձեալ յիշեցէք... մաղդսի տէր Խաչատուրին, և իւր հօրեղբոր որդոց տէր Սարգսին ու Պապոյին և Սուլտաշին, Սիրունին, որ տուն մի արին ժամատան, յիշատակ հոգոյ իւրեանց և իւրեանց ծնողաց։

Դարձեալ տէր Սարգիսն նորոգեաց վերստին և արար ժամատուն, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց. Աստուած ողորմի ասացէք նոցա հոգւոյն. ամէն։

Ով որ հակառակի կամ այլ և այլ խօսի, թէ գեղական կամ տան ընդանի, նա զանէծք զԿայենին առցէ և զպատիժն զՅուդային և զխաչահանողացն. ամէն։

Դարձեալ յիշեցէք... Խլղաթին, Հօպոին, որ Կորտի արտ ոհվ արին ի վերայ Ս. Սարգսին. Աստուած ողորմի նոցա հոգոյն. ամէն։

Թվին ՌՁԱ (1632)։

բ

283ա Դարձեալ յիշեցէք... տէր Ստեփանոսին, որ նորոգեաց զՍ. Սարգիսն, յիշատակ հոգւոյ իւրոյ, և իւր ծնաւղաց, հօրն՝ Թումին և մօր Մոչանին, և եղբօրն՝ Մարտիրոսին, և իւր որդոց տէր Սարգիսին և Պապոին, և ամենայն մերձաւորաց նոցին. ամէն։

[25] Էջի ձախ սյունակի մի մասը քայքայվել ընկել է, մնացած մասից կարելի է հասկանալ, որ գրիչը խնդրում է ձեռ-ը լավ պահել «թքոտ մատով մի՛ շրչէք» և նման պատվերներ։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք... տէր Ստեփանոսին, *և իւր կողակցին՝* Առուսին, *և իւր որդոյն՝ տէր* Խաչատրին, *և քրւերն՝* Թաւէզին *և* Քնքուշին, Թաթէոսին *և իւր կողակցին՝* Մանմուրին, *և որդոց* Սուլտաշին *և իւր կողակցին՝* Խանումին, Սիրունին *<և իւր կողակցին>, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացեք նոցա. ամէն։*

Դարձեալ յիշեցէք... Մարտիրոսին *և իւր կողակցին՝* Խումարին. *և դստերն՝* Առիանին *և* Մարգարտին, Ինախին, *լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք...։*

701

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Երևան, № 5589

Գրիչ՝ Զատիկ դպիր

ա

269բ *Աղաչեմ զքնարդ հնչման Հոգւոյն Սրբոյ զպսակ անուն* Զատիկ, *զի ընկալցիս զսակաւ գիծս ի հաճոյս քեզ և յիշեսցես զտառապեալ և զմեղաւոր անձն իմ ի սրբանուէր աղօթս քո...։*

բ

288ա *Աղաչեմ զամենեսեան թախանձանօք զտարտամ պիտակ անուն* Զատիկ *դպիրս յիշել ի Տէր և Տէր Աստուած որ առատն է՝ հատուսցէ ձեզ։*

գ

Գրիչ՝ Զաքնոն

303ա *Զանբաժս ի բարեաց և զանզեղջս ի չարեաց... զտարտամս և զըտրուպս ի մէջ բազմամփոխ եղբարց* Զաքնոյ *պիտակ անուն բանասեր յերեսս անկեալ լայցեմ զմի Տէր ողորմոյն չխնայել...։*

Թվին ՌՉԱ (1632)։

դ

307ա *Յանարժանս ամենայնի,*
Զի յիշելոյ չեմ արժանի,
Արժանացոյ մտօք բարի,
Զի Տէր ք[եզ] և մեզ ողորմեսցի,
Ստե[26] Զաքնոյ *մեռեալ ոգի։*

702

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5853. տե՛ս նաև ՁՁՎԼ, № 377, էջ 879—880. № 6333, էջ 77 ա, № 316

Գրիչ՝ Թումայ
Վայր՝ Դաշտ

ա

304ա *Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն պատուական տանուտէր* Յովսէփ, *որ ստացաւ զսա յիշատակ*

[26] Ձեռ-ում այդպես, սակայն «տ» տառի վրա հանելու նշան կա, ուրեմն կմնա «սեռ». դժվարանում ենք ասել, թե ի՞նչ է նշանակում։

իւր և ծնողաց իւրոց, հօր Խուրովին *և մօր* Վարդխաթունին, *եղբօրն՝* Անդոնին, *կողակցոյն՝* Ջումարին, *որդոցն՝* Խլդաթին, Շաղուաթին: *Աստուած լուսաւորէ զհոգի* Յովսեփին, *կողակցուն՝* Համբէկուն, *որդոցն՝* Խուրովին, *կողակցուն՝* Մարգարտին, Շնաճորին, *որդոյն՝* Հայրապետին, Ղազարին, Սարգսին. *դստերն՝* Մեղուշին. Յովանիսին, *կողակցոյն՝* Թուրուանդին, *որդոցն՝* Խաչատուրին, Կիրակոսին, Գրիգորին, Վարդանի-
304բ սին. *ամէն։ //... Արդ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ* Թումայի, *անիմաստ և ախմար գրչի, և իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան, և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, թէ յոտից մինչև ի գլուխ չիք առ-*
305ա *ողջութիւն, այլ ըստ կարի մերում, զոր//պարգևեաց մեզ մարդասէր Հոգին, բաղում աշխատեալ իմ, իմայ դրեցի անարժան ձեռօք իմօք յընգիր և յստոյգ յօրինակէ, կենօք տառապանօք։ Գրեցաւ*[27] *յերկիրս* Մոկաց, *ի գեղս, որ* Դաշտ *կոչի, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ հայրապետին և* Կեցնա[28] *Ս. Աւետարանին, ի թուականիս Հայոց ՌՁԱ (1632)ամին, ի դառնացեալ ժամանակիս, որ աշխարհս ի յաւերելն է առեր, ի կաթուղիկոսութեան տեառն* Ստեփանոսի Ախթամարցու, *զոր տէր Աստուած անբասիր կենօք պահեսցէ. ամէն։*

Ը

305բ *Դարձեալ յիշեցէք...* Յովսեփուն *և իւր ծնողացն, հօրն՝* Խուրովին *և մօրն՝* Վարդխաթունին, *քրւերցն՝* Բազին, Ջաղին, Խաթուջանին, *կողակցոյն՝* Ոսկոյին, Համբէկուն, *դստերացն՝* Խաթունջանին, Խանումին, Թարուիղին, Թուրուանդին, *որդոցն՝* Խուրովին, *կողակցուն՝* Մարգարտին, Շնաճորին, *որդոյն՝* Իշխանին, Ղազարին, Սարգսին, Հայրապետին, Մեղուշին, Յովանիսին, *կողակցուն՝* Թուրուանդին, *որդոցն՝* Խաչատուրին, Կիրակոսին, Գրիգորին, Վարդանիսին Մուղալին, Յարոնին, Պարսամին, Անառնին, *կողակցուն՝* Ջումարին, *որդոցն՝* Ղարիպջանին, Շաղուաթին, Մբյէլրյին, Գրիգորին, Խլդաթին, Շաղուաթին, *դստերացն՝* Մեղուշին, Ջանաղին, Վարդխաթունին, *մեծի և փոքու, կենդանեաց և հանգուցելոց առ հասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր...։*

Գ

300ա *Դարձեալ յիշեցէք...* Անտոնին *և իւր յետին ամուսնոյն՝* Հանգանդոյն. *ամէն,* Շայումին, Ղրմզին *և* Թուրանդին *և միուս* Թուրանդին. *ամէն։*

703

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6290 (1295 թ.)

Հետ. ստացող՝ Պապունէ

Վայր՝ Փաշիվանք

337ա *Արդ՝ վերջին ըստացող սբ. Աւետարանիս* Տրփրխիսցի *սառաջի որդի* Պապունէս *գնեցի զսբ. Աւետարանս ի հալալ յարթեանց իմոց, յի-*

[27] *Այստեղից մինչև ա հիշատակարանի վերջը տե՛ս նաև* Ղ. Փիրզալիմյան, *Նշխարք, հտ. Բ, № 504, էջ 421, նույնի հտ. Ա, № 738, էջ 206 ա։*

[28] *Կեցան՝ Վանի գավառներից, Կարճկանից հարավ-արևմուտք։*

շատակ ինձ և կողակցուն իմոյ՝ Շահիսուլթանին, *և զաւակին մերոյ դեռաբուսիկ և նորաբողբոջ* Նազարին *և ծնաւղացն իմոյ, հաւրն իմոյ՝* Սաւղրոյին *և մաւրն իմոյ՝* Շահիսուլթանին, *և ամենայն յարեան մերձաւորաց իմոց. ամէն։ Ո՛վ դասք քահանայից և երամք վարդապետաց, որք հանդիպիք ի սբ. Աւետարանիս մէկ բերան ողորմի ասեք, և Աստուած ձեզ ողորմի ի միւս անգամ գալստեան. ամէն. ի թվին Հայոց ՌՁԱ (1632)։*

Յիշատակ է ի դուռն Փաշիվանից *Ս. Աստուածածին, և ընդ հովանեաւ Ամենայն Փրկչին և Ս. Կիրակէին, ի ձեռն դէտ* Մկրտիչին *և* Տէրտէրանց *ամենայնի. ամէն։*

704
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6369 (ժամանակ ?)

ա

298ա *///... ես առաւել Աստուած ողորմի ասացէք ըռէս* Սահակին, *և հորըն՝* Յոհանէսին *և մորն՝* Նսէֆին, *և որդոցն՝* Յոհանիսին, Յակոբին *և* Սարգսին, Աբրահամին *և* Թարխանին, *որ նորոգեաց զսբ. Աւետարանս անջինջ յիշատակ իւրն և իւր ննջեցելոցն. ի թուականութեանս Հայոց Ռ և ՁԱ (1632)։ Աստուած* զՍահակն *և զիւր որդին անսասան կենաց պահէ. ամէն։*

բ

պահպանակ Բ

Զվերջին նորոգ[ող] զՍահակն, *զհայր* զՅոհանէս, *զմայր* զՆսէֆ. *զկողակիցք* զՀոռոմն *և* զՅամանս, *զորդին՝* զՅակոբ *և* զԱբրահամն, *զդուստրն՝* զՇաղգադէն, զՍարգիսն, *զեղբայր* զՀայրապետն, *զկողակիցն՝* զԱգիզն, զՇիրամն, Միրամն, զԲաղդասարն, զԱփտս զՀամբէկին, Բկիսխան, զԼարիպն, Նուրամիր, զԴօլվեթն, *զքուրն՝* զԴօզալն: *Ծ[ա]ս առօել զգեղի տանուտէրք, որ կամակից եղեն՝* զՀազարբէկն, զԿարապետն, զԱմիրազէն, Զիրամն, զՌոնիշան, զէթար, զՍմբատն, *զքահանայքն՝ զտէր* Մարգարէն, Սարգիսն *և զմիւս* Սարգիսն *զ*[29]

705
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 7529 (1826 թ.)

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր Կաֆա

142ա *Ի թվին ՌՁԱ (1632) ես՝ անարժան* Գրիգոր *էրէցս* Թոքտին *ելայ ի* Կաֆան *եկի. Տալվաթ սուլթան վերացու։*

[29] *Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։*

706
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7646

Վայր՝ Թրլանճ

288ա Փառք...։ // Գրեցաւ սբ. Աւետարանս ի Թրլականիս Հայոց ՌՉԱ (1632) ամի[30], ի գաւառս Կարնոյ, որ է Առզրում, և յանուանի գեղս որ կոչի Թրլանճ, ի դուռս Գանձկայ Ս. Գէորգայ և Տիրամայր Ս. Աստուածածնիս, և ատենահաս Ս. Սարգսիս, և այլ սրբոցս որ աստ կան հաւաքեալ. ի հայրապետութիւն սբ. Էջմիածնա[յ] տէր Մելիքսեթ կաթողիկոսին, և առաջնորդ տեղոյս Սաճակ արհի եպիսկոպոսին և միաբանից սորա, և զՄինաս նորընծա բաբունապետս մեր, որ ասի դասս Հին և Նոր Կտակարանաց. ամէն։

707
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 8195 (ԺՉ դար)

Կազմող՝ Սարգիս

Վայր՝ Սարաճուխ

ա

285բ Զվերստին կազմող սբ. Աւետարանիս զմեղաւոր և զանարժան Պալխաւրցի Սարգիսս յիշեցէք ի Տէր. ամէն։

բ

Այլ և յիշեցէք ի Քրիստոս զՎաճանշէնցի Տաւուրին որդին՝ Մարգարն, և զիւր կողակիցն՝ Ագտիկն, և զհարազատ եղբայրն իւր՝ Զաքարն, որ ըստացաւ զսա հալալ ընչից իւրոց և ետ նորոգել զսբ. Աւետարանս, յիշատակ իւր ամենայն արեան մերձաւորացն։ Եւ է յիշատակ ի դիւղս, որ կոչի Սարաճուխ. և Աստուած յիշողացդ և յիշեցելոցդ ողորմեսցի իւր միւրսանգամ գալուստն. ամէն։

գ

286ա Կազմեցաւ սբ. մատեանս թվին ՌՉԱ (1632)։

708
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8575

Գրիչ, ստացող՝ Սարգիս աբեղայ

Վայր՝ Յամիք

ա

498բ Փառք...։
Որ ետ [տ]կար անձին,
Մարմնոյ ախտալին,

---

[30] Հայոց ՌՉԱ թվականի վրա ձեռ-ում նկատվում է ուղղման հետքեր։ Բացի դրանից 1632 թվականը և մի փոքր ներքև Մելիքսեթ կաթողիկոսի անվան հիշատակումը չեն համապատասխանում իրար, որովհետև վերջինս մահացել էր 1626 թ.։ Ձեռ-ը հավանաբար ընդօրինակվել է ՌՉԱ (1632) թվականից ավելի վաղ։

Ոգւոյ Նուաստին,
Ի բնէ տարագրին։
Ծայր ժամանակին,
Աւտար պանդխտին,
Անկար ականին,
Դողդոջմամ[ր] զրին։
Ցիմով աւարտին,
Ի հագար թվին
Եւ ութսունին,
Եւ մէկ աւելին (1632)։
Սկիզբն լինին,
Նամիք քաղաքին,
Յեւս սոյն աւարտին։
Ի վայելս անձին իմ,
Սարգիս կրօնաւորին,
Յոյժ անարժանին։
Զի որք պատահին,
Եւ ըզմեզ յիշին,
Ի ողորմի ասին,
Կրօնաւոր Սարգսին,
Մեղապարտ անձին,
Եւ փծուն գրչին. ամէն։

Բ

132ա Գրչին Սարգիս անուն չաբեղային.
Խնդրեմ ի ձէնջ, որք պատահին,
Զաւելորդն բառնալ սորին,
Եւ լնուլ դարձեալ զնուազ թերին։
Անմեղադիր լինել արուեստին,
Զի կար մեր այսքան էին,
Նաև հայցել մեզ թողութիւն,
Ի բարերար Տեառնէ վերին,
Զի և ձերն թողեալ լիցին,
Ի յաներեկ օրն վերջին. ամէն։

709

ՄԱՇՏՈՑ

ՏԵՐԱՎԴ, № 101 (ԺԵ դար ?)

172ա Զվերջին ստացող Մաշտոցիս զտէր Ագարէին, որ ետ կազմել յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հաւրն՝ տէր Ներսէսին, և մօրն՝ հանգուցեալ ի Քրիստոս, և կողակցին՝ Մարիամին, և որդոյն՝ Ներսէսին, և դստերացն՝ Մարիոսին, Եղիսաբեթին, և եղբօրն իւրոյ՝ հանգուցեալ ի Քրիստոս, Անանիին։ Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և Աստուած մեզ և ձեզ ողորմեսցի միւսանգամ իւր գալստեանն, ամէն։

Թվին ՌՁԱ (1632) կազմեցաւ։

710
ՃԱՇՈՑ

ՊՊԹ, № Ր88[31] (1438 թ.). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 737, էջ 205բ—206ա

Նորոգող՝ Պարսամ աբեղայ
Վայր՝ Վարագ

Նորոգեցաւ սբ. գիրքս ձեռամբ Պարսամ *աբեղայի, ի սբ. ուխտս* Վարագ, *ընդ հովանեաւ Աւագ Ս. Նշանին, ի յառաջնորդութիւն* Մարտիրոս *վարդապետի, ի թուականութեանս Հայոց տօմարի Ռ և ՁԱ (1632) ամի, ի խնդրոյ հաւատարիմ և աստուածասէր տանուտերոջն՝ ուսթայ* Սարգսին, *որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղ[աց] իւրոց և կողակցոյն իւրոյ՝* Շանբէկին, *և որդոցն՝* Խաչատուրին, *կողակցոյն՝* Գուլճասին, Մարգրտին, *դստերն՝* Վարդիաթունին. Նուրիշանին, *կողակցոյն՝* Շանդարին /// *կողակցոյն՝* Շուշանին, *որդոյն՝* Կարապետին, Յակոբին, Աւետիսին, Սուլթանին, Դուլկէն, Շաղկէն, Շաղուպաթին, Խանումին, Յակոբին, Մինէին, Անանին, Հոռոմին *և ամենան արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն...։*

711
ՃԱՇՈՑ

ՄԻՆՋ, № 127[32]

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

136 *...Ողորմեա՛ ստացողի գրոցս խաւճա* Պետրոսին, *և ծնաւղացն՝* Վէլիջանին *և* Շուշանին, *և եղբարցն՝* Մանասին, Ջղուանին, Սուրիասին, *և կողակցին՝* Աննայէ, *և որդոցն՝* Պօղոսին, Մանասին, Յովհաննիսին, *և դստերացն ամենեցուն. ամէն։*

137 *Նաև տառապեալ ոգւոյն և փծուն գրչի* Ստեփաննոս *ևեթ անուամբի, և վարդապետին ընտրեալն ի բաղմաց և գովեալն ի բնաւից, գլուխ եկեղեցոյ և յառաջ Երգս երգոց պաշտաման, վարդ կարմրերփեան ի մէջ բուրաստանի, արևելեան ճառագայթն՝ զտէր* Խաչատուր *վարդապետն. ամէն[33]։*

բ

Փառք...։ Անուշահոտ բուրաստանիս ի խնդիր եղալ պարոն խաւճա Պետրոսն, *աղաչեմ յիշել զինքն և ղծնաւղսն իւր՝* Վէլիջանն, Շուշանն, *և կողակիցն՝* Անայի, *և զորդին, քրիստոսադաւան և մեծահաւատ պարոն* Պօղոսն, Մինասն, Յովանէսն, *և զդուստրն իւր՝* Հռիփսիմին, Մարիամն, Շուշանծաղիկն, *և զհանգուցեալ որդիքն՝* Հայրապետն, Յովհաննէսն, Սա-

[31] *Ցուցակում №-ը սխալմամբ նշված է 288։*

[32] *Ցուցակում այս ձեռ-ի ա և բ հիշատակարանները դրված են առանձին №№-ի՝ 127, 128 տակ։ Քանի որ գրիչը և ստացողը միևնույն անձնավորություններն են և ձեռագիրն էլ ճաշոց, եղած հիշատակարանները գրեցինք մի տեղ։*

[33] *Նման և խիստ համառոտ երկու հիշատակարան էլ տե՛ս Ցուցակում, չվերցրինք։*

ճակն, և զհանգուցեալ դստերքն իւր՝ Ոսկին, Հռիփսիմի[ն], և զմիւս Ոսկին, Շուշանծաղիկն, և այլ ամենայն մերձաւորսն, կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք զվերոյգրեալսն...։

138 Ո՛վ հրաշագործող ամենայնի տէր Քրիստոս, գթա ի հոգի ստացողի դրոցս շեխական փառաւք և բարգաւաճեալ մեծութեամբ և սաղարթիւք փաղախեալ խաւճա Պետրոսին, և կողակցին՝ Աննայէ, և որդացն, և դստերացն, և ծնաւղացն, և եղբարցն՝ Կիրակոսին, և հանգուցեալ եղբարցն՝ Սուքիասին, Մանասին, զՎանէ, և քեռքն իւր՝ Մարիամն, Մարտանէն, Գայիանէն։ Արդ՝ աղաչանս մատուցանեմք ի սրբասնեալ լսելիս ձեր, յիշմամբ արժան առնէք զխաւճա Պետրոսն, որ փափագանաւ ետ գրել զանառիկ մեծութիւն զպայծառութիւն սրբոյ եկեղեցոյ։

Քանզի ունի սա զբոլոր մասունս տաւնից տէրունականաց, զոր սբ. հարքն հաստատեցին, զընթերցուածն զոր սբ. Յակովբոս եղբայր Տեառն և Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետն հաստատեցին։ Կայ ի մէջ սորա զԴաւթեան նուագն, գործովքն հանդերձ և Կաթուղիկէից թղթովքն և բուն Աւետարանեաւն, և զՏաւնանամակս սրբոց առաքելոց, և մարգարէից, և մարտիրոսաց, հայրապետաց, կուսանաց, ճգնաւորաց, որ ունի ընդ ինքեանս միաւորեալ զմեծ մարգարէութիւնն Եսայեա, և զփողն տարսոնեցի, բազում շարշարանաւք և տաժանմամբ միաւորեալ յաղագս պայծառայութեան սրբոյ եկեղեցւոյ և հեշտութեան ընթերցողաց։

[Ա]րդ՝ ես անպիտան և անիմաստ գրիչս Ստեփաննոսս ողորմութեամբ Տեառն սկսա և նախախնամութեամբ նորին կատարեցի ի գաւառս Ճուղայ, որ է հոյակ[ապ] և ի նշանաւոր գեօղ, ի քաղաքս Շաւղ, որ կոչի Ասպահան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի թվականութեան Հայոց ՌՁԱ (1632), ի հայրապետութեան տեառն Մովսէսի, արհի եպիսկոպոսութեան տէր Խաչատուր հիաձայն վարդապետի, և թագաւորութեան Պարսից շահ Սէֆուն, և իշխանութեանն մերոյ գեաւղիս խաւճա Նաղարին և տանուտէր Աղազարին, Աստուած ամենեքեան անփորձ պահեսցէ. ամէն։

Դարձեալ աղաչեմ, յիշել ի Տէր զդիտապետ և զքաշ և հովուապետ զտէր Սարգիս աւագ քահանայն, որ յորդորիչ եղև յայսմ բարութեանցս ևթնապատիկ հատուցցէ Տէր զվարձս իւր՝ ի ծոցս իւր. ամէն։

Դարձեալ յերեսս անգեալ և արտասուալից գիմաւք և հառաչմամբ սրտիւ առ ոտս անգեալ համբուրեմ զգարշապարս ձեր, ես անարժան գծագրողս Ստեփաննոսս, յիշել ի սբ. յաղաւթս ձեր զծնաւղսն իմ՝ զՄարտիրոսն և զմայրն իմ՝ զՍալթան, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ։ Այլ և սխալանաց և խոշորութեան գրոցս անմեղադիր լերուք, զի կարն մեր այս չափ էր։

Կրկին անգամ աղաչեմ յիշել ի Տէր զերախտաւոր զուսուցիչն իմ՝ զտէր Խաչատուր եւթնասուն վարդապետն, Աստուած զինքն ընդ երկայն աւուրս պահեսցէ անսասան կենաւք. ամէն։

Դարձեալ աղաչեմ, յիշել ի Տէր զպատուական որդին իմ և քարտուղար աշակերտս զԳրիգոր անուն արթունն, Աստուած անփորձ պահէ. ամէն։ Դարձեալ աղաչեմ, յիշել ի Տէր զխաւշա Պետրոսն, որ ստացաւ

զսբ. դիրքս,՝ որ կոչի Տարեգիրք, մականունն Ճաշոց գիրք, և եդ իւր յաւիտենական յիշատակ, Աստուած իւր արժանիս արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զխաւեա Պետրոսն. և զծնաւղսն, և զեղբարսն, և զքեռոսն, և զոքանչն՝ զՄարիամն. ամէն։

գ

Դարձեալ յիշեցէք զխաւշա Պետրոսն, և զպապն իւր՝ Ազիշանն, և զհանիկն իւր՝ Գայիանէն, և հաւրեղբայրն՝ Նուրիջանն, յիշեցէք...։

712
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 113

Գրիչ՝ Ոսկան քահանայ
Վայր՝ (Նոր) Ջուղայ

161 [Ա]ւրհնութիւն, գոհութիւն...։ Որո[յ] ցանկացող եղեալ զսբ. Աւետարանիս պատուական այր Ուտուստակէսն ի հալալ արդեանց, բարի յիշատակ իւրն, և ծնաւղաց իւրոց, և կողակցին՝ Խաթունին, և որդոցն իմոց՝ Աղաբաբին, և կենակեցին՝ Թիրվանդին, և դստերաց իմոց Եղիսաբեթին, Մարիամին, Դիլբարին, և հանգուցեալ որդոցն՝ Աստֆելին, Խաչատուրին, Հոռմսիմին, Գայրիանին, և ծնաւղացն իմոց՝ Վարթիկին, Թանկազիրին, Յովանիսին, Դիլբարին, իւր որդոցն՝ Թարդուլուն, պարոն Վարդին։ Եւ ես՝ անպիտանս յամենայնի և մեղուցեալ գրիչս Ոսկան սուտանուն քահանայ, տեսի զեռափափագ զսէր ե. զչան Ուտուստակիսին, զոր ունէր հետ սբ. Աւետարանիս, ձեռնարկեալ գրեցի զսբ. Աւետարանս ի քաղաքս Շաւշ որ է Սպահան, ընդ հովանեաւ ամենամաքուր Սբ. Աստուածածնին և պատերազմի Սբ. Նշանիս, ի քաղաքն Ըսպահան, ի[34] մէջ Ջուղայիս, ի կաթողիկոսութիւն տէր Մովսիսի, ի հայրապետութիւն Հայոցս հոգիահեղ և առաքելաշնորհ հայրապետիս մերո[յ]
162 տէր Խաչատուրին, ի յաշխարհակալութիւն շահ Սաֆոյն, թվականիս // մերոյ ՌՁԱ (1632) ամի։ Արդ՝ որք հանդիպիք սբ. Աւետարանիս տեսութիւն կամ ընթեռնելով կամ աւրինակելով, յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր և լի բերանով ասացէք Աստուած ողորմի։ Եւ դարձեալ յիշեցէք զգծող սուտանուն Ոսկանս, որ է ունայն քահանայ, և զուսուցիչն իմ Ըստեփաննոս քահանայն, և զծնաւղսն իմ՝ Վարդազարն, Թիլենփաշէն, և քուերացս իմոց՝ Ղասամղուբլին, Բաջին, և ամենայն արեան մերձաւորացն իմոց, և լի սրտիւ ասացէք Աստուած ողորմի, և Աստուած զձեզ յիշէ ի գալստեան իւրում։ Եւ դարձեալ յիշեցէք զԳրիգորն, զորդին իւր՝ Ենգիբարն, և զքոյրն իմ՝ Խոնարին։

713
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, 127 (ԺԵ դար)

176 Փառք...։ Արդ՝ աղաչեմ զձեզ եղբարք, սրտի մտաւք զվերջին ստացաւղ այսմ կտակիս, որ էր սա ի ձեռն Իսմայելացւոց, վասն հոգւոյս

[34] Տպված «էջ»։

փրկութեան իմոյ և յամենայն արեան մերձաւորացն, Աւետիքին, և իմ կողակցին, հաւրն իմոյ՝ Միրզավէլիին. և մաւրն իմոյ՝ Մարգարիտին, եղբարցս Պետրոսին և Աստուածատուրին. և քրւերցս Սապաիին և Թագուհին: Գնեցի թվին ՌՁԱ (1632), և ետու յիշատակ[35]։

Եւ որ զմեզ հիշէ Հայր մեղայիս....։

714

ԱԻԵՏԱՐԱՆ

Rapp. Mac., XXII, № 67

Ծաղկող՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

155 Արդ՝ գրեցաւ ի Շօշ քաղաք, ձեռամբն Գասպար քահանային, սեաւ գիրն աւարտեցաւ, և բերեալ եղև ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ձեռամբ Լէճցի Յակոբ վարդապետին։ Եւ ես եղկելի Յոհան Հիզանցիս ստացա և աւարտեցի ըզկարմիր գիրն, զցանկն, զհամարարբառն, զծաղիկն ի սբ. յԵրուսաղէմ, ի թվին ՌՁԱ (1632), ի հայրապետութեան սբ. Երուսաղէմայ աթոռոյս Ս. Յակոբա[յ] տեառնեղբօրն տէր Գրիգոր հայրապետին։

Արդ՝ որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և սխալանացն ա[ն]մեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Ուստի տեսեալ <զտր> այս անճառ փրկա[գոր]ծութեան խորհուրդ՝ բարի և հաւատարիմ տէր Աստուածատուր Ուրհայեցի լուսարար սբ. Երուսաղէմայ գլխատանս Ս. Յակոբա[յ] որդոյն Զեբեդեա եղբօրն սբ. Յոհաննէս ա[ւե]տարանչին, զոր և սա եռափափաք սիրով յօժար կամօք և սերտ հաւատով ցանկացաւղ եղեալ այսմ ծաղկաւէտ և վարդափթիթ, կենսաբուխ սբ. Աւետարանիս։

715

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՅՁՎՍ, I, № 52 (1630 թ.)

206 Թվական[իս] ՌՁԱ (1632) Յիսոյ Էրէց Զիրիսչոյ գա յէջմիածին:

716

ԱԻԵՏԱՐԱՆ

ՔՅԶՁՎ, № 21 (ժամանակ ?)

39 Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ո՛վ հոգևոր հայր քահանայք, կարդացէք և Աստուած ողորմի ասացէք, ուստայ Ամիրիանին և հայրն իւր՝ Մբսրին և մա[յ]րն՝ Մարդայն, և եղբա[յ]րն՝ Աբրահամին, որ փոխեցաւ առ Քրիստոս. ամէն։

---

35 Սույն ձեռ-ում գտնվում է նույն գերադաստանի երկու այլ հիշատակարաններ, տե՛ս 1652 և 1655 թվականների շարքում։

Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ստացաւղ սբ.
40 Աւետարանիս ուստայ Ամիրիան, // և կողակցին իւր՝ զՂարիպն, և զորդիքն իւր՝ Աբրահամն և զՄրսիրն, զԱկորն, ե զՍահակն, և Աստուած բարով վայելել տայ իւրեանցն. ամէն։

Դարձեալ յիշեցէք զուստայ Ամիրիանն, որ ետ հալալ վաստակոց ուրոց էառ սբ. Աւետարանն հոգոյ իւրեանցն, յիշատակ կենդանեաց և ննջեցելոցն. ամէն։ Ի թիւականութեան ՌՁԱ (1632), որ ետուր ի դուռն Ս. Յակոբայ ի գիւղս որ կոչի Սէղայվար. և ի տանուտէրն գեղիս ոէս Վարդիկն և քահանայութիւն տէր Գրիգորն, տէր Զագարայն, զտէր Աւետիքն, զտէր Թաթոսն և այլ միաբանեանցն, որ կամեցան զսբ. Աւետարանս ասել և յորդորել զբարիս, զվարձս իւրեանց Աստուած պարգեւեսցէ. ամէն։

717

ՄԱՇՏՈՑ

Մուրմար, I, № 73

Գրիչ՝ Նիկողայոս քահանայ
Վայր՝ Ղբսէ

69 Փառք..., որ ետ կարողութիւն տկարիս և անարժանի զառածելոյս մեղսասէրիս հասանել յաւարտ լուսազարդ սբ. գրոցս Մաշտոց կոչեցեալ, յօրինեալ և սահմանեալ հոգելի հոգևոր հօրն մերոյ՝ Մաշտոց վարդապետի, ի թուականիս Հայոց Ռ և ՁԱ (1632) ամին, ի գիւղ որ կոչի Ղբսէ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։ Ի հայրապետութեան Հայոց էջմիածնա[յ] տեառն Մովսէսի, որ ծաղկեալ է բարգաւաճեալ բնական, բանական և կրթական իմաստութեամբ, մանաւանդ կրկին նորոգող և լուսաւորող հայկազեան սեռիս որ համեմատ արթուն առաւել հեղինակին և նորին շնորհիւ պարգևեալ հոմանուանակցին պերճացոյց և փարթամացոյց զարշնատի մեղօք զառածեալ սեռս արէթածին, Արշակունի և Պահլաւունի վերաձայնեալ յայտնեալ ջոլիրս բազմախումբ ճամբարս, ուղղադաւան և սորեակահաւատ խաչապաշտ տոհմս։ Եւ մերոյս Աղթամարա[յ] տեառն Ստեփանոսի որ էբարձ զկրճիմն անհնազանդութեան, եղև հլու և հպատակ լուսանկար գրիգորաշէն սբ. էջմիածնայ և էառ օրհնութիւն Լուսաւորչին ի գլուխ իւր և ի ծոց... փոքրիկ հաւտին իւրոյ. որոյ յիշատակ օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք սբ. Լուսաւորչին նոր հնազանդեալ որդիացելոյս ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր, ամէն[36]։ Ո՛վ ընթերցողք լուսազարդ տառի, յորժամ կատարէք.... տառիս և զմիակ խորհուրդ որ ծրեալ է ընտկիտս այս սբ. ... յիշեցէք ի յերկնաբացիկ յաղօթս ձեր զտէր Իգնատիոս Հիզանցին, որ ոչ ժամանեաց աւարտելոյ սորա, այլ փոխեցաւ առ Քրիստոս, ի յոյսն ամենայնս դասեսցէ տէր Աստուած զհոգի նորա ի դասս աջակողմեան. ամէն։

Այլ և.... զմեղօք տատամսեալ .... և ողորմի Նիկողաս[յ]ոս, որ ունիմ զկարգ քահանայութեան, բայց հեռացեալ և տարակացեալ եմ ի-

[36] Մինչև այստեղ մի փոքր համառոտ տե՛ս նաև Ն. Ակինյան, Մովսէս Դ Տաթևացի, էջ 244։

բաւ և ընտիր գործոց, զի եմ տիօք մանուկ և նախանձիմ և ոչ ախորժելեացն Աստուծոյ, բայց յուսամ ի ամէնազօր Աստուած, նա որ հանապազ մեղաւորաց զարձ կամի ըստ իւր անսուտ հրամանին, թէ կամիմ, զի ամէնեքեան կեցցեն և գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն, սերմանեսցեն շնորհս հոգևոր ի յառանձնակի խորհրդակիր սենեակս և ցանցիւ Աւետարանի իւրոյ և յանգնդական խորասոյզ տղմային գարշահոտ վիհէ հանցէ առընթեր լուսապաճոյճ սրբազանից գնդին.... նաև զծնողքն իմ, զհայրն իմ՝ զՅովհաննէս և մայրն իմ՝ <և> զՄանուշակ. և զամենայն արեան մերձաւորս իմ՝ զկենդանիքս և զհանգուցեալքս յիշեցէք ի Քրիստոս Աստուած յիւր միւսանգամ գալուստն. ամէն։

Այլ և զստացող աստուածաբան և աստուածախօս սր. տառիս զբարեմիտ և զուղղագաւան զտէր Աստուածատուր և զտէր Վրդանէս....։

718
ՇԱՐԱԿՆՈՑ
Մուրմար, II, № 88 (ժամանակ ?)

Հետ. ստացող՝ Դաւիթ

161 Եւ դարձեալ զստացող գրոյս զԴաւիթն յիշեցէք ի թվին Հայոց ՌՁԱ (1632) ի փառս Քրիստոսի. ամէն։

719
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՅՑ
Վատիկանի գրադարան, № 80

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

169 Եւ արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս և աստուածաբան կտակս և խնկալի տուփս.... որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ բազմամեղ և անիմաստ գրչի Յոհան Հիզանցոյ: Գրեցաւ ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբա[յ] գլխատանըս, ի թվին ՌՁ (1631), ի յառաջնորդութեան սր. աթոռոյս տէր Գրիգոր հայրապետին։ Արդ՝ ցանկացաւղ եղեալ սմա մահդասի Կիրակոս երէցն, որ ստացաւ զցանկալի բուրաստանս, յիշատակ հոգւոյ իւրոյ, ծնաւղացն՝ Միքայէլին և Ալբընին, և եղբարցն և ամենայն արեանառու մերձաւորացն...։

Դարձեալ յիշեսջիք զուսուցանողն իմ զՄինաս սրբասնունդ կրաւնաւորն, որ բազում աշխատանք ունի ի վերայ իմ ի յուսուցանելն զիս, որոց թողցէ Քրիստոս զյանցանս իւր. ամէն։ Ով ոք իշխանութիւն չունի ծախելու կամ գրաւելոյ, թէ յիմոցն և թէ յօտարացն, զկնի փոխելոյ իմոյ մարմնաւոր կենացն, վայելեսցէ զսա եղբայր իմ հարազատ Խաչատուր, կրաւնաւորն, և այլ ոք մի՛ յիշխեսցէ ձեռնամուխ լինելոյ սմա, եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի. ամէն.

Բ

Գրիչ՝ Ներսէս

Զմեղապարտ Ներսէս գրիչ[ս] յիշ[եսչիք]։

Գ

Այլ և յիշեսչիք ի մաքրափայլ յաղաւթս գվերոյ գրեալ յիշատակեալքս ի սմա զԿիրակոս երէցն, որ բաղում փափագանաւք ետ գրել զընտիր աւրինակ Տօնացոյցն ի մէջ Շարակնոցիս, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ գաղափարաւ, յիշեսչիք ի տէր մեր Քրիստոս զյիշատակեալս ի սմա, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ...։ Թվին ՌՁԱ (1632)։

720

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Զմմառ, № 451

Ստացող՝ Յովհաննէս Ջուղայեցի

Վայր՝ (Նոր) Ջուղայ

Ա

49 Թվին ՌՁԱ (1632), ֆռանգի 1632։ Փառք...։ Արդ դրեցս աստուածային բիւրաստանս որ կոչի Աշխարհացուց և Աւրպելեանց և այլ բազում պատմութիւն սրբոց հաւաքեալ կայ ի սմա, որպէս զծաղիկս ի բազմաց ժողովեալ և եդեալ այստ։ Եւ ես՝ Յովհաննէս Ջուղայեցիս ստացայ ի նախնեացն Յովանէս արեղային, զոր բաղում ջանքով գրչագրաց ի Շուշ քաղաքիս, որ է Ըսպահան, ի գ[ե]աւղս Ջողա։ Եւ յիշատակ ծընաւղաց իմոց Ծատուրին, Խանզատէ։ Դարձեալ յիշեցէք ի թափուր գործոց և բարեաց յինան Յովանէս և զկողակիցն իւր զՓաշայքէկն։ Տէր Աստուած բարով վայելել տացէ...։

Բ

Ողորմեա՛ Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս Յովանէս արեղային և ծնողացն, հօրն՝ տէր Գրիգորին և մօրն՝ Թուրուանդին և եղբարցն՝ տէր Յոհանիսին, տէր Յակոբին, և միւս եղբորցն իմոց, որ հանգուցեալ են առ Քրիստոս՝ Զաւրեսպն, Ղարէն, Կիրակոսն, որ սրախոյխոյ եղեալ ի յազգէն Նետողաց։ Եւ Այտիշէն յիշեցէք ի Քրիստոս...։

721

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅՁՀՍ, № 1. տե՛ս նաև «Արևելեան մամուլ», 1908 թ., էջ 634—635, «Բազմավէպ» 1933 թ., էջ 157—158, «Սիոն» 1933 թ., Ա, էջ 25, «ՀԱ», 1933 թ., էջ 319—320

Գրիչ՝ Աստուածատուր

Վայր՝ Հալապ

Ա

3 Փառք...

Տնաւրինականաւ մագաղաթի,

Շեշտիւ կետիւն փանփիւնի.

Լիակատար է բանքս իսմի,

Գծագրեալ ստոյգ աւրինակի։
Ըստ յաբեթեանն Ռ-ի
Յարաբարթեալ Ձ մի (1632)
Աւետարան սրբաղ[ա]նի,
Ստացաւ զտառս քառանկիւնի։
Իշխան Պետրոս ինքն յորջորջեր,
Եւ մաքսապետ վ[ե]րաձայնի,
Եդ յիշատակ անշնշելի,
Ի Բերիայ քաղաքն Հալապի։
Ընդ հովանեաւ Ս. Քառասնից,
Եւ բարձրաշէն աստիճանի,
Զարդ սեղանոյն աստուածայնի,
Զի պրաւղումէ սովաւ կատարի։
Արդ՝ հայցեմ աղերսալի,
Թողցէք զպարտսն ստացողի,
Եւ ծնողացն հանգելի,
Մահղասի Ղարկաւզ որ և ասի։
Այլ ես մայրն է մահդասի,
Որ Վարդիաքուն վերայձայնի,
Ձկենակիցն ի մի վայրի,
Եւ ամենայն առ ու զամմի։
Պարգևառատ Տէրն ամէնի,
Ձեզ յիշողացդ ողորմեսցի,
Եւ մեզ յիշելոցս ողորմեսցի,
Եւ միահամուռ գթացեալ լիցի։
Ամէն և է՝ և եղիցի. ամէն։

Այլ ևս երես անկեալ աղաչեմ զհանդիպող սբ. մատենիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյ գրեալ ստացող սորայ զխոճայ Պետրոսըն, և զկենակիցն, և զծնաւղսն, եւ զամենայն արու զարմսն յիշել ի Քրիստոս. որ եդ աստուազարդ մատեանս յիշատակ ի մայրաքաղաքն ի Հալապ, ի դուռն Ս. Քառասունք եկեղեցոյս։ Եւ չունի ոք իշխանութիւն հանել զսա ի դրանէ Ս. Քառասունք եկեղեցոյս գողանալով և կամ պատկերքի ոսկիազարդ թղթիս և թփիս կաբեն տղայաբարու դիմօք յանդքնելով. և ոչ գիտեն թէ Աստուած զայն<դ>պիսիսն ընդ մէջ կտրիցէ և զմասն նոցա ընդ անհաւատսն դիցէ, և լաւ պահողաց և խնամ տանողացն՝ ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Բ

...և յիշատակ գրիչս Ասվածատուր. ամէն։

722

ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄՅԶԵՊ, V, № 1541 (ԺԷ դար)

301 ՌՁԱ (1632) թվին Լեհաց երկիր մարդոյ խաշանց մահ անկեր է. նա Աստուածոյ քուֆր է տուեր, թէ երբ կու սպանես նա, եկ և կեր։ Աստուած

նմա պատուհաս կու տա, որ ինքն շուն կու լինի և դսատկած խաշինս կուտէ[37]։

723
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

«Ռիւզանդիոն», 1897 թ. դեկտ. 20/1 հունվար 1898 թ.

Գրիչ՝ Անտոն Քահանայ
Վայր՝ Քէօթահեա

[Փառք...։ Արդ՝ գրեցաւ ի թուին Հայոց ՌՁԱ (1632), ի Քէօթահիա, ձեռամբ Անտոն քահանայի][38], Խիստ շանիւ աշխատեցայ և զթ (9) խորանն, և զփոկերնն, և զտնօրինականքն, և զցրուածաղիկքն, զերկաթագիրն, և զտնեբուն առաջքն զանազան հանեցի, ի խնդրոյ հօրս իմոյ տէր Աստուածատուրին։

724
ԱՒԵՏԱՐԱՆ

«ՀԱ», 1933 թ., էջ 326

Վայր՝ Հալապ

Փառք...։
Բարեհամ նիւթոյս նա զովասցի,
Սորա ցանկաց ըղձմամբ սրտի,
Եւ ստացաւ նահանգն Կարնի։
ՌՁԱ (1632) թուականի,
Վերաձայնեալ Սանոս Զալապի,
Եւ կենակցոյն իւրոյ ի նմի.
Որ են տեղաւ հալապեցի։
Նաև որդոյն ընթերցողի,
Իսկանդար Զալապի վերաձայնի,
Եւ ծնողացն մահդասի,
Որ Ղարակաւզ անուանի,
Քանզի և մայրն է մահդասի,
Որ Վարդխաթուն վերաձայնի։
Եդ յիշատակ անանցելի,
Իւր իւրայնոցն ամենայնի,
Եւ միաբան արու զարմի,
Եւ որ փափակէ ողորմայի։
Փոխեցելոյն ի տար երկրի,
Ըղձիւ աս[ա]ցէք Տէրն ողորմի,
Մայրաքաղաքն ի Բեռայի,
Յայժմիկ Հալապ հռչակեալ լինի,

[37] Այս տեղեկությունը հաղորդում է նաև Գրիգոր Վարաղեցին իր ժամանակագրության մեջ (տե՛ս Մծ, II, էջ 283)։

[38] Ուղղանկյուն փակագծերում եղածը վերցրել ենք հոդվածագրի՝ Կոստինայի հոգևոր առաջնորդ Մկրտիչ եպիս. Աղավնունու տեղեկություններից։

Զի և ի դուռն Ս. Քառասնի,
Քանդ[ակ]եալ եդաւ յիշատակ ամենայնի։
Արդ՝ աղաչեմ ընթերցողդ ամենի,
Արժան առնէք յիշման սրտի,
Զոր և գթած Տէրն ամենի,
Զեղ յիշողացդ ողորմեսցի[39]....

725
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Աղավնունի, Այցելուք, էջ 50

Նվիրատու՝ Բարսեղ Արծրունի

Ես՝ Բարսեղ նուաստ անուամբ Լեթ վարդապետ, սեփական կայիւ Արծրունի, ի գեղջէն Մարմանդու, վերատեսուչ վանացն Ղաղարու յորջորջեալ Մշու Ս. Առաքելք, և առաջնորդ մայրաքաղաքին Համբայ, յամի Ռ-երրորդի ՁԱ (1632) թուին եկի ի սբ. և աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, և բերեալ եղի ղսբ. աստուածային Աստուածաշունչ գիրքս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի Ս. Յակոբ և ի Ս. Յարութիւն, յորում ժամանակի էր աթոռակալ և առաջնորդ տէր Գրիգոր արքեպիսկոպոս սբ. Երուսաղեմայ։

726
ՇԱՐԱԿՆՈՑ

Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Բ

Վայր՝ Տումարզա

1869 ... Հասանիլ ի վերջին գիծ Շարականիս, ի գաւառն Կեսարու // Կապաթովկացւոց, ի գիւղն Տումարզա, ընդ հովանեաւ Ա. Պետրոսի և Պաւղոսի եկեղեցւոյս... ի թվին ՌՁԱ (1632), ի հայրապետութեան սբ. էջմիածնայ տեառն Մովսէսի կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի յառաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարու Գրիգոր վարդապետի, որ իբրև զանջիջանելի ջահ վառեալ է ի պայծառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, և ի յառաջնորդութեան սբ. ուխտիս մերոյ Աստուածածնայ Առաքել աբեղայի...։

[39] Հոդվածագիր Ն. Ակինյանը սույն հիշատակարանը վերցրել է Տ. Պալյանի ծուցակ հայ. ձեռ. ի Թուրքիա (հտ. Ա, տետր Բ, 1893) աշխատությունից, որը մենք ձեռք բերել չկարողացանք։

727
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑՆ

Երևան, № 1269 (ԺԴ դար)

Հետ. ստացող՝ Արիստակէս Խարբերդցի

211ա Փառք..., որ և ես Արիստակէս վարդապետ Խարբերդցի ի վաղուց հետէ եռափափաք սիրով տենչայի զտանել զԵրկոտասան մարգարէիցն մեկնութիւնն, զոր արարեալ է եռամեծին սրբոյն Վարդանայ վարդապետին։ Արդ՝ տամ բիւրապատիկ գոհութիւն Աստուծոյ, որ ըստ մարդասիրութեան իւրոյ ելից զխնդրուածս իմ և ետ զհայցուածս իմ, որ և ես ստացա զսա յիշատակ ինձ և ծնօղացն իմոց՝ տէր Կիրակոսին և Հռեփսիմէ, որ մականուն Կուլֆան կոչի։ Եւ ետու վերստին նորոգել և կազմել զսա Սեբաստացի մահդասի Մելքոն դպրի և քարտողարի, որոյ ողորմեսցի Տէր։ Արդ՝ երես անկեալ արտասուալից մաղթանաւք և մեծաւ յուսով աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոց կամ կարդայք կամ դաս ասէք մանկանց եկեղեցոյ կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաք[ր]ափայլ աղօթս ձեր զԱրիստակէս վարդապետս, և զհայրն իմ՝ զտէր Կիրակոս քահանայն, և զմայրն իմ՝ զՀռեփսիմէն միով Տէր ողորմեայիւ և Հայր մեր երկնսիւ։ Ընդ սոցին յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր և թողութիւն մեղաց հայցեցէք տէր Թաքէոս գրոց աշակերտին, որ բազումս աշխատեցաւ ընդ մեր վասն սբ. գրոցս, որ և զփոխարէնն ի գալստեանն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առցէ յանաշխատ կեանսն. ամէն։

Ի թվին Հայոց ՌՁԲ (1633) սահմի ամսոյ ի ԻԱ (21)[1] եղև վերստին նորոգումն սբ. գրոցս. ամէն։

728
ՇԱՐԱԿՆՈՑ

Մշեղ, V, № 1594 (1553 թ.)

386 Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ քրիստոնեայս, զՂաբլանն, և զհայրն իւր՝ զԿիրակոսն, և զմայրն իւր՝ զՂուտլուն, և զեղբայրն իւր՝ զՂազարն, զկողակիցն իւր՝ զՆազվարդն. և զԶարիֆն, զՇահումն և զայլ ազգատոհմն իւր, յիշեցէք..., որ էառ զՇարակնոցս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ։ Ով որ հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, լի բերանով Աստուած ողորմի ասացէք...։ Թվին ՌՁԲ (1633) ամին, /յուն[ուար?] ամիս ԺԵ (15) օրն։

[1] Հայոց ՌՁԲ թվականը սկսվում է 1632 թ. հոկտեմբերի 14-ից (հուլյան տոմարով)։ Այստեղից Հայոց ՌՁԲ թ. սահմի ամսի 21-ը կլինի 1633 թ. հունվարի 2-ին։

729
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2330

Հեղինակ՝ Դաւիթ Զեթունցի

ա

183ա *Յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր և ղյետնեալս ամենեցունց զ'Դաւիթ Էրէցս Զէթունցի. որ աշխատեցայ հետ բանական արհեստիս, այսինքն՝ քերականիս, զայնս որ առաջին քերթողաց ասացեալ էր և մեկնեալ պարզ, զայն ես երկուս բաժանեցի, այսինքն՝ ի հարցում և ի պատասխանիս, ի վարժումն մանկանց նորագունից, զի ի հարցանել միոյն, հարկ*

183բ *լինիցի միւսոյն տալ պատասխանի։ Որ վասն այնորիկ յօժարեսցին ուսանիլ և մի՛ հեղգասցին, իսկ ի տեղիս զերկարն որ ձանձրացուցանէր զընթերցող, զնա կարճեցի, և զկարճն։ որ զմիտս բանին պարզ, որ յայտնէր, զայն երկարեցի չափաւոր։ Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն ի կամս Հօր և արարչակից Հոգւոյն իւրոյ անբաւ յաւիտեանս. ամէն։*

Բ

Գրիչ՝ Ստեփանոս

195բ *Թողութիւն մեղաց շնորհեա՛ ստացողի տառիս մշկոցի և անպետ գրչիս* Ստեփանոսի[2]։

Գ

228բ *Թվին ՌՁԲ (1633) փետրվար Ը(8)։*

730
ԱՒԵՏԱՐԱՆ
Մեղեթ, VI, № 1951 (1302 թ.)

Գրիչ՝ Աւետիք
Վայր՝ Լով

518 *Գրեցաւ այս յիշատակարանս ձեռամբ* Նիկոլի *որդոյ պարոն* Աւետիքին, *ազատազնեա* Տօմաժիրուքեանց, *թվին Հայոց ՌՁԲ? (1633), փետրվարի ԺԹ (19), օրն շաբաթ*[3], *ի քաղաքն* Լով, *երես անկեալ աղաչեմ զձեզ, որդիք Աիովնի, որ զիս և զիմ կողակիցն՝* զԱննան *յիշեսջիք սբ. և մաքուր յաղօթս ձեր...։*

731
ԱՒԵՏԱՐԱՆ
Մագիստրոս, I № 1468 (ԺԵ դար)

954 *Այս սբ. Աւետարանս, որ* Յուսէին Ղուլին *որ գերութենէ եբեր տէր* Տիրատուրին *Էրէտ և ծախեց* Ջիթկերի *որդոյն ձեռաւքն* Տիրատրին. Պետրոսն, Ալիխանի *միրն մէջն շահատ են, սր Լ (30) զուրուշու. կով մի տվին*/// Ազանփաշու *սբ.* /// *յիշատակ ետուն Ս. Աստուածածնին ի դուռն։ Տէր*

---

[2] «Մշկոցի»-ից հետո չնչել են։

[3] Հարցականը ցուցակում է։ 1633 թ. փետրվարի 19-ը շաբաթ չի լինի, այլ երեքշաբթի։ Այդ օրը շաբաթ կլինի 1636 թվականին։

Մարգարին, տէր Տիրատրին և սոցա զաւակաց Թանդարին, Նալ///խանփաշին և իւր ազգացն ղլիճ է։ Թվին ՌՁԲ (1633) մարտի ամսուն Թ (9)։

732

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

ՅՁԹԱՒԱ, Ջ 49. տե՛ս նաև «ՀԱՄ», 1908 թ., էջ 266

Գրիչ՝ Կարապետ երէց
Վայր՝ Բերիայ

ա

115 Զընտացող սրբոյ Քաղուածուիս Մաթէոսեան գլխի տէր Ներսէս Սեբաստացի քաջ բարունապետի, որ ընտացաւ զսայ յիշատակ յաւիտենից, ձեռամբ անարհեստ և փծուն գրչի մեղապարտ Թողաթցի Կարապետ իրիցի, ամի ՌՁ (1631) թվի, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի և Ս. Աստուածածնի[4]։

բ

Զմեղաւոր և զանարժան գրիչս, զհողս և զփոշիս, զթափուրս յամենայն բարեաց, և զփարթամս չարեաց, զմեղօք զառածեալս զԿարապետ փծուն գրիչս, աղաչեմ յիշել ի Տէր և թողութիւն մեղաց հայցել...։

Գրիչ՝ Ներսէս Սեբաստացի

գ

Գրեցաւ ձեռամբ մեղսամած գրչի միայն անուամբ վարդապետի Սեբաստացի Ներսէսի, ի մայրաքաղաքն Բերիայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Քառասունք եկեղեցեաց, յառաջին ամի հայրապետութեան Սիմէոն կաթողիկոսի Սեբասացոյ որ ի Կիլիկեայ, թվական Հայոց ՌՁԲ (1633), մարտ ամսոյ ԻԹ (29)[5]։ Յիշեցէք ի մաքրափայլ յաղոթս ձեր, սրբ[ա]զան ընթե[ր]ցողք, Աստուած ողորմի ասելով, հանդերձ մերովս հաւատացելոցս ի Քրիստոս աղաչեմ։

733

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, Ա 1540

Գրիչ՝ Միքայէլ դպիր
Վայր՝ Ամասիայ

380ա Փառք...։ [Շ]նորհիւ և ողորմութեամբ, կարողութեամբ և առաջնորդութեամբ ամենայզաւրին Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ աստուածաշունչ և հոգիաբուղխ երգս, ասացեալ է հոգէլից լուսատուն Հայոց հայրապետին մերոյ Ներսէսի Կլայեցոյ, սա որ կոչի Յիսուս որդի, լաւ և ընտիր աւրինակէ, ճոխ և յաճախ ըստ կարգի գրրեալ կան։ Արդ՝ ցանկացող եղեալ յայսմ հոգելից մատենիս և աստուածաշունչ տառիս կորովա-

[4] ա հիշատակարանը տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1579։
[5] Տպված է «ԻԹ»

380բ միտ և հանճարեղ այր այս Զաքարիայ դպիրն ի միտ ածեալ զասաց//-
եալն ի մարգարէէն, թէ «Երանի...»[6]. և զայն որ գրեալ է ի սրբոց վար-
դապետաց, թէ «Գրասէր, որ է աստուածասէր»։ Վասն որոյ ստացաւ զսա
ի հալալ և յարդար վաստակոցն, ի վայելումն անձին իւրոյ, և ամենայն
ընթերցասէր մանկանց Սիովնի. ամէն։ Այլ և կըրկինանգամ յիշեցէք
զվերոյ գրրեալ Զաքարիայ դպիրն, և զծնաւղքն իւր, զհանգուցեալքն
առ Քրիստոս, զհայրն՝ Ասլանն, և զմայրն՝ մահտեսի Նարխաթունն, և
զպապն իւր՝ Մուրատն, և զմամն իւր՝ Խանփաշայն, և զքեռին՝ զՂազարն
381ա և մահտեսի Ասարն, և զհաւրեղբայրքն՝ զՅովան և զԵսային, և զմաւրայ//-
քոյրքն, և զեղբայր իւր զԱնանիայն և զՊետրոսն, և զքոյրն՝ Մարիամն,
և Զառքայն և ամուսին իւր՝ Մարիամն, և զուստերքն իւր և ըզդստերքն և
զայլ ամենայն արեան մերձաւորսն յիշեցէք...։

Գրեցաւ սա ի մայրաքաղաքն յԱմասիայ, ընդ հովանեաւ Ս. Նիկո-
զայոս եկեղեցոյն, ի թուայբերութեանըս հայկազան տումարիս հազարե-
ւորդի եաւթանասներորդի երկոյտասան թիւ արայբարդի (1633), մարտ
ամսոյ Լ (30), աւրն շաբաթ, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ, սոսկա-
նուն Միքայէլ դրպրի, ի վայելումն վերոյ դրեալ Զաքարիայ դպրի. Աս-
381բ տուած բարով վայր//ելել տացէ, և զինքն երկարակեաց արասցէ մինչև
ի խորին ծերութիւնն հասուցանէ. ամէն։ Աղաչեմ զհանդիպողդ յայսմ
տառի, յիշեսջիք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր զիս զըմեղաւք զառածեալ
Միքայէլս հանդերձ ծնաւղիւք և ամենայն արեան մրձաւորաւք հաւատա-
ցելոց ի տէր Քրիստոս, և դուք յիշողքդ՝ յիշեալ լիջիք առաջի ատենին
Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն...։

734

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ջմմառ, Մ 543

Գրիչ՝ Աստուածատուր դպիր
Վայր՝ Եքեռիայ

ա

152 Զզծողս և զաշխատողս մի ողորմի ասացէք...։ Թվին Հայոց ՌՁԱ
(1632)։

բ

Փառք...։ Գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Ժամագիրք և Խորհուրդ սբ.
պատարագի ևս առաւել Տաւնացոյցս և զայլ երգերս, ձեռամբ բազմամեղ
գրչի Աստուածատուր դպրի, ի թվականութեանս Հայոց ՌՁԲ (1633) ամի
ապրիլի Ա (1), ի քաղաքս Եքեռիայ, առ դրան Ս. Աստուածածնիս և Ս.
Քառասունք եկեղեցեացս, հայրապետութեան մերոյ տեառն տէր Սիմէոն
կաթողիկոսի, ի խնդրոյ սորա հեզահոգի և իմաստուն աշխատասէր վար-
պետ Կանաչին, որ բազում փափաքանաւք յետ գրել զսբ. գիրքս ի վայե-
լումն անձին իւրոյ...։

[6] Եսայ., ԼԱ, 9։

Եւ դարձեալ զսբ. գրքիս սրբագրողն զԱստուածատուր մղտեսին, որ բազում աշխատեցաւ և սրբագրեց զսբ. գիրքս, տէրն մեր Յիսուս Քրիստոս սրբեսցէ զիւր մեղքն. ամէն։ Ով դասք քահանայք և իմաստունք[7]

735
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մշեցի, VI, № 1988 (1426 թ.)

Գրիչ՝ Սաեփանոս երեց
Վայր՝ Երուսաղէմ

580 Արդ՝ դարձեալ, վերստին նորոգեցաւ Սաղմոսարանս ի սբ. քաղաքս յԵրուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ի հայրապետութիւն և յառաջնորդութիւն սբ. աթոռոյս տէր Գրիգոր արհի եպիսկոպոսին, ի թվին ՌՁԲ (1633) ամին, որ այս տարի հոռոմ ազգն ծռայղատիկ կառնեն[8] ամէն ազգ, բայց
581 միայն Հայքն միան մնացին ի յայլազ//գացն բաժան...։ Ոյք հանդիպիք նայ մի բերան Աստուած ողորմի ասացէք սուտանուն Սաեփանոս իրիցու, որ զանուն ունիմ քահանայի և զգործս ոչ...։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Տօնապետին. ամէն։

736
ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 507 (1625 թ.) տե՛ս նաև Ն. Ակինյան, Մովսէս Դ Տաթևացի, էջ 134

324ա Յամի մարդեղութեան տեառն մերոյ Կենարարի հազար վեց հարիւր և երեսուն և վեց, և ըստ մերոյս գրոյ թուին հազար ութսուն և երկու (1633), մայիսի ամսոյ Հռովմայեցւոց երկտասն և մի և Հայոց ամսոյ արեգի՝ եւթն և տասն, յինանց Զատկի հինգ կիւրակէին, պատկեր աւուրն երեքշաբաթ, յորում գիշերն զտիւն զգենոյր. առաջին պահուն եղև վախճան մեծ կաթողիկոսին Հայոց տեառն տէր Մովսէսի երկրորդ Լուսաւորչի. ամաց իրրև յիսուն և հնգից, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս։

Էած խաւար Հայկազեան տոհմի,
Եւ եթող մեզ սուգ անմխիթարելի,
Յորոյ ծընրող սորա. նորին նորն նաւտար էր։

737
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Երևան, № 5826

Գրիչ՝ Մարգարէ դպիր

ա

214բ [Փառք]..., որ եւ կարողութիւն տկարս անձին Մարգարէի հասանել ի աւսբտ գլխոյս յՅիսուսոսի, որ է արարեալ Յոհաննու Ոսկէբե-

---

[7] Այստեղ ընդհատվում է։

[8] Ծռաղատիկը կլինի 1634 թ.։ Իսկ 1633 թ. Զատիկը կլինի ապրիլի 21-ին։

ռանի Կոստանդնուպալսի եպիսկոպոսապետի, ի վայելս գրասիրաց և ըղձմամբ սրտիւ ընթերցողաց։ Զոր շարժեալ ի սէր սորին ոմն աբեղայ անուամբ որջորշեալ Եփրեմ, որ է և գրոյս ուսուցիչն իմ և վարպետ։ Այլ և գրեալ եղև սա ձեռամբ իմով Մարգարէ դպրի ի թվին ՌՁԲ (1633)-ի ի ամառան եղանակի և յամսոյս մարգաց ԻԸ (28)[9]։ Իսկ արդ՝ եղբարք իմ սիրելիք, ի Տէր աղաչեմ կրկնակի, զի ի ժամ ընթեռնլոյ յիշեալ զիս՝ զՄարգարէ դպիրս, ևս առաւել ուսուցիչն իմ՝ զԵփրեմ աբեղայն միով Տէր ողորմայիւ. ամէն։ Այլ և սղալանացն և խոշորութեանն մի՛ մեղադրէք, զի ես խամ էի, և օրինակն երկաթագիր էր, և նիւթ գրոյս անպէտ էր։

Բ

Այլ գրով

164բ Վա՜յ քեզ եղկելի Մարգար. այդ որպէս էս դրել այս դիրս։

Գ

Վա՜յ վա՜յ և հազար վա՜յ, ինչ ղայ գրեր է, աւիրել թողել և գնացել։

Դ

165ա Դհայ կորած բարկացուցես, ձիգ չումայ ծիծաղման ես Մարգար։ Դզտ, հայ, փուհ, վիշ, ախ ափսոս։

738

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1916. տե՛ս նաև ՏԵՐԱՎՋ, № 413, էջ 624—625

Թարգմանող՝ Զաքարիա աւագերէց

421բ Թարգմանեցաւ այս իմաստասիրաց ասացեալ կարճառաւտ բանքս ի հայ բարբառ, ի ձեռն Զաքարիա Լովա աւագիրիցուն, թվին ՌՁԲ (1633) յոկտեմբերի ամսոյ ԻԲ (22), ի հալածական ժամանակս մեր, որ վասն ուղղափառ հաւատոյ[10]։ Եւ զաւրինակողքս խնդրեմ, զի զայս սակաւ զյիշատակարանս գրէք, և զմեզ՝ մեղաւք տառապեալս, սրբափայլ յաղաւթս ձեր մի՛ մոռանայք. նոյնպէս և դուք առաջի Քրիստոսի յիշեալ լիջիք։

739

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1870 (1618 թ.)

Գրիչ՝ Ջիֆ Սաեփանոս

ա

352բ Վայ քեզ էրէց մեղաւք լըցեալ,
Ըստեփանոս Ջիֆ անուանեալ,

---

[9] Մարգարէ գրիչը հետևել է Մարկավագդիր անշարժ տոմարին. դա երևում է նրանից, որ Հայոց ՌՁԲ թվականի մարգաց ամսի 28-ը համապատասխանում է 1633 թ. հուլիսի 4-ին՝ «ի ամառան եղանակի». մինչդեռ շարժական տոմարով այն կհամապատասխաներ 1633 թ. սեպտեմբերի 6-ին, որը ամռան եղանակ չէ։

[10] Լվովի Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսը կաթոլիկությունը բռնությամբ տարածելու նպատակով հալածանքներ սկսեց լուսավորչական դավանանքին պատկանող հայերի դեմ. խոսքն այդ մասին է։

Որ զայս տեսեալ և ընթերցեալ,
Վաղվաղակի էր չես մեռեալ։
Թվին ՌՁԲ (1633) ղամար Ը (8)[11]։

Բ

353ա Զի վասն քո չարեացդ եղեալ,
Որ իբր ըզծովէ կուսակեալ,
Դարձիր մեղաց սրտիւ լացեալ,
Զի մի՛ արբցես գան սաստկացեալ։

740

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՄՁԵՊ, I № 66. տե՛ս նաև Գրիգոր Դարանաղեցի, ժամանակագրութիւն, էջ ԿԱ—ԿԴ, ՄՁԵՍ, № 66, էջ 173—174

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Երուսաղէմ

Ա

215 Փառք... աստուածասէր և հաւատարիմ միայնակեացս Մարկոս կոչեցեալ, որ է ի գաւառէն Դարանաղեաց, որ այժմ Կամախ յորջորջի, եղբայր գոլով սա՝ Գրիգոր երջանիկ եւ աստուածաբան վարդապետի, որոյ հայրն Թանտին կոչի, և մայրն Կուլվարդ, և քոյրն Զարդար: Սա վասն վերոյ ասացեալ աւգտակար պատճառացս՝ ցանկացող եղև այս պատուական գրոցս, որ ասի Այսմաւուրք ըստ իւրաքանչիւր աւուրց պատմութեանց, որ իբրև զբուրաստան [զ]մայլեցուցանէ զքիմս բանասիրաց։ Քանզի սա ի մանկութենէ անարգեաց զսէր և զհեշտութիւն աշխարհի, խոշորազգեստ լինելով, մսահատ եւ պարկեշտ կրօնիւք, իբրև զտատրակ ողջախոհ քաղաքավարութեամբ զառաւրեայ կեանս անցուցանելով. և մանաւանդ որ բազում աշխատանս կրեաց վասն սբ. Երուսաղիմայ: Զի այս ի (20) ամ է որ հաւատարմաբար եւ սրտացաւութեամբ ծառայէ գերեզմանին Քրիստոսի, երբեմն ի Ս. Յարութիւն կալով, զչահս եւ զկանթեղս, զմոմս եւ զճրագս վառելով, եւ զայլ ամենայն ծառայութիւն առնելով, և երբեմն հրամանաւ Գրիգոր հայրապետին սբ. Երուսաղիմայ ի հեռաւոր տեղիս՝ ի ծով և ի ցամաք գնալով, զմահ յանձն առնելով, և զպակասութիւն սբ. Երուսաղիմայ հոգալով։ Եւ որ ինչ ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց մասն բաժնի իւրն հասանէր, ոչ վայրապար մսխէր և վատնէր, այլ զամենայն յաստուածակոյս կողմն ի յերկինս գանձէր, անդժրելի գողոց և ուտչաց ըստ Տեառն բանին, և յիշատակ հոգոյ իւրոյ եւ իւրայնոցն արձանացուցանէր։ Որ մինն ի բազմաց գիրքս այս, զոր ի թվականիս Հայոց ՌՁ (1631) ամին, գնացեալ ի Կոստանդինուպոլիս բազում ջանիւ եւ դեգերանօք ետ սկիզբէն առնել զգիրքս զայս քահանայի միոյ Աւետիս կոչեցելոյ. եւ եհաս աւարտ սորին ՌՁԲ (1633) ամին, ձեռամբ սուտանուն Յակոբ դպրի, յօգոստոս ամսոյ Ժ (10)-ի, և յաւուր շաբաթի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետի. և եդ զսա յիշատակ ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յարութեանն Քրիստոսի, որ է վերնատուն Հայոց, որ երկրորդ Գողգոթայ կոչի, որ է վիճակ Հայոց

[11] Այսինքն՝ 1633 թ. հուլիսի 26-ին։

ազգիս։ Եւ չունի ոք իշխանութիւն զգիրքս զայս ի դրանէ Ս. Յարութեանն շարժել կամ գրաւել։

Եւ արդ՝ աղաչեմ եղբարք, զամենեսեանսդ սիրովն Աստուծոյ, յիշել սրտի մտօք յաղօթս ձեր զստացող սորայ զվերո[յ] դրեալն՝ զմահդասի Մարկոսն, *և զեղբայրն* Գրիգոր *վարդապետն, զհայրն* Թանտինն, *եւ զմայրն* Կուլվարդն, *զքոյրն* Զարդարն, *և զհոգեւոր որդեակն իւր՝* զԱկրնցի Գասպար *երէցն, և զհոգեւոր քոյրն իւր* զՆազլուն, *որ աշխատանս ունին ի վերայ սորա։ Այլ և զպտղատու սորայ, եթէ այր եւ եթէ կին, եւ զամենայն արեան մերձաւորսն նոցին. նաև զօրինակի սորա շնորհօղքն՝* զՅովակիմ *քահանայն և* զՄինաս *սարկաւագն, և ի ձեռն ձեր խնդրոցն ողորմելի նոցայ։ Ընդ նոցին և գրչաց սղալանացն թողութիւն արարէք, և Աստուած ողորմի իւրեանց ասացէք, եւ դուք սիրով խոնարհեալ զնա ուղղեցէք, թէ որ գտանի սղալ որ ոչ*
216 *իմա//ցաք։ Եւ աշխատատրացն ի սա վարձս բարիս տացէ Աստուած, և որք յիշէքդ զմեզ, Որդին Աստուծոյ եւ զձեզ յիշեսցէ եւ ողորմութեանցն իւր արժանի արասցէ հանդերձ ամենայն հաւատացելովք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր։ .....*

Գիտէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն՝ զառաջին անունն կու ջնջեն, և զիւրեանցն կու գրեն, և չար է սովորութիւնն այն, աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ, զի յոյժ աշխատութեամբ կատարեցի զսայ։ Ապա թէ արժան է գրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ, և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր, և որ ոք յայս յանդգնի և ջնջէ՝ նոյնպէս և նայ ջնջի ի կենաց գրոյն։

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Կ. Պոլիս

Բ

212 *Աւգնա Հոգիդ սբ. Աստուած ճշմարիտ, եւ աջողեա զգործս ձեռաց ծառայիս քո, անցաւոր գրչի* Աւետիս *երիցու, որ չեղէց ծաղր [ըստ] բանի տէրունական, որ ասէ, թէ «Այրս այս սկսաւ շինել եւ ոչ կարաց կատարել...»*[12]։

Գ

214 *Մանաւանդ ստացողի գրոցս մահդասի* Մարկոսին, *եղբօրն՝* Գրիգոր *վարդապետին և ծնողացն՝* Թանտին *և* Կուլվարդին, *քրւերն՝* Զարդարին, *եւ գրչի* Յակոբին *և ծնողաց նորին՝* Վանեսուտին *և* Շաղաային։

Դ

...Ողորմի... ստացողի գրոցս մահդասի Մարկոսին, *...եղբօրն՝* Գրիգոր *վարդապետին, և ծնողացն՝* Թանտին *և* Կուլվարդին *և* Ակրնցի Գասպար *իրիցին, որ բազում աշխատանս կրեաց ի վերա սորա*[13]։

---

[12] Ղուկ., ԺԴ, 30։
[13] Յուցակում կան նման այլ հիշատակարաններ ևս։

741
ԺՈՂՈՎԱՏՈՒ
ՏՅԶՄՎ, № 389

Գրիչ, ստացող՝ Սաֆար

843 Գրեցաւ գրչութեան արհեստի խրատս ձեռամբ անիմաստ և անարժան Սաֆար գրչի, ի վայելումն անձին իմոյ, թվին ՌՁԲ (1633) ահկի ամսոյ ի Դ (4) և օգոստոս[14]. ամէն։

742
ԱՒԵՏԱՐԱՆ (ժամանակ ?)
«Հանդէս Ամսօրեայ» 1903, ԺԱ

341 Յիշատակ է սբ. Աւետարանս մղտեսի Սանակին և իւր ծնաւղացն՝ Նիկողոսին և Տաթլուին, Քրիստուրին, Յակոբին, Ներսեսին, Այլային, Պէկլէրին, Խանգատին, Շանպէկէ, Մայրամին, Թամամին, Մարտիրոսին, Յուսէփին, Ճանփաշայ մղտսուն, Պաղշային, Մարտիրոսին և այլ ամենայն արեան մերձաւորաց և հաւասար ննջեցելոց հոգուն, յիշատակ ետ ի ձեռն տէր Առաքելին...:

Գրեցաւ գիրս թվին ՌՁԲ (1633) սբ. խաչին պաս[15]։

743
ՏՕՆԱՅՈՅՑ
Երևան, № 7072. տե՛ս նաև Կչկչկ—2. № 10, էջ 24, Կչկչկ—4, № 10, էջ 56

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Կողոնիայ

ա

29բ ...զԳրիգոր գրիչս մի՛ մոռանար, մեղա, մեղա, Տէր մեղայ։

բ

86բ Փառք...։ Գրեցօ Տաւնացոյցս ձեռամբ Գրիգոր իրիցուս անուամբ միայն և ոչ գործով, թվին ՌՁԲ (1633)։

գ

185ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տաւնացոյցս և քաղուկս ձեռամբ անարժան ե
185բ անիմաստ գրչի անուամբ// միայն իրիցու և ոչ գործով Գրիգորի, թվին ՌՁԲ (1633) սեպտընբերի Ի (20), ի քաղաքն Կողոնիայ, որ այժ ասի Ղարայնիշար, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Ստեփանոսի Նախայվկային, ի յառաջնորդութիւն տէր Փիղիպոս կաթողիկոսին։ Եւ արդ՝ յերեսս

[14] Տաշյանը հաղորդում է, որ օգոստոսի ամսաթիվը չի նշված։ Ընդունելով, որ Հայոց ՌՁԲ-ի նավասարդի 1-ը համապատասխանում է հուլյան տոմարի 1632 թ. հոկտեմբերի 14-ին, ըստ այդմ ահեկան ամսի 1-ը կլինի 1633 թ. հունիսի 11-ը, իսկ 4-ը՝ 14-ը։ Մարկավագադիր անշարժ տոմարով հայոց ՌՁԲ թվականի ահեկան ամսի 4-ը կհամապատասխանի 1633 թ. ապրիլի 11-ին։ Երկու դեպքում էլ հիշատակարանի ահեկան և օգոստոս ամիսների հաշվումները չեն համապատասխանում տոմարական մեր հաշվումներին։

[15] 1633 թ. սբ. խաչի պասը կհամապատասխանի սեպտեմբերի 9-ից մինչև 14-ին։

անկեալ աղաչեմ զամենեսեան, յիշել ի Տէր զանարժանս, որք հանդիպիք գրոցս տեսանելով կամ աւրինակելով, աղաչեմ յիշման արժանի առնել և Աստուած ողորմի հրամել գրչիս ե նկարողիս, և ծնաւղաց իմոց Մարուզէ քահանային և մաւրն իմ՝ Մանանայիճ, և կենակցին իմոյ Ճաշիկին, որ փոխեալ են առ Քրիստոս. Տէր Աստուած զիւրեանքն ան-
186ա մահակ//ան փառացն արժանի առնէ. ամէն։ ...Ողորմիր անմեղադիր լերուք խոշ[ո]ղութեան և մանարութեան. դրիս և սղալանաց, զի կար մեր այս էր. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

744

ՀԱՄԱՅԻԼ

Երևան, № 2435

Գրիչ՝ Աստուածատուր դպիր

ա

92ա Գրեցաւ Համայիլս ձեռամբ սուտանուն դպիր սարկաւագ Աստուածատուրիս, ի վայելումն Ա[բr]ան[մ][16] Զալապուն, զոր տէր Աստուած մեր վայելել տացէ. ամէն։ Ի առաջնորդութեան մերոյ նորընծա Սիմէոն կաթողիկոսին[17], ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին, ի թվին Հայոց ՌԶԲ (1633) սեպտեմբերի ԻԹ (29), օրն ուրբաթ[18]։

Բ

Այլ գրով

92բ Անուանք սրբոցն որ աստ կան հաւաքեալ եղիցի աւգնական և պահապան ծառայիս Աստուծոյ Աւետիս Զալապուն՝ ի նստել, ի տան, ի գնալ, ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել և յամենայն ժամու. ամէն. եղիցի, եղիցի։

745

ՇԱՐԱԿՆՈՑ

Մագիստրոս, № 397 (ժամանակ ?)

Նորոգող՝ Անդրէաս եպիսկոպոս

117 Նորոգեցաւ Շարակնոցս ձեռամբ Անդրէասէ, առաջնորդութիւն Առաքել վարդապետն։ Նորոգեցաւ ձեռամբ Անդրէաս եպիսկոպոսին և Ինճինատիոս կրաւնաւորին, ի թվին Հայոց ՌԶԲ (1633) սեպտեմբեր ամսոյ։

746

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1. տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Նոր Ջուղայի Հայոց, էջ 1580

Գրիչ՝ Սահակ երէց

Վայր՝ Թոխաթ

ա

73ա Այլ և ըզգծող սակաւ բանի,
Ի Սահակիս Ս. Պարսամի,

---

16 Անունը մասամբ եղծված է, բայց կարելի է կարդալ։

17 Իմա՛ Սիմէոն Բ Սեբաստացի կամ Արևելցի, Սսի կաթողիկոս։

18 Մեր հաշվումներով 1633 թ. սեպտեմբերի 29-ը կլինի ոչ թե ուրբաթ, այլ կիրակի։

ի Թոխաթի մեծ քաղաքի,
ի յաւարտել սա գրեցաւ։

Բ

73բ *Փառք...// Գրեցաւ գիրս ձեռամբ անարժան Սահակ իրիցու, ի թվին Հայոց ՌՁԱ*[19] *(1632) մարտի ամսուն ԻԵ (25) աւարտեցաւ։ Բայց աղաչեմ, հոգևոր հայրք իմ և եղբարք, յոր կարդայք՝ յիշեալք լինիք դուք ի Տեառնէ և զիս յիշեցէք։*

Գ

103բ *Գրեցաւ գիրս ձեռամբ անարժան Սահակ իրիցուս ի թվին Հայոց ՌՁԲ (1633) աւարտեցաւ։ Բայց աղաչեմ հոգևոր հայրք իմ...։*

747
ԺՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ
Երևան, № 21

Գրիչ՝ Մաղաքիա

ա

145բ *Այս գիրքս Փիլոնի Բ (2) գրոցն լուծմունքն է և Դիոնէսիոսի ցպնուն ասմունքն է, որ ես՝ նուաստ Մաղաքիա բանի սպասաւորս/// յաւիտենիս։ Թվին ՌՁԲ (1633)։ Եւ ոչ ոք չունի իշխանութիւն հանել ի քաղաքէս և կամ յայլ և յայլ տեղ տալ, և թէ փտի, թող ի քաղաքս փտի մինչ որ Աստուած դոցայ վայելող յարուցանէ։ Եւ թէ ոք նենգէ՝ դատաստան կրեսցէ ի Քրիստոսէ։*

Բ

120բ *Անմեղադիր լերուք թուխտն ի մէջ էր անցեր և ի տեղն մնացեր, յետև գրեցաւ։*

748
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 234 (1258 թ.)

Հետ. ստացող, նվիրատու՝ Յովհաննէս քահանայ

302ա *Ի ժամանակս Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի և ի թուականութեանս Հայոց ՌՁ և երկուց (1633)։ ես՝ տէր Յովհաննէս քահանայս, ի քաղաքէն՝ Ախլցխու, ետու զայս ոսկէնկար Աւետարանս յիշատակ հոգւոյ իմոյ և ամենայն նախնեաց և ծնողաց իմոց, ի դուռն սբ. էջմիածնի, պապուն իմոյ՝ տէր Դաւիթ քահանայի, և հօր իմոյ Խաչատուր քահանայի, և այլ ամենայն արեանառու մերձաւորաց իմոց և ընդանեաց։ Ով որ վայելիցէք զսա, միով Տէր ողորմայիւ յիշեսջիք զմեզ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։*

[19] «ՌՁԱ» թվականի միավորի՝ «Ա»-ի վրա ջնջման հետք է երևում։

749
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 256

Գրիչ՝ Մարտիրոս Ջուղայեցի

ա

300ա Փառք...,
301ա Ցերես անկեալ կողկողական,
Պաղատանաւք մաղթողական,
Զքեզ աղաչեմ սբ. դամբարան,
Տուն և տեղի արքայական։
Զեզ հասանել ի նեղութեան,
Ի ժամանակս փորձութեան,
Պահել անփորձ և անսասան
Ի յարկածիցրն դիւական։
Ի քէն հայցեմք Աւետարան,
Որ աւետեաց ես մեզ ման,
Ճաշակ բարի և փրկական,
Մարմին ւ արիւն անապական։
Զաղքատամիտ պակասաբան,
Մարտիրոսէ բանքս ծրեցան,
Ի գովեստ քեզ հաճոյական,
301բ Առ միածին Աստուածդդ բան։

. . . . . .

բ

Փառք...։ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկունքս եկեղեցւոյս անիմաստս և տգէտս ի գիրս գրչութեան սուտանուն [Մարտիրոս] Ջուղայեցի, որ զանունս ունիմ և զգործս ոչ. շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախաւս տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս ի մեծ թվականիս Հայոց ՌՁԲ (1633) ամի, ի հայրապետութիւն տէր Մովսէսի, որ ի թվին ՌՁԲ (1633) հանգուցաւ ի Քրիստոս, և իշխանութիւն Տաճկաց շահի Սէֆոյն։ Այլ ես մեղուցեալ և անպիտան [Մարտիրոսս][20] գրեցի սբ. [Աւետարանս][21]

գ

302ա Եղբայրք, վասն այս Աւետարանիս չմեղադրէք գրայդարձութեան համար, որ ճաւտավարին համար այսպէս գրեցի, որ մէկն չէր գալ[22]։

---

[20] Անունը երկու դեպքում էլ ջնջված է, տեղը գրված է «Սիմոն»։
[21] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է ձեռ-ից թերթ ընկնելու պատճառով։
[22] Գրված է կարմրագեղով։

750
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 789

Գրիչ՝ Վարդան սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

534ա Փառք...։ Գրեցաւ սբ. գիրքս որ կոչի Հարանց վարք ի թվին ՌՁԲ (1633), ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս, ձեռամբ Վարդան սարկաւագի, ի վայելումն Գրիգոր վարդապետի Զեթոնցոյ: Աստուած բարով վայելել տացէ իւրեանն և ի հանդերձեալն զերկնային ուրախութիւնն պարգեւեսցէ. ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ. որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրինակելով, մէկ Հայր մեղայիւ մի յիշեցէք Վարդան անարուեստ գրիչս և զծնաւղսն իմ և զկենդանիսն իմ...։

751
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1110

Գրիչ՝ Սաեփանոս Ամասիացի

273ա Գրեցաւ Լուծմունքս Սահմանաց թվին ՌՁԲ (1633), ձեռամբ Ըստեփանոս դպրի Ամասիացոյ, որք հանդիպիք սրմոյ, յիշեցէք ի բարձրաթռիչ աղօթս ձեր, միով Հայր մեղայիւ. ամէն։

752
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1256. տե՛ս նաև «ՀԱ», 1892 թ., էջ 113

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

200ա Գրեցաւ ի սբ. քաղաքս Երուսաղէմ Քաղուածոյս Մատթէոս աւետարանչին, ի թվին ՌՁԱ (1632), ձեռամբ եղկելի Յովհան Հիզանցոյ, յորժամ ընթեռնուք յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր...։

բ

Փառք..., որ արժանաւորեաց զանարժանութիւնս մեր հասանել յաւարտումն աստուածախաւս մեկնութեանս սբ. Մատթէոսեան Աւետարանիս, տկար և տարտամ ձեռամբ, անարհեստ և փծուն գրչի մեղապարտ Հիզանցի Յոհան պոռնիկ իրիցի, յամի ՌՁԲ (1633) թուի, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ գլխադրին և Յակոբայ Տեառնեղբաւր աթոռին, և այլ սբ. տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ընդ հովանեաւ սոցին պարփակիմք. ի հայրապետութեան սբ. Երուսաղէմայ Հայոց աթոռին տէր Գրիգորին, զոր տէր Աստուած պահեսցէ
200բ անփորձ. ամէն։ // Այլ և զընտացող սորին զմահդասի Մարկոսն, որ ընտացաւ զսայ ի հալալ ընչից և ի յարդար վաստակոց իւրոյ, և եդ յիշա-

տակ հոգոյ իւրոյ, և եղբարն Գրիգոր վարդապետին[23], և ծնօղացն՝ Թանկինին և մօրն՝ Կուլվարդին, և քրւերն՝ Զարդարին, և ամենայն արեան մերձաւորացն, և հոգևոր որդոյն՝ Սարգիս վարդապետին, և այլ ամենայն պաղատուիցն։

Արդ՝ աղաչեմ զհանդիպողդ այսմ տառիս կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք միով Աստուած ողորմայիւ ղբստացող սորայ զմահդասի Մարկոսն...[24]։

753

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 1503

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

631ա Փառք...։ Զոր տեսեալ ծառայն Աստուծոյ Էրտամն և մեծ՝ փափագմամբ և շերմեռանդ սրտիւ ցանկացող եղև սր. տառիս... և ետ գծագրել զսա ի հալալ և արդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, և եղբարցն, և քրւերցն և ամենայն ազգականացն։

Եւ արդ՝ ես Գասպար քահանայ, անարժան ծառայ ծառայիդդ Աստուծոյ, գծագրեցի զսա ի վերծանութիւն սքանչելեաց ամենայն արեամբ ներկեալ սբ. մարտիրոսացս...։

631բ Եւ ձգեալ ողորմութիւն ի սիրտ մեղաւոր Էրտամին, որ ստացաւ ի սմին աւուրս զայս ի հալալ ընչից իւրոց։ Աղաչեմ զձեզ, հայր սուրբք, յիշեցէք ի բարին զստացող սբ. գրոցս որ կոչի Ի սմինաւուր, զմեղաւոր Էրտամն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց և եթող յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց։ Աղաչեմ զձեզ, ով սբ. քահանայք, ...յիշեցէք զմեղաւոր Էրտամն, և զկողակիցն իմ՝ Խանփարին, և Սիրունն, և զորդին իւր՝ Հայրապետն, և զորդիքն իմ՝ Բ(2) Սանակն, և զմեծ պապն իմ՝ զտէր Խաչատուրն, և զկողակիցն իւր՝ Մէլիքշէն, և զորդիքն իւր՝ Ղազարն, Պարխանն, տէր Մխիթարն, Ներսէսն, Փիրամզէն, և դուստ[ր]քն՝ Սղմէրն, Ոսկմէրն, և միւս մեծ պապն իմ՝ Մաթէոսն և զորդին իւր՝ Բաշխումն, և զկողակիցն իւր՝ Ղատամղուլուն, և զդուստրն իւր՝ Հռիփսիմէն, Ամէնփաշէն, և զհայրն իմ՝ Պայխանն, և զմայրն՝ Ըմպրիշատն, և զեղբարքն իմ՝ Աստուածատուրն, մահդասի Փանոսն, և զկողակիցն՝ Հապիպն, Մէրատաիկն, և զորդիքն իւր՝ մահդասի Մարութէն, Աղաբէկն, Բարղամն, և զդստերքն իւր՝ Ղատամխուլուն, Հռիփսիմէն, Փարէզխանն, և զթոռն իւր՝ Ֆոանկին, և զքրւերքն իմ՝ Շուշանն, Նապաթն, Սինափաշէն, Խաթունն, և զդուստրն իւր՝ Սոլթանխաթունն և զխամաթարն, իմ Գոհարն, յիշեցէք...։

632ա Արդ՝ գրեցաւ ի սմինաւուր ի թվին Հայոց ՌՁԲ (1633), ի մայրաքաղաքն Սպահան, ի գեաւղաքաղաքն Ջուղա, որ Աստուած անփորձ և

23 Իմա՛ Գրիգոր Դարանաղեցի։

24 Նորից թվում է վերևում հիշված անունները։ ա և բ հիշատակարանները տե՛ս նաև ԼԱԱԺի Բ—46 (Մանրաժապավեն, Երևան, № 265, էջ 180 բ, 360 բ)։

անսասան պահէ։ Ի ժամանակի դառն և դժար, որ հանց սղութիւն, որ մին լիտր ալիւրն Բ (2) ապասի էր. ի թագաւորութեանն շահ Սեֆուն և ի հայրապետութեանն տէր Մովսէսին, և արքեպիսկոպոսութեան տէր Խաչատուրին, և առաջնորդութեան մարմնաւոր կենցաղոյս խոշայ Նազարին, որ Աստուած զիւրեանքն արժանի արասցէ իւր արքայութեանն...։

Յիշեցէք ի բարին զխոստովանայհայրն իմ՝ զտէր Մարտիրոսն, որ բազում աշխատանք կրեաց ի թուխտն, ի գրելն և ի ծաղկելն, ի կազմելն. Աստուած զիւր հոգին լուսաւորէ, որ Ասմաւուրի պահարանի թուխտն փէշքաշ երետ։ Աստուած զիւր որդիքն պահէ մինչև ի խորին ծերութեան. ամէն։

Բ

Դարձեալ ես՝ մեղսամած Գասպար էրէց գրիչս երեսս ի գետինն դնելով աղաչեմ զձեզ... յիշեսջիք զիս զանարժանս և զվարպետն իմ՝ զԽիզանեցի Մեսրոպ դպիրն. և Աստուած ողորմի ասացէք։ Յիշեցէք զիս զանարժան գրչիկս և զիմ ծնողսն՝ զտէր Պաղտասարն, և զԹուլանդէ, և զամենայն արեան մերձաւորսն իմ։ Յիշեցէք և զյաշակերտն իմ՝ զԱստուածատուր մանուկն և որք յիշեն զմեզ ի սբ. աղօթս իւրեանց, յիշմանն արժանի լինին. ամէն։

Գ

8բ Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստա//ցողի գրոցս էրդամին, և կողակցին՝ Խանփարի և Բ (2) որդիքն՝ Սահակն, և հայրն՝ Պախանն, և մայրն՝ Ըմբրշատն, և զեղբայրքն՝ Աստուածատուրն, Ստեփանոսն, և որդիքն՝ Մարութենէ, Բարաղամն, և պապն՝ Մաթէոսն, և խանիկն՝ Ղատամղուլուն, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն[25]։

Դ

13ա Որոց մաղթանօքն և բարեխաւսութեամբն Ս. Ստեփանոսի Նախավկային ողորմեա՛ Քրիստոս Աստուած ստացողի սբ. տառիս էրտամին, և կողակցին՝ Խանփարուն և որդոցն Սահականցն, Հայրապետն և ծնաւղացն՝ Պահխանին, և Ըմբրիշատին, և եղբարցն՝ Աստուածատուրին և Ստեփաննոսին, և փծուն գրչիս Գասպար իրիցի, կարդացողացն և լսողացն և Աստուած ողորմի ասողացն...։

Գրիչ՝ Հայրապետ երէց

Ե

16ա Ողորմեա՛ Քրիստոս Աստուած ստացողի գրոցս էրդամին, և կողակցին՝ Խանփարէ, և Բ (2) որդիքն՝ Սահակն և զպապն՝ տէր Խաչատուրն, և կողակիցն՝ Մէրփաշէն, և հայրն՝ Պահխանն, և մայրն՝ Ըմբրշատն, և եղբայրքն՝ Աստուածատուրն, մահդասի Ստեփանոսն, և իւր որդիքն՝ նահատակ Մարութէն, Բարաղամն, և սուտ գրողս Հայրապետ էրէցս, կարդացողաց և լսողաց[26]։

---

25 Նման հիշատակարաններ կան ձեռ-ի 9բ, 10բ, 14ա, 18ա, 21բ, 27բ, 76բ և այլ էջերում։

26 Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 20ա, 96ա և այլ էջերում։

754
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2373

Վայր՝ Սպահան

ա

211ա Գրեցաւ ի Սպահան սա, որ ի յառաջն Շաւշ կոչիւր, ի թվին ՌՁԲ (1633), յաթոռակալութեան սրբոյ Լուսաւորչին մաքուրն վարուք տէր Մովսէս կաթողիկոսի և մերս հայրապետ զարմանալիս Խաչատուր:

բ

240ա Գրեցաւ սա յամին, որում շարժեցաւ արքայն Վրաց բարեպաշտն Թամուրազ պատերազմ ընդ մահմետականս, Տէր տացէ զաւրութիւն քրիստոնէից:

755
ՃԱՇՈՑ
Երևան № 2948 (ԺԴ դար)

149ա Գիրքս յիշա[տակ] է Եղգարին, որ առայ ի Վան, թվին ՌՁԲ (1633).

756
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 3131

Գրիչ՝ Պարսամ
Վայր՝ Տումարզայ

196ա Փառք...: Գրեցաւ հոգիաբուխ աստուածային գանձարանս ի թվականիս Հայոց ՌՁԲ (1633), ձեռամբ ամենամեղ և անարհեստ գրչի Պարսամին, ի գիւղն Տումարզայ, ի դուռն Ս. Աստուածածնայ, և Ս. Պետրոսի և Պաւղոսի առաքելոյն, և այլ համարէն սրբոցն որ աստ կան: Արդ՝ յերիս անգեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք յեկեղեցւոյ, յիշեցէք յուսուցիչս
196բ իմ զԳրիգոր եպիսկոպոսն և զհայրն իմ՝ Իգնատիոսն//, որ փոխեր են առ Քրիստոս, և զմայրն իմ, և զեղբայրն իմ, և զազգականք իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս ամենեցուն. ամէն[27]:

757
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3264

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Սամպոլ

278բ Փառք...: Գրեցաւ եղանակաւոր տառս ի լաւ և ընտիր աւրինակէ, ձեռամբ Վարդանի, ի վայելումն տէր Նիկողոսի, ի թուականութեանս

[27] Սույն հիշատակարանը սկսած «ձեռամբ ամենամեղ և անարհեստ գրչի»-ից մինչև վերջ հետագայում արտագրվել է ձեռ-ի 196բ էջում:

Հայոց ՌՁԲ (1633), ի քաղաքն Ըստամպոլ, ի դուռն Ս. Գէորգայ զաւրավարին. ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ ծնաւղաց իւրոց, և ամենայն ազգատոհմից հաւր իւրոյ։

758
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4298

Գրիչ՝ Մարտիրոս

ա

172բ Փառք...։ Արդ՝ ո՛վ բարձունի և աստուածային իմաստութեան ցանկացող, հոգևոր հայր իմ և եղբայր բաղձալի Խաչատուր վարդապետ, առաջնորդ աստուածաբնակ, քրովբէագումար, հռչակաւոր սբ. ուխտի Թումայի վանք անուանելոյ, ահա և զայս ևս զխնդիր քո կատարեցի բազում աշխատութեամբ, և առցես զսա, և ըստ ուշիմ և նրբահայեաց մտաց քոց որոնեսցես՝ զպակասն լցուսցես և զաւելորդն կշռեսցես, և զոր
178ա ինչ հաւանական դտցես, Տեառն// մատուցանիցես զշնորհս և զփառս, զի նորա են գանձք իմաստութեան և ոչ հաւանականսն, տկարութեանս մեր ներեսցես, զի թէպէտ խնդրելոյդ յաղթեալ ձեռնարկեցաք օժանդակութեամբ Հոգոյն Սրբոյ, որ ոչ անտես առնէ զշահս հասարակացս զտութեան.։ վասն որոյ աղաչեմ զքոյին հեզութիւնդ, սիրով բաղձանաց. զի յիմաստասիրելն քո, քոյովդ հանդերձ զհոգոյ աղքատս քո զՄարտիրոս սոսկանուն անպիտանս և ի հառաջալիր աղաւթս քո մի՛ մոռանայցես, այլ ի յիշելն քո և զԱստուած ողորմին յիշեսցես. ողջ լեր ի Տէր։

Այլ և[28] աղաչեմ զառաջի /// Յիսուսի Քրիստոսի, զի զսակաւ յիշատակարանս իմ գրեսցես և Աստուած զձեզ գրէ ի գիրն կենաց. ամէն։

բ

220ա Գրեցաւ Մեկնիչս ի թվիս ՌՁԲ (1633)։ Լոյսն տեսողացն է և բանն՝ լսողաց, և շնորհքն՝ Աստուծոյ սիրողաց <Աստուծոյ>։

գ

292ա Եւ մեղաւորս Աստուած ողորմի ասայ, որ յաղիւսակդ աշխատեցայ, շրջէ զթուխտ և տես զթելքն ի տուփսն աղիւսակիդ։

759
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4860. տե՛ս նաև ՀՁՎԼ, № 378, 881—884

Գրիչ՝ Մկրտիչ

ա

287ա Փառք...։ //Լուեալ և սբ. գրոցս քրիստոսասէր և հաւատարիմ տանուտէրն Ղարիպշէն, թէ «Երանի...»[29] ...և եղև առիթ և պատճառ, և ստացս
287բ սբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ// հոգոյ իւրոյ և

[28] Ձեռ.-ում այստեղից չնչված է և դժվար ընթեռնելի։
[29] Նայ., ԼԱ. 9։

ծնաւղաց իւրոց, հօրն՝ Աղուպին *և մաւրն՝* Գալխաթունին, *և ազգականացն՝* Վարդանին, Բլիջանին, Քաջմսեղին[30], Պարոնվարդին, Փաշաջանին, Գայիանին, Էքարին, Շաղաւաթին՝ *գոքայ առ Քրիստոս փոխեցան.* Թուրանդին, Մարտիրոսին, Ուսթիանին, Կիրակոսին, Խլղաթին, Անայխաթունին, Վարդանին *և կողակցին՝* Բէկուն. Քրմանին, Նիզարին, Աղուպին, Պապէն, *իւր կողակցին՝* Խոնձայ *հաթոնին,* Խոնդամիրին, Ամիրին, Գալիջանին, Միրզին, Բէկուն, Նիզարին, Միրզին, Էնիաթին, Գալիջանին, Խաթունբէկուն, *և երախտաւորաց սորին...*[31]։

288ա *Դարձեալ յիշեցեք ի Քրիստոս զպարոն* Ղարիպշէն, *և զկողակիցն՝* զՍանամն, *և զորդին՝* զՄսեղին, Բաղտասարին. *ամէն։ Եւ զանարժան և զանպիտան* Մկրտիչ *գծողս յիշեա ի Տէր, որ զանունս ունիմ և զգործս ոչ, և զծնողքն իմ՝* զԱմիրխան *և զմայր իմ* զԳալանփուշէն. *և Աստուած զձեզ յիշէ. ամէն։*

Բ

90ա *Ո՛հ, ո՛հ անպիտան* Մկրտիչ *մեղսաթաւալ գրչիս, որ ի մեղաց մէջ զառածեալ եմ ու միտքս կոյր է, գրեցի զԱւետարանս ըստ Մաթէոսեան։*

Գ

288բ *Դարձեալ ողորմի ասացուք* Աղուպշին *և ծնողաց սոցին, հօրն՝* Ղարիպշին *և մօրն՝* Սանամին, *և կողակցին՝* Էքարին. *ա[մէն]։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Միրզին *և կողակցին՝* Գաւզալին, *և որդւոցն՝* Պաղաջին, Գաւթին, *և կողակցայց* Սալթանին, Մուիպսաւ[լ]թանին, *և որդոցն՝* Նիկողայոսիկ, *կողակցին՝* Շայումին, Դիլանջուն, Գրիգորին, Միրզին, Մարգարին, Միլիտոնին, *և դստերացն՝* Դաստագուլին, Էքարին, Թաքարին, Մրուաթին, *կողակցին՝* Հայրապետին. *Աստուած ողորմի ասացէք սոցա հոգոյն, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ Եւ ինձ մեղաւորիս, որ սակաւ յիշատակարանս գրեցի և զհամարագիր սբ. Աւետարանիս, ինձ էլ ողորմի ասացէք հետ սոցա կարգին և Աստուած ձեզ ողորմի յաւուրն ահեղին. ա[մէն]։*

Ի թվականիս Հայոց ՌՁԲ (1633)։

760

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4923 (1403 թ.) տե՛ս «ՀԱ», 1917—1918 թթ., էջ 19

Հետ. ստացող, նվիրատու՝ Խոջայ Մուրադ

284բ *Ես՝ աստուածասէր և բարեմիտ մահդասի խոջա* Մուրադս *գնեցի զսբ. Աւետարանս խալալ յարդ[ե]անց և յարդար վաստակոց իմոց և եղի ի դուռն Ա.Վարդանայ զօրավարին, անչինչ յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղաց իմոց, հօրն՝* Փիրիջանին, *մօրն՝* Խաթունջանին, *կողակցուն՝* Խանումաղին, *որդոցն՝* Դիլաֆին, Շիրաֆին, Փիրիջանին, *և փոխեցելոցն՝* Ջիրաֆին, Միրա-

30 *Կամ՝ քաջ Մսեղին։*

31 *Աղերս, ապա կրկնում է վերևում հիշված անունները։*

ֆին, Ղուլիջանին, դատեր Թաջումին, մեծ պապուն՝ Գուրջիբէկին, և եղբարցն՝ Միրզին, Գուրջիբէկին, Խաչատուրին, քւերցն՝ Շախփաշին. Գուլաղին, հօրեղբաւրն՝ Թումաջանին, և զամենայն արեան մերձաւորս նոցին՝ զկենդանիս և զհանգուցեալս. ամէն։

Ի թուականութեանս հայկազան տաւմարի ՌՁԲ (1633)[32]։

761

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 5024

Գրիչ՝ Կարապետ երէց

120ա Գրեցաւ Լ[ու]ծմունքս Սահմանաց թվին ՌՁԲ (1633), ձեռամբ անարհեստ գրչի Կարապետ անբաժան իրիցու Յեվդոկացոյ, յիշեցէք ի բարձրաթռիչ աղօթս ձեր միով Հայր մեղիւ, վայելողք սորա։

762

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 5110

Գրիչ՝ Թադէոս
Վայր՝ Վան

ա

277ա Փառք...։ Գրեցաւ Սաղմոսարանս ի թուականութեանս Հայոց ՌԼ և ՁԲ (1633) ամին, ի յերկիրս Վան, ընդ հովանեաւ Ս. Էջմի[ա]ծնայ, ձեռա[մբ] անիմա[ստ] գրչի Թադէ[ո]սի հասանել ի յաւարտ Սաղմոսարանիս, ի լաւ և յընդիր յօրին[ա]կէ։ Եւ թէ պակասութիւն ինչ ի սմա գտանէք՝ յիսնէ է և ոչ ի յաւրինակէ։

277բ Արդ՝ գրեցաւ և [աւ]արտեցաւ տառս, որ կոչի Սաղմոսարան ի խընդրոյ-վարպետ Ավէտին, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան ազգատոհմանցն և ինձ անարժան գրչիս և ծնօղաց իմոց Աստուած ողորմի ա[սա]ցէք և Աստուած ձ[եզ ողոր]մեսցի. ամէն[33]։

բ

259բ— Աստուած ողորմի մահդասի Շահումին, որ այսաւր քաղցր երեր Զ(6)
260ա ժամին. Աստուած ողորմի իւրն և իւր ծնօղին։

գ

Այլ գրով

278բ Արդ՝ գրեցօ և աւա[ր]տեցաւ տառս որ կոչի Սաղմոսարանս Ասպատուրին, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան ազ[գ]ատոհմանց, և ինձ ա[ն]արժան գրչիս և ծնաւ[ղ]աց իմոց Աստուած ո[ղո]րմ[ի] ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

---

[32] 264ա էջի մի այլ հիշատակարանում թվում է վերևում հիշված անունները։

[33] «Արդ գրեցաւ»-ից մինչև այստեղ այլ գրով՝ մեկ ուրիշը նորից գրել է նույն էջում։

763

ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 5953 (1622 թ.)

Գրիչ՝ Նոյ քահանայ

106բ Ես՝ անարժանս և այնպիտեանս Նոյ քահանայս աւարտեցի զսբ. խորհուրդս ամենայն կարողութիւն և ձեր սբ. աղաւթիւք, և ձեռանդրեցայ ի թվին Հայոց [Ռ]ՁԲ (1633)։

764

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6367 (1461 թ.)

Վայր՝ Սանահին

271բ Դարձեալ յիշեցէք մաքրայփայլ աղաւթս ձեր Սան[ահն]ու Ս. Աստուածածնի ազատորդիքն՝ պարոն Վասակն, պարոն Ասլանն, պարոն Զուրապն, պարոն Քուրդբէկն, պարոն Ասլայմազն, որ գերի էր անկել սբ. Աւետարանս ի ձեռն այլազգաց, այս ազատորդիքն գնացին այլազգաց ձեռաց ազատեցին սբ. Աւետարանս. իւրանց հոգոյն տէր Աստուած, Յիսուս Քրիստոս, որ խաչեցաւ...։

Դ (4) գլուխ Աւետարանն Քրիստոսի՝ Ոհան, Ղուկաս, Մարկոս, Մաթէոս բարէխաւս լինին ի Քրիստոս և իւրեանք՝ զպարոն Վասակ և զընհայրն՝ պարոն Էլումն, զպարոն Ասլան և զհայրն՝ պարոն Ղարայխան, և պարոն Զուրապն և [զ]հայր իւր Այպէկն, և զպարոն Քուրդբէկն և [զ]հայր իւր Ուլուխան, և զպարոն Ասլայմազն և զհայր իւր պարոն Ամիրն, որ բազում պա[տ]երազմեցաք և ազատեցայք այլազգաց ձեռէ, ղյիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք նոցայ։

Թվին ՌՁԲ (1633). այն տարին, որ Թամուրազն [Գ]անջայ աւերեաց։

765

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 7744 (1604 թ.)

185բ Թվին ՌՁԲ (1633) Ս. [Յ]ակոբայ ժողովուրդն դատաստան արին խարճի վրա. խոճայ Ամիրասին կու տայ օսկու գլուխ ԺԸ (18) ըստակ, մղտեսի Փանոսը՝ ԺԸ (18) ստակ, անկից վարը ԺԲ (12)-ական, է (7) ըստակ Մոզան, Ժ (10) ըստակ Պողոսն, Ե. Ե (5.5) ըստակ Խաչգուտուզն ու Այազն, Ղազարն Բ (2) արապայ տախտակ՝ ԺԹ (19) ու կէս։

Գ (3) արապայ տախտակ ալ ԻԶ (26) խուռուշ, ԻԶ (26) ըստակ։ Փէնճէրէի երկաթ ՃԺԲ (112) ըստակ։

766
ԼՈՒԾՄՈՒՆՔ ՆԱՐԵԿԻ
Երևան, № 9283

Գրիչ՝ Մկրտիչ

72ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ Նարեկի Լուծմունքս ի խնդրոյ տեառն տէր [Եղի]ազար[34] աստուածաբան վարդապետի և անյաղթ փիլիսոփայի։ Եւ է անձանձիր ուսուցանող զժողովուրդ և զհօտն Քրիստոսի, որ ետ եռափափադ սիրով դրել զլուսածաւալ աղբիւրս և տուիս լի աստուածային խնկոցն, ձեռամբ յիմար և անարհեստ Մկրտչիս, թվին ՌՁԲ (1633)։ Աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք և վայելողք, սղալանացս և անարհեստութեանս մի՛ մեղադրէք, յորժամ ընթեռնուք, միով ողորմիւ յիշեցէք ի Քրիստոս զստացող սորայ ղտէր [Եղի]ազար բարունապետ և աստուածաբան վարդապետն, զոր տէրն Քրիստոս ընդ երկայն աւրս արասցէ և բարով վայելել տացէ. ղոր աղբիւր է գիտութեան և արբուցանող պասքեալ և ծարաւեալ հօտին Քրիստոսի և զովացուցանող քաղցրուսոյց վարդապետութեամբն իւրով, որպէս քառանկիւնի վտակս յադինական, որ արբուցանէ զքառանկիւն աշխարհս. նոյն սարասի և սայ։ Եւ զիս անարժանս կցորդէք և ողորմի ասացէք, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

767
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 10168 (1633 թ. առաջ)

Գեր. ազատող՝ Ամիրջան

ա

77բ Փառք...։ Ես՝ Ամիրջանս գնեցի զսբ. գիրս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հայրն իմ՝ Ասատուրին և մայ[ր]ն իմ՝ Գաւրանդուխտին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և վերջին մայ[ր]ն իմ՝ Գուլխանն, և կողակիցն իմ՝ Թէքրոյին։ Եւ տեսայ զսբ. գիրս ի ձեռն այլոց գերի. ցանգացայ և առայ և տուի ի հալալ ընչից իմոց. տուի ի ձեռն տէր Գաւթին, որ կոչի Շամթայ[35], ի դուռն Ս. Նշանին։ Որ ով կարդաք կամ աւրինակեք Ա (1) բերան ողորմ ասէք...։ Եւ ի թագաւորութեան պարոն Թէմուրազին և ի հայրապետութեան տեառն տէր Մովսէսին։

բ

71ա Թէմուրազն որ փախաւ թիւն ՌՁԲ (1633)։

գ

33բ Վա՜յ քեզ Ասասուր, որ ընկար լէկզու բերանն. քեզ ո՞վ ասաց, թէ էստեղ արի[36]։

---

[34] Երկու դեպքում էլ չնչել են անվան սկիզբը և մնացել է «ազար»։ Վերականգնեցինք «Եղիազար» և ոչ «Ղազար», որովհետև «ի» տառի հետքը խոշորացույցով երևում է։

[35] Կարելի է կարդալ նաև Լումթայ։

[36] Թեև այս երեք հիշատակարանները գրված են տարբեր գրերով, բայց դեպքերը պետք է տեղի ունեցած լինեն մոտ տարիներում. ուստի պայմանականորեն դրեցինք 1633 թ. շարքում։

768
ԱԻԵՏԱՐԱՆ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 34 (Մանրաժապավեն, Երևան, № 506)

202ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՁԲ (1633) և փափաղաւոր եղև սմայ և ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց խոճայ Այլավէտէ, որդին՝ Յետկարն, Յոհանն, Կարապետն, և ծնօղացն՝ Մերիասին, և դստերն՝ Մերփաշին. եղին ի դուռն Ս. Հրեշտակապետին, յիշատակ հոգոց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն։

Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զխոճայ Յոհաննէսն և զկողակիցն՝ Փիլիպանն, զորդիսն՝ Մկրտիչն, Փանոսն և զՅետկարն։ Եւ յիշողքն՝ յիշեալ լիցին...։

769
ԳԱՆՁԱՐԱՆ

ՊՊԲ., № 557

Գրիչ՝ Խաչատուր Կեսարացի
Վայր՝ Կ. Պոլիս

Փառք...։ Արդ՝ յանկեալ աւարտեցաւ սբ. Գանձարանս ի թվականիս Հայոց ՌՁԲ (1633), ի մայրաքաղաքիս Կոստանդինուպալիս, առ դրունս Ս. Սարգսի զօրավարին, ի յեպիսկոպոսութեանն տէր Գրիգորի ահրի եպիսկոպոսի, ձեռամբ բազմամեղ և անիմաստ գրչի Խաչատուր երէցի Կեսարացւոյ[37], որ զանունն ունիմ և զգործն ոչ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զիս զանարժան գրիչս, և զծնօղս իմ զՍատաղայն և զԿուլաղայն, և զամենայն արեան մերձաւորս իմ, և յԱստուած զձեզ յիշէ...։

Արդ՝ աղաչեմ զձեզ, յիշեցէք մաքրափայլ յաղօթս ձեր զստացող գրոցս զՓուրխանն, և զծնօղսն իւր՝ զՅովանէսն և զԸզԸոանն, և զհանգուցեալ որդիսն իւր՝ զՅովանէսն, զԿարապետն և զՍարգիսն, և զկողակիցն իւր՝ զՌահանն, և զծնօղսն իւր՝ զՅուսէփն և զՄանուշակն, և զեղբայրսն իւր՝ զտէր Լոյսն և Ղուկասն, և զքոյր Մարգարիտն, և զհօրեղբայրն իւր՝ զՄառուկն, և զորդիքն իւր՝ զԱնդրիասն, զԿարապետն, զԿոչիկն և զեղիկն, և զամենայն արեան մերձաւորսն...[38]։

770
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 740. տե՛ս նաև «Հայաստան» (Կ. Պոլիս), 1848 թ. № 27—80

Գրիչ՝ Յունան երէց
Վայր՝ Ուսկուտար

206ա [Փառք...։] Արդ՝ գրեցաւ Սաղմոսարանաց երգս աստուածահաճոյ
206բ մարգարէին Դաւթի, լաւ և ընտիր օրինակէ, որ կոչի Գառնեցի, ձեռամբ մահտեսի Յունան երէց անարժանիս, որ անունս կայ, գործս ոչ...։ Գրե-

[37] Մինչև այստեղ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 742, էջ 207 ա։
[38] Այնուհետև չափածո, թե Գանձարանն ինչպես պետք է պահել և խնամել։

ցաւ ի թուականութեանս Հայոց ՌՁԲ (1633) ամին, ի գիւղաքաղաք Ուսքուտարու, ի դուռն Ս. Կարապետին, է[ն?] տարին, որ Զամարէ վարդապետ մանզուլ արին, ըստամպոլցիք Ս. Կարապետոյ, հաղար երկու հարիւր ղուռուշ Ուսկուտարու քահանայք և ժողովուրդք [ետուն?] նոր գնեցին զեկեղեցին։ Մեծ և շատ աղմունք եղաւ, Լ (30) ղուռուշ բեռ աւելի թալաւ էլ եղև ի մէջ սոցա։ Ի թուականիս այսմիկ Կոստանդիանոյ[39] քահանայք և ժողովուրդն մահալ և արժանի տեսան Կեսարացի Գրիգոր վարդապետին, դեսպանք ղաւորեցին բերին [ի] Բուզան[դ]իայ, Յոնան Ոսկեբերան հայրապետի աթոռոյն արժանի արարին։

[Ի] թագաւորութեան սուլթան Մուրատին, որ Յանատուլոյ, և Ուռումելու, և ամենայն տեղաց խսպահի[ք] վերայ ելան Ըստանպոլի, թագաւորին խնդիրք արին՝ զտավտարտարին, թագաւորին խասաքի ղազի[40] և այլոց, որոց ոչ եմ գիտակ՝ զգլուխն առին և չար շատ արարին։ Երբ որ Ըստամպոլայ սպահիք չուեցին, յետոյ թագաւորն բարկացաւ[41] Եալազ պաշային գլուխ կտրեց, շատ ղորպայ պաշոն, խսպահու, շորվաճոյ[42] գլուխ կտրեց Մոճամատ-փաշան՝ ընկիչարի աղասին։ Աշուն էր ղրզրլպաշուն վերայ [սայ[43]] ղաւորեց։ Մէկ զարմանք կրակ անկաւ Ըստամպոլ, ծովափէն մինչև ի Սառաճխանան[44], ընկիչարեցու տանին էրեցաւ, շատ զարար դիպեցաւ Ըստամպոլու։

207ա Զարմանք մի. Հռոմացն պատրիարգն այլ// փոքր կարդացող ելաւ, զպատրիարգութիւն առաւ, յետոյ փաշանաց փոփոխում եղաւ, հին պատրիարքն փաշանուն կաշառ երեսի, զնոր պատրիարքն իւր ընկերօք ի սուր քաշել երեսի, ինքն նստաւ իւր տեղին[45]։

Աւարտ բանիս Տէր ողորմեա,
Առ հասարակ մեղ և նոցա...։
Զեռս գնայ, գիրս մնայ,
Յունան երէց Փրկչին ծառայ։

771

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Ա, № 741. տե՛ս նաև № 6333, հիշատ. № 173, էջ 38ա

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Լիմ

207ա Փառք.... որ ետ կարողութիւն տկար ոգւոյ և անարհեստ գրչի՝ Կարապետի հասանել յաւարտ սբ. գրոցս, ի վայելումն Սաեփանոս վարդապետին և միաբան եղբարցն ամենեցուն, որ կան հաւաքեալ ի Լիմ

39 Իմա՛ Կ. Պոլիս։

40 Ղ. Փիրղալեմյանի մոտ «տեղի». ուղղեցինք ըստ «Հայաստան» պարբերականի։

41 Ղ. Փիրղալեմյանի մոտ «բարձրացաւ». ուղղեցինք ըստ «Հայաստան» պարբերականի։

42 «Հայաստան»-ում «չորպաճոյ»։

43 Ավելացրինք ըստ «Հայաստան» պարբերականի։

44 Ղ. Փիրղալեմյանի մոտ «ի Սառաճխանէն»։

45 «Հայաստան»-ում սույն հիշատակարանի հրատարակիչը տեղեկացնում է, թե խոսքը վերաբերում է Կ. Պոլսի հունաց պատրիարք Աթանաս Վադիլարիոս և Կիրիլլոս Լուքարիսի գահակալական պայքարին։ Վերջինս հարել էր բողոքականության։

ծովապատին և ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին, անշինշ յիշատակ հոգւոյ իւրեանց...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ի յերկիրս Վասպուրականի, ընդ հովանեաւ Տիրամայրն Ս. Աստուածածնին և Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին, թուին ՌՁԲ (1633) յամին, յորում Մուրթազան եկն և զղըզըլպաշն հալածեաց և զերկիրս ազատեաց։

772
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 743 (1307 թ.)

Նորոգող և լրացնող՝ Իգնատիոս երէց

207ա ...Աստուած ողորմի ասացէք Իգնատիոս իրիցոյն... որ կաման
207բ Աստուծոյ նորոգեցի, և զթերին գրեցի, և շատ// աշխատեցայ. զըզըլպաշի
ահ կար, յիշտպեցայ, անմեղադիր լերուք սխալանացս...։ [Նորոգեցաւ?]
ի դառն և ի նեղ ժամանակիս, որ Մահմատանցի Մա[ւ]ռատ աղէն զՎանայ
բերդ գողացաւ՝ վաղունէք էլաւ, Մահմատ աղէն էրիշ էրաց չուր իրիկոյն
զբերդն առաւ։ Փառ[ք Աստուծոյ] քրիստոնէքն ազատան։
Ի թուին Հայոց ՌՁԲ (1633)։

773
ՍԱՐԳԻՍ ԳԻՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 507 (ժամանակ ?)։

423 Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... վերջին ստացողի սբ. գրոցս հարանց սբ. հօրն Ստեփաննոս վարդապետի[46], որ է ի Լիմ ծովապատ անապատի, որ է գլուխ Հ(70) եղբարց, որ են սպասաւոր Ս. Գէորգայ զօրավարին, յիշատակ հոգոց իւրեանց և ծնողաց իւրեանց...։

Յայսմ ամի նորոգեցաւ սբ. գիրքս, որ քուրտ Մուռատ աղէն էկաւ
424 երեսուն// հոգով գիշերաւ և զՎանայ բերդն գողացաւ[47]։ Յետոյ Աստուած
ողորմեցաւ օսմանլուն մինչ ի վեց ժամն աւուր առին, և զգարշելին
սատակեցին ի փառս սատանայի։

774
ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 114

Գրիչ՝ Մեսրոպ Խիզանցի, Աստուածատուր սարկաւագ

Վայր՝ Նորաշէն

162 Փառք...։ Արդ՝ շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբն նորին կատարեցաք զսբ. Աւետարանս Մեսրոպ դպիր Խիզանցի և Աստուածա-

[46] Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է. «Սոյն Ստեփաննոս վարդապետ յետ վախճանի Մոկացի Ներսէս վարդապետի, մականուամբ Բեղլի կոչեցելոյ ՌՀԶ (1627) ամի նստաւ վանահայր ի տեղի նորին»։

[47] Քանի որ այս դեպքը մի այլ հիշատակարանում նշվում է 1633 թ. (տե՛ս նախորդ՝ № 772 հիշատակարանը), ուստի սա էլ դրեցինք 1633 թ. շարքում։

տուր սարկաւագ, ի լաւ և յընդիր յաւրինակէ, ի թուականութեան Հայոց ՌՁԲ (1633) ամի, ի թագաւորութեան այլասեռիցն շահ Սաֆուն ե ի
163 հայրապետութեան// մերում Խաչատուր վարդապետին, ի դառն և ի նեգ ժամանակի։

Գրեցաւ զսա ի յերկիրն Պարսից, ի քաղաք Ասպահան, որ կոչի Շօշ յեզր պարըսպին Նորաշէն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի խնդրոյ բարեմիտ և աստուածասէր, հեզ և հնազանդ, ողորմած և հուրասէր, դերաց ազատող պարոն մէլիք Զաքարէն, և եղբայրն իւր՝ Ախիշանն, զոր ի վաղուց հետէ ցանկացեալ էին այսմ լուսայփայլ վարդապետիթ սբ. Աւետարանիս, յիշելով զբանն մարգարէին, թէ «Երանի...»[48], Վասն այն յոյսոյն ետուն գրել, և զարդարել ոսկով, և լազուարդով, և երանի երանի դեղերաւք, ի վայելումն մանկանց Սիոնի, և եդին յիշատակ իւրեանց և ծնաւղաց իւրեանց, հաւրն՝ Խլղաթին և մաւրն՝ Շահզադին, և ամենայն արեան մերձաւորաց։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմէլիք Զաքարէն, և զկողակիցն՝ Խանաղէն, դուստրն՝ Գաւզալաղէն, և միուս կողակիցն՝ Նուքարն, և որդիքն իւրեանց՝ Դիլաքն, Քուչիքէկն, Աղուքարէկն, և դուստրը Դուվարդն, կողակիցն՝ Գուլումն և զամենայն արեան մերձաւոր։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱխիշանն և զկողակիցն[49]

775

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԵՒ ԼՈՒԵՈՒՄՆ ՊԱՐԱՊՄԱՆՑ

ՏՁԱՐ, № 62 (1626 թ.)

350 Գրեցաւ ի թվին ՌՁԲ (1633). վաղճանեցաւ Ղուկաս եպիսկոպոսն[50],

776

ՇԱՐԱԿՆՈՑ

ՏՁՄՎ, № 354

Գրիչ՝ Յովհաննէս քահանայ

808 Եւ արդ՝ գրեցաւ և յաւարտեցաւ սբ. եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ի լաւ և ընդիր աւրինակէ, ի թուականութեանս հայկազան տումարի ՌՁԲ (1633), ի հայրապետութեան տեառն Սիմէոն կաթուղիկոսին, որ է աթոռն Սրսա, ձեռամբ անիմաստ գրչի Մելտենցի Յովանէս քահանայիս։ Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՅովանէս քահանայս։ Այլ և զուսուցիչն իմ այսմ արուեստիս, որ բազում աշխատանս կրեաց ի վերա իմ վասն ուսուցանելոյ, զտէր Խաչատուր եպիսկոպոսն Զեթունցին, Աստուած լուսաւորէ զիւր արդար հոգին։ Այլ և զառաջնորդն մեր զտէր Յոհան արհեպիսկոպոսն, և զմարմնաւոր ծնաւղն իմ՝ զԱստուածատուրն և զմայրն իմ՝ Թագուհին, և քոյրն իմ՝ զԵրանն։ Դարձեալ աղաչեմ զձեզ՝ որ անմեղադիր լինիք բանիս, զի կար մեր այս չափ է։

---

48 Եսայ., ԼԱ, 9։

49 Շարունակությունը պակասում է։

50 Այս անձնավորությունը թերևս սույն ձեռագրի ստացողն է (տե՛ս 1626 թ. շարքում)։

777
ՏՕՆԱՑՈՅՑ, ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ
ՏՅԶՄՎ, № 426

Կազմող՝ Տէր Թումայ

878 Գրեցաւ Տօնացոյցս թվին ՌՁԲ (1633), ի հայրապետութեան սբ. Էջմիածնի տեառն տէր Փիլիպոս նորին կաթուղիկոսի///

Վերստին կազմեալ Տօնացուց գիրքս ձեռամբ Ալիփնարցի տէր Թումայէ, ի վայելումն տէր Մարտիրոս քահանային///

778
ՄԱԿԱՐԱՑ ԿՐՕՆԱՒՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՐՅՄԱՆՑ ԱՄԻՐԱՅԻ
Ջմմառ, № 527

Վայր՝ Երուսաղէմ

130 Գրեցաւ պատմութիւնս կրաւնաւորին և ամիրային ի սբ. քաղաքն Էրուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ, և Ս. Փրկչին, և Ս. Հրեշտակապետացն, և տիեզերալուր Ս. Յարութեան, և Տիրամայր Աստուածածնին սբ. գերեզմանին, ի թվին ՌՁԲ (1633) ամին, ձեռամբ անարժան, անպիտան և տրուպ և ամենայնի հող ու փոշի սուտանուն հաւատ[աւ]որի, որ լի եմ ամենայն չար մեղօք և չիք առողջութիւն հոգւոյ իմոյ և հնար փրկութեան։ ...Աստուած բարով վայելել տացէ մեր հոգևոր հաւրն՝ խոշայ Դաւթին, ուր ծաղկեալ որդւոցն՝ Մկրտչին, Սողոմոնին, սբ. գերեզման ձեզ պահապան ամենայնի։

Ո՛վ հայրք և եղբայրք, անմեղադիր լեր գրիս սխալանացն ու խոշորութեան, նոտր լաւ չի գիտէի, անմեղադիր լերուք, մեր կայրն այս էր։

779
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱՅՆ ԴԱՒԹԻ
ՄՅԶԵՊ, III, № 952

Վայր՝ Կ. Պոլիս

506 Աւարտեցաւ Քաղուածոյս Սահմանաց իմաստասիրական սոփեստին մերոյ հայկազնեան տոհմի քաշ և անյաղթ փիլիսոփային Դաւթի և՝ հռետորի իմաստասիրացն և մեկնողի սորա տէր Առաքելի Սիւնեաց վերադիտողի, ի խնդրոյ Եղեսացի խոճա Նիկողոսին, որդոյ մահդասի Յովսէփին Ալէմեանց, որ այժմ բնակեալ են ի մայրաքաղաքն Բերիայ։

Արդ՝ ստացաւ սա ի հալալ արդեանց յիշատակ իւր և ամենայն յաբու զարմից և ազգատոհմից, զի զսա կարդալով իմաստնասցին։ Եւ չունի ոք իշխանութիւն գողանալ և վահառել։ Եւ եթէ ոք սղալի և վաճառէ, պարտաւոր լիցի ահեղ ատենին Քրիստոսի։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից և կաճառք աստեղափայլ սարկաւագաց, որք հանդիպիք սմայ կարդալով կամ յորի-

նակելով, յիշեսշիք ի մաքրափայլ յաղօթս զվերոյ գրեալ ստացող զիմաստասիրական զանձարանիս Բերիացի Նիկողոս, և զհայրն՝ մահդասի Յովսէփ, և մայրն՝ մահզասի Վարդիաթուն, և զեղբայրքն՝ զՍարգիսն և մահդասի Խաչատուրն, և ամենայն ազգատոհմն նոցա...։

507 Գրեցաւ իմաստասիրական սոփեստս ի թվին Հայոց ՌՁԲ (1633), ի մայրաքաղաքն ի Կոստանդինուպոլիս, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն։

780

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մեզեզ, IV, № 1096

Գրիչ՝ Յակոբ քահանայ
Վայր՝ Համիք

ա

142 Եւ զեղկելի Յակոբ գրիչս յիշեա՛ Տէր և ողորմեա՛. ամէն։

բ

143 Գրեցաւ գիրքս ասացուածոց ի մայրաքաղաքն Համիք, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մօրն Յուղիտայի, ի վայելումն Բարսեղի բարունապետ վերաձայնի։

Ո՛վ ընթերցողք յայսմ տառի,
Եւ վայելողք ի յետ սորի,
Յիշման առնէք զմեզ արժանի,
Եւ լի սրտիւ տայք ողորմի...։

գ

144 Փառք...։ Արդ՝ յանգ ելեալ աւարտեցաւ գիրքս այս, որ կոչի Լուծմունք Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, արարեալ տէր Առաքել Սիւնեաց դիտապետի, և Լուծմունք գրոցն Փիլոնի, և ասացուածք Յոհաննու Որոտնեցու, և նորին աշակերտի Գրիգորի Տաթևացու նորոգ լուսաւորչի և Լուծմունք Քերականին, արարեալ նոյն տէր Առաքել վարդապետի, և Լուծմունք գրչութեան քերականի, լուծեալ նոյն Գրիգորի Տաթևացու։

Յամի ՌՁԲ (1633) թուականի,
Զեռամբ Յակոբ քահանայի,
Որ յիշելոյ չեմ արժանի,
Ի գոնէ դուռ ի շուրջ գայի,
Տուն մի չունէնք նստի գրի,
Հոգիս տրտում է ի մարմնի,
Երբ դատողն ի յատեանն իջանի։

Ստացող՝ Բարսեղ վարդապետ

դ

142 Ո՛վ ընթերցողք կամ գաղաբարողք, աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, յիշել զիս՝ զանարժան, պիտակ անուամբ սոսկ Բարսեղ, յաղօթս սբ. և ի խնդիրս պատկանաւորս առաջի անմահ գառին...։

Ե

144 Յիշատակ ինձ տրուպ և յետ վարդապետաց, նուաստ ծառայ ծառայիցն Աստուծոյ Բարսեղ անուամբ ևեթ վարդապետի, զոր ետու դրել զսայ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց։ Նաև ուսուցանող վարդապետիս իմոյ զտէր Սուպիոն վարդապետին և սրբազան հայրապետին Եդեսացի. եղիցի ի սմայ մասն յիշատակի։ Զոր հայցեմք ի տեսողացդ և յընթերցողացդ, զի յընթեռնուն լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք, ինձ անարժան և մեղաւոր զառածելոյս Բարսեղ վարդապետիս, և իմոցն ամենայնի, զի աղօթիւք և յիշմամբ ձերոց թողութիւն գտայց ի Քրիստոսէ...։

Գրեցաւ գիրքս այս ի մայրաքաղաքս Համիք, ի գուռն Ս. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի, [ի վայելումն?] և ի ծաղխիւք Բարսեղ վարդապետի վերադիտողի մայրաքաղաքիս և այլ շրջակայ երկրիս...։

781

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Մ3ՁԵՊ, V, № 1473

Գրիչ՝ Ոնանէս եպիսկոպոս

101 Յանկեալ կատարեցօ գերամաքուր բուրաստանս երբներկ ծաղկաւք, դեղ բժշկութեան հոգոյ խնդրողաց շնորհալի սփռեալ ընդ ոլորտս տիեզերաց և սբ. ընթեալ վարդապետին Ղուկաս Լոռնացուն, ձեռամբս Ոնանէս եպիսկոպոսիս աւարտեցաւ թուին ՌՁԲ (1633), կաթողիկոսութեան տէր Մովսէսին, համշիրաք եղբօրն Կիլիկիոյ տէր Սիմէոնին։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ես մոխրայմած և մեղսայծաւալ ծառայս անարժան Ոնանէս կոչելոյ, որ ջանիւ և աշխատութեամբ գրեցի։

Արդ՝ գրեցաւ սբ. դիրքս ձեռամբ Մելաենցի Ոնանէս եպիսկոպոսիս և եմ տրուպ ամենայն եպիսկոպոսաց, յանունս ունիմ և գործս ոչ ունիմ։

Դարձեալ աղաչեմ զձեզ, դասք քահանայից, անմեղայդիր լերուք սղալանացս լոկ խամ էի, կարս մեր այս է։

782

ԱՂՕԹԱԳԻՐՔ, ՆԱՐԵԿ

Մ3ՁԵՊ, V, № 1576

Գրիչ՝ Մելքիսէք Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

Փառք..., որ ետ կարողութիւն տկար տարտամ, և մեղսամած, և անարուեստ գրչիս, նուաստ և ներգևեալ և անարժան Մելքիսէքիս Մոկացոյ հասանել ի յաւարտ աղաւթիցս, որ ասացեալ է ի Վարդան վարդապետէ, որ է մաղթանք ի բոլոր ամենայն սբ. տնաւրինայս/ինքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յԵրուսաղէմ ներքոյ և արտաքոյ։ Այլ և ունիմք ասացեալ զաղաւթս Նարեկացոյն Գրիգորի սբ. վարդապետին, զոր բազում ջանիւ ծայրաքաղ արարեալ գրեցի, բազմավէր հոգւոց բժշկութիւն, և ի թողութիւն մեղաց, որք հաւատով ընթեռնուն և բազում արտասուաւք խնդրեն զթողութիւն մեղաց իւրեանց։

Եւ արդ՝ ես մեղաւոցեալ դրիչս աղաչեմ, զդասս լուսերամ կրաւնաւորաց և քահանայից, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան զրիչս պնուաստ անուն Մելքիսէք, որ զանունս ունիմ քահանայի և գործովս հեռի եմ յամենայն բարի գործոց. այլ և ծրնաւղաց իմոց Բաշտուրաթին և Ինախփաշին, և հարազատ եղբարցն իմ՝ տէր Յովանէս կրաւնաւորին և Շերբեկին, և քրւերց, և ամենայն արեան մերձաւորաց...։ Գրեցաւ Աղաւթատեսրս ձեռամբս անարժան գրչիս, նուաստ անուն Մելքիսէքիս, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ աստուածընկալ սբ. լուսաբուղխ գերեզմանին Քրիստոսի, ի Ս. Յակոբայ սբ. տաճարին և Ս. Փրկչին և Ս. Հրեշտակապետին...։ Եւ ի յառաջնորդութեան սբ. ուխտիս տէր Գրիգոր արքեպիսկոպոսին, ի թվականիս Հայոց ՌՁԲ (1633) ամին աւարտ եղև, զոր բազում փափաքանաւք յարմարեալ գրեցի զսբ. տառս, որ կոչի Նարեկացի, զոր շանիւ բազում աշխատեալ ժողովեցի և գրեցի անձին իմոյ և յիշատակ հոգւոյ իմոյ; և ծնաւղաց, և եղբարց, և ամենայն արեան մերձաւորացն...։

783
ՄԱՇՏՈՑ

ՄՁՎՍ, III, № 335 (ԺԴ—ԺԵ դար.)

Կազմող տէր Աւետիս, տէր Յակոբ

206 Վերջին ստացաւղ Մաշտոցիս յիշեցէք ի Քրիստոս զՆորարեն և այլ արեանառու մերձաւորացն՝ կենդանեաց և ննշեցելոցն, որ գնեց զայս սբ. Մաշտոցս իւր հալալ վաստակոցն և եդ յիշատակ ի դուռն Ս. Յովհան-[ն]էսու։ Ով ոք [յ]անդգնի զայս սբ. Մաշտոցս խաչին բաժանել կամ գրաւ գնել կամ ծախէ՝ նա պատիժ կրէ իւր անձին՝ աստ և հանդերձելումն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զկազմողս սորա զտէր Աւետիսն և զտէր Յակոբն։

Թվին ՌՁԲ (1633)։

784
ՄԱՌԳԻՐՔ

Երևան, № 10768. տե՛ս նաև ՄՁՎՍ, № 29, էջ 393. Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 306

78ա Թվին ՌՁԲ (1633) ի մայրաքաղաքն ի Սիս <դրին> Կէսարիոյ Գրիգոր վարդապետին, և Գրիգոր վարդապետին Զէյթնցոյ, և Ներսէս վարդապետին Սեպաստացւոյ, և Յակոբ վարդապետին Կաղկրոցոյ, և Մխիթար վարդապետին յԱրևելոյ, սոցա ամենեցուն հաւանութեամբ դրին յաթոռ կաթողիկոսութեան զտէր Սիմէոն արքեպիսկոպոսն։ Վասն այն գրեցաք որ ի պիտոյ ժամն իմացուի[51]։

[51] Այս վկայությունը բառացի տե՛ս 1679 թ. ընդօրինակած ձեռագրում (Ցուցակ, էջ 387)։ Լրացուցիչ տեղեկություններ տե՛ս Հավելվածում։

785
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՀՍ, № 41

Գրիչ՝ Մկրտիչ սարկաւագ
Վայր՝ Հալապ

86 Փառք.... որ ետ կարողութիւն ինձ անարժան և նուաստ գրչի՝ մահտեսի սարկաւագ Մկրտչիս: Քանզի ես՝ նուաստ Մկրտիչս սբ. էջմիածնա[յ] եկի ի սբ. Երուսաղէմ գնալու, և գրեցի զսբ. Աւետարանս: Վասն որոյ խնդիր եղև սմա աստուածասէր և բարէմիտ Ջուղայեցի խոճայ Սարուխանն, որ ստացաւ զսայ ի հալալ արդեանցն և արդար վաստակոցն և եդ յիշատակ ի Հալապ քաղաք ի դուռն Ս. Աստուածածինն: Յիշատակ է սբ[52]. Աւետարանս Ջուղայեցի խոճա Սարուխանին, և իւր հաւրն՝ Վարդանին, և ծնօղացն՝ Հոիփսիմին, և կողակցոյն՝ Մարիամ խաթունին, և Թուրվանտին և Դշխոյին, և որդոցն՝ Սիմէոնին, Վարդանին, Սարգսին, Մեսրոպին, դստերն՝ Հոիփսիմին: Այլ և Աստուած ողորմի ասացէք մահտեսի Ամիրջանին, հաւրն՝ Սարգսին, ծնողացն՝ Խանաղային, մեծի և փոքու. ամէն: Այլ և Աստուած ողորմի ասացէք խոճայ Սարուխանին, մեծ հաւրն՝ Ճանաղին, մեծ մաւրն՝ Խիալին, հաւրեղբարցն՝ Յովանիսին, Մեսրոպին, և կողակցոյն՝ Վարդիկին, որդոյն՝ Սարհատին, Մեսրոպին, եղբարցն՝ Գրիգորին, Խաչատուրին, Փիրասափին, Սուլթանխանին, Սիրութուխթին, Եղիսաբեթին, Եպրեմերին, Գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՁԲ (1633), որք ընթեռնոյք Աստուած ողորմի ասացէք խոճա Սարուխանին, և իւր ամենայն արեան մերձաւորացն. ամէն:

786
ՀԱԻԱՔԱԾՈՅ
ՁՁԱԲ, № 264

Գրիչ՝ Յոհան

1166 Այլ և ինձ վատթար գրչի Յոհան նուաստի ողորմի ասողացդ՝ տէր Քրիստոս ողորմեսցի. ամէն: Թվին ՌՁԲ (1633)[53]:

787
ՄԱՇՏՈՑ, ԳԱՆՁԱՐԱՆ (1459 Թ.)
Արծնեան, «ՀԱՄ», 1962 Թ., էջ 49

Նորոգող՝ Յակոբ

Դարձեալ յիշեցէք զբարեմիտ քրիստոնեայն զՈվանէսն, և զհայրն իւր՝ զՇահուազն, և զմայրն իւր՝ Անապիսանն, և զկողակիցն իւր՝ զԳուլիկն, որ ետ սայ նորոգել ի հալալ վաստակոց իւրոց: Ով որ հանդիպիք մէկ բոլոր սրտիւ ողորմի ասացէք. ամէն:

---

[52] Բնագրում «սբ.»-ը կրկնված է:

[53] Ցուցակի միևնույն էջում պահպանվել է 1680 Թ. հիշատակարան. «ես եմ քո ծառան, ի թվին ՌՃԻԹ (1680), ի ձեռն Յովանէսն»: Անշուշտ տարբեր անձնավորություններ են:

Ես՝ մեղաւոր Յակոբս նորոգեց[ի] ՌՁԲ (1633) թվին, ի դուռն Ս. Աստուածածնին, բազում աշխատեցաւ Աղաչեմ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, ով որ հանդիպիք, իմ մեղացն թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ։

788
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թորոս աղբար, Բ, էջ 396—398

Վայր՝ Տիգրանակերտ

...Գրեցաւ սբ. Աստուածաշունչ տառս ի մայրաքաղաք Տիգրանակերտ, որ այժմ ասի Յամիթ, ի դուռն Ս. Կիրակոս եկեղեցւոյն, ի հայ թվականիս ՌՁԲ (1633), ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին, և ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տէր Մովսէս սրբասնեալ, առաքինի, խարազնազգեստ ճգնաւոր կաթողիկոսին, ի յառաջնորդութեան մայրաքաղաքիս տէր Բարսէղ աստուածաբան վարդապետին։ Յաւուրս սորա հաստատեցաք դպրոց յարհեստ գրչութեան, պատճառ ինքն լինելով, ետուր գրել մադաղաթ Աստուածաշունչ մի յոսկենկար յանկուածով. և տարեալ յԵրուսաղէմ, եդ յիշատակ ի դուռն Սրբոյն Յակոբայ։ Եւ այն եղև նպաստ որ գրեալ եղև Դ (4) Աստուածաշունչ մինչև ցայժմ, որ մինն այս է, զոր ստացաւ յԱրղնու Ղուկաս եպիսկոպոսն, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն։ Այլ և յայսմ ամի էր քաղաքիս Համթայ իշխան և տեղապահ, սիրելին թագաւորին՝ Մուրթուզայ փաշայն, սիրող քրիստոնէից, որ յաւուրս սորա շինեցան և նորոգեցան եկեղեցիք քրիստոնէից։ Եւ յայսմ ամի նորոգեցին զՍ. ,Կիրակոսի եկեղեցին և մեծացուցին, և սրահ կամարակապ շինեցին գաւիթ եկեղեցւոյն. և պատճառ նորոգման խոճա Երեմիան, և երեսփոխան մղտեսի Գասպարն, որ մեզ դպրոցի խուց շինեաց, զվարձն և զփոխարէնն յԱստուծոյ ընկալցին։ ...Աղաչեմ, զդասս ընթերցողաց սբ. Աստուածաշնչիս, որ լաւ խնամք տանիք, ի հրոյ, և ի ջրոյ պահէք, և ի տգէտ ընթերցողաց...։ Մնասցէ սբ. Աստուածաշունչս անշրեալի յիշատակ տէր Ղուկաս արհի և պանծալի հայրապետին ի յաւրհնեալ վիճակն իւր յԱրղնի, ի դուռն Բարձրահայեաց Ս. Աստուածածնի, զոր էր շինեալ և հիմնարկեալ Նաղաշ սրբասնեալ Մկրտիչ եպիսկոպոսին ի պարծանս Հայաստանեայց։ Եւ մի՛ իշխեսցէ ոք հանել զսա ի դրանէ վանից Ս. Աստուածածնիս, թէ ծախելով կամ գրաւելով՝ իւր ազգականաց կամ յաւտարաց կամ յոյլ և ծոյլ առաջնորդաց։ Ով ոք որ իցէ՝ թէ՛ կարդացող, թէ՛ աշխարհական նենգութեամբ պատճառանաւք ինչ հանէ զսբ. Աստուածաշունչս ի դրանէ Ս. Աստուածածնին, ի յԱստուածաշունչ տառս որչափ վատ և նզովք և անէծք կայ՝ ի վերայ նմին եղիցի. և որ սիրով և հաւատով ընթեռնու և լաւ խնամք տանէ, և ի գէՀ տեղէ, և ի հրոյ, և ի շրոյ պատրաստ պահէ, որչափ ի յԱստուածաշունչս շնորհք և աւրհնութիւն [կայ] և նախախնամութիւն՝ ի վերայ նորին եղիցի...

789
ԱԻԵՏԱՐԱՆ

«Արձագանք», 1888 թ., № 12, էջ 162. տե՛ս նաև Արցախ, էջ 333—334,

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Շուքարքէկ

Գրեցաւ սբ. Աւետարանս և ի դառն և ի նեղ ժամանակիս, ի լաւ, ընտիր աւրինակէ, ի յերկիրս Վերին Զակամ, ի գիւղս որ կոչի Շուքարքէկ, ձեռամբ մեղաւք զառածեալ Յովհաննէս երիցոյս, որ եմ ի յերկրէն Դանջայոյ, ի գեղէն Շատախոյ, որդի մահդասի Դաւիթ քահանայի, ի հայրապետութիւն սբ. յաթոռոյն էջմիածնայ տեառն տէր Մովսէսին, որ կրկին լուսաւորեաց զՀայաստան աշխարհս. և յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, հայրապետութիւն Աղուանից տէր Յովհաննէսին, որ մատ-ն[եց]աւ ի ձեռն պարսիկ ազգին, տարան ի դուռն շահի, վերջն Աստուած գիտէ. և եպիսկոպոսութեան պարունտէր Բարսեղին, ի թուականին Հայոց ՌՁԲ (1633), ի ժամանակս շահ [Ա]բասին:

790
ՄԱՇՏՈՑ (ժամանակ?)

Կյուլեսերյան Բ., Պատմ. կաթող. Կիլիկիոյ, էջ 305

Ես՝ նուաստ Սիմէոն կաթողիկոս Սեփասացի շնորհաւք և ողորմութեամբ Աստուծոյ նստա յաթոռ հայրապետութեան Սսայ, ի մեծ թվին Հայոց ՌՁԲ (1633),

791
ԱԻԵՏԱՐԱՆ

Ճանիկեան, № 23

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Կ. Պոլիս

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն Կ. Պոլիս, ձեռամբ
88 սուտանուն Ղա//զարին, ի թուին ՌՁԲ (1633), ի յիշատակ Ապուչեխցի Սիմոնին:

792

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Երևան, № 7045

Գրիչ՝ Արիստակէս երէց

193բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. դիրքս ձեռամբ եղկելի և անարժան, և անպիտան գրիչս, ոգնամեղ և անարմար գրող սորին Արիստակէս երէցս, որ բազում աշխատութեամբ գրեցի զլուսազարդ զՄեկնութիւն սբյ. պատարագին ի լաւ և ընդիր աւրինակէ։ Եթէ ոք հանդիպիք սմա կարդալով
194ա կամ աւրինակել[ով], յիշեցէք ի մաքրափայլ յաղ//աւթս ձեր, զուսուցանող ըզծնաւղն իմ, զհոգևորն՝ զտէր Սարգիս բարձունապետն, և զմայրմնաւոր զծնաւղն իմ՝ զմահտ[ես]ի զՄկրտիչն, զմայրն իմ՝ զՇահսուլթանն, և զամենայն զարեան զմերձաւորսն, որ եդին յիշատակ ի ձեռն տէր Արիստակէսին։ Եթէ որք կարդա կամ աւրինակէ անմեղադիր լերուք սղալանաց գրիս, զի չափրն մեր այս էր։

Ի թվականիս հայկազան սեռիս ՌՁԳ (1634), որ Յունք ծռազատիկ արին և մոլորեցան[1], որ էր գիր տարոյն Շ գիրն։

Գիտեմ եղբայրք, զի սովորութիւն է ոմանց, որ վերջին ժառանգորդք գրոցն զառաջնոյն զանունն կու ջնջեն և զիւրեանց զանունն կու գրեն։ Եւ է չար սովորութիւն այս, աղաչեմ, մի՛ գործել զչարդ զայդ, զի մեծ
194բ չար է։ Ապա թէ արժան է դրելոյ, գրեսցէ և զիւր ա//նունն յայլում տեղուոջ, և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր։ Եւ որք յայս յանդգնի և ջնջէ՝ ինքն ջնջի ի կենդանեաց գրոյն, ո ոք և իցէ եթէ մեծ ոք և կամ փոքր։

Դարձեալ յիշեցէք զգրողս սորին զԱրիստակէս երէցն և զմեղաց թողութիւն խնդրեցէք իւրայնոցն և կողակցին՝ իրիցկնոջն՝ Տիրուհէ, և մեղաց թողութիւն խնդրեցէք...։

Աւարտումն գրոցս փետրվարի ԺԵ(15), աւրն շաբաթ, ի թվին ՌՁԳ (1634), գ[ի]ր տարոյն Շ։

---

[1] Ինչպես նշված է հիշատակարանի վերջում ձեռ-ի ընդօրինակությունն ավարտվել է 1634 թ. փետրվարի 15-ին, բայց հույների ծռազատկի տոնակատարությունը ասված է անցյալ կատարյալով «արին և մոլորեցան»։ Մեզ թվում է, փետրվարի 15-ին այդպես գրելու պատճառն այն է, որ գրիչը գիտակցել է 1634 թ. ծռազատիկ լինելը և նշել է այդ «մոլորությունը»։

793
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
Երևան, № 7544 (ԺԵ դար)

84բ Յիշատ[ակ] է Քարոզգիրքս Տէրտէրին, և որդոյն՝ Իէկլաւրին, և թոռանցըն՝ Սատուրին, Թաթոսին, ի դուռն Ս. Յակոբին։ Ով ոք հանդի[պի] սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք...։ Ով ոք հանել կամ ծախել կամի, թէ՛ առաջնորդաց, թէ՛ վարդապետաց, [թէ՛] քահանայից, թէ՛ մեր վան///լիցն, ով ոք հանդգնի...։

Թվին ՌԶԳ (1634) փետ[րուարի] ///

794
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՏԵՐԱՎՔ, № 242

Գրիչ՝ Աւագ երէց
Վայր՝ Ղազվին

380 Փառք...։ Աւարտեցաւ յիշատակ սրբոց մարտիրոսացս, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Աւագ Երէցի, ի թուին Հայոց ՌԶԳ (1634), արաց ամսոյ է (7), և մարտի ԺԹ (19), ի յերկիրս Պարսից՝ Ղազվին քաղաքի, ի հայրապետութեան տեառն սբ. աթոռոյն Էջմիածնա[յ] տէր Փիլիպոս կաթողիկոսի, եպիսկոպոսութիւն Խաչատուր վարդապետի։

Եւ արդ՝ ես Աւագ քահանայս, գրեցի զգիրքս, քանզի որք մեծութիւն ընչից ըղձանան ոչինչ աշխատութիւն զմտաւ ածեն, յայլմէ այլ անցանել գաւառս հեռագնաց ուղաւորութեամբ, որպէս զի զշահն աճեցուցանել մարթասցեն, նաև ընդ համատարած ծովուն ծփանս նաւարկեալք, որք բարկացայթ ալեաքն կոհակաձև դաշտանան։ Արդ՝ ընդապտոյտ խորոցն բքացեալ կուտիցեն մէտ առ մէտ ալեացն ահ պակուցող տեսանողացն արկանելով, իսկ արիացեալքն, ստոր իշիցն ի խորս խաւարային յարոցն համարձակին, ի քարաժեռ դժուարամուտ տեղեայն ի խնդիր ականցն զանազանելոյ։ Լաւ համարելով զմահ անձանց քան ունայն ձեռաւք զվատացն ժառանգել զանուն և այլք ըստ քերական արուեստին հալոցաւք հնոցեաց զոսկոյն գիւք արուեստաւորելով զանաւթն պատուական։ Ըստ նմին աւրինակի, Աւագ քահանայս ի խնդիր եղեալ այսմ հոգիանորոգ լուսերանկ, ծաղկաւէտ, վարդափթիթ և անուշահոտ բուրաստանիս, ստացա զշար մարգարտեա և զանարիկ մեծութիւն սրբոց եկեղեցւոյ, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հաւրն իմոյ՝ Ավանին և մաւրն իմոյ՝ հանգուցեալ առ Քրիստոս Հայոցին, և եղբարցն իմոց՝ Սրապիոնին, Ղուկասին, և քոյերն իմոյ՝ Ղարիբին, և դստերացն իմոց՝ Շուշանին, Ճայիաթունին, Պետրոսին և Պաւղոս սարկաւագին, և Ոհանին և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և մեռելոց։

381 Արդ՝ և ես Աւագ Երէցս մեղօք ի լի,
Ըզխ (40) ամն լրմնեցի,
Զամէն ի հետ մեղաց կացի,
Ըզմահու աւրն չյիշեցի։

Զարն ուտէի և ըմբէի,
Ես ծոյլ և թոյլ ամենայնի,
Աշխարհս ծով էր ու ես ծրփէի,
Միթէ իմ Տէրն ինձ ողորմի։
Զինչ որ այլոց խրատ տայի,
Յաւժար մտաւք զայն գործէի,
Այլոց զշաւղն յայտնէի,
Եւ զիմ կերանն ծակէի։
Զգրոց կոճակն արձակէի,
Եւ այլոց քարոզէի,
Ես որպէս սալ եմ դարբնի,
Եւ կամ զորց քար ի մէջ շրի։
Տէրն հրամայէ յիւր քարոզի,
Թէ վայ որ ի կին մարդ հայի.
Ըզհրաման Տեառն ես անցի,
Վայ ինձ ։ եղուկ յամենայնի։
Ես կարգ առի քահանայի,
Եւ զայն գործով չկատարեցի,
Յանմեղ մարդկանէ գովէի,
Բայց վա՜յ հազար բերան ինձի։
Աստուածածին կոյս սրբուհի,
Իմ յոյսն դու յաւուր մեծի,
Բարեխաւսեա քո Միածնի,
Վասն անարժան քո ծառայի։
Որ ով զսակա։ բանքս լսէ,
Նա մեզ ասէ Տէրըն ողորմի,
Զի Տէրն քաղցր է ու բարի,
Ինձ և ամենիցդ ողորմեսցի. ամէն։

Եւ արդ ես՝ սոսկ անուն քահանայ, անարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ, յոյժ փափագմամբ և ջերմն սիրով աւարտեցի։

Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց և անկատարս ի կատարելոց, մեղանչական ի յանմեղաց, անկարգս ի կարգաւորաց, անյիշելիս ի գրչաց, անարհեստս ի յարուեստաւորաց, տգէտս ի գիտնականաց, բազմամեղ սուտանուն քահանա Աւագ։ Արդ աղաչեմ զձեզ, ո՜վ քահանայք և մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեցէք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Խաչատուրն, զտէր Սաեփանոսն, տէր Աւետիսն, տէր Յովանէսն, /// և զմիւս փոքր տէր Աւետիսն, յիշեցէք ի Քրիստոս։ —

795

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՈՆԱՅՈՅՑ

ՏԵՐԱՎՋ, № 280 (1649 թ.)

ա

487 [Վ]ասն ծառաստկին, թէ հարցանէք զմիտիքն, որ Ա(1) բարեկենդանի շաբաթն պահի կունենային, Պառոնտէրն վերացուց ձեռագրով. հետ

մեզ սբ. Սարգիսն, զԲարեկենդանն արարին զՁատիկն Դ (4) ազգս՝ հայն, հապաշն, ասորին, զփտին. զլուսն հանին. հ[ո]ռոմին ասին, փաշան, զատին, Պարոնտէրն, շեխերն, «Եկէք զձեզ բարիշցնենք, գնացէք հետ հայուն լուս հանէք»։ Նոքա ասին, թէ՝ «Մեզ գախլ չկա, ի լուսն սիշիլ եղաւ». թէ՝ «նոքա գախլ չունին լուսոյն». այս՝ ի լուսոյ ժամն եղաւ։ Պահքն որ սկսանք զժար բաներ եղև հ[ո]ռոմոյն։ Աստուած զԳրիգոր Պարոնտիրոջ Ա(1) օրն Ռ(1000) անէ. հ[ո]ռոմնէրն սարտարէն չաուշ բերին Հալապայ, Շամայ փաշէն չատուշ բերին։ Մեզի ամբ կէր Ռ(1000) տարուց գրած. Մահմեթի ձեռագիրն առին, շարիաթ մտան Դ(4) անգամ։ Ամէն մեզ վկայութիւն տվին, սիշիլ եղև Զատիկն մեզի։ Նոքա ասեն, թէ՝ «Դուք կաշառ էք տուել»։ Գ(3) չհտի խամխամ, որ է քահանայ, բերին ԱՃԿ(160) տարոյ, ԱՃԽ(140), ԱՂ (90) տարոյ։ Նոքա այլ վկայեցին, ասին թէ՝ «Մեք ձեզ այլ դին թշնամի ենք, քրիստոնէից այլ»։ Ապա Աստուծով զրուցեալ, մեք պիտի զնսային խաչեմք, թաղեմք, Զատիկ առնեմք։ Յետ Ը(8) աւուր սոքա առնեն Զատիկ, որ Քրիստոս յարի, դեռ մեք չենք, հոռոմն լարեր, թէ՝ «Մեզ Զատիկ է»։ Հոռոմն սուտ է, հայուն է ըղորդ։ Սիշիլ եղև թաքրար։ Հարցան հ[ո]ռոմին, թէ՝ «Քանի տարի է, որ մէկ տեղ Զատիկ կուտէք»։ Ասեն «Ճ(100) տարի»։ Այլ և սիշիլ, հուճաթ եղև մեզի վրայ, թէ՝ «Զատիկն Հայոցն է, հոռոմն հետ չեկն»։ Զգերեզմանի դուռն մհրեցին։ Թաքրար ի Շամա[յ] փաշէն գնացին, նոքա այլ, մեք այլ քուրքչիրաշի Աեսիսն, զաուխչի Գրիգորն մեզի Ժ (10) չաուշ բերին։ Մինչ նոքա Շամա[յ] եկին, նոցա սև Զատիկն անցաւ, մտան ի Յարութիւնն, գերեզմանն չտեսան, լոյս չտեսան, բոլոր չեկան, Ճ(100) սակվան կու պահեր, լուս չտեսան, ելան կորան ամօթոյ։ Մեր Զատկին չգադրան, կէսքն այլի գնացին, կաշառ խոստացան ԲՌ(2000) ղրմզի փաշային, ԲՌ(2000)՝ զադուն, թէ՝ «Մեզ չբացուաւ գերեզմանի գուռն, թող նոցա չբացուի»։ Մեր բերած մարդն մէկ մի մտիկ չարաւ, ելաւ ի մահքամէն, գնաց զ[Յ]արութեանն դուռն եբաց, զգերեզմանի մհրերն քակեց, յաւաք չորեքշաբթի օրն տրտմութիւնն ու աղմուկ շատ եղաւ։ Գոհութիւն Աստուծոյ, անչափ մեզ հետ բարի եղև, բայց զփողի գնալոյ չափն և զիաղալուն Աստուած միայն գիտէ։ Գրեցաւ թվին ՌՁԳ (1634), ապրիլի ամսոյն ԺԳ (13)։

Բ

Թվին ՌՁԳ (1634)-ումն ծռազատիկ եղև, գիր տարոյն Շայն, ապրէլ Զ (6)։

796

ՃԱՇՈՑ

ՊՁԿ, № 7 (1458 թ.)

17 Թվին ՌՁԳ (1634) ապրիլ ԺԳ (13) հոռմնին ծռազատիկ արին։ Զարզարդրին[2] լոյս կելլու ասին, չելաւ։ Ապրիլ Զ (6) ասին Զատիկն շատ կռիւ հնարքնի արին, շատ ըստակ խարճեցին, մենէ ալ շատ ըս-

[2] Պետք է լինի Շառզարդարին։

տակ գնաց։ Առաջնորդն տէր Գրիգոր եպիսկոպոսն էր, կաթողիկոս Էջմիածնայ տեառն Փիլիպոսն էր, թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրադն էր։

797

ԲԱՌԳԻՐՔ

Մագիստրոս, № 45, տե՛ս նաև նույն տեղում, № 37, էջ 12

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

15 *Աստանօր կատարեցաւ Բառգիրքս և խրատքս գրչութեան և այլ բազում բանք, որ կան ամբարեալ ի միջի սորա, ի լաւ և յընտիր աւրինակէ. ուղղեալ ի հարանց սրբոց և յաստուածապահ վարդապետաց, ի թվին ՌԶԳ (1634)։ Որ ի սոյն ամի եղև ծառաստան Զատկաց ազգի կոչեցեալ Յունաց։ Որ տանուտէրն Այծեղջիւրն էր, գիր տաբուն Շ-ան և եաւթնեբեակն Ի, վերադիրն Թ։ Ազգն Հոռոմոց և այլ քրիստոնեայք յապրիլի Զ (6) Զատիկ արարին, ընդ Հրէից ազգին, որ էր Լուսին ԺԸ (18) աւուր։ Բայց ազգս Հայոց ապրիլ Զ (6) աւագ էրում ասաց և յապրիլի ԺԸ (18) Զատիկ արար, որ էր Լուսինն ԻԵ (25) աւուր. որ յապրիլի ամսոյ ԺԲ (12), յաւուր մեծ շաբաթուն յիններորդ ժամուն լոյսն բղխեաց ի սբ. գերեզմանէ Քրիստոսի, զոր ակներև տեսին ամենայն ազգ, որ անդ կային հաւաքեալ քրիստոնեայք և այլազգիք՝ Արաբացիք և Տաճիկք, դուրք և իշխանք և շեխերն....*

Սկիզբն գրոցս եղև ի գաւառն յԱսիա, ի քաղաքին Կոստանդինուպոլիս, *ի հայրապետութեան քաղաքիս տէր* Գրիգորի *և ի կաթողիկոսութեան տեառն տէր* Փիլիպոսի... *ձեռամբ...* Յակոբ *դպրի... յիշել աղաչեմ զգծողսն՝* Վահրարին *և* Ղազարոսին.....

798

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2141. տե՛ս նաև Կամենից, էջ 186

Վայր՝ Նովինա

121բ *Աւրհնութիւն և գոհութիւն և փառք..., որ ետ զաւրութիւն տկարութեանս իմոյ գրել զայս գիրս, որ կոչի Հարցմանց։ Արդ՝ այսմ գրիս փափաքող եղեալ գերերջանիկ և աստուածարեալ, և սրբազան տէր* Անդրէաս *քահանայն. ոյժ սիրող աստուածային տառիցն և ջատագով ուղղափառ հաւատոյ և ախոյեան յաղթող, ընդդէմ ամենայն հերձուածողաց։ Արդ՝ գրեցաւ սայ ի թուականիս Ռ և ԶԳ (1634) մայիս ամսոյ ԻԱ (21), ի թագաւորութեանն Լէհա Զորրորդ* Վլատիսլաւ *դռայլին. այսմ ամի զ*Մուսուլու *թագաւորութիւնն առաւ, ի նորաշէն քաղաքս որ կոչի* Նովինա, *ի դուռն Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան սբ.* Էջմիածնայ *տէր* Փիլիպոս *կաթողիկոսին։*

Յիշատակ պատուական և գերամաքուր տէր Անդրէաս *սրբակրօն քահանային, և հրեշտակ երամ զարմից իւրոց մեծի և փոքու. ամէն։*

799
ԺԱՄԱԳԻՐՔ ԿԱՐԳԻՆ ԴՈՄԻՆԻԿԵԱՆՑ
ՀՀՀԱ, № 10 (1570 թ.)

7 Ընտամբոլայ պատրիարք[3] <ի> հանգեաւ ի Քրիստոս Սնգայ Մարիայմա շիփցիաքնումն, մայիսի ԻԷ (27), ԺԲ (12) սայհատումն թվին ՌՈԼԴ (1634)։

800
ՃԱՌԸՆՏԻՐ
ՋՁՎՍ, II, № 235

Գրիչ՝ Ալեքսիանոս սարկաւագ
Վայր՝ Յէնկիշէր

ա

548 Զմեղաւոր և զանարժան գրչակս զԱլեքսիանոս սարկաւագն յիշեցէք միով Տէր ողորմիւ։

բ

Արդ՝ գրեցաւ դիրքս թվին ՌՁԳ (1634) յունիս է (7), օրն շաբաթ։ Արդ՝ ստացաւ զսա արմատն աւրհնութեան Սարգիս քրիստոնեայս, յիշատակ իւր և իւրոց համայզարմից, հաւրն՝ Ղարակաւզին, մաւրն՝ Կիրակէ, եղբաւրն՝ Էյւազին, որդոյն՝ Գրիգորին, և ամենայն արեան մերձաւորացն, իւր հալալ ընչիցն և ապրանացն, յիշատակ անջնջելի. և եդ ի ձեռն տէր Պաւղոսին, ի գիւղն ի Յէնկիշէրն։ Ո[չ] ոք չունի զսա ծախելո[յ] կամ գրաւելո[յ]. և թէ ով ոք յանդգնի լրբաբար և դամահի ծախելոյ, ինքն առցէ զվրէժ յաւրն ահեղ ատենին ի տիեզերական հրապարակին, զաւգուտն դուք գիտէք, բաւէ։

գ

Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սբ. նահատակացս ողորմեա, ստացողի գրոցս Սարգսին, հաւրն՝ Կիրակոսին[4], մաւրն՝ Կիրակէ, եղբաւրըն՝ Էյւազին, որգուոյն՝ Գրիգորին, կարդացողաց և լսողաց և առ հասարակ ամենայն արեան մերձաւորաց. ամէն։

Գրիչ՝ Սեր

դ

Զեղկելի Սերս յիշեսչիք, ո՛վ սբ. ընթերցողք, միով Տէր ողորմայիւ։

ե

Յիշեա զՍերս սբ. ընթերցող։

---

[3] Խոսքը վերաբերում է Հովհաննես Խուլ պատրիարքին։ Կենսագրականը մանրամասն տե՛ս Գրիգորիս Գալեմքյարյան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915, էջ 1—41։ Հեղինակը մեջբերելով Հովհաննես Խուլի տապանագիրը նշում է, որ նա մահացել է 1634 թ. հունիսի 13-ին (էջ 39—40)։

[4] Սարգսի հոր երկու տարբեր՝ Ղարակաւզ և Կիրակոս անունների առթիվ Բ. Սարգիսյանը գրում է Ղարակաւզ անունը Սարգսի հոր մականունն է կամ Կիրակոսը Սարգսի խորթ հայրն է (էջ 548)։

801
ՔԱՐՈԶԳԻՐՔ
ՄՏԶԵՊ, IV, № 1160

ա

254 *Գրեցաւ թվին ՌՁԳ (1634) ապրիլ ԺԳ (13), ի մեծահռչակ և հրաշալի ցարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ նաւակատիս շաբաթն որ և ցոյնք ծառազատիկ արարին այս տարին. և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս։*

բ

Աստուծոյ կարող զօրութեամբ սկսայ և նորին առատ ողորմութեամբ և նախախնամութեամբ կատարեցայ։ Սկսայ թվին ՌՁԳ (1634) մարտի Ժ (10), օրն երկուշաբթի, և կատարեցայ յունիսի ԻԴ (24), օրն երեքշաբթի։ Եւ նմա փառք և գոհութիւն յաւիտեանս։

802
ՄԱՇՏՈՑ
Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան, Арм. № 7 *(1610 թ.), (մանրաժապավեն, Երևան, № 60)։*

Գրիչ՝ Աստուածատուր երէց

7ա *Գրեցաւ երկրորդ ամուսնութեան աղօթքս, ձեռամբ անարժան* Աստուածատուր *երիցուս, ի լաւ և յընտիր օրինակէ, ի թվին ՌՁԳ (1634)-ին, և յուլիս ամսոյ Գ (3)-ին։ Աղաչեմ զձեզ, պատուական հայրք և եղբայրք, որ զիս և զիմսն չմոռանայք յիշել ի Տէր, և Աստուած յիշողացդ ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։*

803
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
Երևան, № 7290

Գրիչ՝ Աստուածատուր երէց

ա

113ա *Սբ. և փառաւորեալ հարցս աղաւթիւք և բարեխօսութեամբն ողորմեսցի Քրիստոս Աստուած գծողի սորա* Աստուածատուր *երիցուս, որ լոկ անուամբս կոչիմ և գործովս ունայն, և ծնօղացս տէր* Յակոբին *և* Մանանային, *և ամենայն արեան մերձաւորացս, նաև զգիրս կարդացողաց...։ Կատարեցաւ Դ (4)-րդ բանք խրատու սբ. հարցս թվին ՌՁԳ (1634) օգոստոսի Ե (5) ի փառս Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

բ

467բ *Քրիստոս Աստուած... ողորմեա՛ մեղուցեալ գծողիս* Աստուածատուր *սուտանուն երիցուս, և ծնաւղացս տէր* Յակոբ *քահանային, որ առ քեզ փոխեցաւ, և ամուսնոյն նորին, և ամենայն արեան մերձաւորացս, և* Մաղաքիա *քաջ բաբունապետին* Ե[ւ]դովկացոյ, *որ զաւրինակն շնորհեաց անտրտունչ, նաև կարդացողաց...*[5]։

[5] *Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 81բ, 390ա, 401ա էջերում։*

Գ

142բ Քրիստոս Աստուած... ողորմեա գծողիս անարժան Աստուածատուր երիցուս, և ծնողաց տէր Յակոբին և Մանանտին, և ամենայն արեան մերձաւորաց, նաև կարդացողաց...[6]։

804

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ (1680թ.)

Կարնոյ գիւղէր, «ՀԱ», 1963 թ., էջ 374—376

Փառք..... Ի թվականիս Հայոց ի ՌԶԳ (1634), ի հայրապետութեան տեառն Էջմիածնայ տէր Փիլիպպոս ամենայն Հայոց կաթողիկոսի, և մերոյս առաջնորդութեան Կոստանդինուպօլսի տէր Գրիգոր քաջ բարբունապետի և թագաւորութեանն Տաճկաց սուլթան Մուրատին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք և հալածիմք ի յանօրինաց և ի սուտ եղբարց։ Որ հանդիպեցաւ յայսմ ամի ծռաղատիկ Յունաց ազգի. որ գիր տարոյս Շայ էր ի յապրիլի ի ԺԳ (13) Հայք Զատիկ արարին, և Հոռոմք ի յապրիլի Զ (6). և շատ աղմունք, և վրդովմունք, և խռովութիւն եղաւ ի սբ. քաղաքն յԵրուսաղէմ։ Որ մինչ մեք անհոգ կայեաք ի յԵրուսաղէմ և յուսայեաք ի յԱստուծոյ ողորմութիւնն և Լուսաւորչի սբ. աղօթքն մինչ նայէաք, որ պահոց միշնացն ի Դամասկոսէ մերոջմէն՝ ի յԱմմէտ փաշայէն Բ (2) չաւուշ էկին, և սաստիկ յէմր բերին, թէ՝ «Թող Հայ ազգն հետ Հոռոմին Զատիկ առնէ»։ Գնացին Հոռոմք ի դատաւորն ի մօտ և կոչեցին զՀայոց հայրապետն զտէր Գրիգոր արհեպիսկոպոսն, և բազում մէճլիս և շէրէաթ արարին, և զամենայն ազգերն ձայնեցին՝ զՓռանգն, զասորին, զխպտին, և զհապեշն, և զհրէայն, ամենեքեան տումար բացին և հիսապ արին ծնունդ լուսնի և օրագիւտ արարին, ամենեքեան զըղորդն և զճշմարիտն յիմացան մահմետական ազգն, որ ըղորդն, զբստոյգն, ճըշմարիտ հայուն խօսքն է ու վկայեցին, թէ Զատիկն ու լոյսն Հայոց ազգին է, ի յապրիլի ԺԳ (13) Զատիկ արարին Հայք և Ասորիք, Խպտի և Հապէշք, միաբան կացին. և ասոր կէօրէ սիճիլ ու հուճէթ, արդումահսար տվին Հայոց ազգին։ Մինչև անցաւ մէկ քանի օր ի Հէլպէ, ի մեծ վէզիրէն յէմր ու խափուճի և ամենայն քանի հոռոմ եկին ու հանց յէմր բերին հոռոմ ազգին, թէ՝ «Իսկի սոցա Զատիկն մարդ պատճառ չի լինի, որ ի Յունաց ազգն ի յապրիլի Զ (6) Զատիկ առնեն»։ Կրկին, կրկին ի դատաստան գնացին ու վկայեցին Յունաց ազգն, թէ՝ «Հայոց ազգին ըղորդութիւնն և Յունաց ազգին ծռութիւնն ամենեքեան իմացան». և նոքա իւրեանց չարութիւնն չի դարձան, գընացին մտին ի յապրիլի Զ (6) ի Ս. Յարութեան, թէ՝ «Պիտի որ մեզի լոյս ծագէ»։ Մինչև իրիկուն նայեցան լոյսն չելաւ, և խախք և խայտառակ եղան, և գլխակոր կորընչեցան։ Ապա ի ապրիլի (13), որ Հայոց ազգս, խպտին, ասորին, հապէշն մտաք ի Ս. Յարութիւնն և ապաւինեցաք ի Լուսաւորչի սբ. աղօթք. նա որ տրւօղն է ամենայն բարեաց և մխիթարիչ տրտմեցելոց, լոյս պայծառ ծագեաց ի լուսաբուղխ

[6] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 187բ, 246ա, 262ա, 280ա, 343բ, 365ա, 503ա, 512բ և այլ էջերում։

սբ. գերեզմանէն, ի տեսիլ ամենայն թշնամեաց և հակառակորդաց մերոց որ մինչ ԲՌ (2000) մահմետականք ազգային զլոյսն Հայոց ազգն և այլ ուղղափառ ազգերս և փառս տուաք Աստուծոյ։ Ապա Յունաց ազգն կրկին ի Կստանպոլ, և շատ աղմուկ և վրդովմունք եղև ի մէջ Հայոց և Հոռոմոց։ Եւ մենք կասէաք, թէ՝ «Ի մեր ծուռն և շիտակն ի յԵրուսաղէմ պէյլու կու լինի»։ Ապա Աստուծոյ ողորմութեամբն լոյսն Հայոց Զատկին ելաւ և նոքա ելին սուտ։ Վասն այսօր պատճառի նախանձեցան ընդ մեզ ասելով, թէ՝ «Լոյսն մեր է, դուք չի թողիք, որ ելլեր էր մեզի, դուք ձեզի հանեցիք»։ Եւ յետ որ անկան ի դրունս արքունական կաշառս տալով դատաւորաց և բռնաւորաց՝ մինչ զի ԲՃ (200) բեռ դրամ խարճեցին ի դրունս արքունի, թէ՝ «Կարենք Հայոց ազգն ստել, ապա ճշմարտութիւնն յայտներ էր և լոյսն ի մեզ ելեր էր»։ Ապա նոքա ալ յուրիշ բան խորհուրդ արարին գունզգուն՝ վասն մեզի և մեք այլ ապաւինեցաք ի Քրիստոս, ելաք թէ իբրև ի գանկատ գնացաք, և ոչ զոք ունէաք օգնական մեզ ի դրունս արքունի։ Վասն Լորստեան ժանկահար փողի որ կաշառօք կուրացան ամենեքեան դատաւորք, և բռնաւորք, և իշխանք։ Որ մենք ելաք ի գանկատ գնացաք յօգոստոս ամսոյ Ժ (10), օրն կիրակի, որ Աստուածածնին բարեկենդան էր։ Այնչափ նենգեցին որ ի մեր Հայոց ազգէն քահանայ մի և աշխարհական մի գլխատեցին. քահանային անունն էր տէր Միհաս, որ էր յերկրէն յԱրարկեռայ, և աշխարհականին անունն էր Սէֆէր, որ էր յերկրէն Սեազու։ Եւ յայնմ աւուր ոչ թուլացուցին զմարմինսն նոցա առ ի թաղել, վասն որոյ մնացին ի դուռն արքունական պաղատին, և ի գիշերին յայնմիկ լոյս պայծառ ծագեաց ի վերայ մարմնոյ նոցա, զոր և ինքեանք այլազգիք տեսեալ վկայեցին մեզ իշխանք և կարդացողք։ Եւ մեք լուեալ զայս վկայութիւնս ի Տաճկաց և ի պահ[ա]պանաց մարմնոյ նոցա, թէ լոյսն ակներև իշաւ ի վերայ նոցա. որ ամենեքեան վկայեցին և մեք հիացեալ փառս տայաք Աստուծոյ։ Եւ թշնամիքն մեր՝ չար ազգն Յունաց ամօթ են և գլխակոր։ Եւ Ա (1) եղկելի հոռոմ, մեզ այս ամենայն բանս տեսեալ, և հաւատաց զճշմարտութիւն Լուսաւորչի օրինացն։ Եւ այս խուժադուժ չար ազգն Յունաց խրոխ տալով սորա այլևայլ անուն դնելով մատնեցին զնա ի ձեռս բռնաւորաց, որ զնա ի կշտէն ի ցից զարկան, ասելով թէ՝ «Դու ես որ զՀայոց ճշմարտութիւնն կու պատմես»։ Այսչափ բանս որ եղև վասն ամէնն յԵրուսաղէմայ լուսոյն խաթերն համար էր։ Փառք իւր առատ ողորմութեանն որ զիւր առատ ողորմութիւնն պարգևեաց մեզ ու զմեր թշնամիքն յամօթ արար, և մեք փառք տայաք Աստուծոյ[7]։

---

[7] Սույն հիշատակարանը, որը գտնվում է 1680 թ. ընդօրինակած ձեռ-ի հիշատակարանում, առանձնացնելով դրեցինք 1634 թ. շարքում որպես առանձին միավոր։ Ղ. Փիրղալեմյանի «Ընշխարք» հտ. Ա, № 746, էջ 207բ—208ա, նույնի հտ. Բ, № 508, էջ 424, գտնվում է նույն հիշատակարանը համառոտված։ «Ընշխարք»-ի Բ հատորում Ղ. Փիրղալեմյանը գրում է. «Վերոհիշյալ Յայսմաւուրն կայ ի Տինարիզոմ գյուղն Կարնոյ» (էջ 424)։

805
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 10200

Գրիչ՝ Ամիրաս Եզընկացի
Վայր՝ Տրապիզոն

ա

293բ Փառք...
Զեռքս երթայ և գիրս մնայ,
Եւ մարմինս ի հող կու դառնայ,
Ես ալ մեղաւոր եղայ,
Ի դժոխոց ղրան մատեցայ։
Քանի որ տխմար էի,
Ի մեղաց ի զատ կու փախչի,
Երի որ մեղաւոր եղայ,
Դժոխոց ճանփան ես ուսայ։
Յաւաք նեղեալ յայս աշխարհի,
Դառն և դժնայ և անբարի,
Մփտքս գութով ի չար դիմի,
Եւ ի բարոյն յոյժ հեռասցի։
Ահեղ աւուրն այն ատենին,
Զոր գործեցի ինձ հատուսցի,
Ողորմելիս յամենայնի,
Ըստ իմ գործոցս ինձ պատրաստի։
Այլ դու Տէր յամենայնի,
Քաղցր և բարի անքննելի,
Հոգիս իմ քեզ յանձին արի,
Բարեաց աղքատս խեղճ և գերի,
Եւ քեզ փառք վեր առաքի,
Յարարարածոցս անլռելի. ամէն։

Արդ՝ գերցաւ այս գիրքս ձեռամբ անարժան և անպիտան, մեղօք ի լի սուտանուն Ամիրասէ Եզընկացոյ, ի քաղաքն Պոնտոս, որ է Տրապիզոն, ի թագաւորութեան սուլթան Մուրատին և կաթողիկոսութեանն տէր Փիլիպոսին, և պատրիարքութեան տէր Գրիգոր քաջ բարունապետին, և հայրապետութեան տէր Անտիք արքեպիսկոպոսին։ Աստուած զիւրեան առաջնորդութիւն բարով վայելել տացէ։

Արդ՝ եղև աւարտ գրոյս ի թվականի ՌԶԳ (1634) աւգոստոսի ԺԱ (11), աւրն երկուշաբթի։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ, զձեզ, ով աւգտիք ի սմանէ՝ կարդալով կամ որինակելով, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր և մեղաց թողութիւն հայցէք յԱստուծոյ, հաւասար ծնողաց իմոց մահտեսի Պալէ և մօրս իմոյ մահտեսի Նոպաթին, և եղբարցն իմոց և զաւակացն
294ա իմ. այլ և // յիշեսջիր զվարպետն իմ զտէր Ղազարն և Աստուած զձեզ յիշէ...։

Էթէ զայս գիրքս գողանայ կամ ի միջէն թուխտ կտրէ՝ զպատիժն Ուգայի առնէ...։

Բ

303ա Լոկ Ամիրաս Եզընկացի,
Հազար ու վայ եղուք քեզի,
Որ զայս բաներս նոտրեցի,
Զեռամբ իմով մեղսամածի,
Աւարտեցս ի թվականի
Հազար ուռնուն և իրեքի (1634)։

Գ

304ա Թվականին ՌԶԳ (1634)-ին որ ծառազատիկ արին Յոյնք, ան որ սիճիլին սուրաթն է. ի Յարզրում, ի Կիմիշխան ան ասոր սուրաթն կա։ Ի Տրապիզոն եղև այս սիճիլս, ի մեր ժամանակն տեսանք մեր աչօքն, Հոռոմք ոչ կարաց[ին] զրուցել մեր Հայոց հետ. տէր Աւետիք արքեպիսկոպոսն քաղաքին, խօճայ Եազուպն, խօճայ Ամիրասին Եզընկացիք, խօճայ Յովանէսն, խօճայ Օեսիքն Պոնտոսցիք և այլ բազում քրիստոնայք։

806

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Զմմառ, № 460 (1837 թ.). տե՛ս նաև Վատիկանի գրադարան, № 60, էջ 90

Գրիչ՝ Խաչատուր Լէճացի
Վայր՝ Թէքիրտաղ

57 Փառք...։
Ես՝ Խաչատուրս եմ Լէճացի,
Որ սբ. կանոնքս գրեցի,
Թվականիս Հայոց ազգի
ՌԶ ։ երեգ (1634) շրջանակի։
Զի գաւառիս Ռատաւզի,
Որ մականուամբ Թէքիրտաղ կոչի,
Ի գուռն Ս. Յովհաննէս,
Նորընծայ աւետարանչի։

Առաջնորդութեամբ սբ. ուխտիս տէր Գրիգոր քաշ հեռէտոր բարունապետին, այլ և բազում քահանայից որ աստ կան հաւաքեալ։

Դարձեալ ես՝ Խաչատուրս եմ մեղօք գերի,
Բիւր քանքարոյ պարտականի,
Մեղօք լցեալ ազգի ազգի,
Յուժ անպիտան և խոտելի։

Ողորմութեամբ աստուածային աւարտեցաւ սբ. կանոնքս աւգոստոսի ամսոյ ԻԳ (23), յիշատակ տէր Մինաս գրոց աշակերտի և քարոզող տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...[1]»

Դարձեալ ի այս ամիս ապրիլ ԺԳ (13) Զատիկ եկաւ. ազգն Հոռոմոց ծառազատիկ արարին՝ ապրիլ Զ (6) առնելով։ Զի յոյժ աղիողորմ անօրէնութիւն արարին ազգիս մերոյ Հայոց. որպէս Հրէայքն Տիրոջն արարին

[1] = Մինչև այստեղ տե՛ս նաև Կամենից, էջ 186։

և որպէս Յուդա՝ վասն արծաթոյ առ Տէրն մեր մատնելով։ Նոյնպէս սոքա՝ մինչ որ ԲՃ (200) բեռ աւելի ոստակ տալով, անօրէն ազգի Հագարացւոց թագաւորին ու վազիրին։ Ամբր արին՝ Միհաս անուն աւագէրէց մի և Սուֆար անուն քրիստոնեայ մի նահատակեցին քաղաքն Կոստանդինուպոլիս ի մէջ դիւանին։ Յայնժամ լոյս ծագեաց ի վերայ նոցա, որ ամենայնքն տեսան լոյժ գոհութիւն ե փառս մատուցին Աստուծոյ։ Ապա հրամայեցին՝ տարէք ձեր օրինօքն թաղեցէք, զի անմեղք էին սոքա։ Խիստ ուրախացան ուղղաբառ քրիստոնեայքն և ամօթալից եղան մատնիչ՝ ազգն Հոռոմոց ասելո, թէ՝ սոքա ղզրլպաշ են հայրենիք Ղզրլպաշ։ Եղբայրք ինչ երկարեմ պատմութիւնս խիստ բազում է ու տաղտկութիւն լսողաց. Ռ (1000) խօսիցն մէկն գրեցաք փոքր ի շատէ հաւատեցալ քրիստոնէից. փառք Աստուծոյ։

807

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6807 (1491 թ.)

Կազմող՝ Վրդանէս երէց

ա

78ա Զստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ և զերկիւղած առն Աստուծոյ զԲարսեղն, և նորոգիլ տվող սմին զորդի նորին զՆաղտին, և զդրստերքն՝ Եթարն և Գօզալն, որ ետուն վարձս ԲՌ (2000) դեկան Ոսկանապատու Վարդան իրիցին յաղագս յիշատակի իւրեանց և նախնեացն՝ զՄխիթար քահանային և Ղազար քահանայի հօրեղբարց իւրեանց, որք փոխեցեալք են առ Քրիստոս, և ի վայելումն որդոյ իւրեանց Սարգիս դպրին։

Ո՛վ դասք լուսեղեն քահանայից, յորժամ պատահիք զաստուածախօս Աւետարանիս, յիշեցէք զԳօզալն և զԵթարն, որ բազում փափագանօք ետուն նորոգել զսա, մանաւանդ զեղբայրն իւրեանց՝ Նաղտին, և կողակիցն՝ Դալաթն, և որդիքն՝ Սարգիսն, Դաւութն, Բարսեղն, և դուստրն՝ Հռիփսիմէն, և ամենայն մերձաւորքն լի սրտիւ յիշեցէք...։

բ

24ա Նորոգել տուող սբ. Աւետարանիս զբարեսէր Գօզալն, Եթարն[8]։

գ

200ա Զվերջին նորոգել տուող սբ. Աւետարանիս զբարէսէր և երկիւղած Գաւզալն, Եթարն, որ տվին նորոգել զսբ. աստուածաշունչ Աւետարանս յիշատակ բարի հոգու իւրոց և ծնաւղաց իւրոց, հաւրն իւրոց՝ Բարսեղին և մայրն իւրեանց՝ Խասին, և եղբայրն՝ Նաղտին և այլն, և քուրն՝ Եթարին, որդոց և դստերաց իւրեանց և ամենայն ար[ե]անառու մերձաւորացն...։

դ

300բ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ դաս լուսերամից, [յ]որժամ հանդիպիք սմայ կարդալով կամ գաղաբարելով, յիշեցէք ի Քրիստոս զհեզայհոգի

[8] Նման մի հիշատակարան, այլ գրով, գտնում ենք նույն էջի ներքևի լուսանցքում։

Դաւզալն, Եթարն, որ բաղում փափկանաւք ստացան սբ. Աւետարանս...։ Ընդ նմին անարժան Վրդանէս կաղմող սորայ աղաչեմ յիշել ի Տէր մէկ ողորմայիւ, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Նորոգեցաւ սբ. Աւետարանս թվայբերութեան Հայոց ՌԶԳ (1634) թիւի, հրոտից ամսոյ է (7), երեքշաբթի[9]։

808

ՃԱՇՈՑ

Երևան, № 9807. տե՛ս նաև ՍՁՂՐ, № 27, էջ 108—112

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

417ա Փառք...// ըստ այսմն յարացուցի ամենայնիւ դովեալ աստուածասէր և հաւատարիմ քրիստոնեայս մահտեսի Ղումրի, որ ետ գրել զգիրքս զայս, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Թորոսին և մօրն՝ Գեն-
417բ վարդին, և կո//զակցին՝ Թամամին, եղբօրն՝ Վարդերեսին, և քրւերն՝ Մելիքին, ի թվականիս Հայոց ՌԶԳ (1634) ամին, սեպտեմբերի ԻԶ (26)-ին, որ և եղև աւարտ սորին, ի մայրաքաղաքն Կոսսանդինուպոլիս, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ի հայրապետութեանն տեառն տէր Փիլիպոսի, և ի բռնակալութեանն Տաճկաց սուլտան Մուրատին. ձեռամբ ողորմելի և ամենայն մեղաց լիապէս գործող սուտանուն Յակոբ դպրի, որ և ցանկացող եղև սորա մղտեսի Ղումրին, և ետ գրել զսա ի յարդար գոյից իւրոց, և եղ յիշատակ ի դուռն Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի ի նոյն եկեղեցին որ և գրեցաւ Արդ՝ աղաչեմ զամենսեան սիրովն Աստուծոյ յիշել սրտի մտօք զստացող սորա...[10] այլ և գրիչս Յակոբի, և ծնողաց իմոց Վաճրատին և Շազատային։ Աղաչեմ զԱստուած ողորմին անտես չառնել, զի գրչիս սղալանացն ներեցէք... թէ գտանի սղալ, որ ոչ իմացաք, դուք սիրով խոնհարեալ զնա ուղղեցէք և աշխատաւորացն ի սա վարձս բարիս տացէ Աստուած...։

Դարձեալ երես անկեալ աղաչեմ զամենեսին, յիշել սրտի մտօք յաղօթս ձեր զվարժապետս իմ զՅակոբ սարկաւագն, որ բաղում շանիւ և աշխատութեամբ ուտոյց զարուեստս դիտուհակութեան, զոր և վարձս բարեաց հատուցէ հատուցիչն ամենեցուն...։

բ

53ա Ո՛վ սրբազան դասք քահանայից... լի ևս առատ սրտիւ ասացէք Աստուած ողորմի մահդասի Ղումրիին հոգոյն, և ծնողաց նորին, ընդ նմին և սուտանուն Յակոբ գրչիս և ծնողաց իմոց...։

գ

336ա Եւ զանցաւոր Յակոբ գրիչս յիշեաւ։

---

[9] Հայոց ՌԶԳ թվականի հրոտից 7-ը ոչ թե երեքշաբթի է, այլ երկուշաբթի, իսկ ՌԶԳ հրոտից 7-ը կհամապատասխանի 1634 թ. սեպտեմբերի 14-ին (ՌԶԳ հրոտից ամիսը սկսվում է սեպտեմբերի 8-ից), որը կիրակի է։

[10] Թվում է վերևում հիշված անունները։

Դ

416բ—417բ Փառք Աստուծոյ անմահ բանին,

. . . . . .

Որ շնորհս տայ իւր ծառային,
Յակոբ անուն նուաստ դպրի։
Որ աւարտեաց զգիրքս զայս վերջինս,
Ելից զփափադումն իւր ծառայիս,
Առաջնորդեաց ինձ տկարիս,
Հայոց յաւարտ այս կտակիս[11]։

. . . . . .

809

ԺՈՂՈՎԱՏՈՒ

Երևան, № 3522

Գրիչ՝ Ասեփիֆ
Վայր՝ Լով

223ա Գրեցաւ Պատմութիւնս սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ ի թվին ՌԶԳ (1634), հոկտեմբերի Գ (3), ի քաղաքին Լով, ընդ հովանեաւ ննջման Ս. Աստուածածնայ։ Ի թագաւորութեանն Ըռզաց երկրին Վլատիսլավ արի և քաջ բարեպաշտիմ, որ ի այս ժամանակս եկեալ էր ի քաղաքն Լէվ. երթայր ի պատերազմ ընդդէմ մահմետական ազգին սուլթան Մուրատին։ Բայց գրեցաւ սա ձեռամբ տխմար և անարհեստ գորով պատանեկին Ավէսիֆ անուն, որդոյ տէր Սիմոն քահանային։ Բայց խնդրեմ, որ անմեղադիր լինիք գրոյս խոշորութեան մանաւանդ սղալանաց, զի անհմուտ էի գրագրութեան, աղաչեմ որ զմեղաւորս միով Տէր ողորմայիւ յիշեսջիք, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ահեղ դատաստանին. ամէն։

810

ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 745

Գրիչ՝ Միքայէլ
Վայր՝ Կաֆայ

207բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին, ի թուին Հայոց ՌԶԳ (1634) հոկտեմբերի չորս, օրն շաբաթ, յաթոռակալութեան էջմիածնայ տեառն տէր Փիլիպպոսի իմաստախոհ կրօնաւորի, և առաջնորդ մերոյս նահանգի տէր Խաչատուր արքեպիսկոպոսի... ձեռամբ Միքայել անարժան գրչի։

[11] Գրված է լուսանցքում։

811
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 687

Ստացող՝ Մկրտիչ Ուրհայեցի

ա

363բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Հարանց վարքս[12] ձեռամբ Մկրտիչ դպրի, ի թվին Հայոց ՌԶԴ (1634), ի նոյեմբեր ամսոյն ի Ը (8)[13]։

Ես՝ նուաստ ծառայ մահտեսի Մկրտիչս Ուրհայեցի ստացայ զայս սբ. դիրքս, որ կոչի Հարանց վարք, և ետու ի ձեռն Դանիէլ վարդապետին։ Որք տեսանէք զսայ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զըստացաւղ գրոցս զմահտեսի Սկրտիչն, որ ըստացաւ զսայ ի հալալ արդեանցն, և արդար վաստակոցն, և ետ յի-
364ա շատակ ի // ձեռն Դանիէլ վարդապետին, որ ընթեռնու և ասէ Աստուած ողորմի մահտեսի Մկրտչին, և իւր նախնեացն՝ Մխիթար իրիցանց, մահտեսի Պախդիարին, մաւրն՝ Տաւնախանումին, և որդոյն՝ մահտեսի Մկրտչին, Վարպետին, Սարգսին, Խաչատուրին, եղբաւրն՝ Աբրահամին, և մեծ մաւրն՝ Շահնոպաթին, և այլ ամենայն արեան մերձաւորացն, կարդացողաց և լսողաց...։

Գրիչ՝ Անտոն երէց

բ

371ա Աբ. ճգնաւորք Քրիստոսի հայցեցէք զթողութիւն յանցանաց գրողի սորա ոմն տառապեալ Անտոն անուամբ երէց և ոչ գործով, և դուք յիշեալ լիցիք։

812
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2398 (1613 թ.)

2ա Ափիսակն փոխեցաւ առ Քրիստոս հոռի ամսին ԺԸ (18), օրն կիրակի, թվին ՌԶԴ (1634)[14]։

813
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 292 (ԺԶ դար)

216ա Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր ըզհեզայհոգի Թաւնումն, որ ըստացաւ ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Մաթոսին, մաւրն՝ Սայիքսաւլթանին։ Դարձեալ յիշեցէք

[12] Հարանց վարքը ձեռ-ի մի մասն է, մնացած մասն ընդօրինակվել է ուրիշի կողմից, սրա հիշատակարանը տե՛ս 1689 թ. շարքում։

[13] Քանի որ հայոց ՌԶԴ թվականը սկսվում է 1634 թ. հոկտեմբերի 14-ից (հուլյան տոմարով), ապա հայոց ՌԶԴ թվականի նոյեմբերի 8-ը կընկնի 1634 թ. մեջ, ուստի հիշատակարանը դրեցինք 1634 թ. շարքում։

[14] Հայոց ՌԶԴ թվականի հոռի ամիսը կլինի 1634 թ. նոյեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 12-ը, իսկ հոռի 18-ը կլինի նոյեմբերի 30-ը, այդ օրն էլ կիրակի է։

զԹանումն և զկողայկիցն իւր՝ Գուլինարն, և զհանկուցեալ որդիքն իւր՝ Այվազն, Աաիբէնն, և զդուստրն՝ Խանին, Թամամն, Եզիսայբեթն, զկենդանի դուստրն՝ Ազիզն, և որդիքն՝ Յարութիւնն, Աբրայհամն, Բուսախն,
216բ // և զմիուս դուստրն իւր՝ Սայիբն, և զդուստրն իւր՝ Խանումաղէն, և զԹանումի միուս դուստրն՝ Մարիամն, և զհանկուցեալ դուստրն՝ Գուլիխաթունը, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի մաքրայփայլ աղաւթս ձեր զԴաւիդն, և զկողայկիցն իւր՝ Գուլփաշէն, և զհանկուցեալ որդիքն իւր՝ Ասայտուրն, Ք[ր]իստոստուրն, Յովայկիմն, Այլայբէկն, Ոսկենտուկն, և զդուստրն իւր՝ Գալվաթն։ Դարձեալ յիշեցէք զԳուլփաշէն, և զհայրն իւր՝ զՍարգիսն, և զմայրն իւր՝ Մարգարիտն։ Դարձեալ յիշեցէք զԴաւիդի հայրն՝ Ումբրիշանը, և զմայրն՝ Վարդիաթունն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացողք սր. Աւետարանիս զԹանումն և զԴաւիդն, որ ետուն զսբ. Աւետարանս ի դուռն Ղազար Փարփեցուն՝ Եղնայբեր Աստուածածնին[15]։ Ով որ հանցէ ի դրանէ նորա՝ նզո-
217ա վեալ եղիցի. ամէն։ //Ետուն զսայ յիշայտակ իւրանց ի թվականիս մեր ՌԶԳ (1634)-ին, ի թագաւորութեան շահ Սաֆուն, ի հայրայպետութիւն Փիլիպոսին։

814

ՄԵԿՆՈՒԹԻՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան, № 1184. տե՛ս նաև «Արարատ», 1888 թ., էջ 410

Գրիչ՝ Մարութայ
Վայր՝ Ցղնայ

ա

198բ Փառք....։ Աւարտեցաւ քրիստոսահիմն և աստուածաշէն Մեկնիչ Սաղմոսարանիս Դաւթի ի թվականիս Հայոց մեծաց ՌԶԳ (1634), ի խնդրոյ աստուածապատիւ և երանաշնորհ Խաչատուր քաջ և արի և բանիբուն վարդապետի. Աստուած իւրն բարի վայելումն տացէ աստ, և հաստատուն պահեսցէ մինչ ի խորին ծերութիւն, և յետ աստեացս ելանելոյ սբ. վարդապետաց դասուն արժան առնէ, հանդերձ ծնօղօք իւրովք. ամէն։ Գրեալ եղև կտակս աստուածային ի յերկիրս Գողթան գաւառի, ի գեղս Ցղնայ, ի վիճակս Թումայի սբ. առաքելոյն, որ յայսմ ժամանակի էր առաջնորդ աշխարհալոյս վարդապետս Խաչատուր, ի կաթողիկոսութիւն էջմիածնեայ քաջ և երջանիկ ռաբունապետի տէր Փիլիպոսին, աշակեր-
199ա տաց մեծին Մովսէսի անմա//ռմնոցն ի մարմնի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս։ Գրեցաւ սա ի գեղս Ցղնայ, ի դուռն Ս. Յիսուսի, ձեռամբ մեղապարտ և թարմատար գրչի Մարութայ իրիցու։ Եւ որք հանդիպիք ի սմա, Քրիստոս ողորմի ասացէք ստացողի սորին Խաչատուր վարդապետին և ինձ Մարութայ գծողիս և իմոցն ամենայնի, և ձեզ յիշողացդ և Աստուած ողորմի ասողացդ, ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր. ամէն։ Ո՛վ սբ. հարք և եղբարք, յորժամ ընթեռնուք զսա թողութիւն արարէք

[15] Խոսքը հավանաբար վերաբերում է Արագածոտն գավառի Ղազարավան կամ Լազրեվան գյուղին, Փարպիից հյուսիս, և նրա եկեղեցուն։

սխալանացս ե խոշորութեան գրչիս, կի կար իմ այս էր, մի՛ մեղադրէք, անմեղադիր լերուք աղաչեմ զձեզ։

Գրիչ՝ Մարտիրոս

Բ

427ա Փառք...։ Արդ՝ եղև աւարտ գրչութեան քաղուածոյս երգարանին Դաւթի, ձեռամբ մեղապարտ Մարտիրոսի, հայկազեան տումարի հազարերորդի ութսուներորդի երեքերորդի (1634) թվի, դառն և դժնիկ ժամանակի, որ հայկազեան սեռս մեր գրոհի[16] ի ձեռն Հաքարացոց ամենայն տեղիս՝ Հայաս տուն, Վրաց տուն, Մարաց տուն և Հոռոմոց տուն, ոչ միայն այլասեռից, այլ և սուտանուն քրիստոնէից, որ յայսմն ամի Յունք մոլորեցան և ծռայզատիկ արարին, որպէս ասէ գիր Պարզատումարին. «Յորժամ Հոռոմոց ԷՆներեակն Գ(3) լինի, վերադիրն Թ(9), բանալի գիրն Շ(500) Յունք մոլորին»։ Արդարև մոլորեցան յայսմ ամի և բազում չարիս հասուցին աղգիս մեր, մինչ ԽՌ (40000) ղուռուշ տումանս ետ սբ. յաթոռն մեր Երուսաղէմ, բայց ամօթով յետս դարձան ի յայտնութիւն լուսոյ բղխման։

Յորժամ թվականս մեր ՌՁԲ (1633) էր վախճան էառ սբ. հայրն մեր տէր Մովսէս կաթողիկոսն, սուք մեծ եթող մեզ և ազգիս։ Յետ նորա յաջորդեաց հարազատ և էրէց եղբայրն մեր տէր Փիլիպպոս վարդապետն. և սայ ևս փայլէ որպէս զարեգակն ի մէջ սեռիս մեր, և բազում որդիս ի փառս էած որպէս սբ. հայրն մեր, գոլով նմանութիւնն հաւրն առ ինքն բերէ։

Դարձեալ ես տրուպ և յետինս յաջակերտաց սրբոյն Մովսէսի՝ Խա-
327բ չատուր բանասէրս ցանկացայ յայսմ սբ.// գրանեայս (sic) Մեկնիչ հոգէլից Վարդան վարդապետի և Քաղվածոյ սրբոյն Գրիգոր Տաթեացոյ, ծծեալ եգի յայսմ տուփ, ի վայելումն յանձին իմոյ և յետ իմ ի ձեռն բանասիրաց։ Դարձեալ աղաչեմ զվերոյ գրեալ սբ. հարքն մեր, յիշեսջիք հանդերձ հարազատ աշակերտաւքն՝ տէր Թումայ վարդապետն, տէր Արիստակէս վարդապետն, տէր Զաքարիայ վարդապետն, տէր Յեսայեայ վարդապետն, տէր Ակոբ վարդապետն, տէր Գրիգոր վարդապետն, տէր Խաչատուր վարդապետն, տէր Ղուկաս վարդապետն, որ յայսմ ամի վախճան էառ, Գառնիկն Գառնեցին՝ Գառնայկերի վանքն, յիշեսջիք ի Քրիստոս։ Դարձեալ յիշեսջիք զիմ աշակերտեալ մանկունսն՝ Հայրապետն, Ովանէսն, Առաքելն, Մովսէս դպիրն։ Դարձեալ յիշեսջիք զմիաբան եղբարքս մեր զտէր Երեմիէն, տէր Թաքէոսին, տէր Սարգիսն, տէր Խաչատուրն, տէր Ադամն։ Դարձեալ կրկինանգամ յիշեցէք զստացող տառիս արի և քաջ բանիբուն զտէր Խաչատուր վարդապետն, զհոգևոր հայրն զտէր Ակոբն և զհանգուցեալ ծնողսն՝ Կարապետն, Սառէն և զամենայն արեան մերձաւորսն։

Դարձեալ յերեսս ի գետին անկեալ աղաչեմ զձեզ, յիշեսջիք զմեղապարտ գրիչ Մարտիրոսս, զծնողսն իմ, զհոգևոր և զմարմնաւորս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

16 Ձեռ-ում «գրոհի»։

815
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1476

Գրիչ՝ Անդրէաս դպիր

132ա Գրեցաւ և կատարեցաւ գիրս աստուածաբանութեան, որ անուանեալ կոչի Ոսկիփորիկ, գի ըստ իրին և զանունն առ եղեալ ունի, ոսկի, այսինքն՝ անապական և պատուական գանձիւք աստուածային առ լցեալ, ձեռամբ Անդրէաս դպրի, ի վայելումն տէր Յակոբ աւագէրէց քահանային, Աստուած իրեն բարով վայելել տացէ յերկար ամօք։ Բայց ես գծողս երես անկեալ աղաչեմ, որք լուսաւորիք յաստուածային դաւանութենէս, ուղիղ սրտով և բոլոր հօատով զթողութիւն մեղաց իմոց հայցեցէք, և ինքն տէր Աստուած թողցէ զանցանս ձեր. ՌԶԳ (1634)։

816
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1686

Գրիչ՝ Մարգարէ

ա

89բ Կատարեցաւ Ժ(10) Ստորոգութիւնսն ասացեալ յեռամեծէն Արիսառոտելէ, որ ասի ըստ յունարէն ձայնի Կատիղորիաս, զյոգնամեղ անձն Մարգարէս, որ ձեռնտութեամբ Հոգւոյն Սրբոյ աւարտեցաք զպարտիկսողս ընդհանուր էակաց։ Աղաչեմ յիշել ի Տէր։

բ

169բ Աղաչեմ յիշեսջիք զգծողս զՄարգարէս։

գ

299ա Ցեղկելի գծողս յիշել աղաչեմ. ՌԶԳ (1634)։

817
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1762

Ստացող՝ Մկրտիչ Բաղէշեցի

338բ Ես՝ մեղաւոր Մկրտիչ եպիսկոպոս Բաղէշեցի ի թվին ՌԶԳ (1634) եկի ի մայրաքաղաք Ըստամպալ, հանդիպեցայ յայսմ տառի, ստացայ զսայ ինձ յիշատակ և ծնողաց իմ ՄաՀեարին և հօրն իմոյ՝ Ասլանին, որ մականուն Կոնկանց ասի։ Ով հանդիպի յայսմ տառի կամ կարդալոյ հաւաս լինի, զայս մեղաւորս Տէր ողորմիւ առնէ արժանի։ Աստուած որ առատ է ի տուրս բարեաց, ասողաց և յիշողաց Տէր ողորմեայ։ Հայր, զՏէր ողորմեան չմոռանաք, չմոռանաք հայրք իմ և եղբարք։ Աստուած զա[յ]ն մարդն աւրհնէ, որ զայս յիշատակս չեղծանէ և կորուսանէ. անմեղադիր լերուք։

818
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 3480

Գրիչ՝ Եղիազար

ա

261ա Շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ... աւարտեցաւ աստուածամուխ ասացուածս ոտանաւորագիծ ի սրբոյն Ներսիսէ կաթողիկոսէ Հայոց, առ նահանգաւ Կիլիկիոյ, ձեռամբ յոքնամեղ գրչի Եղեազար անարհեստի, ի թուոյս Հայոց ՌՁԳ (1634), ի դրունս Ս. Աստուածածնի եկեղեցոյս։ Աղաչեմ ղվայելօղաց [յ]իշել ղիս։

Բ

252բ ...Տէր մեղ ողորմեսցի և անարժան գրչի՝ Եղիազարի:

819
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3914

Գրիչ՝ Մկրտիչ

ա

388բ Չսուտանուն Մկրտիչ մեղաւք ղառածեալս յիշել ի Տէր աղաչեմ, ո՛վ սպասաւոր բանի։

Բ

432բ Եւ ղ. ր. մ. ռ. վ. բ. ճ. լ[17] յեղկելի գծողս յիշել աղաչեմ. ՌՁԳ (1634)։

820
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 4175

Գրիչ՝ Մարութայ
Վայր՝ Ցղնայ

ա

376ա Փառք..., որ ետ կարողութիւն բազմամեղ և տկար ոգոյ Մարութայ անարհեստ գրչի, որ անուամբս միայն եմ քահանայ, բայց գործովս զառածեալ ի մէջ մեղաց և թափօր ի բարի գործոց, ի թվականիս հայկազեան ՌՁԳ (1634), ի հայրապետութիւն էջմիածնեայ տեառն Փիլիպոս կաթողիկոսի, ի յառաջնորդութիւն Թումայի առաքելոյն տէր Խաչատուր քաջ և արի բարունապետի, ի թագաւորութիւն Պարսից շահ Սէֆուն, որ յայսմ ամի առաքեաց Ըռըստամ խանն ի վերայ Վրաց տանն, և էառ [զամենայն ?]. և զՎրաց թագաւորն զԹամուրազն փախուց ի Բաշիաշուխն, և զզօրս նորա զորս կոտորեաց և զորս փախուց, և շատ աւերութիւն արար ի Վրաց տունն։ Եւ դարձեալ եկն անտի և գնաց ի վերայ Վանայ, և Դ(4) ամիս պաշարեաց, և նստաւ ի վերայ նորա, և ոչ կարաց առնուլ զնա, և շատ աւերութիւն արար։ Եւ դարձեալ յետս գնաց ի Թարվէզ

[17] Նման ծածկագիր և վերլուծությունը տե՛ս № 963 հիշատակարանի 24-րդ ծանոթագրությունում։

առ թագաւորն իւր՝ շահ Սէֆին, և անդ նստաւ, այլ ոչ գիտեմք վերջն զինչ է լինելոց. որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուածն յամենայն վնասուց թշնամոյն հոգւոյ և մարմնոյ. ամէն։

Արդ՝ գրեցաւ սբ. Մաշտոցս ի յերկիրս Գողթան, ի գևղս Յղնայ, ձեռամբ Մարութայ անարհեստ գրչի, ի խնդրոյ // սրբամիտ և հեզահոգի
376բ ///պատուական քահանայի[18],հիշատակ հոգւոյ իւրոյ. Աստուած զինքն ընդ սբ. քահանայից դասուն դասակից արասցէ...,

Ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ, յորժամ ընթեռնուք զսայ՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղապարտ Մարութայ գրիչս, քանզի յոյժ տառապեալ եմ ի մէջ մեղաց, այլ և սխալանացս և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք, քանզի կար մեր այս չափս էր, թողութիւն արարէք, եղբարք, աղաչեմ զձեզ։ Այլ և յիշեցէք///[19] պատուական քահանայն, որ նայ ևս աշխատեցաւ ի գրելն և ի թղթի կոկելն, և գրել ետ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հօրն՝ Աւետիսին և մօրն՝ Գաֆարին, և եղբարցն՝ Տիրատուրին, Յովանիսին, Խուրայէլին. Աստուած զիւրեանքն ընդ երկայն աւուրս պահեսցէ աստ և ի հանդերձեալն...։

Դարձեալ յիշեցէք... Թանկուն, որ նա ևս մասնակից և օգնական եղև սբ. գր[ոյ]ս[20]

Բ

2բ Աւգնեա Ս. Հոգի Աստուած ճշմարիտ մեղսամակարթ մատինս Մարութայի բազմավէր ոգոյս և զսկսեալս իմ գու կատարեա՛ ի բարին և յաւարտ. ամէն։ Այս սբ. Աստուածածնին դու կատարեա՛ ի բարին։

Գ

շ66ա Յիշեցէք զբարեպաշտաւն և երկիւղած կինն և զաղախինն Աստուծոյ զԹանկին, որ սա ևս պատճառ եղև սբ. գրոյս և ընկեր և մասնակից տրօք և ողորմութեամբ, որ և մէկին բիւրապատիկ վարձս ի Քրիստոսէ ընկալցի ի միւսանգամ գալըստեան նորա...[21]։

821

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 4255

Գրիչ՝ Յակոբ

Ա

156ա Փառք...։ Ի թվականիս ՌԶԳ (1634) էր, [որ ՂՐեցաւ?] ձեռամբ յամենամեղ և անիմաստ և անարժան Յակոբ գրչի։

---

18 Մինչև այստեղ համառոտ տե՛ս նաև Երնջակ, էջ 259, ուր տարեթիվը տպված է սխալ «ՌՆԳ», իսկ «պատուական քահանայի» բառերին հաջորդում է «ի գիւղն Ռամիս»։

19 Անունը երկու տեղում էլ ջնջված է, սակայն այստեղ տողամեջ, անվարժ գրով ավելացված է «զտէր Սիմոնն որ խիստ», իսկ վերջում նույն ձեռագրով լուսանցքում՝ «զտէր Սիմոնն»։

20 Հիշատակարանն այստեղ ընդհատվում է ձեռ-ից թերթ ընկնելու պատճառով։

21 Ձեռ-ի 85բ, 235բ և այլ էջերում կան փոքրիկ հիշատակարաններ՝ դրված գրչից, որոնք կարևոր բան չեն պարունակում, օրինակ, «Զմեղապարտ զծողս յիշեցէք աղաչեմ» (էջ 217ա)։

Բ

Նվիրող՝ Ղազար
Վայր՝ Էղվերծ

156բ *Որ ողորմի ստացողի գրոցս* Ղազարին, *և իւր ծնաւղացն՝* Խոնդամիրին *և մ[աւրն՝]* Նանին, *իմ եղբաւր* Միրումին, Փոլաթին, Առաքելին, Յիսէին: *Ես՝* Ղազարս *տվի* Էղվերծու *եկեղեցւոյն վախմ, թէ՛ կարդալով, թէ՛ աւրինակելով, լի բերանով Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձ[եզ] և մեզ [ո]ղորմեսցի ի [մի]ւանդամ [գալս]տեանն. [ամ]է[ն]։*

822

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4284

Գրիչ՝ Մինաս

158ա *Ես՝ անարժան բանի սպասաւոր մեղաւոր* Մինաս *անուամբ գրեցի*[22], *թիւն Հայոց ՌՁԳ (1634)։*

823

ՃԱՇՈՑ

Երևան, № 4745 (1458 թ.)

Նվիրատու՝ Պարսամ Վարագեցի
Վայր՝ Շուշանց

ա

274ա *Փառք...։ Յիշեսջիք... սուտանուն* Պարսամ *կր[օն]աւորն որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրեանց, անջինջ յիշատակ իւրեանց հոգոյն և ամենայն արեան մերձաւորաց, հաւրն՝* Մուրայդին, *մաւրն՝* Փաշայբէկուն, *և եղբարցն՝* Մովսէսին *և* Վարդանին, *որ փոխեցան առ Քրիստոս, և քրտերն իմոյ՝* Խանզադին, *և եղբօր որդոցն՝* Խլղաթին *և* Մա[ր]գարին, *և կողակցացն՝* Խանչին *և* Աղասուն, *և նոցին որդոցն՝* Վարդանին, Ըռոճիչանին, *և* Մարգարի *որդոցն՝* Սարգսին, *և* Գալուստին, *և* Ջանադին, *և ամենայն արեան մերձաւորաց նոցին...։*

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Պարսամ *աբեղայս, որ ետուր զսբ. գիրքս ի դուռն Ս. Գէորգայ <զօրա>զաւրավարին, ի սր. ուխտ Տիրամայր Ս. Աստուածածնին, անջինջ յիշատակ իւրեանց հոգոյն։ Մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանէ ի դրանէ սբ. եկեղեց[ե]ացս ոչ մերոց և ոչ աւտարաց...։*

Գնեցաւ սբ. գիրքս ի թվին ՌՁԳ (1634) ամին։

Բ

19ա *Դարձեալ յիշեցէք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ըստացող սբ. գրոցս անարժան սուտանուն* Պարսամ *աբեղայ* Վարագեցին, *որ ըստ[աց]աւ զսբ. գիրքս...։*

Դարձեալ... յիշեցէք...[23] *որ ետուն զՏարէնգիրքս ի* Շուշանց *գիւղն, ի գուռն Ս. Գէորգայ զօրայվարին, անջինջ յիշատակ իւրեանց հոգոյն. ամէն։*

---

22 Ձեռ-ի մի մասը գրվել է 1631 թ.։

23 Նորից թվում է վերևում նշված անունները։

824

ՆԱՐԵԿ

Երևան, № 5224 (ԺԴ դար). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 510, էջ 425, № 6333, էջ 91բ, հիշտ. № 376

Կազմող՝ Աւետիս երէց
Վայր՝ Քրոել

167ա Զվերջին ըստացաւ[ղ] սբ. գրոցս զտէր Աբրահամն, որ ետ վերըստին նորոգել զսայ, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Շազաւաթին և մաւրն՝ Ա[զ]իզ խաթունին, և կողակցոյն՝ Նէրզզին, և որդոյն՝ տէր Յովանէսին, կանանց և զաւակաց նոցին. ամէն։ Կրկին անգամ Աստուած ողորմի ասացէք տէր Աբրահամին, որ ըստացաւ զսա ի յարգար վաստակոց իւրոյ, յիշատակ իւր և հօրեղբօրն՝ տէր Սահակին, և իւր ծնօղացն փոխեցելոցն առ Քրիստոս...։

Կազմեցաւ ձեռամբ ստուանուն Աւ[ե]տիս իրիցի, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ի թուականիս մեր ՌԶԴ (1634), ի Քրոել[24] գեղն, ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոս Նախավկային, յիշեցէք...։

825

ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ

Երևան, № 5397

Գրիչ՝ Գրիգոր Ջուղայեցի
Վայր՝ Վան

ա

85բ Ո՛վ սբ. մանկունք եկեղեցո[յ], յիշեցէք զգծող ժամ[ագր]քիս Գրիգոր էրէցս և զծնօղսն յի[մ]։

բ

103բ Փառք...։
Որով ետ կարողութիւն ի ըսկիզբն ատենագրիս,
Եւ հասաք ի վերջ ժամագրքիս,
Գրիգոր էրէց Ճուղայեցիս,
Զսակաւ վաստակս իմոյ մատիս։
Ընծայեցի Ս. Պողոսիս,
Ի յայս դառն և նեղ ժամանակիս,
Յիսար ընկաք Վան քաղաքիս,
Կարմրագդակն պատեց, նստաւ վերա քաղաքիս։
Շատ նեղութիւն հասոյց ի մեզ,
ԾԶ (56) օր պաշարեց զմեզ,
Ի թվականութիւնս Հայոց ազգիս,
ՌԶ և երեքիս (1634)։
Ըստամբոլոյ հասաւ ի մեզ,
Ազգէն Տաճկաց ՃՌ (100000)-իս,
Ժողովեցան Քարափոսիս[25],

[24] Ղ. Փիրղալեմյանի մոտ «Քրէլ», որը տեղադրում է «ի Հայոց ձոր գաւառի»։
[25] Գյուղ Վանի մոտերքում։

Խմբեցան մեծ պատերազմիս։
Փախուցին կարմրագդակն,
Աւարն առին հասին ի մեզ,
Աւետիս մատուցին մեզ,
Կարմրագդակն փախեաւ ի յետս։
Պարըսպին դոներն բացաք,
Ելաք ի դուրս, մտաք ի ներս,
Փառք զոհութիւն Աստուծոյ տրուաք,
Ուրախութիւն արաք մէջ մեզ[26]։

Արդ՝ գրեցաւ ժամագիրքս ի դուռն Ս. Պօղոսի առաքելոյն, ի խնդրոյ պատուական տէր Ստեփանոսին։ Եւ են կարգակիցք սորտ՝ տէր Մեսրովբ, տէր Ախանէս, տէր Պօղոս, և լուսարար եկեղեցոյս տէր Խաչատուրն, և նոր ձեռնադրեալ տէր Զաքարիայն։ Եւ են սարկաւագունք [սպա]սաւորք եկեղեցոյս՝ Աւետն, Ատոմն, Յովհաննէսն, Նազարն և միւս փոքր Ատոմն, Սահակն և Պետրոսն, և ժամխարն՝ Խլաթն. և են այսպէս զարդարեալ եկեղեցիս քահանայիւք և ժամասացիւք, սաղմոսերգուք, շահիւք և կանթեղօք, պայծառացեալ է ամենայն իրօք. Աստուած զինքն հաստատուն պահէ մինչ ի միւսանգամ գալուստն Քրիստոսի. ամէն։ Դարձեալ կրկին անգամ գրեցաւ սա ի դո[ւ]ռն Ս. Պօղոս առաքելոյ ի Վան քաղաք։ Եւ հայրապետութիւն սբ. Էջմիածնա[յ] տեառն տէր Մովսէսին, որ է ամենեին արևանման տեառն տէր Ներսէսի Սեծին։ Սա նորոգեաց սբ. Էջմիածին Դ (4) կողմով պարըսպի, ներսն շինեաց՝ Դ (4) կողմն լի [խ]ըցեր և սեղանատեղ զանա՛զա՛ն, ԺԳ (13) գրմպէթ է կանկուն. այդ որչափով զերկայնութիւնն տես. և ժողովեաց կրօնաւորս Ճ (100)։ Եւ կարգեաց Յոհանավանքն դպրատուն և ունէր գաւազանաւոր վարդապետ Խաչատուրն. և է պայծառացեալ Ըսպայեան, դպրատներօք, դասատնօք և ԺԵ (15) եկեղեցօք և Բ (2) անապատիւք՝ մարդկաց և կուսանաց։ Եւ միւս վարդապետ Թովմա, որ է պայծառացեալ նա Շըրվան ու Շամախի, նման Խաչատուր վարդապետին։ Եւ միւս վարդապետ Ռոբս[տ]ագէս, որ է առաջնորդ և հայր Ըստաթեոյ անապատին։ Եւ միւս վարդապետք Զաքարիայն, Եսային, Պողոսն, Ղուկասն, Մինասն, Գրգորն, Խաչատուրն, Յակոբն, Սիմէոնն, Ղազարն և Յակոբն. և է գլուխ վարդապետ տէր Փիլիպոսն, որ յայսմ ամի՝ ՌԶ և Գ (1634)-իս Մովսէսն փոխեցաւ բարի մահուամբ առ Քրիստոս[27] և Փիլիպոսն նըստաւ յաթոռ հայրապետութեան փոխանակ տեառն տէր Մովսէսին։

Աստուած զիւրեանքն հաստատ պահէ ի պարծանս ազգիս Հայոց ևս առաւել։

Եւ եղև ուրախութիւն Հայոց որ Հոռոմք Զատիկն ծռեցին, ի մեր Ծաղկազարդին արին. և մեք շաբաթովմ յետ արաք ի հետ մեր տումարին հասապին։ Եւ լոյսն մեր // Զատկին եղաւ և այնու ըստուք գիտացաք, 104բ
որ Հոռոմ ծռեր էին։ Եւ թագաւորն Տաճկաց սուլթան Մուրատն նըկուն և

[26] Ձափածոն համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրզալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 747, էջ 208ա։
[27] Մովսես Խոտանանցին մահացել է 1633 թ. մայիսի 21-ին (տե՛ս № 736 հիշատակարանը)։

յամօթալից արար ազգն Հոռոմոց և ձգեց տուգանս ԿՌ (60000) ղուռուշ։ Եւ բարձրացաւ անուն և հաւատս Հայոց ի փառս Քրիստոսի. ամէն։

Արդ՝ գրեցաւ գիրքս ի Վան *քաղաք, ի հայրապետութիւնն* Վարագայ Մարտիրոս *վարդապետին, որ մականուն* Արահօն *կոչի։*

Գ

105ա *[Փ]առք...։ Որով ետ կարողութիւն* Գրիգոր Ջուղայեցի *երիցոյ որ հասաք ի վերջ և ի յաւարտ սբ. ժամագրքիս [ի] դուռն սբ. առաքե-[լո]ցն Պօղոսի, ի քաղաքն* [Վ]ան, *և ի թվաբերութիւնս Հայոց ՌՁԳ (1634)*[28], *[ի]թագաւորութիւնն [Տ]աճկաց սուլթան* Մուրատին, *և ի հայրապետութիւն սբ.* Էջմիածնայ *տեառն տէր* Փիլիպոս *կաթուղիկոսին։*

Դ

Եւ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Ստեփանոսն, *որ ետ զժամադիրքս և խորհրդատետր մի յիշատակ ի գուռն Ս. Պօղոսի և Պետրոսի առաքելոյն անշինչ յիշատակ։ Եւ ոչ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց չունի իշխանութիւն հանել զսա ի Ս. Պօղոսի եկեղեցոյս։ Եթէ ոք յանդգնի...։*

Ե

Ստացող՝ Ստեփանոս Երէց

104բ *Արդ՝ ես* Ստեփանոս Երէցս *ցանկացայ և գրել տվի ժամագիրքս, յիշատակ ինձ և իմ ծնօղացն, հաւրս* Յովսէփին *և մաւրս* Եքարփաշին, Նագախին, *և մեծ պապոյս* Բագին, *և կողակցոյն իւրոյ*[29]. *և իմ քրվերացն՝* Փաշաբէկուն, Խաթունաղին, Քարամսալթանին, Սալթանաղին, Բէկիսխանին, *և որդոցն՝* Փաշաբէկուն, Սարուխանին, Ամիրիւանին *և իմ եղբօրն՝* Ստեփանոսին, *և իւր որդոյն՝* Մարգարին, *և իմ հօրքուրոշն՝ մահդասի* Խանաղին. *ամէն։*

[Դ]արձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Ստեփանոսն...[30]։

826

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 5658 (1316 թ.)

Նորոգող՝ Գրիգոր Ջուղայեցի

327բ *Եւ դարձեալ կրկին անգամ յիշեցէք զուսթայ* Կիրակոսն *և իւր որդիքն՝ զ*Աւետիսն *և զ*Դիլանջին, *որ վերըստին նորոգել տրվին զ*Շարակնոցս։ *Եւ զ*Աւետիսի *որդիքն՝* Ատոմն, Յովսնէսն[31], *և* Դիլանջուն *դուստրն՝ զ*Եղիսէն, *և զամենայն արեան մերձաւորսն, որք աստ կան, և որք հանգուցեալ են առ Քրիստոս...։*

*Եւ արդ՝ ես զ*Գրիգոր Ջուղայեցիս *աղաչեմ, որ միով Աստուած ողորմիւ յիշեցէք զիս և ծնաւղսն իմ ի Քրիստոս. ամէն։*

Ի թվաբերութիւնս Հայոց ՌՁ և Գ (1634)-ն նորոգեցաւ։

---

28 Ձեռ.-ի մի մասը գրվել է 1643 թ.։ Հիշատակարանը տե՛ս այդ տարեթվի շարքում։

29 Ձեռ.-ում անվան տեղը դատարկ է։

30 Թվում է վերևում հիշված անունները։

31 Ձեռ.-ում տողամեջ այլ գրով ավելացված է «Նեկեզոսն»։

827

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 6991. տե՛ս նաև ՋՎԼ, № 379, էջ 883—884

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Շէնեէր

ա

226ա *[Փառք]...։// Արդ՝ գրեցաւ զսբ. Աւետարանս ի յերկիրս* Ռոտան, *ի գեաւղս* Շէնեէր, *ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի, ի հայրապետութեան* Փիլիպոսի *կաթողիկոսի, և ի թուին Հայոց Ռ և ԶԳ (1634)-ի։ Արդ՝ ես անպիտան* Ղազար *գրիչս սկսայ և ողորմութեամբն Աստուծոյ գրեցի զերեք գլուխն*[32], *և մնացեալն գծագրեցաւ ձեռամբ հոգևոր եղբարն մեր* Յովանէսի։ *Որք և հանդիպիք թողութիւն արարէք սղալանաց և խոշորութեան, զի կարն մեր այս էր, և զմեզ յիշեսջիք հանդերձ ծնողամբ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ։*

226բ *Արդ՝ ստացաւ սբ. Աւետարանս պարոն* Ջիլաւն, *որ ետ զկէս դին Աւետար[ան]ին և ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հաւրն՝* Գուլաւին, *մօրն՝* Մարգարիտին, *կողակցին՝* Շանփարուն, *որդոցն՝* Ազաբազին, Աղազուլին, Ղազարին, Աւետիսին, *դստերացն՝* Մարգարտին, Հուռումին, Բազին, Ուստիանին, *եղբարցն՝* Մատուրին, Յովանէսին, *եղբաւր որդոցն՝* Ապաւին, Սիմէոնին, Յովսէփին, *և ես յիշեցէք* Մարիանն *և զխաթուն. յիշողքդ, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։*

բ

227ա *Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զտէր* Յովսէփ *ընտրեալ քահանայն, որ բազում աշխատեցաւ և զկէս վարձին նա ետ, և փափաքանօք ստացաւ յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, հաւրն՝* Ենգիքսարին, *մօրն՝* Փաշին, *կողակցին՝* Թաշումին, *որդոցն՝* Քասբարին, Առաքելին, Ստեփաննոսին, *դստերացն՝* Մարթին, Մարիանին, *և հարեղբարցն՝* Դաւիթին, Դադին, Ղուկասին, Բէգին, Ավանին, *և իւրեանց կողակցացն, և որդոցն, և դստերաց նոցին, և այլոցն, որ ի վերայ գրիս աշխատանք կայ, յիշեցէք...։*

Ես առաւել յիշեցէք Ենգիքարն, *որ մանուկ տիաւք հանգեաւ ի Քրիստոս։*

գ

175բ *Եղկելի* Ղազար *գրիչս յիշեցէք հանդերձ ծնողամբս. և զձեզ յիշէ Քրիստոս։*

Մաղկող՝ Ղուկաս

դ

71բ *Նկարեցաւ ձեռամբ* Ղուկաս *անարժան գրչի ՌԶԳ (1634)։ Հանդիպողքն ասեն ողորմի ինձ և իւրոց, հաւասար լիցի։*

828

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7905 (1587 թ.)

76բ Եզիշէն, *եղբարն՝ տէր* Դիրիգոռն, *որդին՝* Յովանէսն. *կողակիցն՝* Յէմին, *որդին՝* Ղազարոսն, *ի թվին Հայոց ՌԶԳ (1634)։*

---

[32] *Մինչև այստեղ տե՛ս նաև* Ղ. Փիրղալեմյան, *Նշխարք, հտ. Ա, № 751, էջ 208բ, ուր տարեթիվը նշված է ՌԶԴ (1635)։*

829
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8211 (1428 թ.)

Նորոգել տվող՝ Յովանէս եպիսկոպոս
Վայր՝ Թաղասեռ

361ա *Արդ՝ յիշեցէք զնորոգող սբ. Աւետարանիս զՅովանէս եպիսկոպոսն, որ ետ զսա նորոգել, յիշատակ իւրն և հօրեղբարցն, և ամենայն արեան մերձաւորացն՝* Մանուէլ *եպիսկոպոսին, տէր* Աղէքսանդրոս *եպիսկոպոսին, տէր* Մարտիրոս *եպիսկոպոսին, տէր* Գրիգոր *եպիսկոպոսին, տէր* Յովանէս *աբեղին, տէր* Մարտիրոս *աբեղին, տէր* Սարգիս *իրիցին և տէր* Թորոսին. *և պապն իմ՝* Յոհանին; *ե[ւ] հայրն իմ՝* Մարտիրոսին, *մօրն իմ՝* Մարգարիտին, *և եղբարն իմ՝* Յոհանին, *այլ կրկին յիշեցէք զիս զՅովանէսս եպիսկոպոսս և զվերոյ դրեալքս ի սմա, որ են ազգականք իմ ստացող սբ. Աւետարանիս, և գրող սորա* Մանուել *արքեպիսկոպոս, և դրեալքն ի հետ սորա յառաջնորդ սբ. ուխտիս Եղիշա սբ. առաքեալիս։ Եւ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք...։*

Նորոգեցաւ ձեռամբ Կիրակոս *մեղաւորի, ի գաւառս* Դիզակ, *ի գիւղս* Թաղասիր, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի եկեղեցո[յ], թվին ՌՁԴ (1634), ի վայելումն* Յովանէս *եպիսկոպոսին. ամէն։*

830
ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Կ. Պոլսի ազգային պատրիարքարան, № 50 (մանրաժապավեն, Երևան, № 547)

Գրիչ՝ Գրիգոր
Վայր՝ Քօթահեայ

ա

283 *Ո՛վ սբ. եղբայր, յորժամ սրտի մտաւք աղաւթես, զմեղաւոր գծողս՝ զանպիտան* Գրիգոր *յաղաւթս քո յիշեա...։*

բ

322 *Արդ՝ գրեցաւ գիրս այս աղաւթից և փրկականն խորհուրդ սբ. պատարագին ի թուականիս Հայոց ՌՁԴ (1634) ամին, ի քաղաքն* Քաւթահիեայ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրավարին և Սրբոյն Թէոդորոսի զինաւորին։*

Ստացող՝ Աստուածատուր քահանայ

գ

323 *Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց դասուց... սուտ//անուն* Աստուածատուր *քահանայս, որ անուամբս եմ միայն և գործովս ոչ, ցանկացայ յայսմ կտակի ի ժառանգութիւն անձին իմոյ...։*

Գրեցաւ լաւ և ի ստոյգ օրինակէ, որ էր ուղղեալ ի սբ. հարանցն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան սիրովն Աստուծոյ, յիշել սրտի մտաւք զանարժան Աստուածատուր *քահանայս և զազգայինս իմ...։*

325 *Գիտէք եղբայրք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն, զառաջնոյն զանունն կու ջնջեն և զիւրեանցն կու գրեն. և չար է սովորութիւնս այս...։*

831

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՊՊԹ, № 482 (1301 թ.)

Գրիչ-լրացնող՝ Մովսէս
Վայր՝ Էիմ

Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին վերստին նորոգեցաւ և կազմեցաւ հոգիաբողբոջ բուրաստանս, սբ. տառս այս՝ Գործք առաքելոցն և Կաթուղիկէքն ու Յոհանու սբ. Աւետարան, ի թուականիս Հայոց ՌՁԳ (1634), ի ծովապատ Էիմ անապատիս, ընդ հովանեաւ գեղեցկավայելուչ և գմպեթայարկ, բարձրահայեաց Ս. Գէորգեայ զաւրավարի տաճարիս, և ի յառաջնորդութիւն այսմ մեծափառ ուխտիս և մեծաստանի տէր Սաեփանոս վարդապետի և այլ միաբան եղբարցս ԿԲ (62) և աւելի, որ աստ կան հաւաքեալ ի փառս ամենազաւր փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զյիշման արժանին զտէր Ներսէս բարունն պանծալի, որ է ի յերկրէն Մոկաց Մաեկաց, որ նա է եղեալ պատճառ սկզբման և հաստատութիւն այսմ միաբանութեան։ ՌՀ (1621) թվին գալով ի Մեծ անապատէն հանդերձ մէկ քանի եղբարբք և հաստատելով զտեղիս այս միաբանակեցաց և քաւարան մեղաւորաց. և ինքն փոխի մահուամբ առ Քրիստոս թվին ՌՀԴ (1625), որ և զինքն ընդ երկոտասան վարդապետացն դասակից և պսակակից արասցէ Քրիստոս Աստուած մեր. և կենդանի աղօթք նորին ի վերայ ամենայն հաւատացելոց և մեզ. ամէն, եղիցի և եղիցի։ Եւ յետ մահուան սորին, հաջորդէ զտեղի նորին Սաեփանոս վարդապետն Շաթիւեցի։ Որ և ի հրամանէ նորին և կամակցութեամբ միաբան եղբարցն, Սպարտկերտցի Մովսէս անարժան[ս] զպակասն գրեցի մաքուր աղօթիւք եղբարցն և յուսալով յողորմութիւն փրկչին։ Նղնսուցի պատուական եղբայրն մեր տէր Սարգիս, յանձն էառ կազմել։ Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք պատահիք սմա տեսութեամբ կամ կարդալով, յիշել զվերոյ դրեալ Սաեփանոս վարդապետն և զմիաբան եղբարքն ի բարին, որ պատճառ եղան նորոգման սորա. եւ զիս զանարժան[ս], որ փոխանակ նորոգութեան կրկին աւերեցի։ Աղաչեմ զթերին լնուլ և զաւելորդն բառնալ, և բազում մեղաց իմոց թողութիւն հայցել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...[33]։

832

ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրզալեմյան, «Ընչխարք», հտ. Ա, № 744

Գրիչ՝ Միքայէլ դպիր
Վայր՝ Մարզուան

208բ *Փառք...։ Աւարտեցաւ տառս որ կոչի Մաշտոց... ի գիւղաքաղաքս* Մարզուան, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարիս, ի թուաբերութեանս ՌՁԳ (1634), ձեռամբ* Միքայէլ *դպրի, ի վայելումն նորընծայ տէր* Յովհաննէսին...։ *Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորին զբարեպաշտ* Աւատանն։

[33] Համառոտված տե՛ս նաև № 6333, էջ 46բ, հիշտ. № 207։

833

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Բ, № 505 (1420 թ.)

Ծաղկող՝ Մկրտիչ երէց

421 Զ Մկրտիչ փոքր էրէց ղծաղկող սբ. Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս, և զհայրն իմ՝ Զաքարիա քահանայ...։

Թուին ՌՁԱ (1632) շինեցաւ Ս. Հրեշտակապետ, ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին, և ի հայրապետութեան Հայոց Մելքիսէթին[34], որ մեր երկիրս[35] Խալիլ փաշայն էր։

242 Անարժան Փի//լիպպոս էրէց, որդի Յոհաննէս քահանայի, աղաչեմ զձեզ, որ յիշէք ի սբ. աղօթս ձեր։ Աստուծոյ ողորմութեամբն երեք ամիս, ապա թէ կատարեցաւ[36], որ դուռն դրանք մէկ քանի շաբաթու յետ և ապա թէ միջի բան կատարեցաւ։

Որ թիւն ՌՁԲ (1633) եղաւ Փիլիպպոս վարդապետն[37] եկաւ ի Ս. Հրեշտակապետ, որ տասն և ութ օր կեցաւ ու գնաց դէպի Ղարասար։ Եսայի վարդապետն յետև եհաս գարձոյց տարաւ, որ հոգևոր տէրն առ Աստուած էր փոխել[38], որ զինքն ի յաթոռն նստաւ թիւն ՌԶԳ (1634) էր, կամօքն Աստուծոյ, հոգևոր տիրոջ կտակաւն։ Աղաչեմք զԱստուած որ [ան]փորձ ու անսասան պահէ իւր աթոռին. ամէն։

Թվին ՌՁԲ (1633) չուրք պակասեցաւ ամէն երկիր. և զմեր Բաբերդս, որ մէկ աղբիւր չմնաց՝ ցամաքեցաւ, քաղաքս ամէն չուր Ճորուէն կու առնէին։ Յետի գալ տարին խիստ բարի եղաւ՝ անձրևային, աղբիւր չեղած տեղացն չուր բղխէր։

834

ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 2428

Գրիչ՝ Յովանէս սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

1374 Գրեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ձեռամբ Յովանէս սարկաւագի, ի ՌԶԳ (1634), ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի և յառաջնորդութեան սբ. Երուսաղէմայ տէր Աստուածատուր վարդապետին, ստացաւ մահտեսի Տաւնապետն, ի գաւառէն Սասնոյ... զի այս Խ(40) ամ է, որ հաւատարմութեամբ և սրտացաւութեամբ ծառայէ Ս. Յակոբայ վանիցն՝ երբեմն թէրճիման և երբեմն վէքիլ և աթոռակալ (?) գոլով և
1375 զայլ ամենայն ծառայութիւնս առնելով // ի ժամանակս առաջնորդութեանն Գրիգոր Պարոնտիրին, որ բաղում աշխատանս ունի ի սբ. Երու-

[34] Սխալ է, Մելիքսեթ կաթողիկոսը մահացել է 1626 թ.։ Պետք է լինի Մովսես, ինչպես երևում է նաև շարունակությունից։

[35] Իմ՝ Բաբերդ։

[36] Ղ. Փիրղալեմյանը նշում է. «Հրեշտակապետ եկեղեցին»։

[37] Ղ. Փիրղալեմյանը նշում է՝ «Աղբակեցին է»։

[38] Ղ. Փիրղալեմյանը նշում է՝ «Մովսէս կաթողիկոսն»։

սուղէմ. և յետո առաջնորդութեամբն քաջ և արի տէր Աստուածատուր վարդապետին։

835
ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II[39]. տե՛ս Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Բ, № 509, էջ 425

Գրիչ՝ Յոնանէս երէց
Վայր՝ Շատախ

1379 *Փառք...։ Աստուած ողորմի ասացէք ըստացողի սբ. Աւետարանիս...* Ամիրն, *որ ըստացաւ սբ. Աւետարանս, յիշատակ իւր հոգոյն և կողակցին՝* Մարիանին *և որդոյն՝* Վարդանին, *դուստր* Խաթունին, Մուրվաթին, *որ Քրիստոս են հանգուցեալ.... այլ դուստրն՝* Սառիկն, *որդին՝* Ակոբն... Ամիրն *և իւր ծնողացն, հայրն՝* Մատուրին *և մայրն՝* Գուլին, *եղբայրն՝* Ուլուփանին, էվազին, Կիրակոսին, Մարուքային...։

Գրեցաւ սբ. Աւետարանս ի լաւ և ընդիր օրինակէ ի յերկիրս Գանձակայ, *ի ձորս* Գանջայ, *ի գիւղն իմ որ կոչի* Շատախ։ *Աւարտեցաւ ի դրան Ս. Կաթուղիկէիս, ի դառն և ի նեղ ժամանակիս, ի հայրապետութեան տեառն տէր* Գրիգոր *նորընծային, և առաջնորդ սբ. ուխտիս պարոնտէր* Մկրտչի, *ի թուականիս Հայոց ՌԶԳ (1634), ի ժամանակս շահ* Սաֆին, *ձեռամբ մեղապարտ* Յոնանէս *իրիցու...։*

836
ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 115

Գրիչ՝ Գասպար երէց

163 *Կամաւ Հօր և ողորմութեամբ Նորին Միածնի և շնորհօք Ս. Հոգւոյն ճշմարտի, ի յանգ ելեալ աւարտեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչի* Գասպար *երիցի և իմոյս աշակերտի* Աստուածատրի... *ոմն բարեսէր և հեզահոգի* Ամիր *անուն, բորբոքէր ի սիրտ և ի հոգիս դէմ գանձիս աստուածային, ստացան զսբ. Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց, հարն՝* Յովանիսին *և մարն՝* Քիրմիշին, *և եղբարն* Կիրակոսին...։ *Աւարտեցաւ սբ. Աւետարանս ի թուականիս Հայոց ՌԶԳ (1634) ամին, ի թագաւորութեան Պարսից շահ* Սէֆուն, *և ի հայրապետութեան տեառն* Մովսէսի *Հայոց կաթուղիկոսին, և առաջնորդութեան երկրիս* Խաշատուր *քաջ բարբունապետին....։*

Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անարժան Գասպար *իրիցու և իմոյս աշակերտի* Աստուածատրի....։

---

39 *Ցուցակում № -ը չի նշված։*

837
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 116

Ծաղկող՝ Ստեփանոս երէց

ա

164 Ջստացող սորա զխօջա Գրիգորն յիշեցէք և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ։ Ընդ նմին և նկարող սորա զՍտեփանոս մեղապարտ երէցս յիշեցէք։

Գրիչ՝ Գասպար երէց
Վայր՝ Թորըսկան

բ

Ով ընթերցող սբ. լուսազարդ Աւետարանիս, յիշեցէք զիս զանպիտան և զառածեալ մեղօք զԳասպար երէց գրչիկս ի մաքրափայլ յաղաւթըս ձեր։

գ

Փառք..., որ ետ կայողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տառիս, այս մարգարտաշար և վարդափրթիթ բուրաստանիս, որ է սա ընտիր աւրինակէ։ Որ և գրեցաւ ի յերկիրս Ասպահան, ի յեզր Նարընղալային, որ ասի Թորըսկան, ձեռամբ [յ]ոգնամեղ և մեղօք տատանեալ և աղտեղացեալ անարժան Գասպար իրիցուի, որ և զանունս ունիմ և զգործս ոչ։ Յիշեցէք ի յերկնաբացիկ յաղօթս ձեր զեղկելի գրողս, զի բազում աշխատութեամբ գրեցի զսայ, յԱստուծոյ զօրութեամբն ի յաւարտ հասի։ Աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ կարդացողք և լսողք, ամենեքեան մի բերան ողորմի ասացէք, զի և ձեզ լիցի ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Գրեցաւ ի թուականիս մեր ՌԶԳ (1634), ի յառաջնորդութեան տէր Խաչատուրին, և ի թագաւորութեան այլաց սեռի շահ Սաֆուն, և ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսին, որ այսմ ամի նստաւ ի յաթոռ հայկազան սեռիս ի սբն. էջմիածին, որ և Աստուած անփորձ և անսասան պահեսցէ ի յայլազգաց, որ եմք ի ներքոյ հարկի սոցա, ի վիշտ և ի նեղութիւն. ազատարարն Քրիստոս ազատեսցէ զամենայն հաւատացեալ քրիստոնեայս յերեսելի և աներևոյթ թշնամւոյն։ Արդ՝ որք ճաշակէք և վայելէք, ամենառատ սեղանոյս, և հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս կարդալով կամ օրինակելով, անմեղադիր լերուք խոշորութեան և սղալանաց գրիս, զի կար մեր այս էր։ Ուստի տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն Գրիգոր անուն, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս այսմ մարգարտաշար լուսափթիթ սբ. Աւետարանիս, և ետ գրել յիշատակ բարի հոգոյ իւրոյ, և ծնօղաց իւրոց, ի միտ առեալ զբանն Եսայեայ որ ասէ. «Երանի...»[40]։

Վասն այն յուսոյն ետ գրել զսբ. Աւետարանս, և զարգարել ետ ոսկով և երանի երանի ծաղկով, յիշատակ իւր և իւր ծնօղացն՝ պարոն Մարգարին և Ուղուրիսօլթանին։

---

40 Եսայ., ԼԱ, 9,

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և դիւր կողակիցն՝ պարոն* Խաթունն, *և զորդիքն իւր՝* զՆաւասարդն, *[զ]*Յովանէսն *և* զՇահնազարն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և զիւր դուստրն՝*
165 զՄարիտաան, *և // զկողակիցն՝* Պաղտասարն, *և զորդին իւր՝* զՍաֆուրխանն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և զդուստրն իւր՝* Ուղիաէն, *և զկողակիցն՝ պարոն* Սարֆոազն, *և զորդիքն՝* Վարդաիւաշիկն *և* զԹամուրաղէն, *և դստերն՝* Մամին:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և զդուստրն իւր՝* զՋամանն, *և զկողակիցն՝* Յովանէսն, *և զորդիքն՝* զՇահնազարն, զՆրիմիէն *և* զԽաչատուրն, *յիշեցէք....*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և քւերքն իւր՝* Գաւհարսօլթանն, *և իւր զաւակսն, և* զԵղիսաբեթն, *և զիւր զաւակսն, և զպապն իւր՝* Ասապովն, *և կողակիցն իւր՝* Թազակուլն, *և զդստերքն՝* Խալինարն, Խալին, Գօհարն, *և որդին՝* Զաքարէն, *և միւս պապն՝* Աղենց Յակոբն, *և զկողակիցն՝* Խանսալթանն, *և որդին՝* Անգրէասն *յիշեցէք...*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և զպարոն* Ալֆայպէկն, *և* Կարբեցի *պարոն* Միրզաչանն, *որ բազում աշխատանք ունի ի վերայ մեր, յիշեցէք... զի և ձեզ և մեզ ողորմեսցի ի միւսանգամ գալըստեանն իւրոյ. ամէն։*

Ո՛վ հայրք[ք] և եղբայրք, յորժամ հանդիպիք սբ. Աւետարանիս տեսչութեամբ, յիշեցէք ի յերկնաբացիկ աղօթս ձեր զծաղկող և զկազմող սորա զՋուղայեցի *զտէր* Ստեփաննոս, Մուրատի *որդի, և զիւր ծնողսն, և զկողակիցն, և զիւր դստերսն և զիւր եղբարքն և զքուերքն և զամենայն արեան մերձաւորաց, յիշեցէք...։*

Յիշեցէք և զիս զանարժան Գասպար երէց գրչիկս և զիմ ծնողսն, և զիմ ազգայինքն, յիշեցէք...։

Դ

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճայ Գրիգորն, *և զդուստրն իւր՝* Ուղիտէն *և զհոգևորդին իւր՝* Իսուֆն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս պարոն Մարգարէն, *և միւս կողակիցն՝* Թարվէզն, *և զհոգևոր դուստրն իւրեանց՝* զԳուլին, *յիշեցէք...։*

Ե

...Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ամենափրկչի քահանայքն՝ զտէր Սարգիսն, *զտէր* Սահակն, *զտէր* Բարսեղն, *զտէր* Խաչատուրն, *զտէր* Մկրտիչն, *զտէր* Սիմոնն, *զտէր* Խաչատուրն, *զտէր* Աստուածատուրն, *զտէր* Գասպարն, *զտէր* Յոհանէսն *և զտէր* Յովհանէսն, *զտէր* Գրիգորն *յիշեցէք...։*

838
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 117

Գրիչ, ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

ա

166 *Փառք...։ Եւ արդ՝ դրաւ եղև ի Թուականիս Հայոց ՌԶԳ (1634) ամի, ձեռամբ անարժան դպրի, ի փառս Քրիստոսի։ Եւ արդ՝ տեսեալ ոմն բարեմիտ և աստուածասէր, և հեզահոգի, և հնազանդ, և [հ]ամեստ, և հարկաւոր, զոր փափաղ ունէր այս լուսազարդ սբ. Աւետարանիս Շահիարի, ստացաւ ի հալալ յընչից իւրոց, և ետ յիշատակ բարի՝ իւր և կողակցին իւրոյ՝ Մանուկին, և որ փոխեցեալ է առ Քրիստոս, և դեռաբուսիկ որդին Յակոբջան, որ*[41] *հանգեաւ ի Քրիստոս, յիշեցէք...։ Արդ՝ ևս առաւել յիշեցէք զիս զանարժան Մեսրոպ դպիր Խիզանցիս, և զմարմնաւոր ծնօղսն իմ՝ տէր Մարտիրոսն և զԽոնդքարն, և զեղբայրքն իմ՝ տէր Թադէոսն, Պարոնամն, և քուերքն իմ՝ Աննայն և Դեղծուն, և զորդին իմ՝ Մարտիրոսն, որ բազում աշխատ[եցա]նք ի ծաղկել և զարդարել...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիս անարժան և զհոգևոր վարպետս իմ, նախ՝ զտէր Սարգիսն, որ մականուն Մազմանն կոչի, և զվարպետաց վարպետն՝ զտէր Մարտիրոս քաջ Խիզանցին, և զորդին իւր՝ Գրիգորիս, և զամենայն աշխատաւոր, որ երախտիք ունին ի յարուեստ յայս, յիշեցէք...։

բ

Ո՛վ եղբարք, անմեղադիր լերուք, զի զալատեցայ յինուին[42] *միջին գրուեցաւ և միջին յետին, վայ մեղաւորիս, անմեղադիր լերուք, ո՛վ հարք և եղբարք, թողութիւն արարէք։*

գ

Ո՛վ եղբարք, յիշեցէք ի Քրիստոս զտառապեալս և զանկեալս զՄեսրոպ դպիր գծող սորա, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

839
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՏԵՐԱՎՋ, № 243

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Ստամպոլ

381 *Փառք...։ Որք հանդիպիք այս տառիս, յիշեցէք զստացող սորա*
382 *մահդասի Դաւթին, և եղբօրն// հանգուցեալն ի Քրիստոս մահդասի Մարգարին, և հայրն իւրոց՝ Մանուկին, և մայրն՝ մահդասի Թամամին, և ամենայն արեան մերձաւորաց։ Այլ ևս պապին իւրեանց՝ Առաքելին, իւրեանց հանիկն՝ Շատրէին, և հօրեղբայր Նասրին, և միւսն՝ Սաֆարին, որդոցն՝ Հայրապետին և Աստուածատուրին, Բարումին, և մօրեղբօր Գրի-*

41 Ցուցակում «և»

42 Ցուցակում այս բառը բացատրված է «յետին»։

զորին, և կողակցին՝ Թանկիսաթունին, և քւերն՝ Խանփարին, որդոցն՝ Աւթարին, Աւետիքին, և մահդասի Դաւթին, կողակիցն՝ Սամբարն, և մահդասի Մարգարի կինն՝ մահդասի Աննայի, և հոգու որդոցն՝ Յովհաննիսին, Գրիգորին, Սարգսին, պղտիկ հարսն՝ Սալվարիւանին, ազգականացն՝ Սալթափաշէ խանումին, և զիս անպիտան գրիչս Ղազարս, յիշեցէք ի Տէր....

Գրեցաւ և աւարտեցաւ սբ. պատմութիւնս, որ կոչի [3]այսմաւուրք, թվականիս ՌԶԳ (1634), ի քաղաքն Ստամպօլ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսու, ի դպրատան վարպետիս, զոր մեզ զգիրս ուսոյց։

840

ԳԻՐՔ ԵՊԻՓԱՆՈՒ ԿԻՊՐԱՑԻՈՅ

ՏԵՐԱՎՋ, № 397 (ԺԳ դար)

Կազմող՝ Մուրատ Սարգիս

600 Զվերջի կազմող սբ. գրոյս աղաչեմ յիշել ի Տէր զնուաստ Մանուկի որդի ոսկէգործ Մուրատ Սարգիսս և մեղաց թողութիւն խնդրել։ Թվին Հայոց ՌԶԳ (1634)։

841

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ՏԵՐԱՎՋ, № 451

Գրիչ, ստացող՝ Թորոս Աթիցի
Վայր՝ Անկուտի

Ա

701 Փառք...։ Որոյ ծառայս անպիտան Թորոս Աթիցի կրաւնաւորս էի, և եմ և եղէց վիճակ և ծառանգութիւն, միայն թէ ընկալցի անարգամեծար տէրն, որոյ ջնորհիւ Տեառն սկիզբն արարի աստուածային սբ. Քարոզգրքիս, և ողորմութեամբ, և աւգնականութեամբ նորին յանկ հանի ի թվականութեան մերում Հայոց ազգի ՌԶԳ (1634) ամի, որ մոլորեցան ցոյնք և ծռազատիկ արարին ի Ծաղկազարդի կիւրակէին և բազում խռովութիւն եղև, զոր ոչ կարեմ գրով արկանել կամ լեզուաւ ճառել, որ յետոյ սևերես և ամօթալից եղեն ի մէջ քրիստոնէից և այլասեռից, որ ամէն քաղաք զիւրենք կողոպտեցին, թէ դուք դիւր Զատիկ արարիք։

Բ

Ի յերկիրս Գաղատեա որ այժմ ասի Անկուտի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի վանացն, ի վայելումն անձին իմոյ և յետ անցմանն իմոյ յիշատակ անջնջելի արա մնասցէ. ամէն։ Արդ՝ որք հանդիպիք այս գրքիս կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով, բան ինչ ի սմանէ օգտելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, զիս զանարժան զգծող սորա զԹորոս արեղայս, և զհայրն իմ՝ զԴաւիթ, որ փոխեցաւ առ Քրիստոս, և զմայրն իմ՝ զԱթլասխաթունն, և զայլ ամենայն հոգևոր հարք և եղբայրքն, մերձաւորսն մեր և զայնոսիկ, որ ի վերայ մեր անար-

ժանութեանս երախտիք և աշխատանք ունին, և որք յիշէք՝ ձեզ յիշողացդ...։

[Դ]արձեալ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սիրելիք հայրք և եղբարք, անմեղադիր լերուք սղալանաց և խոշորութեանն, զի կար մեր այս է, բաղում տառապանօք և աշխատութեամբ որ ձաբրդեցի զայս Քարազգիրքս։ Զի հացն է ցամաք, ապուրն է թրթու, աշերս եղեր է քանց վվրդու։ Զի այս վանքս խիստ դառն է աղքատացեր, վասն մեր փառասէր, և բարձրամիտ, և ագահ եպիսկոպոսաց և վարդապետաց. ի յարքունուստ գնալով և ամբ և պարաթ հանելով և այլազգաց հարկ տալով, ոմն թէ՝ ես նստիմ առաջնորդ, և ոմն թէ՝ ես, և այնչափ արարին, մինչ ութ հազար զոհիշն հանեցին զպարտքն։ Հայցեմք ի Դեմետրեա արարչէն, որ Աստուած վճարութիւն տա այս պարտոցն և ազատութիւն տայ ազատարարն Քրիստոս։ Զայս ամեն չարութեան արարին և զայս սր. վանքս աղքատացուցին, մինչ զդրգալն ծախեցին և վճարութիւն չեղև, դեռ կա Ե(5) հազար զոհիշ։ Ոչ լսեցին զտէրունեան հրամանն, թէ՝ «Այսմ գիշերի զհոգիդ ի բաց պահանջեմ[43]» և այլն։ Այսչափ գիրք աստուածային զհամբերութիւնն և զագահութիւնն և զչարութիւնն և զպոռնկութիւնն և զփառասիրութիւնն...։

Ծաղկող՝ Վահան

Գ

Մարդ Մաթէոս ծեր պատուական,
Գծագրեցեր զԱւետարան,
Զծաղկողս յիշեա զտրուպ Վահան,
Որ նկարեաց զայս թուի խորան։
. . . . . .[44]

842

ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՏՅԶՄՎ, № 116

Գրիչ, ստացող՝ Կարապետ

ա

399 Թվին ՌՁԳ (1634) աւարտեցաւ և Քրիստոսի մարգասիրին փառք։

Բ

Քրիստոս Աստուած փրկեա զմեզ ի մեքենայից սատանայի և յորոգայթից նորա... այլ ձեռնտու լինելով ինձ մեղասիրիս, որով կարացից վերշանալ այս ծաղկափունն հարցմանցս ժողովածոյս, զոր կարդացողք սորա հոտոտին ի սմանէ, և առնուն զհոտս իմաստից։ Դոյզն բանիս ցանկացօղ եղէ Կարապետ անարժան, որ միայն զձևն ունելով և գործովս ոչ, սակայն ի խնամոցն Աստուծոյ և աղօթիւք ձերովք հասցուք ի վերջն բանիս և աւարտեսցուք զսա։

[43] Հմմտ. Ղուկ., ԺԲ, 20։

[44] Զորս ավետարանիչների գովք։ Միակ պատմական տեղեկությունն այն է, որ առաջին քառյակում նշված է ծաղկողի անունը։

843
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՏՅԶՄՎ, № 407

Վայր՝ Կ. Պոլիս

858 Փառք...։ Գրեցաւ երգարանս Դաւթի ի քաղաքն Կոստանդինուպոլիս, ի վայելումն պարոն Նիկողայոսին, և զհայրն իւր՝ Փիրումն և զմայրն իւր՝ Խաթու[ն]ջանն, և զքու[եր]քն իւր՝ Լէլիխանն, Ասլխանն, կողակցին իւրոյ Մաս.....

Թվին ՌԶԳ (1634)[45]։

844
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՈՅԶՄՎ, № 685 (1612 թ.)

177 Քրիստոսի գալստեանն մինչև ի մեզ ՌՈԼԴ (1634) ամ է. և այս ամս որ մէջն կամք ՌԶԴ (1635) է։ Ուրեայու Աստուածածինն շինման թիւն ՌՈ (1600) ամ է. Երուսաղէմայ Ս. Յարութեան շինման թիւն ՌՅԼԶ (1336) ամ է։ Ուրեայու Աստուածածինն քան զ[Յ]արութիւնն ԲՃԿԶ (266) տարի առաջ շինեցաւ. Աստուածածինն Քրիստոսի գալստեանն ԼԴ (34) ամ յետոյ է շինած։

845
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՔՅԶԶՎ, № 2. տե՛ս նաև Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, էջ 108—109

Գրիչ՝ Վահան քահանայ

Վայր՝ Զէյթուն

ա

16 Փառք... Յորոց մի զպատուելի և սրբակից վանական վարդապետ
17 տէր Դրիգորիս որ ի խնդիր ելեալ իբր զիմաստուն վաճա//ռական ի դիւտ պատուական ականց և մարգտրտից կամ իբրև զբժիշկ ի գիւտ ալկտակար դեղոց և ծաղկանց-... ետ գրել զսայ առատագոյն ծախիւք՝ յոսկւոյ սրբոյ և ի գեղեցիկ երանգւոց վայելչացոյց զսա, ի յուրախութիւն անձին իւրոյ և մանկանց նորոյ Սիովնի։ Եւ ետ գրել զսա իմում նուաստութեանս ամենամեղ և զառածեալ յանցանաւք աղտեղեալ ոգւոյ Վահան անյիշելի անուան, և ես ըստ իմում կարի լցի ղփափաք նորա և գրեցի զսա ահիւ և դողութեամբ։ Եւ եղև սկիզբն և աւարտումն սորա աջողութեամբն Աստուծոյ, ի գիւղաքաղաքն ի Զէյթուն, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զաւրավարի, և Ս. Հրեշտակապետացն, և Սրբոյ Յակովբայ Մծբնայ հայրապետին, և Ս. Աստուածածնին, և Ս. Կարապետին, և Սրբոյ Գրիգորի Լուսաւորչին, և Պարսամայ, և Թէոդորոսին, որ աստ կան մեզ ի յաւգնութիւն. ի թվականիս Հայոց Ռ և ԶԳ (1634), ի հայրապետութիւն Կիլիկեցւոյ տէր Սիմէոնին, ի յառաջնորդութիւն մեր վանացս

[45] Հիշատակարանին կցված է 1645 թ. մի վկայություն, պարոն Նիկողոսին որդի ծնվելու, և 1652 թ. նրա որդիներից մեկի մահվան մասին։

տէր Մկրտիչ արքեպիսկոպոսի և այլ ամենայն քահանայից և ուղղափառ սարկաւագաց. ամէն։ Արդ՝ որ հանդիպիք սմա, յիշեսջիք սրտի մտաւք զստացաւղ սորա զտէր Գրիգոր[իս] վարդապետն և զծնաւղսն նորա. ընդ նմին և զմեղուցեալ գրիչս ե զծնաւղս իմ, զհայրն իմ՝ զԱւետիք և զմայրն իմ՝ Զմրուք. և զհաւրեղբայրք զՆերսէս և զՎասիլ, և զեղբայրն իմ՝ զՍահ-փանոս քահանայն և զտէր Ներսէս եպիսկոպոսն և զԿոստանդինն, որ առ Քրիստոս փոխեալ են։ Եւ զորդիք իմ զտէր Ատեփ և զմիւս որդին իմ՝ զՊրոխորոն և զիմաստ[ուն] պատանին Ներսէս, որ այսմ[46] ամի փոխեցան առ Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորքս մեր. ամէն....[47]։

Բ

15 Որ ընթերցաւղք որք ընթեռնուք,
ԶԱստուածաշունչս 'ւ ի միտ առնուք,
Զիս զանարժանս ի միտ կալնուք,
Զվանան որ եմս մեղաւք ի զուք։
Ըզսա ոսկւով զարդարեցի,
Աշողութեամբ Տեառն արարչի,
Զորս խորանաւ հինկ փոկ ի լի,
Երկու 'ւ երեք լանվարդեցի։
Զցրուայծաղիկն լուքով գրեցի,
Եւ զայլ փոքրերն ըստ մեր կարի,
Մի մեղադրէք տեսաւղք բարի,
Զի տկար անձամբ զայս գրեցի։
Ով ոք յիշէ յիշեալ լիցի,
Ի գալըստեանն Քրիստոսի,
Զեզ և մերոցն յամենայնի,
Ամէն և է եղիցի։

Գ

16 Ո՛հ զմեղաւոր հողս զՎանան,
Որ քահանայ է անարժան,
Զձեզ աղաչէ ո՛վ պատուական,
Սուրբ քահանայք աստուածական։
Խնդրեմ ի ձէնջ աղերսական,
Զսուրբ տեսանողքդ միաբան,
Յիշել յաղաւթս ձեր սրբազան,
Զիս և զծնողքս որ են ննշման.
Զեղբարքս և զքորքս իմ գնացական,
Որ ի Քրիստոս դասակցեցան։

Դ

Ով տէր Աստուած ամենայնի,
Երկիր պագանեմ աղերսալի,

46 Տպված՝ է «աստ»։

47 «Ի։ եղև սկիզբն» հատվածից մինչև այստեղ տե՛ս նաև Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 309—310։

Մատեանս այս ինձ նուաստի,
Տուր յաջողումն վերջի գծի։

Ե

Անմեղաղիր լերուք յանկարծ ի յանձրևէ եղև այսպէս։

Զ

Տէր Աստուած երես անկեալ աղաչեմ զքեզ,
Զմատեանս զայս ի վերջ հասուցանես։

Է

Զեռս փտի և հողանա,
Փոշի մոխիր գաղաղ դառնա,
Թէպէտ խոշոր է գիր սորա,
Ով ոք կարդա նա հմտանա։
Եւ զգծողս յիշէ նա,
ԶԱստուած ողորմիս ասէ նա,
Տէր Աստուած իւրն քաղցրանա
Եւ իւր մեղաց թողութիւն տա։

Ը

Ո՛վ ընթերցաւղ և գազաբարաւղք և տեսանաւղք, յիշեցէք լի սրտիւ զգրծաւղ սորա զվատթարս զՎահան և ղորդիս զտէր Աւետիք, և զաշակերտն իմ՝ զՅոհան, որ թելադրութեամբ աւգնեաց ի ծաղիկ և ի կազմելն։

Թ

Վեհ նըւիրեաց զնիւթ տառիս,
Այն որ զմարմին ետ և զոգիս,
Առ ի պատճառ յոգներանգիս,
Բազմանկար սուրբ կտակիս։
Արդ՝ ժառանգողք ի ներկայիս,
Եւ տեսանողք լուսազարդիս,
Աղաւթեցէք նախասաց յիս,
Բազմամեղք Վահան գծաւղիս։
Հարց, ծնաւղաց և ազգայիս,
Եւ ուսուցչաց մեր վարպետիս,
Որդւոց մերոց, թոռանց որ յիս,
Եւ ըստացող տէր Գրիգորիս։
Աշակերտեալ մանկանց առ իս,
Ամէն քրիստոնէից զարմիս,
Եւս առաւել Հայոց տոհ[մ]իս,
Համադասել լոյս երամիս։
Նա ընթերցողք զայս բան քանիս,
Զիս յիշեցէք զողորմելիս,
Եւ դուք յիշեալ լիջիք յերկինս,
Տէրն տայ ձեզ զանճառ բարիս։

Ո՛վ վայելաւղք այս կտակի,
Զիս յիշեցէք տուք զողորմի,
Որդւոյ իմոյ ըստացողի,
Տէր Գրիգորիս վարդապետի։
Տէր Աւետիք քահանայի,
Կրտսեր որդւոյ Պռոխորոնի,
Եւ Ներսէս սաղմոս երգաւղի,
Որ փոխեցան այսմիկ ամի,
Որք դասեցան ընդ Քրիստոսի,
Ի վերին Երուսաղէմի։

846

ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՄՅԶԷՊ, I № 11. տե՛ս նաև «Սիմոն» 1933 թ., էջ 422—423, ՄՅԶԵՍ, № 11. էջ 22

Գրիչ՝ Գրիգոր քահանայ
Վայր՝ Վան

ա

85 Փառք...։ // Եւ արդ՝ յայսքան և յայսպիսի մեծ և բարեզարդ և պատուական սրբոց գումարս, որ կոչի Ոսկիփոր, բարեխօս աշխարհի և ապաւէն ապաստանի, զոր ղիմեալ մեծաւ յուսով, բարի արմատն և հաւատարիմ կրօնաւորն Կարապետն կոչեցեալ, և փափաքեաց կենացն յաւիտենականին, և աւետեացն, զոր խոստացաւ Տէր սիրելեաց իւրոց, և մատուցեալ զունկն աւետարանական բանին, որ ասէ. «Արարէք ձեզ քսակ առանց հնանալոյ գանձ անպակաս յերկինս[48]». և ցանկացօղ եղեալ աստուածային գանձիս, և ստացաւ զսա յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և իւրոցն ամենեցուն, հօրն՝ Բարնորդարին և մօրն՝ Գաստագուլին, և եղբարցն՝ Աստուածատրին, Շայրամիրին, և որդւոցն՝ Միրզին, Մուրատ-
86 բաղշին և տէր Սիմէոնին։ Զոր// խնդրեսցուք յամէնառատ պարգևողէն Քրիստոսէ, զի բարեխօսութեամբ սրբոց և սիրողաց անուան նորա դասեսցէ զտէր Կարապետն և զնախնիսդ դորին, զոր յիշատակեցաք վերայ գրովդ ընդ բազմութիւն սրբոց վկայիցն, որք կան հաւաքեալ ի վերինն Երուսաղէմ ի խորանն լուսեղէն. ամէն։

Դարձեալ կրկին մաղթանօք աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զստացող սբ. գրոցս զտէր Կարապետն և զծնօղսն իւր և զամենայն մերձաւորս իւր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, և լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցա հոգւոյն և դուք վարձս յԱստուծոյ առնուք. ամէն։

Եւ արդ՝ ես յետնեալս յամենայն մասանց բարեաց և յանարժանս յուխտէ եկեղեցւոյ Գրիգոր անուն միայն քահանայ, և ոչ գործօք, որ եմ բաղում ցնորիւք մեղաց պաշարեալ, ողբս առից ի վերայ թշուառացեալ անձին իմոյ, և լացից զբազմութիւն մեղաց իմոց, զոր ոչ կարէ նմանակս վերաբերել, այլ գիտողին զգաղտն երևակն առաջի աբկեալ հեծեծեցից և խնդրեցից ի նմանէ, զոր և տացէ մեզ մասն ողորմութեան հայցուա-

[48] Ղուկ., ԺԲ, 33։

ծովք ամենայն սրբոց իւրոց և աղօթիւք սբ. եղբարցդ. զոր վստահացեալ եմ ի յօդնականութիւն Հոգւոյն Սրբոյ, ձեռն արկեալ գրեցի զսա ի դուռն Ս. Աստուածածնիս, որ կոչի Միրանաւոր, և յայլ սրբութեանցս որ աստ կան հաւաքեալ. ամէն։ Ի թուականիս Հայոց ՌՁԳ (1634) ամին, ի յառաջնորդութիւն մեծ աթոռոյն Էջմիածնի տեառն Փիլիպպոս կաթողիկոսի, ի յառաջնորդութիւն Վարագայ Մարտիրոս բաբունապետի. ի հայրապետութիւն տէր Յուսկայ որդւոյն, զոր տէր Աստուած հաստատուն և անդրդուելի կենաց պահեսցէ զսոսա մինչև ի խորին ծերութիւն արժանի առնէ զսոսա. ամէն։ Եւ արդ՝ ես անարժանս յերեսս դեռին դնելով առաջի ձեր, և աղաչեմ չինել մեղադիր սխալանաց և խոշորութեան գրիս և պակասութեան արուեստիցս, և էր ժամանակս դառն ի ձեռաց անօրինաց, որ եկն Ռրստամ խան ի վերայ Վանայ ԼՌ (30000) հոդով և ետուր խսար բազում ժամանակս։ Եւ խիստ չարչարէին զտառապեալ ազգն քրիստոնէից, ի պարիսպն, ի խանդակ փորելն. և զորս ի քաղաքն գտանէին բազում չարչարանք տային։ Եւ վասն չար գործոց իմոց եկեալ գտին զիս և զականչս կտրեցին և խիստ վանեցայ և տկարութիւն շատ քաշեցի։ Եւ դուք, ո՛վ սիրելիք, զսղալն ուղղեցէք և մեր մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, և ծնօղաց մերոց, և ամենայն արեան մերձաւորացն մերոց և երախտաւորացն մերոց, և հոգևոր վարպետացն մերոց, և ողորմի ասողացն Աստուած իւրն ողորմեսցի. ամէն։

Բ

87 Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տէր Կարապետ կրօնաւորին, և իւր ծնօղաց, հօրն՝ Բարեաւտարին, մօրն՝ Դաստագուլին, եղբաւրն՝ Աստուածատուրին և սանահայր՝ Ամիրալին, կողակցին՝ Գուլբէկուն, որդոյն՝ Յովանիսին, դստեր՝ Մուրթին, մեր հոգևոր երբօր՝ տէր Կիրակոս կրօնաւորին և ծնողաց նորին, սանահայր՝ Մանոսին, Ասլանին, Սարգսին, երիցփոխան Սէրիչանին, մօր Փարիխանին, քւեր Գուլիխասին, և որք երախտիք և աշխատանք ունին ի վերայ սբ. գրոցս։ Ով կարդայ կամ ուրինակէ, նա զԱստուած ողորմին ասէ, Աստուած իւրն ողորմեսցի յաւուր դատաստանին. ամէն։

Գ

95 ...Ողորմեա տէր Աստուած ստացողի սբ. տառիս տէր Կարապետ աբեղային և ծնօղացն սորին՝ հօր Բարեորդարին և Դաստագուլին, և եղբարցն՝ Աստուածատրին, Շայրամիրին, և որդոցն՝ Միրզին, Մուրատբաղշին, և տէր Սիմէոնին, և արեան մերձաւորաց սոցին, և Գրիգոր մեղսաթաւալ գրչիս, և իմ ծնօղացն՝ Յովասափին և Փաշաբէկուն, և թղթի կոկողին, և թանաք եփողին, և նշըշտայ արարողին, և իմ ուսուցչին՝ տէր Զաքարին, կարդացողաց և լսողաց և ժամ եկողաց[49]։

Դ

95 ...և զկոկող թղ//թիս զՄկրտիչն և զազգականս սորին...։

[49] Այս բովանդակությամբ, բայց համառոտ, մի քանի այլ հիշատակարաններ էլ կան ցուցակում։

Ե

Քանզի այս տետրս ի հսարն գրեցի. այս երկու ամիս է որ այս տետրս կու գրեմ։

Զ

Անմեղադիր լերուք զի չքաւոր էի, ո՛վ եղբայր, եթէ սղալ է և կամ անյարմար նայ՝ մեղաւորիս ողորմի ասա դողալ տէրտէր[50]։ Վա՜յ ինձ, զի զալտայ զլուսանցն զրեցի, վա՜յ ինձ հազար բերան։ Աչս զտող չի տեսաւ, տեղս մութն էր։

Է

Վասն ահագին դատաստանին ոտանաւոր կարդա և զմեղաւոր գծողս յիշեա։ Պարոնտէր Կարապետ թէ չես կարեր նա՝ զթուքդ կուլ տուր։ Բարէ ասա՛ և կամ լսէ՛, է եղբայր տէր Կիրակոս[51]։

Ը

Ստացող՝ Կարապետ
Վայր՝ Արգելան

86 Եւ արդ՝ ես Կարապետ արեղայ ստացայ զսբ. գիրքս՝ որ կոչի Ոսկիփոր, յիշատակ բարի հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց և ամենայն արեան մերձաւորաց իմոց, ես առաւել որ ի վերայ գրոցս երախտիք ունին, և եգի ի դուռն Արգելանայ Ս. Աստուածածնին և տէր Յուսակայ որդոյ սբ. գերեզմանին։ Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսբ. գիրքս ի դրանէ սոցա թէ՛ մերոց, թէ՛ յօտարաց։ Եւ թէ ոք յանդգնի ծախէ կամ գրաւէ կամ հեռացուցանէ ի դրանէ տէր Յուսկայ որդոյ սբ. գերեզմանէն՝ զմասն Յուդային առցէ և զանէծքն օձին և զպատիժն Կայենին. ամէն։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք տէր Կիրակոսին, և կողակցին, և ծնողացն, և ամենայն արեան մերձաւորաց սորա, որ միշնորդ եղև գրոցս և կամեցաւ. և Աստուածն ամենայնի որ առատ է ի տուրս բարեաց առ հասարակ ողորմեսցի. ամէն։ Եւ առաւել միաբան սբ. ուխտիս Արգելանայ, և զհայր վանաց զԱբրահամ արհեպիսկոպոսն և զմեծն տէր Սիմէոն, որ յայս ամի փոխեցան առ Աստուած. և զեղբարսն մեր զհոգևորն զտէր Կիրակոսն, զտէր Զաքարէն, զտէր Գալուստն, զտէր Յովհաննէսն, և զայլ միաբան եղբարքն, և զմելիքն Բերկրու քաղաքին՝ Նուրիջանն, և զծնողսն իւր՝ զմելիք Ջանգիր և զՄարգարիտն, զտէր Խաչատուրն, և զհօրեղբարն՝ Խլղաթն, և զերէցփոխան՝ զԳրիգոր, որ շատ երախտիք ունին ի վերայ Ս. Աստուածածնին և տէր Յուսկայ որդոյ սբ. գերեզմանին, ես առաւել շինողաց և շէն պահողացն և գրքիս խնամ տանողաց և լաւ պահողաց, և
87 Աստուած ամենայնի, որ առատն է ի տուրս բարեաց, տացէ// զիւր արքայութիւնն ձեզ և ձեր ննջեցելոցն. ամէն...։

---

50 Գուցե «տէր տէր» ինչպես տպագրված է։

51 Սկսած գ հիշատակարանից մինչև է-ն վերցրած է Սյուրմելյանի հրատարակած ցուցակից։ որովհետև դրանք Պողարյանի հրատարակության մեջ չեն վերցված։

847
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Մ8Զ6Գ, I № 23 (1625 թ.), տե՛ս նաև Մ8Զ6Ս, № 23, էջ 122—124

Վայր՝ Երուսաղէմ

121 Այլ և եդաւ սա յիշատակ ի սբ. Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ի պատրիարգութեան սբ. Երուսաղէմայ՝ մեր Հայոցս Ս. Յակոբա[յ] Տեառնեղբօր աթոռին, եւ Ս. Յակոբա[յ] առաքելոյ Գլխադիր սբ. դամբարանին, տէր Գրիգոր քաջ եւ արի սբ. Երուսաղէմայ հայրապետին, որ էր սիրող սրբութեան, եւ պարկեշտ վարուք, երկայնամիտ և ողորմած, քաղցր և անոխակալ։ Զի հայր հասարակաց էր և զամենեսեան սիրով մխիթարէր, և զպէտս և զկարիս ամենեցուն լցուցանէր, զմերկսն զգեցուցանէր, զքաղցեալսն կերակրէր, զկարաւտեալսն և զչքաւորսն յազեցուցանէր, առատատուր ողորմութեամբ։

Եւ է սա՝ զամս Լ(30) և այլ աւելի ի սպասաւորութիւն սբ. տնօրինականացն Քրիստոսի մեր.Հայոց վիճակիս, զի յառաջ քան զսա՝ էր սբ. Երուսաղէմ մեր Հայոց վիճակս ի ներքո բազում, անթիւ եւ անհամար պարտուց. և մեր Հայոց ազգի վիճակն և վանորայքն ամենեքեան հնացեալ և փլեալ էին վասն անհոգութեան և ընչից պակասութեան, և մեր անաւթքն և սրբութիւնքն և արթունք սբ. տաճարացն ի ձեռս այլ ազգացն էր գրաւեալ։ Նա շնորհիւն Աստուծոյ և բարեխաւսութեամբ սրբոյն Գրիգորի մեր լուսաւորչին, և անդադար հայցմամբ և պաղատանօք տէր Գրիգոր սբ. Երուսաղէմայ հայրապետին մերոյ, նմանեալ արթուն եւ զուարթուն անուանակցին իւրոյ։ Ի սորա ժամանակն եղև անթիւ և անհամար պարտուցն, անօթիցն և սրբութեանցն և սպասուց սբ. տաճարացն ազատութիւն։ Նա նորոգեաց զՍ. Մնունդն և կրկին յաւել ի շինուածն քան զոր յառաջն էր։ Նա Բ(2) անգամ ի հիմանէ նորեաց զՍ. Փրկչի վանքն, որ կա ի նմա կափարիչ վէմն Քրիստոսի։ Նա նորոգեաց զաթոռ Տեառնեղբարն, զՍ. Յակոբա[յ] տաճարն, և զխցերն, որ հնացեալ էր, զտա-
122 ճարն մոլայիւ ծեփեաց, զներսն// և զդուրսն. եւ զխցերն ամենայն ներս և դուրս նորոգեաց։ Նա ի հիմանէն կանգնեաց զՍ. Յոհանէս աւետարանչի եկեղեցին, ի դուռն Ս. Յարութեան։ Նա էառ ի Ս. Յարութեան վերնատներուցն Գ(3) կամար և լայն և ընդարձակ արար զմեր եկեղեցին. զի յառաջ խիստ նեղ էր մեր վերնատունն։ Նա նորոգեաց զՍ. Հրեշտակապետի վանքն և յաւել ի նմա խցերս։ Նա էառ բազում այգիս խաղողի և ծառս պտղենի, նռնենի և թզենի։ Նա արար բազում արթունս և անաւթս սբ. տաճարացն, խաչս, սկիհ, շուրջառ և այլ զանազան անաւթս ոսկեղէն և արծաթեղէն, թաֆս ականակուռս և մարգարտաշարս, և տուիս խնկոց և պատուական բաժակամանս։ Եւ այլ ամենայն արթունք, զոր ընդ դրով արկանելն ձանձրութիւն է կարդացողացն և լսողացն։ Զի ճշմարիտ որքան ըզգրեալսն Ճ(100)-ապատիկ է սորա հոգևոր և մարմնաւոր պատրաստութիւն, վասն պայծառութեան սբ. տաճարացն։ Նա յիւրում հայրապետութեան ժամանակն կարգեաց ի մեր Հայոց ազգի վանքերն, քահանայս եւ սարկաւագունս վասն սաղմոսերգութեան և պաշտաման և աղաւթից ի սբ. Մնունդն, ի Ս. Յարութիւն, ի Ս. Փրկիչն, զի շաբաթ և ի կի-

բակին պատարաղ մատուցանել անխափան։ Իսկ ի Ս. Յակոբ, ի յաթոռն Տեառնեղբօրն, որ կա ի նմա Գլխադիր Յակորա[յ] առաքելոյն, եղբօրն Յոհաննու աւետարանչին, յամենայն աւր անխափան զսաղմոսերգութիւն և զպաշտաւնն և զգիշերային ժամն կատարել, եւ գնալ ի սբ. տնօրինականքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ պատարագ մատուցանել՝ շաբաթ աւր ի Գլխադիրն Ս. Յակոբա[յ], և կիրակին՝ յԱւագ խորան որ ի մէջ Ս. Յակորա[յ], երկուշաբթին՝ ի Ա. Հրեշտակապետն, երեքշաբթին՝ ի Ս. Առաքեալն եւ ի Ս. Թորոս, չորեքշաբթին՝ ի Ս. Աստուածածնի գերեզմանն, հինգշաբթին՝ ի Ս. Փրկիչն, ուրբաթին՝ ի Ս. Յոհաննէս աւետարանչի եկեղեցին։ Այլ ևս զամենայն եկեղեցիս նոր և պայծառ հանդերձիւ և զգեստիւ զարդարեաց։ Զի յառաջ քան զսա՝ յամենայնէ մերկ էին սբ. եկեղեցիքն, եթէ խաչ, եթէ սկիհ, եթէ Աւետարան, եթէ շուրջառ և այլ անաւթք և արթունք որ պիտոյ են սբ. եկեղեցեաց։ Ապա ի սորա ժամանակն պայծառացան սբ. եկեղեցիքն, ողորմութեամբն Աստուծոյ եւ սբ. եւ արժանաւոր աղաւթիւք եւ անդադար հայցմամբ սբ. Երուսաղէմայ տէր Գրիգոր հայրապետին մերոյ։ Որպէս ասէ մարգարէն Դաւիթ.- «Զկամս երկիւղածաց առնէ Տէր և աղօթից նոցա լսէ»[52]։

Այլ և յետ այսր ամենայնի ի յայսմ ամի, որ եղաւ գիրքս յիշատակ ի թվին ՌՁԳ (1634), ի յայսմ ամի, Յունք, որ է Հոռոմ ազգն, զՋատիկն ծռեցին եւ մեր Մաղկազարդին Զատիկ արին, եւ կամէին զմեր ազգն ընդ իւրեանցն տանել զօրով։ Զի նոքա զիւրեանքն ի վաղ ժամանակէ պատրաստեալ էին վասն ծռագատկին իւրեանց. և մեր ազգն անհոգ և միամիտ էր, և ոչ իմանային զխորամանգութիւն ազգին Յունաց, զի նոքա ի թագաւորէն, ի վազիրէն, ի Շամա[յ] փաշայէն ամրեր էին հանած եւ հազիր արած, այսպէս թէ «Հայ ազգն զՋատիկն ծռեր է, մեր Զատիկն է ճշմարիտ, և լոյսն մեզ պիտի ելնու»։ Յետո[յ] ի վերջին եւ ի հասեալ աւուրքն, որ պահոց միջինքն անցաւ, իմացաւ մեր հայրապետն որ այնպիսի չար էին գործեր ազգն Յունաց, նա յուսացաւ յողորմութիւնն Աստուծոյ, եւ ի բարեխօսութիւն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ ի հաստատ յոյս և ի սէր և ի հաւատն իւր, զոր ունէր առ Աստուած, ճշմարիտ ծառայն Աստուծոյ տէր Գրիգոր հայրապետն սբ. Երուսաղէմայ, արթուն եւ զ[ո]ւարթուն, նման անուանակցին իւրոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, կանգնեցաւ ընդդէմ հերձուածող չար ազգին Յունաց, զի նոքա հազարք և բիւրք էին՝ դատախազք, մեծամեծք եւ անուանիք, արք և կանայք, ծերք և տղայք, և հայրապետն մեր միայն. այլ հասեալ էր ի թիկունս նորա անհերևոյթ զօրութիւնն Աստուծոյ, որպէս ի թիկունս Հոիփսիմէ կուսին, զոր յաղթեաց հսկային՝ Տրդատա[յ] թագաւորին։ Այլ և ըստ տէրունական հրամանին Քրիստոսի, թէ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերա ոչխարաց»[53], կանգնեալ էր նա ընդդէմ հակառակ և հերձուածող, նենգաւոր չար ազգին Յունաց, հաստատուն հաւատով, անհերկբայ յուսով և անկեղծ սիրով. և ի վիճաբանելն նոցա տայր անահ եւ անհերկիւղ
12.1 առաջի այլազգացն զպատասխանին, եւ կապէր զլեզուս //Նոցա։ Եւ այլ-

52 Սաղ., ՃԽԴ, 19։
53 Յովհ., Ժ, 11։

ազգիքն զարմանային ընդ քաջութիւն սրտի նորա, զի կամէր զարիւնն իւր հեղուլ վասն ուղղափառ հաւատոյս մերոյ, և ոչ կոխան լինել նենգաւոր և չար ազգին Յունաց։ Եւ նոքա ոչ զառնային ի չար կամաց իւրեանց։ Ապա անկան առաջի բռնաւորաց, ի փաշա, ի զաղի, ի մուֆթի եւ ի մեծամեծ շէխերն, եւ ամենայնքն որ տեսանէին զհայրապետին մերոյ զանկասկած խօսքն, նախատէին զազգն Յունաց, թէ «Դուք սուտ էք». և նոքա ոչ դառնային յիւրեանց չարացն, այլ կամէին զիւրեանց չար կամքն կատարել, և զմեր Հայոց ազգն կոխան առնել և սուտ հանել։ Յետ այս ամենայն աղմուկին և խռովութեանն, ապա ասին փաշայն եւ զաղին, թէ՝ «Թող մտնուն ի Յարութիւն, զիւրեանց Զատիկն առնեն, թէ լոյս ելնու, թող առնուն, ու թէ չէ՝ նա յայտնի կու լինի նոցա ստութիւն»։ Ծաղկազարդի շաբաթ օրն մտան նոքա ի Յարութիւն, և մինչև ի լոյս կանչ և ճիչ և աղաղակ դրին, թէ լինի լոյս ելնու։ Հնար ոչ եղև, զի չէր ժամանակն։ Այլ այնպէս սև Զատիկ արարին, և լալով և կոծելով նոցա ուխտաւորքն յաշխարհն իւրեանց ելեալ գնացին։ Իսկ միւս շաբաթին մտին մեր Հայոց ազգն, և ամենայն ուղղափառքն և ամենայն մեծամեծքն այլազգաց, և տեսին զի պայծառացաւ Յարութեան գերեզմանի ղուպայն. և տեսին Հայոց ազգն և ամենայն ուղղափառքն, և արարին մեծապայծառ ցընծութիւն և ուրախութիւն հոգևոր և մարմնաւոր։ Եւ այլազգիքն և մահմետական մեծամեծքն ամենայն տեսին և հիացեալ փառս տային Աստուծոյ։

Ապա զքաջութիւն հայրապետիս մերոյ, ո՛վ կարէ պատմել կամ ընդ գրով արկանել, քանզի նման սբ. հայրապետացն առաջնոց, շնորհիւն Աստուծոյ հերքեաց զգայլսն յափշտակաւղս ի հաւատէ գառանց։ Քանզի ետ Աստուած նորա զաւրութիւն, որ յաղթեաց թշնամեաց իւրոց և կոխան արար զնոսա։ Իսկ ի յետ Զատկին գնացին ի Ստամպուլ առ սուլտան Մուրատ թագաւորն ի գանգատ. և շատ աղմուկ և խռովութիւն արարին չար ազգն Յունաց։ Եւ ի մեր յազգէն Ա(1) երէց և Ա(1) աշխարհական նահատակեցան. և քաղաքն յայտնի տեսին, զի լոյս պայծառ իշեալ ի վերա նահատակացն։ Եւ իմացեալ թագաւորն զնենգութիւն չար ազգին Յունաց, և եդին սուր ի վերա նոցա, և մինչեւ Լ—Խ (30—40) հոգի սրախոխող և շրահեղձ ի ծովն արկին ի դուռն թագաւորին։ Եւ յետո[յ] այլ բազում փորձանաց դիպեցան, ապա յակամա՝ սակաւ մի դադարեցան, որպէս ասէ մարգարէն Դաւիթ. «Դարձցին ցաւք ի գլուխ» եւ այլն[54]։

Ապա թէ զմեր խեղճն և զզրկել տալն ի մալէ և յապրանաց, որ նոքա մեզ արարին, ընդ գրով ոչ կարեմք արկանել, անթիւ և անհամար են։ Գոհութիւն և փառք Աստուծոյ, որ ոչ արար զմեզ կոխան և նախատինք ատելեաց և թշնամեաց մերոց։ Եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

[54] Սաղ., է, 17։

848

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մեզեպ, III, № 633

Գրիչ՝ Խաչերես սարկաւագ

ա

48 *Զմեղաւոր և անյարժան* Խաչերես *սարկաւագս յիշեցէք ի Տէր, և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։*

բ

Վայր՝ Երուսաղէմ

Զբստացող գրոցս զՍ. Յարութեան լուսարար մահտեսի Մարկոսն, *և զծնողսն իւր՝ զԹանդին և զԳուլվարդն, և զեղբայրն իւր՝ զտէր* Գրիգոր *քաշ վարդապետն, որ մականուն* Բուք *առասի, և զքոյրն իւր՝ զՁարդարն, և զայլ ամենայն արեանառու մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք մահտեսի* Մարկոսին, *որ ստացաւ զգիրքս ի յարդար վաստակոց իւրոց և եդ յիշատակ ի սբ. քաղաքս* Երուսաղէմ, *ի գուռն Քրիստոսի լուսաբուղխ սբ. գերեզմանին, և այլ ամենայն տնօրինականացն Քրիստոսի ամենայն վիճակին ազգիս Հայոց, որ է ի սբ. քաղաքն* Երուսաղէմ, *ի թվին ՌԶԳ (1634), ի հայրապետութեան ազգիս Հայոց տեր* Գրիգոր *քաջ և արի հայրապետին, որ կայ նստեալ յաթոռ Տեառնեղբարն, ի սպասաւորութիւն գլխադրին Սրբոյն Յակոբա[յ] առաքելոյն, որդոյն Զեբեդեա, եղբօրն Յոհաննու աւետարանչին, զոր տէր Աստուած պահեսցէ անփորձ և անսասան զինքն ի պարծանս մեր և ամենայն ազգիս Հայոց, ամէն։*

849

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մեզեպ, III, № 711 (1619 թ.)

155 *Թվին ՌԶԳ (1634) որ ծռայզատիկ եղև և շատ աղմուկ եղև ի սբ.* Երուսաղէմ, *շատ դրամ խաղաց յորթալըխ, Աստուած փրկէ և ազատէ, աւելի քան զքսան Ռ (20000) ղուռուշ գնաց։*

850

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մեզեպ, III, № 847

Գրիչ՝ Ղազար դպիր
Վայր՝ Երուսաղէմ

ա

337 *Թվին ՌԶԳ (1634) գրեցաւ վարդապետական խրատս, որ պատուական է քան զոսկին և քան զամենայն ակունս լուս աշխարհի և արդ վարդապետի։ Աւարտեցաւ շրթր* (sic) *ձեռամբ անարեստ գրչիս, ի գուռն Ս. Յարութեան, ընդ հովանեաւ սբ. լոյսաբուղխ գերեզմանին և սբ. տէրունական սբ. խաչին Քրիստոսի, և ուր ամենայն տընօրինականաց որ կայն*

ի Ս. Յարութեան, աւդնական և պահապան մղգսի հայր, խրստակրօն ճգնասէր բարեմիտ Մարկոսին, *որ կայ ի սպա[սա]ւորութիւն սր. լուսաբուղխ դերեղմանին։*

Բ

Գրեցաւ Բառգիրքս այս ի լաւ և յընտիր օրինակէ ձեռամբ յոգնամեղ Ղազար *դպրի ՌԶԳ (1634) թվականի, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ սիրով Աստուծոյ, յիշել սրտի մտօք զյանցաւոր գրիչն* զՂազարս, *և զծնօղն իմ՝* զԽաչատուրն *և* զԹանսուխն[55], *և ի ձեռն ձեր սր. աղօթից ողորմել նոցա։ Այլ և եթէ գտանի սղալ, զոր ոչ իմացաք, գիտնոցդ մաղեմ կրկին ուղղել։*

Արդ՝ և զստացող սորա զմահտեսի Մարկոսն *և լուսարար սր. գերեզմանին Քրիստոսի և սպասաւոր սր.* Յերուսաղիմայ, *աղաչեմ յիշել ի Տէր զինքն և զամենայն արեան մերձաւորքն, և ծնօղսն իւր՝* զԹաժդին *և* զԳուլվարդն, *և զեղբայրն իւր՝ զտէր* Գրիգոր *քաշ և արի վարդապետն, որ մականուն* Բուլ *առասի, և զքոյրն իւր՝* զՁարդարն, *յիշեցէք... մահդասի* Մարկոսին, *որ ստացաւ զգիրքս ի յարդար վաստակոց իւրոց, և եղ յիշատակ հոգոյ իւրոյ և սր. քաղաքս* Երուսաղէմ, *ի դուռն Քրիստոսի լուսաբուղխ սր. գերեզմանին և այլ ամենայն սր. տնօրինականացն Քրիստոսի ամենայն վիճակին ազգիս Հայոց, որ է սր. քաղաքն* Երուսաղէմ, *ի թվին ՌԶԳ (1634), ի հայրապետութեանն ազգիս Հայոց տէր* Գրիգոր *քաշ և արի սր.* Երուսաղիմայ *հայրապետին, որ կայ նստեալ յաթոռ Տեառնեղբաւրն Յակոբա[յ]...։*

851

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄՅԶԵՊ, III, № 925

Գրիչ՝ Եսայի

ա

461 Զ*Յեսայայ յիշել աղաչեմ. ՌԶԳ (1634)։*

Բ

Եւ զրմովքՃ[56] յեղկելի գծօղս յիշել աղաչեմ, ՌԶԳ (1634)։

Գ

462 *Զբազմամեղ և զթշ//ուառական անձն* զՎարդերես, *բարի յիշման արժան համարեսջիք...։*

852

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄՅԶԵՊ, III, № 939 (1621 թ.)

Նվիրատու՝ Գրիգոր Նշեցի

492 *Յիշատակ է գիրքս այս փծուն* Գրիգորիս, *որ ի գաւառէն Հացուն[ե]աց, ի գեղջէն Նշայ, յիշատակ է սա տէր* Ստեփանոսին, *և իւր որ-*

---

55 «Գրեցաւ Բառգիրքս»-ից մինչև այստեղ տե՛ս նաև Աղավնունի, *Այցելուք*, էջ 228։

56 Նման ծածկագիր և վերծանությունը տե՛ս № 963 հիշատակարանի 24-րդ ծանոթագրությունում։

դոյն՝ տէր Գրիգորին, և կողակցին՝ Շողո[յ]ին, և հարսինն՝ Մանուշակին, և ամենայն արեան մերձաւորացն։

Յիշատակ է սա ի Պաղեստին,
Յերուսաղէմ սբ. քաղաքին,
Ի տաճարի Ս. Յակոբին,
Որ է աթոռ Հայոց ազգին։
Եւ տեղապահ սբ. աթոռին,
Է տէր Գրիգոր Գանձասարցին,
Որ ի Հայոց Ռ թվին,
ՁԳ յաւելորդին (1634),
Հոռոմ ազգի ծռագատկին։
Որ բազում վիշտք մեզ հասուցին,
Վասն լուսոյն որ միշտ բղխին,
Յաստուածընկալ գերեզմանին,
Զոր աղոթիւք Լուսաւորչին,
Լոյսն բղխեայ ըստ բնական կարգին։
Ի մեր Հայոց մեծ պասեքին,
Ուրախացան ուղղափառնին,
Յամօթ եղեն երկաբնակնին,
Զոր դիտապետ մեր քաջ ւ արին,
Անուանակից Լուսաւորչին,
Արքուն անուն զուարթագին,
493 Կանգնեաց զեղջիւր Հայկան սեռին,
Որ ամենայն ազգ և ազին,
Երանի տան էրման ազգին։

. . . . . .

853

ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄՏՁԵՊ, III, № 974

Գրիչ՝ Ներսէս աբեղայ

563 Փառք...։
Կատարեցաւ գիրքս գովելի,
Որ շարադրեալ է Պորփիւրի,
Ընչին գրչակրս փանաքի,
Յոյժ փափաքմամբ զսա գրեցի։
Որ և անունս իմ որջորջի,
Ներսէս անուն աբեղայի,
Յերկրէ կըլայ արաբացի,
Մնեալ եմ ի Երեր քաղաքի։
Ի մեկնութեանցն Յովհաննի,
Արի և սուրբ եռամեծի,

Ի աշակերտին իւր Գրիգորին,
Ի բնաբանիցն Պորփիւրի:
Թվականիս Հայոց մեծի,
Ռ ու Ձ երեք շարի (1634)[57]

854
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մշեցի, V, № 1656

Գրիչ՝ Սիմէոն

ա

493 Ձստացաւղ սակաւ մատենագրոցս, որ է բանք սբ. հօրն Նեղոսի, ըզՅոնան աբեղայն վիճիտս, հեղահոգի, յիշեցէք ի Տէր....[58]։

բ

495 Կատարեցաւ Պատմութիւն եւթն իմաստասիրաց գիրքս ի թվին ՌՁԳ (1634), ձեռամբ, անիմաստ Սիմէոն գրչիս. ամէն։

855
ԱՒԵՏԱՐԱՆ
Մուրմար. I, № 21 (1325 թ.)

Վերստին կազմող՝ Բարսեղ քահանայ

ա

25 Վերստին արծաթապատ շինեցաւ հրաշագործ սբ. Ղլիճ Աւետարանս, յիշատակ մահտեսի Պողոսին և իւր կողակից մահտեսի Սրսուրին... Թուին ՌՁԳ (1634)։

բ

Վերստին կազմեցաւ սբ. Խլիճ Աւետարան[ս] Մուշեցի տէր Բարսէղ քահանայի ձեռամբ։

856
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ
Մուրմար, I, № 71 (1631 թ.)

67 Ընտացաւ զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց ի թվին ՌՁԳ (1634), որ է ծառազատիկ հոռոմ ազգին, որ Հայոց ազգս սբ. Լուսաւորչին աղօթիքն և Աստուծոյ ողորմութեամբն լուսաւորեցան լուսովն, որ բըղխեաց ի լուսաբուղխ սբ. գերեզմանէն Քրիստոսի. և հոռոմ ազգն մնաց անմխիթար և տրտում և սգաւոր, նոցա ոչ ել լոյս, և ոչ եղև նոցա ուրախութիւն, այլ նոցա ուխտաւորքն տրտմութեամբ և սգով ելին ի սբ. Երուսաղիմայ և գնացին։ Բայց ազգս Հայոց սբ. Լուսաւորիչի աղօթիւք զլոյսն տեսին, և զուարճացան. և մեծաւ խնդութեամբ ելին ի սբ. Երուսաղիմայ և գնացին յիւրաքանչիւր տեղիս. Աստուծոյ մարդասիրին փառք և գոհութիւն այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

57 Պողարյանի հաղորդմամբ բնագիրն այստեղ ընդհատվում է։

58 Մի այլ հիշատակարանում ստացող հիշվում է Անդրիաս սարկավագը (էջ 493)։ Խոսքը, հավանաբար, վերաբերում է ձեռ-ի առաջին մասին։

857

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մուրմար, II, № 87

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Համիք

ա ·

159 *Փառք...։*
Զոր և ես նուաստ յամենայնին,
Եւ ապիկարս ի կարգ գրչին,
Պիտակ անուն Մինաս չինչին,
Մեղաւք լցեալ աղտեղագին։
Շնորհաւք հոգւոյն կենարարին,
Դրեաց զգիրս աստուածային,
ԶԱստուածաշունչ սբ. կտակին,
Յապաւինեալ ի խնամք վերին։
Գրելով հասաւ ի վերջք բանին,
Արժանացաւ ի կարգ գրչին,
Արդ՝ ես նուաստս յամենայնի,
Մինաս *լցեալ մեղաւք ի լին։*
Ծաղկեցի և կազմեցի,
Զտառս սբ. Աստուածաշնչին,
Զոր և տեսեալ զսա արհին,
Տէր Յովանէս *վարդապետին։*
Եւ ցանկացող եղեալ սմին,
Ստացաւ զտառս հրաշալին,
Ի յաւգտութիւն բազմաց լինի,
Եւ ի յապայս յիշատակին։
Նախ հոգևոր իւր ծնաւղացն,
Յիմաստս սբ. Աստուածաշնչին,
Տէր Սրապիոն Եդեսացին,
էառ զվախճան աստից յերկիրն։
Մնաց թերի վարժել նմին,
Աշակերտեալ տէր Յովսէփին,
Աստուածաբան վարդապետին,
Ի նմանէ առեալ իշխանութիւն,
Քարոզելոյ կենաց բանին...

Արդ՝ գրեցաւ սբ. Աստուածաշունչս ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, *որ այժմ ասի Համիք, ի դուռն Ս. Կիրակոսի, ի յելանելոյն Ադամայ մինչև ի մեզ ամք* ՅՊԼԱ *(6831) և ի մարդանալոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ* ՌՈԼԳ *(1633) և ի թուաբերութեան հայկական տոհմի* ՌՁԱ *(1632), ի թագաւորութեան Տաճկաց սուլթան* Մուրատին, *յաղթող և զաւրաւոր թագաւորի, և ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տէր* Մովսէս *սրբասնեալ առաքինի և խարազանազգեստ ճգնաւոր կաթողիկոսի և ի դիտա-*

պետութեան մայրաքաղաքիս տէր Պարսեղ աստուածաբան վարդապետի և շնորհազարդ հայրապետի։

Բ

160 Արդ՝ եղև զրաւ գրչութեան Աստուածաշունչ սբ. տառիս յայսմ թուականութեանս որպէս գրեցաք[59]։ Բայց ի ՌԶԳ (1634) ամին ստացաւ զսբ. Աստուածաշունչս Յոհանէս քաշ բարունին և կաղմէցի զսա։ Եւ յայսմ ամի աստ հանգիպեցաւ սբ. Երուսաղէմայ հայրապետն Գրիգոր վասն ծառայատկին, որ Յոյնք մոլորեցան և բազում վրդովմունք եղև սբ. Երուսաղէմ։ Նկուն դարձան ազգն Յունաց և Հայք ուրախացան քաջութեամբ այս Գրիգոր հայրապետին, զոր տէր Աստուած վարձահատոյց լիցի սմա, և զփոխարէն իւր աշխատանացն զինքն ընդ երկայն աւուրս արասցէ ի պայծառութիւն սբ. Երուսաղէմայ և ի պարծանս Հայաստանեայց. ամէն։

Դարձեալ կրկին անդամ աղաչեմ զդասդ սրբազան ընթերցողացդ, որ լի բերանով Աստուած ողորմի ասէք ստացողի սբ. Աստուածաշընչիս տէր Յոհանէս աստուածաբան՝ վարդապետին, և ծնողացն՝ Նիկողոսին և Շուշանին, և զառիթ կրթութեան նորա յուսումն և ի վարժումն մանկութենէ հաւրեզբօրն իւրոյ՝ տէր Սարգիս հեզահոգի կրաւնաւորին և աստուածաբան աբեղային, որ բազում ժամանակ ոտքն անկեալ էր ի պաղէ, և փայտեալ ոտքեր կազմեալ, և այնպէս ընթանայր և գոհութեամբ տանէր, և առաքինի վարուք զաւուրս անցուցեալ փոխեցաւ յաստեացս ի հանգիստ, զոր տէր Աստուած ողորմեսցի նմա։

Այլ և մոխրամած դիմօք և կողկողագին սրտիւ աղաչեմ զվայելողսդ և զգաղափարող սբ. Աստուածաշնչիս, որ լի բերանով ողորմի ասել մեղուցեալ նուաստ Մինաս գրչիս և ծնողացն իմոց՝ տէր Ստեփաննոս քահանային և Չինարին, և որդոյն իմոյ՝ Եղիազար շնորհալի գրչին, որ սկսեալ աւգնականութեամբ Աստուծոյ, գրեաց զսբ. Աստուածաշունչս և աւարտեաց շնորհաւք Ս. Հոգւոյն, և ծնաւղացն նորին, հաւրն՝ Մինաս քահանային և մաւրն իւրոյ և ամենայն զարմից նորին։ Եւ մեր ուսուցանողացն ի գիրս մանկութեան վարպետ Նիկողոսին և ի յարհեստս գրչութեան տէր Յովանէս քաշ քարտուղարին և աստուածաբան վարդապետաց և ամենայն աշխատաւորաց մերոց՝ հոգևորաց և մարմնաւորաց, աղաչեմ թողութիւն հայցել և Աստուած ողորմի ասել։

858

ԺԱՄԱԳԻՐՔ

ՅՁՍԳ, № 119. տե՛ս նաև «ՀԱ», 1927 թ., էջ 39—40։
Ալպոյաճյան Ա, Յուշամատեան Կոստինահայերու, էջ 202—203

Գրիչ՝ Աստուածատուր Քաճանայ
Վայր՝ Քաւթանիա

75 Արդ՝ գրեցաւ գիրս այս աղօթից և փրկականն խորհուրդ սբ. պատարագին ի թուականիս Հայոց ՌԶԳ (1634) ամին, ի քաղաքն Քաւթանիա,

[59] Խոսքը վերաբերում է գրչի ա հիշատակարանին։

ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զաւրավարին և Սրբոյն Թէոդորոսի զինաւորին։ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց դասուց, ողորմելի և ամենայն մեղաց լիապէս գործող սուտանուն Աստուածատուր քահանայս, որ անուամբս եմ միայն և գործովս ոչ, ցանկացայ յայսմ կտակի ի ժառանգութիւն անձին իմոյ, և յետ ելանելոյ ի կենցաղոյս, եղիցի սա յիշատակ ինձ և ծնողաց իմոց և որդւոց իմոց և դստերաց, որ կենդանի են և որք փոխեցեալ են առ Քրիստոս յոյսն ամենեցուն. ամէն։ Գրեցաւ լաւ և ի ստոյգ օրինակէ, որ էր ուղղեալ ի սբ. հարանցն։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան սիրովն Աստուծոյ, յիշել սրտի մտաւք զանարժան Աստուածատուր քահանայս և զազգայինս իմ, ի ձեռն ձեր սբ. խնդրոցն ողորմել ինձ և իմոց արդարոցն. ամէն։...

Գիտէք եղբայրք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանունն կու շնչեն և զիւրեանցն կու գրեն, և չար է սովորութիւնս այս, աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ, ապա թէ արժանի է դրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ և զառաջնոյն մի՛ շնչեսցէ անուն կամ գիր. և որ ոք յայս յանդգնի և շնչէ՝ ինքն շնչի ի կենաց գրոյն, ո ոք և իցէ՝ եթէ մեծ ոք և կամ փոքր։

859
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁԱՐ, № 313

Գրիչ՝ Յովհաննէս երէց
Վայր՝ Ստամբոլ

1321 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն ի Ըստամբոլ, ի դուռն Սրբոյն Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, ձեռամբ հող և մոխիր սուտանուն Յովան//նէս երիցուս, որ զանունն ունիմ և զգործն ոչ, այլ ունայն և դատարկ ի գործս բարիս, ի թվականիս Հայոց ՌՁԳ (1634), ի դառն և ի նեղ ժամտնակիս, յորում նեղիմք և հալածիմք յանօրինաց և ի սուտ եղբարց։ Արդ՝ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց մահդասի Մուսէսն, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հարն՝ Պարոնշային և մարն՝ Քէմէլին, և եղբօրն՝ Միսիրին, Ովանէսին, և այլ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն, և եդ յիշատակ ի դուռն Ս. Քառասնից եկեղեցոյն, հոգւոյ իւրոյ յիշատակ յաւիտենական, զոր աւրհնութեամբ եղիցի և աղօթիւք սրբոց ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւսանգամ գալստեանն. ամէն։ Եւ արդ՝ որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք Հայր մեղայիւ մի զըստացաւղ սորա զմահդասի Մուսէսն և զծնօղսն իւր, զհայրն՝ Պարոնշայն և զմայրն՝ զՔէմէլն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր։ Ընդ նմին և զիս զանարժանս և զյունայնս ի գործս բարեաց՝ զՅովհաննէս սուտանուն երէցս՝ գծող սորին, յիշեցէք յաղաւթս ձեր, և որք յիշէք, յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ. ամէն։ Եւ չունի ոք իշխանութիւն տիրելոյ նմա կամ հանելոյ ի դրանէ սբ. եկեղեցոյս, եթէ ազգականացն իմոց և կամ ի յօտարաց մի՛ յիշխեսցէ առնել

զոր պատուիրեցի, զի այս սբ. Աւետարանս և Ս. Քառասունքս լիցի վրէժխնդիր անցելոյն՝ ըստ կտակիս իմոյ, յաւուրն ահեղ ատենին Քրիստոսի առցէ զպատիժն Յուդայի և այլ չարագործացն եղիցի բաժինն նորա, զոր և սբ. առաքեալն հրամայէ՝ թէ կտակն յետ մահուն հաստատուն լիցի, ասէ, զոր և հաստատողդ աւրհնեալ լինիցիք [յ]Աստուծոյ։

860

ԱԻԵՏԱՐԱՆ (1495 թ.)

Ջարմահալ, «Բազմավէպ» 1951 թ., էջ 311—312. տե՛ս նաև ՄԻՔԷՋ, «Էջմիածին», 1951 թ., Ա—Գ, № 39, էջ 83

Նորոգող, կազմող՝ Մեսրոպ Խիզանցի

Զվերջին ստացող սբ. Աւետարանիս՝ յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ և զաստուածասէր տանուտէր Սահակն, որ ստացաւ ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց, և ետ վերըստին կազմել և նորոգել յիշատակ բարի իւր և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Յովհաննէսին և մօրն՝ Ազիզփաշին, և կողակցին իւրոյ՝ Խուռմսիմին, և որդոցն՝ տէր Աստուածատուրին, Մուքայէլին, Տիրատուրին, և դստերացն՝ Յուլիտին, Մարիամին, Էքարին, Աղլանփաշին և ամենայն արեան մերձաւորացն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Աստուածատուրն, և զկողակիցն իւր՝ Աղաիանն, և զորդիքն՝ Մկրտիչն: Եւս առաւել դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զանարժան Մեսրոպ դպիր Խիզանցիս, որ նորոգեցի և կազմեցի ի թուականիս Հայոց ՌԶԳ (1634) ամի, ի վայելումն մանկանց Սիօնի։ Յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեան. ամէն։

861

ԱԻԵՏԱՐԱՆ

Թեհրան, «ՀԱ», 1953 թ., էջ 103—104

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Ստամպոլ

Փառք...։ Որ յանկ հանել հիւծելոյն յանցանօք ետ զաւրութիւն անպիտան և մեղաւոր գրագրիս Յակոբի անարժան և սուտանուն սարկաւագի...։

Քանզի սկսեալ կատարեցի զգիրս աւետանուն ի թվականիս Հայոց ՌԶԳ (1634)։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքս Ըստամպուլ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի եկեղեցւոյն, ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի Հայոց կաթողիկոսի։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք ակտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, յիշեցէք զմահդասի Մելքոն, որ է սա ի գաւառէն Գողթան, ի գիւղէն որ կոչի Ագուլից Դաշտ, որ ստացաւ ոսկեզուած Աւետարանս և ետ յիշատակ իւր հոգւոյն ի դուռն Թումայի սբ. առաքելոյն, որ այժմ կոչի Երեքխորան, յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց, զհայրն իւր՝ զտէր Մարտիրոսն և զմայրն՝ զՓարիիանն, և կողակիցն՝ զխաթունն, և զորդիքն՝

զՋլաւիւանն և Աւետիքն, և զդստերքն՝ զԼապիխանն և Սապրիխանն, և հանգուցեալ որդիքն Բ (2) Եավրիխանն, և քեռն իւրոյ՝ զՍուլթանն, և զիւր հայրենի պապն՝ զտէր Յովսէփն, և զմամոյն իւրոյ՝ զՍելիքն, և զիւր հաւրեզբարքն՝ զԱնաօնն, զՊարսամն, զԹէոգոսն, և զիւր ամենայն արեան մերձաւորք, ընդ նմին և զանարժան զՊետրոս ///, որ ծաղկեցի այս սր. Աւետարանս...։

862

ՄԱՇՏՈՑ

Արծնեան, «ՀԱ», 1962 թ., էջ 31, տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա., № 748, էջ 208ա, ձեռ. № 6273, էջ 570ա։

Գիրքս այս, որ է Հայր Մաշտոց, որ գաղափարեալ է ի սմայ գեղեցկաշար բանիւ ի սրբոց վարդապետացն մերոց, և առաջին լուսաւորչացն՝ Մեսրոպայ, և Յոհաննու Մանդակունեցւոյ, և Մաշտոցի. նախ՝ օրհնութիւն քահանայի և օծումն. երկրորդ՝ եկեղեցւոյ հիմն և օրհնութիւն, երրորդ՝ թաղումն քահանայից և եպիսկոպոսաց։ Եւ եդաւ յիշատակ անջինջ ի գեղեցկաշէն մայրաքաղաքս Արզրուում, ի դուռն միաբան Ս. Աստուածածնի, ձեռամբ Մինաս աստուածաբան վարդապետի և աւագերէց տէր Գէորգի[60], յիշատակ հաւասար ժողովրդեան։ Ի թուականիս մերոյ ՌՁԳ (1634), որ յայսմ ամի Հոռոմք և Վիրք զՋատիկն ծռեցան։...

863

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 417-418

Գրիչ՝ Առաքել աբեղայ
Վայր՝ Տիգրանակերտ

Գրեալ ձեռամբ Առաքել աբեղայի, աշակերտի երջանիկ և երանաշնորհ, քաջ և արի արքեպիսկոպոսի տէր Բարսեղ աստուածաբան վարդապետի և վերադիտողի մայրաքաղաքիս Համբայ...: Աւարտ գրութեան սորա եղև ՌՁ ամի և երրորդ աւելորդի (1634), յաշխարհս Միջագետաց, յԱսորուց նահանգիս, ի Տիգրանակերտ մայրաքաղաքիս, ընդ հովանեաւ Ս. Սարգսի...։ Հոգ տանիք լաւ պահէք զսբ. Աւետարանս ի ջրոյ և ի հրոյ, և ի տգիտաց ձեռք չի տայք, որ ապականեն զլուսանցսն և զծաղիկսն կամ զպատկերսն և կամ թուի և պատկեր կտրեն, և կամ խաչ փորելով զթուղթսն ծակծակեն։

864

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 430—433

Գրիչ, ծաղկող՝ Մինաս
Վայր՝ Համիք

ա

Երանաշնորհ և արքեպիսկոպոսն... տէր Բարսեղ... առաջնորդ Համբայ... ստացաւ... զաւետաւոր կտակս Քրիստոսի, ի ներկայումս անձին

[60] Հակոբ Կարնեցու հայրը։

իւրոյ, և յապայս յիշատակ, նախ՝ հոգևոր ծնողին իւրոյ յիմաստս վարդապետութեան, յորմէ զփոքրուց ուսումն և զաստիճան կուսակրաւն քահանայութեան և զիշխանութիւն վարդապետութեան և զտեսչութիւն եպիսկոպոսութեան առեալ էր, որ է տիեզերալոյս աստուածաբան վարդապետն տէր Սրապիոն, որ և Գրիգոր կաթողիկոս եղև սբ. էջմիածնայ, և ապա մարմնաւոր ծնողաց իւրոց, հաւրն՝ Ապուհարին և մաւրն՝ Ելիկին, և աւադ եղբաւրն՝ մահտեսի Ապտուլին, որ է պատճառ ուսման իւրոյ, եւ այս խէ (47) ամ է որ հրաժարեալ է յաշխարհէս, խարազնազգեստ ճգնութեամբ աղաւթիւք և պահաւք ի լերինս ջրշագայելով, ի ծերպս վիմաց է բնակութիւնն, յամարայնի արևակէզ և ձմերայնի ցրտասառոյց զտիւ և զգիշեր որ դագարէ, այլ միշտ և հանապազ աղաւթելով և անյագ ընթեռնլով յաւրհնաբանութիւն և ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն. և զմիւս եղբայրն՝ զՄաիսուտն և զորդիքն իւր՝ զԳրիգոր և Լալիիանն, և զմիւս եղբայրն՝ զՄեհերն, և զդուստրն՝ զԱղապէկին և զմիւս եղբայրն՝ զԱրևն. նաև զքուերքն իւր՝ զՄանդրուտն, զՔնֆուշն, զՄարիամն, զՊահրին, զՇուշանն և զայլ ամենայն արեանառու մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալս, յիշեցէք ի Քրիստոս...։

Արդ՝ ես նուաստ ի գրչաց, թարմատար և յոռի, անպիտանս ի մանկանց եկեղեցւոյ Մինաս[61], զառածեալ, սուտ և փուտ գրիչս, ետու գրել զսբ. Աւետարանս աշակերտին իմոյ՝ Առաքել արեղայի, և իմ ծաղկեալ զսա աւարտեցի։ Ստացաւ Բարսեղ վարդապետ հոգևոր հայրն մեր. որ և դրեալ էի նմա ոսկենկար Աստուածաշունչ մի միահամուռ ոսկենկար անկուածով և պատկերաւք, հին և նոր կտակարանաւքն, և տեսիլք մարգարէիցն, և տնաւրինականքն Քրիստոսի, մագաղաթ գեղեցիկ յաւրինեալ, զոր տարեալ ետ յիշատակ ի սբ. քաղաքն Երուսաղէմի։ Եւ այս տէր Բարսեղ... վարդապետի ժամանակն սահմանեցաք դպրատուն և շնորհաւք ամենազաւրին Աստուծոյ և աւժանդակութեամբ դիտապետին մերոյ դրեալ եղև սբ. Աստուածաշունչ և այլ բազում գրեանք... եղև գրչութիւն սորա ի Համիթ... ի թվին Հայոց ՌԶԳ (1634), ի թագաւորութեան Տաճկաց սուլթան Մուրատին և ի հայրապետութեան սբ. էջմիածնայ տէր Փիլիպպոս ճգնազգեաց և աստուածահաճոյ կաթողիկոսին ամենայն Հայոց, և ի սբ. Երուսաղէմայ առաջնորդութեան տէր Գրիգորի արի և քաջ հայրապետին։ Յաւուրս սորա բազում չինութիւն և ուղղութիւն եղև սբ. Երուսաղէմայ, որ յառաջն աւեր և խանգարեալ էր և ի պարտուց ծանր բեռի անկեալ, ընդ գրուանաւ էր ազգս Հայոց, այժմ ի վերայ աշտանակի պայծառ ի մէջ ամենայն ազգաց, որ և ծառազտիկն Յունաց յայսմ ամի էր, և ես անարժանս անդ հանդիպեցայ և ականատես եղեալ տեսի զքաջութիւն և զյաղթութիւն, զոր արար Յունաց ազգին, և նոքա գլխակորեալ մուքն և խաւար Զատիկ արարին. և մերս պայծառ լուսափայլ ի սբ. գերեզմանէն՝ մեծաւ ցնծութեամբ և ուրախութեամբ հանդիսացանք. և զքաջութիւն և զարիութիւն մեծ հայրապետին Գրիգորի. ո՞ կարէ պատմել կամ ընդ գրով արձանացուցանել...

[61] «Թորոս աղբարս»-ում գրված է «մինոս» (էջ 431)։ Ենթադրեցինք տպագրական սխալ և ուղղեցինք։

Եւ յայսմ ամի որ սբ. Աւետարանս աւարտեցաւ, աստ հանդիպեցաւ սրբազան հայրապետն Գրիգոր վասն ողորմութիւն խնդրելոյ սբ. Երուսաղէմայ։...

Բ

Ստացող՝ Բարսեղ վարդապետ

Ես՝ նուաստ ի վարդապետաց և յետինս ի բանասիրաց Բարսեղ *անուամբ ևեթ վարդապետս ետու գրել սբ. Աւետարանս յիշատակ ինձ և ուսուցանող վարդապետին իմոյ՝ տէր* Սրապիոն Ուռհայեցւոյ. *և մարմնաւոր ծնողացս և ամենայն արեան մերձաւորաց...*

Ես՝ Բարսեղ *վարդապետս յաւուր մահուան իմոյ եդի զսբ. Աւետարանս յիշատակ ի դուռն Ս. Սարգսայ զաւրավարին... ընթերցողք տացեն զողորմիս...։*

865

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ

Երևան, № 10550 (1616—1617 թթ.)

234բ Ի թվին ՌՁԴ (1635) սբ. Սարգսին պահոց[1] թագաւորն[2] սաֆար ելաւ։

866

ՇԱՐԱԿՆՈՑ

ՔՅԶՉվ, № 74

Գրիչ՝ Միքայել
Վայր՝ Մարզուան

110 Փառք...։ //Զոր միայնգամայն հաւաքեալ ունի յինքեան պատուական գիրքս այս, ը[ղ]Շարակնոցս ըսկըսեալ ունի յառաջ ծնընդեանն, և զապաշխարութեան, ըզգալստեանն և ղյայ,ութեանն, և ըղհոգւոյ գալըստեանն, և ըղխաչվերացն և զմարտիրոսացն, ըղհանգստեանն զաւագ աւրհնութիւն և զայլ ամենայն բազմութեանցն, զոր գանձեալ ունի յինքեան։ Զոր լուեալ և տեսեալ կորովամիտ այրս այս խոճայ Այտինն, ի միտ ածեալ զասացեալն ի մարգարէէին, թէ՝ «Երանի...»[3] և զայն որ գրեալ է ի սրբոց վարդապետաց, թէ գրասէր որ է աստուածասէր, վասն որո[յ] ստացաւ[ղ] ըզսա ի հալալ և յարդար վաստակոցն, ի վայելումն դեռաբուսիկ և նորաբողբոջ մանկանն իւր որդոյն և ամենայն ընթերցասէր մանկանց Սիովնի. ամէն։ Այլ և կրկին անգամ յիշեցէք զվերոյգրեալ այրս այս խոճա[յ] Այտինն հանդերձ ծնաւղիւք և ամենայն արեան մերձաւորաւք. ամէն։ Գրեցաւ սա ի գիւղաքաղաքս Մարզուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի թուաբերութեանս հայկազեան տումարի հազարերորդի ութծուներորդի և Դ [յ]արաբարդի (1635), փետրվար ամսո[յ] Ժ (10), աւրն երեքշաբթի, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ սոսկ անուն Միքայէլ դպրի, ի վայելումն վերոյգրեալ խոճայ Այտինին և իւր որդոյն. Աստուած բարով վայելել տացէ և երկայնակեացս արասցէ, մինչև ի խորին ծերութիւնն հասուցէ. ամէն...։

---

[1] Այսինքն հունվարի 19-ից 24-ն ընկած ժամանակամիջոցում, որովհետև 1635 թ. Ս. Սարգսի տոնը կլինի հունվարի 25-ին, կիրակի։

[2] Իմա՛ Մուրադ 4-րդ։ Նկատի ունի վերջինիս արշավանքը Երևան (տե՛ս և հմմտ. ՄԺ, 1, էջ 145, 146, 196, 199 ծանոթ. 36. Ա.ռ. Դավրիժեցի, էջ 316)։

[3] Եսայ., ԼԱ, 9։

867
ՔԱՐՈԶԳԻՐՔ
ՄԻՆԱ., № 17

Գրիչ՝ Պետրոս քահանայ
Վայր՝ Լաճուռ

ա

204 *Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. և զլուսազարդ մատեանս ես՝ նուաստ ծառայս ամենայն ծառայիցդ Աստուծոյ* Պետրոս *մեղուցեալ և անարժան քահանայ, ի թվականիս Հայոց* ՌՁԴ *(1635), քաղոց* ԺԶ *(16), փետրվարի* ԻԴ *(24), ի հայրապետութեան տեառն* Փիլիպոսի *և յառաջնորդութեան մերոյ քաղաքիս* Ջուղայո[յ] Խաչատուր *սրբազան և մաքուր եպիսկոպոսի, ի յերկիրս Հնդկաց, ի մայրաքաղաքս* Լաճուռ, *բազմամարդ և անթըւելի, ի խնդրոյ բարի և հաւատարիմ ծառային Աստուծոյ* Հայրապետին, *որ մեծաւ յուսով և բաղում փափաքանաք և ցանկութեամբ խնդրեաց զսայ՝ ի լուսաւորութիւն անձին իմոյ և ի մխիթարութիւն լսողաց հաւատացելոց։*

Կրկին անգամ աղաչեմ զամենեսեան, յիշել ի Տէր զստացող սորա զՀայրապետն և զծնաւղսն՝ զհայրն իւր հանգուցեալ առ Քրիստոս՝ Մուրատխանն, *և զմայր իւր* Մէրտատիկն։

բ

205 *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՀայրապետն, և զեղբայրն իւր՝* Խաչատուրն, *և զքրտերքն իւր՝* Փաքանն, Դշխունն, Մարիամն, *և հանգուցեալքն առ Քրիստոս* Մարիամն, Մէմէրն, Հռիփսիմէն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՀայրապետն, և զհաւրեղբայրն իւր՝ հանգուցեալ առ Քրիստոս* Հէրապետն, Նազարն։ *Դարձեալ յիշեցէք զՀայրապետն, և զհաւրեղբայրն իւր՝* Սիմոնն, *և զհաւրաքոյրն իւր՝* Խանզատէն...։

868
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Երևան, № 8158

Գրիչ, ստացող՝ Նիկոլ դպիր
Վայր՝ Կամենից

ա

336ա *Փառք...։*

337ա *Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս ի թվաբերութեան Հայոց* ՌՁԴ *(1635) և մարտ ամսոյ* Ե *(5), և ի մարդեղութենէն՝ Քրիստոսի մինչև ցայս ամք* ՌՈԼԵ *(1635), ձեռամբ անպիտան և անհմուտ, անծան և անծող գրչի՝* Նիկոլ *դրպրի, որ միայն ունիմ զանունս, այլ ոչ զգործ դըպրութեան, և եմ որդի ողորմելի* Եագուպին, *և թոռն* Կոկչային։ *Աստանօր կատարեցա հոգիակեցոյց և ցանկալի դրախտս աստուածադիր ամենունակ առատութեամբ, յորմէ գնան գետք...։ Որոյ այսպիսի յղձալի փարթամութեանց համեմատեցայ և փափագող եղայ և գրեցի սիրով զսբ. զիրքս, ի վայելումն անձին իմոյ և իմոցն ամենայնի։ Քանզի պարունակեալ ունի առ//*

337բ

ինքն զմեկնութիւն կանոնացս, որ և սբ. հայրապետքն ասացին Հոգւովն Սրբով յաղագս վիրաւորեալ հոգոց, որ է գեղ ե սպեղանիք ցաւագնելոց և մեղանչելոց։ Բայց գրեցաւ սա ի յաշխարհս Լէհաց, ի քաղաքն Կամենից, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկոլայոս Սքանչելագործին, ի հայրապետութեան տեառն տէր* Մովսէսին[4] *և ի թագաւորութեան Իլախաց* Վլատիսլաւին։ *Արդ՝ ես խոտանս և անյարմար գրիչս աղաչանս արկանեմ առաջի ձեր, վարդապետք իմ և հայրք պատուականք, որք հանդիպիք յայսմ տառիս՝ կարդալով զկանոնք գիրքս այս կամ օրինակելով և կամ զմոլորեալսն դարձուցանելով, յիշեսջիք զիս զմեղաւոր գրիչս, և զծնողսն իմ՝* զՅակոբն, *և զմայրն իմ՝* զԱննան, *և ամենայն արեան մերձաւորսն իմ։ Նաև յիշեցէք զտէր* Ներսէս *քահանայն, որ զօրինակս միով բանիւ շնորհեաց, վասն որոյ զվարձս ի Քրիստոսէ առցէ։ Այլ և յիշեցէք զտէր* Գաբրիէլ *վարպետն իմ, որ զիս բարի խրատով և ուսուցանելով հասոյց այսմ շնորհի, վասն որոյ զվարձս ի Քրիստոսէ առցէ։ Եւ Աստուած արարիչն երկնի և երկրի յիշողացդ և յիշեցելոցդ[5]...։*

869

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7992 (ԺԶ դար)

ա

227բ *Այս սբ. Աւետարանս որ* Յուէինղուլին, *որ գէրութէնէ իրեր, տէր* Տիրատուրին *էրետ և ծախեց։* Զիթակերի *որդոյն ձեռաւքն ծախեց տէր* Տիրատուրին։ Պետրոսն, Ալիխան *ի միրն մէջն շահատ են, որ Լ (30) զուրուշ ու Ա (1) կով <մի> տվին* Զիթկ[երին] *որդին ձեռաւքն. և այլ և այլ չանեն։*

բ

Ալանփաշու *սբ. յԱւետարան յիշատակ է դուռն Ս. Աստուածածնին տէր* Մարգարին, *տէր* Տիրատուրին *և սոցա զաւակաց* Թանտարին, Նարուլին, Խանփաշին *և իւր աղգացն։ Ղլիճէ, թէ՛ առաջնորդէ, թէ՛ հափեղաէ, թէ՛ քահանայ, թէ՛ աշխարհական, ով ծախէ կամ գրաւէ ԳՃԺԸ (318) հայրապետացն անիծաց լինի, և Յուդայի մասնակից լինի։ Թվին ՌԶԴ (1635). մարտի ամսուն Թ (9)։*

870

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Կ. Ցուզբաշյան, ԳՊԲ, Արմ. 3

Գրիչ՝ Զատիկ
Վայր՝ Կամենից

661ա ...Յանկացող եղեալ սրբոց վկայիցն պատմութեանց բարեպաշտօն և բանասէր, այսինքն Թորոս.եպիսկոպոսն և ետ գրել զսբ. և զհրաշալի

---

[4] *Սխալ է. այս ժամանակ կաթողիկոս էր Փիլիպոս Աղբակեցին։ Գրիչը Կամենիցում, հավանարար, անտեղյակ էր այդ փոփոխությանը։*

[5] *Զևս-ի 335բ էջի հիշատակարանում, ուր խոսքը վերաբերում է Բարսեղ Կեսարացու (վերագրված է Հովհան Ոսկեբերանին) և Հակոբ Ղրիմեցու կանոնախմբերին, հրատարակված է «Հիշատակարաններ...»-ի Ա հատորում, էջ 730։*

գիրքս զայս, որ կոչի Այսմաւուրք, յիշատակ վասն հոգւոյ իւրոյ, և իւր ծնողացն, և ամուսնոյ, և զաւակաց նորին, և ամենայն արեան մերձաւորացն, զոր և յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր յառաջասացեալն ղԹորոս եպիսկոպոսն հանդերձ ծնողօք և ամենայն զարմիւք, և դուք յիշեալ լիջիք յանմոռանալի գիտութիւնն Աստուծոյ. ամէն։

Արդ՝ եղև զրաւ գրչութեանն գանձարանիս, որ կոչի Յայսմաւուրք, յամի շրջագայութեան արամազեան տոհմի, հայկազան սեռի, արեթական տումարի՝ թվին ՌՁԴ (1635), ամսեանն մարտի ԻԱ (21)։ Բայց գրեցաւ սբ. բուրաստանս ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսին և ի թագաւորութեան Զորրորդ Վլատիսլաւին և դատաւորութեան Հայոց դատաստանին Գրիգորշային, ի աստուածապահ քաղաքն, որ կոչի Կամէնից, ընդ հովանեաւ ամենաւրհնեալ Սրբուհւոյ Աստուածածնին և Ս. Նիկոլայոս Սքանչելագործ հայրապետին։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ, ո՛վ սիրելի եղբայրք, որ զվերոգրեցեալ անուանքըս, մանաւանդ զպարոնտէր Թորոս եպիսկոպոսն՝ զստացող այս սբ. տառիս, յիշեցէք Հայր մերիւ և Տէր ողորմեայիւ։ Ընդ նմին և զիս, զթերավարժ, խակ և անարժան գրչակս զՁատիկ դպիրս, որդւոյ Գրիգորին։

661բ Եւ աղաչեմ անմեղադիր լերուք վասն ան//զարդութեան կամ խոշորութեան կամ սղալանաց գրոցս, զի անսղալ միայն Աստուած է...

871

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7217

Գրիչ՝ Ներսէս երէց

118բ [Ո՛]վ գերամաքուր սբ. վարդապետք եկեղեցւոյ, յորժամ հանդիպիք կարդալով կամ յօրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, զանարժան հող և մոխիր նուաստ



Թվին ՌՁԴ (1635) ապրիէլ ի Թ (9)[7]։

---

[6] Ծածկագիրը կարդացվում է «Ներսէս էրէցս»։

[7] Սույն ձեռ-ը տարբեր գրիչներ են գրել. վերևի հիշատակարանը դրանցից մեկինն է։ Ձեռ-ի 92ա էջում գտնվում է մեկ ուրիշինը. «Գրեցաւ ՌՃ և ԺԳ (1664)»։ Մյուսներն այդքանն էլ չեն տեղեկացրել։

872
ՇԱՐԱԿՆՈՑ
Մեջեկ, V, № 1489

Գրիչ՝ Ալիքսիանոս սարկաւագ

ա

218 *Զմեղաւոր և զանարուեստ գրչակս՝* զԱլիքսիանոս *սարկաւագն յիշեցէք, ո՛վ ուսումնասէր եղբարք, միով Տէր ողորմի, աղաչեմ զձեզ։*

բ

Փառք...։ Գրեցաւ Շարակնոցս թվին ՌԶԴ (1635), ապրիլ ամսոյն ԺԹ (19), աւրն երկուշաբթի, ձեռամբն անիմաստ Ալիքսանոս *սարկաւագիս, որ զանուն ունիմ և զգործսն ոչ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ,*
219 *ո՛վ քահանայք և սարկաւագունք, յորժամ աւկտիք՝ ի Շարակնոցէս// կարդալով կամ տեսանելով, յիշեցէք զեղկելի զգրչակս և անիմաստ մեղաւորս միով Տէր ողորմի, զհայրն իմ՝՝ զՊապիկն զփոխեալն առ Աստուած, զմայրն իմ՝* զՄայրամն, *և զամենայն երախտաւորս, և զուսուցիչս իմ, և զարեան մերձաւորս, և Աստուած յիշողացդ ողորմեսցի...։*

873
ՇԱՐԱԿՆՈՑ
Գ. Հովսեփյան, Մատենադարան, արխիվ, թղթ. 91, վ. 6ա

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Կաֆայ

24ա *Փառք...։ Գրեցաւ սա ի դառն և վերջ ժամանակին, թագաւորութեանն այլազգեաց և հազարաց սուլթան* Մուրատին, *որ գնաց հեծել ի վերայ պարսիկ ազգին որ ասի խըզլպաշ, ի մայրաքաղաքն* Կաֆայ, *մահալան* Թօփրախալայ, *և առ ոտն Ս. Թէոթորոզի զինաւորին, ի Հայոց հայրապետին մերոյ տէր* Մովսիսին, *և մերոյ գաւառին վերադիտող մայրաքաղաքիս հեզահոգի և սրբամիտ տէր* Խաչատուր *արհեպիսկոպոսի, յաթոռ սորա հաստատեալ կայ ի վանքն Ս. Նշանայ՝ քաղաք* Խրիմսյ *և տիրէ ընդթանրակայ, ի թվականիս Հայոց ՌԶԴ (1635), ի մայիսի է (7), օրն Համբարձման։ Աւարտում սորա ձեռամբ անիմաստ, ամենաթշուառ... պիտակ<ակ> անուն* Խաչատուր *երէցս։ Խնդրող սորա և փափագող դեռաբոյս ծաղիկն և սիրեցեալ մանկունք Սիովնի մանուկն* Սարուա։ *Արդ՝ աղաչեմ զամենեքեանդ, որք հանդիպիք այսմ տառիս յիսեցէք և զիս ի մաքրափայլ աղաւթս ձեր և զիմ վարպետս տէր* Սարգիս *քահանան, և զմարմնաւոր ծնողն մեր՝* Խուլոպէն *և* զԹաւլվաք *խաթունն, որ սոքա մանզագոյն երես[ն]ամեայ փոխեալ են առ Աստուած լուսաւոր հոգիքն։ Եւ դարձեալ հոգևոր ծնողն մեր՝* Աստուածատուրն *և* Զէպլիմէլիքն։ *Վասն որոյ երես անկեալ...։ Արդ՝ խնամաւք խնամակալին եղև զըրաւ սորա ի ժամանակիս յոյժ անբարի, զի վասն ծովացեալ մեղաց իլաք անհանգիստ ի ձեռն այլազգաց, զի* Քաշանու[8] *խանն* Ազաի *սէֆէ[ր]*

[8] Կարելի է կարդալ նաև «Քալանու»։

գնացին, Ճանպէքիրէն մանգուլ արին, տեղն ուրիշ խան եկաւ, անունն Ինաբքիրէ[9]։

874
ՆԱՐԵԿ
ՈՃՁՄՎ, № 592

Ստացող՝ Սարգիս երէց
Վայր՝ Մարզուան

ա

47 Փառք...։ Արդ՝ ես նուաստ և անարժան ծառայ ծառայիցն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ յուսոյն և Աստուծոյն մերոյ, տրուպ և անարժան Սարգիս սոսկ անուն էրէց, անուամբ և ձևով միայն, բայց ի գործոց թափուր և յունայն, վատնիչ տէրունական գանձոյն և ոչ յարգող տուեալ քանքարոյն, այլ ընդունայն երկիւղիւ հարեալ յերկրի թաղեցի։ Եւ զկնի այսքան հեղգութեան՝ ոչ պահաւք զանձն իմ մաշեցի, և ոչ գերամբարձ ձեռին մաղթանաւք զտէրն փառաց և զտուողն հաւատով հայցողաց յոգիս իմ խոնարհեցուցի, առ ի տալ զոր փափաքէր անձն իմ և պարգևէր, որում բաղձայր ոգի իմ, այլ միշտ ներհականաւքն վարեալ իմ և ի նոյն յարակցեալ անփոփոխ և ընդունայն զամենայն կեանս իմ մաշեցի։ Եւ սակս այսպիսի իրաց խորհուրդ իմն հոգևոր ի միտ բերելով պատճառ բարեաց, գտի զգանձս հոգևոր և զմարգարիտս լուսափայլս, զբուրաստանս ծաղկաւէտ և զդրախտս աստուածատունկ և անմահական պտղով լցեալ, զսեղանս ամենալի բարութեամբ զարդարեալ, զկենացս քարոզս և զբարձրապատուերս, զքնարս հոգէնորոգ և զտառս աստուածաշունչ և զբանս երանելւոյ որբոյն Գրիգորի Նարեկացւոյ։ Յիշելով գերանութիւն ունողաց զաւակ ի Սիոնն և ընդանեակ վերինն Երուսաղէմ։ Վասն որոյ եռափափաք սիրով և տենչալի ըղձիւ շերմեռանդ հաւատով և մեծ յուսով ստացայ և ետու գրել զաստուածաքնար մատեանս և զհոգիանորոգ բուրաստանս, յիշատակ հոգոյ իմոյ և ամուսնոյն իմոյ՝ Մարթայի և որդւոյն իմ՝ մահտեսի Աթանասի և դստերացն իմոյ՝ Հեղինէին և Վասվասին։ Այլ և առ Քրիստոս հանգուցեալ զաւակացն իմ Եփրեմին,

---

[9] Նույնը տե՛ս նաև Մագիստրոսի մոտ (Շարակնոցի թղթապանակ, № 401, էջ 117—118)։ Այստեղի երկու հատվածը պակասում է Գ. Հովսեփյանի մոտ. ահա դրանք.

«Ո՜վ եղբայրք, երբ որ քաղցր եղանակէք զերգս, յիշեցէք և զիս անարժանս գծող սորա խաշտուր քահանայն... Ի թվականիս Հայոց ՌԶԴ (1634) որք մոլորեցան Յունք, որ են Հոռոմքն, թագաւորութեան այլազգաց սուլթան Մուրատն էր, խանամենեպէքիտէն քաղաքիս փաշայութեան Իպրահիմի, շատ վիճմունք եղաւ ընդ ամենայն տեղիս։ Թվականն ՌԶԴ (1635) մտաք։

Ո՜վ եղբայրք իմ սիրելի[ք],
. . . .
Զսակաւ ծաղկանկար ծաղկեցի,
Եւ զդրեբն գրեցի,
Խաչիկ էրէց մեղաց գերի,
Զձեզ աղաչեմ աղերսալի,
Արժան առնէք Հայր մեղալի
Դուք ընկալցիք բանսն բարի»։

միւս Հեղինէին և Վառվառին, լիցի մասն յիշատակի ի սմայ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զսրբազան դասս մաքրագունիցդ, որք հանդիպիք սմայ և ակտիք կամ վայելէք յաստուածաշունչ և հոդէնորոդ կտակէս ընթերցմամբ կամ գաղափարաւ կամ այլ տարաղաւ[10] իւիք, յիշեսջիք սրտի մտօք և թողութիւն մեղաց խնդրեցէք յԱստուծոյ մեղապարտ լոկ անուն Սարգիս երիցուն և հաւր իմոյ խաւճայ Սինանի, փոխեցելոյն առ Քրիստոս, և մաւրն իմոյ՝ մահտեսի Աղնայի, և եղբարցն իմոց հարազատից Վարդերեսի և Սաեփանոս դպրի, ե քրւեր իմոյ Յուստիեանէի։ Այլ և ի Քրիստոս հանգուցեալ եղբաւրն իմոյ՝ Մկրտիչ դպրի և միւս Սաեփաննոսի, և անեղբոյն իմոյ՝ մահտեսի Ըսկանղուրին և կողակցին իւրոյ մահտեսի Ղանիփաշային և ամենայն զարմից և զաւակաց մերոց և բնաւ արեան մերձաւորաց՝ կենդանեաց և ննջեցելոց, որոց ամենեցուն առ հասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուած յիւր միւս անգամ գալստեան. ամէն։

Արդ՝ գրեցաւ սա ի գիւղաքաղաքս Մարզուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարիս, ի թուականութեանս Հայոց ՌՁԴ (1635) ամին, մայիս ամսոյ Թ (9), աւրն շաբաթ, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ փծուն գրչի Միքայէլ դպրի, ի կաթուղիկոսութեան Հայոց տեառն Փիլիպպոսի և պատրիարգութեան Կոստանդինուպալսի աթոռոյն մեծ բարոնապետին Գրիգորի Կեսարացւոյն, և ի թագաւորութեան Տաճկաց սուլտան Մուրատ ղանին. զոր յայսմ ամի շարժեցաւ բազում և անթիւ զաւրաւք ի Կոստանդինուպալսէ գնալ պատերազմ ի վերայ Պարսից։ Եւ յոյժ նեղութիւն և տագնապ և հարկապահանջութիւն յոլով ազգի ազգի, ի վերայ բոլոր աշխարհիս Հոռոմոց իբրև յաւուրս առաջնոց չարեաց և այլ աւելի։

Բ

Զստացաւղ սբ. կտակիս զՍարգիս էրէց յիշեցէք առ Քրիստոս։

Գ

Զգծող սորա զՄիքայէլ դպիրն յաղաւթս յիշեցէք։

875

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Կոր. «Բանասէր», հտ. Զ, 1904 թ., № 33

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

173 [Փառք...։ Արդ՝ գրեցաւ][11] ձեռամբ անիմաստ գրչի Ակնցի Յակոբ դպրի, [ի խնդրոյ և արդեամբ մահտեսի Վահրատի], որ էր յերկրէն Երապոլսոյ, այլ ի գիւղէն Ակընայ...։ Եւ յաւարտ հասուցեալ Տեառն առաջնորդութեամբ իւր յիշատակ ի բնիկ գիւղն իւր՝ Ակն անուանեալ, ի դուռն տաճարի Սրբոյն Յոհաննու հայրապետի։ Ընդ նոսին և անձանձիր մտօք յիշման արժանի արարէք յարժանաւոր յաղօթս ձեր ղոչ արժանիս յիշման զՅակոբ գրիչս, որ բազում դեգերանօք և անհանգիստ աշ-

10 Գուցէ «տարաղաւ»։

11 Ցուցակում հիշատակարանն ամբողջությամբ չի բերված, այլ հատվածաբար կամ վերապատմելով։ Ուղղանկյուն փակագծերում եղածը մենք ենք ավելացրել։

խատութեամբ գրեցի զսբ. գիրքս զայս ի դառն և ի դժար ժամանակիս, քանզի սկիզբն արարի սորա ի դրել ՌԶԴ (1634) թվականիս Հայոց, յո-
174 *բում ամի Յոյնք Թիւրեցին զտօնն մեծի Զատ//կին, և ի Ծաղկազարդի կիւրակէին ծառազատիկ արարին, զոր աշօք մերովք տեսաք զմոլորումն նոցա և զՀայոցս հաստատութիւն, որ բարձր ի գլուխ պարծին ուղղա-փառ դաւանութեամբ։*

Իսկ ի միւս ամին որ թվականն Հայոց ՌԶԴ (1635) էր, ի չորեքտասանորդի ամի թագաւորութեանն իւրոյ սուլտանն Տաճկաց Մուրատ, *ժողովեաց զզօրս իւր անթիւ ե անհամար, և խաղաց գնաց ի վերայ ազգին Պարսից ի պատերազմն։ Եւ մինչ գնայր տեսեալ զերկիրսն սակաւամարդս և հարցեալ տեղեկացեալ, եթէ յԸստըմպոլ են ժողովեալ, և առաքեաց հրաման ի տեսուչն Ըստըմպոլայ, որ թէ՛ հայ, թէ՛ յոյն, թէ՛ տաճիկ, որք եկեալ են յարևելից կողմանէ զամենեսեան զնոսա փութով ի տեղիս իւրեանց առաքեսցէ։ Որ եկեալ եհաս սաստիկ հրամանն այն առ Պայրամ փաշան, որ նայ էր դէտ քաղաքին այնմ ժամանակին, ի մայիս ամսոյ ԺԹ (19), յաւուր չորեքշաբթի։ Որ եհան հրաման ըստ հրամանացն արքային և զամենեսեան աքսորեաց ի քաղաքէն զեկեալսն յարևելից կողմանէ, և ցրուեաց ընդ երեսս երկրի։ Իսկ ողորմածն Աստուած, որ խնամող է ամենայնի, զվէրն ետ և զսպեղանին ընդ նմա, զի ոչ եղև այս ի ձմերայնի, քանզի և Տէրն ասէ, թէ՝ «Մի՛ ի ձմերայնի լինիցի փախուստն ձեր*[12]*»։ Որ ոմանք ի լերինս և ոմանք հետ ի յոտս շրջելով մինչ զի դատարք գտանիցեն, զի էին ցրուեալք որպէս զոչխարս որոց ոչ իցէ հովիւ։ Իսկ զաղէտս հառաչանացն և զկսկիծ սրտիցն, զսրտաթափումն արանցն, զճիչ կանանցն, զվայ յղեացն, զաւախ բարեկամացն, և զաղիողորմ արտասուս սիրելեացն առ միմեանս. ո՞ կարէ պատմել կամ ի գիր արկանել, որ եղեն վասն ծովացեալ մեղաց մերոց։ Իսկ մինչ այս՝ գործս լինէր ի քաղաքին, եկն միւս այլ հրաման ի նոյն արքայէն մինչ ի պատերազմի էր, զի ի պարիսպն քաղաքին Ըստամպոլայ նորոգեսցեն, որ և արարին իսկ։ Եւ ի պատճառս նորոգման պարսպին, սակաւք ոմանք ազատեցան յարուեստաւորաց, որք ի շինումն պարսպին վաստակաւորքն էին պիտոյ։ Իսկ թագաւորն խաղաց գնաց ի պատերազմն և էառ* զՎաղարշապատ *քաղաք,* զՇաքաստան, զԱրտաւիլ *և զայլս բազումս, և դարձաւ մեծաւ յաղթութեամբ յարքայանիստ քաղաքն իւր յերջանիկն ի* Թիւզանդիայ։ *Եւ մինչ եհաս նա* յԸստըմպոլ, *եկն դարձեալ արքայն Պարսից, և էառ զերկիրն իւր, զոր առեալ էր ի նոցանէ արքայն Տաճկաց...*[13]։

876

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՅ

ՏԵՐԱՎՋ, № 526 (1618 թ.)

800 *Ո՛վ եկեսբարք իմ պատուական, ով որք յանդիպիք այս աստուածաշունչ գրոցս, յիշեցէք զմաքրափայլ աղաւթս ձեր զքաշ բարունապետ պատուա-*

[12] *Մատթ., ԻԴ, 20։*

[13] *Այնուհետև հիշատակարանի շարունակությունը վերապատմվում է համառոտ։*

կան, Հայոց կրկին հովիւ տէր Ղուկաս քահանայն[14], որ հանգուցեալ է ի վերինն Երուսաղէմ։ Ով որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ. ամէն։

Գրեցաւ օրինացոյց Միխայէլ դիրքս ի ձեռամբ հոգաղրաւարթ տէր Ղուկաս քահանայիցս, ի թվին Հայոց ՌԿԷ (1618), յիշատակ իւրն ե ծնողաց նորին, և ամենայն հանդիսարան տան մեծի և փոքու. եղիցի, եղիցի։

Յիշատակս դրվեցաւ թվին ՌՁԴ (1635), մայիս ԻԴ (23), յիշեա Տէր։

877

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2380

Գրիչ՝ Եսայի վարդապետ
Վայր՝ Էջմիածին

ա

21ա Զեսայի վարդապետ. գծող Քերականի բնաբանին և բառին յիշել աղաչեմ։

Թվին ՌՁԴ (1635), մայիսի ԻԷ (27) նաև Առաքել Սիւնեցոյ Լուծմունքն, որ ի վերջ գրքիս[18], գրեցի իմով ձեռամբ, ի դուռն սբ. Էջմիածնայ, տօնի սրբոյ Յովաննու և Աթանագնա, աւուր հինգշաբթի եղև աւարտ։ Աւաղ կենացս։ Սաթ հազար[16] ալֆ[17] վա՜յ զիս ո՜հ ո՜հ։

բ

25բ Ո՜հ, ո՜հ աղաչեմ զողորմելի գերիս յիշեա՜։

գ

29բ Թողութիւն արարէք այս մէկ օրս յետոյ ձգեցի, վասն որոյ թերատ մնաց. կարգն շիտակ է, չտարակուսիս։

դ

110բ Որք հմուտ և տեղեակ իսկ էք առաշնոյ աւրինակին, որ յաղագս անուանս ճառի և այժմ տեսանէք միայար և ըստ կարգի, զորս երեք և չորս կրկին էր եղեալ, կարծեմ և յուսամ, թէ դիւրութեամբ և հեշտաբար յընթեռնուն և յաւգտիլն, յիշեցէք զսակաւ յաշխատանս մեր օրինակողք գրոցս, գրեցէք զչորս տող բանիս[18]։

Ո՜հ աղաչեմ յիշել զանհեթեթ գրողս ի բարի, զի թէպէտ և գիրս վատթար է և յոռի, սակայն աւրինակս ընդիր է և կարի պիտանի։

ե

Գրիչ՝ Վարդերես Լեռնցի

133ա Աղաչեմ յիշել զսակաւ աշխատաւղս զՅոհանէս վարդապետ Եզնկացի և զմեղաւոր գրաւղս զՎարդերեսս Լեռնցի։

---

14 Ցուցակի № 526 ձեռ-ի գրիչն է։

15 Տե՛ս ձեռագրի 390ա—446բ էջերում։

16 Հարյուր հազար (պրսկ.)։

17 Հազար (արաբ.)։

18 Բնագրում «օրինակողք... բանիս» հատվածը գրված է ձախ լուսանցքում։

Զ

158ա Զմեղաւոր գրչիս սուտանուն Վարդերես Լեհրցիս յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ զձեզ։

Է

216ա Զմեղապարտ գրչիս զՎարդերեսըս Լեհրցիս յիշեցէք ի Տէր. Ա(1) գրիչով Լ(30) տետր եմ գրեր՝ օրն Ա(1) տետր։

Ը

317բ Աղաչեմ զձեզ, սիրելիք, վասն Աստուծոյ համար, որ եթէ կարդալով, եթէ օրինակելով, թէ Ա (1) Ա (1) սղալ գտանէք և գրիս նուաստութեան համար չի լինի թէ նեղանայք, որ իմ կարողութիւնս այս չափ էր։ Մեղապարտ գծողս սուտանուն գ. ժ. ե. խ. ծ. շ. բգ. սըս[19] յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր և յիշողն յիշեալ լիցի ի միւսանգամ գալուստն Քրիստոսի, ամէն։

Բ

336բ Զայս տեղս չգրեցի, զէրա լաւ չէր գալ[20]։

878

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետիկ, № 13 (1507), (մանրաժապավեն, Երեան, № 629) տե՛ս նաև ՅՁՎՍ, I, № 13, էջ 132—133

Գրիչ՝ Յակոբ

ա

235բ Զեղկելի և զանպիտան, զհող և զմոխիր գծողս յիշեցէք ի Տէր. ամէն։

բ

459ա Ո՛վ եղբարք, որ զահաւոր և զսոսկալիս լսէք զմարգարէիս բան զմեղաւորս Յակոբ յիշեցէք՝ ի մեղաց թողութիւն և զՏէր զձեզ յիշէ։

գ

567բ Զմեղաւոր Յակոբս և զծնաւղս իմ յիշեցէք յաղաւթս ձեր, ընդ նմին և զտէր Գիւեոս բարեսէր քահանայն, որ աշխատեցաք յԱստուածաշունչ գրոցս սրբագրելն, թվին ՁՌԴ (1635), յունիսի Գ (3)։

դ

584ա Աւարտս մարտի յԼ (30) և սկիզբնս յապրիլի Զ(6)։

ե

Գրիչ՝ Յովհաննէս

627բ Մեղաւոր և անարժան Յովհաննէս գծողի ողորմեա Տէր։

---

[19] Ծածկագիրը կարդացվում է «Վարդերե» (գ=Վ, ժ—Ա, ե=Ր, խ=Դ, ծ=ե, շ=Ր, բգ=ե-սըս=Վարդերեսըս)։ Ծածկագիրը Մատենադարանի ձեռագրաց ցուցակում չի կարդացվել (հտ. Ա, էջ 791)։

[20] Ձեռ-ի 389բ էջում պահվել է հեղինակի հիշատակարանը. «Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր... զԴաւիթս, որ աշխատեցայ հետ բանական արհեստիս, այսինքն քերականիս, զայնս որ յառաջին քերթողացն ասացեալ էր և մեկնեալ պարզ, գնա յերկուս բաժանեցի, այսինքն՝ ի հարցումն և ի պատասխանիս ի վարժումն մանկանց նորագունից...»։ Այս հիշատակարանը տե՛ս նաև ՏԵՐԱՎՋ, № 567, էջ 842—843։

879
ԲԺՇԿԱՐԱՆ
Երևան, № 413

Գրիչ՝ Սարգիս երէց
Վայր՝ Իզմիր

ա

65ա Յիշատակարան առաջին գրողի և ստացողի գրքոյս բժշկարանի[21].

Ո՛վ ընթերցողք, [յ]որժամ ընթեռնելով զցանկն, և զմարգակազմութիւն, և զճուարիշն, և զսֆուֆներն, և զլուսիններն, և զհապերն, և զհուկնաներն, և զմաճուներն, և զպատրոյգներն, և զայլ ազգի ազգի արարողութիւն, զոր իմաստունքն առաջինքն և վերջինքն սահմանեալ են ի սէտս մարդկան։ Յիշեցէք զսրբագրողն սորա զայս պատուական մինհաճիս զԱմիրտօլվաքն, որ բագոմ աշխատեր է ի սա, և զգծող սորա զՀալասյացի զՍարգիս էրէցն, որ ի գրելն աշխատեցայ և անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեան գրիս, զի միտք իմ ոչ է ի վերայ, այլ եմ իբրև զնաւ ալէկոծեալ ի հողմոց, և ես որ բաղում մեղօք ի լի եմ, և տարակուսեալ եմ, թէ որպէս պատասխանի տամ քահանայապետին Քրիստոսի, որ ասէ բերանաւ սրբոց, թէ՝ «Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ[22]»։

Վայ ինձ հազար բերան, որ ես անարժանս որ սկսեցա ի գրել զսա, որ մինչև ի կէսն որ գրեցի նայ, Աստուծոյ ողորմութեամբն, հոգևոր հայրն մեր և կենդանի նահատակն տէր Տրդատ արքեպիսկոպոսն հրաւիրեաց և կոչեաց զմեզ աստիճան քահանայութեան ի ձեռնադրութիւն, և մեք անարժան գոլով ապաւինեցաք ի Աստուծոյ ողորմութիւն որ ասէ. «ես եմ, ես եմ որ քաւեմ զմեղս քո[23]»։ Ելեալ գնացաք յԻզմիրու ի Կօգէլճիսար, որ է վիճակն Ոհաննու աւետարանչին, և անդ առաք զկարգ և զպատիւ քահանայութեան, եկաք ի յԻզմիր. և դարձեալ սկսեցաք զայս պատուական բժշկական հէքիմարանս, որ մինհաճ ասեն, և կատարեցաք։ Եւ ի կատարելն սորա էր թվին Հայոց ՌԶԴ (1635), ունիս ԺԹ(10), ի վայելումն խոճայ Աւետիքին Ջուղայեցո[յ]. Աստուած զինքն անփորց պահէ, և ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն։

Գրեցաւ սա ի ժամանակս և ի կաթուղիկոսութեան տեառն տէր Փիլիպոսին, որ այժմ երկրորդ լուսաւորիչ է Հայոց, և ի ժամանակս սուլթան Մուրատին, որ ի Պարս ի պատերազմ գնաց. Աստուած զվերջքն ի բարին կատարէ։

Դարձեալ աղաչեմ զձեզ, [յ]որժամ ընթեռնոյք զգովելի և զբժշկական մինհաճ գիրք, յիշեցէք զմեղուցեալ և զանարժան գրիչս զՍարգիս էրէցս, որ զարիպ, և անտէր, և անօգնական եմ մնացեր, որպէս հաւ ի երամէ զատած, ի սիրելեաց բաժանած, միթէ Աստուած զմեզ ի մեր ծնած և սնած երկիրն տանի և կրկին ուրախացնէ։ Դարձեալ յիշեցէք և զհայրն իմ՝ զտէր Յոհանէսն, և զեղբայրն իմ՝ զտէր Յարրահամն, և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալուստն. ամէն։

---

21 Վերնագիրը գրված է կարմիր մելանով։
22 Եզեկ., Գ, 17։
23 Հմմտ. Սաղ., ՃԲ, 3։

Բ

Գրիչ՝ Մարգար դպիր

Եւ զդպիր Մարգար *գրիչս յիշեա, և ստացող սորին* Աւետիկն *յիշեցէք, և դուք յիշեալ լիշիք առ Քրիստոս*[24]։

880

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7100

Գրիչ՝ Սիմէոն Լէճցի

Վայր՝ Պուռսայ

ա

5բ *Գրեցաւ ցանկս սոսկանուն և անարժան* Սիմէոն *դպրիս ձեռամբ, թվին ՌԶԴ (1635) մայիսի։ Աղաչեմ յիշել մի Տէր ողորմեսիս. և զյիշողդ՝ Աստուած յիշէ, յիւր միւսանգամ գալըստեան. ամէն։*

Բ

157ա *Գրեցաւ հադիմարանս, մարդակազմութիւնս և մարմնախազս ի լաւ և ընդիր օրինակէ, թվին Հայոց ՌԶԴ (1635), յունիսի ԺԱ (11), ի քրիստոսապահ քաղաքս* Պուռսայ, *կաթողիկոսութեան Հայոց տեառն* Փիլիպպոսի *և առ դրանն Ս. Աստուածածնին, ձեռամբ ոմնամեղ և անարհեստ գրչակիս, մեղօք տառապեալ* Սիմէոն Լէճցի։ *Աղաչեմ զձեզ, հարք իմ և եղբայրք, յիշել ի Տէր միով Տէր ողորմեալիս. յիշողն՝ յիշեալ լիցի. ամէն. և եղիցի։*

881

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մշեվ, IV, № 1127

Գրիչ՝ Մինաս

Վայր՝ Համիթ

195 *Փառք...։ //Արդ՝ գրեցաւ սբ. Աստուածաշունչս ի յաշխարհս* Միջագետաց, *ի մայրաքաղաքն* Տիգրանակերտ, *որ այժմ* Համիթ *վերաձայնի, ի դուռն Ս. Կիրակոսի, յառաջնորդութեան մայրաքաղաքիս տէր* Բարսեղ *արքեպիսկոպոսին և աստուածաբան վարդապետին և ի հայրապետութեան սբ.* Էջմիածնայ *տէր* Փիլիպպոս *սրբասնեալ առաքինի և խարազնազգեստ կաթողիկոսի, ի թուականութեան անցելոց ժամանակաց յելանելոյն Ադամայ ի դրախտէն ՅՊԼԴ (6834), և ի մարդանալոյն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌՈԼԶ (1636), և ի Հայոց մեծաց թուականութեանս ՌԶԴ (1635), ի թագաւորութեանս Տաճկաց սուլթան* Մուրատին, *ի դառն և ի նեղ ժամանակիս։*

Զի անբարկանալի բնութիւնն վասն մեր մեղացն և չար գործոցն տարածեաց յաշխարհս Միջագետաց *մահ տարաժամ, ի քաղաք և ի*

---

[24] Զեռ-ի 65ա էջի ներքևի լուսանցքում կարդացվում է. «Աստուած ողորմի ասացէք խոնա». շարունակությունը կտրվել է կազմելիս։

գեղ, ևս առաւել ի քաղաքս Համիք: Զի ղՁատիկն[25] որ արարաք, թագաւորի երկրորդն՝ Մահմատ փաշայ վազիր ասեն, թագաւորի զօրօքն տարի մի բոլոր ի քաղաքս էր նստեալ, սբ. Զատկի ճրագալուցի շաբաթ աւրն, մարտի ԻԸ (28) էր, եկ ի քաղաքէս, և մահտարաժամն սաստկացաւ։ Ապրիլ Ա (1) չորեքշաբթի մեռաւ Առաքել աբեղան, որ էր գրագիր։ Եւ ապրիլ Ե (5) մեռաւ տէր Յովանէս սրբասէր քահանայն և անձանձիր միշտ գրողն և կենակիցն այլ ի հետն ի միում գիշեր, և եգան ի միում տապանի։ Եւ յորժամ յունիս ամբսեանն մտանք այլ առաւել սաստկացաւ մահն, և գրող սբ. Աստուածաշնչիս Սաֆար դպիրն, որ էր աշակերտ անարժան թարմատար Մինաս գրչիս, սա այլ խոցեցաւ և էառ զվախճան տարաժամ մահուամբ և եղև ինձ մեծ սուգ և կսկծալի դառնութիւն, զի սոքաւք պարէի, զի դպրատունն իմ ամայի եղև. այլ փառք և գոհութիւն տվողին և առողին։

Եւ յորժամ յուլիս Ե (5) Վարդավառն եղև, Աստուած ողորմեցաւ, մահտարաժամն խաղաղաւ, ապա մեք չէ թէ ի մեղաց դարձաք, այլ առաւել չաղախեալ եմք ի մեղս և աւր ըստ օրէ յաւելումք ի չարիս, և ոչ յիշեմք զահն և զերկիւղն որ կրեցաք ի մահտարաժամէն։ Զի այսպէս եղև, որ սէր սիրելեաց և գութ ծնօղացն պակասեցան, զի ի միմեանց փախէին և երկնչէին, զի ամենայն ոք ասէր, թէ՝ «ես այլ վաղիւն կամ այսաւր կանկանիմ և մեռանիմ»։ Եւ ննջեցելոց կերակուրն ոչ ոք երթայր կերակրէր, զի աղքատք ասէին, թէ՝ «Դրամ տուք որ գամք ուտել զձեր կերակուրն». առնէին դրամն, ապա թէ ուտէին զկերակուրն։ Զայս ամենայն տեսեալ մեր ոչ ղղջամք կամ փոշիմանիմք։ Այլ շուտով և փութով զուգեցան, և ամուսնացան, ըստ այնմ՝ կանայս առնէին և արանց լինէին, և թէ ուտէին և ըմպէին։

Դարձեալ և կասկած մեծ և երկիւղ զարհուրելի է։ Զի թագաւորն Տաճկաց սուլթան Մուրատն ի Կոսաանդնուպոլսէ շարժեցաւ բազում և անթիւ հեծելով եկեալ ի Կարնի քաղաք, որ է Յարզրում, յունիս ԻԸ (28), Վարդավառի բարեկենդանին ելեալ գնաց պատերազմ ի Պարսս։ Եւ ի յԱյրարատեան քաղաքն, որ է Երևան, ընդդիմացան և ի խսար մտին և նա պաշարեալ նստաւ ի վերայ, և ոչ գիտեմք զվերջքն, զի խիստ է և բարկասիրտ թագաւոր, որ ոչ ոք մի՛ իշխէ մէկ բան անախորժակ ասել. զի այնպէս արեանարբու է և ահարկու, որ ինքն իւրովի հանապազ յայլ կերպ եղեալ անգագար ջրջի ի մէջ հեծելազօրացն, զի հուքմ և հրամանն կատարեալ է. որ զայն նոր ելեալ չար մուխն, որ ասի թուքուն, և զսև ջրի ըմպելոյ տներն աւերեց. և սաստիկ է հրամանն, որ թէ մէկ մի գտնու որ մուխ կամ սև ջուր ըմպեն, ազատելոյ չէ, այլ զանազան տանջանաւք սպանանեն։ Իւր արած բանն և հուքմն յաշխարհի շինութիւն է, զվերջքն Աստուած դիտէ, թէ որպէս լինելոց է։ Զի աշխարհս մաշեր է, և ծերացեր է, և որպէս երկն ծնընդակ[ան]ի հասեալ է, միթէ այլվի ողորմածն Աստուած գթայ ի մեղուցեալս և հաշտեսցի ընդ արարածս, ոչ հայելով ի գործս մեր, այլ ողորմեսցի ըստ իւրում մեծի ողորմութեանն, և տա աշխարհիս խաղաղութիւն, բառնայ զցասումն և զպատու-

[25] 1635 թ. Զատիկը կլինի մարտի 29-ին։

հասն ի յարարածոց, և տա թագաւորաց հաշտութիւն, որ քրիստոնեա Հայոց ազգս մեր չի ջնջի բնաւին։

196 Արդ՝ անկեալ աղաչեմ կողկողագին դիմօք զ[ր]նթերցողդ և զվայելողդ սբ. Աստուածաշնչիս, որ լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք գրողի սբ. տառիս Սաֆար դպրին, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս և զծնաւղսն իւր, զհայրն՝ զԽաչատուրն, զփոխեցեալն ի Քրիստոս, և զմայրն՝ զՀռիփսիմէն։ Նաև զմեղուցեալ նուաստ Մինաս գրիչս, որ ետու դրել ի դպրատունն իմ զԱստուածաշունչս Սաֆար գրչին, և զծնօղսն իմ՝ զՍտեփանոս քահանայն և զՁինարն, և որ. յիշէքդ... յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

882

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 2628

Գրիչ՝ Գրիգոր երէց

ա

2ա Թվին ՌԶԴ (1635) ի յունիս ամսոյ ԻԸ (28) սկիզբն եղև գրոցս[26]։

բ

117ա Ո՛հ զծանրամեղ գրողս զԳրիգոր, ո՛վ սբ. եղբայր, յիշեա՛յ Հայր մեղայիս։

գ

155ա Յայս տեղս հասանիս յուրիշ օրինակ տե՛ս, պակաս կայ աստ։

դ

230ա Զանրամեղ և զբազմամեղ զԳրիգոր երէցս, որ բազում երկաւք իբր երկունք ծնընղականի, Աստուծոյ ներողութեամբն քերելով ծնայ մինչև ցայսր. և ակն ունիմ ի Տէր, որ հասուցէ ի զրաւն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

ե

231ա Փառք քեզ Աստուած, որ ետուր կարողութիւն հասանել ծանրամեղ քերաւզ գրոյս Գրիգոր երիցու մինչև ցայսր։ Եւ արդ՝ տէր իմ Յիսուս Քրիստոս յոյս զքեզ ունիմ, որ յաջողեսցես եղկելոյս յառաջակայ այսմ սբ. Աստուածաշունչ կտակիս մտանել ի հունն և ի զրաւն հասանել, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

[26] Նույն էջում գտնվում է հետևյալ գիրը. «Թվին ՌԾԴ (1605) ի յունիս ամսոյ ԻԸ (28)»։ Ամենայն հավանականությամբ այն գրվել է հետո, փոխանակ ՌԶԴ (1635)-ի գրվել է ՌԾԴ (1605)։ Այն թողել են նույնությամբ և դրա ներքևում գրել ա հիշատակարանը։

Ցավալի է, որ 482 թերթ ունեցող այս ձեռ-ը, գրված մանրատառ և գեղեցիկ բոլորգրով, ընդարձակ հիշատակարան չունի կամ չի պահպանվել։

883

ԺԱՄԱԳԻՐՔ

ՏՀՁԿՄՎ, № 9. տե՛ս նաև «ՀԱ», 1891 թ., էջ 47

Գրիչ՝ Յակոբ Ակնեցի
Վայր՝ Կ. Պոլիս

ա

15 Գրեցաւ ի թվականիս ՌՁԴ (1635) ամին, յուլիսի ամսոյ Ա(1), օրն չորեքշաբթի, ձեռամբ Յակոբ դպրի, ի վայելումն սրբասնունդ Գասպար քահանային։

բ

Ո՛վ դասք սրբազան քահանայից և հոյլք մանկանց նորոր եկեղեցոյ, երես անկեալ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ գաղափարելով... յիշեցէք... զստացաւդ սորա զԳասպար քահանայն և զծնօղսն իւր. ընդ նմին և զրչիս Յակոբի ե. ծնօղաց իմոց. Աստուած ողորմի ասացէք։

գ

ԶՅակոբ տառապեալս հոգով... աղաչեմ յիշել ի Տէր և խնդրել թողութիւն բազմամեղ անձին իմոյ, այլ և համշիրակ եղբայրակցին իմոյ Գասպար քահանային, զի ջանիւ նորին ևս և բազում աշխատութեամբ մերով սկսաք գրել զգիրքս յիշատակ ի ձեռս նորա։

դ

Փառք...Աստանաւր գրեցաւ և զբաւ առեալ՝ կատարեցաւ տառս աստուծային, որ ասի Խորհրդամատոյց, ի լաւ և յստոյգ աւրինակէ, որ էր ուղղեալ ի մեծի բաբունապետն Թովմայ վարդապետէ[27], որպէս և առաջին յիշատակարանն ցուցանէ, ի թվականիս Հայոց ՌՁԴ (1635), յուլիսի Իե (25), յերկիր Թրակիայ, ի մայրաքաղաքն Կոսանդնիանուպոլիս, ի պատրիարգութեան սբ. Էջմիածնայ աթոռոյն տեառն տէր Փիլիպպոսի և յեպիսկոպոսութեան քաղաքիս տէր Գրիգորի Կեսարացոյ, այլ և ի բռնակալութեան ազգին Տաճկաց սուլդան Մուրատի, որդւոյ սուլդան Ահմատին, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի, ձեռամբ Ակնեցի Յակոբ դպրի, ի լաւ և յստոյգ աւրինակէ, զոր գաղափարեալ էր Ներսէս վարդապետն, աշակերտ մեծին Թովմայ վարդապետին, յառաջին աւրինակէն, զոր ինքն աստուածաբան բաբունեաց պետն Թովմաս գրեալ էր աշխատութեամբ աստուածունակ անձին և ստուգեալ ամենայնիւ յառաջնմէն մինչև ցվերջին նշանախեց վասն օգտութեան և բաբեզարդութեան...։ Որ և այսմ բանիւ տենչմամբ փափաքեալ բազում ջանիւ ետ գաղափարել զսբ. մատուցարանս զայս աստուածասէր և բարեպաշտ քահանայն Գասպար ի վայելումն անձին իւրոյ, և յետ ելանելոյ ի կենցաղոյս եղիցի հոգոյ իւրոյ յիշատակ, և ծնաւղացն մահտեսի Աստուածատուրին, և մահտեսի Միհայիլ, և եղբարցն՝ Մելիքոնին և Թովմասին. քրւերն՝ Մարգարտին, և դեռաբոյս զաւակին՝ Յակոբին և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց...։ Դարձեալ և յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զհոգևոր ծնօղն և զվարժապետ սորա

27 Իմա՛ Թովմա Մեծոփեցի։

զերջանիկ բարունապետն զԳրիգոր Դարանաղեցի վարդապետն... նաև զօրինակ սբ. գրոյս շնորհեաց...[28]։ Այլ և գրչիս սղալանաց և անարհեստութեան անմեղադիր լերուք, զի ի գառն ժամանակի գրեցաւ, որ յաւուրս լայսոսիկ էր թագաւորն ի պատերազմ ընդ Պարսից, որ և էառ զՎաղարշապատ քաղաք։ Եւ մինչ ի պատերազմի էր արար սուրկուն յԿստամպոլ, յարևելից եկելոց Հայոց, Յունաց և Տաճկաց. որ ի միջի նոցա զայս գրէի բազում հալածանօք։... Եւ թէ գտանի սղալ որ ոչ իմացաք, գիտնոցդ մաղթեմ կրկին ուղղել. և աշխատաւորացն ի սայ վարձս բազումս տացէ[29]։

Ե

Յայսմ ամի՝ թվի ՌԶԴ (1635) զպարիսպն Ստամպոլու նորոգեցին։

884

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ, ԱՂՕԹՄԱՏՈՅՑ

Երևան, № 10441 (1458 թ.)

Նորոգող՝ Հէրապետ եպիսկոպոս

351ա Վերջստին նորոգեցաւ Սաղմոսարանս ու Ազօթմատոյ[ց]ս ձեռամբ Հէրապետ եպիսկոպոսին, ի վայելումն տէր Խաչատուրին, իւր որդոյն՝ տէր Աբրահամին։ Թվին ՌԶԴ (1635), աւգոստոսի ԻԶ (26) նորոգեցաւ։

Յիշատակ է Սաղմոսարանս տէր Խաչատուրին, իւր կողակցին՝ Ուղիտին, որդոյն՝ տէր Աբրահամին, իւր կողակցին՝ Շազատին, մաւրն՝ Մարգրտին, թոռին՝ Ալէքսանին, Հռիփսիմին, Նազլուին, Զաքարին. ամէն[30]։

885

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4124 (ԺԵ դար)

282բ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զտէր Աւետիսն ստացաւ զսա ի ժամանակին, որ խոնդքարն եկաւ ի յԵրևան առաւ[31]։

Մակուայ սուլտան ելաւ ի բերդէն իւր կամաւն, յետոյ եկաւ քուրթն Մահմատ-բէկ, առեց ու աւար ու գերի սպանէց. էրէց, եպիսկոպոս, տանուտէր, կին ու տղա գերի վարեց, խիստ անողորմ բաներ արաց, կ[?]ն քաշեց, զամենայն աշխարհն աւեր էած։ Եւ շրջեցան յերկրէ յերկիր և ջարգեցան ի ղարիպութիւն, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Թէ՛ Աւետարան, թէ՛ հանեդրց՝ զամենայն գերի տարան։

Յիշեցէք ի Քրիստոս զտէր Աւետիս, որ ի գերութենէ ազատեց զԱւետարանս, ետուր Խ (40) ղոռշ՝ առաւ։

---

28 Իմա՛ Գրիգոր Դարանաղեցի։

29 դ հիշատակարանը տե՛ս նաև № 9027, էջ 78բ։

30 Սույն հիշատակարանը տե՛ս նաև ՄՅԶԵՄՍ, Ա, № 1, էջ 3, ուր տարեթիվը սխալմամբ նշված է ՌԶԴ—։

31 Հավանաբար խոսքը վերաբերում է 1635 թ. օգոստոսի 8-ի թուրքերի կողմից Երևանի գրավմանը (տե՛ս, Մժ, 1, էջ 199, ծանոթ. 36, էջ 242, 250, ծանոթ. 17)։ Նշանակում է սույն հիշատակարանը գրվել է 1635 թ. օգոստոսին։

886
ՇԱՐԱԿՆՈՑ
Մ8ԶԵԹ, V, № 1673 (ժամանակ ?)

Գրիչ՝ Բարդուղիմոս երէց

528 *Թվին [Ռ]ՁԵ (1635) նոյեմբեր ԻԳ (23)*[32]*, ղշի ըմպոնաղի օրն, ես՝* Բարդուղիմոս *երէցս և* Մարութայ *սարկաւագն զնոր սալորին քաղեցաք ի ծառէն, որ սբ. Խաչէն յետև ծաղկեցան սալորիքն, և խնծորիքն, վարգն, լիլակ ծաղիկն, և յետոյ դառն ձմեռ եղաւ. և զապագայն Աստուծոյ է դիտելի, ո՛վ եղբայրք։*

887
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 778

Գրիչ՝ Մկրտիչ
Վայր՝ Լով

289բ *Փառք..., որ ետ կարողութիւն անուղղագրչիս և տարտամ անձինս հասանել ի կէտ աստուածային գանձարանիս, որ կոչի կանոնս, զոր եղին Քրիստոսի սբ. առաքեալքն յետ համբառնալոյ Տեառն մերոյ և Փրկչին, ըստ այնմ իշխանութեան, զոր ընկալան ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, այս է, թէ՝ «Զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս, և զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս»*[33]*. և ըստ այսմ իշխանութեանն հաստատեցին վասն շինութեան սբ. եկեղեցոյ զսբ. կանոնս շահաւէտ, բազում և զանազան դեղաւք զբժշկարանն զայս, վասն հոգևոր հիւանդաց, այս է՝ վասն մեղուցեալ անձանց, և հաւատով զղջացելոց, ըստ Տեառն մերոյ հրամանի, թէ՝ «Ոչ է պիտոյ բժ[ի]շկ ողջաց, այլ հիւանդաց. և ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս»*[34]*...։*

290բ *Աստանաւր կատարեցաւ հոդէկեցոյց և ցանկալի դրախտս, աստուածադիր, ամէնունակ առատութեամբ, յորմէ գնան գէտք...։ Որոյ այսպիսի յղձալի փարթամութեանց ցանկացող և փափագող եղեալ աստուածասէր և բարեպաշտ... և ախոյեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ տէր Զաքարիայ Լովա[յ] քաղաքի աւագ քահանայն, որդի տէր Գասբար նոյն քաղաքի աւագ իրիցու։ Որ և սա ամենայն բարեձևութեամբ հովուէր զհաւատ Քրիստոսի ի կեանս իւրում, և կատարեալ ալեաւք վճարեաց զկեանս իւր, և փոխեցաւ յանանց կեանսն ընդունել զհատուցումն բարի։ Բայց գրեցաւ սա ի չարացեալ և ի բազմահալած ժամանակս, որ էր ուղ-*
291ա *ղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ, ի քաղաքն Լով// կոչեցեալ, ընդ հովանեաւ Ննջման Ս. Աստուածածնին, ի թագաւորութեանն Լեհաց երկրիս աստուածասիրի և բարեպաշտի Զորրորդ Վլատիսլավին, և ի հայրապետութեանն սբ. էջմիածնայ աթոռոյն սրբազան և առաքինի...*

---

32 Քանի որ Հայոց ՌՁԵ տարեթիվը սկսվում է 1635 թ. հոկտեմբերի 11-ից (հուլյան տոմարով), ապա հայոց ՌՁԵ թվականի նոյեմբերի 23-ը կընկնի 1635 թ. մեջ, այստեղից էլ սույն հիշատակարանը դրեցինք 1635 թ շարքում։

33 Հմմտ. Մատթ., ԺԶ, 19, ԺԸ, 18։

34 Մարկ., Բ, 17։

տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի, արի և քաջ բարձունապետ աստուածաբան վարդապետի, որ ձեռասուն և աշակերտ լեալ բազմերջանիկ և սքանչելագործ սբ. հայրապետին տեառն տէր Մովսէս կաթողիկոսին, որ յետ փոխելոյն յաշխարհէս տեառն տէր Սովսէսի, սա յաջորդեաց զաթոռն հայրապետական։ Եւ զի բաղում գովութեան արժանի է լուսաւոր հոգի և երանելի սբ. հայրապետն տեառն տէր Մովսէս կաթողիկոսն, զի փայլէր արեգակնանման և լուսաւորէր զՀայաստանեայց եկեղեցիս ուղղափառ վարդապետութեամբ...։ Որ և կրկին նորոգեաց զաթոռն հայրապետական սբ. Էջմիածնայ, և շինեաց ի նմա շէնս բազում ծախիւք, և այլ ևս բազում վանորայս շինեաց, և բազմացոյց զժառանգաւորս եկեղեցոյ, և կարգեաց դպրատունս, և այլ ևս բազում ուղղութիւնս, և յիշատակ անջնջելի եթող տանս Հայոց, որոյ յիշատակ աւրհնութեամբ եղիցի. ամէն։ Բայց վասն մեղաց մերոց փութով չիշաւ լուսաւոր Ճրագ Հայոց ազգիս...։

391բ Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք և ամենայն ուխտի մանկունք եկեղեցւոյ, զի որք կարդալով օգտիք և կամ աւրինակէք ի սմանէ, մի՛ մոռանայք յիշել ի Քրիստոս զյառաջ անուանեալ տէր Զաքարիայն, որ բազում աշխատութեամբ և ջատագովութեամբ պարզեաց և սրբադրեաց զկանոնս, և յաւելեալ ի նոյն ցանկ գեղեցիկ նորայարմար ի վերայ այբուբենի, վասն դիւրաւ դտանելոյ կամեցողին զխնդրելին իւր այլ և զպարկեշտ և զհեզահոգի զկենակիցն իւր՝ Կուլաֆ խադունն, և զբողբոջեալ զաւակքն իւրեանց՝ զԱնդրէասն և զԽաչէոն, զԳասպարն և զԳրիգորն, և զդստերքն՝ զԱննան, զՍուփիայն և զԿատարինէն, այլ և զվերափոխեալ հայրն իւր՝ զտէր Գասպար աւագէրէցն, և զմայրն իւր՝ Անաստասիայն, և ի Քրիստոս հանգուցեալ զեղբայրն իւր՝ զՍտեփանոսն, և միւս զկենդանի եղբայրն իւր՝ զԳաբրիէլն, և զքրտերքն իւր՝ զՈւլիանէ և զՆղիսաբէթ, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալս ի Քրիստոս։

Գրեցաւ սա ձեռամբ ումեմն անարհեստ և թերավարժ գրչիս, բազմամեղ և մեղօք զառածեալ հոգով Մկրտչիս, Ղազարի որդւոյ։ Աղաչեմ, զի գրիս խոշորութեան ե սղալ՝ անց անմեղադիր լինիք, զի կարս այս չափ էր։ Եւ վասն հանգուցեալ ծնողացս Հայր մեր ասասցիք...[35]։

Աւարտեցաւ ի թվիս Հայոց ՌԶԴ (1635) դեկտեմբեր ԻԱ (21). ի փառս Քրիստոսի։

888

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 290

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Խոտանան

322բ Փառք...։ Արդ՝ զայս լուր բանի տէրունական հրամանին ի միտ առեալ տէր Արիստակէս քաջ բարձունին և՝ ետ գրել զքառաջահեան և զմշտաբուղխ տառս քրիստոսեան, որ և կոչի Աւետարան։ Արդ՝ դրեցաւ

[35] Հիշատակարանը համառոտ տե՛ս նաև Ն. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի, էջ 266, ծանոթ. 18։

սա ի թվականութեանս Հայոց Ռ և ՁԴ (1635) ամին, ձեռամբ ումեմն գրչի Յովանէսի, ի յերկիրն Եճանան, ի գեաւղն որ կոչի Խոտանան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, յիշատակ անձին իւրոյ և ծնաւղացն մահդասի Մարտիրոսին և Մէհրշին, և ամենայն արեանառու աղդականաց նորին, որ և աղաչեմ զհանդիպողդ, որ լի բերանով Աստուած ողորմի ասէք մէր Արիստակէս վարդապետին և իւր ծնաւղացն, և գծագրողի սորին Յովանէսի, այլ և ծնաւղաց նորին. և դուք յիշողդ՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

889

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 354 (ԺԴ դար)

Նորոգող՝ Յակոբ

ա

62բ Ընդ նմին և զվերջի նորոգողի տառիս զաստուածասէր խօջա Սարաան, որ վերստին եւ նորոգել և լցուցանել զթերի սորին, և ինձ Յակոբ անարժանիս, որ վերջին գիրս գրեցի[36]։

բ

83ա Յիշեցէք յերկնաթռիչ յաղօթս ձեր զպատուական և զհանճարաշատ զխօջա Սարատն, որ փափագանօք եւ վերըստին նորոգել զանկողոպտելի գանձս, որ կոչի Աստուածաշունչ, յիշատակ անձին իւրոյ և իւր ծնողացն, հօրն՝ խօջա Վալուն, մօրն՝ [Սալո՞]մէին, կենակցին իւրոյ՝ Դուլփարէ, և որդոցն՝ իւրոյ՝ Յոհանին[37] և զամենայն մերձաւորացն, զոր պահեսցէ զսոսա տէր Աստուած...։ Ի թվին ՌՁԴ (1635) նորոգեցաւ ձեռամբ թարմատար Յակոբ գրչի։

գ

190ա Զվերջին նորոգող սորին զբարեսէր [Ս]արատն յիշեցէք ի Տէր[38]։

դ

223ա Նորոգեցաւ և կազմեցաւ Աստուածաշունչ գիրքս ի թվականիս ՌՁԴ (1635), ի վայելումն խօջա [Ս]արա[ա]ին. ամէն։

890

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 518

Գրիչ, ստացող՝ Դաւիթ
Վայր՝ Հալապ

98ա Զնոյնս և ես[39] արտասուաւք գոչեմ և ասեմ փառք քեզ...։ Արդ՝ եղբարք ցանկացող եղէ այսմ աստուածային տառիս Դաւիթ բանասիրի, որ յանուամբս և գործովք ոչ, զի իմ անտեղեակ գոլով գրչութեան ար-

[36] «Վերջին գիրս գրեցի» վերաբերում է Աստուածաշնչի լրացնելուն։

[37] Ձեռ-ում երկու տող դատարկ։

[38] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 265բ, 529ա էջերում։

[39] Սույն հիշատակարանը կազմում է Կիրակոս գրչի 1354 թ. հիշատակարանի շարունակությունը, գրված կարմրագեղով։

հեստի, այլ ըստ փափաքանաց սրտիս և յիշատակի հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց, դրեցի զսա ի թվականիս Հայոց ՌՁԴ (1635), ի գաւառիս ի Տիրեւրիայ, որ Հալապ վերաձայնի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացն։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ օրինակէք, յիշեցէք զմեզ յաղօթս ձեր։ Եւ զոր հայ-
98բ ցեմս, չէ ինչ ծանր, այլ զձեռս ի վեր համբառնալ և զաչս ի վեր // ունել, զշրթունս շարժել և բերանով ասել, թէ՝ Քրիստոս Աստուած քո սբ. ծնողին բարեխօսութեամբն շնչեա՛ ձեռագիր յանցանց զտէր Գաւիթ, քոմեղաւոր ծառայի, և զծնողացն իւր, և զամենայն արեան մերձակայից իւրոց։ Եւ որ առատն է ի տուրս պարգևաց մեզ և ձեզ ողորմեսցի. ամէն։

891
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Երևան, № 703

Գրիչ՝ Գասպար երէց

264բ Փառք...։ Գրեցաւ գիրքս այս ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի Գասպար իրիցի և իմոյս աշակերտի Աստուածատրի, թվին ՌՁԴ (1635), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Արդ աղաչեմ զհանդիպողսդ[40]

892
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ
Երևան, № 1252

Գրիչ՝ Եփրեմ
Վայր՝ Զեթուն

ա

327ա Փառք...
Ցամի մի և քսան յոբելինին,
Եւ Լ այլ ընդ նմին,
Երկ երկրորդ աւելորդին (1635)[41],
Է թվականքս մեծ հային։
Գրեցաւ մաթեան մեկնիչս ի սոյն ամին,
Ի Զեթուն մեծ դղեկին,
Ընդ հովանեաւ Ս. Սարգսին,
Եւ այլ սրբոցս որ աստ [յ]իշուին։
Ի խնդրոյ մերոյս մեծին,
Սբ. և մաքուր կբանաւորին,
Եւ սպասաւոր Տեառն բանին,
Գրիգոր վարդապետին։
Որ է յերկրէն Գերմանիկին.
Գեաւղաքաղաքն ի Զեթունին,

40 Բնագիրն այստեղ ընդհատվում է։
41 Այսինքն՝ [(21×50)+30]+(2×2)+551։

Որդի Վահան տէր վարպետին,
Եւ անուանի գրչագրին։
Է հեղինեակ այնմ գահին,
Եւ վարդապետ բոլոր սեռին,
Եւ ծնընդեամբն ի նոյն տեղին,
Եւ սնընդեամբն այլ ի նմին։
Զոր պահապանն հանուրց գոյին,
Պահէ զնա իւր հովանին,
Եկեղեցւոյ պայծառութիւն,
Ողղափառաց հաստատութիւն։
Եւ ի կենաց այնմ մտին,
Դասաւորէ սրբոց բամին,
Ընդ ընտրելոցն առաջին,
Ընդ վարդապետացն երկոտասին։
Դարձեալ և ես մեղօք ի լին,
Եռաթշուառս ի խաւարին,
Որ Եփրեմ անունս կոչին,
Անուղղագործս ի յարհեստին։
Զի է իմ բնիկս Անտիոքին,
Գեաւդն որ Լիուսարիայ ասի նմին,
Նշտեհացեալ եղէ յերկրին,
Գերմանիկէ գիւղն Զեթունին։
Գծագրեցի ի քարտիսին,
Զմեկնութիւն Մատթէոսին,
327բ Յաւրինակէ մեծ// վարդապետին՝
Տէր Յովհաննէս Եղեսացին։
Ո՛վ վարժապետք Հայոց ազգին,
Տուք ողորմիս իմ ուսուցչին՝
Վարպետ Յոհան քարտողարին,
Եւ ծաղկող այս մատենին։
Նա զմեզ հասոյց յայս արուեստին։
Աշխատանաւք բազում ի լին,
Տէր Քրիստոս, Հայր և Հոգին,
Վարձահատոյց լինի նմին։
Որք հանդիպիք այսմ գրին,
Ցիշէք զմեզ ի յաղաւթին,
Եւ դուք յիշէք յաւրն վերջին,
Ի միւսանգամ գալուստ Փրկչին։

Բ.

129բ Ո՛հ մեղաւք լցեալ գերոյս Եփրեմ անուն,
Ու եղկելոյս թո[ղութիւն]։

893

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2608. տե՛ս նաև Ն. Ակինյան, Մովսէս Դ Տաթևացի, էջ 162

Գրիչ՝ Յովհաննէս
Վայր՝ Շինահայր

ա

264բ *Փառք...։ //Գրեցաւ սբ. գիրս առ ստորոտով ի յերկիրն* Որոտան, *ի գիւղն որ կոչի* Շինահայր, *ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի, յառաջնորդութեան տեառն* Փիլիպոսի, *որ բարեբարեկամ գաւազանաւ և բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերում ժողովրդեան։ Պահեսցէ տէր Աստուած և զաւրացուսցէ ի կամս իւր. ամէն։*

Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս յամի շրջագայութեան արամազեանս տոհմի, հայկականս սեռի ի քսան ու մին յոբելինի, յաւելեալ երեսուն ու չորս թուոյ[42], *որ է ՌԶԴ (1635) թվական։*

Աստանաւր կատարեցաւ հոգիակեցոյց և ցանկալի դրախտս, աստուածադիր ամենունակ առատութեամբ յորմէ գնան գետք...։

265ա *Որոյ այսպիսի ըղձալի փարթամութեանց համահետևեալ երանելի վարդապետն մեր* Արիստակէս, *և ետ գնագրել ըզսա ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ ելիցն յաշխարհէս, քանզի պարունակեալ ունի առ ինքն զմեկնութիւն աղաւթիցն բովանդակ, և զմեկնութիւն սբ. պատարագին, և խրատ վասն ժամոսաց և առանձնութեան, և ի խորհուրդ սբ. եկեղեցւոյ, և այլ խրատք ոգէշահք միանձանց, և պատճառ սբյ. Խաչին, և բարձրացուցէքն ոտանաւոր, և գովեստ հրեշտակապետացն, և թուղթ գաշանց և միաբանութեան։*

Արդ՝ աղաչեմ զամենեսեան մոխրամած երեսաւք, որք լուսաւորիք յայսմ լուսարանէ, յիշեսջիք սրտի մտաւք զեղկելի գծաւղս զՅովհաննէս. *ծնն[ող], զաւժընդակիչ և զյորդորիչ զվարպետն իմ՝* զԱստուածատուր *քահանայս։ Եւ խոշորութեան, և փցուն, և ախմար, և անարհեստ գրոյս աղաչեմ չլինել մեղադիր, զի այս չափ եր կար մեր։ Եւ որ առատն է ի տալն քան ի ճշդելն, տացէ ձեզ...*[43]*։*

բ

20ա *Զյոգնաթշուառ և զտառապեալ գծողս* Յովհաննէս *յիշեցէք առ Աստուած, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։*

գ

128ա *Զստացաւղ և զգծաւղ լուսազարդ մատենիս զտառապեալ ե մեղաւք մեռեալ* զՅովհաննէս *յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ։*

---

[42] *Այսինքն՝ (21×50)+34+551։*

[43] *Սույն ձեռ-ը երկու տարի հետո վաճառվում է. այդ մասին տե՛ս 1637 թ. շարքում։*

894
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ, ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ
Երևան, № 2635

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Խոտանան

ա

261բ Գոհութիւն քեզ ամենասուրբ Երրորդութիւն... զայս աւանդ // հաւաքեցին ի մի զաստուածապարդև աւանդս, զկարգս և զկրանս եկեղեցւոյ հասուցին առ մեզ, առ որում ժամանակի հանդիպի թիւ թուականիս Հայոց ՌԶԴ (1635), ի հայրապետութեանն տեառն Փիլիպոսի և ի թագաւորութեանն շահ Սաֆուն, թոռանն շահ Ապազայ: Արդ՝ ով դասք մաքրագունից և ժառանգաւորք գերաշխարհիկ կայենից, որք հանդիպիք հոգէկեցոյց բժշկարանիս աւրհնութեամբ յիշատակաւ, յիշեսջիք զստացաւդ գրոցս Յովհաննէս արհի եպիսկոպոսն ի յաթոռն Ստաթէի: Որ էր սա ազգական և մաւտ ընտ[ան]ի Մովսէս կաթողիկոսին, որ և ձեռնադրեաց և կացոյց զսայ ի սբ. աթոռս, Աստուած անփորձ և անսասան պահեսցէ զսա յայսմ կենցաղումս, և յետ աստեաց ելանելոյ ընդ սբ. հայրապետացն դասեսցէ. ամէն:

Արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՌԶԴ (1635), ի վիճակս Ստաթէի սբ. առաքելոյ, ԹՌ և ԸԾ (9800) սրբոց նշխարաց, որ աստ կան հաւաքեալ ի մէջ սբ. տաճարիս, նաև ի Գրիգոր վարդապետէ սբ. գերեզմանէ: Եւ ի սոցին սպասաւորէ Յովհաննէս եպիսկոպոսն ստացող գրոցս, և Մեսրոբ եպիսկոպոսն, և այլ միաբան եղբարսն, Աստուած անփորձ և անսասան պահեսցէ զնոսա. ամէն:

Գրեցաւ սա ի երկիրս Եճանան, ի գ[ե]աւղս Խոտանան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ձեռամբ անիմաստ Սարգիս աշխարհականի, որ կամաւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի, հրամանաւ Յովհաննէս եպիսկոպոսին, որ ետ գրել զսա յիշատակ իւր, և ծնաւղացն, և եղբարցն, և ամենայն մերձաւորացն. ամէն:

Ձեռքս փտի և հողանայ,
Մոխիր, փոշի գազաղ դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ:
Թէպէտ խոշոր է շար սորայ,
Այլ դիւր ընթերց ով գիտենայ,
Երբ սովորի և հըմտանայ:
Ով որ զայս գիրս կարդայ,
Աստուած ողորմի մեզ և նորա. ամէն. և եղիցի:

բ

Ո՛ գիր որ մնաս,
Ո՛ գրիչ որ փտիս,
Ո՛ մատունք որ հողանաս,
Ո՛ հոգի որ առ Աստուած դառնաս:

Էաք որպէս էքդ, լինիք որպէս եմքս: Ձեռս երթայ և ձեռաց գիրս մընայ, աւա՜ղ, հազար աւա՜ղ:

Արդ՝ աղերս մաղթանաց առաջի արկանեմ զկնի եկեղոցն և որք ընդ մեզ դեռ կա։ Եւ քանզի իմաստնոց է սա պիտանացի և գիտնոց է հետևի, որք աւգտիք ի սմանէ, մանաւանդ առնոյք ի զաՀազան դեղոց զբժշկութիւն հոգւոյ և մարմնոյ, և այլոց շնորհէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր Յովանէս եպիսկոպոսն, ընդ նմին և յոգնամեղ գրիչս, և Աստուած զձեզ յ[ի]շէ. ամէն։

գ

14ա Զստացաւզ սորա զՅովանէս եպիսկոպոսն, ընդ նմին և անիմաստ Սարգիս գծագրաւղս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն. և եղիցի[44]։։

895

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԷՔԱՆԴՐԻ

Երեւան, № 3387

Գրիչ՝ Խուլթուբէկ սարկաւագ
Վայր՝ (Նոր) Ջուղա

ա

166բ Այլ և զանարժան փծուն գրիչս Խուլթուբէկ, անարժան սարկաւագիս յիշման արժանի արարէք. ամէն։

բ

176ա Եւ զգրող յայսմ գրի,
Ես՝ Խուլթուբէկ մեռաւ ի լի,
Որ ես ի յիմ ժամանակի մաս մի բարի,
176բ Այլ ծուլ կենաւք յասնաւորի,
Կեցայ տխմար ես յաշխարհի,
Եւ յամենայն ժամանակի,
Հաւատեցայ անշահ բանի։
Բայց խնդիր մի կայ յիմ սրտի,
Որ ասէք մի Տէր ողորմի,
Ինձ եղկելի մեղաւորի,
Մեղսայմակարդ Խուլթուբէկի։
Եւ ի Տեառնէ առնու զբարի,
Զոր պատրաստեաց յիւր հայրենի,
Դասէ ի դասս աջակողմի,
Իւր փառք ի հետ իւր սիրելի։
Ռ թվականի ՁԴ յարաբարթի (1635),
Դրեալ եղև բան և գործի,
Թագաւորին Աղէկսանդրի։
Ի Ըսպահան այս քաղաքի,
Յաստուածայխնամ Ջուղա գեղի,
Առ ոտն Ս. Յակոբի,

44 Սույն հիշատակարանը կրկնված է ձեռ-ի 136ա էջում։ Ձեռ-ի 163ա, 172բբ էջերում կան դիտողություններ բնագրի վերաբերյալ։

Ս. Յովանէս, Ս. Գէորգի։
Ի թագաւորութեան Պարսկաստանի,
Քաջ և յաղթող շահ Սոֆի,
Փառք տանք աւրհնենք զՀայր և զՈրդի,
Թէ ինչ բանք սաեղծեալ է աշխարհի։

177ա Փառք Աստուծոյ. ամէն։ Եւ մի՛ մեղադրէք դրոյս և սղ//ալանացս, զի կար մեր այս է։

Գ

180ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ տառս, որ կոչի Աղէքսանդր, ձեռամբ Մեսրոպ գրչի, ի քաղաքս Ասպահան, ի թվականիս մերոյ ՌԶԴ (1635), ի ժամանակին, որ էր հայրապետութիւնն տեառն Փիլիպոսի և թագաւորութիւնն Պարսից շահ Սէֆէ, զոր ցանկացող եղեալ սմայ ոմն Զուղայեցի իմաստուն և հանճարաշատ պարոն Այեսիֆն, և ետ գրել զսայ ի վայելումն անձին իւրոյ և իւրոցն ամենայնի, հաւրն իւրոյ՝ խոշա Եղիազարին, և եղբայրցն՝ Մինասարին, Ամիրասաթին, Բաբին, և մօրն իւրոյ՝ Շահզատէ,
180բ և քրւերացն՝ Խանփարվարին. Փարսախանին։ //Դարձեալ յիշեցէք զխոշա Եղիազարն և զմիւս կողակիցն՝ զՓարիխանն, և զորդին՝ փոքրագոյն Յակոբն, և դստերքն՝ Թարվէզն, Խաթիշայն. ամէն։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք պարոն Այեսիֆն, և կողակիցն իւր՝ Գուլդաստն, և դուստրն իւր՝ Հռանիիանն։ Եւ այլ զոր տէր Աստուած տացէ և՛ յիշողացն և՛ յիշեցելոցն ողորմեսցի տէր Աստուածն ամենայնի որչափ ի մարմնի են, խաղաղական կենօք պահեսցէ, և յետ աստեաց արքայութեան արժանի արասցէ...[45]։

896

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3449

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Ասպահան

ա

378բ Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զգիրքս, որ կոչի[46], ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի մեծ թուականիս Հայոց ի ՌԶԴ (1635), ի հայրապետութեան տեառն էջմիածնայ տէր Փիլիպոսի ամենայն Հայոց, և

[45] Մեր Մատենադարանի ձեռագրաց ցուցակում գրչի հիշատակարան է նշված նաև 174ա էջում եղածը (հտ. Ա, էջ 1001)։ Այդ հիշատակարանում ասվում է, թէ այս պատմությունը «քերթողորէն արարի անխոտորնակ»։ Այն պատկանում է Խաչատուր Կեչառեցուն (տե՛ս և հմմտ. Հ. Տաշյան, Ռատմնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 90), որի ընդարձակ մյուս հիշատակարանը պահպանվել է ձեռ-ի 188ար էջերում, ուր ասվում է, թէ «...Խաչատուր Կեռաշեցի հասանելի մեղսանելիկ մատեամբ և տկար մարմնով ի գիծ. վերջին արքայական գրոցս աշխարհակալին Աղէկսանդրու» (էջ 168ա. տե՛ս Հ. Տաշյանի վերևում նշված աշխատությունը, էջ 86—87)։ Ցուցակում այս հիշատակարանը ևս գրչինն է համարված։

[46] Ձեռ-ի անունը չի գրված, տեղը բաց է թողնված։

առաջնորդութեան Շօշ քաղաքի, որ կոչի Ըսպանան, սրբազան վարդապետին տէր Խաչատուրին: Արդ՝ գրեցաւ սայ ձեռամբ անարժան, և մեղսամած, և փծուն դրչի եզնկացի Յակոբ դպրի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանգ, զի որք հանդիպիք տեսութեան գրոցս՝ կարդալով կամ յօրինակելով և կամ հարևանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զընստացող գրոցս Ջուղայեցի զխոճայ Միքայէլն, և զծնօղսն իւր՝ զխոճայ Խեներին, և զմայրն իւր՝ զՓերսաբերն, և առ Աստուած հանգուցեալ եղբայրքն իւր՝
379ա զՄխիթարն, զԹումանն, և զքոյրն իւր՝ զ//Սուլթանխանն, և զկողակիցն իւր՝ զԱնեանն, և զամենայն մերձաւորսն իւր, որ ստացաւ սայ ի հալալ ընչից և յարդեանց, և եդ յիշատակ զայս գիրքս ի ձեռն տէր Յակոբ սրբայկրօն հաբեղային, և Աստուած զյիշողդ՝ յիշէ ի միւսանգամ գալուստն Քրիստոսի. ամէն։

Բ

146ա ԶԱկոբ գրիչս յիշեցէք, ո՛վ եղբարք, յիշեալ լիջիք միւսանգամ գալըստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

897

ԹՈՒՂԹՔ ՊՕՂՈՍԻ

Երևան, № 3944. տե՛ս նաև ԹՅԶԴ, Ա, № 14, էջ 11

Գրիչ՝ Սարգիս բանասէր
Վայր՝ Շամքորու անապատ

149բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի թվիս ՌԶԴ (1635), ձեռամբ բազմամեղ Սարգիս բանասիրի, ի սբ. անապատս Շամքորու: Արդ՝ աղաչեմ զամենեսեան յիշել ի սբ. յաղօթս ձեր զիս, և զծնօղսն իմ. և Աստուած զձեզ յիշէ իւր արքայութեանն. ամէն[47]։

898

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 4097 (1425 թ.)

Սպասաւոր՝ Մարտիրոս

13 Դաղոսի որդի Մարտիրոս սուտանուն ծայրայ Աստուծոյ սբ. Օետարանին. ամէն։
Թվին ի ՌԶԴ (1635)։

---

[47] Ձեռ-ում երկու հիշատակարաններ կան, որոնք ոչ թե դրչի, այլ ժողովածուն կազմողի գրածն են. դրանք են.

«Գրեցի և կարգեցի ըստ կարի ստիքերովն, զգիրս Պաւղոսի առաքելոյ յաւրինեալ և դիւրահաս ընթերցուածովք, եղբարց մերոց, յորոց ամենեցուն զմեղադրութիւն յանդգնութեանս իմոյ հայցեմ» (էջ 148ար)։

«Ընդաւրինակեցան գիրքս այս ըստ Կեսարացւոց օրինակաց, որ կան յարկեղս գրոց սրբոյն Պամփիլիայ իւրովք ձեռաւք գրեալ» (էջ 147բ)։

899
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 5128. տե՛ս նաև № 6333, Լ 30ա, № 131

Գրիչ՝ Մովսէս

ա

280ա Փառք...։ Արդ՝ կատարեցաւ գիծս, որ կոչի Եւագրի Ը (8) խորհուրդ և այլ բազում ժողովածու, ձեռամբ անիմաստ և ախմար գրչի Մովսէսի, ի թուականիս ՌԶԴ (1635)։

Գրիչ՝ Գրիգոր Վանեցի

բ

1ա Այս գիրքս Բեիլու Ներսէսի ձեռագիրն է և շատ բանք, որ աստ կան նորին Ներսէսի են, որ այս գիրքս Ժ(10) տարի իմ խուցս եկաց, զոր Տէր լուսաւորէ նորին հոգին, ընդ նմին և իմս Գրիգորի Վանեցւոյ վարդապետի։

Ստացող՝ Նիկողոս աբեղայ

գ

280բ Գիրքս այս Գրիգոր վարդապետն երետ ինձ Նիկողոս աբեղայիս յիշատակ. Աստուած զինքն օրհնէ և իւրն պարգևեսցէ զերկնից արքայութիւնն. ամէն։

900
ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան, № 5285 (1437 թ.)

Նորոգող, կազմող՝ Մովսէս երէց

384ա Արդ՝ վերըստին նորոգեցաւ Շարակնոցս ի թուին Հայոց ՌԶԴ (1635), ձեռամբ մեղսամած և փծուն, սուտանուն Մովսէս իրիցու, որ միայն զանունս ուն[իմ և հոգո]վս և մարմնով ի մէջ մեղաց կորուսիմ. վա՜յ ինձ Ռ (1000) բերան։ Յերես անկեալ աղաչեմ ղտեսող սր[48]. տառիս, Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւորիս, և իմոցն ամենեցուն, և ձեզ ողորմի դատաւորն արդար. ամէն։

Կազ[մեց]աւ Շարակնոցս յիշատակ դեռաբոյս Սարգիս կրաւնաւորին, և իւր ծնաւղացն, և ամենայն արեան մերձաւորացն, հաւրն՝ ըռէս
384բ Բագին, և մաւրն՝ Շամամուն, և եղբարցն՝ // Յովանիսին և Փիլիպ[ոսին և] ամենայն արեան մերձաւորացն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Աստուածն մեր ըղտէր Սարգիս կրաւնաւորն...[49]։

---

48 Ձեռ-ում «սր»։ Պետք է լինի «սբ.» հաջորդ բառն այդ է հուշում։

49 Նորից թվում է վերևում հիշված անունները։

901

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՈՆԱՑՈՅՑ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Երևան, № 5348 (1632 թ.)

Հետ. ստացող՝ մահտեսի Յովանէս
Վայր՝ Դաւաան

ա

274ա *Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմի ստացողի սբ. գրոցս աստուածասէր և բարեմիտ մահդասի* Յովանիսին, *և իւր ծնօղացն, հօրն՝* Սահակին *և մօրն՝* Շաղաբէկոյն, *կողակցոյն՝ մահդասի* Խալիճարին, *եղբօրն՝ սրբասնունդ մահդասի տէր* Յակոբին, Սարգսին, Ատոմին, *Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։*

Տէր Աստուած ողորմի մահդասի Խալիճարին, *իւր ծնօղացն, հօրն՝* Իգնատիոսին *և մօրն՝* Խանումին, *վարձս բարեաց տացէ զերկնից արքայութիւն իւրեանց հոգոյն...։*

274բ *Ես՝ աստուածասէր և բարեմիտ ծառայս Աստուծոյ մահդասի* Յովանէսս *գնացի յԵրուսաղէմ յաջողութեամբն Աստուծոյ, և դարձա ի տուն իմ։ Եւ մնացեալ պաշարն իմ ետու և գնեցի զայս ցանկալի աստուածախօս սբ. տառս այժմ, որ կոչի Սաղմոսարան, Տունացոյց և <և> Աղօթամատոյց, և եդի գեաւղաքաղա[ք]ն Դատաան ի դուռն սրբոց զօրավարացն Սարգսի և Թէոդորոսի, անջինջ յիշատակ հոգոյ իւրոյ, և իւր ծնօղացն. «Երանի...»*[50]*։*

Ով ծախէ կամ հեռացնէ ի դրանէ սորա, զանեծքն Կայեն[ի] ///։

Դարձ[եալ յիշեցէք...[51]*։*

Այլ և զքահանայք գե[օղաքաղաքիս մահ]դասի սրբ[ասն]եալ տէր Յակոբն *և [տ]էր* Բարսեղն, *[տէր]* Ա[բր]ահամն: *Աղաչեմ զձեզ, սբ. քահանայք, որ լաւ պահէք և սաղմոս ասէք մահդասի* Յովանիսին *և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի...։*

բ

Ես՝ մահդասի Յովանէսս *ստացայ զսբ. գիրքս ի թուին ՌՁԴ (1635)։*

գ

36ա *Տէր Աստուած ողորմի մահդասի* Յովանիսին[52]*։*

դ

Այլ գրով

75ա *///սն թէ/// օք///էն ///միարան///ն վարդապետօք///ք և ժո///ցէք ///ոհ զտա/// ազգս Հա[յոց] /// ի շարշա[ռանք և ի] հալածա[նք] /// հնարից սա///կն ի պար///հան մի/// անուն ///ղօրօք ի Վա[նայ եր]կիրն և շատ///եց ի վերայ աշ[խարհի]ս Հայոց///ար ի հետ իւր փատշահին, թէ՝ «Ես երթայց զՎան առիցս։ Զինչ արարիչն Աստուած զիւր շար խորհուրդն ի վերայ իւրն դարձոյց։ Եկաւ նստաւ ի Վանայ վերայ. զա[յ]ն չարիքն գործեցին, որ չէր տեսեալ ակն մարդոյ. Աստուածածնի երեքշաբթին եկաւ,*

---

50 Նայ., ԼԱ, 9։

51 Վնասված է և մի մասն ընկած, մնացած մասում հիշում է վերևում նշված անունները։

52 Նման հիշատակարաններ կան նաև ձեռ-ի 74բ, 162ա և այլ էջերում։

մինչև ի նաւասարդի աւրն[53] բազում քրիստոնեայք սպանեցին, բազումք գերեցին, զՎանայ երկիրն՝ զգեղորայքն և զվանորայքն զամէն քակեցին
275բ և քանդեցին, զքաղաքի// այգեստարն զամէն կոտորեցին։ Եւ զգերեզմանատուն Հայոց Ռ (1000) ճօղ նաղմ զարկին, և յոմանց լուայ թէ ԿՌ (60000) է. և բերին հասուցին զնաղմն ի տակն պարըսպին։ Եւ ազգս, որ ի մէջ քաղաքին էին, բազում տանջանաց մէջ էին՝ գիշերն ղբադանն պահել տային և ցերեկն զխանդակն փորէին, այնպէս տառապանք էին որպէս ազգն Իսրաէղի ի ձեռն փարաւոնի։ Քաղց և ծարաւ, մերկ և բոկիկ կային ամենեքեան ի ձեռն իս[մայելացւոցն] ///տոյ/// գութ/// ողիրի ///Մուրբ[ուզան] ///զի ողի/// ելեալ ///և եկաւ ի ///դն պարս/// գալն իմ///աց զինքն ի /// կանկնեցան/// ճակատա///ի կէս աւր/// վերջաւոր// քարշեց///նքն ի սարի///աքն զմահ/// մինչ ի կոտ///բեցին և զն///[54]։

902

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, Մ 5645

Գրիչ, ծաղկող՝ Սաեփանոս Ջուղայեցի
Վայր՝ Վան

ա

Սաեփանոս Ջուղայեցի,
Տունաւ /// ցաաաւ ածի։
Երուսաղէմ յաւժարեցի,
Փութով Պարսից երկրէն ելի։
Աստ Վան քաղաք եկա հասի,
Ես տափով զայս ծրեցի։
Ոսկով պայծառ զարդարեցի,
Սակաւ պաշար ճամփիս առի։
Եւ աղաչեմ հանդիպողի,
Բաբունապետք ընթերցողի։
Եւ ինձ տր[ո]ւփիս տուք ողորմի,
Ցաւակից լերուք մեղաւորի։
Ի թվին հազար ՁԴ (1635)-ի
Վայ է ինձ մեղաւորի[55]։

բ

300ա Փառք...։
301բ Զոր և տեսեալ զայս պատուական գանձս աստուածունակ և ցանկա-

[53] Այս դեպքերը հավանաբար տեղի են ունեցել 1634 թ. ուստի հայերի կոտորածը և գերեվարումը սկսվել է օգոստոսի 11-ից և տևել է մինչև հոկտեմբերի 14-ը։

[54] Հիշատակարանի սկիզբը և վերջը խիստ վնասված է, շարունակությունը ընկած։

[55] Ձափածոն գրված է ձեռ-ի 25բ, 26ա, 27բ, 28ա, 29բ և 30ա էջերում նկարված խորաններում, կապույտ պաստառի վրա սպիտակ ներկով։ Ներկը տեղ-տեղ թափված է և կարդացվում է մեծ դժվարությամբ, իսկ երկրորդ տողը չկարողացանք լրիվ կարդալ։

ցաւ աստուածաբան սբ. Աւետարանիս սրբասէր խոջայ Զիրաք, և ստացաւ զսա ի հալալ[56]։

903
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 6339 (1585 թ.)

Նորոգել տվող՝ Ղազար եպիսկոպոս

257բ Փառք...։ Ես՝ անարժան Ղազար եպիսկոպոս, հոգով սեւացեալ և մտաւքս խաւարեալ. և տգէտ, անարժան Ղազար եպիսկոպոս նորոգել տվի սբ. Աւետարանս, որ հաւրեղբայր Յովանէս եպիսկոպոսն գրեալ էր[57] զսբ. Աւետարանս, և ինքն հանգուցեալ առ Քրիստոս. և ետոյ ես [նոր]ոգել տվի յիշատակ ինձ և ծնաւ[ղաց] իմոց, հաւ[րն] իմոյ՝ Ղուկասին, և [մաւրն] ///Գուզա///արն///ին ///Սահակին ///ն իմ ///եղբաւր ///[Սա]-հակին և ամենայն մերձաւորացն՝ [կեն]դանեաց և [ննջեց]ելոց, մա/// բաժին [կր]եսցէ. ամէն։

Արդ՝ աղաչեմ զձեզ/// հանդիպէք զսայ [կարդ]ալով կամ աւրինակելով և լի բ[երանով Աստուած]ողորմի ա[սա]ց[էք] անարժան Ղազար եպիսկոպոսիս, Աստուած զձեզ ողորմի. ամէն։

Թվին ՌԶԴ (1635)[58]։

904
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6485

Գրիչ՝ Ակոբ երէց
Վայր՝ Արզրում

ա

17բ—22բ լուսանցքում

Յամին ՌԶԴ (1634) եղև շփոթումն ի քաղաքն սբ. Երուսաղէմ, որ Յունք և այլ իւրեանց նմանիքն մոլորեցան՝ Զատիկն ապրիլ ի Զ (6) երին՝ ի Ծաղկազարդին երեկուն. հպարտացան և Հայոց միտ չդրին, որպէս գոչէ Յակոբոս առաքեալն ի մէջ եկեղեցոյ, թէ «Տէր ամբարտաւանից հակառակ կայ[59]»։ Նոքա գոռոզութիւն արին և մտիկ չդրին մինչև որ երկանք այլ աղացին, և շատ չարութիւն արարին, լոյսն չելօ և ինքեանք սևերես և ամաթալից կորեան։ Յետոյ գնացին ի Ստամպալի թագաւորն, բազում ըստակ տուգանք տուին, որ մարդու աղբ չկերան։ Յետոյ անչափ ըստակ տուին մինչև որ Հայոց մէկ քահանայ և Ա (1) դսուլուաթաւոր սպանանել տուին։ Այդ է եղբարք։

---

56 Հիշատակարանից մնացել է «փառք»-ը, պատմական մասը կտրված է և հանված։ 301բ էջի գրի մելանը թափված է, կարդացինք դժվարությամբ և պարզվեց, որ էջն էլ «փառք»-ի շարունակությունն է, ուստի բաց թողեցինք, վերցնելով միայն էջի վերջին տողերը, ուր հիշվում է ստացողի անունը։

57 Իմա՛ ձեռ-ի գրիչը. ընդօրինակությունը կատարվել է «ի յերկիրս Կապան». Ստաթեի վանքում։

58 Տարեթվի միավորը գրեթե չի երևում, նորոգված թղթի տակն է, հետևելով Յուցակի հեղինակներին, սույն հիշատակարանը դրեցինք 1635 թ. շարքում։

59 Թուղթ Յակ., Դ, 6։

Բ

85ա Զծրող սորայ զԱկոբ էրէցս մի՛ մոռանայք միով Տէր ողորմիւ. թվին ՌԶԴ (1635) գրեցի ի քաղաքս Արզրում, ի դուռն Ս. Աստուածածնին. թողութիւն արէք խոշորութեան ե սղալանաց սորա, զի առաշին դիրս է։

Գ

86ա ///[ա]յլ[60] ամենայն արեան մերձաւորքն մեր, և դուք յիշոխք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

Դարձեալ յիշեցէք զհոգևոր քոյրն իմ՝ զԱրզուիանն, որ բազում աշխատութիւն կրեաց վասն մեր[61]։

905

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6626

ա

288բ [Փ]առք...։ Ուստի տեսեալ սորա զայս փրրկական խորհուրդս այս մեծահաւատ մանուկս Ղարիպջան ստացաւ սբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ հօրն և մօրն, և կողակցին՝
289ա Սղիսին, և որդւոցն՝ Թէոդորոս//սին և Յովանէսին, և դստերն՝ Ղամարին, և զոքանչ իմ զԱզամաթ, զկողակիցն իւր՝ զՇուղաւաթ, և զորդիսն՝ զխաչատուրն։ Աստուած ողորմի ասացէք մեզ և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ ըզձեզ, ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ, յորժամ ընթեռնուք զսբ. Աւետարանս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթքս ձեր զհա[ւա]տա[րի]մ տանուտէր զՂարիպջան, և զկողակիցն՝ զՍղիսէն, և զծնողս, և զորդիսն, և զհանգուցեալսն ի Քրիստոս Աստուած, ողորմի ասացէք սոցա հոգւոյն և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Նվիրատու՝ Ղարիպջան

Բ

Ես՝ Ղարիպջանս առի ըզսբ. Աւետարանս ի հալալ վաստակոց իմոց և եդի ի գեղն Ղարաքաջիջ, ի գուռն Ս. Գողգոթային ե այլ սրբութեանց, որ
289բ աստ կան հա//ւաք[եա]լ։ Մի՛ [ոք] իշխեսցէ հեռացուց[ան]ել զսա ի դրանէ սբ. եկեղեցւոյս՝ ո՛չ մերոց և ո՛չ աւտարաց։ Եթէ յանդգնի ոք մերոց կամ օտարաց ծախելով կամ գրաւ գնելով՝ զանէծքն Յուդային և զայլ չարագործացն ի հետ կարգին առցէ. ամէն։

Գրեցաւ յիշատակարանս ի թվականութեան Հայոց ՌԶԴ (1635). և նմա փառք յաւիտեանս. ամէն։

---

[60] Այժմյան 85 և 86 թերթերի միջև եղել է սույն հիշատակարանի սկզբնական մասը, որ հիմա ընկած է։

[61] Գրիչ Հակոբը սույն ձեռ-ի ընդօրինակությունն ավարտել է 1639 թ.։ Այդ հիշատակարանները տե՛ս 1639 թ. շարքում։ Սրանցից հայտնի է դառնում, որ գրիչը հանրահայտ Հակոբ Կարնեցին է։

906
ՃԱՇՈՑ
Երևան, № 7477 (1381 թ.)

Նորոգող, կազմող՝ Զաքարիայ երէց

491ա Աւրհնեալ համագոյ...։ Արդ՝ ցանկացող եղեալ այսմ հոգևոր բուրաստանիս աստուածասէր կինն Եաղուբպիքայն, և ետ զսա նորոգել վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն։ Որ էր սա յիշատակ առ դուռս Ս. Աստուածածնին ի նախնեաց բարեպաշտիցն եղեալ, և էր հնացեալ և քակտեալ կազմ սորա։ Սա ետ վերստին նորոգել զսբ. գիրգս, յիշատակ իւր հոգւոյն և իւր սիրական որդւոյն՝ Ասլանին, որ ի տիս մանկութեան անաւրէն ազգէն Ռուսաց սրախողխող եղեալ մարտիրոսական մահուամբ կատարեցաւ ի Քրիստոս, որ և հայցեմք ի բարերար Տեառնէն...։ Եւ իւր առն Սարգիս ըռէիզին, և իւր սիրելի եղբաւրն խոճայ Խաւչկին, որ սա ևս երիտասարդական հասակին ծովակուր եղեալ բաժտնեցաւ ի մէնջ, նաև իւր ծնողացն և ամենայն զարմիցն...։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՜վ սբ. ընթերցողք, յորժամ կարդայք զյիշատակարանս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր առաջին և վերջին ստացողքն սորա, նաև զտէր Հա[յ]ռապետ քահանայն սպասաւոր սբ. եկեղեցւոյս յիշեցէք ի տէր Յիսուս, որ իւր բարի բնութեամբն և աղերսական խրատովն յորդորեաց զխաթուն Եաղուբպիքան վասն նորոգման սբ. գրոցս։ Տէր Աստուած նմա մասն բարեաց պարգևեսցէ և յերկնից արքայութեանն արժանի արասցէ. ամէն։ Եւ դարձեալ աղաչեմ զսբ. հանդիպողք, զի խնայելով պահիցէք զսա, և մի՜ ոք անաւաղ շօշափեսցէ կամ ի դետնի դնիցէ...։ Նաև զկազմող սորա զՁաքարիայ մեղսասէր երէցս յիշեցէք ի տէր Յիսուս հանդերձ ամենայն զարմօքս։ Եւ Աստուած որ առատն է ի տուրս բարեաց...։

Ի թվին ՌԶԴ (1635)-ին վերստին նորոգեցաւ գիրգս և կազմեցաւ ձեռամբ նուաստ Զաքարիայ իրիցու։

907
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7601 (1382 թ.)

Նորոգող, կազմող՝ Զաքարիայ երէց

321ա Զիմաստուն և զհեզահոգի, բարեմիտ և բարեպաշտաւն, երկիւղած ծառայս Աստուծոյ մահդասի Զրախն, որոյ եբաց Տէր զաչս նորա, լսել տէրունական հրամանին, որ ասէ. «Գանձեցէք ձեզ գանձ յերկինս ուր ոչ գող մերձենա և ոչ ցեց ապականէ։ Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին»[62]. և թէ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան...»[63]։ Նոյնպէս և սա յիշելով զբանս տէրունական, ինքնայօժար
321բ //կամաւք ստացաւ զսբ. Աւետարանս զայս ի յարդարաժողով վաստակոց իւրոց, որ էր գերի անկեալ ի ձեռն թաթարի միոյ։ Ազդմամբ Ս. Հոգւոյն

---

62 Ղուկ., ԺԲ, 33, Մատթ., Զ, 20։

63 Ղուկ., ԺՁ, 9։

հանդիպեցաւ աստուածասէր այրս այս՝ մահդասի Զրաիլն և բաղում ջանիւք ազատեաց զսբ. Աւետարանս ի ձեռաց անաւրինին, և ետ վերստին նորոգել յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր աստուածասէր եղբարցն՝ խոճայ Մինասին և խոճայ Մարտիրոսին, խոճայ Սաֆարին և խոճայ Պապիկին, և իւր ծնողացն, և ամենայն արեանառու մերձաւորացն՝ այժմու կենդանեացն և կանխաւ ննջեցելոցն...։

Թվին ՌԶԴ (1635)-ին վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ե կազմեցաւ ձեռամբ ամենամեղ գրչի Զաքարիայ իրիցու։

908
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 7873 (1414 թ.)

Նորոգող, կազմող՝ Զաքարիայ երէց

213բ Յիշեսչիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր զպարոն Մըսրն հանդերձ ծնողիւքն, զայժմու կենդանիքն և զկանխաւ ննջեցեալքն, որ ետ վերըս-
214ա տին նո//րոգել և կազմել զՄաշտոցս ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և ննջեցելոց, որոց թողցէ Քրիստոս Աստուած զյանցանս նոցա և տացէ զհանգիստն յաւիտենից։ Նաև զտէր Հայրապետ քահանայն զընտրեալն ի յոլովից, որ իւր բարի բնութեամբն և աղերսական խրատովն յորդորեաց և ի գութս աստուածային սիրոյ շարժեաց զժողովուրդս իւր, վասն նորոգման գրոցս։ Եւ ետ կազմել անարհեստ և փծուն գրչիս՝ Զաքարիայ մեղսասէր իրիցուս, ի թվին ՌԶԴ (1635) ամին։

Եւ Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց առ հասարակ, ողորմիսցի յիշողացդ և յիշեցելոցս. ամէն։

909
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8375 (ժամանակ ?)

113բ Թվին ՌԶԴ (1634) Յոյնք ծռազատիկ արարին և Հայք անշարժք մնացին։

Դարձեալ թվին ՌԶԴ (1635) սուլթան Մուրատն գնաց առաւ Յերևան։

910
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Երևան, № 8935

Գրիչ՝ Գրիգոր

ա.

29ա [Ո]վ մանկունք նոր Սիոնի, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զծնող աստուածային բուրաստանիս, և զծնօղս իմ տէր Կիրակոս քահանայն, և Գրիգոր անարժան գրիչս. և Աստուած յիշէ զձեզ ի հանդերձեալ կեանս. ամէն։

Բ

115ա Ցիշատա[կ]է ատենի Սաղմոսարանս տէր Կիրակոսին, և իւր կողակցին՝ Թուրվանամ, և իւր որդոյն՝ Գրիգորին: Ի դո[ւ]ռն Ս. Ամենափրկչին եդին յիշատակ իւրեանց հոգոյն։ Զունի ոք իշխանութիւն ի յաղկականաց իմոց և աւտարաց կամ ծախելոյ կամ գրաւելոյ, կամ ի սբ. ուխտիս դրանէ հանելոյ։ Եթէ ոք անդգնի՝ հանէ կամ գրաւէ կամ ծախէ, զմասն Ցուդայի և զպատիժն Կայենի առցէ. ամէն։

Գ

Ով [եղբարք], թվին ՌԶԴ (1635) ամին կու հայցեմ ի ձիզանէ, որ Հայ[ր] մեղայիւ մի յիշէք և Աստուած զձեզ յիշէ իւր գալուստն։

911
ԱԻԵՏԱՐԱՆ

Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան, Арм. Н. С. № 11
(մանրաժապավեն, Երևան, № 109)

Գրիչ՝ Սահակ
Վայր՝ Բաղէշ

ա

24բ Քրիստոս Աստուած իմ գթած և մարդասէր, խնդրեմ ի քէն վասն աղաչանաց ծնողի քո, թողութիւն շնորհեա՛ սխալանաց բազմամեղ Սահակ ծառայիս քո և յիշեա՛ զիս յաբքայութեան քում, վասն անուան քո[64]։

Բ

230ա Զմեղսամած Սահակ գրիչս յիշեցէք առ Քրիստոս Աստուած։

Գ

284ա Փառք...։

288ա Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղսամած և բազմասխալ Սահակ գրչի, ի քաղաքս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին, ի թվականութեանս արեթական տոհմի ի Ռ և ԶԴ (1635) ամի, ի հայրապետութեան տեառն տէր Փիլիպոս սրբազան կաթուղիկոսի։ Արդ՝ որք հանդիպիք սմայ, յիշեցէք... բազմամեղ գրչիս և ծնողաց իմոց Սահ-
286բ փանոսին և Շահումին, և ամենայն արեանառու մերձաւորաց մերոց//...։

Դարձեալ յիշեցէք առ Քրիստոս Աստուած զաստուածասէր կինն Մարիամ և զծնողսն իւր, զհայրն՝ զՍաֆարն, և զմայրն իւր՝ զԳոհարն, և զեղբայրն իւր՝ զՀայրապետն և զԱռաքելն, և քեռն իւրոյ՝ Մերդինն, և զաւակացն իւրոց, որդոցն և դստերացն. և ամուսնոյն իւր՝ Սեդինն, և հօրն՝ Նուրհադին և մօրն՝ Հրիգին, և այլ ամենայն արեանառու մերձաւորացն, որ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց և ի քրանաշան վաստակոց, և եդ ի Սաքու գեղն, ի դուռն Թուխմանուկ Ս. Խաչին, անշնչելի յիշատակ. զի միշտ ընթերցցի յունկն լսողաց և մխիթարեսցէ զհոգիս հաւատացելոց։ Արդ՝ որք հանդիպիք սմա տեսութեամբ և

[64] Նման մի հիշատակարան էլ տե՛ս ձեռ-ի 26ա էջում։

287ա աւգտիք ինչ իւիք ի սմանէ, յիշեսջիք// ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող տառիս զՄարիամն...[65] և քւերցն՝ Մարգարտին, և Գուլվարդին, և Մերդնին[66]...։

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք առ Քրիստոս Աստուած զՄարիամն և զծնօղս իւր և զամենայն ազգականս նորա, որ ստացաւ զսբ. Աւետարանս կամակցութեամբ Բարսէղ քաջ բաբունապետին՝ առաջնորդի Նահանգիս Համբայ, և եդ ի գուռն Թուխմանուկ Ս. Խաչին, որ ի Սաթու գեղ,
287բ ի ձեռն// քահանայից տէր Աստուածատուր աւագերիցուն, տէր Դանիելին, տէր Առաքելին, Բ(2) տէր Խաչատուրին, տէր Ղազարին, զի պահեսցեն մեծաւ խնամով, և ընթերցցին յունկն աստուածասէր լսողաց, ի վայելումն անձանց իւրեանց և որք գայցեն յետ իւրեանց....։

912
ՇԱՐԱԿՆՈՑ

Լայդրն, № 346 (մանրաժապավեն, Երևան, № 465), տե՛ս նաև Rapp. Mac., *XXII, № 68, էջ 157*

Գրիչ՝ Միքաէլ Թոխաթցի
Վայր՝ Կ. Պոլիս

354բ Փառք...։ Գրեցաւ Շարակնոցս թվին ՌԶԻ (1635), ի մայրաքաղաքս Կոստանդնուպալիս. ձեռամբ Թոխաթցի Միքաէլի։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յաւրինակելով մէկ Հայր մեղայիւ մի յիշեցէք զՄիքաէլ գրիչս, և ծնաւղսն իմ, և զկենակիցն իմ՝ զհանգուցեալն առ Քրիստոս, և զՔրիստոստուրն, որ էր ԺԵ (15) ամաց, զի տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս. և ես մնացի չոր գլուխ միաւոր։ Վայ ինձ Ռ (1000) բերան։ Եւ Աստուած ղյիշողդ՝ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

913
ՃԱՌԸՆՏԻՐ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 750

Գրիչ՝ Զաքարիայ
Վայր՝ Մէյտան

208բ Փառք...։ Եւ արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ եղկելի գրչիս Զաքարիայի, ի յերկիրն Շատիոյ, ի նոր քաղաքն որ կոչի Մէյտան, ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսին և Ս. Ամենափրկչին, ի յառաջնորդութիւն Աղթամարայ տեառն Ստեփաննոս կաթուղիկոսին ամենայն Հայոց, զոր տէր Աստուած անսասանելի և հաստատուն պահեսցէ ի վերայ հալածեան տոհմիս, ի թուականիս Հայոց ՌԶԴ (1635) ամին, ի դառն և ի նեղ ժամանակի, որ վասն բազում մեղաց իմոց բազմացան այլազգիքն և նեղեն հարկապահանջութեամբ զազգս մեր...։ Ի խնդրոյ տանուտէր Միրաքի։

---

65 և 66 Նորից թվում է վերևում հիշված անունները։

914
ԹՈՒՂԹՔ ՊՕՂՈՍԻ
Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Բ, № 513 (1247 թ.)

Նորոգող՝ Ստեփանոս երէց
Վայր՝ Նորս

427 Վերստին// նորոգեցաւ Պօղոսս ձեռամբ Ստեփանոս իրիցու, ի գիւղս Նորս[67], ընդ հովանեաւ սրբոցս որ աստ կան հաւաքեալ, ի վայելումն քաղցրաբարոյ և կակղասիրտ և արտասուաթորն որ հանապազ հեղու առաջի Սբ. Խաչին Մանուէլ արհի եպիսկոպոսին Սաղմոսավանու, զի և գիրքս Սաղմոսավանու է վախմ անջինջ։ Նաև վայելող սորա յիշեսցէ զնորոգողս և նորոգել տուողս զՄանուէլ եպիսկոպոսն և նորին հոգեկիր Յովանէս զայրի երիցոյն, որ տղայ տիօք որոշեցեալ կենակցէն, ապաւինեցաւ սբ. ուխտս Սաղմոսացս և յարեցաւ արհի եպիսկոպոսն[68]։ Թվին ՌԶԴ (1635)։

915
ԱԻԵՏԱՐԱՆ
Տիրայր վարդապետ, № 93 (1486 թ.)

1731 Մալումի որդի Քարիմ Միրզայիսան, Յէրապետ, Ոսկան, Բէկիջան, Յարութէն, Բարամի որդի Ղազազ, Յակուբ, Գուլփէրիկ. Թվական Ռ և ԶԴ (1635). Միրզայիսան ծառայս Աստուծոյ. ամէն[69]։

916
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆԱՐԵԿԱՑ, ՏՕՄԱՐ
Երևան, № 6333/116

29ա Անմեղադիր լերուք, այս երկու երեք տետրն առանց խազի գրեցի, թողութիւն արարէք ինձ, եղբայրք իմ և հայրք, վասն Աստուծոյ համար։ Գրեցաւ սբ. գիրս ի Թվականիս Հայոց ՌԶԴ (1635), ի վայելումն սրբասէր տէր Մովսէսին։

917
ԱԻԵՏԱՐԱՆ
Կ. Յուզբաշյան, UB, B—105

Գրիչ՝ Թումայ քահանայ
Վայր՝ Դաշտ

ա

323ա ...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Թումայ քահանայի, որդւոյ Աւետիս քահանայի՝ ստացողի սորին, անիմաստ և ախմար գրչի և

67 Ղ. Փիրղալեմյանը ծանոթագրում է. «մերձ յԵրևան». իմա՛ Նորք։

68 Իմա՛ Հովհաննէս երեցը։

69 Ավելի համառոտ մի հիշատակագրություն էլ տե՛ս նույն էջում, «Բաբամի որդի Եղնազարը, ծառայ Աստուծոյ. ամէն. Թվական ՌՀԸ (1629) ամին, ապրիլ Ա (1)»։

անընդունակ իմ դոլով յարուեստ դրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարզևեաց մեզ մարդասէր Հոգին Սբ., բազում աշխատասիրեալ իմ ի սմա, զրեցի անարժան ձեռօք իմովք յընտիր և ի ստոյգ յօրինակէ, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ և անհանգստութեամբ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ժամանեաց մեզ, ի թվականիս մերում՝ ՌՁԴ (1635), ի կաթուղիկոսութեան հակազան սեռի տեառն Ստեփանոսի Աղթամարցոյ, զոր տէր Աստուած անսասան և անսա[յ]թաքելի պահեսցէ զաթոռ հայրապետական և յետ աստեաց ընդ ԻԴ (24) քահանայիցն դասեսցէ. ամէն։

Եւ գրեցաւ Աւետարանս այս յերկիրս Մոկաց, ի գեղս որ Դաշտ կոչի, ձեռամբ սուտանուն և մեղսամած գրչի Թումայի և Յովանիսի, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ հայրապետի և Կեցնայ սբ. Աւետարանի, ի վայելումն անձին տանուտէր Աս[տ]ուա[ծա]տուրին ստացողի, որ զսայ դրեցի յորջորջ անուամբն Հանէսին. ամէն[70]։

Բ

324ա Ուստի և տեսեալ զսորայ անճառ փրկագործութեան խորհուրդ պատուական տանուտէր Աստուածատուր, որ ետ գրել զսբ. Աւետարանս յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Մարտիրոսին և մօրն՝ Ազգին, կողակցին՝ Դալալին[71]

Ստացող՝ Աստուածատուր

Գ

Ես՝ Աստուած[ատ]ուրս տուի զսբ. Աւետարանս գրել յիշատակ Հանէսին, հօրն՝ Մարտիրոսին և մօրն՝ Ազգին, կողակցին, որդոյն՝ Նաւասարդին, Սարգսին, Հանէսին, Նղաշին, Շաղաւաթին, Աբրահամին, Ջանփաշին, Խոցադեղին, Մարտիրոսին, Ղազարին, Դալալին, Մլէանին, Խլղաթին և դեռաբուս Խլղաթին, Մեղուշին և Գաւեարին, Ազգին, տէր Աւետիսին, Շայումին, Սահակին. Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

918

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՄԻՆՋ., № 42

Գրիչ՝ Գասպար քահանայ

Վայր՝ Թորսկան

ա

5ա Փառք...։ Արդ՝ այսպիսի լուսազարդ տառիս ցանկացող եղև մեծաւ փափաքմամբ աստուածասէր պարոն խաւճա Պետրոսին։ Եւ զիմ տեսեալ զփափագ և զսէր նորա, զոր ունէր առ հոգևորսն, ի միտ առեալ զբանն Եսայեայ որ ասէ «Երանի...»[72]։ Վասն այն [յ]ուսոյն և տէրունական հրամանին սերտ սրտիւ և բոլոր հաւատով ետ գրել զսբ. գիրքս, յիշատակ

[70] Հիշատակարանը համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 753, էջ 209ա։

[71] Ցուցակի հեղինակի հաղորդմամբ շարունակությունն ընկած է։

[72] Եսայ., ԼԱ, 9։

բարի հոգոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Վէլիճանին և մօրն՝ Շուշանին, և եղբարցն՝ Կիրակոսին, Սուֆիազին, Մանասին, Զբլանին, Կիրակոսի որդի Գասպարին, և Պետրոսի հօրեղբայր՝ Նուրիճանին: Որ և բարի յիշատակ...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ղխօճա Պետրոսն, և զիւր կողակիցն՝ Աննայն, և զիւր որդիքն՝ զՊողոսն, զՄինասն, և զՅովանէսն, և դստերքն՝ զՀռիպսիմէն, զՄարիամն, զՇուշան ծաղիկն, զնորաբոյս և դեռաբողբոջ
57 զՈսկիտատիկն, յիշեցէք և Աստուած// ողորմի ասացէք. ամէն։ Դարձեալ [յ]իշեցէք ի Քրիստոս ղխօճա Պողոսն և զիւր կողակիցն, և զիւր որդի Յակոբճանն, որ և Աստուած երկարակ[ե]աց արասցէ և վայելել տացէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ղխօճա Պետրոսն և զիւր հանգուցեալ որդիքն՝ զՀէրապետն, զՍահակն, զՈսկին և զՅովճանն յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք զխօճա Պետրոսն, և զիւր պապն՝ Ազիճանն և զԳայիանէն, մօրէ պապն՝ Ջավալի, և խանիկն՝ Ծամոսկի, և խօճա Պետրոսի զոքանչ Մարիամն, յիշեցէք և լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք նոցա. ամէն։ Եւ արդ՝ ես յետինս... Գասպար անարժան քահանայս...։

Արդ՝ շնորհօքն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին ի աւարտն հասի և կատարեցի զսբ. դիրքս ի դուռն սբ. եկեղեցոյս, որ կոչի Ս. Աստուածածին. և ողորմութեամբ սորին և աշողութեամբն Աստուծոյ կատարեցի զսբ. գիրքս և զաստուածախօս տառս ի քաղաքս Ըսպահան, որ կոչի Շաւշ յեզր Նարնղալային, որ ասի ի բառս Պարսից Թորչսկան, ի մեծ թրլականիս Հայոց Ռ և ՁԴ (1635), ի հայրապետութեան տեառն Էջմիա[ծն]ին տէր Փիլիպպոս կաթուղիկ[ոս]ի ամենայն Հայոց, և առաջնորդի մե[ծոյ] քաջ բարունապետի տէր Խա[չա]տուր արքեպիսկոպոսի, որ Տէրն մեր անփորձ պահէ զնա ի յայ[լո]ց սեռից, և ի թագաւորութեանն այլա[զգ]աց շահ Սաֆուն: Արդ՝ աղա[չե]մ զամենեսեանդ զմանկունսդ [սբ.] եկեղեցոյ, զի որք հանդիպիք [սբ.] գրոցս կարդալով կամ օրինակելով զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լրնուք, և՛ խոշորութեան, և՛ սխալանացս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Եւ զիս զանարժանս և զզառածեալս մեղօք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, և Աստուած ողորմի ասացէք Գասպար անարժան քահանայիս, և ծնողաց իմոց Պաղտասար քահանայի և Թուրվանդին, և եղբօրն, և քւերցն իմոց, և կենակցին, և որդոց, և դստերաց իմոց, և ամենայն ազգականաց իմոց։

Դարձեալ երեսս ի գետինն դնելով աղաչեմ, յիշեցէք զիս զանարժան Գասպար երէց գրիչս և զյուսուցանող վարպետն իմ զԽիզանեցի Մեսրոպ դպիրն, որ ուսոյց ինձ զարհեստ գրչութեան և բազում աշխատանք ունի ի վերայ իմ, զոր տէրն մեր Յիսուս Քրիստոս զփոխարէնն հատուցանէ միոյն հարիւրապատիկ, հազարապատիկ, և բիւրապատիկ։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զծաղկող և զկազմող սբ. գրոցս զՄես-
58 ռոպ դպիրն, և զիւր որդի Մարտի[ր]ոսն, և զիւր//ծնողսն, և զկենակիցն, և զորդիքն, և զդստերքն, և զամենայն ազ[գ]այինքն, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

Արդ՝ ես Դուսպար մեղօք ի լի,
Ըզվա (31) ամն լրմնեցի,
Զամէնն ի հետ մեղաց կացի,
Ու զմահու օրն չյիշեցի։
Զօրն ուտէի և ըմպէի,
Ես ծոյլ և թոյլ ամենայնի,
Աչխարհս ծով էր ։ ես ծփի,
Միթէ իմ Տէրն ինձ ողորմի[73]։

Բ

Ողորմեա ստացողի գրոցս խոջայ Պետրոսին և ծնողացն՝ Վէլիջանին և Շուշանին, և որդոցն՝ Պատրոսին, Մինասին և Յովանիսին, կարդացողաց[74]։

919

ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, I, № 683ա (1353 թ.)

Նորոգող՝ Խաչատուր երէց

530 Զվերջին ստացաւ սբ. Աւետարանիս զխաւճա Պալին Ըստամբալցի, որ ըստացաւ զսբ. Աւետարանս և ետ իւր հալալ ընչիցն և էառ զսա յիշատակ հոգւոյն և իւր ծնողաց հոգւոյն՝ հաւրն և մաւրն և կողակցին։ Արդ՝ ես խաւճա Պալիս իմ կամաւ և յաւժարութեամբ առաջի Աստուծոյ շնորհեցի զսբ. Աւետարանս իմ խոստովանահաւրն՝ տէր Դաւթին, տէր Աստուած բարով վայելել տացէ։ Եթէ ոք իմոց կամ աւտարաց դատախազ լինի՝ ահեղ դատաստանին պատժի և սևերես լինի ահեղ ատենին։

Դարձեալ յիշեցէք զտէր Դաւիթն, որ նորոգել երետ զսբ. Աւետարանըս, յիշատակ իւրն և խաւճա Պալուն...։ Ի թվականիս ՌԶԴ (1635-ին նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ սուտանուն Խաչատուր իրիցի։

920

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մշեվ, V, № 1656 (1634 թ.), տե՛ս նաև Աղավնունի, Այցելուք էջ 374

Հետ. ստացող՝ Յոհանէս վարդապետ

49.5 Յիշատակ է է (7)-ն իմաստասիրաց գիրգս Յովանէս վարդապետին և իւր ծնաղացն, հաւրն՝ Մկրտչին և մօրն՝ Թարվեզին, և եղբարցն՝ Գրիգորին, Զաքարին, Մարգարին, հաւրեղբարց և քուերաց Հագրավարդին, Կոհսարին և ամենայն յարեան մերձաւորաց...։

Դարձեալ գնեցաս գիրքս ի ձեռանէ Խարբերդացի Յոհաննէս աբեղայիցն Ճերմակ ծովուն ատակն՝ ի քաղաքն որ կոչի Պանտուրմայ. թվին ՌԶԴ (1635)։ Ի հայրապետութիւն տէր Փիլիպոս կաթաւղիկոսին։ Ո ոք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ

[73] Ցուցակի հեղինակը հայտնում է, որ կա ևս վեց քառյակ, բայց չի բերված։
[74] Տե՛ս նման մանր հիշատակարաններ ևս, չվերցրինք։

աղօթս ձեր, զմեղապարտ Յովանէս վարդապետս, որ յանուամբս եմ միայն և գործաւքս ոչ...։

921
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՏՁԵՊ, VI, № 1753

Գրիչ՝ Ալիքսանոս սարկաւագ

83 Զմեղուցեալ ծառայիս ծառայիցս Աստուծոյ և զմեռեալ հոգիս և
ի սրտէ խոցեալ անարուեստ գրչիս, թերէվարժ Ալիքսանոս սարկաւագիս,
84 որ զանունն ունիմ և զգործսն ոչ, ան//մեղադիր լերուք, ո՛վ ուսումնասէրք,
զրիս սղալանացն կամ գրաշարութեանն, զի կար մեր այս է։

Ի թվին ՌԶԴ (1635), ի սուրկունն սուլթան Մուրատին, ի մեր մեծ նեղութեան ատենին, որ միտս էր կորեր ու խելքս էր մոլոր։ Ով ոք զմեզ ի Տէր յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ։

922
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՁԱԲ, № 171

Գրիչ՝ Ալիքսանոս սարկաւագ

Ա

850 Յիշատակ է Շարակնոցս մահտեսի Սրապիոնին հոգուն և իւր կողակցին՝ մահտեսի Խաթունին, և իւր եղբօրն՝ Պաղոսին, և իւր հաւրն՝ Սիմաւնին, որ փոխեալ է առ Աստուած, մօրն՝ հաճի Պուլային, յիշատակաց անյիշատակաց, ի դուռն Ս. Քառասնիցն և Ս. Աստուածամօրն, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Բ

851 Փառք...։ Կատարեցաւ Շարակնոցս ձեռամբ մեղսաներկ սղալոտ, անարհեստ գրչի՝ անարժան Ալիքսանոս սարկաւագի, որ զանունն ունիմ և զգործսն ոչ, ի թվականութեանս Հայոց ՌԶԴ (1635)։

Արդ՝ ստացաւ զսայ արմատն աւրհնութեան մահտեսի Սրապիոնն, ի
852 հալալ վաս//տակոցն և ետ գրել վասն յիշատակի համար, Կիրակոս սարկաւագին անհամեմատ գրչի, մինչև ի կէսն գրեց և զմնացած զկէսն. զպակասորդն գրեցի, թէպէտ ոչ կարացի նմանեցնել. միայն անմեղադիր լերուք, զի կար մեր այս է և յիշեցէք զաՀրմաստ գրչակս միով Տէր ողորմ[եայ]ի զհայրն իմ՝ զՊասլիկն, զփոխեալն առ Աստուած, զմայրն իմ՝ զՄարիամն և զամենայն երեխտաւորս և զուսուցիչս և զարեան մերձաւորս, և Աստուած յիշողացդ ողորմ՛եսցի, և յիշելոցս իւր միւսանգամ գալրստեանդ. ամէն։

923
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՎԼ, № 380

Գրիչ՝ Աւետիս երէց
Վայր՝ Լիմ

885 *Փառք... Ուստի և տեսեալ զսորայ անճառ փրկազործութեան խորհուրդ, բարի և հաւատարիմ տանուտէրն* Յովանէս *և եղբայրն իւր՝* Աւետիս *և ետ գրել զծաղկազարդ ե լուսափթիթ, հրաշափառ սբ. Աւետարանս, ի հալալ և յարդար ընչից իւրեանց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, հաւրն՝* Մարտիրոսին *և մաւրն՝* Շանթիգարին, *և կողակցին իւր՝* Նօնօֆարին, *և որդոցն՝* Մարտիրոսին *և* Սէթին, Աւետիսին *և իւր կողակցին՝* Մրւաթին, *և որդոյն՝* Բաղդասարին, *և դստերն՝* Հռիփսիմին
886 *և ամենայն ազգին։ // Դարձեալ Աստուած ողորմի ասացէք...*[75]*։ Եւ ինձ եղեռնագործ և թարմատար գրչի՝ անարժան, սուտանուն* Աւետիս *երիցու և ծնողաց իմոց՝* Ներսէս *քահանային և* Գուլիստանին, *և եղբօրն իմ՝ մահդասի* Սարգսին, *և իմ որդոցն՝ տէր* Ներսէսին *և* Սամուէլին, *և ամուսնոյն իմոյ՝* Գուլիվարդին, *և դստերն իմ՝* Եփրոսինին, *և ամենայն ազգին իմոյ, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ուղիղ սրտիւ, և Աստուած ասողացդ ողորմեսցի. ամէն։*

Գրեցաւ սբ. Աւետարանս ի ծովապատ և յաստուածապահ մենաստան Լիմ *յորշորշեալ, ի թվականիս Հայոց ՌԶԴ (1635), ի գուռն Ս. Գէորգա[յ] զաւրավարին, ի հայրապետութեան տեառն* Փիլիպոսի, *և* Ախթամարայ *կաթողիկոսին՝ տէր* Ստեփանոսին, *և առաջնորդի սբ. ուխտիս՝* Ստեփանոս *վարդապետի, վերակացութեամբ հաւրեղբարցս և* Պետրոս *արհեպիսկոպոսին։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Յովանէսին *և ծնողացն, հօրն՝*
887 Մարտիրո//սին *և մօրն՝* Շանթիգարին, *և կողակցին՝* Նօնօֆարին, *և որդոցն՝* Մարտիրոսին *և* Սէթին, *և կողակցին՝* Գուլվարգին, *դստերաց* Խանգայգին, Ռեհանին, Նազլուին, Էքարին, Գուհարին, *և որդոցն՝* Խաչօին. Յովանէսին, *կողակցին՝* Գայվայրին, *որդոցն՝* Սէթօին, Յարութիւնին, Խաչօին, Էքարին, *որդուն՝* Մարտիրոսին, *կողակցին՝* Տիլպարին, Մարթային, Խանումին, *դստերն՝* Շուշանին, Մարթա[յ]ին *դստեր* Եղիսին, *որդուն՝* Մանուկին. *յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք ուղիղ սրտիւ, և Աստուած ասողացդ ողորմեսցի. ամէն...*[76]*։*

---

[75] *Կրկնում է վերոհիշյալ անձնանունները։*

[76] *Կրկնվում են նշված անձնանունները, իսկ վերջին հատվածը կապ չունի վերոհիշյալ հիշատակարանի հետ, ուստի չվերցրինք։ Նույնը համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 752, էջ 208բ—209ա։*

924
ՇԱՐԱԿՆՈՑ
ՏՅՁՄՎ, № 375

Գրիչ՝ Յովանէս Տիւրիկցի

828 Գրեցաւ եղանակաւոր տառս ի թվին ՌՁԴ (1635), ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի Նախիջևանցի, ի թագաւորութեանն սուլթան Մուրատին, ի մարտ ամսոյ Ժ (10), աւրն երեքշաբթի։ Բայց, գրեցաւ սա ձեռամբ Յովանէս դպրի մականուն Տիւրիկցի կոչեցելոյ, ի լաւ և ի յընտիր աւրինակէ Խլկցի։ Ո՛վ եղբայրք, ով որ հանդիպիք այս Շարակնոցիս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զմեղուցեալ Յովանէսըս և զիմ ծնաւղըս՝ Պետրոս անուն էրէց և զիմ մայրըս՝ զՇամամբն, և զեղբայրքս՝ զՍարգիսն, զԳևորգն և զՍտեփանոսն, և ըզքոյրս զԱննան, ե զհանգուցեալ եզ///

925
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՈՅՁՄՎ. № 701 (1591 թ.)

Փրկող՝ Կարապետ
Վայր՝ Գլակայ վանք

228 Ի թվին ՌՁԴ (1635) Իսմայէլացւոց թագաւորն ելաւ ի Ստամպօլսոյ և եկեալ էառ զԷրէվան և անցեալ գնաց ի Թաւրէզ և անտի դառնալն բազում նեղութիւն եղև աշխարհիս մերում, վասն մեղաց մերոց, զի գրիւ մի հաց ի խուրիշ ելաւ և գրեցին զԱյսմաւուրքս յերկրէն Մշու և իշուցին ի Բալու. և ես՝ Կարապետս ի նոյն գաւառէն Տարօնոյ քարոզութեամբ եկի պատահեցայ և հազիւ առի և վերստին դարձուցի ի դուռն Ս. Կարապետին, որ Գլակայ վանք ասի։ Ո՛վ որ լաւ պահէ և խնամ տանէ զվարձս ի Քրիստոսէ առցէ և Ս. Կարապետն մեզ և ձեզ բարեխաւս լիցի աստ և ի հանդերձեալն. ամէն։

926
ՀԱԻԱՔԱԾՈՒ

ՔՅՁՁՎ, № 198 (1803 թ.). տե՛ս նաև «ՀԱ», 1933 թ., էջ 332—333, Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 311, Ջմմառ, № 500, 98—99։

Գրիչ՝ Մկրտիչ Լէճցի
Վայր՝ Հալապ

478 Արդ՝ վայելողք սբ. գրոցս և արանցս պատմութեան՝ յիշեսջիք սիրով ի Քրիստոս զվերոյ նշանակեալ պատուական հայրն Ստեփաննոս[77]

[77] Այս հիշատակարանը անմիջական շարունակությունն է 1273 թ. հիշատակարանի, որը ձեռ-ի հետ գրվել է «ի հրամանէ հօր Ստեփաննոսի... սղասաւորէ ս. ուխտիս Ականց անապատիս»։ Այս Ձեռ-ի վերջին ընդօրինակողը՝ 1803 թ. ընդօրինակում է նաև 1273 և 1635 թթ. հիշատակարանները։

և զամենայն եղբայրութիւն սբ. ուխտիս, զմեծ և զփոքր, զքահանայ և զկրօնաւոր ի մշտամատոյց յաղօթս ձեր. մանաւանդ յիշման արժանին ստացող զընդհանուր տիեզերական նամակին սրբոյն Ներսէսի. զիշխանն իշխանի որդին պարոն Սֆանտար Զալապին, զի յոյժ փափաքանօք և յօժար և ջերմեռանդ սրտիւ ետ զսա գրել յիշատակ իւրն և ծնողաց նորին, հօրն՝ պարոն Սանոս Զալապուն և մօրն՝ Շանմելէք խաթունին, և իւրայնոցն ամենեցուն։ Իսկ ես թարմատարս և տկարացեալս ի բնաւին բարեաց, գծագրեցի զընդհանրական նամակս սրբոյն Ներսէսի ի թուականիս Հայոց ՌԶԴ (1635), ի մայրաքաղաքն Բերիայ, որ այժմ կոչի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, Ս. Քառասունք եկեղեցեաց, ի հայրապետութեան Կիլիկեայ նահանգին տեառն տէր Սիմէոն կաթուղիկոսին և բռնակալութեանն Տաճկաց սուլթան Մուրատին, ձեռամբ յոգնամեղ և եռաթշուառ զառածեալ անձին, անհմուտ և անարհեստ, տրուպ և բծուն գրչիս Լէճցի Մկրտիչի։ Աղաչեմ զձեզ, ղվայելողք սորին, յիշեցէք զվերոյիշեալ ղյիշման արժանին պարոն Սֆանտար Զալապին ի սբ. և ի մաքուր աղօթս ձեր, ընդ նմին և զիս զանարժանս և զծնողսն իմ, որ և գուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ...։

927

ԱԻԵՏԱՐԱՆ

Rapp. Mac., *XXII*, № 55

Գրիչ՝ Ստեփանոս

ա

135 [Փ]առք... զոր և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, բարեմիտ և սրբահաւատ զխաչա Յակոբն, զոր ի վաղուց հետէ ցանկայր սբ. Աւետարանիս և ետ գրել ջերմեռանդ սիրով և փափաքանաւք, յիշատակ հոգոյ իւրոյ և ծընողացն՝ Յովհան[ն]էսին և Հոիփսիմոյն, և եղբարցն՝ Աթանասին, Գրիգորին, և քեռն իւր՝ Սավզիկին, Խանտատիկին, և կողակցին՝ Հոիփսիմոյն։

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվաբերութեանս Հայոց ՌԶԴ (1635) ամին, ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Փիլիպպոսին, ի առաջնորդութիւն մայրաքաղաքիս Ճուղայոյ տէր Խաչատուր արհեպիսկոպոսի, ի թագաւորութիւնն Պարսից շահ Սէֆուն, ի առաջնորդութիւն մարմնաւոր իշխան խոջայ Նազարին, ի վայելումն խաչա Յակոբին, որ ետ ընծայ սբ. Աւետարանս ի դուռն Ս. Յակոբայ եկեղեցոյն։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք քահանայից, յիշել ի Տէր զստացող սբ. Աւետարանիս զխաչա Յակոբն, որ ետ գրել զսբ. Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իւրոց, զոր Աստուած բարի վայելել տացէ աստ և ի հանդերձեալն, յերկնից արքայութեանն արժանի արասցէ. ամէն...։

Արդ՝ երեսս ի գետին դնելով աղաչեմ յիշել զիս՝ զանյիշելի զանուն Ստեփանոս մտօք խաւարեալս, գործով ուրացեալս, աչքով կուրացեալս,
136 զիս և զվարդապետն //իմ զտէր Խաչատուր արհեպիսկոպոսն Քրիստոս հատուցէ զվարձս իւր միոյն հազարապատիկ։

Դարձեալ աղաչեմ յիշել զիս՝ Ստեփաննոս փանաքիս և զծնաւղսն իմ՝ զՄարտիրոսն, զՍօլթանն. յիշողք՝ յիշեալ լինի ի Քրիստոսէ։

Դարձեալ յիշեցէք զխօջա Յակոբն, որ ետ գրել զսր. Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց. ոչ ոք չունի իշխանութիւն՝ ո՛չ յիւրոց և ո՛չ ազգականացն. զի իւր յօժարութեամբն ետ գրել և ոսկով զարդարել, և եդ ի դուռն Ս. Յակոբայ, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղացն. յիշեցէք և Աստուած ողորմեա ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Բ

137 Դարձեալ աղաչեմ յիշել զխօջայ Յակոբն և զհայրենի պապն՝ Նուրի և զհանիկն՝ Դաստագուլն, յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն։

Դարձեալ յիշեցէք զխօջայ Յակոբն, և ըզմայրն իւր՝ զՀռիփսիմի, և զմայրենի պապն իւր՝ զՄիքայէլն և մայրենի հանիկն իւր՝ Ուստիանէն, և քեռի Յակոբին, զխօջա Իսրայէլն և խօջայ Իսրայէլին պարոն որդի Սարատն։ Աստուած իւրեանցն բարի վայելել տացէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

928

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 118

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

167 Փառք..., որ ետ կարողութիւն տկար և մեղօք տատանեալ մեղսամած գրիչ Յովանիսի հասանել ի յաւարտ սբ. Աւետարանիս և խնդրոյ և բարեմիտ, հեզահոգի, քրիստոսայսէր և ուղղադաւան պարոն Վարդանի, որ զստացաւ զսա հալալ և արդար վաստակոց անչինչ յիշատակ իւրն, և ծնողացն իւր, և ամենայն մերձաւորացն՝ հնոց և նորոց։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքս Շօշ, որ կոչի Ասպահան, և ի գ[ե]աւղս Ջուղայ, և ի հայրապետութեան ժամանակաց տէր Փիլիպպոս Հայոց կաթողիկոսի, և մերում հայրապետ և առաջնորդ, քաջ բարունի և իմաստուն Խաչատուր վարդապետի։ Սոցին ժամանակսն գրեցաւ՝ ի թուականիս Հայոց ՌՁԴ (1635) ամի։ Գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ անպիտան և անարժան Յովանիսի, թաբաւր ամենայն բարեաց, որ անուամբս եմ և գործովս ոչ։ Զձեզ աղաչեմ...։

Դարձեալ յիշեցէք զպարոն Վարդանն, և զծնօղսն իւր, հայրն՝ Ամիրբէկն և մայրն՝ Խանբէկն, և որդիք սոցա Վարդանն, Յակոբջանն, և Կորքն, և դստերսն՝ Սամարքուին և Աննային, յիշեցէք...։

Բ

Սուտանուն Յովհաննէսս յիշեցէք, որ անուամբս եմ, այլ գործովս ոչ։

929
ՃԱՌԸՆՏԻՐ
ՏԵՐԱՎՋ, № 228

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ (Նոր) Ջուղայ

ա

328 ...Խաթունն և զդուստրն իւր՝ Սուլթան խաթունն, և զխսմաթքարն իւր Գոհարն, յիշեցէք լի սրտիւ...։ Արդ՝ գրեցաւ Ճառս ի սմին աւուր, ի թվին Հայոց ՌԶԴ (1635), ի քաղաքն Ասպահան, ի գեաւղաքաղաքն Ջուղայ, որ Աստուած անփորձ և անսասան պահէ մինչև ի կէտ կոչման իւրոյ։ Ի թագաւորութեան շահ Սէֆուն, և ի հայրապետութեան տէր Փիլիպոսին, և արքեպիսկոպոսութեանն տէր Խաչատուրին, և առաջնորդութեան մարմնաւոր կենցաղոյս խօջայ Նազարին, որ Աստուած զիւրեանքն արժանի արասցէ ի յարքայութեան. ամէն։ Եւ դարձեալ յիշեցէք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղաւք մեռեալ Մարտիրոսս, փցուն գրիչս, երեսս ի դետին դնելով աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք, յորժամ հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք զիս զանարժանս, և զվարպետն իմ՝ Գրիգոր եպիսկոպոսն, և Աստուած ողորմի ասացէք։ Եւ դարձեալ յիշեցէք զիս՝ զանարժան գրչիկս, զծնօղսն իմ, զհայրն իմ՝ Յակովբն և զմայրն իմ՝ Սահիպսօլթանն, և զեղբարսն իմ՝ հանգուցեալ///[78] Աղաբէկին և զորդ///[79] Աւետիկն, Սահակն, Ղազարն, և որք յիշեն զմեզ ի սբ. աղօթս իւրեանց՝ յիշման արժանի լինին, և ի Քրիստոսէ պսակին. ամէն. եղիցի, եղիցի։

Դարձեալ կրկին յիշեցէք զմեղաւոր էրտամն, որ բազում վշտաւք և տառապանաւք ի մէջ յերկար ցաւին հոգս տարաւ, և գրել ետուր զաստուածախաւս կտակարանս և զայլ ամենայն ընթերցմունս, որ ի սբ. դիրս կան հաւաքեալ, լիցի բարեխաւս ի դատաստանի ահեղ հրապարակին էրտամին հոգոյն, և իւր ծնողացն, և ամենայն արեան մերձաւորացն, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

բ

Դարձեալ յիշեցէք Թազուհի, Եղիսաբեթն, և զիւրեանց որդիքն՝ Լէլի, Թաջլում, Անայի, Մանուէլն, Եփրիթէն, միուս՝ Անայի։

գ

Արդ՝ ի յայսմ նեղ և ի նուրբ ժամանակիս, և ձգեալ ողորմութիւն ի սիրտ մեղաւոր էրտամին, որ ստացաւ ի սմին աւուրս, որ կոչի Ճառ, ի հալալ ընչից իւրոց։ Աղաչեմ զձեզ, հայր սուրբք, յիշեցէք ի բարին զստացող սբ. գրոցս էրտամն, որ փափակեցաւ ի սէր աստուածատունկ և ծաղկերանկ բուրաստանիս, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, և եթող յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց։... Յիշեցէք զմեղաւոր էրտամն, և զկողակիցն իմ՝ Խանփարին և Սիրունն, և զորդին իւր՝ Հայրապետն, և զորդիքն իմ՝ Բ(2) Սահակն, և զմեծ պապն իմ՝ զտէր Խաչատուրն, և

[78] և [79] Տեր-Ավետիսյանի հաղորդմամբ առաջին դեպքում մեկ բառ, երկրորդ դեպքում մեկ տող եղծված է։

զկողակիցն իւր՝ Մէնիփաշէն, և զորդիքն իւր՝ Ղազարն, Պարխանն, տէր Մխիթարն, Ներսէսն, Փիրամզէն. և դուստրն՝ Սղմէրն, Ոսկմէրն և միւս մեծ պապն իմ՝ Մատթէոսն, և զորդին իւր՝ Բաշխումն, և զկողակիցն իւր՝ Ղադամխութիւն, և զդուստրն՝ Հռիփսիմէն, Ամէնիփաշէն, և զհայրն իմ՝ Պայխանն, և զմայրն՝ Ղմբրիշասն, և զեղբարքն իմ՝ Աստուածատուրն, մահդասի Փանոսն, և կողակից Հապիպն, Մէրտատիկն, և զորդիքն իւր՝ մահդասի Մարութէն, Աղաբէկն, Բաղդասն, և դստերքն իւր՝ Ղատամխութիւն, Հրոիփսիմէն, Փարէզխանն, և զթոռն իւր՝ Ֆրանկին, և զքւերքն՝ Շուշանն, Նապաթն, Սինաիաշէն, Խաթունն:

դ

Եւ զՄէրտատիկն, և դուստր իւր Ղա[դաւ ?]մղութիւն, և Պզտիկատիկն, Փարէզխանն, և զիւր հարսն՝ Փէրիխանն, և իւր որդին՝ Յակոբջանն, Թագունի[ն], Ախսայբերթն, Աղամշանն, Ջանիխուն:

930

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 244

Գրիչ՝ Սիմէօն քահանայ
Վայր՝ Ասպահան

382 Փառք... Արդ գրեցաւ սբ. դիրքս, որ կոչի [Յ]ա[յ]սմաւուրք, ի թուականութեանս Հայոց ՌԶԴ (1635) ամի, ի մայրաքաղաքն Պարսից, որ կոչի Ասպահան, ի հայրապետութեան ազգիս հայկազնեաց սբ. աթոռոյն էջմիածնեա տեառն Փիլիպպոսի խարազնազգեաց կաթողիկոսի, և ի հովուապետութեան մերոյ գիւղաքաղաքիս Նոր Ջուղայոյ տէր Խաչատուր արհի եպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի, զոր տէր Աստուած անփորձ և անսասան պահեսցէ. ամէն։ Եւ ի թագաւորութեան Պարսից շահ Սէֆուն՝ թոռին շահ Ապասի: Արդ՝ խնդիր եղև այսմ տառիս և վարդապետութիւն սբ. բուրաստանիս, սիրով և փափագանօք, բարեմիտ և աստուածասէր խօճայ էվատփաշէն, և ետուր գծագրել զսա ձեռամբ Սիմէօն քահանայի, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճա էվատփաշէն, և զհայրն իւր՝ զՄուրատփաշէն, և զմայրն իւր՝ Ոսկիտատիկն, յիշեցէք...։ Կրկին անգամ [յիշեցէք] ի Քրիստոս զխօճա էվատփաշէն, և զկողակիցն իւր՝ զՄիրտատիկն, և որդին իւր՝ զՂազարն, և զդստերքն
383 իւր՝ և՛ //զՆօղլումն և՝ զԲանարն, յիշեցէք... Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճա էվատփաշէն և զկողակիցն իւր՝ զՄէրտատիկն և զդստերքն իւր՝ զՆօղլումն և զԲանանին և զՆօղլումին դուստրն՝ զՄարեամն, և զհանգուցեալն առ Քրիստոս՝ զՇամսուղամարն, և զԲանարին դուստրն՝ Բատիշտէն, և զհանգուցեալն որդիքն՝ զՎաթանն, և զՍոսկանն, յիշեցէք...։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զխօճա էվատփաշէն, և զկենակիցն իւր՝ զՄէրտատիկն, և զհանգուցեալ դստերքն իւր՝ Դուլդաստէն և զՍօլթանփաշէն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօճա Բաղդասն, և զծնողսն

իւր, հաւրն՝ զխօճա Վաթանն և զմաւրն՝ զԴաստագուլն, և զքոյրն իւր՝ զՄէրուատիկն, յիշեցէք, և տէրն մեր Յիսուս Քրիստոս զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս խօջա Աղազարն, և կողակիցն իւր՝ զՕղլանն, և զդուստրն իւր՝ զԴաստագուլն, և զորդին իւր՝ զդեռաբուս և զնորարոզբոջ զպարոն Բաղումն։

931
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
ՏԵՐԱՎՋ, № 407

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Կ. Պոլիս

010 Փառք...։ Արդ՝ գրեցաւ Հարանց վարքս ի Կոստանդինուպոլիս, ձեռամբ մեղաւոր և անարժան Եսայի գրչիս, թվին ՌԶԴ (1635)։ Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զխոշայ Միքայէլն և զծնօղսն իւր՝ զԽէրին և զՓիրսաբերն, որ ստացաւ զսա ի հալալ ընչիցն և արդեանցն, ի վայելումն անձին իւրոյ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն։

932
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՅՁՎՍ, 1 № 47. տե՛ս նաև Ղ. Ալիշան, «Սիսուան», էջ 186

Գրիչ, ստացող՝ Յոհան
Վայր՝ Զեթուն

ա

252 Փառք... Գրեցաւ սա ի մեծ թուին ՌԶԴ (1635), ի յերկիրս Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքս ի Զեթուն, ընդ հովանեաւ Սրբոյ Լուսաւորչին և մօրն լուսոյ Ս. Աստուածածնին, այլ և սրբոցս որ աստ կան ի յօգնութիւն Հայոց տոհմին, ձեռամբ տրուպ անձին՝ Յոհան նուաստի։ Ի խնդրոյ[80]։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս սրբազանից, որք հանդիպիք սմա սաղմոսելով կամ օրինակելով կամ թէ հարևանցի տեսանելով, յիշեցէք յաղօթս ձեր և Աստուած ողորմի ասացէք ինձ անիմաստ գրչի և՛ ծնօղաց և՛ եղբարց և՛ երախտաւորաց իմոց, մանաւանդ ուսուցչաց մերոց և տառիս ստացողին, և ամենայն արեան մերձաւորաց մերոց։ Եւ տէր Քրիստոս որ առատն է ի տուրս բարեաց, զեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն։

բ

Գրեցաւ սա ի թվին ՌԶԴ (1635)։ Զմեղօք զառածեալ գրիչս Յոհան մեղսամած, յիշեցէք յաղօթս ձեր, ո՛վ հայրքդ իմ և եղբարք, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

---

80 Բ. Սարգիսյանը հաղորդում է, որ այստեղ երեք տող դատարկ է թողած (էջ 252), ըստ երևույթին, ձեռագիրն ընդօրինակվել է վաճառելու համար, բայց չի հաջողվել։

933
ԱԻԵՏԱՐԱՆ
ԹՅԺԴ, Բ, № 79

Վայր՝ Լաճուռ

52 ...Կատարեցի զսր. Աւետարանս ի մեծ թվականիս Հայոց Ռ և ՁԴ (1635), ի յերկիրս Հն[դ]կաց, ի մայրաքաղաքս Լաճուռ, որ է աթոռ թագաւորացն Հնդկաց... ի ժամանակս տեառն Մովսէսի կաթուղիկոսի ամենայն Հայոց և յառաջնորդութեան Ջուղայու Խաչատուր... վարդապետի, և թագաւորութեան Պարսից շահ Սէֆուն և Հընդկաց թագաւորին շահ Ջըճանին, որ է սա յազգէն Նետողաց և է սայ Թ (9)-երրորդ.... ի գաղանէն՝ Լանկ Թամուրէն, աւարտեցաւ տէրունական բանս ի յերկիրս Հնդկաց... վասն տապոյ և տօթոյ լինէր, որ անշնչանայի ժամս Բ (2) կամ Գ (3)...

934
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄԻՔԷՋ, «էջմիածին», 1965 թ., ժ, № 240

Ծաղկող, նորոգող՝ Սաեփանոս Ջուղայեցի

Վայր՝ Սպահան

ա

63 ...Գրեցաւ թվին ՌՁԴ (1635)։

բ

Փառք...։ Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զաշխատող սբ. Աւետարանիս Սաեփանոս անարժան էրէցս Ջուղայեցի, որ բաղում աշխատութեամբ զարդարեցի զսա՝ ոսկով և լաջվարդով, և առաքեցի զսա ի յերկիրն Վասպուրական, ի քաղաքն Վան, մօտ ի վարդապետն Սաեփանոս, ի յանապատն Լիմ, զի ստացէ զսա. և նա տուեալ զգին սորա Մե (55) ղուռշ։ Եւ զկնքահայրն իմ, որ տարաւ զսա, ոչ է տուեալ զսա ի նա, այլ առեալ զսա և մտեալ ի նաւ և գնացեալ ի Դասվան, զի տարեալ վաճառեսցէ ի յերկիրն Հոռոմոց աւելի գնով. և յարեաւ հողմ ի ծովոյն, ի վերայ նաւին, և նոքա տարեալ նաւն ի յԱրտամետ, և ելեալ ի նաւէն և գնացեալ ի յԱրտամետ գեօղն, զի ննջեսցեն և զվաղն երթիցեն։ Եւ առաւօտըն ելեալ տեսին, զի նաւն ընկղմեալ էր ի մէջ ծովոյն։ Եւ զաւուրս հինգ բաղում աշխատութեամբ և ջանօք հանեալ ի ցամաք, և տեսին, զի ամենայն ինչ ապականեալ, և զսբ. Աւետարանս ի նոցա մէջն անարատ մնացեալ, և զմիայն կողմն էր ապականեալ, և զգիր և զծաղիկս այս է, զոր տեսայք եղբայրք։ Եւ դարձեալ բերին Սպահան, մօտ առ իս. և ես առեալ քակեցի և կրկին կապն նորոգեցի, և առեալ բերի զսա ի Յամադան, և տեսեալ զսա բարեմիտ, աստուածասէր Ասլանն փափականօք ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողացն իւրոց, հօրն՝ Մխիթարին, մօրն՝ Խանաղէ, և զկենակցին՝ Լարիպին։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, որք հանդիպիք ի սմա, յիշեցէք ի յաղօթս ձեր զԱսլանն, և զմիւս կենակիցն իւր՝ Մարիամն, և զդուստրն իւր՝ Ար///

935

ԱԻԵՏԱՐԱՆ

ՀՍՍԳ, № 48. տե՛ս նաև «ՀԱ» 1925 թ., էջ 476, հիշտ. № 48

Ստացող՝ Գօզալ
Վայր՝ Թաղասեռ

ա

42 Փառք...։ Գրեցաւ Աւետարանս այս ի յերկիրս Աղվանից, ի գա[ւա]ռս Դիզակայ, ի գեաղս որ կոչի Թաղասեռ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և Ս. Կուսին Քրիստոսի Աստուծոյ մերոյ վայելէ։ Մանաւանդ ստացո-
43 ղիս սբ. // Աւետարանիս Գաւզալն, որ ստացաւ զսա հալալ ընչիւքն իւր, զյիշատակ իւր և ծնողացն իւրոց, հայրն իմ՝ Պողոսի և մայրն իմ՝ Խանումի և հոգևոր որդին իմոյ՝ խարազնասգեստ սրբասէր և բարեմիտ Մինաս քահանային և միւս հոգևոր որդին իմոյ՝ Եարումին, որ էր փեսայ, և դուստր իմ Մարիամին, Թամամին և Շահումին և միւս դուստր իմ Խանումին, որ հանգեաւ ի Քրիստոս. ձեռամբ Մելքիսեդ իրիցի և հոգևոր եղբօր իմ միաշունչ հեզահոգի Կիրակոս քահանային, որ միատեղ սկսաք և աւարտեցաք սբ. աստուածախօսս ի փառս. ի թվին ՌԶԴ (1635), իշխանութեան շահ Սափուն, որ էր թագատրեալ ի է (7) ամի։ Ի այն ժամանակն գրուեցաւ, որ Ռասուսմ խանն գնաց ի Վրաց տուն, գերեաց, շատ նախշիր գործեաց. եկն դարձաւ գնաց ի Վան քաղաքի վերա, ոչինչ չկարաց անիլ[81]։ Դարձեալ ասեմ ձեզ, ո՛վ հանդիպողք սմա կարդալ[ով] կամ օրինակելոյ, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր ի փառս Քրիստոսի։ Ինչ մարդ որ այս յիշատակարանս կտրէ կամ ձեռն տայ՝ ՅԺԸ (318) հայրապետացն նզով իլնի...։

բ

Ջստացողի սբ. Աւետարանիս զԳաւզալին, հայրն իւր՝ Պողոսին և մայրն իւր՝ Խանումին, և դստերն իմոյ՝ Մարիամին, Թամամին, Շահումին, Խանումին, որ հանգուցեալ էր ի Քրիստոս, մանաւանդ յիշատակարանս գրողի, որ է Պաղասսար սարկաւագի դպրի, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ առատ ողորմութեան. փառք յաւիտեանս. ամէն։

Ի թվին Հայոց ՌԶԴ (1635)։

936

ԱԻԵՏԱՐԱՆ

KarHB, № 16

Վայր՝ (Նոր) Ջուղայ

12 Փառք... Խոց սրտիւ և լալոտ աչով սկսա[յ] զսբ. Աւետարանս, ի դառն և դաժան ժամանակիս, ի մեծ թվականիս Հայոց ՌԶԴ (1635) ամին, ի մայրաքաղաքն Ջուղայոյ, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոս

[81] Մինչև այստեղ համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 749, էջ 208աբ։

կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի յառաջնորդութիւն մերոյ աթոռոյ սբ. ուխտիս Խաչատուր արհեպիսկոպոսացս (sic), և ի թագաւորութեան Պարսից երկրի շահ Սէֆոյն[82]։

937
ԱԻԵՏԱՐԱՆ (1457 թ.)
«Հոյս» 1905 թ.

Նորոգող՝ Յովանէս, Դանիէլ աբեղայ

288 Դարձեալ վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ սուտանուն Յովանիսին և տէր Դանիէլ աբեղային, ի թվին ՌԶԴ (1635), ի ||| եւ ի դարձեալ մահ տարաժամ ու սով կա ի մէջ աշխարհիս, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Ով որ ղողորմի ասէ, Աստուած իւրն ողորմի. ամէն։

938
ԱԻԵՏԱՐԱՆ
Աղավնունի, Այցելուք, էջ 278—279

Գրիչ, ծաղկող, ստացող՝ Մելքիսեդեկ Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

...Ոմն քահանայ անուամբ կոչեցեալ Մելքիսեդեկ Մոկացի, որ և գործովս հեռի եմ յամենայն բարութեանց, ցանկացայ աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր վաղուց փափաքէի ապաւինելով ի մարդասիրութիւն Աստուծոյ և ի սրբոց բարեխօսութիւն։ Արդ՝ սկսայ մեղսաթաւալ անձամբ և անարուեստ ձեռաւք և մեղսամած մատամբս ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յարութեան, և լուսաբուղխ սբ. գերեզմանին Քրիստոսի, և կափարիչ սբ. վէմին, և սբ. բանտին, և սբ. Յակոբայ գլխադիր սբ. գերեզմանին, և սբ. Յակոբայ Տեառնեղբաւր գերեզմանին և սբ. տաճարին, և սբ. Հրեշտակապետին և այլ ամենայն սբ. տնօրինականացն Քրիստոսի Աստուծոյ, որ աստ կան հաւաքեալ ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի թվականիս Հայոց ՌԶԴ (1635) ամին, ի հայրապետութեան սբ. աթոռոյս Երուսաղէմ քաղաքիս Տեառնեղբա[ւ]րն Յակոբայ՝ տէր Գրիգոր արքեպիսկոպոսին... որ ստացայ սբ. Աւետարանս յարդար վաստակոց, որ բազում աշխատութեամբ և տառապանաւք գրեցի և ծաղկեցի, յիշատակ բարի հոգւոյ իմոյ և ծնողաց, հաւր Բաշարթին և մօր Ինախիշին, և եղբարցն՝ տէր Յովհաննէս կրօնաւորին և Շէրբէկին, և կողակցւոյն իմոյ՝ Գուլաղին, և իմ որդւոյն՝ տէր Յովհաննէսին և կողակցին՝ Փաշին և դստերն՝ Գուլաղին և իմ քերց Ջանաղին և իւր որդւոցն, և Գօգալաշին և իւր որդւոցն, և Փաշին և իւր որդւոցն, և իմ հաւրեղբօրն՝ Աւետիսին և իմ մեծ պապին՝ Սինամերիմին...։

---

[82] Տպված է «Սէֆոյն»։ Տե՛ս նաև «Բազմավէպ», 1886 թ., էջ 187, հիշտ. № 35, ուր հրատարակիչը նշում է նաև գրչի անունը՝ Ղազար։

939

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

Թորոս աղբար, Ա, էջ 293

Հետ. ստացող՝ Յովանէս վարդապետ

Յիշատակ է Ղուկասու մեկնիչս, որ կոչի Քարոզգիրքս Յովանէս *վարդապետին և իւր ծնաւղացն, հաւրն՝* Մկրտչին *և մաւրն՝* Թաւրէզին, *և ողբարցն՝* Գրիգորին, Զաքարին, Մարգարին, *հաւրեղբարցն և քուերացն՝* Հարգաւարդին, Գոնարին, *և ամենայն արեան մերձաւորաց՝ մեծի և փոքու առ հասարակ ամենացուն. ամէն։ Դարձեալ գրեցաւ գիրքս ի ձեռանէ* Գրիգոր *վարդապետին,* Ճերմակ *ծովուն ատակն՝ ի քաղաքն, որ կոչի* Կոստանդնուպոլիս, *ի թվին ՌՁԴ (1635), ի հայրապետութեան տէր* Փիլիպպոս *կաթողիկոսին։ Ով ով հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղապարտ* Յովանէս *վարդապետս, որ յանուամբս՝ եմ միայն և գործովս ոչ...*[33]։

940

ԱՒԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 414—415. տե՛ս նաև Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, էջ 205

Գրիչ՝ Սիմէոն
Վայր՝ Բաղէշ

Գրեալ ի քաղաքն Բաղէշ, *ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին... ի թվականիս Հայոց ՌՁԴ (1635), ի հայրապետութեան տեառն* Փիլիպպոս *սրբազան կաթողիկոսի. յիշատակ տէր* Պետրոս *կրաւնաւորի... ձեռամբ* Մեսրովբ *դպրի... յիշեցէք...* Ազամաք... *և* զԹաքուլն *միակեաց և* զՆասրն... *և զտէր* Պետրոս *աբեղայն, որ տեսեալ զպայծառութիւն սորա ցանկացաւ ստանալ զսա յիշատակ իւր... զարդարեցաք զսբ. Աւետարանս տնաւրինականաւք և համաբարբառով, և ճարտրվարաւք* (sic) *և ոսկւով գեղեցկացուցաք... տէր* Պետրոս *ստացաւ զսա, [և] յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս... և ես՝ տէր* Սիմէոն *ծերունի, որ տեսի զմահ որդւոյն իմոյ և զկեանս աշխարհի ունայն համարելով, զի թէ յայսմ աշխարհի չուրախացաք ընդ որդեկին մերում, որ ժառանգ էր մերոց հայրենեաց, ի հոգևորն բուռն հարաք. վասն յիշատակի ինձ և որդւոյն իմոյ՝* Պետրոս *աբեղային...։*

---

[33] № 920 հիշատակարանում նշված ձեռ-երը գնվել են տարբեր մարդկանց ձեռքից, ուստի տարբեր հիշատակարաններ են, թեև գնողը միևնույն մարդն է։

941
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Պ. Նաթանյան, Արտօսր Հայաստանի, էջ 23—24. տե՛ս նաև
Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Բ, № 512, էջ 426

Գրիչ՝ Ղազարոս
Վայր՝ Կ. Պոլիս

Փառք...։ Արդ՝ գրեցաւ պատմութիւնս, որ կոչի Յայսմաւուրք ի քաղաքին Կ. Պոլիս, *ի*[84] *դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, թվին ՌԶԴ (1635)*[85], *ձեռամբ մեղսաթաւալ և փծուն գրչի* Ղազարոսի: *Արդ՝ աղաչեմք զհանդեպողիդ այսմ Յայսմաւուրքիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր ըզտէր* Գէորգ *արքեպիսկոպոսն, որ էր հաւատարիմ և բազմերախտ ըսպասաւոր այսմ քաղցրահայեաց Ս. Աստուածածնայ վանիցս և յառաջնորդ գիւտ գրոց բոլոր երկրին, որ և կոչի* Բալու, *որ էառ զայս արեամբ ներկեալ սրբոց վկայիցն պատմագիրս, որ ասի Յայսմաւուր և եդ ի դուռն Տեառնածին սրբոյ տաճարին Հավատու վանուց յիշատակ իւրն՝ և իւր ծնողացն։ Կրկնակի յիշեցէք յարժանաւոր յաղօթս ձեր զԲալվցի* Գէորգ *առաքինագործ առաջնորդ վարդապետն և վերատեսուչ վանացս Փրկչածնի, որ իբր ի հիմանէ նոր նորոգեց զսբ. տունս բազում վշտակրութեամբ և աշխատասիրութեամբ իբրև հարազատ որդիս առ ծնողսն իւր։ Յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք սոցա և Քրիստոս վարձահատոյց լիցի. ամէն։*

---

[84] Տպված է «և»։
[85] Սխալմամբ տպված է «ՌԶԴ»։

942
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 10382

Գրիչ՝ Յունան երէց
Վայր՝ Ուսկուտար

156բ Փառք...։ // Արդ՝ գրեցաւ Մաշտոցս ձեռամբ յոգնայմեռ և մեղսայ-
սէր, յետնեալ... մահտեսի Յունան երէց յանարժանիս, յոր անունս կայ,
գործս ոչ։ Եւ յայտնեալ գրչիս Ընկելցի, որ կոչի Ղանղալոյ գիւղ։ Երեսայ-
թաւալ և հառաջմամբ սրտիւ աղաչեմ զսրբասնեալ ընթերցողդ վասն
մարմնոյ և յարեան Քրիստոսի... յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր ըղձընաւղս
իմ. ը[զ]Մուրատն և զԿուլիստան, դուս[տ]ր և որդիք իմ, քուր և եղբարք
157ա իմ , որ փոխեալ կան առ Աստուած, և իրիցակին // իմ որ աշխատեր ի
նշայստայերելն և յնշայելն Քրիստիս։ Եւ որ ողորմի ասէ, յիշէ ի Քրիս-
տոս...։

Գրեցաւ ի թիւականիս Հայոց ՌՁԵ (1636), յունվարի Ա (1) աւարտ
եղաւ, աւրն ուրբաթ, Ուսկուտարն, ի դուռն Ս. Կարապետի, ի թագաւորու-
թիւն սուլթան Մուրատին, է[ն?] ժամանակ, որ սուլտան Մուրատն ի
ղըզլպաշին վերայ պատերազմի[1] էր գնացեր, անթիւ հեծելով եկաւ ի
157բ թախտն հասաւ, է[ն?] տարիս։ է[ն?] տարի սուրկուն եղաւ Ըստ//ամ-
պալ։

Ղայիսարցի Գրիգոր վարդապետն վաղճանեցաւ ի Ղալաթիայ, ի
դուռն Ս. Լուսաւորչին։ Այսուհետև Զաքարէ վարդապետն աթոռն նստաւ,
ոսկէբերան կաթողիկոս Կոստանդս Հայոց սբ. հայրապետին։

943
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ՄԻՆՉ., № 23 (1361 թ.?)

32 Գրեցաւ այս գիր յիշատակ, եկաւ Սոչով քաղաք, առ դուռս Ս. Խաչին,
ի թագաւորութեան Նորորդիրին (?), Պարնովսքի Մոնիլան, ի թվական
Հայոց ՌՁԵ (1636), փետրուարի Ը(8), օրն չորեքշաբթի, ձեռամ[բ] ան-
արժան, հող և մոխիր, ի քահանայութեան տէր Ղուկաս և տէր Վարդան.
Աստուած զիւրեանց պահէ, անբորձ և անսասան. Աստուծոյ գոհութիւն։

---

1 Ձեռ-ում «պատերմազիլ» ձևով։

944
ՆԱՐԵԿ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 775 (1305 թ.). տե՛ս նաև № 6273, էջ 567ա

Նորոգող՝ Մկրտիչ երէց
Վայր՝ Պատիժուան

209ա Յիշեցէք զվերջին ստացող սբ. զրոց[ս], որ կոչի Նարեկ, զԱբրահամ պարոնտէրն, և իւր արեան մերձաւորքն, և այլ աշխատաւորսն, որ եռուն նորոգել ձեռամբս մեղաւոր... Մկրտիչ իրիցոյս, ի յերկիրս Բասենի, ի գիւղս որ կոչի Պատիժուան, ի դուռն Ս. Աստուածածնի և Ս. Կաթողիկէ եկեղեցւոյս, ի թուին ՌԶԵ (1636), ի դառն և ի դիժար ժամանակիս, որ սուլթան Մուրատ թագաւորն ելաւ ի Բիզանդիոյ քաղաքէն, եկաւ ի վերայ
209բ Արարատեան գաւառին յԵ//րևան քաղաքն էառ, գնաց ի Թաւրէզ աւիրեաց, յուլիս ամսոյ ելն քաղաքն էառ և դարձաւ։ Զաշխարհս վրդովեաց, որ Վանայ երկիրն, գարին սոմառն ԺԵ (15) ղուռուշ եղև։ Դարձեալ Պարսից շահն եկաւ անչափ հեծելաւք ի վերայ Երևանայ քաղաքին, դեկտեմբերի ամսոյ ԺԵ (15) քաղաքն ծեծեց մինչև ի մարտի ամսոյն ԺԵ (15)՝ առաւ զքաղաքն։ Այսպէս դառն և դիժար ժամանակի հասաք, վասն իմ ծովացեալ մեղացս է մրրիկս այս[2]։

945
ՄԱՅՐ ԺԱՄԱԳԻՐՔ

Կամենից, էջ 187

Գրիչ՝ Անտոն քահանայ

Կատարեցաւ Պրակք Առաքելոցս ձեռամբ Անտոն կրօնաւոր քահանայի, ի թվին ՌԶԵ (1636), յունիս Ա (1), օրն չորեքշաբթի։ Զմեղապարտ և զանպիտան գրիչս՝ Անտոն կրօնաւոր՝ աղաչեմ յիշել ի տէր Աստուած, միով Տէր ողորմեալիս. և Աստուած զյիշողսգ՝ յիշէ։

946
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մուրմար, II, № 89

Գրիչ՝ Կարապետ եպիսկոպոս
Վայր՝ Եղիազարու վանք (Մուշ)

161 Փառք...։ Ծառայս անպիտան և անարժան Կարապետ գրիչս գրեցի զսա՝ յիշատակ բարի, Սասնոյ տէր Դաւթին, և իւր աւրհնեալ ընտանեացն, տէր Սրապիոնին և տէր Մարկոսին, և կանանց նոցին՝ փոխեցելոցն առ Քրիստոս, և ծնաւղաց նոցին ամենեցուն առ հասարակ եղիցի նոցին

[2] Ղ. Փիրղալեմյան ծանոթագրում է. «Սոյն Մկրտիչ երիցու երկու հատուած տարեգրութիւն ի նոյն Նարեկէ». և բերում է հետևյալը. «Ի թուին ՌԶԲ (1633) զսբ. էջմիածնայ գլուխ նորոգեաց՝ կրկին լուսաւորիչն Հայոց՝ Մովսէս կաթուղիկոս, և բարի վարուք հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս և նստաւ յաթոռն հեզահոգի և անյաղթ փիլիսոփայն Փիլիպպոս կաթուղիկոս»։

«Ի թուին ՌԶԴ (1634) ծառազատիկ եղև Հոռոմայեցւոց ազգին, ի ելանել լուսոյն ամօթ եղէն ազգն ծունաց»։

վիճակ և ժառանգութիւն, զի ընկալցի... աէրն և միով Տէր ողորմայիւ թողութիւն արասցէ բազում յանցանաց մեղաց նոցին. ամէն։

Արդ՝ ով աստուածասէր սիրելի և տոփացաւզ ցանկալի տէր Դաւիթ մաքրամիտ քահանայ, զի Սաղմոսս այսքան ղոսկի և զարծաթ և քան զականս պատուական գերագոյն է...։

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ պաղատանաւք... յիշման արժանի արասջիք զստացաւղ սորա զտէր զԴաւիթն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, մեծ հաւր տէր Մարտիրոսին, Խաթունջանին և հաւր Ղազարին և Մլուքին, հաւրեղբաւր տէր Առաքելին, և կնոջ Թուրվանտին, որդոյն տէր Սրապիոնին, Մարտիրոսին, մաւր Մայրամին։

Ի թուականութեան Հայոց ՌՁԵ (1636) ամին գրեցաւ սա ի դուռն Եղիազարու վանուցն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Երկոտասան Առաքելոցն և Ս. Գրիգորի Լուսաւորչին և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, ի յառաջնորդութեան սբ. աթոռոյս Բարսեղ վարդապետին և Յոհանէս վարդապետին ի յունիս ամսոյ ԺԱ (11) Հռովմայեցւոց, և ի Հայոց ահեկի Գ (3) զրաւ եղև։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունս սբ. եկեղեցւոյ... յիշէք զանարժան գրողս զսուտանուն Կարապետ եպիսկոպոս գրիչս, զի գրեցի և ծաղկեցի ի լաւ և յընտիր աւրինակէ Գաւոնեցոյ, ի դառն և ի նեղ ժամանակիս, զի ազգն Իսմայելացւոց և Պարսից յարեալ են ի վերայ միմեանց քաղաքառութեամբ և զմիմեանս յաղթահարելով և աշխարհի բազում աւեր ածելով. վա՛յ և եղուկ զազգս մեր ի ձեռս նոցա, զի յայսմ ամի
162 // Մշու շնեկ ցորեն եղև Գ (3) ֆունևայ (?) և կորեակն՝ Բ (2), վասն մեղաց մերոց։

947

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Երևան, № 3706

Գրիչ, ստացող՝ Խաչատուր դպիր
Վայր՝ Կամենից

228ա Փառք..., որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ, մեղօք լցեալ, անարժան գրչիս յանգ և յաւարտ հասանել այս սբ. գրոյս, որ կոչի կանոնք։ Արդ՝ եղև զրաւ սբ. զանձարանիս ի թվաբերութեանն Հայոց ՌՁԵ (1636) և յուլիս ամսոյ ԺԳ (13), և ի մարդկութենէն Քրիստոսի մինչև ցայս են ամք ՌՈԼԶ (1636), ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անծան ե անծող գրչի Խաչատուր սուտանուն դպրի, որդոյ Մերիկին, որ եմ չարութեամբ լցեալ և մեղօք զառածեալ։ Աստանօր կատարեցաւ հոգիակեցոյց և ցանկալի դրախտս, աստուածադիր ամենունակ առատութեամբ, յոր-
228բ մէ// գնան գետք... փափագող եղայ և գրեցի սիրով զսբ. գիրքս, ի վայելումն անձին իմոյ և իմոցն ամենայնի։ Քանզի սա պարունակեալ ունի առ ինքն զմեկնութիւն կանոնացս, որ և սբ. հայրապետքն ասացին Հոգւովն Սրբով յաղագս վիրաւորեալ հոգւոց, որ է դեղ և սպեղանիք ցաւագնելոց

և մեղանչելոց։ Բայց գրեցաւ սա ի յաշխարհս Լէհաց, ի քաղաքն Կամէ-
նից, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկոլայոս Սքանչելագործին,
ի հայրապետութեանն Հայոց տեառն տէր Փիլիպպոսի, և ի թագաւորու-
թեանն Իլախաց Վլաիսլավին։ Աղաչեմ զձեզ, հայրք իմ պատուականք
և եղբայրք իմ ազնուականք, որք հանդիպիք յայսմ տառիս կարդալով
կամ զմոլորեալսն դարձուցանելով, յիշեսջիք զիս զտառապեալ գրիչս,
և զծնաւղսն իմ՝ զՄերիկն, հանդերձ իւր ծնաւղովքն և ամենայն արեան
մերձաւորքն, նոյնպէս և զմայրն իմ՝ զԿուլաֆն հանդերձ իւրայնովքն
ամենայնի։ Նաև յիշեցէք զտէր Յակոբ քահանայն, որ զիս բարի խրատով
և ուսուցանելով հասոյց այսմ շնորհի, վասն որոյ զվարձս ի Քրիստոսէ
առցէ։ Այլ և յիշեցէք զտէր Ներսէս քահանայն, որ զօրինակս միով
բանիւ շնորհեաց, վասն որոյ զվարձս ի Քրիստոսէ առցէ։...

Գրեցի ըզսա յանձն եղկելի,
զի ոչ ունիմ գործըս բարի,
Բամեալ և ոչ արհեստ գրչի,
229ա այլ լոկ անուամբ կեամ կենդանի։
Ձլինել հայցեմ մեղադրելի,
թէև սրղալ ինչ աստ գրտցի,
է իմ գրրեալ աշխատելի,
որ ոչ կա յիս յիմաստ բանի։
Սա և գործովք յոյժ եղկելի,
և անպիտան յտմենայնի...[3]։

Դարձեալ աղաչեմ, ո՜վ եղբայրք, զի զմեզ առանց պարսաւանաց թողուք և անմեղադիր լերուք վասն սղալութեան և անզարդութեան գրոյս. զի կար մեր այս չափ էր և ոչ աւելի։ Կատարեցաւ ի փառս Քրիստոսի...։

948

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 10390

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Ստամբոլ

ա

184ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ երգարանս Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, ձեռամբ սուտանուն, հող և փոշի Յովանէս իրիցու, ի քաղաքն Ըստամ-
բոլ, ի դուռն Ս. Սարգսի և որդոյ նորա Մարտիրոսին, ի դառն և ի նեղ ժամանակիս, ի թվականիս Հայոց ՌՁԵ (1636) յուլիս ամսոյ ԺԵ (15)։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, զհանդիպողքդ այսմ տառիս՝ կարդալ կամ օրինակել կամ հարևանցի տեսանել, յիշեսջիք Հայր մեղայիւ մի զյունայնս ի գործս բարեաց զսուտանուն զՅովանէս էրեցս, և զծնօղս իմ և զուսուցողսն իմ, զկենդանիս և զհանգուցեալս...։

[3] Այսպես ևս տասնութ տող։ Կենտ տողերի առաջին տառերից հոդվում է. «Գրչէս ընկալ-
ցիր»։

Բ

87բ Զմոխրաթաւալ, և զհող, և զանարժան զՅովանէս սուտանուն երէցս յիշեցէք ի Տէր. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։

949
ՄԱՇՏՈՑ

Թորոս աղբար, Ա, էջ 78

Գրիչ՝ Միքայէլ դպիր
Վայր՝ Մարզուան

ա

...Գրեցաւ սա ի գիւղաքաղաքն Մարզուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարիս, ի թուականութեանս հայկազեան տումարիս հազարերորդի ութծուներորդի և Ե (5) արաբարդի (1636), օգոստոս ամսոյ ԺԲ (12), աւրն ուրբաթ, ձեռամբ յոգնամեղ և անարուեստ սուտանուն Միքայէլ դպրի, ի վայելումն տէր Աստուածատուրին...[4]։

Բ

...Գրեցաւ թուին ՌՁԵ (1636) Մաշտոցս Մարիամին և ծնողաց նորին, հօրն՝ Ովանէսին և մօրն՝ Փաշային, և որք զողորմին ասեն։ Եւ ԵՃ (500) ստակ։

950
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7382

Գրիչ՝ տէր Յովհաննէս
Վայր՝ Կաֆայ

ա

656բ Փառք...։ //Քանզի ի նոյն հոգւոյ շարժեալ և խորհուրդ բաբի արարեալ արքս աստուածասէր մահդեսի Պաւղոսն, և հայրն իւր՝ զմահդեսի Պետրոսն, և զմայրն իւր՝ զԹաքարփաշայն, և զկողակիցն իւր՝ զմահդեսի Շահզատայն, և զորդեակն՝ զմահդեսի Գրիգորն, որ երիտասարդ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, և զեղբայրքն իւր՝ զմահդեսի Ավրանն և զՄուրատն, և զդուստրն՝ զՓաշայն, և զփեսայն՝ զՎարտազատն, և զԹոռն իւր՝ զՆիկողայոս դեռաբոյս պատանին, և զամենայն առուլ[արեան] մերձաւորսն։ Եւ լաւ համարեցան ստանալ զաւակ ի Սիոնն...։

657ա Կամաւ ստացան զՅայսմաւուրս պիտանի աստուածասէր մահդեսի Պաւղոսն, որ կոչի Յայսմաւուր, զոր կարդեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Մերենց կոչեցեալ բազում շանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցոյ, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարոյն....[5]

Արդ՝ գրեցաւ սայ ի յամի թուականութեան հայկազեան սեռի ՌՁԵ (1636), ի սեպտեմբեր ամսոյ ի Ը (8)-ն, յաւրն հինգշաբթի, առաւաւտի

[4] ա հիշատակարանը տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Բ, № 514, էջ 427։
[5] Դարձյալ թվում է վերևում նշված անունները։

յուսաՀէմ ժամու։ Աւարաեցաւ ձեռամբ յանիմաստ և թարմատար... նորաչան գրչի տէր Յովհաննէս մելանաւորի, աղաչեմ զՀշմարիտ ծառայքդ Աստուծոյ... զմարմնոյ ծնաւղս իմ՝ զՍարգիսն և զմայրն իմ՝ զԿուլվարդն, և զեղբայրն իմ՝ զՇիրինն, և զկողակիցն իմ և զամենայն ազգայինս իմ...։ Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակիս ի մեծ և ի հոյակապ մայրաքաղաքս ի Կաֆայ, ընդ հովանեաւ Ս. Նիկողայոսի արագահաս հայրապետին, առաջնորդութեամբ տեառն Հայոց տէր Փիլիպպոս կաթողիկոսին, և յայսմ նահանգի հիւսիսակողմ Հոնաց երկրիս տէր Խաչատուր արքեպիսկոպոսի, և աւագիրիցութեան տէր Մկրտիչին և այլ պաղի
657բ քահանայիցն և ժո||ղովրդեան առ հասարակ ամենեցուն. ամէն։

Դարձեալ յիշեսջիք ի Տէր զերախտաւոր ծնաւղն իմ՝ յուսուցիչն իմ, որ բազում շանիւ աշխատանք կրեաց վասն իմ, զալեօք ծերացեալ իմաստասէր և կոր[ով]ամիտ և հանճարեղ հոգևոր հայրն իմ՝ զտէր Մկրտիչ քահանայն և զորդեակն իւր՝ զՆիկողայոս սարկաւագն...։

Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք, յիշեսջիք... զստացաւղ սբ. գրոցս զմահդեսի Գրիգորն և զմայրն՝ զմահդեսի Շահզատայն յարդար վաստակոց իւրոց և եդ յիշատակ ի դուռն Ս. Նիկողայոս հայրապետին և սպասաւոր սորին տէր Գրիգոր դեռաբոյս նորընծայ քահանային, և ժողովրդապետն և վերատեսուչ սբ. Սիոնիս զՄարգարէն և զորդեակ, որ մեզի բազում երախտիս արարին..., որ զՅայսմաւուրս նոցա տաղաւարն, այսինքն՝ նորա տունն գրեցի, յայն ժամանակին սպասաւոր էի Ս. Նիկողայոսի մենաստանացն, և մահդեսի Թաւտաւրքային, Նորագին, Փիրզատին, Նորպարոնին, ևս առաւել Աստուած ողորմի տէր Վարդան նորընծային և տէր Աւգսենդին, և Արդարոցն, և Լուսպիքային, Մուրատին, և Խաստիքային, առ հասարակ ննջեցելոցն...։

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զյուսուցիչն իմ՝ զԳալուստ սարկաւագն, որ զգիրս ուսոյց, Տէրն ամենայնի ողորմեսցի նմա...։ Զպապն իմ՝ զխոտավերտին, և զմամն իմ՝ զՏալվաթն, և զեղբայրն իմ՝ զՅովակիմ[ն]... նաև աշխատօղաց և ծաղկողիս Խասպէկ նորաչան դեռաբոյս պատանեկիս և թղթիս կոկողին։ Դարձեալ անմեղադիր լերուք անզարդ գրիս և սխալանաց և խոշորութեան, զի կար մեր այս է, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Բ

3բ Ողորմի... ստացաւղի գրոցս մահդեսի Գրիգորին, մաւրն՝ մահդեսի Շահգաայային, Պետրոսին, Պապաջանին, Թաթարփաշային, Մուրատին, Վարդերեսին, Մաիթումին, Պալին, և կենդանեացն՝ մահդեսի Պաղոսին, եղբաւրն՝ մահդեսի Էվրէնին, Վարդազատային, Փաշայխաթունին և գծողի սորին[6]։

---

[6] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 5ա, 6ա, 7ա, 15ա և բազմաթիվ այլ էջերում։

951

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ, ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 51 (մանրաժապավեն, Երևան, № 513)

Գրիչ՝ Արիստակէս երէց

Վայր՝ Կ. Պոլիս

847 Փառք...։

848 Արդ՝ աւարտեցաւ սբ. Կանոնագիրքս, և Դատաստանագիրքս, և Ընդհանրական ի սրբոյն Ներսէսի Հայոց հայրապետին ի մի տփի ժողովեալ եղակք ի թվականիս հայկազան ազգի ՌՁԵ (1636) ամին, ի սեմբտեմբերի ԺԹ (19), աւրն հինգշաբթի[7], ձեռամբ մեղաւոր և անարժան գրչի, անիմաստ և տրխմար, յիմար մտօք Արիստակէս երէց, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին, ի քաղաքն ի Կոստանդինուպօլիս, Իսմաելացոգ բառիւն կոչի Պալաթ մէհէլէ և ի Հոռոմ բառիւ Յունաց ասի Պուղլարիայն մէհէլէսի, որ Հրեշտակապետ եկեղեցի և նորին մէհէլէն։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմարմնաւոր զծնօղն իմ՝ զմահտեսի զՄկրտիչն և զմայրն իմ՝ զմահտեսի Շահնուլթանն, որ ոփոխեցաւ առ Քրիստոս ի թվին ՌՀԸ (1629), ի նոյեմբերի ԺԳ (13), օրն ուրբաթ, և զեղբայրքն և զամենայն արեան զմերձաւորսն։ Ո՛վ դուք սբ. վարդապետաց..., որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղօք հօղացեալս զԱրիստակէս երէցս և զՏիրուճին. և ողորմի ասացէք...։

849 ...Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զՄալումն և զկողակիցն նորին՝ զՆոնոֆարն, որ ըստացան ի հալալ ընչիցն և զարդարել ետուն զգիրքս, յիշատակ ննշեց[ել]ոց իւրեանց հոգոյն...։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զդասս սբ. հայրապետաց... որք հանդիպիք սբ. գրոցս կարդալով կամ օրինակելով յիշեսջիք ի սբ. աղօթս ձեր զՈւստիանէն, որ ի տիս հասակի փոխեցաւ առ Քրիստոս։ Այլ և զծնօղն նորին՝ Արիստակէս երէցն և զիւր իրիցկինն, Տիրուճին, Կատարինէն, Հռեփսիմէն, Մսեճն, Մարկոս իրիցացուն, այլ և զամենայն արեան մերձաւորսն նորին...։

Եւ է սբ. գիրքս յիշատակ ի դրունս Ս. Հրեշտակապետու Միքայէլի և Գաբրիէլի, ի թաղն որ կոչի Պալաթ, ի քաղաքն ի Կոստանդինուպօլիս։ Ոչ ոք չունի իշխանութիւն [յ]ափշտակելոյ կամ գրաւելոյ. եթէ ոք [յ]անդգնի՝ ինքն տացէ պատասխանի...։

952

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄՅՁԵՊ, II, № 339

Գրիչ՝ Զատիկ դպիր

227 Փառք...։ Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս այս, որ կոչի Կանոնագիրք, ի թվին Հայոց ՌՁԵ (1636) սեպտեմբեր ամսոյ ԻԲ (22), ձեռամբ

[7] Մեր հաշվումներով 1636 թ. սեպտեմբերի 19-ը կլինի ոչ թե հինգշաբթի, այլ երկուշաբթի, հինգշաբթի կլինի սեպտեմբերի 22-ը։ Ի դեպ, նման նշում կա № 942 և 943 հիշատակարաններում, որտեղ նշված են 1636 թ. հունվարի 1՝ ուրբաթ, փետրվարի 8՝ չորեքշաբթի, մինչդեռ հունվարի 1-ը շաբաթ է, փետրվարի 8՝-ը երկուշաբթի։

մեղսաներկ և անհմուտ, անծան և անծող գրչի՝ Զատիկ սուտանուն դպրի, որդւոյ Գրիգորի, որ եմ շարութեամբ լցեալ և մեղօք զառածեալ...։ Որոյ այսպիսի ըղձալի փարթամութեանց համահետևեալ և փափագող եղեալ Սարգիսն, որդի տէր Վարդանին, և ետ գրել զսա իւր արդար և քրտնաջան վաստակոց։ Բայց Տէրն ամենայնի և Արարիչն երկնի և երկրի ոչ զառաւելութիւն ընչիցն պահանջէ, այլ զյօժար կամքն խնդրէ բոլորով սրտիւ, վասն որոյ զայս զմտաւ ածեալ Սարգիսս և ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յետ աստի կենաց իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ։

Արդ՝ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք զամենեսեանդ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ տեսութեամբ և կամ յօրինակելով, յիշեսջիք զստացող սորա և զծնողքն իւր։ Նոյնպէս և զիս զտառապեալ գրիչս, և զծնօղս իմ, և զամենայն արեան մերձաւորս իմ։ Եւ Աստուած յիշողացդ
228 ողորմեսցի յիւր// միւսանգամ գալստեանն. ամէն։

953
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 2537 (1568 թ.)

Գրիչ՝ Օգոստինոս
Վայր՝ Հաճիթարխան

132ա Յիսուս Քրիստոսի նուաստ ծառայ ֆրայ Օգոստինոս արքեպիսկոպոս, Նախիշևանոյ յերկրէն եկի Հաճիթարխան. այս սբ. Աւետարանիս օրինակն գրեցի, բազում սխալանք գտայ ի սմայ, ևս առաւել վերոյ գրեալ յետի փոխս վասն համբարձման, զոր և մեք գրեցաք յիշատակ մեր։ Որք հանդիպիք ի սմայ կարդալով, վասն սիրոն Քրիստոսի, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, յիշողն՝ յիշեալ լիշի ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։

Գրեցաւ թվին մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի ՌՈԼԶ (1636) հոգտէմբեր է (7)։

954
ՄԱՇՏՈՑ
Քեզզվ, № 110 (1613 թ.)

Գրիչ՝ Մուրատ
Վայր՝ Քիլիս

224 Ես՝ անարժան Մուրատս եկա ի Հելապ քաղաք։ Ի Հելպա[յ] եղա և եկա ի Քիլիս քաղաք ի թիվի ՌՁԵ (1636) հոկտեմբեր այն շաբտու եկա, որ հրեշտակապետաց պակն եկաւ, որ թագաւորն կալտի կալտի եղաւ, այն տարին եկա ի Հալապ, ի Հալապու եկա ի Քիլիս։ Ով կարդա և զիս յիշէ և ողորմին ինձի ասեն՝ տէր Աստուածն իւրեանցն մեղքն շնչէ և դատաստանն քաղցր ելնէ. ամէն։ Հայր մեր որ երկինք ես։ Որ աւերէ այս զիր նոր անիծածն է։

955
ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ
ՄՏԶԵԳ, VI, № 1781

Գրիչ՝ Թորոս

126 Աւարտեցաւ Բնութեան գիրքս Թորոս անուն կոչեցելոյ, ի դուռն Ս. Աստուածածնի վանացն, թվին ՌՁԵ (1636), նոյեմբեր ամսոյն ԻԹ (29), աւրն երեքշաբթի։

956
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏՁՀՍ, № 5

Գրիչ՝ Մելքոն քահանայ

ա

355 Փառք...։ Զոր աստուածային սիրով բախեալ աղբերացեալ, զոչինչս ընդունեալ, տէր Մաթէոս արեղայն և քաջ քարտուղարն, որ ուսուց տկարս հոգով տառապեալ մարմնով, որ չենք արժան ուսման, որ հանգուցեալ է ի Քրիստոս, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք Քրիստոս, ձեզ ողորմի յիւր միւսանգամ գալուստն. ամէն։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք հոգեկեցոյց տառիս և աստուածընկալ սբ. Աւետարանիս՝ ընթեռնելով կամ աւրինակելով, յիշեցէք յաղօթս ձեր սրտի մտօք ի բարին Քրիստոս և ի յոյսն և ի փրկիչն մեր Յիսուս, զգծագրող սբ. Աւետերանիս զտէր Մելքոնն զտանել մեղացն իւր թողութիւն, ընդ նմին և զամուսինն իւր, որ փոխեալ է առ Քրիստոս։ Հանդերձ կենդանեօք և ննջեցելովք և համայն զարմիւք և ազգականաւք և բնաւին արեան մերձաւորքն իմ լինել փառաւոր յարութեանն, արժանաւոր և երկնից արքայութեան ժառանգաւոր ընդ ամենայն սբ. ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ ընդ Հօր և ընդ Ս. Հոգոյն այժմ և միշտ։

Գրեցաւ ի թվին Հայոց ՌՁԵ (1636), ի հայրապետութեան տէր Սիմէոն կաթողիկոսին, որոյ բարեխաւսութեամբ աստուածային սբ. Աւետարանիս փրկեսցէ զմեզ փրկիչն Քրիստոս և զզաւրս այլասեռիցն նկուն արասցէ ընդդէմ հաւատացելոց Քրիստոնէից և նմայ փառք յամենայն արարածոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք քահանայից և կաճառք լուսափայլ աստեղաց, որք հանդիպիք այս սբ. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացող սբ. Աւետարանիս զՍրսցի Գրիգորն, որ ստացաւ զսայ ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր հոգուն, ի դուռն Ս. Կարապետ եկեղեցւոյն. անջինջ յիշատակ և ի[ւ]ր հօրն՝ Անտրիկին, մօրն՝ Լաաիֆին, և իւր որդոցն որ առ Աստուած փոխեալ են՝ զՄկրտիչն և զՅակոբն, և զիւր եղբայրն՝ Շահենն և որդոյն Շահենին, և իւր պապուն Յովանիսին, պապուն՝ Աւետիքին, մօրն՝ Ոսկեկին, և իւր դստերացն՝ Շնրֆորին, Աղկուլին, և իւր որդուն՝ Յակոբին. մօրն՝ Եղներին, և իւր աղջկանն՝ Եղներին, և իւր մեծ մօրն՝ Շնրֆորին. և

իւր մեծ պապուն՝ Խտրրին, և իւր մամուն՝ Յակոբին, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն, կարդացողաց և լսողաց, և որք սրտի մտաւք ղողորմին ասեն. ամէն։

Խնամատարն և լաւ պահողն աւրհնի ի յԱստուծոյ և յամենայն սրբոց. և յանդգնաբարքն՝ զմասն Յուդայի առցեն և զպատիժն Կայենի։

Բ

356 *Դարձեալ յիշեցէք յաղօթս ձեր զստացող սբ. Աւետարանիս զՍբսցի Անտրեկան տղան զԳրիգորն, և զիւր ամենայն արեան մերձաւորքն, որ է յիշատակ իւր և իւր ծնողացն, ի գուռն Ս. Կարապետ եկեղեցւոյն։*

Գրեցաւ յիշատակարանս ի թվին Հայոց ՌՁԵ (1636), դեկտեմբեր ամսոյ ԺԵ (15), օրըն հինգշաբթի, յետ երկու ամին ծռազատկին։

Գ

Աղաչեմ յիշել զբազմամեղ գծողս զՍեբաստացի Մելքոն քահանայս։

957

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻՆ

Երևան, № 1004

Գրիչ՝ Սիմէոն Լեհացի
Վայր՝ Լէվ

Ա

191բ *Արդ՝ գրեցաւ Մեկնութիւն Արարածոցս, որ ունի Ե (5) գիրքն Մովսէսի, մեկնեալ և պարզեալ սբ. վարդապետացն եկեղեցոյ՝ մեծին Բարսղի, Եփրեմի, Գրիգոր Աստուածաբանի, Յոհան Ոսկիբերանի, Եղիշէի և վարդապետին Վարթանայ՝ առաւել ի լոյս ածողի զայս։ Բայց[8] նօտրեցաւ զիրքս ի գառն և անբարի, վշտաշատ ժամանակիս, որ ամենայն ուստէք նեղութիւնք և տառապանք հասին՝ Դ (4) կողմ աշխարհիս, ամենայն ուստէք և ամենայն կողմանց՝ յաչմէ և յահեկէ, զի լցաւ ամենայն երկիր սով, սրածութիւն, մահ տարաժամ, խռովութիւնք, սասանութիւնք, շփոթք, աղմուկ և պատերազմ. և չիք որդոյ մարդոյ տեղի, ուր դիցէ զգլուխ իւր ըստ բանին Տեառն. «Զի ոչ գոյ հանգիստ և չիք խաղաղութիւն ամենայն տեղիս»[9]. Զի կողմն հիւսուսոյ, որ էր մեծ թախտ և հաստատ, հզօր և զօրեղ թագաւորութիւն, մեծ և հին ժամանակաց, զոր յայժմ նկուն եղեալ ի մարտս պատերազմի յոլով կռիւ տվեալ ոչ[10] կարացին զդէմ ունել արի և քաջ, յաղթող, նորածին թագաւորին Լէհաց Վլատիսլատփն, որ սրախողող արարեալ զանթիւ հեծեալս, զայլս գերեցուցեալ և զկէսս հնազանդեցուցեալ և ընդ ձեռամբ արարեալ, նաև զթագաւորն հարկիւ եդեալ, զքաղաքս մեծամեծս, զբազում բերթս և զաւանս առեալ, բազում աւարաւ և մեծամեծ թօքերով դարձաւ խնդութեամբ ի տուն։*

[8] *Այստեղից սուլն հիշատակարանը երկու անգամ աննշան կրճատումով հրապարակված է Ն. Ակինյանի կողմից (տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 1936 թ., № 4—6, էջ 250—258, «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք», էջ 406—420)։*

[9] *Հմմտ. Սաղ., ԿԸ, 2, Երեմ., ԺԲ, 12։*

[10] *Ձեռ-ում «որ»։*

Իսկ երկրորդում ամի նորա թագաւորութեանն կրկին ապստամբեցաւ ոմն անհաւատ չար Շվէտն, ունելով բազում լութէր իշխանք և մեծամեծ պարոնայք, որ հայր արքային մերով մարտ եդեալ յոլով ամս ընդ նոսա ոչ կարաց յաղթել մեծն Զիկմունտ, այլ յաղթեալ ի նոցանէ՝ առին զամուր բերթս և անուանի քաղաքս և զգիւղս ի ձեռաց մերոց. և բազում օճիրս և վնաս գործեցին յերկիրս Լէհու։ Սա զկնի մահուան հօրն, որ էր թվին ՌՁԴ (1635), բազում զօրօք և անթիւ հեծելովք գնացեալ ի վերայ նոցա՝ յաղթեաց զօրութեամբ Քրիստոսի և էառ ԺԵ (15) քաղաք մեծ և անուանի, և տիրեաց երկրին Շվէտու և Իֆլանտի. տիրեալ ծովու և ցամաքի, դարձուցին զքաղաքն ամենայն, զոր առեալ էին ի ձեռաց հօրն, և ընդ հարկիւ արարեալ զնոսա, դարձաւ մեծաւ յաղթութեամբ առանց պատերազմի և կռվոյ։ Եւ այս ևս կողմն հիւսուսոյ է։

Իսկ յարևմուտք մեծ աղմուկք և շփոթք գոն։ Զի մեծ կայսրն քրիստոնէից սուր եդեալ ի վերայ արիանոսաց, լութերաց և այլ չար հերետի-
192ա կոսաց և աղանտաւորաց, բնաշինշ// առնելով և սրախոհող կոտորմամբ մինչև ի սպառ որպէս ի հինն զամաղէկացիս, զի յոյժ յոլով և սաստիկ են ազգն այն անհաւատից, և փարթամք և ընչաւէտ, զի ոչ կարէ զդէմ ունել նոցա միայն. մինչ այլ թագաւորք օգնեն նմա, զի յոյժ հնարագէտ և կռո[ւ]ողք են։ Եւ թագաւորն Սպանիու, որ տիրէ արևմտիցն բոլոր մինչև Ենկիտուենան և Հրմուզ և մինչև ի Փոքր Հունտուստան. և թագաւորն ևս Ֆռանցու, նաև Փափն վասն սակաւ իրիք և պատճառաց իրար անկեալ են, և ի մեծ շփոթ և աղմուկ. միթէ սբ. խաղաղարար Հոգին հաշտեցուսցէ զնոսա. ամէն։

Այլ և հարաւակողմն չիք խաղաղութիւն, զի Մաճարաց պարոնն Խարաֆլախու և Պուզտանաց կամին յիրար դիպել և կռվիլ։ Բայց եղուկ ու վայ եհաս յարևելք Հայոց երկրին. քանզի այսմ ամեն մեծ բռնաւորն Թուրքաց սուլթան Մուրատն խրոխտ և գոռոզ, հպարտն գնաց ի վերայ շահ Սրֆին ի պատերազմ՝ ԺԵՌ (15000) տարպայ ՃՌ (100.000) հոգով, և հասեալ ի Կոնիօն քաղաք, որ է Ղոնեայ, աստմամբ չարին և խրատու վատ մեծամեծաց իւրոց՝ սաստիկ հրաման եհան ամենայն աշխարհն իւր սուրկունի. Ուռումելի և Անատոլի և ամենայն սահմանս իւր, զի Խ (40) տարեն ի վեր եկքն, մինչև Ի (20) օրն գնասցին ի տեղիս իւրեանց, առանց ամենայն պատճառաց, ոչ ոսկով, ոչ արծաթով և ոչ այլով իւիք փրկեսցին. և թէ ոք յետ Ի (20) աւուր գտցին չարաչար մահուամբ սպանցին, և զինչսն ամենայն յափշտակեսցեն։ Որ և հասին հրովարտակքն արքայէն ի Ստամպօլ, որպէս ի հնումն Համանայ պղծէ ի Արեզ քաղաք և յայլն, ուր ցրուեալ էին Իսրաէլացոց ազգն. եթէ անդ էր լաց և հառաչ, աստ առաւելագոյն։ Զի Խ (40) ամաց ի վեր իբրև տեղացիք լեալ, տուն և բնակութիւն շինեալ, այգի և բուրաստան, կրպակս, խանութքս լի ապրանօք և ընչիւք, հարուստք և փարթամք, տնովք և տեղօք, որդովք և դստերօք, զարմօք և զաւակօք և ամենայն գոյիւք, նաև զդստերս տվեալ ոմանց և այլոց, զդուստրն առեալ որդոց և եղբարց, և այսպէս կապակցեալ և բարեկամացեալ ի սէրն միմեանց, և յընտելացեալ և ընտանացեալ։

Ապա պօստանճի պաշին և մեծ վազիրն ղայմախան հրամայեցին ամէն փողոցէ կոչել, զիմամնին և զիրիցնին, և սպառնալեօք պատվիրեցին, որ մինչ ի (20) օր մարդ չի մնայ կամ չթագչի ուրէք՝ ոչ հայ,
192բ ոչ տաճիկ, ոչ ճհուտ, ոչ հոռոմ, ոչ այլ ոք, միայն տեղացիք։ || Եւ ելեալ զինուորքն սարայու փաշայէն, սուպաշուն և ղատիէն՝ եասախչիք, հասանի և ենկիչարիք, շրջէին ի բոլոր քաղաքն, ի փողոցս և ի հրապարակս, ի ծածուկ տեղիս, ի խաներն և ի քարվանսարայս, նաև յեկեղեցիս և ի մէջիթս. և զորս զտանէին ի տան՝ ըմբռնէին, իբրև զմահապարտ և զչարագործ չարչարէին, հարկանէին և տանէին առ վէզիրն։ Անդ էր տեսանել զլաց և զաղաղակ, զճիչ և զկական, զհառաչ և զկսկիծ. ո՜հ մեծի աղէտիս և աւա՜ղ տարակուսանացս. որպիսի գառն կսկիծ և նեղութիւն հասին ի վերայ ամենայնի, ևս առաւել մեծ վտանգ Հայոց ազգի։ Զի խզրլպաշն անդ սուրկուն արարեալ տարաւ ի ներս՝ սկսեալ Երևանայ ամայի և աւեր դարձոյց, քանդելով, աւիրելով և հրայրեաց հրդեհեալ հրով. զկէսն որ ի տունս Հոռմաց Թուրքի հեծելն աւիրեալ ոչինչ դարձոյց։ Վա՜յ ի վերայ վայի և եղուկ թշուառացեալ Հայոց աղ-[գ]ի, զի ցրուեցան, կորեան և բնաջինջ դարձան. ո՜հ ո՜հ և աւա՜ղ թշուառութեանս, միթէ գրոց բանքն կատարեցան կամ սբ. Լուսաւորչի խընդիրքն հասան, որ Նեռան ժամանակն վերջին Հայք չի մնան, կամ սրբոյն Ներսիսի անէծքն հասան, զի եղկելի Հայք բնաջինջ դարձան, վա՜յ ինձ։ Զի և ի լէհ Հայոց գլուխ չարիք եկին, որ ի մեծ փաթերակ անկան հոգով, մարմնով, տամբ և զարմօք կորեան։

Զոր ի թվին ՌՀԹ (1630) ել ոմն մեծազգի և փարթամաց զարմի Նիկոլ անուն Թորոսենց նախնական անուամբ կոչ[եց]եալ, մանուկ տիօք և տգէտ մտօք, ի խաւարեալ խորհրդով և անիմաստ հանճարով, անուղ[ղ]ա[յ] <վա>վարիւք, վատ և ապիրատ ամենայն իրս և ի գործս, լիրբ, յանդգամ և անդուդն, ի կարգս աստիճանի դպիր գոլով։ Եւ ելեալ ԻԳ (23) ամաց կաշառօք ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի Մելքիսեթ կաթողիկոսէ, յորժամ եբեր զնա մեր մեղքն ի Լոմ։ Զոր յետ ամի միոյ, յետ յոլով չարեացն՝ խորհեցաւ խորհուրդ չար, վասն ազգիս Հայոց և վասն հաւատոյ սբ. Լուսաւորչին և սբ. եկեղեցեացն մեր, հնարս իմացեալ զայս. ոմամբ[ք] համախոհիւք գնացեալ առ յեզուիդսն՝ երդմամբ խոստացաւ բառնալ ի հաւատս և ի կրօնս նոցա և լինել ախթարմայ. զոր յետ սակ[աւ] աւուրց լիով կատարեալ զայն ի մէջ եկեղեցոյ առաջի բազմաց կարգաւորաց և իշխանաց։ Ապա սկսաւ բազում չարիս և նենկութիւն և դաւ գործել ազգիս իմոյ, ունելով իւր օգնական զամենայն
193ա ազգն Լէհու՝ պարոնայքն, զիշխանս, զդատաւորս|| և զամենայն քահանայս և կարգաւորս։ Ապա սկսաւ անգոսնել, արհամարհել զհաւատն մեր՝ հերձուածող և բաժանող կոչն զՀայք։ Յետոյ խլեալ և յափշտակեալ զեկեղեցիս և զվանորայս ի ձեռաց մերոց, վիմաշէն, կամարակապ սալարայարկ։ Այլ և զքահանայս ցրուեաց, զոմանս հալածելով, զայլս ի բանտ և ի կապանս մատնելով, զկէսս շխթայս ածելով, և զուղ[ղ]ափառսն, մատնելով, հարկանելով, տուգանելով և ազգ և ազգ զրզվելով։ Ապա սկսաւ վատնել և կորուսանել զինչս և զխազինայս՝ զոսկիղէն և արծաթեղէն

անօթս, զմեծամեծ խաչսն, պատվական և ոսկէօծ ըսկիս, ծանրաշէն բուովառսն, մեծագին քշոցսն և արծաթի խնկատուփսն, զուտր արծաթի ճրագարանս փոքր և մեծամեծսն, թող ղշուղառսն, զխաչվառսն, զեմիփորոնս[ն] և մեծագին թագս հայրապետաց՝ ոսկով և մարգարտով և ակամբք ընդելուզեալ, և վարշամակս յոլով զուտր մեծամեծ մարգարտովք շարեալ, զոր ԵՃ (500) ամաց հետէ ժողովեալ էր աստուածասէր տանուտէրաց և բարի և երկիւղաց կանանց և տանտիկնանց, զոր ոչ երբէք գտանիւր այլ աշխարհ այնպիսի թօհվայք և անդիտ իրք։ Թող զարծաթապատ, ոսկիակազմ, մագաղաթ ոսկէգիր բազում Աւետարանս և յոլով Շարակնոցս, ոսկով և լազվարդով նկարեալ պատուական պատկերս և Բ (2) ԳՃ (300) ազնիւ գրեանս վարդապետականս ի թագաւորական խազնայէ ի դուրս ելած, մանաւանդ Սրսու և Քաֆայու. Բ (2) Գ (3) Աստուածաշունչք, այլ և Մեկնիչք և Քաղուածք, Փիլոն գիրք և Քարոզգրքեր, Տօնականք, Սարգիսգիրք, Սաղմոսի մեկնիչք և Արարածոց մեկնիչք և այլ անթիւ ազնիւ գրեանք, նաև յոլով արտաքին գիրք, զորս ոչ կարեմ մի ըստ միոջէ գրել, զի ձանձրասցին լսողքն։ Եւ զայն ամենայն վերոյ դրեալ Մսրայ խազինան ի միում ամի կորոյս և ոչընչացոյց, նաև զգրեանս ամենայն ընդ նոսին. զորս ծախէր և վաճառէր, զկէսս գրաւէր Հրէից և այլ և այլ ցեղից, զայլս հալէր և ի պէտս մարմնաւոր մսխէր և զորս փոխէր ընդ ոչինչ իրս անպիտան և մարմնաւոր. տայր զոսկին ե առնոյր զհողն և զմոխիր ի վերայ գլխոյն։ Եւ զամենայն, զոր ինչ և կամէր՝ առնէր չարիս Հայոց. և ոչ ոք իշխէր ասել բան ինչ կամ զրոյց, զի առաւել եղև սա հակառակ Հայոց քան զՊՕՂ էրէցն և զուրացուլն Վասակ։ Եւ այս ամենայն վասն ծովացեալ մեղաց իմոց. վա՜յ ինձ։

193բ Եւ յետ այսր ամենայնի յաւել զչարն ի վերայ չարի և ած չար խորհուրդ ի մտի, զի չտայր զէ (7) խորհուրդն եկեղեցոյ կատարել, իբրև դարձան Հայք իւրմէ և չգնացին յեկեղեցիքն և ոչ զկնի նորա, բայց միայն իւր ազգականքն և ընտանիքն։ Չտայր մեռեալս թաղել և զերախայս կնքել, կամ պսակ տալ կամ հաղորդ, այլ ծածուկ յայլ քաղաքաց բերէին քահանայս կամ զմեռեալս ուղարկէին այլ տեղ, և զայն ևս ահիւ և դողութեամբ։ Որ և զայն ևս իմացեալ՝ եդ [պահապանս] ի դրունս քաղաքին, զի մի՛ տարցեն այլ տեղ զհիւանդս կամ զմեռեալս կամ մի՛ զոք բերցեն։ Եւ օր մի դտեալ էրէց մի ի քաղաքն, որ եկեալ էր առ հիւանդսն, կոխեցին զտունն, կալան զէրէցն և տանէին ընդ մէջ քաղաքին բոկ[11] ոտամբ և գլխիբաց իբրև զմահապարտ։ Եւ իբրև տարան ածին զնայ առաջի նորա, ընդ որս էի և ես եղկելիս, զոր յետ բազում գանից և զզվանաց ետ ի շխթայս և ի կապանս և յարկ ի բանտ, մինչև տօլվաթաւորքն հազիւ կարացին թափել ի ձեռաց նորա։ Եւ մեք այսպէս լքեալ և թողեալ եղաք և տարակոյս լեալ, զի յոչ Աստուծոյ և ոչ ումեք կարացաք ունել օգնութիւն, զի մեղք մեր մեծամեծք չտային թոյլ, Իբրև չգոյր հնար մեզ ամենայն ուստէք, ապա սկսան թաղել զմեռեալս ի տունս և ի գետնափորս, և աղքատքն յաղբս կամ ի դուրս անարդ տեղոջ, և զայն

11 Ձեռ-ում բոտ։

ծածուկ և դաղտ ի նոցանէ։ Եւ Ե (5) ամ էր Լովայ մայրաքաղաքին Հայ-
քըն թագաւորազն և իշխանատիպ ի մէջ այսպիսի դառն նեղութեան և
տառապանաց, մեծ վշտի և վտանկի, մարդիք ազնիւ և պատուական,
մեծատունք և փարթամք, որ այսպիսի աղէտի և կսկծի դիպան։ Եւ այս
Ե (5) տարիս ո՛չ ժամ, ո՛չ աղօթք և ո՛չ Աւետարանին ձայն ականջք մեր
լուան, և ոչ աչք մեր զվարդապետ կամ քահանայ տեսան։ Զի մեր գլուխ
եկած չարն ո՛չ ի հինն ժամանակս եղած է, և ո՛չ ի նորս, և ո՛չ ի ժամա-
նակս հալածանաց։ Պիղծ և ուրացող, չար և կռապաշտ թագաւորն
Ուլիանոսի, Մամսիմիանոսի և այլոցն, զի նոքա թէպէտ զմարմինս
տանջէին և զեկեղեցիս խլէին կամ կործանէին քրիստոնէից, ապա քահա-
նայքն ծածուկ ի տունս կատարէին զքահանայագործութիւնս, իսկ մեք
ամենեին հեռի ամենայն հոգևորացն և ժամակարգութեանց, անժամ,
անհաղորդ, անխոստովանանք, առաւել քան թէ գերեալք ի ձեռս բար-
բարոսաց։

Ապա սկսան ուղ[ղ]ափառքն դրամ մսխել և դեկան ցրվել մեծամե-
194ա ծաց, իշխանանց և պարոն//աց, այլ և ի ղարին գնացին քանիցս անգամ և
էմիրնի բերին և ոչինչ օգտեցան, զի կարգաւորքն ամէն և մեծամեծքն
հետ Նիկոլ եպիսկոպոսին էին. և զի հաւատոյ բան էր՝ չիշխէր թագաւորն
և ոչ նախարարքն առնել դատաստան, թէպէտ շատ գանձ և խազինայ
տային։ Եւ ի թվին ՌՀԹ (1630)-նէն մինչ թվն ՌՁԵ (1636) Լ (30) ԽՌ
(40000) ղուռուշ խարճեցին Լովցիք, բնաւ ճարակ կամ հնար չի գտան
Հայք։ Եւ իբրև հատաւ քաղաքի եկեղեցոյն խազնան և վանօրէիցն, և
ինքն սկսաւ չքաւորել, զի էր յոյժ անառակ[12] և վայրապար, ունէր մար-
դիք աշխարհականք և կարգաւորք Ի (20) Լ (30), պահէր պէտավի ձիան,
կառս մեծագինս և տաճիկ ձիանս, և ինքն յագանէր բեհեզս և ծիրանիս,
մախմուր և աթլազ, ներքեանց սամուր մորթի կամ վաշախ. գաւազանն
բուն արծաթի, նաև սնտուխչան, կազմարն, ջրլուացքն, իպրիխն և ամէն
անօթքն և կահքն զուտ ոսկէօջրած արծաթէ. վասն որոյ ի սպառ չնչեալ
կորոյս զամենայն ինչ և զմեզ։

Դարձեալ խորհեցաւ խորհուրդ չար վասն Հայոց և ասէ, «Գնամ ես
առ մեծն փափ և հանեմ էմրէր և ֆէթվանի, որ յերկրէս Լէհու ուր և
կան Հայք՝ հնազանդին ինձ, և փափին դապի լինին. ապա թէ ոչ՝ ար-
տաքսեսցին և վտարեսցին յերկրէն Լէհու, զի հերձուածողք են»։ Եւ ելեալ
գնաց իւրովքն։ Իսկ եղկելի Հայք տարակուսի եղեալ և ի մեծ սուգ ան-
կեալ ապաւինցան ի սբ. Աստուածածին կոյսն Մարիամ և ի Միածին
որդին, բարեխօս ունելով զսբ. հայրն և Լուսաւորիչն Գրիգորիոս, քրտնա-
ջան նահատակն և մեծ երախտաւորն, զի նա պահեսցէ զմեզ հաստատ-
ուն ի հաւատս մեր, և՛ ի կրօնս, և՛ յօրէնս նախնիս. և զի մի՛ դարձցի
յետս առ մեզ, և կորուսցէ կամ դարձուսցէ զմեզ ի հաւատն իւր. այլ
ի սպառ կորիցէ յինքն և մի՛ դարձցի յետս որպէս պիղծն Ուլիանոս,
աղօթիւք սրբոյն Բարսեղի մեծի Կեսարացոյ։

---

[12] Կարելի է կարդալ նաև «անատակ»։ Թեև մեզ հեռաքրքրող առն ավելի նման է «ռ»-ի. քան «տ»-ի։

Եւ մինչ մեք յայսմ տարակուսանաց և տրտմութեան էաք, եկն եհաս նորապսակ արքայն բազում հեծելօք և սպառազինօք ի քաղաքն Լով, որ զնայր ի վերայ յԱպազին և Թուրքաց խառնիճաղանճ յէջքէրին՝ ջնջել և հալածել, որպէս և եղեւն իսկ. զի մեծ սպառապետն բան Քրամովմին գնացեալ կոտորեաց, զայլս փախստական արարեալ մեծաւ յաղթութեամբ և ցնծութեամբ, եկն առ թագաւորն ի Լով քաղաքս։

194բ Եւ օր մի ժողովեալ ամենայն Հայք՝ ծերք և տղայք, երիտասարդք, եկք և բնակք բազում յոյժ, և գնացին ի դարպասն և անկեալ ի վերայ յերեսաց մեծաձայն և բարձր աղաղակէին ողորմ ու լալի և արտասուօք, ճիչ և ողբ կսկծալի հանեալ գոչէին ասելով. «Ողորմեայ մեզ, ո՛վ թագաւոր մեր և բաց զեկեղեցին մեր»[13]։ Մինչ զի քաղաքն ամենայն ողբակից լեալ գումարէին ի վերայ մեր, նաև զօրքն արքային. մինչ թագաւորն ինքնին եկեալ ի պատուհանն՝ ետես և լուաւ զհառաջ, զողբ և զդառն կսկիծ։ Եւ կոչեաց առ ինքն զՀայոց մեծամեծսն և ասէ. «Զի՞նչ է խիղճն և ողորմելի աղաղակն ձեր»։ Եւ նոքա պատասխանի տվեալ ասեն. «Մեծ օճիրս և բազում վնաս գործեաց մեզ Նիկոլ եպիսկոպոսն և զեկեղեցոյ խազնան ջնջեաց և վատնեալ կորոյս. և ինքն գնացեալ ի Հռոմ, կպղեց և մօհրեց զգրունս, և եդ զբանալիս քահանայապետիցն աստ»։ Ասէ բարէպաշտ արքայն. «Եւ գիտէ՞ք ստոյգ որ չկայ և ոչինչ»։ Եւ ասեն. «Ստոյգ գիտեմք»։ Ապա ասէ. «Մի՛ հոգայք. երբ աստ եկի ես, զձեր բանն կու հոգամ»։ Եւ կոչեաց զմեծ քահանայապետն և ասէ. «Առ ձեզ է բանալին Հայոց եկեղեցոյն»։ Եւ նոքա ասեն. «Այո՛»։ Ապա ասէ. «Զի՞նչ արար զայսչափ խազինան»։ Եւ նոքա ասեն. «Կայ ամէնն»։ Եւ բարկացեալ արքայն առաքէ զիւր խորհրդակիցն և զնոսա, ասելով. «Գնացէք կոտորեցէք զգրունս, զկնիքն ափրեցէք, բացէք և ի ներս մտէք, տեսէք զիմ խազնան»։ Եւ իբրև չգտին և ոչինչ, ամօթալից դարձան առ թագաւորն, նկուն և սևերես. զի իբր աւելով ջնջել էր և շուռջառ մի չէր թողել հին։ Ասէ թագաւորն ցասմամբ. «Ապա դուք է՞ր խաբէիք զիս, թէ ամէն խազնան ի տեղն է»։ Էառ զբանալին և հրամայեաց կրկին կնքել իւր մօհրովն և գրեաց նամակ առ փափն, թէ՝ «Ես ինքնիս եկեալ ի Լով տեսի աչօք և լուայ ականջօք զամենայն յօճրագործութիւնս և չարագործութիւնս այդ Նիկոլ եպիսկոպոսիդ». և թէ որպէս վատնեալ կորոյս զայդ չափ խազնան, այլ և գրեաց զամենայն իրս նորա մի ըստ միոջէ, և թէ՝ «Ես կամէի դատել զնա, փախեաւ և եկն առ քո սրբութիւնդ։ Արդ՝ սբ. հայր դատեսցես զնա որպէս զյանցաւոր, զի ոչ եթէ եկն սա ի մեր հաւատն վասն Աստուծոյ, այլ վասն ընչից և խազնին եկեղեցոյ»։ Եւ այլ բազում բանս գրեաց և ուղարկեաց և Հայոց պատվիրեաց, թէ՝ «Երբ գամ Շվէտու պատերազմէն ի յաթոռս իմ ի Վարշով, գայք առ իս, ես ձեր եկեղեցիքն

195ա կու տամ ձեզ»։ //Արդ՝ գնալոյն ի վեր եպիսկոպոսին մինչև ցայժմ տարի ու կէս անցեալ, Բ (2) տարին մօտեցաւ, բնաւ խապարն չեկաւ, ո՛չ ինքն, ո՛չ գիտեմք ողջ է, թէ մեռած, այլ և այլ զրուցնի կու դան, եթէ փափն զինքն արգիլեր է, և այլք ասեն, թէ՝ «Կորուսել է զինքն». բայց զճշմարիտն միայն Աստուծոյ է գիտելի։ Իսկ Հայոց ազանին գնացին ի Վարշով

[13] Ձեռ-ում «և բաց զեկեղեցին մեր» ձախ լուսանցքում։

առ թագաւորն՝ ի մեծ աիվան, որ կոչի սէմ։ Միթէ ողորմածն և մարդասէրն Աստուած մեր մեղացն չհայի, այլ ծագէ ի սիրտն թագաւորին, և իշխանացն, և մեծամեծ նախարարացն զհոգին շնորհաց, որ գթացեալ տան մեզ և դարձնեն զեկեղեցիս մեր, զի արժանասցին մտից նորա և կացցուք, մնասցուք, հայրենի հաւատս և օրէնս և յաւանգս մեր, փառաւորելով զՀայր և զՈրդի և զՍ. Հոգին յայժմ և անզրաւ յաւիտեանս. ամէն։

Արդ՝ թողլով զայլ իրս ի բաց, եկեսցուք ի բանս մեր յառաջին, զոր սկսաք պատմել վասն սուրկունին, զոր վարէին և արտաքսէին։ Անդ էր տեսանել զլաց և զաղաղակ, զՀիլ և զհառաջ, զի բաժանէին զորդիս ի հարց, և զեղբարս եղբարց, զիեսայն հարսնէ և հարսն ի փեսէ, զայր ի կնոջէ և կին այրէ, և քակեալ հեռացուցանէին զբարեկամս և զսիրելիս ի միմիանց։ Ո՜հ մեծի աղէտի, աւա՜ղ տարակուսանաց և Ռ (1000) վայ տառապանաց, որ եկին հասին ի վերայ ազգիս Հայոց։ Մեծ կսկիծք և տագնապք, զի ոչ գիտէին, թէ ուր երթիցեն, ոմանք զթավանլու տներն ծախէին կէս գին, այլք զխանութնին և զէսպապնին առանց գնոջ, այլք զհանդէրձս և զագանելիքն, կէսք զտան ինչքն և զապրանքն. ոմանք երթային և այլք ի ծով անկանէին, այլք գնացեալ մերձ սօխթայիք ձեռս անկանէին, և ի նոցանէ կոտորէին, և կիսոց մատաղատունկ մանկունք և կոյս աղջկունք ի ճանապարհին մեռանէին ի սովոյ և ի ծարաւոյ, յանձրևոյ և ի ցրտոյ։ Եւ ո՞վ կարէ պատմել կամ զրով արկանել զանցս և զվիշտս մեծի աղէտից, զոր յանհնարին չարի դիպան. յառաջմէ հեծելազօրքն, յետուստ ծովն, յաջմէ սով և յահեկէ սրածութիւն· և ոչ գոյ թիւ աղաղակի նոցա. և ոչ կարէին փախչել ուրէք և ոչ զգինս փրկանաց անձանց իւրոց տալ։

195բ Իսկ խոնթքարն գնաց մինչ յԵրեւան. և առ զբերթն և զիւր// շրջակայ դեղօրայքն, զոր յետ սակաւ աւուրց դարձան զօրքն Պարսից ի վերայ Տաճկաց և անխնայ կոտորեցին զանթիւ և զանհամարս՝ աւելի քան զԺԵ (15) բիւրս և առին զքաղաքն դարձեալ յետ։ Եւ ասին, թէ «Սուլթան Մուրատն փախստական դարձաւ ի տուն». և այլք ասեն, թէ՝ «Մնայ ի ձմեռայնոցն Համիթ». և զայլն յայլում վայրի գրեսցուք[14]։ Զայս սակաւս փոքր ի շատէ ծանուցաք ըստ կարի մերում, որպէս լուաք ի հաւատարիմ արանց. աղաչեմ համարձակութեանս լռել և զանյարմարութիւն բանիս ընդունել, զլաւն ի վատթարացն բաժանել և ինձ չի մեղադրել։

Բայց գրեցաւ սա ի հայրապետանիստ մայրաքաղաքն Էջվ կոչեցեալ, որ է Առիւծ, ի գուռն ննջման Ս. Աստուածածնին, որ յայժմ գերեալ և մատնեալ է յաղթարմայից ձեռս, որպէս ի հնումն տապանակն ի ձեռս այլազգաց։ Ի հայրապետութեանն տեառն տէր Փիլիպոսի և ի թագաւորութեանն նորապսակ արքային Վրլատիսլաւին։ Նօտրեցաւ Մեկնութիւն Արարածոցս ձեռամբ Բ (2) և Գ (3) նօտարացն, զոր եղև զրաւ և յաւարտ սորայ թվին ՌՁԵ (1636) դեկտեմբերի ԺԵ (15), սր. Յակոբայ պահոց, զոր աղաչեմ զհանդիպողսդ այս սր. կտակիս և աստուածային բուրաս-

14 Իմա ճանապարհորդական նոթերում։

տանիս, յորժամ կարդաք կամ օրինակէք զառաջին և զվերջին աշխատողսրդ մեկ Հայր մեղայիւ մի յիշէք, և Աստուած որ առատն է...[15]։

Բ

141բ Եւ ինձ անարժան գրչիս Սիմէոն դպրիս մեղաց թողութիւն։

958

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան, № 2017

Ստացող՝ Յովհաննէս աբեղայ

ա

407ա [Ա]րդ՝ աւարտեալ կատարեցաւ սակաւիկ գծագրութեանս տառ, որ է բացայայտութիւն տումարական արհեստից և ասուացուածք վարդապետաց սրբոց՝ վասն դաւանութեան, որ առ ուղղաշաւիղսն հետևման և բան ինչ չափական ոտիւ յաղագս երկնի և զարդուց նորա, յամի ըստ աբեթականս թուականի հազարերորդի ութսներորդի վեցերորդի (1636) ըստ հոլովման ականն վեհի յարարարդողի զդարս ընդ ժամանակի, յամսեանս սահմի երկոտասանի[16], յաւուրս ձմերանոյ։ Գրեալ եղև սա ձեռամբ հարազատ սրբասնունդ քեռ իմոյ Մարինոսի երանականին
407բ հետևողի։//Առ ի վայելումն անձին իմոյ՝ ինձ նուաստի՝ Յովհաննէս աբեղայի, և այնոցիկ որ յետ մեր եկեսցեն։ Զոր և մաղթեմ ի պատահողացդ սմին իրօք ինչ օգտութեամբ յիշատակել զմեզ բարի մտօք...[17]։

Բ

Գրիչ՝ Յոհան

421ա ԶՅոհան ծրող տետրակիս, յիշել աղաչեմ։

959

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան, № 713

Գրիչ՝ Յոհաննէս երէց
Վայր՝ Շատախ

ա

17բ Գրեցաւ Պարզատումարս ի յերկիրս Գանձայ, ի գիւղս Շատախի, ձեռամբ մեղօք լի Յոհաննէս իրիցու, ի խնդրու մեծաշուք մէլիք Սիմաւոնին, այլ և ծաղկեալ որդիքն իւր՝ պարոն Յիսայիանին, քաղցրիկ Աղայեանին, դեռաբուս Ամիճանին, Աստուած ընդ երկան աւուրս պահէ և խորին ծերութիւն հասուցանէ. ամէն։

---

[15] Այստեղ շարադրված մի քանի եղելություններին հեղինակն անդրադարձել է նաև իր ուղեգրության մեջ (տե՛ս «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն»)։

[16] Այսինքն՝ 1636 թ. դեկտեմբերի 23-ին, որովհետև հայոց ՌՁԶ տարեթիվը հուլյան տոմարի հաշվով, սկսվում է 1636 թ. հոկտեմբերի 13-ից, իսկ սամի ամիսն ընկնում է 1636 թ. դեկտեմբերի 12-ից մինչև 1637 թ. հունվարի 10-ը։ Սամի 12-ը կլինի 1636 թ. դեկտեմբերի 23-ը։

[17] Ձեռ-ը մինչև 406բ էջն ընդօրինակել է Մարինոսը՝ 1636 թ., իսկ մնացածը՝ 408ա—429բ էջերը՝ Հովհանը։ Վերջինիս տարեթիվը հայտնի չէ։

Թվականիս Հայոց ՌՁԵ (1636)-ին խոնդքարն իրեկ Արևան առաւ, դարձաւ Շահ Սոպին գնաց վերայ բերդին նստէց, բազում արիւնհեղութիւն ելաւ. վերջն Աստուծոյ է գիտելի, թէ ինչպէս կու լինի[18]։

Բ

59ա Գրեցաւ գիրքս ի դառն և ի նեղ ժամանակիս, ձեռամբ Յոհանէս իրի-
59բ ցոյ, թվիս ՌՁԵ (1636)։ // Զսաացող գրոցս յիշխանաց իշխան և պարու-
նաց պարուն, մեծաշուք և քաղցրայհոգի մէլիք Սիմաւոնն։ Ընտացաւ գիրքս յիշատակ իւրն և իւր ծնաւղացն, հայրն՝ Առրսաակէց քահանայն և մայրն՝ պարուն Դուլաղէն, որ Քրիստոս են հանգուցեալ. Աստուած իւրեանցն արքայութիւն շնորհէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք մէլիք Սիմաւոն, և կողակիցն իւր պապուն՝ Հիւրիխանն, և իւր ծաղկեալ որդիքն՝ պապուն Յիսահանն, և կողակիցն իւր՝ խաթուն Սալվարն, այլ և դեռաբոյս որդիքն՝ Աղայնանն, Ամինանն. Աստուած իւրեանքն ընդ երկան աւուրս պահէ և խորին ծերութիւն հասուցանէ. ամէն։

Գ

60ա Թվին Հայոց ՌՁ և[19] Դ (1635)-ին իրեկ խոնդկարն Ը (8) օրումն Արևանայ բերթն առաւ, յետ դարձաւ Շահ Սաբին բազում հեծելօք վերայ բերթին պատերազմում այ. բազում արիւնհեղութիւն այ լինում, ճորով այ առնում։ Վերջն Աստուծոյ է գիտելի, թէ ինչպէս կու լի[նի]։ Կան հալածական քրիստոնէից ազգս ի մէջ հարկայպահանջութեան։

960

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 1025

Գրիչ՝ Ովանէս քահանայ
Վայր՝ Հարբանդ

128բ Փառք...։ Ի թվիս Հայոց ՌՁԵ (1636) ամի, ի տէրութեան Խոյեանն, և իշխանութեան Տաճկաց շահ Սափի արքայի, որ յայսմ ամի էառ երկիրն Արարատեան, որ ասի Երևան, և դեռ ևս կամի չորս անկիւնս աշխարհի յափշտակել. և կատարածն Աստուծոյ է գիտելի, թէ որպէս կու լինի։ Գրեցս տառս որ կոչի Մաշտոց, և ինքեան ունի եաւթն խորհուրդ եկեղեցոյ, ձեռամբ յամենամեղ անձնէ Ովանէս քահանա[յ]ի, գործով թափուր և յունայնի, ի փառս Քրիստոսի...։ Գոհանամք զՏեառնէ իմմէ, որ ետուր կարողութիւն ի տկարութեանս իմոյ, մանաւանդ փոփոխմամբ խորհրդով,
129ա և անհաստատ մտովք, ըստ// Սողոմ[ոն]ի որ ասէ. «Զճանապարհս առն երիտասարդի ոչ գիտացի»[20] և այլն, հասանել ի աւարտ սբ. Մաշտոցիս ողորմութեամբն Աստուծոյ։ Աշխատեցի ի երկիրն Ծիղկունուց, ի գիւղն Հարբանդ, ի դրան Ս. Աստուածածնին, ի տեղապահութիւն տեղոյս Քալպալա խանին և քաջ պատերազմողին, ի առաջնորդութեան Փիլիպոս

[18] Գրիչ Հովհաննես երեցը գրել է ձեռ-ի 3ա—64բ էջերը, իսկ 68ա—132ա էջերը գրել և ձեռ-ը կազմել է Բարսեղ գրիչը հետագայում։ Վերջինիս հիշատակարանը տէ՛ս 1687 թ. շարքում։

[19] Ձեռ-ում «ՁԴ» տառերի միջև գրված է մի տառ, որը կարդացինք «և»։

[20] Առ., ԻԲ, 6։

կաթուղիկոսի։ Երես անկեալ աղաչեմ եղբարսդ, որք ընթեռնուք, յիշեցէք զիս՝ զբա[զ]մամեղս Ովանէս գծողս, և զծնօղսն իմ, զհայրն իմ՝ Մկրտիչ քահանայն, հանգուցեալն առ Քրիստոս և զմայրն իմ՝ Աւղանփաշէն, և կողակիցն իմ, և որդիքն ի[մ՝] Սհակն, հանգուցեալ առ Քրիստոս, և Սարգիսն, և զայլն ամենայն՝ մեծի և փոքու, և որք յիշէքդ՝ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ...։

129բ Աղաչեմ եղբարք, թողութիւն շնորհեցէք ինձ և անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս և սղալութեան, զի նոր էի գիր հանեալ և անվարժ մնացեալ վասն ծու[լութ]եան։ Ո՛վ եղբարք, թէպէտ գիրս ախմար է և վատ, դրեալն ի սմայ ընդիր աւրինակ է և յստակ։ Աւարտեցի առ ոտս վարպետի իմոյ Ըստեփանոս քահանայի և ժիր մշակ եկեղեցոյ։ Վարձահատուցն Քրիստոս հատուցանէ զվարձս ըստ իւրաքանչիւրոցն։

Դարձեալ հայցեմ ամենայնի,
Զիս մէջ առնել անիշելի,
Թէպէտ յիշման չեմ արժանի,
Յիշելն եղբաւրն է յոյժ բարի։
...։

961
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ
Երևան, № 1503 (1633 թ.)

632բ Յիշատակ է Յայսմաւուրքս ի դուռն Ղարամուրատու կուսանաց Ս. Աստուածածնին. զի ի յամին, որում թվական էր Հայոց ՌՁԵ (1636), սրբազան և երիցս երանեալ հայրապետն տէր Փիլիպպոսն ետուր զսա ի դուռն սբ. ու[խտ]իս և հաստատեաց զսա [եր]դմամբ և նզովիւք, թէ որ[չափ] այս անապատս հաստատ լինի, ով որ հակառակութիւն անի և հեռացուցանէ՝ նզովեալ լիցի ի սբ. հայրապետաց, զի ինքն հայրն մեր վերոյ գրեալ սբ. հայրապետն խնամարկեալ հիմն արկեաց և հաստատեաց զանապատս աղջկանց և նախախնամեաց սպասուք և ամենայն զարդուք և կացոյց մայրպետ զՀռիփսիմէ կոյսն, պարկեշտ վ[ա]րուք և միաբանքն ևս նոյնպէս։

962
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1714

Գրիչ՝ Ղազար քահանայ

130բ Կատարեցաւ Ժ (10) ստորոգութիւնսն ասացեալ յեռամեծէն Արիստոտելէ, որ ասի ըստ յունարէն ձայնի կատիղորիաս, զյոգնամեղ անձն Ղազարս, որ օգնութեամբն Աստուծոյ զպարփակօղս ընդհանուր էակաց աւարտեցաք. աղաչեմ յիշել ի Տէր[21]։

[21] Ինչպես հաղորդում է տէր Ղազարի աշակերտ Հովհանը իր 1659 թ. հիշատակարանում, ձեռ-ի նախորդ գրիչը «Մինչև ի Պերիարմենասի վերջն գրեալ (այսինքն՝ ձեռ-ի 148ա էջը-կազմ.) և... ի թվոյս ՌՁ և Ե (1636) ամին ի տիս երիտասարդութեան վաղճանեցաւ...» (էջ 150ա)։ Այստեղից էլ սույն հիշատակարանը դրեցինք 1636 թ. ներքո, իսկ Հոհանի հիշատակարանը՝ 1659 թ. շարքում։

963
ԺՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ

Երևան, № 1740

Ստացող՝ Առաքել

ա

Յիշատակարան գրոցս

420ա *Շնորհօք և ողորմութեամբ...։ Արդ՝ յանգեալ և եզերեալ էառ աւարտ և կատար պրակագրութեանս տառ շարագրութիւնս ճշգրտական և մակացութիւնս ջարալրական, իմաստս գերադրական և գիտութիւնս յաւէտ բազմաղան, զոր ներակռեալ յինքեան ոճագրութիւնս առաջնահանդէս տրամախոհ և տրամակիրթ փիլիսոփայիցն վեհականաց, զոր և տեսաւորի իսկ ձեզ զներհունատպական և զներանիւթական առածութիւնս, որ ի սմա պարունակեալ և ներմանօրէն և յարառոցարար դրիցմամբ. ի հազարերորդի ութսուներորդի և մակերրորդի 1633) ամի*[22]*, ըստ թուականութեանս ազանցս Հայկի, յամսեանն նաւասարդուոջ միակի, ընդ հովանեաւ և առ դրամբ իշման Միածնի կայի, որ է գահ անմատչական և գլուխ ամենայն արամայինս հանրախմրական, հրամանաւ և ծախիւք յաջորդին այսմ հռչակածաւալ գահոյիս երջանիկ և սբ. դիտապետի տանս Հայկական տեառն Փիլիպպոսի հայրապետի վեհի, որ և հեբրայակնէն առ*

420բ *մերս բան ջահից ստորոգրեալ, որ արդարև լուսաւորեաց //զտոհմս Արամեան, ճշմարտակրօն վարուքն իւրովք օրինակ ամենեցուն տուեալ զինքն և ոչ եթ ասացականաւ պիտակ բանիւ։ Զոր և առ հովանեաւ իւր ունի գրգռաւիար խնամարկութեամբ և տածողութեամբ ամենայն պիտոյիւք, որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ զմանկունս նորոյ Սիօնի և զուսումնականացն պարք յոլովից ունականալով օր ըստ աւուր այսմիկ գծի և ամենայն աստուածաշունչ տառից կտակարանաց։ Ընդ որս և ես՝ բաղբաղապատ ցնորիւք սահեալս և զառ ստորակայս սուզեալս ի ծըփանաց արդիսս կրկնավէր խօթացեալս իմանալեաւ և կաւադոյիւ համայնցավիրայգ և ապիկար Առաքեալ անուն կրօնաւորս։*

Արդ՝ քանզի այս մատեան իմաստասիրութեան օժանդակութեամբ և ձեռնտուութեամբ հարազատաց իմոց զրաւեցաւ կատարմամբ, վասն ոչ կարող դոլոյ իմ գրել և կամ այլում տալ ի գծագրութիւն վարկանիմ զսա ընծայ տուեալ ինձ հիգոյս, ցորչափ Տէր պահեսցէ զիս ընդ յարկաւս տաղտկականաւս ի վայելս և ի զբօսանս[23] *սփոփանաց ինձ եղիցի սա, իսկ զկնի վճարելոյ զայս կենցաղս յիշատակ լիցի հոգւոյ իմոյ և կրկին ծնօղաց իմոց և ամենայն արիւնակցաց և երախտաւորաց, որ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ անջնջելի առ վայելօղսդ բարեպաշտօն։ Զոր և*

---

[22] *Մեր մատենադարանի ձեռագրաց Ցուցակում սույն ձեռ-ի գրչությունը նշված է 1632 թ. (տե՛ս հտ. Ա, էջ 624). ձեռ-ի «հազարերորդի ութսուներորդի և մակերրորդի»-ի վերջին բառը կարդացել են մեկ և ստացել ՌՁԱ (+551)։ Եթե «մակ»-ի թվական արժեքն ընդունենք երկու, ինչպես ընդունված է տոմարական հաշիվներում, ապա կստանանք ՌՁԲ, իսկ հայոց ՌՁԲ։ Թվականի Նավասարդի 1-ը, ինչպես նշված է հիշատակարանում, կլինի 1632 թ. հոկտեմբերի 14-ին (հուլյան տոմարով), այս դեպքում կստանանք 1632 թվականը։ Սակայն 1632 թ. հայոց կաթողիկոս էր, ոչ թե Փիլիպոս Աղբակեցին, ինչպես նշված է մի քանի տող ներքև, այլ Մովսես Խոտանանցին։*

[23] *Ձեռ-ում «զբօնանաս» ձևով։*

հայցեմ ի պատահողաց առ սմին տեսաւորութեամբ և իւիք ինչ իրօր
421ա *օգտիլ դիպեսցի ձեզ, յիշեսջիք|| զմեզ բարեսէր մտօք և ճշմարիտ սրտիւ առ Աստուածն ամենազուրթ, զի թերևս հայցմամբ ձեր զտանիցեմք ողորմութիւն ի Քրիստոսէ յաւուրն հանրագումարի և յատեանն հրապարակախմբի յանցանաց իմոց, զոր մեղայ նմա։ Բայց քանզի զրեալ եղև սա յայլ և այլ տեղիս և յայլ և այլ զրչաց ըստ ոչ աջողութեան ամանակիս, ըստ որում և այլայլակատիպ զծէզ ցուցանի։ Այլ քանզի այսր եղև սկիզբն և աստ էառ աւարտ, և ընդ հովանեաւ սորա եմք կաճառեալ. սակս որոյ և այսմիկ տեղւոյ անուան արձանացաւ ի գումարս շարագրութեան յիշատակարանի։ Որոց և աղաչեմ իսկ, զի զվերոյ գրեալ աշխատօղսն ի սմա յիշեսջիք սիրով մեծաւ զտէր Յովհաննէս հարազատն իմ ըստ հոգւոյ սնընգակիցն, որ զմեծ մասն գրոյս նա շնորհեաց, որ վասն իւր ստացեալ էր և սիրոյ յաղագս ինձ աղցաւորիս օժտեաց, և զտէր Սիմէօնն, որ փոքր ինչ ի ծաղկէն արար և կազմեաց և սուղ ինչ ուրեք ուրեք մնացեալ էր գրելոյ գրեաց, որ և զյիշատակարանս իսկ, նաև զՄարտիրոս շնորհալից դպիրն, որ զշատ մասն նա ծաղկեաց, և զԱւաք դպիրն, որ յաղագս գծագրութեան սոյր ի դրունս գրչաց յոլով աշխատեցաւ և զՍտեփաննոս մահդասին, որ ի գնոցն օժանդակ եղև. որոց ողորմեսցի*
421բ *Յիսուս Քրիստոս|| Աստուածն մեր յիւր միւսանգամ դալըստեանն, պատճառ լինողի և տքնողի առ սա, մասն և վիճակ ընդ երանելիսն առնլով. ամէն։ Արդ՝ միւսանգամ աղաչեմ զձեզ կրկնահեծեծ մաղթանօք, զի ըստ դիւրափոփոխ ամանակիս ո և յաշողեսցի ժառանգել զսա, զսակաւիկ յիշատակագրութիւնս անուան մերոյ մի՛ լիցի արտաքսել ի սմանէ, վասն սիրոյն Տեառն, և յաղագս ձեր թողի ի վերջն թուղթ, եթե լիցի ձեզ կամ՝ անդ գրեսջիք զձերդ յիշատակ, և զմերն թողջիք աստ գթալով ի մեզ վասն աշխատանցս, զոր հոգացաք ի վերա սորա, զոր կրկին անգամ աղաչեմ մի՛ առնէք զգործդ արտաքեցել զյիշատակս մեր ի սմանէ, և ձեզ եղիցի գթութիւն...։*

Բ

Ծաղկող՝ Մարտիրոս

353ա *Հրաչող ծաղկաւդ այսմիկ տառի,*
Սին Մարտիրոս յոյժ դժբախտի,
Ցաւէտ տարփմամբ կաթոդնելի,
Ցիշել մաղթեմ զիս ի սրտի։

Գ

Գրիչ՝ Եղիազար

380ա Եղիազար *գրիչս յիշեցէք։*

Դ

Գրիչ՝ Եսայիա

420բ— *Ո՛վ եղբարք, քան զայս, լաւագոյն գիր գրել ի վերայ կազմեալ գրքի՝*
421ա *ինձ անկար է և ձեզ՝ ոչ գիտեմ։*

Ե

119բ Եւ ղ. ր. մ. ռ. վ. ր. ճ. լ. յեղկելի գծօղս յիշել աղաչեմ. ՌՁԵ (1636)[24]։

964

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՑՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ

Երևան, № 1930 (ԺԳ դար)

Վայր՝ Սաղմոսավանք

134բ Գիրքս իմաստասիրական սեփհական Սաղմոսավանիցն էր և այժմ ևս նորայ է։ Գրեցաւ թվականիս Հայոց ՌՁ և Ե (1636)։

965

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2656

Սրբագրիչ՝ Աստուծատուր

Վայր՝ Բռնակոթ

Ա

286բ Փառք...։

287ա Արդ՝ այսմ աստուածեղէն և երկնապարգև գանձիս և լուսափայլ մարգարտիս ցանկացաւ աստուածասէր և մեծ յոգի, քոյր բարունապետն մեր Արիստակէս, և ետ գրել զսր. Աւետարանս, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց մահդասի Մարտիրոսին և Մէնրշին, և եղբարցն՝ մահդասի Ալէքսանին, և իւր կուսան դստերցն՝ Մարիամին և Եղիսաբեթին, այլ և միւս եղբօրն՝ Մկրտչին, և իւր որդոցն՝ Յովանէս սարկաւագին,

287բ Մարտիրոսին, Էղլշին, Մովսէսին, և դստերցն՝ Մէնր//շին, Սալինէին, այլ և քվեբցն՝ Խանումին, և որդոցն՝ տէր Վարդանէսին, Գրիգորին, Մակարին, Ասաուծատուրին, և դստեր Խուրմին, և Խուրմին կուսան դստերն՝ Շուշանին, և միւս քվերն՝ Ղարիպսալթանին, և իւր որդոցն՝ Անդրէասին, Փանոսին, Եզդիկին, Կիրակոսին, և դստերցն՝ Սիրիգոտին, Հռիփսիմին, այլ և միւս քվերն՝ Խանբէկուն, և իւր որդոցն՝ տէր Պօղոսին, Սարգսին, Պետրոսին, և դստերց Մարիամին, Խանդիկին, Նարգիզին, այլ և միւս քվերն՝ Խաթունին, և դստերցն՝ Մարիանէին և Սանդուխտին, այլ և միւս քվերն՝ Սառին, և դստերցն՝ Վառվառին և Աստղիկին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն...։

228ա Արդ՝ յանգ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս և բերանս Քրիստոսի և քարոզս Յիսուսի տեառն Աստուծոյ մերոյ, ի վիճակս Ստաթէի առա-

---

[24] Այս փոքրիկ հիշատակագրությունը նույնությամբ գտնում ենք №№ 819 և 851 հիշատակարաններում, սակայն վերջին երկուսում տարեթիվը նշված է ՌԶԳ (1634)։ Ծածկագիրն առաջին անգամ ճիշտ վերծանել է պրոֆ. Ա. Աբրահամյանը, այսպես՝ ր—ե, մ=ս, ռ=ա, վ—յ, բ=ի, ճ=ա, լ=յ. =զնսայիայ (տե՛ս նրա «Մի քանի ծածկագրերի վերծանությունը» հոդվածը «Պատմա-բանասիրական հանդես»-ում, 1965 թ. №. 4, էջ 238)։ Երկրորդ անգամ պրոֆեսորն անդրադարձել է նույն ծածկագրին իր «Հայոց գիր և գրություն» աշխատության մեջ, բայց առանց բացատրության, ծածկագրի «վ»-ն փոխարինել է «լ»-ով (էջ 256)։

քելոյն, ի յերկիրն Սիւն[ե]աց, *ի գեաւղն որ կոչի* Բռնակոթ: *Եւ վասն սխալութեան սորա ոչ արժանի համարեցաք կոչել զանուն զծողին։*

Եւ ես՝ հետնեալս ի յամենայն բանականացն Աստուածատուր *սեթևթ իրիցուկ, ծառայ* Արիստակէս *վարդապետի և հրամ[ան]աւ սորին, բազում և խիստ աշխատութեամբ սրբազրեցի զսա, երեսս ի դետնի գնելով աղաչեմ զդասս սրբազանիցդ միով ողորմիւ յիշել։*

Ի թվականութեանս Հայոց ՌՁԾ (1636) ամին։

Բ

Դարձեալ յիշեցէք զմահդասի Մկրտիչն, *և զկողակից* Դշխոյն, *և զորդիսն՝* Յովանէս *սարկաւագն,* Մարտիրոսն, *զկուսակրօն// քահանայ զտէր* Արիստակէսն *և* Մովսէսն, *և զդստերացն՝* Մէնրիշին, Թութիկին, Սալինին, *և զմիւս դստերացն՝* Ղզլարին, Խանբէկուն, *և զթոռներացն՝* Ովանիսին, Դանէլին, Յոհանին, Մելիքսեթին, Մկրտչին *և փոքրիկ* Յարութիւնին:

288բ

Գրիչ՝ Կարապետ

Գ

Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ սբ. Աւետարանչիս ողորմեա մեղուցեալ և պարտաւոր անձին իմոյ զԿարապետ *գրչի, որ եմ*[26] *պարտական բիւր քանքարի, աղաչեմ յիշել ի Տէր, և դուք յիշեալ լիցիք. ամէն։*

225բ

Դ

Նվիրատու՝ Արիստակէս *վարդապետ*
Վայր՝ Շամբաձոր

Արդ՝ ես Արիստակէս *վարդապետս ետու յիշատակ զսբ. Աւետարանս* Շամբայ ձորոյ *ի դուռն Ս. Աստուածածնին։ Եւ ով ոք իշխեսցէ հանելոյ կամ ծախելոյ՝ նզովեալ եղիցի ԳՃԺԸ (318) հայրապետաց. ամէն։*

Դարձեալ յիշեցէք զառաջնորդ Ս. Ստեփանոս Նախավկայիս զՄիքայէլ *քաջ բարունապետն։ Դարձեալ յիշեցէք զքահանայք Ս. Աստուածածնիս զտէր* Մաթէոսն, *զտէր* Բարսեղն, *զտէր* Սարգիսն *զտէր* Մարգարէն, *և զհանգուցեալ քահանայքն՝ զտէր* Ազարիայայն, *զտէր* Խաչատուրն, *զտէր* Հայրապետն. *ամէն։*

966

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3594

Գրիչ՝ Խաչատուր *երէց*
Վայր՝ Կ. Պոլիս

104ա

[Փ]առք...։ Արդ՝ գրեցաւ գիրքս որ կոչի Մաշտոց ի Կոստանդինուպոլիս, *ի դուռն Ս. Սարգսի զօրավարին, ձեռամբ մեղապարտ և անարժան, սուտանուն* Խաչատուր *իրիցուս, ի թվականութեանն Հայոց ՌՁԾ (1636)։*

[26] «Զկարապետ *գրչի որ եմ» հատվածը ջնջված է, բայց կարդացվում է դյուրին։*

Արդ՝ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղապարտ գծողս և զծնօղսն իմ, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։ Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի յաղօթս ձեր զԿեսարացի Պետրոսն, որ ըստացաւ զսա ի հալալ ընչից և յարդեանցն, և եդ յիշատակ ի ձեռն հարազատ եղբօրն՝ տէր Կիրակոսին, յիշատակ իւր հոգւոյն և իւր ծնօղացն՝ Յակոբին և Եմինին, և ամենայն արեան մերձաւորացն, և Աստուած զյիշողդ յիշէ...։

967

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3872. տե՛ս նաև Թ8ժԴ, Բ, էջ 47, № 32

Գրիչ՝ Մելքիսէդ երէց
Վայր՝ Տաթևի անապատ

248ա *Փառք..., որ ետ կարողութիւն մեղապարտ անձին Մելքիսէդի սուտանուն իրիցու գրել զհոգեւոր տառս, որ կոչի Մաշտոց։ Արդ՝ աղաչեմ զձեզ, մանկունք եկեղեցոյ, յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղուցեալ գծողս Մելքիսէդ և զծնօղսն իմ՝ զտէր Յովանէսն և զԵղիսաբեթն, և զկողակիցն իմ՝ զՍիմայն, և զորդին՝ զՊետրոսն, և զդստերսն՝ զԵղիսաբեթն և զԹամամն, զՀռիփսիմէն, զՀերիքնազն և զՎասվառն, և զեղբարսն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ. ամէն։*

Դարձեալ յիշեցէք զկենդանի դստերս իմ՝ զՍանտուիտն և զհանգուցեալ այրն իւր՝ Էվազն, և զորդին՝ զՊետրոսն, զդստերսն՝ Մարինոսն և զՄարիամն։

248բ *Դարձեալ յիշեցէք զՍառէն, և զկողակիցն՝ // զԹումանն, և զորդիսն իւր՝ [զԳրի]գոր[ն], զՅովաննէսն, զ[հան]գուցեալսն ի Քրիստոս Աստուած յոյսն ամենեցուն և զյիշողացդ, և մեզ յիշելոցս տացէ զհայցուածս ըստ սրտից...։*

Դարձեալ արտասուաթոր աչօք զերեսս եդեալ ի հողի, առ ոտս սրբութեան ձերոյ, և հայցեմ տրտում սրտիւ՝ խնդրել յամենառատ Տեառնէ զթողութիւն վերոյ գրելոցն// [և ներումն յանցանաց, ևս ծրողի սորա և ամենայն աշխատողաց ի վերայ իմ։ Խնդրեցէք ի Քրիստոսէ, և նա որ ամենագութն է և ամենախնամն, տացէ ձեզ...։

Եւ զայս սիրելիք զի թվին ՌՁԵ (1636), ի այս ամ եղև զրաւ մահու վերազրելոց ի սմա։

249ա *///[26]։ Բայց գրեցաւ սա ի թիւն ՌՀ (1621)-ին ի ժամանակս մեծ բարձունապետին մեծին Մովսէսի և Սարգիս պարոնտէր հօր սբ. անապատին Եւստաթէի, սբ. առաքելաշնորհ աթոռոյն պարոնտէր Մեսրոպ արքեպիս-*

---

[26] Ձեռ-ի 248բ և 249ա էջերի միջից ընկել է չորս թերթ՝ հիշատակարանի մեծ մասը։ Այդ երևում է նրանից, որ ձեռ-ի էջերի նախկին համարակալումը և այժմյանը չեն համապատասխանում, այժմյան զրույցամբ 248-ը՝ 252 թերթն է, իսկ 249-ը՝ 260 թերթը։

կոպոսի, և ի ղանութեան շահ Ապասի[27] *և տեառն թագաւորն երկնի և երկրի... երկրի, և արարչին փառք յաւիտեանս. ամէն*[28]։

Այս ամենայն եկն ի վերա մեր վասն մեղաց իմոց. զի վերոյ յիշեցեալքս և այլ աւելի, զի արեանառու կարծեմ թէ այլ ոչ մնաց։ Վասն այնորիկ սգազգեստ սրտիւ պաղատագին կողկողանօք և լալոտ աչօք խնդրեմ ներել բազմամեղիս...։

968

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 4263 (1460 թ.)

ա

195բ *Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ստացող սբ. Մաշտոյցիս* զՄուրատն, *զկողակիցն իւր՝* զՄարգարիտն, զՄուրաքն, զԹուրանդէն, *զհայրն իւր՝* զՇաղաւաքն *և զմայրն իւր՝* զԽանումն. *և զեղբայրն իւր՝* զԿիրակոսն, *զհաւրեղբայրն իւր՝* զՓախշան, *և զորդ[ին] իւր՝* զՀղղաքն, *զմեծ պապն իւր՝* զԲաբաւն: *Դարձեալ յիշեցէք ի մաքրայփայլ յաղաւթս ձեր* զՄուրատն, *որ ստացաւ զսբ. Մաշտոյցս ի հալալ վաստակոց իւրոց և եդ ի դուռն Ս. Յովանիսայ։ Ով հեռացուցանէ կամ ծախէ կամ գրաւէ՝ զպատառն Յուդայի տանէ և զայլն դխաչ խանողացն. ամէն։*

Յոհանիսի *վկայութեամբ։ Ի թվականիս ՌՁԵ (1636)։*

բ

Կազմող՝ Թումա երէց
Վայր՝ Շահգալդի

312բ *Փառք...։ Արդ գրեցաւ սակաւ բանս և կազմեցաւ ձեռամբ տկար իմաստ ոզոյ և զառածեալ մեղաւք* Թումա *իրիցու, ի գիւղս որ կոչի* Շահգալդի, *ընդ հովանեաւ Ս. Խաչիս և սբ. երկաթագիր Աւետարանիս, ի վայելումն աստուածասէր և բարեմիտ առն* Մուրադին *և իւր*[29]

գ

313բ *Դարձեալ յիշեցէք... մահդասի* Մուրադին, *կողակցին՝* Մարգարտին *և միւս կողակցին՝* Մուրաքին, *և հօրն՝* Շաղաւաքին, *մօրն՝* Խաթունադին, *և քուերն՝* Գազալին, *դստերն՝* Թուրանդին, *և միւս դստերն՝* Էքարին, *եղբօրն՝* Կիրակոսին, *որդոյն՝* Յեխանէսին, *հաւրեղբաւրն՝* Փաղշանին, *կողակցին՝* Էքարին, *որդոյն՝* Խլղաքին, *պապուն՝* Բաբոնի[ն], Խանադին,
314ա // Գուլումին. *ամէն։*

---

[27] *Սկսած «բայց գրեցաւ»-ից մինչև նշված տեղը տե՛ս նաև* Մ. Զուլալյան, *Ջալալիների շարժումը..., էջ 235։ Բայց ինչո՞ւ է հավելվածի նյութերի շարքում դրել այս հիշատակարանը. չհասկացանք, որովհետև կապ չունի ջալալիների շարժման հետ։*

[28] *Ձեռ.-ն ընդօրինակվել է 1621 թ., իսկ հիշատակարանը գրվել է 1636 թ., ուր ի միջի այլոց է հիշվում գրչության ժամանակի մասին։*

Ձեռ.-ի 37բ, 134բ, 243ա էջերում ևս կան պատմական արժեքից զուրկ հիշատակարաններ։ Գրչի՝ Մելքիսեդ քահանայի կենսագրությունը տե՛ս 1695 թ. շարքում։

[29] *Հիշատակարանն ընդհատվում է ձեռ.-ից թերթ ընկնելու պատճառով։*

969
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ
Երևան, № 4376

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

314բ Փառք...[30]։ Ընդ նմին և զեղկելի գրիչս զՅակոբ սարկաւագ և զծնօղս իմ՝ զհայրն իմ և զմայր[ն] իմ, և զեղբայրն իմ՝ ղփոխեալսն Քրիստոս...։

Գրեցաւ և աւարտեցաւ զերգս հոգևորս սբ. հօրն Դաւթայ մարգարէին ի թուականութեանս Հայոց ՌՁԵ (1636), ի հայրապետութեանն տէր Փիլիպոսին, ձեռամբ բազմամեղ գրչի Յակոբ սարկաւագի, ի քաղաքն հռչակաւոր Կոստանդինուպօլիս, ի դուռն Ս. Նիկողայոս Զմիւռնոյ հայրապետին։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ եղբայրք, կարդալով կամ աւրինակելով կամ զաղաբար տեսանելով, յիշեսջիք զվերոյ գրեալսն. և Տէր զձեզ յիշէ...։

970
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 4981 (ժամանակ ?). տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Ա, № 758, էջ 210բ, № 6333, էջ 2բ, հիշտ. № 8

Գեր. ազատող՝ Գաբրիէլ

223բ Ի թուին ՌՁԵ (1636) ելին զօրք իսմաելեան և ասպատակեցին զԵղեքնայ ձ[որ]ն, և բազում գերի և աւար առին, ընդ բազմացն և գերեցաւ սբ. Աւետարանս։ Իսկ ես՝ Գաբրիէլս հանդիպեցայ սբ. Աւետարանիս, և վերստին գնեցի զսա ի հալալ վաստակոց իմոց, և ետու ի ձեռն առաջին տիրոջ սբ. Աւետարանիս տէր Մարտիրոսին, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրս Գրիգորին և մօրս [Վա]ռդիթերին, և ինձ Գաբ[ր]ի[ել]ին և իմ կողակիցին՝ Մարիամին։ Արդ՝ որք հանդիպեք սմա, յիշեսջիք զմեղ միով ողորմայիւ...։

971
ՇԱՐԱԿՆՈՅ
Երևան, № 5123.

Գրիչ, ստացող՝ Վարդան սարկաւագ
Վայր՝ Կ. Պոլիս

ա

244ա Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի ձայնքաղ, ի թվին ՌՁԵ (1636), ձեռամբ Վարդան սարկաւագի, ի վայելո[ւ]մն անձին իմոյ, ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլսի, ընդ հովանեաւ սբ. վկային Գէորգա[յ]։ Արդ՝ աղաչեմք զամենեսեանդ, որք հանդիպիք ի սմա կար[դալով
244բ կա]մ օրինակ[ելով, մէկ Հայր մ]եղ//այիւ մի յիշեցէք զՎարդան գրիչս,

[30] «Փառք»-ը սկսվում է 313բ էջից և հասնում մինչև 314ա էջի կեսը և ընդհատվում, հաջորդ 314բ էջից սկսվում է հիշատակարանի պատմական մասը։

և զծնողսն իմ՝ զկենդանիս և զննջեցեալն. և Աստուած զյիշողդ յիշէ[31]...։

Բ

79բ Զվարդան ախմար գրիչս յիշեցէք յաղօթ[ս] ձեր։

Գ

Հետ. ստացող՝ Պողոս սարկաւագ
Վայր՝ Ըստամբոլ

244բ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք այս եղանակաւոր տառիս զվերջին ըստացող սորա զՊողոս սուտանուն սարկաւագս, և զհայ[ր]ն իմ՝ զՎբրդանէսն և զմայ[ր]ն իմ՝ զՇանուն, և զկենակիցն իմ՝ զԹուրանդէն յիշեսջիք ի Քրիստոս. և Աստուած զձեզ յիշէ իւր միուս անգամ դալրստեանն...։

Ես՝ Պողոս սարկաւագս առի ձայնքաղ Շարակնոցս Ըստամբոլ ԼԲ (32) զուռուշ։ Դարձեալ Աստուած զայն մարդն աւրհնի, որ լաւ պահէ և հոգ տանէ ի ձէթէ, ի թաց մատէ, որ խիստ պատուական յարմարած բան է՝ վարպետահան և ուսած մարդոյ և դաս ասելոյ. և մի ողորմի մեղ ասելոյ. ամէն[32]։

972

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5194 (1608 թ.). տե՛ս նաև ՀՁՎԼ, № 355, էջ 827-830

Նվիրատու՝ Յովսէփ Յոզմեցի
Վայր՝ Աղթամար

ա

6ա Եւ արդ՝ ի վերջին դարուս և յերեկոյացեալ ժամանակիս, ըստ որում արեգական հոլովմամբն կազմեաց զժամս և զաւուրս, զշաբաթ և զամիս և զամս, և բարգեաց զժամանակս և յարաբարդեաց դարս ԱԹՆ. վասն զի յելանելոյն Ադամայ ի դրախտէն մինչև ցայժմ պարունակեալ եղև ամս ԷՌԿԱ (7061), իսկ ի ծնընդենէ կենարար փրկչին մերոյ Յիսուսի մինչև ցայժմ են ամք Ռ և ՁՃ և ԼԸ (1638), իսկ ի հայկազեան սեռիս տումարի, ըստ որում եդաւ ի ժամանակիս ամբարշին Յուստիանոսի ՌՁԵ (1636) ամին, ի թագաւորութեան այլասեռից Ալի Աւսմանին՝ ի գահն ասիական Կոստանկնուպօլսի սուլթան Մուրատին և յարևելեան բռնակալութեանն Պարսից ջիհանգիր շահ Սաֆին, և ի հայրապետութեան ընդհանիւր Հայոց տեառն Փիլիպոսի, և ի մերոյ աթոռոյ կաթողիկոսութեան կղզոյս Աղթամարայ տեառն Ստեփանոսի և նորին հարազատի Յովանէս եպիսկոպոսի, և յիշխանութեան տանն Գագ//կայ ծերունոյն Ղարաբէկի, և պարոն Աշոտի և Տաղլանբէկի, և նորահաս մանկանն Անդրամէլէքի, և ի քահանայութեան կղզոյս Թումայ երիցու։ Ես շնչականս ի բանականաց, ապիկարս ի կարողաց, անիմաստս յիմաս[տ]նոց, խոհերականս ի սրբոց,

[31] Սույն հիշատակարանը տե՛ս նաև № 6333, էջ 2ա, հիշատ. № 4։

[32] Էջի վերջում նշված է Պողոս սարկավագի մահվան թվականը. «Դարձեալ թվին ՌՃԼԸ (1689) որ տէր Պողոս փոխ[եցաւ] առ Քրիստոս»։

արբշիռս ի պարկեշտից Յովսէփս, որ սոսկ անուամբ միայն կոչեմ վարդապետ, ի յերկրէն Մոկաց. ի գեղջէն Յոզմայ, եկի ի կղզիս Աղթամար, բերի ընծայ զԱւետարանս հրաշագործ, ոսկէտուփ և արծաթապատ և եդի զսա ի դուռն Ս. Խաչին[33] և Ս. Ստեփաննոսին և Ս. Գրիգորին, ընդ սմին և պատուական շուրշառ մի Բուրսայի զարբաֆ։ Եւ եղիցի սոքայ յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղաց իմոց՝ Ղազարին և Գօզալին։

Ո՛վ եպիսկոպոսք և քահանայ սբ. եկեղեցոյս, որք հանդիպիք սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ հարևանցի տեսանելով, լի սրտիւ և բոլոր հաւատով ասացէք Աստուած ողորմի Յովսէփ վարդապետին և ծնաւղաց
337ա նորին և ամենայն արեան մերձաւորաց։ Դարձեալ աղ//աչեմ զձեզ, ո՛վ կաթուղիկոսք, եպիսկոպոսք և քահանայք, զի ես ետու զսբ. Աւետարանս և զշուրշառն ի դուռն Ս. Խաչին և Ս. Ստեփաննոսին անջինջ յիշատակ հոգոյ իմոյ և հօրեղբարն իմոյ՝ Ստեփանոս եպիսկոպոսին։ Եւ մի՛ ոք իշխեսցէ գրաւել կամ գողանալ կամ ծախել կամ հեռացուցանել ի դրանէ սբ. եկեղեցայս, այլ կացցէ և մնասցէ աստ յաւիտեանս յաւիտենից։ Իսկ եթէ ոք յանդգնի ամբարտաւանութեամբ, գրաւելով կամ գողանալով կամ ծախելով հեռացուցանէ զսբ. Աւետարանս և զշուրշառն ի դրանէ Ս. Խաչին և Ս. Ստեփաննոսի՝ հեռացեալ լինի ինքն ի յարքայութենէն Աստուծոյ և ջնջեալ լինի ի դրոյն կենաց...։

Բ

Գեր. ազատող՝ Վարդան քահանայ
Վայր՝ Աղթամար

337բ Դարձեալ աղաչեմ զձեզ, ասացէք Աստուած ողորմի ըռէս Էնիաբ//ին, որ ըստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ արդեաց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն, հօրն՝ Միրզին և մօրն՝ Ջամբէկիհաթուն, և եղբօրն՝ Գրիգորին, և կնոջն՝ Համբէկուն, և որդոցն՝ Եղիայ սարկաւագին և Վարդանիսին, և դստերն՝ Հռիփսիմին, և իւր կնոջն՝ Թուրանդին, և որդոյն՝ Նազարին, և դստերն՝ Դունիային, և քւերցն՝ Մարանին և Թառբէկօն և Աղասուն. ամէն։ Որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, ասացէք Աստուած ողորմի ըռէս Էնիաթին և ծնողացն և եղբօրն և որդոցն և դստերացն և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց. ամէն։

Որ սբ. Աւետարանս անգեալ էր ի ձեռն պարտայտիրոջ ի Վան քաղաքի գերի։ Ես՝ տէր Վարդանս՝ սուտանուն քահանա[յ], որ բազում շանս կրեցի ի ձեռն պարտատէր սուտ քրիստոնէի։ Եւ յորդորեցի զըռէս
338ա Էնիաթն և զգիւղի// տանուտիարքս, որ աւգնական եղեն զռուշով, կէս զռուշով, ապասով, շայով, ժողովեցի և տվինք պարտայտիրոջն և վերըստին գնեցինք և բերինք ի յԱղթամար, ի դուռն Ս. Խաչիս և Ս. Ստեփանոսին և Ս. Ամենայփրկչիս և Ս. Աչերացս. ամէն։ Եւ դարձեալ ասացէք Աստուած ողորմի ըռէս Էնիաթին, և իւր ծնողացն, և եղբարցն, և որդոցն, և դստերացն, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն. ամէն։ Եւ որք յանդգնին և հեռացուցանեն ի դրանէ Ս. Խաչիս Աղթամարայ....

[33] Մինչև այստեղ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 759, էջ 240բ։

Գ

Դարձեալ ասացէք Աստուած ողորմի բոէս Ղարիպջանին, որ լաւ արծաթէ սկիհ մի եւ Ս. Խաչին անջինջ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց՝ հօրն՝ Բաբոին և մօրն՝ Ազամաթին, և հանգուցեալ եղբարցն՝ Հուրիջանին և Սարուեանին և իւր կողակցուն՝ Նիգարին, և որդոցն՝ Աւաքին և Ամիրջանին, և դստերն՝ Գուլոսկուն և ամենայն արեան մերձաւորացն ամէն...

973

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5494

Վայր՝ Ասպահան

228բ Փառք...։

229բ Ըստ այսմ օրինակի փափագեալ եղև աստուածային սբ. Աւետարանիս, աստուածասէր մահգասի խոջայ Պետրոսն, և եւ փոքր ինչ ի գրելոյ սորա, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, զհաւրն՝ Փիրամիրին և զմօրն՝ Մարիամին, և զքոյրն՝ Անամին, և կողակցին իւր՝ Հռեփսիմին, և ամենայն արեանառու մերձաւորաց. ամէն։

Բայց գրեցաւ սա յԱսպահան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի թվականիս Հայոց ՌՁԵ (1636), ի հայրապետութեան տէր Փիլիպպոս կաթողիկոսի ի յաթոռ սբ. Էջմիածնի՝ Վաղարշապատու, և զարհեպիսկոպոս զտէր Խա[չատո]ւր վարդապետն, և զգծող սբ. Աւետարանի։ յիշեա ի Տէրն ամենայնի։ Դարձեալ յիշեցէք զհաւատարիմ խոջայ Պետրոսն, որ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրն և ծնողաց իւրոց, հաւրն՝ Փիրամրին և մօրն՝ Մարիամին, և[34]

974

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5637. տե՛ս նաև ՀՁՎԼ, № 381, էջ 887—890

Գրիչ՝ Աւետիս երէց

Վայր՝ Լիմ

Ա

36բ Ձեղեռնագործ և զթարմատար, անարժան երէց Աւետիս անուն Թացուեցի, աղաչեմ յիշել ի պաղատանծ յաղաւթս ձեր։

Բ

Գրիչ՝ Կարապետ երէց

Վայր՝ Վան

299բ Փառք...։

304բ Ուստի և տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, քաջ և արի զՍտեփանոս վարդապետն, որ է առաջնորդ Լմա[յ] ծովապատ սնապատին և զմիաբան եղբայրքն իւր, և եւ տուն գրել զծաղկազարդ և լուսափթիթ, հրաշափառ սբ. Աւետարանս, յիշատակ հոգոց իւրոց և ծնողաց իւրոց. ամէն։

[34] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է, հաջորդ էջերը կտրված, հանված են։

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս Բ (2) գլուխն՝ Մաթէոս և Մարկոս ձեռամբ Թացուեցի տէր Աւետիսին ի Լմա[յ] անապատն, ի դուռն Ս.
305ա Դէորգայ զօրա//վարին, ի թվականիս Հայոց ՌԶԵ (1636), և բարի մահուամբ փոխեցաւ յաշխարհէս, ի հայրապետութեան սբ. էջմիածնայ Փիլիպոս կաթուղիկոսի, և Աղքամարա[յ] Սաեփանոսի, և տեղակալութեան Կոստանդինուպօլսի սուլթան Մուրադին, որ մի ամ է զի եկն զԵրևան առաւ և ի Վան եկաւ և դարձեալ գնաց Իստանպօլ:

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի դառն և ի չար ժամանակի, ձեռամբ անարժան և փծուն գրչի Կարապետ երիցի, ի Վան քաղաքի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին։ Զի իմ անընդունակ եղեալ յարուեստ գրչութեան և բաղում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր Հոգին. բաղում աշխատանօք և տրտում և ցաւագին անձամբ զերկու գլուխն՝ զՂուկաս և զՅոհան գրեցի մեղսամած մատամբք իմովք, կենօք տառա-
306բ պեալ և տարակուսեալ մեղօք։ //Ի խնդրոյ սրբասնունդ և մաքրամիտ, հեզահոգի, քաջ և արի Սաեփանոս վարդապետի և միաբանութեանս ամենայնի, որ են յանապատս Լիմ՝ ԲԺ (12) կարգաւորօք և Ծ (50) միակեցաւք ի սէրն Քրիստոսի և ի յապաշխարութիւն ճգնութեան աշխատեալք անհանգիստ տքնութեամբ մշտաշան առաքինութեամբ, զոր տէր Յիսուս անտես մի՛ արասցէ, այլ ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում ամենայն աշխատողաց որ ի վերայ սբ. Աւետարանիս ունին՝ թէ՛ տրօք, թէ՛ գրելով և բանելով։ Այլ և ծաղկեցաւ ձեռամբ Ջուղայեցի տէր Սաեփանոս քահանայի[35]։

Գ

306բ Արդ՝ որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս... յիշեսջիք և զիս
307ա զմեղուցեալ Կարապետ գծողս յամենայնի, և զծնօղսն իմ և զ[ը]նդա//նիսն իմ և զբարէկամսն։ Եւ զհոգևոր հայրն իմ՝ զհեզահոգի և մաքրամիտ տէր Սաեփանոս քաջ քարտուղարն, որ բաղում երախտիք ունի ի վերայ մեզաւորիս, միթէ ամենազօրն Քրիստոս...։ Այլ և զսիրելի եղբայրքն իմ՝ զտէր Մեսրոպն և զտէր Նիկողայոսն և զԹաքուլն, յիշեցէք...։

Դ

Ծաղկող՝ Սաեփանոս Ջուղայեցի
Վայր՝ Լիմ

34բ Սաեփանոս Ջուղայեցի,
Տանէն Պարսից ելա եկի,
Երուսաղէմ /// գնացի,
Փութո[վ] /// տ կարեցի։
Ապա եկա աստ Վան հասի,
Նստեալ փութով զայս ծաղկեցի,
Ոսկով պայծառ զարդարեցի,
Եւ յիշատ[ակ ինձ] դրեցի։

---

[35] ա և բ հիշատակարանները համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Բ, № 516, էջ 428—430

Ռա[բունապե]տ Ստեփանոսի,
Եւ է նա հայր անապատի,
ՑԼիմ կղզի ծովամիջի[36]։

Ե

Ստացող՝ Սաեփանոս վարդապետ
Վայր՝ Լիմ

305բ Արդ՝ անպիտանս և ապիկարս ի գործս կրօնաւորութեան, որ զանուն վարդապետի և զառաջնորդութեան առեալ վասն հոգևոր եղբարցս անապատիս և ի գործոց ճգնութեան և յառաքինութեան վերջացեալ եմ, որ ղեղբարցս պէտս հոգոյ և մարմնոյ յանձն եմ առեալ և լիապէս չեմ կա-
306ա տարեալ, այլ պարտատէր եմ ինձ և սոցայ, բայց յոյս// զՔրիստոս ունիմ, որ ի յեղբարց աղօթից մասն պարգևէ մեզ, և որպէս աստ միաբան եկեղեցի և ի սեղան և յայլ ամենայն գործ, նոյնպէս և ի դատաստանին ի միմեանց մի՛ անջատեսցէ. ամէն։ Արդ՝ զայս սբ. Աւետարանս յըստոյզ յօրինակէ ետու գրել, վասն յանապատիս հաստատութեան, ի Սրսայ յօրինակէն, զոր ընտրեաց տէր Աւիտիս ծերն և գրեաց՝ Ա (1) իւրն, որ տարան ի Թացու. և Ա (1) Նորշինոյ Յովանիսին, և մինս այս ի տկարութեան ժամանակին, որ մինչ ի մեռնելոյ յօրն կու գրէր, զոր տէր Աստուած ողորմեսցի իւրն. ամէն։

Արդ՝ որք հանդիպիք սմա ընթերցմամբ թէ տեսութեամբ և կամ աւրինակ առնելով, Աստուած ողորմի ասացէք ինձ մեղապարտ Ստեփանոս բանի սպասաւորի և իմ հոգևոր և մարմնաւոր ծնողացն և ազգականացն, այլ և հոգևոր եղբարցս անապատիս կարգաւորաց և միակեցայց ասացէք
306բ Աստուած ողորմի, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ //Այլ և վարպետացն՝ տէր Աւիտիսին, տէր Ստեփանոս գեղեցկաբան ծաղկողին, որ զանազան գունով և ոսկիազարդ վայելչութեամբ և լազվարդով գեղեցկացոյց։ Արդ՝ որ առատն է ի տուրս բարեաց...։

Եւ կացցէ Աւետարանս յիշատակ ի դուռն Լմա[յ] Ս. Գէորգ զաւրավարիս, ի վայելումն անապատաւոր եղբարցս, որ ի սէրն Քրիստոսի միաբանեալ են աստ։ Եւ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զԱւետարանս ի դրանէ սորա ո՛չ ի մերոց և ո՛չ յաւտարաց, այլ խնամով պահողացն Աստուած ողորմեսցի...։

Զ

5բ Սա է կառք աստուածային,
Տեսաւ վերայ Քոբար գետին,
Եզէկիէլ Բուզա որդին,
Փառաւորեալ կերպ ունէին։
Աթոռ կազմեալ քառակերպին,
Նա իւրաքանչիւր հանդէպ գնային,
Որ հակառակ միմեանց չխօսին,

[36] Ձափածոն գտնվում է 34բ—36ա էջերի խորանների մեջ։ Հմմտ. «ՀԱ» 1947 թ., էջ 115։

[Ը]ստ մի բնութեամբըն բաժանին։
Թվին ՌՁԵ (1636)[37]։

975
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Երևան, № 5662 (ԺԶ դար)

Գրիչ՝ Հերապետ

202բ Ես՝ Հերապետ Արտայվելցի գրեցի գիրս թվին ՌՁԵ (1636)։

976
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 7222 (ԺԶ դար)

316ա Յիշատակ է Շարակնոցս Ղարամուրատի աղշկանց անապատին ի թվին ՌՁԵ (1636), յառաջնորդութեան Հռիփսիմէ[38] և իւր սրբակրօն միաբանիցն։ Վախմ և յիշատակ է սա՝ այս անապատիս. ով որ հանել ջանա զսա՝ դատապարտի ի Տեառնէ. ամէն։

977
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 8509 (ԺԷ դար)

Գրիչ՝ Սիմէոն

ա

99ա Բազմադիմէ շնորհք մարդասիրին Աստուծոյ առ ազգս մարդական...։ Զի ոմանք շինեն եկեղեցի՝ տուն Աստուծոյ և ոմանք կանկնեն խաչս՝ յանուն խաչելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ... և ոմանք կարողանան գրել գիրս յառաքելոց և մարգարէից, նաև զտէրունական հրամանքն, որ է Աւետարանն։ Վասն որոյ և Սիմէոն սրբասէր աբեղաս փակակալ Ս. Կարապետին և սպասաւոր, յօժարեցայ ի սէրն Աստուծոյ և ետ վերըստին կազմել զսբ. Աւետարանս, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց պարոն Մուննաթին և Խուբլու խաթունին, իւր եղբարցն՝ Յոհանիսին, Սպանդիարին, Սարգսին, Կիրակոսին, և քվերցն՝ Սաիպ խաթունին, Սուլտան խաթունին, Խուանդ խաթունին և իւր[39] հարազատ որդւոյն՝ Վարծէլին, զոր երկար ամօք պահեսցէ տէր Աստուած, և կենակցին իւրո[յ՝] Սատրփիալին։ Զի յառաշէ ամուսնացեալ էր ըստ օրինաց և յետ մեռանելո[յ] կենակցին իւրոյ սիրեալ զվարս առաքինութեան և յանձն

[37] Այս չափածոն գրված է մի նկարի շրջանակի մեջ։ Հմմտ. «ՀԱ», 1947 թ., էջ 116։ Ձեռ-ի արծաթապատ կազմի վրա կա հետևյալ հիշատակագրությունը. «Կոստղս յիշատակ է Ջուղայեցի մահտեսի Պետրոսին. թվին ՌՂ (1641)»։ Առաջին՝ չափածոյի տողերի սկզբի տառերից հոդվում է «Ստեփանո[ս] երեց», իսկ երկրորդից՝ «Ստեփանոս»։

[38] Այնուհետև դատարկ թողնված տեղում ավելացվել է «Գայանայի» անունը նոր ժամանակների ձեռագրով։

[39] «և իւր» կրկնված է։

առեալ զկրօնք ճգնութեան, զոր տէր Աստուած պահեսցէ ի նոյն առաքինութեան...։

Ո՛վ սբ. ընթերցողք և զիս զմեղապարտ զբիչ ըզՍիմէոնս, որ զսակաւ գիրս գրեցի, արժանի արէք միոյ Տէր ողորմեսի...[40]։

Բ

Վայր՝ Ամիթ

Այլ գրով

128բ Թուին ՌՁԵ (1636) սուլթան Մուրատն Ըստամպօլու ելաւ եկաւ ի յԱրզրում, գնաց Երևանու վերայ կռիւ և զԵրևան առաւ Թ (9) աւուր մէջն, և ըզՅախբլցիսա այլ առաւ, և զԹարվէզ այլ առաւ, և ինքն յետ դարձաւ, եկաւ ի Յամիթ նստաւ, ի յառաջնորդութեան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսին. և այս գրեցաւ։

978

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 8620. տե՛ս նաև № 6333, էջ 90ա, № 366

Գրիչ՝ Խաչէօ

Վայր՝ Կ. Պոլիս

213բ Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զգիրս Մաշտոցի, ես՝ մեղապարտ գրիչս Լէհցի Խաչէօյիս, յիշատակ հոգւոյ Գրիգոր իրիցուն և զաւակացն՝ Սահակին և Ճուճարին, Հեղինեին և յամենայն արեանարու մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց.

213ա որոց թողցէ Քրիստոս Աստուածն մեր ղյանցանս նոցա և գ//բեսցէ ի գիրն կենաց. ամէն։ Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՁԵ (1636)։ Եւ կազմեցաւ ի մայրաքաղաքս Կոստանդիանուպալիս։

979

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան, Adm. H. C. № 14 (1554 թ.) (մանրաժապավեն, Երևան № 112)

237 Ա[յ]ս է յիշատակ Լուսիկին, իւր կինն Թառղումաշին, և որդին՝ Կիրակոսին, իւր կողակիցն՝ Թրինջին, և որդոցն՝ Թասալին, Խաչատրին. Խերումին, Մովսէսին, թոռն՝ Մարութէն, ուր կողակին Սէղմէրին, որդին՝ Սիմոն, Ասլովն, դուստր Անայփային, Զանազանն, Հարսն՝ Սաբրիխանմին, Ապովին կողակից ընդերձող Ծաղիկն, թվին Ռ-ն և Զե (1636) ամին։

---

[40] Զեռ-ը գրված է տարբեր ժամանակներում և տարբեր գրիչների կողմից։ Գրիչներից մեկի հիշատակարանը տե՛ս 1688 թ. շարքում։

980
ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ
Տիրայր վարդապետ, № 27 (ժամանակ ?)

Գրիչ՝ Ոճանէս Յաղբակեցի

385 *Ես՝* Ոճանէս *Էրէցս* Յաղբակեցի *հանդիպեցայ ի յայս և մեծ և հռչակաւոր [մ]աթէնս, որ աղղուարթ կոչի, թվին մեծաց Հայոց ՌՁԸ (1636)։*

981
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Փարիզ, 5 (մանրաժապավեն, Երևան, № 573Ա)

ա

83բ *Թվին /// ՌՁԸ (1636) էյ///աչիլար խօլար մէն///ուլան արզանի ալ ղըշրնրղտա սիզին մէն արղա///* Գասբարնը *ունուդմանըաա։*

բ

159ա *Տա եազրլիլը եազուլինի տէր* Գասբարնը, *տէր* Զամարիայ *աւէքէրէց օղլուն արի ալզըշտա ունուդմակին։*

982
ԱԻԵՏԱՐԱՆ
Ցիշատակարանք, Զ (1568 թ.), (լուսանկար, Երևան, № 170)

Հետ. ստացող՝ Խանիգուլ

52 *Փառք...։ Ես՝ մեղաւոր* Խանիգուլ *առի սր. Աւետարանն ինձ յիշատակ ի թվարերութեան Հայոց ՌՁԸ (1636), թագաւորութեան շահ* Սավին[41], *հայր իմ* Աղագիշ, *մեծ հայրն իմ՝* Ուլաղայ, *մայրն իմ՝* Քալախաթուն, *եղբայրն իմ՝* Մրատ, *այլ եղբայրն իմ՝ հանգուցեալ* Ճանաղայ, *որդւոյ նորա* Մարտիրոս, Մարկոս, Ղուկաս, Ղոշաղայ, Ոճան, *մարն*[42] *իմ* Խանում, Հոումսիմայ, Աւետեանս. *ամէն։*

983
ՇԱՐԱԿՆՈՑ
ԼԱՎԴԱՒ, № 185 (1556 թ.)

Գրիչ՝ Կարապետ

1190 *Գրեցաւ տետրակս ձեռամբ սուտանուն* Կարապետի, *ի վայելումն* Սահակ *կրաւնաւորի, թվին ՌՁԸ (1636). ամէն*[43]։

---

[41] *Բնագրում գրված «ՌՀԸ»-ն սխալ է, շահ Սեֆին Արաս Ա-ին հաջորդել է 1629-ին և իշխել է մինչև 1642 թ.։ Եթե ճիշտ է շահ Սեֆի անվան հիշատակումը, նշանակում է տարեթիվը պետք է ուղղել ՌՁԸ։ Այդ նկատի ունենալով, սույն հիշատակարանը դրեցինք 1636 թ. շարքում։*

[42] *Բնագրում «Հարն»։*

[43] *Ինչպես հաղորդում է Ցուցակի հեղինակը Կարապետ գրիչն ընդօրինակել է Ձեռ-ի վերջին 17՝ 342—358 թերթերը (էջ 1091)։*

984

ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընդարձ», հտ. Ա, № 754 (ժամանակ ?).

Հետ. ստացող՝ Աստուածատուր քահանայ
Վայր՝ Խորասան

209ա Զվերջին ստացող սբ. Աւետարանիս Աստուածատուր քահանէս... ի թվին ՌՁԵ (1636) կատարեցաւ յերկիրն Բասեն, ի գիւղն Խորասան, թագաւորութիւն Տաճկաց սուլտան Մուրատին, որ էառ զԵրեւան:

985

ԱԻԵՏԱՐԱՆ

ՁՁԱՐ, № 192

Գրիչ՝ Եղիա Համբեցի
Վայր՝ Անկիւրիայ

931 Փառք...։ Իսկ իմ ամենամեղ հոգւոյ և անիմաստ գրչաւորի Եղիայի Համբեցոյ, դեզէրելով ի հոգեկաւոր վանսն Անկուրիոյ՝ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվականութեանս Հայոց ՌՁԵ (1636), և ի հայրապետութեան տէր Փիլիպոս կաթուղիկոսի, ի յառաջնորդութեան և ի դիտապետութեան յայսմ նահանգի տէր Սամուէլ վարդապետի, զի տէր Աստուած պահեսցէ ընդ երկայն աւուրս ի սբ. աթոռ իւր. ամէն, և միաբանից Ս. Աստուածածնին և սպասաւորաց սորին, սրբասանեալ և պատուելի կրաւնաւորացս՝ տէր Թորոսին և տէր Գրիգորին, և այլ ամենայն միաբանիցն, որ աստ կան ի սպասաւորութիւն մենաստանիս, զոր տէր Աստուած պահեսցէ ընդ երկայն աւուրս։ Նուաստ և ի բնաւից և ի վերջինս ամենայնի Ղալանուղցի տէր Յակոբս ցանկացող և փափագող եղև յայսմ բուրաստանիս և անջիջանելի լապտերացս, և ըստացաւ զսբ. Աւետարանս զայս հալալ արդեանց իւրոց, ի յիշատակ բարի անձին իւրոյ և ի փրկութիւն հոգոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ խոճայ Պալուն և մաւրն՝ Թուիքարին՝ զփոխեցեալսն ի Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորս՝ զհանգուցեալսն ի Քրիստոս և զկենդանիս, որ յայսմ աշխարհիս կան՝ զերիցակինն զՄարիամն, և զդեռաբոյս
922 ծաղկեալ որդիքս իմ զմահտէսի Մաթէոս, և //զԿիրակոսն, և զԱստուածատուրն, և զԹուիքարն, որոց եղիցի սա յիշատակ անձին իմոյ. և յետ աստի կենացս իմոյ փոխելոյ, անջինջ մնասցէ յիշատակ որդոց իմոց. ամէն։ Որոյ ականատես լեալ յետին գրիչս և փանաքիս ի քարտուղայս, չուառս և աղկաղկս յամենայնի և մոռացեալ զիս զբնիկ տկարութիւնս ցանկացող եղէ սմա։ Թէպէտև յոյժ անբմբռն՝ ապաւինեալ այն, որ տայն յամենայնի առատապէս և ոչ նախատէ, ձեռնարկեցի ի սմա սուտանուն Եղիայ թարմատար մելանաւոր, հասի ի զրաւ գրչութեան սբ. Աւետարանիս ոչ ըստ արհեստիս և զաւրութեան անձինս, այլ ի կատարումն ուխտեալ հրամանի մարդասիրին, թէ «Ամենայն որ խնդրէ՝ առնու»[44],

[44] Ղուկ., ԺԱ, 10։

Արդ՝ աղաչեմք զհանդիպողքդ սբ. Աւետարանիս, յիշման արժանի վարքչիք գմահտէսի տէր Յակոբն, և զայլ ամենայն մերձակայս՝ զկենդանիս և զհանդուցեալս յիշման առնել արժանի առաջի անմահ զենլոյն Քրիստոսի, զի որ առատն է ի տուրս բարեաց և նախախնամող յամենայնի, անպարագրելի գթութեամբ իւրով գթասցի ի սոսա և ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն իւրում. ամէն։

986

ՄԱՏԵԱՆ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԼԵՀԱՀԱՅՈՑ

ՏՁՁՄՎ, № 452

Վայր՝ Լօվ

923 Հայոց թվին ՌՁԵ (1636) նորոգեցաւ տիֆթարս... ի քաղաքն Լօվա[յ] ի թեմչիյ, Նիկողայոս [Թորոսո]վիչ եպիսկոպոսին. 1637։

987

ՀԱՒԱՔԱԾՈՒ

ՈՁՁՄՎ, № 1259

900 Կամօքն Հօր և իւր Որդոյն Ս. Միածնի,
Եւ Ս. Հոգւոյն իւր էակցի,
Որ աջողէ ամենայնի,
Տունս շինեցի Հայոց թվի
ՌՁ և Ե (1636) ասի,
Որ և զսկիզբն ես արի,
Մուտն առաջի սեպտեմբերի,
Եւ ես նուաստ մեղօք ի լի,
Եպիսկոպոս անուամբ էի,
Քան զի (?)...(?) վերաձայնի,
Եւ առաջնորդ Հէճին գիւղի,
Նա... (?) սայ է զաւակ և իմ որդին,
Վասն սորայ տուն շինեցի,
Զի վայելեսցէ բազում ամի... (?)
Թոռին (?) իմ Գրիգորին (?) .... Յակոբին[45]։

988

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

ՄՁՁԵՊ, II, № 369 (1300 թ.)

Կազմող՝ Ստեփանոս
Վայր՝ Երուսաղէմ

278 Զվերջին ստացող սբ. գրոցս զտէր Նիկիտայոս ժամարարն, որ եկաւ ի սբ. յԵրուսաղէմ, և մէկ քանի տարի եկաց ի սբ. քաղաքս յԵրուսաղէմ. իւրն ուխտ արար յամէն տնաւրինականաց տեղիքն Քրիստոսի պատարա-
279 գելով զիւր՝ սրտի վափաքն լցուցանելով, արաբի//չն Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ ի վերայ երկրի. ամէն։

[45] Բոլոր բազմակետերը և հարցականները նշված են ցուցակում։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տէր Նիկիուղայոսին, որ վերստին նորոգել նոր գգիրքս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն իւրոց, հաւրն՝ Ղազարին և մաւրն՝ Մաւրիամին, և կողակցին՝ Ոսկիճատին, որք հանդիպիք սմայ կարդալով և կամ օրինակելով կամ տեսանելով նայ, լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք տէր Նիկիուղայոսին, և իւր ծնողացն, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Կաղմեցաւ և նորոգեցաւ դիրքս ի սբ. քաղաքս Յերուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ և գլխադիր սբ. դամբարանին և այլ սրբութեանցն, որ աստ կան հանգուցեալ, և ի հայրապետութիւն տէր Գրիգոր եպիսկոպոսին, ի թվին ՌՁԵ (1636) ամին, ձեռամբ սուտանուն Ստեփանոս կազմողի. ամէն։

989

ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ

ՄՅԶԵՊ, III, № 693

Գրիչ՝ Գրիգոր Ջուղայեցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

122 Ո՛վ եղբայր իմ, թողութիւն շնորհեա՛, օրինակն չըկայր, անյիշաչար լեր մեղաւորիս, վայ ինձ։

բ

Ո՛վ սբ. սպասաւորք բանին Աստուծոյ, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զմեղաւոր և փանաքի Գրիգոր Ջուղայեցիս։

գ

Ո՛վ. սբ. մանկունք եկեղեցոյ, յորժամ երգէք զտասնաղիս (?), յիշեցէք զգրիչ Գրիգոր քահանայս։

դ

Փառք...։ Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, որք հանդիպիք այսմ տառիս՝ Աստուած ողորմի ասացէք ստացողի սորա, մեղօք զառածեալ և հոգով աղտեղացեալ սոսկ անուն Գրիգորիս, որ եմ
133 ի բուն գաւառէն Սասնայ, ի դեղչէն Նիշ կոչեցեալ, որ կացի//սակաւ ժամանակ Յերուսաղէմ, և ստացա զժամագիրքս, ոչ թէ ի վաստակոց և յաշխատանաց իմոց, այլ ի յողորմութենէ ողորմածաց, յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղաց իմոց, հօրս տէր Ստեփանոսին, և մաւրս Շողոյին, և կենակցին իմոյ՝ Մանուշակին, և ամենայն արեան մերձաւորացն և ողորմութիւն տրուողացն՝ կենդանեաց և հանգուցելոց առ հասարակ ամենեցուն. ամէն։ Այլ և եդի զսա յիշատակ ի Քրիստոսի Ա. Ծննդեան տեղիքն։ Եւ ով որ հանէ զսա ի Ս. Ծննդենէն Քրիստոսի պարտական լիցի։

Արդ՝ ի թվին ՌՁԵ (1636) ստացանք զգիրքս զայս ի յառաջնորդութեան տեառն տէր Գրիգոր արքեպիսկոպոսին, որ է առաջնորդ սբ. Երուսաղէմայ Հայոց վիճակին։ Սա զամենայն եկեղեցիս Հայոց նոր նորոգեաց, և արքունաւորեալ պայծառացոյց զեկեղեցիս Հայաստանեայց։

Եւ ի ՌԶԴ (1634) թվին Հռոմ տղղն ծոադատիկ արաց և բաղում նեղութիւն հասոյց ազգիս Հայոց, իսկ հայրապետն մեր՝ տէր Գրիգորն շատ քաջութիւն արար և յաղթեաց աղդացն երկաբնակաց և յամօթ արար զնոսա, որ լոյսն բղխեաց ի Լուսաւորչին մերոյ կարգեալ Զատիկն...։[46]

Ե

Դարձեալ վերստին Աստուած ողորմի ասացէք մահդասի Կուլասարին, *որ շատ աշխատեցաւ ի դուռն Ս. Յակոբայ՝ ի պաղչէքն և յայլ ամենայն տեղիք, և ջերմեռանդ սիրով ցանկացաւ այս դրոց և կցորդ ու մասնակից եղև տէր Գրիգոր վարդապետին և ստացան երկոքեանն ի միասին զայս ժամագիրքս և եդին յիշատակ հոգոց իւրեանց ի Քրիստոսի սբ. ծննդեան տեղիքն... յիշեցէք...* Կուլասարին *և իւր ծնաւղացն, հօրն՝* Գրիգորին, *մօրն և եղբաւրն՝* Մինասին, *և կողակցացն՝* Աւրիմանին *և* Անենային, *և որդոցն՝* Պաւղոսին *և* Տաւնոյին, *և հարսին՝* Մրուաքին *և ամենայն ազգականաց։...։*

990

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՄՅԶԵՊ, IV, № 1213

Գրիչ՝ Անդրէաս

Ա

350 *Փառք...։ Ի թուին ՌԶԴ (1635) գրեցաւ գիրս* Պորփիւրի *և գունեալս ի մեծէն Դաւթէ, ի վարժումն այնինչ ստեանդիաց բանի, ձեռամբ* Անդրէաս *սուտանուն և տխմարագիր գրչի մեղաւորի. աղաչեմ զընթերնաւզդ յիշել։*

Բ

*Զողորմելի մեղաւք գերի զ*Անդրէաս *գծողս աղաչեմ յիշել, և որք յիշեն՝ յիշեալ լիցին ի Քրիստոսէ։*

Գ

Գրիչ՝ Իսրայէլ

351 *Զ*Իսրայէլս *յիշել աղաչեմ, ՌԶԵ (1636)։*

991

ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՅԶԵՊ, V, № 1700 (1318 թ.)

Հետ. ստացող՝ Ղուկաս աբեղայ

577 *Ըզվերջին ըստացաւղ Շարակնոցիս զ*Ղուկաս *աբեղայն յիշեցէք ի Քրիստոս, որ ըստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց, վկայութեամբ տէր* Յոհանիսին *և* Բաղիշու *խոճան[եր?]ուն։ Յիշատակ է ի դուռն Ս. Աղբրիկայ, ի թվին ՌԶԵ (1636), յիշեցէք... անարժան* Ղուկաս *աբեղին և իւր ծնաւղացն, հաւրն՝* Մաւռիրոսին *և մօրն՝* Շաղզաանի. *ամէն։*

[46] Դ և Ե հիշատակարանները համառոտ տե՛ս նաև Աղավնունի, *Այցելուք*, էջ 102։

992
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 120

Գրիչ՝ Ասվածատուր Երէց
Վայր՝ Ստամպոլ

169 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի թուաբերութիւն Հայոց ՌՁԵ (1636), ի քաղաքն Ըստամպոլ, ի դուռն Ս. Նիկողայոսի, ի դպրատան ումեմն մեղայարտի, ձեռամբ աշակերտիս, ծառայ սբ. Աւետարանիս անուամբս Ասվածատուր Երէցս։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք սմա, յիշեցէք աղաւթս ձեր զծնաւղս իմ և զերախտաւոր վարպետ[ն] իմ, որ բազում երախտիս և աշխատանք ունի ի վերայ իմ։ Եւ այլ յիշեցէք զըստացող սորա զմահտեսի Վաքանն, որ բազում հետէ ցանկայր փափադմամբ ետ գրել և դնել յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, որ և զստացաւ զսա յիշատակ իւր և իւր ծնաւղացն, և եդ ի դուռն Ս. Աստուածածնի և Ս. [Յ]ոհանիսի։

993
ԲԺՇԿԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 578 (ժամանակ ?). տե՛ս նաև «Հասկ» 1939 թ., էջ 93

Հետ. ստացող՝ Ատեիֆ

851 Ի թվականիս Հայոց հազար ութսուն և հինգ (1636), ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Փիլիպպոսի։ Զվերշին ըստացող սորա նուաստ, հող և մոխիր ամենայն ոտաց սուտ Ատեիֆս, որ ըստացա զսա ի հալալ վաստակոց իմոց, շատ շանիւ և սիրով, զի ընթերցող սորա օգտին ի սմանէ մարմնով և ժիր մարմնով աղօթեսցեն և գտցեն յոյսն ամենայնի և պայծառանան հոգով. ամէն։ Դարձեալ յիշեցէք զհայրն իմ՝ Փանոսն և զմայրն իմ՝ Մարգարիթ, և հանգուցեալ եղբայրն իմ՝ Աղէն, որ նորաբոյս հանգօ ի Քրիստոս, և այլ եղբայր Ոնանն, և քվերաց իմոց. տէր Աստուած վարձս բարեաց պարգևեսցէ յիշողացտ և յիշեցելոցտ և լսել տա զերանաւէտ ձայնն և յերկնից արքայութեան արժանի արասցէ. ամէն։

994
ԱԻԵՏԱՐԱՆ
ՋՂՎՍ, I, № 180 (1469 թ.)

752 Աստուած ողորմի Քնարին հոգոյն, հաւրն՝ Վարդուկան հոգոյն և մաւրն՝ Քեմիային հոգոյն, որ զայս Աւետարանս կապել երետ թվին ՌՁԵ (1636)։

995
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄԻՔԷՋ, «Էջմիածին», 1965 թ., Ը—Թ, № 227

Գրիչ՝ Յովհաննէս Երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

119 Եւ զեղկելի գծողս սուտանուն Յովանէսս աղաչեմ միով ողորմի[ւ] ե յիշել ի Տէր. ամէն։

Բ

Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թվաբերութեանս Հայոց ի ՌՁԵ (1636), ի քաղաքն Կոստանդինուպոլիս, *ի դուռն Ս. Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի հայրապետութեան տեառն սբ.* Էջմիածնայ *տէր* Փիլիպպոսի *ամենայն Հայոց կաթուղիկոսի, և ի մերոյս աթոռակալութեանն* Կոստանդինուպոլսի *տէր* Զաքարիայ *արհի եպիսկոպոսի, և ի բռնակալութեանն Տաճկաց սուլթան* Մուրատ *խոնդքարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, ձեռամբ հող, և մոխիր, և ոտից փոշի յետնեալ, և մոխրամած սուտանուն* Յովանէս *իրիցուս, որ զանունս ունիմ և զգործն ոչ, այլ աւտարացեալ ի սբ. անուանէ, և հեռացեալ ի բարի գործոց։ ...Յիշեցէք ի բարին ստացող սբ. Աւետարանիս* Ամիրասաթէնց *խաւջայ* Սաֆարն, *և կողակիցն իւր՝* Խանզատէն, *և իւր որդին՝* Ստեփանոսն, *և դստերքն իւր՝* Կատարինէն,...:

996

ՃԱՇՈՑ

ՄՁՀՍ, № 136

Գրիչ, ծաղկող՝ Ղազար Բանտնայ

Վայր՝ Հալապ

237 *Փառք... աստուածային գանձուցդս փափաքող եղեալ աստուածամեծարն և աստուածարեալն, անձն աստուածունակ և երանեալն* Ուրհայեցի *ոսկէդործ մահդեսի* Մկրտիչն, *որ ըստացաւ զաստուածաշունչ կտակարանքս ի հալալ վաստակոց իւրոց, ի վայելումն անձանց մանկանց եկեղեցւոյ։ Յիշատակ իւրն, և հօրն իւրոյ՝ մահդեսի* Բախդիարին, *ե մօրն՝* Տօնախանումին, *և եղբարցն՝* Դաւթին, Սարգսին, Խաչատուրին, *և ազգայիցն՝* Աբրահամին, Ղազարին *և* Մարանէին, *և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։*

Այլ ապէնիազն Աստուած, և նա որ զկամս երկիւղածաց իւրոց կատարէ, կատարեաց ղյիշձ փափաքանաց սորա, զի ես յետինս ամենայն քահանայից և անեարեստ գրիչս Ղազարս, *որ զայս գիրքս գծագրեցի, զի ըստ կարի իմում յոյժ աշխատեցա և գրեցի ի լաւ և ընտիր աւրինակէ. զի ունի սա բովանդակեալ յինքեան զմատեանս սբ. մարգարէիցն, որ յամէն մարտիրոսացն տօնի, զառակսն Սաղոմոնի, և զմարգարէականքըն, և զառաքելականքն, և զաւետարանականքն յինքն ունի, զխորհուրդ շարշարանաց թաղմանն և յարութեանն, և յայլ փրկագործ անաւրէնութեանց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր կատարեաց յերկրի, այլ և գիրք քարոզութեան սբ. առաքելոցն։ Եւ ամբարեալ ունի սա զընթերցումն բովանդակ տարւոյն, զեղեալ ընթերցուածն Յակովբայ և Կիւրղի, և զյինանց կարգքն, զգործքն և զկաթուղիկէն, և զտօնից տէրունականաց. և զյիշատակ սրբոց զկիրակէից, և զշաբաթապահոց, զչորեքշաբթու և զուրբաթու, զիւրաքանչիւր ոք յիւրում տեզուոջ եղեալ, զի անաշխատ լինելոյ մանկանց եկեղեցւոյ շարագրեցաք ի սմա վասն օրինակի։ Եւ զսոսա ետ գրել և ընկալաւ ի ձեռին իւրում, և ընձայեաց Հօրն երկնաւորի։*

Բարեխօս արկանելով առ նա զմաղթանս մարգարէիցն, և զաղօթս սբ. առաքելոցն, և զփրկագործ տնօրէնութիւնն որդւոյ իւրոյ Միածնի, զի քաղցր ակամբ հայեսցի ի սա, և փոխանակ յայսմ գրոյ, դրեսցէ զսա ի գիրն կենաց, և արժանի արասցէ արքայութեանն իւրում. ամէն։

Արդ՝ եղև աւարտումն գրոյս ի թուականութեանս Հայոց ի Ռ և Զե (1636) ամին, ձեռամբ Ղազար քահանայի, ի մայրաքաղաքն ի Հալապ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացս և այլ սբ. նշանացս, որ աստ կան ի պահպանութիւնն ամենայն քրիստոնէիցս, ի կաթուղիկոսութեան տէր Սիմէոնի Սեբաստացոյ և ի առաջնորդութեան այսմ նահանգիս տէր Յակոբ քաջ բարունապետին Կարկառեցոյ։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան ըզհանդիպողքդ յայսմ մատենիս, որք ընթեռնոյք զսա կամ օրինակէք և կամ դաղափարէք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացաւղ սորա՝ զաստուածասէր զմահդեսի Մկրտիչն, և զծնողս իւր զմահդեսի Բախդեարքն և զՏօնախանումն[47], և զեղբարքն իւր՝ զԴաւիթն, զՍարգիսն, և զԽաչատուրն, և զամենայն արեան մերձաւորքն, զի տեսանելով զառօրեայ կեանս մեր փոփոխական և անցաւոր, որպէս ասէ մարգարէն Դաւիթ. «Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ։ Շնչէ ի նմա հողմ մահու, ոչ է և ոչ ևս երևի տեղի նորա»[48]։ Վասն որոյ կանգնեաց ըղսա իբրև զարձան յաւիտենական, զի զկնի եկեալքն տեսցեն զյիշատակ սորա անջնջելի, և յիշեսցեն զսա ի մեղսաքաւիչ յաղօթս իւրեանց և խնդրեսցեն յԱստուծոյ զթողութիւն մեղաց մահդեսի Մկրտչին, և ծնողացն իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և հանգուցելոցն. ամէն։ Ընդ նմին

238 և զիս զանարհեստս և զփծուն գրիչս զսուտա//նուն Ղազարս, որ ըստ կարի իմում տառապանօք և աշխատութեամբ գրեցի և ծաղկեցի և կապեցի։ Եւ զհոգևոր հայրքն մեր և զուսուցիչքն անարժանիս ղտէր Վասիլ արքեպիսկոպոսն և զքաջ քարտուղարն և զերաժիշտ վարպետն, և զՅակոբ վարպետն, որ բազում աշխատութեամբ աշխատեցան ի յուսուցանելն զիս զանարժանս, ևս առաւել զմարմնաւոր ծնողքս իմ՝ զմահդեսի Պաղտասարն, և զմահդեսի Լուսինն, և զմահդեսի Խանդերն, և զամուսինն իմ, և զաշակերտեալ մանկունքս իմ և զամենայն արեան մերձաւորքս՝ զկենդանիքս և զհանգուցեալքսն։ Եւ ինքն բարերար և մարդասէրն Աստուած, որ առատն է ի տուրըս բարեաց մեզ յիշելոցս և ձեզ յիշողացս առ հասարակ ողորմեսցի. և տայէ զիւր աստուածային տառա ողորմութիւնն ամենեցուն. ամէն։

---

[47] Տպված է «զՏօնախաթումն». փոխեցինք վերում գործածված «Տօնախանումն»-ին համապատասխան, եթե ճիշտ է «Տօնախաթումն» ապա ավելորդ է նաև «մ» տառը, բայց այդպես հազիվ թե։

[48] Սաղ., ՃԲ, 15—16։

997
ՅԱՅՍՄԱԻՈԻՐՔ

ՅՁՍԳ, № 145. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» հտ. Ա, № 756, էջ 209բ—210ա, «ՀԱ», 1927 թ., էջ 491—492

Գրիչ՝ Բարղամ
Վայր՝ Սեբաստիա

87 Փառք...։ Արդ՝ գրեցաւ աստուածաբուղխ մատեանս... ի քաղաքս Սեբաստիա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Սարգսին, թուին Հայոց ՌՁԳ (1634) եղև սկիզբն սբ. գրոցս։ Եւ սոյն ամի էր ծառազատիկն Յունաց. և ի միւսումն ամի թագաւորն Տաճկաց սուլթան Մուրատն խաղաց գնաց ի Պարս ի պատերազմն։ Եւ եկեալ հանդիպեցաւ ի քաղաքս Սեբաստիա. և հրաման եղև նորոգման Ս. Նշանի վանացն և Ս. Սարգսի եկեղեցւոյս. զոր բազում աշխատութեամբ և մեծաւ շանիւ Սեբաստացի Ներսէս վարդապետն վերստին կանգնեաց և նորոգեաց, գեղեցիկ և պայծառ շինուածովք զՍ. Սարգսի կաթողիկէ եկեղեցին Սեբաստիա և զժամատուն և զայլ խցերն կրկին նորոգեաց, և հիւրանոցս և սեղանատունս սահմանելով։ Քանզի սա եղև Սեբաստիա քաղաքիս կրկին Զօրաբաբէլ, որ բազում վիշտ և զնեղութիւնս կրելով յանօրինացն, շինեաց և հաստատեաց զՍ. Սարգիս եկեղեցիս, ի պարծանս մեր և ամենայն հաւատացեալոց։ Զոր տէր Աստուած // ինքն ընդ երկայն աւուրս պահեսցէ վասն մեր
88 ուղիղ վարդապետութեամբ։ Եւ յետ աստեացս ելանելոյ, զինքն իւր ծնողքն և համօրէն ննջեցելովքն երկնային լուսեղէն խորանացն և անթառամ պսակացն արժանիս արասցէ։ Մանաւանդ զՍ. Սարգսի եկեղեցւոյս քահանայքն և ժողովուրդքն, որ աշխատեցան ընչիւք և ստացուածովք և աւգնական եղեն ի շինումն սբ. եկեղեցւոյս, հատուցէ նոցա Քրիստոս զվարձս վաստակոցն իւրեանց, ի գալստեան և յարքայութեան իւրում։ Զոր տէրն կենաց և տուողն ողորմութեան Քրիստոս Աստուած մեր, աղօթիւք և բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և սրբոյն Սարգսի զօրավարին և ամենայն սրբոց, անշարժ և հաստատուն պահեսցէ զսբ. եկեղեցիս մեր, մինչև եկեսցէ այն որ իւրն է հանդերձեալ։ Արդ՝ եղև զրաւ գրչութեան սորա թուական ՌՁԵ (1636), ի հայրապետութեան սրբոյ, Էջմիածնայ տեառն Փիլիպոսի, և ի յառաջնորդութեան այսմ մայրաքաղաքիս Սեբաստիոյ, վերոյ դրեալ քաջ բարունապետի՝ տէր Ներսէս վարդապետի, ձեռամբ յոգնամեղ և թարմատար Բարղամի, ի խնդրոյ յանցաւոր Մինասի, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոյ....

998
ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, ԿԱՆՈՆԱԳԻՐՔ (ժամանակ ?)

Թորոս աղբար, Ա, էջ 294—295. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 757, էջ 210ա—210բ

Յիշատակ է Քարոզգիրքս և Դատաստանագիրքս և Կանոնդիրքս Գրիգորի քաջ հռետորի և երջանիկ բարունապետին մերոյ, քաջ և անյաղթ

փիլիսոփայի՝ եպիսկոպոս և որոշեալ ի գործս անտեսութեան և վարդապետ Հայաստանեայց եկեղեցւոյ, և պատրիարք մայրաքաղաք և թագաւորանիստ Կոստանդիանուպալ[ս]ու *և բնածին* Կէսարիու, *թվին ՌՁԵ (1636) պատահեցաւ էջմիածնայ Խաչատուր վարդապետի աշակերտ, նուիրակ անուն տէր* Յովանէս *վարդապետն. մեք մեր կենդանութեան ժամանակն, մեր ձեռամբն յանձնեցանք Գ (3) գիրք ի ձեռն* Յովանէս *վարդապետին, որ մեզ խոստովանահայր եղև, և զմեր մահու կեանքն դա կատարեաց. դորա ձեռամբն կտակ արաք. թէ՛ գիրք և թէ՛ այլ ապրանք՝ դա բաժանեաց* Շահին Զալապուն *ձեռամբն և* Իսկանդար Զալապուն, *Զ (6) գիրք էջմիածնայ և զայլն աստ և անդ։ Դարձեալ ով ոք չունի իշխանութիւն զայդ Գ (3) գիրքդ ի դորա ձեռացն յափշտակել, զի իւր աշխատանքն է. ով ընթերցող սր. դրոցս, թէ հանդիպիք սորա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք մաքրափայլ յաղաւթս ձեր զերշանիկ*[49] *բաբունապետն մեր զտէր* Գրիգոր *վարդապետն, որ ի դառն և ի վերջ ժամանակիս [փայլէր ի մէջ աղգիս]. և [ի] թագաւորութեան Իսմայէլացոց սուլթան* Մուրատին, *որ եկ բազում զաւրաւք ի վերայ Պարսից և յաղթեալ ի նմանէ, և արար բազում աւար ի գաւառս Հայոց. և ի հայրապետութեան տեառն տեառն* Փիլիպպոս *կաթողիկոսին, և ի պատրիարքութեան Ըսպահանայ Խաչատուր վարդապետին, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, բաբունապետն մեր* Գրիգոր *վարդապետն*[50]։ *Դորա պատրիարքութեան ժամանակն եղև մոլորումն և ծռազատիկ Հռոմայեցոց ազգին Բ (2) ամաւ յառաջ, որ բազում նեղութիւն կրեաց ի գոռոզ և ինքնահաւան Յունաց ազգէն, թէ լոյսն մեր է. և վարդապետն իւր քաջ իմաստութեամբն յաղթեաց նոցա...։*

999

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղեմ, № 1930 (1323 թ.) (մանրաժապավեն, Երևան, № 732). տե՛ս նաև ՄՏՁԵՓ. VI, № 1930, էջ 438—439, ՄՏՁԵՍ, № 153, էջ 332, Գրիգոր Կամախեցի, Ժամանակագրութիւն, էջ 618—619։

Նվիրատու՝ Գրիգոր Դարանաղեցի

496ա *Թվին ՌՁԵ (1636)*[51]։ *Դարձեալ կրկին անգամ աղաչեմ, յիշեցէք... վերջին ստացողի Աստուածաշնչիս* Թաֆիրտաղի *առաջնորդ տէր* Գրիգոր *աստուածաբան վարդապետին, որ մականուն* Բուգ *վերաձայնի և ծնաւղաց իւրոց, հօրն՝* Գրիգորիսին *և մօրն՝* Գուլվարգին, *և եղբօրն՝ Ս. Յարութեան լուսարար մահդասի* Մարկոսին, *և զայլ ամենայն արեանառու մերձաւորս...։ Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք տէր* Գրիգոր *աստուածաբան վարդապետին և իւր ծնա[ւ]ղացն, որ էառ զԱստուածաշունչ սբ. գիրքս և եդ յիշատակ ի սբ. յԵրուսաղէմ, ի դուռն Քրիստոսի լուսաբուղխ սբ. գերեզմանին և Ս. Յակոբայ առաքելոյ գլխադիր սբ. դամբա-*

[49] *Տրված է «վերջանիկ»։*

[50] *Իմա՛ Գրիգոր Կեսարացին։*

[51] *Տարեթիվը Ա. Սյուրմելյանի մոտ նշված է ՌՁԷ (1638)։*

բանին և Ս. Փրկչին և ամենասուրբ տնօրինականացն Քրիստոսի Հայոց ազգի վիճակին։ Ի հայրապետութիւն սբ. Երուսաղէմայ ազգիս Հայոց և աթոռակալ Յակոբայ Տեառնեղբաւրն քաշ և արի տէր Գրիգորին, որ յառաջ քան զսայ անկեալ կայր վիճակս ազգիս Հայոց ի ներքո անթիւ և անհամար պարտուց և զանօթս սպասուց, սբ. եկեղեցեաց զամէն առ այլազգիսն գրաւ էին եդեալ։ Ապա գոհութիւն ու փառք Աստուծոյ յամենայն ժամ, որ ինքն Աստուած իւր բազում գթութեամբն և անբաւ մարդասիրութեամբն հայեցաւ ի տառապեալ ազգս Հայոց և տրնկեաց զսա ի սբ. քաղաքս Երուսաղէմ ի յաթոռս Սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն, ընտրութեամբ ամենայն մեծամեծաց, կաթողիկոսաց, վարդապետաց, հայրապետաց, քահանայից և պարոն վաճառական տոլվաթաւորաց։ Եւ սա Աստուծով սկսաւ ընդ ամենայն տեղիս համբաւել թղթով զսբ. Երուսաղէմայ դառնակսկիծ նեղութիւն և ազգս Հայոց. յորժամ լուան զնեղութիւնն սբ. Երուսաղէմայ և զհամբաւ բարի վարուց նորա, դիմեցին ամենեքեան առ հասարակ ի սբ. Երուսաղէմ՝ վարդապետք, հայրապետք, քահանայք և տոլվաթաւորք և միաբան ժողովուրդք. և ետուն տուրս լի և առատ ի ձեռն նորա, և նայ Աստուծով զգրաւեալ անօթս սբ. եկեղեցեացն ազատեաց և ձեռաց այլազգաց և նորոգեաց զԾնունդն, զՓրկիչն և զՍ. Յոհանէս և առաւ Գ (3) կամար ի Ս. Յարութեան վերնատուն և բազում աշխատանս և երախտիս արար ի Ս. Յակոբ և յամենայն եկեղեցիս Հայոց վիճակիս, որ միշտ բարեխօսեն նմա և ծնողաց իւրոց և ամենայն ազգիս Հայոց և սերեսս գրչիս և ծնողաց իմոց. ամէն։

1000
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ, ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ
Երևան, № 6496

Գրիչ՝ Գրիգոր դպիր
Վայր՝ Ագուլիս

ա

222բ Ո՛վ ընթերցողք և լսողք, յորժամ ընթեռնուք, միտ դիք իմոյ բանիս՝ վասն օրինակի դրչիս. ա. Նախ և առաջին պատճառն՝ օրինակն Բ (2) էր։ Երկրորդ. Ա(1) հին, Ա(1) նոր։ Երրորդ. Նորն բնաւ չիք ստուգութիւն։ Չորրորդ. Հինն բնաւ չիք սղալութիւն։ Հինգերորդ. Հինն ամենևին եղծած։ Վեցերորդ. Թղթերն խառն։ Եւթներորդ. Կանոնքն խառնաբրթոշ էր։ Ութներորդ. Դատաստանագիրն առաւել խառն քան կանոնի դիրն։ Իններորդ. Հազիւ կարացայ աւարտել կանոնիս շարադրութիւնս և ստուգութիւնս մոռացայ։ Տասներորդ. Խոշորութիւն ի թղթեն է, սղալութիւն օրինակեն է։ Մետասաներորդ. Բամբասեն զիս, թէ երկարեաց դիրքն։ Երկոտասաներորդ. Ոչ իմանան զիրս բանին և զպատճառսն յերկարելոյն։ Երեքտասաներորդ. Առաւօտեան մինչև ցերրորդ ժամն հաղիւ կարէի այն չափ իրարՀարՀս արկանել, մինչև ցԱԺ(11)-ն ժամն գրէի։ Ո՛վ ոք օրինակէ կամ տեսնու բան, ողորմի ասէ զրողի սորա Գրիգոր մեղսասէր և տխմար դպրի, որ ամեն մարդ չեր իմ երեսս հայիլ, վասն տառապեալ և աղքատութեան մարմնոյս, որպէս ասէ մարգարէն. «Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ»[1] և այլն։ Եւ դարձեալ ասէ. «Մի՛ յուսայք իշխանքս և մի՛ յորդիս մարդկան[2]» և այլն։ Բայց յուսացայ և յուսամ և յուսա-
223ա նամ և ակն ունիմ զտէր// Աստուածն իմ զՅիսուս Քրիստոս, որ պահէ զիս և ի մեղաց գարձուցանէ և ի ողջումն բերէ անսասան կենօք...։

Որպէս սկիզբն արասցուք Դատաստանի գրիս զխառնաբրթոշն, որպէս իրարս արկից, ոչ գիտեմ, այլ զայն գիտեմ, որ Հոգին սբ. Աստուած առաջնորդէ և աւգնէ ինձ. և ես դրեցից անյապաղ և անտրտունջ ի փառս և ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն եղիցի. ամէն։

բ

243բ Յիշատակարան սակաւուք[3]։

Եւ զի թէպէտ բնատրական է ամենեցուն լաւին ցանկալ և անսխալ յիրս յամենայն լինել, սակայն ոչ է հնար, որ ի լինելութեան և յապա-

---

[1] Սաղ., ՃԺԷ, 8։
[2] Սաղ., ՃԺԷ, 9։
[3] Գրված է կարմրագեղով։

կանութեան է բնութիւնս. և այդ յոյժ քաջաբանից, որչափ ևս մեզ իցէ, որ
ամենայն ինչ գործ սխալեալ եղև, և գրեթէ յսկրզբանէ։ Վասն որոյ զա-
մենեսեան զկնի մեր եկեալսդ, զհարս և զեղբարսդ ի զանազան ժամա-
նակս, աղաչեմ մաղթանօք զյոլով և զոչ սակաւ սխալանս ուղղէսջիք
244ա պատահեալք ընթերցման Բ(2) տառիս, և զի//բաւացի թերին լցջիք,
որպէս վերագոյնն ծանուցաւ, զի հասարակ զսխալանացն ունիմ զպատ-
ճառ, նախ՝ զբիծս անձինս, որ զներգործութիւնն խափանէ ըզհոգւոյն և
ապա զախտս մարմնոյն. և զի յայտ անվարժութիւնն համօրէն է սեռի և
յատկի, և դարձեալ անպարապութիւն, զի ընդ ստեամբ ախ[տ]ածետիւ
զմանկունս ունէի բանի, և զպանդխտութիւն, և զանտեղութիւն, և զանտե-
ղեկութիւն գրչութեան, և զհակառակութիւն ներքնոց և արտաքնոց, զգա-
յութեանց տկարութիւն, և զմարգս գիւաց և զպակասութիւն գործիեաց
գծագրութեանց, և զաղքատութիւն մատենից, յորոց զնիւթս հաւաքել ի
դէպ էր բանից։ Ապա թէ ընտանի ազգիս բարոյիւք սխալանացն լինիջիք
պարսաւիչ և ոչ ուղղիչ գիտելով գործ հայկազնեացս ղայդոսիկ միան-
գամայն զչափ անձին անմեղադիր ձեզ այդոցիկ լինիմք, ապա թէ սիրով
մերոյս պատահիք բանից և խնամիչ կամօք զթերին լնուսջիք, ի Տեառնէ
զհատուցումն առջիք բարեաց։ Եւ զգանձս բարեաց ձերովք երկամբք
յեկեղեցի ամբարիջիք, յիշատակ բարեաց մնալ ձեզ ի նմայ։ Բայց ձեռ-
նարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղև ի թուականութեանս Հայոց ՌՁՁ
(1637), ի թագաւորութիւնն Պարսից շահ Սաֆուն, որ էր խաղաղութիւն
աշխարհիս Հայոց, բայց անօրինաց վատթարութիւնն սակաւ սակաւ յա-
ւելուին. ի հայրապետութիւն տեառն ճգնազգեստ Փիլիպպոս կաթողիկո-
սին, և ի դիտապետութիւն տեառն Խաչատուրին տանս Գողթան և ի գեաւ-
244բ ղաքաղաքս Ագուլիս, ընդ հովանեաւ Ս. Յովհաննէս Մկրտչին, ի թաղս //
Խոզաձոր, ձեռամբ սուտանուն և մեղաւք զառածեալ, և մոլորեալ հոգով
և մարմնով, անարժան դպիր Գրիգոր գրչիս։ Եւ զուսուցիչն իմ զտէր
Պօղոսն, որ զգրագրութիւնս ուսոյց, վարձն ի Քրիստոսէ առցէ։ Ընդ նմին
և զծնօղսն իմ յիշեսջիք, և զձեզ Քրիստոս յիշէ։ Զստացող Բ(2) տառիս
Խաչատուր վարդապետն, որ յոյժ փափա[գ]անօք զպակասութիւնս իմ
լցոյց և ես գրեցի անյապաղ։ Աստուած վայելումն տացէ իւրն, որ նո-
րոգեաց զվանքն, և կարգեաց քահանայս, և հաստատեաց զժամակար-
գութիւնս եկեղեցւոյ, և լուսաւորեաց զվիճակն Թումայի, քաշ վարդապե-
տութեամբն իւրով։ Վանից հին միաբանքն՝ զտէր Երեմիայն, զտէր Սար-
գիսն, զտէր Մարտիրոսն, [զ]տէր Ադամն և զնորաբողբոջ զաշակերտսն
իւր՝ զտէր Հայրապետն, զտէր Ովանէսն և զաւագ սարկաւագ Առաքելն,
որ յայսմ ամի աւրհնեցան արի դիտապետեն իւրեանց, և զայլ
փոքր մանկունսն, յիշեցէք... աշխատողին, գրողին, սպասաւորին, և
փողարկողին, և ստացողին, և գրել տուողին, և հայցողին, և խնդրողին.
և վարձ տուողին, և հաց տուողին, և շուր բերողին, և աւգտակար եղե-
լոյն. յիշողն և ողորմի ասողն՝ Քրիստոս ողորմի իւր միւսանգամ գալստե-
անն. ամէն։



Աստուած վարձն հատուցանէ։
Կատարեցաւ նախադրութիւնս դրոց դատաստանի ի ճառս ԱԺ (11)։

Գ

246բ Զանարժան և անպիտան, մեղաւք զառածէ Գրիգոր դծաւղս աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ ազիզ տէրտէր։

Դ

243բ Թողութիւն արարէք եղբայրք, Ա (1) օրինակն բնաւին չկայր, Ա (1) տեղ տեղ թողած էր, ես այլ թողի. ողջ լերուք։

Ե

Զոր խոստովանիմք Աստուած բարերար...։ Որ ետ տկար անձին իմոյ կարողութիւն, որով ուրախութեամբ և տրտմութեամբ և հոգոց հանելով գծագրեցի զայս երկու տառս ձեռամբ սուտանուն Գրիգոր դպրի, ի ժամա-
424ա նակս Պարսից ի թագաւորութիւն //շահ Սաֆուն, ի հայրապետութիւն էջ-միածնայ տէր Փիլիպոս պապիաւսին[5], ի դիտապետութիւն տեառն Խաչա-տուրին ի տանս Գողթան, ի գեաւղաքաղաքս Ագուլիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին, ի թաղս Խոգաձրոյ, ի թվիս Հայոց ՌՁՁ (1637) Եւ զդիտապետն, զաթոռակալն, զխրատատուն, զուսուցանո-ղըն, զոր[բոց] մխիթարիչն, զզարհի և զերջանիկ, զքաջն զտէր Խաչատուր վարդապետն, որ զթումայի առաքելոյ վանքս այնպէս նորոգեաց, որպէս զգարնանային ժամանակս փթթեալն ծաղկեցոյց զվիճակն իւր։ Վանից հին միաբանքն...[6] և զմիւս սարկաւագ Գրիգորն և այլ աշակերտսն իւր· Աստուած զինքն և զիւրքն անփորձ, անսասան պահեսցէ. ամէն։

Գ

424բ Արդ՝ աղաչեմ զձեզ, զեղբայրք, լուարուք ինձ և ունկնդիր լերուք իմոյ բանիս։ Ո՛, ո՛ զինչ ասացից և կամ զինչ խօսեցայց այսմ տառիս՝ վասն օրինակի որպէս ասացաք, թէ ուրախութեամբ և տրտմութեամբ. այժմ յայտ արասցուք. Նոր կիրակէին սկիզբն[7] արարաք, Յայտնութեան պահոց

[4] Ծածկագիրը չկարողացանք ընթերցել։
[5] Կարելի է կարդալ նաև «օգաղիաւսին» կամ «սգաղիաւսին»։
[6] Նորից թվում է բ հիշատակարանում նշված միաբանների անունները։
[7] Այսինքն՝ 1636 թ. ապրիլի 24-ից, քանի որ Զատիկը կլինի ապրիլի 17-ին։

շաբաթ օրն[8] յազիւ կարացաք աւարտել, չլնի թէ մեղադրէք կամ պարսաւէք, անդարձ ///նալս, անզղջական զառածեալս, անմխիթար տրտմեալս...։ Ես այնպէս վարանէի, կսկծալի արտասուէի, բայց մարդոյ ոչ յա[յանէ]ի, ես իմում անձին գլորէի և յԱստուած ապաւին[էի՝] նոր աւրինակն ձախ կողմս դնէի՝ ի գիրն հայէի, շատ սխալ ի միջի տեսան[է]ի, յերեսս դարձուցանէի դէպ յԱստուած ակնարկէի, հին օրինակն աջակողմս դնէի՝ ստուգութիւն ի միջի տեսանէի՝ սրտով սակաթ(?) լինէի, բայց/// [տ]եսանէի աւրինակին, յետս դառնայի սի[րտս] խոցուով լցուէի, բայց Հոգին Ս. աղաչէի բա/// ամենայնի։ Իմ տգետութիւնս զինչ պատմեցից. արդ՝ զգուշ լերուք անձանց. ես որպէս Տրդատն, որ խողացեալ ձևովն զարտասուս մի[այն յայտ]ներ, բայց իմոյ ոչ արտա[սուս] յայտնէ վասն յահէ վարդապետին իմոյ։ Զայսպիսի վշտանս կրէի, ոչ խօսէի ամենևին վասն խեղճ բնութեանս իմում, մի՛ մեղադր[9]

Ստացող՝ Խաչատուր

է

424ա Զստացող սորա զԽաչատուր վարդապետս, և քանզի զամենայն պետս և զհարկաւոր զոռճիկն տայէաք անթերի, հրամայեցաք սմա՝ գրել զգիրքս առ ժամայն մեզ ի պէտս, և յետ մեր իւրն գրողի սեֆիլ Գրիգորի. իբրև անձին երկօք աշխատողի, և աւժանդակութեամբ սկսեալ աւարտեաց զսա։ Որք յետ մեր ժառանգէք զսա, թողութիւն մեղաց հայցեցէք մեզ, և մերոցն, և մեր ծնօղացն. և հասարակաց շնորհաբաշխն Քրիստոս...։

Աղաչեմ զձեզ, յիշեցէք զէր Պօղոսն, որ զգրամատիկոսութիւնս ուսոյց։

1001

ՃԱՌԸՆՏԻՐ

ՄՁՎՍ, II, № 202. տե՛ս նաև Կամէնից, էջ 187

Գրիչ՝ Մկրտիչ Ղազարեանց

Վայր՝ Երուսաղէմ

ա

114 Քրիստոս Աստուած, տէր կենդանեաց և մեռելոց, այժմ և ի միւսանգամ քո գալստեանդ ողորմեա՛ ստացաւղի գրոյս՝ տէր Զաքարիա Լովս քաղաքի աւագիրիցուն, և ծնաւղաց նորին տէր Գասպարին յուսով վերափոխեցելոյն, և ամենայն արեան մերձաւորաց նորին՝ կենդանեաց և հանգուցելոց, և ինձ մեղապարտ գրչիս՝ Մկրտիչիս՝ Ղազարի որդւոյն և ծնաւղաց իմոց։ Գրեցաւ ի սբ. քաղաքն Երուսաղէմ, թվին ՌՁՁ (1637) յունվար Ը (8)։

բ

Գրեցաւ ի սբ. քաղաքս Երուսաղէմ. թվին ՌՁՁ (1637), յունվար ԻԹ (29), ձեռամբ Մկրտչիս Ղազարեանց։

---

[8] Այսինքն՝ 1637 թ. հունվարի 1-ին։

[9] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է, շարունակությունն ընկած լինելու պատճառով։ Գ հիշատակարանի բառերի զգալի մասի մելանը թափված է, ընթերցվեց մեծ դժվարությամբ։

Գ

Վասն չարչարանաց քսց, Քրիստոս Աստուած մեր, աղաւեսա՛ ի չարչարանաց աստեացս չար մարդոյ՝ անաւրէն Նիկոլ չեպիսկոպոսէ, և ի հանդերձելումն ի հրոյն յաւիտենից զտէր Զաքարիայ, և շնորհեա՛ անդորրութիւն ամենայն նեղութեանց. ամէն։

Դ

Եւ արդ՝ աղաչեմ զընթերցողսդ և զլսողսդ, աղաւթս առնել ի վերայ մեր և յիշել ի բարի զստացող պատմութեանս և զթարգմանող [վկայութեանս], ընդ նոսին և զտէր Զաքարիայ Լովա քահանային և ամուսնոյն իւրոյ, և զաւակաց և ննչեցեալ ծնողաց իւրոց, և շնչեսցէ զանցանս նոցա։

Ե

113 Քրիստոս Աստուած, ի ձեռն փրկագործ և ազատարար թաղման քո. ողորմեա՛ ստացողի գրոցս տէր Զաքարիա քահանային և ծնաւղաց նորին, և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։

Ո՛վ հարք պատուականք և եղբարք նազելիք, հանդիպաւղք այսմ ոգենուագ սբ. տառիս, որ ասի Ճառընդիր, յիշեցէք ի Քրիստոս զմեծափափաք ստացաւղ սորա զտէր Զաքարիա Լովա աւագէրէցն, որդի տէր Գասբար աւագիրիցուն, որ ետ դրել զայս սբ. տառս մեծաւ տենչմամբ և եռանդնասէր սրտիւ, որ հանդիպեցաւ սորին աւրինակի ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբա[յ] առաքելոյն, և ետ աւրինակել՝ յիշատակ իւր և նախնեաց իւրոց։ Եւ յիշողքդ՝ յիշեալ լիշիք ի Քրիստոսէ յԱստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ թվին ՌՁՁ (1637) փետրվար ԻԸ (28), յԵրուսաղէմ սբ. քաղաքն, ի դուռն Ս. Յակոբայ։

1002

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 9027

Գրիչ՝ Յովանէս Մոկացի

23ա [Ի թվին] ՌՁՁ (1637)·
Ի հայրապետութիւն սբ. քաղաքին,
Երուսաղէմայ պարոնտէր Գրիգորին...
...Տէրն տայ արքայութիւն
Տէր Գրիգոր հայրապետին։
Թիւն Խ (40) և այլ աւելի,
Որ առաջնորդէ հայ ազգին։
Վանքէրն ամէն նոր նորոգեաց,
Եւ զարդարեաց զամենեսին։
...։ Ես՝ Յովա[ն]էսն եմ Մոկացի,
Անունս ունիմ աբեղայի...
ՌՁՁ (1637)-երորդի
Ի մարտ ամսոյն ԺԴ (14)։

1003
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ
ՅՁԱԲ, № 261

Գրիչ՝ Աստուածատուր Մահանայ
Վայր՝ Բերիա

1160 *Փառք...։ Գրեցաւ Պարզատումարս ի մայրաքաղաքն Բերիա, ձեռամբ [ւ]ոգնամեղ և անարհեստ գրչի Աստուածատուր անուամբ ևեթ քահանայի, ի թուին Հայոց ՌՁՁ (1637) ամին, մարտ ամսոյն ԻԹ (29), օրն չորեքշաբթի եղև զլրաւ սորա, ի վայելումն հոգևոր եղբօրն մերում Հոռոմկլայեցի Յովանէսին, որ մականուամբ Աֆէնտի օղլի կու ձայնեն նոցա, զոր տէր Աստուած մեր բարով վայելել տացէ նմա. ամէն։*

1004
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 1
(Մանրաժապավեն, Երևան, № 490)

Գրիչ՝ Յակոբ դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

ա

Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Յակոբ *դպրի և ծնողաց նորին՝ մղտեսի* Վահրատին *և մահտեսի* Շաղատային, *և որդոցն՝* Յովանէսին, Մկրտիչին, Ղուկասին *և* Մա[r]տիրոսին *և կողակցին՝* Գոհարին, *կարդացողաց*[10]։

բ

Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Վահրատին, *հօրն՝* Շահպազին *և մօրն՝* Քնարին, *կողակցին՝* Շաղատային *և որդոյն՝* Յակոբին, *կարդացողաց։*

գ

Որոց աղօթիւքն ողորմի... ստացողի գրոցս խոճայ Վահրատին, *հաւրըն՝* Շահպազին *և մօրն՝* Քնարին *և ամենայն արեան մերձաւորացն...։ Այլ և կողակցին՝* Շաղատային, *և ծնողաց նորին՝* Յովանիսին *և* Մեհրիին, *և եղբարցն՝* Վարդանին *և* Գասպարին, *դստերացն՝* Քնարին, Դշխոյին *և* Մարիամին, *և անիմաստ գրչի* Յակոբի *և որդոց նորին՝* Յոհանիսին, Մկրտիչին, Ղուկասին, Մարտիրոսին *և* Յովհաննէսին, *և դստերացն՝* Սառային *և* Մարթային *և կողակցին՝* Գոհարին, *կարդացողաց։*

դ

Որոց աղօթիւքն...[11], *այլ և գրչի* Յակոբ *դպրի և վարժապետի նորին* Յակոբ *կուսակրաւն սարկաւագին և բարի ծնաւղացն նորին՝* Պաղտասարին *և* Յուստիանին *և ամենայն արեան մերձաւորացն...։*

---

[10] *Մանրաժապավենից բնագիրը վատ է երևում, անհաշող նկարելու պատճառով։ Էջահամարներ չնկատեցինք։ ա, բ և նման ու համառոտ հիշատակարաններ տե՛ս յուրաքանչյուր վկայարանությունից հետո։*

[11] *Դարձյալ թվում է գ հիշատակարանի սկզբի անունները։*

Ե

Փառք...։ Ի թվաբերութեանս հայկազան տումարի հազար ութսուն և վեց (1637) ամի, յապրիլ ամսոյ չորսն, յաւուր մեծի երեքշաբթի, ի մայրաքաղաքաց ի մեծ Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ հրաշագործ տաճարի Ս. Հրեշտակապետոյն Գաբրիէլի և Միքայէլի, ի գևղն որ կոչի Խասգեղ, որ է դէմ յանդիման սքանչելագործին ///։ Իսկ ի պատրիարգութեանն սբ. Էջմիածնայ աթոռոյն տեառն տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսին, և ի հայրապետութեան սբ. քաղաքին Երուսաղէմայ տէր Դրիզորի արքեպիսկոպոսին։ Իսկ և ի բռնակալութեան ազգին Հագարացւոց սուլտան Մուրատի, որդւոյ սուլտան Ահմատի, ձեռամբ անիմաստ գրչի Ակնցի Յակոբ դպրի, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն։

Այլ զի սովորութիւն է արանց աստուածայնոց խոկալ միշտ յաստուածային պատուիրանս ի տուէ և ի գիշերի և միշտ զվերինն խորհել... ոմանք սրբութեամբ զկուսութիւն ստացան և այլք ողջախոհութեամբ հանդիսացան... որ և ի նոցունց... աստուածասէր քրիստոնեայս մահտեսի Վահրատ կոչեցեալ, որ էր յերկրէն Երապոլսոյ, այլ ի գիւղէն Ակընայ. և զի ցանկայր սբ. գրոյս ի բազում ժամանակաց և ոչ հասանէր ըղձանաց սրտի իւրոյ, այլ այն որ կատարէ զկամս երկիւղացած իւրոց... //որ ետ գրել զսբ. գիրքս զայս ի յարդար վաստակոց իւրոց, որ զամենայն վարս և զպատմութիւն սրբոցն Աստուծոյ հնոցն և զնորոց յինքն պարունակեալ ունի... և յաւարտ հասուցեալ Տեառն առաշնորդութեամբ, եդ յիշատակ ի բնիկ գիւղն իւր Ակն անուանեալ, ի դուռն տաճարի Սրբոյն Յոհաննու հայրապետի, յիշատակ հոգոյ իւրոյ և բարի ծնողացն իւրոյ, հօրն՝ Շահնազին և մորն՝ Քնարին, եղբարցն՝ Կիրակոսին և Ֆարխուզատին, և քրւերցն առ Աստուած փոխելոցն, զորոց զանուանսն գրեսցէ Քրիստոս ի գպրութիւն կենաց, և կենդանեացն՝ Զուլալին և Խումարին, որդւոյն՝ Յակոբին, և դստերացն՝ Քնարին, Դշխոյին և Մարիամին և ամենայն արեան մերձաւորացն...։ Այլ և կողակցին՝ Շա[ն]զատային և ծնողաց նորին, հօրն՝ Յովանէսին և մորն՝ Մեհրին, եղբարցն՝ Վարդանին և Գասպարին, և քրւերցն՝ Քնարին, Տօլվաթին, Խանումին և Կուլիսատանին և ամենայն արեան մերձաւորացն։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ արտասուալից աչօք զսրբութիւնդ ձեր, հարք իմ և եղբարք, մայրք իմ և քորք, որք հանդիպիք սմա կարդալով կամ ունկն դնելով և կամ օրինակելով, լի և առատ սրտիւ յիշեցէք յերկնաթռիչ աղօթս ձեր զյիշման արժանի ստացաւղ սորա զվերոյ գրեալ մահտեսի Վահրատն...[12] և զորդեակն՝ զՅակոբն զգծագրող սբ. գրոցս, այլ և զդստերսն՝ զՔնարն...[13]։ Ընդ նոսին և անձանձիր մտօք յիշման արժանի արարէք յարժանաւոր յաղօթս ձեր զոչ արժանիս յիշման զՅակոբ գրիչս, որ բազում դեգերանօք և անհանգիստ աշխատութեամբ գրեցի զսբ. գիրքս զայս, ի դառն և ի դժար ժամանակիս, քանզի սկիզբն արարի սորա ի գրել ՌՁԳ (1634) թվականիս Հայոց, յորում ամի Յոյնք թիւրեցին զտօն մեծի Զատկին և ի Ծաղկազարդի կիրակէին ծռազատիկ արարին, զոր աչօք մերովք տեսաք զմոլորումն նոցա, և զՀայոցս հաս//տա-

12 և 13 Դարձյալ թվում է վերևում հիշված անունները։

սութիւն, որ բարձր ի դլուխ պարծին ուղղափառ դաւանութեամբ։ Իսկ ի մեռ ամին, որ թվականն Հայոց ՌՁԴ (1635) էր, ի չորեքտասաներորդի ամի թագաւորութեանն իւրոյ սուլտանն Տաճկաց Մուրատ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար, և խաղաց գնաց ի վերայ Պարսից ազգին ի պատերազմն ե մինչ զնայր, տեսեալ զերկիրսն սակաւամարդս, և հարցեալ տեղեկացեալ եթէ յԸստըմպօլէն ժողովեալ և առաքեաց հրաման ի տեսուչն Ըստըմպօլայ, որ թէ՛ հայ, թէ՛ յոյն, թէ՛ տաճիկ, որք եկեալ են յարևելից կողմանէ, զամենեսեան զնոսա փութով ի տեղիս իւրեանց առաքեսցէ։ Որ եկեալ եհաս սաստիկ հրամանն սոյն առ Պայրամ փաշան, որ նայ էր դէտ քաղաքին, այնմ ժամանակին՝ ի մայիս ամսոյ ԺԹ (19), յաւուր չորեքշաբթի։ Որ եկն հրաման ըստ հրամանացն արքային և զամենեսեան աքսորեաց ի քաղաքէն զեկեալսն յարևելից կողմանէ և ցրուեաց ընդ երեսս երկրի։ Իսկ ողորմածն Աստուած, որ խնամող է ամենայնի, զերն ետ և զսպեղանին ընդ նմա, զի ոչ եղև այս ի ձմերայնի, քանզի և Տէրն ասէ, թէ «Մի ի ձմերայնի լինիցի փախուստն ձեր»[14]։ Որ ոմանք ի լերինս և ոմանք ի գեղորէս, ոմանք ի ծերպս վիմաց և ոմանք հեռիյոտս շրջելով մինչ զի դադարք գտանիցեն, զի էին ցրուեալք որպէս զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Իսկ զաղետս հառաչանացն և զկսկիծ սրտիցն, զսրտաթափումն արանցն, զճիչ կանանցն, զվայ յղեացն, զաւախ բարեկամացն և զաղիողորմ որտաստուս սիրելեացն առ միմեանս. ո՞ կարէ պատմել կամ ի գիր արկանել, որ՝ եղեն վասն ծովացեալ մեղաց մերոց։ Իսկ մինչ այս, գործս լինէր ի քաղաքին՝ եկն մեռ այլ հրաման ի նոյն արքայէն մինչ ի պատերազմի էր, զի զպարիսպն քաղաքին Ըստըմպօլայ նորոգեսցեն, որ և արարին իսկ։ Եւ ի պատճառս նորոգման պարսպին սակաւք ոմանք ագատեցան յարուեստաւորաց, որք ի շինումն պարսպին վաստակաւորքն էին պիտոյ։ Իսկ թագաւորն խաղաց գնաց ի պատերազմն և էառ զՎաղարշապատ[15] քաղաք, զՇաքաստան, Արաւիլ և զայլս բազումս և դարձաւ մեծաւ յաղթութեամբ յարքայանիստ քաղաքն իւր՝ յերջանիկն ի Բիւզանդիայ։ Եւ մինչ եհաս նա յԸստըմպօլ եկն դարձեալ արքայն Պարսից և էառ զերկիրն իւր, զոր առեալ էր ի նոցանէ արքայն Տաճկաց։ Իսկ մինչ այս գործքս և վրդովմունքս լինէին, ես անիմաստս յայսմ ծխմանս միջի կացի միջաբեկեալ, սրտաթափեալ և տխուր մտաւք զսբ. գիրքս զայս գրեցի և զի անվարժութեամբ տարակուսեալ զհանապազօր դեգերէի. քանզի անկիրթ գոլով մտացս ի յիմաստիցս, զոր տեսի, զի զբնականն ոչ ունէի զկրթականն, ոչ ժողովեցի և ըստ իմում չար գործոցս շնորհականին չեմ արժանի։ Այլ ապաւինեալ յայն որ զտկարս զօրացուցանէ, տկար մարմնով և դողդոջ ձեռօք սկսայ, աղօթիւք սրբոց և ողորմութեամբն Աստուծոյ, աւարտեցի ըստ իմում կարի, ի լաւ և յընտիր աւրինակէ. ակն ունելով ձեր սբ. աղօթի, զի յորժամ ընթեռնուք զսա, ասէք Աստուած ողորմի ինձ անիմաստ գրչի՝ Յակոբի և ծնօղացն իմոց՝ մահտեսի Վաճրատի և մահտեսի Շաճզաաիճ, և կողակցին իմոյ՝ Գոճարիճ և ծնօղաց նորին աստուածասէր Կուլպակիին և մահ-

[14] Մատթ., ԻԴ, 20։
[15] Իմա՛ Երևան։

աեսի Փաշուկիսն,...: *Եւ գրիս ուսուցանող վարպետին իմոյ և հողէ ծնողին* Իլովցի Յակոբ *կուսակրօն սարկաւագին և ծնողաց նորին* Պաղասատրին *և* Յուստիանին, *և սնուցողին իմոյ՝ աստուածասէր* Մելիսանին *և կողակցին՝ մահտեսի* Եազկուլիին, *այլ և վարժեցողիս իմոյ* Արիստակէս *քահանային և ծնողաց նորին, և ի վերայ սբ. գրոցս մագաղաթի ճարելն աշխատողին՝* Գասպար *քահանային, նաև համօրէն զարմիցն իմոց...։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղապարտ գրիչս* Յակոբ *դպիրս և թողութիւն խնդրեցէք բազմամեղ յանցանաց իմոց... և գրիս խոշորութեան և անարհեստութեանն ներեցէք և թէ սղալ գտանի, զոր ոչ իմացայ, գիտնոցդ մաղթեմ կրկին ուղղել, և աշխատաւորացն ի սա վարձս բարիս տացէ Աստուած...։*

1005

ԺԱՄԱԳԻՐՔ

Տիրայր վարդապետ, № 23

Գրիչ՝ Յակոբ դպիր

343 *Փառք...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի [ի] լաւ և [յ]ընտիր յօրինակէ ղժամագիրքս, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին, ի վայելումն Զաքարիայ դպրին. ի մեծ թվականիս Հայոց ի ՌՁՁ (1637)-ն, ի մայիսի ի ԻԴ (24), օրն երեքշաբթի, ի հայրապետութեան տեառն* Էջմիածնայ *տէր* Փիլիպպոսի *կաթողիկոսի ամենայն Հայոց, և թագաւորութեանն Տաճկաց* Կոստանդինուպոլսի *սուլթան* Մուրատ *խան[դ]քարի, և պատրիարգութիւնն* Զաքարիայ *վարդապետի։ Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ անարժան և մեղսամած և փծուն գրչի* Յակոբ *դպրի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, զի որք հանդիպիք տեսութեան գրոցս կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի [տես]անելով*[16]*, յիշեցէք ի մաքրափայլ///*

1006

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 3480 (1634 թ.)

Ստացող՝ Կարապետ

ա

261բ *Սրգ՝ ես ամենաթշուառս և ունայն ընթացս յամենայն բարեաց շաւղաց, պիտակ անուն* Կարապետս, *ոչ ինչ ունելով յիշատակ և արձանագրութիւն ըստ իմանալոյն յուսառութեան և ըստ զգալոյն, որ է սփոփատպութիւն յերկաքանչիւրոց առ տեսաւորութեան իրիք։ Ցաղագս այսորիկ ցանկացող եղէ յոգնիղձ տարփանօք այսմ գեղեցկամատեան տաղաչափ հոմերավանգ շարագրութեան գծիս տեառն* Ներսիսի *ոգեցելոյ, որ է առիթ փրկութեան բնաւից անձանց, և զուարճապատում խրախութեան պատճառ հոգւոց բազմաց, դեղ հզօրագոյն...։*

[16] *Տիրայր վարդապետը վերականգնել է «[պի Ղ]ոտանելով»։*

262ա Եւ ստացայ զսա գանձ ամենավայելուչ յարդար վաստակոյ ծնողաց իմոց, զարդարեալ ոսկեզօծ երանգօք, առ ի յիշատակ հոգւոյ մօր իմոյ Գուլնապարին հանգուցելոյ առ Տէր, և ի վայելս տկարս անձին առ կեցութեամբ աշխարհիս այս, իսկ ի սմանէ վճարմամբ ելանելոյ ևս հոգւոյ իմոյ յիշատակագրութիւն առ վայելողսդ եղիցի։ Եղև այս ի թուոյս մերոյ ամի հազարերորդի ութսներորդի և վեցերորդի (1637) յարեգի քսան[17],

262բ առ դիտապետութեամբ ամանակիս, որ յիշման Միածնի տեղւոջ// յաթոռ Վաղարշապատու գահի տեառն Փիլիպոսի սրբազան կաթուղիկոսի արամեանս տոհմի, որում և փայլէ յայսոսիկ աւուրս իբրև արեգական, ըստ ստուգաբանութեան անուան իւրոյ առ Հեբրայեցւոցն ի մերս յայտնաբանելոյն։ Զոր և առ հովանեաւ իւր ունի հարիւր սպասաւորս գրոց՝ վարժասէրս և հանճարատենչս, ի կիրթս հրահանգից դաստիարակեալք և տեառնավիճակեալք. զորոյ ես սպասաւոր գոլով սոցա ըստ մարմնոյ պիտոյիւք ի շինութիւն սոցա զամենայն աւուրս կենաց իմոց ի գործ մատակարարութեան ամենայն պիտոյից։

263ա Եւ արդ՝ աղաչեմ զամենեսեան զձեզ, զընթերցօղսդ սովաւ և զգաղափարօղսդ զսա և զվայելօղսդ, յիշատակել զզմեզ ծնողաք հանդերձ, բարեբարոյ մտօք առ յոյսն բնաւից, զի և ձեզ լիցի զսոյն յապայն գայցողաց ըստ ձերոյն յիման։ Այլ ըստ դիւրափոփոխ ամանակիս ում և յաջողեսցէ Տէր ի ժառանգել զսա և ի վայելել մաղթեմ, զսակաւ յիշատակագրութիւնս այս մի՛ հանել ի սմանէ, նաև յիշել զմեզ առ ողորմութիւնն Քրիստոսի, որոյ և լիցի ձեզ զնոյնն գտանել յառատաձիր պարգևացն Աստուծոյ ի յաւիտեանս անզրաւ. ամէն։

Բ

Ծաղկող տէր Սիմէօն, Մարտիրոս դպիր

263բ Այլ և յիշել մաղթեմք խուն զաշխատօղսս առ սա զտէր Սիմէօն և զՄարտիրոս դպիր, զոր ոսկեաւ և երփնաներփ որակօք ծաղկեցաք և պերճացուցաք զսա, և զյիշատակարանս գրեցաք, ի հայցելոյ տեառն սորա Կարապետի յոքներախտի առ եղբայրական դասս, որ ի էջմիածնի աթոռոյ կայաւորեալք գոն. որում Տէր ողորմեսցի առ հասարակ ամենեցուն մեզ...[18]։

1007

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱՑ ԳՐՈՑ

Երևան, № 2500

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ

Վայր՝ Հալապ

128ա Փառք...., որ ետ կարողութիւն նրաստիս և անարժանիս՝ Աստուածատուր անուամբ ևեթ կոչեցեալ քահանայիս, հողոյ հաւասարիս... հասանել յաւարտ մատենիս, որ շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին յանկ ելեալ աւարտեցի զմատեանս սուստուածային, ի լաւ և լրն-

[17] Հուլյան տոմարի հաշվով 1637 թ. մայիսի 30-ին։

[18] Գրչի հիշատակարանը տե՛ս 1634 թ. շարքում։

տիր օրինակէ։ Արդ՝ գրրեցաւ մատեանս աստուածային ի մայրաքաղաքն Բերիայ, որ այժմ Հալապ յորջորջի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Քառասունք եկեղեցեացս, որ են աստ ի յօդնութիւն մեզ ե ամենայն քրիստոնէից։ Ի հայրապետութեան Կիլիկիոյ տէր Սիմէոն կաթողիկոսին, և ի յառաջնորդութեան Բերիա քաղաքիս տէր Յակոբ աստուածաբան վարդապետին, ի թվականիս ի սկզբանէ Արարածոց մինչև ի ծնունդ Կենարարին մերոյ ՐՃՂԸ (5198) ամին, և անտի մինչև ի թվականս հայկազեանս տոհմի ՇՄԳ(553) ամին, և անտի մինչև ի մեզ ՌՁՁ (1637) ամին, մայիս ամսոյ յԼ (30), ի խնդրոյ սրբասէր և մաքրամիտ, հլու և հլատակ օրինացն աստուածային... և կամակատար պատուիրանին Տեառն||| բարոյեցի |||անուամբ և գործով բարի կոչեցելոյ||| զոր ետ||| զսա սիրով և փափագանօք ի վայելումն անձին իւրոյ, և յետ աստեացս ելանելոյ||| [մնաս]ցէ։ Արդ՝ որք հանդիպիք գրոցս աստուածային՝ գրելով, կարդալով և բան ինչ օգտիք ի սմանէ, յիշեցէք զմեզ ի Քրիստոս...։ Դարձեալ յիշեցէք.... ուսուցչին իմոյ՝ տէր Ղազար քահա-
123բ նային,|| որ բազում աշխատութեամբ աշխատեցաւ ընդ անարժանութեանս իմում, զոր տէր Աստուած մեր ընդ աշխատանաց փոխարինին իւրոյ, ղերկնից արքայութիւնն պարգևեսցէ նմա. ամէն։...

1008

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան, № 145

Գրիչ՝ Ղազար

ա

204ա Ղազար գրիչս յիշել հայցէ, հայրք իմ, թվին ՌՁԵ (1636)։

բ

166ա Թվիս Հայոց հազար և ութսուն ու վեց (1637) աւարտեցաւ յունիս ամսոյ քսաներորդի, կաթուղիկոսութեան Հայոց տեառն Փիլիպոսի։ Գծագրեցաւ ձեռամբ ախմար գրչի Ղազար պիտակակոչի. հանդիպողք սմին, յիշեսջիք և Աստուած զձեզ յիշէ։ Խոշորութեան գրիս թողութիւն շնորհեցէք, զի կարս մեր այս էր։

գ

269ա Վասն Աստուծոյ հանդիպողք սմին, յիշեսջիք մեռեալ ոգով Ղազար գրիչս և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

դ

331բ Ընդ զրաւ բանիս Ղազար գրիչս յիշեսջիք թվին ՌՁՁ (1637)։

1009

ԿԻՊՐԻԱՆՈՍ ԳԻՐՔ

ԼԱԼՎԳԱՒ, № 202

Գրիչ՝ Սարգիս Եզնկացի

ա

1182 Արդ՝ գրեցաւ Կիպրիանոսս ի թուականին ՌՁՁ (1637), յունիս ամսոյ ի ԻԲ (22), աւրն հինգշաբթի, ձեռամբ սուտանուն Սարգիս երիցու Եզնկացոյ։

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. հայրք, անմեղադիր լերուք սղալանաց և խոշորութեան գրոյս։ Ո՛վ եղբայրք, լի սրտիւ զԱստուած ողորմին ասացէք և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

Բ

Պահապան և պարիսպ եղիցի Պաղտասարին և գծողիս[19]։

1010

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ

Երևան, № 1366

Գրիչ՝ Եզեկիէլ

Ա

4բ Աւգնեա՛ տէր Յիսուս և հան աւարտ... բարեխաւսութեամբ սբ. առաքելոցն ողորմեայ թարմատար գրչի՝ Եզեկիէլի։

Բ

6բ Ողորմութեամբն Աստուծոյ սկսա թվին ՌԶԶ (1637) յուլիս ԺԳ (13), օրն չորեքշաբթի։

1011

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Երևան, № 1544

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Կողոնիայ

300ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Յիսուս որդի, ի գաւառս Կողոնիայ, որ այժմ ասի Ղարա[հի]սար, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Սրբոյն Ստեփանոսի Նախավրկային և այլ սրբոցն, ձեռամբ բազմամեղ և անիմաստ Գրիգորի, անուամբ միայն իրիցու, ի թուաբերութեանըս Հայոց ՌԶԶ (1637), որ ունի տարիս զԽոյն և ամսեանըս ոգոստոսի ԻԲ (22), որ աւարտեցաւ սա՝ Յիսուս որդի գիրք։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, տեսանելով կամ աւրինակելով, յիշեսցիք ի սբ. և ի մաքրափայլ աղաւթս ձեր ըզստացող
300բ սբ. տառիս զԽոնեկն, որ մականուն Եղա//նտոռի, որ փոխեալ է առ Քրիստոս, և սորա մայրն՝ որ կոչի Ղալաթ, և եղբայրն՝ Մարաանշահ, և քեռ նորա Տարվէժ և զազգատոհմն, որ հանգուցեալ են ի Քրիստոս Աստուած։ Սոքա կամեցան, որ դոցա յիշատակ առնել, ապա մեք մեղուցեալքս և անարժանքս յորդորելով և խրատ տալով, որ ասէ ըստ աւետարանական բանին... և գնեցին զգիրգս և դրին յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին իւրեանց հոգւոյն...։

301ա Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք// խոշորութեան և սխալանաց գրիս, զի գրեցաւ սա թվին ՌՀԲ (1623), ի դառնութեան ժամանակ էր, որ կու նեղէին զմեզ այլասեռքն, որ խելքս մոլար է և միտս շուար և ի ծերութիւն ժամանակս էր, որ ի գրելն զաչս ցաւեցուցի,

[19] Նման մի երկու հիշատակարան էլ տե՛ս Պաղտասարի և ոմն Անուշի անունով։

որ ի քաւասուն աւրն սև դիրն դրեցի ի յաւաՀ պահոցն, որ ժամատեղացն բանքն շատ էր, ճըգնութեամբ և աշխատութեամբ ի յանգ և ի յաւարտ հանեցի։ Ապա աչս ի լուսոյ էր պակասեալ և անձս ի յուժոյ ե. չար թագաւորին հարճն ի վերա մեր, անմեղադիր լերուք եղբայրք մեր։....

1012
ԱԻԵՏԱՐԱՆ
Վատիկանի գրադարան, № 95

Գրիչ, ծաղկող՝ Մինաս
Վայր՝ Համիք

ա

186 *Փառք Աստուծոյ լուսոյն մեծի,*
. . . . . .
Այլ և անուանք Երրորդութեան,
187 *Դ Դ գիր է երեքեան,*
Հայր, Որդի, Հոգի միասնական,
Յայտնեն զխորհուրդ աստուածութեան։
Ի հետ շաւղաց այսց քարոզման,
Թռեաւ յոլորտս Աւետարան,
Վարդապետք լեզու եղան,
Միշտ քարոզեն զԱստուածն բան։
Յորոց և մինն այս սրբազան,
Եւ քարոզող ճշմարտութեան,
Տէր Յովանէս քաշ ախոյեան,
Եւ վարդապետ աստուածաբան։
Սա է պատճառ գրոյս ստացման,
Որ յորդորեաց ի բարութեան,
Թորոս անուն այր մտական,
է ի յազգէն իւր մարմնական։
Եւ սա տեսեալ յոյժ ըղձալի,
ԶԱւետարանս այս գովելի,
Փափագեցաւ սրտով ի լի,
Ստացաւ զգանձս անչրելի։
Վասն իւր հոգւոյն ւ ամէն զարմի,
Զոր թուեսցուք աստ ի կարգի,
Նախ ծնողացն որ ի մարմնի,
Հայրն Պալի, մայրն Ոսկի։
Եւ թագուհի մեծ մօրն Նապաթին,
Եւ Մարիամին և սաքար Մէլիքին,
Եւ Նանայ սաքար Մէլիքին։
Եւ որդեկին Աւետիքի,
Ուսումնասէր սարկաւագի,
Եւ կենակցին այլ ի կարգի,
Ղարիպ, Սուլթանէ տան միջի։

Եւ հանգուցեալ միւս ամուսնի,
Գոհար, Հռիփսիմէն *գնացեալ առ Տէրն երկնի,*
Նու Մարիամ *կին* Աւետիքի,
Որ է հարսն Թորոսի:
Եւ մեծ հայրն Թորոսի,
Խոճայ Յովասաւի *փոխեալն աստի,*
Խոճայ Մախսուտ *եղբայրն զկնի,*
Խոճայ Յոհաննէս *որդին նմի,*
Այժմ կայ ի մարմնի։
Եւ դստերացն Թորոսի,
Ոսկի, Լուսիկն *լծակի,*
Եւ հօր քվերն Պաղտատի,
Որ է ծընօղ վարդապետի։
Այլ և եղբօրն Պօղոսի,
Նաև քվերցն որ ի կարգի,
Մովաթ *և* Սաֆար *մելիքի։*
Եւ հօր եղբարցն Գասպարի,
Եւ Մելքոնի, *հանգուցելոյն* Եղիայի,
Եւ մօր քվերցն Մարանի,
Ղիյմաթի *և* Գոհարի,
Եւ ամենայն զարմից սորի,
Թէ կենդանեաց թէ մեռելի,
Տէր Յիսուս ողորմեսցի։

Բ

Փառք...։ Ուստի տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան և զանճողոպրելի գանձն, և զհոգևոր փարթամութիւնն, աստուածասէր այրն և կորովամիտ[20] *ընթերցողն պարոն* Թորոս, *և ետ գրել զքառաջահեան և զքառավտակ աղբիւրն և զբարձրագոչ Աւետարանն, և զարդարել ոսկենկար անկուածով ներքոյ և արտաքոյ. և պատճառ սորա այսպէս եղև. ինձ մեղապարտ և թարմատար գրչի* Մինասի *հանդիպիլ յաստուածապահ և ի տիրախնամ գիւղաքաղաքն* Շենքուշ, *որ ստուգաբանի շէնքօշայ, որ և այնպէս է, առ սիրելի և բազմագութ երախտաւորն իմ տէր* Յովանէս *սրբազան հայրապետն և աստուածաբան վարդապետն։ Յորդորեաց զքեռու որդին իւր զ*Թորոսն, *և հարկեաց ի վերայ իմ գրել զԱւետարանս։ Եւ ես յանձն առեալ շնորհօք Տեառն և ողորմութեամբ նորին ետու գրել զգիրս Աւետարանիս աշակերտաց իմոց, շնորհալի գրչաց* Եղիայի *և* Եղիազարի. *և իմ ծաղկեալ զսա աւարտեցի ոսկիակազմ բազում տընօրինականօք և խորհրդաբար համաբարբառով, Ժ (10) խորանքն ազգի ազգի կենդանեօք և գոյն գոյն թռչնօք և երփն երփն թփերով և երկնագոյն լազուարդով և Դ (4) գլուխն խորանով և աւետարանչաց պատկերօք և կենդական կերպովն և ցրուածաղկով, բազմաթփերով*[21]. *ոսկով և ազգի ազգի*

[20] Տպված «կերովամիտ»։
[21] Տպված է «բազմաթփերով»։

որակով զարգարեալ ի փառս և ի գովեստ տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի։ Շնորհօք և ողորմութեամբ նորին աւարտեցաւ սբ. տառս քրիս-
տոսեան ի դառն և ի նեղ ժամանակիս։ Եւ յորժամ սկիզբն արարաք սբ.
Աւետարանիս թվին ՌՁԴ (1635), զի ել թագաւորն սուլթան Մուրատն ի
Կոստանդնուպոլսէ և գնացեալ բազում հեծելազօրօք ի վերայ Պարսից ի
յԱյրարատեանն, ի վերայ Երևանու. և խսարեալ պաշարեաց զնա, և յետ
Թ(9) աւուր առեալ զքաղաքն, անց գնաց ի Դավրէժ. և ոչ յամենաց անգ,
այլ շուտով դարձաւ յետս, և եկն ի քաղաքս Համիք և կեցեալ աւուրս
ԺԵ (15), ել գնաց դարձեալ ի Կոստանդնուպոլիս, թողեալ զերկրորդն իւր,
զի գնասցեն այլվի ի Պարսկաստան։ Զի այսպէս երերմանի են և ոչ դա-
դարեն յերթևեկութենէ. յորոց փրկեսցէ զհաւատացեալս անուան իւրոյ
և տացէ թագաւորաց հաշտութիւն։ Եւ յայսմ ամի եկն ի Շնֆուշայ տէր
Յովանէս աստուածաբան վարդապետն ի քաղաքս Համիք և նստեալ ի
Ս. Սարգիս յեկեղեցին գաս ասելով, և լուսաւորելով զբազումս աստուա-
ծիմաստ վարդապետութեամբն իւրով։ Եւ հարկեալ ի վերայ մեր տարաւ
առ ինքն և նստեալ անդ ծաղկեցաք զսբ. Աւետարանս շնորհօք և կարողու-
թեամբ ամենազօրին Աստուծոյ։ Արդ՝ եղև զրաւ գրութեան տոմս ի աշ-
խարհս Միջագետաց ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ այժմ ասի
Համիք, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և Ս. Սարգսի, ի յանցելոց ժամա-
նակաց թուաբերութեանս յելանելոյն Ադամայ ի դրախտէն ամք ՅՈԼՁ
(6636), և ի մարդանալոյն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌՈԼՐ
(1638), և ի շարամանութեան Հայոց մնծաց ՌՁՁ (1637), ի հայրապե-
տութեան սբ. Էջմիածնայ տէր Փիլիպոս սրբասընեալ և առաքինի վարուք
խարազնազգեստ երանաշնորհ աստուածաբան հայրապետի և մեծ
պատրիարգի ընդհանուր կաթողիկոսի, և ի յառաջնորդութեան յայսմ
նահանգիս տէր Բարսեղ ծերացեալ հայրապետի և աստուածաբան վար-
188 դապետի, և ի թագաւորութեան Տաճկաց վերոյ ասացեալ սուլ//թան Սու-
ռատի յաղթող և հզօր թագաւորի։

Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զյիշման արժանին զստացող սբ. և կեն-
սաբեր սբ. կտակին զաստուածասէր այրն զպարոն Թորոսն, և զծընողն
իւր, զհայրն...[22]։ Այլ և մաղթեմ ղդասդ ընթերցողաց և վայելողաց սբ.
Աւետարանիս, յորժամ դաղափարիք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս
ձեր զմեղուցեալ թարմատար Մինաս գրիչս և զորդեակն իմ՝ զՅունան
նորահաս գրիչն, որ ոսկեց զսբ. Աւետարանս և աշխատեցաւ ընդ իս ի
ծաղկելն։ Տէր Աստուածն մեր ձերով սբ. և արժանաւոր աղօթիւքն զշնորհք
սորա առատացնէ։ Նաև զծնողս իմ զծերացեալ Ստեփանոս քահանայն և
զՁինարն, և զաշակերտքն իմ զգրող սբ. Աւետարանիս, և զայլ ամենայն
երախտաւորսն մեր զկենդանիս և զհանգուցեալս։

Այլ և մնասցէ սբ. Աւետարանս յիշատակ անջրելի ի գիւղաքաղաքն
Շնֆուշ, ի դուռն Ս. Կարապետի, որ միշտ ։ հանապազ ընթերցցի ի ժամ
սոսկալի սբ. պատարագին. մեղաց թողութիւն և յապայս փրկութիւն
մարմնական կրից և փորձութեանց պատահարից ստացողի բարեսէր Թո-
ռոսի և համեստ ամուսնոյն իւրոյ՝ Ղարիպսուլթանին, և որդւոյն՝ Աւետիք

22 Թվում է վերևում հիշված անունների մի մասը։

սարգաւակի։ Եւ մի՛ ոք իշխեսցէ հանել ի դրանէ Ս. Կարապետու։ Այլ լաւ պահողքն և խնամ տանողքն և ստացողքն և աշխատողքն վարձս բարի ընկալցին ի Քրիստոսէ...։

Այլ և զայժմու ժամանակիս վայելողք սբ. Աւետարանիս, նախ զաստուածաբան Յովանէս վարդապետն և զսրբազան հայրապետն, որ եղև պատճառ ստացման սբ. Աւետարանիս, նաև դասուց քահանայիցն տէր Մեսրոպին, տէր Թորոսին և վանից միաբանից մեծ տէր Խաչատուրին, փոքր տէր Խաչատուրին, տէր Կիրակոսին, տէր Յովանէսին, տէր Մարկոսին, տէր Սարգսին և այլ սարկաւագացն, որ հանդերձեալ են՝ լինել կրօնաւոր և քահանայ։ Դարձեալ կրկին անգամ աղաչեմ մոխրամած դիմօք զդասդ սրբազան ընթերցողացդ, որ լաւ հոգեբարձութեամբ խնամք տանիք սբ. Աւետարանիս՝ ի հրոյ և ի ջրոյ, և ի տգիտաց ձեռս չտայք, որ ապականեն զլուսանցք սբ. Աւետարանիս, և զծաղիկքն, և զպատկերքն, այլ շորով բռնեն և բազում զգուշութեամբ պահեն, զի վարձս բարիս ընկալցին ի Քրիստոսէ...։

Գրիչ՝ Յովանէս վարդապետ

Գ

191 Դարձեալ յիշեցէք զծաղկող սբ. Աւետարանիս զտէր Մինաս գրիչն, զի յաւարտել Աւետարանիս Բ (2) օր ի մէջ անցեալ եղև զրաւ կենաց սորա, զի ի Կոչողէն հրաման եղեալ՝ ցաւ մահու պատեալ, զանձամբն ճանապարհորդեալ եկն եհաս ի Ջերմուկ, վասն առողջութեան մարմնոյն, այլ նայ ի սպանդ վարէր, ոչ գիտելով զապագայն, և փութայր իջանել[23] ի ջուրն, և ըռունգացն յորդ արիւն հոսէր, և ոչ ժուժեալ շուտով ելանէր ի ջրոյն, և ոչ կարաց ամենևին խօսակցել և ոչ բան մի։ Եւ ոմանց եղբարց բարձեալ տարան զնա ի շէնն որ կոչիւր Ջերմուկ, և ուրբաթ ի Թ (9)-երրորդ ժամուն վճարեաց զհասարակաց զպարտսն, փոխեցաւ յաստի կենացս և եդաւ ի Ս. Աբգլմսեհ եկեղեցին ի թվին ՌՁՁ (1637) օգոստոս ԻԵ (25)։ Որք հանդիպիք Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Եւ ես՝ Յովանէս վարդապետ ինձէն եղեալ ականատես շարադ[ր]եցի զկտակ սորին. և իմ ծնօղացն Աստուած ողորմի ասացէք և ձեր ննջեցեալոցն ողորմեսցի միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն։

1013

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 9694

Գրիչ՝ Զատիկ
Վայր՝ Կամէնից

177բ Փառք...[24]։ Շնորհիւ Տեառն սկսա և նորին ողորմութեամբն անկ ելեալ կատարեցի զլուսայարմար, հրաշալի գիրքս այս, որ կոչի Քահանայաթաղ, ի մեծ թվականութեանն ՌՈՂԷ (1637) կենարար երկնաւոր թա-
178ա դաւորին մերոյ Քրիստոսի, զոր ոչ սկիզբն աւուրց ունի// և ոչ վախճան

[23] Տպված է «իջանել»։

[24] Ձեռ-ի 1—92բ և 182բ—254բ էջերն ընդօրինակվել է 1457 թ., իսկ 95բ—177բ էջերը՝ 1637 թ.։ Սույնը երկրորդ գրչի հիշատակարանն է։

ժամանակաց. և ի մերոյ թվականիս Հայոց ՌՁՁ (1637), և ի յամսեանն սեպտեմբերի Ժ(10), ի հայրապետութեան սբ. էջմիածնա[յ] տեառն տէր Փիլիպպոս *կաթողիկոսին և ի թագաւորութեան Լեհաց նահանգին Ջորրորդ* Վլատիսլաւին, *ի աստուածապահ քաղաքն, որ կոչի* Կամէնից, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և* Նիկոլայոս *սքանչելագործ հայրապետին։ Արդ՝ ով մանկունք առագաստի [և ո]րդիք նոր Սիովնի, յորժամ ընթեռնուք այս զլուսայարմար տետրակս, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զստացող սբ. տառիս զպարոնտէր* Թորոս *եպիսկոպոսն*[25], *որ էր հետևող աստուածային սբ. դրոցս, և զծնօղսն իւր՝ զԻաթուլն և* զԱննա, *և զկողակիցս իւր* զԱննա, *և զերկու որդիսն՝* Նիկողայոսն *և* զՇմաւոն, *և զերկու դուստրն՝* զԿատարինէ *և* զԿուլաֆն, *զոր առ Քրիստոս փոխեցան ի տղայական հասակին, և եթող յիշատակ վասն իւր և վասն հոգոցն, որք աստ յիշատակեցաք...։ Դարձեալ աղաչեմ յիշման արժան առնէք զթարմատար քաբտողարս* զՁատիկ *դպիրն, որդոյ* Գրիգորին *ի սբ. յաղօթս ձեր...։*

1014

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 8933 (1437 թ.)

Գրիչ՝ Թորոս դպիր

286ա *Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զտէր* Յովհաննէս *քահանայ յիշեցէք, որ ստացաւ և գնեց* զԱւետարանս *ի տէր* Ստեփանոսէն *Ճ(100) դրամուշ, յիշատակ ծնօղացն՝* Կիրակոսին *և* Նունուֆարին։ *Եւ դարձեալ յիշեցէք* զԽաչերես, Մկրտիչ, Սիմէոն, Մարսիրոս, Նաւասարդ։ *Դարձեալ յիշեցէք զկողակիցն իւր՝* զՀռիփսիմէն *և զդուստրն՝* Յուլիտայ *և յամենայն արեան մերձաւորաց կարգաւ՝ կենդանեաց և հանգուցելոց...։ Գրեցաւ թվին ՌՁԷ (1637) դեկտեմբեր ամսոյ Ժ(10), օրն կիրակի*[26], *ի հայրապետութեանն տէր* Սիմէոն *կաթողիկոսին, ձեռամբ* Թորոս *զդպրին։* Վկայ Հալապցի Կարապետ *երիցուն,* Թալրնցի Միքայէլ *վկայ, տէր* Մեսրոպի *որդին՝* Միքայէլն *վկայ,* Զաքարիայն *վկայ։ Ով հակառակի սորայ՝ զընդդիմակն կրէ, և հնազանդքն՝ աւրհնին Աստուծոյ. ամէն։*[27]։

1015

ՊԱՏԱՐԻԿ

Երևան, № 795

Նորոգող՝ Սարքիս երէց

Վայր՝ Արտայշիքի

ա

3բ *Փառք...։ Արդ՝ նորոգեցաւ ձեռամբ անարժանէ* Սարքիս, /// *ի [մեղապ]արտ էրէցս յիշեցէք, և թողութիւն խնդրեցէք, վասն մեղաց իմոց և*

[25] *Այս անձնավորությունը մի քանի հիշատակարաններում հիշվում է կրոնավոր։*

[26] *Հայոց ՌՁԷ տարեթիվը սկսվում է 1637 թ. հոկտեմբերի 13-ից (հուլյան տոմարով), ուստի հայոց ՌՁԷ թվականի դեկտեմբերի 10-ը կընկնի 1637 թ. մեջ և իրոք այդ օրն էլ կիրակի է, իսկ 1638 թ. դեկտեմբերի 10-ը կլինի երկուշաբթի։*

[27] *Այս էջի լուսանցքներում այլ գրով կան հետևյալ գրառումները. «Ընծայեցաւ նորածին տղայն, որ անուանեցաւ Եղիայ. ի թվականիս Հայոց ՌՃԺԹ (1670)». Նույն գրով «ՌՃԻԹ (1680) թվին եղև թոռ/// Յովանէսին ա[ն]ուանեցաւ Գ[է]որգ»։*

ծնողացն մերոց, հայրն իմ՝ Յոհանն և ծնողն իմ՝ Զիլփին. և եղբարցն իմ ամե[նե]ցուն. ամէն։

Բ

Ես՝ Քասբարս նորոճիլ տուի սբ. Աւետարանս յիշատակ հոգոյ իմոյ, հալալ ինչից իմոց, հօրն իմոյ՝ Աւանին և մօրն իմոյ՝ Խունդազին, և զկողակիցն իմ՝ Դիշումին, և որդոյն իմոյ՝ Պաղտայսարին. Պողոսին, Սառային, Խանումին, Ճանաղին, Մարին, հաւբեղբայրն իմ՝ Նազարին, տէր Խաչանէսին, Մալքումին, տէր Ազարիեայն, Գիրիզարին. ամէն։ Ի թագաւորութիւնն շահ Սափին իշխանութիւնն[28], ի հայրապետն տէր Միխիթարն, ի երկիրս Մաղայուզ, ի գուղս Արտայշիբի։ Դարձեալ նորոքեցաւ ձեռամբ սուտանուն Սարքիս Էրէցուս, ի թիւականիս Հայոց ՌԶԶ (1637)։

Դարձեալ յիշեցէք... Իմաստունին, Հիւրին, Պէկինանին։

Դարձեալ յիշեցէք տէր Սուքիասն և Աստուած ողորմի ասացէք· ամէն։

1016

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ

Երևան, № 1120

Գրիչ՝ Խաչատուր Երէց
Վայր՝ Շօշ

232բ Զվերջին գրող սորա Խաչատուր Էրէցս յիշեցէք, որ դրվեցաւ ի թուականին Հայոց ՌԶԶ (1637), ի Շաւշ քաղաքն։ Սխալանացն ներել թողութիւն, որ է ինչ ի գիր այս. մեզ և ձեզ Քրիստոս Աստուած ողորմեսցի. ամէն։

1017

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1744 (1637 թ. առաջ)

309ա Յիշատակ է գիրքս արտաքնոց Եսայի վարդապետին, շինող Ս. Կարապետին Ապրակունաց, թվին ՌԶ և Զ (1637)[29]։

1018

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 1867 (1622 թ.)

Գրիչ՝ Յակոբ Երէց
Վայր՝ Շոռոռ

327բ Եւ դարձեալ որ ետ կարողութիւն առնել զաստուածաշունչ երգս, որ է պատմագիրք, ուր հաւաքեալ և ամբարեալ կայ զպատմութիւն թագա-

[28] Այս բառին հաջորդում է «գիրքրկղսն» տառերի խումբը, բայց գրիչը հատուկ նշանով դանել է։

[29] Այս հիշատակարանը բառացի կրկնված է 150ա էջում։ Զեռ-ի գրչության տարին հայտնի չէ, բայց հնագրական տվյալներով ժէ դարի պետք է լինի, այստեղ կբերենք գրչի երկու փոքրիկ հիշատակարանները. «Զիսրայէլ գծող սորա յիշեա ի Տէր» (էջ 62բ) և «Զմարուքայ գծող զԲ (2) տետրիս, յիշել աղաչեմ, ո՛վ սբ. ընթերցողք» (էջ 419ա)։

ւսրաց և իշխանաց ի սմայ։ Որ և ցանկացեալ աստուածասէր և հաւատարիմ նորահաս մանուկն Պետրոս, ի հալալ վաստակոց իւրոց և արդեանցն դնել և տալ ի դուռն Ս. Յակոբ հայրապետին, յիշատակ իւր ե
328ա ծնօղաց՝ Մարգարին և իւր կողակցին՝ Լիլիփարին// և իւր պապուն՝ Մուրատին և կողակցուն՝ Թանգսաղին։ Տէր մեր Յիսուս...։

Դարձեալ յիշեցէք զխաւշայ Մարգարէն և զիւր կողակիցն՝ Լիլիփարն, և զիւր որդիքն՝ Պետրոսն, Մարտիրոսն, Մկրտիչն, Փիլիպպոսն, և դստերքն՝ Թանգսաղն, Սառիկն, Հանդուխտն, Աթանասն, և Թոռ դստերքն՝ Մարթայ և Աթանասն, և իմ հանգուցեալ եղբարքն՝ Ղազարն և Աւաքն, և կենդանի եղբայրն՝ Ովանէսն։... Դարձեալ յիշեցէք զվերոյ գրեալս ի սմայ, որ ետուն զսբ. գիրքս վաղիմ ի դուռն Ս. Յակոբ հայրապետին։ Մի՛ ոք իշխեսցէ հանել ի դրանէ սորա՝ ոչ քահանայ, ոչ սարկաւագ, ոչ
328բ աշխարհական, ոչ իմ ընդանեաց։ Ով ոք հակառ[ակի] // և կամ ընդդիմանայ ընդ անիծաւք եղիցի աստ և ի հանդերձեալն։...[30]

Դարձեալ յիշեցէք զՇտոոթոյ քահա[նայ]ն՝ զկատարեալ և զառաքինին տէր Աբրահամն, որոյ լցեալ է և ամրարեալ ամենայն առաքինութեամբն, տէր Աստուած անփորձ պահեսցէ զնա, և զնորընծայ և սրբամիտ քահանայքն տէր Բարդղիմէոս և զտէր Նահապետն և յետնեալ և ունակացեալ ամենայն բարեաց Յակոբ անարժան իրիցի, որ դրեցի սակաւ յիշատակարանս թվին ՌՁՁ (1637)։

329ա Դարձեալ ի յայսմ ամի եղև նորոգութիւն սբ. աթոռոյս, որ կոչի Ս. Կարապետ, ձեռամբ երջանիկ և բարունի, հոգիընկալ, սրբայսնունդ տէր Եսայի արհեպիսկոպոսին։...

1019
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2116

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Թոուզ

ա

205ա Փառք...։ Գրեցաւ կանոնքս և բանս խրատականս ձեռամբ [յ]ոգնամեղ, և բեկեալ, և դլորեալ սուտանուն Եսայի գրչի, որ չեմ անանս արժանի, ի թվաբերութիւն Հայոց ՌՁՁ (1637)-ի, ի յերկիրս Տայուշ, ի գևղս, որ կոչի Թաուզ, ընդ հովանեաւ մեծայարկ գումրեթաձև Խորանա-
205բ շատ Ս. Աստուածածնիս // և Վանական վարդապետի սբ. գերեզմանիս[31], և ի սոցին սպասաւոր կուսակրաւն տէր Յովանիսի, և այլ միաբան եղբարցն։

Դարձեալ յիշեցէք զհեզահոգի, հանդարտ և խաղաղարար, ողորմած, զթած ի վերայ տնանկաց և կարաւտելոց և հիւրասէր նմանեալ հաւրն հաւատոյ Աբրահամու[32], որ փափագանաւք գրել ետուր զկանոնքս և

---

[30] Դարձեալ թվարկում է վերոհիշյալ անունների մի մասը։

[31] Սկսած «ընդ հովանեաւ»-ից մինչև այստեղ տե՛ս նաև Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 157, ծանոթ. 5։

[32] Հիշատակարանի այս հատվածում գրիչը մոռացել է գրել ստացողի անունը։

խրատք վարդապետաց, յիշատակ իւր և ծնողաց, հարն իւրոյ՝ Ամիրին *և մարն*[33]

Բ

60ա *Որ և աղաւեսցէ ստացող սր. գրոցս զտէր* Աստուածատուրն: *Քրիստոս Ա[ստուա]ծն մեր յամենայն յաւելորդ կրից արտաքին շնչմանց...։*

1020

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2286

Գրիչ՝ Առաքեալ աբեղայ
Վայր՝ Էջմիածին

ա

409բ *Փառք...*[34]*։ Երեալ եղև գիրքս ժողովածու, որ ունի յինքն զՍահմանքն* Դաւթի *փիլիսոփային, ընդ նմին և զմիւս Սահմանքն, որ Պիտոյից ևս յորշորշի, ապա զՔերականն, և այլս ևս ընդ նմին, զկնի զբուն տօմարն ազգիս Հայոց, և ընդ նմա հնգետասան ազգաց, ապա զասացուածսն սր. վարդապետացն մեր մեծին* Յովհաննու Որոտնեցւոյն *զերկուսն զ՞ո ստեղծըն և զի սկզբանէն, ընդ նմին և զ*Գրիգորի Տաթևացւոյն *զհոգի՝ Տեառն ի վերայ իմ, հոսակ յետոյ զդիալէթիկայն, որ է ճարտասանութիւն։ Արդ՝ եղև սկիզբն և կատարումն սորա ի թուականութեանս Հայոց հազար ութսուն և վեց (1637), յերկիրս* Այրարատեան, *ընդ հովանեաւ հրաշափառ և հռչակածաւալ, գերագահ աթոռոյս սբ.* Էջմիածնի, *ի կաթուղիկոսու-*
410ա *թեան// տեառն* Փիլիպոսի *աստուածազարդ հայրապետիս, զոր տէր Աստուած անսասանելի կենօք պահեսցէ ընդ երկայն աւուրս, ի թագաւորութեան Պարսից շահ* Սաֆոյն, *և ի տեղակալութեան կողմանցս* Քալբալի *խանին։ Արդ՝ վերջինս ի ծնունդս ժամանակի և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ* Առաքեալ *աբեղայ ախտաժետ, կրկին մարդովս հոգացի զգիրքս ի զբօսանս տառապեալ անձին իմոյ, զորս գրեցի փծուն մատամբս իմ և զորս եղբարքն իմ գրելով օժանդակ եղեն իմոյ տկարութեանս, ցորքան եմ պանդուխտ ի յարկս տաղտկալի մխիթարութիւն և ի սփոփութիւն ինձ. և զկնի գնալոյն իմ առ յոյսն Քրիստոս, լիցի յիշելի առ վայելօղսդ բարեպաշտօն...։*

410բ *Դարձեալ թաղխանձանօք խնդրեմ ի ձէնջ մի՛ առնէք զչար սովորութիւնն, որք հատանեն զյիշատակարանս գրոց, որպէս թէ զիւրեանցն գրեսցեն, այլ թէ կամիք զձերն գրել, թողեալ եմ ի բազում տեղիս սատակ թուղթ, եթե կամիցիք անդ գրեսջիք զձերն, և զմերն թողջիք, զի աստ կայցէ գրեալ և ի պատահողացդ յիշեցեալ լիցուք ի Քրիստոս*[35]*, և ձերդ յիշատակ գրեսցի ի դպրութիւնն կենաց...։*

---

[33] *Հիշատակարանն այստեղ ընդհատվել է։*

[34] *Սույն ձեռ-ն ընդօրինակվել է տարբեր գրիչների կողմից, մյուս հիշատակարանը տե՛ս 1644 թ. շարքում։*

[35] *Այս հիշատակարանը մինչև այստեղ բառացի տե՛ս նաև մեր Մատենադարանի № 1754 ձեռ-ի 341ա—342ա էջերում։*

Գրիչ՝ Սահակ

բ

261բ Փառք... ղսակաւ աշխատողս՝ զմոլոր Սահակ գիր[ի]չ. աղաչեմ յիշել ի Տէր։

1021

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2497

Գրիչ՝ Սաեփանոս երէց
Վայր՝ Մար

ա

209բ Զայս բանքս գրեցի ի քաղաքն յԵգիպտոս, որ այժմ կոչի Մար, մեղաւոր Դաշտեցի Ըստեփանոս երեցս գրեց զայս. ի թվին ՌՁԶ (1637) գրեցաւ։

բ

Մանուցումն լիցի ձեզ, ընթերնօղացդ, թէ որպէս եղև պատճառն բանիս և գրիս, որ ես մեղաւորս՝ գրիչս ի Մսրո էի Լ(30) տարով առաջ. զծռայզատիկն ի տումարի պատժէն ընթերնեալ էի և յոյժ կու ցանկանայի, թէ լինի որ տեսանենք զայս բանս, նայ եղև որ հասաք այս թիւրս և եղև, որ առաջաւորաց բարէկենգանին ի ժամատեղնէաք ի Մսրո ի Ս. Սարգիս եկեղեցին Ժ (10)-երրորդ ժամուն քահանայիւք և ժողովրդով
210ա հարցայքննութիւն// կու անէնք վասն ծռազատիկն, թէ ինչպէս պիտի լինի այս տարիս։ Նայ ի մէջ եկեղեցուն մէկ խոճայ Աղազար անուն Ճողեցի մի կայր, նայ ասաց, թէ «Մի՛ հոգայք զերայ ի մատիս մէկ մագաղաթ գիրք մի կայ, որ ի Հեթոն թագաւորի խիզխնայէն է երեր ու բազում բաներ կայ գրած. Գ (3) անգամ այս ծռայզատիկն, որ հանդիպէր է, նայ գրած է, թէ որպէս եղէր ու Գ (3) անգամն այլ մեր խաւսքն ողորգ է ելեր ու կրկին մեր խաւսք ողորդ պիտի լինի, մի՛ հոգաք»։ Ետոյ գնացինք առանք զգիրքն և ընթերնաք, և յոյժ ուրախացան, նաւտրեցինք համն զայս Գ (3) ծռայզատիկի բանն և համրերեցաք մինչև ի Հի> սբ. Զատիկն. և կրկին, կրկին ուրախացաք և գրեցաք, զոր ինչ որ լուաք ու զոր ինչ որ տեսաք, ապայ անմեղադիր [լերուք] գրիս։

1022

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 2608 (1635 թ.)

Գրիչ՝ Օհաննէս

ա

265ա Ես՝ Արիստակէս[36] վարդապետս, տէր Յակոբս. տէր Բարսէղս վաճառեցաք զայս գիրքս Զարեֆայ անապատին՝ Դաւիթ պարոնտէրին, տէր Խաչատուրին, տէր Անտոնին, և այլ միաբանիցն, ի թվին ՌՁԶ (1637)-ին։ Մի՝ ոք հակառակութիւն արասցէ. և ով հակառակի՝ սևերես լիցի աւուրն դատաստանին. ամէն։

[36] Արիստակես վարդապետը ձեռ-ի պատվիրատուն է, սրա հիշատակարանը տե՛ս 1635 թ.. շարքում։

Բ

Ես՝ Ռաւիբ եպիսկոպոսս և իմ միաբանքս բստացաք զայս գիրք Մեծ *անապատէն՝* Արիստակէս *վարդապետէն*[37]*։*

Եւ ով որ հանդիպիք սմա, յիշեցէք զմեզ յաղօթս ձեր առ Աստուած և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Գ

625բ *Ես՝ տրուպ և ամենեցուն ոտաց հող և մոխեր, և ծառայէս կենաց մորմոքեալ, և տօշորեալ սրտիւ, աղաչեմ զզձեզ վասն ի սէրն առ[ա]-ք[ին]աութեան, և վասն ի սէրն Աստուծոյ ամենեքեան խնդրիցէք թո-ղութիւն մեղաց զզծող սորին* Ներսեհաս[38] *իմ անունս վիրու*[39]

1023

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 4090 (ԺԵ դար)

Կազմող՝ Պողոս

ա

307ա *Փառք...։ Արդ՝ ես տրուպս յամենայն վատթարս, ամենայն լաւաց Աւետարանիս նորոգաւղիս պապ* Թաքանին *և իւր ննչեցեալքն՝ խաչա* Արաիշն *և իւր որդիքն՝* Քիշիմիրն, Աղամիրն, Թաւրամիշն, Մէրդինն, Թա-

307բ *թոս պարոնաէրն,* Շաղ//աւաթն *և իւր ընդանիքն։ Տէր* Սահակն, *տէր* Յովանէսն, *տէր* Խաչատուրն, *պապ* Զուտիաթն, Մկրտիշն, Սիամոնն, Փիրումն, Նազարն, Ղազարն, *մէլիք* Բունիաթն. *սոքայ հանգուցեալքն են։ Արդ՝ աղաչեմ զձեզ, եղբարք, լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասէք իւրեանց հոգոյն...։ Դարձեալ յիշեցէք կենդանիքն՝* Էնիաթն, Դալլուաթիարն, Գուլամիրն, *տէր* Մէ[լ]էսէթն: *Զվերջին նորոգող Աւետարանիս* Թաթոսն *և իւր որդի* Մերդին, Նահապետն. Անախաթունն *և իւր որդի* Բաղումն: *Դարձեալ յիշեցէք զնորոգաւղ սբ. Աւետարանիս* Թաթոսն, *որ ետ կազմել և թերին լինուլ, յիշատակ իւրոց և ծնողաց իւրեանց և ամենայն արեան մերձաւորաց....։*

308ա *Եւ Պողոս կազմող Աւետարանիս յիշեցէք...։ Թվին ՌՁԶ (1637) էր, որ կազմեցաւ սբ. Աւետարանս։*

1024

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 5982 (1410)

Նորոգող՝ Դանիէլ

Վայր՝ Ապարանից վանք

347բ *Արդ՝ վերջստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ի վայելումն Թումայ պարունտիրոջն, ի յ*Ապարանից *վանքն, ի յառաջնորդութիւն* Սիմէոն

---

37 ա և բ *հիշատակարանները տե՛ս նաև* Ն. Ակինյան, *Մովսէս Գ Տաթևացի, էջ 161։*

38 *Կարդալ աջից ձախ՝ Օհաննէսն։ Գրչի հիշատակարանը տե՛ս 1635 թ. շարքում։*

39 *Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։*

վարդապետին, ձեռամբ սուտանուն Դանիէլի, ի թվին Հայոց ՌՁՁ (1637)։ Ով սբ. ընթերցողք, որք հանգի[պի]ք սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք... իւրեան և իւր ծնողացն, ամէն։

1025

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՐԴՈՅՆ

Երևան, № 6334 (1619 թ.) տե՛ս նաև ՅՁԹԱԻԱ, էջ 81

ա

270բ *Զվերջին ըստացող սբ. դրոյս զտէր Դաւիթ պարոնտէրն, զտէր Խաշատուրն, զտէր Բարսեղն, զտէր Անտոնն, զտէր Սարգիսն և զՍարգիս բանին աշակերտն և զայլ միաբանքն յիշեցէք բարի մտօք առ Աստուած...։*

Թիվն [Ռ]ՁՁ (1637) էր յորժամ բերաք զսա Մեծ անապատէն։

բ

Կազմող՝ Գաբրիէլ

Եւ ևս յիշեցէք զԳաբրիէլ տառապեալ վարդապետս, որ բազում աշխատ եղայ և կազմի[40]. զիրայ հոգիս տկար, անձնս անարժան, ոչ են տեղիք իմաստութեան։

1026

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6512 (1215 թ.)

Նորոգող՝ Սահականոս երէց
Վայր՝ Ղնբիոյ երկիր

245բ *Զվերջին նորոգումն[41] սբ. Աւետարանիս ի խնամոցն Աստուծոյ եղև յերկրիս Ղնբիոյ, ի վիճակիս սբ. աթոռոյս Սիսայ կաթողիկոսութիւնն տեառն տէր Սիմէոնի, ի թվականութիւն Հայոցս ՌՁՁ (1637), ի գառն և ի նեղ ժամանակի այլազգաց Տաճկաց, զոր և մեզ հանգիպեալ սուրն վաղակաւոր պատենիցն մերկացեալ, նայև զմեզ արմատախիլ արար ի բնական գաւառէն մերմէ և ի հայրական ժառանգութենէ։ Քանզի էաք*
246ա *մեք յերկրէն Արարատեան ի Հայոց// մեծաց, ի հաւատէն սբ. Գրիգորի, և ի թեմէն լուսակառուց սբ. Էջմիածնայ, ի գեաւղէն Թալին կոչեցեալ։ Որ և իսկապէս թալանեցաք ի սեփական վիճակաց, տանց և ընթանաց, ազգաց և բարեկամաց, այլ և ամենայն իրաց։ Ի պէսպէս վշտաց պատահեալ, բայց ողորմութիւնն Աստուծոյ պահեալ մինչև ցայժմ ի գերութենէ, քանզի մեզ սիրով բերին այսչափ ճանապարհս։*

Զի և դուք հաւատացեալքդ ի Տէր, հայցէք չձգել խնամակալութենէ իւրմէ. ամէն։ Ի ձեռամբն ապականեալ Ստեփանոս իրիցոյ նորոգեցս[42]։

---

40 Ձեռ-ում «կալմի»։

41 Ձեռ-ի 216ա—245բ էջերը գրված են 1637 թ. նորոգման ժամանակ Ստեփանոս երեցի կողմից։

42 «Նորոգեցս» բառը գրված է աջ լուսանցքում։

Եւ ի խնդրոյ տառապեալ այրի կնոջն Մարջանին, խնդրելով վարձս յԱստուծոյ և մի բերան ողորմիւ ի մէնջ։ Նաև[43] Աւետարանս առն սորա է՝ տէր Մանուէլին և տէր Խաչատուրին։ Անցեալ ժամանակս ինչ երկու հարիւր տարոյ աւելի կամ պակաս, կարի փտեալ և հնացեալ. քանզի այս ամայի լեալ առնէն և որդոցն ինքնին կամեցաւ կազմել սբ. Աւետարանս,
246բ յիշատակ իւրն և ծը[ն]օղին՝ Մաղսուտին, Խանաղին և որդոցն՝ Խա//չատուրին, Յովանէ[ս]ին և Մարտիրոսին։ Ո՛հ, ղի այս Մարտիրոսս սրախողող եղեալ Հադարացոց, և կին սորա գերավարեցին. սուգ լիապէս եղև մաւրն՝ խելագարեալ, մաղս կաթ դարձաւ, ոչ դադարէն ի տուն կամ ի շէնս, այլ քարամբ ծէծէր զկորձս։ Եւ մեր զայն տեսեալ՝ գրոց բանիւ մխիթարել ջանացաք. յետոյ փոքր ի շատէ սղաստացաւ։ Նորոգեցաք Աւետարանս յիշատակ հոգոյ սորայ. և որք յիշատակէք կամ Աստուած ողորմի ասէք Մարջանին, ողորմեսցի ձեզ աւուրն ահագին։

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ հանդիպաւղ սբ. Աւետարանիս, Աստուած ողորմի ասացէք Շնահաւորին և թողութիւն հայցէք մեղաց սորա, քանզի սա և Մարջան ենն սբ. Աւետարանիս ժառա[ն]գն, վասն որոյ ետուն նորոգել։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Շնահաւորին և ծնաւղացն՝
247ա Ղազարին և Թուրվանդին, և առն իւր //Գրիգորին, և որդոցն՝ Միքայէլին և Մարտիրոսին, և այլ ամենայն ընթանացն մեծի և փոքու, արանց և կանանց և այլ ամենայն ննշեցելոց Աստուած ողորմի ասացէք...։

1027
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, Ms 6570 (1454 թ.)

Վաճառող՝ Արիստակէս վարդապետ
Վայր՝ Շնեհեր

ա

226բ Զվերջին ստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ Յունանն, որ ստացաւ զսա յիշատակ իւր և ծնօղացն՝ Աթանիսին, Եղիսաբեթին, և ամուսնոյն՝ Մարինոսին, և դստերն՝ Խանումին, և միւս ամուսնոյն՝ Զադին, և որդոյն՝ Աստուածատուրին, և հարսին՝ Գօզալին, և թոռին՝ Մանուէլին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։

բ

Ես՝ Արիստակէս վարդապետս ծախեցի զսբ. Աւետարանս Յունանին Բ (2) թումանի և իմ վկայութեամբս եդ ի դուռն Ս. Ստեփանոսի՝ Շնեհերոյ սբ. եկեղեցոյն։ Ով ոք յանդգնի հանելով զսա ի սբ. եկեղեցոյն՝ նզովեալ եղիցի Գ՚Ճ և ԺԸ (318) հայրապետացն և ի մէնջ. ամէն։

Թվին ՌՁՁ (1637) ամին, ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի։

---

[43] Ձեռ-ում «նաև» կրկնված է։

1028

ԱԻՏԱՐԱՆ

Երևան, № 6769

Գրիչ՝ Ստեփանոս Մոկացի
Վայր՝ Յամիք

ա

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմի Նօնաֆար խաթունին, հօրն՝
264բ Ախիշանին և մօրն՝ Մայ//րիամին, և որ լի բերանով և բոլոր սրտիւ ասէ զԱստուած ողորմին...։ Տէր Աստուած ողորմի Պահմանեց աղչկան՝ Նօնաւֆարին, հօրն՝ Ախիշանին և մօրն՝ Մարիամին, հօրքուերցն՝ Խուխտարին, հօրեղբօրն՝ Պապաջանին, Մալիշանին, դստերն՝ Ջանաղին, Վարդխաթունին, տղային՝ Թուխմանին. ամէն։ Տէր Աստուած ողորմի Նօնաֆարին, կողակցոյն՝ Միքիքարին, որ փոխեցաւ առ Քրիստոս. ամէն։

Արդ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղսամած և փծուն գրչի սուտանուն Ստեփանոս Մոկացոյս, ի մայրաքաղաքս Յամիք, ի դուռն Ս. Կիրակոսին, ի թւականիս Հայոց ՌՁՁ (1637) ամին։ Աղաչեմ ղձեղ, որ լաւ պահէք ի հրէ, ի ջրէ և ի թաց մատէ, և յամենայն պատահմանէ։

Ո՛վ սբ. քահանայք, աղաչեմ ղձեղ, որ զԱստուած ողորմին ասէք մեղաւոր գծողիս, և իմ ծնօղացն, և իմ սպասաւոր տէր Հայրապետ
265ա Մոկացոյն, և //աշակերտին իմոյ՝ բարեմիտ տէր Առաքելին, և հոգևոր եղբօրն մերոյ՝ Թուխատեցի տէր Սարգսին, որ խնամածու էր ի վերա մեր. Աստուած զիւրեանքն մշակ առանց ամօթոյ պահէ. ամէն։

Ո՛վ եղբայրք, անմեղադիր լերուք խոշորութիւն և սխալանաց գրիս, անմեղադիր լերուք, զի կար մեր այս է. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

Ո՞հ. ո՞հ Ռ (1000) բերան, յիմ աչս կայ Ռ (1000) գերան, ես քեզ կասեմ, թէ զխիլ հան շարու ճարտարբարոյ տխմար ունանական։ Ով եղբարք, անմեղադիր լերուք, զի շատ դառնութիւն <և> տեսա ի Յամիք՝ արևակէզ և ցրտասառո[յ]ց, սովալլու[կ] և ծարաւուտ, զարիպ կենաւք և գառնութեամբ։ Թէ զդառնութիւնս իմ զամէն գրեմ նա, քան զչափ դրոցս այլ առաւել։ Շատ նեղութիւն եմ տեսեր. ապա միթէ ամենազաւր տէր թագաւորն Աստուած զղարիպն չմոռնայ, և յիւր յարքայութենէ չզրկի, ապա լսեր եք, թէ զարիպի տէրն Աստուած է։

265բ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա հոգևոր եղբարցն մեր՝ տէր Մելք[ս]էթին և տէր Սարգսին, որ սպասաւորք էին Ս. Կիրակոսին, որ զաւրինակն շնորհեցին մեզ. Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին...։

Տէր Աստուած ողորմի հոգևոր եղբօրն մերո[յ] Ամիրխանին, որ սպասաւորէ մեզ. ամէն։

բ

263բ Փառք...։ Ուստի տեսեալ զսորա անճառ փրկագործ տնաւրէնութեան խորհուրդ, ոմն առեալ աստուածասէր և բարեմիտ ծառայնն Աստուծոյ Սարգսին, և իւր ծնաւղացն, հաւրն՝ Ալէքսիանին և մաւրն՝ Թաւէզին, կողակցոյն՝ Նօնօֆարին, որ ցանկացաւ աստուածախաւս սբ. Աւետարանիս...։

264ա Դարձեալ Աստուած ողորմի աստուածասէր և բարեմիտ ծառային Աստուծոյ տէր Սարգսին, և իւր ծնողացն, հարն՝ Ալէքսիանին և մօրն՝ Թաւէգին, կողակցոյն՝ Խաթունին, և միւս կողակցոյն՝ Նօնօֆարին, որդոյն՝ Ղազարին, դստերն՝ Թաւէգին, քուերցն՝ Սուլտանին, Դայիանին, հօրեղբօրն՝ Էր[?]փանոսին, որդոյն [Տ]ատուրին, Աղաչանին[44]։ Եւ որ լի բերանով և բոլոր սրտիւ զԱստուած ողորմին ասէ...։

Գ

266ա Տէր Աստուած ողորմի Շատկոց տէր Սարգսին, որ ստացաւ զսբ. Աւետարանս և եդ ի դուռն Տիրամօր Ս. Աստուածածնին, Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։

Դ

Նվիրատու՝ տէր Սարգիս
Վայր՝ Ըռապատ

264ա Ե[ս՝] աստուածասէր և բարեմիտ ծառայս տէր Սարգիսս ըստացա զսբ. Աւետարանս յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց, և ետու յիշատակ հոգոյ իմոյ ի դուռն Տիրամայր Ս. Աստուածածնին, ի գեաւղն որ կոչի Ըռապատ, անջինջ յիշատակ։ Ով ծախէ կամ գրաւէ՝ նա զանէծքն Կայենին առնէ...։

1029
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 8471 (ԺԴ դար)

ա

288բ Զայս Շարակնոցս Աստուածատուր քահանայն գնեաց ի Լ(30) ղուռուշ, իւրն յիշատակ և իւր որդոյն՝ Ոնանէսին. ամէն եղիցի։
Թվին ՌՁԶ (1637)։

Բ

307ա Փառք...։ Արդ՝ ըստացաւ զայս երգարանս Աստ[ու]ածատուր քահանայն իւր հալալ ընչիցն, յիշատակ իւրն և իւր որդոյն՝ Յոնանիսին, և իւր ծնաւղացն՝ Խաչատուր քահանային և մաւրն՝ Մանանի[ն], Վարդխաթունին, և զիմ յարեան մերձաւորքն՝ զկենդանիս և զհանգուցեալս յիշեցէք...։

1030
ՄԱՇՏՈՑ
Երևան, № 8941

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Թաւուգ

78ա Փառք..., որ ետ կարողութիւն և տերեամատրեաց զմատունս վերջացեալ տկար և տարտամ սրխալագիրիս Եսայեա։ Արդ՝ գրեցաւ զսբ.

[44] Ձեռ-ում այս երեք անունը ջնջված է, բայց կարելի է կարդալ։

Մաշտոցս ի ձեռամբ Եսայեա գլորածոյ, ի յերկիրս Տայուշ, ի գեղս որ կոչի Թաւուզ, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս ի յաթոռս Խորանաշատա Ս. Աստուածածնիս և Վանական վարդապետի որ. դերեզմանիս և այլ սրբոցս որ աստ կան հաւաքեալ։ Եւ առաջնորդութիւն սբ. ոսխտիս ի տէր Յոհան եպիսկոպոսի, և յաթոռակալութիւն ի տէր Յակոբ քահանայի, ի թվաբերութիւն Հայոց ՌՁՁ (1637)-ի։ Ի դարձեալ յիշեցէք սուտա-
78բ նուն// Եսայի գրիչս և ծնաւղքն իմ՝ Իսրայել քահանայն և Խոնդաղէն, և եղբարքն իմ՝ Մաքէոսն և Յոհաննն, և կենակիցն իմ՝ Սուլթանաղէն, և որդիքն իմ՝ Սաեփանոսն, և Սենեքարիմն, և Սրապիոնն. և դստերքն իմ՝ Վարվառն, և Թեկլին, և Սառիկն, և ամենայն արեան մերձաւորքն իմ։ Ով որ յիշէ զմեզ, ինքն յիշեալ լիցի ահեղ ատեան դատաստանին։

Ով սբ. մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, լի բերան ողորմի ասացէք Եսայի գրչիս, թողութիւն արէք դրիս խոշորութեան, Գ (3) աւրինակէ եմ դրել Մաշտոցս։

1031
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ, ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ
Երևան, № 10311

261բ Գրեցաւ Կանոնագիրքս և Դատաստանագիրքս ի լաւ օրինակէ, թվին ՌՁՁ (1637), ձեռամբ ումեմն մեղապարտի։

1032
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 10376

Գրիչ՝ Անարիաս դպիր
Վայր՝ Պանտրման

226ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառըս ի թվականութեանս Հայոց ՌՁՁ (1637), ի գիւղաքաղաքն ի Պանտրման, ընդ հովանեաւ ի դուռն Ս. Մինասայ։ Արդ՝ աղաչեմ զձեզ, եղբայրք և մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք ի սմա կարկելով կամ աւրինակ դնելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս զանարժանս, և հայցեցէք ի Քրիստոսէ զդպիր Անարիաս սարկաւագ.

Որ եմ ամենայն մեղօք ի լի,
Որ յիս բարի գործք չգտուի,
Ողբամ և լամ տառըս ի լի,
Մի գթած Տէրն ողորմի։

Եւ արդ՝ խնդրող եղև այս գրքիս, որ կոչի Շարակնոց, հոգէսէր և հոգիընկալ Պաղտասարին, և կողակցին՝ Խանդաաէ, և ծնօղացն՝ Քնարին, Քարամին, Դաւթին, Խապուլին, Տոլուաթին, Թորոսին, Սառային, Սարգիսին Փանոսին։ Աստուած որհնէ զՊաղտասարն և զԽանդատան, որ ստացան զսա հալալ ընչից իւրեանց և դրին յիշատակ իւրեանց հոգոյն, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ...։

1033
?

Կ. Յուզբաշյան, ՍՍԱ, Ա—24 (ժամանակ ?)

Հետ. ստացող՝ Մարկոս

419ա Դարձեալ յիշեսջիք զվերջին ստացող տառիս զՄարկոսն, և զկողակիցն իւր՝ զՊակիճանն, որ գնեցի զսա հալալ արդեամբ, ի վայելումն որդոյն՝ Պաղտասար սարկաւագին։ Աստուած ի չափ հասուցանէ և բարով վայելել տացէ։

Գնեցաւ թվին ՌՁՁ (1637) ամին։

1034
ՇԱՐԱԿՆՈՑ

Կ. Յուզբաշյան, ԻԲ, Ա—63

Գրիչ՝ Յովանէս երէց

367ա Եւ արդ՝ գրեցաւ և յաւարտեցաւ սբ. եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ի լաւ և ընդիր աւրինակէ, ի թականութեանս հայկազան տումարիս ՌՁՁ (1637) ամին, ի հայրապետութեան տեառն տէր Սիմէոն
367բ կաթուղիկոսն, որ է աթոռն Սբսա[յ], ձեռամբ անիմ//աստ գրչի Յովանէս երէցս։

Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՅովանէս երէցս։ Այլ և առաջնորդն մեր զտէր Արիստակէսն և տէր Յովհան եպիսկոպոսն և զմարմնաւոր ծնաւղն իմ՝ Աստուածատուրն, որ հանգաւ առ Քրիստոս, և մայրն իմ՝ Թաւգուռէ, և քոյրն իմ՝ զԵրանն. և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, որ անմեղադիր լինիք բանիս, զի կար մեր այս չափ է։

1035
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վիեննա, № 55 (1368 թ. առաջ), (մանրաժապավեն, Երևան, № 672). տե՛ս նաև ՏՅՁՄՎ, № 55, էջ 260.

485բ Աստուած ողորմի ասացէք Արծնեցի տէր Յովանէս աբեղի ծնողացն, որ ետ ի գին սբ. Աստուածաշնչիս թուման մի։

Թվական ՌՁՁ (1637)։

1036
ԱՒԵՏԱՐԱՆ

Տիրայր վարդապետ, Man., № 8 (1313 թ.)

Կազմող՝ Յակոբ

ա

160 Յակոբ կազմողս ՌՁԵ (1636)։

Բ

Դարձեալ յիշեցէք զԱ[r]գրումցի խոճայ Մա[տթէոս?]ն, մահդա[ս]ի խոճայ Անդրէասի փեսա[յն, ո]ր ետուր կազմել զսբ. Աւետարանս և /// արծաթ կոճակն և այլ ամենայն պակ[աս]ն կա[տար]եց[աւ] թվին ՌՁՁ (1637)։ Աստուած վարձ[ահատոյց լի]նի իւրն, և ծնողացն, և իւր կո[ղակցի]ն, [և ի]ւր ամենայն մերձա[ւորա]ցն մ[եծ]ի և փոքր առ [հաս]արակ. ամէն։

1037
ԱԻԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 760

Գրիչ՝ Յոհաննէս քահանայ
Վայր՝ Շատախ

211ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի թուականիս Հայոց ՌՁՁ (1637), ձեռամբ հէգ, քանաք Յոհաննէս քահանայի, ի դառն և ի նեղ ժամանակի, ի դրան Ս. Նորակնունք Աստուածածնի, ի յերկիրս Գանձակոյ, ի ձորս Գանձոյ, ի գիւղս Շատախ կոչեցեալ, ի ժամանակս շահ Սաֆին։

1038
ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 762

Գրիչ՝ Եղիայ Համթեցի
Վայր՝ Անկիւրիայ

211բ Փառք...։ Գրեցաւ Աղօթամատոյցս լաւ և ընտիր օրինակէ, ձե//ռամբ Եղիայի Համթեցւոյ, թուին Հայոց ՌՁՁ (1637)..., ի քաղաքն Անկիւրիայ. ի վանս Ս. Աստուածածնի...։

1039
ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, II, № 2453

Գրիչ՝ Գրիգոր

1394 Գրեցաւ ձեռամբ Գրիգորի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի թվին Հայոց ՌՁՁ (1637), ի հայրապետութեան տէր Փիլիպոսի և յառաջնորդութեան մերոյ Զուղայիս Խաչատուր բաբունապետին։

1040
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՏԵՐԱՎՋ, № 245

Գրիչ՝ Քասպար քահանայ
Վայր՝ Թորըսկան

383 Փառք...։ Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով.... խօջա Թասալին և մեծ փափագմամբ ցանկացող եղև սբ. տա-

ռիս, և ետ գծագրել զսա ի հալալ և արդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և եղբարցն, և քւերցն, և ամենայն ազգականացն։ Եւ արդ՝ ես Քասպար քահանայ, անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, գծագրեցի զսա ի վերծանութիւն սքանչելեաց ամենայն արեան ներկեալ սբ. մարտիրոսացս...։ Եւ արդ՝ ես անպտուղս Քասպար քահանայ, տեսի զսէր և զփափաքն հեզահոգի և բարեմիտ խօջա Թասալուին, զոր ունէր առ հոգևորսն և իմով իսկ տկարութեամբս յանձն առի, և յամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսբ. գիրքս զայս մեղսամած մատամբ իմով, բազում և մեծ աշխատութեամբ հասուցի յաւարտ ի յանուանի գեաւղս Թորքսկան, ի յեզր Շօշ քաղաքին, որ է Ասպահան, մօտ ի Նարենդալայն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս. ի հայրապետութեան և ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպպոսի, որ մէկ ամաւ յառաջ քան զայս նստած յաթոռն Ս. Գրիգորի Լուսաւորչին ի յէջմիածինն,
384 յետ վախճա//նելոյ տեառն Մովսէսի, և առաջնորդութեամբ Ջուղայու և ամենայն գաւառացն Շօշա[յ] քաջ բարունապետի Խաչատուր վարդապետի, որ եկեալ վերստին նորոգեաց և հաստատեաց եկեղեցիսն ամենայն, ևս առաւել հաւատացեալ քրիստոնեայս լուսաւորեաց աստուածուսոյց վարդապետութեամբն իւրով, զի և նոյն Աստուած լուսաւորեսցէ զհոգի նորա լուսով աստուածութեան իւրոյ, և ի թագաւորութեանն այլազգաց շահ Սաֆուն, և ի թուականիս Հայոց ՌՁԶ (1637) ամի, ի դառն և ի վշտալից ժամանակիս, որում կեամք ընդ հարկի և ընդ ծառայութեանն ազգիս Պարսից։ Տէր Յիսուս տացէ իւր առատ ողորմութեամբն և զերկնից արքայութիւնն ստացողի տառիս խօջա Թասալուին, և իւր պապին՝ Էրազիզին, հանկանն՝ Հռիփսիմին, և ծնողացն՝ Փիրումին, Խաթունաղին, և զմիս մայրն՝ Սոլթանշանին, և ամենայն արեան ազգականաց, ինչ մարդ որ աշխատանք ունի ի վերայ սբ. դրոցս, դասակից արասցէ սրբոց վկայիցն և երանական ձայնի լսելի արասցէ. ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Թասալին, և զիւր կողակիցն՝ Շուշանն, և զվերջի կողակիցն՝ զԱնամն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զխօջա Թասալին և զիւր որդի Աւետիքն, և զհարսն՝ Պզտիկաատիկն, և զթոռունքն՝ Աղազարն, Գրիգորն, Աղամալն, յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զխօջա Թասալին, և իւր եղբայրն՝ զՔամալն, և զնորին որդիքն՝ Մարգարն, Փանոսն, Աղաղարն, Աղուպշանն, [յիշեցէք]...։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Թասալին և զիւր դստերքն՝ Մէրիկն, Աննայն, Թուխշարն, յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Թասալին և զիւր քրւերքն՝ զԱսլիխանն, Թուխշարն, Սղլանկէրամն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Թասալին և զիւր հանգուցեալ եղբարքն՝ զՄարութն, Զաֆարն, Մարգարէն, և զԱղազարն, յիշեցէք...։ Դարձեալ ես՝ մեղապարտ և բազմավէր հոգի Քասպար սոսկանուն քահանայ, գծագրող սորա, զաղէտս տարակուսանաց իմոց առաջի մատուցեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, ով սիրելի և հաւատարիմ ծառայք Քրիստոսի, հայրք իմ և եղբարք, սիրով Հոգւոյն անեղկմիտ հաւատով, լիակատար սրտիւ, առաջի Քրիստոսի ի ժամ աղօթից ձերոց յիշեսջիք և զիմ անարժանութիւնս։ Նաև յիշեցէք զծնողսն իմ՝ զՊաղտասար քահանայն

և զԹուրվանդայ[ն], և զդիր ուսուցանող վարպետն իմ՝ զՄեսրովբ դպիր Խիզանցին, որ ուսոյց զիս զարհեստ գրչութեանս, և այլ ամենայն աղգատոհմն՝ թէ զկենդանիս և թէ զննջեցեալսն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զծագկող և զկազմող սբ. զրքիս զՍեսրովբ դպիր Խիզանցին, և զիւր որդի Մարտիրոսն, և զիւր ծնողսն, և զվարպետն իւր, և զկողակիցն, և զորդիքն, և զդստերքն, և զամենայն աղգայինքն, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, և թողութիւն հայցեցէք յանցանացն, զի և տէր Յիսուս թողցէ զանցանս ձեր. ամէն։

1041

ԱԻԵՏԱՐԱՆ

CBCon., № 15 (1485 թ.)

Կազմող, նորոգող՝ Մաղաքեա

Վայր՝ Եդեսիա

26 Շնորհիւ Տեառն... վերստին նորոգեցաւ և կազմեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Եդեսիա, ի դուռն Ս. Աստուածածնին, ի յառաջնորդութեանն տէր Նահապետ արհեպիսկոպոսի, ՌՁՁ (1637) թվականին։ Եւ էր սբ. Աւետարանս այս յիշատակ եդեալ տէր Սրապիոն բարձունապետ

27 և աստուածա//բան վարդապետն Յուրեայեցին, և նախնեացն նորին։ Եւ էր աղտոտեալ և ապականեալ... զոր տեսեալ աստուածասէր և հաւատարիմ կինն[45] մղտէսի Վաղվառն, և ետ.... վերստին նորոգել և զարդարել յիշատակ իւր և իւր կողակցուն՝ Կուռնուն, և ծնողացն՝ Սարգսին և Սելիճանին, ձեռամբ ումեմն մեղապարտի և փծուն գրչի Մաղաքեայի... աղաչեմ հայցել ի Քրիստոսէ մեղացս թողութին... ինձ և ծնողացս, հօրս՝ Սարգսին և մօրս՝ Սանդուխտին։

1042

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Մուրմար, I, № 15 (1312 թ.)

Կապող տէր Մարգարէ

28 Թուականութեան Հայոց ՌՁ և Ձ (1637) ամին, ի դառն և ի նեղ ժամանակիս, որում յամենայն կողմանց սէրն և խաղաղութիւն սպառեալ է և նուազեալ, մեղքն և անօրէնութիւն տիրեալ և թագաւորեալ է, ի յայս դառն և ի չար ժամանակիս դեռ ևս ուրէք գտանի բարեմիտ և երկիւղած, թէ ի վարդապետաց, թէ յեպիսկոպոսաց, թէ ի քահանայից, թէ յաշխարհականաց, զի ոմն գերի ազատէ, և ոմն եկեղեցի շինէ, և ոմն յիշատակ դնէ ի դրունս եկեղեցեաց և վանօրէից՝ թէ՛ Աւետարան, թէ՛ զգեստ, թէ՛ խաչ, թէ՛ այլ զինչ և իցէ։ Որպէս և այս սբ. ուխտիս Ղազարու վանաց երկոտասան Ս. Առաքելոց առաջնորդ Յովանէս վարդապետն, որ ի յայս հարկապահանջութեան ժամանակս տիրէ և կառավարէ, և ազգի ազգի փորձանաց համբերէ, վասն սիրոյ սբ. ուխտիս։ Զոր

[45] Տպված է «գիննն»։

սնսեալ բազում գրեանս եղծեալ և ապականեալ, և ետ վերստին նորոգել, թէ՛ զգործս առաքելոցն, թէ՛ զԱռակաց բնաբան, թէ՛ զԵրգ երգոցն մեկնիչն և քանի տարոյ դիրք և Աւետարան ետ նորոգել առաջին յիշատակ դնօղաց, ե յետին կազմողաց և կամակից լինողացն ողորմեսցի տէր Աստուած։ Եւ իրն վարձահատոյց լիցի և ընդ երկայն աւուրս արասցէ տէր Աստուած մեր, հանդերձ աշակերտիւն իւրով տէր Մարգարէի, որ կապեաց զսբ. գրեանցս յիշատակ հոգւոյ իւրեանց, և ծնօղաց, և լաւ պահողացն. ամէն[46]։

1043
ԺԱՄԱԳԻՐՔ
Մուրման, II, № 16 (1409 թ.)

Կազմող՝ Սաեփանոս
Վայր՝ Ամիք

110 Կազմեցաւ ձեռամբ Սաեփանոսի, որ մականուամբ Կարմիր ասի, թվին ՌՁՁ (1637), ի յԱմիք, ի դուռն Ս. Կիրակոսի. Աստուած ողորմի աշխատաւորաց. ամէն։

1044
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՁՁՎՍ, I, № 76 (1663 թ.)

Ծաղկող՝ Գրիգոր

310 Ես՝ մեղաւոր Գրիգոր գրիչս՝ զայս խորանս հանեցի. թվին ՌՁՁ (1637)։

1045
ԱՒԵՏԱՐԱՆ
ՁՁՎՍ, I, № 133 (1470 թ.)

Նորոգող՝ Մկրտիչ երէց

589 Զվերջին նորոգող սբ. Աւետարանիս յիշեցէք զտէր Խաչատուրն, որ ետ նորոգել ձեռամ[բ]ս մեղաւոր Մկրտիչ երիցոյ, ի թվին ՌՁՁ (1637)։ Ով որ հանդիպիք սմայ յիշեցէք ի յաղաւթս ձեր և յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։

1046
ՃԱՌԸՆՏԻՐ
ՁՁՎՍ, II, № 221 (1255 թ. առաջ)

Գրիչ՝ Գրիգոր երէց

322 Թվին ՌՁՁ (1637) ես՝ մեղաւոր և անարժան Գրիգոր երէցս գտայ զայս կանոնքս[47], խիստ օրինաց բաներ կայ ի մէջն, դուք որ կարդայք, մեղացս թողութիւն հայեցէք ի Քրիստոսէ. ամէն։

---

[46] Համառոտ տե՛ս նաև Հ. Ոսկյան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, էջ 75—76։
[47] Իմա՛ Աթանասի (ծանոթ. Բ. Ս-ի)։

1047
ՄԱՇՏՈՑ
ՄՁՎՍ, III, № 401

Գրիչ՝ Կիրակոս Բաբերդացի
Վայր՝ Տրապիզոն

ա

470 Փառք...։ Գրեցաւ սայ ի թվականս Հայոց ՌՁՁ (1637), ձեռամբ յոգնամեղ և սուտանուն և յանարհեստ գրչի Կիրակոս իրիցու Բաբերդուցոյ, և ի մայրաքաղաքիս Պոնտոսի, որ այժմ Տրապիզոն ասի, ընդ հովանեաւ առաքելաշէն վանս ի Ս. Ամենափրկչիս, ի խնամակալ սբ. ուխտիս ի տէր Աւետիս արքեպիսկոպոսիս՝ Աստուած դինքն հաստատուն պահեսցէ։ Աւարտեցաւ ի դուռն ի սբ. չարեաց խափանող Ս. Աստուածածնիս և ի Ս. Յովանիսիս. ամէն։

բ

Յիշատակ է Մաշտոցս՝ Համշէնցի տէր Յակոբին և իւր ծնողացն՝ տէր Յոհանին, որ առ Աստուած փոխեալ է. Աստուած հոգոյն ողորմի, իւր որդիքն անփորձ և անսասան պահեսցէ ևս առաւել տէր Յակոբն կրկին կենօք պահեսցէ, որ ստացօ սբ. գրոցս. յիշատակ է իւրն, և ծնողացն, և իւր յարեան մերձաւորացն. ամէն։ Աստուած իւրէն բարով վայել[ել] տացէ։

գ

Ձեռքըս փտի հող դառնայ,
Գիրս կենայ երկիր մնայ։

1048
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԹՁԱՎ, № 196

Գրիչ՝ Աւետիս
Վայր՝ Հոգոց վանք

374 Փառք...։ Արդ՝ գրեցաւ քարոզգիրք ի թուականիս մերոյ ՌՁՁ (1637) ի սբ. ուխտն Հոգոց վանք, ընդ հովանեաւ կենդանայգիր սբ. պատկերին Աստուածածնին և սբ. Սիոնին. և երբեմ[ն] ի գեղարէնս գրեցաւ ձեռամբ սուտանուն և անարհեստ գրչի Աւետիս անարժան երիցու, զոր ցանկացող եղև Աբրահամ քահանայն այսմ աստուածազարդ բուրաստանիս և ետ գծագրել ի հալալ և յար[գ]ար վաստակոց իւրոց, բարի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հօրն՝ Շաղաւկաթին և մօրն՝ Ազիզին, կողակին՝ Նէրգգին, և որդոյն՝ տէր Յովանէսին, կողակցոյն՝ Մրուաթին,
375 //տէր Սահակին, Մուրատին, Մարգարին, Խոռոմին և միւս Խոռոմին, Ջանփաշին, Շազզատին յիշեցէք... և Թուրուանդին... և ինձ անարժան Աւետիս գրչիս և իմ ծնողացն՝ Սահակին, Շահրէին յիշեցէք...։

1049
ՏՕՆԱՑՈՅՑ
Մշբեղ, VI, № 1733

Գրիչ՝ Ստեփանոս Մոկացի
Վայր՝ Բեդղեէմ

45 *Փառք...։ Գրեցաւ Տաւնացոյցս ի սբ. Բեդղեէմ, ի քաղաքն Դաւթի, ի դուռն Ս. Ծնընդեան և յանբանից սբ. մսրին..., ի թվին ՌՁԶ (1637) ամին, ձեռամբ սուտանուն Ստեփանոս Մոկացի իրիցուն, որ զանունս ունիմ և զգործս ոչ. վա՜յ ինձ մեղաւորիս Ռ (1000) բերան։ Գրեցաւ Տօնացոյցս ի լաւ և յընտիր յօրինակէ։ Որք հանդիպիք տուն տեսանելով կամ աւրինակելով, նայ լի սրտով և բոլոր հաւատով բերա[ն] մի ողորմի ասէք ինձ մեղաւորիս...։*

1050
ԱՂՕԹԱԳԻՐՔ
Մշբեղ, VI, № 1720

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Երուսաղէմ

31 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ տնաւրինականացն Աղաւթքներս ի քաղաքն* Երուսաղէմ, *ընդ հովանեաւ Ս. Ակոբայ դամբարանին, ի հայրապետութեան տէր* Գրիգորին, *ձեռամբ անարժան* Խաչատուր *երիցուն, ի թվականիս Հայոց ՌՁԶ (1637)։ Ով ընթերցողք, [յ]որժամ ընթեռնոյք և կամ աւրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զլոկանուն* Խաչատուրս *և դուք յիշեալ լիջիք...։*

1051
ԱՒԵՏԱՐԱՆ
Թորոս աղբար, Բ, էջ 416

Գրիչ՝ Ստեփանոս
Վայր՝ Վան

Գրեալ ի քաղաքն Վան, *ի դուռն Տիրամայր Ս. Աստուածածնի և Գաբրիէլ սբ. Հրեշտակապետին, ի թուին Հայոց ՌՁԶ (1637), ձեռամբ* Ստեփանոսի... *ի ստոյգ և յընտիր աւրինակէ...։*

1052
ԱՒԵՏԱՐԱՆ
Արշակ Ջոպանյան, Նահապետ Քուչակի դիւանը

Գրիչ՝ Ստեփանոս Ջուղայեցի
Վայր՝ Խարակոնիս

ա

31 *Փառք...։*

Քուչակ անուն բարի մտական,
Որ ստացող եղև սորան։

Յիշեցէք զՔուչակ և միւս կենակից Թանգխաթունն: Դարձեալ յիշեցէք զՔուչակ և զմեծ պապն իւր՝ Նաճապետ վարպետն[48], որ մականուն Աշլղ Քուչակ ասի։

14 Դարձեալ յիշեցէք որ ստացաւ զսայ և ետ ի դուռն // Ս. Թէոդորոս զօրավարին, ի ձեռն տէր Մելքիսէթին...:

Յիշեցէք զվերջին ստացող սորա, որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց Քուչակն, ի թուին Հայոց ՌՁՁ (1637)։

Բ

Եւ ետ՝ Ստեփանոս Ջուղայեցի Նաղաշ երէցս հանդիպեցայ Խարակոնիս[49]:

1053

ՃԱՇՈՑ

Ալպոյաճյան Ա, Պատմութիւն հայ կեսարիոյ, հտ. Բ

Գրիչ՝ Բարսեղ քահանայ

1869 ...Ցանկ և յաւարտ հանել սբ. և ցանկալի գիրքս, ձեռամբ անարհեստ ղծողի Բարսեղ քահանայի... Ի թուականութեան հայկազնեան տօմարիս ՌՁՁ (1637), ի հայրապետութեան Սսոյ տեառն տէր Սիմէոնի կաթողիկոսի և՝ յառաջնորդութեան այսմ նահանգի Կեսարու արհի եպիսկոպոսի Դաւթի...։

---

48 Բացի Ա. Տեկանցի բնագրից, մյուսներում վարդապետն փխ. վարպետն։

49 Տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Ա, № 761, էջ 211ա, Ա. Տեկանց, Հայերգ, էջ ԺԱ—ԺԲ։

1054
ԲԱՌԳԻՐՔ

ՏՅԶԿՄՎ, № 3, տե՛ս նաև Կամենից, էջ 188, «ՀԱ», 1891 թ. էջ 3

9 Մէն տէր Ներսէս Հօլուպ վոյթ օղլու Ալոմ սաթուն պու Բառքգիրքնի բարոն (?) Պաղչաշվակերիմուն (?). տէր Աստուածատուր օղլու բէվնց (?) սմյկա թվին ՌՁԷ (1638), յունվար ԺԸ (10), չորեքշաբթի խայսին օլ Օլախ վէլիյաթընա ալայ ԺԷ (17) սաթուն ալըրէսի զէվքովըդալարկա։

1055
ՀԱՎԱՔԱԾՈՒ

ՈՅԶՄՎ, № 837

415 Ի տպագրեալ Սիմէոն վարդապետի Հայոց ձեռագրեալ բազում աշխատութեամբ կատարեցաք այս գիրքս, ի թվական Փրկչին 1087[1] փեաբրվար 12։ Ով որ կարդայ միոյ Հայր մեղայիւ յիշեսցէ զայս գիրքս աշխատողաց փառք. ամէն։

1056
ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 1503 (1633 թ.)

Նվիրատու՝ Էրդամ և Խանփարի
Վայր՝ Էջմիածին

632ա Եւ արդ՝ ստացեալ զայս հանուրց սրբ. վիպագրութիւնս... մեք տառապեալ անձն և առանց յիշատակի մնացեալքս՝ Էրդամ և Խանփարի, և ընծայեցաք նուէր աղերսանաց առ Աստուածն ողորմած ի դուռն լուսակառոյց և գերադիտակ սրբ. աթոռոյն Էջմիածնի առ դիտապետութեան տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Զի յիշատակ և արձանակ մեզ եղիցի անտանել ի նմանէ աղաչանօք մեր և թաղխանձանօք և իբրև բանաւոր պաշտօն առ խնամօղն ամենայնի խաւսեսցի ընդ մեր անխափ[անել]ի, թերևս ներումն յանցանաց մեր[ո]յ լիցի, և գթութիւն յատեան աշխարհագումարի ընձեռեսցի մեզ յառա[տա]տուր պարգևացն Աստուծոյ...։

[1] Այս ձեռ-ի թվականի մասին տե՛ս Թորգոմյանի կարծիքը. «Ինձ կը թուի թէ յիշատակուած փրկչական թուականը աւելի հայկական է, որով (1087+551) կը համապատասխանէ 1638 թուին Քրիստոսի։ Սիմ. Ջուղայեցի 17 դարու մատենագիր էր» (տե՛ս Դ. Զարբհանալյան, Հայկական նոր մատենագրութիւն, էջ 299)։

էր եզ հագար մերոյս թուի,
Ութսան և եթն ընդ նոյն հաշուի (1638),
Եւ փետրվար ութ և տասնի,
Եղեալ զսա ի դուռն վեհի,
Արձանագիր անվիպելի,
Առ ի յիշումն մեզ եղիցի,
Եւ սփոփում [ը]նձեռեսցի...։

1057
ՄԱՇՏՈՑ

ՏՁԿՄՎ, № 7. տե՛ս նաև Կամենից, էջ 187, «ՀԱ», 1891թ., էջ 45, 1921 թ., էջ 285, Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 180—161

Գրիչ՝ Յակոբ
Վայր՝ Զամօսցա

13 Փառք... որ ետ կարողութիւն տկարութեան ծերացեալ և փտեալ մարմնոյս յանգ ելանել սբ. դրոյս որ կոչի Մաշթոց։ Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ Յակոբ իրիցուս ի յերկիրս Իլախաց, ի քաղաքս Զամօսցա, առ դուռն Ս. Աստուածածնին, ի թվաբերութեանս Հայոց ՌՁԷ (1638) ամի, ի ժամանակս թագաւորութեանս Իլախաց Զորրորդ Վլատիսլաւին և հայրապետութեան սբ. Էջմիածնա[յ] տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսին։ Փետրվարի ամսոյ ի Իե (25) յանգ ելաւ ի վայելումն անդրանիկ որդոյ իմոյ տէր Պետրոս քահանային, զոր արտասուաթոր մաղթանօք հայցեմ յԱստուծոյ ամենակալէ, զի բարով վայելել տացէ [ժամանակս յերկարս ի խորութիւն ծերութեան][2]։... Արդ՝ երեսս անկեալ աղաչեմ զձեզ, եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, ասացէք Աստուած ողորմի մեղաւոր Յակոբ իրիցուն և որդոյ նորին տէր Պետրոս քահանային...։

Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն՝ տէր քաղաքիս բան Թումաս Զամօյսֆին այր հանճարեղ [և իմաստուն. Աստուած լուսաւորէ զիւր հոգին. ամէն][3]։

1058
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երուսաղեմ, № 1090 (մանրաժապավեն, Երևան, № 598), տե՛ս նաև ՄՁԵՊ, IV, № 1090, էջ 136

Ստացող՝ Ղազար եպիսկոպոս
Վայր՝ Շօշ

165բ Կամօք և օժանդակութեամբ ամենասուրբ Երրորդութեանն... ես՝ նուաստ Ղազար անուամբ եթ եպիսկոպոս, կարի իմն ըղձանք

---

2 Ավելացրինք ըստ Ալիշանի հրատարակության։
3 Համառոտ տե՛ս նաև № 9027, էջ 78աբ։

ստացեալ յաղագս այսոցիկ մատեանց, առ ի կալ ոչ առ իս, զի օր ըստ օրէ ընթերցմամբ մարթոցից գումարել սոքաւք զամենայն ըստգտանս անձին իմոյ և ողբալ ի կատարումն աւուրց իմոց այսր ի կայիս խաւարի, զվիրաւորութիւն հոգւոյ իմոյ ի սկզբանց հինից ներհակին։ Եւ արդ՝ սկսեալ ըղձախորհ դիտումն մտաց իմոց վասն այսր մատեանց քառ ամաւ յառաջ քան զսորայս կատարումն, որոյ պատահեալ աւարտ ցանկալի այսմ իրի հասանել, յայլ և յայլ գրչաց և ստացողաց կերպացեալ և վիճակեալ ինձ յանցաւորիս, սատարութեամբ եղբարց մերոց։ Եղեալ զրաւ սորա ի մայրաքաղաքիս Շօշ արտաձայնելոյ, ի հազարերորդ ութսներորդ և ութներորդի (1638) թուականեան հայկազնեայս տումարի, ի քաղոց ամսոյ երեսնին[4] ըստ լրման իւրոյ։ Ցամս գիտողութեան սբ. աթոռոյն էջմիածնի տեառն Փիղիպոսի հայրապետի մերոյ։ Եւ արդ՝ մաղթեմ ի հանդիպողացդ, յիշատակել զիս՝ զՂազար եպիսկոպոս ստացող սորա, հանդերձ ծն[օ]ղօք իմովք՝ Կիրակոսիւ և Շահմէլիքիւ։ Նաև ընդ սոսա զյոքներախտ հանիկն իմ՝ զՀռիփսիմէ անապատաբնակն, զի ամենայն աշխատողաց ի սմա, ընդ ստացչիւք սորա, վարձատրութիւն ի Տեառնէ լիցի. ամէն։

1059

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 10011

Գրիչ՝ Աւետիս երէց

321բ *Փառք...։ Արդ՝ ես մեղուցեալ գրչակս* Աւետիս *սուտ երիցուկս, անպիտան և աղխմար գծողս, աղաչեմ զամենիսեան խնդրել թողութիւն ծովացեալ յանցանաց իմոց, զի անթիւ են քան զաւազ ծովու, և կշիռք լերանց ոչ հաւասարեն անաւրէնութեանն իմոյ։ Ո՛վ դասք լուսերամից, յորժամ ընթեռնոյք կամ աւրինակէք խոշորութեան գրիս և սղալանաց անմեղադիր լերուք, զի ի բազում վշտաց տագնապեալ կայր միտք իմ, զոր թշնամին ազգի ազգի սերմանէր յանդաստանս մտաց իմոց. և [յ]որժամ այս ամենայն զիս նեղէր և ես զգրիչս և քանզի ի բնաւից վերշացեալ ի բարեաց միմիայն յոյս թող ինձ զԱստուծոյ մարդասիրութիւնն։ Եւ դարձեալ բարի ոք համարեցա վաստակիլ անձամբ և գործել ձեռաւք յայգի Տեառն ըստ յետին մշակացն, որք մին ժամ գործեցին։ Եւ ոչ վասն մարմնական ընչի[ց] արդեանց, այլ գանձ յերկինս և բարեխաւս առ թագաւորն մեր և տէր և Աստուածն Յիսուս Քրիստոս. և յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և հաւր իմոյ տէր Գրի[գոր]ին և մաւրնս իմոյ Պակիխանի[ն], և եղբօրս իմոյ Ղուկասին, որ փոխեալ է առ Քրիստոս, և ամենայն արեան մերձաւորաց. ամէն։*

Աւարտեցաւ քրիստոսահիմն և առաքելախօս, մարգարէաշէն [և] հոգիաբուխ տառս ի յամի հայ տումարիս ՌՁ և է (1638) թվականի արաց ամսոյ Բ (2)-իս[5]։

---

[4] Հայոց ՌՁԷ թվականը սկսվում է 1637 թ. հոկտեմբերի 13-ից (ըստ հուլյան տոմարի). այս հաշվով ՌՁԷ թվականի քաղոց ամսի 30-ը կհամապատասխանի 1638 թ. մարտի 12-ին։

[5] Այսինքն՝ մարտի 14-ին, որովհետև հուլյան տոմարի հաշվով արաց ամիսը սկսվում է մարտի 13-ից։

Զեռամբ վեցուն Աւետիսիս,
Եւ անարժան քահանայիս,
Այլ սուտանունս որ է առ իս,
Ծոյլ և վաթար և պղերգիս։
Բիւր քանքարոյ բազմատաղանդ պարտականիս,
Բաղում մեղաւք լցեալ հոգիս,
Իբր ի ծովու ծփե[ա]լ յալիս,
Խաբէութեամբ կամի և իս։
Զի բազմամեղ եմ այս գերիս,
Եւ նախատինք մարդկան ազգիս,
Քանզի ամօթ եմ այս կարգիս,
Գարշ և խտրանք այս սր. ձևիս։
Որք քահանայք էք անուանիս,
Եւ էք պարծանք մեր գաւառիս,
Դուք մի՛ նայիք ի ձև գրիս,
Որ է սղալ և խոշոր ի քարտիսիս։
Այլ ուշ դրէք դուք նամակիս,
Հոգէպատում այս Հարցմանցիս,
Անմեղադիր լերուք դրիս,
Զի կար մեր այս է։ Հայր մեր։

1060
ՆԱՐԵԿ, ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5150, տե՛ս նաև Դ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 763, էջ 211բ

Գրիչ, նվիրատու՝ Մարութայ դպիր
Վայր՝ Ապարանից վանք

288բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ գիրքս ձեռնադրութեան է (7) աստիճանացս, ձեռամբ մեղաւոր և անպիտ[ան] գրչի Սարութայ դպրի, որ անուամբս եմ միայն և գործովս յունայն. և ետու յիշատակ ի դրունս յԱպարանից Ս. Նշանին և Թումայ եպիսկոպոսին, յիշատակ ինձ և ծնողաց իմոց։ Թվին ՌՁԷ (1638) ի մարտի Ի (20), օր երեքշաբթի[6]։

1061
ՃԱՇՈՑ

ՏԵՐԱՎՋ, № 210 (1401 թ.)

Վաճառող՝ Դշխուն
Գրիչ՝ Պետրոս

260 Խաչատուր վարդապետին աթոռակալութենովն ե նորա վկայութեամբըն ես՝ Դշխունս իմ կամաւ և յօժարութեամբ իմ Ճաշու գիրքն ծախեցի,

[6] Սույն ձեռ-ը կազմված է երկու տարբեր մասերից, որոնք ժամանակին եղել են առանձին ձեռագրեր, և հետագայում միացրել են մի կազմի մեջ։ Հիշատակարանը այժմյան ձեռ-ի երկրորդ մասն է, սկսած 243ա էջից մինչև վերջ, համարակալված առանձին պրակներով, իսկ ձեռ-ի առաջին մասը՝ 1ա—242բ էջերը, նարեկ է, որ ընդօրինակվել է 1684 թ.։

տէր Մարտիրոսն Կանանց յանապատին համար առէց, զինը ԺԵՌ (15000) դնան, թվական ՌԶԷ (1638) մարտի ԻԸ (28), Զատկին առաջին շաբաթին չորեքշաբթի աւրն[7]։ Էլ ոչ ով այլ և այլ չանէ՝ ո՛չ դուստր, ո՛չ որդի և ո՛չ այլ ինչ ազգական։

Ես՝ Սուլթանբէկս վկայ, ես՝ Գրիգորս վկայ, ես՝ տէր Խաչատուրս վկայ, ես՝ տէր Անանէս վկայ, ես՝ Մաթէոս սարկաւագս վկայ, ես՝ Պետրոս էրէց գիրս գրեցի վկայ, ես՝ մահդասի Յակոբս վկայ. Աստուած վկայ. բաւ է։

1062

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ԹՂԹՈՅ

Երևան, Ֆ 1318 (1335 թ.)

138բ Թվին ՌԶԷ (1638), որ մարտի ԻԵ (25) Զատիկ էր, որ ի մեծայհրաշին Կիրակին խիստ դառն ու դիժաբ անցուցաք, որ չարսու բազարն փակ[ու]եցաւ և ըստակն աւերեցաւ մինչ որ հաց ալ չի գտվաւ. վասն մեր ծովացեալ մեղացն. փառք ոս գոհութիւն Աստուծոյ. Աստուած բարին կատարէ։

1063

ՏՕՆԱՅՈՅՑ (1627 թ.)

Բեյրութ, «ՀԱ», 1959 թ., էջ 420

Յիշատակ է Տանացուց և Աւետարանացուցս Պէկլէրին, և կենակցին՝ Կեռսին, որ տուին ի ձեռն տէր Պետրոսին և ի Ս. Սարգիս տաճարիս։ Զունի ոչ ոք իշխանութիւն հանել յեկեղեցոյս կամ ծախել կամ գրաւական դնելով, որ յանդգնի զմասն Յուդայի առցէ և զպատիժն Կայենի կրէ։ Զի առին հալալ ընչիցն և զվաստակացն և դրին եկեղեցիս։ Աստուած ողորմի իւրեանց հոգոյն և ամենայն ննշեցելոցն. ամէն։ Ի թվականիս Հայոց ՌԶԷ (1638), ապրիլի ԺԲ (12), օրն հինգշաբթի գրեցաւ յիշատակս։

1064

ԺԱՄԱԳԻՐՔ

ՄՍԱԲ, Ֆ 272 (ԺԳ—ԺԴ դդ.)

1186 Մայիս Ե (5) ելք ի տանն։

Թվին ՌԶԷ (1638) Առաքել վարդապետն գազ մի և Բ (2) լիտր գինի ասաց։

---

[7] 1638 թ. Զատիկը կլինի մարտի 25-ին (հուլյան տոմարով)։

1065
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ
Կյուլեսերյան Բ., Պատմ. կաթող. Կիլիկիոյ, էջ 312

Գրիչ՝ Աստուածատուր քահանայ
Վայր՝ Միսիս

ա

Փառք...։ Գրեցաւ սբ. գիրքս ի հայրապետութեան տեառն տէր Սիմէոն *կաթողիկոսին. և էր թիւն Հայոց ՌԶ և է աւելի (1638), ի մայի[ս] ամսոյ ԺԲ (12)։*

Զեռամբն ումեմն անարժանի,
Աստուածատուր *քահանայի,*
Որ կարդ առի ես հրեշտակի,
Բայց վարքս իմ է խիստ աղտեղի։
Երբ դու կանգնիս ի յատենի,
Եւ այս գիրքս ի քեզ հանդիպի,
Ցիշման առնէք զիս արժանի,
Եւ մի բերան Տէր ողորմի։
Եթէ յաւել գրչի սղալանք,
Ձեր գիտութեամբդ ի բաց բառնայք,
Զի գրագրութեան սովոր չէաք,
Եւ այտչափ միայն կարացաք։
Բայց Տէրն քաղցր է և բարի,
Եւ յոյժ գթա իւր ծառայի....

բ

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զԼէնցի տէր Կիւրեղ *քահանայն, և զմայրն իմ՝ զ*Ասմին*, և զամենայն արեան մերձաւորսն իմ, և որ յիշէք. յիշեալ լիշի[ք]...։ Գրեցաւ ի մայրաքաղաքս* Միսիս, *ընդ հովանեաւ /// սրբոցն որ աստ կան մեզ ի պահպանութիւն։ Այլ և աղաչեմ զձեզ յիշեցէք յաղաւթս ձեր զվարպետն իմ՝ զԼէնցի տէր* Աբրահամ *քահանայն, որ է այժմուս ի քաղաք ի* Ատանայ, *որ բազում աշխատութեամբ ուսոյց զիս, տէր Աստուած իւրն երկար ժամանակ տաց. ամէն։ Ով հայր իմ՝ տէր* Թէոդորոս *վարդապետ, անմեղագիր լեր, թանաքս խիստ քամէր և սիրտս տրտում, անմեղադիր լեր, զմեզ ի աղաւթքդ յիշէ. ամէն։*

1066
ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
Երևան, № 8118

577բ */// և եթէ ոչ [այ]լ ուրեք///ոս ի ձեռանէ դոցա։ Եւ եթէ ըստ ուխտի իւրեանց կայցեն, նմին նման և եսս։ Թվին ՌԶԷ (1638) մայիսի*[8]*, աւրն երկուշաբթի։*

[8] Ամսաթիվը ձեռ-ում չի գրված և տեղը բաց է թողնված։ Պետք է լինի մայիսի 7, 14, 21 և 28-ի երկուշաբթիներից մեկն ու մեկը։

1067
ԳԱՆՁԱՐԱՆ
Երևան, № 7785 (ԺԴ դար)

2ա Զթերավարժ գրչակս յաղա[ւ]թից ոչ մոռանայք, ո՛վ դաս քահանայից և կղերիկ[ոս]աց, զէրայ այլոց խնդրուածաւք դիւրաւ թո[ղու]թիւն շնորհէ մեղաւորաց։ Թվին ՌՁԷ (1638) յունի[սի] ամսոյ Զ (6)[9]։

1068
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ
ՄՏՁՀՄՍ, II, № 12 (1443 թ.)

Կազմող՝ Մինաս

54 Վերըստին կազմեցաւ սբ. Աւետարանի քաղուածուս, ձեռամբ անարժան բանի սպասաւոր, միայն անուամբ Մինասի, թվին ՌՁԷ (1638), [յ]ունիս ամսո[յ] ԺԵ (15)։

1069
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Վատիկանի գրադարան, № 19 (1607)

Նվիրակ՝ Կասպար
Վայր՝ Վարնա

293 Ի Զատարիայ վարդապետէ և ի պատրիարգէ Կոստանդիանուպոլսոյ, և սորին ըսպասաւորէ Կասպար նուիրակէս, ծանուցումն լիցի պատահող նիւիրակաց, քահանայից և ժողովրդոց մեծի և փոքու առ հասարակ ամէնուն. ամէն։ Գիտութիւն լիցի ձեզ, որ հրամանաւ վարդապետին[10], եկի ի Վարնայ զԳրիգոր աբեղայի Ասմուտքն, որ ինքն առ Աստուած[11] էր փոխէր, թագաւորին հրամանօն[12] պատրիարքին էր ընկեր, մեք բերաք ծախեցաք խոճայ Մառուկիւն[13] և Յովանէսին, առաք հախլաշմիշ եղաք[14]։ Ոչ ոք դորայ այլ և այլ չանէ. և այլ բաւ է։ Թվականին ՌՁԷ (1638) յունիսի ԻԴ (24)։

1070
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՏՄՁՄՎ, № 124 (1603 թ.)

Գրիչ՝ Գրիգոր Կամախեցի
Վայր՝ Բաբերդ

ա

109 Փառք...։ Արդ՝ շնորհիւ Տեառն սկ[ս]այք և ողորմութեամբ նորին աւարտեցաք զվիպասանադիր պատմագրութիւնս անցից ժամանա-

---

9 Այս հիշատակարանի ներքևում, այլ դրով, գրված է «Թվին ՌԿԵ (1616) գրեցաւ յիշատակարանս»։

10 Ձեռ-ում գրված է հապավված, ցուցակի հեղինակը կարդացել է «վ(ա)րդ(ավա)րին» ձևով։

11 Տպված է «ահ (?)»։

12 Տպված «հրանօն»։

13 Ձեռ-ում անունը գրված է հապավված, ցուցակի հեղինակը կարդացել է «Ծ(ա)ռ(ա)կիւն»։

14 Տպված է «հախլաշ միշեղաք»։

կաց Կիրակոս վարդապետին, աշակերտին եռամեծին Վանականայ, ի թվաբերութեանս հայկազնայ տու[մարի] կրկին հնգից հարիւրից, յորելեան և երկ թվոց (1603)[15], ի մայիսի օարտին և ի մուտն յունիսին, ի գաւառին Խսիտեաց, ի քաղաքին, զոր այժմ Բաբերդ ասի, ի դրունս Ս. Աստուածածնի եկեղեցոյն, որ հուպ է Հրեշտակապետին, առ ոտս երշանիկ վարժապետին իմոյ Սրսպիոն բարունոյն, որ էր ի նոյն գաւառէն ի գեղջէն Օձտեղայ, և ի հայրապետութեան տեառն տէր Դօթին, և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Անմատին, որդի սուլտանին Մուհամատին, որ ի սոյն ամի մեռաւ և թագաւորեաց այս Անմատս մանուկ
410 տիօք, յոյժ խելացի// և բարէբարոյ, ի դառն և յանրարի ժամանակին, որ կրկին սկիզբն եղև յարուցման չալալոցն և խուռն աւերման աշխարհիս Հայոց։ Արդ՝ գրեցաւ տառս ձեռամբ անիմաստ և փծուն գրչի, միայն անուամբ վարդապետի Գրիգորի Կամախեցոյ, զոր մականուամբ Բուֆ վերաձայնեն։

Եւ յայսմ թվոյս, զոր վերոյ գրեցի, որ էր ՌԾԲ (1603)-ին, որ յայսմ ամի եկի յերկրէն Արարատեանայ, զոր Սահաթի փոս կոչեն և այժմ Երևան ասեն, որ զետեղեցայ անդ ի լուսազարդ և ամենագով վանս և անապատս Սաղմոսայ, բնակելով ընդ ամս երիս, ե հաճեցայ անդ բնակութիւն առնել. և ելեալ եկաք գաւազան առնելոյ աղագաւ, որ եղև իսկ, և դարձեալ գնալոց էաք անդրէն։ Նա թագաւորն Պարսից շահ Ապազն երեկ էառ զԵրևան և զամենայն գաւառքն մինչև ի Բասէն, և զամենայն աշխարհնին հրձիգ և աւերակ արար և զամենայն բնակիչքն թէ՛ Հայք, թէ՛ Տաճիկ՝ միահամուռն սուրկուն արար, և տարե ի Սոս քաղաքին, որ է Իսպահէն։ Եւ մեք այլ ոչ կարացաք գնալ, այլ եկաք մերայնովքն ի Բուզանդիոն և ի Թրակացոց աշխարհիս մինչև ցայժմ, որ է թիվն ՌՁԷ (1638)։ Արդ՝ որք հանդիպիք սմին տեսութեամբ յինչ պէտս և իցէ՝ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղսամած Գրիգոր վարդապետ կոչեցեալս հանդերձ ծնողիւք և ամենայն արեանառու զարմօք։

Բ

Այ վախ ու հազար բերան, որ տխուր եմ միշտ յերերման, մեղօք զառածեալ գերիս, զի՞նչ լինիմ յաւուր հատուցման։

Գ

Ո՛վ ժուժկալ և ժիր եղբայր, յոյժ ցաւած եմ հոգով և տկար, զիս յաղօթից մի՛ մոռնար.

Դ

Ո՛հ, ո՛հ զի՞նչ լինիմ գերիս կամ ո՞րպէս զերծանիմ ի ձեռանէ պիղծ ախտիս։

---

[15] Այսինքն՝ (2×5×100)+(50+2)+551։

1071
ԱԻԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 121

Գրիչ՝ Սարգիս երէց
Վայր՝ Անդրիանուպալիս

ա

170 Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս թվին Հայոց ՌԶԷ (1638) ամին աւգոստոս Ի (20), [ի] Անդրիանուպալիս, ի դուռն Ս. Թորոս յեկեղեցիս, ձեռամբ Սարգիս երիցու, որ անուամբ երէց կոչիմ և գործով ոչ։ Եղբայրք, վասն ծովացեալ մեղաց իմոց մահ անկաւ Աստուանա քաղաքս. այնչափ սաստկացաւ մահն ոչ. գրել կարէաք, ոչ պատմել աղէտն, լացն և աղաղակն կամ օրն որչափ կու մեռանէր թիւ և համար ոչ կարէաք ածեր։ Ոչ թէ Հայոց. կամ Ցունաց, այլ ամենայն աղգաց հաւասար։ Եւ եթէ երեկոյին հիւանդանայր մարդն, մինչև ցառաւօտն ոչ հասանէր։ Տեղիս տեղիս լինէր մինչև Գ—Դ (3—4) աւր երկարէր, և ապա մեռանէր։

Երես անկեալ աղաչեմ զձեզ, հայրք և եղբայրք, թողութիւն արարէք մեղացս, որ լի եմ ամենայն մեղաւք, և ասացէք Աստուած ողորմի...։ Եղբայրք, երես անկեալ աղաչեմ զձեզ, սղալանաց կամ պակասութեան դրիս անմեղայդիր լերուք, աւրէ աւր գրելով հաւասար չեղաւ գիրս այս, թողութիւն շնորհեցէք մեղաւորիս և ծնօղացս Բուրաստանին և Ուռումպէկուն։ Վասն Աստուծոյ, եղբայրք, ասացէք...։

բ

Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք, զերեզիկ Մկրտիչն և կողակիցն իւր՝ Ոսկի, և որդիքն իւր Յովաննիսին, և կողակցին՝ Սօլթայխաթունին, Թումանին, Մոշեղին, Մալին, ընդ նմին և աղաչեմ յիշել զստացող սբ. Աւետարանիս զբարեմիտ այրն զԲուլուք[ն], Աղազարն, և զկողակիցն՝ Շուշանն, և զորդին՝ Խաչատուրն, և զդստերքն իւր՝ Մարիամն, Վառվառն, Եղիսարն, զՎլիսանին։ Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զստացող սբ. Աւետարանիս զպարոն Բուլուքն, և զեղբարն իմ՝ զմահդասի Զաքարէն, և միուս զեղբարն՝ զՅակոբն, և իւր որդին՝ Յովանէսն, զՄաթոսն, զՊետրոսն, [զ]Նունումն, զՎ[ա]լի։ Որք յանդիպիք ի սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք...։

1072
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
ՈՅԶՄՎ, № 810

Գրիչ՝ Խաչատուր դպիր

380 Փառք... Արդ՝ եղև զրաւ սբ. գանձարանիս ի թվաբերութեան Հայոց ՌԶԷ (1638) և հոկտեմբեր ամսոյ է (7) և ի մարդեղութեան Քրիստոսի մինչև ցայս ամք ՌՈՂԸ (1638), ձեռամբ անպիտան և անհմուտ, անծան և անծող գրչի Խաչատուր դպրի, որ միայն ունիմ զանունս, այլ ոչ զգործ դպրութեան. և իմ որդի ողորմելի Մերիկին և թոռն Թոխաթցի Սուլդանին...։

1073

ՅԱՅՄԱՒՈՒՐՔ

Երևան, № 7372

Գրիչ՝ տէր Յովաննէս
Վայր՝ Ղարասու

ա

599ա Փառք...։

599բ Արդ՝ ստացաւ զգիրքս պիտանի, աստուածասէր այրս այս մահդեսի
600ա Նորպարոնն, որ կոչի Յայսմաւուր, զոր // կարգեալ է ի յետին ժամանակիս մեծ վարդապետն Գրիգոր Մերենց կոչեցեալ, բազում ջանիւ և աշխատութեամբ ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցոյ, զի անաշխատ առաջնորդութեամբ հասուցանէ ի կատարումն տարոյն։ Արդ՝ աղաչեմ զդասս քրիստոնէից, մանաւանդ զճշմարտախոհ քահանայիցդ, որք հանդիպիք այսըմ խորհրդաւոր սոփերիս, յիշեսջիք զստացող սորա առաջի զենլոյն Քրիստոսի աստուածասէր այրս այս՝ մահդեսի Նորպարոնն, և զհայրն՝ զՄատուռն, և մայրն՝ Շահսուլթանն, և եղբայրն՝ զՄարտիրոսն, կողակիցն՝ զՁաւերսայն, և որդիքն իւր՝ զԽէրպատրոնն և զՂուտլուն, զդուստրն՝ զմահդեսի Հռիփսիմէն և մահդեսի Ֆատղուզատն, և ամենայն յարեան մերձաւորքն իւր՝ զայժմու կենդանիքն և զկանխաւ ննջեցեալքն...։

Արդ՝ գրեցաւ սա ի յամի թուականութեանն հայկազան սեռի ՌՁԷ (1638) ամի, նոյեմբեր ամսոյ Բ (2), աւրն ուրբաթ, աւարտեցաւ ձեռամբ անիմաստ և թարմատար, վերջին և յետին, հող և փոշի... անարհեստ և անիմաստ տէր Յովանէս քահանայն, աղաչեմ զճշմարիտ ծառայդդ Աստուծոյ, յիշեսջիք և զմեզ։ տա Տէր, սեռն սիրով ի միտս բարիս, նաև զմարմնոյ ծնաւղսն իմ, զեղբայրսն իմ և զամենայն ազգայինսն իմ...։

Եղև ծրագրութիւն մատենագիր յիշատակարանիս ի գիւղաքաղաքիս Ղարասուի, ընդ հովանեաւ Ս. Աւգսէնդի, յառաջնորդութեանն տէր Խաչատուր արքեպիսկոպոսին, և աւագերիցութեանն տէր Ալեքսիանոս քահանա[յ]ին, և երեսփոխանացն խոճա Վարգերեսին և խոճա Սարգիսին և այլ պաղի քահանայիցն և ժողովրդեանն առ հասարակ ամենեցուն. ամէն։

Դարձեալ յիշեսջիք ի Տէր զերախտաւոր զուսուցիչն իմ՝ զԳալուստ սարկաւագն հանդերձ իւր ծնաւղիւքն և ամենայն յարեան մերձաւորքն իւրովք. ամէն։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Յիսուս Քրիստոս[16], որ բազում աշխատանաւք ջանք հասուցին ի գրրգիս սրբաքերելն, խնդրեմք ի յապենիազ Արարչէն, որ զիւրեանց աշխատանացն փոխարէն զերկնից արքայութիւնն ժառանգել տացէ...։ Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. ընթերցողք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սբ. գրոցս զմահդեսի Նորպարոնն, որ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց և եդ ի դրունս Ս.[17] եկեղեցոյն յիշատակ անջնջելիս...։

[16] Այնուհետև երկու տող գատարկ։

[17] Անունը չի գրված, տեղը գատարկ է։ Մեկ ուրիշը գրել է «Խաչ»։

Դարձեալ աղաչեմ ղձեղ.... մի՛ մեղադրէք անարհեստ գրիս կամ
600բ սղալանացն կամ// խոշորութեանն, զի ոստ տկարակացեալ մտաց մերոց այս չափ էր կարիք մեր։

Դարձեալ յիշեսջիք ի տէր Քրիստոս զստացող սորայ զմահդեսի Նորպարոնն, այլ և յիշեսջիք զծաղկաւղ այսմ ճեմարանիս[18] նաև զթբխտիս կոկաւղն՝ զԳրիգոր պատանեակն և զայլ աշխատողքն, ե դուք յիշեալ լիջիք...։

Բ

3բ Բարեխաւսութեամբ և աղաւթիւք Ս. Յովաննու Կարապետին, ողորմի Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս մահտեսի Նորպարոնին, հաւրն՝ Ծաառուրին, մաւրն՝ Շահսուլթանին, և եղբաւրն՝ Մարտիրոսին, կողակցին՝ Զաւնրային, որդոյն՝ Խերպարոնին, Ղուտլուին, դստերն՝ մահտեսի Հրեփսիմէին, և յամենայն արեան մերձաւորացն[19]։

Գ

204բ Որոյ աղաւթիւքն և բարեխաւսութեամբն Քրիստոս Աստուած ողորմեա՛ ստացողի գրոցս մահդեսի Նորպարոնին...[20] և ինձ անարժան, բազմամեղ, անարհեստ գրչի տէր Յովաննէսի և աշակերտի իմոյ Նորաջան Խաչատուրի, և ամենայն յարեան մերձաւորաց մերոց և նախնեացն, և վարժողացն, և ուսուցանողիս իմոյ տէր Մկրտիչ քահանայի, և արհեստիս ուսուցանողի Գալուստ սարկաւագի, կարդացողիս և լսողացն...։

Դ

404բ Ողորմեա՛ ստացողի գրոցս մահդեսի Նորպարոնին...[21] և ինձ մեղաւոր գրչի տէր Յովանէսի և աշակերտիս իմոյ Խասպէկ սարկաւագի[22]։

Ե

476բ Մին Յայսմաւուրն մ՝այլ յունվարին Դ (4) դրած է, և ասա Մարգարէին, Զաքարիայի, բայց յայս մերս Վարդան էր դրեալ։

Զ

Գրիչ՝ Միքայէլ

577բ Որոց աղաւթիւքն ողորմի... ստացողի, գրոցս մահդեսի Նորպարոնին...[23] և ինձ անարժան Միքայէլ գրծողիս, և ամենայն արեան մերձաւորաց...։

---

18 Երկու տող դատարկ։
19 Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 5ա, 6ա, 7ա, 14բ, 16բ, 18բ և այլ էջերում։
20 Նորից թվում է վերևում հիշված անունները։
21 Թվում է բ հիշատակարանում հիշված անունները։
22 Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 343բ, 412բ, 531ա և այլ էջերում։
23 Նորից թվում է բ հիշատակարանում հիշված անունները։

1074
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Զմմառ, Մ 485. տե՛ս նաև «Սիոն» 1963 թ., էջ 12, «ՀԱ», 1928 թ., էջ 408

Գրիչ՝ Յոհաննէս աբեղայ

80 *Զսակաւ աշխատաւորս ի սմա զնուաստ անուամբ ևեթ* Յոհաննէս *աբեղայս աղաչեմ յիշել ի Տէր։*

Գրեցաւ ի թվին ՌՁԸ (1638), ի նոյեմբերի ամսոյն ԺԴ (14)[24]։

1075
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Մ 263 (1631 թ.)

Ծաղկող՝ Սիմէոն
Վայր՝ Վաղարշապատ

282ա *Զվերջին սաացաւղ սբ. Աւետարանիս ղմաքրասուն և ղճղնաղղեաց, խարաղնաղգեստ, սրբազան վարդապետն* Եսայի, *որ եռափափաք սիրով ստացաւ զսայ և ետ աւարտել որ յառաջմէ կիսակատար կայր*[25], *այլ և գեղազարդ և ծաղկապաճոյճ և ոսկէղաւծ նկարակերտիւ զերճացոյց, առ ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի առ յասլա[գա]յսդ։ Արդ՝ յանկ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս ի թուականութեանս հայկազեանս տօմարի ՌՁ-երորդի է-երորդի (1638), ի հայրապետութեանն երիցս երանեալ տեառն Փիլիպոսի ընդհանուր Հայոց դիտապետի, ի Վաղարշապատ քաղաքի, առ դրունս մաւրս լուսոյ լուսակառոյց սբ. աթոռոյս* Էջմիածնիս, *ի խնդրոյ վերոյ ասացեալ մեծապատիւ վարժապետին*

282բ Եսայեայ, //*որ էր վերատեսուչ և առաջնորդ Ս. Կարապետին, որ յԵրընջակ, ձեռամբ յոհնամեղ և ամենաթշուառ անձին* Սիմէօն *կոչեցելոյ։*

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսինսդ, որք պատահիցիք այսմ աստուածախօս մատենիս, յիշեսջիք ի մաքուր աղօթս ձեր զվերոյ գրեալ Եսայի *վարդապետն և իւր մի[աբանքն՝ զտէր* Մաթէոսն, *որ բաղում աշխատանօք սպասաւորելով եղբարցն վերակացութիւն առնէ վանիցն, և զտէր* Յակոբն ճգնազգեաց, *որ ևս աշխատի վասն եղբարցն, և զաշակերտեալ մանկունսն իւր, զնորաբողբոջ նորընծայքն՝ զտէր* Սիմէօնն, *զտէր* Կի[ր]ակոսն, *զտէր* Ղազարն *և զտէր* Եղիայն, *զՅովհաննէս և զԿիրակոս սարկաւագունքն, զՍաեփաննոս տընտեսն, և որք յիշենն յիշեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։*

283ա *Ընդ երանելեացն և զեղկելի* Սիմէօնս *աղաչեմ յիշել յարտօսրաթոր յաղօթս ձեր, որ տկար և ծիւրեալ անձամբ զսակաւ աշխատանս արարի ի վերայ սորին, այսինքն՝ զչորեսին գլխոցն զպատկերսն և զծաղիկսն։ Եւ որք յիշենն՝ վարձս ի Քրիստոսէ առնուցուն...։*

---

[24] *Հայոց ՌՁԸ տարեթիվը սկսվում է 1637 թ. հոկտեմբերի 13-ից (հուլյան տոմարով), այստեղից էլ Հայոց ՌՁԸ թվականի նոյեմբերի 14-ը կընկնի 1638 թ. մեջ։*

[25] *Ձեռ-ի գրչության հիշատակարանը տե՛ս 1631 թ. շարքում։*

1076
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 504

Գրիչ՝ Աստուածատուր դպիր
Վայր՝ Կ. Պոլիս

183ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Ընդհանրական, ի քաղաքն Կոստանդնուպալիս, ձեռամբ մեղապարտ և անարժան դպրի՝ Աստուածատուր գրչիս, ի թվականութեանս Հայոց Ռ և Զէ (1638)։ Եւ արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, հարք և եղբարք, յիշել զխոճա Սաճրատն, որ ստացաւ զսա եռափափ[ա]ք սրտիւ, յիշատակ իւր հոգւոյն և իւր ծնաւղացն՝ խոջայ Վալէ և Սողոմէ, և իւր որդւոցն՝ Յոհանին և Աստուածատուրին, խոճայ Վալէ և Սուքիազին, և դստերցն ամենեքին և կողակցին՝ Գուլբարին, և հանգուցեալ եղբարցն, և այլ հաւասար համարէն նշեցելոց հոգւոցն. ամէն։

1077
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 744

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Աղնաղալայ

ա

257ա Արդ՝ ես Թարուրս յամենայնի և յետս ամենայն կարգաւորաց, սուտանուն Յովանիսի, տեսի այսմ ընդիր աւրինակս, ցանկացայ գրել, վասն յիշատակ ինձ և ծնաւղացն իմ՝ Խաչատուրին և Թիւռանդին, և որդւոցն իմ՝ Խաչատուրին, Գրիգորին, և դստերացն իմ՝ Մարիամին, Հռիփսիմին, և մաւրն իւրեանց՝ Անքաուսմին։

Գրեցաւ Աղաւթամատոյցս ի յերկրին Ղարաղոյ, ի դաղն Աղնայղալայ, թվին ՌԶէ (1638)[26]։

Բ

146բ Եւ կատարեցաւ բառս հայոյն՝ պարզաբանեալ իմաս[տ]նոց, կամաւն Աստուծոյ. և զանարժան Յովանէս յիշեցէք ի Տէր։

1078
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 3333 (1496 թ.)

Նվիրատու՝ Շապանկուլի

242բ Որ ողորմի Տէրն ամենայնի,
Հոգոյ սորայ վերջին ստացողի՝
Շապանկուլուն և այրն իւր Պայանաուրին,
Որ փոխեցաւ պատերազմին,
Եւ դասեցաւ ընդ այն մարմին։
Եւ որդիքն սորին՝

[26] Սույնը Թոմա Մեծոփեցու աշակերտ Թոմայի հիշատակարանի շարունակությունն է։

Նազարն, Տուրմիշն ընդ Ովր[?]ադին։
Դարձեալ հայր Շապանկուլին,
Պարոն Ֆարդուզաին և մայրն իմ՝
Խոնարհայմիտ Մարիամին,
Որ էառ զմահ սաւրէ ի յերկին,
Ընդ իւղայբերիցն որ Մարիամանք կոչին։
Սայ յիշատակ անշնջելի,
Բարի զաւակ հոգոց սորին,
Ցորժամ որ գայ Տէրն երկնային,
Անճառ փառաւք իւր հայրենին,
Նստի յաթոռ դատաստանին,
Տիւան առնէ մարդկան ազգին,
Ցայնժամ աչաւքն քաղցրաքին,
Հայի սիրով վերոյ սոցին։

Ես՝ Շապանկուլիս առի զսբ. Աւետարանս ի գերութենէ թվին ՌՀԴ (1625) և ի ՌԶԷ (1638) տէրն Լուսերեկ աղաչեց, սիրով տուի, որ ինձ յիշատակ նոր[ա]կնունք Ս. Աստուածածնին դուռն, ի ձեռն տէր Մաքէոսին. ամէն։

1079

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան № 4319. տե՛ս նաև «ՀԱ», 1905 թ., էջ 312

Գրիչ՝ Միքաէլ Թոխաթէցի
Վայր՝ Կ. Պոլիս

333ա Փառք...։ Գրեցաւ թվին ՌԶԷ (1638), ի մայրաքաղաքն Կոստանդինուպ[աւ]լիս, ձեռամբ Թոխաթցի Միքաէլի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ յաւրինակելով միով ողորմեաիւ յիշեցէք զՄիքաւէլ գրիչս, և զծնաւղսն իմ, և զայլ ամենայն ննջեցեալսն իմ, և Աստուած զյիշողացդ յիշէ...։

1080

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 5380. տե՛ս նաև № 6333, էջ 70բ, № 286

Գրիչ՝ Կիրակոս երէց
Վայր՝ Թաղասեռ

ա

182բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ առաքելական և մարգարէական, աստուածաշունչ և վարդապետական սբ. գիրքս, որ կոչի Մաշտոց, յանուն սբ. հայրապետին Մաշտոցի, կոչեցեալ Գառնեցի, զոր ազդմամբ Ս. Հոգոյն ասացեալ և ժողովեալ ի բանից սրբոց հայրապետացն՝ տեառն Ներսէսի և Բարսեղի Կեսարացոյն և այլ սրբոց, և եղ ի միում տփի, և .եռ ի սբ. եկեղեցոջ, վասն կատարման է (7) խորհրդի և զարդարիչ կարգեալ բանի։ Ի թվականիս Հայոց ՌԶԷ (1638) ամի, ի թագաւորութիւնն Պարսից շահ Սէֆուն՝ ւ շահ Ապազին թոռի, ի երկիրս Աղուանից, ի գաւառս Դիզակ,

ի գիւղս Թաղայսեռ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի եկեղեցո[յ], ձեռամբ մեղա[ւ]որ Կիրակոս անա[ր]ժան իրիցուի, յիշատակ տէր Յովանէս սրբա[սնո]ւնդ քահանայի, և ծնօղա[ց][27]

Բ

132բ *Ողորմի ստացողի գրոյս աէր Յովանիսին և ծնօղաց իւրոց, որդոցն և դստերացն. և ինձ մեղաւոր Կիրակոս գրչիս. ամէն։ Թվին ՌԶԷ (1638) գրեցաւ։*

1081
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5536. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք», հտ. Ա, № 764, էջ 211բ

Գրիչ՝ Խաչատուր քահանայ
Վայր՝ Արտաւել

ա

281ա *Փառք... որ արժանի արար ղնեխեալ մեղաւք և զանարհեստ և զանարժան Խաչատուր գրիչս սուտանուն քահանայ հասանել ի վերջին գիծ սբ. Աւետարանիս, ի թուաբերութեան հայկազան տաւմարիս ՌԶԷ (1638), ի աշխարհն Պարսից, ի մայրաքաղաքն Արտաւել։*

281բ *Արդ՝ յերեսս// անկեալ աղաչեմ զընթերձողքս սբ. Աւետարանիս և զհանդիպողք, յիշել ի մաքրափայլ յաղաւթս զիս՝ զանարժան գրիչ Խաչատուր սուտանուն քահանայ և զծնաւղսն իմ Աղվարդ և զհայրն իմ՝ Ախիշան, և զքոյրսն իմ՝ Գաֆար, և զկողակիցն իմ՝ Եքար, և զդուստրն իմ՝ Եղիսաբեթ, և զմիւսն՝ Հոռոմսիմէն, և զմիւսն՝ Աննայ, և զսիրելի դուստր իմ՝ Հոռոմսիմէն, և զորդինն իմ՝ Գրիգոր, և զթխտիս կոկոզն Մաոիկն, զի բազում աշխատութեամբ և ջանիւ գծագրեցի զսբ. Աւետարանս։*

Որք աստուածային սիրոյն փափագողք եղեալք[28]

Բ

77ա *Զսակաւ ծրող սբ. Աւետարանիս Խաչատուր սուտանուն յիշեցէք ի Քրիստոս։*

Գ

135ա *Անարհեստ և զանարժան ծրողս լուսազարդ մատենիս զտէր Խաչատուր սուտանունս և զծնօղս իմ Աղվարդ և զհայր իմ Ախինան յիշեցէք...։ Ի թվականութիւն Հայոց ՌԶԷ (1638) որ դրեցաւ։*

---

[27] Ձեռ-ից թերթ ընկնելու պատճառով հիշատակարանն ընդհատվում է։ Սույնը համառոտ տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, Նշխարք, հտ. Բ, № 518, էջ 430—431։

[28] Հիշատակարանն ընդհատվում է ձեռ-ից թերթեր ընկնելու պատճառով։

Դ

84ա [illegible][29]

1082

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 5641

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Կ. Պոլիս

ա

289ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս փոքուն դրչի Սարգսի, որ անուամբս միայն եմ։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սորա կարդալով կամ աւրինակելոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զուսուցիչն մեր՝ զկուսակրօն զՅակով[30] տիրացուն, որ բազում աշխատեցաւ ի վերայ մեր, յիշեցէք և յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։ Արդ՝ դրեցաւ սբ. Աւետարանս յիշատակ Մանուէլ եպիսկոպոսին և ծնաւղացն, հօրն իւրոյ՝ Պաւլոսին և մօրն իւրո[յ՝] Եղիսաբեդին, և եղբօրն իւրոյ՝ խոճայ Սիմոնին, Կիրակոսին և ՍաՒրատին, և եղբօրորդոցն՝ Նիկողոսին և Պօղոսին։

Բ

Գնող՝ Սիմոն

Դարձեալ երես անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ սբ. քահանայք և ընթերցողք, յիշեցէք ի մաքրափայլ յաղ//աւթս ձեր զմեղապարտ Սիմոնս, որ գնեցի սբ. Աւետարանս յիշատակ եղբօրն իմ՝ Մանուէլ եպիսկոպոսն և ծնողացն իմոց...[31]։ 289բ

Գ

Այլ գրով

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաք Կստամբուլ. գրեցաւ ի դուռն Ա. Նիկողայոսի, թվին Հայոց ՌՁԷ (1638), յիշատակ Մանուէլ եպիսկոպոսին. ամէն։

---

29 Մածկագիրը չկարողացանք ընթերցել։ Ձեռ-ի 219բ էջում պահվել է դրչի սերուդներից մեկի հիշատակարանը, ԺԸ դար։

30 Թերևս՝ Յակովբ։

31 Նորից թվում է հիշված անունների մի մասը։

1083

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան, № 5849. տե՛ս նաև ՃՁՎԼ, № 383, էջ 893—895

Գրիչ՝ Յոհան Քահանայ

Վայր՝ Սուրս

ա

284ա *Փառք...։*

286բ *Զայս մեծ գանձս աստուածային տեսեալ* Խաչատուր *քահանայն և* Վարդան *արեղայն բազում ջանիւք յաւարտ հանին, եդին ի գուռն Ս. Յովաննու և Ս. Գէորգեան, զոր անշինչ յիշատակ մնա յայսմ հետէ մինչ*

287ա *//յաւիտեան, որք ընթեռնուն կամ տեսանեն բոլոր սրտիւ զողորմին տան...։*

Գրեցաւ Աւետարանս Ռ ու Զէ (1638) էր թուական, ի գեաւղս որ Սուրս *կոչի, ի դուռն Ա. Գէորգեան զաւրավարին և Ս. Յովաննու Մկրտչին, կաթուղիկոս* Աղթամարայ *տէր* Սահակոսն *էր, սրբազան վարուք, սր. ւ առաքին՝ անուանակցին իւրոյ նմա սր. Ստեփաննոս, էն առաջին, որ Քրիստոսի համար քարկոծեցան։ Հայցեմք յապինիազ Տեառնէ անփորձ մնա և անսասան...։*

287բ *ԶԱւետարանս գրեցի* Յոհան, *մեղաւք ի մէջ մարդկան զանունս ունիմ քահանայի, գործովս անարք և անպիտան...։ Եւ ոյք կարդան և տեսանեն, ողորմին ասեն պատուական քահանայիցն՝ տէր* Խաչատուրին *և տէր* Վարդանին, *որ ետուն գրել զԱւետարանս ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւրոց և ծնաւղաց իւրոց* Խաչատուրին *և* Աղաբէկո[ւն], *և եղբաւրն՝* [Մու?]ռատին, *և* Աստուածատրին, *և* Տաքլոյն, *և եղբօրն՝* Դաւթին, *և տէր* Յովանէսին, *և* Հանսուլթանին, *և* Ջանաղոյն. *ամէն*[32]։

Ծաղկող՝ Յովանէս Ղարէցի

Բ

3բ *Անմեղադիր լերուք, զի ոսկին աւեր էր, չի հալաւ, յիւր տեղ չէրեկ շիտակ։ Զորս աւետարանիչքն ու չորս խորան իւր թփերով մեղաւորիս հանածն է ու ցրուածաղիկն՝ Մոկացոց։ Բան է, չի մեղադրէք եղբայրք բանիս։*

Գ

133բ *Զանարժան ծաղկողս զՅովանէս Ղարէցիս և զվարպետն իմ՝ զՅովանէս Հիզանցին յիշեցէք... և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

Դ

Ծաղկող՝ Մեսրոբ Վանեցի

219բ *Ես մեղաւոր* Վանեցի Մեսրոբ *ծաղկեցի զայս գլուխ*[33] *ցրուայծաղիկն, վա՜յ ինձ։*

---

32 *Ուրիշներն ավելացրել են. և* Շանումին. *ամէն, և* Մարգարտին, *ամէն, և* Գուրայրին։

33 *Այսինքն՝ Հովհանի Ավետարանը։*

Ի

Այլ գրով

288ա Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք... բարեմիտ և միեղէն եղբարցն՝ տէր Խաչատուր վարպետին, և տէր Վարդանին, տէր Յովանին և իւրեանց ծնօղացն, հօրն՝ Խաչատուրին և մօրն՝ Աղաբէկուն, և եղբօրն՝ Մուրադին, կողակցոյն՝ Բէկուն և քւերն՝ Թուրվանդին, որդոյն՝ Թումին, դստերն՝ Թուրվանդին, յիշեցէք... տէր Խաչատուր կրաւնաւորի[ն], որ արար լաւ բարութիւն և ըստացաւ զսբ. Աւետարանս և ետ ոսկով ծաղկել և զարդարել, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց։ ...Աստուած ողորմի ասացէք քաշ և արի տէր Խաչատուրին, որ ետ զԱւետարանս յիշատակ ի գուռն զՍ. Գէորգա[յ] զաւրավարին անշինչ
288բ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղացն// և ամենայն արեան մերձաւորացն...։

Զ

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք.... տէր Խաչատուր կրաւնաւորին, որ ետ ընծայ և նուէր ի դուռն Ս. Գէորգ զաւրավարին /// ոսկէջրած սկիհ մի և կարմիր շուրշառ մի, թագ մի, շապիք Գ (3), ուրար բազպա[ն], քշոց մի, կալի///ն Ս. Գէորգ զաւրավարին///արին մարդ վկայ/// մնաց ի դուռն Ս. Գէորգ զօրավարին...։

1084
ՄԱՇՏՈՑ
Երևան, Մ 5887

Ծաղկող՝ Յովանէս

3ա,բ Թիւ ՌՁԷ (1638)։
Յիշեցէք... Յովանէս մեղաւոր ծաղկաւղիս. ամէն։

1085
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, Մ 6747

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Սեբաստիա

ա

304բ Փառք...։ Եղև զրաւ գրչութեան սորա ի թուականութեան արեթական գրոհի ՌՁԷ (1638)։ Գրեցաւ տառս աստուածաշունչս և տիեզերայքարող Աւետարանս ձեռամբ տրուպ և անարժան կարգի Խաչատուր իրիցու, ի մայրաքաղաքի Սեբասատիոյ, [ի] գե[զ]շէ[34], ընդ հովանեաւ Ս. Սարգսի։ Արդ՝ աղաչեմ զձեզ, դասք քահանայից, որք հանդիպիք յայսմ աստուածախաւս մատենիս կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զեղկելի գրծողս զԽաչատուրս, և Աստուած որ առատն է...։

305ա Ընդ նմին հեզահոգի զԲարդամն և զարդարեալ ծաղկով և կազմել, զոր և հատուսցէ նմա Տէր զվարձս բարեաց։ Եւ այլ աղաչեմ յիշել ի Տէր

[34] Գյուղի անունը չի գրված։

զամուսնին իմ՝ զՄարիամն, և զեղբայրցն իմ՝ զԱսուրն, զԿիրակոսն, և զաւակս իմ Աբրահամն, զԹորոսն, և զմայր իմ Վառվառ, զքոյրն իմ՝ զՄանանայն, հղբօրս կենն[ակ]ցին՝ զԱճափիանն: Եւ այլ աղաչեմ յիշել ի Տէր զհանգուցեալսն ի Քրիստոս զՄարտիրոս պապն, զամուսնին իւր՝ Վարթենուն, զհայրն իմ՝ զԳրիգորն, և եղբարցն իմ՝ զԳահենապետն, զԿարապետն, և Բ (2) Պետրոսից, և զդուստր իմ զՀեղինան, և այլ ամենայն ազգայինս իմ...։

Բ

232բ Ես՝ ամենամեղօք լըցեալս... Խաչատուր գրիչս... աղաչեմ զձեզ... խնդ[ր]եցէք զթողութիւն [յ]անցանաց իմոց, այլ կրկին աղաչեմ զձ[ե]զ յիշեսջիք զծնաւղս իմ՝ զՎառվառն և զհայրն իմ՝ զԳր[ի]գորն:

Գ

306ա Հազար Զէ (1638) Հայոց թուական,
Իսկ սկսեալ նորս ամ,
Մատեանս գրեցաւ տէրունական,
Որ յորջորջի Աւետարան։
Որ ամբարեալ ունի ինքեան,
. . . . . .
306բ Ոմն կցորդ գոլով անուան,
Տարսոնացոյն համակոչման,
307ա Բաղձանք շարժեալ ներբուսական,
Իբր իմաստուն վաճառական։
Ստացաւ զայս գանձ անզուգական,
Զարմի Սիոն երանութեան,
Եւ յիշատակ բար[ի] ինքեան,
Եւ ծնաւղաց առուարեան։
. . . . . .
Զգրող գետոցս ոռոգման,
Զխաչատուր երեցս յիշման արժան,
Զարմիւքս ամէն բոլորական,
Լցեալք լինիք անմահական[35]։

1086

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6786

Գրիչ՝ Գասպար երէց

ա

112ա Զմեղաւոր Գասպար երէց գրիչս յիշեա ի Տէր։ Թվին ՌԶԷ (1638)։

---

[35] Զեռ-ի կազմի վրա ամրացված են խաչեր, այսպիսի մակագրություններով. «Ցիշատակ է սր. խաչս Նուրիխանին, Գիրգորին, Ճոճարին», «Տէր Յիսուս Քրիստոս Աստուած. յիշատակ է սր. խաչս Կիրակոսին ոգուն. Թվին ՌՃԺԲ (1663)»։

Բ

247բ Ո՛վ ընթերցող սբ. Աւետարանիս, յորժամ ընթերցցիս, զիս զանարժան Կասպար երէց գրչակս յիշեա՛ ի սբ. յաղօթս քո, գրեցաւ սբ. Աւետարանս թվին ՌՁԷ (1638)-ին։

1087
ՄԱՇՏՈՑ

Երևան, № 6953

Վայր՝ Կաֆայ

98ա Գրեցաւ սակաւ բանս ի գուռն Երաշխաւոր Ս. Աստուածածնին, ի քաղաքն ի Կաֆայ, թվին ՌՁԷ (1638)։

1088
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 7756 (ԺԶ դար). տե՛ս նաև «ՀԱ», 1910 թ., էջ 209

238ա Դարձեալ յիշեցէք Զանսնամին, Յեսկարի կինն՝ Ազիզն, որ է Մայրիան, Խանումին, Պետրոսին, որգի Զանսնատոյն. յիշեցէք ի Քրիստոս...։ Թվին ՌՁԷ (1638)[36]։

1089
ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Երևան, № 8205. տե՛ս նաև Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ, էջ 696—706, հմմտ. Ն. Ակինյան, Մովսէս Դ Տաթևացի, էջ 215—217

Գրիչ՝ Մարտիրոս քահանայ
Վայր՝ Փառակայ

ա

95բ Զստացող սբ. մատենիս զպետն Հայաստանեայց, զռաբին վարդապետաց, զշահն սբ. եկեղեցւոյ.... զտէր Խաչատուր վարդապետն, աթոռակալ Ս. Թումայի և քարոզող ամենայնի։ Եւ զամենեցուն յետնեալս, զտրուպս, զոչինչս... յիշեսջիք սբ. ընթերցողք զվերոյ ասացեալն զստացող սբ. զհայրն հոգևոր և զգծողս՝ հողս և փուշիս հանդերձ ծնողօք և աղգականօք մերովք...։

Բ

130բ Ով սբ. հարք և եղբարք, և սբ. գրոց աշակերտեալ մանկունք և ընթերցողդ այսմ տառիս, երես անկեալ աղաչեմ զձեզ, անմեղադիր լերուք խոշորութեան և սլալանաց, զի երկու օրինակաւ գրեցաւ Հարցմանցս այս. երբեմն մինն քան զմիւսն աւելի գայր և սղալ, և տարակուս լինեաք

[36] Զեռ-ի 303ար էջերում գտնվում է անթվական և ՌՁԷ (1738) թվականի երկու հիշատակարան։ Վերջինս Մատենադարանի ձեռագրերի ցուցակում նշված է 1638 թ. ներքո (հտ. Բ, էջ 605)։

մինչ որ տկար մրտօք զստոյգն և զաւելին գրէաք։ Եւ դուք որ գիտունքդ էք և որոնողքդ աստուածաշունչ սբ. գրոց, զթերին լցէք և զօրելորդին ուղղեցէք, զի կար մեր այս չափ էր։ Զի բազում աշխատութեամբ գրեցաք զՀարցմանցս զայս, զի Տեառն միայն գիտելի է, որ գիտակն [է] ամենայնի. նա տացէ զվարձս բարիս աշխատողաց և կերակրողաց և աշակերտելոց մերոց։ Եւ առաւել զստացող սբ. տառիս ըզրաբունապետն մեր՝ զտէր Խաչատուրն, որ այսմ ժամանակիս վերըստին նորոգեաց ի վանքն Ս. Թոմայի գեղեցիկ կոմբեթով և ղուբայով՝ առանց փայտի, և այլ ամենայն շինութեանն կրկին նորոգեաց դարպասներովն։ Այլ և վարդապետութեամբն իւրով լուսաւորեաց զվիճակն իւր, այսինքն Գողթան երկիրն, Աստուած իւր հոգին լուսաւորէ, և զգծող հանդերձ ծնողօք սոցա յիշեսցէ բարեգործն Աստուած...։ Ի թվիս Հայոց Ռ և ՁՁ (1637)։

Գ

238ա Այս խորանիս անուն սզտոր,
Միտքս է մոլոր, խելքս է պղտոր,
Ի տես աչաց է հեշտ և դոր,
Ի նրկարելն դժար և խոր։
Ստացող տառիս տէր հոգևոր,
Ի քէն խնդրեմ սրտիւ բոլոր,
Ցիշման արա արժանօր,
Ի արքայութեան աւետաւոր։

Դ

265ա Այս խորանիս անուն է թուք,
Գծող սորա Մարտիրոս տրուպ,
Զձեզ աղաչեմ եղբայրքդ սուրբ,
Ցիշել զմեղօք անկեալս ի գուբ։
Ստացաւղ տառիս զտէրրդ հայր սուրբ,
Զրաբուն բաբից զմաքրեալրդ զուտ,
Հայաստանեաց զպէտրդ խումբ,
Եւ սուրբ գրոց տաճար և տուր։

Ե

290բ Ո՜վ սրբամիտ ընթերցողք, անմեղադիր լերուք, զի Բ (2) օրինակս գրեցաք՝ մին այսպէս էր և մին այնպէս, և զԲ (2) այլ գրեցաք, որպէս որ տեսնես, որն որ քեզ հաճոյ է՝ նա ասա։

Զ

328բ Զսաացող սբ. գրոցս արի և քաջ բանիբուն տէր Խաչատուր վարդապետին յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր. ո՜վ սբ. ընթերցողք, և Աստուած զձեզ յիշէ իւր սբ. արքայութիւնն[37]։
Վայ է մեղօք փթեալ գրչիս։

[37] Նման մի հիշատակարան էլ տե՛ս ձեռ-ի 377բ էջում։

Է

342բ Միտքս մեղաւք փթեալ է, թողութիւն շնորհեայ հայր սբ։

Ը

387բ Փառք...։ Արդ՝ դծագրեցս աստուածային մատեանս այս, որ կոչի// Հարցմանց գիրք, արարեալ և հօաքեալ արի և քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, լուսաւոր ողոյ Գրիգոր բարձրագոյն Տաթևացի որդորդի, փոխեցելոյն ի դասս սերովբէից և ի տեսութիւնն Քրիստոսի։ Եւ եղև ղրս աւարտման սորա ի յերկիրս Գողթան, ի դեղս Փառակայ, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ ուխտիս, ի յօդնութիւն ամենայն հաւատացելոց, ի կաթողիկոսութեանն Հայոց սբ. Էջմիածնին տեառն Փիլիպոսին, քաջ բարձրագոյն Հայաստանեայց ազգի, և ի հայրապետութեանն երիցս երանեալ տէր Խաչատուր վարդապետի, որ ըստացաւ զսբ. Հարցմանց գիրքս, յիշատակ իւրն և վարդապետութեանցն, քաջ և արդիւնակալք բարձրագոյնս և վարժապետացն տէր[38]։

Արդ՝ աւարտեցաւ գիրքս այս ի հայկազան թվականիս Ռ և Զէ (1638), ձեռամբ մեղսաներկ և անարհեստ, վատթար և փծուն գրչի Մարտիրոս յետնեալ յամենայնի, անուամբ միայն քահանայի և գործով չար և զաղիրի։

Ո՜հ ի գառն և յետնեալ ժամանակիս, որ քրիստոնէիցս ազգս ամենայն ի նեղութիւն և ի չարչարանք կամք ի ձեռս այլազգաց, վասն բազում մեղաց իմոց, վա՜յ ինձ։

Թ

Փառք...։ Զի թէպէտ ես ոչ գոլով հաղորդ և սակի հմտացեալ կրթական վերծանողաց, և անտեղեակ Հին և Նոր Կտակարանաց, և անծան ի բայ և ի բառից, որոց ոչ ասեմ ամենային տեղ իսկ գոլ, քանզի ես ինձեն խոստովանիմ անգիտուն և տխմար գոլ մակագրելոցն։ Այլ զի ի տեառնէ իմմէ հարկեալ ոչ գոլ կարող ընդդէմ լինել տեառնես և ոչ ջահօրիլ հակառակ և անհնազանդ գտանել նմա։ Զի թէպէտ ես ինձեն բերանով իմով ոչ էի ընթերձեալ զգիր աստուածաշունչ, այլ յար ի տեառնէս և ի յայլոց վերծանելն լուեալ իսկ էի, զի անհնազանդսն պախարակէին, որոց մի ի
386ա բազմաց իմաստնացեալն յԱստուծոյ զարհուրեցուցանէ յահաւոր լիիվ// եթէ որդի անհնազանդի՝ կորուստ եղիցի։ Եւ յառաքելականացն լուեալ, եթէ ծառայից տերանց իւրեանց հնազանդ լինել։ Զայսոսիկ տեսեալ ըստ կարեաց մեր ի հնազանդութիւն տուեալ զանձն։ Ողորմութեամբն Աստուծոյ և ձեռնտուութեամբ միածնի Որդոյն և առաջնորդութեամբ Ս. Հոգոյն սկսա դրել, զոր ինչ ի տրամախոհութեանս համբարեալ կայր յառս ենթադրելոցս։ Որոց սկիզբն արարեալ առ ձեռից ի լուր քերթողացդ և վերծանողացդ սրբոց։ Քանզի նախկին սկսա ամբարտաւանութիւնս առնել յանձնէ վասն անգիտուն գոլոյ, աղաչե[մ] թաղցեալ սրտիս անմեղադիր լինել ստահակութեանս իմում, զի տեսանեմ զվախճան ոչ գոլ բարւոք, ըստ իմաստնոյն «է ամօթ որ ածէ զմեղս, և է ամօթ որ ածէ

38 Ինը տող դատարկ է։

գիտաս»* որում բաղմադիմի դիգմամբն կեալ, զի զմեղ ածէր գիս։ Վասն այսոցիկ սկսայ գրել մի ըստ միոջէ իսկիւ։

Արդ՝ ի թվականութիւնս հայկա[զեան] ՌԶ (1631), ի հայրապետութեան մերս սեռիսէ Մովսէս կաթողիկոսի և երկրորդ լուսաւորչի, որում ժամանակի կրկնակի լուսաւորեցան Հայք, զի փայլէր նա որպէս զարեգակն ի մեծ եկեղեսիաստին և անդուստ լուսատու ճաճանչօքն իւրովք, այսինքն՝ ընտրելովքն Աստուծոյ և աշակերտեալ վարդապետօքն իւրովք, լուսաւորէր զազգս մեր։ Որոյ գոլով աշակերտ և որդի հարազատ դիեցեալ ի նմանէ կաթամբ բանիցն Աստուծոյ, տէրս իմ, քաջ հռետոր և աստուածաբան վարդապետս Խաչատուր ստորագիցեալս։ Որ և տեառն իւրոյ հաւանական ընտրութեամբն և հրամանս նորին վարդապետական և եպիսկոպոսական իշխանութեամբ առաքեալ եղև ի գաւառս Նախէջևանու և Գողթան՝ ի քաղաքս, ի գեղս և յաւանս յառս քարոզութեան բանին Տեառն։ Եւ ոչ թէ վիճակի յաղագաւ, այլ զի ժամանակ ինչ աստուածաբան վարդապետութեամբն իւրով և ուղղափառ դաւանութեամբ կանգնեսցէ զգլորեալսն և ուսուցցէ նոցա ըստ մարգարէին. «Խոտորիլ ի չարէ և առնել զբարի[39]», և թէ՝ «Յաստուածպաշտութեամբ կալ նոցա ի Քրիստոս Յիսուս[40]», որ և արար իսկ։ Սկսեալ քարոզելով ըստ հրամանի և աւանդելոյ տեառն իւրոյ եկն եհաս ի գաւառս Գողթան, ի աստուածաշէն և աստուածաբնակ գեղաքաղաքս յԱգուլիս։ Ընդ որս և ընդ առաջ եղեն նմա արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և մանկունք ըստընդհայք ըստ Տեառն, և տարեալ յօթեցին յեկեղեցին Քրիստափորի, որոյ անունն շինեալ կա. և արար ընդունելութիւն ոչ սակաւ, այլ իբրև յԱստուծոյ առաքելոյ։ Զի աստուածաբանական տրամաբանելն զամենեսեան զարմացոյց հանդերձ զօրօքն երկնօրօք, և ոչ թէ ըստ Արիստոտէլի ճեմականօն միայն շատանայր, այլ և ի տրամաբանիլն զարտասուսն իբրև յառու հեղուին։ Զայս տեսեալ ժողովրդոցն ամենից անուանեցին զնա Կայծակ. և ըստ Յոհաննու ապաշխարութեան վարդապետ։ Եւ ամենեքեան որք զային առ նա խոստովա-
386բ նութեան// յաղագաւ զամենեսեան ապաշխարհութեան փութացուցանէր և ինքնին արտասուովք լուանայր զմեղս նոցա, և զեկեալսն առ նա աստուածային կայծականց հրովն մաքրէր, որ և անուամբն զգործն լնոյր։ Եւ արդ՝ զինչ ասացից կամ որպիսի գովութեան արժանացուցից, զոր ի վեր ասեմ գոլ քան զգովութիւնս մեր։ Եւ քանզի զայսոսիկ տեսեալ, այլ ոչ ևս կամեցան մեկնիլ սմա յայսմ վիճակէ, այլ գնացեալ առ հայրապետն մեր, խնդրեցին ի նմանէ տալ առաջնորդութիւն և հովութիւն նոցա։ Եւ ասեն ոմանք, եթէ ինքնին տէր սորա յառաջագոյն խոստացեալ լինել ուխտիւք զսա առաքել յայսմ վիճակ, որ և արար իսկ, զի ըստ խնդրոյ նոցին և ըստ վաղընկոյ խոստմանն իւրոյ, ետ որդեակն իւր հովութիւն գաւառիս Գողտան, և սա ոչ առնոյր յանձն, այլ հրաժարէր ըստ մարգարէին Յերեմիայի՝ մանուկ գոլ ասէր[41]. և ըստ Յե-

* Առակ., ԻԶ, 11։
39 Սաղ., ԼԳ, 15։
40 Հմմտ. Տիտ., Բ, 12,
41 Երեմ., Ա, 6;

սայեալ պղծաշուրթն[42]։ Իսկ պատրիարք մեր և կաթողիկոսն տէր Մովսէս ոչ հաւանեալ կամացս [նորս]։ Զի թէպէտ սա հրաժարէր ոչ համարէ անձն արժանի զոլ, այլ նա ըստ առաքելոյ՝ ի Տեառնէ ընծայեալ դիտէր, և զոյտուղ իւրոյ ծառոյն ճանաչէր՝ ըստ Տեառն։ Եւ ի դառնալն սորա առ տէր իւր, բռնաբոս զսա ետ նոցա տեսուչս, և կրկնակի աւրհնութեամբ նամակս և կոնդակաւ աւանդականաւ առաքեաց ի յայսմ նահանգ։ Ընդ որս և բիւրապատիկ քան զառաջինն գտեալ ընդելութիւն, և ըստ յառաջնոյն ընդառաջ եղեն սմա և բերեալ յայսմ մենաստան, զոր կայր ի սմայ աջ սբ. առաքելոյն Թումայի մխեցելոյ ի կողն Յիսուսի կենարարին և սրբոյ Յակոբայ սբ. նշանն, փայտեայ շնորհեցեալ ի հրեշտակէ անգի, ի փայտէ Նոյեան տապանէն, յորմէ արարեալ նշան փոքրագոյն, ողորմութեամբն Աստուծոյ այստ գտեալ լինէր, ընդ որս և Վարդանայ սպարապետի Հայոց սբ. նշանն ունելով ինքեան ի խաչափայտէն Քրիստոսի, և Հռ[ի]փսիմեանց սբ. նշանն և այլ սրբոց նշանք, որք աստ կային։ Ընդ հովանեօ սոցա նըստաւ յաթոռ արքեպիսկոպոսութեան տէր Խաչատուր հեղինակն, ի թվաբերութեանս Հայոց ՌՁԱ (1632), ի հայրապետութեան մերոյ ազգի տէր Մովսէս հոգևոր ծնողին իւրոյ, ի թագաւորութեանն Պարսից շահ Սաֆոյն, և Հոռոմոց սուլթան Մուրատին, և ի բռնակալութեան յայսմ աշխարհի Քալբիալի պարսիկ խանի։ Եւ տեսեալ զսա վայր գեղեցիկ զգևզաքաղաքս ասեմ, որում բնակեալ կան աստուածայար և քրիստոսադօան քահանայք և ժողովուրդք, որոց ասեմ ոչ բաւականալ գովութեամբ, այլ և պիտոանալ ներբողանի, զորս ոչ եղէ ձեռնահաս գրելս, այլ և վասն ձանձրութեան վերծանողաց համառօտել և թէ ներբողեան մի այնու արարչին վայելել։ Եւ զմենարանս ասեմ յորս շինեալ կայր ի սբ. առաքելոյն Բարդուղիմէոսէ փոքրիկ խրճիթ
387ա անու//անակոչութեամբ սբ. առաքելոյն Թումայի։ Եւ թէ ենթակայ վայրըս ասեմ, զոր գովեալ կա ի հիշատակաց սրբոց, այլ և ի հիշատակացելոց. զի քառեակ կողմ տանս սորա դրախտ գոլ վայելուչ. և ելանեն գետ և աղբիւրք ի հիւսիսոյ կողմանէ, և գայ յոռոգէ զբնաւսն, զի որպէս ի յադենէ ելանէ՝ երկ երկեակ գետք կամ աղբիւրք։ Այսպէս և զսորայն ի կողմանէ հիւսիսոյ երկեակ աղբիւր ելեալ և երթա մի յարևելից կուսէ, և զմիւսն ի յարևմտից, ի ներքոյ պարսպացն։ Եւ ով ոք ոչ հաւանի ենթակայիս զոր քատակեցաւ ի դրախտի ամա։ Բայց զշինութիւնն, զոր մակենթակայիս կայր, թէպէտ առաքելաշէն և բնակարան Աստուծոյ և հա[ն]գստարան մակագրելոց սբ. նշանացն, այլ հնացեալ և խարհեալ և ի հազար կամ աւելի ամանակաց կարկատուն առնելով առ մեզս հասեալ կայր զյորմսն, և կցեալ ի խոհակիրանոցէն զտունն Աստուծոյ։ Եւ զառաստաղ նորին իբրև զնորայն սևացեալ լինէր ի ծխոյ թոնրաց. և փոխանակ անուշահոտութիւն խնկոց և կինամոնաց, տաշղից և կնդրկաց, զհոտ ճենճերայից զոհից կայր. և փոխանակ դաստառակի, զսիմսն էին գործածեալ ի մաքրումն ձեռաց. և փոխանակ ձայնից սաղմոսաց և երգուց երաժշտականաց, ի մէջ եկեղեցոյն ճարճատ-

[42] Եսայ., Զ, 5։

մունք և որոտմունք ձուազեղաց լինէին։ Եւ զփրկագործ պատարագն ասեմ, զոր կատակելով առնէին, զի փակեալ շրթամ[բ] ի խորհրդոյ գրոյն ելք և էշք առնէին։ Բայց վասն կատակերգութեան արձակ լինելով շրթամբք և զկնկուղսն ի գլուխսն ունել ի սուրն աստուածային մերձենալով։ Որ և սրով Հոգոյն խոցոտեալ և խողխողեալ սատակեցան և բնաջինջ լեալ մնացին և ոչ մի։ Եւս և զհնձանն կենաց ասեմ, զի էր իբրև զհնձան մարմնոր ի մէջ այգոյն առանց պարսպաց։ Եւ զբնաւսն այսպիսի թշուառութիւն կայր, ըստ նախկի ասացելոյն. «Ոչ գոյր մի ի թշուառացելոցն յայնցանէ, բաց ի չար յիշատակաց նոցա»։ Զի ոմանք ի վերացուցանելոյ խնամոցն Աստուծոյ զմիմեանս զենին. և ոմանք ի երախանս պատուոց դեղակուրք լեալ էին, և ոմանք ինքնակամ յօժարութեամբ զինքեանս արտադրեալ էին, և այլքն ի տարագիր լինելն յաղագս ձիավարժութեան և հեծանելոյ ի կիսիշոց անկեալ շարաշար կտրտանօք վերջացեալք յայսմ կենաց։ Իսկ սբ. ուխտս այրի եղեալ ի նոցանէ, սպասէր սրբոյ փեսայիս, որպէս կոյս ոք, որ սպասէ հարսնութեան փեսայի իւրոյ։ Եւ յորժամ եկն ետես զհարսն իւր այսպիսի թշուառութեան և աղքատութեան, ջան դրեալ փութայր զարդարել զհարսն իւր, որ և ի մի ամն ի կատար չէ և ևս հասեալ, ըսկըսեալ առաջնորդութեամբ Ս. Հոգոյն ձեռ[ն]արկութեան շինութեան պարըսպաց
387բ սբ. ուխտիս։ Եւ ի սոյն ամանակի եկն// բօթ սգոյ՝ վասն փոխելոյ այսմ կենաց տէր Մովսէս երկրորդ լուսաւորիչն մեր և հարաւոյ ի կողմանէ տեառնըս մեր ընդ որս սուգ բաղում, կոծ յոլով և մեծագոյն եթող մեզ և յաշխարհի։ Եւ յաջորդեաց զկնի նորին աթոռ պատրիարգութեան տէր Փիլիպոս խարազնազգեացն, որ և վարիւք մաքուր գոլ իբրև զծնողն իւր ըստ հոգոյ։ Ի սոյն ժամանակի զհիմն պարսպիս փորեալ լինէր, յորժամ եկն զբօթալի զրոյցն, որ և ի սոյն ամի ի հիմանց զպարիսպն նորոգեաց. երկրորդ ամին զպակասն ելից այսոքիւկ։ Նախ առաջի ի սենեկացն սկիզբն մինչև ի խոհակերանոցն հասուցեալ, զխուցսն ասեմ, զոր եթէ ի այլազգեաց գա[յ]ին, ի տեսութիւն ունի տիս երանելով ելանէին ի ներկացողացն, և ցանկային՝ եթէ իցէ հնար, վասն նոցայն բնակութեան, թող թէ և զքրիստոնեայսն։ Եւ զտեղի մարմնաւոր սեղանոյ զոր մակ ունի զբարձր և զլուսանմայ ապարանսն, որ և մերս ազգ և այլք քաւչկ ասեն։ Եւ զխոհակերանոցն և երկ մուտ բախս նորին, և ի դրանն յաղբիւրն յորդահոս, ընդ որս և արտաքուստն ասացից, որ զկնի սբ. եկեղեցոյն շինեցաւ, այսինք՝ զհիւրանոցն և ի վերոյ զքուչկն, զգումսըն և զամբարս նոցին այսոքիւ լցեալ։ Իսկ ի մեծ թուականութեանս Հայոց ՌԶԳ (1634)-ն սկսեալ շինել զեկեղեցին, և ի արկանել հիմանցն։ Դարձեալ եկն զրոյցս փօթալիրս, եթէ գա թագաւորն Հռոմոց ի վերայ Պարսից՝ մերս թագաւորի, Հ(70) բիւրովք, որ և եկն իսկ երկիրն Արարատեան, և պատեալ զդղեակն Երևանու՝ նստաւ։ Եւ աշխարհս բնաւ տեղաշարժ լեալ, ոմանք փախուցեալ ի լերինս և բլուրս շրջէին, ոմանք ի խորափիտս վիմաց և ոմանք ի վիհ և ի խորագոյն ձոր մտին և այլք ի գլուխ բարձրաբերձ լերանց ելեալ խորշակահարք և կիզեալք ի տօթոյ արեգականն, զի թերևս կարիցեն զինքեանս ապրեցու-

ցանել։ Իսկ տէրս մեր և ծառայք նորին գոն գործեալ հոգով չափ, ըստ առաքելոյ, ոչ ելանել աստի մինչ չև աւարտեալ իցէ մեր զխորանն սբ., զի թէև մահ ևս պատահեսցէ և ի գալ հասանել ի տեղի կամարաց և ծածկէր երրորդ խորանացն առեալ լինէր դղեակն այն, զոր ասեն եթէ ի կատարել է (7) աւուրց ետուն կամօ իւրեանց զամրոցն, վասն ոչ լինելոյ կարող ընդդիմանալ նմայ։ Քանզի յելանել զօրացն Պարսից ի գլուխ դղեկին յաղագս պատերազմի զյորովայնս նոցա արիւն փոխեալ լինէր վասն տեսութեան անհուն բանակացն օսմանից։ Եւ ի առնել դղեկին եղ անդ զմի ի ծառայից իւրոց, որոյ անունն Մուրթուզայ փաշայ ստորոգիւր, բազում ընտիր զօրօք, և զպարսիկ խանն Թահմազզուլի գերի ածեալ առաքեաց յաշխարհն իւր։ Եւ ինքն զհետ եղեալ թագաւորին Պարսից չու արարեալ եկն եհաս ի քաղաքն Դաւրիժ։ Ոչ ոք եգիտ ի Պարսից անտի և ոչ մի, և զի ոչ ոք զայր ընդառաջ իւր, և ոչ ուրեքն իմացեալ լինէր, և չուեալ դարձաւ ի տեղի իւր։ Եւ տէրս մեր հազիւ կարաց ի կատար հասուցանել զեկեղեցի, բա[յ]ց ոչ
388ա զբնաւն վասն դժնդակութեան // ամանակին, զի արարիչն սորա երիվարն պատրաստի պահէր և ի լսել բօթալիր զյուց ստուգից կամ ստոց հեծեալ զերիվարն անհետս լինէր առ ձորովս, ընդ որս մշակսն։ Եւ մեք մտեալ զհետ նոցա հեծեծալով մի մի ի նոցանէ գտեալ ածէաք ի գործ եկեղեցոյն։ Եւ դիպեալ լինէր այնպիսի օր, որ անգամս երկ և երիս փախստական լինէին։ Ճարտ[ար]ապետն և մշակքն այսպիսի նեղութեամբ յաւարտ եղեալ, մնացեալ լինէր սպիտակեցուցանելն։ Եւ ի դառնալ սուլթան Մուրատին դօնուկ սուլտան մի Շապան անուն յոր[ջ]որջեալ, ժողովեալ ի վերա իւր զսիւնի Տաճիկք աշխարհիս այսմիկ և եկն ի գաւառն Նախէջևանու և դիմեալ ի քարանձաւսն. զոմանս քարավեժ արարեալ ի քրիստոնէից և զոմանս սրախողխող արարեալ և զայլսն ձերբակալ արարեալ հանդերձ աւարօ առեալ էանց ի Կարնոյ քաղաք և յերկիրն Հոռոմոց։ Իսկ ո՞ կարէ պատմել եթէ զինչ կամ որպիսի նեղութեանց դիպեալ լինէին ազգ քրիստոնէից վասն մերս բազմութեան մեղաց։ Յետ այսոցիկ և թագաւորն Պարսից արարեալ ժողով զօրաց իւրոց, եկն և նա ի վերայ դղեկին Երևանու, և նստաւ ի վերայ նորա իբրև ամիսս է (7)։ Եւ սայ ևս ժողովեալ ազգ քրիստոնէից վասն իւրոյ օգնականութեան, որ և անդ զբազումս ի մերս սեռից ի դղեկէ անտի սպանեալ մեռան, և բազում հայրս անորդի թողեալ, և յոլով մայրս անզաւակս, և յոգնակի քոյրս անեղբայրս։ Արդ՝ զինչ առ ասացից կամ որպիսի կոծով և ողբով աւաղեցից զազգս մեր, որ այսքան պատարից դիպողք եղեն գտեալք։ Եւ ի մուտ Զ (6)-ելոց ամսոյն առեալ եղև դարձեալ ի Պարսից զամրոցն, վասն քաջապէս մարտի նոցա ի ձեռացն օսմանից։ Իսկ փաշայն Մուրթուզայ սրտակտուր եղեալ ներ դղեկին սատակեցօ, և զերիս մնացեալ փաշայսն փոխանակ իւրոյ խանին գերի վարիւր, և զմնացեալ զօրսն սուր ի վերայ եդեալ կոտորեաց, և ինքն բազում ուրախութեամբ դարձավ յաթոռ իւր ի քաղաքն Շօշ։ Եւ ի դառնալն աստ դիտեալ լինէր, որոյ ընդ առաջ եղև տէրս մեր հանդերձ ուխտիւք եկեղեցականաց, քաղցրաձայն երգօք, հնչմամբ ծնծղայից և զանկակաց,

ընդ որս և փափկաձայն և երկարաշունչ ուշիմ մանկամբք։ Եւ յետ այսր եկն թագաւորն և ուրախութիւն ոչ սակաւ արարեալ հանդերձ դիւանական նախարարօք, սպարապետօք և զօրագլխօք իւրովք։ Եւ իբրև զկէս ժամու խօսեալ գտանիւր ընդ տեառնս և արարեալ ի քաղաքի աստ իբրև զժամ, և աստուստ չուեալ գնաց ի տեղի իւր։ Եւս և ի սոյն ամի աւարտ և ի կատար հասուցեալ լինէր զսբ. եկեղեցին, պայծառ գոլով զերկինս և գեղեցկազարդ քան զադին. և նման լուսեղէն երկնից, զի որպէս կա ի նմայ աստեղս է (7) լուսատու լինել նոքօք, այսպէս և ի սմա լինել կանթեղս է (7), որով զգիշերն իբրև զտիւ լուսատու առնել վասն ոչ լինելոյ խաւար ի սմայ, այլ մտեալսն ի սմա ի հոտոյ անուշից և ի պայծառ տեսութեանց զարհուրեալ և թմրեալ լինէն, զինչ կամ որպիսի առատութեան արժանացուցից ըստ առաջնոյ նուագին զգովութիւնն ի հրեշտակաց ընկալեալ լինի և բնակարան Ս. Երրորդութեանն եղեալ...։

388բ Ընդ որս համաձայնեալ // և մեք բնակեալքս, և որք բնակելոցդ էք ի սբ. մենարանիս, աւրհնեալն ամենայն իւրական յարարածոց գոհութեամբ փառաւորեսցուք։ Եւ բազկատարած ձեռօք և արտասուաթոր աչօք և բերանօք աղաչեցելովք... զի փոխանակ յայսմն յարկի, պարգևեսցէ սրբազան և խարազնազգեաց վարդապետիս մերոյ Խաչատրոյ զխորանն անմատոյց և զյարկն լուսոյ...։

Եւ զմեզ՝ զծառայք սոցին և աշակերտեալ մանկունքս տէր Հայրապետ և տէր Յովանէս համամայրսն և տէր[13] և ընդ ձեռամբ սմին հնազանդեալ եղբայրսն, որք կան հաւաքեալ ի սբ. ուխտս, և հարազատորդքսն, զոր ծնեալ եղեն ի սմանէ բանիւն Աստուծոյ և սնեալ կաթամբ զօրութեամբ Ս. Հոգոյն[44] տէր Յերեմիայ կրօնաւոր աբեղայն, և տէր Սարգիս սրբասնունդ և պատարագիչ սբ. ուխտիս, և տէր Ադամ տակառապետն, և տէր Խաչատուր ծերունին, և տէր Մարտիրոս սուրհանդակ հրամանատարն, որ և Զիկիան կոչիւր, վասն հսկա և ահեղ տեսլեան. ընդ որս և աշակերտեալ մանկունք՝ զՄեսրոպ խոհեմն և զԱլեքսանոս դպիրն, զՊօղոս և զՄովսէս, զՄուշեղ և զՊետրոս եղբօրորդի տեառնս, և զՄանկասար ջահրնկալսն, և զԹումայ լուսարար և փակակալ սրբոյ յարկիս։ Ընդ սա որ և զդասս աշխարհականացն, զոր վարձկան եղեն, և աշխատեալ յոլով ի վերայ սրբոյ մենաստանիս՝ զԲարաղամ, և զԳրիգոր, և զՄիքայէլ տնտեսն, զոր այսքան շինութեան հացսն եփեցին, և զՆաւրի, և միւս երկ Գրիգորն և զՀայրապետ, և զՀայկազ մշակն, և ինձ ամենեցուն տրուպ և ախմար գրչի սևերեսի, ծուլ և պղերգի։

ժ

77բ Զթագարդապատ անձրս մեղաւք,
Ցանցիւ քարշեալ չարին հնարօք,
Զձեզ աղաչեմ բաղում ողբօք,
Ցիշել ի Տէր սրտի մտաւք[45]։

[43] Անվան տեղը բաց է թողնված։

[44] Դրված է վերջակետ և հինգ տող դատարկ։

[45] Նման երկու հիշատակարան էլ տե՛ս ձեռ-ի 157ա և 271բ էջերում։

1090
ԺՈՂՈՎԱԾՈՒ[46]

Գրիչ՝ Մարգար
Վայր՝ Ագուլիս

Փառք...։ Արդ՝ գրեցաւ տառս կանոնականս ի դատաստանի և այլ խրատական և խաւսք առակաց և իմաս[տ]նասիրաց ե այլ բանս, զոր աչս իմ սիրեցեալ և զամենեսեանսն միաշարելով յուսով և փափագմամբ գրեցի, որպէս զմեղու շրշելով ի վերայ զանազան ծաղկաց հաւաքելով ըստ պիտոյից զգեղեցիկս և զաւգտակարս լցեալ բեռինս ըստ կարի իւրոյ։ Սոյնպէս և ես տկարացեալս մեղօք և պակասեալ հոգոյս աչատեսութեան. և յիմարեալ մտաւք դրեցս ձեռամբ զանարժան Մարգարիս, ի թվականիս Հայոց ՌՁԷ (1638), ուր գրեցաւ ի յերկիրն Գողթան, ի գեաւղաքաղաքն Այգուլիս, // ընդ հովան[ե]աւ սբ. ուխտիս ըստ Թումայի առաքելոյն և Ս. Շմաւոնի, ի յառաջնորդութեան Խաչատուր քաշ վարդապետի և այլ միաբանիցն։ Քրիստոս Աստուած փրկիչն ամենեցուն պահեսցէ խաղաղութեամբ մինչ ի կատարած։ Դարձեալ յիշեցէք ստացող գրոյս զտէր Զաքարէն և զկողակից նորա Շահսուլթանն, և զորդին իւր՝ զԳալուստն, և զհայրն իւր՝ Պինիաթն, և զծնաւղսն իւր՝ Սաղամէրն, և զեղբայ[ր]ն իւր՝ Փիրին, զարձեալ հոգևոր եղբայրն իւր՝ տէր Ներսէսն, զտէր Նիկողաոսն. զտէր Գրիգորն նորընծայ քահանայքն և զայլ ազգականաց սոցա։ Արդ՝ աղաչեմ զձեզ զամենեսեանդ, որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմի իւր միւսանգամ դալըստեան. ամէն։

1091
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՏՁԵՊ, I, № 174

Գրիչ՝ Գալուստ

523 *Փառք...։ Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ հոգիազուարճ երգս Դաւթի մարգարէին, որ ասի Սաղմոսարան, ի լաւ և յընտիր աւրինակէ, ի թվականիս Հայոց ՌՁԷ (1638) ամին, ձեռամբ թարմատար և բազմամեղ, ոճրագործ Գալուստի գրչի։ Ընդ որս փափ[աք]աւղ եղեալ այսմ սբ. տառիս Երզնկացի Մինաս քահանայն. և ստացաւ զսա ի յարդար գոյից իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղացն իւրոց՝ Աքանասին և*
524 *Հայոցին, այլ և կողակցին՝ // Մինային, և ամենայն առուարեան մերձաւորացն, և եդ յիշատակ ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, հետևող եղեալ բանին, եթէ՝ «Երանի...»[47]։ Արդ՝ աղաչեմ զձեզ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք յերկնաթռիչ յաղօթս ձեր, զվերոյ ասացեալ ստացող սորա զՄինաս քահանայ և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ[48]։*

---

[46] *Հիշատակարանը վերցրել ենք պատահականորեն մի անծանոթ եղեգնաձորեցու ձեռագրից։*
[47] *Եսայ., ԼԱ, 9։*
[48] *Համառոտ տե՛ս նաև Աղավնունի, Այցելութ., էջ 291։*

1092
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
Մեշեկ V, № 1604 (1444 թ.)

399 *Յիսուս որդիս յիշատակ է մղդսի* Խումար *խաթոյնին, իւր ծընօղաց խօճայ* Ղատոյն *և իւր արեան մերձաւորաց՝ մեծի, փոքու, յիշեցէք...։ Թվին ՌՁԷ (1638), ի հայրապետութիւն տէր* Գրիգորին:

1093
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
Մեշեկ, VI, № 1919

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

371 *Քրիստոս Աստուած... ողորմեա ստացողի սբ. գրոցս տէր* Գրիգորի *սբ.* Երուսաղէմայ *հայրապետին, որ շինեաց զՍ. Ծնունդն և նորոգեաց զՍ. Փրկիչն, և կամարակապ կառոյց զՍ. Յոհաննու Աւետարանչի եկե-*
372 *ղե//ցին, և առաւ Գ (3) կամար ի Ս. Յարութեան վերնատունն Հայոց ազգին։ Նա բազում երախտիս և աշխատանս արար ի Ս. Յակոբ և յայլ եկեղեցիս, որ միշտ բարեխօսեն նմա և ամենայն Հայոց ազգիս, և ծնողաց իւրոց, հօրն՝* Մարգարին *և մօրն՝* Թուրվանտին, *և եղբարցն՝* Գուլամիրին *և* Աղամիրին, *և քերցն՝* Սալարին *և* Շահումին, Պակիսուլթանին *և* Հերիֆին, *և ամենայն արեան մերձաւորացն...։*

բ

Որոց աղօթիւք և բարեխաւսութեամբ ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի սբ. գրոցս... և տէր Վարդան *թղթիս կոկողին, և մեղապարտ գրչիս, և ծնաւղաց իմոց...։*

գ

Որոց աղաւթիւք ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս... և թղթի կոկող միակեց մահդասի Մելքոնին *և Ս.* Ծնունդեանս *միարանացս...։*

դ

Փառք...։ Կատարեալ և ընտիր աւրինակ առաջին վարդապետքն փարթամացուցեալ էին նորահրաշ պատմութեամբք սրբոց, և զարդարելով զամենայն տօնս Տէրունական՝ զԱւետեաց, զՆնդեան, զՏեառնընդառաջին, զԱյլակերպութեան, զԱստուածածնին, զխաչին և զխաչգիւտին։

Զոր յետոյ մեծ վարդապետն մեր, քաջ եկլեստիաստէն Հայոց Գրիգոր Տերենց, *մեծափափաք յօժարութեամբ և ճշգրտիւ ժողովեաց յամենայն պատմութեանց, իբր ժրաջան մեղու, որ ժողովէ զամենայն ծաղիկս ի բուրաստանեաց։ Ըստ այսմ աւրինակի ժողովեաց զամենայն հոչակաւոր պատմութիւնքս, զարմանալի և հիանալի ի լսողաց, և զարգարեաց*

զլուսափթիթ բուրաստանս, որ գրեաց և հրաման ետ ամենեցուն նույնպէս գրել։

Զոր տեսեալ այսմ բարի և հեզահոգի տէր Գրիգոր սբ. Երուսաղէմայ հայրապետս և ետ գրել զսայ յիշատակ իւրն և ծնողաց իւրոց Մարգարին և Թուրվանդին...[49]։

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ սուտանուն Յոհան Հիղանցիս, որ անուամբս միայն եմ և ոչ զործովս, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածաշունչ տառս, որ կոչի Այսմաւուրք, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և Զէ (1638), ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի ղուռն Ս. Յակոբայ դամբարանիս, ի յուռաջնորդութիւն սբ. ուխտիս, ըստացողի զրոյս տէր Գրիգոր քաշ և արի հայրապետին, զոր տէր Աստուած իբրև զչահ անշիջանելի պահեսցէ ի մէջ եկեղեցւոյ...։

373 Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ կողկողագին պաղատանօք, որք հանդիպիք սբ. գրոցս տեսութեան, կարդալով կամ աւրինակելով, զաւելորդն բառնաք և զպակասութիւն լնուք, և խոշորութեան, և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր...։

Եւ արդ՝ ի յեղեռնալի և յաշնանացեալ դարս և ի ժամանակս, յորում ազգս Հայոց կային տառապեալ ի ձեռս այլազգաց, որ մահմետական կոչին, յաւուրս Բ(2)-[ո]ւց թագաւորացն, որ մինն զկողմն արևելեան ունէր և միւսն զկողմն արևմտեան, որոց անուանքն էին շահ Աբազ և սուլթան Մուրատ. զի շահ Աբասն զարևելս տիրեաց և սուլթան Մուրատն՝ զարևմուտսն։ Յորում աւուրսն վիճակս ազգիս Հայոց և եկեղեցիքս, որ յԵրուսաղէմ կայր տառապեալ ի մէջ բազում պարտուց, զոր արարիչն Աստուած գթութեամբն իւրով և աղաւթիւք սբ. Լուսաւորչին պարգևեաց մեզ զտէր Գրիգոր հայրապետս մեր, մաքուր հոգով և մարմնով, որոյ ձեռօքն զամենայն պակասութիւն Հայոց վիճակիս և Լուսաւորչի ազգիս լցոյց։

Զի էր սրբասնեալ հեղինակս այս ի կողմանէ Արևելեան, ի նահանգէն և ի սահմանացն Գանձակոյ, որ այժմ ասի Գանջայ, ի գաւառէն Վարանդոյ, ի գեղջէն որ կոչի Սպիտակաշէն, որ է մերձ և ընթեր առ աթոռ սբ. առաքելոյն Եղիշէի։ Ազգաւ հայ, կրօնիւք սբ. Լուսաւորչին և ուղղափառ հաւատով, որոյ անուն նախնական սեռին և ազգին Վարդանանք ասեն։ Բարեպաշտ և հաւատարիմ ծնողաց զաւակ, զորոց անուանքն ասէին, հօրն՝ Մարգարայ և մօրն՝ Թուրվանդայ։ Որ ի փոքր տղայ հասակին ի թոնիր անկեալ և ի հրկիզմանէ ազատեալ, զոր վասն ազատութեանն ծնողքն նուէրք և մատաղ խոստացեալ սբ. Երուսաղէմայ։

Եւ մինչդեռ սա տղա գոլով ծնողքն փոխեցեալ եղեն առ Քրիստոս և սա ի քահանայից և յազգականաց իւրոց լուեալ զտիաթիկ ծնողացն, և փութայր կատարել, երբեմն ի փոքր հասակին ի յայլոց բերեալ յԵրուսաղէմ զուխտն կատարեալ և դարձուցեալ առ հայրենիսն։

Եւ յորժամ եհաս ի տիս մանկութեան, կամեցան մուծանել զնա բռնութեամբ ի կարգ աշխարհի։ Դարձեալ մտածեալ զտիաթիկ ծնողաց և

[49] Դարձյալ թվում է ա հիշատակարանում հիշված անունները։

յամենայնէ հրաժարեալ դարձաւ կրկին առ սբ. քաղաքն Երուսաղէմ ՌԼ (1581) թվին Հայոց, մտաւ ի սպասաւորութիւն սբ. Երուսաղէմայ, ժամանակ ինչ մնացեալ և յետոյ գնացեալ ուխտի պատճառաւ ի գահն Լատինացոց, ի գերեղմանն սբ. առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և անտի դարձեալ եկն յազգս և յաշխարհս Հայոց։ Եւ աշակերտեալ սրբասէր և աստուածաբան Կարկաոցի Պետրոս վարդապետին, որ եղև նա կաթողիկոս Կիլիկեցւոց Հայոց մասին։ Զոր տեսեալ նորա զքաջութիւն սորա ի գործս հոգևոր և մարմնաւոր, մինչդեռ ոչ էր առեալ աստիճան ինչ յեթանցն կարգաց, կացոյց զսա ի վերայ մասնաւոր բանից սբ. Երուսաղէմայ։ Քանզի ի յայնմ ժամանակին էր սբ. Երուսաղէմ անկեալ ի ներքոյ անթիւ և բազում պարտուց, և զամենայն անօթս գրաւ եղեալ և տառապէին բոլոր ազգս Հայոց, և ոչ կարէին ազատել, զի տոկոսեաց տոկոսին աւր ըստ աւրէ առաւելոյր։ Եւ տեսեալ զնա յոյժ փոյթ ե զուարթ ի գործս յորում համուտ առաւել գտաւ քան զկարծիս կամաց նոցա, իբրև զծառայն, որ զքանքարն կրկին աճեցոյց։ Ապա յետ այնորիկ, կամեցան առնել զնա ըստ բանի իմաստնոյն, թէ «Զայր փոյթ և զուարթ պարտ է առաջի թագաւորաց կացուցանել»...[50]։

Զի որպէս անուանակիր սորին Լուսաւորիչն մեր, թարց աստիճանի
374 զազգս Հայոց ի հաւատ էած, և յետոյ ընկալաւ զկարգ. // Նոյնպէս և սա չև ևս էր առեալ աստիճան. ե բազում ջանս և քաջութիւնս եցոյց և զբազումս ի պարտուցն Երուսաղէմայ թեթևացոյց. տեսին ըստ բանի իմաստնոյն զգործնականին զբարուական և զտնտեսական կատարեաց։ Եւ ապա կամեցան զքաղաքական ի նա յանձնել, ետուն նմա զաստիճան աւագ սարկաւագութեան, վերոյ ասացեալ Պետրոս սրբասնեալ կաթողիկոսն ամենայն մեծամեծովք Հայոց, և Իսաւիք արքեպիսկոպոսն սբ. Երուսաղէմի, և յանձնեցին ի նա զամենայն հոգսն Երուսաղէմի։ Եւ նա իբրև զքաջն Մանուէլ Մամիկոնեան, զեղբայր քաջին Մուշեղա[յ], որ եդ զանձն ի վերայ հաւատոյ ազգին Հայոց և բազում վէրս յանձն կրեաց, զի մինչ Ծ (50) ըսպիս ի մի յանդամն երևիր, որպէս վկայէ պատմագիրն Բուղանդոս[51]։ Նոյնպէս և սա մտեալ ի ներքոյ բազում պարտուց, և անկեալ ի մէջ անթիւ վշտաց, յոյս ի յԱստուած տալով, իբրև քաջ լուղնորդ և համուտ նաւավար, որ ի մրրկածին և հողմավար ժամու միջամուխ լինելով յանհուն ծովու, փութով ի յեզրն ելանէ պէսպէս հնարիւք մաքառելովն ընդ ամեհի ալիսն, և զիւրսն և զինքն Աստուծով ապրեցուցանէ։ Նոյնպէս և սա ջանս բազումս արարեալ, յաջ և յահեակ անվեհեր փութալով, աղաչելով և աղերսելով, ի յոտս և յերեսս կարգաւորաց և առաջնորդաց և քրիստոնէից անկանելով, և ուղիղ սրտիւ միջտ առ Աստուած գոչելով, թուղթս և կոնդակս յամենայն բոլոր Հայաստան առաքելով, մինչ շարժեաց Աստուծով զամենայն ազգս Հայոց ի սէր սբ. Երուսաղէմայ։ Եւ ապա դիմեցին յամենայն կողմանց առ նա և առ սբ. Երուսաղէմ բազումք կարգաւորք՝ առաջնորդք և վարդապետք, և քրիստոնէից ամենայն գլխաւորքն յամենայն կողմանց։ Եւ ապա զամենայն պարտքն

50 Առակք. ԻԲ, 29։

51 Պատմութիւն Հայոց, Ե գրութիւն, գլ. ԽԴ։

Երուսաղէմայ եւտուր, և զամենայն դրաւեալ անօթսն աղատեալ. և ապա առեալ զաստիճան քահանայութեան։ Եւ ամենայն ներհակք և հակառակք նորա նուաղեցան իրրեւ զտունն Սաւուղա[յ]։ Եւ նա զօրանայր Աստուծով իբրև զԴաւիթ, ըստ բանի Աստուածաշունչ կտակին. զի մինչև ՌՄԹ (1610) Հայոց մեծ թվականին յետոյ այս իրս կատարեցաւ Աստուծով։

Եւ յորժամ տեսին աղգս Հայոց զհաւատարիմ ծառայութիւն սորայ, որ վասն սբ. Երուսաղէմայ, ապա ի Ռ և ԿԲ (1613) թվին հարկ ի վերայ եղին և կոչեցին զառաքինի Աւետիս կաթողիկոսն սբ. Էջմիածնայ[ց], և բազում վարդապետք ընդ նմա և եւտուն զնա ձեռնադրել և աւրհնել արքեպիսկոպոս և հայրապետ սբ. Երուսաղէմայ։ Եւ զկնի այսորիկ սկիզբն արար շինուածոցն եկեղեցեացն և սրբութեանց, զի արարիչն արարածոց Աստուած, որ յամենայն ժամանակս ընտրեաց զհաճոյս կամաց իւրոց՝ շինել շինուածս՝ տեղիք և տուն անուան իւրոյ, ի սբ. աշխարհս Հրէաստանի և ի սբ. քաղաքս Երուսաղէմ. զի առանց կամացն Աստուծոյ ոչ ոք կարէ առնել ձեռակերտս և երևելի շինուածս ի լեառն Տեառն և ի նահանգս վայրիցս Աստուծոյ...։ Նմանապէս և զսա եգիտ Աստուած այր ըստ սրտի իւրում, որպէս ասէր առ Սամուէլ վասն Դաւթի։ Եւ ձեռամբ սորա վերստին նոր նորոգեաց զվիճակս ազգիս Հայոց զհրմնարկեալս ի Լուսաւորչէն, զխարխըլեալսն կրկին հաստատեաց և կանգնեաց գերագոյն քան զառաջին, զի ի ՌՄԷ (1608) թվին Հայոց սկիզբն արար Աստուծով շինուածոցն և մինչև ՌՁԱ (1632) թվին զայս ամենայն
376 ի յանդ և յակարտ էած։ Նախ զՍ. Փրկիչն պաբսպեաց և զ//մէջն ամենայն նորոգեաց, և երկաթի դրամբ և նգոք ամրացոյց։ Եւ յետ նորա զՀրեշտակապետն՝ զեկեղեցին և զբազում խրճիթսն և զպարիսպն շինեալ և պնդեալ։ Եւ ապա զկնի նորա զմեծ և զհրաշալի <և> զաթոռն առաքելական զՍուրբն Յակոբ։ Եւ զամենայն պակասութիւն ելից, և շինեաց և զբեթեկսն ամենայն կազմեաց, զի ոչ մնաց բնաւ տեղ և տուն, որմ և կամ քար, որ ոչ հասին բազուկք և մտաք ձեռաց նորա, զի ամենայն վերստին զարդարեաց և նորոգեաց։ Եւ ապա յետ նորոգման Սրբոյ մենաստանին Յակոբա[յ]. Աստուծով սկիզբն արար Բեթղէհէմի Հայոց բաժնին և վիճակին, և բազում շինուածս կառոյց, զամենայն ներքնատունսն քարվանսարայովքն և զվերնատունսն, զխուց, զխրճիթս, և զջրհորսն ամենայն, և զեկեղեցի, զի անթիւ և անհամար դրամ տալով այլազգաց և արուեստաւորաց։

Եւ գնացեալ ի Կոսանդնուպալիս առ մեծ իշխանն այլասեռից յարքայն արքայից սուլթան Սման, որ մականուամբ Խանդէար կոչեն, ի նմանէ և յամենայն մեծամեծացն հանեալ գիր և հրաման, զի մի՛ ոք հակառակ կայցէ յառաջ և յետոյ եղեալ շինուածոցն։ Եւ դարձեալ եկն յԵրուսաղէմ և վերստին նորոգեաց ի դուռն Յարութեան Քրիստոսի զեկեղեցին՝ զկանգնեալ տեղին Յոհաննու աւետարանչին, ի դէմս Քրիստոսի, ի ժամ խաչելութեան, ի յաւուր աւագ ուրբաթուն։

Եւ ապա յետ նորա առեալ ի յազգէն Ֆռանգաց Դ (3) կամար ի Յարութեան վերնատանէն, որ էր ի վերայ Հաբաշից եկեղեցւոյն, և արար զտեղիս ազգիս Հայոց լայն և ընդարձակ, և ուրախացոյց զհետևողս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Եւ այլ շինուածս շատ, զորս ոչ կարեմ ընդ

զրով արկանել։ Այսքան ի շինուածոց կողմանէն աշխատեցաւ և զարգարեալ պայծառացոյց։։

Եւ դարձեալ կրկին յիշատակեմք զաշխատանս և զշանսն նորա, զոր ունէր վասն անօթոյ և զարդուց եկեղեցեաց, զի որպէս զեկեղեցիս նորոգեաց. նա տասնապատիկ քան զծախսն եկեղեցեացն՝ զեկեղեցիսն ելից և զարդարեաց պէսպէս և զանազան ոսկեղէն և արծաթեղէն, ականակուռ և մարգարտաշար, խաչերք և սկիհք, բուրվառք և խնկատուփք, քշոցք և բաժկամանք, ափսեայք և տաշ[տ]ք, կանթեղք և ջահք, շամազանք և շղթայք, զամենայն այլատարազ կիտուածս զարդարեալ նղշելովք, և քանդակեալ նկարեալ պատկերօք, և ծառադրոշմ և ծաղկանիշ յաւրինուածովք, մեծամեծք, միչակ[ք] և փոկունք, ամենայն բովանդակ ոսկեղէնք և արծաթեղէնք, բազումք խոյրք և թագք, վակասք և ապարաւշք, զորս ոչ կարեմք զթիւն ընդ դրով արկանել։ Զորոց փոխարէնն Աստուած Գրիգոր հայրապետիս մերոյ զփառսն անճառ տացէ։

Եւ դարձեալ ճառելոյ է արժանի ե պատմելոյ կարի պատշաճաւոր զհանդերձանս զգեստուցն և զպատրաստութիւնն բազում հանդերձիցն, զթագսն ասղնագործ և զշուրջառսն ոսկէհուռն, զպատուական պճղնաւորսն, զորս սարասարս և զորս զարրաֆ անուանեն, ոսկէխառն և արծաթագործ ապրիշոմեղինօք, զանազան և երանգ երանգ դունիւք զարդարեալք, խա[յ]տարզէտք և համակագոյնք, սեաւք և սպիտակք, կարմիրք և կապոյտք, ծիրանիք և ծովագոյնք, հիր և կանաչ, դեղին և դահանակատիպ, յամենայն արուեստականաց։ Նաև պատուական քեմուխք մաշկեղէ[ն]ք կազմեալք տղագիծք՝ սակս վարագուրաց և այլ բազմազան և ազգի ազգի պատրաստութիւն և հանդերձանք ծածկոցոց, և սքողիչք սեղանաց, և զարդարանք խորանաց, զորս ոչ կարեմ զամենայն յիշատակել, զի մի լսողդ ձանձրասցին։ Եւ գրեթէ որքան ազգս Հայոց ի հաւատս Քրիստոսի հաստատեալ եղեն, ի Լուսաւորչէն հետէ մինչև ցայժմ, ոչ էր երբէք այսպես պայծառացեալ և բարգաւաճեալ վիճակս և եկեղեցիքս Հայոց որ յԵրուսաղէմ։ Յորում զփոխարէն Քրիստոս Աստուած տացէ Գրիգոր հայրապետիս մերոյ զկեանս և զարդն անկողոպտելի...։

Եւ դարձեալ յետ այսմ ամենայնի ժողովեաց առ ինքն այրս բարեսէրս...։

Այս տէր Գրիգոր հայրապետիս սբ. Երուսաղէմայ էր աւգնական... Մոկացի տէր Կարապետ քաջ, երջանիկ բարունապետն... և եղև Հայոց ազգիս մեծ ուրախութիւն ի սբ. քաղաքս Երուսաղէմ։

376 Դարձեալ ի յաւուրս և ի ժամանակս այսմ Գրիգոր կոչեցեալ հայրապետիս, ի թվին Հայոց ՌԶԳ (1634) պատահեալ եղև ծռազատիկ ազգին Յունաց...։

Իսկ Գրիգորիոս հայրապետս ետես զի ազգս Հայոց ի յետ կացին ի յօգնութենէ... և ետես, զի ազգն Յունաց պատրիարքունքն միաբանեալ դիմեցին ի Կոսանդնուպոլիս, ի դուռն արքայից արքային, առին ձեռագիր ի նմանէ...։

Ապա յորժամ ետես զԱւետիսն այն հայրապետն մեր յոյժ ուրախացաւ... և առեալ զօրեղ հարիւրապետ մի գնդաւն իւրով փութանակի և

հասին յԵրուսազէմ...։ Կատարեցաւ այս գործ որպէս հաւատամ և զիւրս իւրն ընծայեմ հաւատով, յուսով և սիրով, որ ոչ զիտէ ամաչեցուցանել զյուսացեալսն յինքն։ Դարձեալ աղաչեմ զամենեսեանդ յիշել ի Տէր... ստացողի սբ. զրոցս տէր Գրիգոր սբ. Երուսաղէմայ հայրապետն...։ Այլ և զդասս սարկաւագաց՝ զՇազուաթն, զԻաշարաթն, զԱպտալ Գրիգորն, զԱմիրխան, զՏօնապետն, զմիւս Գրիգորն, զՄանուկն... զՍ. Յակոբայ տնտես Մարտիրոսն, զթղթիս կոկող Մելքոնն, զՊաւղոսն և զհաչի Սաֆարն...:

1094

ՇԱՐԱԿՆՈՑ[52]

Երեւան, լուսանկար № 114

Գրիչ՝ Ստեփանոս

277բ Փառք...։ Կատարեցաւ [դիրս] աստուածային ի թվականիս ՌՁԷ (1638), ձեռամբ յոգնամեղ [և անար]հեստ գրչի սուտանուն Ստեփանոսի, որ [զանունս] ունիմ և գործովս թափուր և ունայն ամենայն [բա]-բեաց։ Գրեցաւ Շարակնոցս ի խնդրոյ մահդասի Մոցիկին, յիշատակ [իւր] և իւր ծնողաց, և մահտեսի Սաքաքին և Պետրոսին և որդոյ[53]

1095

ԱԻԵՏԱՐԱՆ

ՏԵՐԱՎՋ, № 176 (ԺԵ—ԺՁ դար.)

Ա.

228 Զվերջին ստացող սբ. Աւետարանիս Վէրդիկեց Սահակն, և զկողակիցն իւր՝ Թանգազիզն, և որդին իւր՝ Առաքելն, և կրսեր որդին՝ Վէրդիկն և որդիքն իւրեանց՝ Անանէն, Վարքանն, Նէրսէսն: Դարձեալ յիշեցէք զհաւրեղբայրն իմ, որ փոխեցեալն առ Քրիստոս Յովհաննէսն, Յախնազարն, Ղուլիջանն, և որդիքն իւրեանց՝ Յովհաննէսն, Զաքարէն, Յախնազարն: Դարձեալ յիշեցէք զկողակիցն իւրեանց՝ Խանըմազէն, Մուրվաթն, Շանգաուէն, Բ(2) Մարիամն, Կիրակոսն, և մայրն իւր՝ Ոսկիմէրն: Դարձեալ երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով կամ գաղայբար առնել, յիշեցէք զՎէրդիկն, Առաքելն, որ ստացան զսայ հալալ վաստակոց իւրեանց, յիշեցէք և ուղիղ սրտիւ և հաստատուն հաւատով Աստուած ողորմի ասացէք....

Թվականին ՌՁԷ (1638) ամին։

Բ

Արդ՝ երես անկեալ աղաչեմ սրբազան քահանայիցդ, որ ընթեռնուք զսբ. Աւետարանս, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զբարեմիտ և զխոհեմ և աստուածասէր Տէրոնն, որ նորոգեաց զսբ. Աւետարանս և ետ կազմել յիշատակ իւրն և իւր ծնողացն, զհօրն իւրոյ՝ Վէրաիկին և զմօրն իւրոյ՝ Մարիամին, և կողակցին իւրոյ՝ Թազուգուլին, և որդոցն՝ Մարգարին;

[52] Փարիզի ազգային մատենադարանի Arm. № 73 ձեռագիրն է։

[53] Շարունակությունը չկա։ Չի՞ նկարված, թե՞ կորել է։

1096
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ
ՏԵՐԱՎՋ, № 450

Գրիչ, ստացող՝ Խաչատուր երէց
Վայր՝ Շօշ

097 Քարոզգիրքս գրուեցաւ ձեռամբ Խաչատուր իրիցիս, ի քաղաքն Շաուշ, ի թուականիս Հայոց ՃՁԷ[54], յիշատակ ինձ, սիալանացն ներել [աղաչեմ]...

1097
ՃԱՌԸՆՏԻՐ
ՈՅՁՄՎ, № 920 (1485 թ.)

Նորոգող՝ Մովսէս երէց
Վայր՝ Ալամէք

507 Արդ՝ վերստին նորոգեցաւ սբ. գիրքս, որ կոչի Ճառընտիր, ձեռամբ սուտանուն Մովսէս երիցու, ի գիւղս Ալամէք, ի թվին ՌՁԷ (1638), յիշատակ Մարգարեին և իւր կողակցին՝ տէր Վարդուսին և ծնօղացն՝ տէր Ներսէսին, Խազրէվարդին և զաւակացն՝ Ղարիպխաթունին, տէր Աբրահամին և ծնաւղացն՝ Խլղաթին, կողակցին՝ Ոսկոյն.... Յիշեցէք զՄարգարիտն, որ ետ վերստին կազմել և նորոգել զգիրքս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն՝ տէր Ներսէսին, Խազրէվարդին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։...[55]

1098
ՇԱՐԱԿՆՈՑ
ՊՎՁՁՍ, № 3

Գրիչ, ծաղկող՝ Բարսեղ քահանայ
Վայր՝ Տումարզա

ա

12 Փառք.... որ ետ կարողութիւն տկար և տարտամ եղէգնագծի Բարսեղ քահանայի հասանել վերջին գրծ, այսմ անուշահոտ և քաղցր եղանակ Շարունակիս։ Նման անլռելի ձայնիւ աւրհնութիւն, և անհատ և անհանգիստ փառաբանութիւն յամենայն արարածոցս և յիմմէ անարժանութենէս, այժմ և միշտ։ Աստանաւր անկեալ աւարտեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, յաստուածապահ կղզիս ի գաւառն Կեսարու Կապադովկացւոց, ի գ[ե]աւղն Տումարզա, ընդ հովանեաւ ի դուռն Ս. Աստուածածնայ և Պետրոս և Պաւղոս եկեղեցւոյս, և այլ ամենայն բազմահաւաք սրբոցս որ աստ կան, ի պարծանս հաւատացելոց, ի թվին ՌՁԷ (1638), ի հայրապետութեան Սրսոյ տեառն Սիմէոն կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի հայրապետութեան այսմ նահանգի Կեսարու Դաւիթ եպիս-

[54] Ձեռ. այսպես։ Ցուցակում ծանոթագրված է. «Թվում է թվականը սխալ է, պետք է լինի ՌՁԷ (1087+551=1638) և ոչ թե ՃՁԷ (187+551=738)»։ Ճիշտ է այս դիտողությունը, բայց կարող է լինել նաև ՌՃՁԷ (1738 թ.)։ Համենայն դեպս թեականորեն դրեցինք 1638 թ. շարքում։
[55] Մաղթանք և նորից թվում է վերևում հիշված անունները։

կոպոսի, և ի յառաջնորդութեան այսմ գաւառի Առաքել եպիսկոպոսի մերոյ. ձեռամբ բազմամեղ և անարհեստ գծողի Բարսեղ քահանայի, ե գործովս ոչ, և ոչ հայրն իմ՝ Աւագ քահանայն, ընդ հովանեաւ գերապայծառ և երկնանման սբ. եկեղեցւոյս, և զմայրն իմ՝ Սայրամն. Աստուած իւրոյ արքայութեանն արժանի առնէ, որ շատ երախտիք ունին ի վերայ
13 մերոց, և զեղբարքս // իմ զՇառուկ, և զորդին Առաքել, և զքեռքս իմ և զեղբայրս իմ զՇերուկ, որ փոխեր է առ Քրիստոս և զերիցկինն իմ, որ յայժմ առ Աստուած փոխեցաւ, և մնացի գերի և արտասուալի, յոյս զԱստուած ունիմ, զորդիքս իմ զՊետրոս, զՄիքայէլ և զԽաչերիէլ, և զդուստր իմ զՇղիսայն և զՊարճէն: Ում որ հանդիպի սայ խանդաղին նորայբողբոջ, մեղսամած մատմամբ իւրով գծագրեցի զայս մեծս աշխատութեամբ, յիշատակ յանձինս իւրոյ, զոր տէր Աստուած վայելել տացէ մինչ ի խոր ծերութեանն[56]: Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ և անդ որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ յուսանելով, լի բերանով և ուղիղ մտաւք Աստուած ողորմի ասացէք, ձեր և մեր ննջեցելոցս ծնաւղաց նորին. ամէն: Արդ՝. ով որ ուղիղ մտաւք և լի բերանով Աստուած ողորմի ասացէք յիշեցելոցս՝ ի սմա ստացաւղին և ծնաւղաց նոցին, գծողին և իւր ծնաւղացն Բարսեղ քահանային, որ գրեցի և ծաղկեցի և կազմեցի. և ինքն Քրիստոս որ տէրն է փառաց և տուող ողորմութեան, տացէ զիւր առատ ողորմութիւն և երկնից արքայութիւն ամենեցուն առ հասարակ. ամէն:

Բ

12 Զողորմելի գերիս զԲարսեղ քահանայ յիշեա՛ ի Տէր աղաչեմ:

Գ

Ո՛վ եղբայրք, որք հանդիպիք այսմ տառի տեսանելոյ ակտելոյ կամ աւրինակի, զմեղուցեալ և զտարակուսեալ, խաւարեալ աչաւք և մոլորեալ մտաւքս, որ ահուվաղ ասելով տառապեալ է անձն իմ, որ զանունս ունիմ Բարսեղ քահանայ, և գործովքս ոչ, ինչպէս եղբարք իմ, որ [Յ]ովնանու գլուխն դրթմենին միւս աւրն բուսաւ, և միւս գիշերն կորեաւ, մնաց Յովնանն տրտում, այնպէս հարիւրապատիկ տրտում եմ: ՌԶԴ (1635) աւրհնուեցայ, և ՌԶԷ (1638) յԱստուծոյ հրամանք եղաւ իրիցկինս առ Աստուած փոխեցաւ, անճարակ մնացի, զՇարունակիս սկիզբն արարի, Աստուած ողորմի ասացէք, ձեզ և մեզ ողորմածն Աստուած է:

Դ

Եկայք նոր զարմանք տեսէք, որ եղաք մեք անմխիթար,
Եւ լաւ թէ չէաք տեսեր, զայս տեսիլս ի լաց զմեզ արար,
Միթէ յարութեան յաւուրն զձգէ ի հուր և ի խաւար:
Եւ փառք արարչին ասեմ, որ ինքն է Աստուած կենդանի,
Ինչ մարդ որ ագահ լինի, նայ փութով ինքն կու կորի,
Ռ(1000) ամանաթ ասեմ, մի՛ առներ այ իմ սիրելի:

[56] Սկզբից մինչև այստեղ տե՛ս նաև Ալպոյանեան Ա., Պատմութիւն հայ կեսարիոյ, հտ. Բ, էջ 1869—1870:

Ե

Տէր Աստուած քո մեծ ողորմութեամբ դարձոյ զմոլորեալս Բարսեղ գրչակս ի չարէ, և յազխտից մեղաց մաքրեա և յաշողեա՛ զգործս ծառա։

1099

ՏՕՆԱՑՈՅՑ

Մուրմար, II, № 90

Գրիչ՝ Յովասափ

Ա

162 *Զեռքըս փտի և հողանայ,*
Գիրս յիշատակ յետ իմ մնայ,
Ո՛վ տանուտէր սբ. քահանայ,
Թէ երէց ես կամ աբեղայ,
Յորժամ որ մեծ աւրըն գայ,
ԸզՏանացոյցս յառաջ արայ,
Եւ դու յետսն կամկար զնայ,
Ի փորդ երկ մի չըկայ,
Բայց միայն ձայն է կու զըռայ,
Տանացուցին մի՛ մեղադրեր,
Եւ ոչ գրողին մեղանք մը կայ,
Գնայ եղիր աւագերէց,
Ի փորըդ լից միս ու քուֆթայ,
Եւ յորժամ մեծ տաւներըն գայ,
Ժամ ասողին հարկիք սորայ։
Այլ զայս գիրքս թող նա բանայ,
Որ ի փոքունց վարժեր է ի նա,
Բանայ և շուտով իմանայ,
Լիով ասէ զդրեալն ի սմայ։
Մի՛ գիտենար դու քու մտաւքդ,
Թէ սորայ գրօզն է մասխարայ,
Զի շատ ամաւթի հանդիպայ,
Եւ ի ժամատեղաց վըրայ։

Բ

Եւ զՅովասափ գրիչս յիշել, ո՛վ ընթերցող, ի թվին Հայոց ՌՁԷ (1638)։

1100

ՃԱՇՈՑ

ՋՀՍԳ, № 78 (1441 թ.) տե՛ս նաև «ՀԱ», 1926 թ., էջ 245

58 Նիկողոս Ղազարին, Հօռոմսիմային, Վարազին, Տրդատին, Յովսէփին, Մարիամին, *և այլ ամենայն զարմից և զաւակաց նոցին։*

Ալանգուն *որդին տէր* Խաչատուրն *գնեց* զՆորհատին Խազին *արտն իւր հոգւոյն և իւր ծնաւղացն հոգւոյն եւ եղ յիշատակ ի դուռն Ս. Հրեշտակապետն, ի թվին ՌՁԷ (1638) Լ. ՂԶ* (sic) *Աստուած ողորմի իւր ննջեցելոցն հոգին. ամէն։*

1101
ՇԱՐԱԿՆՈՑ, ՊԱՐՁԱՏՈՒՄԱՐ

«Բանբեր Մատենադարանի», № 9

Գրիչ՝ Ագսենտ

442 Եաղբիւլը եազկան պու պիթիքնի Ագսէնդ տէր Գրիգոր ավաքերէց օղլու եաղբլտը. թվին ՌՁԷ (1638)-սինա[57]։

1102
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վ. Ագուլիս «Արարատ», 1911 թ. տե՛ս նաև «Բանբեր Մատենադարանի», 11, էջ 415

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ

Ա

386 Ի թվին ՌՁԷ (1638) գրեցաւ գիրքս այս։ Զմեղաւորս Յակոբ սարկաւագս յիշեցէք ի մեղաց թողութիւն, և տէր Յիսուս Քրիստոս զձեր սխալանսն թողցէ, և որոց ամէն ասեն։

Գրեցաւ յանրարի ժամանակ, յաւրինակէ սբ. վարդապետին Գէորգեայ։ Զժառանգաւղսդ աղաչեմ խնամաւք վաստակել ի սմա, զի ծանր տառապանաւք գրեցի զսա, և որ խնայէ, ինքն խնամի յԱստուծոյ. ամէն։

Բ

384 Ո՛վ եղբայր, զցանկ Ղետականիս զկնի ցանկի Ելից գրոցն գիտ և զստացող սորա յիշեա։

1103
ԱՒԵՏԱՐԱՆ (1492 թ.)

Արծնեան, «ՀԱ», 1961 թ., էջ 132

Գրիչ՝ Սուքիաս

Դարձեալ յիշեցէք զվերջին նորոգաւղ սբ. գրոցս զբարեմիտ Աճապիանս և զհայրն իւր՝ զխոճայ Ամիրասիս, և զմայրն իւր՝ զԱրգուիանս, և զեղբայրս իւր զՄուրատն և զՀրմուզն, զՍաֆարն և զԳալպապն, և զՄնացականն և ամենայն արեան մերձաւորս՝ կենդանիս և հանգուցեալս ողորմեաց, և տուր նոցայ ըստ կարեաց իւրեանց. ամէն։ Եւ դարձեալ կրկին անգամ աղաչեմք՝ ով ոք կարդայք կամ աւրինակէք, դոցայ մեղաց թողութիւն խնդրեցէք ի յԱստուծոյ։ Թվին ՌՁԷ (1638) նորոգեցաւ, և զմեղաւոր Սուգիասս յիշեցէք ի Քրիստոս[58]։

1104
ԱՒԵՏԱՐԱՆ

Թորոս աղբար, Բ, էջ 439—440

Գրիչ, ծաղկող՝ Սահակ քահանայ

...Սահակ սոսկ անուամբ քահանայ... և Մեսրոբ որդեակն իմ, շնորհիւ Տեառն սկսաք և... կատարեցաք զսբ. Աւետարանս գրելով և ծաղկե-

[57] «Այս գրքի մեղավոր գրողն տէր Գրիգոր ավագերեցի որդի Ագսենտն է. գրվեց 1087 (1638) թվականին։ Դիլտղերենից թարգմանել է հունգար անվանի դիլշաղագետ և հայագետ դոկտ. Էդմոնդ Շյուցը. (էջ 442, ծանոթ. 2)։

[58] Ձեռ-ի նորոգողը հավանաբար եղել է Սուքիասը, իսկ նորոգել տվողը՝ Աճապիանը։

բանդ զարդարելով ի լաւ և յընտիր աւրինակէ, ի մեծ թվականին Հայոց ՌԶԷ (1638) ի հայրապետութեան տեառն Փիլիպպոս կաթողիկոսի... բարեմիտ և երկիւղած քահանայն Ոսկան անուամբ ի կերտէն Տիգրանայ, մնացեալ արիութեամբ... և ետ զայս քաղցրատեսակ և արծաթապատ սբ. Աւետարանս, որ է ի մէջ սորին մրգաբեր պտղովք, այսինքն ոսկիակազմ գրովք, երփներփնեան դունովք և ծաղկալի իբրև զդրախտն եղեմայ... յիշեցէք... զմայրն Աղամաք...։

1105

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Աղավնունի, Այցելուք, էջ 82-83

Գրիչ՝ Յոհան
Վայր՝ Երուսաղէմ

Զտէր Կարապետ երջանիկ բաբունապետն և աստուածաբան վարդապետն և զիւր աշակերտն՝ զտէր Ստեփանոսն, և զայլ միաբան եղբարսն, որ կան այժմ ի սպասաւորութիւն Ս. Յակոբայ՝ զՅակոբ եպիսկոպոսն, զտէր Գրիգոր վարդապետն, որ բազում ամօք կայ առ գամբարանիս Ս. Յակոբայ, զտէր Ստեփանոսն, զտէր Մկրտիչն, զտէր Մելքիսեդեկն. զեղկելի Յոհան գրիչս, զտէր Վարգան, զտէր Յովհաննէս լուսարարն, և զմիւսն զտէր Վարդան Ս. Յարութեան լուսարարն, զտէր Աստուածատուրն, զտէր Յովհաննէսն զԱնապատցի, զտէր Նիկողոսն, զտէր Սահակն, զտէր Խաչատուրն, զտէր Պետրոսն, զտէր Սիմէոն, զտէր Գաւիթն, զտէր Հայրապետն, և դասս սարկաւագաց՝ զՇաղուաթն, զապտալ Գրիգորն, զԱմիրխան զտօնապետն, զմիւս Գրիգորն, զՄանուկն, զԿարապետն, զՍիմոնն, զՄնդեան Յակոբն և զտնտես Մեսրոպն, զՍ. Յակոբայ տնտես Մարտիրոսն, զթղթիս կոկող Մելքոնն, զՊողոսն և զհաճի Սաֆարն, և զթերզի Յակոբն. զնուրիշանն, զՄիրհնանն... յիշեցէք զտէր Գրիգոր հայրապետն սբ. Երուսաղիմայ և զայլ միաբանսն, զոր ի վերոյ գրեցաք...[59]։

1106

ԱՒԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 181—182

Վայր՝ Ստամբոլ

...Արդ՝ գրեցաւ սա ի թվին Հայոց ՌԶԷ (1638) ամին, ի քաղաքն Սամբոլ, ձեռամբ մեղսաթաւալ գրչի ումեմն անարժանի...։ Զսաացող սորա, այլ և զաշխատողս ի վերայ սորա յիշեցէք, որ և ցանկացող եղև սբ. Աւետարանիս մահտեսի Տիպրիկցի Խութլուշն, և ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, և արար յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Յակոբին և Խանմէլիքին, և եղբօրն՝ Գրիգորին և այլ ամենայն մերձաւոր ազգականացն, զսա եղեալ ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ...։

---

[59] Ընդարձակ հիշատակարանից բերված է միայն միաբանության անդամների ցուցակը, չի բերված ձեռ-ի գրչության տարեթիվը, այն նշում է Աղավնունին։ Թեև այս հիշատակարանը ՄՅԶԵԹ, VI հատորի № 1919 ձեռագրի հիշատակարանի մի մասն է (էջ 371—376), բայց այնտեղ այս հատվածը չի պահվել։ Պահվել է միայն վերջի երեք տողը։

1107
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Երևան, № 3368, հմմտ. Ֆ. Ֆինկ, էջ 36-37։

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Յոսաւոզ

ա

265բ Փառք...։ Արդ՝ շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցայ զսահմանեալ տառս կանոնաց՝ Առաքելոցն սրբոց և երից սբ. ժողովոյն, սբ. հարանցն հայրապետաց և ընդ ժամանակս սբ. եպիսկոպոսաց և թագաւորք ժողով եղելոցն ամենայն աղգաց։ Եւ մանաւանդ յատուկ մերայնոց աղգացս հայրապետաց, եպիսկոպոսաց և սբ. վարդապետացն, զոր ժողովեալ են իմաստունքն սբ., մեծաւ աշխատութեամբ. և եդեալ են ի մի տուփ, և ցանկով փակեալ, և համարով նշանակեալ, զի դիւրագիւտ լիցի խնդրողացն վաղվաղակի զտանել վկայական բանիւք բազմաւք մին կանոնին ի Ժ (10), ի ԺԵ (15), Ի (20) մինչև Ծ (50) անգամ, այլ դո համաձայնութիւն որպէս ի ձեռնադրութեան կոչումն աստիճանաւորաց Թ (9) կարգաց եկեղեցականաց, թէ զորս պարտ է կոչել և կամ զորն ոչ։ Եւ այլ կանոնական օրէնս և սահմանս պիտանիս ի յօգուտ լսողացն։ Արդ՝ և ես անպիտան ծառայս փծուն և ախմար, սուտանուն Կիրակոս, էի և եմ և եղէց վիճակ և ժառանգութիւն միայն թէ ընկալցի անարգամեծար Տէրն։ Որոյ շնորհիւն սկիզբն արարի սբ. առաքելոց և հայրապետաց կանոնիս և պատարագի խորհրդոյ մեկնիչիս, ի քաղաքն ի Յոսաւոզ, որ մականուն Թէֆիրտաղ կոչի, ի դուռն ծովահայեաց Ս. Յոհանէս նորընձայ աւետարանիչ անուն եկեղեցոյս, ի հայրապետութեան
266ա էջմիած//նայ տէր Փիլիպպոսին և տեզոյս առաջնորդութեանն քաշ հռետոր և ջատագով յօրինացն Աստուծոյ մեծ և անուանի և ամենայն իմաստիւք լի Դարանաղու Գրիգոր վարդապետին, և ընդ հովանեաւ նորին սքանչելագործ Ս. Թեղթափին, որ Թումայ առաքեալն մասն ի մէջն կայ, և առ հուպ յինք ունի և միւս սքանչելագործ Վասլոյ Ս. Նշանին, որ Թագաւոր կոչի։

Եւ արդ՝ սկսայ ողորմութեամբ և աւգնականութեամբ սոցին յանգ հանի։

բ

266բ Արդ՝ ես անկեալ անպիտանի,
Ծառայս փծուն մեղօք ի լի,
Ըզկանոնգիրքս աւարտ հանի,

Եւ ի խնդիր տէր Պետրոսի:
Ի թվին Հայոց հազար ամի,
Ութնուն և ութ յարաբարդի (1639),
Ի քսան երկու ամսոյն մարտի,
Որ արեգակն ի Խոյն մտի:
Զեռս երթայ դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակող,
Զձեզ աղաչեմ ո՛վ ընթերցողք,
Վասն իմ առ Տէր լինիք մաղթող:
. . . . . :

Ստացող՝ Պետրոս երէց

Գ

266ա Իսկ ես՝ անարժանս և անպիտանս, վատթարս և անպտուղս ի բարեաց, ծառայս ամենայն ծառայիցդ Աստուծոյ Պետրոս երէցս խնդրեցի զաւրինակ Կանոնագրգիս և զխորհրդոյ մեկնիչիս ի Գրիգոր վարդապետէն իմմէ, և եմ ծառայ և սպասաւոր նորին ի խնդրելն իմոյ ոչ ձանձրացաւ, այլ սիրով շնորհեաց ինձ: Եւ ես փափագանաւք և իմ հալալ արդեանցս և վաստակի իմոյ ետու գրել իմոյ անձին:

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք քահանայից և մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, հայցեցէք ի յապէնիազ Արարչէն և ի յՈրդոյն միածնէն, զի պահեսցէ զնայ անսայթաք կենաւք շահ անշիջանելի, ի մէջ եկեղեցոյ, և յետ փոխման նորա ինքն Քրիստոս զփոխարէն և զտրիտուրն միոյն Ճ (100)-ապատիկ և հազարապատիկ և բիւրապատիկ հատուցէ դասելով ընդ ճշմարիտ և աստուածաբան վարդապետաց դասուն...:

1108
ՅԱՅՍՄԱԻՈԻՐՔ

Ղ. Փիրղալեմյան, «Ընչարք», հտ. Բ, № 521 (1601 թ.)

431 Դարձեալ յիշեցէք... վարպետ Միրոֆին, ուսթայ Շիրաֆին և իւրեանց ծնողացն՝ Խղաթին և Սօլթանին, և իւրեանց կողակցացն՝ Բէկիսօլթանին և Փաշայբէկուն, և իւրեանց որդոցն՝ Զիրոֆին, Աղամիրին... մեծ պա-
432 պուն՝ Գրիգորին, որ մականուն Կարմիր լոր // ասի, մեծ մամուն՝ Նէֆին... որ լաւ բարութիւն արարին՝ Լ (30) ղուռուշի խաչկալ մ՝ շինեցին Տիրամայր Ս. Աստուածածնին, ԺԵ (15) ղուռուշի խաչկալ մ՝ Գաբրիէլ Հրեշտակապետին, առաւել պայծառ և գեղեցիկ քան զտաճարն Սողոմոնի... Թվին ՌԶԸ (1639) Առաջնաւորի բարիկենդանեաց[1] սկիզբն արարին խաչկալին և աւագ Զատկի շաբաթ օրն[2] աւարտեցին երկու եղբայրն վրան բանան:

---

[1] Այսինքն՝ 1639 թ. փետրվարի 4-ից մինչև 10-ը:

[2] Այսինքն՝ 1639 թ. ապրիլի 13-ին, որովհետև այդ տարում Զատիկը կլինի ապրիլի 14-ին, կիրակի (ըստ հուլյան տոմարի):

1109
ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ
Երևան, № 7368

Ստացող՝ Ալէքսանոս
Վայր՝ Կաֆայ

ա

449բ Փառք...։ Ես՝ մեղուցեալ մահտեսի Ալէքսանոս բաղում փափագանօք զայս սբ. Յայսմաւուրքս տվի գրել ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց առ հասարակ ամենեցուն. ամէն։ Եւ Յայսմաւուրքս այս ճշմարիտ նոր աւրինակ է...։

450ա Արդ՝ ցանկացող եղէ ես՝ մեղաւոր մահտեսի Ալէքսանոս այս լուսազարդ և աստուածաշունչ սբ. գրոց՝ Յայսմաւուրացս, և տվի գրել զսա յիշատակ ինձ մեղաւոր մահտեսի Ալէքսանոս, և եղբօրն իմոյ՝ Պետրոսին և Պողոսին, հա[յ]ր Անտոնին, և հաւրն իմոյ՝ Առաքելին, և մաւրն իմոյ՝ Մայրամին, և իւր փեսին՝ Մինասին, և դստերն՝ Մայրամպիքային, Եաղուպշային, Նաղաշին, Խաչերեսին, Սէֆէրպալիին, և Խաթունին, և Ալթունին, և կենակցին իւրոյ՝ մահտեսի Խասպիքային, և ամենայն արեան մերձաւորաց իմոց։ Եւ եղին յիշատակ զսա ի դուռն Ս. Յակոբ եկեղեցին անջնջելի յիշատակ մինչ ի գալուստն Քրիստոսի։ Ով որ չունի հրաման զայս սբ. Յայսմաւուրքս հանելոյ ի դրանէ Ս. Յակոբ եկեղեցին, և թէ որ յանդգնի և հանէ զսա...։ Աւարտեցաւ գիրքս այս ի թվականութեանս Հայոց ՌՁԸ (1639), մայիս ամսոյ ԻԵ (25), ի դուռն Ս. Կարապետ եկեղեցոյն, ձեռամբ հողոյ հաւասար Խաչատուր Լէհցի, ի յաշխարհս Կաֆայ, ի թագաւորութեան սուլթան Մուրատին, և ի կաթողիկոսութեան տեառն տէր Փիլիպպոսին, ի առաջնորդութիւն տէր Խաչատուր արքեպիսկոպոսին, և միջնորդութեամբն տէր Մաղաքիային և տէր Գրիգորին, և շատ աշխատանք յորդորելով և աւրհնելով մինչօր մահտեսի Ալեքսանոսն հականերին և Յայսմաւուրքն գրել տվին. Տէր Աստուած ողորմի իւրեն ծնողաց հոգոյն...։ Ո՛վ ընթերցողք, յիշեցէք յաղօթս ձեր զմեղուցեալ գրիչս զԽաչատուր զԿամէնցին և Աստուած ողորմի ասացէք, եւ աղաչեմ զձեզ, որ անարհեստութեան իմոյ չմեղադրէք, զի սիրտս տրտում էր յամենայն կողմանէ, և Քրիստոսի մարդասիրին փառք...։

բ

Գրիչ՝ Խաչfo

3ա Մանաւանդ զստացող սբ. գրոցս մահտեսի Ալէքսանոսին և կողակցին իւրոյ՝ մահտեսի Խասպիքային, և իւր փեսին՝ Մինասին, և դրստերն՝ Մայրամպիքային, հօրն՝ Առաքելին, և մօրն՝ Մայրամին, աղբօրն՝ Պետրոսին և Պողոսին, և իւր զաւակացն և ամենայն մերձաւորացն, և զմեղուցեալ գրիչս զԼէհցի Խաչfo, կարդացողացդ և լսողացդ...[3]։

գ

34ա Մանաւանդ ստացողի գրոցս մահտեսի Ալէքսանոսին...[4] և օրինակի ջնորհողին՝ խոճայ Մսրին, և եկեղեցւոյս քահանայիցն՝ տէր Գրիգորին,

[3] Նման և համառոտ հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 4բ, 6ա, 12բ, 14ա, 15բ, 19ա, 20ա և բազմաթիվ այլ էջերում։

[4] Նորից թվում է բ հիշատակարանում նշված անունները։

և կարդացողիս մեղաւոր և անարժան Յովանէս իրիցուս, որ բաղում աշխատանօք մեզ երախտիք է ցուցէր, և մեղապարտ գծողի Լէնցի Խաչէոյիս, կարդացողաց և լսողաց...։

Դ

80ա Ո՛վ սբ. ընթերցող, թէ կամիս որ կարճաբանես, մինչև այս կարմիր գիրս կարդայ, այլ մնացածն աւրմ ալ կարդայ։ Ապա կու խնդրեմ ի ձեզանէ, որ լման կարդայք զպատմութիւնս և զմեղապարտ գրչակս յիշէք...։

Ե

198ա Ո՛վ պատեալի հայր իմ, յորժամ յետ ելանելոյ Ադամայ Յայսմաւուրքն հասանիս յառաջն կանխաճառութիւն կարդայ, զէրայ յետ յառաջ գրեցի, թողութիւն արայ Տէր, եղբայր իմ, ժամանակիս դառնութենէն միտքս Ե մոլար, խելքս Ե տկար. ո՛հ, ո՛հ. վա՜յ անձն իմ։

1110

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 4601 (ԺԵ դար)

Նորոգող, կազմող՝ Գրիգոր երէց
Վայր՝ Պաղնայսարայ

217ա Փառք...։ Կազմեցաւ վերըստին և նորոգեցաւ սբ. Աւետարանս և գանձս աստուածային, իմանալի արեգակս և երկիր պագարանս քրիստոնէից, ձեռամբ անիմաստ գրչի, հողոյ հաւասար Գրիգոր իրիցու ծառայ Աստուծոյ, ի թուականութեանս հայկազան սեռի ՌՁԸ (1639), յուլիս ամսոյ յԲ (2), ի կաթուղիկոսութեանն Հայոց տեառն տէր Փիլիպպոսին, և յաթոռակալութեանն տէր Խաչատուր արքեպիսկոպոսի, ի քաղաքն Պաղնայսարայ, ի գուռն Ս. Աստուածածնին։

217բ Արդ՝ գրեցաւ սայ// յիշատակ Խաչատուրին, Խոճայնանին, Մինասին և կողակցին՝ Մերտինին, և իւր որդոցն՝ Մարկոսին, Յովանէսին, և դրստերցն՝ Ազիզին և Մարթային, և այլ յամենայն արեան մերձաւորաց իւրոց, ի վայելումն Ս. Աստուածածին յեկեղեցւոյն, անջինջ յիշատակ։ Ոչ ոք չունի հրաման ծախելոյ կամ գրաւելո[յ], զայս սբ. Աւետարանս ազատ, ազատ է առաջի Աստուծոյ...։

1111

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

ՅՁԱԲ, № 232

Գրիչ՝ Ստեփանոս երէց

Ա

1064 Ընտացողք կանոնական դատաստանացս, հոգով և մարմնով զԹուրքէոս[5]. զաշակերտ մեծի ռաբուն Գրիգոր վարդապետի, յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ դասք ուսումնասէր լուսերամիդ, և գծողի գրոյս զըՍտե-

[5] Ինչպես հաղորդում է ցուցակի հեղինակը, այնուհետև բաց տեղ է թողնված։

փանոս սուտանուն էրէցս արժանի առնէք յիշել ի քաղցր կամս ձեր զարժանն յիշատակելոյ զերշանիկ բարունն ի տէր Յիսուս Քրիստոս, ո՛վ սբ. ընթերցողք, և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յօիտեանս. ամէն։

Բ

Փառք...։ Արդ՝ աւարտեցաւ Դատաստանագիրքս ի թվին ՌՁԸ (1639). աւգոստոսի ԻԸ (28), յիշատակ Պէկլէրին, Վարդէնատին, Զաքարիային և ամենայն արեան մերձաւորացն։ Եթէ ոք կարդա կամ օրինակէ, յիշեցէք ի սբ. աղօթս ձեր զստացող գրոցս զվերոյ դրեալն զՊակլարն, Վարդէնատն և զորդիս նոցա՝ Զաքարիայ և զամենայն զարեան զմերձաւորսն։

1112
ՇԱՐԱԿՆՈՑ
ՈՅԶՄՎ, № 1270 (1601 թ. առաջ)

ա

000 Յիշատակ է Շարակնոցս մահդեսի Ղայաթին հոգւոյն, որ ըստացաւ սբ. գիրքս աստուածային իւր հալալ արդեանցն և ետ յիշատակ իւր ընչեցելոցն՝ Ներսէսին, Իպաշիրին, Շահունին, Սուլթանին, Վարդխաթունին. Պաղասարին, Միքայելին, Գոճարին, Շինարին, Փաշային, Յովանիսին. հոգւոյն և այլ ասկականացն, ի ձեռն Մկրտիչին։ Թվին ՌՁԸ (1639)-ն սեպտեմբեր ԻԵ (25)։

Բ

Ղայաթին և Ներսէսին հոգւոյն և իւրեանց ծնաւղացն, որ մեզ աւգնութիւն արարին գնած ժամանակն, որ Բ (2) ոսկի տվին. Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն։

1113
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2368

Գրիչ՝ տէր Ներսէս

406բ Մեղաւոր և անարժան ծառայ Աստուծոյ տէր Ներսէս, որդի Հօղուպ վոյթի Կամենցի, ձեռամբս իմով գրեցի, թվին ՌՁԹ (1639), հոկտեմբեր ամսոյ ԺԹ (19)[5], օրն շաբաթ[6], բարեկամ տէր Ոսկան[7] վարդապետին։

---

[5] Հայոց ՌՁԹ թվականը սկսվում է 1639 թ. հոկտեմբերի 13-ից, հետևապես Հայոց ՌՁԹ թվականի հոկտեմբերի 19-ը կընկնի 1639 թ. մեջ, և այդ օրն էլ շաբաթ է, իսկ 1640 թ. հոկտեմբերի 19-ը կլինի երկուշաբթի. ուստի սույն հիշատակարանը գրեցինք 1639 թ. շարքում։

[6] Բնագրում «էշշ». շաբաթվա յոթերորդ օրը, այն է շաբաթ։

[7] № 2368 ձեռ-ի գրիչը, վերջինիս հիշատակարանը տե՛ս 1641 թ. շարքում։

1114
ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ
Կամենից, էջ 187—188

Գրիչ, ստացող՝ Անտոն
Վայր՝ Սէջով

Գրեցաւ և աւարտեցաւ այս Աղօթամատոյցս ի քաղաքն Սէջով, ընդ հովանեաւ Ս. Սիմէոնի եկեղեցւոյն, ձեռամբ Անտոն կրօնաւորի, Իրfojի որդւոյն՝ Սերեբfոյենցս, ի վայելումն անձին իմոյ, ի թուականութեան յաբեթական տոմարիս ՌՁԸ (1639), հոկտեմբերի ԻԳ (23), օրն չորեքշաբթի, ի հայրապետութեան Հայոց տէր Փիլիպպոս կաթողիկոսին, և առաջնորդութեան Լեհաց տէր Նիկողայոսին, և ի թագաւորութեան Դ (4) Վլաաիսլաւին, զոր տէր Աստուած փառօվ վայելել տացէ. ամէն։

1115
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՏԵՐԱՎՋ, № 514

Գրիչ՝ Ստեփանոս Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

788 Փառք..., որ ետ կարողութիւն տկար, տարտամ և մեղսամած, և անարուեստ գրչիս նուաստ, և ներգևեալ և անարժան Ստեփանոս մեղօք լցեալ երիցու հասանել ի յաւարտ աղօթիցս, որ ասացեալ է ի Վարդան վարդապետէ, որ է մաղթանք ի բոլոր ամենայն սբ. տնաւրինականքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յԵրուսաղէմ՝ ներքոյ և արտաքոյ։ Այլ և ունիմք ասացեալ զազաւթս Նարեկացուն Գրիգորի սբ. վարդապետին, զոր բաղում ջանիւ ծայրաքաղ արարեալ գրեցի բազմավէր հոգւոց բժշկութիւն և ի թողութիւն մեղաց, որք հաւատով ընթեռնուն և բազում արտասուաք խնդրեն զթողութիւն մեղաց իւրեանց։ Եւ արդ՝ ես մեղուցեալ գրիչս աղաչեմ զդասս լուսերամ կրօնաւորաց և քահանայից, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի սբ. և ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան գրիչս զմեղօք լցեալ զՍտեփանոս անուն երէց Մոկացի, որ անուամբս մեան եմ քահանայ և գործովս հեռի եմ յամենայն բարի գործոց, ունան եմ և թափուր, բայց յուս զԱստուած ունիմ և բարեխաւս զդասս քահանայիցդ, յորժամ հանդիպիք այս աղօթիցս և բուն անաւրինականացս Քրիստոսի ի սբ. քաղաքս Երուսաղէմ, կարդալով կամ տեսանելով նայ, լի սրտիւ և բոլոր հաւատով ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց Ստեփանին և Շնանաւորին, և կողակցին իմոյ՝ Մրուաքին և այլ ամենայն արեանառու մերձաւորացն, և որք յիշէք զմեզ, դուք յիշեալ լինիք առաջի ահաւոր ատենին Քրիստոսի. ամէն։

Գրեցաւ Աղաւթեաց գիրքս ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ աստուածընկալ սբ. լուսաբուխ գերեզմանին Քրիստոսի և յայլ սբ. տընաւրինականացն՝ Ս. Յակոբայ գրչագիր[8] սբ. դամբարանին, և Ս. Փրկչին և Ս. Հրեշտակապետին և այլ սրբութեանցն, որ աստ կան հաւաքեալ։ Եւ ի

[8] Թերևս՝ գլխագիր։

յառաջնորդութիւն սբ. ուխտիս և առաքելական սբ. աթոռոյս Հայոց տէր Գրիգոր սրբազան արքեպիսկոպոսին, ի թվականիս Հայոց ՌՁԹ (1639) ամին, որ թագաւորն զԲաղդաա առաւ[9], և դարձաւ գնաց Ըստամպոլ նստաւ ի թաղթն իւր։ Եւ աւարտ եղև գրոցս ի հոկտեմբեր ի ԻԱ(21) և Հայոց նաւասարդի ի ԺՁ (16)[10], զոր բաղում փափաքանօք գրեցի ղաղաւթքներն Վարդանայ և սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, ի փարատումն և ի բժշկութիւն ամենայն հիւանդաց առողջութիւն և մեղաց թողութիւն. ամէն։

1116

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՏՁԵԳ, VI, № 1972

Վայր՝ Կորընթոս

ա

552 Աւրհնեալ հոգիդ սբ. Աստուած ճշմարիտ, ես սկսայ և դու կատարեա. թվին ՌՁՁ (1637) սեպտեմբեր։

Բ

553 Տէր Բարսեղի է Աւետարանս, յիշատակ ի Խաթունփաշային հոգոյն, և որդոցն իւրոց՝ Գրիգորին և Սուլթանփաշային. թվին ՌՁԸ (1639) գրեցաւ Աւետարանս Կորընթոս։

1117

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

Երևան, № 1883

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Սուրս

ա

3ա Գիրքս պատմութեանց Հայոց հաւաքեալ Մովսէսի Խորենացոյն, զոր ստացաւ Մարտիրոս բարունապետն և ետ գրել զսա յաշակերտ իւր։

Բ

61ա Գիրքս յիշատակ է Մարտիրոս վարդապետին[11]։

Գ

147բ Վա՜յ զծաւղիս թէ ինչ համար տի տամ ստեղծողիս, որ մեղօք կորուսի զիմ հոգիս, և եղէ բաժին գեհենի։

---

[9] Օսմանյան թուրքերի կողմից Բաղդատի գրավումն ըստ հայկական այլ աղբյուրների տեղի է ունեցել 1638 թ. դեկտեմբերի 14-ին (Մժ, II էջ 270, Մժ, I, էջ 302). թեև ուրիշներն էլ նշում են 1639 թ. (Մժ, I, էջ 242). առանց ամիսը հիշելու։

[10] Հայոց ՌՁԹ սկսվում է հուլյան տոմարի 1639 թ. հոկտեմբերի 13-ից, և որովհետև ձեռ-ի ընդօրինակումն էլ ավարտվել է հոկտեմբերի 21-ին, ուստի Հայոց ՌՁԹ-ին համապատասխան այստեղ նշեցինք 1639 թ.։ Սակայն հայոց ՌՁԹ թվականի նավասարդի 16-ը համապատասխանում է ոչ թե 1639 թ. հոկտեմբերի 21-ին, այլ 28-ին։

[11] Նման հիշատակարաններ տե՛ս նաև ձեռ-ի 14բ, 16ա, 25ա, 26ա, 143ա և այլ էջերում։

148ա Ով սբ. ընթերցողք, անմեղադիր լերուք վասն անգրիլ տեղաներուն, ղի աւրինակն հին էր ու ոսլայ էր ձգած, և զոսլէն ոչ էր գրած ւ այլ աւրինակ չի գտաք որ գրէ[ի]. վա՜յ ինձ Ռ (1000) բերան։

Դ

151բ Յաւրինակ չէր գրած, տեղ թողի, թէ այլ աւրինակ գտանէք նա, գրեցէք, ղբիար թղթեր այլ[12]։

Ե

156բ Փառք..., որ կարողացոյց ղիս, զթմբրեալս, ամենայն տեսակս մեղաց ղանյիջելի և զեղկելի, մեղսասէր և չարագործ Կարապետ սուտանուն ծրագրել զպատմութիւն թագաւորացն մերոց։

Աղաչեմ զձեզ զամենեսեան յիշելոյ և թողութիւն խնդրելոյ յանոխակալ և յանյիշաչար տեառնէն զՄարտիրոս վարդապետն զքաջ հեռետոր և զանյաղթ փիլիսոփայն, և ղծնաւղսն իւր ըստ մարմնոյ[13]

Զ

157բ Փառք..., որ կարողացոյց զիս, զթմբրեալս, ամենայն տեսակս մեղաց ողորմոյ արժանի առնէք զանպիտան գծողս՝ սուտանուն Կարապետս և Աստուած ողորմի ասէք ինձ և ծնողաց իմոց Յոհանէս քահանային և Վարդենաթունին, և զաւակաց իմոց տէր Յոհանէսին և կնոջն՝ Մրջանին, և որդւոցն՝ Ստեփանոսին և Վարդանէսին և Յովանէսին. ամէն։ Կրկին անգամ աղաչեմ զձեզ, որ լի բերանով Աստուած ողորմի ասէք ինձ հաբեբայ Կարապետիս և կնոջն՝ Խաթունաղին, և զաւակաց տէր Յոհանէսին և կնոջն՝ Մրջանին. ամէն։

Գրեցաւ Պատմագիրքս ի յերկիրս Մոկաց, ի գեղս որ կոչի Սուրս, ընդ հովան[ե]աւ Ս. Յովաննու Մկրտչին և Ս. Գէորգեա[յ] զաւրավարին, ձեռամբ սուտանուն Կարապետիս և որդւոյն իմ՝ տէր Յոհանէսին, ի թուականիս մերոյ ՌՁԸ (1639)։

1118

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 3212. տե՛ս նաև ՏԵՐԱՎՋ, № 359, էջ 553, № 369, էջ 563

Գրիչ, ստացող՝ Խաչատուր Երէց
Վայր՝ Սպահան

87ա Աստուածաշնչին քաղուածուն գրեցաւ ձեռամբ Խաչատուր իրիցիս, ի թուականիս Հայոց ՌՁԸ (1639), ի Շաւղ քաղաքն՝ Ըսպահան։ Յիշատակ է ինձ։ Սխալանացն ներել թողութիւն։ Մեղ և ձեզ Քրիստոս Աստուած ողորմեսցի. ամէն։ Որ առատն է ի տուրս բար[ե]աց. ամէն։

[12] Նման հիշատակարաններ տե՛ս նաև 155ա, 156ա, էջերում։
[13] Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

1119

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

Երևան, № 4136

Գրիչ՝ Պօղոս երէց
Վայր՝ Նորաշինք

ա

66ա *Ջստացող սբ. դրոցս* Արիստակէս *վարդապետի և ղծնողսն իւր, և ղեղբարցն միաբանից ամենեցուն. ամէն։ Եւ մեղուցեալ զծողս յիշեա՛ ի Տէր*[14]։

բ

459ա *Փառք...։ //... ըստ այսմ գաղափարի և պատուական [քահանայ։* Յովանէս*]*[15] *աստուածահաճոյ վարուք կեցեալ ըստ հոգևորականին...։ Խորհուրդ իմն ի մէջ բերեալ տալ գրել զպատմութիւնս մարտիրոսաց։ Զոր իմացեալ ամէներջանիկ քաջապետն և մեծ գլուխն արհի[ական տէր* Զաքարիայ*]*[16] *յօժարեցոյց զսա ի գրութիւն բացայայտութեան աղօթից սբ. պատարագին...*

459բ *Եւ գրել զսա ի հալալ ընչից իւրոց ի գաւառիս որ կոչի* Նորաշինք, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և վիճակիս Ըստաթէի սբ. առաքելոյ և սբ. նահատակաց Գրիգորի։ Ի թվաբերութեան Հայոց ՌՁԸ (1639), յառաջնորդութեան տէր* Յովանէսին։

գ

Այլ և աղաչեմ, զամենասուրբ հարք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղսամած սուտանուն Պօղոս *իրիցոյս թողութիւն շնորհեցէք մեղաւորիս։*

1120

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 4829 (1444 թ.)

Նորոգող՝ Թումա
Վայր՝ Գաւաշ

304ա *Փառք...։ Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և Աստուած ողորմի ասացէք տէր* Արսէնին, *հաւրն՝* Փախշանին, *մօրն՝* Սուլթանին. *եղբարցն՝ տէր* Յովանիսին, Վարդանիսին *և միւս* Վարդանին, Թումին. *քրւերցն՝* Գուլաղին, Բէկին, Խէրէֆին. *ամէն։...։*

Եւ՝ տէր Արսէն *խէրապէտս տուի զսբ. Աւետարանս նորոգել յ[իշա]տակ ինձ և ծնօղաց իմոց...*[17] *Եւ առաւել* Գաւաշից *տանուտերաց, մեծի և փոքու առ հասարակ Աստուած ողորմեսցի. ամէն։*

Աստուած ողորմեա՛ զառաձեալ մեղօք Թումայիս, *որ զարդարեալ նորոգեցի զԱւետարանս ի թվին ՌՁԸ (1639)։ Մի բերան Աստուած ողորմի ասացէք մեղաւորիս և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

---

[14] *Նման մի հիշատակարան տե՛ս նաև ձեռ-ի 93ա էջում։*

[15] և [16] *Ուղղանկյուն փակագծերի մէջ եղածը զգուշությամբ քերված է, բայց կարդացվում է։ Արդյո՞ք գրչի արածն է։*

[17] *Դարձյալ կրկնում է վերևում նշված անունները։*

1121
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 5300

Գրիչ՝ Աւէտ
Վայր՝ Գետաթաղ

478բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կո//չի Շարակնոց, ի թվին Հայոց ՌՁ և Ը (1639)-ի, ի լաւ և ընտիր աւրինակէ, առաջին վարժապետին և քաջ քարտուղարին Գրիգորի մականուն Խուլ կոչեցեալ, ի յերկիրս Որոտան, ի գեղս որ կոչի Գետաթաղ, ընդ հովանեաւ Ստաթէի Ս. Առաքելոյ, որ են հաւաքեալ աստ ԹՌ և ԸՃ (9800) սրբոց նշխարս և սորին առաջնորդաց Մեսրովբ և Ովանէս եպիսկոպոսացն, զոր և տէր Աստուած ընդ երկայնակեացս արասցէ, և ինձ անարժան գծողի Աւէտ աշխարհականի, զոր ոչ ունիմ անուն յիշման ի վերայ երկրի, և զորդին իմ՝ Եսային, և զծնաւղսն իմ՝ զՄասսեին և զՍալիհաղն, և զեղբարքն իմ՝ զԹովմէն և զԳրիգորն, որ Գ (3) ամեա փոխեցան ի աշխարհէս, և զքեռն իմ՝ Եսփրոսինէն, որ ԲԺ (12)-ան ամեա փոխեցաւ առ Քրիստոս։ Լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմին բարբառէցէք։ Ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսի, փոխանորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի դառն և ի նեղ ժամանակի, զոր նեղեալ եմք անաւրինաց և անիրաւ պահանջողաց, վասն բազում մեղաց իմոց։

479ա Եւ ս//տացեալ զանառիկ փարթամութիւնս բարեմիտ և հեզահոգի, սրբասնունդ քահանան տէր Մինասն, և ղծնաւղսն իւր՝ զՄաթէոսն և զՊիլիպին, և զեղբարքն իւր՝ զԱնդրեասն, և զՂուկաս սարկաւագն, որ և ԺՆ (15) ամեա փոխեցաւ առ Քրիստոս, և զքվերքն իւր՝ զՇահումն և զՈւստիանէն, [զ]Մուրգարիտն և զՄարիանն, և զկենակիցն իւր՝ զԳոլսաանն, յիշեցէք...։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. երգողք և ընթերցողք. յորժամ ի ձեռն արկէք զսա՝ կարդալով կամ աւրինակելով, Աստուած ողորմի ասացէք ինձ Աւէտ անարժանիս և որդին իմ՝ Եսայուն, և զկենակցին իմոյ՝ Գաղաթին, և Աստուած զձեզ յիշէ. ամէն։ Դարձեալ յիշեցէք զկոկոզ թղթի Շարակնոցիս զԱւագ դպիրն և Աստուած ողորմի ասէք։

1122
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 5363 (ԺԵ դար). տե՛ս նաև ՀՁՎԼ, № 333, էջ 782—784

Նորոգող՝ Թումա

ա

248ա Ուստի և տեսեալ զսորայս մեծութ[իւն և] զանճառ փրկագործութեան խորհուրդ[ն] պատուական և սրբասնունդ քահանայ Սարգիս անուն կոչեցեալ, որ եռափափագ սիրով ետ վերստին նորոգել զսբ. Աւետարանս, և եդ ի բնիկ յուխտ իւր ի Ս. Վարդան, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն՝ Շաղաւաթին և մօրն՝ Բաղչին, եղբօրն՝ Խլղաթին, կոզակցուն՝ Վարդիաթունին, Նուքարին, Թուրանդին, քրւերցն՝ Սալամին, Շաղղադին, հոր-

քւերց Փարիխանին, Գուլաղին, Մարթային. *Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։ Դարձեալ յիշեցէք...*[18]։

Նորոգել տվող՝ Սարգիս

Բ

Ես՝ տէր Սարգիսս *տուի նորոգել զսբ. Աւետարանս ի թվին ՌՁԸ (1639), յիշատակ ինձ և ամենայն մերձաւորաց իմոց, հօր* Շաղուաթին *և մօրն՝* Բաղչին, Խլաթին, Մարտիրոսին, Սալամին, Շաղգաղին *և ինձ մեղապարտ գրիչ* Թումայի *մի բերան Աստուած ողորմի ասացէք, որ նորոգեցի և զարդարեցի զսբ. Աւետարանս և Աստուած ձեզ ողորմի. ամէն։*

1123

ԱԻՕՏԱՐԱՆ

Երևան, Ա 6342 (1443 թ.)

Գրիչ՝ Ստեփանոս

ա

72ա *Արդ զվերջին ըստացող աստուածախօս սբ. Աւետարանիս աստուածասէր և զբարեմիտ* զԱռաքել *քահանայն, որ ստացաւ զսա ի հալալ ընչից և արդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր և հանգուցեալ ծնողաց իւրոց, հօրն՝* Նաղարին *և մօրն՝* Այմէլիքին, *և օրինաւոր ամուսնոյն իւրոյ՝* Հուրիխանին, *և միւս եղբօրն՝* Աղաճանին, *և իւր կողակցին՝* Թամամին, *և իւր որդւոյն՝* Կիրակոսին, *և միւս այլ եղբօրն՝* Ղարախանին, *և կողակցին իւրոյ՝* Մարգարտին, *և իւրեանց ընտանեացն՝* Ապօվին, *և կողակից* Գոճարին, *և իւր որդւոյն՝* Գրիգորին:

Դարձեալ յիշեցէք զԱւաքն *և իւր կողակիցն՝* Մարգարիտն, *հանգուցեալն առ Քրիստոս, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց...։*

Դարձեալ և ով ոք շատ և սակաւ երախտիք ունի սբ. Աւետարանիս յիշեցէք...։

Գրեցաւ ձեռամբ յիշատա[կա]բանս սուտանուն Ստեփանոսի, *ի թուականիս Հայոց ՌՁ և Ը (1639) ամին. և Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Աթիբէգին *և կողակցին՝* Ղուրլուին, *և եղբօրն՝* Ղազարին *և կողակցին՝* Խաթունին. *ամէն։*

Բ

115բ *Մեք* Գալուղարտաշեցիքս՝ Բուտախի *տղէքս ծախեցինք մեր հայրենի Աւետարանս* Դէղմաշինեցի *տէր* Առաքելին: *Ես՝* Աղամս, *ես՝* Էվանէսս, *ես՝* Բուտախս, *ես՝* Բաբէս, *ես՝ միւս* Բաբէս, *ես՝* Իսէս, *ես՝* Մխիթարս: *Մեր վաքիլն, մեր մեծ եղբայր* Մխիթարն *արինք, որ ծախեցինք Աւետարանս։ Զվերոյ դրեալ անուանքս, որ թէ դաւի անեն, նոցա դաւին հետ* Մխիթարին *լինի, այլ ոչ ում բան չլինի հետ Աւետարանին և կամ հետ առնողին բան չունին, ով որ դաւի անէ՝ յետի և առաջի կիրակին անիծեալ լինի ու հաքիմին ԺԲ (12) թուման մուշալ կում լինի։ Ես՝* Ազատ[19] *քաղա-*

[18] *Թվում է վերևում հիշված անունները։*

[19] *Պատմական Գեղարքունիքում, այսինքն Կամո քաղաքից մոտ 7 կիլոմետր հյուսիս, Հալրավանքի մոտ (տե՛ս «Մասեաց Աղաւնի», 1858 թ., էջ 59—63)։*

քեցի Ուլուսի *տղայ* Ասատուրս *վկայ. ես՝* Սավրիս *վկայ. ես՝* Մաղկունեցի *տէր* Ոնանէսս *վկայ, ես՝* Աղթցի *տէր* Վրդանէս *վկայ, ես՝* Գառնեվեցի Միրգէս *վկայ, ես՝* Մէլիքս *վկայ, ես՝* Դրմաշինեցի *տէր* Յովանէս *վկայ, ես՝* Դոլիկս *վկայ, ես՝* Ղազարս *վկայ, ես՝* Աւաքս *վկայ, ես՝* Տաճրաբակեցի Կիրակոսի *տղա* Յուսէփս *վկայ, ես՝* Բաւքրանեցի Ղարիպս *վկայ, Աստուած վկայ։*

1124
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 6485

Գրիչ՝ Յակոբ երէց
Վայր՝ Արզրում

ա

134ա *Ո՛, վա՜յ եղկելի գրչիս* Յակոբիս[20], *և ծնողին իմոյ՝* Մանանին, *որ հանգուցեալ է առ Քրիստոս, և հօրն իմոյ՝ տէր* Գէորգին, *և եղբարցն իմ՝* Մելքոնին, Մաղաքիային, *որք հանդիպիք տուք ողորմին։*

Բ

154բ *Քրիստոս Աստուած ճշմարիտ ժողովող մերոյ բնութեանս։*

Զտառապեալ ծրողս,
Զանպիտան Յակոբս,
Որ եմ մեղաւք ի լի,
Եւ եմ Արզրումցի.
Թվին ՌՁԸ (1639) գրեցի,
Ի դուռն Ս. Աստուածածնի,
Որք հանդիպիք այսմ գրգի,
Իմաստութեան ժողովողի։
Կարդալով կամ աւրինակի,
Յիշման առէք զիս ի կարգի,
Լի և առատ տուք ողորմի։

Ընդ նմին և զհայրն իմ՝ զտէր Գէորգն, *զի յոյժ առաւել սէր ունէր այս գրոցս, խնդրեաց և ես գրեցի, և դուք յիշոխք, յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։*

Գ

161ա *Զծրող սորա զանպիտան ՃՄ. ԼԼ. ՅՅ. ԱԱ. Ս*[21] *մի՛ մոռանայք միով Տէր ողորմիւ և Աստուած ձեզ ողորմի յաւուրն դատաստանի։*

Դ

175բ-176ա *Ո՛վ եղբայրք, յորժամ հանդիպիք ի յայս թղթիս, մի՛ մեղայդրէք գրիս. զի Տաճիկք խիստ կու նեղացընին հարկապահանջութեան, և խիստ տրրտմեալ էի, և իբր զերաղի գրեցի*[22]։

---

20 *Իմա՛ Հակոբ Կարնեցին։*

21 *Տառերի թվական արժեքի գումարը վերածելով տառերի, կարդացվում է «Յակոբս» ՃՄ=3 (300=100+200), [ա], ԼԼ=Կ (60=30+30), ՅՅ=Ո (600=300+300), ԱԱ=Բ(2=1+1),Ս։*

22 *Գրված է լուսանցքում։*

Ե

197ա Զգծող Յակոբս աղաչեմ յիշել միով Տէր ողորմի, ե զծնօղս իմ, և յիշողք՝ յիշեալ լիցիք. ամէն։ Աւարտեցաւ ՌՁԸ (1639), ի քաղաքս, որ ասի Արզրում։

Գ

111բ ...Ողորմեա՛ մեղապարտ գրողի սորա Յակոբի, և ծնաւղի իւրոյ, և եղբարց, և որք սրտի մտաւք յիշեն, տացէ և նոցա տէր Աստուած զվարձս բարեաց իւրոյ. ամէն։

1125

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 6491

Ստացող՝ Ովաննէս երէց

ա

214բ Փառք...։ Ես՝ Ովաննէս երէցս կալայ սբ. [Աւետարանս] ի հալալ ինչից իմոց յիշատակ ինձ և <իմ> ծնաւղաց իմոց, հայրն իմ՝ տէր Մարտիրոսին և մայրն իմ՝ Կաւզալին, և եղբայրն իմ՝ Ովէսին, Պաղտասարին, Վէլինանին, Պատիրին, Նէրսէսին, Սահակին, Ղազարին, Հայրապետին, և քուրն իմ՝ Շանումին, Սալումին, և կողակիցն իմ՝ Սաւկուլին, [ո]բդին իմ՝ Թաթոսին, Մարտիրոսին, Աւաքին, Յակոբին, և դուստր իմ՝ Կաւզալին, Լալումին, Մարինոսին, Կուլումին, և ազգականաց. ամէն։

Թվին ՌՁԸ (1639) ի երկի[ր]ս[23]

215ա ///Հայրապետութիւնս տէր Մկրտչիս, ի թագաւորութիւն շահ Սափուն։ [Ո՛վ] մանկունք սբ. եկեղեցոյ, կարդալով կամ աւրինակելով լի [բերան]ով Աստուած ողորմի ասացէք և Աստուած [զձեզ] ողորմի. ամէն։

Ծաղկող՝ Աւետիս
Վայր՝ Քամալեցիք

Բ

2բ Նաղաշ Աւետիս յիշեայ ի Տէր։

Գ

164բ Յիշեցէք զեղբայրն իմ՝ Յովսէփն, որ Ա(1) հա[ւ] մորթեց. Աստուած ողորմի ասացէք։

Դ

186բ Բարով հասամք աւարտ ծաղկանց. Աւետիսըս յիշեա։

Ե

210ա Փառք...։ Արդ՝ ծաղկեցաւ սբ. Աւետարանս ի յերկիրն Տիզակ, ի գ[ե]աւղն Քամալեցիք, ձեռամբ Աւետիս սուտանուն քարտուղարի, որ անունս միայն ունիմ և ոչ գործս բարութեան...։

215բ Յիշեցէք զհայրն իմ՝// Կարապետն և զմայր իմ Խալինարն, և եղբայրքն իմ և քրւերքն իմ։ Այլ և յիշեցէք զբազմերախտ ուսուցիչն իմ՝ զՎարդան քաշ եռետորն։ Այլ և յիշեցէք զքարտուղար վարպետն իմ՝ Ոհանէս քահանայն, որ բազում չան[ի]ւք ուսուց զիս, յիշեցէք...։ Այլ և

[23] Հիշատակարանն ընդհատվում է։

յիշեցէք Ասմար հարսն իմ, անյիշատակ էր ///ար /// փոխեցաւ առ Քրիստոս. ողորմի ասացէք[24]։

1126
ՔԱՐՈՂԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՅԻՈՅ
Երևան, № 7037

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ Ագուլիս

363ա Փառք...։ Արդ՝ դրեցաւ սբ. ծաղկաքաղ Քարոզգիրքս, զոր աչս իմ տեսեալ, և սրտիւք հաւանեալ և սիրեցեալ, և զամենեսեան միաշարելով յուսով և փափագմամբ գրեցի, որպէս զմեղու շրջելով ի վերայ զանազան ծաղկանց, հաւաքելով ըստ պիտոյից զգեղեցիկս և զաւգտակարս լցեալ բեռինս ըստ կարի իւրոյ։ Սոյնպէս և ես տկարացեալս մեղաւք և պակասեալ հոգոյս աչատեսութեանն և յիմարեալ մտաւք։ Գրեցաւ ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչի Մարտիրոս անարժանի։ Ապա խիստ փափագմամբ դրեցի վասն բազմամեղ անձ[ին] իմոյ և վասն ժողովրդեան խրատելոյ, զի «վսելով լուիջիք և իմանալով իմաստիք» որպէս գրեալ է[26]։

363բ Արդ՝ գրեցաս սբ. գիրքս ի երկիրն Գողթեան, ի գեաւղաքաղաքն Ագուլիս, ընդ հովանեաս Ս. Թումայի առաքելոյն, ի դուռն սբ. եկեղեցոյս և Ս. Յակոբին և Սիմէոնին, ի թագաւորութիւն շահ Սաֆուն, ի կաթողիկոսութիւն տեառն Փիլիպպոսին, ի յառաջնորդութիւն Ս. Թումայի Խաչատուր վարդապետին։ Փառք իւր առատ բարերարութեան, իւր առատ գրթութեամբն գթութիւն ձգեալ ի սիրտս թագաւորաց, վասն ողորմեալ Հայոց ազգիս, և արարեալ սահման և՛ խաղաղութիւն և՛ բարիշութիւն։ Եւ ետուր թագաւորն արեալ[ե]ան Բաբելոնի բերդն ի ձեռն արևմտեան թագաւորին և եղն բարիշութիւն ի թվականիս Հայոց ՌԶԸ (1639). ամէն։

1127
ԱՒԵՏԱՐԱՆ
Երևան, № 7224 (1418 թ.). տե՛ս նաև ՏԵՐԱՎԴ, № 16, էջ 27

Հետ. ստացող, նորոգող՝ Բաղտասար վարդապետ

ա

2ա Ստացող և ղնորոգող սբ. Աւետարանիս զտրուպ Բաղտասար վարդապետս միով բանիւ արժանի արասցիք, ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ։

բ

16բ Ստացող սբ. Աւետարանիս Բաղտասար վարդապետն յիշեցէք[26]։

գ

102ա Ջապիկար Ջուղայեցի Բաղտասար վարդապետս յիշեցէք, որ ստացայ զսա ի թվին ՌԶԸ (1639), յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղացս։

---

24 բ, դ և ե հիշատակարանները գրված են կարմիր մելանով։
25 Հմմտ. Մատթ., ԺԳ, 14, Գործք առ. ԻԸ, 26։
26 Նման հիշատակարան տե՛ս ձեռ-ի 102բ և 156բ էջերում։

Դ

Ծաղկող՝ Հայրապետ

250բ Զնկարիչ Հայրապետս յիշման արժանի [առէք]։

1128

ՃԱՇՈՑ

Երևան, № 7458 (1365 թ.)

Կազմող՝ Գրիգոր

463ա Յիշատակ է Ճաշոցս մղտեսի Փիազին, հաւրն՝ Մուճիպատին, և կենակցին՝ Մայրամին և Տաճայխաթունին, եղբօրն՝ մեծ Սարգիսին, Ղարաւյին, տէր Ովանէսին, և կողակցին իմոյ՝ Մայրամին, ի գուռն Ս. Հրեշտակապետին։ Եթէ. ոք յանգրգնի կամ ծախէ կամ գրաւէ՝ զմասն Յուդայի առցէ և զպատիժն խաչյհանողացն առցէ...։

Կազմեցաւ Ճաշոցս թվին ՌՁԸ (1639), ձեռա[մբ] ան[ար]ժան Շապինղարայենիսարցի Գրիգոր անարժան, հող և մոխիր, և ձեր ոտաց կոխան։ Եթէ ոք հանդիպիք սմա, մէկ Հայր մեղայիւ մի յիշէք...։

1129

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 7721

Գրիչ՝ Մուքայէլ
Վայր՝ Թրլխիս

ա

308բ Փառք...։ // Ըստ այսմ աւրինակի փափաքաւղ եղև աստուածային սբ. Աւետարանիս աստուածասէրն Կարապետ։ Արդ՝ եղև զրաւ կատարման
309ա սորայ ի թվիս ՌՁԸ (1639), յորո//ւմ դեգերեալ կամք առ դրան սորայ ակն ունելով ամէնաւրհնեալ մայրն լուսոյ Աստուածածնին խնդրել ողորմութիւն մեզ և միեղեն եղբայրութեանս և ամենայն աշխարհի թագաւորաց քրիստոնէից։ Եւ ի թագաւորութեան Պարսից շահ Սաֆուն, և ի Բագրատունեան ազգէ փոքր թագաւոր Ռուսդամ խան Թրլխիս քաղաքէ, ևս և բարեպաշտ թագաւորին Վրաց Թամրազին, զոր աշն Աստուծոյ պահեսցէ զսայ և զորդին իւր՝ Գաթունան, հանդերձ ամենայն մերձաւորաւք և հնազանդեցելովք իւրովք ի կամս Աստուծոյ ի խաղաղութիւն։ Իսկ քահանայական աթոռոյ սբ. և անբիծ հայրապետին տեառն Փիլիպոսի, որ և քահանայապետն մեր Քրիստոս պահեսցէ զսայ, մանաւանդ զքաշ բարունապետն
309բ և // սրբայսնունդ առաջնորդն Մինաս վարդապետն, զոր և Տեառն պահեսցէ իւրովք եպիսկոպոսիւ, քահանայօք, սարկաւագիւ և զընաւ ուխ[տ]ս եկեղեցւոյ սրբոյ. անարատ և ուղիղ հաւատով մինչև ի գալուստ սբ. քահանայապետին մեր Յիսուսի...։ Եւ արդ՝ մեռօք մեռեալ հոգիս, անպիտան և հոդս Կրեմեցի Կարապետ, որ այժմ մականուն Կուլի ասեն, հայր իմ Թաքէոս և մայրն իմ՝ Վարդխաթունն, քեռին իմ՝ Ճանեանն, եղբայրիս Հասանն, որ ուսումն ունէր և մանուկ տիաւք էառ զվաղճանն, որ փոխեցաւ յերկրէ յերկին և դասեցաւ ընդ անմարմին, քուրն իմ՝ Եղի-
310ա սայբետ, և կողակցածն իմ՝ Թէքրաւն և Թուրվանտայ, որ // փոխեցան առ Քրիստոս, յայժմն, Թէքրաւն, և փեսայն իմ՝ Պաղտասարն, Աստուա-

ծայտուրն, Պինեթաղայչին, որ բաղում աշխատանք ունին ի վերայ իմ, զոր ե ինքն Յիսուս իւրեանց մեղքն չ[յ]իշէ...։

Սկեսցուց ի զրաւ բանիս սբ. Աւետարանիս գծագրողս, նուաստս և անպիտան, հող և ի դաղախ նման Մուքերայէլ, որ կարողութեամբ Տեառն սկսայ և աւգնականութեամբն Աստուծոյ յաւարտեցի ի թվականիս Հայոց ՌՁԸ (1639), առ ուսուցիչն իմ՝ քաջ քարտուղարն Մկրտիչ դպիրն, որ շատ աշխատանք ունի ի վերայ [մեր], որ չէի արժանի։ Բայց ըստ առաւ-
310բ ել գթոյն իւր շնորհեաց և ուսոյց՝ և՛ սև գիրն և՛ խամ // ծաղիկն առնել երետ, և նայ ոսկով զարդարեց, զոր Քրիստոսէ առնէ զհատուցումն։

Բ

146բ Յիշեցէք և ի գրչացն մեր հարազատ տէր Յոսկանն, զոր շատ ջանաց և պատճառ եղև սբ. Աւետարանի[ս]։

Գ

236բ Յիշեցէք զհոգևոր հայր իմ տէր Մկրտիչն, զոր որդորիչ եղև սբ. Աւետարանիս, մանաւանդ մխիթարէր զմեզ ամենայն ժամ յոյս տալով և խրատ մէջ պանդխտութեան։

Գրիչ՝ Մկրտիչ դպիր

Դ

310բ Դարձեալ ես՝ հուսք Մկրտիչ դպիրս զոր ի պանդխտութեան ժամ զայս սբ. Աւետարանս գրել տուի աշակերտին իմոյ, ի դուռն Ս. Բէտլահէմու Աստուածն դուռն և սպասաւոր և տէր սորա տէր Գրիգորն, զի յոյժ կարի աշխատեցաւ Գ (3) ամ ի վերայ իմ համշիրագութեամբ, յիշողքն սորա՝ ի Քրիստոս յիշեալ լինին։

1130

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Երևան, № 7760 (1458 թ.)

148բ Թվին ՌՁԸ (1639)-ին Խաչատուր վարդապետն Կաֆայ եկաւ։

1131

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան, № 7792

Գրիչ՝ Յուսիկ դպիր

Ա

31բ Փառք...։ Շնորհաւքն Աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցաւ Պատարագամատոյցս ի լաւ և յընտիր աւրինակէ, ի թվականիս Հայոց ՌՁԸ (1639)-ին, առաջնորդութեանն տէր Խաչատուր արքեպիսկոպոսին, ձեռամբ մեղսասէր և անարժան, նորաշան գրչի Յուսիկ դպրի։ Զոր մեծաւ փափագմամբ ետ գրել զսա տէր Զաքարիան և եդ ի Ս. Աստուածածին վանքն յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր ծնողացն և ամենայն զարմիցն, այժմու կենդանեացն և կանխաւ ննջեցելոցն, որոց թողցէ տէր Աստուած զյանցանս նոցա և տացէ զհանգիստն յաւիտենից. ամէն։ Դարձեալ խընդրեմ ի ձեղանէ, ո՛վ պատուելի հարք և եղբարք, հանդիպողք սբ. տառիս, յորժամ կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր

զստացող զրոյս զտէր Զաքարիան, ընդ նմին և դանպիտան Յուսիկ գրիչս հանդերձ ծնողիւքս, ե դուք զնոյն զտջիք ի Քրիստոսէ...։

Բ

1բ Ո՛վ եղբարք, մատուցողք սբ. Պատարագիս, մի՛ որպէս սովորութեամբ կամ արուեստաբար մատուցանէք զպատարագս, այլ երկիւղիւ և սրբութեամբ, զի ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ. զաւգուտն ձեր դուք գիտէք։

1132
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 7980

Գրիչ՝ Յոհանէս երէց
Վայր՝ Գանջոյ ծոր

294ա Փառք...։ Գրեցաւ սբ. Աւետարանս ի լաւ և ընտիր օրինակէ, ի եր-
294բ կիրս Գանձակա[յ], ի ծորս Գանջոյ, ի դրան Ս. //Աստուածածին անապատին, որ է առաջնորդ սբ. ուխտին պարունտէր Յանուոն նորընծային, որ է արի և քաջ հովիւ և հովանի ի վերայ միաբանից և ազգ քրիստոնէից։ Այլ և յիշելի և յիշման արժան միաբան կրօնաւորք Ս. Աստուածածին անապատիս տէր Նէրսէս ժամարարն և տէր Յովանէս ժամասացն, այլ և միեղեն եղբարքն և տնտէս Բարաղամն, որ բազում աշխատանօք կերակրէր մեզ։ Եւ միաբանքս հոգս տանէին վասն նկարագրութեան սբ. Աւետարանիս, Աստուած վարձահատուցանէ և արքայութիւն շնորհէ սոցա։

Ի կաթողիկոսութիւն տեառն նորընծա Գրիգորին, ի թուականիս Հայոց ՌԶԸ (1639), ի ժամանակս շահ Սաֆին, ձեռամբ մեղապարտ և անպիտան Յոհանէս իրիցու։

Արդ՝ աղաչեմք զձեզ, ո՛վ ստեղծուածք անարատ ձեռին Աստուծոյ և ծնունդք սբ. աւազանին, [յ]որժամ պատահիք սմա, յիշեցէք սրտի մտօք
295ա ի սբ. և ի գերամաքուր յաղօթս ձեր զհեղահոգի և զբաբ//էմիտ, երկուղած և աստուածասէր... Գրիգորն, որ ստացաւ սբ. Աւետարանս յիշատակ իւր[27] հոգոյն և եղբարցն՝ Ղազարին և կողակցին՝ Խանումին, որ Քրիստոս են հանգուցեալ. Աստուած իւրեանցն արքայութիւն շնորհէ. ամէն։

1133
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 8008

Գրիչ՝ Յովանէս երէց
Վայր՝ Կաֆայ

ա

277բ Փառք... Որոյ աւդնականութեամբն և կարող զօրութեամբն աւարտեալ եղև եղանակաւոր գիրքս, որ Շարականց անուանի, ի գառն և ի վերջ գարուս, ի թուականի Հայոց ՌԶԸ (1639) ամին, ի յաշխարհս

[27] Ձեռ-ում «իւրս»-ը կրկնված է։

Հոնաց, ի մայրաքաղաքս Կաֆայ, ընդ յոտս Ս. Նիկաւղայոս եկեղեցոյ, ձեռամբ անարհեստ գրչի Յովանէս իրիցու, ի խնդրոյ խոնջայ Մինասի, և [եդ] յիշատակ ի դուռն Ս. Յոհաննէս աւետարանչի։ Արդ՝ յիշեցէք ընդ
278ա յերկնագնաց աղօթս ձեր, ո՛վ սբ. հարք և եղբարք, զվերոգրեալքս՝ // զստացող երգարանիս զխոնջայ Մինաս[սն] և զծնողքն, զհայրն՝ Պատրոնֆայն և զմա[յրն՝] Պիֆալխ, զհարազատ եղբարքն իւր՝ զտէր Գրիգոր քահանայն և զխութլուշան, զանեռն իւր՝ զմղտսի Ալէքսանոսն, և զոքանչն՝ մղտեսի Խասպիֆան, և զկենակիցն իւր՝ զՄայրամպիֆան և զայլ ամենայն արեան մերձակայսն իւր...։

Բ

290ա Շարակնոցն Մինաս աղան գնեց Ս. Յովանէս ժամն յիշայտակի տիր. Աստուած պահէ զինքն տնով, տեղով, զարմով, զաւակով. ամէն։

Գ

94բ-95ա Գիտացիր եղբար, որ Նոր կիրակէի կարգն պիտ էր տեղս, ի յօրինակն չկենալով մոռացաք, յետոյ գրեցաք, ի կարգ Աւագ աւրհնութեան վերջքն։

Դ

121ա Ո՛վ եղբարք, զՄեծահրաշի կարգն, որ է երկրորդ Ծաղկազարդ, յօրինակն չէր գրած, յայլ աւրինակէ գրեցի, ի յԱւագ աւհնութեան յետքն է։

Գրիչ՝ Մանուկ դպիր

Ե

242ա Ես՝ մեղաւոր գրչակս, որ այս ծաղիկն կարմիր լցի, մի՛ մեղաթրէք՝ հաւաս եմ։ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս գրչակ աիպիր Մանուկ[28]։

1134
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 8294 (1624 թ.). տե՛ս նաև «ՀԱ», 1921 թ., էջ 175

Կազմող՝ Մարտիրոս երէց

168բ Կազմեցաւ Աղօթամատոյցս թվին Հայոց ՌՉԸ (1639), ձեռամբ անարժան Մարտիրոս երիցու, որ անունքս ունիմ և գործս ոչ. վա՛յ ինձ Ռ (1000) բերան, ո՛վ հ[անդիպողք]։

1135
ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 8556

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

295ա Փառք..., որ տկարութիւնս իմ զաւրացոյց յաւէտ իւրոյ իմաստութեանն. վասն որոյ և ես՝ մեղաւոր հողիկս Խաչատուր երէցս, անարժան

[28] Ե հիշատակարանը գրված է կարմրագեղով և ձեռագրի գրչությամբ։

ծառայ ծառայիցդ Աստուծոյ, յանձն առեալ ոգւով չափ կատարեցի ղտառս հոգեշունչ, աստուածազարդ, աստուածախաւս սբ. Աւետարանիս։ Զոր Ամենասուրբ Հոգին հանգչելով...։

296բ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի Կոստանդինոպալիս, ձեռամբ խաչատուր երիցուս, ի թվաբերութեանս Հայոց ՌՁԸ (1639), ի ստոյգ և յընտիր աւրինակէ։ Արդ՝ ցանկացող եղեալ այսմ սրբոյ Աւետարանիս և ետ փափաքանաւք գծագրել///

Բ

323բ Զմեղապարտ գրիչս՝ զխաչատուր երէցս յիշեցէք ի Քրիստոս Աստուած և դուք յիշեալ լիջիք յիւր միւսանգամ գալստեանն. ամէն։

1136

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 57
(մանրաժապավեն, Երևան, № 518)

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ

189բ Փառք...։

190բ Արդ՝ գրեցաւ երգս Դաւթի ձեռամբ տրուպ Յակոբ սարկաւագի, ի
191ա թվականիս մեր Հայոց մեծի ՌՁ և ութի (1639), ի հայրապետութեանն//
տէր Փիլիպպոսի կաթողիկոսի և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան
Մուրատի, որ էառ զքաղաքն Բաբելոնի։ Եւ է սա յիշատակ մահտեսի
Վարդանին, և ծնողացն իւր՝ Ամիրազիզին, Պակին, և եղբարցս Մուրատին,
Նորտնկին, Ալէքսիանոսին, խաչիկին, խարիպճանին, Միհիրին, մեծ խա-
բունին, պապուս Կուլուզին, Ազաիին, Խոնիկին, Խոսրովին, Սարգիսին,
Գրիգորին, Տոլիկին։ Եւ եդ սա յիշատակ ի դուռն Ս. Հրեշտակապետ յեկե-
ղեցին։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանգ, որք հանդիպիք յայսմ երգս Դաւթայ
յիշատակի արժանի արարէք... զմահտեսի Վարդանն և զծնողսն իւր և
զամենայն արեամբ մերձաւորսն իւր... նաև զանարժան զՅակոբ սարկա-
191բ ւագս, և զծնողսն իմ՝ զԲաղասսարն և զմայրն իմ՝ //զՅուստիանն և ամե-
նայն արեան մերձաւորսն իմ...։

Գիտէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք
գրոցն զառաջնոյն զանունն կու ջնջեն և զիւրեանցն կու գրեն։ Եւ չար է
սովորութիւնս այս, աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ։ Ապա թէ ար-
ժան է դրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ և զառաջնոյն մի՛ ջն-
ջեսցէ անուն կամ գիր։ Եւ որ ոք յայս յանդգնի և ջնջէ՝...։

1137

ԱՒԵՏԱՐԱՆ

Կ. Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցի, № 62
(մանրաժապավեն, Երևան, № 521)

Գրիչ՝ խաչատուր երէց
Վայր՝ Կ. Պոլիս

331բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ և զրաւ առեալ կատարեցաւ սրբազան Աւետա-
րանս և մեծալիր գանձս աստուածային, ի մայրաքաղաքն Կոստանդինու-

պոլիս, ի դուռն Ս. Սարգսի զօրավարիս, ձեռամբ խաչատուր իրիցի, թվի[ն] Հայոց ՌԶԸ (1639) ամի։ Եւ ցանկացող եղեալ սբ. Աւետարանիս աստուածասէր քրիստոնէայս Բենկցի Յակոբ ժամակոչն. և ստացաւ ի հալալ արդեանց իւրոց, զանձ պատուական և առիթ փրկութեան. և եդ ի դուռն Ս. Հրեշտակապետ եկեղեցոյն, յիշատակ հոգոյ իւրոյ և բարի ծնողացն իւրոց, հօրն՝ Տիլանին և մօրն՝ Մարիամին, եղբարցն՝ Պետրոսի[ն]
332ա // և Գասպարին, այլ և քրւերցն՝ Հայոցին և մղտեսի խումարին, Շալչուրին և Քնարին, նաև կողակցին՝ Մարթային, և որդւոյն՝ Պաղտասարին, և դստերն՝ Կուպպահարին. և ամենայն արեան մերձաւորացն։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ զամենեսեանդ, ով քրիստոսազարդ քահանայք և մանկունք սբ. եկեղեցւոյ, որք հանդիպիք սբ. և լուսափայլ, հոգիազարդ Աւետարանիս, կարդալով կամ աւրինակելով, յիշման արժանի վարկջիք ի սրբամատոյց և յարժան, ընդունակ յաղօթս ձեր զվերոյ գրեալ ստացող սորա, զսպասաւ[որ] Ս. Հրեշտակապետին զՅակոբ ժամակոչն և զամենայն առուարեան մերձաւորսն...։

1138

ԱԻԵՏԱՐԱՆ

Մագիստրոս, I, № 110

Նորոգել տվող՝ Մելիքսէթ երէց

97 Փառք...։ Ես՝ Մելիքսէթ էրէց Նորոգել տվի Աւետարանս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հայր իմ Սարգիսին և մայր իմ Հուրիխանին, և կողակից իմ Խանդաղին, և որդիքն իմ՝ Ծատուրն, Սարգիսն, և դուստր իմ՝ Գոլասարն, եղբայր իմ՝ Ատումն, և քուրն իմ՝ Մարիամն, Եղիսապետն. թիվն ՌԶԸ (1639) էր։

1139

ՏԱՂԱՐԱՆ

Մագիստրոս, № 20

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Վարագ

ա

19 Ռ և ԶԸ (1639) ամին գրեցաւ սա ի Վարագ, ձեռամբ սուտանուն// Յովանէս Կարմիր Լանուն...։

բ

Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւոր և անարժան տէր Յովանէսիս, անմեղայդիր լերուք, զի առայջին գործս այս է, զի կարն մեր զայս եբեր։

1140
ԺԱՄԱԳԻՐՔ, ՏՕՆԱՑՈՅՑ
ՁՁԲ, № 585

Գրիչ՝ Յոհանէս Մոկացի
Վայր՝ Վան

ա

Փառք..., որ ետ կարողութիւն տկար ոգոյ և անիմաստ Յոհանէս գրչի հասանել ի յաւարտ հոգիընկալ և աստուածաշունչ մարդարտատիպ այս տառիս, որ ասի Ժամագիրք, այլ և Տաւնացոյց ընդ նմին։ Զոր ի վաղուց հետէ փափաքեալ տոչորէր սիրտ մահտասի խոջայ Յովանէսն, և ետ գրել զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն, հաւրն՝ Էնիաքին և մաւրն՝ Սալթանին, և կողակցուն՝ Ջանաղին, որդոցն՝ Նաղարին, Աստմին, եղբարցն՝ Գրիգորին, մահտասի Փիրումին, Աւէտին, Խալուշին...[29]։

Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ սբ. գիրքս, ձեռամբ բազմամեղ գրչի Յոհանիսի Մոկացոյ, ի մայրաքաղաքս Վան, ընդ հովանեաւ Ս. Վարդանայ զաւրավարին Հայոց և Ս. Շուշան տիկնոջն և Ցիմարայ նահատակին, ի թուականիս մերում հայկազուն տումարի ՌՁԸ (1639) ամին, ի դառն և ի նեղ ժամանակի, որ յայս ամի Մուրատ խոնդքարն եկեալ բաղում զաւրաւք ի վերայ Պաղտատայ. և անթիւ կոտորմամբ էառ զնա և դարձաւ։ Աղաչեմք զամենեսեան լի բերանով և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք Յոհանէս բազմամեղ գրչիս և ծնողացն իմոյ՝ տէր Մելիքսէթին և Գուլաղին, և կողակցուն իմոյ՝ Փաշի, և տստերն՝ Գուլաղին, և մեր ամենայն արեան մերձաւորացն...։ Եւ խոշորութեան գրիս և սխալանացն անմեղադիր լերուք, զի կայր մեր այս էր...[30]։

բ

Ստացող՝ Յովանէս մահտասի

Արդ՝ ես մահտասի Յովանէս ետու գրել զԺամագիրքս և զՏաւնացոյցս, և ետու զսա դնել ի դուռն Ս. Վարդանայ, անչինչ յիշատակ, ի ձեռն սրբասէր և մաքրամիտ քահանայիցս՝ աւաքերէց տէր Մարգարին և տէր Աւետիսին և տէր Յովանէսին...։

1141
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄԻՆՋ, № 46 (1313 թ.)

61 *Զվերջին ստացող սբ. երգարանիս, որ կոչի Շարակնոց, բարեսէր քահանայն զտէր Անդրիասն, և զծնողսն իւր՝ զԲաբուչանն և զՆսէֆսօլթանն, յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զտէր Անդրիասն, և զեղբարքն իւր՝ զՄելքոնն, զՊաղտասարն և զՍիմոնն։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր Անդրիասն և զկողակիցն իւր՝ զՍսլամն, և զորդին իւր՝ զՎարդանէսն, և զդստերքն իւր՝ զՆսէֆսօլթանն, զՍալվինազն և զԳայիանէն, և

[29] «Դարձեալ յիշեցէք»-ով սկսում է և նորից թվում նույն անունները։
[30] Նորից թվում է ձեռ-ի ստացողի վերևում նշված անունները։

զհանգուցեալ որդիքն՝ զՂուզիջանն և զՅակոբջանն: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր Անդրիասն, որ ստացաւ զՇաբակնոցս ի հալալ յընչից իւրոց և ետ նորոգել և կազմել, ի թվականիս Հայոց ՌՁԸ (1639) ամին։

1142
ՃԱՇՈՑ
ՄԻՆՋ, № 76

Վայր՝ Թորսկան

81 Յիշեցէք ի Քրիստոս զստացօղ սր. գրոցս զմահդասի [խօճայ Եզիազարն][31], և զկողակիցն իւր՝ [զՇանփարին]/// զՍալվինազն և զՇանփարին և զորդիսն՝ զՆազարեթն և զՂազարն, զդստերքն՝ Մարիամն, Շանզատէն և զՄէրջանն, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք զմահդասի խօջայ [Եզիազարն], և կողակիցն՝ զՇանփարին, և դեռաբուս, և նորաբողրոջ, նազելի և սրամիտ, գեղեցիկ և նազելի, և ցանկալի Նազարեթն, որ կոչի ծաղիկ պատուական, և զնորա կողակիցն՝ Եզտիիան խաթունն, որ և Աստուած վայելել տացէ և անփորձ պահեսցէ մինչև ի խորին ծերութեանն. ամէն։ Որ և ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց պարոն///, և ետուր ի գուռն սր. եկեղեցւոյն Աստուածածնին յեզր Նարեզալային, որ Թորսկան ասի, յիշատակ իւրն և իւր ծնաւղացն։ Եղբայրք, մի՛ ոք յիշխեսցէ հեռացուսցէ զսա ի դրանէ Ա. Աստուածածնին. և ով ոք հեռացուսցէ ///

Գրեցաւ սբ. գիրքս թվին ՌՁԸ (1639)-ին։

1143
ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ
ՏԵՐԱՎՋ, № 233 (1507 թ.)

Գրիչ՝ Մարտիրոս
Վայր՝ (Նոր) Ջոսլայ

ա

344 Ո՛վ եղբայր, մինչև այս էջս[32] Բարաղամ սարկաւագ գրեաց, զհոգին աւանդեաց մանուկ տիաւք թվին ՌՁԸ (1639)-ումն. որ ոք կարդայ՝ Աստուած ողորմի ասէ. ամէն։
Աստից ի վեր[33] ես՝ չանարժան Մարտիրոսս սկսայ։

բ

Որ ողորմի ստացող գրոյս խաւջա Եզնազարին և ամենայն դստերացն՝ Ցուանիխանին, Թարէզ խաթունին, Խաթունջին, Եզնիիաթունին, և

---

31 Ցուցակի հեղինակի հաղորդմամբ այստեղ և այլ տեղեր շնչված են։
32 Այսինքն, ձեռ-ի 133բ էջը։
33 Այսինքն, ձեռ-ի 134ա էջից։

Յովանջանին, և կողակցին՝ Սամբրոյէ, և որդոցն՝ Մէլքումին, և Գասպարին, և ինձ տէր Մկրտիչ յիշատակի գրողին։

Գ

Ո՛վ եղբայրք, իմ սիրելիք և պատուականք, յորժամ ընթեռնուք զգիրս, մի՛ մեղադրէք խոշորութեան կամ սխալանաց, ևս յիշեսցուք, ողորմի ասացուք միաբերան Բարաղամ սարկաւագին, որ գրեաց զԳ (3) ամիսն, հանգեաւ ի Քրիստոս, յետոյ ես՝ սուտանուն Մարտիրոս գրիչս յիշեսցուք, զի և դուք յիշման արժանի լիցիք....։

Դ

345 Գրեցաւ նորագի[բ]ս այս Զ (6) ամսոյ փխէրս ի թվականիս Հայոց ՌՁԸ (1639) ամին, ի ժամանակին թագաւորութեանն Պարսից շահ Սաֆոյն, ի քաղաքին Շաւշ, որ այժմս իմանամք Սպահան, զի կատարումն եղև ի մէջ Զուղայոյ. զգիրս բիւրաստան, հրաշայպայծառ տաւնից ամենայն սրբոց նահատակաց, ճրգնաւորաց առաջնոց և ամենայն տէրունական տաւնից, որք կատարին ի փառս Աստուծոյ։ Ո՛վ երջանիկ եղբայրք և ուխտականք, յեկեղեցեաց քահանայք կամ սարկաւագունք, յորում ժամու ընթեռնուք զայս տառս մարգարտաշար, ողորմի ասացուք զստացող գրոյս խաւջայ Եղնազարն, որ ցանկացաւ և ետ գրել և կատարել զայս, ի հալալ և իւր արդար վաստակոցն, և ետուր յիշատակ իւր հոգոյն և իւր ծնողացն։

1144

ԳԻՐՔ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ

ՅՁՎԱ, III, № 442 (1506 թ.)

Գրիչ՝ Յոհան
Վայր Սիս

Ա

638 Վերստին յիշատակ է Սեբաստացի Սիմէոն կաթողիկոսին, ի մայրաքաղաքն ի Սիս, թվին ՌՁԸ (1639)[34]։

Բ

Յիշեցէք զտէր Յոհան, թվին ՌՁԸ (1639), որ եմ տէր Սիմէոն կաթողիկոսին եղբայր որդի[35]։

---

[34] Բառացի նման նշումներ կան մի շարք ձեռագրերում, տե՛ս ՄՅՁԵՊ, II, № 304, էջ 151, № 582, էջ 611, Ղ. Փիրզալեմյան, Նշխարք, հտ. Բ, № 520, էջ 431, Կյուլեսերյան Բ., Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 227, ինչպես նաև մեր Մատենադարանի Սաղմոսաց մեկնություն № 1202 ձեռ-ի 312-րդ բ էջում։ Մատենադարանի ձեռագրաց ցուցակում վերջինս, նշված է 1638 թ. ներքո (հտ. Ա, էջ 499)։

[35] Այս հիշատակագրության թվականը ցուցակի հեղինակները նշել են ՌՇԸ (1508) թվ։ Քանի որ խոսքը վերաբերում է ա հիշատակագրության մեջ հիշված Սսի Սիմէոն կաթողիկոսին, ուստի թվականն ուղղեցինք ենթադրելով, որ այն կամ սխալ է գրված և կամ սխալ տպված։

1145
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՔՅԶԶՎ, № 14

Գրիչ՝ Շմառն

ա

29 Զտառապեալ ոգի գծողս զՇմայոնս մեղաւք ղառածեալս յիշեա՛. թվին ՌԶԸ (1639)։

Բ

ՌԶԸ (1639) թվին գրեցաւ կտակս Դաւթի։

գ

Յիշեցէք ղանարժան Շմառն գրիչս, ի թուին ՌԶԸ (1639)[36]։

1146
ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

ՄՅԶԵՊ, II, № 569 (1409 թ.)

Վայր Երուսաղէմ

598 Քարոզգիրքս յիշատակ է սբ. Երուսաղէմայ, ի գուռն Ս. Յակոբա[յ] առաքելոյ գլխագիր սբ. դամբարանին, և այլ ամենայն սբ. տնօրինակացն Քրիստոսի, Հայոց ազգիս վիճակին, թվին ՌԶԸ (1639), ի հայրապետութեան սբ. աթոռոյս Յակոբա[յ] Տեառնեղբաւրն տէր Գրիգոր ամենայն ազգիս Հայոց հայրապետին, որ շինեաց զՍնունդն, և նորոգեաց զՓրկիչն, զՀրեշտակապետն և զՍ. Յոհաննու աւետարանչի՝ եկեղեցին, և առաւ երեք կամար ի Ս. Յարութեան վերնատունն Հայոց ազգիս, և այլ բազում աշխատանս և երախտիս արար ի Ս. Յակոբ և յայլ ամենայն եկեղեցիս։ Որք հանդիպիք սբ. գրոցս, ասէք զԱստուած ողորմին յիշատակ գրողին և տէր Գրիգոր սբ. Երուսաղէմայ հայրապետին և իւր ծնաւղացն. ամէն։

1147
ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՅԶԵՊ, VI, № 1953 (1328 թ.)

Վայր Երուսաղէմ

Յիշատակ է սբ. Աւետարանս Խաչայչանին ի սբ. քաղաքս Երուսա-
522 ղէմ, ի //դուռն Ս. Յակոբայ առաքելոյ գլխադրին, ի թվին ՌԶԸ (1639), ի յաթուակալութիւն սբ. ուխտիս տէր Գրիգոր սբ. Երուսաղեմայ և ամենայն ազգիս Հայոց հայրապետին։ Որք հանդիպիք տեսոյ սբ. Աւետարանիս, յիշեցէք... Խոճանանին, և իւր ծնաւղացն, և իւր ամենայն արեանառու մերձաւորացն...։

36 Ցուցակում տե՛ս նման երեք հիշատակարաններ ևս։

1148
ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՅԶԵՊ VI, № 1984. տես նաև Կյուլեսերյան Բ., պատմ. կաթող. Կիլիկիոյ, էջ 309։

Գրիչ՝ Աբրահամ երէց
Վայր՝ Ատանա

ա

571 *Զպատուական երաժըշտապետն՝ ղտէր* Սիմէոն *արքեպիսկոպոսն աղաչեմ յիշել ի Տէր։*

բ

Ջստացաւղ սբ. տառիս յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր, ղերշանիկ Սիմէոն *հայրապետն մեր և զկաթուղիկոսն* Կիլիկոյ, *որ է բնական ի* Սեբաստի-*ա[յ]: Եւ ետ դրել զսբ. տառս յիշատակ իւր հոգւոն և բարի ծնաւղացն։ Եւ որք յիշէք՝ յիշեալ լինիք...*[37]։

գ

Փառք...։ Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուաբերութեանս Հայոց ՌՁԸ (1639), ի հայրապետութեան տեառն Սիմէոնի Սեբաստացոյ, *ի մայրաքաղաքիս յ*Ատանու, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Ստեփանոսին, ձեռամբ մեղաւոր և անարժան սուտանուն իրիցու* Աբրահամի:

Արդ ցանկ[աց]ող եղեալ սրմա աստուածասէր և պատուական հ[այ]րապետին Սիմէոնի *ամենայն Հայոց, և ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ, և ի յիշատակ բարի...։*

Ի թագաւորութեանն Տաճկաց սուլտան Մուրատին, *որ և այսմ ամի ծանր հեծելաղաւրաւք գնաց ի* Պաղտատ *և էառ զքնա, և որչափ արիւնհեղութիւն եղև նա, Աստուծոյ է գիտելի։*

1149
ԱԻԵՏԱՐԱՆ

Մուրմար, II, № 52 (1509 թ.)

Նորոգող՝ Դանիէլ

137 *Արդ՝ վերստին նորոգեցաւ սբ. Աւետարանս ի դուռն Ս. Առաքելոցս, ի յառաջնորդութեան* Կարապետ *վարդապետին, ի թուին Հայոց ՌՁԸ (1639), ձեռամբ սուտանուն* Դանիէլի, *յիշեցէք ի Տէրն։*

1150
ԱՂՕԹԱԳԻՐՔ

Մուրմար, II № 91 (ժամանակ?)

Գրիչ՝ մանդասի Ապաուլ

ա

163 *Յիշեցէք... մահդասի* Յակոբին *և Աստուած ողորմի ասացէք իւրն և իւր ծնաւղացն, հաւրն՝* Շահմուրատին *և մաւրն՝ մահդասի ///, և եղբաւրրն մահդասի* Ուսուֆին ///, Խշդեցի Սուլտանին, *իւր հաւրն՝ մահդասի*

[37] Նման և համառոտ մի քանի հիշատակարան էլ տե՛ս Ցուցակում։

Խաչատուրին, և զիւրեանց ննջեցեալսն /// Աթանասին, Բարսեղ վարդապետին, որ Խ (40) տարի առաջնորդ է մայրաքաղաքին Համբա[յ][38] և դուք յիշեալ լիշիք առաջի անմահ զաոին։

Բ

Ես՝ անարժան մահդասի Ապտուլ, եղբար Բարսեղ վարդապետին, ի զեղջլն Մարմանտու, որ առաջնորդ է քաղաքին Ամբայ, ԽԱ (41) ամի առաջնորդութեան իւր, զԱղօթից սբ. դիրքն ետ ի դուռն Ս. Պետրոսի առաքելոյն, յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց, հաւրն՝ Ապուճարին և մաւրն՝ Մաւելային, և եղբարցն՝ մահդասի Ապաուլին, և փոխեցելոցն առ Քրիստոս Մաղսուտին և Մեհերին, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։

Դարձեալ ողորմի ասացէք իւրեանց ծնաւղաց և լաւ պահողաց կամ տանողացն։

Թվին ՌԶԷ (1638)։

Գ

Դարձեալ թվին ՌԶԸ (1639) [Բարսեղ վարդապետն][39] փոխեցաւ առ Քրիստոս ի մայրաքաղաքն Ամիք, ուր[40] հոգևոր հայրենի աթոռն, ուր վաղշանեալ էր ուր վարպետն Սրապիոն կաթողիկոս։ Մեծաւ ողբով լան զեշմարիտ աւրինապահ և զբարեպաշտ պտուղն վարդապետաց և զկատարող կամացն Աստուծոյ/// և հոգին սբ. Աստուած ճշմարիտ մխիթարէ զեղբայրն ուր զմահդասի Ապտուլ ճգնաւորն։

1151

ՃԱՇՈՑ

ՄՂՀՍ, № 133

Գրիչ՝ Աբրահամ քահանայ

Վայր՝ Հալապ

ա

228 Փառք...։ // Արդ՝ այս ամենայն բարութեանս և աստուածային գանձուցս այս փափաքող եղեալ աստուածամեծարն և աստուածարեալն անձն աստուածունակ երանեալն զրստացաւղ սորայ զՀնամկլացի խոճայ Ներսէսն, որ ըստացաւ զաստուածաշունչ կտակարանքս, ի հալալ վաստակոց իւրոց և ետ գրել զսայ. և եդ յիշատակ ի Հալապ քաղաք, ի դուռն Ս. Քառասունք եկեղեցւոյն, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ մահտեսի Խաչերին, և մաւրն՝ մահտեսի Շահզատին, և կողակցոյն՝ Մարիամին, և որդոյն Պետրոս չալապոյն, և ամենայն արեան մերձաւորացն՝ մեծի և փոքու. ամէն...[41]։ Զի ես յետինս ամենայն քահանայից,

[38] Եթե բ հիշատակարանում Բարսեղ վարդապետի Համիքի առաջնորդ լինելու 41-րդ տարին կհամապատասխանի 1638 թ., նշանակում է ա հիշատակարանում նշված 40-րդ տարին, կհամապատասխանի 1637 թ.։

[39] Ուղղանկյուն փակագծում եղածը բացակայում է, ենթադրաբար ավելացրինք մենք։

[40] Կարդա՝ իր։

[41] Այս հիշատակարանի ընդհանուր մասերը բառացիորեն վերցրել են Ցուցակի № 135 ձեռագրից (1466 թ. ընդօրինակություն) կամ № 136 ձեռագրից (1636 թ. ընդօրինակություն)։ Քանի որ № 996 հիշատակարանում, բերված են այդ մասերը, դրանք այստեղ նշեցինք բազմակետերով, բերելով միայն տարբերությունները՝ գրչի, ստացողի, ժամանակի և այլ հանգամանքների մասին։

անարհեստ գրիչս Աբրահամ երէցս, որ գրեցի զսայ ըստ իմում կարի և յոյժ աշխատեցայ, և գրեցի գսայ ի լաւ և ընտիր աւրինակէ. գի ունի սայ բովտնգակեալ ինքեան զմատեանս սբ. մարգարէիցն...։

Արդ՝ եղև զրաւ դրոյս ի թվականութեանս Հայոց ՌԶԸ (1639), ձնռամբ նուաստ և անարժան Աբրահամ երիցու, ի կաթողիկոսութեանն տէր Սիմէովնի, և պատրիարգի սբ. Երուսաղէմայ, և ի առաջնորդութեան մայրաքաղաքիս Հալպայ Յակոբ վարդապետին։ Վասն որոյ աղաչեմ
229 զամենեսեանդ զհանդիպողդ յայսմ մատենիս, որք ընթեռնոյք զսայ // կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զՀոմկլացի Մարկոս իրիցանց զարմէն, զխոճայ Ներսէսն, և զիւր հայրն՝ զմահտեսի Խաչերն, և զմայրն՝ զմահտեսի Շանզաասյն, յիշեցէք...։ Այլ և Աստուած ողորմի ասացէք խոճա Ներսէսին, կողակցոյն՝ Մարիամին, որ առ Աստուած է փոխեալ, և որդոցն՝ Պետրոսին, Ալմաստին, Շամխաթունին, և Մարանուն, և սոցայ եղբարցն՝ Խաչերին և Խաչատուրին, Գրիգորին և Մելքոնին, Պողոսին և Պետրոսին։

Դարձեալ յիշեցեք ի Քրիստոս զխոճայ Ներսէսին զմիւս կողակիցն՝ զՄարիամն, և զորդին՝ զՊետրոս չալապին։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք խոճայ Ներսէսին, քվերցն՝ մահտեսի Թուրվանտին, Նուրխաթունին, Կուլխասին։ Աստուած ողորմի ասացէք խոճայ Ներսէսին մեծ պապուն՝ Հոմկլու աւագիրիցուն՝ տէր Գրիգորին, և իւր իրիցկնոջն, որ խոճայ Ներսէսին մեծ մայրն է։

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք խոճայ Ներսէսին, հաւեղբարն՝ Մարկոս իրիցուն և միւս հարեղբարն՝ խոճայ Սրապիոնին։ Աստուած ողորմի ասացէք խոճայ Ներսէսին, հարեղբարք որդոց՝ Մելքոնին, Գասբարին, Մխիթարին, որդոյն՝ Ներսէսին, Աբրահամին, Յակոբին։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք խոճայ Ներսէսին, քվերորդոցն՝ Մարուգէին, Յակոբին և Հոիփսիմէին, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեանդ զհանդիպողդ յայս մատենիս, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացաւղ սորայ զխոճայ Ներսէսն.... և խնդրեսցեն Աստուծոյ զթողութիւն մեղաց խոճայ Ներսէսին, և իւր ծնողացն, և ամենայն արեան մերձաւորացն։ Ըստ նմին և զիս զանարհեստ գրիչս, զվերջին ծնունդս եկեղեցւոյ, զնուաստս և զանարժանս զԱբրահամ երէցս, եւ զմարմնաւոր ծնաւղս իմ՝ զտէր Յովհաննէս քահանայն, և զմայրն իմ՝ զիրիցկին Մարիամն, որ առ Աստուած է փոխել... և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալսն աղաչեմ յիշել ի Տէր. ամէն։ Եւ ինքն բարերարն և մարդասէրն Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ յիշելոցս և ձեզ յիշողացդ առ հասարակ ողորմեսցի և տացէ զիւր առատ ողորմութիւնն. ամէն։ Այլ ե չունի ոք իշխանութիւն ազգականաց խոճա Ներսէսին, ոչ աւտարացն և ոչ ընտանեացն զգիրգս այս ծախելու և կամ գրաւ դնելու. եթէ յանդգնին և զայս առնեն՝ զպատիժն Կայէնի և զՅուդայի առցեն, իսկ լաւ պահողքն և խնամ տանողքն՝ աւրհնին յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա. ամէն։

Բ

...Քրիստոս Աստուած մեր քո հրաշալի պայծառակերպութեամբդ, որ պայծառացար այսաւր ի Թաբաւրական սբ. լերինն պայծառացոյ զհոգի ստացողի գրոցս մահտեսի Ներսէսին, և հաւրն մահտեսի Խաչատուրին, և մօրն՝ Շանզատին, և կոզակցուն՝ Մարիամին, և որդոյն՝ Պետրոսին, ի Քրիստոս հանգուցեալ, և ամենայն զարմիցն, և մերձաւորացն, և ինձ մեղապարտ և նուաստ գրչի Աբրահամ իրիցու, կարդացողաց և լսողաց. ամէն[42],

1152

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

ՅՁՀՍ, № 148

Գրիչ՝ Ղազար քահանայ

Վայր՝ Հալէպ

ա

278 Փառք...։ Ի խնդիր ելեալ այսմ հոգիանորոգ և լուսերանք, ծաղկաւէտ և վարդափթիթ անուշահոտ բուրաստանիս, պատուական և աստուածասէր և բարեմիտ մահտեսի Սաֆարս։ Եւ ստացաւ զմարգարտաշար տառս զայս և զանառիկ մեծութեանս, ըզպայծառութիւնս մանկանց եկեղեցւոյ. և ես անպիտան Ղազար գրիչս տեսի զեռափափագ սէր սորա, զոր ունէր հետ սբ. գրոց, և շնորհեցի գրել զսա մանկանց իմոց՝ Մուրատի և Պաղտասարի, զոր ըստ կարեաց իւրոց տկարութեանն, և ըստ Աստուծոյ
279 աշողութեանն յաւարտ ա//ստուածային զսբ. գիրս, որ կոչի Այսմաւուր։ Որ ունի հաւաքեալ ի յինքեան զճառս տէրունական տօնից, և զպատմութիւնս, և զգործս առաքելոց, և մարգարէից, զվարս սրբոց հարանցն, և ղյիշատակութիւնս ամենայն արդարոց զհնոց և զնորոց, զարիութիւն թագաւորաց, և զհրաշագործութիւնս հայրապետաց, զժուժկալութիւնս կուսանաց և զնահատակութիւնս արեամբ ներկեալ մարտիրոսացն, որք ազգի ազգի տանջանօք և դառն մահուամբ կատարեցան վասն անուանն Քրիստոսի։ Եւ եղև աւարտ գրոցս ի ՌՁԸ (1639) ամի թվականութեանս Հայոց, ի թագաւորութեանն Թուրգաց սուլթան Մուրատին, և ի կաթողիկոսութեանն Կիլիկեցոց տէր Սիմէոնին և առաջնորդութեան քաղաքիս տէր Յակոբ վարդապետին։ Եւ է սա ի լաւ և ընտիր յօրինակէ որ ասի Ծերենց. և այլ աւելի քան զնորայն, զի շատ նոր վկայք աստ գրեցան և հարստացաւ գիրքս այս քան զնորայն։ Գրեցաւ սա ի մայրաքաղաքս Յէվէրիայ. որ կոչի Հալէպ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցեացս։ Արդ՝ որք հանդիպիք սբ. գրոցս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սբ. աղօթս ձեր զվերոյ յիշեալ ստացող գրոցս զմահտեսի Սաֆարն, և զծնողսն իւր՝ զՆաւասարդն, և զՄանուշն, և զորդիսն իւր, և զհոգևոր եղբայրն իւր՝ զՄինասն, և զամենայն ազգայինսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն և լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցա և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն...։

---

42 Տե՛ս շատ համառոտ մի երկու հիշատակարան նույ միևնույն բովանդակությամբ։

Այլ զիս զանարժան զծողս աղաչեմ յիշել ի Տէր և զծնօղսն իմ և զամենայն ազգայինս։ Այլ և զուսուցիչքն մեր, զմարմնաւոր ծնօղսն մեր զՂազար քահանայն զքաշ քարտուղարն, որ և իսկ ինքրն ծաղկեաց. աղաչեմ յիշել ի Տէր և ողորմի ասել նմա։ Այլ և խոշորութեան և սղալանաց զրիս անմեղադիր լերուք, զի կար մանկութեան մերոյ այս էր, զի դեռևս տխմար գոլով չեմք արժանի այսմ պատուելի արհեստիս. և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

Բ

...Որ ողորմի ստացողի գրոցս մահդեսի Սաֆարին *և իւր կենակցին՝ մահդեսի* Զոնալին, *և իւր ծնողացն՝* Նաւասարդին *և* Մանուշին, *և մահդասի* Եղիսին:

Գ

...Ողորմեա՛ ստացողի գրոցս մահդեսի Սաֆարին, *և իւր կողակցին՝ մահդեսի* Զոնալին, *և փուրոց ծնօղացն, և իւրոց որդոցն՝* Ուսուֆշին, Աբրահամին *և* Մարիամին:

Դ

...Որ ողորմի ստացողի գրոցս մահտեսի Սաֆարին, *և իւր ծնօղացն՝* Նաւասարդին *և* Մանուշին, *և իւր հոգևոր եղբօրն՝* Մինասին, *և իւր որդւոցն և դստերացն, և ամենայն արեան [մերձաւորացն]։*

Ե

...Մահդեսի Զոնալին, *և իւր ծնօղացրն՝* Յոհանին, *և մահդեսի* Եղիսին *և ամենայն արեան մերձաւորացն։*

1153

ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ

ՅՁԹԱԻԱ, Ա 18 (ժամանակ?). տե՛ս նաև «ՀԱ», 1905 թ., էջ 268

Գրիչ՝ Աւետիք

1[1] *Վասն այն տառիկք իմամ* Սամարայ *կոչեն զնա, որ է ի մէջ հին* Բաբիլոնի *և բարձր գումպեթիւ է շինած, սպիտակ իբրև թէ նոր է զուգած։ Տեսա թվին ՌՁԸ (1639)* Արզրումեցի Աւետիքս:

1154

ԱԻԵՏԱՐԱՆ

ՅՁԼԱ, № 3. տե՛ս նաև Rapp. Mac., *VII, № 5, էջ 109—110, «ՀԱ», 1936 թ., էջ 507*

Գրիչ՝ Մկրտիչ դպիր
Վայր՝ Իլէվ

ա

4 *Փառք..., որ և մի ի բազմացն պարոն* Ղազարի *որդին՝ աստուածասէր* Գրիգոր, *եղբայրն իմ հարազատ, մանաւանդ և աւագագոյնն քան զիս, ցանկացող եղև այսմ անպատում բարոյս՝ այս սբ. կտակիս, որ կոչի* Աւետարան... *վասն որոյ ստիպեալ եղէ յեղբօրէ իմմէ. և ես թերավարժ*

գոլով գրչութեան, ի հարկէ յանձն առի գրել զսա, և շնորհիւն Աստուծոյ սկսա[յ] և ողորմութեամբ նորին յանգ ելեալ կատարեցի։

Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ յոգնամեղ Մկրտիչ դպրի, ի թվարերութեան հայկազան տումարիս ՌԶԸ (1639) ամի, ի յերկիրս Իլախաց, ի քաղաքս Իլէվ կոչեցեալ, ի դուռն Ս. Աստուածածնին ննշման և այլ սբ. եկեղեցեացս, ի ժամանակս հայրապետութեան սբ. էջմիածնա[յ] տեառն տէր Փիլիպպոս կաթուղիկոսին, և թագաւորութեան Իլախաց Զորրորդ Վլատիշլավին։ Բայց զառաջնորդ նահանգիս զապստամբեալն ի հայրապետէն ոչ համարեցայ արժանի յիշատակել աստ, ոչ եթէ ի բարիս, այլ և ի նախատինս, քանզի բազում և անասելի նեղութիւնս հասոյց ժողովրդեանն Լէվա[յ], զոր ոչ կամեցա յերկարել։ Արդ՝ մեծաւ
5 փափագանօք գրել ետ զսա և ստացող եղև սբ. Աւետարանիս ի հա//լալ արդեա[ն]ցն և յարդար վաստակոց իւրոց եղբայրն իմ՝ Գրիգոր. և ետ զսա յիշատակ վասն հոգոյ իւրոյ և վասն ծնօղացն և ամենայն արեան մերձաւորացն իւրոց ի նորաշէն քաղաքն Զամոսցեա[43] յեկեղեցի ամենասրբուհոյ Աստուածածնին...։

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ... յիշեցէք... նախ զստացող սորա զաւագ եղբայն իմ՝ զպարոն Գրիգորն, և զանպիտան Մկրտիչ գրիչըս, և զծնօղսն մեր զփոխեցեալսն առ Քրիստոս, զհայրն մեր՝ զպարոն Ղազարն, և զմայրն մեր՝ զԿատարինէն, և զեղբայրսն մեր զբան Թորոսն, և զբան Նիկոլայոսն, և զԱնգրէասն, որ յերիտասարդական հասակին փոխեցաւ յաշխարհէս, և զքոյրն մեր՝ զՇուշանն և զամենայն արեան մերձաւորսն մեր. և ասացէք գոնէ միայն զԱստուած ողորմի և Քրիստոս Աստուածն ամենեցուն, ամենայնի ողորմած ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրոյ. ամէն։

Բ

Յիսուս Քրիստոս... ողորմեա՛... երկու եղբարցս Աւետարանիս ստացողի՝ Գրիգորի և մեղաւոր գծողիս սորա՝ Մկրտչի, գրեցաւ թվին ՌԶԸ (1639)։

1155

ԱԻԵՏԱՐԱՆ

«Արձագանք» 1888, № 10. տե՛ս նաև Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 157—159

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Զագամ

133 Փառք...։ Յամի հազար և ՁԸ (1639)-երրորդի թուականութեանս Հայոց գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ [Եսայի դրչի]։ Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց... սուտանուն Եսայի գրչի, որ անուամբս եմ կոչեցեալ և գործովս ոչ, ընդ հովանեաւ Ս. Խորանաշատայ Աստուածածնիս, ի գաւառս Զագամ, ի դառն և անբարիշտ ժամանակիս, որոյ արդարութեան կողմն հակեալ էր և անիրաւութիւն և անկարգութիւնն ամենայն ուրեք զաւրացեալ և ուր

43 Տպված է «Զամոսշեա»։

ուրեք գտանէր ճշմարտութիւն, վասն ծովացեալ մեղաց իմոց, ի բազմանալ անաւրինացն և նուազել քրիստոնէիցն, ի թագաւորութեան Պարսից շահ Սաֆի[յ] *և Յունաց թագաւորութեան սուլթան* Մուրատա[յ], *ի թուականութիւն Հայոց Ռ և Զէ (1638) ամի, ամսոյն... ժողովեցան անթիւ զաւրքն Յունաց*[44] *գնացին ի վերայ* Բաղդատա[յ] *բերդի դէմ յանդիման, էառ զբերդն թուփիւ և զարբազանաւք և կոտորեաց զաւրս բերդին ԺԲՌ (12000) զաւրք Պարսից, որոց փրկեսցէ զմեզ տէր Աստուած. ի հայրապետութիւն* Գանձասարա[յ] *տեառն* Գրիգորիսի, *ի յաթոռակալութիւն սբ. ուխտիս Խորանաշատայ ի տէր* Բարսեղ *արհեպիսկոպոսի և ի տէր* Յոհաննէս *արհեպիսկոպոսի և այլ եղբարցս, որ աստ կան հաւաքեալ*[45]։

Դարձեալ յիշեցէք զԹում[ա] կրաւնաւորն որ ստա[ցա]ւ զսբ. Աւետարանս հալալ արդեանց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Ադին, Գաւղալաղին *և եղբարցն իմ՝* Յաիումին *և* Մէլիքին, *և իւր որդի* Բաղդամին, *և մաւրն՝* Շանումին, *և դստերացն՝* Գարիանին, Մարիանին, *և Բ (2) քվերցն իմոց՝* Դալաքխանումին *և* Գուլանին, *և պապն իմ՝* Փիրին, *և տատն իմ՝* Շամումաղին, *և իւր որդիքն՝ տէր* Եսային, *տէր* Ներսէսին, Ասլին, *և իւր որդւոցն՝* Միրզին, *տէր* Նէրսէսին, Աղին, Մալքումին, *քվերն՝* Խանումին, Սումղուրին, Բաղդամի *քեռի* Թումանին, *և իւր կողակցին և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։ Դարձեալ յիշեցէք զԹումա կրաւնաւորն, որ փափկանաւք գրել ետ զսբ. Աւետարանս. Աստուած ողորմի ասէք իւր և իւր ծնողացն, Աստուած զձեզ յիշէ ի միւս անգամ գալստեան. ամէն։*

---

[44] *Իմա՛ թուրքերի։*

[45] *Մինչև այստեղ տպված է նաև նույն թերթի № 12-ում (1888 թ.), էջ 163։*

1156
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՅՁՎՍ, I, № 71

Գրիչ՝ Վարդան երէց
Վայր՝ Կ. Պոլիս

326 Փառք... Գրեցաւ երգարանս Դաւթայ մարգարէին ի թվականութեանս Հայոց ՌՁԹ (1640) ամին, ի մայրաքաղաքս Կոստանդինուպոլիս, ձեռամբ թարմատար և անիմաստ Վարդան երիցուս, ի վայելումն տիրացու Ովանէսին. Աստուած բարով վայելել տացէ իւրեանն. ամէն։ Արդ՝ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեղապարտ գծողս և զծնօղսըն մեր. և Աստուած զձեզ յիշէ. ամէն։

Յայսմ ամի եղև զրաւ սորա, որ սուլտան Մուրատ թագաւորն մեռաւ և թագաւորեաց իւր եղբայրն սուլտան Իպրահիմն, ՌՁԹ (1640) ամին, յունվար ամսոյ Լ (30), աւրն հինգշաբթի։

1157
ԱՒԵՏԱՐԱՆ

ՅՁԼԱ, № 3 (1639 թ.). տե՛ս նաև Rapp. Mac., VII, № 5, էջ 111, «ՀԱ», 1936 թ., էջ 508

Գրիչ՝ Մկրտիչ դպիր
Վայր՝ Բեօրդրֆով

ο Ընդ նմին յիշեցէք եղբարք իմ նազելի ի // սբ. և ի մաքուր յաղօթս ձեր զՆիկոլ Լովցի, պարոն Աւետիք Տօմաժիրուֆենց որդին, զիմ հօրն և մօրն, զեղբայրն և զքոյրն իմ. և ասացէք Աստուած ողորմի նոցա հոգոցն։ Որ յիշատակարան գրեցի սբ. Աւետարանիս ի խնդրոյ բան Գրիգորի Զամոսցացի զստացող սբ. մատենիս[1]. ի քաղաքն Բեօրդրֆով. ուր ազատ որդիքն դատաստանաւ դատին կէս տարի, որպէս հոգևորքն, սոյնպէս և մարմնաւորք, ի թվին Հայոց ՌՁԹ (1640), մարտի ամսոյ Ե (5), օրն հինգշաբթի. Աղուհացիցն երրորդ շաբաթին։

Ընդ նմին և զվարպետն իմ՝ զտէր Դաւիթ Զէյթունցի յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր. և ասացէք Աստուած ողորմի հոգոյն և ծնօղացն նորին առ հասարակ. ամէն։

[1] Խոսքը վերաբերում է 1639 թ. ընդօրինակած Ավետարանին և վերջինիս ստացողին։ Այդ հիշատակարանը տե՛ս 1639 թ. շարքում, № 1154։

1158
ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ
ՏՅԶՄՎ, № 279

Գրիչ՝ Արիստակէս երէց
Վայր՝ Կ. Պոլիս

ա

703 *Փառք...։ Արդ՝ ի աւարտ հասանել սբ. հարանց վարուցս ի քաղաքն* Կոստանդիանուպոլիս, *ի թաղն որ կոչի* Պալաթ, *ի դուռն Ս. Հրեշտակապետին, ի կաթուղիկոսութեան տեառն* Փիլիպպոսին *և ի պատրիարդութեան արհի եպիսկապոսին տէր* Դաւթին, *ի թվականութեան ՌՁԹ (1640) մարտի Ի (20), ձեռամբ մեղապարտ գրչի և մեղօք հողացեալ, բարեաց դատարկացեալ [յ]ոգնամեղ գրչի* Արիստակէս *Էրէց [յ]որջորջի, որոյ յոյժ ցանկացօղ եղէ այսմ տառի, որ զպատմութիւն սբ. հարանցս գովի, որ հազիւ հասա փափաքմամբն սրտի, յիշատակ ծնողաց կենդանեաց և ննջեցելոց, այլ և կենդանոյն մահտասի* Մկրտչին *և հանգուցելոյն մօրն իմոյ՝ մահտասի* Շանսուլթանին, *և զաւակի նորին՝* Երանոսի, Դշխոյին, Հռիփսիմէին, Մարիամին, Դաւթին, Ալիքսանոսին, *և կենդանոյն երիցակնոջ* Տիրոնէ, *և ծնողաց նորին՝* Մալումին *և կողակցի նորին* Նոնոֆարին, *և հանգուցելոյ նորին* Տէրվիշին, Շխուկին, Մարիամին, *կենդանեաց դստեր նորին՝* Թաքուհի, Մարթային։ *Այլ և ամենայն արեան մերձաւորաց մերոց առ հասարակ աշխատաւորաց, այլ և ուսուցանողին իմոյ. այլ և զանարժան անուն* զԱրիստակէս *երէց գրող սորին, երես անկեալ աղաչեմ։*

բ

Զանարժան և զմեղօք հողացեալ զԱրիստակէս *երէցս, որ եմ տեղեաւ ի գեղջէն* յԱկրնցի, *որ և գրոց բառիւ* Հերապոլիս *անուանի։ Յիշատակ ննջեցելոց մերոց, կենդանեաց, մարմնաւոր ծնողացս՝ մահտեսի* Մկրտչին *և կողակցի նորին մահտեսի* Շանսուլթանին, *և որդոց նորին* Երանոսին, Արութենին, *այլ և դստերաց մերոց և որդոց* Դշխոյին, Դաւթին, Մարիամին, Հռիփսիմէին. *կենդանոյն, և* Ապտուլմուսենին *և ամենայն արեան մերձաւորաց առ հասարակ ամենեցուն, ի դուռն Ս. Հրեշտակապետին յիշատակ է։ Այլ և գծող սորին զանարժան գրիչս* զԱրիստակէս *երէցս, կարդացողաց և լսողաց։ Այլ և իրիցկնոջս* Տիրոնէ, *և ծնողաց նորին* Մալումին, Նոնոֆարին, Տէրվիշին, Շխուկին, Մարիամին, Միքայելին *առ հասարակ ամենացուն. ամէն։ Թվին ՌՁԹ (1640), ի մարտի Ի (20), աւրն հինգշաբթի։ Յիշատակ է ի դուռն Հրեշտակ[ապետ]ին. ամէն*[2]։

---

[2] Ցուցակում բերված է անթվական մի հիշատակարան ևս, ուր հիշված են վերևում նշված անունների մի մասը։ Իսկ ձեռ-ի պահպանակի վրա գրված է. «Թվին ՌՂ (1641) Արիստակէս, Յակոբ. վա՜յ աչն որ զիւր որդին այնպիսի տեսաւ. լաւ է որ կուրացեր, քան թէ որ այնպիսի տեսաւ» (էջ 703)։

Մեր հաշվումներով 1640 թ. մարտի 20-ը ոչ թե հինգշաբթի է, այլ ուրբաթ։ Ի դեպ, նման՝ մեկ օրվա անհամապատասխանություն գտնում ենք նաև №№ 1156, 1163, 1164 և 1168 հիշատակարաններում։

1159
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան, № 6569 (ԺԴ դար)

Վայր՝ Ճանուկ

471ա Թվին ՌՈԽ (1640) սկիզբն արինք շինելոյ եկեղեցին Ճանկայ, որ է սբ. կարապետին Քրիստոսի Ս. Յովաննու, ապրիլ ամսի Ե (5), աւուրն Յարութեան Տեառն։

Ես՝ Ֆրայ Օգոստինոս արքեպիսկոպոսս խոստացայ Ե (5) թուման վասն շինելոյ[3],

Ես՝ Ալաբաիջի որդի Անդրէասս ԵՌ (5000) դեկան խոստացաւ։

Ես՝ Ալէքսանոսի որդի Պողոսս ՁՌ (6000) դեկան խոստացաւ։

Ես՝ Յարի որդի Մուրատս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Աղագուլի որդի Դօլվաթս ԲՌ (2000)[4] դեկան։

Ես՝ Միրի որդի Փիրիջանս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Ջանղուլի որդի Էվատչէս Ռ (1000) դեկան։

Ես՝ Աղաջան[ի] որդի Իրճաղարս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Վէլի որդի Աղաջանս Ժ (10) շահի[5]։

Ես՝ Դօլվալի որդի Միրումս Ռ (1000) դեկան։

Ես՝ Թասալի որդի Շանբոնեցի Գուլիս Ժ (10) շահի։

Ես՝ Էվէլչանի որդի Դամանս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Միրումի որդի Մկրտիչս Ժ (10) շահի։

Ես՝ Էվատի որդի Ալաբաիջս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Ղուլիջանի որդի Աստուածատուրս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Մարկոսի որդի Դադէս ԷՌ (7000) դեկան։

Ես՝ Խօջի որդի Անդրէասս Գ (3) ապասի։

Ես՝ Խօջի որդի Յարազի[զ]ս ԵՌ (5000) դեկան։

Ես՝ Փիրիջանի որդի Ախիջանս Ռ (1000) դեկան։

Ես՝ Ջանաթի որդի Մաթոսս Գ (3) ապասի։

Ես՝ Գուլճաղարի որդի Աղափիրիս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Յեզդանբախջի որդի Բուն[ի]աթս, Փիրղուլիս ԴՌ (4000) դեկան։

Ես՝ Սօլթանղուլի որդի Յեդկարս ԲՌ (2000) դեկան, Գ (3) սօմար ցորէն։

Ես՝ Միրզի որդի Լաւասարդս, Շանիկս ԴՌ (4000) դեկան։

Ես՝ Պետրոսի որդի Սարգիսս և Պողոսս ԲՌ (2000) դեկան։

Ես՝ Ղուլինանի որդի Յովանէսս Լ (30) շահի։

Ես՝ Ադաբէկի որդի Փիրաղիսս Ռ (1000) դեկան։

Ես՝ Միրիջանի որդի Մա[ն]ուէլս Ժ (10) շահի։

---

[3] Շարունակության ազատ մնացած տեղում մեկ ուրիշը գրել է. «Թվին ՌՈԾԲ (1652) սակաւ մի օրինեցինք ըստուց»։

[4] Կարելի է կարդալ նաև «ԹՌ (9000)»։

[5] Ձեռ-ում տողի վերևի լուսանցքում 3-րդ ծանոթ. մեջբերման գրչությամբ գրված է. «Ջսակաւ գրող սորա զԳրիգոր Ծործորեցի պաշտօն բանին Տեառն, առաքելական նուիրակ, յիշել աղաչեմ»։

Ես՝ Միրզի *որդի* Շահզուլիս *ԲՌ (2000) դեկան։*
Ես՝ Խոջխաբարի *որդի* Գիրիքորս *Ռ (1000) դեկան։*
Ես՝ Ջումարտի *որդի* Թարաղուլիս *Ռ (1000) դեկան։*
Մեք՝ Աղաջանի *որդիքս* Նադարս, Ղարաջա, Սուլթանզուլին *ԴՌ (4000) դեկան։*
Ես՝ Էվատի *որդի* Մարգարէն *ԵՌ (5000) դեկան։*
Ես՝ Փիրվէլի *որդի* Փուլաթս *Ժ (10) շահի։*
Ես՝ Աղաջանի *որդի* Յովանէսս *ԲՌ (2000) դեկան։*
Ես՝ Շահնազարի *որդի* Յովանէսս *ԲՌ (2000) դեկան։*
Ես՝ Էվազի *որդի* Ղումրիս *Ա (1) թուման։*
Ես՝ Աստուածատուրի *որդի* Խոջէս[6]։
Ես՝ Միրի *որդի* Գադոսն *ԲՌ (2000) դեկան։*
[Ե]ս՝ Յեղղանբաիշի *որդի* Էվազս *ԲՌ (2000) դեկան Գ (3) սամար ցորէն։*
Ես՝ Գրիքորի *որդի* Աղաջանս *Ժ (10) շահի։*
Ես՝ Ամիրի *որդի* Գուլիս *Գ (3) ապասի։*
Ես՝ Միրզի *որդի* Այտոզմիշս *Ռ (1000) դեկան։*
Ես՝ Շահզուլի *որդի* Մա[ն]ուէլս *ԲՌ (2000) դեկան։*
Ես՝ Խոջի *որդի* Սուդարս *ԲՌ (2000) դեկան*[7]։

1160

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, Մ 3812 (1610 թ.)

Գրիչ՝ Յովանէս

516բ *Ես՝ մեղապարտ և անարժան, անպիտան ծառայ* Յովանէս *երէցս մինչի յայժմոյս աւագութեան բաժին տանէի, հրամայ թողի ղայն՝ աւագութեան բաժինն։ Այսուհետև ով որ զայն աւագութեան բաժին թամահութիւն առնէ՝ ի մեծ հրապարակին ամաւթով լինի առաջի Աստուծոյ, իմ յորդոցն և իմ ընդանեացն, յաղահի կամ թամահ անէ՝ պատժի Աստուծոյ։ Եւ թէ լինի քահանայից մէջդ յաւագիրիցութիւն բաժինըն հաւասարայպէս լինի։ Թվին ՌՁ և Թ (1640)։ Գիրս գրեցաւ աւագ Զատկի հինգշաբթի աւրն, ապրելի ինն*[8]։

1161

ԱԻԵՏԱՐԱՆ

ՍՀՀՍ, Մ 51

Գրիչ, *ծաղկող՝* Աստուածատուր Ուրհայեցի

Վայր Հալապ

ա

107 *Փառք...։ Արդ գրեցաւ* Յաւետարանս *ի մայրաքաղաքս ի* Հալապ, *ընդ հովանեաւ Ս. Աստուածածին և Ս. Քառասունք եկեղեցէացս, ի կաթողի-*

---

6 Ձեռ-ում գումարը չի նշված։

7 Մեկ ուրիշը գրում է, որ սույն հիշատակարանում գրվածը «սուտ է»։ Այդ հիշատակարանը տե՛ս 1656 թ. շարքում։

8 1640 թ. Զատիկը կլինի ապրիլի 5-ին, կիրակի, այստեղից էլ ապրիլի 9-ը իրոք հինգշաբթի է։

կոսութեան տանն Կիլիկիոյ *տէր* Սիմէոնին, *և առաջնարդութեանս տեառն տէր* Յակոբ *քաջ և բարձրի վարդապետին* Կարկոցոյն, *ի թվին Հայոց ՌՁԹ (1640) ապրիլի ԺԴ (13), աւրն երկուշաբթի, ձեռամբ* Աստուածատուր *իրիցուի* Ուռհայեցւոյ, *ի վայելումն տէր* Աբրահամ *քահանային, եւ Աստուած ողորմի* Խաթունին, *իւր հաւրն՝ տէր* Մարկոսին, *իրիցկնոջն. իւր որդւոցն՝* Աստուածատուրին, Հեթումին, *խոճա* Միրաքին, *մղտեսի* Մկրտչին, Ղզլարին, Դարիպին, *իւր մօրն և իւր պապուն՝ մղտեսի* Տաւնեկան, *իւր մաւրն և իւրեանց հաւասար ննջեցելոցն, որ բազում փափագանաւք ետուն դրել իւրեանց հոգւոյն և յանձնեցին ի* Ուռումղալացի *տէր* Աբրահամն, *որչափ ի մարմնի է՝ վայելեսցէ և յետ անցման նորին, մընասցէ անջինջ յիշատակ ի Ս. Քառասունք եկեղեցւոյ. չունի ոք իշխանութիւն՝ թէ՛ կաթողիկոս, թէ՛ վարդապետք, թէ՛ եպիսկոպոսք թէ՛ քահանայ, թէ՛ սարկաւագ, թէ՛ աշխարհական հանէ զայս սբ. Աւետարանս ի դռան Ս. Քառասնից։ Եթէ մի ոք ի դոցանէ [յ]անդգնի և հանէ զԱւետարանս զայս ի Ս. Քառասունք եկեղեցւոյ, զմասն և զպատիժն ընդ Յուդայի կրեսցէ։ Ո՛վ դասք լոյսերամ քահանայք, թէ կարդալով կամ գաղափար դնելով մի ողորմի ասացէք տէր* Աստուածատուրին *և իրիցկնոջն՝* Սրբլուսամին, *որ տէրն մեր Յիսուս Քրիստոս ձեզ և մեզ ողորմեսցի ի միւսանգամ գալըստեան. ամէն։ Դարձեալ Աստուած ողորմի ասացէք մեր հոգեւոր որդւոյն՝* Ալէքսանին, *որ բաղում աշխատանք ունի ի սբ. Աւետարան[ի]ս, թէ՛ թուղթ նշանելն և թէ՛ կոկելն. զվարձն ի Քրիստոսէ առցէ...։*

Բ

Եւ ես ծաղկողս անարժան՝ Աստուածատուր *կոչիմ անուն, զիս արարէք յիշման...։*

1162
ՇԱՐԱԿՆՈՑ, ՏՕՆԱՑՈՅՑ, ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ
ՈՅԶՄՎ, № 632

Գրիչ՝ Գրիգոր երէց
Վայր՝ Զոռլու

Ա

115 *Փառք... Արդ՝ գրեցաւ գիրքս, որ կոչի Շարակնոց, թվին ՌՁԹ (1640) ապրիլի ԻԲ (22), օրն չորեքշաբթի, ի գիւղաքաղաքն որ կոչի* Զոռլու, *ձեռամբ անիմաստ գրչի* Գրիգոր *երիցու, որ զանուն ունիմ և զգործն ոչ՝ Աղաչեմ զերգող տառիս, որ յայսմ հանդիպիք օրինակելով կամ եղանակելով, յիշեսջիք ի սբ. յաղօթս ձեր զանարժանս, զծնողս իմ և զազգայինս, և որ առատն է ի տուրս բարեաց առ հասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալստեան. ամէն։ Անմեղադիր լերուք, եղբայրք, գրիս՝ Ա (1) գրչի կտրուածով գրեցաւ*[10]։ *Առաւօտ խաղաղութեան դռ. Մեծացուսցէէն, մինչև ցայս. բաւ է իմաստից։*

---

[9] *Սրա մահվան մասին վկայությունը տե՛ս 1653 թ. հիշատակարանների շարքում, վերցրած սույն ձեռագրից։*

[10] *Ձեռ-ի լուսանցքում բացատրված է. «որ է մի ծայրիւ»։*

Բ

Զաշխատող տառիս զՁոոլուցի Գրիգոր երէցս աղաչեմ յիշել ի բարի և անմեղադիր լինել, վասն մանրութեան և խամութեան և ոխութեան գրիս, զի վասն թխտի քչութեան եղև այսպէս և շտապով գրեցի, զի մինչև ցայս դեռ գրչի Ա (1) կտրուածով գրեցաւ. յոյս ունիմ առ տէր Աստուած, միթէ քանի գիր այլ դրվի. այսովս բաւ է։

Գ

Զաշխատող սորա զԳրիգոր աղաչեմ յիշել ի Տէր բարի։

1163

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 7104 (1621 թ.)

316բ ||| զոր տէր Աստուած այնպէս առաշնորդեաց, զի սկիզբն եղև շինելոյ Թաւրէզու եկեղեցոյն ի թվին ՌՁԹ (1640), ի յարեգի ամսոյ Դ (4) և ի մայիս ԺԳ (13), յաւուր հինգշաբթի, յետ Աշխարհամատրեան կիրակէին, ի տօնի Եպիփանու Կիպրացոյն հիմն արարք, զոր յայսմ աւուրն կատարի, զոր տէր Յիսուս Քրիստոս յաւարտ հանէ և անշարժ պահէ և աշխատողացն արքայութիւն պարգևէ. ամէն։

1164

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան, № 4287

300բ Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տաղտեսրս և Աղուեսագիրքս ի թվականիս ՌՁԹ (1640) յունիսի է (7), աւրն շաբաթ, ձեռամբ անիմաստ և անպիտան գրչի[11]. զգրող սորայ յիշեցէք ի յաղաչս ձեր։

1165

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԼԱԱԺԻ, B-16 (մանրաժապավեն, Երևան, № 238)

Գրիչ՝ Սաճակ
Վայր՝ Կամէնից

161ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ Տաղտեսրս և Աղուեսագիրքս ի թվականիս կատարեցա այս մատեանս աստուածային, որ ի Հոգոյն Սրբոյ շարժեալ Ընդհանրական թուղթ տեառն տէր Ներսէսի Հայոց կաթողիկոսին առ համօրէն հայասեռ աղինս. որ հաւատացաւ նմա ի Տեառնէ, և այլ զանազան հաւաքումն աստուածաբան վարդապետացն վկայութիւնք։ Որում ցանկացող եղեալ մեծաւ փափագանօք վարժապետն իմ՝ պարոնտէր Թորոս եպիսկոպոսն, և հրամայեաց ինձ դրել մեծաւ զգուշութեամբ։ Զոր և ես անարժանս ամենայնի, ապավինելով Աստուծոյ, ըստ կարողութեան իմոյ սկսա նստարել։ Եւ անկ ելեալ կատարեցի Աստուծոյ օգնականու-

[11] Ձեռ-ում գրչի անվան տեղը բաց է թողնված։

թեամբն, ի թվականիս Հայոց ՌՁԹ (1640), յունիս ամսո[յ] Լ (30), ի աստուածապահ քաղաքն, որ կոչի Կամէնից:

Արդ՝ գրեցաւ ձեռամբ անվարժ և անկիրթ, ծառայ ծառայիցն Աստուծոյ ի Սահակ պատանեակի, որդի Գրիգորին: Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, հայրք և տեառք իմ, հանդիպողք այսմ մատենիս, անմեղադիր լերուք յաղագս սղալութեան և անզարդութեան գրոյս։ Բայց չէ զարմանք. քանզի մանուկ տիօք գրեցի, այսինքն՝ ԺԱ (11) ամաց էի, Դ (4) ամիս պակաս։ Եւ մանաւանդ թէր չէի հրմուտ գրչութեան արուեստի, բայց հրամանն և երկիւղ և սաստ վարժապետին իմոյ, ստիպեաց զիս, զի այսպիսի աստուածային գանձն կարող զօրութեամբն Աստուծոյ անկ ելեալ կատարեցի։ Զոր նմա փառք...։

161բ Դարձեալ աղաչեմ զձեզ, հայրք և տեառք իմ, զի ստացողն և ընթերձողն միաբանեալք ընդ գրչին յիշեսցին ի Քրիստոս Յիսուս՝ ի Տեառն իւրեանց. ամէն։

1166
ՏՕՆԱՑՈՅՑ
Rapp. Mac., XXII, № 63

Գրիչ, ստացող՝ Աբրահամ երէց

149 Փառք...։ Արդ՝ գրեցօ Տօնացոյց[ս], որ կոչի Աւետարանացոյց, ի թվին Հայոց ՌՁԹ (1640) [յ]ուլիս ամսո[յ] Ը (8), օրն չորեքշաբթի, ի հայրապետութեան տէր Սիմէոն կաթողիկոսին[12]։ Իսկ ես անարժան Աբրահամ էրեցս գրեցի զՏօնացոյցս յիշատակ Ս. Ստեփանոսի. ինձ և
150 ծնո//ղաց իմոց և ամենայն արեան մերձաւորացս, աղաչեմ յիշել ի սբ. յաղօթս ձեր. և որ յիշէ՝ յիշեալ լինի ի Քրիստոսէ Աստուծոյ մերո[յ]։

1167
ԱՒԵՏԱՐԱՆ
ՏԵՐԱՎՋ, № 42 (1329 թ.)

65 Դարձեալ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զպարոն Ոսկանն, և կենակիցն իւր՝ Մարիանէն, և զորդիքն իւր՝ հանգուցեալ Յակոբջանն, Խաչիկն: Քրիստոս Աստուած ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. ամէն։ Թվին ՌՁԹ (1640) յուլիս ԺԶ (16) գրեցաւ յիշատակարանս։

1168
ՏԱՂԱՐԱՆ
Երևան, № 1639 (1640 թ. առաջ)

81բ Յիշատակ է այս գիրքս հանգոյցեալ տէր Յուսեփին և մահտեսի Դաւիթին, ի վայելումն տիրացու Պօղոսին, որքան ընթեռնու յիշատակէ զնոսա և ողորմիս տայ ննջեցելոցն ևս՝ եթէ յաբեզա լինի կամ քահանայ

[12] Խոսքը Սսի կաթողիկոս Սիմեոն Բ Սեբաստացու մասին է։

ըստ արժանեացն յիշատակէ միանգամ յառաջին պատարագին...։ Դարձեալ ով ոք ընթեռնու կամ օրինակէ, յիշէ կամ Հայր մեղա մի ասէ, Աստուած իւր մեղացն թողութիւնն շնորհէ. ամէն։

Գրեցաւ յիշատակագիրքս թվին ՌՁԹ (1640)-ին[13], [յ]ուլիսին ԺԸ (18), օրն ուրբաթ։

1169

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՐՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻՈՅ

ՏԵՐԱՎՋ, № 399

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Սպահան

ա

601 Զվերջին գրող սորա Խաչատուր էրէցս յիշեցէք ի Քրիստոս. որ գիրքս <ուր> կոչի Պարապմանց, գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՁԹ (1640). Վարգայվառ պաքին երկուշաբաթի աւր, սկիզբն արարի, Վարդայվառն Գ(3) շաբաթ[14] անցած պռծայ[15]։ Աւարտ եղաւ ի քաղաքն Շաւշ՝ Ըսպահան, ի հայրապետութեանն Զուղայոյ Խաչատուր վարդայպետին, որ Աստուած ուր հոգին լուսաւորի, որ այս Պարապմանց գիրքս յինք առի աւրինակեցի. սխալանացն ներել, թողութիւն մեզ և ձեզ Քրիստոս Աստուած ողորմեսցի, որ առատն է ի տուրս բար[ե]աց. ամէն։

բ

Զգրող սորա Խաչատուր երէցս յիշեցէք ի Քրիստոս։

1170

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ՅՁՍԳ № 1. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընչխարք», հտ. Բ, № 523, էջ 433—435, «ՀԱ», 1922, էջ 467—469

Ստացող, նվիրատու՝ Ներսէս Սեբաստացի
Վայր՝ Սեբաստիա

ա

3 ...Մեղաւք ներկեալս և արժանիս տանջանաց՝ բանի սպասաւոր Ներսէս անուն Սեբաստացի[16] կոչեցեալ յաստիճան եպիսկոպոսութեան և վարդապետութեան, շնորհիւ Տեառն, ցանկացայ սբ. տառիս ինձ և արեան մերձաւաբացս և ինձ խրատատու և դաստիարակ բաբունի կաթուղիկոսաց տէր Յովհաննէս և տէր Մինաս անուն, որ յաթոռն Կիլիկիայ, այլ և միահամուռ ժողովրդեան Հայոց ազգիս Սեբաստիոյ, Եդեսիոյ, Ուռհայոյ, Կարնոյ քաղաքի և այլոց քրիստոնէից տրաւք և ողորմութեամբն ստա-

[13] Մատենադարանի ձեռագրաց ցուցակ կազմողները տարեթիվը կարդացել են ՌՂԹ (1650) և ձեռ-ի գրչությունը նշել «1650-ից առաջ» (հտ. Ա, էջ 598)։

[14] Տպված է «երեքշաբաթ»։

[15] Այսինքն՝ հուլիսի 6-ից մինչև հուլիսի 26-ը։

[16] Սեբաստիայի հոգևոր առաջնորդ, հետագայում՝ 1648 թ. Սսի կաթողիկոս, մահացել է 1652 թ՝. ըստ Գուշակյանի, 1654 թ՝. ըստ Օրմանյանի։

ցայ զսբ. գիրս զայս՝ ի փրկութիւն մարմնոյ և հոգւոյ. և ըստ երանութեան մարգարէին որ ասէ. «Երանի...»[17] այլ և բազում յուսադրութիւն որ ի սբ. դիրս յիշատակի, վասն բարի յիշատակաց այսմ պայմանի, զի տէր Աստուած իւրաքանչիւրոցն աշխատողաց և ինչս տուողաց վարձս բարեաց պարգևեսցէ և մաքուր և սբ. պահողաց և խնամք տանողաց, հաւատացելոց, կրաւնաւորաց և ժողովրդականաց, վասն զի ես միայն փոքր ինչ աշխատանս ունիմ, և ինչս, և ապրանս, և ծախս, որ ի սբ. գիրս եղև
1 հաւա/տացելոց քրիստոնէիցն է, և ոչ թէ իմ և որդւոց յորդիս յիշատակ է ըստ իւրաքանչիւրոց, թէ ապրանաց և թէ աշխատանաց կողմանէ, զոր տէր Աստուած իւրաքանչիւրոցն վարձահատոյց լիցի որպէս և ինքն գիտէ. ամէն։

Արդ՝ եղև սկիզբն գրոյս թուին Հայոց ՌՁԵ (1636), ձեռամբ Բարաղամ ջահրնկալի Սեբաստացւոյ, ի դուռն Ս. Սարգիս և Ս. Աստուածածին եկեղեցւոյս ի քաղաքիս Սեբաստիա. և կատարումն սբ. գրոյս եղև թուին ՌՁԹ (1640). և եղաւ կամաւք ամենայն ժողովրդեանն յիշատակ ի դուռն նորաշէն Ս. Սարգիս եկեղեցւոյ, ի հայրապետութեան և ի կաթողիկոսութեան տէր Փիլիպպոսի ի սբ. աթոռն Էջմիածնայ, և տէր Սիմէոն կաթուղիկոսն ի Կիլիկիայ, և յաւուրս եպիսկոպոսացն՝ Անդրէաս եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Նշանի, և Յովհաննէս եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Անապատի, և Նիկողոս եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Հրեշտակապետաց, և Մկրտիչ եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Գէորգեայ [Տէէկսէյու[18] վանից], և ի հա[յ] բապետութեան աշակերտիս մերոյ Ալեքսիանոս երիցու ի դուռն Խնդրակատար Ս. Աստուածածնին։

Արդ՝ և ես անպիտան Ներսէս վարդապետ կոչեցեալս աղաչեմ զձեզ, հանդիպողք սբ. տառիս, եթէ աւրինակելով, եթէ ընթեռնլով, եթէ տեսութեամբ վայելելով, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զիս զմեղաւորս և զծնողս իմ՝ զԿարապետն և մահտեսի Խաթունասին, և զեղբայրն իմ՝ մահտեսի տէր Աստուածատուր նորընծայ քահանայն և զնորին զաւակքն և զամենայն արեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս, և զորդիացեալ աշակերտեալ մանկունս իմ՝ զտէր Յակոբ բանի սպասաւորն, Խաչատուր սարկաւագն, այլ և զչինող և աշխատող ի վերայ մագաղաթիս զԿարապետ ջահնկալն Ատանացի և զՅովանէս որդեգիրն իմ և զմիւս Կարապետն և դուք յիշեալ լիջիք աստ և ի հանդերձեալն, առաջի տեառն Աստուծոյ մերոյ. ամէն։

Գրիչ՝ Բարղամ

Բ

Ընդ սոցին և զանպիտան և զմեղսամած ծառայս ձեր զԲարղամ սուտանուն գրիչս, յիշեցէք և մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք, որ չէի արժանի ձեռնարկել ի գիրս յայս, անարհեստ գրովս գրել և յաւարտ հասանել սորին, այլ աւգնականութեամբն Աստուծոյ և յուսադրութեամբ բազմերախտ և երջանիկ հաւրս մերում Ներսէս քաջ բաբունապետիս ձեռնարկի և գրեցի, զոր տէր Աստուած բարեաւ վայելել

[17] Եսայ., ԼԱ, 9։

[18] Ղ. Փիրղալեմյան ծանոթագրում է «Դևոցա». Դևոցա կամ Տևքսե գյուղը գտնվում է Սեբաստիայի հարավ-արևելյան կողմում՝ 50—60 կմ. հեռավորության վրա։

տացէ ընդ երկայն աւուրս. և յետ աստեացն ելանելոյ ԺԲ (12) վարդապետացն դասուցն դասակից և պսակակից արասցէ զինքն և զննչեցեալսն իւր անզրաւ յաւիտենիս. ամէն։ Արդ[19] ի թվին Հայոց ՌՁԴ (1634) թագաւորն Տաճկաց սուլթան Մուրատն եկն ի Սեբաստիա գնալ ի Պարս ի պատերազմ։ Կամաքն Աստուծոյ, հրաման եղաւ նորոգելոյ զեկեղեցիս Ս. Սարգսի, որ ի վաղուց հետէ հնացեալ և խախտեալ էր. և երանաշնորհ հայրս մեր Ներսէս վարդապետն վերատեսուչ մայրաքաղաքիս մերոյ Սեբաստիոյ, թողեալ զամենայն հոգս մարմնականս և միայն հոգևորին, բուռն հարեալ և վառեալ ի սէրն Քրիստոսի, ձեռն արկ ի շինումն սբ. եկեղեցեացս, և բազում նեղութիւնս կրեաց ի յանաւրինաց, որպէս ի հնումն Զորաբաբէլ քահանայ մեծ։ Որ բազում և շատ աշխատանս կրեաց հաւատով և յուսով և միամիտ սիրով շինեաց բազում ծախիւք և նորոգեաց ողորմութեամբն Աստուծոյ և լուսաւորեալ պայծառացոյց զկարգս և զկրաւնս եկեղեցականաց, որ խանգարեալ էր ի թուլամորթ և ի ծոյլ առաշնորդաց, և յետ այսր յաւել ևս նորոգել զՍ. Աստուածածին եկեղեցիս մեր, և ոչ այսու միայն շատացեալ, այլ և զԱյի [ե]աւր[կի] զեկեղեցին Յունաց ազգին, որ ի վաղուց հետէ խախտեալ և կործանեալ էր, և նոքա անմխիթար մնացեալ, ոչ ունելով ձեռնտու ի հոգևոր և ի մարմնաւոր կարեաց. վասն որոյ յոյս ի յԱստուած եդեալ ձեռն արկ, վերստին նոր նորոգեաց և ուրախացոյց ևս զնոսա, զոր տէր Աստուած իւր աշխատանացն փոխարէն հատուցումն արասցէ հաւրիւրապատիկն աստ և ի հանդերձեալն, զանպատում ուրախութիւն պարգևեսցէ անզրաւ յաւիտենիս։ Եւ դարձեալ ստացաւ զսբ. գիրս զԱստուածաշունչս զայս անմաշելի թղթովս, որ ինքն իւր ձեռամբն շինէր զմագաղաղս, քերէր և պատրաստէր զտետրս, առ ի դիւրութիւն լինելոյ ինձ անվարժ գրչիս և բազումս զմեզ մխիթարէր ի մարմնաւոր և ի հոգևոր կողմանէ, որ թէպէտ մեք անարժան էաք գործոյս այսորիկ, սակայն սատարութեամբ աղաւթից բազմերախտ Հաւրս մերում բարերարն Աստուած ոչ ըստ մեզաց իմոց արար և ոչ ըստ անաւրէնութեան իմում հատոյց ինձ, այլ ըստ իւր մարդասիրութեամբն ողորմեցաւ մեզ և գթացեալ փրկեաց յամենայն փորձանաց հոգւոյ և մարմնոյ։ Վասն որոյ հայցեմք յանկարատ փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ փոխանակ այսմ դրի, որ զյիշատակս գրեցաք՝ գրեսցէ Տէր ի գիրն կենաց և նմա փառք յաւիտեանս. ամէն...։

Կատարեցաւ գիրս և ծաղիկս և յիշատակարանս թուին Հայոց ՌՁԹ (1640), աւգոստոսի ԻԹ (29), աւրն շաբաթ, ի փառս Աստուծոյ։

Գիրքս այս սիրելի,
Թուղթս անմաշելի,
Նկարս անքակտելի,
Յօրինակն մի խնայեսցի։

Աստուած ողորմի Անդրէաս պարոնտիրոջն և իւր ծնողացն, որ եդ ի դին Աստուածաշունչ դրոյս Ի (20) զուրուշ· Աստուած լուսաւորէ զիւր հոգին։

Աստուած ողորմի մահտեսի Պաղտասարին և կողա[կ]ցոյն իւր՝

[19] Այստեղից մինչև վերջ տե՛ս նաև «Թորոս աղբար», Ա, էջ 189—191։

Անոյշին, որ ետուն ի գին Աստուածաշունչ գրոցս տուն մի՝ Լէ (37) ղուրուշի. Աստուած լուսաւորեսցէ ղիւրաեանց հոգին]։

Գ

Փառք...։ Ո՛վ մանկունք նոր Սիովնի, զբազմամեղ և զանարհեստ զբիչս Բաղդամ և զգրող և զծաղկող սորին, աղաչեմ յիշել միով Աստուած
6 ողորմիով զմեզ և զոմ/սուցիչսն մեր. և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալուստն. ամէն։

Դ

Սկսայ ի սկսմանէ մատենիս, որ առաջի կայ ի գրութիւնս սորա, տառապեալ ծերունիս, և աւարտեցի ցանկս սորին, յորում և գոհութիւնս վերատրեցից զաւրացուցանողին զիս Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն իմոյ յաւիտեանս. ամէն։

Ե

Թվին ՌՁԸ (1639) սեպտեմբերի ԻԸ (28), աւրն շաբաթ, եղև աւարտ աստուածածին սբ. գրոցս։

1171
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ ՏԱՂԱՁԱՓԵԱԼ
ՄՅՁԵԳ, V № 1621

Գրիչ՝ Աստուածատուր դպիր
Վայր՝ Զամոսցա

426 Փառք...։ որ ետ առատ պարգևօք ողորմութեան իւրոյ կարողութիւն տկարացեալ անձինս հասանել յաւարտ եղանակաւոր մատենիս, որ կոչի Յակոբի[20] Սաղմոսարան. վասն զի զբովանդակ Սաղմոսն Դաւթի գտանեմ ի սմա շարադրեալ ոտանաւորս գեղեցիկս պէսպէս եղանակաւ։

Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ Աստուածատուր դպրիս, ի խնդրոյ բարեպաշտ և աստուածասէր, երկիւղած յԱստուծոյ և յամօթխած ի մարդկանէ պարոն Սրսցի Խտրին. Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս. ամէն։

Ի թվականութեանս հայկազան տումարի ՌՁ և Թ (1640) ամի, ի ԻԹ (29) օգո[ս]տոսի ամսոյ յանգ ելաւ շնորհօք Ս. Հոգոյն, ի քաղաքս Զամոսցա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեանն տեառն տէր Փիլիպոս կաթողիկոսի և ի թագաւորութեանն Լէհաց Զորրորդ Վլատիսլավին։ Վասն Աստուծոյ սիրուն ողորմիս ասէք գծողիս և Աստուած ձեզ ողորմի. ամէն։

---

[20] Իմա՛ Հակոբ Թոխաթեցի, սրա հիշատակարանը տե՛ս 1627 թ. շարքում, հիշատ. № 405։

1172
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 7517

Գրիչ՝ Զաքարիայ աբեղայ
Վայր՝ Կաֆայ

ա

129բ Աւարտեցաւ Շարակնոցս ի թվականիս Հայոց ՌՁԹ (1640), ի քաղաքն ի Կաֆայ, ի դուռն Ս. Անտոն ճգնաւորի վանքն, ձեռամբ Զաքարիայ հող և մոխիր աբեղային, որ զանունս քահանայի ունիմ և գործք եմ խաւարեալ։

բ

175ա Ըսկրսեցաք զՍաղմոսարանս թվին ՌՁԹ (1640), սեպտեմբեր ամսոյ ի Ա (1), ի դուռն Ս. Անտոն ճգնաւորին[21]։

1173
ՄԱՇՏՈՑ. ԳԱՆՁԱՐԱՆ
ՏՁՄՎ, № 133 (1455 թ.)

426 Դարձեալ յիշեսշիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջի ստացօղն զՄանան, և զիւր որդին զտէր Կիրակոսն, և զտէր Կիրակոսին հայրն՝ Վարդան, և զթոռներքն՝ տիրացու Մկրտիչն, զԱս[տ]ուածատուրն, զԱռաքելն, Յովանէսն, և զմայր թոռանց զերիցկինն, որ է Աւնկուպաճարն... ի թվականիս Հայոց ՌՁԹ (1640) հոկտեմբերի մէկն։

1174
ԳԱՆՁԱՐԱՆ
KarHB, № 34. տե՛ս նաև «Բաղմավէպ», 1886 թ. էջ 192

27 Ո՛վ սրբակրաւն... զգծողն նոյնպէս և զստացողն այս սբ. Գանձարանիս զպարոն Զատիկն... աղաչեմ յիշել։ ...Գրեցաւ թվին ՌՁԹ (1640) և հոկտեմբեր ամսոյ ԺԲ (12)։

1175
ԱՒԵՏԱՐԱՆ
ՅՁՎՍ, I, № 98. տե՛ս նաև Կամենից, էջ 188

Վայր՝ Սէյոով

440 Փառք...։ Որպէս և սիրելիս Աստուծոյ Խաչատուր մէջտէսի կրօնաւոր, այս սբ. Աւետարանս ետ դրել՝ մեղաւոր մէկ կարգաւորի՝ լցեալ մեղօք և տառապեալ մտօք։ Արդ՝ որք հանդիպիք կամ ժառանգէք, յիշեցէք զԽաչատուր կրօնաւոր, և զհայրն իմ՝ Խաչատուր, և զմայրն իմ՝ Հռիփսիմայ, և զբնաւ զարմն, և թողութիւն յԱստուծայ խնդրեցէք, զի և ձերն թողցի. ամէն։

---

[21] Նախքան ձեռ-ի ընդօրինակության ավարտումը գրիչ Զաքարիա աբեղան մահանում է։ Ձեռ-ը ավարտվում է 1643 թ., հավանաբար Զաքարիա երեցի կողմից, վերջինիս հիշատակարանը տե՛ս նշված տարեթվի շարքում, Ձեռ-ում գրչությունը փոխվել է 218 բ էջից սկսած։

Գրեցաւ այս սր. Աւետարանս ի քաղաքն Սէչով, ընդ հովանեաւ Ս. Սիմէոնայ եկեղեցի, ի կաթողիկոսութեան տէր Փիլիպպոսի, և ի առաջնորդութեան այս զաւառիս տէր Անդրէաս արքեպիսկոպոսի, ի թագաւորութեան Օլախաց երկրի Վասիլ վոյվոտային, ի թվականութեան յաբեթական տոմարի ՌՁԹ (1640) հոկտեմբերի ԻԳ (23) շաբաթ, զոր Աստուած բարով վայելել տացէ ընդ երկայն աւուրս. ամէն։

Զմեղապարտ գծողս յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ։

1176

ՄԱՇՏՈՑ

ՁՁՍ, III, № 402

Գրիչ՝ Ղազար
Վայր՝ Կ. Պոլիս

472 Փառք համագոյ և միասնական Ս. Երրորդութեանդ։ Զոր գիմեալ մեծաւ յուսով, բարի արմատ, հաւատարիմ Բուայբերցի Կուլպանարին և կողակցին՝ Խաչատուրին և ծնաւղաց նորին՝ Յակոբին և Գոնարին, և միւս պապուն՝ Շիրինին, և դստերացն՝ Մարգրային և Նախուշին, և եղբօրն՝ Մուրատին և [առ] հասարակ ամենեցուն։ Եւ ետ յիշատակ զՄաշտոցս զայս ստանալ ի հալալ վաստակոց իւրոց, զոր ի վաղուց հետէ փափագեալ ցանկային այսմ լուսակրօն և հոգիաբուխ մատենիս, ի յիշատակ հոգւոց իւրոց և ծնողաց իւրոց... ետուն գրել զայս Մաշտոցս յիշատակ բարի հոգւոցն և ծնողացն իւրոց ամենեցուն և ետ յիշատակ տէր Ըղլստագիսին ի ձեռն։ Շնորհիւ Տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զՄաշտոցս զայս, ի քաղաքիս որ կոչի Կոստանդնուպոլիս, ի դրունս Սրբոյն Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին. ի մեծ թվականիս Հայոց ՌՂ (1640) և ամսոյն նոյեմբերի ի Ժ (10)[22], ի հայրապետութեան տեառն Էջմիածնայ տէր Փիլիպոս կաթուղիկոսին, և մերոյս առաջնորդութեան Կոստանդինուպոլսի տէր Գաւիթ արհեպիսկոպոս քաջ ըարունապետի, և թագաւորութեան Տաճկաց սուլթան Իպրահիմին, ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք և հալածիմք ի յանօրինաց և ի սուտ եղբարց։

473 Արդ՝ յերես ի գետին դնելով զամենայն//սդ զմանկունդ սբ. եկեղեց[ւ]ոյ, զի որք հանդիպիք տեսութեան գրոցս՝ կարդալով կամ օրինակելով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք Հայր մեղայիս զՂազար գրիչս, զծնողս իմ Հայրան և զհայրն իմ՝ Աստուածատուր, և զկենդանիս և զհանգուցեալս, և Աստուած յիշողդ յիշէ իւր միւսանգամ զալստեան. ամէն։

Եւ դարձեալ յերես անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ հանգիպողք այսմ
474 տառիս, զի լի սրտիւ և սերտ հաւատով Աստուած ողորմի //ասացէք Բրուայբերցի Կուլպանարին և զամենայն արեան մերձաւորսն մեր...։

---

[22] Հայոց ՌՂ թվականը սկսվում է 1640 թ. հոկտեմբերի 12-ից (հուլյան տոմարով). այստեղից էլ հայոց ՌՂ թվականի նոյեմբերի 10-ը կընկնի 1640 թ. մեջ։

1177
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 9292 (1297թ.)

307ա Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Յամբեցի մահտեսի իոճա Եղիային և ամուսնուն ի[ւր] Շահմելիքին, և իւր հօրն՝ Ավրանին, և իւր մօրն՝ Հռեփսիմին, և այլ հասարակ ընտանեաց նորին, որ ըստացաւ զհոգէլի տառս զաղօթից և զխորհրդոյ մեկնիչս. և ետ անչինչ յիշատակ ի ձեռն Շնիշցի Ովանէս վարդապետին, զոր տէր Աստուած ընդ երկայն աւուրս վայելել տացէ, և վերագրեալ մահտեսի Եղիային և կենակցան տէր Քրիստոս արքայութիւն պարգևեսցէ. ամէն։
Թվին ՌՂ (1640) հոռի ԻԷ (27)[23]։

1178
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Երևան, № 187

Դրիչ, ծաղկող՝ Եղիազար
Վայր՝ Համիք

ա

451ա Փառք...։ Եւ ըստ անսուտ խոստմանն Աստուծոյ, որ ասաց Աբրա-
451բ համու, թէ քեզ և զաւակի || քում տաց զերկիրդ զայդ ի ժառանգութիւն, որ և եղեն իսկ, զի Յեսու վիճակաւ բաժանեաց ՌԺ (12)-ան ցեղիցն զերկիրն Աւետեաց։ Մինչ ասա Ե (5) գիրքն Մովսիսի և Յեսու Նաւեանն վճար առնու։ Եւ սոքա են Ե (5) գիրք Մովսիսի՝ Ծնունդքն, Ելքն, Ղևտականն, Թիւքն, Երկրորդ աւրէնքն և Յեսու Նաւեանն։ Եւ ասի ի հետ սկսանին կարգաւ բանք՝ Դատաւորացն, Հռութայ և Դ (4) գիրք Թագաւորացն, Մնացորդք Բ (2), և Եզրասք կրկին, Նեեմի և բանքն Եսթերայ, Յուդիթն և Տուբիթն, և Մակաբայեցւոց Գ (3) գիրքն, Սաղմոսքն Դաւթի և Դ (4) գիրքն Սողոմոնի, և զՅեսու Սիրաքն, զմեծի համբերողին Յորայ, և զհամարձակախօսին զԻսայայ, զերկոտասանիցն, զԵրեմիայ, զԴանիէլ և զԵզեկիէլ, զսրբազան Աւետարանին զԴ (4) դլուխսն, և զպրակս սբ. առաքելոցն, զէ (7) թուղթ կաթուղիկեայցն և զԺԴ (14)-ան թուղթսն Պաւղոսի, զսոսկալի տեսիլն Յոհաննու և զհանգիստ նորին։ Եւ սոքա են գիրք Աստուածաշունչք՝ Հին և Նոր Կտակարանք, մարգարէականք և առաքելականք, յեռեալ ընդ միմեանս իբրև զշղթայս ոսկիս և իբրև զծաղիկս անթառամելիս, ժողովեալ աստուածատունկ և անմահական դրախտէն փնճեալ երփն առ երփն և զանմահական հոտն բուրէ ի քիմս տենչմամբ հոտոտողացն։ Որ և տեսեալ զպայծառութիւն և զանթառամելի գեղեցկութիւն, և զանճողոպրելի փարթամութիւն աստուածային գանձիս, և լուսազարդ անմահութեան սբ. բուրաստանիս, յոքնատենչ ըղձիւք, բաղձացեալ ինքնայօժար կամաւք, ցանկացող եղև բարեմիտ և քրիստոսասէր քահանայն տէր Յովասափն և ստացաւ զթագս պանծալի և զպսակս լուսափայլ

[23] Տոմարական մեր դիտողությունները տե՛ս 1176-րդ հիշատակարանի 22-րդ ծանոթագրությունում։ Հայոց ՌՂ թվականի հոռի ամիսը՝ կտևի նոյեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 10-ը (1640 թ.), իսկ հոռի 27-ը կլինի դեկտեմբերի 7-ին (1640 թ.)։

հիւսեալ ի Հոգւոյն Սրբոյ։ Նոափափառ սիրով և ըղձալի տենչմամբ ետ գրել զսբ. գիրքս ի վայելս անձին իւրոյ և որդւոյն՝ Պետրոս սարկաւագին։ Վասն որոյ և ես նուաստս ի գրչաց, ախմար և թարմատար գրիչս, տեսի զիղձ և զփափագ տենչման սրտի նորին, հարկեցայ և տկար անձամբս յանձն առի ի գրել, որ ի վեր էր քան զկար իմ, այլ յուսալով յողորմութիւն մարդասիրին Աստուծոյ. որ տայ ամենայնի առատապէս և ոչ նախատէ. որոյ ամենակարող զաւրութեամբն ձեռնարկեալ ի գծագրումն աստուածախօսութեանց հոգեշունչ մատենիս սկիզբն արարեալ մտի, յերկայնաձիգ և յանհուն շաւիղ աստուածաբանութեան ծովուս, սատարութեամբ արժանացելոց աղաւթիցդ ե. հազիւ եղերեալ ընդ լայնատարած ասպարէզս հողմով, Հոգւոյն աւժանդակութեամբ շնորհաւք ամենազաւրին, աւարտեալ կատարեցաւ և լցաւ իղձ սրտի սորին ստացողին։ Քանզի բազում խընդրուածովք յողոք անկեալ հայցէր տեսանել զաւարտ սորին։ Արդ՝ եղև աւսրա լրման սորա ըստ աբեթական հայկազեան տումարիս ի շրջագայութեան ամանակաց թուաբերութեանն յամի Ռ-երորդի Զ-երորդի Թ-երորդի (1640), յաշխարհս Միջագետաց, ի քաղաքս Տիգրանակերտ, որ և Համիթ վերակոչի, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մօրն նորա՝ Յուղիտայի և Ս. Սարգսի զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան ի պահպանութիւն քաղաքիս, ձեռամբ զառաջեալ անձին անարհեստ սուտ և փուտ գրչի Եղիազարի, որ անուամբս եմ միայն և գործիւքս ոչինչ ։ անպիտան։ Ի հայրապետութեան Վաղարշապատու սբ. Էջմիածնայ տէր Փիլիպոս սրբասնեալ կաթուղիկոսի, և ի թագաւորութեանն Տաճկաց սուլթան Իպրահիմին՝ եղբաւր սուլթան Մուռատին։ Արդ՝ յերես անկեալ մոխրամած դիմաւք և արտասուաթոր աչաւք աղաչեմ զհանդիպողդ, որք ընթեռնոյք և կամ գաղափար առնոյք զսբ. գիրքս, յիշել ի Քրիստոս և լի բերանով Աստուած ողորմի ասել ստացողի սորին Արծրունեցի տէր Յովասափ հեղահոգի քահանային, և որդոյ նորա Պետրոս սարկաւագին, և կենակցին իւրոյ՝ Ճնանին, և դստերացն՝ Մարիամին և Անթառամին, այլ և ծնողացն, հօրն՝ տէր Մկրտչին և մօրն՝ Փաշային, մեծ հօրն՝ տէր Մաթէոսին և Ազիզին, և եղբարցն՝ տէր Մարկոսին ե. տէր Սրապիոնին, քուերն՝ Ազիզին, և քուեր որդոյն՝ տէր Անդրէասին, Մարգարին և Աւետիսին, և եղբաւր որդոցն՝ Յոհանիսին, տէր Մկրտչին, և իւր որդոյն՝ Մաթէոսին, Կարապետին և Յովհաննէսին, եղբօր կենակցին՝ Մարգարտին, դստերն՝ Յուղիտին, և իւր աներն՝ Գրիգորին և Մանպուպին, և ամենայն զարմից և զաւակաց նոցին։

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զընթերցող և զվայելող սբ. Աստուածաշնչիս, յիշել ի մաքրափայլ աղօթս ձեր և մեղաց թողութիւն հայցել ինձ եղկելի գծողիս Եղիազարի և ծնաւղացն իմ ըստ մարմնի, հօրն իմ՝ տէր Մինասին և մաւրն իմ՝ Պաղչային, և եղբօրն իմոյ՝ Յոհաննէս գրչի, որ աշխատեցաւ ընդ իս, ի սրբագրելն և սակաւ մի տեղ նա գրեաց՝ ի Դանիէլէ մինչև Եղեկիէլի կէսն, զոր տէր Աստուած աւր ըստ աւրէ աւելացուսցէ զշնորհս սորա։ Նաև հոգևոր ծնաւղին իմոյ և ուսուցանողի ի յարհեստ գրչութեան տէր Մինաս քաշ քարտուղարին, որ բազում աշխատեցաւ ընդ անարժանութիւնս իմ, զոր տէր Աստուածն ամենայնի իւր

աշխատանացն փոխարէն զանաշխատ կեանս նմա պարգևեսցէ և ընդ սբ. գրչապետացն և ընտրելոցն դասեսցէ։ Եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ հանդիպողացդ, լաւ պահողացդ և Աստուած ողորմի ասողացդ՝ վարձս բարեաց պարգևեսցէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Բ

299ա Արդ՝ աղաչեմ զհանդիպողք լուսազարդ սբ. բուրաստանիս, յիշել յարժանաւոր յաղօթս ձեր զտէր Յովասափ քահանայն, որ ետ դրել զսբ. գիրքս, յիշատակ անձին իւրոյ և որդեկին իւրոյ՝ Պետրոսին, և զիս զանպիտան գրիչս զԵղիազար անուամբ ևեթ կոչեցելոյն, և ծնօղացն իմ և ուսուցանողին իմոյ. և դուք յիշողքդ յերկնից արքայութեանն արժանաւորիք. ամէն[24]։

Գ

344բ Ո՛վ սիրելի հանդիպողք սբ. գրոցս, որք ընթեռնոյք և կամ աւրինակէք, խնդրեմ ի ձէնջ, կողկողագին հառաչանօք, Աստուած ողորմի և մեղաց թողութիւն հայցել ստացաւղի սորին Արծրունեցի տէր Յովասափին և ծնաւղաց նորին, և ինձ [ան]արժան գծողիս, և դուք ի յԱստուծոյ վարձատրիք. ամէն։

Դ

356բ Տէր Յովասափ ստացող սմին,
Պետրոս որդեակն իւր ընդ նմին,
Առ քեզ գոչեն Տէրդ երկնային,
Ջնչեալ զյանցանս մեղաց սոցին։

Ե

Ջմեղուցեալ Եղիազար՝ նկարող պատկերացս յիշեա՛ Տէր և ողորմեա՛[25]։

1179

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 234 (1258 թ.)

Հետ. ստացող, նվիրատու՝ Անդրէաս եպիսկոպոս

300բ Արդ՝ ի ժամանակս յետին, որ էր թիւ Հայոց ՌՁԹ (1640) և ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի խարազնազգեաց կաթողիկոսի Հայոց, ես՝ Անդրէաս անուամբ ևեթ եպիսկոպոս, վերջին ստացաւղ եղէ ոս[կ]է-
301ա նկար սբ. Աւետարանիս, որ և ստացայ զսա ի հալալ ընչից իմոց, և ետու վերըստին կազմել և նորոգել, արծաթապատել և ոսկէաւծ նկարմամբ զարդարել, անջինջ և մշտընջենաւոր յիշատակ ինձ և իմ ծնողացն,

[24] Նման մի հիշատակարան էլ գտնվում է ձեռ-ի 213բ էջում։

[25] դ և ե հիշատակարանները գրված են ծնրադիր երեք անձնավորությունների գլխավերևում. նշանակում է ծաղկողը նկարել է իրեն, ձեռ-ի ստացող Հովասափին և սրա որդուն՝ Պետրոսին։

հօրն իմոյ՝ պարոն Թադին և մարն իմ՝ պարոն Սառա խաթունին և յամենայն արեան մերձաւորացս. և ետու ի դուռն Միրանաւոր Ս. Աստուածածնին, ի վաղս և ի դովեստ ամենասուրբ Երրորդութեանն անզրաւ յաւիտենիս. ամէն։

1180
ԱԻԵՏԱՐԱՆ
Երևան, № 290 (1635 թ.)

Ծաղկող՝ Եղիազար
Վայր՝ Յամիթ

323ա Դարձեալ յիշեցէք...։ Յամթեցի մահդասի խոճայ Երեմիային, որ ետ ծաղկել զսբ. Աւետարանս, զի այս ինչ եղև պատճառ և պատահումն զրոցս. քանզի մինչդեռ ի մարմնի էր վարդապետն Արիստակէս ետ գրել զսբ. Աւետարանս, նաև զչորեսին աւետարանչացն զպատկերսն խորանաւն հանդերձ, ոսկենկար անկուածով և զրովանդակ թփերոյն զքաշուածսն՝ միայն լոքով արարեալ։ Եւ յետ փոխելոյն նորա յաստեացս, մնացեալ ամայի և անկատար սբ. Աւետարանս. զոր առեալ սբ. հարս մեր տեառն տէր Փիլիպոս կաթուղիկոսի ամենայն Հայոց, և ետ բերել զսա ի քաղաքս Յամիթ, առ բարեմիտ և պատուական, հաւատարիմ և քրիստոսասէր իշխանն՝ մահդասի խոճայ Երեմիայն, վասն կատարման սորին։ Եւ նա յաւժար կամաւք և եռափափագ սիրով յանձն էառ կատարել զխնդրուածս հարն մեր հոգևորի։ Վասն որոյ ետ աւարտել զսբ. Աւետարանս ոսկենկար
323բ անկուածով և երկնագոյն լազվարտով, //զհամաբարբառն, և զտնաւրինականսն ըստ վկայելոյն յիւրաքանչիւր տեղիս, նաև զթփերոյն և զգրին, և զտէրունական անուանց զոսկին, և զերանկս լիով կատարեալ։ Եւ եղև աւարտ լրման սորա ըստ աբեթական հայկազեան տումարիս ի՛ շրջագայութեան ամանակաց թուաբերութեանն Ռ-երորդի Զ-երորդի Թ-երորդի (1640), յաշխարհս Միջագետաց, Ասորոց նահանգի, ի Տիգրանակերտ մայրաքաղաքիս, որ և Յամիթ [յ]որջորջի, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսի և մարն նորա՝ Յուղիտայի, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան ի պահպանութիւն քաղաքիս, մանաւանդ քրիստոնեայ ազգիս, ձեռամբ յոգնամեղ, եռաթշուառ զառածեալ անձին, անարհեստ սուտ և փուտ գրչի Եղիազարի, ի հայրապետութեանն սբ. Էջմիածնայ տէր Փիլիպոս սրբասքանչեալ կաթողիկոսի, զոր տէր Աստուած պահեսցէ զսա յախոյեան յաղթող ընդդէմ ներհակաց, ի վանումն հերետիկոսաց...։

1181
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 1109

Գրիչ՝ Պօղոս երէց

153բ Փառք...։ Գրեցաւ և աւարտեցաւ բան մեկնութեան Երգ երգոցս ի թվին ՌՁԹ (1640), ձեռամբ մեղաւոր և անարժ[ան] Պողոս երիցու։

Արդ՝ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի Քրիստոս զուսուցիչն իմ՝ զՈվանէս
154ա քահանայն, և զհայրն իմ՝ զՅակոբ քահանայն, և զիս զանարժան ծնողսն զՊողոս երէցս, և զամենայն արեան մերձաւորսն իմ, յիշեցէք ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

1182

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 1510 (ԺԶ դար)

ա

614ա Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր Ծաղուրն երկիւղած և բարեսէր, որ ստացաւ զաստուածաշունչ զԱյսմաւուրքս յիշատակ ան-[ջ]նջելի. «Երանի...»[26]։ Մանաւանդ զբարեպաշտ կողակից Թրվանդէն, և իւր հայրն՝ Ղամբարն, և իւր մայր Անայիւաքունն, և իւր հանդուցեալ եղբայր Սաթիմիշն, և իւր որդիքն՝ Բարեքն, Տէրունն, և իւր դուստրն՝ Սալթանն, Եթարն, Շանմելիքն, եղբայրորդին՝ Ա[?]պուխանն[27], քոյր Մարեանն։ Դարձեալ յիշեցէք ի սբ. և ի յերկնադնայ յաղաւթս ձեր զրարէմիտ և երկիւղած այրն Ծաղուրն և կողակից Թրվանդէն, որ ըստացան հալալ ընչից իւրեանց և առին զսբ. գիրքս։ Ով կարդաք՝ Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմեսցի իւր միսան[գամ] դալրստեանն. ամէն։

Թվականութիւնս Հայոց ՌՁԹ (1640)։

բ

Աղաչեմք զձեզ եղբարք, թողութիւն արարէք վասն անպիտան և անտառապեալս զփծուն գրչիս, յիշեցէք Ծաղուրս՝ առաւ զԱյսմաւուրքս աւղուքանաւք և լի սրտով, յիշատակ իւր և իւր ծնաւղացն։ Այն ժամանակն, որ թագաւորն շահ Սաֆին էր, հայրապետն տէր Փիլիպոս կաթուղիկ[ոս]ն էր։ Ով կարդացաւղ[ք] և լսողք՝ մէկ բերան ողորմի ասացէք Ծաղուրին, իւր ծնողացն, իւր կենդանացն և մեռելոցն. ամէն։

գ

Վաճառող՝ Յովանէս

615ա Ես՝ Յովանէս բանի սպասաւոր, հրամանատար Հայոց տեառն Փիլիպոսի, վաճառեցի զԱսմաւուրս կամաւ նորին՝ Ծաղուրին, որգոյ Ղամպարին։ Ապա մի՛ ոք իշխեսցէ ընդ սմա դաւի առնել, քանզի Փիլիպոս կաթողիկոսի հրամանաւն վաճառեցաւ։ Ո ոք բան ինչ ունիցի՝ առ մեզ եկեսցէ։ Եւ սորա վկայ է Գրիգորն, Սարգիսն, Կի[r]ակոսն՝ սոքա Փրենաթաղու. Սրկղունցի Հայտարղուլին. Ուկղվանցի[28] տէր Յովանէսն, Հայրապետ եպիսկոպոսն վկա[29]։

---

26 Նաայ. ԼԱ, 9։

27 Գուցե «Սարուխանն»։

28 Կարելի է կարդալ նաև «Սուկղվանցի»։

29 գ հիշատակարանը Մատենադարանի ձեռ-ի ծուցակում նշված է 1669 թ. շարքում (հտ. Ա, էջ 570)։

1183
ՔԱՐՈԶԳԻՐՔ
Երևան, № 2247

Գրիչ՝ Աստուածատուր երէց
Վայր՝ Ասպահան

ա

200բ Փառք...։ Գրեցաւ Քարոզգիրքս ի ձեռամբս սուտանուն և անարժան Աստուածատուր իրիցոյ, որ անուամբս միայն քահանայի և գործք ոչ ունելով, այլ հող և մոխիր եմ ամէն քահանայի։ Թոզութիւն արարէք եղբայրք, զի կարս մեր այս էր։ Ով ոք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով զպակասն լցէք, զաւելորդն հանէք, որ բազում վարձք ունին այնպիսին, այլ ոչ տրտնջալով, եղբար, զի կարս մեր այս է։

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՁԹ (1640), ի հայրապետութիւն սբ. աթոռոյն էջմիածնայ զՓիլիպպոս բարոյնայպետն։ Գրեցաւ ի քաղաքն Ասպահան ի մահլայն Շղշայպանայ, որ է Թովասման. ի եպիսկոպոսութիւնն Ջուղայոյ զխաչատուր արքեպարունապետն, և ի թագաւորութիւն շահ Ալէքսէ Պարսից արքային, ի խնդրոյ[30]։

բ

39բ Որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած յայսպիսի ոխակալութենէ
40ա առաւել ստացող գրոցս զՀէլին, և զհա//յրն՝ Աստուրն, և զմայրն՝ Յիմիխանն և մեզայպարտ գրիչս Աստուածայտուր էրէցն։

գ

50ա Յայս տեղս աւրինակէն թուղթ էր ընկած, ինձ մեղք մի՛ դնէք, եղբարք, և այլ աւրինակ չկայ այսպէս[31]։

դ

67բ Որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած յայսպիսի ոխակալութենէ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ևս առաւել ստացող գրոցս զՀէլին, զքուրն՝ Մուրհասան, և եղբայրն՝ Խաչատուրն. ամէն։

ե

182բ Որոց և արժանի արասցէ Քրիստոս Աստուած ըստացող սբ. գրոցս զՀէլին և ծնաւղացն՝ Աստուրին, Եմիխանին, և ինձ Աստուածայտուր մեղաւոր գրչիս, որ անուանս միայն [եմ] քահանայ[32]։

1184
ՄԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ
Երևան, № 2397

Գրիչ, ծաղկող՝ Մովսէս կրօնաւոր
Վայր՝ էջմիածին

327ա Յամի հազարերորդի ութսներորդի և իններորդի (1640) թուահաշուութեան, ըստ հոլովմանն արեգական արամազեան տոհմիս, յանդ ելեալ

---

30 Հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

31 Գրված է կարմիր մելանով։

32 բ, դ, ե, հիշատակարանների նման տեղեկություններ գտնում ենք ձեռ-ի նաև 14բ, 27բ, 85բ, 106ա, 117բ, 130բ—131ա, 144ա, 154բ, 172բ, 188բ էջերում։

կատարեցաւ աստուածագիծ տառս այս, որ է Առակքն Սողոմոնեան բովանդակ և բանքն Սիրաքայ և եօթանեքին թուղթքն կաթուղիկեայց, բայց թարց նախադրութեան և գլխոց համարոյ, վասն կարի անարհեստ դոլոյ գրչի սորա, զոր և տեսանէքդ իսկ։ Արդ՝ ստացաւ զսա ի զբօսանս անձին իւրոյ տէր Առաքեալ խոնարհամիտ և կուսակրօն քահանայն առ
327բ կենօքս այս, իսկ զկնի աստուստ յայնսն փոխադրելոյ յիշատակ //ինքեան եղիցի յապագայսդ վայելօղ որում և տէր յաշողեսցէ։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զձեզ, որք օգտիք ի սմանէ՝ գաղափար դնելով կամ ընթեռնլով կամ այլով իւիք կերպիւ ինչ օգտելով, յիշեցէք ի մաքրանուէր մաղթանս ձեր զստացօղ սորա զտէր Առաքեալ սրբասնեալ քահանայն, որ եղև ի սոյն աւուր եպիսկոպոս, զոր և տէր Աստուած արթուն դիտողութեամբ պահեսցէ՝ մշակ առանց ամօթոյ. ամէն։

Ընդ նմին և զիս զաւանդակորոյս և թշուառայոյս[33] Մովսէս կրօնաւորս, որ զամենայն գլխոց սկզբունսն արարի և ծաղկեցի, նաև սուղ ինչ
328ա սրբագրութիւն, // և զգլխատառսն միանգամայն և զոտանաւորսն Ներսէսի, որ յառակսն և ի Սողոմօն արքայն ասացեալ և զյիշատակարանս։ Ես ընդ այնսն։ Ընդ ստացօղս յիշեալ լիցիմ և ես տրուպս ի ձէնշ։ Եւ եղև զրաւ սորա ի գահ մեծի հայրապետանոցիս ընդհանուր Հայոց սբ. աթոռոյս էջմիածնի, որ է մայր ամենայն տանս արամեան, ի հայրապետութեան երիցս երջանկի և քրիստոսազգեաց անձին տեառն Փիլիպպոսի, որ է կրկին լուսաւորիչ յաւուրսս յայս, որ և պայծառացոյց զդիտարանս մեծ՝ յաւէտ քան Սողոմօնն այն ի հնումն զտաճարն։ Ընդ
328բ որ և ունի ընդ հովանեաւ իւր զպարս բաբունեաց իբրև թուով //երիցս տասնեակ, բնաւքն կատարունք և շքեղունք յոյժ, բաց յինէն։ Զսոսա յիշեսջիք բարի մտօք առ յոյսն համայնից, ո՛վ սբ. եղբարք, պատահօղք տառիս, որպէս և ձեզ սոյն լիցի յապայ եկելոց և փոխարինութիւն յամէնառատ պարգևատուէն, որ է օրհնեալ անզրաւ յաւիտենիւ և անհուն կիտիւ և անսահման քանակութեամբ. ամէն։

1185

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 2480

Գրիչ, ստացող՝ Գրիգոր քահանայ

Վայր՝ Ախալցուր

312ա Փառք...։

313բ Արդ՝ եղև կատարումն սբ. Օետարանիս ի թվականութեանն հա[յ]կազան տոմարիս ՌՁԹ (1640), ի դառն և ի չար ժամանակի. և ի հայրապետութիւն տեառն տէր Փիլիպոսի կաթաղիկոսին Հայոց և պատրիարք
314ա ի լուսակառուց յաթոռոյն սբ. էջմիածնա[յ] և միաբան սբ. վարդա//պետացն և կրա[ւ]նաւորաց սորա· ամէն։ Ի գիւղաքաղաքս Ախալցուր, ի դրանս սբ. նորայկընունք Ս. Յաստուածածնա[յ] և Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլ և Միքաէլ և Ս. Գևորգա[յ], և ի յառաջնորդութիւն յերկրիս Վրաց և գաւառիս տէր Անդրէասին, և միւս նորաընծա սբ. և

33 Ձեռ-ում «թշուառայոյս» ձևով։

աստուածահաճոյ տէր Բարսեղին, *ձեռամբ մեղապարտ գրչի* Գրիգոր *քահանայիս, յանուամս եմ և գործովս յոչ, որ և մեծ յուսով և տենչալի սիրով գրեցի զսբ. Օետարանս, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հարն իմոյ՝* Առաքել *վարդապետին և մարն իմ՝* Խանաղին, *և եղբարն իմ՝*
314բ Գրիգորէսին, *և քվերն իմ՝* Սառսխա//թունին, *և միւս քվէրն իմ՝* Անապ-խաթունին *և ազգականքն իմ՝* Արղուբէցիքն, *և պապն իմ՝* Կունիպարկն, *որ կոչի անուամբն* Վարգել, *և քեռին իմ՝* Խոճումբն, *և աներուոջ իմ* Ամիր-բէկն, *և զոքանչ իմ* Մարիամն, *և կողակիցն իմ՝ անմուրատզիս* Թանբարն, *և հոգևոր հայրն իմ՝ տէր* Միխթարն, *և հոգևոր եղբայրն իմ՝ տէր* Ասատուրն, *և* Շահբուտախ. *սոքա ամենեքեան որ փոխեալ են առ Աստուած. ամէն։*

Եւ դարձեալ յիշեցէք զհոգևոր մայրն իմ՝ Սինդուխտն, *և հոգևոր որդին մեր և աշակերտ զտէր* Սարգիսն, *և հոգևոր քոյրն իմ՝* Եղարիզն, *և եղբայրն ի[մ]* Պապին, *և հոգևոր որդին մեր՝ դեռաբուսիկ սարկաւագ* Աբրահամն. *Աստուած յերկայն օուրս արասցէ։*

315ա *Ո՛վ սբ. կար//դացողք, թողութիւն առնէք գրիս սղալանաց կամ պակասութեան, զի կայր մեր այս էր։ Ո՛վ սբ. կարդացողք, յորժամ կարդայք սբ. Աւետարանս կամ տեսանէք՝ Ա (1) բերան ողորմի ասէք...։*

Աստուած ողորմի մեր հոգևոր եղբայր Մկրտիչ *վարպետին, ո[ր] շատ յաղեկութիւն և լաւութիւն արաւ գրագրիս զամեն բանով՝ թ՛է հախով, թէ անհախ, ինչ ուզեցի, չէ՝ չասաւ. Աստուած աւրհնէ յուր լաւութեան համար իւր արևն. ամէն։*

1186

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ

Երևան, № 2654 (1631 թ.)

Գրիչ, վաճառող՝ Գրիգոր
Վայր՝ Ղարասար

2ա *Գրեցաւ տառս, որ է Հարցմանց, ձեռամբ անիմաստ գրչի* Գրիգոր *իրիցու*[34]։ *Այս է պատճառ ձեռագրիս, քանզի եկն պատահեցաւ ի գիւղաքաղաքս* Կողոնիայ, *որ այժմ ասի* Ղարասար, Նիկողայոս *անուն վարդապետ, որ է աշակերտ* Զաքարիայ *վարդապետին, եռափափաք և ջերմեռանդ սիրով խնդրեաց զայս Հարցմանց տառս ի մէնջ. և մեք այլ տեսաք զսէրն և զփափաքն, սակս տղայութեան հասակին, որ ունի ընթերցումն գրոց, և մեք այլ յաւժարեցաք տալ զգիրքս զայս, յիշատակ հոգոյս մերոյ և ննջեցելոց մերոց։ Ապա ոչ էր կարելի, սակս նեղ և անծուկ, դառն ժամանակ պատահեցաւ առ մեզ։ Թէպէտ սակաւ ինչս առաք ի դմանէ, սակայն բազումս պարգևեցաք իւրեան, որ ընթեռնու և ի միտ առցէ, և ողորմի ասիցէ անպիտան գրչիս իմոյ* Գրիգոր *իրիցուս, և ծնաւղացն իմոց՝ մահտեսի* Պապուկին *և* Խուպէ, *ի ժամանակս կայսերին, որում նստեալ էր ի յաթոռ թագաւորութեան սուլթան* Իպրահիմն *ամիսս Թ (9), և հայրա-*

[34] *Ձեռ-ի գրիչը. սրա հիշատակարանը տե՛ս 1631 թ. շարքում։*

պետութեան մերոյ տեառն տէր Փիլիպոս *կաթողիկոսին, ի թվականիս մերոյ հայկազեանցս Ի և Ա յոբելեան և ի տասանցն եռակի և աւելորդն իններորդի (1640)*[35], *զոր աւանդեցի ի ձեռս իւր։ Ոչ ոք մարդ այլ և այլ չառնէ, զի ստացուածովք իւրոյ էառ ի մէնջ. որում փառք յաւիտեանս. ամէն։*

1187

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, № 3720

Գրիչ՝ Ղազար *քահանայ*
Վայր՝ Շինճէր

ա

203բ Ղազար *անարժան գրիչս յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ. ամէն. թվին ՌԶ (1631)։*

բ

263բ *Փառք...։ Եւ թէ «Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց»*[36] *և թէ «Երանի...»*[37]*։ Զայս ամենայն լուեալ սրբասէր և հեզահոգի քահանայն*
264ա Մարտիրոս *և ծանեալ, զի սնս//տի և ունայն է աշխարհս և անցաւոր է մեծութիւնս այս, և մեծաւ փափագմամբ յոյժ սիրով և յաւժար կամաւք ստացաւ զանհամեմատս ի բնաւս զՔրիստոսի աւետեաց բնակարանս զաւետաբեր սբ. Աւետարանս, զքառավտակ աղբերս...* Մարտիրոս *քահանայն ի փրկութիւն հոգւոյ իւրոյ, ի յիշատակ իւրն և ծնաւղացն՝* Եզիբարին, Խանումին, *և եղբարցն՝* Նազարին, Դաւութ *խանին և* Քասբարին, *և քեռցն՝* Զանազին, Սիմին Դաւզալին, Մարիանին, Հռիփսիմին, Եղիսաբեթին *և հարսն՝* Բազումազին, Մարիամին, *և դստերցն՝* Զադին, Փաւրուն, Բաղուն *և ամենայն արեան մերձաւորացն. ամէն։*

264բ *Արդ՝ ես անարժանս ի գիրս գրչութեան մեղաւք զառածեալս* Ղազար, *միայն անուամբ քահանայ, ոչ ունելով համարձակութիւն հպիլ ի սբ. Աւետարանս, բայց ապաւինեցայ ի մարդասէրն և ի ներաւղն Աստուած և վասն աղաչանաց և սիրոյ եղբաւրս մեր* Մարտիրոս *քահանայիս սկսայ զսբ. աւետաբեր Աւետարանս Քրիստոսի և ողորմութեամբ նորին աւարտեցի, ի մեծ թուականութեանս Հայոց Ռ և ԶԹ (1640) ամին, և ի հայրապետութիւն մեծ աթոռոյն սբ. Էջմիածնի տէր* Փիզիպոսի, *և ի թագաւորութիւն արենարբու Պարսից շահ* Սաֆի *կարմրագլխոյ, ի յերկրիս* Ղափանայ, *ի գեաւղս* Շինճէր, *ընդ հովանեաւ սբ. աթոռոյն Ստեփէի և սբ. անապատացս։ Վասն որոյ աղաչեմ զծառայքդ Աստուծոյ, զի Աստուած ողորմի ասէք ինձ՝ անարժան* Ղազար *գրչիս և ծնաւղացն իմոց և ուսուցչին մեր. ամէն։*

Արդ՝ որք վայելէք սբ. Աւետարանս կարդալով կամ աւրինակելով
265ա *լիակատար սրտիւ Աստուած ողորմի ասացէք* Մարտիրոս *քահանային, //*

---

35 *Այսինքն՝ 21×50+[(10×3)+9]+551։*

36 *Առակք, Գ, 9։*

37 *Նոյ., ԼԱ, 9։*

և ծնաւղաց նորին՝ Ենգիբարին, Խանումին, և պապ Մարտիրոսին և տատ Խանումին, և եղբարցն՝ Նազարին, Դաւութ խանին, Մալխումին և ամենայն երախտաւորացն՝ հոգևորացն և մարմնաւորացն և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց...։

Ստացող՝ Մարտիրոս

Գ

Դարձեալ յիշեցէք աստուածասէր և հեզահոգի զՄարտիրոս քահանայս, և զծնաւղսն իմ՝ Ենգիբարին և մաւրն իմոյ՝ Խանումին, և եղբօր որդոյն իմ՝ տէր Մէլիքսետին, և որդոցն իմոց՝ Դաւութին, Յակոբ դպրին, մանուկ[38] Ղուկասին, Ենգիբարին, Պէկլարին և[39] միւս եղբաւր որդոյն իմոյ՝ Քասբարի որդոյն Ուլուին. և ամէն։

1188

ՄԱՇՏՈՑ

Երևան, № 3998

Գրիչ՝ Եսայի
Վայր՝ Թաւուզ

231 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Մաշտոցս ձեռամբ Եսայի գրչի, ի յերկիրս Տայուշ, ի դևղս որ կոչի Թաւուզ, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս, ի յաթոռս Խորանաշատեա[յ] Ս. Աստուածածնիս և ի Վանական վարդապետի սբ. գերեզմանի, և ի սոցին սպասաւորի տէր Յովաննէս արհեպիսկոպոսի, թվականութիւն Հայոց ՌՁԹ (1640)-ի։ Յիշեցէք Եսայի գրիչս, հանդերձ ծնողքն իմ և որդիքն իմ՝ Ստեփանոս, և Սենեքարիմն, և Սրապիոնն, և ամենայն յ[ար]եան մերձաւորքն։

1189

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 4690 (1475 թ) տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Նշխարք» Բ, № 522, էջ 432, № 6333, էջ 61ա, № 261

Կազմող, նորոգող՝ Սարգիս
Վայր՝ Կտուց անապատ

ա

672բ Շնորհիւ Տեառն և ողորմութեամբ նորին, վերստին նորոգեցաւ և կազմեցաւ աստուածախաւս տառս այս Յայսմաւուրք, ի յերկիրս Վասպուրականի, ի Կտրցու խորին անապատիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին, ի ՌՁԹ (1640) ամին, ի յառաջնորդութեանն յայսմ հրեշտակակրաւն, քրովբէաբնակ և աստուածաճեմ սբ. անապատիս տէր Աւետիս արհի և պանծալի եպիսկոպոսին Գանձակեցոյ և միաբանութեան սբ. ուխտիս աւելի քան զքսան, որ սարփակիմք ընդ հովանեաւ սբ. տեղեացս։ Կազմեցաւ ձեռամբ ամենամեղ եղեռնագործ կրօնաւորի Սարգսի, որ միայն լոկ անուամբ եմ և գործով քան զամենայն յոռի։ Արդ՝

38 Ձեռ-ում «մանուն»։

39 Այստեղից այլ գրով։

որք հանդիպիքդ սմա կարդալով կամ միայն տեսութեամբ, յիշեցէք ի Քրիստոս զյիշման արժանին զԱւետիսն և զեղբայրն՝ զԴիլանչն. որ վերստին ստացան զսա ի յարդար և ի հալալ վաստակոց իւրեանց, և եա վերստին նորոգել և կազմել, և եդ ի դուռն Ս. Գէորգեա[յ] զօրավարի[ն] ի Լմայ անապատիս, յիշատակ հողոց իւրեանց և ծնաւղացն, հօրն՝ Կիրակոսին և մօրն՝ Բաղջիս և Բեկիսիանին, դստերացն՝ Սուլթանին, Կօզալին, Հոռոմին, Մաւիբին, և մեծ պապուն՝ Խլղաթին, Խաթունաղին, և որդոցն՝ Կարապետին և կողակցուն, և միւս որդոցն՝ Մարտիրոսին, որդոցն՝ Աւետին, Սահակին, և հանգուցեալ որդոցն՝ Յակոբին, Աստուածատուրին, և մօրն՝ Թուիկէն, և միւս եղբօրն՝ Մուրատին և կողակցուն, դստերն՝ Մարգրտին, և միւս եղբաւրն՝ բարեմիտ Կիրակոսին, որդոյն՝ Աւետիսին, կողակցուն՝ Ալթունին, և որդոցն՝ Ատոմին, և հանգուցեալ որդոյն՝ Յովանիսին և Յովսէփին, Կիրակոսին, Նիկողոսին, և հանգուցեալ եղ-
673ա բարցն՝ Ատոմին, Մուրատին, դստերացն՝ //Սուլթանին և Դուզալին, և եղբօրն հարազատին՝ Դիլանչուն և կողակցուն՝ Սուսամբարին, որդոյն՝ Յոհանիսին, և դստերացն՝ Վարդխաթունին, Եղիսաբեթին, և հանգուցեալ որդոյն՝ Յոհանիսին, հօրեղբարցն՝ Հայրապետին, կողակցոյն՝ Վարոցին, և մեր հոգևոր հարցն՝ տէր Յոհանէս քահանային և տէր Պողոս քահանային, և մեր հոգևոր եղբօրն՝ Ղազարին, և որ աշխատանք ունին. յիշեցէք ի Քրիստոս...։

Բ

6բ Վերջին ստացողի սորայ Աւետիսին և եղբօրն՝ Դիլանչուն, և որդոցն՝ Ատոմին, Կիրակոսին, Նեկեղոսին և քրւերն՝ Ոսկիհատին, Ամիրջանին, և իւրեանց կողակցացն. ամէն։

Գ

17ա Դ[ա]բաղ Աւետիսին, եղբօրն Դիլանչուն, և ծնողացն, հօրն՝ Կիրակոսին և մարցն, որդոց նոցին և դստերաց նոցին. ամէն։ Ատոմին, Կիրակոսին, Ոսկիհատին, որ փոխեցան առ Աստուած. էրաթին. ամէն[40]։

Դ

Ծաղկող՝ Մեսրոպ Վանեցի

83ա Դարձեալ երես անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ լուսերամբ դասք քահանայիցս, յիշեցէք ի Քրիստոս... Աւետիսին, որ մականուն Բուքանց ասեն, և եղբօրն՝ Դիլանչուն[41]... և ինձ սուտանուն Վանեցի Մեսրոպիս, որ բազում աշխատեցայ, որ յետին ժամանակս ծաղկեցի, քանզի հին էր, դեղն լաւ չէր առներ, անմեղադիր լերուք, քանզի կարս մեր այս է։ Այս խորանս իմ հանածն չէ, այլն ես եմ ծաղկեր։

---

[40] Այս և նախորդ հիշատակարանի նման տե՛ս ձեռ-ի նաև 10բ 11բ, 15ա, 19ա, 20ա, 180բ և այլ էջերի ներքևի լուսանցքներում։

[41] Թվում է վերևում հիշված անունները։ Այլ գրով գրված մի հիշատակարան գտնվում է ձեռագրի 672բ էջում, ուր հերթականությամբ թվում է ա հիշատակարանում նշված անունները։

Ե

Ստացող՝ Ստեփանոս վարդապետ
Վայր՝ Լիմ

673ա *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զանարժանս լոկ անուն* Ստեփանոս *անուամբ վարդապետ և առաջնորդ սբ. ուխտիս* Լմա[յ] *Ս. Գէորգ անապատիս, որ ժողովեալ կան աստ աւելի քան զյիսուն և վաթսուն եղբայրք՝ աբեղայք և միակեցք ի սէրն Քրիստոսի. և մեք սպասաւորեմք սոցա վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեան։ Այլ զայս գիրքս քուրդ ազգն գերի բերին ի Հիզնա[յ] ի Շատախ. և Շատախոյ բերին ի Վան ծախեցին։ Եւ բարեմիտ* Աւետիսն *և իւր եղբայրն՝* Դիլանջին *գնեցին։ Եւ ես աւրհնութիւն գրեցի նոցա՝ բերել զդիրս, բերել տալ յիշատակ։ Եւ նոքա բերին և դրին յիշատակ. այլ անծաղիկ էր, որ հարկեցինք, տուինք ծաղկել և կապել. և եդաք աստ ի Ս. Գէորգ* Լմա[յ] *յանապատս, որ անջինջ յիշատակ մնա նոցա հոգոյն...։*

Զ

Այլ գրով

673բ *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... մահդասի դաբաղ* Աւետիսին, *հօրն՝* Կիրակոսին *և մօրն՝* Բուղչին *և* Բէկիսիանին, *և որդոցն՝* Ատոմին, Կիրակոսին, Յովսէփին, Նիկողայոսին, *զոր փոխեցան առ Աստուած. և միւս եղբօրն՝* Դիլանջուն, *և որդոյն՝* Ամիրջանին, *և իւրեանց կողակցացն, և որդոցն, և դստերացն...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զդաբաղ մահդասի Աւետիսն *և զսիրելի որդին իւր՝ զ*Յովսէփն, *որ շատ աշխատեցան ի հետ գրքիս և Աստուած ողորմի ասացէք նոցա...։*

1190
ՆԱՐԵԿ
Երևան, № 4938 (1390 թ.)

Կազմող՝ Թումա

294ա *Յիշեցէք ի սբ. և յերկնարացիկ յաղաւթս ձեր զպատուական տանուտէրն* զԱմիրն, *որ վերս[ա]ին ետուր նոր նորոգել զսբ. Նարեկացիս, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց, հօրն՝* Վանէսին *և մօրն՝* Յուրին, *կողակցին՝* Ջանաղին, *որդոյն՝* Յովանիսին, *և միւս որդոցն, որ փոխեցեալ են առ Քրիստոս՝* Սանասարին, Նուրիջանին, *դուստրն՝* Յուրիանին *և միւսուն՝* Էքարին, *որ հանգուցեալ է։ Դարձեալ յիշեցէք... վերջին կազմողի, ստացողի սորայ մելէք* Ամիրին...[42], *հօրեղբարցն՝* Ջանազգին, *դստեր* Նուբարին, Մկրտչին, Փանոսին, Ղուբաթին, *որդոյն՝* Գրիգորին, *կողակցին՝* Շայումին, *որդոյն՝* Աւետիսին, Ջանաղին, *հօրն՝* Յովանիսին, *մօրն՝* Մրուաթին, Առիւծին, Ատոմին, *դուստրն՝* Ս[ու]լթանին, *կողակցին՝* Գրիգորին, *որդոյն՝* Մինասին. *Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին. ամէն։*

---

[42] *Նորից թվում է վերևում հիշված անունները։*

294բ ...։ Եւ ինձ մեղապարտ կազմողիս սուտանուն Թումայիս մի բերան Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն։ Թվին ՌՁԹ (1640)։

1191
ՄԱՇՏՈՑ

Երևան, № 6799

Գրիչ՝ Հայրապետ երէց
Վայր՝ (Նոր) Ջուղա

ա

139բ Ստացող Մաշտոցիս զտէր Մկրտիչն և սուտանուն գրիչս զտէր Հայրապետն յիշեցէք...

բ

435ա Փառք...։ Արդ՝ եղև գրաւորութիւն սորա ի քաղաքս Ջուղայ, ընդ հովանեաւ ամենամաքուր տաճարի Ս. Ստեփանոսի, և սքանչելագործ ղօբեղ Խաչի, և պատերազմի Ս. Նշանի, ի թվականիս Հայոց. Ռ և ՁԹ (1640) ամի, ի հայրապետութեան սբ. ուխտիս Խաչատուր արի և քաջ, հեզահոգի վարդապետի, ձեռամբ անարժան և սուտանուն Հայրապետ իրիցւոյ, և զանունս ունիմ և զգործս ոչ։ [Գրեցաւ] յընտիր և ի պատուական յաւրինակէ, որ ասի Մաշտոց։ Զի սովաւ կատարին ամենայն կարդ քրիստոնէութեան և է (7) խորհուրդ սբ. եկեղեցւոյ, սովաւ մկրտին եբախայքն, սովաւ ամուսնանան երիտասարդքն աւրհնութեամբ պսական, սովաւ հաղորդին ամենայն հաւատացեալսն ի մարմնոյ և յարենէ Որդոյն Աստուծոյ, սովաւ յուղարկին ննջեցեալքն...։

435բ Որոյ ցանկացող եղեալ հեզահոգի և բարեմիտ, աստուածասէր[43] Յիշեցէք ի բարին զստացող սբ. գրոյս Էրդամն, որ փափակեցաւ ի սէր աստուածատունկ և ծաղկերկանկ բուրաստանիս, որ ստացաւ զսայ ի հալալ ընչից իւրոց և եթող յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց։ Աղաչեմ զձեզ, ո՛վ սբ. քահանայք և մանկունք եկեղեցոյ, յորժամ ընթեռնուք զսբ. տառս, որ կոչի Մաշտոց, տես[ա]նելով կամ աւրինակելով, աւգնեցէք հոգոյ իմոյ, ձեր սբ. բերանովն զՀայր մեղէն և Աստուած ողորմին մի՛ պակաս առնէք հոգոյ իմոյ։

Դարձեալ յիշեցէք զէրդամն և զկողակիցն իւր՝ Խանփարին, և Սիրունը, և զորդին իւր[44] Հայրապետն, և զԲ (2) որդիքն իւր՝ Սանակն, և զմեծ պապն իւր՝ զտէր Խաչատուրն, և զկողակիցն իւր՝ Մէիփաշէն, և զորդիքն
436ա իւր՝ Ղազարն, Պարխանն, տէր Մխիթարն, Ներսէսն, // Փիրամզէն. և դուստրն՝ Սղմէրն, Ոսկմէրն. և միւս մեծ պապն իւր՝ Մաթոսն, և զորդին իւր՝ Բախշումն. և զկողակիցն իւր՝ Ղադամխութլուն. և զդուստրն՝ Հոռիփսիմէն, Ամէնփաշէն. և զհայրն իւր՝ Պայխանն, և զմայրն իւր՝ Ըմրիշատն, և զեղբայրքն իւր՝ Աստուածատուրն, մահդասի Փանոսն և զկողակիցն՝ Հա-

[43] Այստեղ ընդհատվում է։ Շարունակությունը թվում է թե տարբեր գիր է, ստացողն էլ այլ անձնավորություն։

[44] Մի քանի տեղ նշված է «իմ», բայց ուղղված է «իւր»։

պիպն, Մէրտատիկն, և զորդիքն իւր՝ մահդասի Մարուքէն, Ալաբէկն, Բարղամն, և զդստերքն իւր՝ Ղալամիւրլուն, Հոիփսիմէն, Փարասխանն, և զթոռն իւր՝ Ցոանգին, և զքրտերքն՝ Շուշանն, Նարարն, Սինափաշէն, Խաթունն, և զդուստրն իւր՝ Սալլբանն, Խաթունն, և զիսմաթքարն՝ իմ Գոնարն: Յիշեցէք լի սրտիւ և Աստուած ողորմի ասացէք Էրդամին հոգոյն, Խանփարուն և Աստուած յիշողացդ...։

1192
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 7135

Գրիչ՝ Աւետ

ա

412ա Ի թվին Ռ և ՁԹ (1640) ամին աւարտ եղև սբ. գրոյս, զԱւետ գծողս յիշել աղաչեմ։

բ

Ստացող՝ Յակոբ

317ա Յիշատակ վասն իմոյս անձին,
ստացայ ըզգիրքս աստուածային,
Այլ և ծնողաց իմոց կրբկին,
որք յոյժ զերախտիս ինձ ցուցին։
Կրցելոցն արեամբ ևս ընդ նոցին,
յիմոյս նախնեացն ոյք սերեցին,
Ուստի զհանդիպողսրդ սրմին,
յիշել աղաչեմ ըզսոսին։
Բերանալիր տալ ղողորմին,
երգել ըզՀայրն մեր որ յերկին,
Զի զձեզ և զմեզ ի միասին,
Յիշեսցէ Տէր յաւուրն յետին[45]։

1193
ԱՌԱԿՔ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՅԳԵԿՅԻՈՅ
Երևան, № 8376

Գրիչ՝ Մկրտիչ Լեճցի

ա

148ա Առակաց բանքս է հրաշալի,
148բ Երգողն է// սբ. և պանծալի,
Բարունեացրն բարուն բարի,
Որոյ Վարդան վերակոչի։
Ի հրեշտակաց պար յօրինի,
Յառաքելոց յաթոռ նստի,
Եւ յաներեկ օրն որ լինի,
Մեզ բարեխօս առ Տէր լինի.
Ամէն, ամէն և եղիցի։

[45] բ հիշատակարանը եթե նախագաղափար օրինակինը չէ, ուրեմն ձեռ-ի ստացողը Հակոբն է, վերջինս հոդվում է մեկընդմեջ տողերի սկզբի տառերով։

Բ

[Փ]առք..., որ ետ կարողութիւն յաւարտ ղրոյս, որ է Առակաց պիրքքս սահմանեալ և յօրինեալ աստուածաբան և տիեզերահռչակ, եռամեծին և երիցս երանեալ, նազելի բարունոյն և քաջ փաղերային Վարդանայ, վասն հոգւոյ և մարմնոյ, շահու և օգտի, ընթերցողացն և ուսումնասէր մանկանցն եկեղեցւոյ։

Արդ՝ գրեցաւ գիրքս ի թվին Հայոց ՌՁԹ (1640) ամի, ձեռամբ անար-
149ա ժան և անիմաստ, // փծուն գրչիս, լոկ անուամբ Լեհցի Մկրտչիս, ի վայելումն սրբազան քահանայի տէր Գրիգորին։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպանդուխտ գրիչս և զծնօղս իմ և զնրնշեցեալ պանդուխտ որդեակն իմ, զի և ձեզ յիշողացգ և մեզ յուսացելոցս ողորմութեան Քրիստոսի առ հասարակ ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեանն. ամէն։

Եւ ընդ անարժանիս մաղթանաց հայցեմ ի ձեզ, հայրք իմ և եղբայրք, արժանի արարէք. մաքուր աղօթից ձերոց, յիշմամբ զստացող սորա զտէր Գրիգորն, և զհայրն նորա՝ զտէր Ղուկասն, և զմայրն նորա՝ զՓէրին, և զամենայն ազգատոհմն իւր, զի և դուք յիշեալ լիջիք իւր միւսանգամ գալըստեանն...։

Գ

118ա Վա՜յ ինձ, ո՜վ սիրելի ընթերցող, կարծեմ որ էրէց քաղցեր էր և ղատուն փիլաւ շատ, վասն այն գովեաց ղղատին. ողորմելի զմեղաւորս յիշեա[46]։

1194

ՅԱՂԱԳՍ ՀՈԳԻՈՑ ԵՒ ՀՐԵՇՏԱԿԱՑ

Երևան, № 8394

Գրիչ՝ Ստեփանոս

221ա Եւ այսքան բաւականասցի Յաղագս հրեշտակաց ի փառս Քրիստոսի...։ Կատարեցաւ գիրքս, որ Յաղագս հոգւոց և հրեշտակաց, ի թուիս Հայոց ՌՁԹ (1640)։ Զքո շնորհեալ գիրքս աւարտեցի, ո՜վ երանեալ վարդապետ, ընկալ ի յոգնամեղ և ի կուրամիտ սուտանուն Ստեփաննոսէ, և զիս ի քո սբ. աղօթս յիշեա՜։

1195

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 8409 (1471 թ.)

Կազմող, նորոգող՝ Յակոբ
Վայր՝ Կարին

283ա Դարձեալ յիշեցէք զվերջին ստացող զոսկէճաճանճ, աստուածաբուխ սբ. Աւետարանիս զբարեմիտ Գասպարն, որ հանգուցեալ է առ Քրիստոս,

[46] Առակներից մեկի մասին է գրված այս տողերը։

և զկնոջանիքն իր՝ զկողակիցն՝ Խանփաշան, *և զորդիքն՝ զՄովսէսն, զԱստուտատուրն, զՅարութիւն, զկ[ուս]սեր որդին՝ զՄնացականն, և ամենայն արիան մերձաւորացն իւրեանց։ Ով որ հանդիպիք սմայ, յիշեցէք ի Քրիստոս, որ հալալ վաստակոց իւրեանց գնեցին, յիշեցէք...։*

Եւ ես անարժան Յակոբս *աղաչեմ յիշել, որ նորոգեցի և կազմեցի ի քաղաքս* Կարնոյ, *ի դուռն Միաբան Ս. Աստուածածնին, ի թուականիս մերոյ ՌՁԹ (1640), յիշեցէք...։*

Ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ *տէր* Փիլիպոսի, *յոյժ սրբայսէր և առաքինի։ Սորա ժամանակն շատ աւերութիւն հասուցին թագաւորքն Տաճկաց։ Սա բազում ծախիւք վերըստին նորոգեաց ևս առաւել զկանոնականսն ուղղեաց, որ խաբանեալ կայր*[47]*։*

1196
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 9678

Գրիչ՝ Յովասափ քահանայ
Վայր՝ Հզու

121բ *Քէն հանապազ նահանջ է, զմնացեալն ի Փիւրն հարցիր և զՅովասափ անարժան գրիչս յիշեա՛, ո՛վ ընթերցող, որ անուամբս միայն եմ քահանայ և գործովս ոչ։ Եւ արդ՝ գրեցաւ Պարզատումարս ի թվականիս Հայոց ՌՁԹ (1640), ի գիւղաքաղաքն Հզու։ Որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմեղապարտ գրիչս զՅովասափ քահանայն և զծնողսն իմ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն։*

1197
ՄԱՍՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ
Երևան, № 10128 (ԺԵ դար)

3ա *Աստուած ողորմի* Մէլիքսէթին, Գիլիանին, Պէտրոսին, Թորոսին, Բահատուրին, Հէրիքին։ *Յիշատակ Հոգոյն Սրբոյ։ Ով որ կարդայ մէկ Աստուած ողորմ[ի] ասէ. ամէն։*

Ի թիւս ՌՁԹ (1640)։

1198
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ԼԱԱԺԻ, A-36 (մանրաժապավեն, Երևան, № 177)

Գրիչ, ծաղկող, կազմող՝ Սաեփանոս երէց
Վայր՝ Բջնի

248ա *Փառք...։ Արդ՝ ցանկացող եղև յայսմ տառի սրբասէր և հոգելի կրօնաւորն զտէր* Ալէքսանն *մեծաւ փափագմամբ, և ըստացաւ զսա ի*

[47] Զեռ-ի կազմի ետևի կողմի մետաղի վրա արձանագրված է վերևում հիշված անձնավորությունների 1641 թ. հետևյալ հիշատակարանը. «Յիշատակ է սբ. Աւետարանս Գասպարին և Կողակցին՝ Խանփաշին, և որդոցն՝ Մովսէսին, Պաղտասարին, Յարութենին, Մնացականին ի դուռն Ս. Ըս[տ]եփ[ա]նոսին. թվին ՌՂ (1641)»։

հալալ ընչից իւրոց, յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց բարեպաշտից, որ ոչ
148բ են անուվանք նոցա ի գրի։

Արդ՝ ղրեցաւ սբ. տաճս ի Թուաբերութեան հայկազան տօմարի ՌՁ և Թ (1640) ամին, ի հայրապետութեան Հայոց աեառն տէր Փիլիպոս կաթողիկոսի, և փատշահութեան Պարսից շահ Սաֆուն կարմիր գլխոյ, և իշխանութեան Արարատեան նահանդիս Քալբիալայ խանին, որ ազգի ազգի տանջանօք նեղէ զքրիստոնայս հարկապահանջութեամբ։ Եւ քանի սա իշխան նստաւ երկրիս, լիութիւն ոչ էառ երկիրս։

Նկարեցաւ, ծազկեցաւ և կապեցաւ սբ. երգարանս Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, ձեռամբ յոգնամեղ և անարժան իրիցոյ Ստեփանոսի, ի գեղս որ կոչի Բշնի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, և առաջնորդութեան սբ. աթոռոյս արհի և պանծալի տէր Փիլիպոս եպիսկոպոսին։

Զստացող սբ. Սաղմոսարանիս ղտէր Ալէքսանն յիշեցէք, որ զՏօնացուցն այլ ի մէջն ձգել ետուր։

Դարձեալ եղբարք, Ա (1) Ա (1) տեղ որիշ մարդ է գրէր, թողութիւն արարէք, ո՛վ ընթերցողք. Իմաստնոցն բաւ է, այլ տեղ չկայ։

1199

ՊԱՐՁԱՏՈՒՄԱՐ

ԼԱԼՎԳԱՒ, № 199

Գրիչ՝ Նիկողոս դպիր

1175 Գրեցաւ Պարզատումարս թվականին ՌՁԹ (1640), ձեռամբ Նիկողոս դպրիս, ի վայելումն տէր Մարտիրոսին, և իւր դեռաբոյս որդոյն՝ Դանիէլին. ամէն։

1200

ԱՒԵՏԱՐԱՆ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 765

Գրիչ՝ Ղազար քահանայ
Վայր՝ յերկիրս Որոտան

211բ Փառք...։ Արդ՝ ես անարժանս ի գիրս գրչութեան Ղազար քահանայ... և վասն աղաչանաց սիրոյ եղբօրս մեր Մկրտիչ քահանայիս, սկսայ զսբ. Աւետարանս Քրիստոսի և ողորմութեամբ նորին աւարտեցի ի մեծ թուականութեանս Հայոց ՌՁԹ (1640) ամին, յառաջնորդութեան երկրիս Ղափանայ Մեսրոբ և Յովհաննէս եպիսկոպոսացն Ստաթէի, և ի հայրապետութեան մեծ աթոռոյն էջմիածնայ տէր Փիլիպոսի, և ի թագաւորութիւն Պարսից Սաֆի շահ կոչեցելոյ. որ յայսմ ամի եղև խաղաղութիւն Պարսից ընդ Օսմանցւոց։ Ի յայսմ ամի եղև զրաւ սբ. Աւետարանիս յերկիրս Որոտան ի գեաւղս[48] ընդ հովանեաւ սբ. եկեղեցւոյն Ստեփաննոսի և սբ. անապատաց. որք հանդիպիք սմա կարդալով կամ օրի[նակելով][49]

[48] Գյուղի անվան տեղում բազմակետեր է դրված։
[49] Ղ. Փիրղալեմյանը հաղորդում է «պակսեալ էր». այն է՝ ձեռ-ից թերթ է ընկել։

1201
ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 767

Գրիչ՝ Վարդան քահանայ
Վայր՝ Շէնաղբիւր

212ա Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ձեռամբ Վարդան անարժան քահանայի, ի գիւղն որ կոչի Շէնաղբիւր, ի գուռն Ս. Սահակայ Պարթևի հայրապետին և Մինասայ արագահաս զօրավարին, ի յառաջնորդութիւն Ապարանից Ս. Խաչին Սիմէոն վարդապետին և ի հայրապետութեան Աղթամարայ Ստեփաննոս կաթուղիկոսին, և ի պարոնութեան Աւտալ բէկին, և ի թուականիս Հայոց ՌՁԹ (1640), ի դառն և ի նեղ ժամանակիս, որ զօրացեալ են այլազգիքն ի վերայ մեր։

1202
ՆԱՐԵԿ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 768 (1305 թ.) տե՛ս նաև № 6273, էջ 567բ

Վայր՝ Կարին

212ա Վերջին ստացող գրոցս զբաւշայ Ղազարն... եդին յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին, յիշեցէք ի Քրիստոս, թուին ՌՁԹ (1640), ի քաղաքն Կարնոյ, որ այժմ Արզրում ասի, յիշատակ անշնջելի, և Միաբան Աստուածածնի դռնէն ոչ հանելի։

1203
ՄԱՇՏՈՑ

Ղ. Փիրղալեմյան, «Ընշխարք», հտ. Ա, № 769

Գրիչ՝ Բարսեղ քահանայ

212ա Փառք...։ Գրեցաւ ...ի թուականիս Հայոց ՌՁԹ (1640), ձեռամբ Բարսեղ քահանայի, ի գաւառն Կապատովկացւոց, ի հռչակաւոր անապատն Ս. Աստուածածնին և ի Ս. Պետրոս եկեղեցւոյս և այլ ամենայն սրբոցս որ աստ կան։

1204
ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՆՋ, № 154

Գրիչ՝ Յովանէս
Վայր՝ Թորսկան

ա

165 Զանպիտան Յովանէս գրիչս յիշեա՛։

բ

Փառք..., որ ետ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տարիս այս մարգարտաշար և վարթափթիթ բուրաստանիս, որ է սա ըն-

դիր աւրինակէ։ Որ և գրեցաւ սայ ի յերկիրս Շօշ, որ է Ասպահան, ի յեզը Նարընդլալային, որ ասի Թորքական, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, [ա]ղնամեղ գրչի[50], ի վայելումն բարեմիտ և հեզայհոգի առն իմաստնոյ...[51]։ Գրեցաւ սա ի թուականիս մերոյ ՌՁԹ (1640) ամի, ի հայրապետութեանն մերոյ տեառն Փիլիպպոս կաթողիկոսի, և ի յառաջնորդու-
661 թեան // տէր Խաչատուր արհեպիսկոպոսի, որ և անփորձ պահեսցէ։

Գ

Այր մի Նորատունկ ի վաղուց ժամանակէ ջերմեռանդ սիրով և փափագմամբ ըղձայր սբ. Աւետարանիս, ետ գրել և ստացաւ ի հալալ վաստակոց զսա, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց Կորկոյն և Եթարին, յիշեցէք...։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՆորատունկն և զկողակիցն՝ զՇահզատէն և զորդիքն՝ զՏիլանջին, զՊեարոսն, զՀերապեան, և զդստերքն՝ Գուլինարն, Խասմէլիքն և զՀերիքն. յիշեցէք։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՆորատունկն, և զեղբայրն՝ զՏօլին, և զկողակիցն՝ Հուրիիանն, և զորդիքն՝ Կորկին, Մարտիրոսն և զԿիրակոսն և զմիւս եղբայրն՝ զԱռաքելն, զկողակիցն՝ զՄարխաթունն և զդուստրն՝ զՀռիփսիմէ, և զմիւս եղբայրն՝ Միրումն, յիշեցէք...։

1205

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՆԱ, № 9 (1488 թ.)

216 Զվերջին ըստացող սբ. Աւետարանիս բարեսէր և հաւատարիմ զհեզայհոգի Սարգիսն, որ ցանկացող եղև սմայ ըստ բանի մարգարէին. որ ասէ. «Երանի...[52]». ըստացաւ զսայ ի հալալ և ի արդար վաստակոց իւրոց, յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց զՍուրխասին և Փէրիխանին, և կողակցին իւրոյ՝ հանգուցելոյ առ Քրիստոս զՍօլթա[ն]փաշային, և ամենայն արեան մերձաւոր ազգականաց, յիշեցէք...։ Արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս յաղօթս ձեր զՍարգիսն, որ ետ սայ յիշատակ հոգոյ իւրոյ, յիշողացդ Աստուած ողորմեսցի. ամէն։

Թվին ՌՁ և Թ. (1640)։

1206

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՆԱ, № 14

Գրիչ՝ Դաւիթ քահանայ
Վայր՝ Ասպահան

ա

224 Փառք...։ Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց, անպիտանս և անարժանս ի մանկանցս եկեղեցւոյ, բազմամեղս և անիմաստիս ի գիրք գրչութեան, և յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ Դաւիթ սուտա-

[50] և [51] Ինչպես հաղորդում է ցուցակի հեղինակը երկու դեպքում էլ անունների տեղը բաց է թողնված։

[52] Եսայ., ԼԱ, 9։

նուն քահանայ, որ անուամբ միայն եմ և ոչ գործով, շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թուականիս Հայոց Ռ և ՁԹ (1640), ի մայրաքաղաքս Ասպահան, որ կոչի Շօշ, ընդ հովանեաւ Ս. Գեւորգ ժամատանս, ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի ամենայն Հայոց, և ի յառաջնորդութիւն մերոյ աթոռոյս Ջուղայոյ Խաչատուր վարդապետի, և թագաւորութեան Պարսից շահ Սէֆէ յաղթող արքային, և իշխան մերոյ ազգիս Հայոց խաւշայ Սարֆրազին, որ համախոհ խաւսակից է թագաւորին, աւարտեցաւ զտէրունական բանս՝ շնորհիւ ամենակալին յԱստուծոյ։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան զմանկունսդ սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս, զաւելորդն բառնայք և զպակասն լնուք և խոշորութեան և սխալանացն անմեղադիր լինել, զի կարն մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով անարժանիս Աստուած ողորմի ասացէք և մեղաց թողութիւն խնդրեցէք մեզ և ծնողաց իմոց Թաթէոս քահանային և Հոիփսիմէ. և Աստուած ձեզ ողորմեսցի ի միւս անգամ գալստեան իւրոյ և ձեր մեղքն թողցէ· ամէն։

Ստացող՝ Հանէս

Բ

Դարձեալ յիշեցէք զբարեմիտ և զհեզահոգի Հանէսն, որ ստացայ զսբ. Աւետարանս ի յարդար վաստակոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ Վարդպարոնին և մօրն իմոյ՝ Արզուին, և կնոջն իմոյ՝ Խասիկրն, Մարիամն, և որդիքն իմ՝ Գրիգորն, Սիմէոնն, Սարգիսն, և դուստրն իմ՝ Խանզատէն. և հանգուցեալ որդին՝ Նորաւունկն և եղբայրքն իմ՝ Վարդպարոնն, Դիլանն, Թորոսն, Կիրակոսն և իմ հօրեղբայրքն՝ Խոնիկն, Աստուածատուրն, և քոյրն՝ Ղուտրադն, և ամենայն արեան մերձաւորաց իմոց. ամէն...։

1207
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՎԼ, № 384

Գրիչ՝ Յոհանէս
Վայր՝ Մոկք

ա

897 Փառք...։ Ուստի և տեսեալ սորա փրկագործ տնաւրինութեան խորհուրդն Քրիստոսի՝ ոմն պատուական և հաւատարիմ քրիստոնեայն՝ Մխիթարն, որ ի վաղուց հետէ փափաքէր աստուածախաւս սբ. Աւետարանիս, և ստացաւ զսա, ի յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն՝ Մլամին և Վարդիաթունին, և կնոջ Խաթունաղին, և որդւոցն՝
898 Գրիգորին, Քամալին, Սարուխանին, Ամիրխանին, // Գրիգորին, Ասքանդարին, կնոջ Մրջանին, Մլամին, և դստերցն՝ Գաւզալին, Ջանաղին, եղբարցն՝ Էնի[ս]թին, և կողակցին՝ Ինախին, և որդւոյն՝ Բազէն՝ և միւս եղբաւրն՝ Ղարիբին, և քրւերցն՝ Գաւզալին, Խաթունաղին, և որդւոյն՝ Յովանէսին, մեծ պապուն՝ Խլղաթին, Շահսալթանին և հօրեղբաւրն՝ Աւետիսին և ամենայն արեան մերձաւորացն, ամէն...[63]։

[63] Վերոհիշյալ անձնանունները նորից կրկնվում են միևնույն հաջորդականությամբ։

899 Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս յերկիրս Մոկաց քաղաքի, ի դուռն Գ (3) խորանացն՝ Ա. Աստուածածնին և Ս. Յովհաննու Կարապետին և Ստեփանոսի Նախավկային, ձեռամբ նուաստ անուն Յոհանէսի, ի թուականութեանս մերում տումարի ՌՁԹ (1640) ամի, ի դառն և [ի] նեղ ժամանակի, որ ամեն տարի հեծել կու բերեն ի վերայ աշխարհիս։ Զի յայսմ ամի Մուրատ խոնդքար եկաւ բազում և անթիւ զաւրաւք ի վերայ Բաղտատայ և պաշարեալ էառ զնա. և բազում և անթիւ կոտորումն, որ եղև ի նմա՝ Աստուծոյ միայն է գիտելի։

Արդ՝ աղաչեմ զձեզ, հողացեալս ի գերեզմանի, զդասս սրբասնեալ քահանայից և զգումարս ժողովրդեանդ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և Աստուած ողորմի ասացէք ինձ անարժան գրչիս՝ նուաստ անուն Յոհանէսի և ծնօղացն իմոց՝ տէր Մէլքէսէքին և Գոզալին, և կողակցուն
900 իմոյ՝ Փաշին, և դրստերն՝ Գուզալին, // և հաւրեղբաւրն՝ Շէրբէկին, և ամենայն արեան մերձաւորացն, ողորմեսցի Յիսուս միածին. ամէն։

Բ

Ստացող՝ Մխիթար

Արդ՝ ես Մխիթար ծառայս Աստուծոյ, յիշեցի զի անցաւոր է մեծութիւն աշխարհի, և վաղուց հետէ փափաքեցի սբ. Աւետարանիս և ետու զսա գրել և զարդարել արծաթով, և եգի ի դուռն Գ (3) խորանին անշինչ յիշատակ ի ձեռն սրբասէր քահանայից՝ տէր Յոհանէսին և տէր Յովանէս ծաղկողի սորին և տէր Յակոբին[54]։

1208

ԱՒԵՏԱՐԱՆ

ՁՁՎԼ, № 385. տե՛ս նաև Ղ. Փիրղալեմյան, «Ընչարքդ», հտ. Ա, № 766, էջ 212ա, ձեռ. № 6333, էջ 48ա, հիշտ. № 213

Գրիչ՝ Եղիա Համքեցի

Վայր՝ Կ. Պոլիս

809 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի մայրաքաղաքն ի Կոստան-
900 դինուպալիս, // ի դուռն Ս. Աստուածածնի, ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի՝ Եղիայի Համքեցոյ, ի թուականիս Հայոց ՌՁԹ (1640), ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք և հալածիմք յանաւրինաց և ի սուտ եղբարց։

Արդ՝ ստացաւ զսբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց, մահտեսի Մուսէսի կողակից մահդասի Մարիամն, և ետ յիշատակ ի ձեռն Կարապետ քահանային՝ տէգրին իւրոյ, յիշատակ յաւիտենական, զոր աւրհնութեամբ եղիցի. և աղաւթիւք սրբոց ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւսանգամ գալստեան. ամէն։ Եւ արդ՝ որք հանդիպիք յայսմ սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ աւրինակելով կամ հարևանցի տեսանելով,
001 յիշեսջիք Հայրն մեղայիւ մի զըստացող սորա զմահդեսի Մա//րիամն և զայլ ամենայն արեան մերձակայս՝ զկենդանիս և զհանգուցեալս։ Ընդ նմին և զիս՝ զանարժանս և զյունայնս ի գործս բարեաց՝ զԵղիա գծող
002 սորին, յիշեցէք յա//ղաւթս ձեր. և որք յիշէք՝ յիշեալ լիցիք առաջի անմահ գառինն Աստուծոյ. ամէն։

---

54 Շարունակությունն անթվական այլ հիշատակարան է։

1209
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏԶԵԳ, IV, № 1227

Վայր՝ Երուսաղէմ

367 *Փառք...։ Արդ՝ եղաւ յիշատակ սբ. Աւետարանս ի սբ.* Երուսաղէմ, *ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին, ի պատրիարգութեան սբ. աթոռոյս Յակոբա[յ] Տեառնեղբաւրն՝ տէր* Գրիգոր *քաջ և արի հայրապետին, ի թվին Հայոց Ռ և ՁԹ (1640)*[55]։

Արդ՝ որք հանդիպիք սբ. Աւետարանիս տեսութեան կարդալով կամ աւրինակելով, յիշէցէք... ստացողի սբ. Աւետարանիս և ծնօղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և ննշեցելոց. նաև տէր Գրիգոր *սբ.* Երուսաղէմայ *հայրապետին, որ բազում աշխատանս արար ի վերայ վիճակիս Հայոց. ամէն։*

368 *Կրկին անգամ յիշեցէք զգծող և զստա//ցող սբ. Աւետարանիս զսարկաւագ* Եղիազարն, *որ կոյս և մանուկ տեօք փոխեցաւ առ Քրիստոս, յիշեցէք...։*

*Դարձեալ յիշեցէք զ*Գրիգորն, *և զծնօղն իւր՝ զտէր* Մարգարայն, *և զմահտեսի* Խանազայն, *և զպապն իւր՝* Համազասպն, *և զմամն՝* Թամամն, *և զմիւս պապն՝* Շահվէրտի, *և զմամն՝* Մինախաթունն, *յիշեցէք...։ Դարձեալ յիշեցէք զ*Գրիգորն *և զեղբարքն իւր՝ զ*Գէորգն, *և հանգուցեալսն առ Քրիստոս՝ զ*Հայրապետն *և զ*Եղիազարն, *զ*Դաւիթն *և զ*Նիկողայոսն. *և զքոյրն իւր՝ զ*Խանբէկին, *յիշեցէք...։*

1210
ՀԱԻԱՔԱԾՈՒ
ՈՅԶՄՎ, № 1259

900 *Մեծի Հայոց թվականին*
Հազար[56] *ութսունս ի յինն (1640) ամի,*
Նոր նահատակ մի յայտնեցաւ,
Ի Յատանայ *մեծ քաղաքին*[57]։

1211
ՄԱՇՏՈՑ
ՈՅԶՄՎ, № 1088

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Արապկեր

ա

758 *Աւարտեցաւ սբ. գիրքս ձեռամբ* Խաչատուր *քահանայիս, որ կոչի անուն սորա Մաշտոց։ Ես՝ նուաստ և անարժան* Խաչատուր, *ծառայ* Ղազար

---

55 *Սա ձեռ-ի նվիրատվության տարեթիվն է, գրչությունը հավանաբար մի փոքր վաղ է եղել։ Սույն հիշատակարանը գրչինը չէ։*

56 *Տպված է «հարարդ»։*

57 *Ցուցակի հեղինակն ավելացնում է «անունը՝ Խաչատուր»։*

քահանայի և քաջ բաբունապետին Մաշկեցի տէր Ղազարին ետ գրել ձեռամբ անիմաստ Խաչատուր քահանային, ի քաղաքն յԱրապ[կ]եր, ի դուռն Ս. Տիկնայ, թվին Հայոց ՌՁԹ (1640)։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սբ. գրոցս անմեղադիր լինիք սղալանացս։ Եւ արդ՝ գիտելի է, զի հարկապահանջութիւն խիստ է ի մեզ և մեր ազգայինսն, զի Տէրն ազատեսցէ զձեզ և զմեզ։ Զտէր Ղազարն քաջ բաբունապետն Մաշկեցին ստացաւ աստուածային մաղարանիս (sic)։ Զտէր Ղազարն և հայրն տէր Կարապետն եդիր յիշատակ հօրն տէր Կարապետին[58]

Բ

Յիշատակ է Մաշտոցս մահտեսի Վարդանին, որդուն Պետրոսին, Ղօնեայ, ի դուռն Ս. Աստուածածնայ, լաւ պահողն աւրհնի ի Աստուծոյ։

1212
ՇԱՐԱԿՆՈՑ
ՔՅՁՁՎ, № 70

112 [Ա]րդ՝ գր[ե]ցս Շարակնոցս. սուլթան Մուրատն ելս ի թախտէն, Երաւանայ վրան [կ]ոիւ [դնաց և] առաւ Եերեան քաղաքն թվին ՌՁԹ (1640)։ Կարդացողաց և [լ]սողաց և ոյրոյք զողորմին ասեն ամենուն։

1213
ԺՈՂՈՎԱԾՈՒ
AHTFG, № 57

Գրիչ՝ Սիմէօն

80 ...Կատարեցաւ գիրքս որ Յաղագս հոգւոց և հրեշտակաց, ի թուիս Հայոց ՌՁԹ (1640)... ձեռամբ եղբօր մերոյ Աւաքի արշի սարկաւագի, սակաւ ինչ մնաց սակս գնացից նորա ուրեք, ես՝ նուաստ Սիմէօնս... զմնացեալն աւարտեցի...

1214
ԲԺՇԿԱՐԱՆ
Զմմառ, № 479

Գրիչ՝ Խաչատուր քահանայ

75 Գրեցաւ Բժշկարանս ձեռամբս անարժան և մեղսասէր սուտանուն քահանայիս անուամբ Խաչատուրի։ Աստուած ողորմի ասացէք Ովանէս վարդապետին։

Թվին ՌՁԹ (1640). ամէն։

1215
ԱՒԵՏԱՐԱՆ
ՅՁՀՍ, № 34

Գրիչ՝ Ղազար քահանայ
Վայր՝ Հալապ

75 Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքն ի Հալապ, որ է Բերիա, ի դուռն Ս. Աստուածածնին և Ս. Քառասնիցն, ի թուականիս Հայոց ՌՁԹ

[58] Ոսկյանի հաղորդմամբ հիշատակարանն այստեղ ընդհատվում է։

(1640), ի կաթուղիկոսութեան Կիլիկեցւոց տէր Սիմէոնի Սեբաստացւոյն, և յառաջնորդութեան այսմ նահանգիս տէր Յակոբ քաջ բարունապետին, և ի թագաւորութեանն Թուրքաց սուլթան Իպրահիմիին: Եւ գրեցաւ յազնիւ և յամէն ընտիր աւրինակէ։ Վասն որոյ աղաչեմ զհանգիպեալսդ և զվայելուղդ աստուածութեան տառիս սրտի մտաւք, յիշել ի Քրիստոս զստացող գրոցս զմահդեսի Խաչերն, և իւր կողակիցն՝ զՀոռոփսիմին, և զմիւս կողակիցն՝ զԹուրվանտան, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և զծնաւղքն՝ զմահդեսի Պետրոսն և զԽումարն և զՀոռոփսիմին ծնաւղքն՝ Զաքարիան և զՄարիամն, և իւրեանց որդոցն և դստերացն, և ամենայն արեան մերձաւորացն, ողորմի ասացէք, և զձեզ յիշողացդ տէրն Քրիստոս տացէ զերկնից արքայութիւնն. ամէն։

Գրեցաւ սա ձեռամբ մեղաւոր և անարհեստ գրչի Ղազար անարժան քահանայի, որ զանունս ունիմ և գործս ոչ, և որդոցս իմոյ՝ Մուրատին[59], և Պաղտասարին, և Սարգսին, որ բազում աշխատութեամբ աշխատեցան ի կոկելն և ի գրելն, յիշեցէք...։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զստացող մատենիս՝ զմահդեսի Խաչերն և զկողակիցն իւր՝ զՀռոռոպսիմին, զոր ըստացան զսա ի հալալ վաստակոց իւրոց և ետուն յիշատակ ի ձեռն տէր Մարգարէին. և ոչ ոք չունի իշխանութիւն առնուլ ի ձեռաց սորա քանի որ ողջ և կենդանի է սա...։

1216

ՃԱՌԸՆՏԻՐ

ՏԵՐԱՎՋ, № 219

Գրիչ՝ Գասպար քահանայ
Վայր՝ Թաւրասկան

26.՝ Փառք...։ Զոր տեսեալ... ծառայն Աստուծոյ Մարգարայն և մեծ փափագմամբ և ջերմեռանդ սրտիւ ցանկացող եղև սբ. տառիս... և ետ գծագրել զսա ի հալալ և արդար վաստակոց իմոց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց Քարամատին և Արեխաթունին, և եղբարց, և քրտերցն, և ամենայն ազգականացն։ Եւ արդ՝ ես Գասպար քահանայս, անարժան ծառայ ծառայիցդ Աստուծոյ, գծագրեցի զսա ի վերծանութիւն սքանչելեաց ամենայն արեամբ ներկեալ սբ. մարտիրոսացն։ Յորս յիշատակի գերարհրաշ տօնք տէրունականք, և առաքելականք, և մարգարէականք, և երկնագումար արեամբ թօթաւեալ սրբոց մարտիրոսացն; և վկայից նահատակացն, ե միաձայնելոցն կրօնաւորացն, և ամենայն սբ. կուսանացն՝ արանց և կանանց, և ամենայն չափու հասակի։

Արդ՝ ես Գասպար մեղօք ի լի,
ՁԼՁ (36) ամն լցի,
Զամէն ի հետ մեղաց կացի,
Ու զմահու օրն չյիշեցի։
Զօրն ուտէի և ըմպէի,
Ես ծոյլ և թոյլ ամենայնի,

[59] Նույն ցուցակի № 40 Ավետարանի գրիչը. հիշատակարանը տե՛ս 1652 թ. շարքում։

Աշխարհս ծով էր ու ես ծփի,
Միթէ իմ Տէրն ինձ ողորմի։
....[60]։

Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս արդարոց և անկատարս ի կատարելոց, մեղանչականս անմեղաց... մեղսամած սոսկ անունով
283 քահանայ Գասպար, որ ղձև ունիմ քահանայի, և դործոյն // թափուր և ունայն գտանիմ, տեսի զսէր ե զփափագ սորա այս Մարգարայիս, զոր ունէր առ հոգևորսն և իմով իսկ տկարութեամբս յանձն առի և յամենակարող զօրութիւն Աստուծոյ կատարեցի զսբ. գիրքս այս մեղսամած մատեամբ իմով, բազում և մեծ աշխատութիւն հասուցի զսա յաւարտն ի յանուանի գեղս Թաւրասկան, ի յեզր Շօշ քաղաքին, որ է Ասպահան, մօտ ի Նարեղալայն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի հայրապետութեան ազգիս մերոյ տեառն Փիլիպպոսի, և առաջնորդութեան քաջ բաբունապետի Խաչատուր վարդապետի, և ի թագաւորութեան Պարսից շահ Սաֆուն, և ի թուականիս Հայոց ՌՁԹ (1640) ամի, ի դառն և ի վշտալից ժամանակիս, որում կամք ընդ հարկի և ընդ ծառայութեան ազգիս մահմետականացս. վասն որոյ բարեխօսութեամբ ամենայն սբ. և փառաւորեալ Աստուածածնին Մարիամու և ամենայն ընտրելոց սրբոց, Քրիստոս Աստուած, որ տէրն է փառաց և տուող ողորմութեանց, տացցէ զիւր առատ ողորմութիւնն, և զանբաւ բարերարութիւն, և զերկնից արքայութիւն ստացողի ծառայիս Մարգարին, և իւր ծնօղացն՝ Քարամատին և Արեխաթունին։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարն, և զեղբայրն՝ զՄուրատն. յիշեցէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարայն, և զքուերքն՝ զՍօլթանն, Սալշուկն, Շահպէկին, Խանադէն, և զԳոզալն, յիշեցէք։ Եւ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարայն, եղպարքն իւր՝ զԿումիշն և զԱսիրջանն, յիշեցէք...։ Դարձյալ յիշեցէք ի Քրիստոս զՄարգարայն, և զորդիքն իւր՝ զՄիրզախանն, և նորա կողակիցն՝ Սալվինազն, յիշեցէք զԱմիրխանն, և զԱմիրջանն, և ն[ո]րա կողակից Սալվարն։ Յիշեցէք զՄարգարայն, և զդստերքն իւր՝ Հուրիփաշէն, Մարիամն, յիշեցէք...։ Յիշեցէք զՍօլթանն և զեղբայրն՝ Լուսամբոսն և քոյրն՝ Խանգաւէն, յիշեցէք...։ Յիշեցէք [զ]ծընողսն[61] իմ՝ զՊաղասար քահանայն և զԹուրվանդայն և զվարպետն զՄեսրոպ դպիր Խիզանցին, որ ուսոյց մեզ զարհեստ գրչութեանս, և այլ ամենայն ազգատոհմին մեր՝ զկենդանիս և զննջեցեալսն, և զայնոսիկ որ երաղդաւորք եղեն մեզ ի պէտս հոգոյ և մարմնոյ, և արժանի արասցէ լսել զկենեղուտն յամենասուրբ բերանոյն, որ ասէ. «Ընկայք աւրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ արքայութիւնն երկնից ի սկզբանէ աշխարհի ընդ սբ. և ընդ սիրելիս անուան իմոյ. ամէն»[62]։ Դարձեալ ես՝ մեղաւ[որ] Գասպար երէց գրիչս, յերեսս ի գետին դնելով, աղաչեմ զձեզ, հարք և եղբարք, մանկան ի սբ. Սիոն, յորժամ յանդիպիք սբ. գրքիս կարդալով կամ օրինակելով, թողութիւն արարէք աղաչանաց իմոց

[60] Այս չափածոն վերցված է նույն ծուցակի N 242 ձեռ-ի հիշատակարանից. տե՛ս 1634 թ. շարքում N 794։ Փոխված է գրչի անունը։

[61] Գրչի ծնողների մասին է խոսքը։

[62] Մատ. Իհ, 34։

կամ գրիս խոշորանացն և գրչափոխութեան, զի ոչ են միահամուռ, զի այս է կարն իմ, եղբարք, թողութիւն արարէք ինձ՝ մեղաւորիս։ Եւ ով որ կարդայ կամ օրինակի՝ վասն Աստուծոյ, զաւելին բառնայ և զպակասն լնու, և ինձ մեղաւորիս լի սրտիւ թողութիւն հայցէ ի Աստուծոյ, և ինքն թողութիւն դտնու ի կենարարէն Քրիստոսէ։ Ով որ խնամք տանի այս գրքիս ի կարգաւորաց կամ ի սարկաւագաց՝ ի հրէ, և ի շրէ՝ զվարձն յԱստուծոյ առնու. ամէն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴաւշտի եկեղեցոյ քահանային՝ նախ և յառաջ զաւագ երէցն՝ զտէր Ստեփաննոս, զտէր Յովհաննէսն, և զտէր Անտոնն, որ կամակիցք եղեն [յ]որդորելով, և զայս սբ. զիրս դրել տուին, յիշեցէք...։

1217

ԱԻԵՏԱՐԱՆ (1488 թ.)

ՄԻՔԷՋ, «էջմիածին», 1950 թ., ԺԱ—ԺԲ, № 29

84 Որ ողորմի Տէրն ամենայնի,
Հոգոյ սորայ վերջին
Ստացողի տանուտէր Ամիրին,
Եւ ընտանեաց իւր Փարիխանին,
Եւ միայմօր որդին
Իւր Ասլանմագ խիստ նազելին,
Եւ որդի Ասլանմազին,
Նորայբոխբոշ տղայ մանուկ Նազարին։
. . . . . .
Եւ անարժան կազմող սմին,
Զեզ կաղաչեմ ողորմագին,
Որ զիս առնէք յիշման արժան,
Եւ ձեզ օրհնէ անմահ արքայն.
Որ կազմեցաւ Հայոց թվին ՌՁԹ (1640). ամէն։

1218

ՃԱՇՈՑ

ՄԻՔԷՋ, «էջմիածին», 1951 թ., ԺԱ-ԺԲ, № 75

Գրիչ՝ Յակոբ

ա

84 Սուտանուն Յակոբ քահանայն յիշեա՛ Տէր ի քում արքայութիւն, ՌՁԹ (1640)։

բ

Գրիչ՝ Սարգիս քահանայ

Դարձ[ե]ալ /// զանարժան գրծող սորա Սարգիս քահանայս և զուսուցիչն իմ՝ Մկրտիչ վարդապետն յիշեցէք, ո՛վ պատուելի հայրք։

գ

85 Ուրբաթի օրն ճաշու կարդայ և զանարժան գծողս յիշեա՛, և զհայրն իմ՝ Մաթէո[ս] քահանայն, և զմայրն իմ՝ Մարիամն, և եղբարքն իմ՝ Սարգիսն և Սուլիանն, որ տղա տիւաք փոխեցան առ Քրիստոս։

Գ

Ստացող՝ Ազարիա

84 Ազարիայ *ստացող զրոցս [թողցէ] ի մեղաց որպէս զպոռնիկն և զաւազակն, և մտցէ ի դրախտ Եդեմայ. ամէն։*

1219
ԱԻԵՏԱՐԱՆ
«Բանբեր Մատենադարանի», № 10

Գրիչ՝ Մարգարիտ
Վայր՝ Շէնեէր

422 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սա ի մեծ թուականութեանս Հայոց Ռ և ՁԹ (1640) ամին, և հայրապետութիւն մեծ աթոռոյն էջմիածնի տէր Փիլիպոսին և թագաւորութեան Պարսից կարմրագլխին՝ շահ Սաֆուն։ Ի յայսմ ամի գրեցաք զսր. Աւետարանս ի յերկիրս Ղաւիան, ի գեաւղս Շէնեէր, ընդ հովանեաւ Ստեփէի սբ. վանից և անապատաց և Ս. Ստեփաննոսի եկեղեցոյն...։ Աստուած ողորմի ասէք մեզ՝ Ղազար և Մարգարիտ գրչիս և ծնողացն՝ Կիրակոս քահանային և Թուրվանդին, Աղուբշին և Խանումին և մեր հոգևոր մայր Խոսրով ապաշխարողին։*

1220
ԹՈՒՂԹՔ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ (1318 թ.)
Վ. Ագուլիս, «Արարատ», 1915 թ., էջ 388, տե՛ս նաև «Ազգագրական հանդէս», 1905 թ. VII, էջ 164

Կազմող՝ Մարգարայ երէց
Վայր Ագուլիս

Փառք...։ Դարձեալ յիշեցէք զվերջին նորոգող սբ. գրոյս զտէր Նիկողայոսն, որ ետ կազմել զսբ. տառս յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն արեան մերձաւորացն, հայրն իւր՝ Ադրղուլի, և մայրն՝ Աջաբխանն, որ հանգուցեալ են առ Տէր...։ Կազմեցաւ սբ. գիրքս Պաւղոսի և Եսայի, ձեռամբ սուտանուն Մարգարայ իրիցի, ի գեղաքաղաքն Ագուլ[ե]աց, ի դուռն Ս. Շմաւոնի եկեղեցւոյ, ի թվաբերութիւն հայկազան տոմարի Ռ և ՁԹ (1640), ի կաթողիկոսութիւն Հայոց տեառն Փիլիպպոսի, և առաջնորդութիւն մերոյ վանից Խաչատուր վարդապետին. Աստուած զինքն յերկար ամաւք արասցէ. ամէն։

1221
ԱԻԵՏԱՐԱՆ
Ա. Երեմյան, «Բազմավէպ», 1952 թ., էջ 122—123

Գրիչ՝ Յովսէփ, Սարուխան սարկաւագներ
Վայր՝ Ասպահան

Փառք..., որ ետ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերս տառիս այս մարգարտաշար և վարդափթիթ բուրաստանիս, որ է սա ընդ-

տիր օրինակէ։ Որ և գրեցաւ սա ի յերկիրս Ասպահան, ձեռամբ Բ (2) սարկաւագաց Յովսէփայ և Սարուխանի, յիշեց[էք] ի Քրիստոս։ Գրեցաւ թվականիս մեր ՌՁԹ (1640), ի թագաւորութեան շահ Սէֆուն, և առաջնորդութեան տէր Խաչատուր արհեպիսկոպոսի, ի վայելումն մանկանց Սիովնի։ Ոմն բարեմիտ և աստուածասէր ի բազում ժամանակէ ցանկայր սմա, որ և ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց և յիշատակ տէր Իսրայէլին, և ծնողացն՝ Վէլինանին, Խանաղին, Բալուէ և կողակցին՝ Թանկսօլթանին, և որդոցն՝ Ոսկանին, Փանոսին և Մարտիրոսին, յիշատակ իւրեանց, յիշեցէք...

Յիշեցէք ի Քրիստոս զտէր Հայրապետն, որ կամակից եղև սբ. Աւետարանիս, ետ գրել և առնուլ, լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք նմա, զի և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

1222

ԱԻԵՏԱՐԱՆ (ԺԳ դար?)

Վիեննա, «ՀԱ» 1965 թ. էջ 368

Նորոգող՝ Սուքիաս

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս[63] և Աստուած ողորմի ասացէք զրստացող սբ· Աւետարանիս զտէր Մելքիսեթն, և զհայրն իւր՝ զՍարգիսն, և զմայրն իւր՝ Ճաշիկն, և զկողակիցն իւր՝ զԴաւլվաթն, և զորդին իւր՝ զՎարդան. և զհանգուցեալն Գրիգորն և զԹուրվանտն, և զկենթանին Ճաշիկն, Նալիաթուն, Զարիաթուն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալս. զկենդանիս անփորձ պահեա՛ և զհանգուցեալս արժանի արա յաջակողմեան դասուն։ Եւ զանարժան Սուքիասս յիշեցէք ի Քրիստոս. թվին ՌՁԹ (1640) նորոգեցաւ։

1223

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ճանիկեան, № 46

Գրիչ՝ Սարգիս
Վայր՝ Կ. Պոլիս

97 Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զԱյսմաւուրքս զայս ի քաղաքիս որ կոչի Կոստանդնուպալիս, ի դրունս Ս. Սարգսի զաւրավարին և որդւոցն նորա Մարտիրոսին, ձեռամբ մեղաւոր և անարժան Սարգսիս, ի մեծ թուականիս Հայոց ՌՁԹ (1640 թ.), ի հայրապետութեան տեառն էջմիածնայ Փիլիպպոս ամենայն Հայոց կաթողիկոսի, և մերոյս առաջնորդութեան Կոստանդնուպալիսի տէր Դաւիթ քաջ բարձրապետի, և թագաւորութեանն Տաճկաց սուլթան Մուրատ, խոնդքարն Բաբելոն գնաց, առաւ, եկաւ տաւր եղաւ. և սուլթան Իբրահիմն ի թաղթն անցաւ. ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք և հալածիմք ի յանաւրինաց և ի սուտ եղբարց։ ...Դարձեալ [յիշեցէք] մահտեսի Ամբակումին և հանգուցեալ եղբարցն Աստուածատուրն, Պակլարն, որք

63 Ձեռագրում «քեզ»։

են սոքա ի յերկրէն Նաւբերոյ, որ ետուն գրել զԱյսմաւուրքս յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին։ ...Դարձեալ յիշեցէք աղաւթս ձեր զԿամխա[յ] յերկրէն ի գեղջն Ապուշտայ զտէր Մարտիրոս քահանայն, որ բաղում աշխատանք ունի ի վերայ[64] Այսմաւուրքիս և վերակացուն նա էր...։ Այսմ տարիս ստացողն հանդիպեալ յԵրուսաղէմ, ի թվականիս ՌՁԳ (1634) ի Հայոց ազգիս և Յունաց մէջն բաղում աղմուկ, և վրդովուկ, և խռովութիւն եղաւ, վասն ծռազատկին...[65]

98 Յայսմ ամի էր Կ. Պոլիս պատրիարք Կեսարացի Գրիգոր վարդապետն՝ անյաղթ փիլիսոփայն և ի սբ. Երուսաղէմ կուսակրաւն լուսարարն Մարկոս...։

1224

ԱԻԵՏԱՐԱՆ

Աղավնունի, Այցելուք, էջ 302—303

Գրիչ՝ Մկրտիչ սարկաւագ
Վայր՝ Երուսաղէմ

Փառք..., որ ետ կարողութիւն ինձ անարժան և նուաստ գրչի մահտեսի սարկաւագ Մկրտչիս, քանզի ես նուաստ Մկրտիչս սբ. Էշմիածնա[յ] եկի ի սբ. յԵրուսաղէմ և գրեցի զսբ. Աւետարանս։ Վասն որոյ խնդիր եղաւ սմա աստուածասէր և բարեմիտ Ջուղայեցի խոճա Սարուխան, և ստացաւ զսայ ի հալալ արդեանցն և արդար վաստակոցն և եդ յիշատակ ի Հալապ քաղաք, ի դուռն Ս. Աստուածածնին... իւր հաւրն՝ Վարդանին և ծնողացն՝ Հռիփսիմէին, և կողակցոյն՝ Մարիամ խաթունին, և Թուրվանային, և Դշխոյին, և որդոցն՝ Սիմէոնի[ն], Վարդանին, Սարգսին, Մեսրոպին, դստերն՝ Հռիփսիմէին...[66]։

---

64 Տպված է «ի վասն»։

65 Մանրամասնությունները չեն բերված, միայն մեկ-երկու նախադասությամբ վերապատմված են դրանք։

66 Աղավնունին հիշատակարանը ներկայացրել է կրճատումներով, սակայն նշում է տարեթիվը՝ 1640 թ. (էջ 302)։

ՀԱՎԵԼՎԱԾ



1225

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ, ՏՕՆԱՑՈՅՑ[1]

ՄՅԶԵՊ, VIII, № 2407

Գրիչ՝ Վարդան
Վայր՝ Գաղատիայ

ՈՒ

45 Ոհ թէ զմեղաւորս և զպանդուխդ գեր[ի]ս և զյետնեալսն ամենայնի, յիմար գրիչս, զՎարդան լոկանուն, հայցեմ և խնդրեմ յիշել ի Տէր։

---

[1] Սույն հատորը տպագրվում էր, երբ Երևանում ստացվեց Երուսաղեմի ձեռագրերի ցուցակի յոթերորդ և ութերորդ հատորները (կազմող՝ Նորայր Պողարյան) և Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող հայկական ձեռագրերի ցուցակը (կազմող՝ Ավետիս Սանչյան)։ Այդ պատճառով նշված ցուցակների համապատասխան հիշատակարանները չկարողացանք մուծել ներկա հատորի տվյալ տարեթվերի հիշատակարանների շարքում և դրեցինք հավելվածում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավելի ուշ ձեռք բերած ձեռագրերի հիշատակարանների և մեր կողմից վրիպածների հետ։ Երուսաղեմի յոթերորդ հատորի № 2086 ձեռագրի 1621 թ. հիշատակարանը (էջ 136) վերցրել ենք Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք», հտ. Ա-ից և սույն հատորում դրել 42 համարի ներքո (էջ 26)։ Մեր շնորհակալությունը հայտնում ենք Սուրեն Քոլանջյանին Ամերիկայի Միացյալ Նահանգներից իր բերած ցուցակը մեզ սիրով տրամադրելու համար։

Սույն հատորի 1636 թ. հիշատակարանների վերջում՝ 681 էջ, 1000 համարի ներքո, տեղադրել էինք Հովհաննես Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» (էջմիածին, 1842 թ.) աշխատության Բ հատորից (էջ 326—327) վերցրած մի հիշատակարան՝ տպագրված կրճատումներով։ Սակայն, վերջերս պատահականորեն նայեցինք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 4535 ձեռագիրը, որը նույնպես Հովհաննես Շահխաթունյանցի 1829—1840 թթ. կազմած ժողովածուն էր, և նույն հիշատակարանը այնտեղ գտանք լրիվ։ Ուստի նպատակահարմար գտանք հանել այն և Հավելվածում զետեղել № 4535 ձեռագրից վերցրած հիշատակարանը № 1260 (էջ 862)։

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 10768 ձեռագիրը (գրչություն 1682 թ.) նվեր էր ստացվել Հալեպաբնակ Գրիգոր Մազումյանից, սեպտեմբերի 27-ին, 1977 թ.։

Վերջերս այդ ձեռագրից էլ վերցրինք 1633 թ. մի հիշատակարան (№ 784, էջ 528)։ Սակայն այդ հիշատակարանը նախօրոք վերցրել էինք Ա. Այուրմեյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց» (Երուսաղեմ, 1935) և Բ. Կյուլեսերյանի «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» (Անթիլիաս, 1939) աշխատություններից։ Այսպիսով նախ ներկայացրինք № 10768 ձեռագրի 1633 թ. հիշատակարանը, ապա վերջինիս մոտ նշելով վերևում հիշված երկու աշխատությունների էջերը։

№ 175 (էջ 120) հիշատակարանը վերցրել էինք Ա. Ալգոյաճյանի «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց» աշխատությունից։ Հիշատակարանը հրատարակված էր կրճատումներով։ Այդպիսի մոտեցումը էր ցուցաբերել Ղ. Փիրղալեմյանը № 456 հիշատակարանի հետ (էջ 302—303)։ Քանի որ սույն հատորի մամուլները տպագրված էին, նպատակահարմար գտանք այդ երկու հիշատակարանները վերցնել Ա. Սանչյանի ձեռագրերի ցուցակից № 117 (էջ 488—489) և

Բ

Փառք...։ Շնորհիւն Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զոր. տառս, որ կոչի Աղօթամատոյց և Տօնացոյցս, ի ստոյգ և յընտիր Թումայի յօրինակէ, ի թվին ՌՀ (1621), սեպտեմբեր ամսայ ԺԴ (14), ի քաղաքն Գաղատիայ, ի դուռն Ս. Նշանին, ձեռամբ մեղապարտ և անարժան, յիմար և փծուն, սուտանուն Վարդան գրչիս։

Արդ՝ որք հանդիպիք սմայ ուսմամբ տեսանել կամ օրինակ դնել, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ծեր զանարժանս և զստացող սորին///։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յօրինակելով, զաւելորդն բառնայք, և զպա[կաս]ութիւնն լնուք, և խոշորութեանն գրոյս և արուեստիս անմեղադիր լերուք, զի կայր մեր այս էր։

Դարձեալ աղաչեմ զձեզ, հայրք իմ և եղբայրք, յիշեցէք զանպիտան դերիս և փծուն գրիչս, և զստացող սորին, ի մաքրափայլ յաղօթս ձեր. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ...։

1226

ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԼԵՀԱՑԻՈՅ

Մ3ՁԵՊ, VII, № 2141

Գրիչ՝ Արիստակես Սեբաստացի
Վայր՝ Իլով

ա

187 *Եւ զգծող սորա* Արիստակէս *Էրէցս յիշեա, ով ընթերցողք։*

Բ

Ո՛վ եղբայրք, ի Հայոց թվին ՌՀ (1621), յերկիրն ի Լէհաց, ի քաղաքն Իլով, *գրեցի զսակաւ բանս, որ ցուցանէ զՁատիկն Ֆռանգաց, թէ ամենայն ամի քանի շաբաթ յառաջ տի լինի և կամ յորում ամի ի միատեղ լինի, թուականիւն և գրով տարոյն գիտ զամենայնն և յիշեա զ*Սեբաստացի *զաշխատողս։*

Գ

188 *Զհաւաքով բանիցս զյոգնամեղ* Սեբաստիացիս, *աղաչեմ // յիշատակել ի վերջ գրոցս, և լի սրտիւ ասել զԱստուած ողորմին...*

№ 162 (էջ 702—706) և հրատարակել Հավելվածում №№ 1228, 1244։ Սակայն Ա. Սանչյանի ձեռագրերի ցուցակից չվերցրեցինք երկու հիշատակարան՝ №№ 47 (էջ 244—247), 57 (էջ 285)։ Ցուցակի № 47 ձեռագրի մանրաժապավենը Ջիկագոյից ստացել էր Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը (№ 615), իսկ № 57 ձեռագրի հիշատակարանը վերցրել էինք Թ. Գուշակյանի կազմած Սեբաստիայի ձեռագրերի ցուցակից (հրտ. 1961 թ.)։

№ 923 (էջ 626) հիշատակարանը, որը վերցրել էինք Վասպուրականի ձեռագրերի Ե. Լալայանի կազմած ցուցակից, մեր Մատենադարանը 1976 թ. մարտին ձեռք բերեց 10697 համարի ձեռագիրը, որը Ե. Լալայանի ցուցակում կրում էր 380 համարը (էջ 885—887)։ Հիշատակարանը կրճատումներով չէր բերված, ուստի նշված ձեռագրից հիշատակարան վերցրեցինք 248 ա էջից, որը Ե. Լալայանի ցուցակում չկար։

դ

Ի գիրս այս խնամարկեցէք,
Փափա[քա]նօք զսա կարդացէք,
Թէ որք կարդայք ւ օրինակէք,
զԱրիստակէս գծողս յիշէք։

1227
ՇԱՐԱԿՆՈՑ

ՄՏԶԵՊ, VIII, № 2471 (1482 թ.)

140 *Զվերջին ստացող տառիս յիշեցէք ի Քրիստոս..., որ եդ զՇարակնոցըս և զխազտեարս ի միասին ի մի տուի, ի սբ.* Երուսաղէմ, *ի դուռն Ս. Յակոբայ։*

Զվերջին ստացող Շարակնոցիս՝ զՂազանճի Պակին *յիշեցէք ի սբ. աղաւթս ձեր, որ ստացաւ ըզգիրքս զայս ի հալալ վաստակոց իւրոց, հոգևոր զաւակ և անչինչ յիշատակ հոգւոյ իւրոյ. և եդ ի ձեռն տէր* Գրիգոր *հայրապետին, զոր տէր Աստուած վայելել տացէ նմա...։*

Թվին ՌՀ (1621) [2]։

1228
ԱՒԵՏԱՐԱՆ

ՄՏՄՆ, № 117

Գրիչ՝ Կարապետ Եդեկացի
Վայր՝ Թոխաթ

ա

488 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ մեղապարտ և փծուն գրչի* Կարապետի Յեդեկիացւոյ, *ի քաղաքս* Թոխաթ, *ի թաղն* Ուզուն *մահլայ կոչեցեալ, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի զօրավարին։*

Ով սբ. ընթերցողք, արարէք զիս արժանի յիշել զենլոյն Քրիստոսի, որ հանապազ զենանի և ոչ մեռանի, բաշխի և ոչ հատանի, զամենեսեան լնու և ինքն մնա անծախելի։ Եւ Քրիստոս, որ առատն է ի բարիս...։

Աւարտեցաւ սբ. գիրս ի թվականիս ՌՀԲ (1623), ի փառս Աստուծոյ...։

Արդ՝ ցանկացող եղև այսմ հոգևոր սեղանիս աստուածասէր և բարեմիտ կինն՝ Շահպուլայն, *և ստացաւ զայս սբ. Աւետարանս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորացն, հօրն՝* Գրիգորին, *մօրն՝* Սառային, *եղբօրն՝* Եաղուպշին, *որ առ Քրիստոս են հանգուցեալ։*

489 *Նաև զխօճա* Ըստեփանոսն *և զկողակիցն՝* զԽանփաշան, *որ կամակից եղեն և շատ աշխատեցան ի հետ սբ. գրոցս։ Վարձս բարեաց առցեն ի Քրիստոսէ. ամէն։*

[2] *Նույն բովանդակությամբ, բայց անթվական, մի հիշատակարան էլ տե՛ս ցուցակի նույն էջում։*

Աղաչեմ զձեզ, ո՜վ սբ. ընթերցողք և դաղափարողք, յիշեցէք ի Քրիստոս զստացող սորա՝ ըզՇահնպուլայն և զամենայն արեան մերձաւորքն՝ զկենդանիքն և զհանգուցեալն առ Քրիստոս...։

Նաև զյետնորդս ամենայնի,
Եւ ըզկոխանըն ձեր ոտի,
Զյետնորդս ամէն սարկաւագի,
*Ըզ*Կարապետս Թոխաթի:
Որոց մաղթեմք աղերսալի,
Ցիշել ըղմեզ ի յաղօթի,
Խնդրեմք ի ձէնչ ողբով ի լի,
Ասել մեզիկ Տէր ողորմի
Ըստացողի և գրողի։
Հայր մեր...։

*Կրկին աղաչեմ յիշել ի Տէր զ*Մանկուշլուսենց *տէր* Ղազար *եպիսկոպոսն, զի մինչ տասն տեսրն գրեր էր և առ Քրիստոս փոխեցաւ և զայլ յետմնացն ես նուաստ* Կարապետս *աւարտեցի։ Թէպէտ ոչ կարացի նըմանեցուցանել, այլ միայն զպակասն գրեցի։ Աղաչեմ զձեզ, որք հանդիպիք այսմ հոգևոր սեղանիս, յիշեցէք ի Քրիստոս զգծագրօղ տառիս և դուք յիշեալ լիշիք...։*

Բ

Թէ կամիս գրել զսա ի կարգն, յութսուն ու վեց համարն է, զկնի այնմ բանի, թէ քննեա և տես, զի մարգարէ ի Գալիլէէ ոչ յառնէ, Պապիասայ ումեմեն աշակերտի Յովհաննու է գրած, որ յետոյ հերձուած խօսեցաւ և խոտեցաւ։ Եւսեբի է յասել զայս, յետոյ են գրել։

Զմեղապարտ գրչիկս՝ Կարապետ Յեղոկիացի, *աղաչեմ յիշել ի Տէր։*

1229

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Երևան, № 10775

Գրիչ՝ Գրիգոր Կողոնացի
Վայր՝ Ղարասար

ա

121ա *Յորոց փրկեսցէ տէր Աստուած զստացող գրոցս, մանաւանդ* զ*Մելքոն սարկաւագն և զարեան մերձաւորս և գրիս գրողն զանարժան* Գրիգոր *Էրէցս, որոյ յիշատակն ա[ւր]հնութեամբ եղիցի*[3]։

Բ

291ա *Փառք..., որ ետ կարողութիւնն նուաստ և յոգնամեղ անձին իմոյ, ախմար և տարտամ մտացս, լոկ անուն* Գրիգոր Կողոնացոյ, *որ այժմն*

[3] *Ավելի համառոտ և առանց անուններ նշելու հիշատակարանները կան 32ա, 68բ, 84ա, 136բ էջերում։ Իսկ մի քանի էջերում այսպիսի հիշատակարաններ գտնում ենք. «Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր զստացող սբ. գրոցս Ալէքսան վարդապետին իմ եղբայր Խաչատուրին, ամէն» (էջ 100ա. էջ 220բ, 274բ, 292բ)։ Սրանք հետագա ստացողներ են և անունները ավելացվել են հետագայում։*

կոչի Ղարասար, ի յաւարտ հասանել տառիս, որ է Քարոզգիրք։ Զի սայ
է հմտութիւն և գուռն մտաց ճարտասանութեանն, սովաւ իմաստնա-
նան ներհուն քննութեամբ՝ վարդապետք եկեղեցոյ և աշակերտեալ
մանկունք բանասիրութեանն, սովաւ վերծանին և կըրթին ի յուսումն
և ի բան, և սովաւ ծանի իմաստութիւն հոգևորական՝ իմաստութիւնն
291բ հնոյ և նորոյ Կտակարանաց. //զի ճաշակեն զծորեանս աստուածային և
արբեցուցանեն յոգւոց ծարաւելոց։ Որոյ ցանկացեալ եղև սմա, տեն-
չալի և բաղձալի դիմաւք մեծայփափաքանաւք Մելքոն դպիրն Մա-
նահեցի, գրել երետ զմատեանս աստուածային, ի վայելումն անձին
իւրոյ։ Գրեցաւ սա ի թվին Հայոց Ռ և ՀԲ (1623), ի յունիս ամսոյ ԻԶ
(26), ի դուռն Ս. Աստուածածնին և Սրբոյն Ստեփաննոսի Նախավկա-
յին և այլ ամենայն սրբոցն, որ աստ են հաւաքեալ։ Ի թագաւորու-
թեանն բռնակալ սուլթան Մուսթաւ[ա]ին, ի յառաջնորդութեանն տէր
Կարապետին և տէր Թաթէոսին և մեր համջիրակ եղբայրացելոց մերոց՝
զտէր Վարդանն, զտէր Գրիգորն, զտէր Աստուածատուրն, զմիւս տէր
Գրիգորն և աշակերտաց իմոց զՄանուէլ սարկաւագն, զՍարգիսն,
զԿարապետն, և զծնօղս իմ զմահդասի Պապն, և զմայրն՝ զխուպիկն, և
զեղբայր իմ զհայր Անտոնն, զխուպինանն և զՊապանան, և զաւակաց
մերոց զՍրապիոն, զԹաթէոսն զՊարսանն[4], զՄարխասն։

Զոր հայցեմ և յուսամ ամէնազաւր Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս-
տոսէ, որ անփորձ և անարատ պահեսցէ ներքին և արտաքին պատա-
հար կրիցն, մանաւանդ դաւաճանողէն մերմէ տեսուչ///[5] և համարէն Բ
292ա (2) եկեղեցոյ քահանայքս պարագայց// ամաւք երկար ժամանակաւք
ի պարծանք քաղաքիս մերոյ մինչև սահմանադրեալ կէտ կոչման իւրոյ
ևս առաւել հայկազան ազգիս մերոյ և հաւասար ժողովրդեանս մերոյ։

Դարձեալ երեսս ի գետին դնելով, բազմապատիկ աղաչեմ զձեզ,
ով դասք իմաստասիրաց, յորժամ վարժիք ի սմանէ, յիշեցէք սբ. և
արժանաւոր աղօթս ձեր, զեղկելի և զանարժան Գրիգոր գրիչս և զուսու-
ցիչն իմ՝ զխիզանցի Մարտիրոսն քահանայն, որ փոխեալն ի Քրիստոս
և զտէր Մարուքէն, որ ունին բազում աշխատանք ի վերա անարժանիս։

Դարձեալ երեսս անկեալ աղերսեմ և մաղթեմ ի ձեզանէ, ով պա-
տահող սորա, զի անմեղադիր լերուք խոշորութեանն գրիս, զի բազում
հարկապահանջութիւն կայր ի չար ժամանակիս, որ Ա(1) տարին Գ(3)
անդամ խարաճ առին ի Հայոց ազգիս մերոյ, որ տառապեալ և նուա-
ղեալ շրջէաք։ Եւ դարձեալ ազդեցութեամբն Ս. Հոգւոյն և ներող ողոր-
մութեամբն իւրոյ, մեզ զգիրքս գրել և տեսեալ զսա Մելքոն սարկաւա-
գըն հարկ եդիր ի վերա մեղօրիս գրել զգիրքս։ Այսպիսիւ թէ սա խընդրը-
ռեաց Մանախացի Ալէքսանոս եպիսկոպոսն և քահանայքն՝ տէր Կիրա-
կոսն և միհամուռ ժողովուրդն ամենեքեան, թէ նոքա խնդրեցին զայս
աստուածաշունչ գիրքս։ Բայց ես անարժանս զցայք և զցերեկ ի մէջ
տրտմութեանն և տարակուսի կայի. և անձն իմ խռովեալ էր մինչև ի
292բ չափ//մահու։ Վասն այս պատճառիս խիստ տարտամեալ էր սիրտ իմ

[4] Գուցէ «զՊարսամն»։

[5] Մեկ բառ ջնջված է, չկարողացանք կարդալ։

ի յահէ անաւրինացն և մոլորեալ էր միտս և ուժոյ թափեալ էր անձն իմ. ե չէի գիտել թէ զինչ կու գրէի։ Միթէ ամէնագութն Աստուած ձերում աղաւթիւքն և բարէխօսութեամբ սր. աստուածածնին յակն արկէ իւր ի սբ. և պատուական արեամբ գնեալ ծառայքն, որ ամէնեին ցիր և ցան եղեալ են, որ ոմն յայս կոյս և ոմն յայն կոյս բնակեալ են։ Վասն որոյ քաղցր աչօք հայեսցի ողորմածն Աստուած...։ Վասն որոյ յայսմն իրի անմեղադիր լերուք սղալանաց իմոց և անպարսաւ թողէք զեղկելիս, զի ըստ առատ ողորմութիւնն իւր։ Զի լի սրտիւ և սերտ հաւատով մի բերան ողորմի ասացէք՝ մեզ յիշեցողացդ և ձեզ յիշեցողացն. ողորմեսցի Քրիստոս Աստուած վարձահատուցն ամենայնի, որ առատն [է] ի տուրս բարեաց, հատուցէ վարձս գործոց իւրաքանչիւրոց՝ մեզ և ձեզ ամէնեցուն. ամէն։

Գ

Գրիչ՝ Մանուէլ ?

264ա *Ով սրբասնեալ քահանայք, յորժամ կարդայք և լուսաւորիք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սր. գրոցս։ Մեր հոգևոր քուրոյն՝ Խանին, որ բազում աշխատանս ունի ի վերայ գրոցս Քրիստոսի, իւր մեղացն թողութիւն շնորհէ։ Ընդ նմին և զիս զանարժան և զփծուն* Մանուէլ[6] *գրիչս աղաչեմ յիշել ի Տէր*[7]։

1230

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան, № 6198 (1512 թ.)

Ծաղկող՝ Յովանէս կրօնաւոր

Վայր՝ Հաղարծին

176բ *Փառք...։ Արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք յաղաւթս ձեր զտէր* Վարդան *և զծնաւղսն իւր՝ տէր* Առաքել *և զկողակիցն իւր՝* Հոռոմսիմէն, *և զեղբայրն՝* Գրիգոր *և զկողակիցն իւր՝* Եղիսայբեթն, *և զորդին իւր՝* Առաքել, *և զդստերքն իւր՝* Հոռոմսիմէն *և* Գարիսանէն, *յիշեցէք...։ Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զտէր* Վարդան *և զկողակիցն իւր՝* Անթառան, *որ ծաղկել ետուն զսբ. գիրգս, յիշատակ հոգոց իւրեանց և զաւակացն իւրեանց՝* Յովասափն, *և զդուստրն՝* Գուլիխանն, Հոռոմսիմէն *և զհանգուցեալ որդին՝* Յակոբն, *որ տղայ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, յիշեցէք...*[8]։

---

[6] Անունը գրված է լուսանցքներում՝ Ման ուէլ. մեզ թվում է ավելացրել են հետո։

[7] Ձեռագրի քարտում գրված է. «23 դեկտեմբերի 1977 թ. նվեր է ստացվել լոնդոնաբնակ Հարութիւն Գալաճյանից Բաբկեն Ջուգասզյանի միջոցով»։

[8] Սրանից հետո երկու տարբեր գրերով գրված է երկու հիշատակարան՝ 28 տող, նոր միայն ծաղկողի հիշատակարանի վերջին մասը։ Ցուցակում թեև տարեթիվը նշված է, բայց էջը նշված չէ (հտ. Բ, էջ 268)։

Զծաղկող սբ. գրիս Յովանէս *կրաւնաւորն և զծնողն իմ յիշել ի Տէր աղաչեմ միով բերանիւ։ Ծաղկեցաւ ի թվիս Հայոց ՌՀԳ (1624), ի Հալարծնու Ս. Աստուածածնիս և Ս. Գրիգորի դրանն։*

1231

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՕՆԱՑՈՅՑ, ԺԱՄԱԳԻՐՔ, ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Մշբեկ, VII, № 2001

Ստացող՝ Արգարեց Մարգարէ Վանեցի
Վայր՝ Վան

ա

2 *Փառք...։ Որոյ ծառայս քո տէր* Մարգարա[յ] *քահանայն, և է և եմ և եղէց վիճակ ժառանգութեան, միայն թէ ընկալցի անարգամեծար Տէրն, որոյ շնորհիւն ցանկացայ աստուածային սբ. Սաղմոսարանիս...։ Եւ գուք, ով սրբասէր, հեզահոգի և աստուածակրօն ընթերցողք, որք հանդիպիք սմա սաղմոս երգելով և կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս... տէր* Մարգարայ *սրբասնունդ քահանային և իւր ծնօղացն, հօրն՝* Թումին *և մօր* Խանզադին, *և եղբարցն՝* Սարգսին, Ֆառուխին, Ատոմին, Ամիրին. *քուերցն՝* Բէկիսխանին, Խանադին, Նուշիջանին, Յամանին *և ամենայն արեան մերձաւորաց նոցին...։*

*Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զ*Վանեցի *տէր* Մարգարէն...[9]:

Արդ՝ ես ծառայս Աստուածոյ մահտասի տէր Մարգարէս, *որ է ի* Վանայ *քաղաքէն, ի Ս.* Վարդանա[յ] *եկեղեցոյն, ետու գրել զայս աստուածախօս սբ. տառս, այժմ որ կոչի Սաղմոսարան,* Տունացո[յ]ց *և Աղաւթամատուց, ի մէկ տուփ, և եդաւ ի դուռն սբ.* Երուսաղէմայ *անչինչ յիշատակ հոգոյ իմոյ և ծնօղաց իմոց, որ կենայ ի դուռն սբ.* Երուսաղէմայ: *Ով ծախէ կամ գողանայ՝ զմասն Յուդային առնու...։*

Բ

3 *Դարձեալ յիշէեցէք ի Քրիստոս զ*Վանեցի *մահտասի տէր* Մարգարէն *և զիւր կողակիցն՝ զ*Խաթունաղէն, *որ տարժամ մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս, որ եթող սուք ինձ և ծնօղաց իւրոց, յիշեցէք...։*

Եւ արդ՝ կացցէ սա անչինչ յիշատակ ի սբ. Երուսաղէմ, *ի դուռն Ս. Յակոբայ, ի հայրապետութիւն և յառաջնորդութիւն սբ. աթոռոյս տէր* Գրիգոր *արհի և պանծալի եպիսկոպոսին, սրբասէր և սրբակրաւն վայրիւք, առաքինութեամբ զարդարեալ է...։*

Գ

Ես՝ Վանեցի Արգարեց *տէր* Մարգարս *Սաղմոսարանս ոխֆ արի ի վերա սբ.* Երուսաղէմայ: *Ով որ գողանայ ի Քրիստոսի [լուսաբ]ուխ գերեզմանէն՝ զրկած լինի. ամէն[10]...։*

---

9 *Թվում է վերևում հիշված անունների մի մասը։*

10 *Նման հիշատակարաններ ցուցակում բերված են մի քանի օրինակ։*

Դ

Գրիչ՝ Ստեփանոս

2 Արդ՝ գրեցաւ աստուածախօս սբ. տառս, այժմ որ կոչի Սաղմոսարան, Տօնացոյց և Աղօթամատոց, ձեռամբ յոդնամեղ և անարհեստ գրչի Ստեփանոսի, ի քաղաքս Վան, ի դուռն Տիրամայր Ս. Աստուածածնին, և ի Գաբրիէլ Ս. Հրեշտակապետին, և Ս. Վարդանայ զօրավարին, որ սակաւ մի հեռի ի Թրւականութեանս Հայոց ՌՀԳ (1624), ի դառն և նեղ ժամանակիս, ի հայրապետութեան տեառն սբ. Էջմիածնայ Մել-
3 քէսէթ կաթուղիկոսին, և զաթոռակալ սբ. ուխտիս Վարազայ//տէր Զաքարայ հէրպետին, և ինձ եղկելի գրչիս և աշակերտեալ մանկանց մերոց տէր Յովանիսին և Վարդան սարկաւագին, որ աշխատեցան ի նշել և ի կոկել թղթին։ Յիշեցէք ի Քրիստոս... ինձ մեղաւորիս և Աստուած զձեզ յիշէ...։

Ով եղբայր, անմեղագիր լերուք խոշորութեան և սխալանաց գրիս։ Երբ սկիզբն գրքիս արի, աչքս ցաւիլն առեց մինչ ի վերջ գրիս, զի կար մեր ա[յ]ս է։

Ե

Գրիչ՝ Վարդանէս

2 Յայս ծազկաղարթ բուրաստանիս,
Հոգիաբուխ կտակարանիս,
Ով ընթերցող սբ. խորհրդիս,
Յիշեա ղմեղօք մեռեալ ոգիս,
ղՍտեփանենս վարպետիս,
զՎարդանէս անպէտ գրիչս։

1232

ՇԱՐԱԿՆՈՑ

Մեսրոպ, VIII, № 2478 (ժամանակ?)

Նորոգող՝ Յովանէս
Վայր՝ Կաֆայ

146 Փառք..., որ ետ կարողութիւն անարժան ծառ[այ]իս, որ նորոգեցի վերըստին զայս Զայնքաղս, ի վայելումն տէր Թորոս քահանայի։ Մի՛ մեղադրէք գրոյս խոշորութեան և անարուեստութեան, զի չէի հմուտ, այնչափ թէ զայս կարացի առնել։

Յիշեցէք զվերըստին ըստ[աց]աւղ տառիս՝ զտէր Թորոս քահանա և զծնաւղքն իւր և զամենայն արեան մերձաւորքն...։

Յիշեցէք և զուսուցիչքն իմ ի Քրիստոս և զարուեստիս ուսուցանողն զտէր Զաքարիան։

Աւարտեցաւ ի դրունս Սրբոյ Հրեշտակապետաց ի քաղաքս Կաֆայ, ի դառն ժամանակիս, թվին ՌՀԳ (1624), ձեռամբ մեղապարտ գրչի

սուտ Յովանիսի: Յիշեցէք և զծնողքն իմ՝ և դուք յիշեալ լինիք ի Տեառնէ։

1233
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մշեկ, VIII, № 2484

Գրիչ՝ Աստուածատուր
Վայր՝ Երուսաղէմ

ա

155 Ա՛խ, վա՛յ մեղապարտ գծողիս, որ պիտիր գնամ՝ ի սբ. Երուսաղիմայ հեռանամ։

բ

156 ԶԱստուածատուր մեղապարտ գծողս յիշեցէք առ Քրիստոս, աղաչեմ զձեզ։

գ

Գրեցաւ տեսրս յԵրուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, թվին ՌՀԳ (1624), ձեռամբ մեղապարտ Աստուածատուր սարկաւագիս, յիշեցէք զիս զանարժանս...։

1234
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 3276, տե՛ս նաև ՏԵՐԱՎՋ, № 506, էջ 778, Բաս. «Բանասէր», հա. Բ, 1900 թ., № 11, էջ 145

Վկա՝ Ներսէս արքեպիսկոպոս

86բ Ես՝ տէր Ներսէս արքեպիսկոպոս Բաղիշոյ քաղաքին, տեսի զայս գիրքս, որ է Պարզաբանութիւն քրիստոնէական տնօրինականացն, թարգմանեալ ի լաթին լեզուէ ի Հայոց բառս ի տէր Պետրոս Պողոս քահանայ կրօնաւորէն։ Արդ՝ վասն ստուգութեան սորայ վրկայեմ և կամակից եղէ կազմութեան սորին, զի ճշմարիտ և ըստուք է բանք սորայ, ի թվին Հայոց ՌՀԳ (1624) և Ֆռանգաց ՌՈՒԴ (1624)[11]։

1235
ԱՒԵՏԱՐԱՆ
Մշեկ, VII, № 2348

Գրիչ՝ Մինաս
Վայր՝ Ստեփէի անապատ

481 Կամաւ Հաւր և ողորմութեամբ նորին Միածնի... ի յանգ ելեալ աւարտեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ յոգնամեղ և փծոյն գրչի Մինաս

---

11 «Բանասէր»-ում տարեթիվը նշված է ՌՁԳ (1634). գուցե տպագրական սխալ է։

անարժանի, ընդ հովանեաւ Ստաթէի մեծ անապատիս, և աղաւթիւք սորին բնակեալ եղբարցս, ի լաւ և ընտիր աւրինակաւ։ Եթէ ոք ասիցէ. ո՞րպէս գիտասցուք զընտիրն և զլաւն։ Յայտ է զի տիեզերալուր և կրկին
482 լուսաւորչի սբ. վարդապետին Գրիգորի Ստաթէի, որ և իւրովի // ձեռամբ դրեալ Աւետարանին, ցանկացայ դրել յիշատակ հոգւոյ իմոյ, նոյն չափովն, մէջ ընդ միջոյ, էջք ընդ էջին, և գիր ընդ գրի, զուգ և հաւասար սկսեալ ի յառաջնոցն մինչև ի վերջն, վասն ստոյգ լինելոյ. այսպիսի խորհրդով կատարեցաւ խնամաւքն Աստուծոյ զամենայն արուեստ գրչադարձութեան, մանաւանդ զտնաւրինական տեղիսն՝ ըստ իւրում աստուածիմաստ գիտութեամբն, որ թողեալ էլ անպակաս արարաք։

Աղաչեմ եղբարք, ոչ թէ ազնուականութեան գրոյն, այլ վասն աւրինակ լինելոյ, թողութիւն արարէք սիրելիք, բազում աշխատութեամբ հասի աւարտ. մի՝ որ ի խորին ծերութեան էի, և երկրորդ՝ որ մագաղաթի անփորձ էի։ Վասն որոյ երես անկեալ ի գետնի՝ աղերսեմ, և հայցեմ, և խնդրեմ թողութիւն, ոյք հանգիտիք սմա, ամէնառատ Տեառնէ խնդրել թողութիւն։

Թուիս Հայոց ՌՀԴ (1625)[12]։

1236

ՄԱՇՏՈՑ

Մեսրոպ, VII, № 2022

Գրիչ՝ Յոհանէս վարդապետ
Վայր՝ Ստամբոլ

55 Շնորհիւն Աստուծոյ... կատարեցաւ այս ձեռնադրութեան գիրքս, ձեռամբ նուաստ և մեղսամած գրչիս Յոհանէս վարդապետի, ի մայրաքաղաքն Ըստամբոլ, ի դուռն Ս. Աստուածածնին, ի թվականիս Հայոց ՌՀԴ (1625), ի վայելումն անձին իմոյ և ի պայծառութիւն եկեղեցեաց։ Աղաչեմ զտեսանողքդ զգրիչս յիշեցէք միով Հայր մեղայիւ։

1237

ՄԱՇՏՈՑ

Մեսրոպ, VII, № 2154 (ժամանակ?)

Կազմող՝ Ստեփաննոս աբեղայ

215 Զվերջին կազմող սորա սուտանուն Ստեփաննոս աբեղայ, որ զանունս ունիմ և զգործս ոչ, յիշեցէք ի Քրիստոս...։ Կազմեցաւ ի թվին ՌՀԴ (1625), ձեռամբ տէր Պարսամ աբեղային Վարագեցոյ. ամէն։

Նորոգեցաւ ի թվին ՌՀԴ (1625), ի վայելում Բաշարաթ սարկաւագին, ի դուռն Ս. Փրկչին։ Աստուած զլաւ պահող աւրհնէ. ամէն։

---

[12] Տաղկող Մեսրոպ Խիզանացու հիշատակարանը տե՛ս 1629 թ. ներքո, № 1248։

1238
ԱԻԵՏԱՐԱՆ
ՁՁՄՆ, № 60 (1488 թ.)

309 Աստուած ողո[ր]մի Հեղինեերին հոգո[յ]ն, որ խաչն կազմել երետ։ Կազմեցաւ սբ. նշան խաչս ի դուռն Ս. Աստուածածնին, ի թվին ՌՀԵ (1626), հոկտեմբերի ԻԸ (28), խաչգիւտին օրն ուծեցաւ։ Յիշատակ է Ծառուկին, Կիրակոսին, Գրիգորին։ Աստուած ողորմի իւրեանց հոգոյն, որ անջինջ յիշատ[ակ] է ի դուռն Ս. Աստուածածնինն։

1239
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Մ8ԶԵԳ, VIII, № 2377

Գրիչ՝ Առաքել
Վայր՝ Տիգրանակերտ

10 Զերգարանս մեծին Դաւիթի,
.....
Զստացող այսմ տառի,
Զհեզահոգի այրն բարի,
Զմահդասի Դաւիթ՝ այր գովելի,
Որ էր տեղեաւ Եդեսացի։
Եկեալ բնակի Համիթկերտի,
Եւ ծնանի երկու որդի,
Երետ գրել զգիրս հոգելի,
Վայելս որդեաց սա եղիցի։
Յակոբայ և Յոհանիսի,
Սիրասնունդ զաւակ բարի,
Եւ մօր սոցա ընթերցողի,
Առ յուպա յիշատակ սա եղիցի։
Գրեցաւ Տիգրան մեծ քաղաքի,
Դուռն Սրբոյ Կիրակոսի,
Ի դպրատուն Մինաս գրչի,
Զեռամբ Առաքել գրչի։
Թվին Հայոց Ռ ամի,
Հե այլ աւելի (1626),
Ի դառն և ի նեղ ժամանակի,
Իշխանութեանն Մահմետի։
Հեծելազաւր բազում ժողվի,
Բաբելոնի վերայ նստի,
Յաշխարհս ամէնն կողոպտի,
Եւ այն զօրացն կեր լինի։
Վերջն Աստուծոյ է գիտելի,
Որպէս փրկիմք նոցունց չարի,
Տէր Աստուածն յամենայնի,

Ողորմեսցի իւր ստեղծուածի։
Խաղաղութիւն տա աշխարհի,
Փառք Աստուծոյ վեր առաքի,
...։

1240
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄՏՁԵՊ, VIII, № 2515

Գրիչ՝ Յոհան Հիզանցի

190 *Գրեցաւ տետրակս ձեռամբ անպիտան Հիզանցի Յոհան ախմար գրչի, ի թվին ՌՀԵ (1626)-ին։ Աղաչեմ զձեզ, ով հանդիպողք, մի ողորմի ասացէք զծողիս և Աստուած ձեզ ողորմի։*

1241
ՏՕՆԱՑՈՅՑ
ՄՏՁԵՊ, VIII, № 2499

Գրիչ՝ Սարգիս գպիր
Վայր՝ Կ. Պոլիս

176 *Գրեցաւ Տանացուցս ի Կոստանդիանուպալսի, ձեռամբ անարժան* Սարգիս *դպրի, ի վայելումն տէր Ղազար քահանայի։*

Ով եղբարք, մի՛ մեղադրէք գրիս, զի կար մեր այս է։ Թվին ՌՀԶ (1627) գրեցաւ, ապրիլի Ե (5)։ Զձեզ աղաչեմք, մէկ Հայր մեղայիւ մի յիշէք զիս զանարժար ծող սորա։

1242
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Երևան, № 2644 (1857 թ.)

Գրիչ՝ Յովհաննէս

ա

252ա *Արդ՝ յայսմ*[13] *անդորրութեան աւուրցս, յորում ընդոտնեալ մերժեցան վնասակար թշնամիք եկեղեցւոյ, յետ ամաց վեցից անցանելոյ, ես՝* Յովհաննէս *հուսկ յետին բանահիւսաց և տարտամ հետևողս ուսումնաւորաց, թողեալ զբաղում տառապանս, մշտակիր ոգւոյս և խանդաղատեալ սիրով, ցանկացայ թարգմանել խօսիւք նիւթական լեզուիս զայս բարեզեկոյց, արգասաւորեալ նորագործ հրաշիցս համբաւ վիրավկայելով կրկին յաւիլուածովք։*

Որում տպաւորեալ տնօրինաբար, ճշգրտիւ պատուասաեալ կառուցի ընդ համարս ամաց Կենարարին, որ միշտ ընթացման է արուսեկին

[13] *Սույն հիշատակարանն ունի հետևյալ վերնագիրը. «Ինքնագիր յիշատակարան Յովհաննու արարողի բանիս, որիշ ի թուցնս։ Մեր կարծիքով դա հետագայում ավելացրել է 1850—1857 թթ. ընդօրինակող Թադեոս Միհրդատյանը։ Այս և շափածո հիշատակարանները տե՛ս նաև Հովհաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրությամբ Հ. Ս. Անասյանի, Երևան, 1964, էջ 80—83։*

հոլովեալ ի մեզ յոբելինից ութեքին չորից և ի զօդն յաւելեալ հիւսմամբ
կրկնակի գոյիւ հնգից հնգից և երկրորդ յարակից (1627)[14], իսկ Արա-
252բ //ռատեան Թորգոմայ տոհմին զարմիցն՝ ի նորոգմանէ հինգհարիւրե-
կին, զկնի կատարման գարուն ըստ շրջագայութեանց յեղանակաց
ժամանակիս յայսմիկ, յաւել ևս առ մերս քանակութիւն չափոյ եօթ-
ներեակ տասանց և վեցից (1627)[15]։

Յամս աստուածապատիւ և աթոռ[ը]նկալ սբ. ուխտին Վաղար-
շապատու տեառն տէր Մելքիսեթեկին, և ի թագաւորութեան ինքնա-
կալի տեառն տէր և բարեպաշտի Զիկմունտի երրորդի, որոյ Քրիստոս
Աստուածն պահեսցէ զընտրեալն իւր ընդ ամրածածուկ աջովն իւրով.
մանաւանդ զմեծապայծառ իշխանն և ծիրանածին զանդրանիկն իւր
զմեծն Վլատիսլաւ, և զայլ մեծամեծսն թագաւորութեանն իւրոյ հաս-
տատեսցէ Տէր ի գործ արիութեան, և օրհնեսցէ զամենեսեան անսպա-
ռնչի օրհնութեամբ. ամէն։

Բ

Դարձեալ շնորհեմ սիրով զայս բան,
Գովեալ ազինդ իմ պատուական,
Եւ յազգայնոցդս մարմնական,
Մանկանց տղայոց որք ապա դայն։
Առ ձեզ աղերս գերադրական,
Ցիմոց ջանից .սակաւ այսքան,
Թէպէտ շնորհաց բանիւ ունայն,
Այլ հրահանգիցն է ազդարան։
253ա Մխիթարիչ յուսադրական,
Ընդդէմ ազգին անբարտաւան,
Քրիստոնէից զուարթարան.
Եւ անհաճիցն մտաց դարան։
Հաւատացեալքն աստ զօրանան,
Առ այս գործոյս յաղթողական,
Մահմետականք ոգով ողբան,
Զհագարացւոց անլոյծ վարան։
...։
Եւ դուք մանկունքդ պատուական,
Որք պարապիք սմին խնդման,
Ցիշել հայցեմ զմեզ անխափան,
Զի ձեզ տացի նոյնպէս զփոխան։
Նաև զծնողս իմ սրբազան,

[14] Հիշատակարանի .սույն տվյալը Հ. Անասյանը հաշվել է այսպես՝
8×4=32×50=1600
5×5=25+ 2= 27
1627 (տե՛ս նշված աշխատությունը, էջ 98)։

[15] Սույն տոմարական հաշվի մասին Հ. Անասյանը գրում է. «Հայկական թվականի հաշիվը թվում է խանգարված» (նույն տեղում)։ Սակայն հաշիվը խանգարված չէ. [(2×500)+(7×
×10)]+6+551=1627։

Զտէր Յակոբ ծեր քահանայն,
253բ Եւ զբարեպաշտ մայրն իմ՝ Համայն,
Զ Պօղոս եղբայրս կրտսեր ամեան,
Եւ զընտանիսս աղնուական,
Որք շինելոց են և որ կան,
Զգեռարողբոշ ծաղկանման,
Զ Աստուածատուրն և զ Ուստիան:
Բայց ես գործով թափառական,
Ի լաւագոյն շնորհաց սոցայն,
Միայն կամաւ կամ անբաժան,
Եւ մերձակայ գոլովս արեան։
Թէ համարիք և աստի բան,
Զիս՝ Յովհաննէս անձն անպիտան,
Խառնել ի թիւ սոցին արժան,
Թէպէտ յետոյ և անագան։
Լիջիք և գուք յիշեալ առ այն,
Որ է անեղ և անսահման,
Զձեզ պսակէ փառօք յայնժամ,
Ի յերկնային սբ. հարսնարան[16],

1243

ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ

ՄՏԶԵՊ, VII, № 2310

ա

413 Թվին ՌՀԷ (1628) գրեցաւ գիրս Ս]ե[ր[ի]կ դպիր, որդի Նիկոլին:

բ

Մեղաւոր Ս[ե]ր[ի]կ դպիր, Թվին ՌՀԷ (1628), հոկտեմբեր Թ (9)։

1244

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԶՄՆ, № 162

Գրիչ՝ Զաքարայ Մոկացի
Վայր՝ Մոգս

ա

705 Յիշեցէք ի Քրիստոս զԽլդաթ Մոկացին,
Որ ղկողն տաշեաց սբ. Աւետարանին,
Միթէ գթայ Տէրն ի յիւր յոգին,
Թողու զմեղսըն ծնողաց նորին. ամէն։

բ

Ո՜վ եղկելի և թշուառական մեղապարտ Զաքարայ անյիշելի, տես թէ քո հալտ ինչ տի լինի, յաւուր մեծի դատաստանի։ Ո՜հ, ո՜հ, վա՜յ ինձ հազար բերան։

[16] Այս հիշատակարանների մասին Մատենադարանի ձեռագրերի ցուցակում ոչ մի նշում չկա (հտ. Ա, էջ 844)։

Գ

Ո՞վ ընթերցողք սբ. Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս
706 ձեր զտառապեալ և զմեղաւոր Զաքարայ գրիչս Մոկացի և // զկողակիցն իմ՝ զՇայումն, որ փոխեցեալ է առ Քրիստոս։ Յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր...։ Եւս առաւել ստացող սբ. Աւետարանիս զմահդասի տէր Աւետիսն և կողակից զՀալինարն, որ փոխեցեալ է առ Քրիստոս, յիշեցէք...։

Դ

702 Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս[17] անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն ի լուսածնեալ զարմից մանկանց Սիովնի, մահդասի տէր Աւետիսն, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախօս, մարգարտաշար և լուսափթիթ սբ. Աւետարանիս։ Եւ ետ գրել զսա յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, ի միտ առեալ զբանն Եսայայ, որ ասէ. «Երանի...»[18]։ Վասն այն յուսոյն ետ գրել զսբ. Աւետարանս, ծաղկել և զարդարել, յիշատակ իւրն և իւր ծնողացն, հօրն՝ մահդասի Շաղուբաթին և մօրն՝ Նրղշունին, և կողակցոյն՝ Հալինարին, և որդոյն՝ Մարութայ սարկաւագին, և փոխեցելոյն առ Քրիստոս՝ Մխիթարին և Սէթին, և դստերացն՝ Խաթունաղին, Խանումին, Գոյարին, Աղաբէկուն. և եղբարցն՝ Հայրապետին, կողակցոյն՝ Շայումին, և որդոյն՝ Գրիգորին, դրստեր՝ Ղարիպին. և միւս եղբօրն՝ միակեց Վարդանիսին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս յանապատն ի Լիմ։ Եւ Պետրոսն, կողակցոյն՝ Թուրուանդին, և որդոյն՝ Յակոբ սարկաւագին, որ փոխեցաւ ի Քրիստոս. և հօրեղբօրն՝ Գրիգորին և կողակցոյն, և որդոյն՝ միակեց Յովանիսին և մեծ պապուն՝ Մելքոնին, և ջոջ մամուն[19] Ախլիփաշին, և քուերոյն՝ Արուսին, կողակցոյն՝ Մեսրոպին, Ախլիփաշին կողակցոյն՝ Յոհանիսին, և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն։

Արդ՝ որ ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր... ստացողի լուսազարդ սբ. Աւետարանիս՝ մահդասի տէր Աւետիսին և կողակցոյն՝ Հալինարին, և որդոյն՝ Մարութայ սարկաւագին, և դստերացն՝ Խաթունաղին, կողակցոյն՝ Աբրահամին, Խանումին, կողակցոյն՝ Ասլա-
703 նին. որդոյն՝ Սամուէլին. և//դստերցն՝ Հալինարին և Նազլիխանին. Գոյարին, կողակցոյն՝ Մխիթարին, Աղաբէկուն, կողակցոյն՝ Սարգսին. և եղբարցն՝ Հայրապետին և միակեց Վարդանիսին և Պետրոս սարկաւագին, և ծնողացն՝ մահդասի Շաղբաթին և Նրղշունին. և հօր քուերցն՝ Շայիջանին և Ջանփաշին, Արուսին, Սալամին, Շանփաշին. և քաւոր միակեց Ղազարին և կողակցոյն՝ Սուրաթին, և դստերցն՝ Զատին և Նօնաֆարին և ամենայն ննջեցելոցն նորին։

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, անարուեստս ի գիրս գրչութեան և անշանս յամենայն գործս

[17] Տպված է «զտրայս»։
[18] Եսայ, ԼԱ, 9։
[19] Ցուցակում տպված է «Ջոջմամուն», որպես անուն։

բարութեան, Զաքարայ սուտանուն քահանայս, հրաման առեալ ի պատուիրանդիր առաքելական բանէն, որ ասէ. «Յոր կոչումն հրաւիրեցար՝ ի նմին կացջիր»[20]։ Եւ արդ՝ իմ ոչ բերելով զայսպիսի վստահութիւն, այլ ունայն յամենայն բարի վայելչութենէ, որ առաքինեացն է համարձակութիւն...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախօս և զաստուածաբնակ տառս, զլուսազարդ սբ. Աւետարանս ի լաւ և յընդիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և Հէ (1628), ի քաղաքիս որ կոչի Մոզս, ի թաղն որ Դաշտ կոչի. ընդ հովանեաւ աստուածաբնակ սբ. տաճարին Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին և Ս. Աստուածածնին, որ սակաւ մի հեռի է։ Ի հայրապետութեան հայկազան սեռի էջմիածնին տեառն տէր Մելքիսէթին, և ի մերոյս կաթողիկոսութեանն Աղթամարայ՝ տեառն տէր Ստեփանոսի։ Զոր
704 յուսամք և հայ//ցեմք յամէնառատ...։ Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս այսմ լուսազարդ և վարդափթիթ, ծաղկերանգ և լուսափայլ սբ. Աւետարանիս, և հանդիպիք տեսութեան սորա, կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեան և սխալանաց գրիս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով, աղաչեմ զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք անարժան և անպիտան, սուտանուն Զաքարիս, և մեղաց թողութիւն խնդրեցէնք ինձ և ծնողաց իմոց, որ փոխեցեալ են առ Քրիստոս՝ Նաճապետին և Բէկաղին, և կողակցոյն իմոյ՝ Շայումին, որ փոխեցեալ է առ Քրիստոս, և դըստերացն՝ Խաթունաղին և Ջանաղին և Աղասուն, և իմ հօրեղբարցն՝ Մխիթարին և Ստեփանոսին, Սրապիոնին և Յովանիսին, և իմ եղբարցն՝ Ամիրջանին, Սուրիասին և Աւագին և իմ հօրեղբօր որդոցն՝ աստուածասէր և բարեմիտ Հայրապետին, որ շատ լաւութիւն արեր հետ մեղապարտ գրչիս. փոխարէն զերկնից արքայութիւն պարգևէ իւրն և ծնողաց իւրոց և կողակցացն՝ Խանաղին, և եղբօրն՝ Մելքիսէթին, և մօրն՝ Զամանին։ Եւ առաւել վարպետին իմոյ՝ Հիզանցի տէր Սարգսին և որդոյն՝ տէր Յովանէս վարպետին, որ շատ աշխատեցան հետ մեղաւորիս. Աստուած լուսեղէն խորան պարգևէ...։

Ե

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք տէր Աւետիսին, եղբօր՝ Ղազարին, Եղիազարին, հօրն՝ տէր Աւետ[ի]սին և մօրն՝ Մարգարային և իւրեանց կողակցաց, որ զսբ. Աւետարանս և զսբ. նշանս կրկին փակեցին ի գուռն Ս. Ստեփանոսին։ Ով ծախէ կամ դաւի անէ՝ զանէծք Կայենին առցէ և զխաչհանողաց. ամէն։

Զ

Ծաղկող՝ Կիրակոս Աւրնդացի

705 Ես՝ Կիրակոս Աւրնդացի,
Անմիտ, յիմար և փանաքի,

[20] Ա. Կորն., է, 20, 24։

Զ Աւետարանքս ծաղկեցի,
Եւ գոյնըսգոյն զարդարեցի։
Զձեզ աղաչեմ եղբարք բարի,
Ինձ ասացէք սիրով սրտի,
Միթէ Աստուած իւրն ողորմի,
...։

Է

Մեղայ յերկինս... մանաւանդ զստացող սորայ զմահդասի տէր Աւետիսն և զծաղկող սբ. Աւետարանիս զմեղապարտ Կիրակոս և ըզծրնօղսըն իմ։

Ը

Աւդնեա ինձ շնորհաբաշխ հոգի սբ. Աստուած։
Ով ընթերցող եղբայր բարի,
Զծաղկողս յիշեա ի յաղօթի,
Զկիրակոս մեռեալ հոգի,
Որ ամենայն մեղօք է լի։
Ես քեզ մոխիր, հող և գերի։

1245

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄՅԶԵՊ, VIII, № 2397 (ԺԶ դար)

32 ՌՀԸ (1629) թվին,
Յոհանէս վարդապետ Եդեսացին,
Ետուր գաւազան Յովաննէս գրչին,
Որ էր Յամբա Տիգրանակերտին,
Յաւագ Զատկի նոր կիրակին,
Յապրիլ ամսոյ տասուերկուքին,
Յոռոհա քաղաք սբ. եկեղեցին,
Բարձրահայեաց Ս. Աստուածածնին։

1246

ԳԱՆՁԱՐԱՆ

ՅԶՄՆ, № 110 (1511 թ.)

Կազմող՝ Մարտիրոս

467 Յերես անկեալ աղաչեմ զձեզ, ո՜վ լուսերում դասք քահանայից և սարկաւագաց, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԿարապետ Գադենցրն, որ ետուր վերըստին նորոգել զԳանձայտետրս, յիշատակ հոգոյ իւրոյ, հաւրն՝ Գրիգորին և մաւրն՝ Մանուշակին, և կողակցուն՝ Մարթին։ Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք Կարապետին և իւր կողակցուն՝ Մարթին և որդոյն, որ փոխեցեալ է առ Քրիստոս...։ Կապեցաւ ձեռամբ սուտանուն Մարտիրոսիս, որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Ի թվին Հայոց ՌՀԸ (1629)։

1247
ՄԱՇՏՈՑ
ՄՏՁԵՊ, VII, № 2296 (1453 թ.)

Կազմող՝ Պարսամ աբեղայ

ա

398 *Թիվ ՌՀԸ (1629)։ Վայ է և եղուկ մեղայպարտ Պարսամ աբեղիս, որ խիստ շատ չարչարեցայ հետ այս գրոցս։*

բ

*Ով երբայր, անմեղայդիր լերուք, զի յառաջմէ խառնակած էր, շատ ջանաց և ոչ կարացայ շինել։ Զ*Պարսամս աբեղէս յիշման արժ[ան] արէք, զվերջին կազմող սբ. տառիս, որ զմականուն Աստազէլ ասեն. Աստուած ողորմի ասացէք նմա. ամէն։

ՌՀԸ (1629) թվին կազմեցաւ։

1248
ԱԻԵՏԱՐԱՆ
ՄՏՁԵՊ, VII, № 2348 (1624 թ.)

Ծաղկող՝ Մեսրոպ Խիզանցի

ա

482 *Արդ՝ ի բազում ժամանակէ ցանկացեալ էր ոմն աստուածասէր, հեզահոգի, բարեմիտ, ողորմած և աղքատասէր, հեզ և հնազանդ ի մէջ ամենայնի, պարոն մահտասի խոջայ* Եղնազարն *և որդին իւր՝ խոջայ* Նազարէթն, *այսմ լուսազարդ, վարդափթիթ, ծաղկազարդ բուրաստանիս, զոր փափաքէր. այժմ բստացաւ զսայ ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբանն մարգարէին, որ ասէ. «Երանի...»*[21]։ *Վասրն այն յոյսոյն ստացաւ զսա և ետ զարդարել ոսկով և լազուարդով, և երանք երանք դեղերով, ի վայելումն մանկանց Սիոնի։*

Արդ՝ որք հանդիպիք այսմ ծաղկաւէտ բուրաստանիս և ճաշակէք յամէնառատ սեղանոյս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմահդասի խոջայ Եղնազարն *և զծնողսն իւր՝ զմահդասի* Մատթէոսն, Մեսրանն *և զպապն իւր՝* Ամիրասաթն, *խանիկն*[22] Էլիսաշէն. *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խոջայ Եղնազարն *և զկողակիցն իւր՝ մահդասի* Խանզադէն, *և զորդին իւրեանց փոխեցեալ*
483 *առ//Քրիստոս* Գասպարն, *և դստերքն իւրեանց՝* Մարիամ, Շանզադէն, Ասանեղն, *և միուս կողակիցքն՝* Սալուինազն *և զորդին իւրեանց՝ զպարոն խոջայ* Նազարեդն, *և դստերքն՝* Աննայն *և* Մեսրանն, *յիշեցէք...։*

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խաւջայ Եղնազարն *և զեղբայրքն իւր՝* Առագելն, *կողակիցն իւր՝* Սզմէրն, *որդին՝* Յոհան, *և միուս եղբայրն՝ մահդասի* Մարութէն *և կողակիցն՝* Շիրին, *որդին՝* Ոսկան *և եղբայրն՝ մահդասի խոջայ* Նազարն *և կողակիցն՝* Դշխուն. *և*

---

21 *Սաղ.*, *ԼԱ*, 9։

22 *Տպագրված է որպէս անձնանուն՝ Խանիկն. մինչդեռ պէտք է լինի հանիկն, իսկ բարբառներում՝ խանիկն, այսինքն՝ մամն։*

որդիքն իւրեանց՝ զխոջայ Սաֆարն, *խոջայ* Բաղդասար, Աղամալն, *յիշեցէք...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի խոջայ Եղնազարն, *և զքուերքն իւր՝ մահդասի* Զադէն, Մէրումն *և* Շուշան, *և հայրքուրն՝* Փաշաղէն, *և հօրեղբայրքն՝* Մարտիրոս, *որդին՝* Ամիրազատն, Մարգարէն, Յոհանէս, *և միուս հաւրեղբայրն՝* Մուրատն, *և որդին՝ տէր* Ազարիէն, *և որդին՝ տէր* Ստեփաննոս, *և թոռունք՝* Աւետիկն, Մարտիրոսն *և* Աբամազրն, *յիշեցէք...։*

Եւ արդ՝ աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սբ. Աւետարանիս, յիշեցէք զիս զանարժան Մեսրոպ *դպիր* Խիզանցիս, *որ բազում աշխատութեամբ ծաղկեցի ոսկով և լազուարդով և երանք երանք դեղերով, ի վայելումն մանգանց Սիոնի։*

Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զանարժանս և զհոգևոր վարպետսն իմ՝ նախ զտէր Սարգիս, *որ մականուն* Մազման *կոչի, և զմիուս վարպետաց վարպետ զտէր* Մարտիրոս *քաշ* Խիզանցին. *ևս առաւել զմարմնաւոր ծնողսն իմ՝ զտէր* Մարտիրոսն *և* զԽոնդքարն, *և զորդին իմ՝* Մարտիրոսն, *որ աւդնական եղև. յիշեցէք...։*

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զմահդասի Սալուինազ *և զծնաւղսն իւր՝* Ղարամէլիքն *և* զՀոռոմսիմէն, *և զեղբայրն իւր՝* Գրիգորն, *և զդուստրն իւր՝* Աննայն *և* զՄուրասայն *և զամենայն արեան մերձաւորս, յիշեցէք...։*

Եղև աւարտ և կատարումն այս սբ. Աւետարանս ի թուականիս Հայոց ՌՀԸ (1629) ամի. և Քրիստոսի փառք...։

Դարձեալ յիշեցէք... ի մաքրափայլ յաղօթս ձեր զբարեմիտ պարոն Նազարէթն *և զծնողսն իւր՝ զմահդասի խոջայ* Եղնազարն *և* զՍալվինազն, *զոր տէր Աստուած ողորմեսցի....*

Դարձեալ ևս աղաչեմք զձեզ, ով մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ պարոն Նազարէթն, *և զկողակիցն իւր՝* Եզտիխանն, *և որդիքն իւր՝ զպարոն* Միքայէլն *և նորայբողբոջ* Եզնազարն, *և դստերքն իւր՝* զՆովչին, *և* Շամշին, *և* զԽա[ն]զատէն. *զոր տէր Աստուածն ամենայնի զիւրեանք անփորձ կենաց պահէ. ամէն*[23]։

Բ

Յիշեցէք ի Քրիստոս ի մաքրափայլ յաղօթս ձեր զբարեմիտ պարոն Նազարէթն *և զհանգուցեալ կողակիցն իւր՝* Եզտիխանն, *և հանգուցեալ որդին իւր՝* Աղաջանն, *յիշեցէք...։*

1249

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Մշբեպ, VII, № 2352

Գրիչ՝ Յակոբ սարկաւագ
Վայր՝ Ըստամբոլ

491 *Փառք...։ Արդ՝ յանգ ելեալ աւարտեցաւ հոգէնաւագ Սաղմոսս Դաւթի մարգարէին, ի թվաբերութեան հայկազեան տումարիս ի քսան և մին*

[23] *Մինաս գրչի հիշատակարանը տե՛ս 1624 թ. ներքո, № 1235։*

յոբելեան համարին և քառեակ եթնից թուոց յաւելորդացն (1629)[24], ի յարքայանիստն Եթնաբլուրն Բուզանդիա, որ այժմ ասի Ըստամբոլ, մակագրելով մատամբ Յակոբ ումեմն սարկաւագի և կողիւ կապեալ կազմեցաւ ի սբ. քաղաքս Յերուսաղէմ, ձեռամբ Ստեփանոս քահանայի, ի վայելումն ումեմն աստուածասէր և հաւատարիմ մղտեսի Ամիրուզիզ անուն բարեպաշտ քրիստոնէի, որ է սա ի յերկրէն Խողենեաց, որ այժմ ասի Բալէշ, ի Գօզալդարայ կոչեցեալ գաւառագոյն նահանգէն, Ինէլ անուն գեղջէն, որ է մերձ Սրբոց Հռիփսիմեանց դիպեալ կայարանին և գնացեալ ի Թուխ անուն աւանին։ Գոլով սայ ի յայնմ տեղւոջէն, զոր ոչ սիրեաց զհեշտութիւն անցաւոր անկողնոյ, այլ միայնացեալ իբրև զտատրակ, շրջելով յանապատս վանորէից, հարսնացուցանելով զհոգի իւր, ակն ունելով երկնաւոր հարսնեացն...։

492 Եկն ի սբ. քաղաքն Երուսաղէմ, մտերմաբար ծառայեաց սբ. Երուսաղէմայ զամս ԼԲ (32). և ոչ միայն ծառայեաց, այլ բազում արդիւնս արար ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն, հաւրն՝ Սիմէոնին և մաւրն՝ Ջանալին, և եղբաւրն՝ Միքայէլ եպիսկոպոսին և այլ ամենայն արե[ա]նառու մերձաւոր ննջեցելոցն։ Ջայս Սաղմոսարանս և Բ (2) ոսկով զարդարեալ արծաթապատ մագաղատ փոքրիկ Աւետարան, որ ամենեին նման են Աւետարանին Յոհանու՝ կամաւոր աղքատին, և ոսկով մագաղատ Հարանց վարք մի, զորս ի գրոց կողմանէ և զոր ի յայլ իրաց պատրաստեաց և եղ յիշատակ յԵրուսաղէմ ի դուռն Ս. Յակոբա[յ] առաքելոյն...։

Մանաւանդ զյիշման արժանաւորն յիշեսջիք զտէր Գրիգոր հայրապետն սբ. Երուսաղէմի, որոյ ժամանաւ և աւգնականութեամբն յիշատակրքս հանդերձաւ և սբ. Երուսաղէմ կրկին պայծառացաւ, և նորոգեցան եկեղեցիք՝ և ամենայն շինուածք, անաւթք և զգեստք, և ամենայն բարեկարգութիւնք, և հոգևոր պատրաստութիւնք, որում փոխարէն դասեսցէ զնա տէր Աստուած ընդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և երջանիկ առաքելոցն. ամէն։

Ի յայսմ ամի Պարսից թագաւորն, որ շահ Ապազ կոչէին, մեռաւ։

1250
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏՁԵՊ, VII, № 2358

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Աւրնդաց

501 Փառք եռակի Աստուածութեանն,
...։
Այս մատենիս աստուածարան,
Ջանազանեալ ականցս որ կան,
Տէր Սիմէոն վարդապետն,
Այրն պատուական։

[24] Այսինքն՝ [(21×50)+(4×7)]+551։

Վարիւք փայլեալ հրեշտակական,
Վարժեալ ի վարս ճրգնողական,
Խոնարհ հոգւով և հեզաբան,
Եւ խրատիչ որդոց մարդկան։
Փափագեցաւ իբր զեղջերայն,
Յաղբերրս ջուրց անմահական,
Եւ գրծադրել զսա զանազան,
Եւ զարդարել ետ հրաշազան։
Զոր ես չարեացրս աւթարան,
Եւ ի բարի գործոցս ունայն,
Կիրակոս հողս և անարժան,
Կատարեցի զնորին հրաման։
Մարմնովս աշխատ գործիական,
Հոգւովս յօժար և ժրբական,
Գրծագրեցի և ծաղկեցի,
Դառն և ի նեղ ժամանակեան։
Ի թվականիս Ռ ամեան,
ՀԸ թիւ ընդ նմայն (1629),
Աւարտեցաւ սայ ի լրմայն,
Շնորհաւք Սրբոյ Երրորդութեանն։
Որք հանդիպիք սրմայ տեսլեան,
Կամ վայելէք յայս բուրաստան,
Միշտ ասասցէ զՏէր ողորմայն,
Եւ յետ նորա ըզՀայր մեղայն. ամէն։

Եւ արդ՝ գրեցաւ և ծաղկեցաւ եղանակաւոր տառս..., որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր օրինակէ, որ է խլիկ կոչեցեալ, ձեռամբ յոգնէմեղ և անիմաստ գրչի՝ մեղաւոր Կիրակոսի:

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. գիրքս, ի թվականիս Հայոց ՌՀԸ (1629) ամին, ի յերկիրս Մայեկաց, ի
605 գեղս որ կոչի Աւրնդաց, ընդ//հովանեաւ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պողոսի, և Սրբոյն Գէորգեայ զօրավարին, ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց։ Քանզի ես քան զես սաստկանայ բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխահիս, ես առաւել ազգիս Հայոց, զոր յուսամք և հայցեմք ի յամէնառատ քաղցրկամք մարդասիրէն Աստուծոյ, որ վերստին նորոգեսցէ, կանգնեսցէ և հաստատեսցէ զաթոռ և զգաւազան իշխանութեան զհայրապետին մերոյ և զթագաւորին. յառաջին սէր և ի միաբանութիւնն, և աներկիւղ, և անվնաս պահեսցէ զազգս Հայոց ի պէսպէս փորձանաց ներքոյ և արտաքոյ. ամէն։

Եւ արդ՝ ես անպիտանս և անիմաստս ի գրչաց, օտարացեալ և հեռացեալ յամենայն բարի գործոց, հող և մոխիր Կիրակոս, մեղօք լցեալ և ապականեալ, բազում աշխատութեամբ և չարչարանօք գրեցի զՇարակնոցս. քանզի աւուրքս իմ անցեալ է եղբարք, և Ծ (50) ամ լցեալ. և ես բարձաւրկ եղեալ յերեսս իմ գրեցի զայս բովանդակ։ Վա-

սքն որոյ անմեղադիր լերուք խոշորութեան ե սխալանացս, և Աստուած ողորմի ասացէք ինձ մեղսասիրիս և ծնողաց իմոց Մուսիսին և Թուխկին, և եղբօրն իմոյ՝ Յուսկին, և նորա որդոցն՝ տէր Յովանիսին, Ղազարին, և Սիրունին, և Արևին, և իմ կենակցին՝ Մրուաքին, և մեր տղայոցն (sic) Գօնար սուտ մահդասոյն, Գօզալին և դեռաբոյս Մուսիսին, և փեսային իմոյ՝ տէր Գրիգոր Խիզանցոյն, և ամենայն արեան մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և մեռելոց. ամէն.

Արդ՝ ես ունայնս ի բարեաց գործոց Կիրակոս, աղաչեմ զձեզ կողկողագին պաղատանաք, զի լի սրտիւ և բոլոր հաւատով խնդրեցէք յԱստուծոյ զթողութիւն մեղաց իմոց և ծնօղացն և ամենայն արեան մերձաւորաց իմոց. ես առաւել վարպետին իմոյ՝ տէր Սարգիս Խիզանցոյն, որ բազում չաբչարեցաւ ի վերայ իմ՝ ի յուսուցանելն գրին և ծաղկին, միթէ Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն...։

1251

ԱԻԵՏԱՐԱՆ

ՅՁՄՆ, Ֆ 74 (1291 թ.)

Կազմող՝ Վարդան աբեղայ
Վայր՝ Կարմիր վանք

356 Կազմեցաւ սբ. և փառաւոր Աւետարանս ձեռամբ անարժան և վա[տ]թար սուտանուն Վարդան աբեղիս, որ միայն զանունս ունիմ, բայց ի գործոյս դատարկացեալ։ Նորոգեցաւ սբ. Աւետարանս ի Կարմիր վանք, ի դուռն Ս. Կարապետին և Ս. Նշանին և [Ս.] Սարգսին. ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս արհի եպիսկոպոսին տէր Աստուածա[r]ին և փոքր Աստուածատրին, ի թ<ով>ուականիս Հայոց ՌԼԶ (1631). և այլ ԺԳ (13) անձն կրաւնաւորացս, որ կան ի յայս քարաժեռ յանապատիս։

Դարձեալ յիշեսջիք առաջի ահեղ ատենին զհայրն իմ՝ զԿարապետ էրէցն, և զմայ[ր]ն իմ՝ զխանն, և զեղբայրն իմ զփոխեալն ի Քրիստոս՝ զԳրիգորն և զՊետրոսն, և զքոյրն իմ՝ զխաթունն և զՏօնիայն, և հաւասար զնոցեցեալսն, որ կան հաւաքեալ ի գերեզմանս. և զտէր Մկրտիչն, որ նա գներ է զսբ. Աւետարանս։ Աստուած ողորմի հրամայէք իւրեանց հոգւոյն. ամէն։

1252

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄԻՔԷՋ, «էջմիածին», 1975 թ., Գ, էջ 63, Դ, էջ 56, Ֆ 334

Գրիչ՝ Զիք Ստեփաննոս

ա

[Ո]վ սբ. աւետարանիչ Մատթէոս, որ կոչիս երգ կենաց... լուսաւորեսցէ զհոգի սբ. Աւետարանիս ըստացողին՝ խոջայ Գրիգորին, և զուգակցին իւրոյ՝ Սողոմէին, և որդոց իւրոց պարոն Սուրիասին, Մէլիքին,

Ոսկանին, և դստերաց իւրոց Դշխունին և Գուլիխաս[ին], Տատումին, և թոռներաց իւրոց Աստուածատուրին, Մալիշանաղին, Յակոբջանին. Սեփուռէ, և այլոցն ամենայնի։ Զկենդանիսն խաղաղական կենաւք պահեսցէ...։

Թվին ՌԶԲ (1633) մայիս ԺԵ (15), աւրն չորեքշաբաթ[25]։

Բ

[Ո]վ որդիք, լուսոյ դասք քրիստոնէից, յորժամ ընթեռնուք ըզսբ. Աւետարանս, յիշեցէք ի սբ. յաղօթս ձեր զխոջայ Գրիգորն, որ ըստացաւ ըզսբ. Աւետարանս ի փրկութիւն հոգոյ իւրոյ...։ Եւ զհայր իւր զխոջայ Մալիշանն, և զմայրն՝ ըզՀոռիփսիմէն, և զուգակիցն իւր՝ զխոնարհամիտ և հեզահոգի Սողոմէրն, և զորդիքն իւր՝ Սուրիասն, Մէլիքն, Ոսկանն, և զդստերքն իւր՝ զխաթունդշիոյնն, և զՏատումն։ Եւ տէր Աստուած Յիսուս Քրիստոս զկենդանիսն պարագայց ամօք պահեսցէ մինչև ի խորին ծերութիւնն. և զհոգի խոջայ Գրիգորին, որ յայսմ ամի փոխեցաւ առ Տէր, ժառանգորդս արասցէ երկնից արքայութեանն...։ Թվին մարդեղութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՈԼԵ (1635) և Հայոց ՌԿԵ (1616) գրեցաւ սբ. Աւետարանս, բայց յիշատակարանս ՌԶԲ (1633) գրեցի ես Ձիք տէր Ըստեփաննոսս։

1253

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅՁՄՆ, № 103

Գրիչ, ծաղկող՝ Ղուկաս քահանայ

Վայր՝ Ստաքէի վանք

Ա

431 Զ՝Ղուկաս մեղապարտս յիշեայ, ո՛վ պատուական ընթերցող, Թվին ՌՀԶ (1627)։

Բ

Ո՛վ դասք լուսերամից և կաճառք ամենափայլք, մանկունք նորոյ Սիոնի և փեսաւերք հարսին եկեղեցւոյ, հարք և եղբարք, վայելաւղք աստուածախաւս մատենիս, լսաւղք և ընթերցաւղք, յերես անկեալ աղաչեմ զձեզ վասն սիրոյն Քրիստոսի՝ յիշատակել առաջի զենման գառին զտիեզերալոյս մեծ ռաբունապետն զՅովհաննէս Ռոտենեցի, հանդերձ ծնողաւք իւր կրկնակի. և ինձ մեղապարտ աշխատողիս հայցել զթողութիւն...։

Գ

432 Զ՝Փիլիպոս, սրբասէր և սրբասնունդ նորընծայ վարդապետն, հանդերձ ծնողօք, յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ դասք լուսերամից. և զնորին վարժապետն՝ զաբբայն Մովսէս, զցանկալին հրեշտակաց։ Եւ զիս զախմար գրիչս Ղուկաս անարժանս յիշել աղաչեմ։

25 Նման և ավելի համառոտ հիշատակարաններ էլի կան։

Դ

Ստացող՝ Կարապետ

429 Փառք...։ Ընտացայ զսա մեծաւ յուսով, ես՝ Կարապետ քահանայս, ի մեր արդար վաստակոց առ ի յիշատակ բարեաց մեզ և կտակ անջընջելի առ Աստուած։

Ցայն սակս եղէ ցանկացող սմին, զի գաղափար սորին տիեզերալոյս և երկրորդ լուսաւորիչն Գրիգոր Տաթևացին իւրով աստուածամուխ և սրբասընեալ ձեռամբն էր գծեալ։ Վասն որոյ տուաք գրել և նկարել Ղուկաս քահանայ գրչի, ոսկով և երանգ երանգ խառնուածով զարդարել գիծ ընդ գրոյ և քանակն նոյնչափ անյաւել և աննըվաղ։ Բայց յոյժ տառապանօք և տրտմութեամբ բաղում անգամ արտասուելով հազիւ ի յանկ աւարտեցաք՝ յութ ամ բաղում ծախիւք սպասելով[26] պատուական պտղոյս։

Արդ՝ դու ով բան բանին Աստուածոյ անդամս...։

430 Արդ՝ եղև զրաւ և աւարտ աստուածաբնակ սբ. Աւետարանիս ի թվականութեանս Հայոց մեծաց ՌՁԲ (1633), ի վիճակն Ստաթէ, ի Ս. Առաքելոյն, առ ոտս սբ. ուխտի ///։ Ի բռնակալութեանն Պարսից շահ Սաֆուն. և ի հայրապետութեանս Հայոց անշարժ վիմին հաւատոյ հանդարտախաղաց ծովուն, հաստահեղոյս և անառիկ պարիսպին՝ տեառն Մովսէսի, անպակաս նմանեալ մեծի աստուածատես մարգարէին։ Զի մարմնի զվարս անմարմնոց ունէր ստացեալ, հրեշտակաց ցանկալի, մարդկան գովելի և դիւաց սարսելի, վասն դի կայր հիանալի քաղաքավարութեամբ։ Գործովք վարդապետէր և քաղցրութեամբ խրատէր։ Նստեալ ի յաթոռ Թադէոսի սբ. առաքելոյն՝ ընտրութեամբ հոգւոյն Աստուծոյ, յաշորդ և փոխանորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Եբարձ՝ օգնականութեամբն Աստուծոյ զդիմոսական հարկապահանջութիւնն ի սբ. աթոռոյն էջմիածնայ, զոր ամի ամի պահանջէին հարիւր թուման, խողխողելով զտառապեալ ազգս Հայոց՝ որդիքն Իսմայէլեան։ Եւ սա ծաղկեալ զդրախտ աստուածատունկ և պտղաբերեաց զբազում աշակերտս։ Որք են յաշակերտաց նորա Խաչատուր արհեպիսկոպոսն գիւղաքաղաքին Նոր Ջուղայոյ, որ է ուսուցիչ իմ և վարդապետ, արւեստիւ քաջ, քարտուղար և պատկերանկար, որ և նկարեաց իսկ զչորեսին աւետարանիչս, որք են ի միջի սորա։ Եւ ինքս սիրով կապեալ էր ի սէր սիրելոյն իւրոյ Քրիստոսի։ Եւ երկրորդ խստակրօնն Փիլիպոս, որ երկրորդ էր սբ. հայրապետս և խնամածու սբ. աթոռոյն, զոր սմա իսկ յանձնեցաւ իշխանութիւնն հայրապետական ի սբ. հայրապետէս ի կենդանութեանն իւրում։ Եւ սա բազում աշխատեցաւ ի սբ. Աւետարանիս, զի հրամանաւ սորա գրեցաւ, զոր Աստուած վարձատրեսցէ զսոսա և ի հանդերձեալն փառաւք ի փառս բարձրացուսցէ. ամէն։

431 Արդ՝ ով քրիստոսասէր քահանայք և ժողովուրդք, ի լուր յիշատակարանիս ուղիղ սրտիւ յիշեցէք զստացող սբ. Աւետարանիս զԳրիգորն, և զծնողսն իւր՝ զՄկրտիչն և զԱսլիգատէն, և զեղբայրն՝ Աստուածատուրն, և որդիքն՝ զտէր Կարապետն, զՄկրտիչն, և զկողակիցն՝ Հռիփ-

[26] Նշանակում է գրչության սկիզբը եղել է 1625 թվականը (1633—8=1625)։

սիմէն և զԹանդրիզուլին, և դստերքն՝ զխաթունն և Մարիտատն, և զամենայն հանգուցեալ զաւակ սորա յիշեցէք և Աստուած ողորմեսցի ասացէք։

Դարձեալ յիշեցէք զԳրիգորն և զհայրն իւր՝ զՄկրտիչն, մեծ պապն՝ Սարգիսն, և եղբայրն՝ զԿարապետն, և զքոյրն՝ Քեմախաթունն և Փաշախաթունն, և դուստր սորա Դօլուաթիանումն, և որդիքն՝ զՊօղոսն, զՊետրոսն և զԹուման, յիշեցէք...։ Այլ և յիշեցէք զտէր Կարապետն և զկողակիցն իւր՝ Նազլուխանն, և զորդիքն՝ Աստուածատուրն և զՅովհաննէսն, և զդուստրն՝ Աննայն։

Դարձեալ յիշեցէք զտէր Կարապետն և զծնողն՝ զՄարգարիտն, և մեծ պապն՝ զԴառնուկենց Գրիգորն և զԳո[զ]ալաղէն, և զորդիք սոցին՝ Աղաջանն, Սարգիսն, և զ[դստեր]քն՝ զՄարգարիտն, զՀռիփսիմէն և զՄարիամն, և զամենայն արեան մերձաւորացն՝ զկենդանիս և զհանգուցեալս, յիշեցէք...։

1254
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՅԶԵՊ, VIII, № 2470 (1479 թ.)

138 Յիշատակ է Շարակնոցս Յովեցի տէր Սահակին ի սր. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբին, որք հանդիպիք սմա Աստուած ողորմի ասացէք տէր Սահակին և իւր ծնողացն, հօրն՝ Կարապետ քահանային և մօրն՝ Մարգարտին, և այլ ամենայն ազգականացն մեծի և փոքուն։ Եղև սա յիշատակ ի թվին ՌՁԲ (1633), վկայութեամբ Կարապետ վարդապետին։

1255
ՏՕՆԱՑՈՅՑ
ՄՅԶԵՊ, VIII, № 2496

Գրիչ՝ Խաչատուր
Վայր՝ Երուսաղէմ

173 Փառք..., որ ետ կարողութիւն անարժանիս և կրկնակի տկարութեանս ի հասանել ի յաւարտ այսմ գրիս, սրբոց տաւնի յայտիչ իրի, և ցուցարան ժամատեղի, սրբոյ տառիս Տաւնացուցի, որ շնորհիւ Տեառրն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի։

Եւ արդ՝ գրեցաւ սա ի սր. և յաստուածակոխ քաղաքս յԵրուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ առաքելոյն, ձեռամբ մեղաւոր Խաչատրիս, յառաջնորդութիւն սր. աթոռոյս տէր Գրիգոր արհեպիսկոպոսին։ Թվին ՌՁԳ (1634) գրեցաւ։

1256

ԱԻԵՏԱՐԱՆ

ՄՅԶԵՊ, VIII, № 2672

Գրիչ՝ Մելքիսեթ Մոկացի
Վայր՝ Երուսաղէմ

287 Փառք...։ Շնորհիւն Տեառն ամենակալի և նորին աւգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս,...։

Որ և սոցին սիրելեացս Աստուծոյ համանմանեալ բարեմիտ և ոմն քահանայ՝ անուամբ կոչեցեալ Մելքիսեթ Մոկացի, որ և գործովս հեռի եմ յամենայն բարութեանց, ցանկացայ աստուածախաւս սբ. Աւետարանիս, զոր վաղուց փափաքէի ապաւինելով ի մարդասիրութիւն Աստուծոյ և ի սրբոց բարեխաւսութիւն։

Արգ՝ սկսայ գրել, մեղսաթաւալ անձամբ և անարուեստ ձեռաւք և մեղսամած մատամբս, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. Յարութեանն և լուսաբուղխ սբ. դերեզմանին Քրիստոսի և կափարիչ սբ. վիմին և սբ. բանտին, և սբ. Յակոբայ գլխադիր սբ. գերեզմանին, և սբ. Յակոբայ տեառնեղբաւր գերեզմանին և սբ. տաճարին, և Ս. Հրեշտակապետին, և այլ ամենայն սբ. տնաւրինականացն Քրիստոսի Աստուծոյ, որ աստ կան հաւաքեալ ի սբ. քաղաքս Երուսաղէմ: Ի թվականիս Հայոց ՌՁԴ (1635) ամին, ի հայրապետութեան սբ. աթոռոյս Երուսաղէմ քաղաքիս Տեառնեղբաւրն Յակոբայ՝ տէր Գրիգոր արքեպիսկոպոսին։

Որ ի Հայոց Ռ թվին,
ՁԴ յաւելորդին (1634),
Հոռոմ ազգի ծռազատկին,
Որ բազում վիշտք մեզ հասուցին։
Վասըն լուսոյն որ միշտ բղխին,
Յաստուածընկալ գերեզմանին,
Զոր աղաւթիւք լուսաւորչին,
Լոյսն բղխեաց ըստ բնական կարգին։
Ի մեր Հայոց մեծ Պասեքին,
Ուրախացան ազգ ուղղափառին,
Յամաւթ եղեն երկաբնակին,
Զոր դիտապետ մեր քաջ ւ արին։
Անուանակից լուսաւորչին,
Արքուն անուն զուարթագին,
Կանգնեաց զեղջիւր Հայկան սեռին,
Որ ամենայն ազգ և ազին,
Երանի տան Երման ազգին։
Յերես անկեալ առ ձեր ոտին,
Եւ մանաւանդ գարշապարին։
Զի հայեսջիք ի Քրիստոսէ,
Տեառն կենաց տէր Գրիգորին,

Եւ յետ աստեւացս Ելանելոյ,
Արժանասցի ընտրեալ դասին։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս,... և հանդիպիք սբ. Աւետարանիս, կարդալով կամ աւրինակելով և կամ տեսանելով, յիշեսջիք ի սբ. և ի մաքրափայլ յաղաւթս ձեր... և բոլոր հաւատով մեղաց թողութիւն հայցեցէք մեղապարտ և անարժան և անարուեստ գրչիս՝ լոկ անուն քահանայի, նուաստանուն Մելքիսէթի Մոկացոյ, որ ստացայ սբ. Աւետարանս յարդար վաստակոց. որ բաղում աշխատութեամբ և տառապանաւք գրեցի և ծաղկեցի, յիշատակ բարի հոգւոյ իմոյ և ծնաւղաց, հաւր Բաշարաթին և մօր Ինախփաշին, և եղբարցն՝ տէր Յովանէս
288 *կրաւնաւորին և // Շէրբէկին, և կողակցո[յ]ն իմոյ՝ Գուլաղին, և իմ որդոյն՝ տէր Յոհանէսին և կողակցո[յ]ն՝ Փաշին, և դստերն՝ Գուլաղին, և իմ քուերց Ջանաղին, և իւր որդւոցն, և Գօզալաղին և իւր որդւոցն, և Փաշին և իւր որդւոցն, և իմ հաւրեղբաւրն՝ Աւետիսին, և իմ մեծ պապին Սինաքարիմին և ամենայն արեան մերձաւորացն, և ողորմի ասողացըն...։*

Եւ արդ՝ ես յետինս ի կարդաւորաց... և յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուածոյ, Մելքիսէթ սուտանուն քահանայ, որ անուամբ միայն եմ, բայց գործովս թափուր յամենայն բարիգործութենանց...։ Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութենամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղացն՝ Բաշարաթին և Ինախփաշին, և իմ եղբարցն՝ տէր Յովանէս. կրաւնաւորին և Շէրբէկին և իմ քուերց և ամենայն ազգականաց...։ Արդ՝ աղաչեմ զամենասեան զմանկունդ սբ. եկեղեցւոյ, զի որք հանդիպիք տեսութեամբ սբ. Աւետարանիս, զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեան և սխալանացն անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով և զոտս ձեր համբուրելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով անարժանիս Աստուած ողորմի ասացէք...։

1257

ՇԱՐԱԿՆՈՑ

Փարիզ, Ազգային Մատենադարան, № 83

Գրիչ՝ Խաչատուր երէց
Վայր՝ Կաֆայ

ա

323ա *Փառք...։ Շնորհիւն Աստուծոյ ամենակալի արդ եղև աւարտումն այսրմ Ջայնաքաղիս և հարցարանիս, որ զարդուցանէ. ըզբաղեցեալ հոգիս։ Գրեցաւ սա ի դառն և վերջ ժամանակին՝ թագաւորութեանն այլազգաց և հաշարաց սուլթան Մուրատին, որ գընաց հեծել ի վերայ պարսիկ ազգին, որ ասի խըզըլպաշ, ի մայրաքաղաքըն Կաֆայ, մահալան Թոփրախալայ և առ ոտն Սրբոյն Թէոդորոզի զինաւորին, ի Հայոց հայրապետին՝ մերոյ տէր Մովսէսին*[27]*։ Եւ մերոյ գաւառին՝ Հո-*

[27] *Մովսէս Խոտանանցին մահացել է 1633 թ. մայիսի 21-ին, երեքշաբթի։ Գրիչն ըստ երևույթին տեղյակ չէ։ Տես հիշատակարան № 736, էջ 504։*

նաց երկրին խանութեան Ինայաթէրէին. և մերոյ հայրապետին՝ վերադիտող մայրաքաղաքիս, հեզահոգի և սրբամիտ, տէր Խաչատուր արհեպիսկոպոսի։ Յաթոռ սորա հաստատեալ կայ վանքն Ս. Նշանայ, քաղաք Խրիմայ և տիրէ ընդթանթրակայ։ Ի թվականիս Հայոց ՌՁԴ (1635), ի մայիսի է (7), օրն [Հ]ամբարձման, աւարտում[ն] սորայ,
323բ // ձեռամբ անիմաստ, ամենաթշվառ և անպիտան և փանաք գրչիս... պիտակ անուն Խաչատուր էրէցս։ Խընգրող սորա և փափագող դեռաբոյս ծաղիկն և սիրեցեալ մանկունք Սիովնի՝ մանուկն Սարաւար:

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ[28] տառիս, յիշեցէք[29] և զիս՝ անարժանս, ի մաքրափայլ աղաւթսն ձեր, և զիմ վարպետս տէր Սարգիս գրագիր քահանան, և ըղմարմնաւոր ծնողքն մեր Խուբլոպէն և Թալվաթ խաթունն, որ սոքա մանգագոյն երեսնամեա փոխեալ են առ Աստուած լու[ս]աւոր հոգիքն։ Եւ դարձեալ հոգևոր ծնողքն մեր՝ Աստուածատուրն և Զէտրլմէլիքն: Վասն որոյ երես անգեալ աղաչեմ ըղձեզ՝ սբ. հանդիպողք, չինիք մեղադիր խոշորութեան և սղալանաց դրոյս, զի կար մէր այս էր, ով եղբայրք։ Ապայ ընտիր աւ-
324ա րինակ է և անպատճառ//կարքն և դնացքն Շարակնոցի է. առաջ՝ Ծնընգեանն և Քառասնօրեա[յ] տաճարին, Մեծացուցէքն և Ապաշխարութեան, Սբ. Յարութեան և Համբարձման, Հոգոյն Սրբոյ դալըստեանն և Պայծառակերպութեանն, փոխման Աստուածածնին և Ս. Խաչվերացին, համաւրէ մարտիրոսացն և համաւրէն նընշեցելոց։ Զամէնն լիակատար կայ ի սմայ հաւաքեալ անթերի. ինքն Զայնաքաղ է և հարցն՝ Շարակնոց է. գիտացիք իմաստունն իմանայ և անիմաստն զարմանայ, գիտողաց պիտանի և անգիտաց այպանելի։ Ինձ մեղաւորիս այսպէս թըվի, թէ ի Զայնաքաղ ի վերա պաշտաւ առն և կամ դաս առնելն կամ աւրհնութիւն քաղելն հեշտ է և հանգիստ, քան ցՇարակնոցին։ Վերջն որ ասացաք թէ Զայնաքաղ է և Շարակնոց՝ Բ (2)-ն ալ լիակատար։

Արդ՝ խնամաւք խընամակալին եղև զրրաւ սորա, ի ժամանակիս յոյժ անբարի, զի վասն ծովացեալ մեղաց եղաք անհանգիստ ի ձեռն այլալզգաց, զի Քաշանու խանն Ազախ սէֆէր գընացին՝ Ճանպէէրէն մանղուլ արին, տեղն ուրիշ խան եկաւ՝ անունն Ինաաթէրէ:

Բ

238ա Ով եղբարք, երբ որ քաղցրիկ եղանակէք զերգս, յիշեցէք և զիս անարժանս գծող սորա Խաչատուր քահանայն միով ողորմայիւ[30]. յիշեցէք և դուք յիշեալ լիցիք առաջի դատաւորին Քրիստոսի։ Ի թվականիս Հայոց ՌՁԴ (1634), որք մոլորեցան [Յ]ոյնք, որ են Հռոմքն։ Թագաւորութեան այլազգաց սուլթան Մուրատն էր, խանութեան Ճանպէէրէն Կաֆա քաղաքիս, ղ[փ]աշայութեան Իպրահիմի շատ վիճմունք եղաւ ընդ ամենայն տեղիս, թվականն ՌՁԴ (1635) մտաք։

---

[28] Ձեռագրում «այսսմ» ձևով։
[29] Ձեռագրում «յիսեցէք» ձևով։
[30] Ձեռագրում «ողորիսիւ» ձևով։

Գ

Ծաղկող՝ Խաչիկ Երէց

238բ Ով եղբարք իմ սիրելի,
Եւ սիրեցեալք մանկունք Սիովնի,
Հայցեմ ի ձէնջ աղերսալի,
Որ հանդիսիք այսմ տառի,
Յիշէք զիս և ասէք Աստուած ողորմի։
Սբ. քահանայք լուս երամից,
Բայց զպատկերս որ նըկարեցի՝
Յովակիմայ և Աննայի,
239ա Զունիմ արմար այսմ տեղի,
Ընկալարուք սիրով սրտի։
Զսակաւ ծաղկունք որ ծաղկեցի,
Եւ ըզգրերն գրեցի,
Խաչիկ էրէց մեղաց դերի,
Զձեզ աղաչեմ աղերսալի,
Արժան առնէք Հայր մեղայի,
Դուք ընկալցիք մասն բարի[31]։

1258

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, № 10697

Գրիչ՝ Աւետիս Թացուեցի
Վայր՝ Լիմ անապատ

248բ Աղաչեմ զհանդիպողքդ սբ. Աւետարանիս, յիշեցէք ի պաղատանս յաղաւթս ձեր զթարմատար Աւետիս Թացուեցի և մի անգամ ասէք Աստուած ողորմի...։

1259

ԺԱՄԳԻՐՔ, ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Մշեղ, VIII, № 2426

Գրիչ՝ Աբրահամ դպիր
Վայր՝ Սաղիան

68 [Փ]առք...։ Արդ՝ գրեցաւ Աղօթամատուցս ի յերկիրս Աղուանից, ի գ[ե]օղս որ կոչի Սաղիան, ձեռամբ Աբրահամ դպրի, ի խնդրոյ Շամեցի

[31] 1978 թ. հունվարի 3-ին ստացանք Փարիզի ազգային մատենադարանի № 83 ձեռագրի երեք հիշատակարան, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հոգևոր հայր Բ. Ուտիեին այդ գործը ձեռնարկելու համար։

Այդ ձեռագրի ա հիշատակարանը մենք վերցրել էինք Մաշտոցի անվան Մատենադարանի Գ. Հովսեփյանի արխիվից (թղթ. 91, վ. 6ա) և տեղադրել սույն ժողովածուի № 873-ի ներքո (էջ 590)։ Թեև մեր ձեռքի տակ եղած հիշատակարանը տրված էր կրճատումներով, վակայն այն նոր ստացված հիշատակարաններով փոխարինելու հնարավորություն չունեցանք, քանի որ ժողովածուի այդ մասն արդեն տպագրված էր։ Ուստի Փարիզից ստացված երեք հիշատակարանները ստիպված տեղադրում ենք Հավելվածում։

Խաբիւարի որդի Ոհանէս դպրի. ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպպոսի, աշակերտաց տեառն Մովսէսի, որ կրկին լուսաւորեաց զա[դ]դս Հայոց, և մերոյ նահանդիս առաջնորդութեան Թումայի մեծ բարունապետի, որ շնորհօքն Քրիստոսի դպրոց կարգեաց, և բաղում քահանայս հասուց, և բաղում եկեղեցիս շինեաց և լուսաւորեաց այլալեզու ազգս Աղուվանից։ Տէր Աստուած ընդ երկայն անուրս պահեսցէ վասն մեր. ամէն։ Գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՁԵ (1636)-ին, ի ն[ահ]անջի ամին, տանուտէր Զուկն, մարտի ԻԱ (21), ի որում ամի եկն յՍտամբալայ թագաւորն Երէվան, և էառ զբերթն, և բազում հեծեալս եթող ի ներս՝ ԺԵՌ (15000) այր, քաջ պատերազմող, և ինքն գնաց մինչև ի Տաւրէժ քաղաքն շահաստան, և դարձեալ գնաց Սաւամպոլ։ Եւ աշունն եկեալ շահ Սաֆին և պաշարեաց զբերթն, և բաղում աւերք եղաւ Հայաստանեաց։ Էլն որ կոչի ուլուս, դարձան ի սարերուն, և անկան ի վերայ դ[ե]ղոյրէիցն և թալանեցին, և բազում աւերութիւն արարին, վասն մեր ծովացեալ մեղացս, զոր տէր Աստուած վերջն ի բարին կատարեսցէ. ամէն։

1260
ՇԱՐԱԿՆՈՑ
Երևան, № 4535 (ժամանակ?)

79ա Արդ՝ կազմեցաւ Շարակնոցս ի թուականիս Հայոց ՌՁԵ (1636), ի կաթողիկոսութեան էջմիածնայ խարազնազգեաց ճգնաւոր վարդապետի, ի առաջնորդութեան Գողթան գաւառի սբ. ուխտիս Թումայի, ի նոյն վերասացեալ զտէր Խաչատուր վարդապետաց վարդապետի, որ յայսմ ամի շինեաց և նորոգեաց ի հիմանց զսբ. ուխտս Թումայի բարձրաբերձ, կամարակապ և գմբէթաձև զսբ. եկեղեցին, և բարձր պարսպով
79բ և՛ չորեք անկիւնի//խուցերով և մուդբախերով զարդարեաց, և բաղում նեղութեամբ և չարչարանաւք շինեաց. զի յայսմ ամի եկն անաւրէն և պիղծ խոնդքարն՝ սօլթան Մուրատն ի վերա Պարսից անթիւ և անհամար գօրք՝ ՃՃՌ (800,000) արամբ, զոր և տեսողքն ոչ կարէին, թվել բազում և անթիւ նեղութիւնս աշխարհի արար և էառ զամուր. բերդն Երևան, և էանց գնաց ի շահաստան քաղաքն Թարվէզ և նստաւ անդ Բ (2) և Գ (3) աւր, յետ դարձաւ գնաց ի տեղի իւր։ Եւ ի հասանել աշնան ժամանակին եկն շահ Սէֆի Պարսից թագաւորն բաղում և անթիւ զաւրօք, վասն ծովացեալ մեղաց մերոց և ժողովեաց բազում արս քրիստոնէից և ամենայն ազգաց ընդ ամենայն երկիրս տէրութեան իւրոյ և էառ գնաց ի յԵրևանայ բերդին վերա, առ ի առնուլ զնայ։ Այլ ոչ գիտեմ զինչ լինելոցն է, միայն Տէրն գիտէ, որ ծածկագէտ է, այլ և շատ նեղութիւն եհաս ընդ ամենայն երկրի, մանաւանդ քրիստոնէից տառապեալ ազգի վասն ծովացեալ, որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուածն մեր...։

1261
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
ՄՏՋԵԹ, VII, № 2362

Գրիչ՝ Մեսրոպ Բաղիշեցի
Վայր՝ Տիգրանակերտ

ա

518 Փառք...։
Արդ՝ գրեցաւ սա ի յամին,
Երկ հինգ հարիւր թվականին,
Եւթանասուն այլ ընդ նմին,
Երրորդ հնգեակ յաւել ի նմին (1636)[33]։
Զեռամբ ումեմն մեղապարտին,
Մեսրոպ անուն փծուն գրչին,
Տիգրանակերտ մեծ քաղաքին,
Ի դուռն Ս. Կիրակոսին։
Արդ՝ աղաչեմ զձեզ լալագին,
Զհանդիպողք սրբոյ տառին,
Ի սաղմոսել զբանըս սորին,
Զմեզ յիշեցէք ի յաղաւթին։
Եւ զստացող սրբոյ տառիս,
Զ Ղուկաս դպիրն զՀզուեցին,
Որ փափագմամբ սրտիւ ուժգին,
Ետ գծագրել զսա իւր անձինն։
Եւ ես՝ Մեսրոբ Բաղիշեցի,
Կարողութեամբ Տեառն արարչին,
Բազում ջանիւք աշխատեցա,
Լցի զփափագ սրտի սորին։
Մեզ թողութիւն հայցել սովին,
Ժամ սաղմոսին և յաղօթին,
Յիշողքն ի Տէր յիշեալ լիցին,
Յորժամ գայցէ յերկիր կրկին։
Հատուցանել վարձս ըստ գործին,
Ըստացողին ւ աշխատողին,
Մտառութեամբ սաղմոսողին,
Եւ ինքն աւրհնեալ յաւիտենին.
ամէն։

բ

Ուրախ սրտիւ և բաղձանօք,
Եւ զտառապեալ գծողս մեղօք,
Որ եմ խոցեալ բազում վիրօք,
Յիշեա առ Տէրն քաղցրիկ երգօք,
Յորժամ սաղմոս ասես երգօք,

[33] Այսինքն՝ [(2×500)+70+(3×5)]+551։

Եւ հառանչես բաղում ողորմք։
Այլ և սորին ստացողին,
Ղուկաս ընտրեալ սարկաւագին,
Եւ մեղուցեալ Մեսրոպ գրչին,
Եւ մեր ծնողացն ամենայնի,
Եւ ասողին, լաւ պահողին,
Տէրն ողորմի յօրն վերջին։

1262
ՀԱՄԱՅԻԼ
ՅՁՄՆ, № 108

Գրիչ՝ Տօլվաբ

445 *Արդ՝ գրեցաւ Համայիլս ձեռամբ [յ]ոգնամեղ և անարհրաստ գրչիս* Տալուաթիս, *ի թվականութեանս Հայոց ՌՁ ու Ե (1636) աւարտեցաւ, ի յաւուրն Ծաղկայղարգին ողոգոմեան աւրին, ի վայելումն* Տիլանին: *Տէր Աստուած բարով վայելել տացէ և զինքն ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։*

1263
ԱՒԵՏԱՐԱՆ
ՄՅՁԵՊ, VII, № 2346

477 *Փառք...։ Արդ՝ հաւատարիմ և աստուածասէր ոգին՝* Կումիշխանացի *խոճայ* Ղարիպշայն, *ցանկացող և փափագող եղև այս սբ. Աւետարանիս, և ստացաւ զայս հալալ արդեանց իւրոց, յիշատակ բարի անձին իւրոյ և ի փրկութիւն հոգոյ իւրոյ, և եդ յիշատակ ի դրունս դիտանկատ և լուսապատ... սբ.* Էջմիածնի, *ի թվականութեանս Հայոց ՌՁԶ (1637), ի վեհագոյն տիրական իշխանութեան տեառն* Փիլիպոս *կաթուղիկոսի։*

Արդ՝ աղաչեմ զհանդիպողդ այսմ սբ. Աւետարանիս յիշման վարկ-ջիք զիւրսն ամենայն, զհայրն զՀազարշան, և զմայրն իւր՝ Ղանիմաթն, *և* զՄարիամն, *և* զՊաւղոսն, *զփոխեալսն ի Քրիստոս։ Այլ և զանդրանիկ որդին իւր՝* զԽաչատուրն, *և* զՊետրոսն, *և զայլ ամենայն մերձակայս՝ զկենդանիս և զհանգուցեալս յիշման առնել արժանի...։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սրովբէագումար դասք լուսեբամից, յիշեսջիք աղաւթս ձեր զԽաթունեանն, զԳրիգորն, *և* զՄարիամն, *և զհանգուցեալն ի Քրիստոս* զՍարգիսն, *և* զԹանիխանն, *և դուք յիշեալ լիշիք...։*

1264
ՄԱՇՏՈՑ
ՄՅՁԵՊ, VII, № 2322 (1545 թ.)

Նորոգող՝ Աբրահամ երէց

128 *Վերըստին նորոգեցաւ Մաշտոցս ձեռամբ անարժան* Աբրահամ *իրիցուս, ի թվին ՌՁԷ (1638), ապրիլ ամսոյ ի ԺԷ (17)։ Դարձեալ Աս-*

տուած ողորմի ասացէք սարկաւագ մահտեսի Լուսամիրին, կողակցոյն՝ Մարթայ խաթունին, որ եւ նորոգել զսա իւր հոգոյն և իւր ծընողացն հոգոյն, եւ կազմել զսա ի հալալ արդեանցն և արդար վաստակոցըն։ Որք տեսանէք զսա՝ կարդալով կամ աւրինակելով, Աստուած ողորմի ասացէք Մարթայ խաթունին. ամէն։

1265
ՄԱՇՏՈՑ
ՄՅԶԵՊ, VII, № 2002

Գրիչ՝ Գրիգոր դպիր

ա

5 Աստուած ողորմի ասացէք Գրիգոր դպրիս և ծնաւղաց իմոց և ամենայն ազգականացն։ Եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի. ամէն։

բ

Աղաչեմ զձեզ, ո՛վ եղբայրք, միով ողորմայիւ յիշեցէք զգրող սորայ և զծնաւղսն իւր և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի...։

գ

Գրիչ՝ Պօղոս դպիր

Քրիստոս Աստուած ողորմեայ ստացողի գրոցս տէր Յովսէփ պարոնտիրոջն, և իւր ծնաւղացն, և իւր ազգականացն, և իւր ամենայն մերձաւորացն. ամէն։

Դարձեալ ողորմի ասացէք Պօղոս դպրիս, և իմ ծնաւղացն, և ամենայն արեան մերձաւորացս։ Եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի...։

դ

Յիշատակ է Հայր Մաշթոցս Յովսէփ վարդապետին ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի գուռն Ս. Յակորայ առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին, ի թվին ՌՁէ (1638 թ.), ի հայրապետութեան սբ. աթոռոյս Յակոբա[յ] Տեառնեղբօրն, որ է աթոռ ազգիս Հայոց, տէր Գրիգոր հայրապետին։

Եւ նախքան զայս Գրիգոր հայրապետս սբ. Երուսաղէմ անկեալ կայր ի ներքոյ անթիւ և բազում պարտուց, և զամենայն սպասք և զանօթք սբ. տաճարացս, զխաչ և զԱւետարան, զշուրջառ, զսկիհ, զամենայն առ այլազգիսն գրաւեալ կայր։ Եւ ազգս Հայոց՝ ոչ հայրապետ, ոչ վարդապետ, ոչ քահանայք և ոչ դալաթաւորք, մինչև ի սա ինչ ոչ կարացին առնել վասն պարտուցն սբ. Երուսաղէմայ։

Իսկ հայրապետս Գրիգոր, շնորհիւն Աստուծոյ, յորժամ նըստաւ ի սբ. աթոռս, բազում ջանս և արիութիւնս, աշխատանք, և վիշտք և բազում նեղութիւնս կրեաց՝ վասն ազգիս Հայոց։

Եւ յորժամ լուան առաջնորդք և վարդապետք, քահանայք և տօլաթաւորք, մեծամեծք և փոքունք ազգիս Հայոց զբարի համբաւ նորա,

դիմեցին առ հասարակ ի սբ. Երուսաղէմ, և դտին քան զհամբաւեալն տասնապատիկ։ Եւ յաւժար կամօք և ջերմեռանդ սիրով տային զտուրս իւրեանց ի ձեռս սորա։ Եւ սա շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ ամենայն աղդիս Հայոց, հատոյց զանթիւ պարտս սբ. Երուսաղէմայ և զգրաւեալ անօթս սբ. տաճարացն ազատեաց և եղև ուրախութիւն և ցնծութիւն աղդիս Հայոց։

Եւ հայեցեալ ետես զվիճակս Հայոց, զի վանորայքն առ հասարակ հնացեալ և խախտեալ էր, եկեղեցիքն և խցերն ամենայն, ապաւինեցաւ ի յողորմութիւնն Աստուծոյ և սկսաւ նորոգել զվիճակս Հայոց՝ դեկեղեցիսբն և զխցերն՝ զՍ. Փրկչին, զ[Ս.] Ծնընդեանն, զՍ. Հրեշտակապետին, զՍ. Յակոբայն՝ զաթոռիս աղդիս Հայոց, զՍ. Յոհանէս Աւետարանչի եկեղեցին, և առաւ Գ (3) կամար ի Ս. Յարութեան վերնատուն, և եդիր միաբանս յամենայն վիճակս Հայոց՝ ի Ս. Փրկիչն, ի [Ս.]Ծնունդն, ի
6 Ս. Յարութիւնն, քահանայս և //միակեցս, զի անխափան լիցի սաղմոսերգութիւն, և շաբաթ ու կիրակին պաշտօնն ու պատարագն, իսկ ի Ս. Յակոբ հանապազօր անխափան։ Ի սորա ժամանակն առաւել պայծառացաւ Ս. Յակոբ ամենայն հոգևոր զարդիւք, թէ՛ գրովք և թէ՛ ոսկի և արծաթի անօթիւք, ժամակարգութեամբ և սաղմոսերգութեամբ, որ մինչև ի սա ոչ դոյր այսպիսի սահման։

Վասն որոյ հատուցանէ սմա տէր Աստուած ընդ միոյն բաղում...։

1266
ՇԱՐԱԿՆՈՑ
ՄՏՁԵՊ, VIII, № 2467 (ժամանակ?)

153 Թվին ՌՁԷ (1638) դեկտեմբերի ԺԱ (11), օրն երեքշաբթի, առաւօտ ժամու ատեն լուսին խա[ւարեցաւ]։

1267
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
Տիրայր վարդապետ, № 121 (1551 թ.)

Գրիչ Խաչատուր վարդապետ

2051ա Փառք..., որ ետ կարողութիւն տառապեալ անձանցս հասանել յաւարտ գրոյս։ Բայց սակայն զարբոյ և զամէնարջանիկ առն Աստուծոյ զտեառն Մովսէսի կաթուղիկոսի զվարսն ևս համառօտ բանիւ կամիմք յայտ առնել։ Էր սա յերկրէն Սիւնեաց։ Ի տիս մանկութեամբ սրբասէր և աղօթարար և պահեցող, հեզ և հանդարտ բարուք։ Որ և յարեցաւ ի մեծ կաթուղիկոսն Սրապիոն, անհանգիստ երկամբ աշխատեալ յընթերցումն Աստուածաշունչ տառից, և յետ մահուան կաթուղիկոսին ընկալաւ իշխանութիւն և գաւազան ի Գրիգոր վարդապետէ Կեսարացւոյ։ Եւ ըստ շնորհելոյ նմա յԱստուծոյ յորդառատ վարդապետութեամբ և բարի քաղաքավարութեամբ լուսաւորեաց զազգս հայկազան, և արար

բազում ուղղութիւնս։ Նախ, զի զեղծեալ կարգս եկեղեցւոյ, որ ի թուլութենէ առաջնոցն խանգարեալ էր, վերըստին ուղղեաց։

Երկրորդ. ի բազում տեղիս յանապատս կարգեաց խարազնազգեաց ճգնաւորաց, արանց միանգամայն և կանանց։ Յոր ժողովեցան՝ ուր քսան և երեսուն, ուր վաթսուն և եւթանասուն, զի անդադար աղօթեսցեն, և ինքն որպէս զհայր հասարակաց խնամ տանէր ամենեցուն զմարմնաւոր պէտս նոցա ընլով։

Երրորդ. յամենայն տեղիս՝ ի շէնս և յաւանս անթիւ եկեղեցիս շինեաց և քահանայս կարգեաց, որով հաւատ քրիստոնէութեան ծաղկեալ պայծառացան։

Չորրորդ. զսբ. Էջմիածինն նոր նորոգեալ զարդարեաց և պայծառացոյց անթուելի ծախիւք, որ զտեսօղսն հիացուցանէ։

Հինգերրորդ. ընկալեալ զկաթուղիկոսութիւնն և դիմեաց առ արքայն Պարսից. և զդիմոսկան հարկն, որ յառաջնոց կաթուղիկոսացն եղեալ էր ի վերայ սբ. Էջմիածնայ, բազում ջանիւ գուն գործեալ վերացոյց և արար ազատ ի հարկապահանջութենէ։

2051բ Վեցերորդ. յամենայն տեղիս դասատունս և դպրոցս կարգեաց և լուսաւորեաց զազգս Հայոց, և յարաժամ ցանկայր տպագրութեանս, զի յառատութենէ գրոց ամենեքեան դիւրաւ վարժեսցին, սակայն չեղև ձեռնհաս, զի փոխեցաւ աստի յանանց կեանսն առ ցանկալին իւր, յորում ծարաւին էր և արտասուօք ժտէր, միշտ կացեալ կաթուղիկոս չորս ամ և չորս ամիս, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Եւ յաջորդեաց զաթոռ նորա տէր Փիլիպոս ձեռնասուն աշակերտ իւր։ Եւ յաւուրս սորա եղև տպագրութիւնս ի քաղաքն Շօջ, յանապատն Ջուղայոյ, ի թվին ՌՁ և է (1638), ձեռամբ նուաստ Խաչատուր վարդապետի Կեսարացւոյ, որ տարի մի է և հինգ ամիս, որ զըցայգ և զցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիս, զի ոչ եմք տեսեալ ի վարպետէ և ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն զՀոգին Սբ. և զիղձս և զկենդանի աղօթս հոգևոր հօրն մերոյ գնացելոյ առ Տէր, և են ձեռնտու և օժանդակ գործոյս հոգևոր որդեակքն իմ վարպետ Յակոբեանն, և տէր Յովհաննէս քահանայն, և տէր Միքայէլն, և Յովսէփն։ Վասն որոյ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ Խաչատուր վարդապետս և զձեռնտու եղբարսն իմ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Փառք ապէնիաղ Տեառն, որ ետ կարողութիւն անիմաստ արանացս հասանել յաւարտ երգարանիս Դաւթի ի թուին ՌՁէ (1638), որում փառք յաւիտեանս։

1268

ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՅՁՄՆ, № 121

Գրիչ՝ Յովհաննէս աբեղայ

503 Զսակաւ աշխատօղս ի սմա՝ զնուաստ, անուամբ ևեթ Յովհաննէս աբեղայս աղաչեմ յիշել ի Տէր։ Գրեցաւ ի թվին ՌՁԸ (1639), ի նոյեմբերի ամսոյն ԺԴ (14)։

1269
ՄԱՇՏՈՑ
ՄՏՊԵՊ, VII, № 2175

Գրիչ՝ Յոհան Հիզանցի
Վայր՝ Երուսաղէմ

ա

238 Փառք..., որ ետ կարողութիւն տկարիս և անարժանիս... սևերես պոռնիկ գրչիս, հասանել յաւարտ լուսազարդ սբ. գրոցս Մաշթոց կոչեցեալ, յաւրինեալ և սահմանեալ հոգելի, հոգևոր հօրն մերոյ՝ Մաշտոց վարդապետին, ի թուականիս Հայոց Ռ և ՁԸ (1639) ամին, ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ս. աթոռոյս Յակոբայ եղբաւր Տեառն, և Ս. Յակոբայ առաքելոյ գլխադիր սբ. դամբարանին։ Ի յաթոռակալութեան սբ. աթոռոյս տէր Գրիգոր քաշ և արի հայրապետին սբ. Երուսաղէմայ, և սբ. Էջմիածնայ տէր Փիլիպոս կաթուղիկոսին, և Սրսայ տէր Սիմէոն կաթուղիկոսին, և ի թագաւորութիւն այլասեռիցն սուլթան Մուրատ խոնդքարին, որ ի յայսմ ամի գնաց անթիւ և անհամար զաւրօք ի վերայ Պաղդատայ և առաւ ի ձեռաց Կարմիր գտակին, որ է ղզըլպաշն, ի զաւերն աշխարհիս, որ վասն այսմ քաղաքիս եղև, Աստուծոյ միայն է գիտելի, դի զամս Ի (20) յամէն տարի վոզիր կու գնայր ի վերայ Պարսից ազգին և ոչ լինէր հնար, մինչև խոնդքարն ինքն ելաւ բաղում զօրօք ի վերայ, ապա թէ կարաց առնուլ. փառք ու գոհութիւն յԱստուծոյ Ռ (1000) բերան։

Արդ՝ աղաչեմ զամենեսեանդ, զմանկունսդ սբ. եկեղեցոյ, զի որք հանդիպիք տեսութեան սբ. տառիս, կարդալով կամ աւրինակելով, զաւելորդն բառնայք և զպակասն լնուք և սխալանացս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։ Վասն որոյ զերեսս ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք տէր Գրիգոր սբ. Երուսաղէմայ հայրապետին և իւր ծնաւղացն՝ Մարգարին և Թուրվանդին, և եղբարցն՝ Աղսմիրին, Գուլամիրին, և քրւերցն՝ Սալվարին և Շահումին, Պակիսուլթանին և Հերիքին, և ամենայն ազգականաց՝ կենդանեաց և ննջեցելոց. ամէն։

Նաև բազմամեղիս և վիրաւորելոյս հոդով... և անիմաստ գրչիս՝ Հիզանցի Յոհսւն խաբեբայիս և ոչ քահանայի, և ծնօղաց իմոց և վարպետաց և ամենայն արե[ա]նառու մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և ննջեցելոց, և այնոցիկ, որ ի վերայ մեզ հոգևոր և մարմնաւոր աշխատանք և երախտիս ունին, յիշեցէք...։

Եւ արդ՝ այսպէս իմացիք հարք և եղբարք մեր ի Տէր, զի յառաջ քան զայս տէր Գրիգոր հայրապետս սբ. Երուսաղէմայ, վիճակս մեր ազգիս Հայոց անկեալ կայր ի ներքոյ անթիւ և անհամար պարտուց, և որչափ անօթ և ըսպասք կայր եկեղեցեաց՝ խաչ, Աւետարան, սկիհ, շուրջառ, զամէն առ այլազգիսն ըռէհին և գրաւ էին եդեալ ու տարի վերայ տարու կրկին կու յաւելուր շահն, և աղգս Հայոց ի մեծ տարակուսի և հոգոց մէջ կային և ոչ գիտէին զինչ առնէին։

Ապա գոհութիւն ու փառք Աստուծոյ, որ ինքն ողորմածն Աստուած

իւր անբաւ գթութեամբն հայեցաւ ի տառապեալ ազգս Հայոց, արար ողորմութիւն և տընկեաց զսայ ի սր. քաղաքս Երուսաղէմ, ի յաթոռ Սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն, ընտրութեամբ ամենայն մեծամեծաց ազգիս Հայոց, կաթողիկոսաց, հայրապետաց, վարդապետաց, քահանայից, պարոն տոլվաթաւորաց։ Եւ սա Աստուծով սկսաւ ընդ ամենայն երկիր համբաւել աւրհնութեան նամակով զսբ. Երուսաղէմայ դառնակսկիծ նեղութիւն։

Եւ ազգս Հայոց, յորժամ լուան զանտանելի նեղութիւնն սբ. Երու-
239 սաղէմայ և //զհամբաւ բարի վարուց հայրապետին Գրիգորի, դիմեցին ամենեքեան առ հասարակ ի. սր. Երուսաղէմ՝ վարդապետք, հայրապետք, քահանայք, և վճառական տոլվաթաւորք և միաբան ժողովուրդք, և ետուն տուրս լի և առատ ի ձեռն նորա, և նա շնորհիւն Աստուծոյ՝ զգրաւեալ անօթս սբ. եկեղեցեաց ազատեաց ի ձեռաց այլ ազգաց, և սկսաւ մարամաթել և նորոգել զեկեղեցիս և զիցերն զՍ. Յակոբայ, զՍ. Հրեշտակապետաց, և զՍ. Փրկչայ, և զՍ. Ծնընդեան, և զՍ. Յոհաննու աւետարանչի եկեղեցին, և առաւ Գ (3) կամար ի Ս. Յարութեան վերանատուն։

Այլ և առատ պարգևօքն Աստուծոյ, և ողորմութեամբ ամենայն ազգիս Հայոց, կրկին զարգարեաց զեկեղեցիս ոսկեղէն և արծաթեղէն սպասիւք, և զանազան սզգեստիւք՝ կերպասի և ապրշումէ, այլ և յամենայն տեղիս Ս. Տնօրինականացն Քրիստոսի կարգեաց և սահմանեաց քահանայս և սարկաւագունս, զի անխափան լինի սաղմոսերգութիւնն, պաշտաւնն, և պատարագն, ի Ս. Յակոբ՝ յաթոռս Հայոց ազգիս, և ի Ս. Յարութիւնն, ի Ս. Փրկիչն, և ի Ս. Ծննունդն, վասն փրկութեան հոգոց ննջեցելոց քրիստոնէից։

Այլ և յորժամ տեսին զբարեբարոյ սէր և զքրտնաջան աշխատանսն նորա՝ Հայոց ազգիս վարդապետք, կրկին գային ազնիւ և մեծագին ընծայիւք, և աստուածաշունչ մատենօք, յերկրպագութիւն Ս. Տնաւրինականացն Քրիստոսի և լուսաբուղխ սբ. գերեզմանին, և տային յաւժար կամօք ի ձեռն Գրիգոր հայրապետին, զի մնասցէ անջինջ յիշատակ ի սբ. յԵրուսաղէմ՝ ի դուռն Ս. Յակոբայ և յամենայն վիճակս Հայոց, Ս. Յարութեան, Ս. Փրկչին և Ս. Ծննդեանն։

Այլ և յայսմ ամի կան ի սբ. ուխտս այսքան քահանայք միաբան ընդ իշխանութեամբ տէր Գրիգոր հայրապետին՝ տէր Գրիգոր վարպետն, և տէր Խաչատուրն ժամասողն, տէր Նիկողայոսն, տէր Ստեփանոսն, տէր Մելքիսէթն, տէր Վարդան ժամարար, միւս տէր Վարդան, տէր Յովանէսն, տէր Աստուածատուրն, տէր Սահակն, տէր Յոհաննէսն, տէր Գրիգորն. տէր Սիմէոն լուսարարն, տէր Պետրոսն, տէր Դաւիթն, տէր Հէրապետն, տէր Կարապետն, տէր Ղուկասն և Գրիգորն, սարկաւագ Բաշարաթն, և եղուկ Յոհան գրիչս, և կարդացող աշխարհականք՝ Ամիրխան, Տօնիկն, վերակացու Մանուկն, ջահրնկալ, և Յակոբն ու Մարկոսն, և տնտես Մարտիրոսն, որ յամէն օր տաք ապուր կու բերէ գրչիս, որ կան հանապազ ի գիշերի և ի տուընջեան անլուերի ի սաղմոսերգութիւն, ի պաշտօն և պատարագն, միակեց Մելքոն՝ թղթի կոկօղն, և այլ

աշխարհական մշակքն, որք անխոնջ կան հանապազ, քրանաջան աշխատանօք, աներկբա յուսով, անկեղծ սիրով և հաստատուն հաւատով, մտերմաբար կու ծառանն սբ. ուխտիս՝ մահդասի Ապտալն և Գրիգորն, աւտապաշի Յոհան, թարզի Յակոբն, Միքայէլ ջաղացպանն, և Գուլասար բաղջապանն, և Պապիկ Սաֆարն ու Կիրակոսն, ղափուշի Շեխիջան, Փրկչի ղափուշի Մակարն, Սաւնբաթն, Միրիջանն, Մուրատն, Յուսէփն, Եսղուպն, Ղարիպջան և այլք բազումք։ Աղաչանօք և բարեխօսութեամբ սբ. Աստուածածնին և ամենայն ընտրեալ սբ. վկայիցն, հայցեմք յամենազօր բարերարէն Աստուծոյ, զի անսայթաք կենաւք պահեսցէ զաթոռակալ Ս. Յակոբա[յ] Տեառնեղբաւր Հայոց ազգի վիճակիս զտէր Գրիգոր սբ. Երուսաղէմայ հայրապետն...։

Բ

238 Ով հարք և եղբարք, Հիգանցի Յոհան պոռնիկ սևերես գրչիս մի ողորմի ասէք...[34]։

1270

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Մ3ԶԵՊ, VIII, № 2418

Գրիչ՝ Մարտիրոս երէց

61 Փառք..., որ ետ կարողութիւն և հասոյց ի ավարտ տառիս, որ կոչի սա Տետր ի թիւ, և կայ ի սմա հաւաքեալ սպասաւորութիւնն, և դրպրութիւնն, և քահանայութեանն, և շարականի քաղվածոյք։

Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, որ հանդիպիք սմայ լի սրտիւ, Աստուած ողորմի ասացէք գրչին՝ գրեցողին և կազմողի սորին։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՊետրոս [սրբասնեալ] կրօնաւորն, որ ետ գրել զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց, ամէն, զոր Աստուած բարով վայելել տացէ նմայ...։

Արդ՝ գրեցաւ սա ի թվին Հայոց ՌՁԹ (1640), ի յունի ամսոյ ի Ի (20), աւրն շաբաթ, ընդ հովանեա[ւ] Ս. Գրիգորայ, ձեռամբ անարժան Մարտիրոս երիցու։ Վա՜յ ինձ Ռ (1000) բերան, որ անուն ունիմ և գործս ոչ։ Աղաչեմ զձեզ, որ հանդիպիք սմայ, անմեղադիր լերուք, զի կար իմ այս չափ էր։ Եւ որ յիշէ...։

1271

ԱԻԵՏԱՐԱՆ

Մ3ԶԵՊ, VIII, № 2670

Գրիչ՝ Կիրակոս
Վայր՝ Աւրնդանց

ա

Փառք...։ Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից սրբոյ Սիովնի, Սիմէոն քաջ բա-

[34] Ցուցակում նման երկու հիշատակարան էլ կա։

բունապետն, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախաւս այսմ մարգարտաշար լուսափթիթ սբ. Աւետարանիս, և ետ գրել յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, ի միտ առեալ զբանն Եսայայ, որ ասէ. «Երանի...»[35]։ Վասն այն յուսոյն ետ գրել զսբ. Աւետարանս, և զարդարել ետ ոսկւով և երանգ երանգ ծաղկով, յիշատակ իւրն և իւր ծնողացն և ամենայն արեանառու մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոցն. նաև սբ. հօրն իւրոյ հոգևորի՝ Կարապետ գիտնական բարբունապետի, որ հանգուցեալ է առ Քրիստոս, և եղեալ կայ Յերուսաղէմ քաղաքս ի Ս. Փրկչի եկեղեցին։

Եւ արդ՝ յետինս ի կարգաւորացս և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, անարուեստս ի գիրս գրչութեան՝ Կիրակոս անարժանս, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. «Յոր կոչումն կոչեցար ի նմին կացջիր»[36]։ Եւ արդ՝ իմ ոչ բերելով զայսպիսի վստահութիւն, այլ ունայն յամենայն բարէվայելչութենէ...։

282 Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախաւս և զաստուածաբնակ տառս... ի լաւ և յընտիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և ՁԹ (1640) ամին, ի գիւղս որ կոչի Աւրնդանց, յանդիման Ապարանից Ս. Խաչին, ընդ հովանեաւ աստուածաբնակ սբ. տաճարացս՝ Ս.Պետրոսի և Պօղոսի, և Ս. Գէորգեա[յ] զօրավարին, ի հայրապետութեան հայկազեան սեռի՝ էջմիածնին տեառն տէր Փիլիպպոսին, և ի մերոյս կաթողիկոսութեանն Աղթամարայ տեառն տէր Ստեփանոսի, ի թագաւորութեանն այլասեռից սուլթան [Ի]բրահիմ խոնդքարին, և ի մերոյս պարոնութեան Աւդալ բէկին, ի դառն և ի նեղ և ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց։ Քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւնն և նեղութիւնն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս Հայոց։ Զոր յուսամք և խնդրեմք և հայցեմք ի յամէնառատ քաղցր կամք մարդասիրէն Աստուծոյ, որ վերստին նորոգեսցէ, կանգնեսցէ և հաստատեսցէ զաթոռ և զգաւազան իշխանութեան զհայրապետին մերոյ և զթագաւորին, յառաջին սէր և ի միաբանութիւն, և աներկիւղ, և անվնաս պահեսցէ զազգս Հայոց յամենայն հէնից և հնարից սատանայի, ի պէսպէս չարաց և փորձանաց՝ ներքո և արտաքոյ. ամէն։

Արդ՝ որք ճաշակէք յամէնառատ սեղանոյս, և վայելէք յաստուածային բուրաստանէս, և հանդիպիք տեսութեան սբ. Աւետարանիս՝ կարդալով կամ աւրինակելով և կամ հարևանցի տեսանելով, զաւելորդն բառնայք և զպակասութիւնն լնուք, և խոշորութեանս, և սխալանացս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ, զմանկունսդ սբ. եկեղեցւոյ, զի լի սրտիւ և բոլոր հաւատով, անարժան Կիրակոսիս Աստուած ողորմի ասացէք, և մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և ծնաւղաց իմոց Մուսէսին և Թուխկին, և կենակցին իմոյ՝ Մրաքին, և իմ զաւակացն՝ Մուսիսին և Գոհար մահդասուն, Գօզալին և ամենայն արեան մերձաւորաց իմոց. ամէն։

35 Եսայ., ԼԱ, 9։
36 Ա Կորն. է, 20, 24։

Բ

Ծաղկող՝ Յովանէս Ղաուէցի

Ով ընթերցողք լուսազարդ սբ. Աւետարանիս, աղաչեմ զձեզ լալով և կողկողագին պաղատանաւք, յիշեսջիք զիս զանարժան ծաղկողս՝ զՅովանէս Ղաուէցիս, նաև զծնողքն իմ, զհայրն իմ՝ զտէր Յովանէս, որ փոխեցեալ է առ Քրիստոս և զմայրն իմ՝ զՇահնում, և զեղբայրն իմ՝ զՀայրապետ, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ յաստի կենացս առ Քրիստոս և եթող մեզ սուգ ժամանակաւոր, և քրւերցն իմ՝ Խանաղին և Մարգարտին, Մուաթին, Թաւէզին և Եղիսաբեթին, որ փոխեցեալ է առ Քրիստոս, և կենակցին իմոյ՝ Շահնումին, և զաւակացն իմոց՝ Հայրապետին և Յոհանէս սարկաւագին, Անդրէասին և Ազատին, և դստերացն իմոց՝ Հռիփսիմին, և փոխեցելոյն ի Քրիստոս Եղիսաբեթին և այլ ամենայն ազգականաց իմոց և մերձաւորաց...։ Այլ և զհոգևոր հայրն իմ՝ զՅովանէս Հիղանցին, որ բաղում աշխատանք ունի ի վերա մեղաւոր որդւոյս, թէ ի գիր և ի ծաղիկ ուսուցանել, թէ ի շարական և ի ձայնաւորք պաշտեցընել, զոր ինքն Քրիստոս Աստուած ընդ սբ. քահանայիցն դասակից և պսակակից արասցէ...[37]։

1272

ԺԱՄԱԳԻՐՔ

Մշբեպ, VIII, № 2695

Գրիչ՝ Թադէոս

315 *Փառք...։ Արդ՝ գրեցաւ փրկական սբ. խորհուրդս պատարագի և Աղօթամատոյցս հասարակաց աղաւթից...։ Արդ՝ գրեցաւ ի թվականութեանս մեր ՌՁԹ (1640) ամին, ձեռամբ անարժան Թադէոսի։ Ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց՝ և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

---

[37] Ցուցակի միևնույն էջում մի փոքրիկ հիշատակարան էլ կա, ուր հիշվում է ստացողի՝ Սիմեոնի, և ծաղկողի անունները։



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՑԱՆԿԵՐ[1]

Օսմանյան սուլթաններ

Օսման Բ	1618—1622 թթ.։
Մուսթաֆա Ա (երկրորդ անգամ)	1622—1623 թթ.։
Մուրադ Դ	1623—1640 թթ.։[2]

Սեֆյան շահեր

Աբաս Ա	1587—1628 թթ.։
Սեֆի Ա	1628—1642 թթ.։[3]

Ղրիմի խաներ

Ջանիբեկ-Գիրեյ Բ	1610—1622 թթ.։
Մուհամեդ-Գիրեյ Դ	1622—1627 թթ.։
Ջանիբեկ-Գիրեյ Բ (երկրորդ անդամ)	1627—1635 թթ.,
Ինաեթ-Գիրեյ	1635—1638 թթ.։
Բահադուր-Գիրեյ	1638—1642 թթ.։[4]

Լեհաստանի թագավորներ

Սիդիզմունդ Դ Վազա	1587—1632 թթ.։
Վլադիսլավ Դ Վազա	1632—1648 թ..։

Քարթլի թագավորներ

Սվիմոն Բ	1619—1629 թթ.։
Ռոստոմ Ա	1630—1658 թթ.։

Կախեթի թագավորներ

Թեյմուրազ Ա	1606—1648 թթ.,

---

[1] Առաջարկվող ցանկերի անհրաժեշտության և օգտագործված գրականության մասին տե՛ս սույն ժողովածուի Ա հատորի 756—757 էջերում։

[2] Մենույն տարեթվերն է նշում նաև Կ. Է. Բոսվորտն իր „Мусульманские династии" (М. 1971) աշխատությունում (էջ 185)։

[3] Ըստ Կ. Է. Բոսվորտի Աբաս Ա-ն իշխել է 1587—1629 թթ., իսկ Սեֆի Ա-ն՝ 1629—1642 թթ. (էջ 226)։

[4] Ըստ Կ. Է. Բոսվորտի՝ Ջանիբեկ-Գիրեյ 1610—1623 թթ.։
Մուհամմեդ-Գիրեյ Դ 1623—1627 թթ., (երկրորդ անգամ)։
Ջանիբեկ-Գիրեյ 1627—1635 թթ. (երրորդ անգամ)։
Ինաեդ-Գիրեյ 1635—1637 թթ.։
Բահատուր-Գիրեյ 1637—1641 թթ. (էջ 209)։

Ամենայն հայոց կաթողիկոսներ

Դավիթ Դ Վաղարշապատեցի	*1590—1629 թթ.։*
Մովսէս Դ Տաթևացի	*1629—1633 թթ.։*
Փիլիպպոս Աղբակեցի	*1633—1655 թթ.։*

Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներ

Մինաս Կարնեցի (Քացախ)	*1621—1632 թթ.։*
Սիմեոն Բ Սեբաստացի	*1633—1648 թթ.։*

Երուսաղեմի հայ պատրիարքներ

Գրիգոր Գանձակեցի (Պարոնտեր)	*1613—1645 թթ.։*

Կ. Պոլիսի պատրիարքներ

Հովհաննես Խուլ Կ. Պոլսեցի	*1621—1623 թթ.։ (երրորդ անգամ)։*
Գրիգոր Կեսարացի	*1623—1626 թթ.։ (երրորդ անգամ)։*
Զաքարիա Վանեցի	*1626—1631 թթ.։*
Հովհաննես Խուլ Կ. Պոլսեցի	*1631—1636 թթ. (չորրորդ անգամ)։*
Զաքարիա Վանեցի	*1636—1639 թթ.։ (երկրորդ անգամ)*
Դավիթ Արևելցի	*1639—1641 թթ.։*

Հռոմի պապեր

Գրիգոր ԺԵ	*1621—1623 թթ.։*
Ուրբանոս Ը	*1623—1644 թթ.։*

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ
ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ.



ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Օտար բառերը բացատրելիս նկատի ենք ունեցել ներկայացվող բնագրում տվյալ բառի կոնկրետ կամ մոտավոր իմաստը։ Բառերի ուղղագրությունը պահել ենք բնագրին համապատասխան։ Բառերի բացատրության համար օգտվել ենք Հակոբոս Պողոսյանի «Համառոտ բառարան ի տաճկակնէ ի հայ» աշխատության Բ հատորից (Վիեննա, 1841), Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի չորս հատորներից (Երևան, 1944—1945), «Древне-греческо-русский словарь», составил И. Х. Дворецкий, т. I, II, Москва, 1958, *և Ն. Ակինյանի «Միմէոն դպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն» (Վիեննա, 1936) աշխատությունից*[1]*։ Բառարանում ճշտումներ ու լրացումներ կատարեցին Բ. Լ. Ջուգասզյանը և Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։ Այնուամենայնիվ որոշ բառերի իմաստը չկարողացանք գտնել։*

Դործածված են հետևյալ համառոտագրությունները՝ արբ.—արաբերեն, երբ.—եբրայերեն, թրք.—թուրքերեն, լհ.—լեհերեն, հուն.—հունարեն, պրսկ.—պարսկերեն։

Ալլաս *(արբ.)—կերպաս, բեհեզ—241*
Աթմաշի *(թրք.)—հացթուխ, հացագործ—22*
Ամակ *(թրք.)—խնամք, երախտիք—2 և այլուր*
Ամր *տե՛ս էմր*
Ապրշում *(պրսկ.)—մետաքս—241*
Ասպանի *(պրսկ.)—ռազմիկ—137 և այլուր*
Արբշիռ *(պրսկ.)—գինեմոլ, շվայտ—665*
Արզ *ու մահսար (արբ.)—խնդրագիր, համախոսական—539*
Ասմար *(արբ., թրք.)—զինվոր—284 և այլուր*
Աւալ *(արբ.)—հնում, անցյալում—307*
Աւտապաշի *(թրք.)—սենեկապետ, հյուրանոցի տեր—868*

Բադան *(թրք.)—պարիսպ—614*
Բազար*—տե՛ս Ջարշու*
Բաղջապան *(պրսկ.)—այգեպան—868*
Բան *(լհ. պան)—պարոն, տեր, կալվածատեր—203 և այլուր*
Բարիշ (եցնել) *(թրք.)—հաշտ(եցնել)—535*
Բելիար *(երբ., հուն.)—ժանտ, սատանա, չար մարդ—463*
Բնիոն*—125*

Դալ*—տե՛ս Կրալ*
Գօր *(պրսկ., թրք.)—մահմեդականի գերեզման—137*

Դազկան *(պրսկ., թրք.)—հաստոց, գործասեղան—415*
Դախլ *(արբ., պրսկ.)—կապ, կապակցություն—535*
Դէտ *(պրսկ.)—տեսուչ, վերահսկիչ—593*
Դին *(պրսկ.)—հավատք, կրոն—535*

Եսսաիշի (f) *(թրք.)—պահակ(ներ), ոստիկան(ներ)—649 և այլուր*
Եկլէսիաստական *(հուն.)—եղեղեցական—424*
Ենկիչարի *(թրք. ենիչերի)—Օսմանյան բանակի քրիստոնյա ծագում ունեցող զինվոր—137 և այլուր*
Եւնակեդ } կամ և Նակեդ }
Եւրասդոն } կամ և Բասդոն } *—424*

Զախերա *(արբ.)—մթերք, պաշար—230*
Զառափխանչի *(պրսկ., թրք.)—փողերանոցի վարպետ—24*
Զարար *(արբ.., պրսկ.)—վնաս, վթար—241 և այլուր*
Զարբաֆ *(պրսկ.)—ոսկեհուռ, ոսկենկար—21 և այլուր*
Զէրպապշի *(պրսկ., թրք.)—կտավի վրա ոսկեթելերով գործող ոսկերիչ—241*
Զօրպայպաշի *(թրք.)—ապստամբության ղեկավար—522*

[1] *Օտար բառերի բառարան գտնվում է 421—457 էջերում։*

էնմար (արբ.)—էշ, ավանակ, հայերենում գործածվում է նաև հիմար իմաստով—296
էմր (արբ., թրք.)—Հրաման, օրենք, վճիռ—316, 539 և այլուր
էշքէր (պրսկ.՝ լշքե՞ր)—Զորք—652 և այլուր
էսպապ (արբ.)—Կարասիք, ապրանք, գործիք—653
էրիշ (թրք.)—Հոխորտալ—523

Ընկիչարի աղասի (թրք.)—Ենիչերիների պետ—522

Թազի (պրսկ.)—Բարակ, որսկան շուն—8
Թալան(ել) (պրսկ., թրք.)—Կողոպուտ, կողոպտել, ավարառություն—148 և այլուր
Թալաւ—522
Թաման(ութիւն)—Ագահ-ագահություն, ժլատ-ժլատություն, աչքածակ-աչքածակություն—790
Թապախ (արբ., թրք.)—Ափսե—318
Թարզի (նաև Թերզի, պրսկ., թրք.)—Դերձակ—314 և այլուր
Թաֆրար (պրսկ., թրք.)—Կրկին, դարձյալ—535
Թէզ (պրսկ., թրք.)—Արագ, շուտ, շտապ—352
Թէրճիման (արբ.)—Թարգման—559
Թուանկ (պրսկ., թրք.)—Հրացան—450
Թուքուն (պրսկ., թրք.)—Մխախոտ—598
Թույալաբ—241
Թօր (նաև Թօփ, թրք.)—Թնդանոթ—327 և այլուր
Թօր (թրք.)—Կտորի մեծ կապոց—241

Իմամ (արբ.)—Մահմեդական օրենսգետ, կրոնավոր—649

Լուսիս—596

Խազնայ (նաև Խազինայ, պրսկ.)—Գանձ(արան)—241 և այլուր
Խազնատար (պրսկ.)—Գանձապահ—327
Խաթր (արբ.)—Պատիվ, հարգանք—540
Խալի (արբ., թրք.)—Գորգ—241
Խալիֆ (արբ.)—Առաջնորդ, հոգևոր պետ, ամիրապետ—330 և այլուր
Խամխամ (արբ.)—Կրոնավոր—535
Խան (թրք.)—Իշխան, հյուրանոց—649
Խանդակ (արբ.)—Փոս կամ խրամ պարիսպների շուրջը—614
Խապար (արբ.)—Տեղեկություն, լուր—51 և այլուր
Խասաֆի—522
Խարան (արբ.)—Գլխահարկ, տուրք—326 և այլուր
Խարճ(ել) (արբ.)—Ծախս(ել)—54 և այլուր
Խափուճի (թրք.)—Արքունի պաշտոնյա—51 և այլուր
Խելաթ(ել) (արբ.)—Պարգև(ատրել)—327
Խրզբլպաշ տե՛ս Ղզբլզաշ
Խոնդքար (պրսկ., թրք.)—Արքա, թագավոր—150 և այլուր
Խսար(ել) (արբ., թրք.)—Պաշարում, պաշարել, շրջապատում, շրջապատել—598 և այլուր
Խսմաթ(քար) (արբ.)—Բախտ—630
Խուլա—տե՛ս Ղալա
Խուրպան (արբ., թրք.)—Մատաղ, զոհ—263
Խոյումչի (թրք.)—Ոսկերիչ—241
Խոջայ (պրսկ., թրք.)—Մեծ ուսուցիչ, վաճառական—24 և այլուր

Կալտի (թրք.)—Եկավ—645
Կաղամար (հուն.)—Գրչի և մելանի տուփ—415, 422
Կաղանպար—տե՛ս Կաղամար
Կապա (պրսկ.)—Վերարկու, պատմուճան—51
Կուֆ (արբ.)—Սպառնալիք—329
Կէօրէ (թրք.)—Նայած—539
Կլապիտոն (թրք.)—Նուրբ արծաթաթել—234
Կլիմ (հուն., արբ.)—Նահանգ—149
Կումաշ (արբ.)—Կերպաս—242
Կրալ (լհ.)—Թագավոր, կայսր—472 և այլուր
Կուռիկար—33

Հազիմ (նաև Հեֆիմ, արբ.)—Բժիշկ—333 և այլուր
Հալալ (արբ., թրք.)—Արդար, օրինավոր—140 և այլուր
Հախ (արբ.)—Վարձ—12
Հախլաշմիշ (արբ., թրք.)—Հաշտվել—723
Հապ (արբ.)—Դեղահատ—596
Հարամ (արբ., թրք.) Անարդար, անիրավ—204 և այլուր
Հէֆիմարան (արբ., թրք.)—Հիվանդանոց, բուժարան—566
Հասար (նաև Հիսար, Հսար—տե՛ս Խսար(ել)
Հիսապ (արբ.)—Հաշիվ—539 և այլուր
Հուկնա (արբ.)—Կլիզմա—596
Հունէր (նաև Հիւնէր, արբ.)—Փաստարկ, հիմնավորում—316 և այլուր
Հուրմ (արբ.)—Իշխանության հրաման—331 և այլուր

Ղաբի—տե՛ս Ղադի
Ղադի (նաև Ղաաի, Ղազի, արբ.)—Դատավոր—522, 535 և այլուր

Ղալա (արբ., թրք.)—Ամրոց, աշտարակ, բերդ —50, 71 և այլուր
Ղալատ(եցայ) (արբ.)—Սխալ, սխալվեցի—55 և այլուր
Ղայմախան (արբ., թրք.)—Կուսակալի տեղապահ—649
Ղայրաթ (արբ., թրք.)—Նախանձախնդրություն —329
Ղառիպ(ութիւն) (արբ., թրք.)—Պանդուխտ, օտար, պանդխտություն, օտարություն—114 և այլուր
Ղաֆիֆա (արբ.)—Թավիշ—234
Ղատուխչի (թրք.)—Գլխարկ կարող—535
Ղափուչի (թրք.)—Դռնապան—464 և այլուր
Ղըրլպաշ (թրք.)—Կարմիր գլուխ՝ պարսիկ—327 և այլուր
Ղլինչէ—588
Ղշի ըմպոնաղ—Թռչնորս—602
Ղորդ (թրք.)—Ճիշտ—539
Ղուլ (արբ., թրք.)—Ծառա, սպասավոր, զինվոր—51 և այլուր
Ղուլա—տե՛ս Ղալա

Ճամանաթ (արբ.)—Համայնք, բազմություն—186
Ճուարիշ (արբ.)—Մարսողական դեղ—596

Մալ (արբ.)—Հարստություն, գույք, ստացվածք—474
Մալադ (արբ.)—Անչափահաս, կրոնավոր—240 և այլուր
Մաճալ (նաև Մէճէլ արբ., թրք.)—Վայր, տեղ —55 և այլուր
Մաճլայ (արբ., թրք.)—Թաղ—12 և այլուր
Մաճիամ (արբ.)—Դատարան—535
Մաճզուլ (անել) (արբ.)—Պաշտոնից հեռացնել, իշխանությունից զրկել—522
Մաճուճ (արբ.)—Բուժահեղուկ՝ էլիքսիր—596
Մասխարայ (արբ., թրք.)—Խեղկատակ, ծաղրածու—753
Մէնլիս (արբ.)—Ժողով, հավաք—539
Մէշիթ (նաև Մէշիա, արբ., թրք.)—Մզկիթ՝ մահմեդականների աղոթատեղ—315 և այլուր
Միենան—596
Միր (արբ.)—Պետ—501
Միֆթաթ (արբ.)—Մահմեդական հոգևոր պետ—315
Մոնրել—տե՛ս Մոնրել
Մոնրել (արբ.)—Կնքել—315 535 և այլուր
Մոնոզոն (հուն.)—Մենակյաց, աբեղա—52 և այլուր
Մոսլեն (արբ.)—Ենթակա—329
Մուխաբարայ (արբ.)—Վտանգավոր—57
Մուղրի (արբ.)—Դպիր, կարդացող—315
Մուսէլիմ (արբ.)—Տեղապահ—463
Մօնր (արբ.)—Կնիք—235 և այլուր

Յորքալրխ (թրք.)—Մեշտեղ—575
Յիսար—տե՛ս Խսար(ել)

Նալպանդ (պրսկ.)—Պայտար—267
Նալու (արբ.)—Կանխիկ, առձեռն—241
Նամազ (արբ.)—Աղոթք (մահմեդականների) —315
Նաշար (պարս., թրք.)—Անճար, խեղճ, անզոր—122
Նու (հուն.)—Հարս—695

Շապուշ (պրսկ.)—Ուրախ լինել—177
Շարիաթ (արբ.)—Իսլամական իրավունք—535
Շէնրի (պրսկ.)—Քաղաքային—51
Շէրէաթ—տե՛ս Շարիաթ
Շորվանի (նաև Շուրվանի թրք.)—Զորավար, տեր—315, 522

Ոզիր (պրսկ. վեզիր)—Նախարար—463
Ոխվ (նաև Ոխֆ, Ոնվ)—տես՝ Վախմ

Զալասլի (թրք.)—Ազնվական, իշխան—171 և այլուր
Զավուշ (նաև Զաուշ, թրք.)—Զինվորական պաշտոնյա, ոստիկան—316 և այլուր
Զարշու (պրսկ.)—Շուկա, վաճառանոց—474 և այլուր
Զորպանի—տե՛ս Շորվանի
Զուխաշի (թրք.)—Նուրբ բրդե գործվածքի արհեստավոր—241

Պազար—տե՛ս Զարշու
Պալեմաղ—327
Պաճարշի (թրք.)—Համեմունք վաճառող—241
Պալի (արբ. պաղի՞)—Որոշ—643
Պաղչայ (պրսկ.)—Պարտեզ, այգի—675
Պարաթ (արբ.)—Մուրհակ—565
Պարիշ(ել) (թրք.)—Հաշտվել—327
Պաւսան (պրսկ.)—Բանջարանոց—344
Պէյլու (թրք.)—Հայտնի—540
Պոսաանեի պաշի (թրք.)—Թիկնապահ, անձնապահ—649
Պվեաիկոս (հուն.)—Բանաստեղծ, վարպետ, ստեղծագործող—408

Ջալալի (թրք.)—XVI դարի վերջում Օսմանյան կայսրության դեմ ելած ապստամբներ —724

Ջհանգիր (պրսկ.)—Աշխարհակալ—664

Ռայիս—տե՛ս Ռէս
Ռէս (արբ.)—Գյուղապետ—58 և այլուր
Ռզակ (արբ.)—Ունեցվածք, պաշար—278 և այլուր

Սակվան—535
Սաղ սալիմ (թրք.)—Ողջ, առողջ, քաջառողջ—272
Սայեատ (արբ., թրք.)—Ժամ—537
Սառաշ (արբ.)—Թամբագործ—486
Սատայ (արբ.)—Մաքուր, պարզ—326
Սարայ (պրսկ.)—Ատյան, պալատ,—51 և այլուր
Սարտաւայ (պրսկ., թրք.)—Ուզտի բրդից պատրաստված թաղիք—241
Սափար (նաև Սաֆար, Սէֆէր արբ.)—Ճանապարհորդություն, պատերազմ—586 և այլուր
Սինեաբ (արբ.)—Սկյուռ—241
Սիճիլ (նաև Սիջիլ արբ.)—Վճիռ, դատավճիռ, արձանագրել—542 և այլուր
Սորտաբելատ (հուն.)—Գլխավոր հրամանատար, զորավոր, զորապետ—186
Սուլյուշի (թրք.)—Գավառապետ, գործակալ—649 և այլուր
Սուրաթ (արբ.)—Պատճեն—542
Սուրխա (արբ.)—Անիրավություն—327
Սուրկուն (թրք.)—Աքսոր, տարագրություն—601 և այլուր
Սօխթայ (թրք.)—Հոգևոր դպրոցի ուսանող—653
Սօֆչի (թրք.)—Ոլխարի բուրդ ծախող—241
Սֆուֆ (արբ.)—Դեղափոշի—596

Վախմ (արբ.)—Եկեղեցուն նվիրված կալվածք—10 և այլուր
Վաշախ (պրսկ.)—Լուսանի մորթուց պատրաստված մուշտակ—651
Վերասիայ (թրք.)—Ապառիկ—318 և այլուր
Վեքիլ (արբ.)—Վերակացու, լիազոր, հոգաբարձու—559 և այլուր
Վոյթ—131
Վոյվոսաս (լհ.)—Վարչական միավորման պետ—799

Տալտպ (արբ.)—Պահանջ—263
Տաղաղայ (արբ.)—Թերթ—45
Տավտարտար (պրսկ.)—Գանձապահ, հաշվապահ, հարկահավաք—522
Տարազայ (արբ.)—Անգամ,—648
Տելեա (նաև Տէլէա, հուն.)—Սրբազան, իմաստուն, հռետոր—53 և այլուր
Տիֆթար (արբ.)—Մատյան, գիրք—673
Տոլվաթ (նաև Տօլվաա(ատր), արբ., թրք.)—Հարուստ, հարստություն, փարթամություն—25 և այլուր
Տօլի—344

Ուլեմայ (արբ.)—Իսլամական կրոնապետ—315
Ուսթայ (նաև Ուսաայ պրսկ., թրք.)—Վարպետ, ուսուցիչ—490 և այլուր

Փաղար (հուն.)—Քարանձավ, խորշ—408 և այլուր
Փատիշահ (պրսկ.)—Թագավոր—51 և այլուր
Փեղամպար (արբ.)—Մարգարե—330 և այլուր
Փոշիման (պրսկ.)—Ջղջում—598
Փէնեէրէ (պրսկ., թրք.)—Լուսամուտ, պատուհան—519

Քաբաբ (պրսկ.)—Խորոված—264
Քաշիշ (նաև Քեշիշ, պրսկ.)—Քահանա—330 և այլուր
Քելիմ (արբ., թրք., պրսկ.)—Ջեջիմ, կարպետ—241
Քիրամիտ (թրք.)—Կղմինդր, աղյուս—317
Քսեան—327
Քուլխան (պրսկ.)—(Բաղնիքի) հնոց—391
Քուրճի (թրք.)—Մուշտակակար, մորթեգործ—352
Քուրճիբաշի (թրք.)—Մուշտակակարների ղեկավար, պետ—535
Քուֆր (արբ., թրք.)—Հայհոյանք, անեծք—497

Ֆարֆայ (նաև Ֆէրվա, արբ.)—Մահմեդական հոգևոր առաջնորդի վճիռը—651
Ֆրայ—645 և այլուր

Օղուր (թրք.)—Պաշտպանություն, օգնություն—329

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Մի շարք դեպքերում նույնանուն անձնավորությունները, որոնք հանդես են գալիս իբրև գրիչ, ծաղկողի, ստացողի և այլոց մոտավոր և հեռավոր ազգականներ, նպատակահարմար գտանք առանձին շնչել։ Դրանք գրել ենք միասին, կլոր փակագծերում նշելով զանազան։ Այդպես ենք վարվել, երբ գրչի, ստացողի և այլոց ինքնությունը պարզ չի եղել։ Նույնանուն անձնավորություններին տարբերելու համար, անվան դիմաց նշել ենք նրանց ով լինելը՝ գրիչ, ծաղկող, ստացող, խոջա, քահանա և այլն։ Այդ նպատակով գործածել ենք հետևյալ համառոտագրությունները.

արե.—աբեղա
արքեպ.—արքեպիսկոպոս
գրչ.—գրիչ
գեր. աղտ.—գերությունից ազատող
դպր.—դպիր
եպս.—եպիսկոպոս
երց.—երեց
քագ.—քագավոր
խջ.—խոջա
ծղկ.—ծաղկող
կզմղ.—կազմող
կկղ.—կոկող
կթգ.—կաթողիկոս
հետ. ստց.—հետագայի ստացող
մհտս.—մահտեսի
նվրտ.—նվիրատու
նրգզ.—նորոգող
նրգ. տվղ.—նորոգել տվող
շին.—շինարար
ստց.—ստացող
սրկգ.—սարկավագ
վրդ.—վարդապետ
քհն.—քահանա
զան.—զանազան

Քանի որ անձնանունները չափազանց շատ են, նպատակահարմար գտանք Աստվածաշնչում և Ավետարանում եղած անունները, որոնք երբեմն գործածվում են հիշատակարաններում, չնչել։

Աբաս Ա (նաև Աբազ, Ապաս) Պարսից շահ— 12, 22, 33, 35, 76, 77, 97, 99, 100, 106, 107, 128, 136, 137, 150, 151, 155, 172, 179, 184, 186, 189, 209, 226, 262, 263, 266, 274, 294, 301, 311, 318, 319, 322, 323, 333, 335, 341, 354, 426, 427, 458, 478, 480, 531, 608, 631, 652, 662, 671, 724, 730, 746, 850
Աբդել—401
Աբդուլ, մհտս.—75
Աբդուլմսէ—144
Աբրահամ Լէճցի—722
— Կեսարացի, ստց.—364, 365
— Ջալապի, ստց.—509
— դպր. գրչ.—861
— երց., գրչ. (զան.)—780, 793, 862
— կրն., գրչ.—144
— քհն., գրչ.—782, 783
— եպս., ստց.—435
— քհն., ստց.—714
— Ուռումղալացի, ստց.—791
— ստց.—283
— նրգ. տվղ.—639
— նրգ. տվղ.—553
— արքեպ.—571
— քհն. (զան.)—144, 613
— (զան.)—3, 24, 43, 44, 73, 231, 234, 245, 254, 255, 307, 379, 382, 383, 387, 487, 493, 494, 546, 547, 601, 622, 677, 700, 735, 751, 782, 784, 845
— սրկգ.—807
Աբրահամյան Ա.—201, 479, 657

Արուլ—285
Արro—287
Ադսէնդ, գրչ.—754
Ադ—786
Ադամ (զան.)—24, 548, 683
Ադամ, տակառապետ—743
Ադոնց Ն.—423, 432
Ադրզուլ—826
Ազախ, խան—590, 858
Ազամսիբ (զան.)—616, 636, 666
Ազանփուշ—501
Ազատ (զան.)—89, 265, 308, 399, 404, 416, 870
Ազար—113
Ազարէ, ստց.—489
— (զան.)—35, 141, 189, 265, 401
Ազարիայ, գրչ.—180
— արև., գրչ. (զան.)—11, 12, 256
— կկզ.—219
— ստց.—826
— վրդ. (զան.)—4, 377, 396
— (զան.)—34, 35, 388, 454, 477, 660, 699
Ազարիեա Սասրնցի—30
Ազարիէ (զան.)—341, 849
Ազբանար—156
Ազդանդար—204
Ազբզ (զան.)—212, 622
Ազիզ, ստց.—361
— (զան.)—2, 40, 87, 414—416, 440, 456, 487, 547, 553, 714, 736, 759, 801
Ազիզփաշ (զան.)—248, 257, 582
Ազիեան (նաև Ազիշան)—492, 623
Ազլուխան—197
Ազմիկ—386
Ազնայուր (նաև) Ազնաւուր—228, 272
Ազնիւ—129, 169
Ազոի—774
Ազոիկ—488
Աբ—455
Աբամ—140, 155
Աբամազ—849
Աբամէլիք—19
Աբանաս Աղէքսանդրացի—371, 713
— եպս.—336
— ստց.—220
— Վաղիլարիոս—522
— պարոնտէր—180
— (զան.)—591, 628, 700, 744, 781
Աբանիս—705
Աբապակ—261
Աբիխան—250
Աբլազ—130
Աբլասխաթուն—564
Ալարախշ—789
Ալադատ—250
Ալամ (զան.)—83, 146, 149, 151, 153, 254, 255, 448
Ալանզու—753
Ալեքսան—480
Ալեքսանդրու Կոկոնուլ—358
Ալեքսանոս (զան.)—193, 313, 743
Ալէքսանոս Սանահացի, եպս.—835
Ալեքսիանոս, գրչ.—537
— (զան.)—359, 726, 795
Ալէքսան, կրն., ստց.—815, 816
—(զան.)—188, 400, 601, 659,791
— վրդ., Ղարահիսարի հոգևոր առաջնորդ—473
— մհտս.—773
— (զան.) վրդ.—406, 834
— ստց.—758
— (զան.)—143, 180, 456, 477, 789
Ալէքսիան—706, 707
Ալէքսիանոս, գրչ.—145
— (զան.)—20, 385, 455, 482, 774
Ալէքսանար. Ուլախաց երկրի թագ.—365
Ալբրն (զան.)—87, 468, 495
Ալբուն, կկզ.—45
— (զան.)—3, 19, 45, 271, 444, 445, 758, 810
Ալ[?]բունազա—185
Ալի, Համիթի փաշա—24
— Վանի փաշա—386
Ալիխան—501, 588
Ալիշան Ղ.—337, 361, 468, 632, 718
Ալիքսան, դպր., գրչ.—208, 209
Ալիքսանոս, սրկդ., գրչ.—590, 625
— (զան.)—87, 788
Ալի Օսման, Օսմանյան սուլթան—418, 664
Ալմախաթուն—141
Ալմաստ (զան.)—216, 782
Ալոմ—717
Ալպոյանեան Ա.—51, 120, 278, 361, 382, 398, 404, 502, 509, 580, 716, 752
Ալփիար—198
Ախանէս—554
Ախիեան (նաև Ախիշան, զան.)—193, 224, 259, 261, 524, 706, 731, 789
Ախիշան, խչ.—94
Ախլիփաշ (զան.)—302, 845
Ախսաբերբ—631
Ակինյան Ն.—9, 89, 199, 241, 243, 271, 314, 407, 423, 448, 480, 494, 499, 504, 603, 607, 636, 647, 703, 736
Ակոբ, գրչ.—616

— դպիր., գրչ.—413
— եպս.—435
— վրդ.—548
— ստց.—453
— (զան.)—2, 105, 255, 267, 494, 560
Ակորշայ Սօչովցի, գրչ.—476
Ակոն—443
Անզուենամէ—33
Անմատ, սուպհան—47, 59, 172, 236, 600, 688, 727
Անմէա փաշա—539
Անլի—114, 278, 461
Անլիճան—712
Անլիմամա—464
Աղա, սրկդ.—466
Աղաբաբ (զան.)—164, 423, 492
Աղաբաց—556
Աղաբէկ (զան.)—19, 141, 254, 259, 513, 630, 631, 733, 734, 813, 845
Աղագիշ—671
Աղագուլ—556, 789
Աղաղար Ճողցի—702
—գրչ., ծգկ.—245
— (զան.)—108, 164, 208, 293, 491, 632, 711, 725
Աղալալ—254
Աղախան—582
Աղանա՝, ստց.—112
— (զան.)—116, 200, 257, 349, 352, 654, 655, 766
Աղամ (զան.)—477, 766
Աղամաբ—755
Աղամալ (զան.)—106, 294, 435, 711
Աղամիր, խչ.—94
— (զան.)—19, 250, 268, 477, 703, 745, 757, 868
Աղամչան (զան.)—456, 631
Աղամուենաար—285
Աղանան—250
Աղանփաշ—588
Աղապէկ (նաև Աղաբէկ, զան.)—138, 205, 584, 789
Աղաչան, ստց.—200
— (զան.)—19, 91, 212, 297, 707, 789, 790, 849, 855
Աղասի (զան.)—552, 665, 848
Աղասօլթան (զան.)—19, 208, 435
Աղավալ—100, 101
Աղավնունի Մ.—190, 228, 272, 498, 576, 624, 635, 675, 744, 755, 828
Աղափիր—789
Աղբատեղ—449
Աղէկսանդր (Մակեդոնացի)—100, 609, 610
Աղէն (զան.)—267, 676
Աղէքսանդր—73
Աղէքսանոս, եպս.—557
Աղիբէկ—387
Աղիշան—273
Աղկոպ—646
Աղնա, մհտս.—592
Աղոբշէ—76
Աղվարդ—731
Աղտիբաբէ—108
Աղուբ (նաև Աղուպ, զան.)—18, 136, 517
Աղուբշ (նաև Աղուպշ, զան.)—517, 826
Աղուպշան—711
Աշփաշէ—33
Անասլիսան—529
Անապխան—754
Անառյան Հ.—22, 198
Անափ, ստց.—3, 4
Անափխան—735
Ամանփարի—113
Ամափարի—399
Ամբակում—827
Ամբրոզիոս—200
Ամերշայ Հալապլի, գրչ. ստց.—104, 105
Ամէնփաշէ—513, 631, 812
Ամէրսէթ—464
Ամիր, ստց.—560
— (զան.)—20, 44, 77, 221, 261, 456, 517, 519, 701, 790, 811, 825, 837
Ամիրազաա—849
Ամիրազիս (զան.)—258, 310, 385, 457, 458, 774, 850
Ամիրաղ (զան.)—250, 388
Ամիրաղա (զան.)—44, 241, 570
Ամիրաղէ—487
Ամիրաս Եղնկացի—541, 542
— գրչ.—146
— (զան.)—269, 519, 754
Ամիրասաբ (նաև Ամիրասաղ, զան.)—335, 400, 401, 610, 848
Ամիրասլան—225
Ամիրբէկ (նաև Ամիրպեկ, զան.)—212, 213, 265, 288, 308, 395, 629, 807
Ամիրգուլ—224
Ամիրգունայ (նաև Ամիրզօնայ, Ամիրկօնայ, Ամիրգաւնա) Երևանի խան—13, 97, 99, 178, 184, 226, 425, 426
Ամիրեկ—58
Ամիրզադ (նաև Ամիրղատ, զան.)—111, 250
Ամիրխան, ստց.—479
— (զան.)—44, 141, 208, 210, 216, 224, 245, 250, 340, 435, 458, 459, 493, 494, 517, 555, 706, 750, 755, 819, 824, 867

56—574

Ամիրեան, *խչ.*—94
Ամիրդուլ—208
Ամիրենեան—482
Ամիրշան, *գրչ.*—51
Ամիրշան, *ստց.*—224
— *գեր. ազտ.*—520
Ամիրշան (*նաև* Ամիրեան, *զան.*)—143, 210, 231, 250, 306, 456, 529, 654, 655, 666, 810, 811, 824, 846
Ամիրսաք—73
Ամիր Սարգիս (*զան.*)—105, 106, 265, 320
Ամիրսէր (*զան.*)—115, 267, 462
Ամիրտովլաք (*նաև* Ամիրտօլվաք)—286, 596
Ամիրում—415
Ամրտաւ—406
Այազ—519
Այգուն—89
Այլայ (*զան.*)—209, 508
Այլաբէկ—547
Այլաիան—326
Այլավէտ, *խչ.*—521
Այլմելիք—161
Այլպախիս—45
Այխաթուն—382
Այմէլիք—766
Այնելվլի, *մհտս.*—398
Այպէկ—519
Այվազ—547
Այվաթշ—417
Այտին, *ստց.*—586
Այտիշէ (*զան.*)—36, 496
Այտօղմիշս—790
Անախաք—413
Անախաթուն (*զան.*)—13, 342, 441, 517, 703, 804, 807
Անամ (*զան.*)—666, 711
Անայ (*զան.*)—78, 323, 345, 630
Անան—490
Անանէ (*զան.*)—265, 721, 750
Անանի—489
Անանիայ, *վրգ.*—238
— *քհն.*—11
— (*զան.*)—20, 21, 256, 269, 300, 454, 503
Անանիէ—141
Անասյան Հ.—842, 843
Անաստաս—222
Անաստասիայ—603
Անափայ—448, 670
Անդոն—*տե՛ս* Անառն
Անդրախաթուն—267
Անդրամելէք—664
Անդրէ—168
Անդրէաս, *գրչ.*—675
— *դպր.*, *գրչ.*—281
— *եպս.*, *նրգզ.*—509
— *եպս.*, *նվրտ.*—802
— *քհն.*, *ստց.*—536
— *խչ.*—710
— *արքեպ.*, *հոգևոր առաջնորդ Սէչովի*—799
— *հոգևոր առաջնորդ Վրաց երկրի*—806
— *եպս.*, *հոգևոր առաջնորդ Ս. Նշանի*—795
— *քհն.*—369
— (*զան.*)—198, 208, 215, 259, 267, 278, 322, 360, 417, 418, 562, 603, 659, 765, 785, 789, 796, 801, 870
Անդրի Կեսարացի—155
Անդրիաս Զելէպի, *ստց.*—39
— *դպր.*, *գրչ.*—708
— Արզրումցի, *վաճառող*—202, 203
— *ավագ քհն.*—313
— (*զան.*)—310, 341, 521, 776, 777
Անթառամ (*զան.*)—308, 729, 801
Անթուսան—836
Անենայ, *Մեսրոպ Խիզանցու քույրը*—102, 106, 141, 262, 563
— *սազմոսաց*—416
— (*զան.*)—228, 264, 271, 273, 335, 349, 380, 399, 400, 418, 433, 479, 490, 491, 501, 564, 588, 603, 611, 623, 627, 629, 675, 698, 711, 731, 848, 849, 855
Անեէ (*զան.*)—144, 411
Անոյշ—797
Անափբեկ—267
Անառն, *քհն.*, *գրչ.* (*զան.*)—498, 639
— *գրչ.*—475
— *երգ.*—546
— (*զան.*)—17, 196, 259, 275, 310, 395, 396, 407, 445, 486, 583, 702, 704, 758, 825, 835
Անտոն Սեբեբքոյենց, *գրչ.*—761
Անտրիկ—646, 647
Անուշ (*զան.*)—386, 693
Աշխիպէկ—388
Աշոտ—664
Աշոտ—73
Ապազայ (*նաև* Ապազ), *Արզրումի փաշա*—122, 125—127, 193, 256, 269, 272, 325—327
Ապաւ—556
Ապով—448, 670
Ապտալ, *մհտս.*—868
Ապտուլ (*զան.*)—36, 166, 238, 239, 328, 584, 781
Ապտուլա—269
Ապտուլմուսեն—788
Ապր, *խչ.*—314
Ա[?]ոպուխան—804

Ապուհար—584, 781
Ապով—766
Աչաբխան—826
Աչայիփխան—311, 312
Աչի—413
Առազել—335
Առաքել, գրչ.—701
— սաց.—657, 806
Առաքել Դավրիժեցի—6, 94, 328, 586
— Սիւնեցի—67, 525, 526, 594
— վրդ. (զան.)—509, 526, 721, 807
— եպս., Կեսարիայի հոգևոր առաջնորդ—752
— գրչ. (զան.)—220, 221, 235, 273, 274, 410, 474, 583, 584, 841
— ծղկ.—342
— Նրգզ.—175
— քհն., սաց.—766
— (զան.)—35, 58, 74, 76, 112, 116, 131, 140, 154, 176, 181, 223, 249, 268, 278, 287, 292, 293, 311, 323, 326, 345, 379, 393, 399, 401, 404, 405, 414—417, 450, 451, 492, 499, 508, 548, 552, 556, 563, 598, 619, 620, 640, 683, 706, 750, 752, 758, 798, 818, 836, 848
Առբսակէց—655
Առիան—485
Առիստազէս, Բառգրքի հեղինակ—424
— Հարբերդցի—288
Սոիստակէս վրդ., սաց.—375, 376
Առիւծ—811
Ասանեթ (նաև Ասանէթ, զան.)—105, 164, 300, 335, 400, 848
Ասապով—267, 562
Ասատուր, գրչ.—259
— (զան.)—261, 520, 547, 767
Ասար Սեբաստացի—6, 14, 63
— (զան.)—503, 735
Ասլամազ (զան.)—401, 519, 825
Ասլան (զան.)—34, 44, 47, 455, 503, 519, 570, 617, 633, 845
Ասլեկ—210, 211
Ասլի (զան.)—221, 285, 786
Ասլիզատէ—854
Ասլիխան—711
Ասլխան—566
Ասիրջան—824
Ասմար—769
Ասմի—722
Ասպատուր, սաց.—518
Աստամասադ—73
Աստզիկ—659
Աստուր—436
Աստուածատուր Ջոմփէնց, գրչ.—410
— Մերտենցի, գրչ.—159
— դպր., գրչ. (զան.)—232, 233, 277, 343, 390, 503, 509, 729, 797
— երց., գրչ. (զան.)—445, 538, 539, 676, 805
— սրկդ., գրչ. (զան.)—207, 229, 230, 268, 375, 376, 523
— քհն., գրչ. (զան.)—123, 581, 607, 687, 691, 722
— գրչ. (զան.)—11, 102, 197, 232, 392—394, 471, 497, 839
— քհն., գեր, ազտ.—260
— քհն., սաց. (զան.)—495, 557
— սաց. (զան.)—117, 353, 622, 642, 672, 701, 707
— արհեպ., Արարատյան թեմի հոգևոր առաջնորդ—202
— վրդ., Երուսաղեմի հոգևոր առաջնորդ—559, 560
— Պիճեաքազաչի—770
— Սեբաստացի—25
— Տիվրիկցի—316
— Ուրճայեցի, գրչ.—792
— Ուրհայեցի, լուսարար—493
— եպս.—7, 119
— սրբագրիչ—660
— քհն. (զան.)—188, 360, 406, 449, 562, 620, 755, 795
— (զան.)—13, 45, 48, 58, 60, 63, 70, 73, 80, 83, 135, 136, 144, 154, 155, 185, 189, 209, 222, 228, 246, 294, 307, 325, 339, 341, 364, 369, 379, 391, 420, 434, 445, 451—453, 493, 498, 513, 514, 524, 560, 563, 569, 570, 582, 590, 600, 605, 631, 559, 672, 705, 709, 717, 729, 733, 789—791, 798, 799, 807, 810, 812, 819, 827, 835, 844, 852—855, 858, 867
Աստուր—805
Ասֆանդար—819
Ասֆու. տե՛ս Սեֆի
Ավան (զան.)—533, 556
Ավանէս—184
Ավդրլմսե—411
Ավետիս—228
Ավէտ, սաց.—518
Ավէրիս—287
Ավոէ—384
Ավրան (զան.)—642, 800
Ատիրէկ (զան.)—206, 265, 766
Ատիրէն—547
Ատիխաթուն—326
Ատինան—221
Ատիպեկ—288

Ատոմ (զան.)—26, 92, 231, 554, 555, 613, 776, 810, 811, 837
Ատմիշա (նաև Ատոմշա)—3
Ատում—775
Արաիշ, խչ.—703
Արայնու—456
Արդարոց—643
Արև—584, 852
Արևխաթուն (զան.)—306, 307, 823, 824
Արզու—269, 819
Արզուխան (զան.)—616, 754
Արզուն (զան.)—13, 185, 417, 443
Արզոքան—249
Արզուքան—156
Արթուն—տե՛ս Գրիգոր Լուսաւորիչ
Արիոս—321
Արիստաղէս (նաև Արիստակէս) Խարբերդցի, վրդ., հեռ., ստց.—124, 125, 128, 134, 135, 500
Արիստակէս Ակընցի, գրչ.—788
Արիստակէս, Սյունեաց հայրապետ—659, 660
— Սեբաստացի, երց., գրչ.—832, 833
— Մուշի հայրապետ—390
— երց., գրչ. (զան.)—353, 469, 470, 532, 644
— եպս.—709
— վրդ., ստց. (զան.)—72, 91, 607, 803
— վրդ. (զան.)—95, 178, 430, 548, 702, 705, 764
— (զան.)—76, 103, 104, 142, 171, 289, 360, 388, 603, 604, 660, 690, 703
Արիստոտել (նաև Արիստոտէլ)—656, 739
Արձան—371
Արղուբաբէկ—524
Արղուբէցիք—807
Արղուն—105
Արմաղան—435
Արսէն (զան.)—111, 764
Արուբեն—788
Արուբիւն—341
Արուս—485, 845
Ափիսակ—546
Ափկար—401
Աւաք Լծենեցի, նվրտ.—184
Աւագ քհն., գրչ. (զան.)—398, 399, 533, 534, 658
— կզմզ.—210, 305
— կկզ.—765
— ստց.—237, 318, 319
— (նաև Աւաք, զան.)—13, 44, 98, 153, 186, 222, 223, 259, 285, 310, 328, 399, 458, 459, 666, 700, 752, 767, 768, 822, 846
Աւաղչան—189
Աւան—699
Աւանէս—255
Աւատան, ստց.—558
Աւզսէնդ (նաև Աւքսէնդ, զան.)—24, 204, 377, 643
Աւզսէնտիոս Իլովցի—165
Աւդալ բէկ—869
Աւզիշ—413
Աւեդ—436
Աւետ գրչ.—813
— (զան.)—437, 810
Աւետանան—671
Աւետիս Գանձակեցի, հոգևոր առաջնորդ Կտուց անապատի—809, 810
— հոգևոր առաջնորդ Պոնտոսի—714
— Թացուեցի, գրչ.—666, 667, 859
— Կորեկսեց—231
— Զալատի—509
— Պոնտացի—398
— կթղ. էջմիածնի—59, 748, 749
— գրչ. (զան.)—71, 340, 341, 439, 440, 668
— քհն., գրչ. (զան.)—210—212, 506, 507, 626, 714, 719, 720
— ստց. (զան.)—143, 144, 439, 440, 601, 626, 846, 847
— գեր. աղտ.—418
— ծղկ.—768
— կզմզ.—528, 553
— եպս.—416
— վրդ.—388
— (զան.)—68, 73, 91, 92, 106, 112, 141, 143, 147, 148, 156, 157, 185, 216, 221, 226, 231, 240, 249, 250, 275, 287, 297, 302, 306, 379, 387, 388, 395, 422, 436, 443, 446, 487, 490, 534, 535, 551, 555. 556, 621, 622, 635, 776, 801, 810, 811, 819, 845, 857
Աւետիք Արզրումեցի, գրչ.—784
— Ջուղայեցի, ստց.—596, 597, 610
— Տամաժիրսքեց, գրչ.—501, 787
— գրչ. (զան.)—120, 384, 403, 410, 411
— Տրապիզոնի հոգևոր առաջնորդ—541, 542
Աւետիք (նաև Աւետիկ, զան.)—14, 77, 90, 100, 101, 106, 113, 162, 187, 194, 222, 246, 262, 310, 337, 360, 364, 401, 405, 416, 423, 449, 456, 480, 493, 494, 545, 564, 567—569, 583, 630, 646, 676, 694—696, 711, 849
Աւէտ, գրչ.—765
Աւէտ (զան.)—20, 250, 262, 387, 388, 422, 554, 776
Աւթար—564
Աւիկ, գրչ.—420, 478

Ալիտ—94
Ալֆայպէկ—562
Ալիտէ—562
Ալլան—262
Ալլանգէրակ (նաև Ատլանգէրաֆ)—33, 399
Ալլանփաշ (զան.)—293, 582, 656
Ալնտ—266
Ամենոլպանար—798
Ատալ—260
Ատրիֆան—675
Ամսենդ (նաև Ամսէնա)—358, 361

Բաբ—610
Բաբա—346, 411
Բաբամ—265
Բաբաշան (զան.)—106, 776
Բաբաւ—տե՛ս Բաբօ
Բաբամ (զան.)—73, 143, 621
Բաբէ (զան.)—34, 40, 225, 475, 766
Բաբիկ—148
Բաբօ—662, 666
Բագ—556
Բագիրճեան—325
Բագրատունիք—468
Բագուսաղ—808
Բադալյան Հ.—332
Բադրիխան—141
Բաղ (զան.)—486, 555, 612
Բազէ—819
Բալոյ—265
Բալուէ—827
Բախդեար (նաև Բախդիար)—677, 678
Բախշում—812
Բախտիար—223
Բակիխան—144
Բանատուր—815
Բանար Երիշանենց—451
Բանար—631
Բաղդասար (նաև Բաղդասար, զան.)—21, 35, 218, 244, 250, 258, 262, 328, 335, 345, 401, 465, 487, 517, 626, 774, 815, 849
Բաղշի—189
Բաղշի (նաև Բաղշի)—810, 811
Բաղչ—765, 766
— —311
Բաղչագուլ—434
Բաղտասար դպր., դրչ.—434, 435
— սաց.—323
— Ջուղայեցի (զան.)—264, 769
Բաղու—808
Բաղում (զան.)—346, 401, 631, 632, 703
Բաճ—153
Բայիսատուլ—414
Բանաչ (զան.)—293, 305
Բանկ—26
Բաշարաթ (զան.)—528, 635, 750, 840, 857, 867
Բաշիաշուի—550
Բաշխէ—274
Բաշխի—275
Բաշխում—513, 631
Բապախան—342
Բաշի—492
Բասիլիոս—91
Բատիշտէ—631
Բարսկիասէր—34
Բարաղամ Սեբաստացի, դրչ.—795
— սրկդ., դրչ.—777, 778
— տնտես—743, 772
— խչ., սաց.—449, 450
— (զան.)—21, 105, 106, 450, 514
Բարամ—621
Բարամիազ—450
Բարգիշատ—221
Բարդուղիմէ, դրչ.—47
Բարդուղիմէոս քհն., դրչ.—386
Բարդուղիմէոս (նաև Բարդողիմէոս, Բարդողիմոս, զան.)—480, 602, 700
Բարեֆ—804
Բարդաղ, դրչ.—326
Բարզատէ—262, 265
Բարիսղթան—307
Բարդամ, դրչ. (զան.)—143, 213, 679, 795, 796
— ծղկ.—734
— (զան.)—513, 631, 786, 813
Բարսեղ Անեցի, կթղ. Հայոց—428
— Խորանաշատի հոգևոր առաջնորդ—786
— Կեսարացի—16, 192, 199, 283, 371, 372, 588, 647, 651, 730
— Համիթի հոգևոր առաջնորդ—24, 36, 47, 152, 163, 166, 230, 238—240, 319, 323, 339, 376, 394, 404, 413, 454, 499, 526, 527, 530, 580, 583, 584, 597, 620, 696
— Ուռուշաեցի, սաց.—328
— Մուշի հոգևոր առաջնորդ—640
— պարոնտեր—531
— Գաւառցի—377
— Մարմանեցի—377
— Մշեցի, կղմզ.—578
— երց., դրչ. (զան.)—188, 266, 267, 400, 655
— վրդ., դրչ.—239
— քհն., դրչ. (զան.)—716, 751—753, 817

— վրդ., ստց.—585
— վրդ. (զան.)—25, 89, 228, 329, 331, 422, 454, 781,
— (զան.)—91,, 216, 295, 369, 380, 399, 431, 444, 445, 543, 562, 613, 660, 702, 704, 762, 807
Բարնարդար—569, 570
Բարոդդ Վ.—455
Բարում—563
Բարունակ, դպր.—102
— —82
Բեզի—221
Բեկիխաթուն—287
Բեկիսիան—810
Բեկում—108, 164, 193
Բերամիր—405
Բէզ (նաև Բէկ, զան.)—285, 556, 764
Բէկաղ—846
Բէկաղէ—217, 303
Բէկզադ—250
Բէկի (նաև Բէկոյ, զան.)—254, 341, 435, 517
Բէկլար—533
Բէկիջան (զան.)—18, 75, 300, 388, 477, 621
Բէկիսխան (զան.)—487, 555, 811, 837
Բէկիսալբան (նաև Բէկիսուլբան ,Բէկիսօլբան, զան.)—19, 176, 295, 341, 757
Բէկու—734
Բէկումաղէ—285
Բժշկյան—282, 338, 404
Թիբ—260
Թիֆայ—285
Թկիսխան—487
Բոզնիֆ—468
Բրբուլ—435
Բուզանդոս—747
Բուլուբ, ստց.—725
Բունիաթ, դրչ.—402
— (զան.)—703, 789
Բուտախ—547, 766
Բուրասան—725
Բուրսամ—114, 115
Բուրսէ—19
Բուրսի—19
Բոնեվանբուր—106

Գաբրիէլ, արհ., դրչ.—76
— երց., դրչ.—170
— գեր., ազտ.—663
— ստց. (զան.)—160, 161, 704
— վրդ.—588
— (զան.)—77, 434, 603, 752
Գազաթ—765
Գազդար—443
Գաիանէ—273
Գալեմքյարյան Գ.—537
Գալուց (զան.)—248, 436
Գալպակ—754
Գալուստ, դրչ. (զան.)—202, 744
— նրդզ.—70
— կզմզ. (զան.)—37, 469
— սրկդ.—643, 726
— (զան.)—45, 105, 106, 180, 279, 440, 441, 475, 552, 571, 727, 744
Գանանպետ—735
Դայիան (զան.)—212, 232, 379, 517, 707
Դայիանէ (զան.)—449, 491, 492, 623, 776
Դայվայր—626
Դայրիան—492
Դանջում—106
Գառնիկ Գառնեցի—548
Գասբար Թարեացի, զրչ.—154
Գասբար (նաև Գասպար), երց., զրչ. (զան.)—12, 293, 294, 307, 308, 318, 362, 363, 379, 420, 437, 438, 451—453, 513, 514, 560—562, 605, 735, 736
Գասպար քհն., զրչ. (զան.)—493, 623, 624, 823, 824
— Ակրնցի—507
— քհն., մագազաթ ճարոզ—690
— ստց.—814
— Մեսրոպ եպիզանցու աշակերտ—261
Գասպար (նաև Գասբար, զան.)—10, 155, 262, 276, 303, 326, 328, 335, 357, 359, 400, 419, 530, 562, 602, 603, 623, 671, 685—688, 695, 775, 778, 782, 848
Գարանա—193
Գարիան—786
Գարիանայ, կզմզ.—260
Գարիանէ (զան.)—77, 251, 836
Գարունվարդ—147
Գլսաան—765
Գաւզալ, ստց.—634
— (զան.)—21, 77, 245, 254, 517, 544, 662, 808, 819
Գաւզալաղ—341, 786
Գաւզալաղէ—524
Գաւզիկ—465
Գալանփաշէ—517
Գաւլիջան—517
Գաւլխաթուն—517
Գաճար—622
Գաճարսօլբան—562
Գաուսանդուխն—520
Գաֆար (զան.)—551, 731
Գաֆարսուլբան—267
Գենեվարդ—544

Դեորգ—348
Դեորմ—627
Դէորգ, Բալուի հոգևոր առաջնորդ—637
— Կարինցի—72
— Հակոբ Կարնեցու հայրը—583
— վրդ. (ձան.)—424, 470, 754
— (ձան.)—39, 698, 767, 821
Դիլան—449
Դիլման—815
Դինէոս քհն., սրբագրիչ—595
Դինոս երց., գրչ.—324—326
— ստցղ.—155, 156
Դինոս—221
Դիշ—329
Դիշիպլիկ—206
Դիրիմար (ձան.)—182, 790
Դոզալ (ձան.)—464, 820, 824
Դոզալաղայ—21
Դոլոշ—58
Դոլսաան—765
Դոնար (ձան.)—45, 89, 193, 276, 299, 379, 513, 619, 624, 626, 630, 636, 687, 689, 760, 766, 799, 813, 869
Դորզամիր—216
Դոր—629
Դտուն—404
Դտուրիկ—300
Դրիզոր Աստուածաբան—647
— Արնշոյ—377
— Դանձակեցի (նաև Դանձասարեցի, Դանջայեցի, Ղափանցի) Երուսաղեմի հոգևոր առաջնորդ—32, 55, 87, 110, 113, 153, 159, 167, 172, 180, 187, 190, 205—207, 272, 278, 315, 330, 354, 391, 399, 444, 445, 447, 448, 456—458, 461, 463, 468, 493, 495, 499, 504, 506, 512, 528, 535, 559, 572, 573, 575—577, 580, 584, 585, 635, 646, 674, 675, 681, 686, 688, 715, 745, 746, 749, 750, 755, 762, 779, 821, 833, 837, 850, 855, 856, 863, 864, 866—868
— Դառնուկենց—857
— Դարանաղցի—52—56, 59, 61, 121, 470, 481, 506, 507, 513, 601, 680, 724, 756
— Եղեսացի—175
— Երևանցի—286, 287
— Զեյթունցի—512, 528
— Լեճցի—172
— Լուսաւորիչ—22, 41, 257, 321, 329, 333, 412, 428, 429, 456, 494, 539, 540, 573, 577, 649, 651, 748, 749, 765, 850, 854, 856
— Խիզանցի—852
— Մեհենց Ալաթեցի—81, 87, 222, 642, 726, 745
— Մործորեցի—789
— Կամախեցի տե՛ս Դրիզոր Դարանաղցի
— Կոզոնացի, գրչ., ծզկ.—195, 196, 834, 835
— Հռոմկլացի—88
— Ղայսարցի—377, 638
— Մարաշեցի—411
— Նարեկացի—161, 216, 283, 527, 591, 761, 762
— Նշեցի, գրչ.—29
— Շապիզարանիսարցի, կզմզ.—770
— Զոլուցի, գրչ.—791, 792
— Պարթև—371
— Ջուղայեցի (ձան.)—78, 553, 555, 674
— Սեբաստացի, գրչ.—62
— Սբսցի—646, 647
— Սուրեցի—152
— Վանեցի—422, 612
— Վարազեցի—498
— Տաթևացի—107, 320, 321, 337, 345, 377, 389, 405, 433, 447, 526, 548, 701, 738, 854
— Տարոնացի—377
— Տղայ—430
— Տոմաժիրոմի, ստց.—165
— դպր., գրչ.—(ձան.)—682—685, 863
— աբե., երց., քհն., գրչ. (ձան.)—74, 88, 112, 196, 218, 219, 237, 297, 382, 384, 390, 414, 417, 418, 473, 487, 508, 569, 570, 599, 630, 693, 713, 807
— գրչ. (ձան.)—9, 37, 65, 187, 303, 336, 383, 392, 404, 407, 415, 557, 618, 710
— ծզկ. (ձան.)—397, 398, 713
— Նրգդ. (ձան.)—14, 73, 75, 181
— Զամոսցացի, ստց.—787
— ստց. (ձան.)—33, 87, 130, 245, 266, 267, 337, 379, 381, 408, 409, 561, 562, 643, 772, 784, 814, 853—855
— վրդ., Կեսարիայի հոգևոր առաջնորդ—40, 361, 382, 499
— Կեսուրացի, Կ. Պոլսի հոգևոր առաջնորդ—315, 424, 521, 522, 536, 539, 592, 600, 679, 680, 828
— Թեքիրդաղի հոգևոր առաջնորդ—542
— Դանձակի հոգևոր առաջնորդ—560, 772
— կթղ. Հայոց—32
— Մեհրուն տե՛ս Դրիզոր, Կեսարիայի հոգևոր առաջնորդ
— վրդ.—528
— եպս. (ձան.)—336, 423, 557

— վրդ. (զան.)—11, 33, 86, 123, 244, 245, 398, 445, 548, 554, 605, 608, 612, 636, 675, 755, 757, 759, 840
— աբե., երց., քհն. (զան.)—21, 24, 52, 337, 400, 431, 446, 469, 480, 670, 723, 759
— տե՛ս Սրապիոն, կաթողիկոս Հայոց
— կկղ.—727
— եպս., ուսուցիչ—515
— նահատակ—404
— վարպետ—867
— քարտուղար—406
— (զան.)—18, 19, 24, 32, 33, 58, 68, 72, 76, 79, 82, 88, 91, 102, 103, 106, 111, 119, 120, 123, 131, 147, 148, 152, 154, 156, 164, 168, 176, 185, 193, 198, 208, 210, 216, 221, 230, 232, 234, 240, 245, 246, 254, 258, 262, 265, 273, 274 276, 280, 281, 285—287, 295, 303, 305, 307, 339, 353, 358, 361, 364, 373, 378, 385—388, 399, 402, 404, 417, 419, 423, 435—437, 442, 443, 449, 450, 456, 464, 466, 479, 483, 486, 491, 492, 494, 496, 517, 529, 535, 537, 544, 556, 562—564, 571, 577, 578, 584, 589, 603, 619, 624, 628, 636, 642, 645, 659, 661, 663, 665, 672, 673, 675, 684, 698, 699, 705, 711, 719, 721, 729, 731, 735, 743, 744, 747, 750, 754, 755, 758, 762, 765, 766, 771, 774, 776, 782, 784, 785, 790, 793, 801, 804, 811, 819, 821, 827, 833, 835, 836, 841, 845, 847, 849, 852, 856, 862, 867, 868
Գրիգորէս (զան.)—53, 60, 249, 807
Գրիգորիս, Գանձասարի հոգևոր առաջնորդ—786
— կթղ.—234
— (զան.)—106, 108, 121, 185, 266, 563, 566—569, 576, 680
Գրիգորիոս—320, 321
Գրիգորշայ, դատավոր—589
Գուարսուլթան—266
Գուզալ (զան.)—249, 295, 810, 820
Գուլ—440, 441
Գուլուղ (զան.—43, 204, 205, 387, 388, 436, 437, 480, 518, 635, 764, 766, 776, 857
Գուլադա (նաև Գուլաղէ, զան)—2, 19, 44, 98, 477, 655
Գուլամ—66
Գուլամբար—477
Գուլամիր (զան.)—19, 254, 255, 703, 745, 866
Գուլան—786
Գուլասար (զան.)—775, 868
Գուլաւ—556
Գուլաւզար—441
Գուլբանար (նաև Գուլբեար, զան.)—141, 143, 311
Գուլբար—729
Գուլբէկ (զան.)—435, 570
Գուլզուլ (զան.)—164, 387, 436
Գուլլաստ—610
Գուլդաստէ—141, 631
Գուլզադ—249
Գուլբսանան—311
Գուլբէզէ—441
Գուլի (զան.)—221, 560, 562, 790
Գուլիբախչէ—210
Գուլիբաղչէ—422
Գուլիխաթուն—547
Գուլիխան (զան.)—221, 836
Գուլիխաս (զան.)—221, 570, 853
Գուլիկ—529
Գուլիհասլ—91
Գուլիմոր—387
Գուլինար (զան.)—547, 818
Գուլիջան (զան.)—185, 216
Գուլիս Նաճրոնեցի—789
Գուլիսսան (զան.)—73, 111, 136, 211, 250, 626
Գուլիվարդ (զան.)—19, 626
Գուլխաթուն—305
Գուլնաս (զան.)—388, 490
Գուլնարաթ (նաև Գուլնազաթ, զան.)—40, 106, 691
Գուլնազար—789
Գուլնաստար—435
Գուլոմսիմ—384
Գուլոսկի—666
Գուլպանար—221
Գուլպարիխան—449, 460
Գուլշեան—441
Գուլվարդ (զան.)—164, 294, 357, 524, 575, 576, 620, 626, 680
Գուլվալի—465
Գուլվար—156
Գուլբսաան (զան.)—78, 433
Գուլում (զան.)—387, 436, 524, 662
Գուլփաշ (զան.)—212, 404, 547
Գուլփարի (զան.)—300, 456, 604
Գուլփէրիկ—621
Գուլֆան—520
Գուսար—143
Գուշակյան Թ.—198, 794, 832
Գուտչիբէկ (նաև Գուտչբէկ, զան.)—212, 518
Գօզալ, սոց.—20, 21
— (զան.)—78, 98, 147, 216, 217, 244, 253, 258, 307, 371, 375, 387, 477, 487, 543, 665, 705, 852, 869

Դօզալուղա (զան.)—98, 140, 141, 857
Դօզալուղէ—855
Դօճար (նաև Դօճարիկ) գրչ.—371
Դօճար (զան.)—147, 253, 562, 695, 852
Դօյար—845

Դազուճի—24
Դադ—556
Դադէ—789
Դադյան կ.—241
Դադոս (զան.)—611, 790
Դաթուլ—698
Դաթունա—770
Դալալ (զան.)—436, 622
Դաման—789
Դայիդմուզ—221
Դայուդ—294
Դանիլ (զան.)—39, 660
Դանիէլ Սամսոնցի եպս., գրչ.—413, 481
— գրչ.—87
— վարագեցի, կզմղ.—110
— ծզկ.—240
— նրդկ. (զան.)—227, 635, 704,780
— (զան.)—55, 73, 103, 231, 244, 255, 372, 377, 382, 440, 441, 546, 620, 816
Դաշխուն—456
Դասապզուլ (զան.)—98, 218, 257, 262, 388, 517, 569, 570, 629, 632
Դավիթ—258
Դարեն—429
Դարման—297
Դաւիթ Ալակայ որդի—371
— Անյաղթ Ներդինացի—41, 178, 424, 433, 525, 526, 675, 701
— Նղեսացի—841
— Զեթունցի—501
— Զէյթունցի, գրչ.—787
— Շնողնեցի, կզմզ.—142
— Սասնեցի, սոցզ.—639
— Վիրապեցի, սաց.—32, 110, 111, 190, 272
— Երուսաղեմի հոգևոր առաջնորդ—54, 747
— Կ. Պոլսի հոգևոր առաջնորդ—52, 288, 788. 799, 827
— Կեսարիայի հոգևոր առաջնորդ—716, 751
— կթզ. Հայոց—106, 128, 155
— եպս., գրչ.—73, 74
— քհն., գրչ. (զան.)—90, 818
— գրչ.—604, 605
— եպս.—703
— վրդ.—234
— քհն. (զան.)—255, 267, 448, 510, 531
— եպս., սոց.—32, 210
— քհն., սոց.—103, 104
— սոց.—311, 312, 495
— (զան.)—44, 46, 98, 106, 130, 224, 308, 311, 328, 341, 412, 477, 517, 525, 547, 556, 563, 564, 595, 624, 677, 678, 702, 704, 708, 733, 755, 788, 793, 821, 867
Դաւիթեան—285
Դալաթ—543
Դալաթիանսամ (զան.)—2, 786
Դալվաթ—547, 827
Դալուաթիար—703
Դաւուր (զան.)—106, 259, 311, 543, 808, 809
Դեղծուան (զան.)—102, 106, 141, 254, 255, 262, 563
Դիլան—819
Դիլանշ (զան.)—216, 249, 341, 517, 555, 810, 811
Դիլաֆ (զան.)—44, 73, 245, 287, 388, 456, 517, 524
Դիլբար—492
Դիլզար—68
Դիլի—471
Դիշամ—387
Դիշխուն (զան.)—106, 250, 345
Դիշում—699
Դիոնէսիոս—321, 510
Դիսար—399
Դշխոյն (զան.)—248, 337, 688, 788, 828
Դշխուն (զան.)—34, 35, 78, 115, 262, 264, 300, 323, 335, 401, 660, 687, 720, 848, 853
Դուլկէ—490
Դուխտար—706
Դունիայ—665
Դունիշաֆար—250
Դուրի—221, 222
Դօիթ, Խախտեաց գավառի հոգևոր հայրապետ—724
— —45
Դոլիկ—767
Դոլվաթ—789
Դոլվաթզուլ—156
Դոլվաթսալթան—19
Դոլվալ—789
Դոլվեթ—487
Դոլուաթ—141
Դոլուաթխաթուն—855
Դոլուդխաթուն—13

Եազուպ—327, 350, 587
Եաղկուլէ (նաև Եազկուլի, զան.)—299, 690
Եախշիպակ, սոց.—261
Եաղուբպիրայ—617
Եաղուպ (զան.)—140, 329, 330, 542, 868

Նազուպշայ—758
Նազուպշի—120, 833
Նայլա—299
Նասֆո—203
Նավրի—767
Նավրիխան—583
Նատշէ—234
Նարինան—257
Նարզուլի—403
Նուրվէլի—433
Նարում—634
Նաւրի—743
Նգանյան Օ.—177
Նզար—208
Նզարխլիզ—807
Նզարզզ—414
Նզզար—515
Նզզանբախշ—251
Նզզիխաս—100, 101
Նզզիկ—659
Նզզինաս—265
Նգնկիէլ, զրչ.—693
Նգնիխաթուն—777
Նգնիկ Կոզրացի—371
— (զան.)—204, 386
Նզաանպաշխ—449
Նզտիխան—777, 851
Նզտում (զան.)—34, 35, 300
Նթար (զան.)—19, 91,, 231, 254, 297, 308 319, 380, 413, 487, 517, 543, 544, 582, 626, 662, 731, 804, 811, 818
Նթարփաշ—555
Նլչիկ—584
Նգե[ս]ե—21
Նգի—326
Նգիա Նրգնկացի—203
— Համբեցի, գրչ.—710, 800, 820
— գրչ.—228, 695
— [illegible], գրչ.—314
— (զան.)—44, 73, 164, 198, 322, 436, 482, 665, 695, 698, 728
Նգիազար գրչ. (զան.)—550, 580, 658, 695, 801, 802, 821
— կրզ.—48
— ծզկ.—803
— ստց. (զան.)—72, 73, 520
— (զան.)—345, 610, 777, 846
Նգիէ (զան.)—244, 275, 387
Նգիկ (զան.)—328, 440, 521
Նգինար (զան.)—456, 725
Նգիշէ (զան.)—556, 647
— քհն.—153
— (զան.)—156, 380, 393, 466, 616, 626, 784
Նգիսայ—752
Նգիսարէ—268
Նգիսարէթ (նաև Նգիսարեան, Նգիսարեգ, Նգիսայրեթ, Նգիսապետ, զան.)—2, 12, 133, 154, 162, 225, 248, 251, 267, 326, 350, 382, 399, 409, 433, 441, 456, 465, 475, 477, 489, 492, 529, 547, 562, 603, 630, 659, 661, 705, 731, 732, 770, 775, 808, 810, 836, 870
Նգիսէ (զան.)—131, 272, 555
Նգնազար, ստց.,—345, 400, 401
— (զան.)—35, 73, 136, 264, 323, 335, 621, 777, 778, 848, 849
Նգներ—646
Նգսսրեբ—300
Նգում—275
Նմիխան—805
Նմին—տե՛ս Էմին
Նենգիբար (զան.)—492, 556, 808, 809
Նենգիրէկ—26
Նենաթ—443
Նպրոմներ—529
Նպիփան Կիպրացի—372, 375
Նսախ—197
Նսայեա սրկդ., գրչ.—178, 179
— վրդ., գրչ.—179
Նսայի Սեբաստացի, գրչ.—343
— վրդ., գրչ.—594
— քհն., գրչ.—183
— գրչ. (զան.)—191, 466, 576, 632, 659, 700, 707, 708, 785, 809
—Երնչակի հոգևոր առաջնորդ—700, 728
— վրդ. (զան.)—554, 559, 699
— (զան.)—9, 176, 204, 503, 765, 786
Խաբեր—433
Նտզար—156
Նրախտաւոս—436
Նրան—709
Նրանոս—788
Նրեմիայ, խչ.—803
— Խորին Ասորի—421
— (զան.)—530, 683
Նրեմիէ—548
Նրինան—248
Նրիմիէ—562
Նրվալի—460
Նուսֆոյի Միսֆո—283
Նուրֆոյ—203, 217
Նաագր—612
Նսոգր (նաև Նաագրիոս) գրչ.—243, 244

Եաատ—75
Եւգինէ—130
Եւսեբի—101, 834
Եւրանոս—403
Եւփրոսինէ—765
Եպիսմէր—164
Եպիրանոս—87
Եսիրեմ (Ասորի)—165, 238, 241, 372, 647
— գրչ.—606
— (զան.)—134, 178, 454, 505, 591
Եփրիքէ—630
Եփրոսին—626

Զաղ (նաև Զատ, զան.)—486, 705, 808, 845
Զաղա—268
Զաղէ—335, 401, 849
Զախնոյ, գրչ.—485
Զահիր—455
Զամսան (զան.)—266, 562
Զայար—373
Զանազան (զան.)—180, 448, 670
Զանդար—265
Զապիլ թագուհի—207
Զառնայ—503
Զատիկ դպր., գրչ.—485, 589, 645, 698
— սաց.—798
— դրլի հայրը—131
Զատէ (զան.)—197, 293
Զարբհանալյան Գ.—717
Զարզար (զան.)—357, 359, 506, 507, 513, 575, 576
Զարիֆ (զան.)—382, 500
Զարիաթուն—827
Զաւեայ (զան.)—322, 726, 727
Զաւեապ (զան.)—36, 258, 319, 496
Զաքար գրչ. (զան.)—216, 217, 254, 302, 303, 380
— գրլի ուսուցչի—422, 570
— Մոկացի, գրչ.—845
— Վարագի հայրապետ—838
— (զան.)—17, 98, 156, 185, 248, 353, 379, 488, 601, 624, 626, 727
Զաքարեայ գրչ.—338
— (զան.)—222, 443
Զաքարէ գեր. ազտ.—524
— վրդ. (զան.)—295, 522, 638
— (զան.)—18, 141, 265, 267, 399, 449, 494, 562, 571, 725, 744, 750
Զաքարիայ արհ., գրչ. (զան.)—96, 381, 798
— երց., գրչ.—377
— Էջմիածնեցի, գրչ.—176, 177, 285
— վրդ., գրչ.—442
— գրչ. (զան.)—3, 4, 15, 16, 83, 99, 177, 295, 620, 846
— Կ. Պոլսի հոգևոր առաջնորդ—329, 470, 677, 790
— արև., սաց.—62
— դպր., սաց.—503, 690
— վրդ. (զան.)—250, 430, 442, 548, 554, 723, 807
— Լովցի. թարգմանիչ—505
— գրլի ուսուցիչը—838
— կզմզ.—617, 618
— սաց.—771, 772
— Լովի, ավագ երեց—602, 603, 685, 686
— (զան.)—87, 99, 175, 176, 285, 302, 331, 454, 455, 554, 559, 671, 698, 760, 764, 823
Զարարիէ—311
Զաֆար—711
Զենապ չէլէպի, սաց.—314
Զէպրլմէլիմ (նաև Զէտրլմէլիմ)—590, 858
Զրաան—623
Զիլաւ—455
Զիլֆի—699
Զիլֆի—455
Զիկմոնդ Երկրորդ, Լեհաց թագավոր—202
Զիկմոնդ Երրորդ (նաև Զիկմունդ, Զիկմունտ) Լեհաց թագավոր—61, 283, 286, 333, 350, 367, 408, 409, 418, 472, 843
Զիկմունտ, Շվեդիայի թագավոր—648
Զինա—294
Զինէ—108
Զինի—164
Զիրաֆ Վանեցի, նվրտ.—203, 204, 227, 228
— խչ., տանուտեր (զան.)—272, 487, 615
— (զան.)—232, 250, 297, 387, 388, 517, 757
Զիրիսչոյ—493
Զիֆիթ—106
Զմրուք (զան.)—38, 131, 363, 373, 374, 385, 567
Զոճալ (զան.)—48, 380, 784
Զուլալ (զան.)—211, 434, 688
Զուլալյան Մ.—25, 51, 125, 195, 196, 660
Զուտիաթ—703
Զուրապ—519
Զոգափաչէ—399
Զոճրայ—215
Զոճրապ Երևանցի, սաց.—197
Զորավար—60
Զորափաչէ—300

Էրաթ—810
Էդիգար—72

Էդլշ—659
Էդմոնդ Շյուց—754
Էզդան—250
Էզդանբաիշ—250
Էթար—տե՛ս Եթար
Էթարփաշա—94
Էլէքսան (զան.)—106, 141
Էլիազ—335
Էլիէ, ստց.—434
Էլիփաշէ (զան.)—335, 400, 848
Էլպէկ—258
Էլում—519
Էխտիար—360
Էղիշէ—տե՛ս Եղիշէ
Էմէնփաշէ (զան.)—143, 299, 300
Էմին (զան.)—9, 208, 369, 661
Էմինսօլթան—19
Էյուազ—537
Էնաթ—413
Էնիաթ, հովիվ, ստց.—212, 213
— (զան.)—269, 388, 517, 665, 703, 776, 819
Էնկիպակ—261
Էսամբուլէ—225
Էսի—163
Էվազ (զան.)—153, 560, 661, 790
Էվանէս (զան.)—267, 766
Էվաս—789
Էվասփաշէ, ստց.—631
Էվասչէ—789
Էվէլշան—789
Էվրէն—643
Էրազիզ—711
Էրդամ (նաև Էրտամ), ստց. (զան.)—513, 514, 630, 812
Էրտամ—717, 813
Էրտողէ—349
Էր[?]փանոս—707
Էփան—տե՛ս Ստէփան

Ըմբրիշատ (նաև Ըմպրիշատ)—513, 514, 631
Ըմրիշատ—812
Ընկիրէկ, ստց.—210, 211
Ըռանապ—316
Ըռան—521
Ըռէճան (զան.)—105, 106, 244
Ըռէփիլիզ—143, 411
Ըռոմանկոյ—204
Ըռըսաագէս (նաև Ըստակէս)—Ստաթէի հոգևոր առաջնորդ—142, 143, 554, 594
Ըստակէս (նաև Ըռըստաղիս, զան.)—154, 155, 286, 316, 317, 799
Ըռըսամ խան—550
Ըռուպիկ—449
Ըռոճիշան—552
Ըստամ—435
Ըսկանդար—592
Ըսկանտար, չալապի—161
Ըսեփան (նաև Ըսեփանոս)—տե՛ս Ստեփան, Ստեփանոս

Թարառուք—44
Թազուճի (զան.)—12, 44, 112, 237, 267, 268, 278, 493, 524, 630, 631, 709, 788
Թաղէոս, գրչ. (զան.)—518, 870
— (զան.)—102, 106, 116, 131, 141, 196, 262, 266, 302, 392, 393, 407, 563, 835
Թազազուլ (նաև Թազակուլ, զան.)—267, 562, 750
Թաքան—703
Թաքար (զան.)—19, 344, 517
Թաքարխաքուն—19
Թաքարփաշայ—642, 643
Թաքէոս (զան.)—304, 406, 448, 485, 500, 548, 759, 770, 819
Թաքոս (զան.)—103, 108, 419, 494, 533, 703, 768
Թաքուլ (զան.)—244, 636, 667
Թաժդ—576
Թալաղշ—113
Թալիշ, ստց.—455
Թանիր—285
Թանմազդուլի, Երևանի խան—209, 226, 341, 462, 742
Թաղ, Նվիրատուի հայրը—803
Թանէր—258
Թանիխան—862
Թանտի (նաև Թանկի) Մարկոս Դարանագեցու հայրը—506, 507, 513
Թամամ (զան.)—45, 136, 474, 508, 544, 547, 563, 634, 661, 766, 821
Թամար—347
Թամբայ—475
Թամուր (զան.)—136, 364, 385
Թամուրաղէ—562
Թամրազ (նաև Թամուրազ, Թէմուրազ) Վրաց թագավոր—285, 515, 519, 520, 550, 770
Թայմազ—478
Թանակ, Ստեփանոս գրչի մայրը—77, 311
Թանգազիզ (զան.)—308, 750
Թանզխաքուն—716
Թանզսաղ—700
Թանդար—502
Թանքակ (զան.)—401, 449, 450
Թանքար—807
Թանկազիզ—492

Թանկիաթուն—564
Թանկմեր—273
Թանկսօլթան—827
Թանկու—551
Թանդրիղուլ—855
Թանդրիղուր—13
Թանսուխ—576
Թանտար—588
Թանում, *ստց.*—546, 547
Թաշլուխան—347
Թաշլում—630
Թաշում *(զան.)*—518, 556
Թաորէկօ—665
Թառղումաշ—670
Թասխլ *(զան.)*—401, 670, 789
Թասալի *(զան.)*—33, 114, 115, 294, 448, 710, 711
Թասուխ—112
Թավրէղ *(զան.)*—116, 404, 636
Թարխան—487
Թարղուլ *(զան.)*—492, 790
Թարղումաշ—287, 475
Թարվէղ *(զան.)*—562, 610, 624
Թարուէզ *(նաև Թարուիզ, զան.)*—19, 387, 486
Թարէղ *(զան.)*—706, 707, 777, 870
Թարուղուլ—267
Թալվաթ—858
Թավէ—292, 293
Թաւաւրքայ—643
Թաւրամիշ—703
Թաւրէղ *(զան.)*—72, 73, 131, 211, 436, 485
Թափառուկ—435
Թեղան *(զան.)*—77, 251, 384
Թեկղի *(զան.)*—183, 708
Թէթրաւ—770
Թէթրոյ—520
Թէլիկ—347
Թէկղէ—311
Թէոդոս—583
Թէոդորոս—616, 722
Թթիկ—60
Թիլի—44
Թիլիփաշայ *(նաև Թիլիփաշէ, զան.)*—11, 234, 256, 492
Թիրինշ—670
Թիրվանդ—492
Թիւրունդ—729
Թողթամիշ, *կկզ.*—4
Թովմայ Մեծոփեցի—600, 729
Թովմայ *եպս., կկզ.*—119
— *վրդ.*—554
Թովմաս—600
Թովմէ—765
Թոտյուն—314
Թորոսյան Վ.—10, 717
Թորոս Աթխցի, *գրչ.*—564
— Կամենացի, *գրչ.*—472
— Համշեցի—377
— *գպր., գրչ.*—122, 123
— *երց., գրչ.*—160
— *գրչ.*—646
— *կկզ.*—407
— *եպս., ստց.*—588, 589
— *ստց.* *(զան.)*—38, 695, 696
— *երց., նվրտ.*—40
— *պան.*—785
— *եպս.* *(զան.)*—87, 144, 223, 698, 792
— *(զան.)*—89, 130, 204,229, 230, 357, 359, 378, 381, 382, 448—450, 472, 544, 557, 672, 694, 695, 697, 703, 708, 735, 815, 819, 838
Թոփչյան Յ.—203, 243
Թրվանդէ—804
Թրուանդե—258
Թուբիկ *(զան.)*—285, 399, 660
Թուխթար—672
Թուխիկ *(զան.)*—147, 156, 253, 869
Թուխկէ *(զան.)*—810, 854
Թուխման—706
Թուխշար—711
Թուխտարփաշէ—341
Թուկան *(նաև Թուքան, զան.)*—208, 367
Թում *(զան.)*—379, 380, 480, 484, 734, 837
Թումայ *եպս., հոգևոր առաջնորդ Ապարանից վանքի*—720
— *Ազվանքի հոգևոր առաջնորդ*—860
— Բաղիշեցի—81
— *աբե., գրչ.* *(զան.)*—189, 296
— *քհն.* *(զան.)*—212, 621, 622
— *գրչ.*—211, 486
— *կզմզ.*—662, 812
— *Նրզզ.*—764, 766
— *ստց.* *(զան.)*—16, 219, 786
— *վրդ.* *(զան.)*—371, 430, 548
— *սրբագրիչ*—72
— Մանուչէցի, *դեր. ազատ.*—336
— *եպս.*—7
— *(զան.)*—20, 21, 39, 119, 258, 314, 440, 664, 703, 743, 764, 832, 855
Թուման *(զան.)*—326, 611, 661, 725, 786
Թումանյան Բ.—332
Թումաշան *(զան.)*—254, 443, 518
Թուման Ջամոյանի—718
— *գրչ.*—161
— *(զան.)*—131, 273, 278

Թոմէ (զան.)—44, 218
Թուրանդ—486
Թուրինն—417
Թուրվանդ (նաև Թուրանդ, Թուրվանա, Թուրանդ, զան.)—5, 12, 18, 130, 144, 218, 231, 254, 255, 269, 308, 325, 342, 379, 381, 382, 434, 440, 452, 455, 483, 486, 496, 514, 517, 529, 623, 640, 662, 664, 665, 705, 714, 734, 745, 746, 765, 770, 782, 826—828, 845, 866
Թուրվանդէ (նաև Թուրվանաէ, Թուրանդէ, զան.)—36, 208, 216, 619
Թուրանդէ—19
Թուրվանդայ (նաև Թուրվանայ, զան.)—360, 373, 712, 823, 824
Թոփնեան Յ.—241, 243, 403

Ժամխաթուն—47

Իբրահիմ տե՛ս Իսրահիմ, փաշա
Իբրիանոս—278
Իզնատիոս Հիզանցի, գրչ.—494
— երգ., նրգղ.—523
— (զան.)—148, 515, 613
Ինիի—765
Իմաստուն—699
Իմաստիտ—416
Իշխան (զան.)—140, 486
Ինայաթէրէ, (նաև Ինայաթէրէ), Ղրիմի խան—591, 858
Ինախ (զան.)—66, 108, 109, 436, 485, 819
Ինախիփաշ (զան.)—140, 528, 635, 857
Ինան—91
Ինապ, չէլէպի—314
Ինափաշէ—265
Ինենպան խշ., թուղթ ճարող—46
Ինճեիատոս, նրգղ.—509
Իպաշիր—760
Իպլու—163
Իսրահիմ փաշա—591, 858
— Օսմանյան սուլթան—787, 799, 801, 807, 823, 827, 869
Իսահակ—426
Իսայի, խշ.—285
Իսէ—766
Իսրբէկ—210, 211
Իսիրէկ (նաև Իսիրակ, զան.)—26, 261
Իսկանդար Ջալազի—193, 408, 680
— Վանեցի—227, 228
— (զան.)—20, 222, 223, 322
Իսպանան—222, 223
Իսրայէլ Համբեցի, ծղկ.—90, 162
— գրչ.—675
— (զան.)—176, 551, 629, 699, 708, 827
Իսֆանատ (զան.)—204, 272, 403
Իվաշֆո—367
Իրնազար—789
Իրֆո—761
Իտուֆ—562
Իփրիանոս—423
Իֆնում—221

Լաբիխան (զան.)—250, 347
Լազար—408
Լալայան Ե.—832
Լալգուանաշ—204
Լալիխան—584
Լալում—768
Լանկ-Թամուր (նաև Լանգ-Թամուր)—325, 633
Լապիխան—583
Լաշին, սոց. (զան.)—87, 374
Լատիֆ (զան.)—124, 646
Լաուսարդ—789
Լեհցի, գրչ.—192
Լեհ-Պուլ Ս.—438
Լեոն Գ, Կիլիկիայի հայոց թագավոր—320
Լէլափար—441
Լէլի (զան.)—630, 805
Լէլիխան (զան.)—141, 566
Լէլում—347
Լիիֆար—205
Լիլիփար—700
Լիսլար—158
Լիլօի—163
Լոյս—521
Լոյսսլարոն—118
Լուքերոյ—15
Լուսատրիչ—տե՛ս Գրիգոր Լուսատրիչ
Լուսերեկ—730
Լուսիկ, գրչ.—448
— սոց.—412
— (զան.)—273, 670, 695
Լուսիկան—412
Լուսխաթուն (զան.)—328, 361, 382, 419
Լուսմաֆոս—824
Լուսին—80, 352, 678
Լուսսլարոն—406
Լուսպիֆայ—643

Խազադ—211
Խազար—278
Խազարբէկ—111
Խազբրվարդ—380
Խազրէվարդ—751
Խաբայ—39
Խաթիշայ—610

Խաբշիկ—34
Խաբուն (զան.)—45, 46, 111, 113, 206, 207, 209, 230, 232, 285, 387, 401, 440, 466, 492, 513, 556, 560, 562, 582, 625, 630, 631, 659, 707, 758, 766, 774, 791, 813, 852, 855
Խաբունաղ (զան.)—436, 555, 662, 711, 763, 810, 819, 845, 846
Խաբունաղայ—21
Խաբունաղէ (զան.)—2, 206, 211, 435, 837
Խաբունաս (զան.)—222, 322, 795
Խաբունբաչէ—347
Խաբունբէկ—517
Խաբունդշխոյն—853
Խաբունիկ—373
Խաբունմեր—384
Խաբունղ—777
Խաբունճան—862
Խաբունշայ—360
Խաբունշան (զան.)—140, 210, 211, 216, 266, 295, 387, 388, 486, 517, 566, 640, 762
Խաբունփաշայ—762
Խալաֆ (զան.)—143, 411, 454
Խալի—562
Խալիլ, Արզրումի վազիր—256, 325, 327, 559
Խալիներ (զան.)—20, 141, 212, 266, 267, 388, 562, 613, 768
Խալիզուներ--267
Խալիֆայ—19, 302
Խաղ—19
Խամոշ (նաև Խամօշ, զան.)—313, 297
Խան (զան.)—153, 547, 836, 852
Խանաղ (զան.)—93, 206, 212, 225, 254, 255, 288, 295, 387, 388, 415, 436, 443, 555, 662, 705, 807, 837, 846, 870
Խանաղայ (զան.)—529, 821, 827
Խանաղէ (զան.)—18, 136, 210, 245, 311, 414, 524, 633, 824
Խանամիր (զան.)—19, 210, 302
Խանաշ—279
Խանբակ—305
Խանբէկ (զան.)—19, 164, 311, 312, 435, 443, 475, 629, 659, 660, 821
Խանդեր—678
Խանդուտ—307
Խանզաղ (նաև Խանզատ, զան.)—168, 210, 260, 379, 508, 552, 626, 839
Խանզատայ (զան.)—360, 362, 677, 708
Խանզաղէ (նաև Խանզատէ, զան.)—19, 106, 265, 307, 335, 345, 400, 456, 496, 587, 819, 824, 848, 849
Խանէ—274
Խանէս—44
Խանբմաղէ—750
Խանիզուլ—671
Խանիլար—40
Խանիմաթ—38
Խանիշան—285
Խանիփաշ—216
Խանմէլիֆ—755
Խանպակէ—45
Խանդէկ (զան.)—40, 249, 361
Խանսալբան (նաև Խանսոլբան, Խանսուլբան, Խանսօլբան, զան.)—76, 98, 99, 141, 261, 267, 562
Խանտատիկ (զան.)—275, 628
Խանտեր (զան.)—80, 351
Խանտուտ—434
Խանում (զան.)—68, 106, 131, 210, 211, 232, 244, 260—262, 295, 379, 385, 387, 399, 456, 477, 485, 486, 490, 613, 626, 634, 659, 662, 671, 688, 699, 705, 736, 772, 786, 808, 809, 826, 845
Խանումաղ (զան.)—206, 248, 517
Խանումաղայ (զան.)—20, 21, 221
Խանումաղէ (զան.)—206, 255, 257
Խանփաշ (զան.)—407, 502, 588
Խանփաշա (զան.)—120, 503, 815, 833
Խանփար—564
Խանփարէ—274
Խանփարի (զան.)—249, 262, 275, 513, 514, 630, 717, 812, 813
Խանփարվար (նաև Խանփարուար, զան.)—73, 164, 257, 610
Խաչանէս—699
Խաչատուր, ԳոգԽանի հոգևոր առաջնորդ—550, 683, 684, 736—740, 743, 744, 769, 771, 826, 860
— Ղրիմի հոգևոր առաջնորդ—24, 63, 223, 545, 590, 643, 726, 758, 759, 858
— Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ—100, 107, 133, 136, 138, 175, 261, 266, 274, 294, 301, 307, 318, 336, 383, 419, 449, 452, 465, 490, 491, 492, 514, 515, 524, 533, 560, 561, 587, 611, 623, 628—631, 633, 635, 666, 680, 710, 711, 794, 805, 812, 818, 819, 824, 827, 854, 865
— Լէհացի (նաև Լէհցի), գրչ.—542, 758
— Կամէնցի, գրչ.—758
— Կեսարացի, գրչ.—521
— արհ., գրչ.—6
— դպր., գրչ. (զան.)—384, 385, 640, 725
— երց., գրչ. (զան.)—590, 715, 734, 735, 660, 699, 751, 763, 773—775, 794, 858
— վրդ., գրչ.—865
— քհն., գրչ. (զան.)—731, 821, 822

— գրչ. (զան.)—180, 220, 226, 227, 334, 341, 432, 855
— արհ., ծզկ.—61
— քհն., ծզկ.—12
— սաց. (զան.)—6, 13, 14, 83, 103, 155, 373, 466, 547, 548, 601, 683, 685, 798
— վրդ. (զան.)—144, 176, 194, 277, 296, 374, 442, 450, 516, 548, 554, 680
— քհն. (զան.)—21, 144, 400, 448, 510, 733
— Ջեթունցի—23, 524
— Լովցի—203
— Կաֆայեցի—70
— Կեշատեցի—610
— Կեսարացի—369, 430, 433
— Հիզանցի—360, 361
— Սուլու-Մանասարցի—316
— դպր., կկզ.—3
— Նրգզ. (զան.)—198, 624
— հոգևոր առաջնորդներ (զան.)—87, 155, 246
— (զան.)—3, 10, 24, 48, 58, 60, 84, 87, 89, 91, 105, 111, 114, 131, 146, 148, 151, 153, 176, 207, 221, 230, 232, 259, 273, 299, 300, 309, 340, 342, 360, 362, 398, 404—406, 408, 409, 412, 417, 432, 444, 445, 454, 484—486, 490, 492, 495, 513, 514, 518, 526, 529, 534, 546, 548, 554, 562, 571, 576, 587, 599, 616, 620, 630, 660, 677, 678, 697, 702—705, 707, 713, 721, 725, 727, 729, 734, 743, 753, 755, 759, 781—783, 795, 799, 805, 812, 834, 858, 862, 867
Խաչգուտուզ—519
Խաչեր տե՛ս Խաչատուր գրչ. (զան.)
— (զան.)—406, 781, 782, 823
Խաչերես, գրչ.—575
— (զան.)—360, 373, 406, 698, 758
Խաչիկ երց., ծզկ.—859
— սրկգ., գրչ.—96
— (զան.)—34, 49, 78, 265, 346, 385, 774, 793
Խաչուկ—58
Խաչֆոյ, գրչ. (զան.)—78, 364
Խաչֆօ Լէնցի, դրչ.—670, 758, 759
Խաչֆոյ (զան.)—360, 603
Խաչօ—626
Խաւգուլ—708
Խաս—543
Խասիկ—819
Խասխաթուն (զան.)—120, 399, 460
Խասմելիֆ—9
Խասմէլիֆ—818
Խասպէկ, ծզկ.—643
— սկրգ.—727
Խասպիֆայ (զան.)—643, 758, 773
Խավազ—163
Խարապէկ—78
Խարաֆլախու, Մաճարաց պարոն—648
Խարիպեան—774
Խարիփչան—385
Խարշ—228
Խաչկի—617
Խաչայրաբէ—164
Խաչայչան—779
Խաչում—319
Խաւարով (զան.)—36, 136
Խեներ—611
Խերում—670
Խէշատուր—414
Խէշում—267
Խէրաղ—106
Խէրէֆ—764
Խէրի (զան.)—189, 293, 632
Խէրիֆ—399
Խէրպարոն—726, 727
Խրլզաթ—68
Խրտրշահ (նաև Խրտրշայ, զան.)—124, 376
Խիալ—529
Խիկար (զան.)—173, 258
Խիշատուր—266
Խլթկա—73
Խլղաթ Մոկացի—303, 846
— (զան.)—91, 108, 210, 211, 216, 232, 255, 297, 379, 388, 440, 484, 486, 517, 524, 552, 554, 571, 622, 662, 751, 757, 765, 766, 810, 819
Խոնտեան (զան.)—135, 340, 759
Խոնիկ—774
Խոնում—807
Խանար—688
Խոնարհ—492
Խոնդաղ—775
Խոնդաղէ—708
Խոնդիկ—659
Խոնդամիր (զան.)—517, 552
Խոնգիար, Մեսրոպ խիզանցու մայրը—102, 106, 141, 262, 266, 294, 319, 335, 563, 849
Խոնձայ—517
Խոնձէ—21
Խոշամիր—19
Խոռոմ (զան.)—20, 21, 714
Խոռոմսիմ (զան.)—105, 106, 294, 307, 782
Խոռում—19
Խուրով (խան, վազիր, փաշա)—319, 325. 327
Խուրով (զան.)—77, 156, 486, 774

Խոսրովքուխտ—384
Խոսրովիքուխք—268
Խոսրովիքուխտ—265
Խոտավերու—643
Խոցադեղ—622
Խուսանքոս—132—134
Խմամբքար (զան.)—513, 813
Խոր—647
Խար Ոսցի—78, 797
Խարշայ (զան.)—135, 289, 349
Խրապետ—670
Խրմրզ—140
Խուանեղ—669
Խուքիար Շամ'ացի—859—860
Խուլոսպէ—590, 860
Խուլու խաթուն—669
Խուլուշ Տիգրիկցի, ստց.—755
Խուլուշա—773
Խուլթուքէկ սրկգ., գրչ.—609
Խուլուշ—776
Խումար (զան.)—166, 303, 413, 443, 485, 688, 745, 775, 823
Խուճղաղ—699
Խուճտ—47
Խուճտամիր նրգլ. տվղ.—861
Խուպէ—807
Խուպի—407
Խուպիար (զան.)—275, 325, 326
Խուպիկ—196, 835
Խուպիճան—196, 835
Խուդեղ—212, 213
Խուտարաշխ—477
Խուտրաք—163
Խուրմ—659
Խանկ— 385
Խանիկ—819
Խանշի—552
Խոշխարար (նաև Խոշխապար, զան.)—361, 790
Խոշկի—339
Խոշ—(զան.)—789, 790
Խոշամիր—250
Խոջավարդ—328
Խոչէ—790

Մաղիկ (նաև Մուղիմ, զան.)—258, 273, 293, 670
Մամէր—135
Մամիկ—258, 308
Մամոսկի—273, 623
Մառիկ, թղթի կոկող—731
Մառուկ, գրչ.—256
— (զան.)—399, 521, 723, 752, 841
Մատուր (զան.)—113, 342, 399, 402, 466, 475, 496, 533, 556, 560, 726, 727, 775, 804
Մեր, գրչ.—537
Մերիկ դպր., գրչ.—370, 844
Մերիկ (զան.)—310, 313, 314, 360, 640- 641, 725
Մերուկ (զան.)—399, 752
Մէրիկի Հանգոյ—283
Միրայ—314
Մոցիկ, ստց.—750

Կանայանց Ս.—343
Կանաչ, ստց.—503
Կանաչիկ—39
Կասպար—723
Կատար—345
Կատարին—113
Կատարինէ (զան.)—335, 603, 644, 677, 698, 785
Կարապետ Աստանցի—795
— Բաղիշեցի, գրչ.—377
— Բաղիշեցի, վրդ.—89
— Գաբեցց, ստց.—847
— Երզնկացի, վրդ.—10
— Եդեսկացի, գրչ.—120, 146, 833, 834
— Եվդոկացի երց., գրչ.—518
— Թոդաթցի, գրչ.—502
— Կողոնիայի հոգևոր առաջնորդ—835
— Կրեմեցի—770
— Հալապցի—698
— Մշեցի—153
— Մոկացի (զան.)—146, 147, 149, 151, 153, 237, 354, 447, 448, 479, 749
— Ջուղայեցի, գրչ.—396, 397
— Քալաքաթենց—142
— տրզ., գրչ.—73
— եպս., գրչ.—639, 640
— քհն., գրչ.—108, 109
— գրչ. (զան.)—111, 166, 205, 239, 240, 303, 522, 565, 660, 667, 671, 763, 833, 834
— վրդ., ստց. (զան.)—17, 392—394
— ստց. (զան.)—163, 224, 259, 274, 292, 293, 569—571, 690, 691, 770, 854, 855
— Ս. Առաքելոց վանքի հոգևոր առաջնորդ—755, 780
— արքեպ.—154, 406
— բաբունապետ—869
— վրդ. (զան.)—142, 157, 258, 393, 855
— քհն. (զան.)—21, 186, 234, 406, 855
— եպս.—176
— նրգլ. (զան.)—82, 251, 471
— (զան.)—13, 18, 19, 21, 79, 82, 93, 103, 116, 176, 185, 186, 200, 212, 227, 239, 249, 254, 255, 267, 268, 302, 317, 337,

57—574

353, 379, 380, 402, 422, 437, 446, 483, 487, 490, 521, 548, 627, 735, 755, 768, 795, 801, 810, 820, 822, 835, 852, 854, 855, 867
Կաւզալ (զան.)—3, 261, 768
Կալսաղ—167
Կաւրկ—308
Կեռան Թագուհի—205
Կեռաս—71
Կեռս (զան.)—299, 721
Կիրակէ—537
Կիրակոս Աւրնզանցի, գրչ. ծկղ.—252, 253, 303, 440, 846, 847
— Բաբերդցի, գրչ.—714
— Ջմբշկածակցի, գրչ.—445
— Տանրաբակեցի—767
— Տրապիզոնցի—52
— Հաղբատի հոգևոր առաջնորդ—142, 414
— Վարագի հոգևոր առաջնորդ—68
— վրդ., աշակերտ Վանականի—724
— գրչ. (զան.)—84, 146, 148, 152, 157, 158, 307, 455, 604, 756, 851, 852, 869
— երց., գրչ. (զան.)—444. 731
— սրկդ., գրչ.—625
— ծղկ.—19, 100
— ստց. (զան.)—216, 217, 379, 438, 468, 495, 496
— նրգզ., տվզ.—555
— նրգզ.—557
— կկղ.—30
— եպս.—381
— սրկդ.—728
— վրդ.—115
— քհն. (զան.)—124, 140, 500, 618, 619, 634, 826
— (զան.)—19, 21, 32, 36, 44, 48, 55, 77, 79, 92, 124, 135, 136, 156, 161, 172, 194, 204, 221, 222, 231, 240, 287, 288, 307, 325, 357, 359, 360, 364, 371, 375, 376, 380, 381, 385, 434, 464, 475, 486, 491, 496, 500, 517, 560, 571, 623, 659, 661, 662, 669, 670, 672, 688, 697, 698, 719, 728, 732, 735, 750, 766, 798, 804, 810, 811, 818, 819, 841, 868
Կիրիլլոս Լուսարիս, կ. Պոլսի հունաց պատրիարք—522
Կիլսեղ—228
Կիլսաղայ—272
Կիւրեղ—166, 230
— Լէճցի—722
— Երուսաղեմի հոգևոր առաջնորդ—449, 491
Կիւրոս—426
Կզեմ—371
Կյոլեսերյան Բ.—207, 351, 473, 531, 567, 627, 722, 778, 780, 831
Կոճար տե՛ս Գոճար
Կոչի—364
Կոչիկ—521
Կոսանանդին (նաև Կոստանդին, զան.)—194, 337, 567
Կոսանանդիանոս Մեծ—236
Կոնոյ—41
Կրէսֆո—2
Կուլազ—774
Կուլամիր—3
Կուլաղայ—521
Կուլասար, ստց.—675
— 102
Կուլաֆ (զան.)—603, 641, 698
Կուլզասա—261
Կուլէ—116
Կուլիշարճ—474
Կուլիսան (զան.)—353, 391, 638, 688
Կուլիս (զան.)—386, 782
Կուլշատ—193
Կուլդակ—58
Կուլդակի—689
Կուլդէկ—317
Կուլդանար Բռաբերցի, ստց.—799
Կուլդանար (նաև Կուլդնար, զան.)—102, 359, 775
Կուլվարդ (զան.)—53, 60, 121, 140, 224, 359, 506, 507, 513, 643
Կուլում—768
Կուռիզարկ տե՛ս Վարզէլ
Կումիշ—824
Կուռնու—712
Կուրնի—193
Կոզալ—810
Կոզալանայ—382
Կոզալիան (զան.)—308, 405
Կոկշայ—587
Կոնկուլ—138
Կորկի—818

Հաբաս Ա տե՛ս Աբաս Ա
Հազար—364
Հազարբէկ—487
Հազարխաթուն—25
Հազարյան Հ.—299
Հազարշ—222
Հազարշա—862
Հազէվարդ—326
Հազրավարդ—624
Հազրէվարդ—19
Հազրպետ—58

Հաթունաղէ—446
Հախնազար—477
Հառիճազար Ագուլեցի, *սաց.*—403
Հալիճար—302, 845
Հալխաթուն—251
Հալոյ—435
Հակոբ Թոխաթեցի *տե՛ս* Յակոբ Թոխաթեցի
— Կարնեցի, *գրչ.*—171, 473, 616
— Ղրիմեցի—588
Հակոբ Սզատր—9
Հակոբյան Վ.—473
Համազասպ—821
Համամ—297
Համանգուլ (*զան.*)—136, 168
Համասփիւռ (*նաև* Համասփուռ)—335, 345, 401
Համբէկ (*զան.*)—486, 487
Համպար—419
Հայկազ (*զան.*)—210, 433, 743
Հայոց (*զան.*)—533, 744, 775
Հայտարարուլի Սրկղունցի—804
Հայրան—799
Հայրապետ *երց.*, *գրչ.* (*զան.*)—189, 465, 460, 466, 812
— *ծղկ.*—770
— *կգմղ.*—272
— *սաց.* (*զան.*)—587, 827
— Ղուլբկեցի—244, 245
— Մոկացի—706
— *կկղ.*—177
— *եպս.*—804
— *քհն*—617, 618
— (*զան.*)—76, 92, 98, 99, 106, 108, 131, 140, 142, 146, 151, 153, 185, 232, 251, 273, 285, 339, 341, 400, 465, 482, 486, 490, 513, 514, 517, 548, 563, 619, 630, 660, 683, 743, 755, 768, 810, 812, 821, 845, 846, 870
Հանաղ *տես՝* Խանսուղ
Հանազէն—93
Հանայ—471
Հանբէկ (*զան.*)—422, 665
Հանգանդոյ—486
Հանէս, *սաց.*—819
— (*զան.*)—436, 622
Հանսուլթան—733
Հանում—108
Հանուչֆայ—162
Հապիպ (*զան.*)—513, 631, 812
Հասան (*զան.*)—163, 770
Հասրաթ—136
Հատիայ—325
Հարզավարդ—636
Հեթոն (*նաև* Հեթում)—*Թագավոր Կիլիկիայի*—320, 702
Հեթում—791
Հեկազ—32
Հեղին (*զան.*)—81, 475
Հեղինա—735
Հեղիներ—841
Հեղինէ (*զան.*)—441, 591, 592, 670
Հենդարզուլ—342
Հեռեփսիմ—221
Հերապետ Արտավելցի, *գրչ.*—669
— Բազիշեցի, *սաց.*—41—44
— *գրչ.*—160
— *վրդ.*—234
— *քհն.*—154
— (*զան.*)—380, 381, 387, 818
Հերիֆ (*զան.*)—419, 745, 818, 866
Հերիֆնազ (*զան*)—416, 661
Հէրապետ *եպս.*, *նրգղ.*—601
Հէրապետ (*նաև* Հէրապէտ, *զան.*)—48, 106, 254, 341, 441, 587, 623, 867
Հէրիֆ—815
Հրոռոմսմէ—12
Հրրիզ—619
Հիճան—329
Հիռիփսիմէ—21
Հիր—699
Հիւրի—435
Հիւրիխան—655
Հոռամսֆիմ—369
Հոռոմ—(*զան.*)—487, 490, 810
Հոռոմսիմ—381
Հոռոմսիմայ—325
Հոռոմսիմէ (*զան.*)—731, 836, 849
Հովազեղ, *սաց.*—120
Հովնան Ոսկերբերան—588
— *գրչ.*—656
Հովհաննես Խուլ, Կ. Պոլսի հոգևոր առաջնորդ—537
— Կամենացի—842
— *սաց.*—156
Հովսեփյան Գ.—590, 591, 859
Հոեպսիմ—471
Հոեփսիմ (*նաև* Հոեփսիմէ, *զան.*)—124, 644, 666, 800
Հոէփսիմ (*նաև* Հոէփսիմէ, *զան.*)—197, 203, 408
Հոբփսմ—222
Հոիպսիմ (*նաև* Հոիպսիմէ, *զան.*)—273, 475
Հոիփսիմ (*զան.*)—24, 108, 115, 119, 287, 435, 440, 490, 491, 529, 601, 626, 628, 659, 665, 711, 729, 808

Հաֆիսիմէ (զան.)—9, 79, 83, 135, 244, 245, 276, 340, 359, 411, 462, 464, 513, 543, 573, 587, 599, 623, 629, 631, 656, 661, 695, 698, 719, 726, 782, 788, 798, 812, 813, 818, 819, 828, 853—855, 870
Հոռմսիմ—492
Հոռիոսիմ—823
Հոռումսիմայ—671
Հրմբզ—135
Հրմուզ—754
Հոպավէրա—455
Հուզուր—180
Հուզուրբան—221
Հումար—108
Հումիխան—21
Հուշուշ—91
Հուսնիխան—610
Հուտիկ—433
Հուտում—556
Հուտումսիմ—441
Հուտուպսիմ—823
Հուրի—456
Հուրիխան (զան.)—34, 766, 775, 818
Հուրիշան—666
Հուրիփաշէ—824
Հուրմուզ—197
Հօլուպ Կամենցի—131, 167, 717, 760
Հոպօ—484
Հոռօմսիմ—753
Հոսֆայ—162

Ձիբակեր—588

Ղաբլան—500
Ղադամ—145
Ղադամխուրլու—631, 812, 813
Ղադոմ—106
Ղազալ—341
Ղազանճի Պակ. սաց.—833
Ղազար բօշայ—817
— Բաբերբացի, վրդ., գրչ.—310
— Երկանկուզցի, գրչ.—167
— Խարբերբցի—412
— Մանկաղլուսեցց—120
— Մանկուշլուսեցց, եպս.—834
— Մաշկեցցի, սաց.—821, 822
— դպր., գրչ. (զան.)—441, 462, 576
— երց., գրչ.—121
— վրդ., գրչ.—365
— սրկդ., գրչ.—473
— քհն., գրչ. (զան.)—80, 81, 677, 678, 783, 784, 808, 816, 823
— գրչ. (զան.)—177, 351, 531, 556, 564, 635, 656, 799
— վրդ., Օլախաց երկրի հոգևոր առաջնորդ—162, 165, 313, 360
— վրդ.—554
— սաց. (զան.)—436, 442, 615, 718, 719
— քհն. (զան.)—21, 22, 58, 360, 416, 431, 844
— (զան.)—44, 58, 68, 89, 92, 100, 101, 106, 111, 124, 140, 143, 147, 176, 204, 208, 222, 232, 234, 249, 250, 269, 282, 302, 305, 317, 362, 387, 400, 423, 436, 437, 443, 486, 500, 503, 513, 519, 536, 541, 543, 552, 556, 603, 620, 622, 630, 631, 640, 665, 674, 677, 685, 692, 700, 703, 705, 707, 728, 753, 766—768, 772, 777, 784, 785, 810, 812, 826, 845, 846, 852
Ղազարոս գրչ. (զան.)—367, 637
Ղալաբէկ (զան.)—21, 254
Ղալաբ—693
Ղալանդար—100, 101
Ղանան—193
Ղամբար (նաև Ղամպար, զան.)—342, 804
Ղամայր—62
Ղամար—616
Ղայաբ—760
Ղայիդմազ—221
Ղանիմաբ—862
Ղանիփաշայ—592
Ղասոմղուրլի—492
Ղասպն—58
Ղատամ (նաև Ղատէմ, զան.)—382, 383
Ղատամղուրլու (զան.)—405, 417, 513, 514
Ղատի—745
Ղարայ (զան.)—36, 770
Ղարաբէկ—664
Ղարախան (զան.)—141, 307, 519, 766
Ղարակուզ (նաև Ղարակօզ, զան.)—173, 498, 537
Ղարազուշ—435
Ղարամէլիֆ—849
Ղարաշա—790
Ղարլ—496
Ղարիպ Բաֆրանեցի—767
Ղարիպ (նաև Ղարիբ, զան.)—131, 207, 224, 230, 317, 480, 487, 494, 533, 633, 694, 791, 819, 845
Ղարիպխաբուն (զան.)—98, 212, 213, 379, 456, 751
Ղարիպշա—5
— Կումիշխանացի, սաց.—862
Ղարիպշէ, սաց.—516, 517

Ղարկաւզ—497
Ղարշրղա խան—186
Ղարիպչան, սաց. (ազն.)—225, 616
Ղարիպչան (նաև Ղարիպեան, ազն.)—64, 93, 94, 147, 224, 254, 259, 285, 380, 486, 666, 868
Ղարիպսալբան (նաև Ղարիպսուլբան, ազն.)—659, 696
Ղաւգազ—621
Ղաւրխմազ—221
Ղեսաբիթ—221
Ղեոնդէս—433
Ղզլար, սաց.—184, 185
— (ազն.)—13, 210, 660, 791
Ղզլարբէկ (ազն.)—13, 34, 353, 446
Ղէս—153
Ղիզլար—204
Ղիմաբ (ազն.)—40, 46, 216, 244, 477, 695
Ղիմաբսուլբան—19
Ղոչաղայ—671
Ղոչիկ—204
Ղրմզ—486
Ղուրաթ—811
Ղուզ—440
Ղուզիչան—777
Ղուրլու—766
Ղուլ—136
Ղուլան—423
Ղուլիեան (նաև Ղուլիչան, ազն.)—200, 245, 248, 257, 518, 750, 789
Ղուկաս Լոռեցի—527
— Խարձիւնցի—377
— Կեղեցի—48, 350
— Տուրկցի—17
— արև., գրչ.—247, 248
— դպր., գրչ. (ազն.)—31, 95, 159
— քհն., գրչ. (ազն.)—297, 298, 853, 854
— (ազն.)—22, 276, 277, 431, 432
— ծզկ.—556
— Արղնի հոգևոր առաջնորդ—530
— Հալեպի հոգևոր առաջնորդ—229
— Համիթի հոգևոր առաջնորդ—349
— Հզուեցի, դպր., սաց.—861
— սաց. (ազն.)—17, 123, 452, 453, 675, 862
— վրդ. (ազն.)—207, 442, 524, 548, 554
— եպս., Նվրտ.—354
— քհն. (ազն.)—135, 138, 233, 360
— (ազն.)—21, 71, 72, 112, 168, 176, 262, 343, 450, 521, 533, 556, 615, 638, 671, 687, 719, 765, 809, 814, 867
Ղումրի, սաց.—544
— 790
Ղուսքոսի—471
Ղուտնմազ—211
Ղուալու (ազն.)—500, 726, 727
Ղուարադ (նաև Ղուարաա, ազն.)—310, 365, 819

Ճանան—73
Ճայիաթուն—533
Ճանազիզ—362
Ճանաղ (ազն.)—529, 699
Ճանաղայ—671
Ճանազէ—310
Ճանդէմիր, գրչ.—16, 27, 63, 70, 215
Ճանիկյան—199, 531, 827
Ճանեան—770
Ճաշիկ (ազն.)—509, 827
Ճաշիաթուն—360
Ճանպէքէր, Ղրիմի խան—521, 858
Ճանպուլէ—382, 383
Ճանփաչայ (ազն.)—9, 140, 508
Ճերմկ—208
Ճիեան—412
Ճիեանչան—317
Ճեան—801
Ճոնար—735
Ճոմարա, խչ.—406
Ճուեար—670
Ճօան Փոթայեոյ—10
Ճօնար—17

Մազիստրոս տե՛ս Տեր Մովսեսյան Մովսես
Մազլումյան Գ.—831
Մազեազար—73
Մաթէոս եպս., գրչ—246
— քհն.—825
— (ազն.)—35, 174, 305, 323, 334, 341, 513, 514, 646, 660, 672, 708, 728, 730, 765, 801
Մաթիաղ—162
Մաթիոս—264
Մաթոս (ազն.)—106, 335, 345, 400, 546, 725, 789, 812
Մալ (ազն.)—34, 725
Մալազաա—449
Մալախ—80, 81
Մալիկ—189
Մալիչան (ազն.)—456, 706, 853
Մալիչանաղ—853
Մալիքսէթ—145
Մալնազար (ազն.)—73, 311, 455
Մալու—461, 462
Մալում (ազն.)—115, 621, 644, 788
Մալումչան—105

Մալիում (զան.)—699, 786, 809
Մախաթուն—266
Մախթում (զան.)—285, 643
Մախմուր—440
Մախսուտ Համթեցի, ստց.—90, 160, 695
— (զան.)—76, 193, 239, 584
Մակար Սեփասացի, գրչ.—283, 284
— (զան.)—191, 457, 464, 659, 868
Մանբուապ (նաև Մանբուր, Մանպուպ, զան.) —5, 113, 193, 244, 285, 307, 801
Սանմատ աղա—523
— բէկ—601
— փաշայ—598
Մանմեռ, մահմետական կրոնի հիմնադիր—535
— Համիթի փաշայ—841
Մանմուռ—305
Մանմուր—485
Մանուիար—441
Մաղաքիա, գրչ.—166, 167, 510
— Եղոկացի—538
— Թոխաթցի—354
— վրդ.—445
— նվրտ.—477
— կզմզ.—712
— (զան.)—758, 767
Մագգումշայ—76
Մաղսուտ (զան.)—39, 285, 413, 705, 781
Մամ—562
Մամագիզ—477
Մամախաթուն—435
Մամխաթուն (զան.)—98, 244, 404
Մայրամ (զան.)—98, 204, 228, 465, 475, 508, 590, 640, 752, 758, 770
Մայրամպիքայ—758, 773
Մայրան—475
Մայրիամ—706
Մայրիան—736
Ման—49
Մանան (զան.)—707, 798
Մանանայ (զան.)—473, 509, 735, 767
Մանանդ (նաև Մանանա, զան.)—353, 538, 539
Մանաս (զան.)—136, 273, 490, 623
Մանդրուա—584
Մանիշակ—226
Մանկասար (զան.)—171, 743
Մանշակ—293
Մանոս—570
Մանսուր (զան.)—164, 479, 480
Մանուել, հոգևոր առաջնորդ Եղիշեի ուխտին—557
— Վիրապի հոգևոր առաջնորդ—240, 257
— Սաղմոսավանի հոգևոր առաջնորդ—621
— գրչ.—836
— երաժիշտ—67
— եպս., ստց.—732
— Մամիկոնեան—747
— եպս., (զան.)—225, 557
— (զան.)—11, 78, 196, 225, 256, 705, 789, 790, 835
Մանուկ դպր., գրչ.—773
— (զան.)—386, 454, 563, 564, 626, 630, 750, 755, 867
Մանուշ—783, 784
Մանուշակ (զան.)—29, 82, 143, 339, 391, 441, 495, 521, 577, 674, 847
Մաշտոց Գասնեցի—189, 210, 730, 866
Մասաճ—765
Մասումպեկ—443
Մասումփաշ—197
Մասիիր—264
Մասիուր—323
Մատաթեայ քհն., գրչ.—130
Մատթէոս Արգռումցի—710
— (զան.)—276, 400, 448, 631, 721, 848
Մատլէ—382, 383
Մար—699
Մարան (զան.)—335, 665, 695, 782
Մարանէ (զան.)—131, 141, 491, 677
Մարգար Արգարեց Վանեցի, գրչ.—837
— գրչ. (զան.)—79, 168, 250, 443, 744
— դպր. գրչ.—504, 505, 597
— քհն.—326
— (զան.)—53, 55, 91, 92, 108, 212, 266, 299, 388, 454, 489, 502, 517, 552, 555, 561, 563, 564, 588, 624, 636, 700, 711, 714, 745, 746, 776, 801, 824, 866
Մարգարայ, երգ., գրչ.—381
— երգ., կզմզ.—826
— ստց. (զան.)—443, 823, 824
— եպս.—395, 437
— (զան.)—191, 240, 821, 824
Մարգարէ Քալամբկինց, գրչ.—410
— կզմզ.—713
— ստց. (զան.)—153, 274, 275, 306, 307, 351, 390,
— (զան.)—44, 45, 73, 106, 111, 130, 141, 144, 156, 244, 258, 259, 265, 267, 294, 302, 311, 335 341, 399, 401, 402, 411, 417, 482, 487, 562, 643, 660, 711, 727, 790, 823, 849
Մարգարիտ գրչ.—826
— ստց.—140, 141
Մարգարիտ (նաև Մարգարիթ, զան.)—12, 19, 21, 26, 44, 71, 91, 93, 130, 140, 141, 145, 153, 168, 216, 217, 225, 245, 259, 267, 288, 336, 369, 379, 381, 402, 417,

435, 441, 443, 445, 475, 485, 486, 490, 493, 521, 547, 556, 557, 571, 600, 620, 662, 676, 750, 751, 765, 766, 801, 846, 855, 870
Մարգրիտ (զան.)—108, 445, 601, 799, 810
Մարդայ—373, 493
Մարդայիաթուն—308
Մարդէ—18
Մարեամ (զան.)—77, 345, 380, 411, 631
Մարեան—804
Մարեմ—210
Մարէմ—5
Մարթ (զան.)—440, 443, 556, 847
Մարթայ (զան.)—73, 358, 361, 591, 626, 687, 700, 759, 766, 775, 788, 863
Մարթապայ—314
Մարթէ—454
Մարիամ, գրչ.—471
— մայրապետ Շոռոթի անապատի—433
— (զան.—33, 40, 45, 46, 71, 75, 79, 87, 112, 115, 116, 136 141, 144, 145, 151, 153, 156, 245, 263—265, 267, 272, 273, 276, 285, 288, 293, 305, 307, 308, 323, 335, 346, 361, 369, 376, 382, 399, 400, 404, 414, 415, 419, 440, 449, 456, 461, 462, 475, 489—492, 503, 529, 547, 582, 584, 619, 620, 623, 625, 633, 634, 642, 659, 661, 663, 666, 672, 674, 687, 688, 694, 695, 725, 729, 730, 735, 750, 753, 765, 775, 777, 781—784, 788, 801, 807, 808, 819, 820, 823—825, 828, 848, 855, 862
Մարիան (զան.)—153, 556, 560, 786, 808
Մարիանէ (զան.)—659, 793
Մարիմ—208
Մարինոս (զան.)—489, 654, 661, 705, 768
Մարիտատ (զան.)—266, 562, 855
Մարխաթուն (զան.)—73, 818
Մարխաս (զան.)—2, 407, 835
Մարխոն (?)—441
Մարկոս—Երուսաղեմի Մ. Հարության եկեղեցու լուսարար, Գրիգոր Դարանաղեցու եղբայրը—11, 55, 57, 60, 121, 506, 507, 512, 513, 575, 576, 680
— երաժշտապետ—349
— ստց.—709
— (զան.)—40, 48, 185, 444, 644, 671, 697, 759, 782, 789, 791, 801, 828, 869
— Հռոմկլայցի—782
Մարճաս (զան.)—94, 224
Մարնան (նաև Մարջան, զան.)—147, 326, 705
Մարուզ, ստց.—341
Մարուզէ (զան.)—473, 509, 782, 835
Մարուք (զան.)—250, 711, 813
Մարուքայ, դպր., գրչ.—720
— քհն., գրչ.—547, 550, 551
— (զան.)—302, 602, 699, 845
Մարուքէ Ջուղայեցի—174
— ստց.—454
— (զան.)—35, 114, 115, 323, 335, 345, 401, 513, 514, 631, 670, 848
Մայրուքէայ—448
Մարուքայ—560
Մարտանչան—693
Մարտիրոս Արդանցի—231
— Էջմիածնեցի—203
— Խիզանցի, Մեսրոպ Խիզանցու ուսուցիչը—102, 106, 141, 195, 262, 266, 294, 319, 335, 563, 835, 849
— Համբեցի, ստց.—24
— Շեֆուլցի, սրց.—48
— Տարօնեցի, երաժիշտ—224, 275
— Օվեցի, ձեռագրի վաճառող—231
— Մեսրոպ Խիզանցու հայրը—102, 106, 141, 262, 266, 294, 319, 335, 563
— Վարագի հոգևոր առաջնորդ—223, 249—251, 295, 301, 344, 395, 437, 490, 570
— գրչ. (զան.)—18, 170, 248, 303, 374, 394, 423, 514, 516, 548, 630, 737, 738, 769, 777, 868
— վրդ., գրչ., ստց.—421, 422
— Մեսրոպ Խիզանցու որդին, ծղկ.—106, 563, 623, 712
— ծղկ. (զան.)—658, 691
— կզմղ. (զան)—219, 773, 847
— երաժիշտ—394
— Ջուղայեցի, գրչ.—511
— կկղ. (զան.)—278, 431
— աբեհ.—557
— վրդ.—422
— քհն. (զան.)—21, 58, 180, 304, 400
— սուրհանդակ—743
— ստց. (զան.)—139, 140, 216, 217, 235, 262, 323, 762, 763, 808, 809, 816
— (զան.)—3, 19—21, 25, 38, 44, 62, 66, 68, 72, 77, 83, 88, 106, 131, 140, 142, 143, 155, 168, 188, 193, 202, 209—211, 226, 234, 245, 262, 269, 285, 292, 293, 295, 310, 311, 335, 345, 360, 365, 380, 385, 401, 431, 440, 443, 450 475, 477, 484, 485, 491, 508, 517, 582, 604, 611, 618, 622, 626, 629, 640, 659, 660, 663, 671, 675, 683, 687, 698, 700, 705, 721, 726, 727, 735, 750, 755, 765, 766, 768, 809, 810, 818, 827, 828, 849, 867
Մարտիրոսյան Ա. Ա.—174

Մարքոն, *սաց.—162*
Մարոշ—*24*
Մաւիր—*810*
Մաքսիմիանոս—*651*
Մեժլումաշյան—*19*
Մելինան—*308*
Մեծատուր—*17*
Մելիտոն—*690*
Մելիք Երևանցի—*288*
Մելիք-Հակոբյան Ս.—*277, 319*
Մելիք *(զան.)—204, 250, 278, 349, 385, 544, 583*
Մելիքաղէ—*257*
Մելիքզատ—*22*
Մելիքխաւնէ—*225*
Մելիքշի, *վաց.—9*
Մելիքպէկ—*205, 206*
Մելիքսէթ *(զան.)—153, 660*
Մելիքսեթ, *Ջերմուկի հոգևոր առաջնորդ—370*
— *սաց.—75*
Մելքիսէթ *տե՛ս* Մելքիսէթ
Մելքիսէթ *(նաև* Մելքիսեդեկ) Մոկացի, *գրչ., սաց.—527, 528, 635, 856, 857*
— Մոկացի, *ծղկ.—213*
— *(զան.)—244, 436*
Մելքէսէթ *աբե., գրչ.—223*
— Սեբաստացի, *կզմզ.—135*
— Սեբբաստացի, *վրդ.—135*
— *դպր., կզմզ.—128*
Մելքիսեդ *(նաև* Մելքիսեթ, Մելքիսեթ, Մէլքէսէթ, Մելքսէթ) *կաթողիկոս Հայոց—18, 24, 37, 73, 100, 111, 113, 121, 128, 129, 133, 145, 151, 162, 169, 184, 186, 202, 203, 216, 235, 282, 285, 303, 310, 342, 488, 559, 649, 838, 843, 846*
Մելքիսեդ, *երց., գրչ. (զան.)—341, 455, 661*
— *արքեպ.—328*
— *(զան.)—139, 406*
— *քհն.—755*
Մելքիսեթ, *գրչ.—309*
— Քոքանեցի, *գրչ.—275*
— *սաց.—827*
Մելքիսէթ, *գրչ.—185*
— *կզմզ.—233*
— *նրգզ.—224*
— *եպս.—148*
— *վրդ., (զան.)—37, 84, 233, 393, 430*
— *(զան.)—152, 445, 716, 634, 776, 846, 867*
Մելքոն Մանախեցի, *սաց.—835*
— Սեբաստացի *(զան.)—84, 500, 646, 647*
— *դպր., գրչ.—47*
— *սաց., (զան.)—405, 834*
— *կկզ—745, 750, 755, 867*
— *(զան.)—12, 45, 135, 222, 302, 357, 359, 360, 407, 483, 600, 695, 767, 782, 845*
Մելքսեթ *(նաև* Մելքսէթ, *զան.)—5, 435, 706*
Մելքոմ—*77*
Մելքուն—*582*
Մեհիր—*385*
Մեհեր *(զան.)—239, 781*
Մեհերաբ, *խչ., սաց.—98*
Մեհերել—*72, 188*
Մեհերի—*687, 688*
Մեհերշէ—*143*
Մեղու—*116*
Մեղուշ *(նաև* Մեղուշ, *զան.)—19, 436, 486, 622*
Մեհեհետ—*169*
Մեսրոբ *(նաև* Մեսրոպ, Մեսրովբ) *Ստեփէի վանքի հոգևոր առաջնորդ—11, 183, 256, 661, 765, 816*
Մեսրոբ, *արքեպ. Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ—77*
Մեսրոպ Բաղիշեցի, *դրչ.—861, 862*
Մեսրոպ *(նաև* Մեսրովբ, Մեսրոբ) Խիզանցի *(նաև Հիզանցի), գրչ., ծղկ., կզմզ.—102, 106, 140, 141, 155, 245, 251—263, 265—267, 294, 318, 319, 335, 345, 400, 401, 420, 452, 456, 514, 523, 563, 582, 623, 712, 824, 849*
Մեսրոպ Կաֆայեցի, *եպս., վրդ., գրչ.—30, 84, 472*
— Վանեցի, *ծղկ.—733, 810*
Մեսրոպ, *բարձունապետ—31*
— *եպս.—608*
Մսեռոպ Մաշտոց—*41, 434, 494, 583*
— *վրդ.—78*
— *քհն., (զան.)—304, 697*
— *գրչ—610*
— *(զան.)—82, 91, 132—134, 144, 146, 147, 151, 153 201, 244, 448, 529, 554, 667, 698, 743, 754, 755, 828, 845*
Մեսրոպիկ—*152*
Մեսրովբ, *դպր., գրչ.—636*
Մերդն—*619, 620*
Մերիաս—*450, 521*
Մերհերուպան—*380*
Մերջան *(զան.)—335, 400, 848*
Մերփաշ—*521*
Մերտատիկ *(զան.)—115, 134, 454, 456, 537, 813*
Մերաին *(զան.)—38, 757*
Մերում—*335*
Մէիփաշէ—*513, 812*

Մելիքշահ, սելջուկյան թագավոր (1072—1092թթ.)—428
Մելիք (զան.)—294, 475, 694, 767, 786, 852, 853
Մելիքազա—34, 346
Մելիքզադ—250
Մելիքզար (զան.)—260, 404
Մելիքենուզ—34, 346
Մելիքսէթ (նաև Մելիքսետ, զան.)—775, 809, 815
Մելքիսէթ, քհն., գրչ.—12, 13
— (զան.)—13, 480, 703, 820
Մելքոն (զան.)—262, 776
Մելքում—778
Մեներ (զան.)—161, 443
Մենրիշ—604, 659, 660
Մենրիպան—433
Մնմէր—587
Մենիփաշէ—631
Մեսրոպ քհն.—483
Մերդի—703
Մերիկ (զան.)—77, 399, 771
Մերեն—5
Մերշան (զան.)—264, 265, 323, 334, 345, 777
Մերտատիկ (զան.)—33, 193, 399, 401, 449, 513, 631, 632
Մերրան—231
Մերում—401, 849
Մրսբր (զան.)—322, 364, 469, 493, 494, 618
Մրշան—446
Մրվար—208
Մրուաբ (զան.)—190, 218, 675
Միասար—73
Միլիտոն—517
Միխայել Բազիշեցի—52
— գրքի հեղինակ—59
Միխիթար—699
Միկրաիշ—221
Միհիր—774
Միհրդատյան Թ.—842
Միհուլ—222, 223
Մինայ (զան.)—309, 328, 455, 600, 744
Մինախաթուն—821
Մինախաս—465
Մինաս Արզրումցի (նաև Թէոդուպալսեցի—հոգևոր առաջնորդ—129, 228, 220, 488
— Երզնկացի, ստց.—744
— Էրզրումցի, վրդ.—316
— Խախբեցի—480
— Վրաստանի հայերի հոգևոր առաջնորդ—770
— Սեփասացի—58
— Կիլիկիայի կաթողիկոս—70, 158, 167, 172, 192, 194, 207, 351, 356, 403, 407, 479
— գրչ., (զան.)—51, 97, 209, 247, 345, 552, 579, 580, 584, 598, 599, 839, 841
— ստց., (զան.)—16, 276, 455, 456, 477, 480, 542, 679, 773
— ծղկ. (զան.)—228, 229, 235, 394, 695—697
— Կարնեցի, ստց.—348—350
— Հալեպի հոգևոր առաջնորդ—199
— գրչապետ—319
— նրգզ. (զան.)—144, 162, 723
— վեդ.—554, 583
— քհն., (զան.)—87, 404, 540, 634, 794
— (զան.)—21, 34, 35, 40, 58, 66, 140, 176, 209, 244, 273, 295, 309, 328, 369, 444, 445, 468, 477, 495, 507, 540, 543, 618, 623, 624, 675, 758, 759, 765, 783, 784, 801, 811
Մինասար—610
Մինաւար—387
Մինէ—156, 490
Միսիր—581
Միր (զան.)—789, 790
Միրամիր—19
Միրան—44
Միր-Անդալ Շէրոնից—18
Միրաք, կոշկակար—376
— ստց.—620
— խչ.—791
— (զան.)—140, 142, 297, 387, 388, 436, 437, 487, 517, 757
Միրաքշան—413
Միրզա (զան.)—94, 221, 517, 518, 569, 570, 665, 786, 789, 790
Միրզաբէկ (զան.)—34, 265, 389
Միրզազալէ—390
Միրզախան (զան.)—267, 307, 399, 824
Միրզաչան Կարբեցի—562
— ստց.—413
— (զան.)—105, 106, 285
Միրզէ Գասնեղեցի—767
— (զան.)—141, 216, 244, 257, 267, 456
Միրզավելի—493
Միրիճան (նաև Միրիշան, զան.)—45, 261, 267, 285, 359, 456, 755, 789, 868
Միր Հասան—111
Միրման—249
Միրոն Բարնովսկի Մովիլ տե՛ս Միրոն
Միրում (զան.)—250, 552, 789, 818
Միրոն, թագավոր Օլախաց երկրի—310, 313, 357

Միսիր—413
Միսոն—2
Միսոն Ավէտիքեանց—408
Միւրիմսան—257
Միքայէլ Թալրնցի—698
— Թոխաթեցի, գրչ.—25, 140, 169, 207, 281, 288, 298, 320, 620, 730
— Մարզուանցի, գպր., գրչ.—74, 181, 412, 503, 558, 586, 592, 642
— Ջուղայեցի, ստց.—611
— գրչ., (զան.)—467, 545, 727
— եպս. (զան.)—78, 457—459
— եպս., ստց.—310
— ստց.—632
— Ս. Ստեփանոս նախավկայի հոգևոր առաջնորդ—660
— նրգղ.—113
— չաղացպան—868
— քհն. (զան.)—47, 111, 461, 464, 472
— (զան.)—34, 114, 115, 204, 208, 210, 215, 231, 265, 322, 369, 395, 404, 444, 445, 464, 468, 495, 629, 698, 705, 743, 752, 760, 788, 849, 850, 865
Միհոյր—477
Մլում—819
Մլուք—640
Մխիթար Արևելցի—528
Մխիթար Գօշ—30
— երց., գրչ.—402
— ստց. (զան.)—114—116, 234,819, 820
— երց., (զան.)—111, 546
— (զան.)—2, 33, 131, 153, 234, 244, 258, 276, 279, 297, 299, 300, 309, 380, 395, 399, 414, 435, 441, 449, 450, 513, 543, 611, 631, 633, 706, 766, 782, 807, 812, 845, 846,
Մկրտիչ Լեհցի, գրչ.—628, 814
— Ղազարեանց, գրչ.—685
— Ջուղայեցի, գրչ.—289, 291, 292
— Ուռնայեցի, ոսկեգործ, ստց.—546, 677, 678
— գրչ., (զան.)—16, 86, 157 ,172, 173, 200, 237, 282, 283, 462, 550
— գպր., գրչ. (զան.)—269, 352, 546, 785
— երց., գրչ.—113
— սրկգ., գրչ. (զան.)—90, 386, 529, 828
— գրչ. (զան.)—517, 520, 603
— երց., ծղկ.—559
— ծղկ.—450
— ստց.—812
— վրդ. (զան.)—246, 396, 397, 807, 825
— արքեպ., Զեյթունի հոգևոր առաջնորդ—194, 356
— արքեպ.—49, 567
— դպր.—592, 771
— եպս. (զան.)—74, 75, 795
— նրգղ. (զան.)—308, 639, 713
— կկղ.—570
— տողի խազող—177
— քհն. (զան.)—222, 643, 656, 816
— (զան.)—52, 58, 72, 79, 98, 106, 140, 143, 148, 174, 188, 210, 211, 222, 237, 250, 299, 307, 344, 353, 380, 388, 402, 420, 440, 441, 450, 487, 521, 525, 532, 546, 560, 562, 582, 624, 636, 644, 646, 659, 660, 687, 698, 700, 703, 725, 727, 755, 760, 768, 771, 778, 788, 789, 791, 798, 801, 811, 852, 854, 855
Մներ (զան.)—306, 584
Մնացական (զան.)—136, 754, 815
Մնթուշ—89
Մոնամատ փաշա—522
Մոնիլա Պարնովսի—638
Մոնիսլսօլթան—19
Մոշեղ—725
Մովաթ—695
Մովսէս Խոտանանցի (նաև Տաթևացի), վրդ., հետագայում Հայոց կաթողիկոս—72, 76, 97, 99, 175—179, 184, 186, 209, 283, 286, 301, 311, 314, 324, 329, 332, 335, 338, 341, 355, 361, 365, 369, 375, 378, 380—383, 385, 387, 389, 397, 400, 402, 404, 406—409, 413, 414, 418, 419, 424, 432—434, 438, 441, 446, 449, 452, 454, 458, 461, 462, 465, 478, 480, 491, 492, 494, 499, 504, 511, 514, 515, 520, 527, 530, 531, 547, 548, 554, 559, 560, 579, 588, 590, 603, 608, 633, 639, 657, 661, 711, 739—741, 853, 854, 857, 860, 864
— Խորենացի—762
— Սպարապետացի, գրչ.—558
— Քերթողաներ—424
— երց., նրգղ.—612, 751
— գրչ. (զան.)—460, 612
— ծղկ.—806
— ստց. (զան.)—95, 395, 396, 621
— վրդ. (զան.)—11, 136, 141, 144, 226, 256
— քհն. (զան.)—215, 322, 360
— հաճի—79, 80
— (զան.)—68, 147, 185, 209, 220, 222, 269, 359, 437, 466, 548, 552, 659, 660, 743, 815
Մովրաւ (նաև Մովրով). Վրաց իշխան—186, 206
Մոզա—519
Մոշան (զան.)—19, 484

Մոշանկա—82
Մսեն—644
Մսր—758
Մսրխան—141
Մսրեան—45
Մսեղ—517
Մրատ—671
Մրյէ[ր]—486
Մրշան (զան.)—23, 185. 186, 371, 375, 464, 763, 819
Մրուաք (նաև Մրուաք, զան.)—147, 189, 194, 210, 211, 253, 258, 371, 375, 464, 517, 570, 626, 662, 714, 761, 811, 852, 869, 870
Մուիպսալբան—517
Մուլֆ—435
Մուլֆինան—417
Մունամատ—724
Մունիպատ—770
Մուղալ (զան.)—12, 48, 89, 118, 376
Մուղամ (զան.)—231, 346
Մուննաբ—669
Մուշեղ Մամիկոնեան—747
— (զան.)—114, 115, 743
Մուշկամբար—477
Մուսեն, ստց.—193
Մուսէս, սաց.—581
— (զան.)—148, 253, 267, 346, 371, 375, 464, 820, 869
Մուսբաֆայ (նաև Մուսբաւայ, Մուստաֆայ) սուլթան—50, 51, 59, 62, 71, 105, 122, 164, 236, 325, 835
Մուսիս—147, 852
Մուրդ սրկդ., ծղկ.—287
Մուրասայ—849
— Սարգիս, ոսկէգործ—564
— գրչ.—645
— ծղկ.—240
— ստց. (զան.)—38, 662
— կկղ.—376
— խչ.—314
— սրկդ.—231
— խաթուն—129
Մուրատ (նաև Մուրադ) IV, սուլթան—121, 122, 127—129, 145, 169, 172, 207, 228, 284, 288, 301, 314, 325, 348, 351, 406, 418, 444, 458, 469, 509, 522, 530, 536, 539, 541, 544, 545, 554, 555, 574, 579, 584, 586, 590—593, 596—598, 600, 618, 625, 627, 628, 638, 639, 648, 653, 664, 667, 670, 672, 677, 679, 680, 688—690, 696, 740, 742, 746, 758, 774, 776, 780, 783, 786, 787, 796, 801, 820, 822, 827, 857, 858, 860, 866
Մուրատ (նաև Մուրադ, զան.)—91, 92, 106, 210, 211, 215, 221, 244, 246, 249, 287, 293, 310, 322, 335, 379, 380, 382, 383, 385, 387, 388, 401, 415, 436, 437, 456, 503, 517, 552, 562, 638, 642, 643, 700, 714, 733, 734, 754, 774, 783, 789, 799, 810, 823, 824, 849, 868
Մուրատբաղչ—569, 570
Մուրատխան ստց.—399
— (զան.)—197, 266, 307, 587
Մուրատեան—259
Մուրատշայ—129, 169
Մուրատփաշէ—631
Մուրքազայ (նաև Մուրքուղայ), Համիթի փաշա —325, 523, 530, 614, 742
Մուրիկ, Բյուզանդիայի թագավոր—325
Մուրճասան—805
Մուրվաք (զան.)—475, 560, 750
Մուֆայէլ, գրչ.—771
— (զան.)—39, 91, 400, 582
Մուֆէլ զան.)—311, 346
Մօսէս—470

Յարրաճամ—596
Յախինան—208
Յախնազար—750
Յախում (զան.)—136, 786
Յակոբ Ակնեցի (նաև Ակնցի) դպր., գրչ.—536, 544, 545, 592, 600, 686—690
— Աղեանց—562
— Այվաբեանց, Հակոբ Թոխաթեցու ուսուցիչը—271
— Արզրումցի (Կարնեցի)—767, 768
— Բենկցի, ստց—775
— Երզնկացի, դպր., գրչ.—611
— Թոխաթեցի (նաև Եւդոկացի) գրչ.—270—272, 282, 344, 367, 797
— Իլովցի, գրչի ուսուցիչը—690
— Լեհցի, գրչ.—348
— ուսուցիչ Նիկոդոս գրչի—373
— Լեհցի վրդ.—493
— Կաուկառեցի, վրդ.—528
— Կարկոցի վրդ.—791
— Համբեցի—133
— Համշէնցի, ստց.—714
— Ղրիմեցի, վրդ.—371
— Ղալանուղցի, (Ղալճուղցի) ստց.—308, 672, 673
— Ջուղայեցի, կզմ.—77
— Սսեցի, գրչ.—207

— Հալէպի հոգևոր առաջնորդ—678, 692, 782, 783, 823
— դպր., գրչ.—506
— երց., գրչ. (զան.)—219, 263, 264, 526, 700, 718, 825
— սրկդ., գրչ. (զան.)—75, 476, 582, 663, 774
— վրդ., գրչ.—225
— գրչ. (զան.)—7, 20, 21, 25, 69, 187, 197, 274, 288, 507, 551, 592, 595, 604 ,689
— կզմղ. (զան.)—528, 815
— Վարագի վանքի վերակացու—395, 437
— ուսուցիչ Դաշար գրչի—678
— ուսուցիչ Սաֆար գրչի—340
— նրգդ. (զան.)—20, 454, 530
— սաց. (զան.)—36, 91, 169, 305, 351, 611, 628, 629, 673, 813
— դերձակ—755
— գպր.—809
— եպս., Գաղաթիայի հոգևոր առաջնորդ—37
— եպս.—755
— վրդ. (զան.)—248, 257, 430, 554
— բաբունապետ Կ. Պոլսի—129
— քհն. (զան.)—58, 203, 369, 431, 613, 641, 708, 804, 846
— (զան.)—9, 36, 39, 45, 56, 60, 61, 69, 71, 72, 80, 87—89, 91, 98, 111, 112, 129, 131, 143, 176, 216, 244, 250, 257, 276, 287, 288, 295, 296, 315, 326, 347, 358, 361, 379, 406, 411, 416, 423, 456, 478, 487, 490, 496, 508, 538, 539, 588, 600, 610, 613, 646, 647, 661, 673, 687, 702, 721, 725, 728, 755, 768, 780, 782, 788, 795, 799, 810, 820, 836, 841, 845, 850, 867, 868
Յակովբ արքեպ.—79
— վրդ.—58
— կզմղ.—222
— (զան.)—185, 341, 630, 732
Յակովբոս գրչ.—74
Յակուբ—621
Յակոբեան (նաև Յակոբչան, զան.)—106, 144, 257, 259, 347, 411, 449, 563, 623, 629, 631, 777, 793, 855, 867
Յազամալ—401
Յաղնուլ—46
Յամանե (զան.)—210, 211, 487, 839
Յամասիէ—460
Յամասիքիտ—35
Յամանսօլթան (զան.)—92, 379
Յանանիայ Շիրակեցի—41
Յանտոռ, Գանձակի հոգևոր առաջնորդ—772
Յաչի—278
Յապազ—տե՛ս Աբաս Ա
Յաչապիսան—308
Յաչապենուշ—308
Յար—789
Յարազիզ—789
Յարմզատ—278
Յարոն—486
Յարուբեն (նաև Յարուբէն, զան.)—287, 335, 382, 621
Յարուբիւն, կկղ.—16, 87
— (զան.)—326, 345, 401, 547, 626, 660, 815
Յաւետիս գրչ.—37
Յեղկար—789
Յեզդանբախշ (զան.)—789, 790
Յեբար—381
Յեկանբէկ—381
Յեզիսապեր—381
Յեսայեա Տաբեացի—23
— վրդ. (զան.)—321, 548
Յեսայի (զան.)—203, 431
Յեսապալէ—383
Յեռար—200
Յետկար (զան.)—521, 736
Յերեմիայ արդ.—743
Յեսատ—326
Յէմի—556
Յէսայ—382, 383
Յէսապալէ—382, 383
Յէրապետ—621
Յրռատօլ տե՛ս Ռադու Միհնյան
Յիմիխան—805
Յինախ—151, 153
Յիսախան (զան.)—307, 654, 655
Յիսէ—552
Յիսէֆ—367
Յոր—244
Յոհան, Յովհան, Յովան[1]
— Անկուրիացի, թարգմանիչ—10
— Արնիշեցի—304
— Գառնեցի—241
— Լեհացի (նաև Լէնցի) գրչ.—238, 281, 282
— Կարնեանցի, սաց.—432
— Հիզանցի, գրչ., ծղկ.—278, 312, 461, 463,

[1] Քանի որ «Յոհան» և «Յովհաննէս» անձնանունները հիշատակարաններում տարբեր ձևերով են գրված, ուստի նպատակահարմար գտանք դրանք բաժանել խմբերի և ներկայացնել անձնանունների ցանկում հետևյալ կերպ. «Յոհան, Յովհան, Յովան», «Յոհաննէս, Յոհանիս, Յոհաննէս», «Յովանիս, Յովաննիս», «Յովանէս, Յովաննէս» և «Յովհանէս, Յովհաննէս»։

468, 493, 495, 512, 746, 842, 866, 868, 870
— Ոսկեբերան (նաև Ոսկէբերան, Ոսկիբան, Ոսկիբերան)—9, 165, 238, 241, 372, 421, 504, 522, 647
— Ոստանեցի—377
— Ռոստանեցի—321, 433, 526, 701, 853
— Ջուղայեցի, գրչ.—132—134
— Սրեցի, գրչ.—420
— Օձնեցի—425
— Զեյթունի հոգևոր առաջնորդ—524
— Տաուշի հոգևոր առանորդ—466, 708
— արզ., գրչ. (զան.)—444, 865
— դպր., գրչ.—131
— եպս.—709
— սրկդ., գրչ.—319
— գրչ. (զան.)—23, 109, 185, 186, 337, 356, 446, 477, 529, 623, 632, 708, 755, 778, 839, 840, 842, 844, 847, 867
— Եփրեմ գրչի ուսուցիչը—606
— ստց. (զան.)—90, 91, 255, 298, 440, 441, 578
— (զան.)—22, 44, 47, 92, 108, 136, 140, 164, 204, 211, 224, 326, 335, 371, 380, 401, 416, 441, 503, 521, 557, 568, 623, 660, 699, 708, 714, 729, 734, 784, 848, 868
Յոհանէս, Յոհանէս, Յոհաննէս
— Առինչի հոգևոր առաջնորդ—225
— Եզեսացի, վրդ.—847
— Եզեկացի—594
— Լէճցի, գրչ.—6, 7
— Խարբերդացի—624
— Կ. Պոլսեցի, ստց.—156
— Կիլիկիայի կաթողիկոս—84
— Հալէպի հոգևոր առաջնորդ—129
— Ղարէցի, ծղկ.—870
— Մոկացի, գրչ.—67, 68, 776
— Շաուռաքեցի, նրգդ.—186, 255
— Շատախեցի, ստց.—67
— Զմշկածագեցի, գրչ.—47
— Ուռհայի հոգևոր առաջնորդ, ստց.—363, 364
— դպր., գրչ.—92
— արզ., երց., գրչ. (զան.)—654, 655, 710, 728
— գրչ. (զան.)—14, 114, 115, 217, 353, 394, 478, 560, 624, 625
— ծղկ.—16
— կզմզ.—436, 480
— ստց.—295, 420
— եպս. (զան.)—119, 158
— վրդ. (զան.)—235, 373, 374, 395, 640
— քհն. (զան.)—3, 349, 357, 393, 466, 559, 810
— (զան.)—17, 33, 71, 89, 131, 147, 148, 185, 186, 222, 225, 250, 260, 297, 307, 335, 336, 349, 350, 360, 379, 401, 437, 444, 445, 487, 496, 521, 562, 595, 596, 662, 669, 707, 763, 801, 810, 820, 837, 841, 846, 849, 857, 870
Յովանիս, Յովաննիս
— գրչ. (զան.)—51, 171, 668
— ստց. (զան.)—298, 613
— նրգդ.—635
— (զան.)—68, 91, 92, 98, 111, 114, 124, 231, 244, 295, 305, 311, 435, 436, 477, 486, 492, 529, 551, 564, 570, 612, 616, 646, 675, 687, 688, 700, 725, 760, 764, 810, 811, 838, 845, 846, 852
Յովանէս, Յովաննէս
— Արծնեցի—709
— Բարիձորեցի—43
— Բնակացի, եպս., ստց.—85
— Գառնեցի—397, 483
— Դարեցի—213
— Դդմաշինեցի—767
— Երզնկացի—315
— Խապզեցի, Թէոդոպոլսեցի—417
— Կեսարացի, ստց.—226
— Կ. Պոլսեցի, ստց., ծղկ.,—169
— Համշենցի—377
— Հիզանցի, գրչի ուսուցիչ—98, 287, 733
— Հռոմկլայեցի—687
— Ղարէցի, ծղկ.—733, 870
— Ճողեցի, ստց.—283
— Մելտենցի, գրչ.—524
— Մոկացի, գրչ.—686
— Շիրաֆ—377
— Ջուղայեցի, ստց.—333
— Սրեցի, վրդ.—119
— Տիարդէկցի, ասորի թարգմանիչ—283
— Տիւրիկցի—61
— Ուկղվանցի—804
— Ուռհայեցի, ստց.—63
— Անբափցի, Կիլիկիայի կաթողիկոս—377
— Ղազարու վանաց հոգևոր առաջնորդ—712
— Ներսէ[ս?]եանց—378
— Ստաթէի հոգևոր առաջնորդ—608
— արզ., գրչ.—35, 36
— եպս., գրչ.—615
— երց., գրչ. (զան.)—45, 46, 181, 182, 581, 641, 642, 709, 773, 790
— վրդ., գրչ. (զան.)—467, 472, 697
— քհն., գրչ. (զան.)—75, 726, 727
— (զան.)—18, 44, 97, 145, 222, 305, 338,

556, 604, 622, 629, 676, 677, 729, 817
— ծղկ. (զան.)—188, 198, 260, 734, 820
— կզմզ.—279
— եպս., ստց.—608, 609
— վրդ., ստց.—680
— քհն., ստց.—96
— ստց. (զան.)—334, 446, 626, 731, 776
— արզ.—496, 557
— արհեպիս. (զան.)—142, 809
— դպր.—103, 337
— եպս. (զան.)—342, 557, 664
— երց. (զան.)—144, 621, 759
— սրկդ. (զան.)—422, 659, 660
— վրդ. (զան.)—40, 41, 108, 129, 148, 579, 580, 624, 625, 636, 680, 694—697
— քհն. (զան.)—21, 406, 448
— (զան.)—2, 18, 19, 33, 43, 44, 58, 71, 72, 76, 87, 89, 93, 99, 111, 119, 136, 141, 157, 176, 185, 194, 218, 222, 240, 244, 245, 250, 254, 255, 261, 262, 266, 267, 275, 303, 314, 315, 325, 351—353, 359, 363, 364, 373, 374, 379, 380, 387, 388, 391, 399, 434, 436, 437, 440, 441, 446, 460, 461, 496, 521, 528, 534, 542, 553, 555, 556, 560, 562, 580, 582, 598, 623, 624, 626, 661, 687, 697, 698, 703, 705, 714, 723, 725, 733, 743, 759, 763, 764, 772, 776, 789, 790, 795, 798, 801, 805, 819
Յովէս—340
Յովնաթէս, Յովնաննէս
— Ամիդրցի—167
— Անապատցի—755
— Գառնեցի—268
— Եղեսացի—606
— Մարծարեցի—470
— Մելտենցի—85
— Շնորհեցի—433, 434
— Ջուղայեցի, ստց.—496
— Վանեցի—52
— Ուռհայեցի, եպս.—232, 233, 311
— կաթողիկոս Հայոց—49
— արզ., գրչ.—654
— երց., գրչ.—531
— եպս., գրչութեան ուսուցիչ—167
— գրչութեան ուսուցիչ—8
— գրչ. (զան.)—235, 335, 595, 607, 643
— ծղկ.—230
— Աղվանքի հոգևոր առաջնորդ—531
— Ս. Անապատի հոգևոր առաջնորդ—795
— Ատրանայի հոգևոր առաջնորդ—71
— Ղափանի հոգևոր առաջնորդ—816
— դպր., ստց.—420
— քհն., ստց. (զան.)—62, 352, 698
— ստց. (զան.)—18, 376, 558
— նրգզ. (զան.)—138, 258, 307
— սրկդ. (զան.)—225, 344, 554, 728
— վրդ. (զան.)—234, 240
— քհն. (զան.)—360, 446, 448, 464, 510, 782, 865
— (զան.)—73, 108, 109, 119, 154, 187, 204, 206, 213, 266, 273, 278, 341, 388, 490, 495, 562, 571, 628, 635, 658, 750, 755, 794, 825, 855
Յոսկան—771
Յովակիմ, ստց.—299
— (զան.)—286, 547, 597, 643
Յովանջան—778
Յովասափ Արծրունեցի, ստց.—801, 802
— Շրեթբլցի, նվրտ.—263
— Վարագի հոգևոր առաջնորդ—387, 395
— գրչ. (զան.)—753, 815
— (զան.)—19, 45, 46, 141, 222, 223, 244, 249, 251, 353, 380, 446, 460, 570, 695, 836
Յովսէփ Ալէմենց—525
— Աղթամարցի—234
— Թացուեցի, գրչ.—387
— Մոկացի, գրչ.—27, 196, 231
— սրկդ., գրչ.—827
— Ս. Աստուածածնի հոգևոր առաջնորդ—119
— եպս. կապի վարպետ—19
— ստց. (զան.)—51, 485, 556, 863
— վրդ. (զան.)—211, 579, 665
— քհն.—406
— (զան.)—44, 68, 109, 176, 185, 221, 231, 262, 295, 350, 382, 422, 442, 460, 486, 526, 555, 556, 583, 753, 768, 810, 811, 865
Յուզբաշյան Կ.—303, 588, 621, 709
Յուլիանոս—325
Յուլոյսլէկ—205
Յուլուխան—168
Յուլուպեկ—206
Յուղիդէ—132—134
Յուղիտ (զան.)—34, 35, 222, 582, 801
Յուղիտայ (զան.)—433, 698
Յունան Ընկելցի, գրչ.—638
— երց., գրչ.—521, 522
— ստց.—705
— (զան.)—89, 194, 382, 696
Յուսէփ Թացուեցի, գրչ.—388
— դպր., գրչ.—771, 772
— (զան.)—58, 141, 308, 388, 414, 448, 508, 521, 767, 793, 868
Յուսէինեղուլ—588

Յուսիկ *գրչ.*—298
— *(զան.)*—77, 78, 124, 135, 136, 147, 288, 376, 854
Յուսնիխան—384, 777
Յուստիան *(զան.)*—9, 73, 295, 592, 687, 690, 774
Յուստիանոս—664
Յուրի—811
Յուրիճան—811
Յուրիփաշէ—307
Յուսուբ *խան*—186
Յովհան Մանզակունեցի—583
Յովհաննիս Կոստանդինուպոլսեցի—10
Յովհաննիս—687
Յովհաննէս *քհն., գրչ.*—104
— *գրչ.*—820
— *ստց.*—301
— 10
Յովան—163
Յովհաննէս *վրդ.*—240
Յոսեփ—184
Յովասափ—185

Նաբաթ—813
Նաբուգոդոնոսոր—426
Նազախ—555
Նազար—790
Նազ—221
Նազազ—153
Նազար, *խչ., Նոր Ջուղայի աշխարհիկ առաջնորդ*—33, 107, 263, 265, 301, 335, 345, 346, 427, 428, 449, 491, 628, 630
— Ջուղայեցի, *ստց.*—334
— *գրչ.*—280
— *սրկդ.*—554
— *(զան.)*—35, 58, 131, 168, 245, 250, 264, 295, 307, 323, 338, 401, 487, 587, 665, 699, 703, 730, 766, 776, 808, 809, 825, 848
Նազարէթ Կ. Պոլսեցի, *գրչի ուսուցիչը*—282
— *(զան.)*—138, 345, 399, 400, 433, 777, 848, 849
Նազարվարզ—273
Նազիկ—360
Նազլիխան—845
Նազլոյտատիկ—33
Նազլու *(զան.)*—204, 507, 601, 626
Նազլուխան *(զան.)*—141, 255, 293, 441, 857
Նազխաթուն—827
Նազմելիֆ—308
Նազոյխան—33
Նազվարզ—500
Նազրի—345
Նաթանյան Պ.—629, 637
Նախաշ—799
Նակաճ—36
Նահապետ *արքեպ., Եդեսիայի հոգևոր առաջնորդ*—129, 712
— *(զան.)*—44, 217, 240, 303, 700, 703, 846
Նազաշ *(զան.)*—38, 140, 622, 758
Նազա—543
Նամէ—105
Նաճ—552
Նանայ—325, 694
Նանիկ—78
Նունանան—259
Նաշխազար—33
Նազաթ—513, 631
— 694
Նամելիֆ—130
Նասապ—131
Նասզուխնայ, *վտց.*—408
Նասիր, *խչ.*—221, 563
Նասրու—235
Նատարզուլ—200
Նարգուլ—91
Նարիմա—373
Նարիմելիֆ—456
Նարին—308
Նարինգէկ, *ստց.*—308
Նարխաթուն—503
Նարգիզ *(նաև Նարգիս, Նարկիզ, զան.)*—131, 213, 221, 279, 460, 659
Նաւասարզ, *ստց.*—369
— *(զան.)*—266, 436, 562, 622, 698, 783, 784
Նաւիկ—66
Նեկեզոս—555
Նեզոս—578
Ներկիզ *(զան.)*—204, 299
Նեռսէս Ամկեցի—377
— Անձնապատեցի—42, 43
— Բազիշեցի—377
— Բեխլու—66, 612
— Լամբրոնացի—178, 182
— Կամենցի, *գրչ.*—760
— Հռոմկլայցի, *խչ., ստց.*—781—783
— Մոկացի—26, 199
— Կլայեցի *(Շնորհալի)*—22, 36, 42, 112, 164, 178, 297, 428, 430, 441, 502, 550, 554, 628, 644, 649, 690, 792, 806
— Պարթև, *կաթողիկոս Հայոց*—54, 419, 730
— Սեբաստացի, *Սեբաստիայի հոգևոր առաջնորդ, ստց.*—502, 528, 679, 794—796

— բաբունի, Լիմ անապատի հիմնադիր—558
— խնդրակատար ուխտի հոգևոր առաջնորդ—234
— կաթողիկոս Հայոց—32
— աբղ., գրչ.—577
— դպրապետ, գրչ.—131
— երց., գրչ.—589
— սրկդ., գրչ.—167
— (զան.)—23, 31, 215, 496
— վրդ., ստց.—296, 387—389
— ստց. (զան.)—27, 199, 436, 437
— արքեպ.—841
— եպս. (զան.)—194, 567
— վրդ. (զան.)—192, 234, 250, 295, 600
— քհն. (զան.)—20, 21, 189, 246, 388, 448, 588, 626
— (զան.)—18, 44, 58, 89, 111, 132, 133, 165, 197, 263, 280, 287, 321, 337, 391, 395, 436, 489, 508, 513, 567, 569, 631, 717, 744, 750, 751, 760, 768, 772, 786, 812
Նէրգիզ (նաև Նեռկիզ, զան.)—299, 395, 553, 714
Նըշիուն (նաև Նըղշուն, զան.)—19, 302, 845
Նիգար (նաև Նիկար, զան.)—66, 208, 308, 434, 517, 666
Նիղոշ—313
Նիկիտայոս երց., գրչ.—438
— նրդ. տվղ.—673, 674
Նիկոլ Լովցի—787
Նիկողայոս (նաև Նիկոլ) Թորոսովիչ—163, 350, 367, 369, 505, 649, 652, 673, 686
Նիկողայոս Ըստամսլոլցի—370
— Խնսցի—301
— Լեհաց հոգևոր առաջնորդ—761
— Լովի հոգևոր առաջնորդ—282
— դպր., գրչ.—223
— քհն., գրչ.—494
— քհն., ստց.—360
— ստց.—566
— վրդ.—807
— (զան.)—38, 118, 197, 353, 357, 359, 642, 643, 361, 667, 698, 744, 826, 867
Նիկողոս Բերիացի, ստց.—526
— Սդեսիացի, խչ.—525
— Լէնուցի, գրչ.—121, 122
— դպր., գրչ.—816
— երց., գրչ.—4, 5
— գրչ. (զան.)—199, 373
— աբղ., ստց.—612
— ստց.—515
— եպս.—795
— վրդ.—580
— (զան.)—77, 98, 310, 403, 508, 580, 732, 753, 755, 810
Նիկոլ Թորոսենց տե՛ս Նիկողայոս Թորոսովիչ
— դպր., գրչ.—587
— խչ., ստց.—313
— եպս.—651
— (զան.)—368, 370, 501, 844
Նիկոլայոս, պան.—785
Նիկողայոս, ստց.—65
— (զան.)—365, 483, 811, 821
Նիկուղայոսիկ—517
Նշանյան Մ.—57, 481
Նո[ր]ար—466
Նոյ. քհն., գրչ.—519
Նոնոնար—45
Նոնոֆար (զան.)—131, 644, 788
Նոսլաթ—541
Նովշի—849
Նորաբաբէ—265
Նորազ—643
Նորատունկ, ստց.—818
— 19
Նորարև, ստց.—528
Նորնատ (զան.)—386, 753
Նորորդիր թագ.—638
Նորսլարոն, մհտս., ստց.—726, 727
— 643
Նորվարդ—434
Նորտունկ (զան.)—310, 385, 774, 819
Նորում—456
Նսէֆ (զան.)—435, 487, 757
Նսէֆսօլթան (զան.)—341, 776
Նուբար (զան.)—218, 231, 254, 379, 413, 456, 524, 765, 811
Նուեում—725
Նուեուֆար (զան.)—21, 48, 698
Նուշիկ (զան.)—262, 325
Նուշիջան—837
Նուպար—443
Նուրամիր (զան.)—20, 487
Նուրաթին—313
Նուրըստան—145
Նուրիխան (զան.)—20, 21, 141, 250, 629, 735
Նուրինան (նաև Նուրիջան, զան.)—94, 250, 273, 294, 385, 465, 490, 492, 623, 755, 811
Նուրիջան, Բերկրի քաղաքի մելիք—571
Նուրիսթան—782
Նուրխան—106
Նուրնաղ—619
Նուրսլէֆ—162
Նուրսլիֆայ—83

Նուրվալէ—311
Նուրում (զան.)—417, 475
Նօղլում—631
Նօնաֆար—706, 845
Նօնաֆար Պանմանեց—706
Նօնօֆար (զան.)—626, 707

Նազատ—601
Նազատայ—544
Նալատէ, ստց.—204
Նալչուֆ—715
Նաղբեկ—42—44
Նախզաղ—73
Նախսօլքան—250
Նախուս—366
Նախփաշ—518
Նաճաղայ—361
Նաճանայ—45
Նաճանեց—5
Նաճանուշ—76
Նաճբկ (զան.)—307, 435, 490
Նաճբուտախ—807
Նաճբուտաղ—285
Նաճեն—646
Նաճզաման—208
Նաճզատ—783
Նաճզաստայ մհտս., ստց.—222, 223
— (զան.)—308, 362, 642, 643, 689
Նաճզատէ (նաև Նաճզաղէ, զան.)—244, 261, 335, 381, 400, 480, 610, 750, 777, 818, 848
Նաճիզամ—19
Նաճիկ—789
Նաճինան—261
Նաճին Զալապի—680
Նաճիշին—73
Նաճիղէկ—206
Նաճիսուլքան—487
Նանխաբուն, գրչի մայրը—353
— 106
Նանխաբունյանց Հ.—831
Նանղուլ—790
Նանղուլի (զան.)—319, 790
Նանմանատ—373
Նանմաչուտ—285
Նանմելիֆ (նաև Նանմէլիֆ, զան.)—58, 172, 360, 628, 719, 800, 804
Նանմիրա—135
Նանմուտատ (զան.)—347, 780
Նանեաղար—790
Նանեազար (զան.)—43, 44, 102, 266, 298, 307, 562
Նանեղար—490
Նանեիզար—626
Նանեիկար—5
Նանեոզաբ—546
Նանպազ—687, 688
— տե՛ս Աբաս Ա.
Նանպէկ (զան.)—508, 824
Նանպուլայ, ստց.—120, 833, 834
— 322
Նանսուզ—529
Նանսավար, ստց.—435
Նանսաան—44
Նանսալքան (նաև Նանսուլքան, Նանսօլքան, զան.)—26, 32, 106, 210, 222, 339, 395, 532, 644, 72?, 727, 744, 788, 819
Նանվալի—269
Նանվէրտի—821
Նանաանայ—222
Նանրամիր (զան.)—19, 210
Նանրէ—714
Նանրիար (զան.)—193, 360
Նանրիստան, ստց.—269
Նանում (զան.)—44, 69, 98, 131, 142, 212, 213, 294, 500, 518, 619, 634, 664, 745, 760, 765, 768, 786, 866, 870
Նանումաղ—287
Նանփաշ—845
Նանփաշայ (զան.)—328, 358, 361
Նանփար (զան.)—347, 556
Նանփարի, ստց.—563
— 777
Նաղամ[?]—385
Նաղբեկ (նաև Նաղարբէկ, զան.)—245, 613
Նաղավաղ—258
Նաղաաայ—507, 687
Նաղաւաբ (նաև Նաղօաբ, զան.)—58, 116, 172, 212, 213, 388, 486, 517, 553, 616, 622, 662, 703, 750, 755, 765
Նաղաւկաբ—714
Նաղբաբ—480
Նաղզադ (նաև Նաղղատ, զան.)—524, 675, 714, 765, 766, 781, 782
Նաղզաղէ (զան.)—76, 487
Նաղկէ (զան.)—92, 490
Նաղսալքան—254, 255
Նաղվաբ—364
Նաղուբաբ (նաև Նաղուզաբ, զան.)—302, 490, 845
Նաղօաբ—380
Նաղօսկի—12
Նամամ (զան.)—103, 185, 193, 222, 254, 273, 353, 446, 612, 627
Նամխաբուն (զան.)—342, 782
Նամշաղին—248

58—574

Շամշի—849
Շամշիղամար—456
Շամսղամար—34
Շամսուղամար—631
Շամուամաղ—786
Շայաղէ—216
Շայիչաե—845
Շայրամիր—569, 570
Շայում (զան.)—217, 254, 486, 517, 622, 811, 845, 846
Շանայզար—18
Շանզար—19
Շապան Ջուղայեցի—136
— 742
Շապանկուլի—729, 730
Շատարև (զան.)—13, 185
Շատրէ—563
Շարաֆ (զան.)—39, 285
Շարամիր—254, 255
Շարբատան—132, 133
Շարպաթ—308
Շարուր—322
Շաֆար (զան.)—156, 261
Շեխիչան (զան.)—440, 868
Շեհիչան—250
Շերբեկ—528
Շէրբէկ (զան.)—635, 820, 857
Շէրբմեր—405
Շէհրիխաթուն—87
Շիրազ—255
Շիրաֆ, խչ., ստց.—38
— (զան.)—92, 250, 487, 517, 757
Շինար—760
Շիրին (զան.)—35, 308, 335, 350, 401, 643, 799, 848
Շխուկ—788
Շմառն, գրչ.—779
Շմաուն (զան.)—248, 257, 698
Շմոն—340
Շնանաւոր (զան.)—185, 190, 208, 381, 705, 761
Շնանոր—486
Շնրֆոր—646
Շննաւոր—433
Շնորհուր—198
Շնոֆոր (զան.)—123, 310
Շնօֆոր—163, 365
Շողիկ—29
Շողոյ (զան.)—391, 577, 674
Շուշան (զան.)—73, 106, 113, 131, 232, 244, 251, 273, 294, 335, 380, 381, 401, 490, 513, 533, 580, 584, 623, 624, 626, 631, 659, 711, 725, 785, 813, 849
Շուշանծաղիկ—490, 491

Ոզոնի—33
Ոգուն—347
Ոհան (զան.)—36, 345, 533, 671, 676
Ոհանէս Ծաղկունեցի—767
— Մելտենցի, եպս., գրչ.—527
— Յաղբակեցի, գրչ.—671
— երց., գրչ.—2
— գրչի ուսուցիչը—2
— քհն.—768
— 707
Ողուրսուլթան—287
Ոսկան, քհն., գրչ.—492
— ստց.—793
— վրգ.—760
— (զան.)—35, 91, 98, 335, 345, 401, 621, 755, 827, 840, 853
Ոսկեկ—646
Ոսկենտուկ—547
Ոսկէ—268
Ոսկէնատ—223
Ոսկէմեր—113
Ոսկի (զան.)—140, 145, 273, 325, 326, 382, 443, 491, 623, 694, 695, 725, 751
Ոսկիան—287
Ոսկինատ (զան.)—73, 313, 674, 810
Ոսկիմեր (զան.)—100 101, 106, 750
Ոսկիտաա—105
Ոսկիատիկ (զան.)—193, 293, 411, 449, 450, 456, 623, 631
Ոսկմէր (զան.)—513, 631, 812
Ոսկյան Հ.—5, 8, 113, 120, 249, 289, 295, 312, 344, 407, 411, 412, 473, 566, 700, 713, 736, 785
Ոսկօ—486
Ովազար—114, 115
Ովակիմ, քհն.—449
Ովանէս, քհն., գրչ.—655, 656
— աբղ., ծղկ.—142
— ստց. (զան.)—379, 768, 787
— գրչի ուսուցիչը—804
— եպս.—765
— վրգ.—822
— (զան.—2, 123, 529, 548, 581, 642, 683, 700, 770
Ովանէս Շէնքուշցի, վրդ.—48, 800
Ովանիս (զան.)—221, 660
Ովասափ—19
Ովէս—768
Ովհաննէս—206
Ովսէփ—111
Ովր[?]ադ—730

Ոռդանան—441

Զալապի (զան.)—248, 257
Զաղար—44
Զամանե—846
Զարհազ փաշա—327
Զիբախ—244
Զիբկեր—501
Զիեար (զան.)—116, 580, 599, 696
Զիչամ (զան.)—26, 456
Զրաղ—380
Զուզասզյան Բ.—836, 875

Պալ—643
Պալաբ—34, 35
Պալասան (զան.)—153, 206
Պալէ—541
Պալի Ըսամբալցի, ստց.—624
Պալի (զան.)—45, 672, 694
Պալյան Տ.—198, 499
Պախան—514
Պախղիար—546
Պակ—774
Պակի—385
Պակիխան—719
Պակիճան—709
Պակիսուլթան—745, 866
Պակլար—827
Պանատուր—193
Պանար—140
Պանրի (զան.)—119, 399, 584
Պաղէր—269
Պաղշի—84
Պաղշայ (զան.)—39, 508, 801
Պաղտասար Ճուղեցի, խչ—202, 203
— դպր., ստց.—281
— սրկզ.—634
— քհն. (զան.)—451—453, 623, 711, 824
— (զան.)—12, 58, 80, 308, 351, 367, 405, 514, 562, 678, 687, 690, 693, 699, 708, 709, 760, 768, 770, 775, 776, 783, 796, 823
Պաղտատ—695
Պաղում Ճուղեցի, ստց.—132
Պայ—184
Պայանատուր—729
Պայիզդուր—455
Պայխան (զան.)—513, 613, 812
Պայրամ, փաշա—593, 689
Պաշարաբ—116
Պազ (զան.)—196, 364, 407, 807, 835
Պազաբ—72, 73
Պազայ (զան.)—87, 469
Պուզաչ—517
Պազաչան (նաև Պազանան, զան.)—112, 141, 196, 210, 211, 360, 364, 407, 643, 706, 835
Պազիկ (զան.)—118, 590, 618, 625
Պազիկ Սաֆար—868
Պազիե—414, 415
Պազուկ (զան.)—285, 386, 807
Պազուռէս Տրփրխիսցի—486
Պազիէն—517
Պազո—484
Պատիր—768
Պատուական—81
Պարասկ—416
Պարասկև—265
Պարաբ—450
Պարաբիազ—449
Պարեզ—342
Պարիշախ—42—44, 245
Պարխան—513, 631, 812
Պարխուտար (զան.)—123, 435
Պարնէ—752
Պարոն, ստց.—118
— (զան.)—53, 55, 80, 81, 209, 377, 405
Պարոնդատ—108
Պարոնլուս—3
Պարոնշայ—581
Պարոնվարդ—517
Պարոնտէր—534, 535
Պարոնբայ (զան.)—24, 773
Պարսամ Վարագեցի, նրգզ.—182, 227, 552, 840
— աբզ., գրչ.—848
— գրչ.—21, 361, 515
— կկզ.—3
— կզմզ.—400
— նրգզ.—490
— (զան.)—102, 106, 141, 196, 216, 244, 250, 262, 266, 407, 423, 435, 437, 486, 563, 583
Պարսան—835
Պատրոս, դպր., գրչ.—261
— ստց.—642
— եպս.—325
— (զան.)—45, 113, 136, 293, 399, 533, 537, 625, 643, 675, 732, 750, 862
Պարֆիւն տե՛ս Պորփիր
Պաֆիր—327
Պեսան, գրչ.—457
Պենեբա—217
Պետրոս Ապիանի—9
— Կառկառցի, Կիլիկիայի կաթողիկոս—48, 238, 377, 747

— Կեսարացի, *ստց.—881*
— Ջանկեցի—*200*
— Ջուղայեցի—*669*
— *արհեպ., հոգևոր առաջնորդ Խարտիշարու—8*
— *արքեպ., հոգևոր առաջնորդ Մաղարդի վանքի—189*
— *եպս., հոգևոր առաջնորդ Ս. Գևորգի—143*
— *եպս., հոգևոր առաջնորդ Անլոց վանքի—120*
— *քհն., գրչ.—587*
— *ծղկ.—583*
— *երց., կգմղ.—412*
— *երց., նրգղ.—324*
— *խչ., ստց.—273, 490—492, 622—624*
— *խչ., ստց. (զան.)—49, 666*
— *քհն., ստց. (զան.)—718, 757*
— *աբղ., ստց.—636*
— *ստց. (զան.)—90, 380, 453, 700, 868*
— *արհեպ.—626*
— *եպս. (զան.)—8, 325, 342*
— *երց. (զան.)—627, 721*
— *սրկդ. (զան.)—554, 801, 802*
— *քհն. (զան.)—234, 388*
— *դերձակ—58*
— *խչ.—161*
— *մաքսապետ—497*
— *(զան.)—3, 4, 39, 40, 45, 58, 78, 89, 113, 116, 131, 141, 172, 197, 208, 222, 244, 250, 251, 262, 268, 273, 293, 302, 339, 380, 388 389, 399, 431, 436, 450, 455, 493, 501, 503, 533, 588, 636, 642, 643, 659, 661, 700, 721, 725, 735, 736, 743, 750, 752, 755, 758, 775, 781—783, 789, 815, 818, 822, 823, 845, 852, 855, 862, 867*
Պետրոս-Պողոս *քհն., հեղինակ—839*
Պզտիկխաթուն *(զան.)—215, 244, 322*
Պզտիկխաթուն *(զան.)—215, 244, 322*
Պզտիկտատիկ *(զան.)—631, 711*
Պէկ—*310*
Պէկթամուր Էրզնկացի—*316*
Պէկիճան—*699*
Պէկլար—*809*
Պէկլէր, *ստց.—760*
— *(զան.)—508, 721*
Պէկու—*380*
Պէկոսմաղէ—*255*
Պըլպուլ, *գրչ.—361*
Պըստիկտատիկ—*417*
Պինիաք—*744*
Պիրալխ—*773*
Պողարյան Ն.—*457, 571, 578, 831*
Պողոս Թավաբալեցի, *ստց.—479, 480*
— *երց., ստց.—466*
— *եպս.—158*
— *կղմղ.—703*
— *փիլիսոփա—89*
— *(զան.)—92, 130, 380, 578, 699, 782*
Պորփիւր—*424, 577, 578, 675*
Պոդոմ—*229*
Պրոխորոն *(զան.)—337, 567, 569*
Պուլայ—*625*
Պուճիաք Սեբաստացի, *թարգմանիչ—205, 385*
— *269*
Պուտախ—*87*
Պօճաան Տօճավագեցի—*408*
Պօղ *երց.—650*
Պօղիկ—*329*
Պողոս Թոխաթցի, *ստց.—140*
— Մծբնեցի, *խչ., ստց.—131*
— Ջուղեցի, *ստց.—366*
— Տիւրիկցի, *գրչ.—94, 95, 137, 138*
— *գպր., գրչ.—863*
— *երց., գրչ.—70, 764*
— *գրչ. (զան.)—4, 38, 196, 197, 322, 803, 804*
— *գրչի ուսուցիչ—683, 685*
— *կկղ.—755*
— *կղմղ.—246*
— *վրդ.—554*
— *(զան.)—5, 39, 40, 78, 92, 163, 176, 201, 267, 273, 329—331, 339, 360, 388, 391, 416, 441, 490, 519, 554, 624, 625, 634, 659, 664, 695, 732, 743, 758, 789, 793, 810, 844, 855*
Պողաաեի Խաչէռ, *գրչ.—283*

Ջալալ *(զան.)—32, 34, 210, 346, 399*
Ջալալբէկ, *ստց.—346, 347*
Ջաղէ—*19*
Ջամբուղ Ջուղայեցի, *ստց.—417*
Ջումիբէկի—*665*
Ջանաղ—*455*
Ջանազիղ *(զան.)—232, 478, 811*
Ջանաք *(զան.)—208, 789*
Ջանաղ *(զան.)—20, 91, 249, 458, 459, 486, 552, 635, 706, 733, 776, 808, 811, 819, 846, 850, 857*
Ջանաղա—*477*
Ջանաղէ—*19*
Ջանբէկի—*185*
Ջանգիր—*571*
Ջանբէկի—*13, 347*
Ջանիմանե—*477*
Ջանիփուտ—*631*

Ջանխաթուն—434
Ջանղուլ—789
Ջանմէլիֆ—231
Ջանսենաա—736
Ջանսօլթան—259
Ջանում (զան.)—50, 52, 358, 361
Ջանվաշ (զան.)—622, 714, 845
Ջաչուռ—388
Ջավալ (զան.)—273, 623
Ջաֆար, խչ.—118
Ջզուան—490
Ջիլու, ստց.—455, 556
Ջինան—360, 391
Ջլափան—583
Ջնան, հնդկաց թագավոր—633
Ջոնար—116
Ջրախ—617, 618
Ջուլալ—369
Ջուսար (զան.)—44, 486
Ջմարուռ—790

Ռագու Միենյան, Մոլդավիայի թագավոր—162, 358
Ռանան—521
Ռաստամ խան—տե՛ս Ռստամ խան
Ռատուլ—տե՛ս Ռադու Միենյան
Ռենան (զան.)—39, 626
Ռէնեպ փաշա—314, 316
Ռբստակէս Խարբերդացի—316
— Տանձփարախ անապատի հոգևոր առաջնորդ—141, 351
— երց., գրչ—17, 33, 383
— ստց. (զան.)—183, 356
— վրդ., ստց.—տե՛ս Արիստակէս վրդ.
— վրդ.—176, 187, 188
Ռիանան—147
Ռոնիչան—487
Ռսատակէս—144
Ռստամ խան—570, 634
Ռուսիենան—94
Ռուսդամ խան, Բագրատունյաց ազգից—770
Ռուստում—416

Սաբի—տե՛ս Սեֆի Ա
Սաբրիխանմ—670
Սաբրիկ—115
Սաթաբ—750
Սաթլմիշ (նաև Սաթիլմիշ.)—342, 804
Սաթում—267
Սախպ—669
Սալան (զան.)—255, 466
Սալանեղդին—66
Սալամ (զան.)—108, 267, 380, 765, 766, 776, 845
Սալթան—804
Սալթանում—34
Սալին (նաև Սալինէ)—659, 660
Սալինչէ—132—134
Սալմինազ—211
Սալոմէ—604
Սալչուկ (նաև Սալչուկ, զան.)—91, 168, 307, 824
Սալվար (զան.)—208, 475, 655, 824, 866
Սալվարիխան (զան.)—33, 564
Սալվարում—300
Սալվինազ (զան.)—35, 345, 776, 777, 824, 849
Սալուխար—71
Սալուխնա—335
Սալուխնազ (զան.)—294, 848, 849
Սալում—768
Սալար—745
Սալխնազ (զան.)—400, 765
Սախակ, քհն.—21
Սանակ Բաղիշեցի, գրչ., ծզկ.—40, 42—44, 231, 239
— Բենկանցի—344
— Կանշացի—52, 55
— Կարկառեցի—52
— Կարնեցի—231
— Ցովեցի, սրց.—855
— Շաամխցի—112
— Զալապի—172
— Պարթև, կաթողիկոս Հայոց—371
— Վէրդիկեց—750
— Վանեցի—58
— կաթողիկոս Հայոց—328
— Կարինի հոգևոր առաջնորդ—488
— արդ., գրչ. (զան.)—68, 69, 249, 251, 395, 436, 437
— երց., գրչ. (զան.)—287, 288, 509, 510
— գրչ. (զան.)—14, 99, 268, 295, 296, 370, 422, 619, 702, 754, 793
— ծզկ.—97, 112
— կզմզ.—460, 487
— ստց. (զան.)—10, 112, 116, 582, 671
— (զան.)—2, 39, 43, 68, 69, 102, 103, 111, 112, 118, 119, 140, 141, 221, 222, 232, 245, 273, 302, 344, 378—380, 388, 400, 423, 456, 490, 494, 508, 513, 514, 553, 554, 562, 613, 615, 622, 623, 630, 670, 703, 714, 755, 768, 810, 812, 867
Սանապ—45
Սանար—45

Սահիպսոլթան—630
Սահրատ, խշ., ստց.—29
— (զան.)—251, 732
Ծաղամէր—744
Սամարքու—629
Սամբատ—564
Սամբրեոյէ—778
Սամսոն—44
Սամուէլ, վրդ., Անկյուրիայի հոգևոր առաջնորդ—672
Սամուէլ (նաև Սամէլ, զան.)—244, 395, 626, 845
Սայիք (նաև Սայիպ, զան.)—423, 547
Սայիքսալթան (նաև Սայիպսալթան, զան.)—423, 546
Սանդուխ—386
Սանդուխտ (զան.)—13, 220, 363, 659, 661, 700, 712
Սանամ—517
Սանասար—811
Սանոս Չալապի—161, 171—174, 193, 498, 628
Սանչյան Ա.—831, 832
Սապաի—493
Սապրիխան—583
Սառայ (զան.)—26, 98, 99, 120, 216, 254, 275, 435, 475, 659, 687, 699, 708, 803, 833
Սառէ (զան.)—19, 36, 548, 661
Սառախաթուն—807
Սառիկ (զան.)—183, 560, 700, 708
Սառուխան—112
Սավար—413
Սավի—տե՛ս Սեֆի Ա
Սավզիկ—628
Սասաղ—112
Սատաղայ—521
Սատբաշի—449
Սատիբէկ—77
Սատրիճան—407
Սատրիջանան—33
Սատրփիալ—669
Սարալու—347
Սարաա (զան.)—265, 293, 604, 629
Սարասս (նաև Սարասսր)—590, 858
Սարգիս Ոդեսացի, կղմզ.—558
— Երզնկացի, գրչ.—692
— Երուսաղէմցի, վրդ.—481
— Թոխատեցի—706
— Լէնցի—449
— Կծուեցի, ստց.—81, 82
— Հալապցի, գրչ.—596
— Հիզանցի, (Խիզանցի), գրչության վարպետ—148, 217, 253, 303, 371, 464, 846, 852
— Մելանեցի, գրչ.—313, 314, 357—360
— Պալխաուրցի, գրչ.—328, 372, 488
— Սազմոսավանեցի—52
— Սպերցի, վրդ., ստց.—214, 215
— Վաչեցի, թարգմանիչ—363
— գպր., գրչ. (զան.)—362, 374, 842
— երց., գրչ.—591, 592, 725
— սրկդ., գրչ.—366
— քհն., գրչ. (զան.)—98, 403, 825
— գրչ. (զան.)—145, 234, 351, 489, 608, 609, 611, 732, 827
— մահտեսի, ստց.—191, 382
— վրդ., ստց.—322
— քհն., ստց.—404
— ստց. (զան.)—18, 47, 219, 366, 383, 490, 537, 592, 612, 818
— կղմզ. (զան.)—186, 233, 364, 374, 809
— նրգզ. (զան.)—398, 698, 699,
— երց. (զան.)—16, 52, 557
— եպս.—81
— վրդ.—473, 476, 513
— քհն. (զան.)—21, 146, 180, 261, 487, 491, 590, 765, 766
— վարպետ—4, 294, 319
— բարձունապետ—532
— հացթուխ—250
— (զան.)—2, 9, 17—19, 21, 27, 32, 58, 60, 68, 78, 83, 85, 86, 89, 92, 98, 111, 118, 121, 123, 140, 144, 148, 153, 168, 176, 185, 189, 190, 204, 209—213, 216, 217, 226, 231, 245, 259, 278, 297, 308, 310, 314, 341, 344, 360, 363—365, 367, 369, 373, 380, 381, 404, 436, 437, 441, 450, 454, 456, 477, 484, 486, 487, 521, 526, 529, 543 ,546—548, 552, 562, 564, 570, 580, 613, 617, 622, 626, 627, 643, 645, 656, 659—661, 669, 678, 683, 697, 704, 706—708, 712, 726, 743, 770, 774, 775, 789, 804, 807, 819, 823, 825, 827, 828, 835, 837, 845, 855, 858, 862
Սարգիսյան Բ.—349, 350, 399, 537, 632
Սարգսյան Ն.—468
Սարխոշ—142
Սարխոշ—254
Սարկաւագ (Հովհաննես)—268, 339
Սարճատ—529
Սարվար—477
Սարու—455
Սարուխան, սրգ., գրչ.—827
— Ջուղայեցի, ստց—529, 828
— ստց.—299, 300
— (զան.)—94, 141, 168, 205, 208, 361, 461, 462, 555, 819

Սարուեան—666
Սարում—224
Սարֆոազ—562
Սարֆրազ—819
Սարզգեար—208
Սաւ (նաև Սաւֆի, Սաֆի)—տե՛ս Սեֆի Ա
Սաւլթաիւաթուն—189
Սաւլթան, ստց.—208
— (զան.)—208, 254, 491, 517, 776, 813
Սաւլթանալ—94
Սաւլթափաշէ—564
Սաւու—325
Սաւկուլ—768
Սաւնթաթ—868
Սաւրոյ—487
Սափի—տե՛ս Սեֆի Ա
Սափոր—423
Սաֆո—419
Սաֆար Ամիրասաթէնց, խշ., ստց.—677
— Ջուղայեցի, ստց.—100, 101, 113
— դպր., գրչ.—598, 599
— սրկգ., գրչ.—339
— գրչ.—508
— ստց. (զան.)—39, 93, 755, 783, 784
— կկղ.—750
— խշ. (զան.)—248, 265, 346, 618
— մելիք—695
— (զան.)—34, 35, 98, 105, 118, 175, 224, 225, 250, 264, 307, 323, 335, 345, 382, 401, 439, 449, 543, 563, 619, 754, 848
Սաֆարաղէ—347
Սաֆուրիան—266, 562
Սաֆարվալաթ—347
Սաֆռազ—266
Սաֆրազ—285
Սաֆու—տե՛ս Սեֆի Ա
Սդէցֆո Խաճիկիյենց Լովցի—334
Սերոսաոս Սարկաւագ, վրդ.—157
Սենեֆարիմ—708, 809
Սեվեր—287
Սերգիս—170
Սեղն—619
Սեփուճէ—853
Սեֆի (նաև Սէֆի) Պարվից շահ—323, 324, 333, 335, 354, 379, 383, 398, 400, 413, 420, 427, 434, 435, 438, 449, 450, 452, 455, 462, 477, 480, 491, 492, 511, 514, 524, 528, 547, 550, 551, 560, 561, 608, 610, 623, 628, 630—635, 648, 655, 664, 671, 683, 684, 699, 701, 710, 711, 730, 740, 768—770, 772, 778, 786, 804, 805, 808, 816, 819, 824, 826, 827, 854, 860
Սէր (զան.)—58, 626, 845
Սէքիչեան—570
Սէքօ—626
Սէղմէր—670
Սէյրան—140
Սէսսիկ—434
Սէաիխան—381
Սէրապիոն, կղմղ.—233
Սէֆէր—540
Սէֆէրպալի—758
Սէֆի միրզա—323, 324
Ներքլումամ—791
Սրոակ—476
Սրբատիոն—310
Սրֆր—տե՛ս Սեֆի Ա
Սքրլպնաթ—366, 367
Սրլախվ—105
Սիամոն (զան.)—105, 106, 388, 703
Սիլպարոն—118
Սիմ (զան.)—153, 808
Սիմայ—661
Սիմաւն—625
Սիմաւոն, դպր., գրչ.—309
— մելիք, ստց.—654, 655
Սիմաւոն (նաև Սիմօոն, զան.)—145, 197, 381, 383, 449, 474, 755
Ս[ի]մօոն, ստց.—208
Սիմէոն վրդ., Ապարանից հոգևոր առաջնորդ—147, 152, 252, 253, 377, 817
— արհեպ., Բալուի հոգևոր առաջնորդ—112
— արքեպ., Հալեպի հոգևոր առաջնորդ—351
— Սեբաստացի, կաթողիկոս Կիլիկիայի—225, 502, 503, 509, 524, 527, 528, 531, 566, 628, 646, 678, 692, 698, 703, 704, 709, 716, 722, 751, 778, 780, 782, 783, 791, 793, 795, 823, 866
— Լենացի, գրչ.—241, 285, 597, 654
— Տիգրիկեցի, գրչ.—71
— արղ., գրչ. (զան.)—355, 669, 670
— դպր., գրչ.—334
— քհն., գրչ. (զան.)—311, 364, 631
— գրչ. (զան.)—62, 156, 157, 249, 409, 578, 636, 658, 822
— բարձրապետ, ստց.—858
— վրդ. (զան.)—148, 554, 717, 850
— քհն. (զան.)—298, 299, 360
— (զան.)—24, 52, 130, 244, 258, 263, 287, 310, 353, 431, 457—459, 556, 569, 576, 698, 728, 755, 819, 828, 850, 867
Սիմոն Ապուչեխցի, ստց.—531
— Ջուղայեցի, գրչ.—107, 108, 717
— դպր., գրչ.—86
— երց., գրչ. (զան.)—132, 164, 408
— գրչ. (զան.)—203, 421, 442

— կաթողիկոս Հայոց—398
— քհն. (զան.)—89, 431, 545
— (զան.)—33, 44, 78, 448, 511, 551, 562, 587, 670, 732, 776
Սիմէոն—տե՛ս Սիմէոն Սեբաստացի
Սիմէօն, ծղկ. (զան.)—691, 728
Սինան (զան.)—34, 346, 592
— Ջալապի—21
Սինանբէկ—346
Սինափաշէ (զան.)—307, 513, 631, 813
Սինամարիմ (նաև Սինամիրիմ, զան.)—183, 250, 635, 857
Սինդուխտ—414, 807
Սիրամարգ—441
Սիրանոս—168
Սիրդուխտ—105
Սիրիզդ (նաև Սիրդուզդ, Սիրիբուխա, զան.) —145, 417, 659
Սիրմայ—360
Սիրուբուիբ—529
Սիրուն (զան.)—147, 360, 484, 485, 513, 630, 812, 852
Սլէման խչ.—265, 307
Սլիմ—465
Սկանդար Ջալապի—171—174
Սկանդար (զան.)—382, 383, 412
Սհակ (զան.)—380, 441, 656
Սղմէր (զան.)—311, 312, 335, 401, 448, 513, 631, 812, 848
Սմբատ (զան.)—103, 487
Սյուրմեյան Ա.—81, 457, 571, 831
Սոլթան—381
Սոլթանդուլ—267
Սողոմէ (զան.)—729, 852
Սողոմէր (զան.)—35, 853
Սողոմսն (զան.)—353, 525
Սոպի (նաև Սովի)—տե՛ս Սեֆի Ա
Սոսկան—631
Սոփիայ—603
Սոփիէ—144
Սոֆիէ—411
Սպանդիար—669
Սպանա—18
Սարեփանոս Ախթամարցի—486
— Ամասիացի, դպր., գրչ.—26, 512
— Դաշտեցի, երց., գրչ.—702
— Թոխաթեցի, գրչ.—51, 61
— Մոկացի, գրչ., նրգդ.—190, 191, 457, 706, 715, 761
— Ջուղայեցի, գրչ., ծղկդ. (զան.)—77, 201, 562, 614, 633, 667, 668
— Ջուղայեցի Նաղաշ—716
— Սիւնեաց, բանաստեղծ—178
— դպր., գրչ.—85, 129, 130
— եպս., գրչ.—309
— երց., գրչ. (զան.)—9, 274, 298, 302, 311, 312, 504, 759
— սրկդ., գրչ.—448—451
— վրդ., գրչ.—304, 305
— քհն., ղրչ. (զան.)—109, 110, 136, 301, 368, 410, 482—484
— գրչ. (զան.)—17, 294, 410, 432, 480, 484, 490, 491, 501, 628, 629, 669, 715, 750, 766, 814, 838
— երց., ծղկ.—816
— երց., ստց.—34, 35
— վրդ., ստց. (զան.)—192, 522, 668
— ստց. (զան.)—68, 69, 277, 297, 403, 554, 555, 576
— Ականց անապատի հոգևոր առաջնորդ—627
— Աղթամարի հոգևոր առաջնորդ—18, 20, 39, 73, 111, 216, 303, 380, 387, 494, 620, 622, 626, 664, 733, 817, 846, 869
— Լիմ անապատի հոգևոր առաջնորդ—479, 523, 558, 626, 666—668, 811
— ծղկ.—561
— կղմղ. (զան.)—119, 344, 674, 840
— նրգդ. (զան.)—475, 621, 704
— Հայոց կաթողիկոս—296
— փիլիսոփա—67
— եպս.—665
— վրդ. (զան.)—72, 103, 154, 199, 393, 558, 633
— քհն. (զան.)—3, 29, 250, 251, 396, 404, 406, 431, 436, 448, 492, 567, 580, 696, 850
— (զան.)—17, 19, 69, 73, 80, 98, 115, 120, 124, 135, 140, 148, 152, 154, 183, 185, 189, 193, 194, 198, 205, 206, 221, 234, 246, 250, 254, 255, 287, 289, 296, 326, 328, 345, 349, 353, 376, 386, 391, 401, 437, 443, 445, 446, 449, 450, 454, 465, 475, 484, 485, 514, 534, 555, 556, 592, 599, 603, 619, 627, 656, 658, 674, 677, 698, 708, 728, 755, 761, 763, 809, 825, 833, 838, 846, 849, 867
Սրապ—407
Սրապիոն Բարբերացի, գրչ.—314, 358, 360, 361
— Եղեսացի (նաև Ուռհայեցի) կաթողիկոս Հայոց—26, 48, 377, 378, 527, 579, 584, 585, 712, 781, 864
— ղրչ.—50, 52
— գրչ., կղմղ.—163
— դպր.—357
— մահտեսի, ստց.—625

— *բաբունի—724*
— *վրդ. (զան.)—53, 239, 424*
— *քհն.—21*
— *(զան.)—138, 147, 151 153, 183, 196, 211, 254, 255, 307, 329, 533, 640, 708, 782, 801, 809, 835, 846*
— *Սրսուր—578*
Սուգիաս, *նրգդ.—754, 827*
Սուդար—*790*
Սուլղան Թոխատցի—*725*
Սուլղան *(նաև* Սուլթան, Սուլտան, *զան.)—22, 123, 155, 193, 215, 230, 244, 261, 265, 307, 322, 346, 418, 450, 456, 490, 583, 630, 669, 707, 760, 764, 810, 811*
Սուլղաշ, *դպր., նրգդ.—80*
Սուլտան Աշլնցի—*780*
Սուլթանդն—*183*
Սուլթանադէ—*708*
Սուլթանբէկ—*721*
Սուլթանէ—*694*
Սուլթանիատուն—*39*
Սուլթանխսան *(զան.)—529, 611*
Սուլթանմելիք—*21*
Սուլթանշայրէկ—*307*
Սուլթանպիքայ—*83*
Սուլթանում *(զան.)—34, 269, 347*
Սուլթանփաշայ—*762*
Սուլթանփաշէ—*34*
Սուլթափաշայ—*346*
Սուլիման, *Օսմանյան սուլթան—234*
Սուլխան—*825*
Սուլտաշ—*484, 485*
Սուլեիաս—*231*
Սումղուր—*786*
Սուսամբոր *(զան.)—216, 810*
Սուրաբ—*845*
Սուրտամիշ, *ստց.—221*
Սուփիանէ—*347*
Սուֆիազ—*273, 623*
Սուֆիաս, *գրչ.—14*
— *(զան.)—108, 232, 490, 491, 699, 729, 818, 846, 852, 853*
Սֆանտար Զալապի, *ստց.—628*
— *39*
Սօլթան Ահմատ, *բէկ, քուրդ—234*
— *(զան.)—141, 248, 262, 456, 629, 757, 824*
Սօլթանկատէ—*258*
Սօլթանխաթուն *(զան.)—417, 513*
Սօլթանղուլ *(զան.)—414, 789, 790*
Սօլթանշէ—*20, 21*
Սօլթանպէկ—*433*
Սօլթանշան—*711*
Սօլթանփաշէ *(զան.)—268, 631, 818*
Սօլթայիաթուն—*725*
Սօլթափաշի—*346*
Սողոմէ—*262*
Սոֆի—*տե՛ս* Սեֆի Ա
Վաթան, *ստց.—676*
— *(զան.)—631, 632*
Վալէ, *խչ.—604, 729*
Վալի *(զան.)—265, 725*
Վանան *գրչ., ծղկ.—194, 337, 356, 565—568, 606*
Վանուտ Արշուկեցի—*57*
— *գրչի հայրը—507, 536, 544, 592, 687—689*
Վալասպոլքան—*267*
Վանական, *վրդ.—123, 466, 700, 708, 724, 809*
Վանկրամ—*39*
Վանէ—*273, 491*
Վանէս—*811*
Վանիս—*254*
Վառիկ—*440*
Վառվառ *(զան.)—106, 162, 183, 248, 388, 591, 592, 659, 661, 712, 725, 735*
Վասակ, *ուրացող—650*
— *պարոն—519*
Վասիլ, *արքեպ., երաժիշտ—80, 678*
— *Օլախաց երկրի թագավոր—799*
— *(զան.)—34, 35, 237, 567*
Վարդ—*753*
Վարաղ—*89*
Վարդ Լէնցի—*309*
— *(զան.)—151, 153, 185, 357, 360, 492*
Վարդազատ *(զան.)—360, 642, 643*
Վարդազար *(զան.)—72, 360, 492*
Վարդախաչիկ—*562*
Վարդան (Բարձրբերդցի)—*33, 156, 263, 375, 376, 418, 424, 500, 527, 548, 647*
— Լեհեցի, *գրչ.—162*
— *(Մամիկոնյան)—740, 762*
— *աբղ., գրչ. (զան.)—33, 119, 344, 476, 852*
— *դպր., դրչ.—180*
— *երց., գրչ. (զան.)—22, 787*
— *սրկդ., գրչ.—512, 663, 664*
— *քհն., գրչ.—817*
— *գրչ. (զան.)—7, 8, 114, 174, 198, 515, 831, 832*
— *գեր. աղտ.—665*
— *ստց. (զան.)—161, 279, 293, 309, 385, 629, 774*
— *արքեպ.—89*
— *եպս.—194*
— *վրդ.—123*

— բարունի—813, 814
— նրգզ. (զան.)—206, 482
— կկղ.—745
— արզ. (զան.)—464, 733
— քոն. (զան.)—234, 360, 406, 433
— (զան.)—33, 73, 84, 85, 91, 105, 111, 148, 153, 234, 243, 244, 263, 299, 310, 326, 381, 419, 440, 445, 456, 517, 529, 543, 552, 560, 638, 643, 645, 687, 688, 727, 734, 750, 751, 755, 764, 798, 822, 827, 828, 835, 836, 838, 867
Վարդանան (զան.)—221, 299, 441
Վարդանանք—տե՛ս Գրիգոր, Երուսաղեմի հոգևոր առաջնորդ
Վարդանէս, գրչ.—838
— ստց. (զան.)—76, 254, 255
— (զան.)—21, 33, 77, 140, 141, 440, 659, 763, 776
Վարդանիս (զան.)—212, 213, 231, 297, 302, 435, 486, 665, 764, 845
Վարդեն (զան.)—81, 158, 399, 412
Վարդեվան, ստց.—223
— (զան.)—5, 76, 386, 477
Վարդերես Լեհցի, գրչ.—432, 594, 595
— սրկգ., գրչ.—286
— ստց.—286
— (զան.)—385, 544, 576, 592, 643, 726
Վարդենատ—760
Վարդիթեր—663
Վարդիկ (նաև Վարթիկ զան.)—44, 115, 226, 308, 360, 446, 492, 494, 529
Վարդիտաթուն (նաև Վարդեաթուն, զան.)—141, 161, 172, 173, 231, 255, 259, 353, 440, 446, 486, 490, 497, 498, 526, 706, 707, 760, 763, 765, 770, 810, 819
Վարդկ—353
Վարդոց—391
Վարդպարոն—819
Վարդուկ—364
Վարդուկա—676
Վարզել—807
Վարթենատ—735
Վարթեր—106
Վարծել—669
Վարհաս, խչ.—317
Վարոց—810
Վարպետ—546
Վարվառ—708
Վելիշան—98
Վել—789
Վելիխան—399
Վելինան (նաև Վելիշան, զան).—105, 106, 257, 273, 490, 623, 624, 768, 827
Վերդիկ—750
Վիրապ—258
Վլատիսլաւ Դ, Լեհաց թագավոր—536, 545, 588, 589, 602, 641, 647, 653, 698, 718, 761, 785, 797, 843
Վլիսան—725
Վռամշապուհ, Պարսից թագավոր—426
Վրդանէս Աղթցի—767
— երց., գրչ.—118
— կզմզ.—544
— ստց.—495
Վրդանէս (նաև Վրթանէս, զան.)—135, 288, 376, 664

Տաթլիփաշէ—106
Տաթլու (զան.)—508, 733
Տալիթ—405
Տալիթայկում—34, 35
Տաշյան Հ.—194, 197, 508, 610
Տառա—471
Տատիկ (զան.)—36, 384, 423
Տատում—853
Տատուր Վանանշէնցի—488
— ստց.—168
— նվրտ.—364
— (զան.)—38, 707
Տարվէժ—693
Տալաթիար—435
Տալվաթ (զան.)—308, 643
Տալվաթկոլ—113
Տալուաթ, գրչ.—862
Տաղլանբէկ—664
Տանախաթուն—770
Տանախանում—546
Տանապետ ստց.—559
Տանեկան—791
Տանոյ—675
Տանտ—322
Տաուր փաշա—50
Տեր Ավետիսյան Ա.—221, 630
Տեր Հարությունյան Ս.—281
Տեր Հովնանյանց Հ.—411
Տեր Ղևոնդյան Ա.—875
Տեր Մկրտչյան Գ.—51
Տեր Մովսեսյան Մ.—155, 187, 225, 299, 336, 454, 501, 509, 560, 591, 684
Տեկանց Ա.—716
Տերոն, նրգզ.—750
Տերվիշ—788
Տերտեր—563
Տերտերանց—487
Տերուն (զան.)—136, 342, 804
Տիլան (զան.)—775, 862

Տիլանշ Խարբերդցի—352
Տիլանշ (զան.)—5, 388, 818
Տիլպար—626
Տիկնուկ—309
Տիրայր վարդապետ—304, 305, 412, 413, 451, 621, 627, 671, 709
Տիրատուր Կռակառեցի, ստց.—413
— (զան.)—58, 72, 193, 434, 501, 502, 551, 582, 588
Տիրացու, եպս.—72
— 369
Տիրոնէ—788
Տիրուճէ—81
Տիրուճի—532, 644
Տիրում, ստց.—281
Տոլիկ—774
Տոլուաբ—708
Տովլաքիար—439
Տրդատ Գ, թագավոր Հայոց—41, 573, 685
— Իզմիրի հոգևոր առաջնորդ—596
— 753
Տուլվաբ—5
Տունու—227
Տուտում—293
Տուրի—տե՛ս Դուրի
Տուրմիշ— 730
Տոլի—818
Տոլվաբ (զան.)—353, 688
Տոլվաքիար—385
Տոնախանում—677, 678
Տոնապետ, ստց.—461, 462
— (զան.)—8, 140, 276, 504, 750
Տոնիայ—852
Տոնիկ—867

Ռելիոէ—466

Ուզուն, նվրտ.—364
Ուլազայ—671
Ուլիանէ—603
Ուլիանոս—651
Ուլիշան—517
Ուլու—809
Ուլուբէկ Թավ[ր]իզեցի, ստց.—285
Ուլուխաքուն (զան.)—143, 197, 411
Ուլուխան (զան.)—440, 519, 560
Ուլումբիաբ—33
Ուլուպի, ստց.—70
Ուլուպիմայ—3
Ուլուս—767
Ուղիդէ—36
Ուղիտ—601
Ուղլանփաշ—205
Ուղուր—288
Ուղուրլու, ստց.—382
— (զան.)—143, 314, 383, 411
Ուղուրխոլբան—266
Ուղուրխոլբան—561
Ուղուրսուլբան—197
Ումբրիշան—547
Ումրիշան (զան.)—212, 254
Ուռումպէկ (զան.)—184, 725
Ուռուսակէս, ստց.—492
Ուպիան—517
Ուսքիանէ—250
Ուստիան (զան.)—105, 113, 123, 556, 844
Ուստիանէ (զան.)—9, 76, 411, 629, 644, 765
Ուսուֆ (զան.)—93, 225, 780
Ուսուֆշի—784
Ուտիե Բ.—859

Փաքան—587
Փաքիկ—36
Փախշան (զան.)—232, 254, 662, 764
Փանոս, ստց.—471
— (զան.)—58, 190, 244, 335, 353, 399, 513, 519, 521, 631, 659, 676, 708, 711, 811, 812, 827
Փաշ (զան.)—293, 436, 480, 556, 635, 820, 857
Փաշայ (զան.)—45, 118, 123, 215, 305, 322, 360, 642, 760, 801,
Փաշաբէկ (զան.)—94, 224, 244, 311, 395, 422, 435, 496, 552, 555, 570, 757
Փաշախաքուն (զան.)—248, 643, 855
Փաշաղէ—849
Փաշաշէ—335, 401
Փաշաշան (նաև Փաշանան, զան.)—185, 210, 211, 326, 353, 446, 517
Փաշի—776
Փաշուկ—690
Փաշփաշ—275
Փար (զան.)—222, 440
Փարազ—265
Փարաս (զան.)—78, 401
Փարասխան (զան.)—610, 813
Փարէղխան (զան.)—73, 513, 631
Փարիխան (զան.)—136, 411, 478, 570, 582, 766, 825
Փարոյ—259
Փարվար, ստց.—261
Փարու—808
Փափաշ—399
Փեբեշան—73
Փեբսաբեր—611
Փէրիխան (զան.)—631, 818

Փազ—770
Փանզ—287
Փիլիխան—521
Փիլիկայ, Հոռոմոց վարդապետ—41
Փիլիպոս (նաև Փիլիպպոս, Փիղիպոս Սպրակիցի, Նախչուանցի?, վարդապետ, հետագայում կաթողիկոս Հայոց—176, 406, 430, 442, 508, 510, 525, 533, 536, 539, 541, 544, 545, 547, 548, 550, 554—556, 559, 561, 570, 582, 584, 587—589, 592, 596, 597, 600, 603, 607, 608, 610, 619, 623, 624, 626—631, 634, 636, 639, 641, 643, 653, 655—657, 663, 664, 666, 667, 670, 672, 676, 677, 679, 680, 683, 684, 688, 690—692, 696, 698, 701, 705, 710, 711, 717—719, 728, 738, 741, 755, 756, 758, 759, 761, 765, 769, 770, 774, 785, 788, 795, 797, 799, 801—806, 808, 815, 816, 818, 819, 824, 826, 827, 854, 860, 862, 865, 866, 869
Փիլիպոս, եպս., Բշնիի հոգեոր առաջնորդ—816
— սաց.—339
— (զան.)—23, 98, 165, 293, 416, 612, 700, 853
Փիլիպպոս, երց.—559
Փիլոն, Լուծմունք գրքի հեզինակ—510, 526
Փիրազիս—789
Փիրամզէ (զան.)—294, 513, 631, 812
Փիրամիր—666
Փիրասաի—529
Փիրբաշի—449
Փիրբէկ—34, 35
Փիրզատ—643
Փիրի (զան.)—744, 786
Փիրիմալ—136
Փիրիալէկ—260
Փիրիշան (զան.)—68, 142, 224, 232, 254, 388, 517, 789
Փիրղալեմյան Ղ.—26, 27, 82, 93, 94, 103, 153, 187, 196, 211, 213, 224, 243, 244, 249, 250, 254, 271, 289, 301—303, 314, 340, 342, 358, 378, 385, 436, 440, 446, 473, 474, 482, 486, 521—523, 540, 545, 553, 554, 556, 558, 559, 621, 622, 626, 633, 637, 639, 642, 663, 665, 672, 716, 731, 757, 778, 795, 816, 831
Փիրղուլի—789
Փիրսաբեր—632
Փիրվէլ—790
Փիրում (զան.)—94, 566, 703, 711, 776
Փոլաթ—552
Փոխան—387
Փուրիան, սաց.—521
Փոլաթ—790

Քալաիաթուն—671
Քալբալի (նաև Քալբիալայ, Քալբիալի, Քալպալայ) Երևանի խան—655, 701, 740, 816
Քանանայ, կզմզ.—378
Քամալ (զան.)—384, 711, 819
Քաշիշ—147
Քաշմսեղ—517
Քասբար (զան.)—556, 699, 808, 809
Քասպար, գրչ.—711
Քասմոյ—162
Քարամ (զան.)—478, 708
Քարամատ—823, 824
Քարամյանց Ն.—228, 365
Քարամսալբան—555
Քարիմ Միրզախան—621
Քարմաղն—306
Քամոլ—185
Քաֆուր—297
Քեմախաթուն—855
Քեմիայ—676
Քեշիշյան—192, 412
Քէթին—415
Քէլամիր—3
Քէմէլ—581
Քիշիմիր—703
Քիրմիշ—560
Քնար (զան.)—234, 676, 687, 688, 708, 775
Քնոուշ (զան.)—44, 267, 395, 396, 485, 584
Քոլանշյան Ս.—831
Քոսակ—450
Քոսյան Հ.—279
Քրամովսկի, զորավար—652
Քրիսաուսուր (զան.)—3, 83, 222, 275, 547, 620
— սաց.—181
Քրիստուր—508
Քրման (զան.)—141, 216, 517
Քուշակ—716
Քուշիքէկ—524
Քուրդբէկ—519

Օգոստինոս, արքեպ., գրչ.—645, 789
Օեսիս—380
Օեսիֆ Պոնտացիֆ—542
Օթանաս—106
Օլախ—717
Օնան, գրչ.—375
— 419
Օնաննէս, գրչ.—703
Օղիտայ—359

Օղլաե *(զան.)—105, 106, 632*
Օղլանգերաf—*268*
Օղլանկէրաf—*711*
Օմէտ—*106*
Օվանէս—*106*
Օսման *(նաև* Աւսման, Օսման) *Օսմանյան սուլթան—8, 24, 37, 38, 46, 48, 50, 59, 62, 71, 122, 125, 126, 151, 236, 325, 327*
Օրմանյան Մ.—*794*

Ֆազիլ—*73*
Ֆառուխ—*837*
Ֆարիզշատ—*350*
Ֆարխուզատ—*688*
Ֆարհուզատ—*456*
Ֆարղուզատ *(զան.)—726, 730*
Ֆարման—*395*
Ֆարուխ Ջուղեցի—*409, 410*
Ֆռանգի—*813*
Ֆռանգուլ, *խշ.—34, 346*
Ֆռանկ—*513*
Ֆռանչիսկոս Սալլուք—*10*
Ֆրանկի—*631*

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աշրզ Քուչակ *Նահապետ—716*
Ազտալ *Գրիգոր—750, 755*
Աստագել *Պարսամ—227, 848*
Արտեսն *Մարտիրոս—555*
Աֆլենտի օղլի *Յովանէս—687*

Բարերբ *Մինաս—480*
Բեղլու *Ստեփանոս—523*
Բուրկանց *Աւետիս—810*
Բուf *(նաև* Բուզ) *Գրիգոր—575, 576, 680, 724*

Դերի *Հայրապետ—117*

Նղանտոռ *Խոճեկ—693*

Թարխան *Յովհաննէս—153*
Թորոսովից *Նիկողայոս—327, 332*

Խաղում *Յակոբ—347*
Խէր *Ակոբ—435*
Խոնգfար *Օսման—748*
Խուլ *Գրիգոր—194, 765*
Խուլ *Յովանէս—314, 315*

Մածկանց *սքանչելիս սբ. Աւետարան—399*

Կայծակ *Խաչատուր—739*
Կարմիր գլուխ *Ապաս Ա—301*
Կարմիր Լան *Յովանէս—775*
Կարմիր Լոր *Գրիգոր—757*
Կարմիր *Ստեփանոս—137, 230, 235, 438, 713*
Կուլի *Կարապետ—770*
Կուլֆան *Հռեփսիմէ—135, 288, 376, 500*
Կունունկեանց *Սարգիս—366*

Զագ *Յովաննէս—316*
Զիգ *(նաև* Զիf) *Ստեփանոս—28, 64, 65, 100, 101, 201, 299, 300, 416, 505, 853*

Ճանգեմիր *Զաքարիա—15, 16, 87*

Մազման *Սարգիս—102, 141, 266, 335, 345, 563, 849*
Մանտեսի *Սիմէոն—323*
Մանուկ *Աստուածատուր—379*
Մեղրիկանց *Սատաղա—138*

Նաղաշ *Մկրտիչ—530*

Շամբայ *Դաւիթ—520*

Ջիկիան *Մարտիրոս—743*
Ջորբան *Գրիգոր—377*

Պակթամուր Զագ *Յովանէս—315*
Պասլիկ *Սաֆար—868*
Պեխլի *Ներսէս—26*
Պոկոշ *Զիրաք—203, 204*
Պուրլիանց *Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցի—399—400*
Պոլգոլնի *Աստուածատուր—316*

Սառուխան *Սիմէոն Ռապատցի—112*
Սարկաւագ *Յովաննիս—397, 483*
Սարսամեանց *Նիկողոս—363*

Վարդապետ *Սիմէոն—356*

Տիրիկցի *Յովանէս—627*

Քացախ *Մինաս—172*
Քաֆթայ *Ստեփաննոս—8*
Քուչկանց *Յովասափ—183*

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիս—582, 683, 684, 739, 744, 769, 826
Ագրակ—168, 198
Ագատ—766
Ալամէք—751
Ալի[?]փիտ—355
Ախալգաւ—414, 806
Ախալցիխէ (նաև Ախլցէ, Ախլցիա)—125, 126, 325, 510, 670
Ակրն—592, 688, 788
Ագթամար—73, 111, 216, 303, 380, 387, 494, 620, 626, 664, 665, 667, 733, 817, 846, 869
Աղձնեաց (նաև Աղձնիք) աշխարհ—457, 459, 850
Աղձնեաց գյուղ—47
Աղնաղալայ—729
Աղչասարայ—404
Աղուանից երկիր—434, 455, 634, 730
Աղտք—37
Աչանան—175, 177, 178, 351, 604, 608
Ամասիայ—467, 503
Ամստան—386
Ամբաղօլ—230
Ամիթ—տե՛ս Համիթ
Այրարատեան գաւառ, երկիր—տե՛ս Արարատեան գաւառ, երկիր
Անատօլ—60, 522, 648
Անդրիանուպալիս—725
Անթափ—92, 474
Անլոց—120
Անկուռի—տե՛ս Գաղատիայ
Անկուրիայ—10, 62, 79, 327, 331, 672, 710
Անտիոք—606
Աշրաֆ—323
Ապարայ—349
Ապուրանից—147, 371, 464, 720, 869
Ապուշտայ—828
Ապրակունեաց—699
Առաջին Հայոց—377
Առզրում—տե՛ս Արզրում
Առինջք—225
Առիւծ—տե՛ս Լէվ
Ասիա—536
Ասորեստան—386
Ասորոց նահանգ—583
Ապգանան—տե՛ս Սպանան
Ատանայ—722, 780, 821
Աարանա—84, 725
Արաբացոց աշխարհ—172
Արաբկեր—540, 822
Արագածոտն—177, 424, 547
Արաղա երկիր—175
Արարատեան գաւառ, երկիր—67, 74, 99, 123, 175, 178, 179, 209, 226, 419, 424, 428, 462, 478, 598, 639, 655, 696, 701, 704, 724, 741, 816, 843
Արաւասու—301
Արարֆ—388
Արգելան—571
Արեգ—648
Արևան—տե՛ս Երևան
Արզրում—60, 122, 125, 194, 256, 272, 324—327 ,349, 402, 488, 498, 542, 583, 598, 616, 670, 742, 768, 794, 815, 817
Արզրումայ դաշտ—269
Արծկէ—344
Արղն—530
Արնէշ—320, 377, 386, 388
Արմսչ—57, 58
Արմենից—208
Արտամետ—303, 633
Արտաշիր—690
Արտաւիլ—593, 689, 731
Աւրնդանց (նաև Աւրնգաց)—75, 147, 253, 340, 371, 375, 440, 464, 851, 869

Բաբելացոց աշխարհ—150
Բաբելոն—36, 126, 127, 151, 179, 228, 386, 427, 769, 774, 784, 827, 841
Բաբերթ—360, 480, 559, 724
Բագրատունիք, գյուղ—468
Բագու—153, 224, 394
Բալու—112, 303, 627, 637
Բաղդատ—122, 137, 230, 235, 284, 286, 463, 762, 776, 780, 786, 820, 866
Բագէշ—40, 69, 71, 98, 112, 115, 183, 287,

329, 388, 457, 459, 619, 636, 675, 839, 850
Բասեն—256, 326, 327, 639, 672, 724
Բարդիշատ—221
Բեղդահէմ (նաև Բեղդեհէմ, Բեթղահէմ)—29, 116, 715
Բերիայ—տե՛ս Հալապ
Բեորդրով—787
Բզնունաց երկիր—տե՛ս Ղլաթ
Բզնունի—244, 457
Բիւզանդիայ (նաև Բուզանդիայ, Բուզանդիոն)—տե՛ս Կոստանդինուպոլիս
Բիւթանիայ—317
Բոլենց—20
Բուրսա—665
Բշնի—816
Բոչնիֆ—468
Բոնակոթ—660

Գաղատիայ—9, 37, 113, 122, 126, 309, 564, 832
Գանձակ—206, 435, 560, 710, 746, 772
Գանձասար—786
Գանձայ—1, 206, 519, 531, 654, 747
Գանձոյ (նաև Գանձոյ) ձոր—560, 710, 772
Գաւաշ—764
Գաւրա—414
Գեղալեան—223
Գեղարքունիք—257, 766
Գետաթաղ—22, 72, 95, 297, 765
Գետաշեն—206
Գերմանիկ (նաև Գերմանիկոյ) երկիր—194, 337, 356, 605, 606, 632
Գիլան—323
Գինդրան—399
Գլակ—153, 394
Գողզոդայ—506
Գողթան—221, 428, 547, 551, 582, 683, 684, 737—739, 744, 769, 860
Գորէս—188
Գուրեամ երկիր—179
Գօղալդտրայ—457, 459, 850

Դալի-Ֆանի արտ—142
Դալուդարտաշ—766
Դանուրայ—403
Դամասկոս—539
Դաշտ—210, 212, 486, 582, 622, 825
Դաստակ—186
Դավրէժ—286, 696, 742
Դասիվան (նաև Դասվան, Դատան)—206, 613, 633
Դարանաղ—481, 506, 756
Դարաշամբ—221
Դարենից—տե՛ս Նեբրին Դարենից
Դաֆա—տե՛ս Շանդար
Դերշան—325
Դեռցա—795
Դէդմաշին—766
Դիզակ—434, 455, 477, 557, 634, 730, 768
Դրազարկ—338

Եազլովցայ—467, 472
Եաշ—357
Եասասլով—տե՛ս Ցարասլավլ
Երբեր (նաև Երբերիա)—տե՛ս Հալապ
Եգիպտոս—58, 60, 409, 484, 702
Եղեսիայ—130, 364, 712
Եզնկայ—321, 327
Եթովպիայ—149
Ելադա—198
Եկեղեաց գաւառ—321
Եկրան—448
Եղեգի—263
Եղղեդիս—18
Եշանան—տե՛ս Աշանան
Ենկելու երկիր—209
Ենկիտունեա—648
Ենկիֆոյ—338
Երազօլիս—592, 688
Երասղ գետ—396
Երիֆով—289
Երևան (նաև Երասան, Էրէվան)—13, 95, 99, 175, 179, 184, 209, 220, 226, 341, 419, 424, 425, 429, 443, 462, 471, 586, 598, 601, 618, 621, 627, 639, 649, 653, 655, 667, 670, 672, 696, 724, 741, 742, 822, 860
Երնջակ—728
Երուսաղէմ—1, 29, 32, 45, 52—55, 58, 60, 66, 73—76, 86, 87, 110, 113, 120, 148, 152, 153, 159, 171—173, 182, 190, 191, 203, 204, 207, 228, 229, 237, 258, 259, 268, 272, 278, 289, 312, 313, 315, 316, 321, 325, 330, 354, 375, 390—394, 425, 444, 445, 447, 448, 456—459, 461, 463, 468, 476, 491, 493, 495, 499, 504, 506, 512, 525, 527—530, 540, 548, 559, 566, 572, 573, 575—578, 580, 584, 585, 613—615, 635, 667, 673, 674, 680, 681, 685, 686, 688, 715, 744—750, 755, 761, 779, 782, 821, 828, 833, 837, 839, 850, 855, 856, 863, 864, 866—869
Եւդոկիայ—48, 322, 794
Եփեսոս—71
Եփրատ—149

Զազամ—785
Զամօսցայ—203, 271, 282, 285, 369, 718, 785 797
Զառայ—283
Զեթուն (նաև Զէթուն, Զէյթուն)—194, 337, 356, 566, 605, 606, 632
Զմիւռնիայ—314

Էրէրիտ—տե՛ս Հալապ
Էղվերդ—552
Էճեանե—տե՛ս Աչեանե
Էնկէլի—236
Էրզրում—տե՛ս Արզրում

Ըռապատ—707
Ըռասուս (նաև Ըռասաօզ)—տե՛ս Թաֆիրտաղ
Ըռղուց (նաև Ըռուզեաց) աշխարհ, երկիր—41, 61, 149, 202, 283, 285, 545
Ըսպանեան—տե՛ս Սպանեան
Ըստամպուլ (նաև Ըսամպոլ) տե՛ս Կոստանդինուպոլիս
Ըստանոզ—309

Թաբաւական լեռ—783
Թալին—704
Թաղասեռ—435, 455, 477, 557, 634, 731
Թարվէզ—տե՛ս Թաւրէզ
Թացու—387, 668
Թախատ—տե՛ս Թոխաթ
Թաւուղ—466, 700, 708, 809
Թաւրուսկան—տե՛ս Թորըսկան
Թաւրէզ—550, 627, 639, 670, 792, 860
Թաֆիրտազ (նաև Թէֆիրտաղ)—56, 58, 102, 121, 123, 481, 482, 542, 680, 756
Թեղասեռ—տե՛ս Թալասեռ
Թեոդուպոլիս—տե՛ս Արզրում
Թըանեն—488
Թըխիս—տե՛ս Տպխիս
Թիրակայ երկիր—տե՛ս Ռումելի
Թոբալ—487
Թոխաթ—8, 9, 26, 51, 120, 235, 322, 327, 464, 477, 510, 833, 834
Թորըսկան—452, 561, 623, 711, 777, 818, 824
Թորթում—327
Թուխ—850
Թուքատ (նաև Թոքատ)—տե՛ս Թոխաթ
Թրակիայ—482, 600

Իզմիր—187, 314, 474, 596
Իլախաց երկիր—167, 242, 357, 718
Իլէվ (նաև Իլով)—տե՛ս Լէվ
Իմարաստան—տե՛ս Կիլիկիա
Ինջ գաւառ—377
Ինէլ—850
Իսպանէն—տե՛ս Սպանեան
Իստանպոլ—տե՛ս Կոստանդինուպոլիս
Իսֆիտար—316
Իֆլսեռ—648

Լազրեվան—547
Լանասդան—տե՛ս Լենաց աշխարհ
Լանուռ (նաև Լանոռ)—150, 587, 633
Լանիեացոց երկիր—149, 457
Լենաց (նաև Լենու) աշխարհ, երկիր, տուն—30, 114, 131, 202, 236, 241, 271, 285, 315, 332, 407—409, 497, 602, 641, 648, 651
Լէոպոլիս—տե՛ս Լէվ
Լէվ—14, 41, 114, 163, 202, 203, 243, 282, 283, 285, 327, 332, 343, 350, 367, 369, 407—409, 418, 428, 501, 505, 545, 602, 649, 651—653, 673, 685, 686, 785, 832
Լիբիայ—149
Լիմ—66, 143, 522, 523, 526, 633, 668, 845
Լիուսարիայ—606
Լծեռ—184
Լով (նաև Լոֆ, Լօվ)—տե՛ս Լէվ
Լուցf—61

Խազին արտ—753
Խալադիայ—տե՛ս Ղալաթիայ
Խախաեաց (նաև Խաղբեաց) գաւառ, երկիր—407, 724
Խաղբատ—տե՛ս Հաղբատ
Խանամեճանպէքեռ—591
Խաչեֆար—397
Խասգեղ—316, 317, 688
Խարասու—443
Խարբերդ—246, 375, 397
Խարգոմ—399
Խարտիշար—8
Խիզան—115, 233
Խողծ (ճեաց)—տե՛ս Աղճեիֆ
Խոշաբ—396
Խոտանան (նաև Խոտածան)—175, 177, 178, 351, 604, 608
Խորասան—428, 672
Խորձիւն (ճաց)—275, 309, 349, 377
Խրիմ—տե՛ս Ղրիմ
Խոքին—358

Ծամնտու—168
Ծիղկունուց երկիր—655

Կազբից ծով—տե՛ս Կասպից ծով
Կալինոր—168
Կամախ—208, 481, 506, 828

Կամենից (նաև Կամէնից)—78, 131, 167, 170, 282, 332, 417, 468, 472, 588, 589, 641, 698, 793
Կամո—766
Կապան—տե՛ս Ղափան
Կապրովքիու երկիր—168
Կասպից ծով—149, 179
Կասր—457
Կարբի (նաև Կարփի)—424, 475
Կարին—տե՛ս Արզրում
Կարնաւան—179
Կարնկան—486
Կարմունն (նաև Կարմունչ) գյուղ—130, 373
Կաֆայ—3, 5, 15, 16, 23, 24, 30, 63, 71, 96, 222, 258, 259, 285, 338 374, 381, 487, 545, 590, 643, 650, 736, 758, 773, 798, 838, 857, 858
Կեթիկ—տե՛ս Ղուլթիկ
Կեղալեաո—275, 309
Կեսարիայ—30, 46, 118, 168, 192, 315, 361, 382, 428, 528, 680, 716, 751
Կերտէն Տիզրանա—տե՛ս Համիք
Կեցան (նաև Կէցնայ)—18, 387, 486, 622
Կէսարու գաւառ—398, 499
Կիլիկիայ—84, 172, 192, 207, 356, 502, 527, 550, 628, 692, 780, 791, 794, 795
Կիմիշիան—542
Կիւղիկիայ—տե՛ս Կիլիկիայ
Կողոնիայ—472, 508, 559, 693, 807, 835
Կողպ—381
Կոման—9
Կոնիայ—127
Կոստանդինուպոլիս—4—7, 13, 14, 25, 45, 48, 51, 55, 58, 60, 62, 94, 115, 128, 132, 149, 151, 156, 178, 187, 195, 196, 207, 226, 235, 236, 273, 281, 288, 298, 414—416, 320, 325, 327, 328, 331, 347, 352, 362, 373, 375, 384—387, 391, 418, 424, 428, 469, 470, 472, 505—507, 512, 516, 521, 522, 526, 531, 536, 537, 539, 540, 543, 544, 553, 559, 566, 574, 581, 582, 592, 593, 598, 600, 601, 615, 620, 627, 632, 636—638, 641, 644, 648, 660, 663, 664, 667, 670, 677, 680, 688—690, 696, 723, 724, 729, 730, 732, 748, 749, 755, 762, 774, 787, 788, 799, 820, 827, 828, 840, 842, 850, 860
Կովկաս լեռ—149
Կոտայ գաւառ—179
Կոտոր—տե՛ս Երևան
Կորընթոս—762
Կորտի արտ—484
Կուտին—355
Կուտանայ—498
Կոզալդարայ—տե՛ս Գոզալդարայ
Կոզէլեիսար—596
Կոնիո—տե՛ս Ղոնեայ

Հալապ (նաև Հալէպ)—30, 45, 80, 88, 89, 115, 117, 120, 129, 130, 155, 159, 191, 172, 197, 199, 229, 232, 268, 277, 351 366, 369, 375, 389, 412, 413, 497, 498, 502, 503, 525, 529, 535, 539, 577, 605, 628, 645, 678, 687, 692, 781—783, 790, 822, 828
Հաղարծին—145, 260, 837
Հաղպատ (նաև Հախպատ)—30, 142, 268, 397, 414, 483
Հանիքարիան—645
Համան—648
Համիք—24, 25, 47, 51, 113, 115, 116, 127, 135, 137, 163, 228, 235, 239, 240, 319, 323, 329, 339, 349, 378, 394, 404, 428, 438, 454, 489, 499, 526, 527, 530, 579, 583, 597, 598, 620, 653, 670, 696, 706, 713, 755, 781, 801, 803, 841, 847, 861
Համիքկերտ—տե՛ս Համիք
Համշէն—397
Հայաստան (նաև Հայաս տուն)—42, 46, 95, 179, 209, 329, 331, 349, 398, 399, 409, 421, 428, 429, 449, 499, 530, 531, 548, 580, 602, 603, 648, 674, 680, 736, 737, 747, 862
Հայոց ձոր—553
Հայրավանք—766
Հասանխալայ—326
Հարքանդ—655
Հարքերդ—288
Հացուենաց գաւառ—576
Հերապոլիս—տե՛ս Ակրն
Հզու—815
Հէնին—673
Հընտէ—361
Հիզան—41, 44, 114, 147, 148, 811
Հիզնոյ երկիր—73
Հլեհաց երկիր—տե՛ս Լեհաց երկիր
Հնդկաց երկիր—587, 632
Հոնաց աշխարհ, երկիր—42, 43, 258, 285, 338, 404
Հոռոմաց (նաև Հոռոմոց) աշխարհ, երկիր—167, 172, 330, 548, 633, 649
Հունաուսդան Փոքր—648
Հոռոմ—10, 418, 457, 652
Հոռոմկլայ—430, 782
Հրէաստան—748
Հրմիզ (նաև Հրմուզ)—179, 648

59—574

Ջաղսանոր *երկիր—188*

Ղազար Փարփեցու—*տե՛ս* Լազարեվան
Ղազարվան—*տե՛ս* Լազրեվան
Ղազվին—*427, 533*
Ղալաթիայ—*4, 5, 135, 187, 316—318, 638*
Ղայսար—*325*
Ղանդսյար—*22, 77, 150*
Ղանդսլու—*638*
Ղարադէր—*213*
Ղարաճիսար—*325, 472, 693*
Ղարալոյ *երկիր—729*
Ղարամուրատ—*656, 669*
Ղարաշալու—*413*
Ղարասար—*տե՛ս* Կողոնիայ
Ղարասու—*726*
Ղարաքաշիշ—*616*
Ղափան—*615, 808, 816, 826*
Ղափանսաուն—*460*
Ղասախ—*8*
Ղաչնասար—*330*
Ղբլբնգ—*119*
Ղբէ—*494*
Ղբղաղայ—*231*
Ղլաթ—*184*
Ղնբխոյ *երկիր—704*
Ղալթիկ—*43*
Ղրաղաշ—*231*
Ղրիմ—*42, 43, 236, 338, 590, 858*
Ղանայլէ—*տե՛ս* Նիկոմիդ
Ղանեայ—*648, 822*

Ճանուկ—*789*
Ճենաց *երկիր—149, 322*
Ճերմակ *ծով—624, 636*
Ճորոխ *գետ—559*
Ճուղայ—*տե՛ս* Ջուղայ (Նոր)

Մաղանդարայ—*323, 426*
Մաժակ—*46*
Մալաթիայ—*24*
Մակու—*601*
Մանմտանք—*147, 388*
Մաղարդայ—*189, 246*
Մաղայուզ *երկիր—699*
Մայեկաց *երկիր—147, 371, 375, 464, 853*
Մար—*տե՛ս* Եզիպտոս
Մարաղայ—*72*
Մարաց *տուն—548*
Մարզուան (*նաև* Մուրսուան)—*74, 181, 205, 301, 411, 558, 586, 592, 642*
Մարմանդ—*377, 499, 781*
Մարմեա—*26*
Մասլ—*տե՛ս* Մուսուլ
Մաքայ—*59*
Մերսին (*նաև* Մէրսին)—*127, 329, 355*
Մէյտան—*620*
Մբսր—*115*
Միջագետաց *աշխարհ—235, 583, 597, 696, 801, 803*
Միջերկրեայ *ծով—236*
Միսիս—*722*
Մոլդավիա—*358*
Մոխրի *գյուղ—61*
Մոկաց *երկիր, քաղաք—20, 210, 212, 232, 295, 302, 420, 446, 486, 550, 622, 665, 763, 820*
Մոզս (*նաև* Մոկս)—*218, 846*
Մուշ—*26, 153, 244, 275, 390, 499, 627*
Մուսուլ—*126, 127, 137, 336*
Մսրս (*նաև* Մսր)—*241, 702*
Մտրպու *աղբյուր—10*
Մսոքով—*536*

Յախբլցխա—*տե՛ս* Ախլցխա
Յակլ—*272*
Յամադան—*633*
Յամիք—*տե՛ս* Համիք
Յանեասուլ—*տե՛ս* Անատոլ
Յաշուտի *երկիր—331*
Յարևան, *գյուղ Պարսկաստանում—400*
Յարզրում—*տե՛ս* Արզրում
Յարոսլավլ—*241, 242*
Յեղվերդ—*154, 438*
Յենկէլ—*274*
Յետտի *բերդ—71*
Յէնկիշէր—*537*
Յիսկելէ արապ *պազար—317*
Յոզմայ—*665*
Յողոս *լեռ—71*
Յոսասզ—*տե՛ս* Թաֆիրտաղ

Նախէշևան (*նաև* Նախիշևան, Նախշուան)—*377, 386, 388, 645, 739, 742*
Նարեղալայ—*452, 561, 623, 711, 777, 818, 824*
Նաւարոյ *երկիր—828*
Ներֆին Դարենից—*436*
Նէլ—*457*
Նիկիայ—*371*
Նիկոմիդ—*58*
Նիշ—*392, 576, 674*
Նորաշէն—*261, 266, 524*
Նորաշինք—*764*
Նորգեղ—*57, 129*
Նորշին—*668*

Նոր Շինիկ—*տե՛ս* Շիշպան
Նորս (*նաև* Նորֆ)—*621*
Նովինա—*536*

Շանաստան—*593. 689*
Շանգալդի—*662*
Շանգար—*474*
Շանկերտ—*377*
Շամ—*535, 573*
Շամախի—*554*
Շամբայ *ձոր*—*660*
Շամքոր—*611*
Շատախ—*1, 436, 531, 560, 620, 654, 710, 811*
Շատիկ—*707*
Շարագուլ—*386*
Շաշ—*տե՛ս* Սպանան
Շաքարբէկ—*531*
Շենքուշ—*տե՛ս* Ջենքուշ
Շէնալրիւր—*817*
Շէնեէր (*նաև* Շինուայր, Շինեէր, Շեներ)—*143, 556, 607, 705, 808, 826*
Շրվան—*554*
Շիշպան—*307*
Շողայէն—*տե՛ս* Խազբեան *երկիր*
Շոռոր—*433, 454, 700*
Շուշանց—*552*
Շվէտու *երկիր*—*648, 652*
Շոշ—*տե՛ս* Սպանան
Շորոսկանգ *արտ*—*10*

Ոմրիկան—*208*
Ոսկանապատ—*543*
Որոտան (*նաև* Յորոտեան, Որոտեան) *գաւառ, երկիր*—*22, 72, 95, 143, 297, 438, 556, 607, 765, 816*
Որոտ—*տե՛ս* Որոտան

Ջիկազո—*832*
Ջմշկածագ—*33, 198, 344*
Ջենքուշ—*235, 695, 696*
Ջոլու—*791*

Պալախաւր—*327*
Պաղեստին—*577*
Պաղէշ—*տե՛ս* Բազէշ
Պաղեսասրայ (*նաև* Պաղչասարայ)—*171, 759*
Պաղտատ—*տե՛ս* Բաղդատ
Պամփիլիայ—*611*
Պանանց—*186*
Պանտրման—*444, 624, 708*
Պատիժուան—*639*
Պարսից *ծով*—*149*
Պարսկաստան (*նաև* Պարսից *երկիր, տուն*)—*36, 60, 141, 148, 149, 175, 266, 298, 330, 400, 524, 533, 535, 610, 696*
Պարսում—*206*
Պարսստան—*423*
Պողատանց (*նաև* Պողտանայ) *երկիր*—*31, 332*
Պոնտոս—*տե՛ս* Տրապիզոն
Պուտսայ—*315, 597*
Պոգայ—*40*

Ջերմուկ (*նաև* Ջէրմուկ)—*370, 697*
Ջնուկ—*112*
Ջուղայ (Նոր)—*33, 35, 78, 107, 133, 136, 141, 263, 274, 298, 301, 368, 383, 402, 411, 423, 428, 449, 491, 492, 496, 513, 587, 609, 628—631, 633, 634, 710, 711, 778, 794, 805, 812, 854, 865*
Ջրի կամար—*317*

Ռամիս—*551*
Ռասաւզ—*տե՛ս* Թաքիրաաղ

Սաքու—*619, 620*
Սանաքի փոս—*տե՛ս* Արարատեան *գաւառ, երկիր*
Սալիան—*859*
Սամարայ—*տե՛ս* Բաբելոն
Սամիսոն (*նաև* Սամսոն)—*205, 385*
Սանանին—*30, 238, 519*
Սանաարու, *գրտ*—*138*
Սասուն—*377, 392, 559, 674*
Սավաքիայ—*47*
Սարանուխ—*488*
Սեբաստիա—*8, 9, 37, 40, 127, 198, 233, 384, 468, 540, 679, 734, 780, 794—796, 832*
Սեպոն (*նաև* Սեպուն)—*53, 481*
Սև *ծով*—*129, 205*
Սևագ (*նաև* Սևասա)—*տե՛ս* Սեբաստիա
Սևքար *արտ*—*10*
Սէդուվար—*494*
Սէեար—*22*
Սէշով (*նաև* Սէշով)—*31, 310, 313, 360, 365, 408, 476, 638, 761, 799*
Սիլայ—*58, 60*
Սիս—*48, 194, 320, 380, 403, 524, 528, 531, 650, 668, 704, 709, 716, 751, 778, 793, 794, 866*
Սիսակայ *աշխարհ, նահանգ*—*178, 179, 424*
Սիւնեաց *երկիր* (*նաև* Սյունիք)—*175, 178, 320, 396, 441, 660, 864*
Սիրիա—*196*
Սկեռայ—*205*
Սկէոֆ—*84*
Սմրղանդ—*399*

Սոչով—*տե՛ս* Սէչով
Սուրբ Երեք մանկանց, *գյուղ—274*
Սուրբ Սահակ, *գյուղ—183*
Սուրս—*199, 353, 420, 446, 733, 763*
Սոֆիա—*284*
Սպահան—*12, 14, 33, 35, 36, 45, 46, 77, 78, 100, 106, 107, 133, 135, 138, 141, 149, 155, 175, 196, 261, 263, 266, 274, 293, 301, 307, 311, 318, 378, 383, 400, 419, 423, 428, 449, 452, 465, 480, 491, 492, 496, 513, 515, 524, 554, 561, 609—611, 623, 629—631, 633, 666, 680, 699, 711, 719, 724, 742, 751, 763, 778, 794, 805, 818, 819, 824, 827, 865*
Սպանիա—*648*
Սպիտակաշէն—*746*
Ստամբուլ (*նաև* Ստամպոլ)—*տե՛ս* Կոստանդինուպոլիս
Սաանիսլաւով—*163*
Սրկղուն—*342*
Ս. Գրիգոր *գաւառ*—*տե՛ս* Դարանաղ
Սֆիու—*տե՛ս* Սոֆիա
Սոս—*տե՛ս* Սպահան

Վաղարշապատ—*30, 178, 419, 426, 427, 429, 593, 601, 666, 689, 691, 728, 801, 843*
Վայոյ ձոր (*նաև* Վայուձոր)—*320, 342*
Վան—*71, 94, 115, 216, 254, 301, 302, 329, 330, 380, 386, 388, 396, 399, 460, 486, 515, 518, 523, 550, 553—555, 570, 613, 614, 633, 634, 639, 667, 715, 776, 811, 838*
Վանայ *երկիր—39, 66*
Վանաձոր—*104*
Վանք, *գյուղ—268*
Վանուշտա—*377*
Վասպուրական—*94, 143, 250, 395, 428, 437, 523, 633, 809, 832*
Վարագ—*68, 94, 250, 251, 295, 301, 344, 380, 387, 395, 437, 460, 490, 555, 570, 575, 838*
Վարանդ—*746*
Վարնայ—*723*
Վարշով—*652*
Վերի *արտ—10*
Վերին Զակում—*531*
Վէշտոնք—*244*
Վրաց *աշխարհ, երկիր, տուն—1, 150, 179, 186, 548, 550, 551, 634, 806*

Տանկաց *երկիր—167*
Տայուշ—*466, 700, 708, 809*
Տավրէժ—*տե՛ս* Թաւրէզ
Տարօն—*29, 139, 153, 239, 244, 393, 394, 627*
Տաֆիրաւաղ—*տե՛ս* Թաֆիրաւաղ
Տեէկսէ (*նաև* Տեֆսե)—*տե՛ս* Դեռցա
Տիբերիայ—*605*
Տիգրան *մեծ քաղաք—տե՛ս* Համիք
Տիգրանակերտ—*տե՛ս* Համիք
Տիգրիս—*149, 386*
Տիզակ—*տե՛ս* Դիզակ
Տիզբոն—*127*
Տինարիզոմ—*540*
Տիտոս *լեռ—36*
Տպխիս (*նաև* Տպղիս, Տպիխիս)—*155, 186, 321, 770*
Տրապիզոն—*146, 541, 542, 714*
Տումարզայ (*նաև* Տումարղայ)—*31, 361, 398, 499, 515*
Տուն Գազկայ—*տե՛ս* Աղթամար

Ռօնաթին—*243*

Ցիլոյ—*493*
Ցղնայ—*547, 551*

Ուլախաց *երկիր—310, 365*
Ուշ-Քիլիս—*236, 330*
Ուռնայ (*նաև* Ուռնայ)—*115, 130, 329, 363, 364, 566, 794, 847*
Ուտումէլի—*56, 58, 60, 522, 648*
Ուսկուտար—*5, 416, 522, 638*
Ուրծատափ—*257*

Փաշիվանք—*487*
Փառակայ—*738*
Փարիզ—*671*
Փարիոյ—*318*
Փարիսնեղ—*377*
Փարպի—*320, 547*
Փրենաթաղ—*804*
Փրատ—*8*

Քամալեցիք, *գյուղ—768*
Քանաֆեռ—*478*
Քանդակ, *գյուղ—302*
Քաշան—*175, 590, 860*
Քաշբերունեաց (*նաև* Քաշբերունեաց) *երկիր—320, 435*
Քարափոս—*553*
Քարքու—*386*
Քաֆայ—*տե՛ս* Կաֆայ
Քէօթանիա (*նաև* Քաւթանեայ)—*475, 498, 557, 580*
Քրոել—*553*
Քիլիս—*158, 645*

Քիստախ—116
Քուրդստան—396

Ֆանրապատ—426

Օլախաց երկիր—162, 313, 357, 358, 360, 799
Օձտեղ—724

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍԵՐ

ԱԳՈՒԼԻՍՈՒՄ

Խոզանոր—683, 684

ԹՈՒԽԱՔՈՒՄ

Ուզուն—120, 833
Ս. Քառասունք—9

ԿԱՖԱՅՈՒՄ

Ատրան—71
Թօփրախալայ—590, 857

ԿՈՍՏԱՆԴԻՆԱՊՈԼՍՈՒՄ

Կոմրուկ (նաև Կումրուկ)—55, 315
Պալաք—315, 352, 469, 644, 788
Պուղլարիա—644
Սառանխան—522

ՀԱՄԻԹՈՒՄ

Մերանու դուռ—47
Ջխալ—47

ՄՈԿՍՈՒՄ

Դուշտ—302, 846

ՍՊԱՀԱՆՈՒՄ

Շղշապան, որ է Թովասքան—805

ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԱՆԱՊԱՏՆԵՐ

Ականց—627
Բարիձոր—44
Դանջոյ ձոր—772
Սլիազարու—36
Լիմ—26, 192, 199, 302, 304, 305, 460, 558, 666, 845
Խոր Վիրապ—30, 32
Կանանց անապատ—721
Կտուց—39, 809
Մեծ—703
Շամքոր—611
Շատիկ—68
Շոռոթ—433
Ոպկի—206
Ջարեքի—702
Սաղմոսայ—724
Ստաթէ (նաև Տաթև)—26, 32, 66, 99, 142, 188, 198, 554, 661, 808, 825
Տանձփարախ—351

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ս. Արդլմսեն (նաև Ս. Ապարլմսեն) (Ջերմուկ)—370, 697
Ս. Աթանագինայ (Տարօն)—153
Ս. Անարոն (Կաֆայ)—3, 96
Ս. Աղբրիկ—675[1]
Ս. Ամենափրկիչ (Աղթամար)—665
— (Արտամետ)—303
— (Մէյտան)—620
— (Ցարևան)—400
— (Նոր Ջուղայ)—36, 77, 100, 562
— (Տրապիզոն)—714
Ս. Ամենափրկիչ—16, 619, 665
Ս. Անանիայ (Երևան)—95, 99, 179, 209, 220
Ս. Անապատ (Սեբաստիա)—795
Ս. Անառն (Կաֆայ)—798
Ս. Աչերաց (Աղթամար)—665
Ս. Առաքելք (Մուշ)—29, 239, 240, 499, 640
— (Ստաթէ)—765
Ս. Առաքելք—712
Ս. Աստուածածին (Ագուլիս)—684
— (Ախալգօր)—414, 806
— (Աղջասարայ)—404
— (Անթափ)—92
— (Անլոց)—120
— (Անկիւրիայ)—80, 564, 672, 710
— (Առինշք)—225, 226
— (Ատանայ)—780
— (Արարք)—388
— (Արգելան)—571
— (Արղրում)—583, 616, 817
— (Արղն)—530
— (Բաբերդ)—724
— (Բազու)—224
— (Բալու)—112, 637
— (Բազէշ)—98

[1] Երբ անունների դիմաց փակագծերում վայրի մասին նշում չկա, նշանակում է վայրն անհայտ է։

— (Բշնի)—816
— (Իասեն)—639
— (Բարիձոր)—44
— (Գաղատիա)—9, 37
— (Գանշոյ ձոր)—772
— (Գեղալեռո)—223
— (Գետաթաղ)—22, 72, 95, 297
— (Գորէս)—188
— (Դատեմ)—289
— (Եաղլովցա)—472
— (Եդրսիա)—712
— (Ելադա)—198
— (Երևան)—99, 209, 462
— Խորանաշատ (Զագամ)—785
— (Զամոսացայ)—282, 718, 797
— (Զեյթուն)—337, 356, 566, 632
— (Թաղասեռ)—634
— Խորանաշատ (Թուզ)—466, 700, 708, 809
— Տիրամայր (Թլանճ)—488
— (Թորըսիկան)—452, 711, 777, 818, 824
— (Լիմ)—523
— (Լով)—283, 350, 367, 407, 409, 545, 602, 653, 785
— Խնդրակատար (Խիզան)—233, 234
— (Խոտանան)—177, 351, 604, 608
— (Մարայ)—443
— (Կամախ)—828
— (Կամենից)—332, 417, 588, 589, 641, 698
— Միաբան (Կարին)—815
— (Կարմունշ)—373
— Զարխափան (Կաֆայ)—339, 617, 736
— (Կեղալեռո)—275, 309
— (Կեսարիայ)—46, 382
— (Կէցնայ Եղէգիս)—18
— (Կ. Պոլիս)—5, 46, 820, 842
— (Կտուց)—39, 809
— (Հալապ)—80, 88, 89, 117, 120, 129, 155, 159, 162, 172, 199, 229, 232, 268, 351, 352, 366, 412, 502, 503, 529, 605, 628, 678, 692, 783, 790, 822, 828
— (Հաղարծին)—145, 260, 839
— (Հարբանդ)—655
— (Հիզան)—114
— Եղնաբեր (Ղազարավան)—547
— (Ղարահիսար)—472, 508, 656, 693, 837
— (Ղտրադէր)—213
— (Ղըռընգի)—119
— (Ղըսէ)—494
— (Ղոնիայ)—822
— Տիրամայր (Մաղարդ)—189
— (Մարզուան)—181, 301, 411, 558, 586, 592, 642
— (Մոկս)—295, 302, 820
— (Մուշ)—29, 640
— (Ցակլ)—272
— (Ցոհանավանք)—424
— (Նորաշինք)—764
— (Նոր Շինիկ)—307
— (Նովինա)—536
— (Շամբայ ձոր)—660
— Նորակեռնիք (Շատախ)—1, 710
— (Շնհեր)—143
— (Շոռոթ)—433
— Տիրամայր (Շուշանց)—552
— (Պաղչասարայ)—171, 759
— (Նոր Ջուղայ)—141, 261, 266, 301, 411, 491, 492, 524, 623,
— Տիրամայր (Ըռապատ)—707
— (Սանահին)—519
— (Սավաթիայ)—47
— (Սեբաստիա)—233, 384, 679, 795, 796
— (Սպահան)—293, 318, 419, 666
— Միրանաւոր (Վան)—216, 254, 301, 380, 570, 667, 715, 803, 840
— (Տաթև)—103, 106
— (Տարոն)—153, 239
— (Տումարղայ)—499, 515, 751
— (Ուրհայ)—130, 363, 566, 849
— (Փաշիվանք)—487
— (Քանաքեռ)—478
— Կենսարէր (Գանձակ)—435
— (Քութահեայ)—557, 581
Ս. Աստուածածին—119, 162, 241, 248, 296, 324, 406, 501, 530, 552, 588, 625, 646, 710, 714, 730, 757, 771, 795, 817, 841, 846
Ս. Առամ (Թացու)—387
Ս. Աւգսէնտ (Կաֆայ)—3, 96
— (Ղարասու)—726
Ս. Աւետարան (Կեցան)—486, 622
Ս. Ամսէնդ (Սեչով)—310
Ս. Բարդուղիմէոս (Իզմիր)—314
Ս. Բարսեղ (Կեսարիայ)—46
Ս. Թեքանիայ (Նոր Ջուղայ)—133
Ս. Թէոլանէմ (Թրխիս)—771
Ս. Գաբրիէլ Հրեշտակապետ—757
Ս. Գամաղիէլ (Խիզան)—234
Ս. Գայիանէ (Կտուց)—39
Ս. Գեորգ (Ախալցոր)—806
Ս. Գէորգ (Ապարանից)—147, 869
— (Ասպահան)—819
— (Աւընդանց)—75, 253, 340, 371, 375, 440, 464
— (Բաղէշ)—98
— (Բոլենց)—20
— (Թացու)—387

— (Թբլանք)—488
— (Լիմ)—26, 143, 192, 304, 305, 523, 558, 626, 667, 810, 811
— (Խիզան)—234
— (Կ. Պոլիս)—516, 663
— (Մերտին)—355
— (Նուշանց)—552
— (Պալախոր)—328
— (Սրկղունս)—342
— (Սուրս)—199, 353, 420, 446, 733, 734, 763
Ս. Գէորգ—20, 261, 406, 795, 851
Ս. Գողգոթայ (Ղարաքաշիշ)—616
Ա. Գրիգոր Լուսաւորիչ (Աղթամար)—665
— (Բալու)—303
— (Գորէս)—188
— (Զեյթուն)—337, 356, 566
— (Հաղարծին)—145, 260, 837
— (Մուշ)—640
— (Վէշտոնք)—244
— (Տարօն)—153, 239
Ս. Գրիգոր—248, 394
Ս. Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ (Մուշ)—29
Ս. Երկոտասան առաքելոց (Մուշ)—239, 640
Ս. Երկու Երես (Երևան)—220, 341, 462
Ս. Երեք Մանկանց (Ուշ-Քիլիսայ)—236
— 119
Ս. Եօթն Մանկանց (Եփեսոս)—71
Ս. Էջմիածին (Վան)—224, 518
Ս. Թադէոս (Կարին)—324
— (Թէքիրտաղ)—102
Ս. Թեղրափ (Թէքիրտաղ?)—756
Ս. Թէոդորոս (Դատուն)—613
— (Զեյթուն)—566
— (Լիմ)—460
— (Խարակոնիս)—716
— (Կաֆայ)—5, 590, 857
— (Քօթահեայ)—557, 581
Ս. Թորոս (Անդրիանուպօլիս)—725
Ս. Թումայ Երեքխորան (Ագուլիս)—582, 769
— (Փառակայ)—736, 737
Ս. Լուսաւորիչ (Անկիւրիայ)—62
— (Կաֆայ)—3
— (Կ. Պոլիս)—4, 5
— (Զեյթուն)—632
— (Ղալաթիայ)—135, 187, 638
— (Սէյրով)—313, 360
— (Սիս)—403
Ս. Թումայ—207
Ս. Խաթոյ մօր—73
Ս. Խաչ (Աղթամար)—380, 665, 666
— (Անկիւրիայ)—10
— (Ապարանից)—817, 869
— (Կաֆայ)—96
— (Հաղբատ)—397
— (Հիզան)—41, 73
— (Ղալաթիայ)—135
— (Նորք)—621
— (Շահգալդի)—662
— Թուխմանուկ (Սաթու)—619, 620
— (Սէյրով)—638
Ս. Խաչ—313
Գ(3) Ս. Խորանաց (Մամոռանք)—147
Ա. Միրանաւոր (Արարք)—388
Ս. Մեռուզ (Բեթխահէմ)—29, 715
— (Երուսաղէմ)—32, 75, 390, 391, 461, 462, 745, 755, 779, 864, 867
Ս. Կաթողիկէ (Բասեն)—639
— (Երևան)—220, 462
— (Շատախ)—560
Ս. Կարապետ (Ագուլիս)—684
— (Ալնոց)—120
— (Աղաք)—37
— (Ապրակունեաց)—699
— (Գլակ)—627
— (Երնջակ)—728
— (Զեյթուն)—566
— (Կարմիր վանք)—33, 344
— (Կարմունշ)—373
— (Կաֆայ)—758
— (Կտուց)—39, 809
— (Ցովանավանք)—177, 424, 431
— (Ենքուշ)—696
— (Շորոթ)—700
— (Շօշ)—106
— Ինեակ (Տարօն)—139, 153, 275, 392—394
— (Ոակուտար)—522, 638
— (Ուրհայ)—130
Ս. Կարապետ—7, 119, 198, 239, 669, 852
Ս. Կիրակէ—487
Ս. Կիրակոս (Բաղէշ)—112
— (Կուսին)—355
— (Համիթ)—24, 228, 230, 235, 319, 323, 339, 394, 404, 438, 439, 526, 530, 579, 696, 706, 713, 801, 803
— (Տիգրանակերտ)—861
Ս. Հանատակատար (Եազլովցա)—467
Ս. Հանկատար (Սէյրով)—361, 408
Ս. Համբարձում—449
Ս. Հռիփսիմէ (Թուխ)—850
— (Կտուց)—39
— (Տարօն)—153
Ս. Հրեշտակապետ (Ախալգօր)—414
— (Աղտք)—37
— (Բարբերդ)—559, 724

— (Երուսաղէմ)—352, 458, 461, 506, 525, 528, 576, 761, 864, 867
— (Զեյթուն)—566
— (Թաքիրտաղ)—102, 121, 123
— (Լիմ)—523
— (Խասգեղ)—688
— (Կաֆայ)—838
— (Կ. Պոլիս)—315, 469, 521, 544, 600, 644, 775, 788
— (Հիղան)—73
— (Ռատօղ)—56, 58
— (Սպահան)—301, 311
— (Վան)—254, 301, 667, 715, 838
Ս. Հրեշտակապետ—119, 483, 753, 770, 774, 795
Ս. Հրեշտակապետաց՝ Գաբրիէլ, Միքայէլ (Ախալցոր)—806
Ս. Մարկոս (Վանատեկ)—104
Ս. Մարտիրոս (Զաքաձոր)—188
Ս. Մինաս (Բասեն)—326
— (Շէնաղբիւր)—817
— (Պանտրման)—708
Ս. Մերկեռիոս (Կեսարիայ)—46
Ս. Յակոբ (Ագուլիս)—769
— (Ամասիայ)—467
— (Ասպահան)—465, 466
— (Բասեն)—326
— (Դաշտ)—212, 486, 622
— (Երուսաղէմ)—32, 54, 55, 110, 148, 153, 159, 167, 171, 173, 182, 190, 191, 272, 312, 354, 390, 391, 393, 447, 458, 459, 461, 463, 468, 493, 495, 499, 504, 512, 525, 528, 572, 577, 674, 675, 680, 681, 686, 715, 744, 748, 750, 755, 761, 779, 821, 833, 837, 855, 863, 864, 866—868
— (Զեյթուն)—566
— (Թոխաթ)—322
— (Կաֆայ)—381, 758
— (Կ. Պոլիս)—559
— (Զաքաձոր)—188
— (Մոկս)—302, 846
— (Նոր Ջուղայ)—35, 106, 368, 383, 609
— (Շոռոթ)—454, 700
— (Սէդավար)—494
— (Փառակայ)—738
Ս. Յակոբ—140, 244, 257, 305, 533
Ս. Յարութիւն (Արզրում)—324
— (Երուսաղէմ)—55, 60, 159, 166, 173, 182, 330—332, 444, 445, 461, 499, 506, 525, 539, 566, 575, 576, 635, 680, 681, 755, 779, 864, 867
— (Կաֆայ)—222, 223
— (Հիղան)—114, 233
— (Տարօն)—153
Ս. Յարութիւն—11, 342
Ս. Յեսք խոտանարակ—153
Ս. Յիսուս (Ծղնայ)—547
Ս. Յոհան (Պալախօր)—327
Ս. Յովհաննէս Մկրտիչ (Ագուլիս)—683
— (Ակն)—688
— (Բաղէշ)—98
— (Երուսաղէմ)—461, 745, 864, 867
— (Թէքիրաղ)—542, 756
— (Կաֆայ)—83, 773
— (Հիղան)—114
— (Ճահուկ)—789
— (Մոկաց)—295, 820
— (Սուրս)—199, 353, 420, 446, 733, 763
— (Տարօն)—29, 224, 247, 390
— (Քիլիս)—158
Ս. Յովհաննէս—142, 469, 662, 714
Ս. Յովհաննու Աստուածաբան (Կ. Պոլիս)—129
Ս. Նախավկայ (Մաղարղայ)—189
— 202
Ս. Նահատակ (Թուղ)—708, 809
Ս. Նիկողայոս (Ամասիայ)—467, 503
— (Կաֆայ)—643, 773
— (Կոմրուկ)—61, 315
— (Կ. Պոլիս)—7, 13, 17, 55, 138, 187, 273, 347, 564, 582, 663, 676, 732
— (Հալապ)—197, 502
— (Տփխիս)—155
Ս. Նիկողայոս Սմանչիլազարդ (Կամենից)—117, 418, 588, 589, 641, 698
Ս. Նշան (Ապարանից)—147, 148, 371, 375, 464, 720
— (Բաղէշ)—112, 183
— (Գաղատիայ)—832
— (Եղեգի)—263
— (Կարմիր վանք)—33, 344
— (Հաղբատ)—414
— (Խրիմ)—590, 858
— (Յակլ)—272
— (Նոր Ջուղայ)—298, 492, 812
— (Պալախօր)—328
— (Սեբաստիայ)—7, 198
— (Սիս)—320
— (Վան)—224
— (Վարագ)—250, 251, 295, 380, 387, 395, 437, 490
— Վասլոյ, որ Թագաւոր կոչի—756
Ս. Նշան—10, 198, 254, 406, 520, 795, 852
Ս. Նշանաց (Ջերմուկ)—370
Ս. Շմաւոն (Ագուլիս)—744, 826
— 221
Ս. Շուշան (Վան)—776

Ս. Ովանես—221
Ս. Պարսամ (Զեյթուն)—566
— (Թոխաթ)—509
— (Ջերմուկ)—370
Ս. Պետրոս—781, 817
Ս. Պետրոս Պողոս (Ապարանից)—869
Ս. Պողոս (Վան)—553—555
Ս. Պողոս Պետրոս (Աւընդանց)—75, 253, 340, 371, 375, 440, 464, 851
— (Տումարդալ)—361, 398, 499, 515, 751
— 147
Ս. Սախակ (Բոլենց)—21
Ս. Սահակ Պարթև (Շէնաղբիւր)—817
Ս. Սարգիս (Ասպահան)—610
— (Բաղէշ)—40, 69, 98, 287, 619, 636
— (Դատուան)—613
— (Ելաղա)—198
— (Զեյթուն)—194, 566, 605
— (Թաղասեռ)—455, 557, 731
— (Թոխաթ)—26, 120, 833
— (Կարմիր վանք)—7, 33
— (Կաֆայ)—63, 338, 374, 545
— (Կեսարիայ)—46, 118, 382
— (Կ. Պոլիս)—320, 373, 385, 387, 521, 581, 637, 641, 660, 677, 775, 799, 827
— (Համիթ)—47, 48, 163, 583, 585, 696, 801
— (Հասանղալայ)—326
— (Հիզան)—114, 234
— (Մսրա)—702
— (Նոր Ջուղայ)—263
— (Պալախօր)—327
— (Սեբաստիայ)—679, 734, 795, 796
— (Վանք)—268
— (Տիգրանակերտ)—235, 319, 454
— (Քօթահեայ)—475, 557, 581
Ս. Սարգիս—153, 198, 244, 304, 406, 460, 484, 488, 690, 721, 852
Ս. Սիմէոն (Ագուլիս)—769
— (Սէյլով)—761, 799
Ս. Ստեփաննոս Նախավկայ (Աղթամար)—665
— (Առինջք)—225
— (Ատանայ)—780
— (Արտամետ)—303
— (Բաղէշ)—98
— (Բոլենց)—20
— (Թոխաթ)—322
— (Իղմիր)—187
— (Լծեն)—184
— (Լուցք)—61
— (Հալապ)—269
— (Դարահիսար)—472, 508, 693, 835
— (Մաղարդավանք)—246
— (Մեյդան)—620
— (Մոքս)—295, 820
— (Նոր Ջուղայ)—812
— (Շէնհէր, Շընհեյր)—143, 556, 607, 705, 826
— (Վանատեկ)—104
— (Տարօն)—239
— (Քանաքեռ)—478
— (Քըռել)—553
Ս. Սաեփանոս Նախավկայ—248, 406, 660, 793, 815, 846
Ս. Վարդն—(Դարաչալու)—413
— (Վան)—776, 838
Ս. Վարդան—20, 517, 765
Ս. Տիկնայ (Արափկեր)—822
Ս. Փրկիչ (Ասպահան)—138
— (Երուսաղէմ)—391, 458, 461, 463, 525, 528, 681, 745, 748, 761, 864, 867
Ս. Փրկիչ—840
Ս. Քառասնից (Հալապ)—80, 88, 89, 117, 120, 129, 155, 159, 161, 162, 172, 193, 199, 229, 232, 233, 268, 351, 389, 497, 502, 503, 605, 628, 678, 692, 781, 783, 790, 791, 822
— (Սեբաստիայ)—384
— (Ըստանող)—309
Ս. Քառասնից—625
Ս. Քրիստափոր (Քիստաղ)—116
Ս. Օգսէնդ (Սէյլով)—313, 360
Ս. Օգսէնդ—162

ՎԱՆՔԵՐ

Ալենց—120
Ապարանից—703
Առնչուց—225
Բենքի—58, 60, 119
Գառնակերի—548
Գլակայ—139, 627
Դատեմայ—289
Եղիազարու —26, 29, 238, 239, 640
Եղրդուղու—247
Էջմիածնի—30, 32, 48, 73, 74, 111, 121, 128, 151, 169, 175, 178, 184, 202, 209, 216, 235, 266, 281—283, 285, 301, 303, 336, 341, 342, 355, 360, 361, 377, 380, 387, 397, 408, 409, 413, 414, 417—419, 426, 428—430, 432, 438, 441, 442, 458, 461, 462, 478, 480, 488, 493, 494, 499, 510, 525, 529—531, 533, 536, 539, 545, 547, 550, 554, 555, 561, 570, 579, 584, 589, 594, 597, 600, 602, 603, 610, 623, 631, 639, 666, 667, 677, 679, 680, 684, 688, 690, 691, 696, 698, 701, 704, 711, 717—719, 738, 748, 756, 785, 795, 799, 801,

803, 805, 806, 808, 815, 816, 826—828, 846, 854, 860, 862, 865, 866, 869
Ինեակենայ—տե՛ս Գլակայ
Խալայ—246
Մարայ—443
Կարմիր վանք—7, 8, 33, 344, 482, 852
Հայոց բառի—12
Հավատ—637
Հոգոց—103
Ղազարու—239
Մաղարդայ—189
Ցովհաննավանք (նաև Յոհաննավանք)—177, 424, 431, 554
Նորոյ—298
Սազմոսավանք—30, 97, 621, 659
Սաթէի (Տաթևի)—11, 97, 103, 177, 178, 183, 191, 256, 345, 409, 608, 764, 816, 840
Քամարու—8

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ալեկոծություն ծովի—633
Աղբյուրների ցամաքում—559
Անասունների ոչնչացում—497
Այստամբություն, խռովություն—62, 122, 125, 151
Ասպատակություն—639
Ավազակներ—48
Ավազակություն, ավարառություն—205, 680
Ավերում—256, 388, 519, 613, 614, 724
Արևի խավարում—130, 170
Արշավանք, պատերազմ—1, 36, 71, 150, 194, 206, 228, 230, 235, 236, 242, 262, 284, 325, 327, 333, 357, 386, 443, 458, 515, 550, 598, 601, 613, 614, 625, 627, 734, 638, 640, 647, 648, 653, 655, 670, 689, 696, 741, 742, 762, 776, 786, 820, 822, 827, 866

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Դարբին—112
Դերձակ—58
Թերզի—755
Խիստ—388
Կօսկար—24, 376
Ոսկերիչ—164, 564

Բողոք—25
Բռնագրավում—650
Բռնություն—160, 252

Գազանների հարձակում—150
Գահնկեցություն—71
Գաղթականության հալածանք—593, 689
Գաղթեցում—8, 648, 649
Գաղտնի նամակ—56
Գարնան ձյուն—413
Գերեզմանի քանդել—41
Գերեվարություն—179, 184, 357, 386, 388, 396, 460, 601, 705
Գերիների ազատում—443, 460
Գլխատում—522
Գողություն—56, 523
Գրելու օրինակ—595
Գրչի անչափահասություն—793
Գրչության մասնակիցներ—410
Գրության պայմաններ—601, 682
Գրքերի հրկիզում—385
Գրքի արժեք—204, 225, 633 և այլ էջեր

Դառը ժամանակներ— 37, 194, 239, 380—381, 413, 440, 464, 712
Դառը ձմեռ—602

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ապասի—789, 790 և այլ էջեր
Արծաթ—116, 185, 316 » »
Դահեկան—54, 242, » »
Դեկան—13, 789, 790 » »
Դրամ—6, 45, 46, 169 » »
Եալտուղ—10 » »
Ըստակ—519, 721 » »
Թուման—200, 319, 789 » »
Կարմիր—184
Ղուռուշ, խուռուշ—54, 06, 163, 204, 241, և այլ էջեր
Մաճրի—2
Մասչիլ—85
Շահի—789, 790
Ոսկի—10, 96, 185, 317
Քոքռայ—10
Ֆռակսայ—380
Դրամի նվիրատվություն—364, 789, 790

Եղանակի մասին դատողություն—356
Եկեղեցական անոթներ—651
Եկեղեցական զարդեր—749
Եկեղեցական պարտքեր—747
Երկրաշարժ—234

Թանկություն—5—6, 639—640
Թափառումներ—27
Թղթի պակասություն—45, 414, 792

Լուսնի խավարում—130, 237, 418, 866

Խիստ ձմեռ—415

ԾԱՂԻԿՆԵՐ

Լիլակ—602,
Վարդ—602
Ծաղկելու վարձ—12
Ծածկագիր—62, 94, 95, 132 և այլ էջեր
Ծխախոտի արգելում—598
Ծովի սառցապատում—5, 6
Ծոազատիկ—578, 580, 584, 618, 639

Կաշառք—316
Կաշի—398

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Գայլ—150
Գառ—8
Եզ—263
Թաղի—8
Կով—236, 588
Մարախ—1, 234
Մեղու—8, 344
Ցիլ—8

Կողոպուտ—85, 148, 206, 269, 325, 407, 704
Կոտորած, սպանություն—50, 51, 59, 62, 93, 122, 125, 186, 206, 359, 407, 415
Կրոնափոխություն—318, 649
Կրոնի անտարբերություն—327

Հալածանք—581
Հարկապահանչություն—54, 162, 340, 391, 816
Հարկապահանչությունից եկեղեցին ազատված է—441, 854, 865
Հարկեր ծանր—326, 371, 375, 835, 869
Հացի սղություն—262, 294 և այլ էջեր
Հեղեղ—324, 443
Հիվանդություն—383
Հիվանդություն աչքի—98, 148
Հրդեհ—241, 242, 317, 474
Հրով այրվող մարդ—404
Հույս, հավատ թագավորության վերականգման—869

Զեռագրի արժեքը—228, 272, 664 և այլ էջեր
Զեռագրերը գերությունից ազատող—204, 205, 519, 520, 588, 618
Զեռագրի նորոգում—307, 456, 457, 617, 618 և այլ էջեր
Զեռագրի վաճառք—103, 409, 633 և այլ էջեր

Ճանապարհորդություն—60

Մագաղաթի պակաս—162
Մահ տարաժամ—48, 115, 148, 150, 234, 243, 322, 597, 598, 635, 725

ՄՐԳԵՐ

Խաղող—234
Խնձոր—234, 235, 602

Սալոր—602

Նեղություն—181
Նվիրատվություն—326, 364. 519 և այլ էջեր
Նվիրատվություն ոսկու—449
Նվիրատվություն տան—797
Նվիրատվություն եկեղեցու—39 և այլ էջեր

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Բերդի—327
Դպրոցի—327
Եկեղեցու, վանքի, անապատի, հոգևոր դպրոցի—41, 75, 154, 179, 185, 188, 190, 209, 234, 239, 341, 355, 391, 408, 409, 433, 441, 447, 461—463, 484, 530, 554, 559, 566, 572, 584, 603, 639, 679, 681, 700, 711, 737, 741, 745, 779, 792, 796, 865
Հիվանդանոցի—207
Պարսպի—137, 141, 142, 593, 601
Ջաղացի—103

Շոգ օրեր—633

ՉԱՓԵՐ

Մսխալ—352
Սօմար—639, 789, 790

Պանդխտություն—173
Պաշարում—550, 553, 741, 742
Սով—6, 39, 150, 196, 234, 635

Վանքի աղքատացման պատճառը—565
Վարդապետների կարգը—377
Վեճեր—573, 574

Տոմարական հաշվում—280

Ցուրտ—88

ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Գինի—41, 721
Լոշ—94
Զուկ—94
Մանդրամխ—94
Մեղր—234, 235
Միրգ—317
Պանիր—94
Փախուստ—27, 39, 168

ԱՑԼԵՎԱՑԼ

Աշխատանքի տարբեր տեսակներ—344
Երկինք գոռաց—182
Մոմի նոր որակի ստեղծում—425, 426
Փայտե ոտքեր—8, 580

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան . . . . . Ե—ԺԹ
Օգտագործած աղբյուրների ցանկ . . . . . Ի—ԻՁ
Հիշատակարաններ . . . . . 1—870
Ժամանակագրական օժանդակ ցանկեր . . . . . 871—872
ՑԱՆԿԵՐ
Օտար բառերի բառարան . . . . . 875—878
Անձնանունների . . . . . 879—925
Տեղանունների . . . . . 826—933
Հողեոր կենտրոնների . . . . . 933—938
Առարկայական . . . . . 939—940

ՎԱԶԳԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ВАЗГЕН АРТАШЕСОВИЧ АКОПЯН
АШОТ ГАРЕГИНОВИЧ ИОАННИСЯН

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԷ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Պատմության ինստիտուտ
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ
Նկարիչ
Լ. Ա. ՍԱԳՈՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՀՅԱՆ
Տեխնիկական խմբագիրներ
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Ս. Կ. ՁԱՔԱՐՅԱՆ

ՎՏ 03358 Պատվեր 574 Հրատ. 4769 Տպաքանակ 1000

Հանձնված է շարվածքի 30.III 1976 թ.։ Ստորագրված է տպագրության. 14.06 1978 թ.։
Տպագրական 60,63 մամուլ, պայման. 84,88 մամուլ, հրատ. 70,46 մամուլ։ Թուղթ № 1,70×
×108 1/16 գինը 8ռ 80 կ

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019 Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, 375019 Ереван, Барекамутян, 24-г
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էշմիածնի տպարան